ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թ. ՀԱՏՈՐ

Պէյրուտ – 2012

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

«ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի հրատարակութիւնը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:

© All rights reserved
ISBN 978-9953-0-2525-4

Ներկայ հատորին տպագրութիւնը իրականացած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան օժանդակութեամբ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ՆԻՒԹԵՐ»ու Իններորդ այս հատորին բովանդակութիւնը որոշ իմաստով տարաբնոյթ է: Ան նուիրուած է առանձնակի երեք տարբեր խնդիրներու, որոնք երեւութապէս աղերսակից չըլլալով հանդերձ՝ մաս կը կազմեն Հ. Յ. Դաշնակցութեան վարած ու տարբեր ճակատներու վրայ մղած միեւնոյն ազատագրական պայքարին, քաղաքական ըլլայ ան թէ մարտական, ընկերային ուղղուածութեան կնիք կրէ ան թէ մշակութային բովանդակութեան նկարագիր:

Այդ խնդիրներէն առաջին երկուքը, ա) Պարսկաստանի սահմանադրական շարժումները եւ բ) Կովկասն ու Դաշնակցութեան դէմ ցարական իշխանութիւններու ձեռնարկած լայնածաւալ հալածանքները –, խորքին մէջ լրացումը կը կազմեն «ՆԻՒԹԵՐ»ու Ութերորդ հատորին, որ նուիրուած էր Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին եւ կազմակերպական շրջաններու 1909-1911 թուականներուն ունեցած գործունէութեան. եւ սակայն նշեալ հատորի ստացած ծաւալին հետեւանքով (շուրջ 500 էջ), յարմար նկատուած էր ստուար նիւթը վերապահել յաջորդ հատորի մը: Իսկ երրորդ բաժինը՝ նուիրուած Եւրոպայի հայ ուսանողական միութիւններուն՝ ինքնին նորութիւն է եւ նոր էջեր կը բանայ եւրոպական միջավայրի մէջ ուսանող իրիտասարդութեան բերած մասնակցութեան հայ ազատագրական պայքարին:

Ա.– «ՊԱՐՍԿԱՍՏԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ, 1909-1912»

Գլուխը նուիրուած է Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան այդ շարժումներուն մէջ: Այս մասին «ՆԻՒԹԵՐ»ու նախորդ երեք հատորներուն մէջ յատկացուած են ընդարձակ բաժիններ 1907-1909 տարիներու անցուդարձերուն, Հ.Յ.Դ. Հինգերորդ եւ Վեցերորդ Ընդհ. Ժողովներու լայն վերլուծումներով եւ համապատասխան փաստաթուղթերու հրատարակութեամբ: Հարցը հետեւաբար նոր չէ, այլ բնական շարունակութիւնը 1906 թուականին սկիզբ առած աւատատիրական հին Պարսկաստանը սահմանադրական-ժողովրդավարական կարգերով օժտելու փորձերուն: Փորձեր՝ որոնց մէջ չափազանցած չենք ըլլար եթէ ըսենք, որ Դաշնակցութեան դերակատարութիւնը, յատկապէս 1908 թուականէն սկսեալ, վճռական նշանակութիւն ունեցաւ թէ արտաքին յարաբերութիւններու մէջ բերած իր նպաստով եւ թէ, մանաւանդ, փոքրաթիւ բայց որակեալ ուժերու մասնակցութեամբ երկրի տարբեր ճակատներուն վրայ մղուող կռիւներուն: Ներկայ հատորին մէջ տրուածը յատուկ է 1909-1912 տարիներուն, որոնք հարուստ են Պարսկաստանի սահմանադրական շարժումներու պատմութեան մէջ իրենց անակնկալ վերիվայրումներով.– Ռուսիոյ քաղաքական եւ զինուորական բիրտ միջամտութիւնները, Մեծն Բրիտանիոյ տնտեսական շահագրգռուածութիւնը, գահընկէց Շահին եւ միապետական կարգերու վերահաստատման ձգտող յետադիմական տարրերու աշխուժացումը ու, տակաւին, այս բոլորին հետեւանքով երկրի ամբողջ տարածքին ստեղծուած քաոսային անիշխանութիւնը, առանց մոռնալու, անշուշտ, խառնակ այս կացութեան մէջ պարսկահայութեան ֆիզիքական ապահովութեան սպառնացող վտանգները: Յիշել պէտք է նաեւ որ, իբրեւ գործնական արդիւնք անկլօ-ռուս համաձայնութեան, ռուսական զօրքերը ամբօրէն հաստատուած էին Իրանի հիւսիսային շրջաններուն մէջ, Մեծն Բրիտանիոյ ուժերը՝ հարաւը, իսկ կեդրոնը՝ մայրաքաղաք Թեհրանի շրջանը վերածուած էր երկու գէր-տէրութեանց «համատեղ խնամակալութեան» գօտիի: Վերջինները, իրենց մեծապետական կամքը թելադրելով Պարսկաստանի կառավարութեան, զայն պիտի վերածէին հետզհետէ պարզ գործիքի մը, որ կաշկանդուած պիտի ըլլար ու անկարող՝ երկրին մէջ ազատական կարգերը ամրապնդելու ուղղութեամբ որեւէ համարձակ քայլ նետելու:

Իրանի անկարգ ու խառնաշփոթ այս տարիներուն, դարձեալ վճռական դերակատարութիւն վիճակուած պիտի ըլլար սահմանադրական կարգերու անընկուն պաշտպան հանդիսացող գլխաւոր անձնաւորութեան – Եփ-

րեմին: Անուանապէս ոստիկանապետ Թեհրանի, բայց իրողապէս պարսկական բանակի գերագոյն հրամանատարն է ան, որ հաւատարիմ ու անձնուէր գործակիցներով, ինչպիսիք են Քեռին, Դաշնակցական Խեչոն, պախտիար ցեղապետ Պահատուր խանը,– ջախջախիչ հարուածներ պիտի հասցնէր յետադիմական տարրերէ կազմուած բազմապիսի հակառակորդներուն,– Մեհմէդ Ալի Շահ, եղբայրը Սալար Դովլէ, ղարադաղցի լեռնականներ, Շահսովաններ եւայլն: Եղերական մահն էր միայն, 1912 Մայիսին, որ վերջ պիտի դնէր յաղթանակներու այս փառաւոր շարքին:

Կազմակերպական գետնի վրայ, յիշենք որ մինչեւ Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովը (1911 թ. Օգոստոս-Մեպտ.) Պարսկաստանը կը ներկայանայ միակ Կեդր. Կոմիտէութեամբ մը Վրէժ կամ Վրէժստան անունով, կեդրոն ունենալով Ատրպատականի Թաւրիզ քաղաքը: Սահմանադրական կարգերու հաստատումէն ետք, մայրաքաղաք Թեհրանի ստացած քաղաքական կարեւորութիւնը պատճառ դարձաւ, որ հիմէն եկող կազմակերպական երկրորդ շրջանի մը ստեղծման պահանջը իրականութիւն դառնայ: Արդարեւ, Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովը, հաստատելէ ետք նախորդ տարիներուն Դաշնակցութեան ունեցած գործօն մասնակցութիւնը Պարսկաստանի յեղափոխական շարժման մէջ ու բերած նպաստը նոր կարգերու ամրապնդման ուղղութեամբ, կ՚որոշէր՝

1.- «Յանձնարարել Կովկասի եւ Թուրքիոյ դաշնակցական մարմիններուն մարտական եւ զինական աւելի մեծ ուժերու համեմատութեամբ մասնակցիլ Իրանի ազատագրական գործին.

2.- Տալ Կեդր. Կոմիտէի իրաւասութիւնները Թեհրանի կոմիտէին, զօրեղացնելով զայն նոր անդամներով եւ յանձնարարել Պարսկաստանի երկու Կեդր. Կոմիտէներուն փոխադարձ համաձայնութեամբ վարել սահմանադրական ազատութիւններու համար կռիւը»:

Նորաստեղծ Կեդր. Կոմիտէութիւնը, որուն իրաւասութիւնը պիտի տարածուէր բացի Ատրպատականէն՝ Պարսկաստանի միւս բոլոր շրջաններուն վրայ, Շահ կամ Շահստան անունով իր պատասխանատուութեանց գլուխ պիտի կանգնէր 1912 թ. Մարտ ամիսէն սկսեալ, ոչ առանց դժուարութիւններու՝ գէթ առաջին ամիսներուն, ինչպէս պիտի տեսնուի բաժնին յատկացուած փաստաթուղթերէն:

Պարսկաստանի անցուդարձերուն վերաբերող յառաջաբանի այս բաժինը փակելէ առաջ, հարկ կը տեսնենք ընդգծել փաստագրական այն հարուստ նիւթը (կանոնաւոր նամակագրութիւն, տեղեկագրեր, հեռագիրներ եւայլն), որ պահպանուած է Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ եւ որ կարելի կը դարձնէ քայլ առ քայլ հետեւիլ քաղաքական եւ մարտական դէպքերու զարգացման, ինչպէս եւ ներկուսակցական երեւոյթներու պարզաբանման: Այլապէս նաեւ, իբրեւ կարեւոր մէկ օղակը Հ.Յ.Դ. կազմակերպական ցանցին, Իրանի մեր մարմինները բացառիկ հոգածութեամբ ամբարած ու տեղ են հասցուցած կուսակցական գրականութեան եւ ապագայ պատմութեան համար օգտագործելի առատ նիւթ. իրողութիւն մը՝ որ հնարաւորութիւն կու տայ խնդրոյ առարկայ հարցերու բազմակողմանի ու ամբողջական քննարկման ու լուսաբանման:

Բ.– «ԿՈՎԿԱՍԸ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ»

Ճապոնական պատերազմի ընթացքին (1904-5) ռուսական բանակի կրած ծանր պարտութիւնը մեծ ցնցում առաջացուցած էր կայսրութեան ողջ տարածքին, առիթ դառնալով ազատական եւ յեղափոխական տարրերուն՝ բռնակալ միապետութիւնը տապալելու փորձերու: Իշխանութիւնները՝ վարչապետ Ստոլիպինի գլխաւորութեամբ դիմեցին արտակարգ ու դաժան միջոցներու արեան մէջ խեղդելու համար վարչակարգին սպառնացող յեղափոխութիւնը: Բարեկարգումներու խարուսիկ խոստումներուն հետեւեցան ոստիկանական խստութիւնները, խափանուեցան ազատ խօսքի, մամուլի, միութիւններու եւ հաւաքոյթներու արտօնութիւնները, հապատիժի վճիռները եւայլն:

Կովկասը, ծանօթ իբրեւ յեղափոխութեան հնոց, անմասն չէր կրնար մնալ անշուշտ այդ հալածանքներէն: Հոս, գլխաւոր թիրախը հայութիւնն էր, մասնաւորաբար Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ նախորդող տարիներուն ընդդիմացած էր հայ եկեղեցական կալուածներու գրաւման ցարական հրահանգին, որ՝ յաղթական դուրս գալով հայ-թաթարական ընդհարումներէն՝ ի դերեւ հանած էր Պետերբուրգի իշխանաւորներու ծրագիրը՝ Կովկասի տարածքին ազգամիջեան բախումներ առաջացնելու, որ, տակաւին, պաշտպան կանգնելով Թուրքիոյ եւ Պարսկաստանի մէջ հաստատուած սահմանադրական կարգերուն՝ կը խանգարէր ռուսական կայսրութեան ծաւալապաշտական նկրտումները: Ու 1908էն սկսեալ մոլեգնեցաւ հակահայ սարսափը ամբողջ կովկասահայութեան վրայ: Ցերբակալուեցան ու բանտ նետուեցան հարիւրաւոր մտաւորականներ եւ հասարակական գործիչներ,– գրող, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, փաստաբան, կրօնաւոր եւայլն, դաշնակցական ըլլային անոնք թէ համակիր. կը բաւէր որ անոնք որեւէ կապ ունեցած ըլլային Դաշնակցութեան հետ: Տարիներէ ի վեր արդէն գաղտնի սպասարկութիւնը՝ Օխրանան ծաւալուն թղթածրարներ պատրաստած էր ու Լրժին՝ Նովոչերկասկի

դատական քննիչը չէր վարանած, սուտը իրաւին խառնելով, փաստաթուղթերու թխածոյ հաւաքածոյ* մը կազմելու, նպատակ ունենալով ամէն գնով ամբաստանելու Դաշնակցութիւնը իբրեւ անջատողական ձգտումներ ունեցող հակաօրինական կազմակերպութիւն, որ ահաբեկչութեան ճամբով եւ բռնի միջոցներով կը ծրագրէր միապետութեան տապալումը:

Երկար պիտի ըլլար թուարկումը բոլոր մեղադրեալներուն եւ բանտարկեալներուն. անոնց կարգին կը գտնուէին յայտնի գրողներ՝ Յովհ. Թումանեան, Ա. Ահարոնեան, Ա. Իսահակեան. մարտիկներ կամ կուսակցական եւ հասարակական գործիչներ՝ Համօ Օհանջանեան, Յովհ. Քաջազնունի, Համազասպ Սրուանձտեանց, Հայր-Աբրահամ, Գարեգին Խաժակ, Գարեգին Նժդեհ, Սարգիս Մանասեան, Աբր. Գիւլխանդանեան եւ շատ ուրիշներ, առանց հաշուելու անոնք՝ որոնք ոստիկանական հետապնդումներէն ճողոպրելով անցած էին, կամ արդէն կը գտնուէին արտասահման: Վերջիններուն շարքին էին՝ Ս. Զաւարեան, Մ. Վարանդեան, Յար. Շահրիկեան, Նիկոլ Դուման, Դրօ, Դաշնակցական Խեչօ եւայլն**: Բոլորն ալ զոհերն էին քննիչ Լրժինի «ջանասիրութեան» ինչպէս նաեւ իր լրտես-լրատուներուն, որոնց շարքին առաջին տեղը պիտի գրաւէր տխրահռչակ խմբապետ Միհրանը՝ դաշնակցական աչքի զարնող գրեթէ բոլոր գործիչներու մասին իր կատարած մատնութիւններով եւ ցուցմունքներով***:

1908-1911 երկարող տարիներուն, Ռուսիոյ զանազան վայրերուն մէջ ձերբակալուած մեղադրեալները քաղաքէ քաղաք տեղափոխուելով կեդրոնացուեցան Նովոչերկասկ: Կ՚ենթադրուէր որ հարաւային Ռուսիոյ այս քաղաքին մէջ տեղի պիտի ունենար անոնց դատավարութիւնը, որ արդէն քանի մը անգամ յետաձգուած էր, բանտերու խուլ խուցերու անտանելի պայմաններուն մէջ հիւծելով հարիւրաւոր կալանաւորներ. քիչ չեղաւ թիւը քոլերայէ եւ թոքախտէ վարակուողներուն, մինչեւ իսկ մահացողներուն:

Վերջնական որոշումով «Դաշնակցութեան գործին» դատավարութիւնը տեղի պիտի ունենար 1912 թ. Յունուար 17էն Մարտ 20ին մայրաքաղաք Պետերբուրգի մէջ, ուր փոխադրուեցան բոլոր բանտարկեալները՝ 159 հոգի եւ հարիւրաւոր վկաներ:

Դատական ատեան նշանակուած էր պետական Ծերակոյտի (սենատ) անդամներէն բաղկացած յատուկ յանձնաժողով մը:

Պաշտպանութեան համար Դաշնակցութիւնը ապահոված էր, Մոսկուայէն եւ Պետերբուրգէն, մեծ թիւով փաստաբաններ, որոնց առաջնակարգ դէմքերէն էին՝ Ա. Կերենսկի, Զարուդին, Մանդելշտայմ եւ Գրուզենբերգ: Հայկական նիւթեր հայթայթելու գործը կը տանէր հայ փաստաբաններու խումբ մը գլխաւորութեամբ Խ. Կարճիկեանի:

Ի պատասխան դատաքննչութեան ծանր մեղադրանքներուն, պաշտպանութեան հիմնական մարտավարութիւնը պիտի ըլլար փաստել, որ Դաշնակցութեան գործունէութիւնը ուղղուած չէր երբեք ռուս պետութեան դէմ, այլ սահմանուած էր գլխաւորաբար Թրքահայաստանի ազատագրութեան դատին, որ՝ հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին կուսակցութեան գործունէութիւնը ունեցած էր զուտ ինքնապաշտպանութեան բնոյթ՝ կովկասահայութեան սպառնացող ֆիզիքական վտանգին դէմ եւ որ, վերջապէս, կարելի չէր անոր վերագրել

---

*) Միք. Վարանդեան «Դաշնակցութեան գործը» կազմուած կը համարէ 40.000 էջերէ (Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Բ. հատոր, էջ 122):

Ըստ Աւագ Ա. Յարութիւնեանի , 1927ին Դոնի Ռոստովէն Երեւան տեղափոխուած նոյն դատական գործի մեքենագիր օրինակը բաղկացած է 45.166 էջերէ (Հայաստանի պետական արխիւ, Հ.Յ.Դ. ֆոնդ):

Պոսքրնի Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ կը գտնուին նոյն դատին վերաբերող ռուսերէն տպագիր 7 հատորներ, համագումար 4.788 մեծադիր էջերէ բաղկացեալ, ուր ներկայացուած է «Դաշնակցութեան դատ»ի ամփոփ պատկերը ներառեալ մեղադրական բաժինը:

Յայտնենք որ Աւագ Ա. Յարութիւնեանի կողմէ «Վէմ»ի 2009-2011 տարիներու առաջին տասը համարներուն մէջ, թարգմանաբար եւ ծանօթագրութիւններով, լոյս տեսան «Դաշնակցութեան գործի» երեւանեան արխիւի յաջորդական հետեւեալ թղթածրարներու նիւթերը.– Յովհաննէս Թումանեան, Համօ Օհանջանեան, Գարեգին Նժդեհ, Գարեգին Խաժակ, Համազասպ Սրուանձտեանց, Աբրահամ Գիւլխանդանեան, Յովհաննէս Քաջազնունի, Աւետիք Սահակեան (Հայր Աբրահամ), հայ հոգեւորականներ, Հ.Յ.Դ. մարտական կազմակերպութիւն՝ ըստ դատական որոշման: Ըստ ամենայնի գովելի եւ քաջալերելի նախաձեռնութիւն՝ որ արժէ շարունակել:

**) Թիւրիմացաբար կամ անուններու շփոթութեամբ, բանտարկեալներու շարքին կը գտնուէին շատ մը անմեղներ. այսպէս՝ Իշխան Յովսէփ Արղութեան բանտարկուած էր Վանայ Իշխանի փոխարէն. Վռամ Վահանեան անունով անձը՝ Վահան Փափազեանի (Կոմս) տեղ. Կար. Ղազարեան՝ Արմէն Գարոյի, իսկ չորս Նիկոլաներ՝ Նիկոլ Դումանի փոխարէն:

***) Յետագային, դատական ատեանին առաջ՝ նախաքննութեան կատարած գեղծումներուն ի յայտ գալէն ետք, գլխաւոր քննիչ Լրժին իր կարգին դատուեցաւ եւ դատապարտուեցաւ իբրեւ... հոգեկան հիւանդ, իսկ խմբապետ Միհրան, արդէն 1910, 6 Մեպտեմբերին, զգետնուած էր դաշնակցական ահաբեկիչի գնդակով:

որեւէ անջատողական նպատակ, որովհետեւ այդ իմաստով ոչ մէկ ապացոյց կարելի է ցոյց տալ. ընդհակառակն, Դաշնակցութեան պահանջը եղած է միշտ՝ ազատ, ժողովրդավար եւ դաշնակցային (ֆեդերաթիւ) կարգերու հաստատումը ամբողջ Ռուսիոյ տարածքին, որուն անբաժան մասը պիտի ըլլար Անդրկովկասը:

Ապա, ապացուցանելէ ետք Լըժինի կողմէ կատարուած նախաքննութեան կեղծիքները (սուտ վկայութիւններով եւ փաստաթուղթերու խարդախումներով լեցուն), պաշտպանութիւնը պահանջեց նոր քննութիւն: Բայց ի զուր. վերէն՝ արդարադատութեան նախարարութենէն արդէն վերջնական վճիռը կայացուած ըլլալով՝ պէտք էր փութացնել դատավարութեան աւարտը, հանրային նոր գայթակղութեան մը տեղիք չտալու համար:

Ատեանը վճիռ արձակեց 146 ամբաստանեալներու մասին. անոնց գլխաւոր մեղքը մասնակից ըլլալն էր 1905-1909 թուականներուն Դաշնակցութեան գործունէութեան:

94 հոգի ասոնցմէ անմիջապէս ազատ արձակուեցան բոլորովին անպարտ յայտարարուելով, մինչ արդէն տարիներէ ի վեր անմեղ տեղը կրած էին բանտային տաժանքները: Ասոնց շարքին էին՝ բանաստեղծ Յովհ. Թումանեան, Աբր. Գիւլխանդանեան, Իշխան Յովսէփ Արղութեան, Լեւոն Թադէոսեան (Պապաշա), Գարեգին Նժդեհ, եւայլն:

52 հոգի դատապարտուեցան բանտի եւ աքսորի, կարճ ժամանակով. եւ որովհետեւ համապատասխան ժամանակով բանտ մնացած էին, ազատ արձակուեցան: Միայն 4 հոգի դատապարտուեցաւ տաժանակիր աշխատանքով աքսորի,– Սարգիս Մանասեան 6 տարիով, Համօ Օհանջանեան, Յովհ. Ղազարեանց եւ Արշակ Մուրատով՝ չորսական տարիով*:

Վճիռը, ինչպէս կը տեսնուի, սպասուածէն շատ աւելի մեղմ էր: Պատճառներէն կարելի է համարել նոյնինքն Ռուսիոյ, ապա նաեւ արեւմտեան հանրային կարծիքին բացասական հակազդեցութիւնը արտակարգ համեմատութիւններ ստացած շոնդալից այս դատին նկատմամբ, կամ պարտկելու դատական տխրահռչակ քննիչ Լըժինի նիւթած կեղծիքները, կատարուած մեծ մասամբ վարչապետի եւ արդարադատութեան նախարարի գիտութեամբ, եթէ ոչ թելադրանքով. կեղծիքներ, որոնց բացայայտումը բուռն դատապարտութեան ալիք բարձրացուցած էր ռուս-ազատական մամուլին մէջ: Այսուհանդերձ, խստագոյն հալածանքներու, զանգուածային ձերբակալութեանց եւ ծանրակշիռ ամբաստանագրի մը դիմաց, ծերակուտական ատեանին արձակած մեղմ վճիռներուն բացատրութիւնը կը տեսնուի ընդհանրապէս Թուրքիոյ նկատմամբ ռուսական քաղաքականութեան փոփոխութեան մէջ, որ դէպի կարծրացում կ՚ընթանար եւ որուն համար հայկական հարցին օգտագործումը պիտանի խաղաքարտ էր. ուստի եւ հարկաւոր չէր այլեւս հայութեան թշնամանքը հրահրել Ռուսիոյ նկատմամբ:

Յամենայն դէպս, հակառակ նիւթուած ահաւոր դային եւ վերջնական հաշուեյարդար տեսնելու նպատակով ի գործ դրուած զանգուածային հալածանքներուն, Հ. Յ. Դաշնակցութիւնը անգամ մը եւս յաղթական դուրս պիտի գար այս անհաւասար պայքարէն, վերագտնելով շուտով իր ժողովրդականութիւնը կովկասահայութեան մէջ

* * *

Հասկնալի պատճառներով Կովկասի յատկացուած այս գլխուն տակ ծանրացանք Դաշնակցութեան դատին եւ այդ առիթով 1908-1912 թուականներուն կուսակցութեան դէմ շղթայազերծուած աննախադէպ հալածանքներուն վրայ: Նոյնպէս հասկնալի պիտի ըլլայ, որ այդ պայմաններուն մէջ կուս. մարմիններու գործունէութիւնը կարեւոր չափով մը ջլատուէր. թուլնար նոյնպէս, խիստ գրաքննութեան հետեւանքով, գրաւոր հաղորդակցութիւնը արտասահմանեան մարմիններու հետ: Դժուար է, հետեւաբար, լիակատար գաղափար կազմել ընդյատակ անցած մարմիններու եւ ընկերներու գործունէութեան մասին: Ճիշդ է, որ յետագային վերապրողներու յուշագրութեանց մէջ լայնօրէն տեղեկագրուած են ժամանակաշրջանի իրադարձութիւնները, բայց կովկասեան շրջաններու նօսրացած, յաճախ եւ վտիտ թղթածրարներուն մէջ պահպանուած ու վաւերագրական արժէք ներկայացնող փաստաթուղթերը,– յաճախ այլաբանօրէն շարադրուած –, հազիւ թէ ընդհանուր պատկերացում մը տան տեղի ունեցածներուն մասին: Այսուհանդերձ փորձուած է մատնանշուած պակասը ըստ կարելւոյն լրացնել օգտագործելով կեդր. արխիւատան տարբեր թղթածրարներուն պարունակութիւնը, փորձելով միաժամանակ լուսաբանել զայն կողմնակի աղբիւրներէ քաղուած տեղեկանքներով:

**) 1910-11ին, դրամական մեծագումար երաշխաւորութեամբ բանտէն դուրս եկած եւ արտասահման անցած էին արդէն Յովհ. Քաջազնունի, Ա. Ահարոնեան, Ա. Իսահակեան եւ Գարեգին Խաժակ:*

Համազասպ Սրուանձտեանցի դէմ արձակուած էր մահապատիժի վճիռ, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ի միջամտութեան շնորհիւ՝ վերածուած էր 15 տարուան աքսորի: Խմբապետ Համազասպ 1913ին պիտի յաջողէր փախուստ տալ Միպիրէն եւ անցնիլ Եւրոպա, ապա՝ Պոլիս:

Աքսորեալներու մէկ մասը 1914ին, Հաշտարարային Ա. պատերազմի առիթով ցարական հրամանագրով ազատ պիտի արձակուէր, իսկ մնացեալը 1917ի Փետրուարեան յեղափոխութենէն ետք, Ժամանակաւոր կառավարութեան օրոք:

* * *

Բոլորովին այլ է պարագան բանտարկութեանց առթիւ Արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ ծաւալած քարոզչական աշխատանքին: Արդարեւ, արխիւային նիւթերով բացառիկ կերպով հարուստ են յատկապէս «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Ամերիկայի Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի թղթածրարները: Եւրոպայի մէջ յօգուտ հայ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման աշխատանքները կը վարէին Ժընեւէն «Դրօշակ» պաշտօնաթերթի խմբագրութիւնը, մասնաւորապէս Միք. Վարանդեան եւ, 1911ին ազատ արձակուելէ ետք՝ Ա. Ահարոնեան: Վերջինիս ի նպաստ կատարուած քարոզչութիւնը արդէն լայն արձագանգ գտած էր Ֆրանսայի մէջ, ուր ան վաղուց սերտ գործակցութիւն եւ բարեկամութիւն մշակած էր ականաւոր մտաւորականներու եւ քաղաքական գործիչներու հետ, ինչպիսիք էին՝ Անատոլ Ֆրանս, Պ. Քիյար, Ֆ. տը Պրեսանսէ, Վ. Պերար, Ժ. Քլեմանսօ եւայլն: Միեւնոյն ուղղութեամբ աչքառու ճիգ կը թափէր նոյնպէս ֆրանսատառ Փրօ-Արմենիան մասնակցութեամբ իր խմբագրապետին (Քիյար) եւ եւրոպացի նշանաւոր աշխատակիցներուն:

Վերջիններուս հանդիսաւոր կոչերն ու կոչովի բողոքները անկասկած կարեւոր դեր պիտի ունենային ցարական իշխանութիւններու ցուցաբերած յարաբերական մեղմ վերաբերմունքին մէջ:

Ամերիկայի մէջ քարոզչական աշխատանքներուն գլուխ պիտի կանգնէր, Կեդր. Կոմիտէի կողքին՝ Է. Ակնունի, որ 1910-1911ին ամիսներ շարունակ շրջելով Միացեալ Նահանգներու եւ Քանատայի շուրջ 40 կեդրոններ, գրաւոր եւ բանաւոր ելոյթներու ճամբով շարժման մէջ դրաւ Նոր աշխարհի քաղաքական եւ մամլոյ շրջանակները՝ դրական արտայայտութիւն ունենալու ի նպաստ Կովկասի հայ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման: Նիւթական օժանդակութիւն ապահովելու տեսակէտէն եւս Ակնունիի ժրաջան գործունէութիւնը պիտի արդիւնաւորուէր տասը հազար տոլարի հասնող շօշափելի գումարով մը:

Գ.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին այս բաժինը – ամէնէն ծաւալունը – նուիրուած է եւրոպական միջավայրի մէջ հայ ուսանողութեան գործունէութեան:

Ծանօթ է ԺԹ. դարու հայ գրական ու իմացական Զարթօնքին մէջ Եւրոպայի եւ Ռուսիոյ համալսարանական ոստաններուն մէջ կազմաւորուած հայ ուսանողներու առաջնակարգ դերակատարութիւնը, արեւմտահայ եւ արեւելահայ հատուածներուն մօտ հաւասարապէս: Նոյնը նաեւ դարավերջին, հայ ազատագրական շարժման զինեալ պայքարի անցումի շրջանին, երբ կազմուեցան յեղափոխական առաջին՝ Հնչակեան եւ Դաշնակցութիւն կուսակցութիւնները. ասոնց հիմնադիրները եւ աւագ սերունդի գործիչներ, արդարեւ, ուսանող երիտասարդներ էին առաւելաբար: Երկու պարագաներուն ալ, այս ուսանողութեան շարքերէն դուրս պիտի գային հայոց դպրութեան, ինչպէս նաեւ հասարակական ու քաղաքական կեանքի ապագայ ղեկավար դէմքերը:

ԺԹ. դարու վերջին տասնամեակներուն արդէն բազմահարիւր հայ երիտասարդներ կ՚ուսանէին Ռուսիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի, Զուիցերիոյ եւ, նուազ չափով մը, Իտալիոյ, Պելճիքայի ու Անգլիոյ համալսարաններուն մէջ: Գոյութիւն ունէին անջատ խումբեր մասնաւորաբար այն քաղաքներուն մէջ, ուր զգալի թիւ կը կազմէին հայ ուսանողները: Թէ ի՞նչ կապ գոյութիւն ունէր անոնց միջեւ փոխ-յարաբերութեանց կամ կառուցային իմաստով, շատ որոշ չէ. գիտենք որ դաշնակցական եւ համակիր ուսանողներէ կազմուած Ռուսիոյ եւ Եւրոպայի խումբերը մէկական պատգամաւորով կը հրաւիրուէին մասնակցելու կուսակցութեան ընդհանուր եւ ռայոնական ժողովներուն: Մնացեալներուն միջեւ փոխադարձ կապի գոյութիւնը, գէթ մինչեւ 1897 թուականը, կը թուի խնդրական ըլլալ:

Հետեւաբար յիշեալ տարին (1897) մեկնակէտ ունենալով ներկայացուած է ուսանողականին յատկացուած արխիւային թղթածրարը, հետեւեալ երեք բաժանմունքներով:

1.- ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ.– Այս անունով պիտի կնքուի ուսանողական այն միութիւնը, որ հիմնուած է Գերմանիոյ Հայդելբերգ քաղաքին մէջ 1897 թ. ապրիլին կայացած առաջին համագումարին, որու ընթացքին մշակուած է նաեւ միութեան առաջին կանոնագրութիւնը: Այնուհետեւ մինչեւ 1905 թ., տարեկան պարբերականութեամբ տեղի ունեցած են միութեան համագումարները, որոնց արձանագրութիւններ եւ յարակից փաստաթուղթերը բարեբախտաբար պահպանուած են (թէեւ ոչ ամբողջական) Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ: Անոնք հարուստ նիւթ կը հայթայթեն շուրջ տասնամեակի մը վրայ երկարող միութեան գործունէութիւնը ուսումնասիրելու համար,– Ժողովական արձանագրութիւններ, տեղեկագրեր, հրատարակութիւններ (քարտէսներ, հայերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն գրքոյկներ), շրջաբերականներ, վիճակագրոյցներ, եւայլն: Առանձին հետաքրքրութիւն կը շարժեն ուսանողական անուանացանկերը, որոնց մէջ կը հանդիպինք մեր ազգային, քաղաքական եւ մշակութային իրականութեան ապագայի մեծ դէմքերուն,– Մանուկ Աբեղեանին, Յակոբ

Մանանդեանին, Կոմիտաս վարդապետին, Լեւոն Շանթին, Ա. Ահարոնեանին, Արմէն Գարոյին, Միք. Վարանդեանին, Ստեփան Շահումեանին, Արտաշէս Աբեղեանին, Է. Ակնունիին, Համօ Օհանջանեանին եւայլն եւայլն:

2.- ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄԸ.– 1905 թ. Զուիցերիոյ Պեռն քաղաքին մէջ հաւաքուած 6րդ Համագումարը երեւի ճակատագրական նշանակութիւն պիտի ունենար Եւրոպայի հայ ուս. միութեան յետագայ գործունէութեան տեսակէտէն. եւ այս՝ այնպիսի պահու մը, երբ միութիւնը փաստօրէն կը գտնուէր իր ծաղկման գագաթնակէտին: Պատճառը յայտնապէս այն էր, որ միութեան ղեկը տարիներէ ի վեր կը գտնուէր դաշնակցականներու ձեռքը, որոնք հայկական հարցի ուղղութեամբ քարոզչական աշխատանքը «Դրօշակ»ի խմբագրութեան հետ կը տանէին համակարգուած կերպով: Փոքրամասնութիւն կազմող սոցիալ դեմոկրատ պատգամաւորները, որոնք, դժգոհ անշուշտ գործերու առած այս ընթացքէն, համագումարին եկած էին Միութիւնը կազմալուծելու յստակ առաջարկով, մեծամասնութեան հաւանութեան չարժանանալով, 7 հոգիով (ղեկավարը Բախշի Իշխանեան) կը լքեն ժողովասրահը եւ Ապրիլ 8 թուակիր «մանիֆեստ»ով մը կը յայտարարեն, որ *«պրոլետարական-դասակարգային շահերու հայեցակէտով»* անկարող պիտի ըլլան այլեւս միասին գործելու *«այն տարբերու հետ, որոնք իրենց հասարակական դաւանանքով եւ գործնական ձգտումներով կանգնած են ազգայնական (նացիոնալիստական) շահերի հայեցակէտի վրայ»:*

Բ. Իշխանեանի եւ իր ընկերներուն այս քայլը ըստ երեւոյթին բացասական հետեւանք ունեցաւ Ուս. միութեան համար, որ թէեւ տակաւին տարիներ իր գոյութիւնը պիտի պահէր, բայց արդէն թուլցած եւ նախկին միասնականութիւնն ու աշխուժութիւնը զգալապէս կորսնցուցած:

3.- ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ.– 1890ական թուականներուն գոյութիւն ունէին արդէն դաշնակցական ուսանողական միութիւններ, խումբեր կամ կոմիտէներ ռուսական (Պետերբուրգ, Մոսկուա, Խարկով) եւ եւրոպական ոստաններու մէջ (Փարիզ, Նանսի, Պերլին, Ժընեւ, եւայլն): Մաս կազմելով հանդերձ Եւրոպայի Ուս. միութեան, անոնք կը մասնակցէին, ինչպէս յիշուեցաւ, կուսակցութեան ընդհանուր գործունէութեան: Եւրոպայի Հայ ուս. միութեան տկարացումով՝ կը ծրագրուի Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ համախմբելու կուսակցական եւ համակիր ուսանողութիւնը եւ նոր թափ տալու անոր հաւաքական գործունէութեան:

Մինչ նոյն նպատակով Ռուսիոյ մէջ կատարուած փորձերը, հոն տիրող անբարենպաստ պայմաններու բերումով, մինչեւ վերջ պիտի մնային անհետեւանք, Եւրոպայի ընձեռած ազատութիւնները, ընդհակառակն, կարելի դարձուցին ծրագրին իրականացումը: Արդարեւ, Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովէն անմիջապէս ետք, Արեւմտեան Բիւրոյի մղումով եւ շարք մը ուսանող ընկերներու ջանքերով հնարաւոր պիտի դառնար կայացնել առաջին Համագումար մը եւ հիմը դնել Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան:

Ուսանողական թղթածրարին վերջին բաժինները յատկացուած են 1908 թ.ին հիմնուած այս միութեան: Անոր բազմերես գործունէութիւնը, որուն կարեւոր օղակները պիտի կազմէին «Ուսանող» պարբերաթերթը, տարեկան պարբերականութեամբ կայացած Համագումարները, հայ դատի եւրոպական քարոզչութիւնը եւայլն, կը հասնին մինչեւ 1914 թուական՝ Ա. Աշխարհամարտի բռնկումը:

Ներկայ հատորով ներկայացուած ստուար նիւթը, ինչպէս նաեւ «ՆԻՒԹԵՐ»ու նախորդ գրքերով արդէն հրապարակուածները*, կը կարծենք, եթէ ոչ ամբողջական, բայց նշանակալի չափով մը կը հայթայթեն այն հում ատաղձը, որ հնարաւորութիւն կու տայ ապագայ ուսումասիրողներուն շարադրելու ընդհանրապէս հայ երիտասարդութեան ու յատկապէս Եւրոպայի հայ երիտասարդութեան եւ ուսանողութեան բերած նպաստը հայ յեղափոխական մտքի զարգացման եւ հայ դատի միջազգային քարոզչութեան գործին:

Նպաստ՝ որ, ինչպէս պիտի տեսնուի, շօշափելի է ու անհերքելի, արժանի ամէն գնահատանքի:

Ե. ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

*) *Դաշնակցական ուսանողութեան վերաբերող հարցերուն մասին տեսնել՝ «ՆԻՒԹԵՐ»ու Բ. հատոր, էջ 161-165, Դ. հատոր, էջ 333-342, Զ. հատոր, էջ 516-525:*

Ներկայ հատորի վերջաւորութեան իբրեւ Յաւելուած տուած ենք 1899 թ. Յունուարին Պետերբուրգի մէջ գումարուած «Դաշնակցական ուսանողութեան առաջին համաժողովի նիստերի արձանագրութիւնը», որ ցարդ մնացած էր անտիպ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ.
(1909 – 1912)

ԲԱԺԻՆ Ա. (1909 – 1911)

Պարսկաստանի Հ.Յ.Դ. կազմակերպութեան եւ 1909-1912 տարիներու երկրի սահմանադրական շարժումներուն եւ անոր մէջ Դաշնակցութեան դերակատարութեան յատկացուած գլուխներու առաջին բաժինով կու տանք Միրզայեան Յովսէփի երեք գրութիւնները՝ ուղղուած Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին: Միրզայեան դաշնակցական հին գործիչներէն է, ծանօթ նաեւ Արբակ Ռշտունի ծածկանունով: Ռուստոմի հետ մասնակցած էր 1907-08 թ. հայ եւ պարսիկ բանակցութեանց, ապա ընտրուած պարսկահայութեան միակ պատգամաւոր սահմանադրական Իրանի պետական օրէնսդիր ժողովին՝ Մէջլիսին: Բացի խորհրդարանական իր գործունէութեան մասին կատարած տեղեկատուութենէն, ան Ընդհ. Ժողովին առաջարկ կը բերէ Թեհրանի համար (որ մինչ այդ կը ղեկավարուէր տեղական կոմիտէով) ստեղծել «մի բարձր իրաւասու մարմին», աւելի ձեռնհասօրէն վարելու համար ամբողջ երկիրը յուզող գործերը, հաշուի առնելով մանաւանդ որ Ատրպատականի Կեդր. Կոմիտէն կը գտնուէր մայրաքաղաքէն հեռու, Թաւրիզ:

Պարսկաստանը երկրորդ Կ. Կոմիտէութեամբ մը օժտելու գաղափարը կու գար հինէն եւ այդ իմաստով առաջարկներ ներկայացուած էին թէ՛ նախորդ եւ թէ այս՝ Վեցերորդ Ընդհ. Ժողովին: Թեկնածու էին Գիլանի շրջանը (Ռաշտ, Էնզելի, Ղազուին) եւ Թեհրան: Սահմանադրական շարժումներու հետեւանքով մայրաքաղաքին ստացած կարեւորութեամբ նախապատուութիւնը բնականաբար պիտի տրուէր Թեհրանին: Ուստի Ընդհ. Ժողովի որոշումով, 1912 թուականի Մարտ ամիսէն սկսեալ ձեւաւորուեցաւ Շահստան անունով եւ Թեհրան կեդրոնով Պարսկաստանի երկրորդ Կեդր. Կոմիտէութիւնը, որուն իրաւասութիւնը պիտի տարածուէր Ատրպատականէն դուրս՝ երկրի մնացեալ շրջաններուն վրայ:

Փաստ. 1543-18

Ա 1.– Հ.Յ.Դ. VI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Թեհրան, 14/27 Օգոստոս 1911

Սիրելի ընկերներ,

Տեղական մարմնից Յուլիսի առաջին կիսում միայն ստացայ մի ծանուցագիր, որով հրաւիրւում էի իմ պարլամենտական տեղեկագիրը մինչեւ Յուլիսի վերջը հասցնել ժողովիդ: Աւելի քան քառասուն կէտ ունիմ նշանակած պարսկական գործերի վերաբերեալ, որոնց մասին ուզում էի մանրամասն կերպով գրել, բայց ժամանակի կարճութիւնը մի կողմից, Պարսկաստանի այժմեան խառն դրութիւնը, որ կլանում է իմ ամէն մի րոպէն, միւս կողմից, [թոյլ չտուին] այնպիսի մի ընդարձակ տեղեկագիր ուղարկել ձեզ, որը պահանջում են դրութեան լրջութիւնը եւ գործի բազմապիսի մեծութիւնը. վերջապէս ստիպուեցայ բաւականանալ ներփակ երկու տեղեկագրով –

1) Իմ պարլամենտական գործունէութեան համարատուութիւնը – այն էլ որքան կարելի է համառօտ, եւ

2) Մի զեկուցագիր, որով յարգելի ժողովիդ աշխատում եմ ցոյց տալ անհրաժեշտ եւ անմիջական կարիքը Թեհրանում մի բարձր իրաւասու մարմին ստեղծելու, որը կարողանար այս նոր ասպարէզում գործելու համար ծրագրել ու ղեկավարել նոր եւ նպատակայարմար մի քաղաքականութիւն:

Ես մասնաւոր կարեւորութիւն եմ տալիս երկրորդ հարցին, որովհետեւ այն բոլոր առկախ խնդիրները որոնց մասին չկարողացայ գրել իմ զեկուցագրի մէջ կարող են լուծուիլ միայն այդպիսի մի մարմնի ձեռքով:

Յաւելով եմ ասում, որ Ատրպատականի Կեդրոնական Կոմիտէն մինչեւ այսօր ոչ մի ուղղակի յարաբերութեան մէջ չէ մտել ինձ հետ, մի բան որ շատ կարեւոր էր մեր քաղաքական հայեցքները համերաշխելու համար: Ես, իմ պաշտօնի բերմամբ ամէն օր կոչուած եմ անմիջապէս յայտնելու իմ գաղափարը այս կամ այն քաղաքական հարցի վերաբերմամբ. եւ ես այն անում եմ առանց իմանալու Կեդրոնական Կոմիտէի հակումը, եւ Կեդրոնական Կոմիտէն էլ իր կողմից ձեռնարկում է քաղաքական գործերի առանց ինձանից հարցնելու թէ ես ի՛նչ գիտեմ այդ մասին կամ ի՛նչ եմ արել: Կեդրոնականը, ինձ թւում է թէ յարաբերութիւն է պահպանել միայն տեղական մարմնի հետ, որի հայեցքների հետ իմինք շատ հարցերում չեն համերաշխում:

Մաղթելով ձեզ արդիւնաւոր ուշադրութիւն՝

Ընկերական բարեւներ
Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

Փաստ. 1543-18ա

Ա 2.– Հ.Յ.Դ. VI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Թեհրան, Օգոստոս 1911

Ընկերներ

Ստանալով Հ.Յ.Դ. VIերորդ Ընդհանուր Ժողովի գումարման տեղեկութիւնը տեղական կոմիտէից, շտապում եմ տեղեկագիրը ներկայացնել ձեզ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը որ ես անձամբ չեմ կարող ներկայանալ ժողովիդ։

Օրակարգի ցանկի միջից ես վերցնում եմ այն կէտերը, որոնց մասին ես փոքր ի շատէ ձեռնհասութիւն ունիմ գաղափար յայտնելու եւ բնականաբար առաջ անցնում եմ համարատուութեան հարցին։

ՀԱՄԱՐԱՏՈՒԹՈՒԹԻՒՆ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Ինչպէս գիտէք, ընկերներ, ես միակ դաշնակցական, հայ եւ քրիստոնեայ պատգամաւորն եմ Պարսկաստանի պարլամենտի մէջ. ես ընտրուել եմ 1910 Փետրուար ամսին Ատրպատականի հայութեան կողմից եւ ընդունուել եմ պարլամենտի մէջ 1910ի Դեկտեմբեր 1-ն այն է 14 ամիս խորհրդարանի բացուելուց յետոյ։

Հետեւաբար թէեւ Մէջլիսը այժմ քսանումէկ ամիս է որ գոյութիւն ունի, իմ տեղեկագիրը կը լինի միայն այնքան ժամանակուայ համար, որի ընթացքում ես մասնակցել եմ խորհրդարանի նիստերին, այն է ութ ամիս։

Հայ պատգամաւորը այդքան ուշ ընտրուեցաւ ու այդքան ուշ ընդունուեցաւ Պարսկաստանի խորհրդարանի մէջ այն պատճառով որ Պարսկաստանի թէ դաշնակցական եւ թէ ազգային իրաւասու հաստատութիւնների մէջ տարաձայնութիւն կար հայ պատգամաւորի թուի վերաբերութեամբ։

Ընտրական օրէնքի համաձայն բոլոր ոչ մուսուլման տարրերը պիտի զատ ընտրութիւն կատարեն (ամէն տարր իր մէջ սահմանափակուած) եւ ամէն մէկը պիտի տայ ներկայացուցիչ։ Արդ տեսնելով որ այդ տարրերի մէջ կան այնպիսիները որ միայն 10,000 հոգի ազգաբնակչութիւն ունին Պարսկաստանում — զոր օրինակ Զարտօշտիները, նրանք մէկ ներկայացուցիչի իրաւունք ունին,— այն ինչ հայերը որ իրանց 100,000 են հաշուում նոյնպէս մէկ ներկայացուցիչի իրաւունք ունին, եւ տեսնելով որ հայերը Պարսկաստանում մուսուլմաններից յետոյ ամենաբազմաթիւ եւ ամէնից կարեւոր ժողովուրդն են, մի հանգամանք որ բոլորովին աչքաթող էր արուած ընտրական օրէնքի մէջ, Թեհրանի եւ ամբողջ հարաւի ազգային կուսակցական մարմինները առաջին օրից եւեթ հայութիւնը անիրաւուած զգալով՝ վճռեցին պահանջել Պարսկաստանի հայութեան համար աւելի քան մէկ ներկայացուցչի իրաւունք, եւ ընտրութիւն կատարել այդ իրաւունքը ստանալուց յետոյ կամ ընտրութիւն բնաւ չկատարել։

Ատրպատականի Կեդրոնական Կոմիտէն եւ ազգային մարմինները նոյնպէս պահանջում էին մէկից աւելի ներկայացուցչի իրաւունք, բայց նրանք տարբերւում էին հարաւից այն բանով որ նրանք վճռել էին մէկ ներկայացուցչով մասնակցել եւ մէկից աւելին պահանջել։ Ահա այս տարաձայնութիւնը հարաւի եւ հիւսիսի հայերի մէջ եւ այդ տարաձայնութեան առթած թղթակցութիւնները եւ ձգձգումները պատճառ եղան որ աւելի քան մէկ տարի ուշացաւ հայ պատգամաւորի ընտրութիւնը։ Վերջապէս Ատրպատականի հայութիւնը վճռեց առանց ուշադրութիւն դարձնելու հարաւի հայութեան բողոքներին, ընտրութիւն կատարել եւ կատարեց։ Հարաւի հայութիւնը ի հարկէ չմասնակցեց այդ ընտրութեան եւ խորհրդարանը Ատրպատականի ընտրած պատգամաւորին ընդունեց իբրեւ ամբողջ պարսկահայերի ներկայացուցիչ, հարաւի հայութիւնը (որ չէր մասնակցել ընտրութեանը) զրկուած համարելով ձայնի իրաւունքից իր մերժման շնորհիւ։

Թէ հայերը քանի պատգամաւոր պիտի ունենան խորհրդարանում — այս հարցը դեռ պաշտօնապէս վճռուած չէ։ Ընտրական կանոնագիրը վերաքննութեան տակ է այս րոպէին եւ ինչպէս պահանջել են ամբողջ Պարսկաստանի հայութեանը ազգային եւ կուսակցական իրաւասու մարմինները, ես պիտի պաշտպանեմ այն կէտը որ հայերը աւելի քան մէկ ներկայացուցիչ ունենան։ Թէ իմ ջանքերը ինչ արդիւնք կը տան՝ դա ցոյց կը տայ մօտ ապագան, այժմուանից այսքանը կարելի է ասել որ երկու ներկայացուցիչի իրաւունքը հայերի համար գրեթէ ապահովուած է։

Մէջլիսում երբեք սովորութիւն չէր եղել որ պատգամաւորները նախապէս յայտնեն իրենց քաղաքական գոյնը։ Նրանք ընտրւում էին ու գալիս բազմում որեւէ աթոռի վրայ առանց ուշադրութիւն դարձնելու աջի կամ ձախի վրայ։ Նրանք առաջի օրը նոյնիսկ վիճակով էին ընտրել իրենց աթոռները եւ այնպէս խառն էին նստած որ կղերականների կամ Շարիաթի ներկայացուցիչը նստած էր ծայրայեղ ձախում եւ դեմոկրատ կամ ազատամիտ կոչուած կուսակցութիւնից շատեր կային նստած աջ կողմում։

Ես առաջին օրը սովորական երդումից յետոյ, մի ճառով յայտնեցի իմ քաղաքական դաւանանքը պետական գրեթէ ամէն մի ադմինիստրացիայի վերաբերութեամբ (պատերազմական, տնտեսական, դատական, կրթական, ընտրական, եւն) եւ գնացի նստեցի ձախ կողմում, հակառակ պատգամաւորներից շատերի ստիպմանը որ կեդրոնում նստեմ։ Այս հանգամանքը մի նորութիւն լինելով պարսից խորհրդարանում երկար վիճաբանութեան նիւթ դարձաւ կուլիսների ետեւում եւ դռնփակ նիստերում։ Մտքերը քիչ քիչ սկսեցին հաշտուիլ այդ երեւոյթի հետ եւ վերջապէս պատգամաւորներից շատերի համար համոզում դարձաւ որ դա էր իսկական եւ բնական ձեւը մտնելու խորհրդարան։ Կուսակցութիւնները սկսեցին զտուել երբ այժմեան խնամակալը (Նասըր-օլ Մուլքը) Թեհրան հասաւ եւ ըստ սահմանադրական կանոնների պահանջեց որ խորհրդարանը յայտնէ թէ որ կուսակցութիւնն է մեծամասնութիւնը եւ ինչ է մեծամասնութեան տրամադրութիւնը — արդէն մտքերը այնքան պատրաստ էին որ կուսակցութիւնները մի երկու օրուայ մէջ բաժանուեցան իրարից — ամէն կուսակցութիւն տպագրեց իր ծրագիրը, ամէն պատգամաւոր ամբիոնից յայտարարեց թէ ինքը որ կուսակցութեան է պատկանում, եւ ամէն կուսակցութիւն իր տեղը բռնեց խորհրդարանի աջ ու ձախ կողմում կամ կեդրոնում ըստ իր ծրագրի եւ քաղաքական դաւանանքի։

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Խորհրդարան մտնելուց յետոյ իմ առաջին գործը եղաւ ինձ հետ միացնել 14 հոգի — մեծ մասամբ ձախակողմեան պատգամաւորներից, եւ տասնհինգ հոգով ստորագրել մի պահանջ որ ընտրական օրէնքը ենթարկուի վերաքննութեան եւ փոփոխութեան. խորհրդարանը ընդունեց որ ընտրական օրէնքը վերաքննելի է եւ ընտրեց մի քոմիսիոն այդ աշխատութիւնը կատարելու եւ արդիւնքը ներկայացնելու խորհրդարանին։ Քոմիսիոնը իր գործը ամբողջովին վերջացրել եւ ներկայացրել է Մէջլիսին, ուր այժմ կատարւում է նրա առաջին ընթերցումը։ Նոր ու հին օրէնքի ամբողջ տարբերութիւնը այս զեկուցագրի մէջ,— որովհետեւ նրանց վիճաբանութիւնը դեռ չէ վերջացել Մէջլիսում, բայց կան արդէն անցած կէտեր, որ կ'արժէ յիշել այստեղ եւ որից պարզ երեւում է որ այժմեան օրէնքը աւելի ձախ է քան առաջինը։

1.- Իլերը – ցեղախումբերը։

1) Նախկին կանոնագրութեամբ ընտրութիւնները երկաստիճան էին. այս կանոնագրութեամբ միաստիճան են, ուղղակի։— Այս հարցը վճռուած եւ վերջացած է։

2) Նախկին կանոնագրութեամբ մեծ անարդարութիւն էր կատարուած գաւառների բաժանման մէջ, այսինքն վայրեր որ պակաս ազգաբնակութիւն ունէին աւելի բազմաթիւ ներկայացուցիչ տալու իրաւունք ունէին, քան այլ գաւառներ որ աւելի ազգաբնակութիւն ունէին։ Այժմ կանոնագրով ներկայացուցիչների բաշխումը կատարուած է աւելի արդարութեամբ։

3) Նախկին կանոնագրով հրաժարուող կամ մեռնող պատգամաւորի տեղ խորհրդարանը ինքն էր ընտրում նոր պատգամաւոր,— ներկայ կանոնագրով, նախկին պատգամաւորին ընտրող ժողովուրդը պիտի ընտրէ նոր պատգամաւորին։

4) Նախկին կանոնագրութեամբ ոչ մուսուլմանները եւ իլերը[1] պիտի իրենց մէջ անջատ կատարէին պատգամաւորի ընտրութիւնը։ Թէեւ մեծ ջանքեր եղեր ու լինում են իմ եւ ձախակողմեան կուսակցութեան կողմից որ նոր օրէնքով ընտրութիւնները կատարուին խառն, բայց ինձ թւում է թէ այս կէտը չպիտի յաջողուի մեզ։

5) Եթէ ընտրութիւնները ըստ նոր օրէնքի կատարուին անջատ եւ այդ բանը վերջնականապէս ընդունուի խորհրդարանի կողմից, ես յետոյ պիտի աշխատիմ որ հայերին տրուի աւելի քան մէկ ներկայացուցչի իրաւունք։

Դեռ պիտի տեսնել թէ այս հարցում որքան յաջողութիւն կ'ունենամ։*

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Մէջլիս մտնելուց յետոյ իմ առաջին հոգսերից մէկն էր, մէջլիսին ընդունել տալ հայերից զինուոր վերցնելու հարցը, եւ առաջին առիթը ձեռքից չտուի այդ խնդիրը վիճաբանութեան նիւթ դարձնելու պարլամենտում։ Զմեռուայ ամիսների ընթացքում ժամանակի զինուորական նախարարը (Ֆարման-Ֆարման) բախտիարցիներին հակառակութիւն անելու մտքով մէջլիս մտցրեց մի նախագիծ՝ զանազան իլերից ձիաւոր զինուորագրելու եւ Թեհրան բերելու կառավարութեան ծառայութեան համար։ Նախագիծը մի խիստ թերի բան էր, եւ

*) *Այս զեկուցագիրը վերջացնելու մօտ հասաւ ինձ կոմիսիոնի նախագիծը որով իլերին եւ ոչ մուսուլմաններին տրւում է անջատ պատգամաւոր ընտրելու — իսկ հայերին երկու ներկայացուցիչ ունենալու իրաւունք։*

Ինձ թւում է որ մէջլիսն էլ նոյնութեամբ կ'ընդունի այս նախագիծը եւ հայերը ապագայում կ'ունենան երկու պատգամաւոր մէջլիսում։

Մէջլիսում ուշադրութեան արժանի եղաւ միայն այն պատճառով որ մի մեծ թիւ պատգամաւորներից այն ժամանակ չէին սիրում բախտիարցիներին։

Նախագիծը կէս ընթերցանութեան միայն արժանացաւ եւ ապա արժանի եւ մշտական մոռացութեան յանձնուեցաւ։ Բայց ես օգտուեցայ նախագծից։ Առաջին օրից մի ուղղում մտցրի նախագծի մէջ որ այդ ձիաւորները պիտի զինուորագրուեն ոչ միայն իլերից այլ եւ կից ազգերից (պարսկերէնում այսպէս են անուանում ոչ մուսուլման ազգաբնակութիւններին) եւ հարցը դարձաւ ջերմ վիճաբանութեան առարկայ։ Ես սկզբում մի ճառով պաշտպանեցի իմ ուղղումը։ Իմ ճառիս պատասխանեց ՆալՖի բարձրագոյն կրօնաւորների աւագ ներկայացուցիչը* բացատրելով Ղուռանի տրամադրութիւնը որը թոյլ չէ տալիս մուսուլմանների երկրում ոչ մուսուլմաններին զէնք կրել կամ կռուի մասնակցել։ Նա իր խօսքերը վերջացրեց այս բառերով «Նրանք մեր պաշտպանեալներն են, նրանք պիտի վճարեն իսկ կռուիլ դա մեր պարտականութիւնն է»։ Ես անմիջապէս խօսք ուզեցի նրան պատասխանելու համար բայց նախագահը նկատելով որ մեր երկսի վիճաբանութիւնից կարող է հայ-մուսուլմանական մի խնդիր ծագել, ինձ հերթ չտուեց եւ որպէսզի ես չպնդեմ ժողովը փակեց։ Վիճաբանութիւնները շարունակուեց[ին] պաշտօնական սրահից դուրս ու ինձ յաջողուեցաւ ՆալՖի ներկայացուցիչին այնքան կակղացնել որ նա խոստացաւ յաջորդ նիստի ժամանակ յետ նահանջել իր բռնած դիրքից եւ մի բացատրական ճառով արտայայտել այս միտքերը. «Թէ մուսուլմանները իրաւունք չունին ոչ մուսուլմաններին բռնութեամբ զէնք տալ կամ կռուի տանել, իսկ եթէ ոչ մուսուլմանները այդ բանը ցանկանան կամովին եւ առանց բռնադատութեան, այն ժամանակ մուսուլման պետութիւնը պարտաւոր է նրանց ընդունել իր զօրքի շարքերում եւ նրանց խնամել ճիշտ այնպէս ինչպէս խնամում է մուսուլման մարտիկներին»։

Յաջորդ նիստին ես պատասխանեցի ՆալՖի ներկայացուցչի նախորդ եւ անհաշտ ճառին, որից յետոյ նա խօսք առաւ եւ արտասանեց վերոյիշեալ բառերը որոնց վերայ համաձայնութիւն էինք կայացրել նախապէս։ Այդքանն էր պէտք ինձ։ Մէկ անգամ երբ այդ պաշտօնական յայտարարութիւնը եղաւ եւ արձանագրուեց, պատգամաւորներից մէկը բարձրանալով ասաց, որ թէեւ ինքը այն գաղափարի է որ ոչ մուսուլմանները պիտի զինուորագրուեն պետութեան ծառայութեան մէջ բայց այդ հարցը պիտի վճռուի ընդհանուր զինուորագրութեան օրէնքը անցկացնելիս եւ ոչ այժմ, երբ խօսւում է մի քանի իլերից ձիաւոր կոչելու մասին։ Ես հասած լինելով իմ նպատակին անմիջապէս համակերպուեցայ այս առաջարկի հետ եւ յետ վերցրի իմ ուղղումը որով խնդիրը փակուեցաւ։

ՁԷՁՈՔՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ուրիշ հարցերի մէջ ես անձնականապէս չեմ կարողացել այնքան վճռական դեր կատարել որքան վերոյիշեալ կէտերի մէջ, բայց եւ այնպէս իմ բռնած ընթացքը զգալի ազդեցութիւն է թողել իմ պաշտօնակիցների վրայ։

Ես սկզբից այն գաղափարի եմ եղել որ Դաշնակցութիւնը որպէս կուսակցութիւն, եւ ես, որպէս պարլամենտի անդամ չէզոք դիրք պիտի բռնենք պարսիկ սահմանադրասէր կուսակցութիւնների հանդէպ։ Այդ ուղղութիւնը որին ես հետեւել եմ Մաջլիսում այն առաւելութիւնն է տուել ինձ, որ ես երբեք ստիպուած չեմ եղել մտնել այն բանակռիւների մէջ որոնք դառնում էին անձերի եւ մարդկանց շուրջը, այլ մասնակցել միայն զուտ սկզբունքային խնդիրների վիճաբանութեանը։ Շնորհիւ այս գործելակերպի ձեռք են բերուել հետեւեալ արդիւնքները։

1) Հայ պատգամաւորը նկատուել է մի անշահասէր եւ վստահելի մարդ։ Այս արդիւնքը հակառակ դէպքում չէր կարելի ձեռք բերել. կողմնակից հանդիսանալով մէկ կուսակցութեան, ես ստիպուած պիտի լինէի որքան էլ դժկամ, երբեմն պաշտպանել այս կամ այն անձնաւորութիւնը, եւ որքան էլ մաքուր լինէին իմ շարժառիթները այդպիսի ընթացքը կարող էր ինձ ենթարկել կասկածների — այնինչ այժմ կարողացել եմ բարձր կանգնել կասկածներից, եւ շնորհիւ այդ հանգամանքի

2) կարողացել եմ վայելել բոլոր կողմերի էլ վստահութիւնը։ Այս բացառիկ դիրքը ինձ տուել է մի յարմարութիւն որ զանազան կուսակցութիւնները եղել են ինձ հետ աւելի անկեղծ եւ աւելի ազատ եւ ես կարողացել եմ նրանց մէջ վստահութիւն ներշնչելով՝ նրանց միացնել այս կամ այն գործի մէջ որը ունեցել է ընդհանուր երկրօգուտ նշանակութիւն — զոր օրինակ

1) Այժմեան պարլամենտի նախագահի ընտրութեան հարցում

2) Պալատի բիւդջէի քուէարկութեան հարցում ուր եթէ միջամտած չլինէի գուցէ խնամակալը հրաժարական տար

3) նոր արտաքին քաղաքականութեան մշակելու հարցը*, կաբինետային եւ շատ այլ մանր խնդիրներ։ Ներողութիւն եմ խնդրում վերոյիշեալ կէտերը չլուսաբանելուս համար, որովհետեւ եթէ ուզեմ մանրամասնութիւնների մէջ մտնելով ամէն մէկի նշանակութիւնը պարզել, ստիպուած կը լինիմ հատորներ գրելու։

Ապացոյցի կարօտութիւն չունի այն հարցը թէ պարսիկ կուսակցութիւնների պայքարը միմեանց դէմ լի է անձնական հաշիւներով եւ դաւերով, մի հանգամանք որ կուսակցական ազնիւ մրցակցութիւնը վերածել է թունալից թշնամութեան։ Դաշնակցութիւնը կամ հայ պատգամաւորը իրանց յայտարարելով որեւէ կուսակցութեան կողմնակից — առանց մասնակցած լինելու որեւէ անձնական հաշուի կամ դաւի,— արդէն հակառակ կուսակցութեան մօտ պատասխանատու պիտի նկատուէին այն բոլորի համար որ նրանց դաշնակից պարսիկ կուսակցութիւնը արել է, պիտի կորցնէին իրենց գաղափարական բարձր մակարդակը հասարակութեան աչքում, եւ պիտի նկատուէին մի ընչաքաղց, անձնական հաշիւներով զբաղուող [տարր]։ Զէզոքութիւնը մեզ փրկել է այդ ամէնից։

*) Այդ ներկայացուցիչները հինգ հոգի են որոնց պարտականութիւնն է հսկել որ պարլամենտում հակառակ Ղուռանի ոչ մի օրէնք չանցնի։ Նրանք այսպէս ասած մի տեսակ լուելեայն կերպով ընդունուած vetoի իրաւունք ունին Մաջլիսում անցած օրէնքների վրայ։

*) Եթէ Մամադ Ալի Միրզէն վերադարձաւ Պարսկաստան, եւ եթէ ռուսերը թշնամական դիրք բռնեցին դէպի կառավարութիւնը, եւ եթէ բոլոր դեսպանատները ընդհանրապէս դժգոհ են ներկայ ռեժիմից, դա միայն պարտական է արտաքին քաղաքականութեան օտարատեաց բնաւորութեանը, որի շնորհիւ այս երկու տարուայ ընթացքում օտարահպատակին, մինչեւ իսկ ոչ մուսուլմանին վերաբերող ամէն խնդիր, իրաւացի կամ անիրաւացի, մատնուել է կատարեալ անուշադրութեան եւ հանդիպել է հակառակութեան։ Այսպիսի քաղաքականութիւն ստեղծելու համար մեծապէս մեղադրելի են դեմոկրատները։ Իմ վերոյիշեալ ակնարկս այս քաղաքականութիւնը փոխելու եւ աւելի բանաւոր դարձնելու հարցին է վերաբերում։

ԱՑԼ ՀԱՐՑԵՐ

Այլ մանր հարցերի մէջ ուր ես առիթ եմ ունեցել մասնակցելու խորհրդարանի կամ քոմիսիոնների մէջ ես հետեւեալ կերպով եմ ղեկավարուել։

1) Ես մեծապէս նպաստել եմ այժմեան խնամակալի ազդեցութեան ամրանալուն, որովհետեւ այս մարդը ամէնից կրթուած, լուսամիտ ու ազատամիտ անձնաւորութիւնն է Պարսկաստանում։ Բացի սրանից, վայելելով մեծ համակրութիւն եւրոպական կաբինետներում, մանաւանդ անգլիական բարձր շրջաններում, ձեռնհասութիւն ունի մեծ ծառայութիւն անել Պարսկաստանին արտաքին քաղաքականութեան միջոցով։

2) Պետական բիւդջէն կազմելիս աշխատել եմ ի նպաստ այն բանի որ մեծ ռոճիկները փոքրացուին եւ փոքրերը մեծացուին։

3) Մեծ չափով նպաստել եմ կրթական հարցին եւ մասնաւոր կերպով այն խնդրին որ տղերք ուղարկուին Եւրոպա կրթուելու եւ վերադառնալու Պարսկաստան. իմ առաջարկով 30 հոգի ուղարկուած տղերքից 15ը պիտի պատրաստուին ուսուցիչներ, նոր դպրոցներում ծառայելու համար. այս ուսանողների ծախքը քուէարկելիս քոմիսիոնի մէջ իմ առաջարկն էր, որ ուսանողները ընտրուին այնպիսի ընտանիքների միջից որոնք իրանք միջոցներ չունին իրենց զաւակները Եւրոպա ուղարկելու, որը եւ նոյնութեամբ ընդունուեցաւ թէ քոմիսիոնում եւ թէ Մաջլիսում։

4) Ես նպաստել եմ Եւրոպայից խորհրդականներ բերել տալու խնդրին, այնպէս որ ամէն մինիստրութիւն վերակազմուի նոր եւրոպական սիստեմով։

Սրանով պիտի փակեմ իմ Մաջլիսում կատարած դերի համարատուութիւնը, ներողութիւն խնդրելով որ ամէն մի կէտը ժամանակ չունիմ այնքան երկարօրէն բացատրելու որքան ես ինքս զգում եմ որ պիտի բացատրել։

Փաստ. 1543-18բ

Ա 3.– ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Դաշնակցութիւնը Պարսկաստանում գործելիս, մի կողմից աչքի առաջ ունի իր ծրագիրը — միւս կողմից էլ պիտի աչքի առաջ ունենայ Պարսկաստանի անկախութեան եւ ամբողջութեան հարցը որպէս Պարսկաստանին ու պարսիկներին չատ [յատուկ] քաղաքական, աշխարհագրական, ցեղագրական, տնտեսական, պատմական, կրօնական առանձնայատուկ հանգամանքներ,— որոնք չէին կարող նախատեսուած լինել մեր ծրագրի մէջ կամ որեւէ Ընդհանուր Ժողովի կողմից։

Այս խնդիրները որ կենսական նշանակութիւն ունին Պարսկաստանի համար եւ մանաւանդ նրա անկախութեան [եւ] ամբողջութեան հարցը չատ փափուկ չօշափման կարիք ունին։— Դժբախտաբար մեր ընկերներից ոմանք (մեծապէս նրանք որ դրսից են գալիս եւ ծանօթ չեն տեղական հանգամանքներին եւ դիւանագիտական պահանջներին) ամենեւին չեն ուզում ուշադրութիւն դարձնել այս կէտերին, եւ ուզում են Պարսկաստանում գործել նոյն ուղղութեամբ ինչ գործել են զորօրինակ Կովկասում — ուր երկրի ամբողջութեան կամ անկախութեան հարց բնաւ չէ եղել, եւ որը երբեք չէ տառապել արտաքին գրաւման շարունակական մղձաւանջի տակ։

Ի նկատի ունենալով միւս կողմից որ Դաշնակցութիւնը այժմ Պարսկաստանում վայելում է այնպիսի արտաքոյ կարգի դիրք, որ նրա բռնած այս կամ այն ուղղութիւնը կարող է անմիջապէս անդրադառնալ Պարսկաստանի ճակատագրի վրայ, եւ պատմականօրէն լաւ կամ վատ նշանակութիւն ունենալ երկրի համար,

Ի նկատի ունենալով որ մի գաւառական քաղաքում. որպիսին Թաբրիզն է,երբեք չեն կարող գոյութիւն ունենալ այն տեղեկութիւնները, այն հմտութիւնը, այն մօտ ծանօթութիւնը քաղաքական պահանջներին ու կնճիռներին որքան մայրաքաղաքում,

Ի նկատի ունենալով որ պարսկական շրջանների (պետական, կուսակցական, ազգային եւն) կեդրոնները գտնւում են Թեհրանում։ Այս կեդրոնները բնականաբար ունին բարձրագոյն իշխանութիւն, իսկ երբ ուզում են Դաշնակցութեան հետ յարաբերութեան մէջ մտնել իրենց առաջ գտնում են մի տեղական կոմիտէ, որ բնաւ համապատասխան իրաւասութիւնները չէ վայելում իր կազմակերպութեան մէջ, մի բան որ ձախլիկ դրութեան մէջ է դնում մեր կազմակերպութիւնը,

Ի նկատի ունենալով որ յաճախ տեղական կոմիտէն ստիպուած լինելով մի կամ մի ուրիշ անմիջական վճիռ կայացնել որեւէ հարցի վերաբերութեամբ — այդ վճիռը պարսիկ հասարակութեան կամ կուսակցութիւնների առաջ ներկայանում է որպէս ամբողջ Դաշնակցութեան գործ — այն ինչ տեղական մարմինը չունենալով այդպիսի ձեռնհասութիւն նրա բռնած ընթացքը լինում է ոչ հասուն խորհրդածութեան արդիւնք եւ կարող է վարկաբեկել Դաշնակցութեան անունը,

Ի նկատի ունենալով որ մեր Պարսկաստանի իրաւասու մարմինները ոչ մի ընդհանուր կապով կապուած չեն իրար հետ, եւ յաճախ պարսիկների հանդէպ գտնըւում են հակասական դիրքի մէջ — մի բան որ վատ տրպաւորութիւն է թողնում դրսի աշխարհի վրայ եւ մեր վարկը ձգում է պարսիկների աչքում,

Եւ վերջապէս, ի նկատի ունենալով որ Դաշնակցութիւնը պէտք է ունենայ մի լուրջ ձեռնհաս մարմին որ ծրագրէ մի նպատակայարմար եւ մանրամասն կուսակցական քաղաքականութիւն Պարսկաստանի համար, ես առաջարկում եմ որ Ընդհ. Ժողովի մասնաւոր հրահանգով Թեհրանում կազմուի մի դաշնակցական պատասխանատու մարմին, որի պարտականութիւնը կը լինի Ընդհ. Ժողովի գծած սահմանների մէջ ծրագրել մի ընդհանուր քաղաքականութիւն եւ ղեկավարել Դաշնակցութեան քաղաքականութիւնը ամբողջ Պարսկաստանում։

Պարսկաստանի բոլոր իրաւասու մարմինները պիտի ենթարկուին «Պատասխանատու Մարմնի» հրահանգներին, ինչ վերաբերում է Դաշնակցութեան այսպէս ասած արտաքին քաղաքականութեանը Պարսկաստանում, կամ բոլոր այն հարցերում ուր Դաշնակցութիւնը յարաբերութեան մէջ է մտնում պարսիկ կառավարութեան, պարսիկ կուսակցութեանց կամ ժողովուրդի հետ։

Այս Պատասխանատու մարմինը կարող է կազմուել հետեւեալ կերպով

1) Մէջլիսի հայ դաշնակցական պատգամաւորներից

2) Թեհրանի հեղինակաւոր եւ տեղական հանգամանքներին ծանօթ դաշնակցական ընկերներից

3) Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչից, Ատրպատականի կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչից։

4) Գիլանի[2] կոմիտէի ներկայացուցիչից

5) Պատահական հեղինակաւոր ընկերներից, որոնց մարմինը կարող է հրաւիրել իր նիստերին։

Այսպիսի մի մարմնի գոյութիւնը մէկ անգամ ընդ-

2.- Գիլանի կազմակերպական շրջանը կ՚ընդգրկէր Կասպից ծովու հարաւ արեւմուտքի Ռաշտ, Էնզելի եւ Ղազուին քաղաքներու շրջակայքը։ Գիլանը, ինչպէս յիշուեցաւ, ատեն մը մրցակից էր Թեհրանի՝ Պարսկաստանի երկրորդ Կ. Կոմիտէութեան վերածուելու համար։

միշտ վերջ կը դնէ այնպիսի երկդիմի կացութեան որի մէջ ընկաւ կուսակցութիւնը սրանից մէկ տարի առաջ, պարզապէս նրա համար որ ընկերներից մի խումբ, անձեռնհաս եւ անիրաւասու, ցանկանում էին մի համերաշխութիւն կնքել պարսիկ Դեմոկրատ կուսակցութեան հետ, այնինչ մի այլ խումբ հակառակ էր դրան։ Ցանկացող խումբը երկար բանակցութիւններ վարեց դեմոկրատների հետ, որոշ կէտերի վրայ համաձայնութեան եկաւ. վերջը հակառակողների ստիպմամբ այդ բոլորը ջուրը ընկաւ եւ ոչ մի համերաշխութեան չկնքուեցաւ։ Պարսիկ Դեմոկրատ կուսակցութեան համար այդ բոլորը մնաց անբացատրելի եւ գուցէ մի ընթացք՝ անարժան, Դաշնակցութեան պէս մի վճռական համարուած կուսակցութեան համար։

Այդպիսի մի մարմնի գոյութիւնը մէկ անգամընդմիշտ վերջ կը դնէ այն բոլոր ցաւալի հարցերին, որոնց չնորհիւ Եփրեմի նման մի անզուգական ընկեր, անընդհատ ասեղնահարուած է տեղական ընդունակութիւններով՝ համեստ իսկ յաւակնութիւններով՝ անհամեստ մարմնի կողմից, ստիպուած է եղել իրան գրաւոր կերպով յայտարարելու տեղական մարմնի գործունէութեան շրջանից եւ ազդեցութիւններից ազատ եւ մինչեւ այսօր դրսի ընկերներից ոչ ոք հարց չէ տուել եւ գուցէ չէ իմացել թէ ինչ պատճառով Եփրեմի պէս ընկերը, որի անունով կազմակերպութիւնը իրաւունք ունի պարծենալու, ստիպուած է եղել այսպէս վարուիլ։ Եփրեմի խրոխտ ոգին նրան թոյլ չէ տուել որեւէ դուռ ընկնել «իր ցաւերը» բանալ ընկերների առաջ համակրութիւն ձեռք բերելու համար, իսկ նրան հալածողները գուցէ ամէն տեղ ներկայանում են որպէս իրաւասու մարմին եւ հարցերը լուսաբանում են իրենց տեսակէտին յարմար ձեւով։

Այս հարցերը եթէ ուզեմ մանրամասն կերպով պարզաբանել, գուցէ հատորներ ստիպուած լինիմ գրել որի համար ոչ ես ժամանակ ունիմ գրելու եւ ոչ ժողովդ ժամանակ կ՚ունենայ կարդալու։ Ես միայն չօշափեցի այդ հարցերը ցոյց տալու համար թէ ինչպիսի անհրաժեշտ կարիք կայ Թեհրանում ստեղծել մի բարձր իրաւասու մարմին, որի հեղինակաւորութեան առաջ խոնարհուէր ամէն մի կազմակերպական մարմին — այլապէս նոր խնդիրներ կը գան կը բարդուեն եղածների վրայ ու գուցէ չուտով կազմակերպութիւնը Պարսկաստանում գտնէ իրեն պառակտուած ու ջլատուած ներսից եւ խայտառակուած դրսից։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ.
(1909 – 1912)

ԲԱԺԻՆ Բ.
ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

Մինչեւ 1912 թուականը, ինչպէս յիշուեցաւ, Ատրպատականի Կեդր. Կոմիտէութեան իրաւասութիւնը կը տարածուէր ամբողջ Պարսկաստանի վրայ: Ան ծանօթ էր Վրէժ կամ Վրէժստան ծածկանունով: Կեդրոնն էր Թաւրիզ քաղաքը, որուն համար կը գործածուէր Վրէժ ծածկանունը. հետեւաբար ստորեւ տրուած երկու տեղեկագրերը կը վերաբերին Թաւրիզ քաղաքի կոմիտէի 1909 եւ 1910 տարիներու գործունէութեան: Կը հետեւին յաջորդաբար՝

– Շահի կամ Շահաքաղաքի (Թեհրան) 1909-1911 տարիներու տեղեկագրերը.

– Գետափի (Նոր Ջուղա) տեղեկագիրը.

– Գիլանի (Ռաշտ, Էնզելի, Ղազուին) եւ անոր մաս կազմող Գաղազանի եւ Ղարաղանի տեղեկագրերը.

– Համատանի տեղեկագիրը:

Փաստ. 477-17

Բ 1.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՎՐԷԺԻ ԿՈՄԻՏԷԻ
[1909–1910]

Կոմիտէն ընտրուել է անցեալ տարի նոյն այս ամիսներին։ Նախկին կոմիտէից ստացել է հետեւեալ խմբերն ու միութիւնները։

Միածան, Բոյս կանանց խմբեր. Վահան, Իդէալ, կայծակ եւ կօշկակարների, գործակատարների ու դերձակների միութիւնները. (վերջինս կազմալուծուած դրութեան մէջ)։

Նախքան անցնիլը խմբերի գործունէութեան, պէտք է ասել, որ ընդհանուր առմամբ այդ շրջանում խմբերի դրութիւնը այնքան էլ մխիթարական չի եղել եւ դրութիւնը շարունակուել է գրեթէ [մինչեւ] վերջերը։ Ինչպէս գիտեն ընկերները, մեր շրջանը այդ ժամանակ այնպիսի խառնակ ու չփոթ դրութեան մէջ է եղել, որը պարզ է հնարաւորութիւն չպիտի տար կոմիտէին եւ ընկերներին խմբերի դրութիւնը բարւոքելու։

Քաղաքական այդ խառնակ վիճակը,– տենդոտ ու միշտ յուզուած տրամադրութիւնները, դէպքերն ու կռիւները միշտ էլ անակնկալների սպասեցնող–, չէր կարող նպաստաւոր լինել նորմալ աշխատանքների համար, թէկուզ նրանք լինէին ոգեւորիչ ու յեղափոխական տրամադրութիւնը բարձրացնող։ Այդ շրջանում խմբերն ոչ իրենք են ունեցել կանոնաւոր ժողովներ, ոչ էլ հնարաւորութիւն կար հետեւելու նրանց կանոնաւորութեան եւ անդամավճարների գանձման։ Բայց աւելորդ ու անտեղի ոգեւորութիւնից խուսափած լինելու համար աւելացնենք, որ յեղափոխական տենդոտ գործունէութիւնը չէ եղել ընկերներին կասեցնողը իրենց պարտականութիւնները կատարելուց. համարձակութիւն ունենանք խոստովանելու, եթէ չափազանցութիւն չհամարուի, որ պարսկ. շարժումների վերաբերմամբ, եթէ չհաշուենք մանր ու մունր իրողութիւնները, մեր շրջանի լայն մասսայի աջակցութիւնը մեռել թաղողների, թամաշչիների ու ձրի ոգեւորութեան սահմաններից այն կողմ չի անցել։

Միայն դէպքերի վերջերին ընկեր Վասոյի աջակցութեամբ ու ղեկավարութեամբ կազմուեց տեղացի ընկերներից մի խումբ, որին զէնքեր մատակարարուեց կոմիտէի տրամադրութեան տակ եղած ինքնապաշտպանութեան զէնքերից. խումբը մասնակցեց միայն մի կռուի։ Այս է եղել մեր շրջանի ընդհանուր դրութիւնը քաղաքական այն ցնցող դէպքերի հանդէպ։

Վերեւում յիշած դրութիւնը, այն է ժողովների ու դասախօսութիւնների անկանոնութիւնը, համեմատական չափով վերցրած, կարծես սովորութիւն դարձած ծայր է տուել նաեւ մինչեւ վերջերը։ Բացի դրամականից առհասարակ թոյլ է եղել նաեւ պրոպագանդայի գործը. ի բաց առեալ մի քանի խմբերի, կանոնաւոր եւ սիստեմատիկ դասախօսութիւններ չեն եղել պէտք եղածի չափ, որի պատասխանատուութիւնն որոշ չափով պէտք է Վահան խմբի վրայ ընկած լինի, իբր պրոպագանդիստ մասնախումբ, որի պարտականութիւնն է օգնել կոմիտէին պրոպագանդայի գործի մէջ։ Այդ պակասը լրացնելու համար մասամբ ամառուայ ընթացքում ընկերների աջակցութեամբ կազմուել էր դասընթացքների ծրագիր եւ կոմիտէին կից մարմին, որի նպատակը պիտի լինէր նպաստել ինտէլիգենտ ընկերների զարգացման գործին՝ ծրագրային եւ Դաշնակց. աշխարհահայեացքի հետ կապ ունեցող հարցերի մէջ եւ միաժամանակ պէտք է աջակցէր կոմիտէին պրոպագանդայի գործում։ Նոյն այդ մարմնի նախաձեռնութեամբ տրուեցին մի շարք դասախօսութիւններ, որոնք սակայն չտուին սպասուած արդիւնքը, որովհետեւ յարատեւութիւն չունեցան։ Նոյն մարմնի նախաձեռնութեամբ հիմք դրուեց նաեւ Առաւօտի[3] հրատարակութեան։ Վերջին Շրջանային ժողովը պարտականութիւն էր դրել կոմիտէի վրայ նաեւ մօտիկ յարաբերութիւն ստեղծել թուրք ինտելիգենտ տարրերի հետ, նրանց միջոցով պրոպականդը տարածելու թուրք մասսայի մէջ եւ առաջ բերել թուրք կազմակերպութիւն, որի անհրաժեշտութեան մասին միշտ խօսուել էր։ Այդ հողի վրայ ընկերների հետ ունեցած մի շարք ժողովներում նախագիծ մշակուեց կազմուելիք թուրք կուսակցութեան համար։ Ծրագրի մէջ մտել են այդ կազմակերպութեան աշխարհահայեացքն ու մինիմում պահանջները հիմնուած Պարսկաստանի արդի իրականութեան ու նրանից բխող պահանջների վրայ։ Ծրագրի մի մասը, այն է Պարսկ. ներկայ իրականութիւնն ու մինիմում պահանջները, թարգմանուեցին թուրքերէն եւ տրուեց մի քանի ընկերներից ու թուրքերից կազմուած ժողովին։ Այդ ժողովները տեւել են մօտ մի ամիս. կարդացուել է ծրագիրը. տեղի են ունեցել խորհրդակցութիւններ. բայց ցաւելով պէտք է յայտնել ընկերներին, որ շրջապատի համեմատութեամբ այդ ինտելիգենտ թուրքերի մէջ չի գտնուել այն չիտակ ու անկեղծ վերաբերմունքը, ինչպիսին անհրաժեշտ էր սկսուած գործը յարատեւ դարձնելու համար։ Շրջ. ժողովի որոշմամբ ու թոյլտուութեամբ կոմիտէն իրաւունք ունէր նաեւ մասնակցելու հասարակական-կուլտուրական հիմնարկութիւնների ընտրութիւններին. մասնակցութիւն եղել է կանանց բարեգ. ընկ. ընտրութիւններին։ Պայքարել են Ս. Դեմոկրատներն ու հնչակեանները։ Միացեալ գրադ[արան] – ընթ[երցարան] վարչութեան մէջ նոյնպէս ընկերներ են անցել. պայքար չի եղել։

Ղալայի[4] դպրոցի հոգաբարձական ընտրութիւններին կազմակերպուած մասնակցութիւն չի եղել։ Կոմիտէն յանձնարարել է Ղալայի ընկերներին մասնակցել ընտրութիւններին իբր Ղալայի երիտասարդութիւն։ Կազմակերպուած մասնակցութիւն է եղել նաեւ թեմ. պատգամաւորական ժողովի ընտրութեան, որի առթիւ հրաւիրուել է ընկերների ժողով, ուր որոշուել է ի նկատի ունենալով որ այդ հիմնարկութիւնը կարող է զարկ տալ կուլտուրական-կրթական գործին եւ կանոնաւորել այդ կարգի հիմնարկութիւնները, մասնակցել ընտրութիւններին եւ անցկացնել յառաջադէմ տարրերի թեկնածութիւնը. ընտրութիւնների հետեւանքը նպաստաւոր է եղել։ Յաջողուել են նաեւ Մէջլիսի եւ անջումանի ընտրութիւնները։ Ուրիշ կուսակցութիւնների կողմից պայքար եղել է միայն վերջին երկու՝ անջումանի եւ Մէջլիսի ընտրութիւններին։ Խմբակների ու միութիւնների աշխատանքները առանձին վերցրած, ներքին խնդիրներից բացի, որը յաճախ աւելի շատ յաճախ ժամանակ ու էնէրգիա է խլել, քան սիստեմատիկ զբաղմունքները, տարուել են հետեւեալ կերպով.

Վահան խումբը աւելի լայն ընկերական ժողովներում զբաղուել է այժմէական նշանակութիւն ունեցող մի շարք հարցերով. խօսուել է պարսկական շարժումների, Պարսկաստանի իրականութեան, պատմութեան, շարժումների բնոյթի եւ դրա հետ կապ ունեցող նման հարցերի մասին։ Այդ ուղղութեամբ խումբը փոքր ի շատէ կանոնաւոր ժողովներ ունենում է ուսումնական տարուայ ընթացքում իսկ անցեալ եւ այս ամառ դադարել է խումբը ժամանակաւորապէս ժողովներ ու հաւաքումներ ունենալուց, ընկերների մեծ մասի քաղաքից բացակայելու պատճառով։ Խումբը ունեցել է մի կարեւոր որոշում, որը դժբախտաբար չի իրականացուել։ Որոշուել էր որ խմբի անդամներից մէկն ու մէկի պատրաստած դասախօսութիւնը նախ պէտք է կարդացուէր խմբում եւ ապա խմբի ընկերների համաձայնութեամբ նոյն այդ դասախօսութիւնը տրուէր հրապարակային ժողովներում կամ ընկերների լայն շրջաններում։ Պէտք է նկատել որ առհասարակ որոշումներով ու ցանկութիւններով լիքն են մեր խմբերի արձանագրութիւնները, որոնց նոյնիսկ մի մասը եթէ իրագործուած լինէր, դրութիւնը, գործը ցանկալի բարգաւաճման հասած կը լինէր։ Վահան խմբի եւ նման որոշումները իրականացնելու դէպքում գուցէ լրացուէր որոշ չափով այն պակասը որը խիստ զգալի է եղել վերջերը եւ որը ընկերների արդարացի նկատողութիւնների ու պահանջների առիթ տուել։ Ա՛յն, որ թոյլ է տարուել դրսի հասարակութեան մէջ լինելիք պրոպագանդան, չեն եղել հրապարակային դասախօսութիւններ, եթէ չհաշուենք անց-

3.- «Առաւօտ» 1909-1911 Թաւրիզ հրատարակուած դաշնակցական պաշտօնաթերթ:

4.- Ղալա – Թաւրիզի թերդին (Արք) շրջանը գտնուող հայաբնակ թաղամասն է:

եալ տարուայ ընկեր Ռոստոմի տուած մի քանի դասախօսութիւնները, որոնց նմանները յաճախ պէտք է կրկնուէին օգտուելով նպաստաւոր պայմաններից, աւելի լայն խաւերում դաշնակցական պրոպագանդը ընդլայնելու նպատակով։ Այդպիսի դէպքերում այդ ասպարէզում ձեռնհաս եւ կարող ընկերներն են որոնք հրապարակ պիտի իջնեն լրացնելու այդ պակասը։

Ընկերների ներողամտութիւնը խնդրելով այն բանի համար, որ խմբերի դրութեան եւ գործունէութեան մասին խօսելիս, ակամայից մէջ են գալիս կոմիտէի ցանկութիւններն ու նկատումները, անցնենք միւս խմբերին։ Յիշեցնենք յիշել, որ Վահան խումբը բաղկացած է այժմ 15 հոգուց, մեծ մասամբ ուսուցիչներ, անդամավճարների գումարը հասնում է ամսական 7-8 թուման։

Ցոյս.— Կանանց խումբը բաղկացած է այժմ 14 հոգուց. 1909 թուի ընթացքում ունեցել է մօտ 14 ժողով. եղել է մի շարք դասախօսութիւններ ծրագրային եւ կուսակցական խնդիրների շուրջը պտտող հարցերի մասին, այն է զանազան կուսակցութիւնների ծրագրերի բացատրութիւն, տաճկական սահմանադրութեան եւ այնտեղ գործող կուսակցութիւններ, կանանց հարցը. բացի այդ խմբի կարող անդամուհիները տուել են մի քանի դասախօսութիւններ առողջապահական եւ դաստիարակչական բնոյթ կրող, օր. ժառանգականութիւն, դաստիարակութիւն եւայլն։ Խմբի անդամավճարների գումարն է 2-3 թուման։

Ճիծան կանանց խումբը 1909 թուի ընթացքում ունեցել է 11 նիստ. եղել են 12 դասախօսութիւններ։ Սկզբում խումբը որոշել է խմբի մասին դասախօսութիւններ պատրաստելու պարտականութիւնը դնել խմբի անդամուհիների վրայ, զգալով այն պակասը, որ նոյնիսկ կարող ընկերուհիները չեն սովորում մի որեւէ հարց ուսումնասիրել եւ իմացածը արտայայտել։ Եղել են մի շարք դաստիարակչական-մանկավարժական զրոյցներ խմբի անդամուհիներից պատրաստուած։ Այդ դասախօսութիւնները տարուել են խմբի դասախօսի ղեկավարութեամբ. դասախօսի կողմից խմբին տրուել են նաեւ մի քանի նման հարցերի շուրջը պտտող դասախօսութիւններ, երբեմն նաեւ ժողովրդական-գիտական բնոյթ կրող՝ խմբի անդամուհիների ցանկութեամբ։ Ուրիշ դասախօսութիւնների միջոցաւ խօսուել են նաեւ կանանց հարցի, ընտրողական սիստեմների, սահմանադրական պետութիւնների եւ պարսկական սահմանադրութեան հետ կապ ունեցող հարցերի մասին։ Խումբը այժմ բաղկացած է 19 հոգուց. անդամավճարների քանակն է մօտ երկու թուման ամսական։

Կանանց խմբերը միասին կազմել են Կարմիր խաչի միութիւնը, որը անցեալ կոմիտէական շրջանից յետոյ էլ շարունակել է իր գործունէութիւնը, ինչ չափով որ կարիք է զգացուել նրա աջակցութիւնը իբր այդպիսին։

Գործակատարների եւ կօշկակարների ժողովներում եղել են դասախօսութիւններ հետեւեալ հարցերի մասին.

Տաճկաստանի յեղափոխութիւնն, պատգամաւորական ժողովի նշանակութիւնը պարսկահայերիս համար, Պարսկաստանի քաղաքական եւ տնտեսական պայմանները, հայ աշխատաւորութեան դերը նրանց հանդէպ, պարսկ. սահմանադրութիւնը եւ դրա հետ կապ ունեցող մի շարք հարցեր, արհեստակցական միութիւններ՝ կուսակցական թէ՞ անկուսակցական։ Միութիւնները ունեցել են իրենց ներքին խնդիրները, շատ անգամ կարեւոր մանաւանդ կօշկակարների միութեան ժողովներում։ Գործակատարները մի շարք ժողովներում զբաղուել են իրենց միութեան ներքին կանոնադրութիւնը մշակելու աշխատանքներով. նոյնը եւ կօշկակարները վարչութեան եւ կոմիտէական խառը ժողովներում։ Վերջին ժողովները յաճախակի զբաղուել են նաեւ զանազան պայմանագրերի եւ կանոնադրութիւնների մշակմամբ, միութիւնների եւ խմբերի ներքին խնդիրների մէջ են մտնում նաեւ ընտրութիւնների եւ դրամական հաշիւների ճշտում, ընկերների մէջ պատահած թիւրիմացութիւնների պարզաբանութիւն, հաշուետուութիւններ եւայլն։

Պէտք է ասել, որ դերձակների միութիւնը ամէնից շատ է տուժել ազատ դասախօսներ չլինելու պատճառաւ. բացի մի քանի դասախօսութիւններից, այն է՝ ինչպէս են առաջ եկել ներկայ հասարակական կարգերը, փողի ծագումը, տեխնիկայի զարգացումն ու մանր արհեստաւորները, միութիւնը չի ունեցել սիստեմատիկ դասախօսութիւններ, որոնց կարիքը միշտ զգացել են իրենք եւ մի տեսակ խորթ զաւակի պէս ամէնից քիչ են ուշադրութեան արժանացել ընկերների կողմից։ Խումբը վերակազմուել է այս տարի Մայիս ամսին, այժմ ունի 17 անդամ. ամսական մօտ 2 թուման անդամավճարով։

Կօշկակարների Մեղու միութիւն. անդամների թիւը եղել է 36. ամսավճար 3 թուման։

Գործակատարների թիւը 30-35 է փոփոխական թուով, անդամավճարն է մօտ 4 թուման։

Կայծակ քաղաքական խումբը, բաղկացած է 21 հոգուց. խմբի անդամներն են ազատ պրոֆեսիայի պատկանող ընկերներ։ Ամսավճարն է 40-45 դրան։ Խումբը չի ունեցել յատուկ դասախօսներ։ Դասախօսութիւններ եւ զրոյցներ եղել են ընկերների կողմից առաջարկուած զանազան այժմէական բնոյթ կրող հարցերի շուրջը, պարսկական շարժումների, քաղաքական դէպքերի եւ կազմակերպութեան հետ կապ ունեցող որոշ խնդիրների առթիւ։ Խումբը վերջերը, դաշնակցական կլուբ ունենալու անհրաժեշտութիւնը զգալով եւ այն հետզհետէ իրականացնելու նպատակով ձեռնարկեց մի շարք ընտանեկան երեկոյթների, որոնցից ստացուած արդիւնքը յատկացնելու է վերոյիշեալ նպատակով հիմնուած Ֆոնդին։ Կայծակ խումբը ինչպէս նաեւ միւս խմբերն ու միութիւնները իրենց ժամանակին զբաղուել են նաեւ ընդհանուր եւ շրջանային ժողովների հարցերի ու առաջարկների քննութեամբ ու խորհրդակցութիւններով։ Դրուած հարցերի մասին խմբերից եկած կարծիքներից կոմիտէն հանել է սենթէզը եւ իր ներկայացուցչի միջոցով ուղարկել Շրջանային ժողով։ Ուր որ հարկն է ներկայացուել են նաեւ այդ առթիւ եղած խմբերի առանձին կարծիքներն ու առաջարկութիւնները, եթէ նրանք եղել են կարեւոր եւ անհրաժեշտ։ Նախկին կոմիտէից ստացած Իդէալ խումբը կազմալուծուել է անդամներից մեծ մասի քաղաքից հեռանալու պատճառով. մնացած անդամները մտել են ուրիշ խմբերի ու միութիւնների մէջ։

Միութիւնների զբաղմունքների մէջ աչքի ընկնող երեւոյթ է ներկայացնում կօշկակարների Մեղու միութեան մի ամբողջ տարուայ պայքարը ուստաների դէմ։ Գուցէ եւ որոշ չափով արդարացի է ընկերների այն կարծիքը, որ կոմիտէն ամբողջովին կօշկակարների միութեամբ է զբաղուել. բայց եթէ ընկերները ի նկատի ունենան այն մի շարք իրաւունքները, որ ձեռք է բերուած այդ ժամանակամիջոցի ընթացքում, գուցէ կոմիտէի եւ կօշկակարների գործադրած էներգիան ապարդիւն չհամարեն։ Մեղու միութեան եռանդուն աջակցութեան շնորհիւ բանուորութիւնը կարողացել է ի սպառ վերացնել կտորով աշխատելը։ Ձեռք է բերուած 10 ժամեայ բանուորական օր, աշխատավարձի աւելում, ուստաների եւ բանուորների յարաբերութեանց սահմանների որոշում եւ մի շարք ուրիշ իրաւունքներ որոշ չափով բարելաւող կօշկակար բանուորների դրութեան։

Ճիշտ է, որ այդ բոլորի ձեռք բերելն ու գործադրութեան մէջ մտցնելը քիչ դժուարութիւնների հետ կապուած չեն եւ քիչ ժամանակ ու էներգիա չեն սպառել թէ՛ կոմիտէից եւ կօշկակարների Մեղու միութեան վարչութիւնից ու առհասարակ կօշկակարներից, բայց հազիւ թէ չհամոզուին ընկերները, որ այնքան էլ ի զուր չեն անցել գործադրուած աշխատանքն ու ջանքը։ Եթէ չհաշուենք այն, որ բանուորութիւնը սովորեց գիտակցել իւր շահերն ու ի հարկին պահանջող դառնալ իր իրաւունքների բռնաբարման դէպքում, հէնց վերեւ յիշածներն էլ բաւական էին բաւարար դարձնելու շրջանիս գործունէութիւնը այդ հողի վրայ. բայց ցաւելով պէտք է յիշել որ բանուորների եւ ուստաների մէջ ծագած սուր յարաբերութիւնները, որոնց սկզբներում յաջողւում էր հարթել շատ անգամ ի նպաստ բանուորների, վերջերը այնպիսի կերպարանք ստացան, որ առիթ տուին գործատէրերին աւելի ուժեղ կերպով կազմակերպուելու եւ միացած ոյժերով հակազդելու բանուորութեան սկսած պայքարին։ Քիչ չնպաստեց դրան գործի պակասութիւնն ու որոշ չափով էլ բանուորութեան հետզհետէ լայնացող եւ շատ անգամ ոչ տեղին պահանջներն։ Այդպէս էր դրութիւնը երբ կոմիտէն ստիպուած եղաւ բանակցութիւնների մէջ մտնել ուստաների հետ եւ խառը ժողովներում համաձայնութեան բերել երկու կողմերին։ Խնդիրը գուցէ աւելի սուր կերպարանք ստանար, եթէ ուստաների, կօշկակար ընկերների եւ կոմիտէի ներկայացուցիչների մի շարք ժողովներում որոշ չափով չպարզուէր դրութիւնը եւ այդ ժողովներում առաջարկուած եւ շատ քիչ փոփոխութիւններով ուստաների համար պարտադիր դարձած պայմաններով չմտնէին բանուորները իրենց տեղերը։

Յմոռանանք յիշել եւ այն որ անցեալ ամառ մի գործադուլի պատճառով բանուոր ընկերների ցանկութեամբ բացուեց միութեան խանութը, որտեղ կարող էին գործ գտնել գործադուլաւոր բանուորները։ Խանութը չուտով փակուեց, որովհետեւ բանուորները արդէն համաձայնութեան էին եկել։ Խանութը աւելի լայն հիմունքներով վերաբացելու կարիքը զգացուեց նաեւ այս տարի, այն ժամանակ երբ ընկերների մեծ մասը ուստաների հետ ունեցած անհամաձայնութիւնների պատճառով ստիպուած էին դուրսը մնալ։ Կոմիտէն խանութի համար մշակեց մանրամասն ծրագիր, որը ընդունուեց միութեան կողմից եւ որը գործադրութեան մէջ է ցարդ։ Բարոյական աջակցութիւնից բացի խանութը կոմիտէից ստացել է նաեւ անհրաժեշտ գումարը, որը անշուշտ կը գանձուի նորից։ Խանութին է թողնուել նաեւ Մեղու միութեան մի տարուայ անդամավճարը եւ միութեան այս կամ այն անհատի վրայ եղած պարտքերը։ Միջանկեալ ասենք, որ թէ խանութի վրայ եղած եւ թէ անդամավճարներից մնացած ապառիկները, որոնց մի մասը գանձուել է վերջերս. կոմիտէն իր պարտականութիւնն է համարում գանձել՝ ինչքան այդ հնարաւոր կը լինի իհարկէ եւ յանձնել նոր կոմիտէին՝ ազատելով նրան աւելորդ աշխատանքից։ Այս բոլորից յետոյ ցաւելով պէտք է յիշեցնել ընկերներին եւ այն, որ առհասարակ մեր միութիւնները շատ են տարուել նեղ էկոնոմիզմով[5], ցաւելով պէտք է նկատել, որ նրանց մէջ շատ քիչ բան է մնացել յեղափոխական մասսային անհրաժեշտ իդէալականութիւնից։ Պատահել են դէպքեր, եղել են ընկերներ, որոնք այն թիւր հասկացողութիւնն են ունեցել, որ կազմակերպութիւնը բարոյական աջակցութիւնից բացի չպիտի զլանայ նաեւ իւր նիւթական աջակցութիւնը թէկուզ հէնց իր ամենասուղ միջոցներից։ Բնորոշ են այն դէպքերը, երբ զանազան անհատներ դիմում են կոմիտէին եւ գործ խնդրում։

Առ հասարակ մեռել են նաեւ ընկերականութիւնն ու ընկերական կապերը մեր ընկերների շարքերում. հա՞րկ կայ յիշեցնելու թէ ինչքան կարող է վնասուել այն կազմակերպութեան շահերը, որի խմբերը կամ անդամները

5.- Այսինքն՝ միայն նիւթական-տնտեսական շահերու նկատառումով։

կազմակերպական մի որեւէ գործ կամ ընդհ. ձեռնարկ իրենցը, իրենց սրտին մօտ չեն համարում, երբ այդ հեռու է անձնականից կամ իրենց նեղ շրջապատից։

Այս բոլորի վրայ պէտք է աւելացնել եւ այն, որ մեր շարքերում գոյութիւն չի ունեցել կուսակցական դիսցիպլինա, որի չգոյութեան պատճառով շատ է տուժել կազմակերպութեան գործը։

Ապագայ կոմիտէի ուշադրութիւնը պիտի հրաւիրել նաեւ խմբապետական ժողովների վերահաստատման եւ քաղաքական խմբերի ընդլայնման վրայ։ Խմբ[ապետական] ժողովները մեծ չափով կը նպաստեն կոմիտէին աւելի գիտակ լինելու խմբերի դրութեան ու կարիքներին։ Ուշադրութեան պիտի առնել նաեւ քաղաքական խմբերի ընդլայնելու եւ ստուարացման գործը, որին աչքաթող անելու պատճառով վերջին տարիներում զգալի կերպով պակասել են շրջանիս նիւթական միջոցները։

Կոմիտէս յանձնում է ընտրուելիք կոմիտէին հետեւեալ խմբերն ու միութիւնները.—

Կօշկակարների Մեղու միութիւն — 38 անդամ
Գործակատ. միութիւն — 31 անդամ
Դերձակների միութիւն — 17 անդամ
Կանանց Միածան խումբ — 17 անդամուհի
Կանանց Ցոյս խումբ — 13 անդամուհի
Քաղաք[ական] Կայծակ խումբ — 21 անդամ
Վահան խումբ — .....

Հ.Ց.Դ. Վրէժ Կոմիտէ
ՐՕՇՏԱԿ, ԲԱԶԷ, ՎԱԶՐԻԿ, ՎԱԶԳԷՆ
1910 Մարտ 14

Փաստ. 477-81

Բ 2.– ՏԵՂԵԿԱԳԻՐ
1910 ԹՈՒԻ Հ.Յ.Դ. ՎՐԷԺԻ ԿՈՄԻՏԷԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Ընկերներ!

Չնայած որ կոմիտէիս ընտրութիւնը ձեռնարկուել էր 1910 թուի Մարտ ամսուայ մէջ, սակայն այդ ընտրութիւնները հաղիւ վերջացան Մայիս ամսի վերջերին. պատճառների բացատրութեանց մէջ մենք չենք մտնում, որովհետեւ այդ մեր գործունէութեան ժամանակշրջանին չէ վերաբերում։

Կ[ոմիտէ]ս իւր առաջին նիստը գումարել է Մայիս 25ին, Կ.Կ.ի հրաւէրով եւ նախ քան գործի անցնելը անհրաժեշտ համարեց կազմակերպել մի շարք խառն ժողովներ ձեռնհաս ընկերների մասնակցութեամբ, խորհրդակցելու մի շարք այժմէութիւն ունեցող տակտիկական հարցերի՝ այն է խմբերի կազմակերպութեան, պրոֆեսիոնալ միութիւնների եւ այլ հարցերի մասին, որից յետոյ միայն պիտի որոշէր իր գործունէութեան ծրագիրն ու տակտիկան։ Մեծ ծառայութիւն մատուցին իրենց խորհուրդներով նախկին կոմիտէի անդամներից մի քանիսը, որոնք հիմնուած էին տարիների դառն փորձերի վրայ։

Այդ ժողովներում մի աւելորդ անգամ եւս մատնանշուեց ընկերների բարոյական կապի պակասի մասին, որը ամենաէական եւ կարեւոր պակասն է մի կազմակերպութեան, այն էլ յեղափոխական կազմակերպութեան համար. խօսուեց նաեւ պրոֆեսիոնալ միութիւնների մասին, երեւաց որ պրոֆ. միութիւնները յաճախ անձնական մանր մունր խնդիրներով են զբաղւում, որ էկոնոմիզմը[6] նոցա մէջ արմատացել է, առանձնապէս նոցա կողմից մատնանշւում էր կօշկակարների Մեղու միութիւնը, որի մէջ Կ[ոմիտէ]ս հէնց իւր սկզբնական քայլերում իսկ համոզուեց (այդ մասին քիչ յետոյ)։

Իրականութիւնը մասամբ պարզելուց յետոյ բնական է Կ-իս առաջ ահագին գործ եւ դժուարութիւններ են բացւում, որոնց յաղթահարելու համար Կ-ս պիտի աշխատէր։ Եւ պէտք է ասել Կ-ս աշխատել է անել այնքան ինչքան հնարաւոր է եղել, որքան ներել են իր ուժն, իր ժամանակն ու եռանդը։

Պէտք է ասել, որ երբեք Կ-ս յաւակնութիւն չունի ասելու, որ արել է այն բոլորը ինչ որ հնարաւոր էր. ո՛չ, մենք խոստովանում ենք, որ թերացել ենք որոշ չափով, որ կարելի էր աւելին անել եւ այդ թերացումների համար պէտք է մեղադրել պայմաններն ու միջավայրը եւ որ ամենագլխաւորն է մեր ընկերական յարաբերութիւնները...

Կ-ս ցաւով պէտք է յայտնի, որ իր ամբողջ գործունէութեան ընթացքում մենակ *էր, կատարելապէս մենակ եւ չունէր ոչ մի աջակից չնայելով բոլոր եղած դիմումներին, պահանջներին, բողոքներին. պրոպագանդային գործում, ուր ամէնից շատ ընկերական աջակցութեան պէտքը կար, որի խիստ կարիքը կար եւ միակ գործն էր, որ պիտի խմբերին կապէր, միացնէր եւ գիտակցութեան բերէր, Կ-ս մեծ դժուարութիւնների հանդիպեց եւ համարեա ամբողջ պրոպագանդի գործը ծանրացել էր միմիայն 2 ընկերոջ վրայ, մինչդեռ նախորդ կոմիտէների գործունէութեան ժամանակ պրոպագանդիստները բաւական մեծ թիւ էին կազմում (համեմատաբար), գոնէ իւրաքանչիւր մի խումբ իւր առանձին դասախօսն ունէր՝ եւ այդ պակասը այնքան զգալի էր, որ վերջերս կոմիտէս ստիպուած եղաւ յայտնել ի գիտութիւն Կ.Կ.ին։*

Կ-ս հէնց իւր առաջին քայլերումն իսկ ծանր տպաւորութիւններ կրեց մեր ընկերական յարաբերութիւններից եւ այդ ծանր տպաւորութեան առիթը կրկին մեր ցաւոտ կողմից — պրոֆեսիոնալ միութիւններից էր։ Դէպքը պերճախօս է եւ հետեւեալն է. Լիլաւայի[8] հոգաբարձական ընտրութիւնների ժամանակն էր, խմբերը (գոնէ Վահան եւ Կայծակ խմբերը) պահանջում էին ակտիւ մասնակցութիւն ցոյց տալ, որին դէմ չէր նաեւ Կ-ս եւ չէր էլ կարող դէմ լինել. մի հիմնարկութիւն, որ տարիներով կազմակերպութիւնիցս միջոցներ եւ էնէրգիա էր խլել, չէր կարելի յանձնել ուրիշ խմբակցութեանց կամ պատահական մարդկանց ձեռքը, եւ Կ-ս, Կ.Կ.-ի հետ ունեցած խառն նիստում որոշում եւ համաձայնութիւն է տալիս թեկնածուների մասին եւ հրաւիրում խմբերին, դաշնակցական անհատներին մասնակցելու։ Ընկերների մի մասը չափազանց սառն վերաբերմունք է ցոյց տալիս, հրաւիրուած ընդհ. ժողովներին ներկայ չգտնուելով, իսկ մէկը, որ որոշ խմբակցութեան (կազմի) ներկայացուցիչներից էր, «քաջութիւն» է ունենում ասելու «երբ պիտի քուէ տանք միտ էք բերում, իսկ մեր շահերը անտես անում»... Եւ գիտէք ընկերներ այդ քաջ ու համարձակը, որ խմբակցութիւնից, ո՞ր պրոֆեսիայից էր, այն պրոֆեսիայից, որ մի ամբողջ տարի, ինչ ամբողջ կարծեմ 2 տարի եթէ ոչ աւելի, կոմիտէների միակ ուշադրութեան եւ զբաղման առարկան է եղել. եթէ չասենք՝ մեր ներկայ քայքայուն դրութեան պատճառ է եղել։

Այդ քաջը — կօշկակար էր, եւ միութեան վարչութեան անդամ...

Ընկերնե՛ր, եւ կօշկակարները դեմոնստրատիւ[7] կերպով ընտրութեան օրը բացակայում էին, որովհետեւ այդ օրը այգում քէյֆ էին սարքել։ Ընտրութեան օրը, որ թասիրի[8] օր էր, ընտրութեան ներկայ եղող կօշկակար «ընկերները», եթէ կարելի էր այսպէս ասել, մէկ թէ 2 հոգի էին միայն։

Չնայած այդպիսի անտարբերութեան մենք յաղթանակը տարանք, եթէ յաղթանակ տանել կարելի է այնտեղ, ուր պայքար չկայ... յաղթանակը տարանք, այո՛, բայց 60 հոգով — Լիլաւայում ընտրութիւններ տանելը 60 հոգով, ընկերներ, ձեզ ենք թողնում որոշելու յաղթանա՞կ էր, թէ բարոյական պարտութիւն...

Այսպիսի դառն տպաւորութեանց տակ ընկերներ գործի սկսանք Մայիս ամսին. մի տեսակ սովորութիւն է դարձել կարծես, որ ամառնային ամիսներին կազմակերպութեան գործերն էլ թուլանում են եւ այդ շատ հասկանալի է. գործիչ ուժերը ցրւում են եւ ասպարէզը ամայանում է եւ ցաւ ի սիրտ պէտք է խոստովանել, որ մեր խմբերը ինքնագործունէութիւն չունին, որը մեծ պակաս է։ Կ-ի անդամի մի քանիսը եւս հաւանականօրէն մեկնելու էին։ Այդ բոլորը ի նկատի ունենալով հանդերձ Կ-ս ձեռնարկեց իրեն յանձնուած քայքայուած խմբերը վերակազմելու եւ Ցունիս 9-ին ուղարկեց բոլոր խմբերին իր անդրանիկ շրջաբերականը (ուրեմն մեր գործունէութիւնը սկսւում է Ցունիս 8-ից)։

Շրջաբերականի մէջ Կ-ս յոյս էր յայտնում որ «ընկեր-ընկերուհիները իրենց պարտականութիւնը լոկ կոմիտէ ընտրելու մէջ չեն տեսնի, այլ կ'աշխատեն միահամուռ ջանքերով եւ գովելի գիտակցութեամբ հնարաւորութիւն տալ Կ-իս կանոնաւորելու շրջանիս յեղափոխական գործը»։ Շրջաբերականի հետ միասին Կ-ս իր ներկայացուցչի բերանով յայտարարում է բոլոր խմբերին, որ հարցեր ու պահանջներ չպէտք է սպասել վերեւից, այլ իրենք խմբերը թող այդպիսիները առաջացնեն եւ առաջարկեն Կ-իս, ի նկատի ունենալով որ Կ.ս անսխալական չէ եւ կարող է որոշ խնդիրներ աչքաթող անել։ Արդ ձեզանից իւրաքանչիւրին ենք թողնում իրեն հաշիւ տալու, թէ որքան արդարացրին Կ-իս յոյսերը, որքան հարցեր եւ պահանջներ առաջադրեցին։

Կ-ս յատուկ ուշադրութեան առարկան է եղել յեղափոխական գրադարանը, որ վերջերում բարձի թողի էր արուած, կազմում է նոր ցուցակ, կանոնաւորում է, աշխատում է հաւաքել, ճոխացնել եւ այդպիսով հնարաւորութիւն տալ ընկերներին պարապելու։

Կ-ս ի նկատի ունենալով լուրջ գիտական գրքերի խոշոր պակասը, առիթից օգտուելով 25 ռուբլի յատկացրեց գնելու մի շարք գրքեր՝ զուտ գիտական բովանդակութեամբ։

Կ-ս ի նկատի ունենալով, որ Մ[ոցիալ] Ց[եղափոխական]-ների գրականութեան տարածումը ընկերների մակարդակի, որակի բարձրացման ի նպաստ է, որոշում է կապ հաստատել Մ. Ցեղ-երի կենտրոնի հետ եւ պարբերաբար ստանալ այդ գրականութիւնը, որը եւ իրականացնում է։ Ստացւում են մեծ քանակութեամբ (եւ ստացուելու են) գրքեր, բրոշիւրներ եւ թերթեր տարածելու։ Մի մասը Կ. Կ.ի միջոցով ուղարկւում է գաւառներն ու կենտրոնները (Պարսկաստանի)։ Կ-ս ուղարկեց Մ. Ց.-երին 10 թուման, որի կէսը միայն Կ-ի միջոցներից, (մնացածը հանգանակուեց ընկերական շատ նեղ շրջանում) եւ այդ գումարով ստացաւ մի քանի կապիտալ երկեր՝ Լաւրովի եւ բաւական քանակութեամբ նոր գրքեր։

Գրադարանի՝ Պարսկաստանի մասին եղած ուսումնասիրութիւնների ճիւղի խիստ աղքատիկ լինելը ի նկա-

6.- Լիլաւա – Թաւրիզի հայկական մէկ ուրիշ թաղամասի անունը։ Ղալան (բերդի շրջան) եւ Լիլաւան քաղաքի երկու հայկական թաղերն են։
7.- Ցուցական։
8.- Պատուոյ։

տի ունենալով՝ պատուիրեց 10 ռուբլու մի քանի յայտնի գրքեր, այդ ճիւղին վերաբերող։

Կ-ս ցանկալի համարեց, որ ընկերները հնարաւորութիւն ունենան ծանօթանալու նաեւ Ս. Դ[եմոկրատ]-ների մէջ ծագած հոսանքներին եւ ուղղութիւններին, ուստի դիմեց նոցա օրգաններին ուղարկելու մեր ընթերցարանին. նոցանից պատասխան դեռ չունենք։

(Գրադարանից վերցրել են 140 կտոր գիրք 50 հոգի)։

Ինչպէս արդէն քիչ առաջ ասուեց Կ-ն ձեռնարկեց խմբերի վերակազմութեան, որը պէտք է խոստովանել կազմուեց մինչեւ Սեպտեմբեր, սակայն բաւական դժուարութեամբ։ Կ-ս խմբերի վերակազմութեան ժամանակ ստիպուած եղաւ կազմալուծելու կօշկակարների միութիւնը։ Մեծ դժուարութեամբ մի քանի անգամ բերանացի եւ վերջապէս գրաւոր դիմումներից յետոյ յաջողուեց մեր ներկայացուցչին գումարել «Մեղու» միութեան ժողովը։ Դրամական հաշիւները այդ միութեան մէջ եղել են ամենաանկարգ դրութեան մէջ։ Պարզուել է, որ միութեան անդամներից մի քանիսը ծախսել են իրենց մօտ գտնուած գումարները եւ յայտնել են որ հնարաւորութիւն չունեն վճարելու։ Պարզուեց որ փոքրիկ աշակերտներից եւ ոչ աչքի ընկնողներից կանոնաւորապէս հաւաքուել է եւ աչքի ընկնողների ձեռքով ծախսուել։

Ցեղափոխական կոպէկ-կոպէկ հաւաքուած դրամները ծախսել եւ առանց ամենափոքր խղճի խայթ անգամ ունենալու յայտարարել, որ փող չենք ունեցել եւ ծախսել ենք,— վրդովեցնում են մեր ներկայացուցչին եւ ընկեր Պ-ին, որ նորա հետ եղել է. ներկայացուցիչը օգտուելով Կ-ից ստացած լիազօրութիւնից կազմալուծում է միութիւնը, դրամական զեղծումներ գործելու պատճառով, նախօրօք պարտամուրհակներ վերցնելով իւրաքանչիւր անհատից, որոնք մինչեւ այժմ էլ հնարաւոր չէ եղել գանձելու, չնայած քանիցս եղած դիմումներին։

Կ-ս ի նկատի ունենալով, որ ընկերները կազմակերպութեան դրած փոքրիկ պարտականութիւնները անթերի չկատարել սովորելով ապագայում տրուող աւելի մեծ պարտականութիւններն էլ չեն կատարուի անթերի, ուստի հրահանգում է Օգ. 22-ի շրջաբերականով խստիւ հետեւել կանոնադրութեան կէտերն իրագործելու, առանձնապէս շեշտելով կանոնադրութեան 7րդ եւ 12րդ կէտերի վրայ, չհաշուելով նոյնիսկ յանցաւորներին խմբից հեռացնելուց։ Այդպիսի հրահանգ նա ստացել էր նաեւ Կ.Կ.-ից։ Այդ հրահանգին խմբերը, գոնէ մի քանիսը հետեւել են։

Կ-ս խմբերը կանոնաւորելու գործով էր զբաղուած, երբ անակնկալ տեղի ունեցաւ Կ-ի գանձապահ ընկ. Ս. Մ. Վարդ-ի անակնկալ եւ ցաւալի մահը, որով Կ-ս կորցրեց իր եռանդուն եւ գործունեայ ընկերներից մէկին։

Ընկ. Ս-ի մահուամբ Կ-ին հաշիւները խառնուեցին եւ մնացին անորոշութեան մէջ. ժամանակաւորապէս այդ պաշտօնը եւս յանձնուեց մեր ներկայացուցչին։

Այնուհետեւ քաղաքից գործով պիտի բացակայէին 2 ընկերներ, որոնց տեղ Կ-ս (նորանց ներկայութեամբ) ստիպուած եղաւ հրաւիրել 3 ընկերներ դրսից, Կ.Կ.-ի համաձայնութեամբ, ի նկատի ունենալով Դաշնակցութեան գործն. կեանքի փորձը։

Կ-ս ի նկատի ունենալով, որ յաճախ խմբերը կանոնաւոր չհաւաքուելու պատճառներից մէկը ժողովատեղի չունենալն է, մտադրուեց մի ընկերական ակումբ հիմնել, որը եւ կը լինէր դաշնակցական ընկերների հաւաքավայր։

Կ-ս իր մտադրութիւնը ընկերների խորհրդակցութեան դնելով համակրանք գտաւ եւ իր մտադրութիւնը իրականացնելու համար զանազան միջոցների ձեռնարկեց եւ մեծ դժուարութեամբ միայն կարողացաւ գլուխ բերել իր մտադրութիւնը։

Միջոցներից Ը — կրկնակի անդամավճարներ գանձելն էր, որը մասամբ յաջողուեց։ ԸԸ — մի ներկայացման ձեռնարկութիւնն էր որ անյաջող անցաւ. չիրագործուեց չնորհիւ մեր ընկերուհիների «բարեացակամ վերաբերմունքին» եւ ընկերական պարտականութեան անթերի գործադրութեան։

Չենք կարող ցաւումով չյիշել, որ համարեա մի ամբողջ ամիս, եթէ ոչ աւելի գոնէ դուրս ընկած ընկեր-ընկերուհիներին համոզում էինք մասնակցել, ներկայացումը գլուխ բերել յանուն գործի, սակայն ի զուր... Մեծ նեղութեամբ ու մունաթով[9] փորձերը սկսել եւ բաւական երկար ժամանակ էլ կատարում էինք (անշուշտ ոչ մեր ընկերուհիների մասնակցութեամբ), երբ անակնկալ կերպով դերակատարուհիներից մէկը հիւանդացաւ եւ համարեա գլուխ եկած գործը վիժեց, ի զուր անցնելով մեր բոլոր աշխատանքն ու եռանդը, եռանդ, որ ոչ իրեն արժանի գործի վրայ էր սպառուել... Ընտրուած էր կլուբի գործը գլուխ բերելու մի յանձնախումբ (ընկերներից) որը փորձերի ժամանակ սակաւ ինչ իր գոյութիւնը ցոյց տուեց, սակայն երբ ներկայացումը վիժեց այնուհետեւ նրա գոյութիւնն էլ չքացաւ եւ ոչ մի դէպքում չերեւաց. նոյնիսկ տարրական հետաքրքրութիւն ցոյց տալու համար չերեւաց, այդպիսով ակումբի բացման իրագործումն էլ թողնելով Կ-ին վրայ, որը եւ մեր զբաղմանց եւ ջանքերի մեծագոյն մասը խլեց։ Տեսնելով, որ ներկայացումը գլուխ եկող գործ չէ, Կ-ս սինոմոտոգրաֆի մի օրուայ ներկայացում գնեց, որով եւ մի փոքր գումար մօտ 40 թուման ձեռք բերուեց, ապա մի կողմնակի նպաստ եւս 55 թումանի յաջողեցնելով եւ Կ.Կ.-ից 30 թուման նպաստ ստանալով, կարողացանք իրականացնել բոլորիս կողմից անհրաժեշտութիւն նկատուած ակումբի բացումը, որի ապագայ բարգաւաճումն ու ծաղկեցումը ձեզ եւ ձեր ընտրելի նոր կոմիտէին է թողնուում. գործի սկիզբը դրուած է ընկերներ, սիրեցէք եւ աշխատեցէք յարատեւ դարձնել այն. միակ հաստատութիւնն ու ձեռնարկութիւնն է, որ պէտք է ուժգին կապ հաստատէ մեր մէջ եւ գործելու եռանդ ներշնչէ մեզ։

Կ.Կ.-ի առաջարկութեամբ՝ նիւթական միջոցներ հայթայթել կովկասահայ բանտարկեալ ընկերներին, Կ-ս ընդառաջ գնաց եւ ձեռնարկեց ընկերական շրջանում հանգանակութիւն կատարելու գումարուեց -------- թուման. մնում է գանձելու ------ դրան[10]։

Կ.Կ.-ի հետ համաձայնութեան գալով ձեռնարկուեց մի երեկոյթ-պարահանդէս, նախաձեռնութիւնը կանանց խմբին թողնելով, որը յաջողութեամբ գլուխ եկաւ տալով մօտ 200 թուման զուտ արդիւնք։

Մինչեւ այժմ ընկերներ թուեցինք այն գործերը որոնք կատարել ենք 9 ամսուայ ընթացքում (Յունիս 8-ից մինչեւ Մարտ)։ Դրանք են I- խմբերի վերակազմութիւնը, II- դրամական հաշիւների մաքրումն ու ճշտումը, III- բանտարկեալներին նպաստելու միջոցներ հայթայթելը, IV- գրադարանի կանոնաւորումն ու ճոխացումը եւ վերջապէս V- ակումբի բացումը։

Այժմ թուենք այն գործերը որոնք ձեռնարկուել եւ կիսատ են մնացել, որոնց շարունակութիւնը մեր յաջորդներին է մնում։

Ընկերներ! Շահագործումը մեր ներկայ հասարակարգի հիմքն է կազմում եւ բոլոր երկրներում. սակայն շահագործման ամենագռեհիկ ձեւը միմիայն մեզ մօտ Պարսկաստանում է գտնուում կարծում ենք։ Մի խայտառակ եւ գռեհիկ շահագործման դէպքի ականատես եղանք, որի զոհը մեր շարքերում գտնուող ընկերներից էր — գործակատար։

Արբաբը-աղան ծառայեցրել էր մինչ այն ժամանակ նա երբ նա հիւանդացել էր գործում գտնուած ժամանակ։ Հիւանդ ծառայողին Արբաբը արձակում է ասելով.— հիւանդ ծառայողի պէտք չունիմ։ Դէպքը աղաղակող է, գուցէ եւ սովորական շատերի համար, սակայն գործակատարի ընկերները եւ մենք անտարբեր մնալ չկարողացանք այդ աղաղակող անարդարութեան, գռեհիկ եւ միայն մեր հայրենակից վաճառականներին յատուկ շահագործման հանդէպ եւ մեր բողոքը բարձրացրինք ջանալով մեր անիրաւուած ընկերոջը բաւարարել տալ։ Խոստովանում ենք, որ այդպիսի քայլ անել վստահացանք մեր կազմակերպութեան հեղինակութեանը ապաւինելով քան մեր ընկերների կազմակերպուած ոյժին, որը մասամբ սխալ էր գուցէ եւ մենք այդ անել ստիպուած եղանք, որովհետեւ ուրիշ կերպ վարուել անկարող էինք։ Այժմ գործը ընթացքի մէջ է յանձնուած լինելով Կ.Կ.-ին եւ ելքի մասին որոշ բան ասել չենք կարող, որովհետեւ մեր գրաւոր հարցումը այդ մասին անպատասխան է մնացել Կ.Կ.-ից։ Մեր յաջորդներին է մնում հետեւել վերջացնել եւ յաջող ելքի յանգել։

Իսկ ձեզ աշխատաւոր ընկերներ մնում է աշխատել, խտացնել ձեր շարքերը եւ իրաւ դարձնել, որպէսզի ապագայում ձեր սեփական ոյժին վստահացած եւ ոչ կազմակերպութեան պրեստիժին, կը կարողանաք դէթ կոպիտ իրաւունքների բռնաբարումէն զերծ մնալ։

բ- Կիսատ մնացած գործը, որ մեր յաջորդները պիտի շարունակեն — մի մարտական ինքնապաշտպանական խումբ ունենալու անհրաժեշտութիւնն է, որը զգալի է. մենք որոշումներ տուել եւ ուր հարկ է դիմումներ ենք արել, մնում էր ձեռնարկութիւնը, որը կիսատ մնաց կոմիտէի նոր ընտրութիւնները եւ կլուբի բացումը վրայ հասնելով։ Վերջին երկու շարունակելի խնդիրների հետ, կանոնաւորուած խմբեր, ակումբ եւ մինչեւ Դեկտ. վերջացրած հաշիւներ յանձնելով մեր յաջորդներին, ցանկանում ենք նրանց եռանդ, յաջողութիւն եւ որ գլխաւորն է ընկերական աւելի լայն աջակցութիւն քան մենք տեսանք։

Այժմ էլ փոքր ինչ ստատիստիքական տեղեկութիւններ տալով վերջացնենք մեր զեկուցումը. կոմիտէս ունեցել է 24 նիստ, որոնցում զբաղել ենք վերը յիշած խնդիրներով, ունեցել ենք 7 խումբ (թուերը վերջին հաշուով են)։

Գործ. միութիւն 13 հոգի ունեցել են 22 նիստ։

Դերձ. միութիւն 19 հոգի ունեցել են 12 նիստ, բոլորը չեն արձանագրուած։

Միածան-Յոյս — կանանց խումբ 18 հոգի. մինչ Յունուար՝ 9ը նիստ։

Վահան խումբ 23 հոգի արձանագրութիւն չունի։

Կայծակ խումբ 14 հոգի, 22 նիստ

Ուսանող 15 հոգի, 30 նիստ

Զուլում 9 հոգի, 10 նիստ

Մեր գործունէութեան շրջանում կազմուել են Ուսանող եւ Զուլում խումբերը, որոնցից Ա-ը ամենաօրինակելի եւ եռանդուն խումբն է եղել եւ սիստեմատիքաբար պարապել է։

Խմբերի մէջ ամենաանկանոնը եղել է Վահան ինտելիգենտներից կազմուած խումբը, որ ամիսներով ժողովներ չի ունեցել եւ կանոնաւոր չէ զբաղուել, մինչեւ դեռ նա իր կոչումով իբր պրոպագանդիստներ հայթայթող խումբ պիտի ղեկավար հանդիսանար բոլոր խմբերին եւ աջակից կոմիտէին։ Միւս խմբերը մեծ մասամբ կանոնաւոր գումարուում են։

9.- Խնդրանք-աղաչանքով։

10.- Գումարները չեն նշուած։

Փաստ. 587-30

Բ 3.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. «ՇԱՀԱՔԱՂԱՔԻ» [ԹԵՀՐԱՆ] ԿՈՄԻՏԷԻ

Սկսեալ 11 Սեպտ. 1909ից մինչ 6 Յուլիս 1911

I
ՏԵՂԱԿԱՆ

Կոմիտէս պաշտօնի հրաւիրուեց այնպիսի մի ժամանակ, երբ շնորհիւ բռնապետական ռեժիմի վերջին շրջանին՝ տեղական նախորդ մարմինն ստիպուած էր դադարեցնել իր խմբային գործունէութիւնն որից եւ յառաջ էր եկել մեր խմբերի գրեթէ ամբողջական քայքայումն ու տուրքերի գանձման դադարումն։

Կոմիտէիս ամենաառաջին գործն է եղել վերակազմել եւ աւելի հաստատուն հիմքերի վրայ դնել ցրուած խումբերն, գանձել յետամնաց տուրքերն եւ պարզել նախորդ կոմիտէի ելեւմտական հաշիւներն։ Նա ունեցել է 3 կանանց խումբեր,— Կաթիլ 12, Կայծ եւ Վտակ 23 եւ Փնջիկ 15 ընկերուհիներով եւ 16 տղամարդկանց խմբեր, Ամազոն 14, Անդրանիկ 14, Ալվանդ 12, Արաքս 13, Ապագայ 9, Եկպատան 16, Կարկառ 13, Համքարական 17, Մստօ 12, Նարեկ 10, Վրէժ 14, Կայծակ, Արարատ եւ Արեգակ, որոնք դժբախտաբար քայքայուեցան մի ամիս գոյութիւն ունենալուց յետոյ, Տամավէնտ որը բաժանուեցաւ միւս խումբերի վրայ եւ Անի որը նոյնպէս Տամավէնտի բախտն ունեցաւ եւ ընկերների բացակայութեան պատճառաւ քայքայման դատապարտուելով ներկայ եղող ընկերները բաժանուեցան միւս խումբերի վերայ։

Իրականապէս կոմիտէս այդ ժամանակ ունեցել է 3 կանանց խումբ, 50 ընկերուհիներով եւ 11 տղամարդկանց խումբ 144 ընկերներով։

1910 Յունուարի 12ին կազմուած է խմբապետական ժողովը որը մինչ նոյն թուականի Մարտ 28ը ունենում է 7 նիստեր եւ գլխաւորապէս զբաղւում է յետամնաց տուրքերի գանձմամբ եւ խումբերի կարգաւորութեամբ։

Սկսեալ նոյն թուականի Մարտ 28ից կոմիտէս պէտք է զգում խմբապետական ժողովին տալ ենթակոմիտէական իրաւունքներ եւ այսպիսով կազմուած է «Փայլակ» ենթակոմիտէն, որը մինչ Դեկտ. 6, 1910 թիւը ունենում է 30 հերթական եւ 2 արտակարգ նիստեր։

Ենթակոմիտէն զբաղուել է բացի խմբական ընթացիկ գործերից՝ նաեւ քաղաքումս յեղափոխական գրադարան ունենալու, գինեվաճառներից կոոպերատիւ ընկերութիւն կազմելու եւ մի ներկայացում ու երեկոյթ սարքելու հարցերով, որոնց վերջին երկուսը դժբախտաբար անցել են ապարդիւն։ Գինեվաճառների կոոպերատիւ ընկերութիւնն միայն շնորհիւ կոմիտէիս ջանքերին յաջողութիւն է գտել վերջերս։

Ենթակոմիտէն զբաղուել է նաեւ քաղաքական խումբերի մէջ դպրոցական աշակերտներ ընդունիլ չընդունելու հարցով որը եւ որոշուել է բացասապէս. ձեռնարկել է քաղաքումս գտնուող ծառաներից «Գիւղացիական հայրենակցական միութիւններ» կազմելու, որը անդուլ ջանքերից յետոյ դժբախտաբար որոշ մի արդիւնքի չի յանգել։ Գովելի է միայն մօտակայ Վանագ գիւղի դաշնակցականներից կազմուած գիւղացիական միութիւնն, որը իր ֆոնդով եւ համայնական աշխատանքով ցանում է որոշ վարելահողեր եւ ունի գիւղական չտեմարան։

Ենթակոմիտէական ժողովներն ընդհանրապէս գոհացուցիչ են եղել այն նկատմամբ որ մեր ընկերներն վերջապէս դուրս են եկել կրաւորական հետեւող դիրքից, նրանց տրուել է ազատ ասպարէզ քննադատելու, արտայայտուելու, համոզելու կամ համոզուելու։

1909ի Նոյեմբեր 23ին կանանց երեք խումբերն միացուելով կազմւում է Հ.Յ.Դ. Կարմիր խաչի միութիւնն։

Միութեան վարչութիւնն մինչ 1911 Յունուար 23ը ունենում է 20 նիստ եւ նրա գործունէութիւնն կայանում է դասախօսութիւնների, երեկոյթների կազմակերպման եւ ճերմակեղէնների պատրաստութեան մէջ։

Տրուել են 3 դասախօսութիւններ Տոքթ. Պետրոսեանի կողմից։

Կազմակերպուել է մի երեկոյթ եւ ձեռնարկուել է մի ցերեկոյթի, որը վիժել է ժամանակի քաղաքական աննպաստ պայմանների պատճառաւ։

Միութեան միջոցներով պատրաստուել են 6 վերմակ, 12 բարձ, 6 ներքնակ, 6 մահճակալ, 14 սաւան (7 մեծ, 7 փոքր), 4 կանացի գոգնոց, 12 վարտիկ, 12 բարձի երես, 6 շապիկ եւ գնուել է մի դեղատուփ։

Քաղաքական դրութիւնն ու գլուխ բարձրացնող ռէաքսիոնն նկատի ունենալով՝ կոմիտէս ձեռնարկում է ինքնապաշտպանութեան մի մարմնի կազմակերպութեան. հաւաքուած են ընկերների մօտ ցրուած զէնքերն եւ որոշ օրէնքների տակ տրւում են այն տրամադրելի ընկերներին, որոնք մտնում են ինքնապաշտպանութեան կազմի եւ նրա օրէնքների իրաւասութեան սահմանի մէջ։

Բացի այդ դրսից եկող մարտիկներից կազմուած «Իրան-Թուրան» մարտական խումբը մտնում է ինքնապաշտպանութեան կազմի մէջ եւ համարւում է մէկն մեր շրջանի մարտական խումբերից։

Մարտական խումբերի տրամադրութեան տակ են կազմակերպութեան ունեցած բոլոր զէնքերն ու ռազմամթերքը։

Կոմիտէս ապակենտրոնացման սկզբունքի լայն կիրառումով իւր գործունէութիւնն զուտ դեմոկրատիկ հիմքերի վրայ դնելու համար, կազմած է իր հին եւ փորձառու ընկերներից Հ.Յ.Դ. խորհրդակցական մնայուն ժողովը, որի գործունէութիւնն ունեցել է բեղմնաւոր արդիւնքներ եւ զանազան լուրջ խնդիրներում կոմիտէիս տրուած խորհուրդներն՝ գնահատութեան արժանի։

1910 Մայիս 8ից մինչ 1911 Մարտ 2ը խորհրդակցական ժողովը ունեցել է 25 նիստեր եւ զբաղուել է գլխաւորապէս հետեւեալ հարցերով։

1- Մեր դիրքը պարսիկ յեղափոխական եւ ընդհանրապէս ձախակողմեան կուսակցութիւնների կամ խմբակցութիւնների հետ։ (4)

2- Մեր դիրքը մէջլիսի հայ պատգամաւորական հարցում։ (5)

3- Համերաշխութեան պլատֆորմի մշակում պարսիկ դեմոկրատ կուսակցութեան հետ։ (8)

4- Օղիի ակցիզը[11]*։ (13)*

5- Զինուորագրութեան հարց։ (16)

6- Պարսկաստանի Հ.Յ.Դ. մարմիններից կազմուելիք շրջանային ժողովի հարց։ (2/7)

7- Թեհրանը Կ. Կոմիտէ դարձնելու հարց։ (2/7)

8- Միջկուսակցական կոնֆերանսի հրաւէր։ (2/11, 2/28)

9- Խնամակալի մօտ պատգամաւորութիւն ուղարկելու հարց։ (2/16)

10- Մէջլիսի հայ պատգամաւորի զեկուցումը։ (2/19)

11- Մէջլիսի պլոկը եւ մեր վերաբերմունքը։ (2/24 — 2/27)

II
ՇՐՋԱՆԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Կոմիտէս իւր ներքին գործերը փոքր ի չատէ գոհացուցիչ հիմքերի վրայ դնելուց յետոյ ձեռնարկում է իւր շրջանի վերակազմութեան դժուարին գործին։

Գետափը[12]*, որն ժամանակաւ մեր ամենաընդարձակ շրջանն էր կազմում՝ որոշ հանգամանքների շնորհիւ կազմալուծուած լինելով՝ կոմիտէս այնտեղ ուղարկեց իւր ընկերներից Արմենակին*[13]*, որն իւր դասախօսութիւններով բացատրեց կազմակերպութեանս ծրագիրն ու նպատակը եւ մի քանի խմբերի հիմք դնելով վերադարձաւ տեղս։ Ամառնային արձակուրդներից օգտուելով կոմիտէս վերստին նոյն շրջանն ուղարկեց իւր ընկերներից Վահէին, Վաչէին, Պանդուխտին ու Գեղամին իբր յատուկ պրոպագանդիստներ, որոնց անխոնջ աշխատանքների շնորհիւ կազմակերպական գործերը աւելի լայն ու հաստատուն հիմքերի վրայ դրուեցան թէ Գետափում եւ թէ շրջանի գիւղերում, ուր նրանք հիմնեցին դպրոցներ, գրադարաններ, գիւղական միութիւններ, չտեմարաններ եւ այլն։*

Կոմիտէս անտես չարաւ եւ Սուլթանապատի շրջանը։ Այդտեղ տարաբախտ գիւղացիութիւնը ենթարկուած էր կալուածատիրական հալածանքների եւ իրաւանց ու պատուի բռնաբարման։ Կոմիտէս իր ընկեր Աշոտի[14] *միջոցաւ այնտեղ ուղարկեց բաւականաչափ զէնք ու ռազմամթերք որոնք բաժանուեցան գիւղացիների վրայ դիւրամատչելի պայմաններով։*

Կոմիտէիս պաշտօնավարութեան ժամանակ կազմուեցան նաեւ Ախմէթայում[15] *դաշնակցական խումբեր, որոնք ենթակոմիտէական մինիմում թիւ դեռեւս չունենալով առաջնորդւում են խմբապետական ժողովով։*

Օգտուելով եւ այն հանգամանքից որ ընկերներից ոմանք ամառնային սեզոնն պիտի անցկացնէին Ղարադանի գիւղերում՝ կոմիտէս յանձնարարեց նրանց ուսումնասիրել եւ այդ շրջանը եւ կազմակերպել եթէ հնարաւոր էր, բայց քանի որ նոյն ժամանակ Գաղազանի[16] *ենթակոմիտէն եւս ձեռնարկել էր նոյն բանին, յարմարութիւններին նայելով այդ շրջանը դրուեցաւ նոյն ենթակոմիտէի իրաւասութեան տակ։*

Օգտուելով նաեւ ընկեր Արսէնի դէպի Խորասան ճամբորդութիւնից՝ նրան յանձնուեցաւ կազմակերպել եթէ հնարաւոր էր իւր ճամբուն վերայ ինկած քաղաքների հայկական գաղութները։ Նա կազմակերպեց եւ կապեց մեզ հետ Ռուտշահը. այդ թէեւ տարիներ առաջ կազմակերպուած եւ կապուած էր Սիփան ենթակոմիտէի հետ, բայց վերջերս գտնւում էր լքուած եւ քայքայուած դրութեան մէջ։ Գիլան կոմիտէն տեղեկանալով մեր ձեռնարկի յաջողութեան՝ բողոքեց թէ Ռուտշահը իր շրջանն է կազմում եւ կոմիտէս յօժարեցաւ այդ քաղաքը իր շրջանից դուրս համարելու, լիայոյս որ կրկին լքման չի դատապարտուելու։ Ընկեր Արսէնը կազմել է նաեւ մի խումբ Նիշաբուրում որը կապուած է մեր շրջանի հետ եւ այդպէս էլ յայտարարուած։

11.- Տուրք, հարկ։

12.- Նոր Ջուղայի (Սպահան) կուս. ծածկանունը։

13.- Ատամնաբոյժ Յարութիւն Ստեփանեան, որ Թաւրիզէն Թեհրան փոխադրուելով նշանակուած էր Կ. Կոմիտէի ներկայացուցիչ մայրաքաղաքի կոմիտէին մօտ։

14.- Աշոտը՝ Դաշնակցական Խեչոն է, իսկական անունով՝ Ամիրեան Խաչատուր։

15.- Ախմեթա՝ Համատան քաղաքի կուս. ծածկանունն է։

16.- Գաղազան՝ Ղազուինի ենթակոմիտէութեան ծածկանունն է. Ղարադանը նոյն քաղաքի մէկ գաւառակն է, ուր կը գտնուին եօթը հայաբնակ գիւղեր (Տես էջ 43-44)։

III
ԱՐԱՏԱՓԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Կոմիտէս իր պաշտօնավարութեան սկզբներում հրաւիրուեցաւ մասնակցելու Գիլանի[2] III Շրջանային ժողովին[17], որը պիտի որոշէր մեր ընդհանուր քաղաքական թաքթիքն ու գործելակերպը Պարսկաստանում. կոմիտէս մասնակցեց այդ ժողովին Թեհրանից ուղարկած իր մասնաւոր պատգամաւոր ընկեր «Իրաւունքով»։

Մեր պաշտօնավարութեան օրօք տեղի ունեցաւ Գիլանի IV Շրջանային ժողովը, որի հրաւէրն ու ծրագիրը շատ ուշ հասած լինելով մեր ձեռքը՝ դժբախտաբար չկարողացանք այս անգամ էլ օգտուիլ առիթից։

Ընդհանուր առմամբ մենք աշխատեցինք մասնաւոր եւ մշտական կապեր պահպանել մեր եւ Պարսկաստանի եւ արտասահմանեան մարմինների հետ։

IV
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՍԻԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Թեհրանի գրաւումից անմիջապէս յետոյ երբ յաղթական բանակի ղեկավարներն իրենց ձեռքին ունէին կառավարութեան ղեկը, մանաւանդ ընկեր Եփրեմի եւ Սարդար Բըհատորի Ղարադաղում ունեցած կռիւների ժամանակ, մենք յաճախ առիթներ ունեցանք դաշնակցական մարմինների եւ կառավարութեան մէջ միջնորդի դեր կատարելու եւ մեր քոյր մարմինների միջոցաւ որոշ տեղեկութիւններ հաղորդելու կառավարութեան եւ հրահանգներ հասցնելու հարկ եղած վայրերն, նպատակ ունենալով իր սաղմի մէջ խեղդելու ռէաքսիոն շարժումները։ կառավարութիւնն մինչեւ անգամ դիմումներ արաւ մեզ մեր արտասահմանեան մարմինների միջոցաւ հսկելու գահազուրկ Շահի շարժումների վրայ։ Ժամանակի լրջութիւնն նկատի ունենալով, երբ ռէաքսիոն ոյժերն խմորւում էին մութի մէջ եւ կառավարութիւնն շրջապատուած էր արտաքին եւ ներքին ամէն տեսակի դժուարութիւններով՝ մենք պէտք զգացինք մեր Պարսկաստանի եւ արտասահմանի մարմիններին գիտակից պահելու օրուայ քաղաքական դէպքերից, որոնք մեծ չափերով կարող էին ազդել երկրի եւ սահմանադրութեան ապագայի վրայ եւ ձեռնարկեցինք քաղաքական տեղեկագիրների խմբագրութեան, որոնք շաբաթը մի անգամ կանոնաւորապէս ուղարկւում էին բոլոր մարմիններին։

Խնամակալ Նասէրօլմուլքն տեղս ժամանելուց՝ կոմիտէս պէտք զգաց մի պատգամաւորութիւնով շնորհաւորելու նրա գալուստը. այդ քայլը թէեւ արտաքուստ հակառակ լինէր սոցիալիստական սկզբունքներին՝ բայց ի ներքուստ անհրաժեշտ էր այն տեսակէտով որ մարմինս նրան չէր նկատում իբր մի վեհապետի, այլ իբր մի անձնաւորութիւն որը գալիս էր աւելի ամրապնդելու սահմանադրական կարգերը եւ որից երկիրը սպասում էր իր ցաւերի դարմանը։ Մեր պատգամաւորներ, ընկեր Արմենակն ու Պերճը ընդունուեցան շատ սիրալիր եւ ունեցան կարծիքների երկար փոխանակութիւն։ Խնամակալն յայտնեց ի միջի այլոց իր անսահման վստահութիւնն դէպի Հ. Յ. Դաշնակցութեան բարոյական եւ մարտական ոյժերն եւ գնահատեց նրա մատուցած ծառայութիւններն ու տուած զոհերն Պարսկաստանի վերջին ազատագրական շարժումների մէջ։

V
ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մեր պաշտօնավարութեան սկզբում երբ ձեռնարկեցինք խումբերի վերակազմութեան արդէն ակնյայտնի էր պրոպագանդի պակասը նրանց մէջ. անցեալ կոմիտէները ինչպէս երեւում էր աշխատել էին աւելացնել ոչ այնքան որակը ինչքան քանակը. ամէն ոք դաշնակցական էր առանց այդ կուսակցութեան ծրագրային սկզբունքներին եւ տաքտիքին հիմնապէս ծանօթ լինելու։ Մենք ձեռնարկեցինք մեր ձեռքի տակ եղած բարոյական ոյժերի ներածին չափ դարմանելու այդ պակասը։ Մեր պրոպագանդիստները բաժանուեցան խումբերի վերայ եւ ունեցան հերթական մի շարք դասախօսութիւններ։ Այդուամենայնիւ պրոպագանդի գործը չէր յառաջանում այն չափով ինչ որ ցանկալի էր, այն պարզ պատճառով որ տեղացիների մէջ պակսում էր այդ ոյժը եւ սահմանափակուած էր միայն մեր ընկեր դասատուների շուրջը, որոնք հազիւ թէ կարողանային գոհացում տալ բոլոր խումբերի պահանջներին։ Ապագայ դժուարութեանց առաջն առնելու համար մենք պէտք զգացինք կազմակերպելու մի պրոպագանդայի դպրոց, որը թէ պարբերական դասախօսութիւններով եւ թէ շաբաթական ժողովներով պատրաստեց իսկական պրոպագանդիստներ։

Պրոպագանդայի դպրոցն ունի 16 աշակերտներ, որոնց 13ը տղայ եւ երեքը աղջիկ. շաբաթական ունենում են երկու հերթական ժողով. նրանց համար խօսւում են հետեւեալ նիւթերը.

1.- Մեր ծրագրի տեսական մասի մանրազնին բացատրութիւնը եւ մեր ու օտար կուսակցութիւնների պատմափիլիսոփայութեան մասին։

2.- Սոցիոլոգիա։

3.- Քաղաքատնտեսութիւն։

4.- Քաղաքակրթութեան պատմութիւնը։

5.- Պետական իրաւունք։

17.- Տես էջ 41-42:

6.- Կոոպերացիա եւ այլն։

Զբաղմունքները սիստեմատիկ եւ հետեւողական են եւ կուրսը 2 կամ 3 տարուայ։ Աշակերտ-աշակերտուհիները պարտաւորւում են դասընթացքը աւարտելուց յետոյ գործել կազմակերպութեան համար իբրեւ մասնաւոր պրոպագանդիստներ թէ այստեղ եւ թէ այլուր։

Խումբերի մէջ մեր մղած պրոպագանդի առաջին արդիւնքն կարելի է համարել տպարանական բանուորների գործադուլը, մի գործադուլ որը Պարսկաստանի բանուորական կեանքի պատմութեան մէջ առաջինն է։ Հայ բանուորների գործադուլին միացան նաեւ պարսիկ ու հրեայ գործաւորներն ու հանրագրութեամբ դիմեցին կոմիտէիս նրանց գործադուլը ղեկավարելու։ Կոմիտէիս կողմից այդ գործը յանձնուեց ընկեր Ռէչիտզատէին որը գործն յաջողութեամբ գլուխ տարաւ. գործաւորներն ստացան օրավարձի յաւելում, աշխատաժամի կրճատումն, կազմեցին բանուորական գործադուլային ֆոնդ եւ մի միութիւն որը գործադուլի օրերին սկսաւ հրատարակել բանուորական մի թերթ, պարզելով իրենց վիճակն ու պաշտպանելով արդարացի պահանջներն։

Բայց դրանով էլ չէր կարելի վերջացած համարել մեր գործը։ Պետական ռեժիմի փոփոխումը եւ երկրի զարթնումը դարաւոր քնից մեր առջեւ բացում էր պրոպագանդայի աւելի լայն մի ասպարէզ. մենք կոչուած էինք կատարելու աւելի սուրբ եւ համամարդկային մի պարտականութիւն. դա պրոպագանդն էր մեզ շրջապատող ժողովրդի մէջ։ Էքս-շահի[18] գահնկէցութիւնից ամիսներ առաջ երբ երկրի որոշ մասերում սահմանադրական տարրերը կազմակերպւում էին ռէակցիայի դէմ կռիւ մղելու, Շահ կոմիտէի[19] շրջանի ընկերներից երկուսը Արմենակն ու Արշակունին[20] իրենց նախաձեռնութեամբ եւ անձնական ռիսկով սկսել էին գործակցել պարսիկ սահմանադրական տարրերի հետ աշխատելով յառաջ բերել մի կազմակերպուած ոյժ։ Այդ միջոցին տեղս էր հասել նաեւ Գիլանի[2] Սաթթար կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Միրապոն, որի աջակցութեամբ պաշտօնապէս կազմուեցան Ջհանգիր կոմիտէն, իր խմբերով, ենթակոմիտէով եւ այլն։ Ջհանգիրը իր 500 զինեալ անդամներով բաւական աչքի ինկնող ծառայութիւններ մատուցեց Թեհրանի գրաւման ժամանակ, ի միջի այլոց Թեհրան մուտք գործող յեղափոխականներին զէնք ու ռազմամթերք մատակարարեց, քաղաքի զանազան թաղերում յաղթական ընդհարումներ ունեցաւ ռէակսիոն տարրերի հետ եւ միեւնոյն ժամանակ իր պահակներով պաշտպանեց քաղաքի դռներն ու ռէակսիոնէր տարրերի քաղաք խուժելուց արգելք հանդիսացաւ։ Կռիւները դադարելուց յետոյ մեր երկու ընկերների առաջարկութեամբ եւ նախաձեռնութեամբ՝ Ջհանգիր կոմիտէն վերածուեց էթըֆազ-Թարաղի կուսակցութեանը, որը ունեցաւ իր առանձին ծրագիրն ու կանոնագրութիւնը, որոնք կազմուեցին նաեւ մեր ընկերների մասնաւոր ջանքերով համաձայն մեր կազմակերպական ծրագրին ու կանոնագրին։

Էթըֆազ-Թարաղին հիմնեց իր օրգան Շարդ թերթը, ընկեր Արշակունիի բարոյական ջանքերովն ու աշխատակցութեամբ եւ ընկեր Ֆիլիպի[21] դրամական զոհաբերութեամբ։

Մինչ այդ պարսիկ ընկերներն իրենց կուսակցութեան գործերն յառաջ էին տանում մեր երկու ընկերների աջակցութեամբ եւ փոխադարձ համաձայնութեամբ, սակայն վերջերս նրանք սկսան փոխել իրենց ուղղութիւնը եւ գործել վարագոյրի տակ, մանաւանդ էթըտալիուն կուսակցութեան հետ համերաշխութիւն կնքելու գործում որը կատարեցին հակառակ մեր ընկերների ջանքերին եւ բնականաբար առանց նրանց գիտութեան։ Մերոնք նկատելով պարսիկ ընկերների վարագոյրի տակ գործելը, մասնաւորապէս կազմուած ծրագրի դէմ իրենց շարքերում ամէն տեսակ հին ռեժիմի պատկանող եւ պատահական մարդկանց ընդունելով՝ բարւոք համարեցին լռելեայն յետ քաշուիլ այդ կուսակցութեան աջակցելուց մինչ ցնոր կարգադրութիւն։

Մեր գաղափարներն պարսիկ մասսայի մէջ տարածելու համար մենք ստիպուած եղանք առժամանակեայ կերպով փոխել մեր գործելակերպը։ Մենք ձեռնարկեցինք թարգմանական պրոպագանդայի։

Մեր ջանքերով եւ ընկերների աջակցութեամբ մինչ այժմ թարգմանուած են պարսկերէն լեզուի եւ լոյս են տեսել

1.- Մեր ծրագիրը, որին կցուել է V Ընդհանուր ժողովի տուած որոշումները Պարսկաստանի վերաբերմամբ, որոնք ձրիապէս ցրուուած են թէ տեղումս եւ [թէ] ուղարկուել դաշնակցական մարմիններին ցրելու իրենց շրջաններում։

2.- Ինչպէ՞ս են հաւաքւում ժողովրդական փողերը եւ ինչպէ՞ս են ծախսւում։

Տպագրութեան տակ են եւ շուտով լոյս կը տեսնեն

1.- Գիւղացիներին։

2.- Ինչպիսի՞ կարգեր են հարկաւոր ժողովրդին։

Պրոպագանդը պարսիկ կանանց մէջ եւս անտես չարուեց։ Մեր ընկերուհիներից Հիւլէն եւ ---------[22] ձեռնարկեցին ակտիւ պրոպագանդայի պարսից կանանց մէջ, պարսկուհուն եւս արթնացնելու իր դարաւոր քնից եւ կանանց հարցը աստիճանաբար ծանօթացնելու նրանց։

18.- Էքս-շահը, այսինքն՝ նախկին Շահ Մահմէդ Ալին։

19.- Շահ կոմիտէ՝ Թեհրանի դաշնակցական կոմիտէն է

20.- Յաջորդաբար բժիշկ Ստեփանեան Յարութիւն (Արմենակ) եւ Տէրտէրեան Արսէն (Արշակունի)։

21.- Ֆիլիպ՝ ծածկանուններէն մէկն է «Առաւօտ» թերթի խմբագիր Յովհաննիսեան Յովսէփի, որ կ՝օգտագործէր նոյնպէս Ֆարրոս, Ֆ.Օ., Յ. Էլմար եւ այլ կեղծանուններ։

22.- Անունը չէ յիշուած։

Քանի որ դա աւելի մեծ խոչընդոտների կարող էր հանդիպել քան տղամարդկանց մէջ կատարուած պրոպագանդը, պարսիկ կինը քանի որ դեռ չէր գտնուում ազատութեան նոյն սահմանի վրայ ինչ որ պարսիկ տղամարդը՝ այդ պատճառաւ փորձ արուեց նրանց համախմբել բարեգործական մի ընկերութեան շուրջը, դուրս հանել հարեմական անգործութիւնից եւ զեխ կեանքից, արթնացնել նրանց մտքերը եւ հետաքրքրութիւն [ստեղծել] դէպի հասարակական կեանքը ու կանացի հարցը։ Բարեգործական ընկերութիւնն թէեւ առաջին քայլից իսկ բախեցաւ մութ եւ յետադիմական ոյժերի ընդդիմութեան, բայց չնորհիւ մեր ընկերուհիների բարոյական քաջալերութեան՝ նրանք կարողացան դժուարութեանց շրջանից յաղթական դուրս գալ։ Ընկերութիւնն տուեց մի քանի ցերեկոյթներ զուտ կանացի սեռի համար եւ բազմաթիւ դասախօսութիւններ. նա բաց է արել կարուձեւի մի արհեստանոց, բարոյական աջակցութիւն ցոյց տուել կանացի դպրոցների հիմնուելուն եւ շուտով ձեռնարկելու է օրիորդաց սեփական մի դպրոցի հիմնարկութեան։ Կանանց հարցը պաշտպանելու համար մտադիր է նաեւ հրատարակելու «Շրքուֆէ» (կոկոն) անունով մի թերթ։

VI
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐԾ

Պոլսոյ Կ. Կոմիտէն մի շրջաբերականով յայտնել էր մեզ Հնչակ կուսակցութեան հետ Տաճկաստանում ձեռնարկուած համերաշխութեան հարցի մասին եւ փափաք յայտնել որ բոլոր դաշնակցական մարմիններն էլ գործէին նոյն ուղղութեամբ։ Կոմիտէս այդ հարցը դրաւ իւր խումբերի լայն խորհրդակցութեան եւ արդիւնքը, որը բացասական էր, գէթ մեր շրջանի համար, հաղորդեց պատկանեալ մարմնին։

Կոմիտէս ունեցաւ նաեւ մի շարք խորհրդակցական ժողովներ պարսիկ դեմոկրատ կուսակցութեան հետ, նպատակ ունենալով ճշտելու մեր դիրքը դէպի պարլամենտական միակ ձախակողմեան կուսակցութիւնը եւ եթէ հնարաւոր էր համագործակցութեան մի պլատֆորմ մշակելու. խառն յանձնաժողովը որոշ համաձայնութեան եկաւ հետեւեալ հարցերի շուրջը.

1.- Պարլամենտարիզմ։

2.- Ընտրողական օրէնքների վերաքննութիւն։

3.- Ազատութիւն մամուլի, խօսքի, անձի, ընկերակցութեանց, գործադուլների եւ ժողովների։

4.- Հողը գիւղացիների սեփականութիւն դարձնելու հարց։

5.- Անհատական եւ հասարակական մենաշնորհների վերացումը։

6.- Վակուֆների[23] առանձին վարչութիւն պետական հսկողութեան տակ, եկամուտները ժողովրդական լուսաւորութեան գործին յատկացնելով։

7.- Քաղաքային ինքնավարութիւն ժողովրդական ընտրութեամբ։

8.- Ազգային ներքին ինքնավարութիւն։

Դժբախտաբար վերոյիշեալ ծրագիրը, որի համար այնքան աշխատանք թափուեցաւ, չվաւերացուեց եւ գործադրութեան չմտաւ, այն պատճառաւ որ Կ. Կոմիտէն մերժեց ընդունիլ դեմոկրատների առաջարկն՝ ստորագրուած պաշտօնական պայմանագրեր փոխանակելու։ Մենք լիազօրուեցանք միայն բանաւոր կերպով ընդունելու վերոյիշեալ ծրագիրն առանց գրաւոր յանձնառութեանց, որը գրեթէ ամբողջովին ամլութեան դատապարտեց մշակուած պլատֆորմը։

Կոմիտէս հրաւիրուել է դեմոկրատ կուսակցութեան կողմից մասնակցելու նաեւ միջկուսակցական մի կոնֆերանսի, որը պիտի ընտրէր միջկուսակցական մի մարմին եւ պէտք է աշխատէր միջոցներ ձեռք առնել երկիրը ներքին ու արտաքին ռէակտիոնից ազատելու համար։ Կոմիտէս գովելով հանդերձ այդ առաջարկը, որը անհրաժեշտ էր եւ այժմէական, փափաք յայտնեց այնտեղ հրաւիրուած տեսնել բոլոր այն կուսակցութիւնները որոնք երկրում իրենց բարոյական, մտաւոր եւ ռազմական ոյժերի չօշափելի փաստեր էին տուել. մի խօսքով կոնֆերանսը պիտի կազմուէր Հ. Ց. Դաշնակցութեան, Դեմոկրատների, Էթրքֆազ ու Թարաղիի եւ Էթրտալիուններ ի ներկայացուցիչներից։

Համագումարն ունեցաւ մի քանի նիստեր, բայց չնորհիւ Էթրտալիունների եւ Էթրքֆազ ու Թարաղու դժկամութեան, որոնք նոր կազմուած փարլամենտական պլոկով միացած ու զօրացած՝ այլեւս կարիք չէին զգում դեմոկրատների, գուցէ եւ Դաշնակցութեան աջակցութեան՝ յաճախ համագումարն զբաղեցրին անձնական վիճաբանութիւններով եւ իրենց միտումնաւոր բացակայութիւններով խանգարեցին ժողովներն, այնպէս որ մի քանի ամիսներից յետոյ համագումարը ցրուեցաւ առանց դրական մի արդիւնքի հասնելու. Կոմիտէս չէ թերացել այդ առթիւ իր արդարացի դժգոհութիւնն յայտնելու եւ միշտ տրամադիր միացեալ միջկուսակցական ոյժերով վերսկսելու ընդհատուած կոնֆերանսն։

VII
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐԾ

Մեր օրօք արծարծուեց նաեւ Մէջլիսի հայ պատգամաւորի հարցը։ Պարսից ընտրողական օրէնքները պարսկահային տալիս էին միայն մի պատգամաւորի իրաւունք։ Դրա դէմ էր հարաւը, որը պահանջում էր երկուսը, եթէ ոչ աւելին. հարաւին ձայնակցում [էր] Թեհրանի եւ Գիլանի հայութիւնը, իսկ մեր կազմակերպական տեսակէտը պարզ էր եւ որոշ. մենք պահանջում էինք ոչ մէկը եւ ոչ ալ միւսը, այլ իրաւահաւասարութեան սկզբունքի կիրառումը. մենք սկզբունքով հակառակ էինք նաեւ մէկին որը տրուած էր մեզ կարծես իբր շնորհ կամ ի վարձատրութիւն մեր արած ծառայութեանց։ Պատգամաւորական հարցը երկարօրէն ծեծուեցաւ մեր շարքերում եւ այլ մարմինների հետ. մենք տարուբերուեցանք երբեմն հիմնուելով դրսից մեզ տրուած խոստումների վրայ, բայց վերջիվերջոյ եկանք այն գաղափարին որ լաւագոյն է ունենալ գոնէ այս նստաշրջանում միայն մի պատգամաւոր, որը իր ներկայութեամբ կարողանար հարթել ճանապարհը դէպի ընտրողական օրէնքների վերաքննութիւնը եւ այլն. մեզ օգնութեան հասաւ նոյն իսկ ինքը Մէջլիսն, որը Ատրպատականի ընտրեալ ընկեր Յովսէփ Միրզայեանին ճանաչեց իբր ընդհանուր պարսկահայոց պատգամաւոր եւ դրանով էլ վերջ տուաւ տիրող կրիզիսին։

Մեր պատգամաւորի պարլամենտ գնալուց առաջ ինչպէս երեւում է որոշ կուսակցութիւններ կամ պարլամենտական ֆրակցիաներ չեն եղել այնտեղ, պատգամաւորներից ոչ մէկը եւ ոչ էլ ռեւէ մի խմբակ ծրագիր չեն ունեցել եւ եթէ էլ ունեցել են դա պահուած է եղել գաղտնի։ Մեր պատգամաւորը Մէջլիս մտած օրից իսկ յայտնում է իր քաղաքական դաւանանքը եւ այդպիսով հիմն է դրուած եւ սկսւում է կողմնակի կերպով ծեծել այն հարցը թէ որքա՞ն կարեւոր է որ Մէջլիսի միւս պատգամաւորներն էլ յայտնեն իրենց քաղաքական դաւանանքը. մինչ այդ տեղս է ժամանում նաեւ խնամակալ Նասրօլմոլքը, որը դնում է եւ նոյն պահանջը եւ այդպիսով պարսից պարլամենտը, որը ոչ աջ, ոչ ձախ եւ ոչ կենտրոն ունէր՝ որոշ մի ձեւակերպում է ստանում եւ կուսակցութիւններն հրապարակ են գալիս իրենց պարլամենտական թեւով ու ծրագրով։

Մեր պատգամաւորն աշխատել է պարլամենտում իրար մօտեցնել դեմոկրատներին ու Էթրտալիուններին՝ ի բաց վանելու անձնական խնդիրներն եւ երկրի կենսական շահերի շուրջը միացեալ ոյժերով գործակցելու. եւ ուրախ ենք ասելու որ այդ բանն նրան մասամբ յաջողել է։

Նա պիւդճէտային հարցերում աշխատել է այն ուղղութեամբ որ մեծ ռոճիկները կրճատուին, իսկ փոքրերը աւելացուին։

Մեր պատգամաւորը մասնաւոր ուշադրութիւն է դարձրել ընտրական օրէնքների վերաքննութեան հարցին եւ այդ կարեւոր գործը յանձնուել է մի յանձնաժողովի որը դժբախտաբար ոչ այնքան ազատականներից է կազմուած։

Արդարադատութեան Ատեանի օրէնքներ մշակելու հարցում մեր պատգամաւորը ոչ պաշտօնական ժողովում յայտնել է որ եթէ այդտեղ իրաւահաւասարութեան օրէնքը չպաշտպանուի՝ հայ ազգութիւնը ստիպուած կը լինի իր համար առանձին դատարան պահանջելու։ Այդ պրոպագանդը յաջողութիւն է գտել եւ բաւականաչափ ազդել այդ օրէնքների մշակութեան վրայ։

Պետութեան հաշուով արտասահման ուղարկուելիք ուսանողների հարցը քննուելիս նա պաշտպանել է այն միտքը թէ արտասահման պէտք է ուղարկել նրանց, որոնց ծնողները ուղարկելու միջոց չունին։ Այդ առաջարկը հէնց այդպէս էլ անցել է։

Նա պաշտպանել է հայերից զինուոր վերցնելու հարցը։

Զայն է տուել Շուէտիայից ոստիկանութիւնը եւ Ամերիկայից Ֆինանսները կազմակերպողներ բերել տալու առաջարկին։ Աֆիոնի տուրքը աւելացուելուն։ Հնութիւններից որոշ տոկոս կառավարութեան վերցնելու օրէնքին։ Ցորենի սպեկուլացիայի[23ա] դէմ օրէնք հրատարակելու սկզբունքին։ Գեղարուեստական դպրոցին նորից 2000 կալ գետին եւ 2000 թումանի մի գումար նորից միանուագ վճարուելուն։

Պատգամաւորը ոչ մի ֆրակցիայում չի եղել։

Վերջերս էլ Էթրտալիուններից, Էթրքֆազ-Թարաղուց, Թարաղի-Խահաններից եւ մի քանի անկուսակցական անհատներից կազմուել է Մէջլիսի պլոկը. պլոկից դուրս են մնացել մեր պատգամաւորը, դեմոկրատները եւ մի քանի այլ անկուսակցականներ։

VIII
ԹՌՈՒՑԻԿՆԵՐԸ

Կոմիտէս շատ քիչ անգամ առիթ է ունեցել թռուցիկներով արտայայտուելու. իր գործունէութեան մէջ ցաւալի մի դէպք պէտք է համարել դեմոկրատների դէմ բաց թողուած թռուցիկն, այն ժամանակ երբ խառն յանձնաժողովն զբաղուած էր պարլամենտական գործունէութեան մշակումովը նոյն դեմոկրատ կուսակցութեան հետ։ Այդ թռուցիկի հետեւանքով լոյս տեսան Դաշնակցութեան դէմ դեմոկրատ կուսակցութեան կողմից բաց թողուած մի թռուցիկ եւ թեր ու դէմ երկու յօդուածներ գրուած պարսկական թերթերում մեր ընկերների կողմից։ Քանի որ թռուցիկը բաց էր թողուել խորհրդակցական ժողովի որոշմամբ մեր ընկեր ներկայացուցչի միջոցաւ առանց մարմնիս գիտութեան, քանի որ խորհրդակցական ժողովը ընդունելով հանդերձ թռուցիկի անհրաժեշտութիւնը հարկ էր իմացել չեշտելու եւ այն հանգամանքը որ «թռուցիկը հրատարակուելու է կոմիտէի անունով եւ նրա գիտութեամբ եւ որոշմամբ», քանի որ մարմինն այդպիսի մի բան չէր որոշել եւ ընկեր ներկայացուցիչն էլ այդ ժամանակ բացակայ էր քաղաքից՝ կոմիտէս յարմար դատեց չպատասխանել դեմոկրատների թռուցիկին եւ արգիլել ընկերներին այդ հարցի շուրջը պարսկական թերթերում արտայայտուելուց։

23.- Կրօնապատկան կալուածներու։

23ա.- Շահադիտական նպատակով կատարուած գործարք, չարաշահութիւն։

Ընկեր Արսէնի վերջերս տեղս ժամանելուց յետոյ կատարուած քննութիւնները ցոյց են տալիս որ սխալը կատարուած է եղել պարսկերէն թարգմանութեան մէջ եւ ծնունդ է եղել թիւրիմացութեան։

IX
ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Կ. Կոմիտէի հրահանգի համաձայն կոմիտէս անցեալ տարի ձեռնարկեց դաշնակցական շարքերի վերակազմութեան դժուարին հարցին։ Մենք ունէինք բազմաթիւ քաղաքական խումբեր, որոնք սոցիալիստական հողի վրայ եւ կեանքի մէջ չունէին գործօն խմբերի ցենզ. դրանք պարզ խմբակցութիւններ էին կազմակերպուած աւելի ընկերական հողի վրայ. մեզ պէտք էր ստեղծել այնպիսի խմբակցութիւններ, որոնք միմեանց հետ շաղկապուած լինէին դասակարգային շահերով եւ շահագրգռուած նրանցով։ Այդ նկատումներով մենք ձեռնարկեցինք խմբերի զտման հարցին եւ նրանց համախմբեցինք արհեստակ[ցակ]ան միութիւնների շուրջը եւ այդպիսով մենք այսօր թողնում ենք ապագայ կոմիտէի ինն նորակազմ միութիւններ, որոնք են՝

1.- *Մանր առեւտրականներ*	*կազմուած*	11	*հոգուց*
2.- *Արհեստաւորներ*	»	9	»
3.- *Ուսուցիչներ-ուսուցչուհիներ*	»	13	»
4.- *Դերձակ վարպետներ*	»	16	»
5.- *Հեռագրիչներ*	»	14	»
6.- *Տպարանական բանուորներ*	»	16	»
7.- *Գինեվաճառներ*	»	22	»
8.- *Գործակատարներ*	»	35	»
9.- *Դերձակ կանանց միութիւն*	»	»	»

Դրանց վրայ պէտք է աւելացնել նաեւ Կարմիր խաչի միութիւնն եւ երկու քաղաքական խումբեր «Ամազոն» եւ «Քրիստափոր»։

X
ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

1909 Սեպտեմբեր 1-ից մինչեւ 1910 Յունուար 1ը, այսինքն չորս ամսուայ ընթացքում կոմիտէիս մուտքերը եղել են հետեւեալ կերպով.

Դաշնակցական խմբերից,

հին եւ նոր վճարներ	6332 *դրան*
Նուէրներից եւ երեկոյթներից	598 »
Փչացած զէնքերի վաճառումից	272.50 »
Գումար	7202.50 *դրան*

Իսկ ելքերը եղել են

Ինքնապաշտպանութեան մարմնին	4963.40 *դրան*
Պրոպագանդայի համար ծախսուած	2075.50 *դրան*
Դիւանական ծախքեր	95 »
Անցեալ կոմիտէի պարտքն վճարած	94 »
Հեռագիրների	291.20 »
Փոստի	51.35 »
Կենտ. Կոմիտէին փոխադրած	2000 »
Սուլթանապատ զէնք փոխադրելու ծախքեր	500 »
Գումար	10070.45 *դրան*

Այնպէս որ 1910ի տարեմուտին կոմիտէիս սնտուկը ունեցել է 2867 դրանի եւ 95 սանթիմի մի բաց։

1910 Յունուար 1ից մինչ 1911 Յունուար 1ը կոմիտէիս մուտքերը եղել են հետեւեալ կերպով.

Դաշնակցական խումբերից	6390 *դրան*
Ներկայացումներից	1725.95 »
Մախսուած զէնքերից	1981.20 *դրան*
Ինքնապաշտպանութեան մարմնից	220 »
Տեղական նուէրներից	471 »
Ռուտչահից եւ Նիշապուրից նուէրներ (հանգանակութիւն)	4180 »
Գետափի[12] *ենթակոմիտէից*	719.05 »
Գումար	15687.20 *դրան*

Իսկ ելքերը եղել են.

1909-ի ելեւմտական բացը	2867.95 *դրան*
Փոստի	317.75 »
Հեռագրի	272.60 »
Դիւանական ծախքեր	201.10 »
Պրոպագանդայի	2787.30 »
Զէնքերի կոմիտէի պարտքը վճարած	381.60 »
Մթերք	172 »
Կ. Կոմիտէին փոխադրուած	2660 »
Ինքնապաշտպանութեան մարմնին	17 »
Գնուած զէնքեր	2293 »
Գումար	11970.30 *դրան*

1911ի տարեմուտին կոմիտէիս սնտուկում մնում էր իբր աւելորդ մուտք 3716 դրանի եւ 90 սանթիմի մի գումար։

Կովկասեան բանտարկեալների օգտին տեղումս կատարուած հանգանակութիւնն մուտք է տուել 34398 դրան, որից ապառիկ մնում է միայն 2200 դրան։

(Շարունակութիւնը տես էջ 1ից սկսած. 7/20 Յուլիսից մինչ 10/23 Հոկտ. 1911)

Քարտուղար **ՊԵՐՃ**

Նախագահ **ԱՐՍԷՆ**

Փաստ. 587-47

Բ 4.– ՅԱՒԵԼՈՒԱԾ
ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՇԱՀ ԿՈՄԻՏԷԻ՝
Սկսած 7/20 Յուլիսից մինչ 10/23 Հոկտ. 1911

Նախքան մեր վերջին գործունէութեան հաշուետուութիւնը, կոմիտէս պարտք է համարում ի լրացումն իւր նախկին տեղեկագրի յայտնել թէ իր օրօք կազմուել է Հ.Յ.Դ. լսարանական վարչութիւնն, նպատակ ունենալով պարբերական եւ հրապարակային դասախօսութիւններով պարզել կուսակցական, պատմական, հասարակական, փիլիսոփայական եւ այլն հարցեր։ Վարչութիւնն տուել է մի շարք դասախօսութիւններ, որոնք թէեւ ընդհատուել են ամառնային սեզոնի պատճառաւ, սակայն յուսով ենք որ ապագայ կոմիտէի օրօք պիտի վերսկսին։

Բացի այդ կոմիտէս պարսից էթըֆազ-Թարաղի կուսակցութեան հետ միասին երեք անգամ կազմակերպել է կոնֆերանսներ, ուր հասարակական հարցերի մասին խօսել են հայ ու պարսիկ ընկերներ։

1910ի վերջերն կազմուել է նաեւ «Առաւօտ»[24] *թերթի հեռագրական գործակալութիւնը, նպատակ ունենալով հեռագրական կարեւոր լուրեր հայթայթել թերթին, առանց ծանրանալու նրա նիւթական սուղ պիւտճէի վրայ. այդպիսով անցեալ 1910 Հոկտեմբերից մինչ այժմ հեռագրական գործակալութիւնը տուել է թերթին հեռագիրներ կէս արժէքով 405 դրանի. գործակալութեան անդամներից ստացել 284 դրան, իսկ բաց է մնում 121 դրան։ Յաւ ի սիրտ պիտի ասել որ անդամների շատ սահմանափակ թիւը միջոց չի տուել գործակալութեան հեռագրական աւելի մեծ ծախքերի տակ մտնելու։*

Անցնելով Շրջանային ժողովի նիստերը սկսելուց յետոյ եղած կոմիտէական գործունէութեան, պէտք է յայտնենք թէ մեր ուշադրութիւնն գլխաւորաբար հրաւիրուած է եղել Սահմանադրութեան եւ երկրի անկախութեան սպառնացող վերջին դէպքերի վրայ եւ մեր գործունէութիւնն եղել է գլխաւորաբար այդ ուղղութեամբ։ Մամէդ Ալու եւ իւր արբանեակների Պարսկաստան ժամանելու լուրն ստացուելուն պէս մենք տուել ենք մեր վերջնական որոշումն ակտիւ մասնակցութեան։ Մեր որոշումներն հեռագրուել են կենտրոնական կոմիտէին եւ այնտեղից ու Բիւրոյից պատշաճ հրահանգներն ստացուելուն պէս մեր որոշումներն հեռագրուել է մեր շրջանի մարմիններին հրահանգելով նրանց անմիջապէս ձեռնարկել կամաւորների զինուորագրութեան\։

Նկատի ունենալով այն հանգամանքը որ կառավարութիւնն յանձին խնամակալ Նասրօլմոլքի կոմնակի դիմումներ էր արել ընկերների միջոցաւ օգտուելու կազմակերպական ոյժերից՝ մենք հրահանգել ենք ընկերներ Արմենակին[13]*, Ֆիլիպին*[21]*, Արբակ Ռշտունուն*[25] *ու Ռէշիտ Զատէին տեսակցելու ընկեր Եփրեմի հետ որի ընդհանուր հրամանատարութեան տակ էին դրուած պատերազմական գործողութիւններն՝ որոշակի պարզելու համար թէ ի՞նչ բնոյթ ունի կառավարութեան դիմումը, թէ ի՞նչ անուան տակ են կազմուելու հայկական գունդերը եւ ի՞նչ դրօշակի տակ են կռուելու նրանք։ Այդ հարցերի պատասխանը թէեւ պահանջուելու էր գրաւոր իբր պատմական փաստ կազմակերպութեանս արխիւում պահուելու համար, բայց ստացուել է բերանացի, որը անբաւարար նկատուելով՝ նորից դիմուել է ընկերներին իրենց գրաւոր զեկուցումն պահանջելով։*

Վտանգի օրերին կոմիտէս բաց է թողել առաջին մի թռուցիկ «Հայ ժողովրդին» զինուելու Սահմանադրութեան, երկրի անկախութեան եւ քաղաքացիական իրաւանց պաշտպանութեան համար, երկրորդ մի թռուցիկ «Հայ զինուորներին» եւ երրորդ մի թռուցիկ պարսկերէն լեզուով «պարսիկ ժողովրդին»,— մօտաւորապէս նոյն իմաստով ու բովանդակութեամբ թռուցիկներ[26]*։*

Կոմիտէս միեւնոյն ժամանակ ուժեղացրել է ներքին ինքնապաշտպանութեան գործը, նա կազմակերպել եւ լայն ծաւալ է տուել զինուորական վարժութիւններին, ուր ընդունուել են ոչ միայն դաշնակցական ընկերներ, այլ եւ դուրսից դիմողներ անխտիր։ Մարզանքների համար ունեցել է մասնագէտ մի մարզիչ որը եղել է ապա գունդերից մէկի ղեկավար պատերազմի արիւնոտ դաշտում։

Մարմինը բաշխել է Թեհրանի շրջակայ հայաբնակ չորս գիւղերին 27 հրացան, որոնցից հինգը նշանակ-

24.- «Առաւօտ», նախապէս Թաւրիզ, ապա Թեհրան հրատարակուող դաշնակցական թերթ, նոյնանուն հեռագրական գործակալութեամբ։

25.- Արբակ Ռշտունին՝ Միրզայեան Յովսէփն է։

26.- Յիշուած թռուցիկները տեսնել էջ 82-87։

*) *Հայկական գունդը բաղկացած է 200 հոգուց, որոնցից 34ը Ոսկանապատից ու Գիլանից, 7ը Գաղազանից, 30ը Գետափից, իսկ մնացորդը Շահաքաղաքի տրամադրելի եւ նոր զինուորագրուած ընկերներից։*

ւած արժէքով մաս առ մաս վճարուելու պայմանաւ։ Գաղազանի ենթակոմիտէի[16] խնդրանօք նա ուղարկել է 50 հրացան բաւականաչափ ծայրերով զինելու Սեւ Արիւնի[27] շրջանի հայաբնակ գիւղերն։

Գետափի[12] ենթակոմիտէի խնդրանօք կոմիտէս ուղարկել է ընկեր Արշակին շարունակելու մեր նախկին պրոպագանդիստների սկսած գործը Փերիայի եւ Զհարմայի հայկական գիւղերում. մեր ընկերը յաջողել է կազմել ինքնապաշտպանութեան գիւղական խմբեր, որոնց մարտիկներից 30 հոգին Թեհրան գալով մտան հայկական գունդի մէջ եւ մասնակցեցան ճակատամարտերին։

Կռիւների մէջ մեր ընկերների ձեռք բերած զէնքերը, որոնք իբր թշնամուց խլուած պատերազմական աւար հրամանատարների կողմից նուիրուած էին մարտիկներին՝ շնորհակալութեամբ պէտք է ասել թէ մարտիկների կողմից էլ նուիրուել են կազմակերպութեանս, որով մեր զինարանի նախկին ցուցակի վրայ աւելանում են 135 կտոր զանազան սիստեմի հրացաններ 11780 ծայրերով[28]։ Բացի այդ կոմիտէս նկատի ունենալով իր ընդունած այն սկզբունքը, որն է ծախել հին սիստեմի զէնքերը գիւղացիներին արժան արժէքով պայմանաւ որ զէնքը պահուի մշտնջենական իրենց շրջանի պաշտպանութեան համար եւ վաճառումից գոյացած փողերով գնել օրուայ պիտոյից յարմար զէնքեր՝ գնել է 3 մոսին 500 ծայրով, մի մանլիխէր 500 ծայրով եւ 4 տասնհարուածեան ատրճանակ 850 ծայրով։

Տագնապալից օրերի նախօրեակին դեմոկրատների հրաւիրանօք վերսկսել են միջկուսակցական կոնֆերանսները մեր, դեմոկրատների, էթըտալների եւ էթըֆազ-Թարաղու մէջ, որոնք ինչպէս անցեալներում՝ չեն տուել շօշափելի մի արդիւնք եւ հէնց վտանգի օրերին ցրուել են, ամէն մի կուսակցութիւն իւր համար ուրոյն մի գործունէութիւն ստեղծելով։

Համաձայն Կ. Կոմիտէի եւ Բիւրոյի կարգադրութեան մենք մտածել ենք յարմար առիթից օգտուել ընկերներից մէկնումէկին Հնդկաստան ուղարկելու կովկասի բանտարկեալների օգտին մի հանգանակութեան ձեռնարկելու համար. այդ առիթը ուրախ ենք ասելու որ կարելի է ներկայացած համարել քանի որ ընկերներից Արմենակն[18] ինքզինքը տրամադրելի է արել երեք ամսով այդ գործին նուիրուելու։

Իբր պրոպագանտային հրատարակութիւն վերջին եռամսեակին մէջ մենք ունեցել ենք Ցառաջի հրատարակութիւններից «Գիւղացիներին» պրոշիւրը, թարգմանութիւն պարսկերէնի Յովհաննէս Վարդանեան Բատալի։

Մենք պահել ենք մեր մշակած սերտ յարաբերութիւնները բոլոր մարմինների հետ. շարունակուել են նաեւ մեր քաղաքական տեղեկագրերի խմբագրութիւնն որոնք պարբերաբար ուղարկուել են բոլոր մարմիններին։

Ուրախութեամբ պէտք է յիշել որ Հ.Յ.Դ. Կարմիր խաչի միութեան վարչութիւնն, պարտաճանաչ իր կոչման՝ կոմիտէիս միջոցաւ ուղարկել է հայկական գունդի հրամանատարին 113 կտոր վիրաբուժական պիտոյքներ, որոնց համար կոմիտէս ստացել է գունդի հրամանատար ընկեր Քեռուց շնորհակալութեան մի նամակ եւ պատճէնը յանձնել վարչութեան։ Կարմիր խաչի միութիւնն առաջարկել է նաեւ ի պահանջել հարկին քաղաքումս հաստատելու առժամանակեայ մի հիւանդանոց։

Կոմիտէի եւ իւր խորհրդակցական ժողովի ցանկութիւնն է եղել տեղումս ունենալ ընդհանուր Պարսկաստանի լայն պատգամաւորական մի ժողով, ուր Պարսկաստանի մարմինների համար մշակուէին ընդհանուր մի գործելակերպ եւ տակտիկ. թէեւ այդ բանը չյաջողուեց մեզ, բայց ուրախութեամբ արձանագրում ենք այն փաստը որ մեզ յաջողուեց գումարել մի լայն շրջանային պատգամաւորական ժողով, ուր վերոյիշեալ խնդիրները որոշ չափով նկատի առնուեցան։

Վերջացնելով մեր տեղեկագիրը ցաւ ենք յայտնում որ նախընտրական գործողութիւնները եւ Շրջանային ժողովի գումարումը որի նիստերը տեւել են երեք ամիս (որը պարտաւորեցրել է կոմիտէիս շարունակելու իւր պաշտօնը եւ ներկայացնելու սոյն յաւելուած տեղեկագիրը այդ ժամանակամիջոցի համար) նաեւ քաղաքական վերջին դէպքերը, որոնք տակնուվրայ էին արել քաղաքի նորմալ դրութիւնը եւ գրաւել մեր ամբողջ ուշադրութիւնը՝ պատճառ են դարձել խմբային ժողովների որոշ անկանոնութեան եւ տուրքերի յետ ընկնելուն, որոնց մի մասը մնում է դեռ ապառիկ։

Շնորհակալութիւն ենք յայտնում բոլոր այն ընկերներին որոնք դիւրացրել են կոմիտէիս դրամական գործառնութիւնքը անհրաժեշտ դէպքերում առանց տոկոսի փոխառութիւն տալով. շնորհակալութիւն նրանց, որոնք մեր տպագրական գործերը կատարել են գրեթէ ձրի, նրանց որոնք ժամանակ առ ժամանակ մեր յանձնարարութիւնները կատարել են բարեխղճաբար, այն ընկերներին որոնք անձնուիրաբար յանձն են առել մեր պրոպագանդի գործը, այն ընկերներին որոնք մեր հեռագրական գործը կատարել են ձրի եւ իրենց հաղորդած քաղաքական տեղեկութիւններով մասնաւորապէս օգնել մեր վերջին մարտական գործառնութեանց եւ քաղաքական տեղեկագրի խմբագրութեան։

Կոմիտէս իր հրաժարականը ներկայացնելով Կենտ. Կոմիտէիդ եւ Շրջանային ժողովիդ՝ հարկ է համարում յայտնել որ իր մի անդամուհին իւր առողջական վիճակի բերմամբ ստիպուած է եղել հրաժարուել մի տարուայ պաշտօնավարութեան շրջանը լրացնելուց յետոյ. մարմնի կազմի պակասը լեցրել է ընկեր Արմենակը այս տարուայ Մարտ ամսից իբր Կենտ. Կոմիտէի ներկայացուցիչ։ Կոմիտէս իւր վրայ դրուած պաշտօնը տարել է համերաշխութեամբ. նա կատարել է իւր պարտականութիւնքը այնչափով, ինչ չափով թոյլ են տուել իւր միջոցները. նա ունեցել է իւր տկար կողմերը որոնց համար ի հարկէ ընկերները ներողամիտ կը լինեն երբ աչքի առաջ ունենան այն հանգամանքը որ կոմիտէիս կազմը մեծաւ մասամբ բաղկացած է եղել այնպիսի ընկերներից որոնք առաջին անգամ լինելով հրաւիրուած են եղել այդ պատասխանատու պաշտօնին եւ քաղաքական այն դժուարին օրերը որը ապրել է նա անցեալ երկու տարիներում։ Ցոյս ունինք որ ապագայ մարմնի համար ընտրուին այնպիսի ձեռնհաս ընկերներ, որոնք աւելի մեծ յաջողութեամբ վարեն կազմակերպական գործը եւ աւելի բարձր պահեն Հ.Յ.Դ. Դրօշակը։

Ներկայ թուականի Յունուար 1ից մինչ 1 Օգոստոսի մեր ելեւմտական հաշիւն արդէն ներկայացուել եւ վաւերացուել է Շրջանային ժողովի կողմից ընտրուած յանձնախմբից եւ որը տալիս է հետեւեալ թուերը։

	զուտ
1910ի ելեւմտական հաշուից մնացած կանխիկ դրամ	3790.10
Պահանջներ զէնքերի վաճառումից	10007.50
Դրօշակի բաժնեգներից եւ գրքերի վաճառումից	641
Գումար	14438.60
Իսկ պարտք Դրօշակի խմբագրութեան	1106
Կշիռ	13332.60

Օգոստոս 1ից մինչ 10 Հոկտ. ելեւմտական հաշիւը հետեւեալն է

Մուտք

Կանխիկ դրամ սնտուկում	3790.10
Զէնքերի վաճառումից	7330
Նախորդ զէնքերի ապառիկներից գանձուած	1650
Փորթ-Արտուրի[29] վիճակախաղի տոմսերի ապառիկներից	130
Դրօշակի ապառիկներից	20
Միութիւններից եւ խումբերից	1771.50
Գումար	14691.60

Ելք

Վաճառուած զէնքերի ապառիկ	5200
Նոր զէնքեր գնուած	5545
Փոստ ու հեռագիր	533.35
Դիւանական	69.30
Զէնքերի փոխադրութեան ծախք	941.05
Ինքնապաշտպանութեան	300
Տպագրական	450
Գումար	13038.70

Որով 1911 Հոկտ. 10ին մեր ելեւմտական հաշիւը փակուելովը կոմիտէիս սնտուկում մնում է կանխիկ դրամ 1652.90 դրան։

Քարտուղար ՊԵՐՃ
Գանձապահ Ա. Մ.
Նախագահ ԱՐՍԷՆ

ԳՈՒՐԳԷՆ, ԱՐՇԱԿՈՒՆԻ, ՊԱՆԴՈՒԽՏ

27.- Սեւ Արիւն – Ղազուինի շրջան, Գաղազան կոմիտէի մէկ ենթաշրջանը։

28.- Փամփուշտներով։

29.- Պորտ-Արտիւր՝ կուս. ծածկանունն է Էնզելի քաղաքին։

Փաստ. 587-6

Բ 5.– ՄԻԱՄԵԱՅՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԵՏԱՓԻ ԴՆՈՐ ՋՈՒՂԱՅ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ

Գետափը կուսակցական ծածկանունն էր Նոր Ջուղայի (Սպահան) դաշնակցական կազմակերպութեան: Այս եւ յաջորդ երկու փաստաթուղթերը կը վերաբերին նոյն շրջանին:

Նոր-Ջուղայի Հ. Յ. Դաշնակցութեան խմբերը ամէնքին յայտնի ներքին երկպառակութեանց պատճառով քայքայուած լինելով, 1909 թ. Սեպտեմբերին «Շահ»ի կոմիտէի ներկայացուցիչ յարգելի Դր. Ստեփանեանի Ջուղա գալովը նորից վերակազմուեցին երկու խմբեր՝ բաղկացած 25 հոգուց։

Ընկերների ընդհանուր ժողովում որոշուեց վարձել մի դահլիճ մասնաւոր մի չէնքում, մշտական ժողովների յատկացնելու համար։ Այդտեղ ընկեր Էլարմի դասախօսութեանց առթիւ հետզհետէ հետաքրքիրների թիւը չատանալով, անդամների թիւը բարձրանում է 45/50ի։

Եւ որովհետեւ ըստ ներքին կանոնադրութեան կարելի էր այդքան հոգուց ընտրել մի ենթակոմիտէ, որոշուեց բաժանել նախկին երկու խմբերը, որով կազմուեց 5 խումբ. սակայն որովհետեւ յարգելի Դոկտորի պրոպագանդի շնորհիւ յոյս էր տածուում որ մեր հակառակորդները իրենց միջից կը կազմեն մի-երկու խմբեր (գո՛նէ իրենք այդպէս էինք խոստացել դոկտորին) կամ թէ դրանցից մի քանիսը կը մասնակցեն մեր խմբերին, ընդհանուր ժողովը որոշեց ընտրել առժամանակեայ մի մարմին՝ կառավարելու խմբերը, մինչեւ ենթադրեալ խմբերի կազմուելը կամ մեզ դիմելը. սակայն երկու ամսի չափ սպասելուց յետոյ երբ նկատուեց որ եղած խոստումները բոլորովին անհիմն եւ լոկ գործերը թուլացնելու էին նպաստում, ընտրուած մարմինը Դոկտորի 1 Դեկտ. 1909 թ. հրահանգի համաձայն ձեռնարկեց ընտրութիւնների նոյն Դեկտ.ամսի վերջերը եւ գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին ընկերներ Խարիսխ, Մշակ, Վահէ, Էլարմ եւ Արմէն ենթակոմիտէի անդամներ 1910 թ. Յունուար 4ին կայացած ընդհանուր ժողովում։

Ենթակոմիտէն գործի գլուխ անցնելով, նախ կանոնաւորեց խմբերը, որոնցից չորսը օժանդակներ էին, իսկ մէկը զինավարժական, աշխատեց խմբերի թիւը աւելացնել եւ դրա համար թոյլատրեց դասախօսութիւններին կողմնակի մարդկանց ունկնդրութիւնը. որով քիչ ժամանակից յետոյ խմբերի թիւը հասաւ 8ի, 60 անդամներով։

Ենթակոմիտէն այսպէս իր ներքին ուժերը կանոնաւորելուց յետոյ, արտաքին գործերում նախ երեւան եկաւ այն ժամանակ, երբ Բ. Վ.ի[29ա] համար ապօրինի ձեւով ստորագրութիւններ հաւաքել սկսեցին, եւ [ենթակոմիտէն] 60ից աւելի ստորագրութիւններով բողոքեց այդ ապօրինի ստորագրութեանց դէմ։

Երկրորդ անգամ նա երեւան եկաւ Յովսէփ Պողոսեանի հիւանդանոցի վարչութիւնը ընտրելու ժամանակ եւ այնպիսի ուժեղ մի բախում ունեցաւ յետադէմ եւ պահպանողական տարրերի հետ, որ թէեւ չկարողացաւ իր թեկնածուներն անցկացնել, բայց ցոյց տուեց իր գնահատելի ոյժը եւ մեծ մտատանջութիւն պատճառեց հակառակորդ տարրերին. զգացին նրանք որ ձեռնոցը գցուում է եւ երկարատեւ ուժեղ մի կռիւ է յայտարարուած. դրանից յետոյ ամէն կերպ խոչընդոտներ սկսեցին երեւան գալ նախ ջլատելու եւ ապա հիմնովին քայքայելու կ[ոմիտէի]ի կազմը։ Սակայն ենթակոմիտէն խոհեմութեամբ եւ զգուշութեամբ վարուելով, օրէցօր համակրողների թիւը աւելացնում էր ժողովրդի հասարակ՝ բայց հասկացող դասակարգի երիտասարդներից։ Նրանց դէմ կանգնած էր Ջուղայի աղայական-քահանայական-ուսուցչական դասակարգերը իրենց խնամի թաֆիաներով։

Կազմակերպութեան համար զգալի մի ոյժ էր թեմիս առաջնորդի համակրութիւնը, որից ծագեցաւ նախ այն մեծ գժտութիւնը, որով հոգաբարձութիւնն ու յիշեալ յետադէմ դասակարգերը յայտնեցին իրենց դժգոհութիւնը եւ կազմեցին մեզ հակառակ մի կուսակցութիւն (եթէ կարելի է այդպէս անուանել) «Ազգային հասարակութիւնների պաշտպան Միութիւն» անուան տակ. նրանց ներքին գաղտնի ծրագիրն էր տապալել Դաշնակցութիւնը՝ եպիսկոպոսի ոյժը թուլացնելու համար ու նաեւ Դաշնակցութեան...

Այդ հրաշալի «Միութեան» առաջին ցոյցը եղաւ Ջատկի տօնին խմբովին փողոցները մտնելով, այցելել իրար տներ, հեռագրով շնորհաւորել Բ. Վ.ին եւ արձակ համարձակ վայրահաջել ընդդէմ եպիսկոպոսի եւ Դաշնակցութեան. եւ հակառակ ընդունուած սովորութեան, շնորհաւորութեան այցելութիւններ չտալ առաջնորդին։ Կռուի դրօշը պարզուած էր։ Ենթակոմիտէն հասկանալով իր շուրջը փռուած ցանցը, ամէն կերպ զգուշացաւ չընկնել նրա մէջ. ուշադրութեամբ հետեւեց հակառակորդների քայլերին. ըստ կարելւոյն թափանցեց նրանց գաղտնիքների մէջ եւ ըստ այնմ քայլեր առաւ, միշտ ի դերեւ հանելով նրանց սարքած ոչ-ազնիւ ծրագիրները։

Ենթակոմիտէի զինավարժական խմբերը հանգիստ չէին տալիս մեր հակառակորդներին. ինչքան որ յաջող փորձերը համակրանք եւ ինքնապաշտպանութեան զգացմունք էին արթնացնում ժողովրդի զանազան խաւերի մէջ, այնքան աւելի էր սաստկանում մեր հակառակորդների նախանձն ու ատելութիւնը դէպի մեզ։

Ջատկից յետոյ մի ընդհանուր զինափորձ նշանակուեց մեր ոյժերը քննելու. այդ փորձին հրաւիրուեց եւ ներկայացաւ Այվատեան սրբազանը՝ ի խրախոյս երիտասարդների. եւ չնայելով որ մեր հակառակորդներից ոմանք եւս ներկայ գտնուելով փորձին իրենց կեղծ համակրութիւնն էին ցոյց տալիս, նրանք փութացին առիթից օգտուել ի կատար ածելու իրենց վաղուց ունեցած մտադրութիւնը. այդ ցածահոգի մարդիկ նախ սկսեցին զանազան չչուկներ տարածել ժողովրդի մէջ, իբր թէ օտար հիւպատոսները զայրացել են երիտասարդների այդ յիմար արարմունքների համար եւ հարեւան պարսիկները գրգռուել են հայերի դէմ. մինչդեռ իրականութիւնը հակառակն էր ցոյց տալիս. ապա դրանցից մի քանիսը ներկայանելով իբրեւ հոգաբարձու, ժողովրդի անունից բողոքեցին առաջնորդի դէպի մեզ ունեցած համակրութեան մասին եւ իբրեւ վերջին «կողմնակից լինել կա՛մ 30 հոգու (այսինքն Դաշնակցութեան) կամ 400 հոգու» (թերեւս ի նկատի ունենալով իրենց՝ յանուն Բ. Վ.ի միամիտ ժողովրդից կորզած ապօրինի ստորագրութիւնները). երբ առաջնորդը յայտնեց որ քաղաքական դրութիւնը պահանջում է մեր ազատամիտ սկզբունքներին պաշտպան կանգնել եւ թէ ինքը պարտաւոր չէ հետեւել նրանց այդ խորհուրդներին ու ցանկութիւններին, նրանք զայրացած հեռացան եւ իրար ետեւից մի քանի ժողովներ կազմելով, գցեցին իրենց գաղտնի պլանները եւ «միութեան» ընդհանուր ժողովում որոշելով իրենց գործելակերպը, Մայիս 16ի յայտնի խայտառակ ցոյցով ուզեցին արտաքսել առաջնորդին եւ վերջին հարուածը տալ Դաշնակցութեան։

Ենթակոմիտէն թակարդի մէջ չընկնելու համար այս դէպքում եւս զգոյշ վարուեց (ընկերներից մի քանիսը լուրջ կերպով հսկելով հանդերձ եպիսկոպոսի անձնաւորութեան վրայ, ցուցարարների հետ որեւէ ընդհարում ունենալուց խուսափեցին)։ Մի կողմից հեռագիրներով ու նամակներով կանոնաւոր հաղորդակցութիւն պահելով կոմիտէի հետ, միւս կողմից հասարակական ժողովներ կազմելով, բողոքի հեռագիրներ ուղարկեց Էջմիածին եւ մի լուրջ ու անկողմնակալ տեղեկագրով զեկուցում տուեց կաթողիկոսին, նկարագրելով բուն իրողութիւնը եւ ցոյցի իսկական չարժառիթները։ Նոյնը եղաւ Թեհրանի եւ մի երկու ուրիշ քաղաքների մեր ընկերների նախաձեռնութեամբ կազմուած հասարակական ժողովների կողմից։ Այս բոլորի հետեւանքը այն եղաւ, որ Առաջնորդը հաստատ մնաց իր աթոռի վրայ եւ ցուցարարների ամիսներից ի վեր պատրաստած ծրագիրը ջուրը ընկնելով, միակ բանը որ չահեցաւ՝ ամբողջ թեմի ժողովրդի զզուանքն ու նախատինքն էր որ ընդմիշտ դրոշմուեց իրենց ճակատին։

Այսպէս ենթակոմիտէն մեր հակառակորդներին ջախջախելուց եւ «միութեան» զուր ծրագիրները ի դերեւ հանելուց յետոյ, աշխատեց մի լաւ դաս տալ վատերին. միջոցներ ձեռք առնելով կոմիտէի օգնութեամբ նախ պաշտօնանկ անել տուեց Ջուղայի Ցարէթին, որ մի մեծ ոյժ էր աղաների համար եւ պակաս դեր չխաղաց ցոյցի ժամանակ եւ ընդհանրապէս եպիսկոպոսին վարկաբեկելու գործում։ Ենթակոմիտէն ի նկատի ունենալով որ այդ հեռացրուած Ցարէթի տեղ նշանակուել է աւազակաբարոյ եւ ստոր հակումների տէր մէկը, իր կողմնակի ազդեցութիւնը բանեցնելով ոչ միայն չթողեց նրան պաշտօնավարել, այլ նոյնիսկ Ջուղա մտնել այդ պաշտօնով...։ Ապա հրաժարեցնել տալով հին հոգաբարձութեան եւ իր մի կասկածելի ուսուցչին եւ նոր ընտրութիւն կատարելով, անցկացրեց իր կանդիդատներին եւ համակրողներին հոգաբարձական կազմի մէջ. նա բերել տուեց վռնտուած ուսուցչի փոխարէն մի արժանաւոր ուսուցիչ, դպրոցական գործերին հմուտ ընկեր Արմենակ Գերասիմեանին աւագ ուսուցչի պաշտօնով իբրեւ նոր ղեկավար ոյժ ուսուցչական եւ յեղափոխական կազմի մէջ։

Ենթակոմիտէի ազդեցութեամբ Ջուղայի հին ապիկար եւ աղաների ձեռքին գործիք եղող Նայիբը փոխուեցաւ եւ ապա տեղը նշանակուեց մեր ընկերներից մէկը կոմիսէրի պաշտօնով. թէպէտ ոստիկանական դրութիւնը դեռ չէ կանոնաւորուել, բայց ունեցել է իր դրական հետեւանքները. եւ պէտք է յուսալ որ հետզհետէ կը բարւոքուի այդ դրութիւնն եւս։

Ենթակոմիտէն իր խորհուրդներով օգնեց ամէն կողմից լքուած առաջնորդին եւ որոշ չափով պաշտպանեց ժառանգական եւ կտակային դատերը հայոց առաջնորդարանում վարելու սկզբունքը։

Ամառնային արձակուրդի առթիւ բերել տուեց չորս պրոպագանդիստ ընկերներ Թեհրանից, մինը Ջուղայի եւ երեքը գիւղերի համար. մի շարք դասախօսութիւններով առաջ մղեց իր պրոպագանդի գործը եւ չնայելով տիրող աննպաստ պայմաններին, կազմակերպել տուեց հետեւեալ խմբերը գիւղերում։—

Շառաւիղ՝	Սանգիբարան	18	հոգի
Փայլակ՝	»	17	հոգի
Անդրանիկ՝	»	16	հոգի
Հորիզոն՝	»	18	»
Քրիստափոր՝	Խոյգան	9	»
Մօտօ՝	»	9	»

29ա.- Բագրատ վրդ. Վարդազարեան։

Մրրիկ՝	»	8	»
Առիւծ՝	»	7	»
Եփրեմ՝	»	9	»
Կրակ՝ Շահբուլաղ		10	»
Վրէժ՝ Միլակերտ		13	»
Որոտ՝	»	15	»
Ռուշպար՝ Դովլաթաբադ		35	»
Աչոտ՝ Սվարան		9	»
Պայծառ՝ Վերի Քլտեր		32	»
Ցոյս՝ Դովլաթաբադ		9	»
Արարատ՝ Շրչկան		23	»
Միածան՝ Խունկ		35	»
Շաւարշան՝	»	16	»
Դարվազաձոր՝ Մամուքայ		30	»

338 հոգի

Ճշմարիտ է որ գիւղական խմբերից որեւէ դրական օգուտ չունեցանք ցայժմ, որովհետեւ դժուար է գիւղացուն հէնց սկզբից հասկացնել որ պէտք է կանոնաւոր անդամավճար տալ (ինչքան էլ որ աննշան լինի այդ վճարը) առանց դրա փոխարէն մի շօշափելի բան (օր. զէնք եւայլն) իրեն տալու. բայց մենք համարում ենք այդ առաջին սերմնացանութիւնը, որով սկսեց մշակուել գիւղական հողը ապագայի համար. եւ պէտք է խոստովանել որ գիւղացու մէջ մտել է ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը եւ շատերը աշխատում են սեփական զէնք ունենալ ու վարժողութեամբ պարապել։

Ինչպէս գիտէք, Եղնիկ վարդապետ Երկարակեցեանը իր մի քանի արբանեակներով եւ մեր հակառակորդների թելադրութեամբ մեծ խոչընդոտ է ներկայացնում մեր յեղափոխական գործին գիւղերում եւ կուում է մեզ դէմ ամենաստոր զէնքերով. բացի դրանից նա մի կատարեալ պատուհաս է դարձել խեղճ գիւղացիների գլխին իր պաշտօնի չարաչար գործածութեամբ. ենթակոմիտէս մի քանի անգամ նրան զգուշացնելուց յետոյ երբ տեսաւ որ նա փոխանակ ուղղուելու օրէցօր աւելի լրբանում է, իր ազդեցութիւնը գործ դրեց նրան պաշտօնանկ անելու եւ յոյս ունինք որ այսուհետեւ գիւղացիք պիտի կարողանան ազատ շունչ քաշել եւ եթէ ապագայում յաջողուեց մեզ ի սպառ հեռացնել նրան այդ շրջանից, անկասկած հարթուած պէտք է համարել մեր ապագայ գործունէութեան ճանապարհը գիւղերում, ունենալով այնտեղ մեր պրոպագանդիստ ուսուցիչները։

Ընկեր Վահէի առաջարկութեամբ ենթակոմիտէն կազմեց մի խորհրդակցական ժողով՝ բաղկացած ենթակոմիտէի անդամներից, տեղական պրոպագանդիստ ընկերներից եւ խմբապետներից։ Երկու շաբաթն մի անգամ կանոնաւոր նիստ ունենալով, զբաղուել է մի շարք հարցերով, կազմակերպութեան գործի աւելի կանոնաւորման եւ ուժեղացման համար. նիւթական դրութիւնը կողմնակի աղբիւրներով բարւոքելու նպատակով, որոշեց մի շարք ներկայացումներ տալ. նախ դրեց պարսկերէն ներկայացման հարցը. բայց դժուարութիւնների հանդիպելով առժամանակ յետաձգեց եւ ձեռնարկեց հայերէն ներկայացման յօգուտ կազմակերպութեան։ Հիմնեց Հ.Յ.Դ. յեղափոխական գրադարան պրոպագանդիստ ընկերների ջանքերով եւ ապա որոշեց փոխադրել զայն նոր վարձուած դահլիճի մէջ։ Ի դէպ պէտք է ասել որ խմբերից մի քանիսը յարմարութիւն չունենալով մասնաւոր տներում ժողովներ անել, որոշուեց վարձել մի դահլիճ առանձին անդամավճարներով եւ անունը կոչել Դաշնակցութեան կլուբ։

Ենթակոմիտէն ձեռնարկեց հանգանակութեան ի նըպաստ կովկասահայ բանտարկեալների եւ առիթից օգտուելով անսպասելի յաջողութեամբ յառաջ տարաւ հանգանակութեան գործը հաւաքելով 1000 թումանէն աւելի նպաստ հետզհետէ փոխադրեց Թեհրան։

Անցեալ տարուայ վերջին քառորդում կազմուեց կանանց մի խումբ, որը վերջերս բաժանուեց երկու խմբերի. յոյս ունենք որ մօտ ապագայում աւելի կը ստուարանայ անդամուհիների թիւը եւ ցոյց կը տայ եռանդուն գործունէութիւն։

Համերաշխութեան հարց

Սրանից մօտաւորապէս երկու ամիս առաջ մեր հակառակորդներից ոմանք, չգիտենք ինչի՞ց դրդուած, ինքնաբերաբար դիմեցին ենթակոմիտէիս, երկու կողմերի մէջ համերաշխութիւն կայացնելու առաջարկութեամբ. ենթակոմիտէս ոչ մի վնաս չտեսնելով իրական եւ անկեղծ հաշտութեան մէջ եւ մի աւելորդ անգամ եւս ցոյց տալու համար որ Դաշնակցութիւնը ինչպէս ամէն տեղ, այստեղ եւս չի ախորժում ժողովրդական երկպառակութիւնից, սիրով ընդունեց այդ առաջարկը՝ միակ պայման առաջարկելով որ հակառակ կողմը պէտք է հաշտուի եւ սրբազան առաջնորդի հետ, անկեղծօրէն ցաւ յայտնելով նրան հասցրած անտեղի վիրաւորանքի համար. մի երկու շաբաթ բանակցութիւններ կատարուելուց յետոյ, չնայելով որ նրանց պարագլուխներից ոմանք հաշտուելու տրամադրութիւն էին ցոյց տալիս թէ կուսակցութեան եւ թէ Սրբազանի հետ, սակայն ի վերջոյ համաձայնութիւն չկայանալը բացորոշապէս ցոյց տուեց որ նրանց մէջ դեռեւս մութ ոյժերը գործում են յետին մտքերով. ապացոյց դրան՝ վերջերս «Զանգ»ում[30] եւ այլ թերթերում երեւացող յաճախակի զըրպարտիչ եւ յարձակողական յօդուածները, որից երեւում է թէ դրանք չնայելով իրենց ընկած վիճակին, դեռ երկար պիտի մաքառեն Դաշնակցութեան դէմ իրենց սովորական անազնիւ միջոցներով. բայց մենք պէտք է որ միշտ խուսափենք երեխայական անմիտ վէճերից եւ անյողդողդ շարունակենք մեր գործը այն անխախտ համոզումով՝ որ մերն է վերջնական յաղթութիւնը։

30.- «Զանգ» – Թուրքիոյ հրատարակուող շաբաթաթերթ (հընչակեան)։

Տեղական խմբեր

Այստեղ ունինք 9 խմբեր՝ 90 անդամ-անդամուհիներով։ Դրանցից ութը օժանդակ կամ քաղաքական խմբեր են, իսկ մէկը ինքնապաշտպանական կամ զինավարժական խումբ։ Դժբախտաբար վերջինը այլ եւ այլ պատճառներով սրանից մի քանի ամիս առաջ քայքայուեց, սակայն ուրախութեամբ պէտք է նկատել որ վերջերս կրկին վերակազմուեց եւ յոյս ունինք որ այդ խմբի մէջ եղած մեր ընկերները եւ նրանք՝ որ այսուհետ կը մասնակցեն այդ խմբին, կատարեալ համերաշխութեամբ եւ ընկերական փոխադարձ սիրով ու կանոնաւորութեամբ յառաջ կը տանեն զինավարժութեան գործը առանց աղմուկի եւ առանց աչք ծակող արտաքին ցոյցերի։

Դրամական հաշիւ

Թողնելով ենթակոմիտէի գանձապահին պէտք եղած բացատրութիւնը տալ այս մասին, ստիպուած ենք այսքանը միայն խոստովանելու որ այնքան էլ գոհացուցիչ մի բան չի ներկայացնում այդ հաշիւը։ Անցեալ կիսամեակի (առաջին) ելումտից հաշիւները կոմիտէին ուղարկուած լինելով, ներքին կանոնագրութեամբ չթոյլատրուած մի քանի աւելորդ ծախքերն ի հաշիւ կազմակերպութեան, տեղիք է տուել խիստ քննադատութեան։ Սակայն վերջին կիսամեակում այդպիսի անկանոնութեանց առաջը առնուած լինելով, յոյս ունինք որ սրանից յետոյ ուղարկուելիք հաշիւները գոհացուցիչ գըտնուելով, զերծ կը մնան քննադատութիւնից։ Պէտք է դիտել տալ սակայն որ մեր ընկերներից ոմանք չափազանց անհոգ են գտնուում իրենց անդամավճարների կանոնաւոր վճարման մէջ, այնպէս որ յաճախ ենթակոմիտէի գանձապահը ստիպուած է լինում յիշեցնել խմբերի գանձապահներին այդ չնչին տուրքին գանձման համար։ Ցանկալի եւ նոյնիսկ անհրաժեշտ է որ ընկերները միանգամ եւս ուշադրութեամբ կարդալով ներքին կանոնագրութիւնը, աւելի պարտաճանաչ վերաբերմունք ցոյց տան դէպի կազմակերպական գործը թէ՛ կանոնաւորապէս յաճախելով խմբական ժողովները եւ թէ ժամանակին վճարելով իրենց ամսական տուրքը, ինչքան էլ որ չնչին լինի այդ. թէ՛ մէկը եւ թէ միւսը անհրաժեշտ է հէնց դիսցիպլինի տեսակէտից։

Ենթակոմիտէի տուած այս համառօտ տեղեկութիւններից կարծում ենք հասկանալի է թէ ինչ ինչ դըժուար հանգամանքներում ու աննպաստ պայմաններում է գործել նա. եւ չնայած իր թոյլ ոյժերին, նա կարողացել է գոնէ որոշ չափով թուլացնել մեր հակառակորդների ձեռք բերած ազդեցութիւնը եւ բարձրացնել Դաշնակցութեան պրեստիժը ժողովրդի աչքում։

Նախագահ՝ ԷԼԱՐՄ
Քարտուղար՝ ՎԱՀԷ

3 Փետր. 1911
Նոր-Ջուղա

Փաստ. 587-7

Բ 6.– ԳԵՏԱՓԻ ԽՄԲԵՐԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

1911 թ. Փետրուար 3ին կայացաւ «Գետափ»ի Հ.Յ.Դ. խմբերի տարեկան Ընդհ. Ժողովը, հրաժարեալ ենթակոմիտէի տեղ նորը ընտրելու համար։

Ներկայ էին 73 անդամ-անդամուհիներ. բացակայ էին 17 հոգի։

Հրաժարեալ ենթակոմիտէի նախագահը բանալով ժողովը, համառօտ ակնարկ գցեց ենթակոմիտէի անցեալ գործունէութեան վրայ եւ ասաց՝ քանի որ մեր առջեւ եղած դժուարութիւններն մեծ մասամբ հարթուած են, յոյս ունինք որ նոր ընտրուող մարմինը աւելի դիւրութեամբ եւ յաջողութեամբ յառաջ կը տանի կազմակերպական գործը այս շրջանում։

Քարտուղարը կարդաց ենթակոմիտէի միամեայ տեղեկագիրը։

Առաջարկուեց ընտրել մի նախագահ՝ ժողովը կառավարելու եւ նոր ընտրութիւններ կատարելու համար։

Ընդհանուր եւ բացարձակ քուէով ընտրուեց ընկեր Վահագն, որը խօսելով Դաշնակցութեան կատարած նշանաւոր դերի մասին իր քսանամեայ գոյութեան ընթացքում, [ասաց] որ գաղտնիքը կայանում է նրա ղեկավար մարմինների անխախտ համոզմունքի, իրենց բարձր կոչման գիտակցութեան ու անձնուէր գործունէութեան եւ մանաւանդ խիստ կանոնապահութեան մէջ. չեշտեց նաեւ այն գլխաւոր դերի մասին՝ որ նա կոչուած է այսուհետ կատարելու վերածնուած Պարսկաստանի քաղաքական, ընկերական եւ տնտեսական կեանքի մէջ եւ յորդորեց ընկերներին հոգւով ու սրտով փարել Դաշնակցութեան եւ դրական ու անվհատ գործունէութեամբ յառաջ տանել Դաշնակցութեան գործը այս շրջանում, որ կոչուած է ապագայում իր որոշ դերը ունենալ հասարակական կեանքի ընդհանուր յեղաշրջման գործում։ Ապա առաջարկելով ձեռնարկել գաղտնի քուէարկութեան ասաց՝ չնայելով որ կազմակերպութեան ներքին կանոնագրութիւնը միայն 5 հոգի ընտրելու իրաւունք է տալիս, բայց այդ կանոնը սահմանուած լինելով աւելի լայն շրջանների համար ուր կան բացի կեդր. կոմիտէից ու կոմիտէից եւ մի քանի ենթակոմիտէներ, եւ ի նկատի ունենալով այն մեծ աշխատանքը՝ որ պէտք է այստեղի ենթակոմիտէն գործ դնէ այս շրջանում, կարծում եմ կարելի է իբրեւ բացառութիւն ընտրել 7 հոգի, փոխանակ 5ի։ Առարկողներ եղան թէ չպէտք է շեղուել կանոնագրութիւնից. ուստի որոշուեց ընտրել միայն 5 հոգի անդամներ եւ 2 անձնափոխանորդներ՝ որոնք կ'ընտրուեն թուերի համեմատական առաւելութիւններով։

Կատարուեց գաղտնի քուէարկութիւն կատարեալ կանոնաւորութեամբ։

Ապա նախագահը առաջարկեց ընտրել 4 հոգի ընկերներից՝ քուէները բանալու եւ ստուգելու համար։

Ընդհանուր հաւանութեամբ ընտրուեցին ընկեր Վահագն եւ խմբապետներից՝ ընկերներ Աղասի, Շանթ, Աշոտ եւ Սէյեադ, որոնց յանձնուեց քուէները փակ եւ կնքուած ծրարի մէջ։

Նախագահը փակեց ժողովը։

Ի դիմաց ընտրողական ժողովի՝
ԲԱԶՈՒԿ, ԱՂԱՍԻ, ՇԱՆԹ, ՍԷՅԱԴ, ԱՇՈՏ

Փաստ. 587-8

ԳԵՏԱՓԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

Բ 7.– ՇԱՀԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

1911 Փետր. 20

Շահի կոմիտէին
Ընկերներ,

Ստանալով Ձեր Յունուար 18 թուակիր նամակը, անմիջապէս ձեռնարկեցինք ենթակոմիտէի նոր ընտրութեան, որի արդիւնքը անշուշտ նորընտիր ենթակոմիտէն կը յայտնի ձեզ. իսկ ընտրութեանց ժողովի արձանագրութիւնը ներփակեալ կը ստանաք։

Ուղարկում ենք նաեւ մեր միամեայ գործունէութեան տեղեկագիրը (որը կարդացուեց ընտրական ժողովում) եւ մեր հաշիւները մինչեւ Դեկտ. վերջ 1910 ինչպէս պահանջել էիք։

Ներփակում ենք նաեւ 500 ղրանի մի փոխգիր Զումշիղեանի առեւտրական տան վրայ, որի ստացումը հաճեցէք յայտնել ժամանակին։

Մեզ թւում է թէ մեր միամեայ գործունէութիւնը, ունենալով հանդերձ մեզ դէմ յարուցուած՝ ձեզ ծանօթ անթիւ արգելքներն ու խոչընդոտներն, գոհացուցիչ է։ Մեր հաշիւները կարծում ենք բաւականաչափ պարզ են եւ որոշ, այնպէս որ կազմակերպութեան ոչ մի վնաս չեն բերել. ոչ եւս դրամական մի որեւէ զեղծում է կատարուել որ առիթ տար խիստ նկատողութիւնների։ Մենք չենք ուրանում որ մեր գործունէութիւնը եղել է մի քիչ անկանոն եւ մենք չենք կարողացել ամենայն ճշտութեամբ տանել գործը. սակայն այդ թերութիւնը ոչ թէ անփութութիւնից կամ կանոնագրին ծանօթ չմնալուց է առաջացել, այլ տեղական հանգամանքներից։ Ամէն խոչընդոտներ հարթուելուց եւ գործերը կարգի ընկնելուց յետոյ, ի հարկէ հեշտ է նկատողութիւնները, բայց եթէ մտաբերենք անցեալը իւր դժուարութիւններով, մեր ոյժերի թուլութիւնն ու սակաւութիւնը եւ հազար ու մի ջանքերը՝ զանազան զիջումներ անելով՝ մեզ կազմակերպելու եւ գործը հաստատուն հիմքերի վրայ դնելու, այն ժամանակ ներելի կը լինի նաեւ կատարուած թերութիւններն եւ թէկուզ նոյնիսկ անխուսափելի սխալները։ Գուցէ ինքներդ այդ լաւ էք ըմբռնում եւ նկատողութիւններ անելով, զգուշացնում միւս անգամ աւելի կանոնաւոր գործելու համար, սակայն մենք եւս պարտք ենք համարում մի քիչ աւելի մանրամասն բացատրութիւններ տալով այստեղի գործերի մասին, որոշ չափով պարզաբանելու թէ մի քանի ի նկատի առնուած թերութիւնները ինչի՞ց են առաջացել։

Ընկեր Բժշկի[13] այստեղից հեռանալուց յետոյ, ինչպէս տեղեկագրի մէջ ասուած է, մենք ցանկանալով մեզ համակրող նոր ընկերներ ունենալ, պրոպագանդ ենք արել հետեւեալ հողի վրայ — որ երկրի դրութիւնը խառն եւ անապահով լինելով, հարկաւոր է ինքնապաշտպանութեան համար մտածել պատահական վրտանգների ժամանակ անպատրաստ չգտնուելու համար եւ դրա համար հարկաւոր չէ անպայման դաշնակցական դառնալ. ընդհակառակը Դաշնակցութիւնը ցանկանում է որ ժողովուրդը այնքան գիտակցութիւն ունենայ, որ ինքն իրան կառավարել ու պաշտպանել կարողանայ եւ դրանով ինքը կազմակերպութիւնը ազատ լինի ծանր բեռից։ Այս անկեղծ յայտարարութիւնը տպաւորեց շատերին որ կազմակերպեն խմբեր եւ մեր օգնութեամբ վարժուեն զինավարժութեան։ Նրանք իրանց մէջ նշանակեցին անդամավճարներ՝ ռազմամբերք եւայլն ստանալու եւ մեր զէնքերով վարժութիւններ անելու։ Ահա բուն գաղտնիքը թէ ինչո՞ւ ձեզ ուղարկուած հաշիւների մէջ նրանց հաւաքած գումարները իրենք ծախսել են իրենց վրայ, վառօդ, գնդակ, դրօշակ եւայլն առնելու. ի հարկէ այդ փողերը կազմակերպական չէին եւ մենք մի առ ժամանակ որոշ դիտումով չծանրացանք նրանց վրայ, մինչեւ որ մի կերպ համակրել տալով կազմակերպութիւնը, բացարձակապէս ընդունեցինք մեր շարքերում եւ իրենց ծախսերն էլ անցկացնելով մեր հաշուին (ինչպէս եւ մուտքերը), ներկայացրինք ձեզ։ Բայց իսկապէս եւ ոչ մի շահի[31] չենք ստացել, ինչպէս ցոյց են տալիս նրանց թերթիկները։ Սակայն վերջին կիսամեակում հասկացնելով նրանց կազմակերպութեան օրէնքները, նրանց գցել ենք կանոնի տակ. եւ ինչպէս կը տեսնէք ներփակեալ հաշիւներից, այն անկանոնութիւնները չեն կրկնուել։

Երկրորդ՝ որ մեզ մասնակցող ընկերները մեծ մասամբ աղքատ եւ անգործ երիտասարդներ լինելով, դժուարութիւն էին զգում «Ազատամարտ»ի համար առանձին փող վճարելու. ցոյց տուինք իսկապէս որ կազմակերպութիւնը այնքան սրտցաւ է իւր անդամների վրայ որ նրանց համար թերթ էլ տալիս է կարդալու. եւ քանի որ տներում տեղ չունին կամ յարմարութիւն ժողովներ անելու, նրանց համար ժողովատեղի էլ է վարձել՝ ճրագով ու վառարանով, որպէսզի զի խմբերը դժուարութիւն չունենան իրենց պարտքերը ճշտութեամբ կատարելու։ Այսքանը արինք միայն այն նպատակով, որ ցոյց տանք թէ Դաշնակցութիւնը իսկապէս նրանց կողոպտելու եւ իրենց կոպէկները չորթելու միտք չունի (ինչ-

31.- Շահի – կոպէկ, դահեկան կամ անշշան գումար իմաստով:

պէս երբեմն նրանց ականջին փսփսում էին չարամիտները!), այլ իրապէս իրենց զարգացնելու եւ բարձրացնելու, որ իրենց տուած կոպէկները իրենց համար են ծախսւում, եւայլն, թէեւ իրապէս այդ ծախսերի մեծ մասը եղել են ստացուած նուէրներից, որ մենք դարձեալ ի հաշիւ կազմակերպութեան ենք անցկացրել, որպէսզի դահլիճի իրեղէնները դրանով կազմակերպական դառնան, ինչպէս եւ դարձել են։

Ուրեմն այս բոլորը ի նկատի ունենալով պիտի տեսնէք որ մեր ծախսերը եղել են շատ սահմանափակ, իսկ դրանց փոխարէն 25 հոգուց բաղկացած նախկին խմբերը այսօր վերածուել են 9 խմբերի՝ մօտաւորապէս 90 անդամներով, որոնց մի քանիսը ստանում են «Ազատամարտ» եւ «Դրօշակ»· ունինք նաեւ մի շքեղ դահլիճ, եւ սակայն արդէն մեծ մասը վարժուել է տալու· եւ այդ բոլորը լինում է այլեւս խմբերի կողմնակի օժանդակութեամբ։

Յմոռանանք յիշել նաեւ որ ձեր յիշած «Պայքար» խմբի 936.65 դրանի, նոյնպէս «Եփրեմ-Ալիք» խմբի 336.95 դրանի տարբերութիւնը մեր հաշուեթերթերի մէջ յիշուած՝ առաջինի 866.65ից եւ երկրորդի 311.80ից, առաջանում է նրանից, որ նրանց թերթիկների մէջ «Պայքար» խումբը՝ 70 եւ «Եփ[րեմ]-Ալիք» 25.15 դրան ապառիկ են ունեցել, որ մենք չենք ստացել եւ չենք էլ կարող ստանալ, քանի որ վճարողները բացակայ են եղել։ Վերոյիշեալ հաշուեթերթերում այդ ապառիկները յիշուած են բայց մենք կանխիկ առած չլինելով՝ չենք անցկացրել մեր հաշուում։

Մեր տուած երկու ներկայացումներից մէկի հաշիւը որ այժմ կը ստանաք, յոյս ունինք թէ կը լրացնի ձեր ստէպ ստէպ պահանջած ծախսերի գումարը եւ վերջ կը դնի ընկերների դժգոհութիւններին։

Ի վերջոյ յուսալով որ նորընտիր ենթակոմիտէն յետայսու աւելի կանոնաւոր մի գործունէութիւն ցոյց տալով, ձեզ մոռացնել կը տայ յակամայից մեր կատարած թերութիւնները եւ աւելի մեծ զարկ տալով գործին, կը բարձրացնէ իսկապէս շրջանիս արժանիքը յաչս ձեր եւ ժողովրդի, մնանք ընկերական բարեւներով

Ի դիմաց հրաժարեալ ենթակոմիտէի՝
Նախագահ՝ ԷԼԱՐՄ
Քարտուղար՝ ՎԱՀԷ

Ց.Գ.- Խնդրւում է ընկերներից որ մեր տեղեկագրութիւնը կարդալուց, պէտք եղած մասերը, եթէ հարկ է, վեր առնելուց յետոյ՝ մնացեալը ոչնչացնել, քանի որ իսկական անուններ կան նրանում գրուած· ընտրողական ընդհանուր ժողովում կարդալու համար ստիպուած էինք այդպէս գրել։

Շրջ· ժողովը երկար վիճաբանութիւնից յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեան·

Ի նկատի ունենալով որ պարսիկների մէջ չկայ ոչ մի քաղաքական կուսակցութիւն, այդ պատճառաւ մեր բուն ցանկութիւնն է կազմակերպել պարսիկներին· եւ որովհետեւ այդ կազմակերպման գործը մեր նախաձեռնութեամբ ենք ցանկանում լինի, ուստի մեր տակտիկան նրանց նկատմամբ պէտք է լինի հետեւեալ ուղղութեամբ։

«Դաշնակցութիւնը մասնակցելով եւ առաջնորդ հանդիսանալով պարսկական շարժումներին, այժմս նրա նպատակը պիտի լինի աջակցել պարսիկներին եւ առաջ բերել Պարսկաստանում պարսիկ յեղափոխական դաշնակցութիւն, որը ապագայում կապուած կը լինի ֆեդերատիւ կապերով»։

Ծանօթ.— Այս հարցի շուրջը վերստին երկար վիճաբանութիւններ սկսուեց եւ դուրս եկաւ որ Թեհրանում յառաջ եկած «Ջհանգիր» կոմիտէն (որի ներկայացուցիչը մեր «Շահ» կոմիտէի ներկայացուցչի հետ եկած է տեղս կազմակերպելու պարսիկներին եւ իրենց այնտեղի մասնաճիւղին հետ կցելու դիտաւորութեամբ, հէնց նոյն այդ «Ջհանգիր» կոմիտէն պատկանելիս է «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոչուած Յեղափոխ· Կուսակցութեան ուղղութեան, մի կուսակցութիւն որի գոյնը յայտնի է Տաճկաստանում· իսկ այն աջակցութիւնը որ հրահանգել է վերջերս Վրէժի Կ. Կոմիտէն Գիլան կոմիտէին տեղւոյս Սաթթար կոմիտէն կցելու «Ջհանգիր»ի հետ, մեզ գցում է մեր վերեւ յիշած ուղղութեան տեսակէտով շփոթ դրութեան մէջ։ Այս մասին .....[32]

իսկ «Շահ» կոմիտէին յայտնել Շրջանային ժողովիս կասկածները Մ. եւ Յ. կուսակցութեան ապագայ բռնելիք ուղղութեան մասին։

2) Մեր դիրքը Սահմանադրութեան հանդէպ

Այս հարցի շուրջը բաւական թեր եւ դէմ կարծիքներից յետոյ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք է աշխատի իւր կազմակերպելիք պարսիկ յեղափոխ· խմբերի եւ իւր ընտրելիք դաշնակցական պատգամաւորների միջոցով պարսկական ներկայ սահմանադրական հիմունքները աստիճանաբար ռամկավարացման ենթարկել համաձայն իւր ծրագրի պահանջներին։

3) Ազգայնական հարցը եւ մեր դիրքը դէպի միւս ազգութիւնները

Այս հարցի ռեզոլիւցիան եղաւ հետեւեալը·

Ի նկատի ունենալով որ մենք ցրուած ենք ամբողջ Պարսկաստանում եւ ամէն տեղ փոքրամասնութիւն

32.- Բնագրին մէջ՝ կիտաւոր:

Փաստ. 586-84

Բ 8.– ՔԱՂՈՒԱԾՔ
ԳԻԼԱՆԻ III ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ
X, XI եւ XII նիստերից

Գիլանը ինչպէս ծանօթ է Կասպից ծովու հարաւ-արեւմտեան շրջանի կուս. ծածկանունն է, Ռաշտ, Էնզելի եւ Ղազուին քաղաքներով եւ շրջակայքի հայաբնակ գիւղերով: Գիլանի III Շրջանային ժողովը գումարուած էր 1909 թ. Մեպտ.-Հոկտեմբեր ամիսներուն: Ներկայ փաստաթուղթը կը ներկայացնէ այդ ժողովին ընդունած կարգ մը բանաձեւերը՝ Պարսկաստանի սահմանադրական շարժումներու հանդէպ Դաշնակցութեան բռնելիք ընթացքի մասին: Յիշենք որ Ռաշտ քաղաքի գրաւելէ ետք Գիլանի շրջանէն է որ սկիզբ առած էր Եփրեմ խանի յաղթական յառաջխաղացումը դէպի Թեհրան:

Յաջորդող երկու փաստաթուղթերը եւս կը վերաբերին նոյն Գիլանի Ղազուին քաղաքին (Գաղազան) եւ շրջակայքի կազմակերպական միատրոներուն,– Սեւ Արիւն, Ղարաղան:

Կը հետեւին Համատանի շրջանին կապուած զեկուցագրերը:

1) Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պարսիկ յեղափ· կազմակերպութիւնները իրենց դիրքը փոխադարձօրէն

Շրջ· ժողովը երկար վիճաբանութիւնից յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեան·

Ի նկատի ունենալով որ պարսիկների մէջ չկայ ոչ մի քաղաքական կուսակցութիւն, այդ պատճառաւ մեր բուն ցանկութիւնն է կազմակերպել պարսիկներին· եւ որովհետեւ այդ կազմակերպման գործը մեր նախաձեռնութեամբ ենք ցանկանում լինի, ուստի մեր տակտիկան նրանց նկատմամբ պէտք է լինի հետեւեալ ուղղութեամբ։

«Դաշնակցութիւնը մասնակցելով եւ առաջնորդ հանդիսանալով պարսկական շարժումներին, այժմս նրա նպատակը պիտի լինի աջակցել պարսիկներին եւ առաջ բերել Պարսկաստանում պարսիկ յեղափոխական դաշնակցութիւն, որը ապագայում կապուած կը լինի ֆեդերատիւ կապերով»։

Ծանօթ.— Այս հարցի շուրջը վերստին երկար վիճաբանութիւններ սկսուեց եւ դուրս եկաւ որ Թեհրանում յառաջ եկած «Ջհանգիր» կոմիտէն (որի ներկայացուցիչը մեր «Շահ» կոմիտէի ներկայացուցչի հետ եկած է տեղս կազմակերպելու պարսիկներին եւ իրենց այնտեղի մասնաճիւղին հետ կցելու դիտաւորութեամբ, հէնց նոյն այդ «Ջհանգիր» կոմիտէն պատկանելիս է «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոչուած Յեղափոխ· Կուսակցութեան ուղղութեան, մի կուսակցութիւն որի գոյնը յայտնի է Տաճկաստանում· իսկ այն աջակցութիւնը որ հրահանգել է վերջերս Վրէժի Կ. Կոմիտէն Գիլան կոմիտէին տեղւոյս Սաթթար կոմիտէն կցելու «Ջհանգիր»ի հետ, մեզ գցում է մեր վերեւ յիշած ուղղութեան տեսակէտով շփոթ դրութեան մէջ։ Այս մասին .....[32]

իսկ «Շահ» կոմիտէին յայտնել Շրջանային ժողովիս կասկածները Մ. եւ Յ. կուսակցութեան ապագայ բռնելիք ուղղութեան մասին։

2) Մեր դիրքը Սահմանադրութեան հանդէպ

Այս հարցի շուրջը բաւական թեր եւ դէմ կարծիքներից յետոյ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք է աշխատի իւր կազմակերպելիք պարսիկ յեղափոխ· խմբերի եւ իւր ընտրելիք դաշնակցական պատգամաւորների միջոցով պարսկական ներկայ սահմանադրական հիմունքները աստիճանաբար ռամկավարացման ենթարկել համաձայն իւր ծրագրի պահանջներին։

3) Ազգայնական հարցը եւ մեր դիրքը դէպի միւս ազգութիւնները

Այս հարցի ռեզոլիւցիան եղաւ հետեւեալը·

Ի նկատի ունենալով որ մենք ցրուած ենք ամբողջ Պարսկաստանում եւ ամէն տեղ փոքրամասնութիւն

32.- Բնագրին մէջ՝ կիտաւոր:

ենք կազմում. լինելով հանդերձ տէրրիտորիալ ֆեդերացիայի սկզբունքի պաշտպան, պէտք է աշխատիլ տերրիտորիալ ֆեդերացիայի հետ միասին Սահմանադրութեան օրէնքների մէջ մտցնել եւ Ազգային կուլտուրական աւտոնոմիա. եւ մինչեւ ընդհանուր օրէնքների հաստատումը եւ անխարդախ գործադրութիւնը, պահպանել մինչեւ այժմ ունեցած մեր ազգային արտօնութիւնները. դէպի միւս ազգութիւնները վերաբերուիլ շատ կորրեկտ, նրանց շահերին էլ պաշտպան հանդիսանալով Մէջլիսում եւ անճիմաններում[33]։

4) Ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը եւ կազմակերպումը մեր շրջանում

Ի նկատի ունենալով որ Պարսկաստանը դեռ չի խաղաղուած ամբողջովին, որ դեռ շատ հաւանական է որ յետադարձ շարժումն յառաջ գայ եւ որ ռէակսիոնէրներն իրենց յետադարձ շարժման մէջ ամբողջ թոյներին կը թափեն հայերիս վրայ, եւ որ կարելի է նոյնիսկ արտաքին միջամտութիւն յառաջ բերելու համար զանազան պրովոկատէօրների միջոցաւ հայկական կոտորած ստեղծեն, այդ տեսակէտով հայերի ինքնապաշտպանութեան գործը ներկայանում է անհրաժեշտութիւն. եւ ի նկատի ունենալով այն հանգամանքը որ մեր շրջանում, անցեալի դէպքերից փորձառու, տեսել ենք որ չէզոք եւ այլ կուսակցութեան հայ անհատներն, հակառակ յաճախակի դիմումներին եւ ձեռնարկներին, իրենք չեն գործել ինքնապաշտպանութեան ուղիով, ուստի միանգամընդմիշտ հայ համայնքի ինքնապաշտպանութեան գործը վստահելի ճամբի մէջ դնելու համար անհրաժեշտ է համարում պարտք դնել մեր կուսակցութեան վրայ այդ գործի իրականացումը իւր վրայ վերցնելու, միայն այն պայմանով որ մարմինները չծանրաբեռնելու համար՝ մեր դաշնակցական ընկերներից առանձին ինքնապաշտպանութեան մարմին կազմելով ղեկավարեն։

Շրջանային ժողովը. «Շահ» կոմիտէին

Ժողովը լսելով «Շահ» կոմիտէի ներկայացուցչի գրաւոր զեկուցագիրը եւ բանաւոր ցուցմունքները իրենց Շրջանի գործունէութեան առթիւ, եկաւ հետեւեալ եզրակացութեան։

Ի նկատի ունենալով որ «Գիլան» կոմիտէն հրաւիրել է «Շահ» կոմիտէի ներկայացուցչին, երկու քոյր կոմիտէների մէջ սերտ գործունէութեան ամուր հիմք դնելու համար գոնէ այսուհետեւ, Շրջանային ժողովը՝ գտնելով Թեհրանի կարեւոր պունկտ լինելը քաղաքական եւ այլ կուսակցական նկատումներով, չեշտելով «Շահ» կոմիտէի անցեալում անբաւարար գործունէութիւնը որը անդրադառնում էր մի կուսակցութեան երկու հարեւան կոմիտէների գործակցութեան արդիւնքի վրայ, առաջարկում է ընկեր ներկայացուցչին արտայայտել մեր բուռն եւ բարոյական պահանջը «Շահ» կոմիտէին որ նա մասնաւորապէս մեզ հետ եւ ընդհանրապէս Պարսկաստանի բոլոր կարեւոր մարմինների հետ պահպանի կուսակցական սերտ յարաբերութիւն։

Քարտուղար՝ Է.ՉՈՊ

33.- Անճիման – պարսիկ սահմանադրականներու կոմիտէ, կազմակերպութիւն:

Փաստ. 589-57

Բ 9.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. «ԳԱՂԱԶԱՆԻ» [ՂԱԶՈՒԻՆ] ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ[16] 1911-1912

Սոյն տարեշրջանում «Գաղազանի» ենթակոմիտէն ունէր հետեւեալ կազմն.

Աբախում՝ հինգ խումբ, որոնցից 3ը տղաների, 2 կանանց. խմբերի անդամների թիւն նկատուել է 36-ից 30-ի շուրջն։ Տարուայ սկզբում խմբերի կազմն եղել է ուժեղ, որն յետոյ դէպքերի շնորհիւ նօսրացել է մինչ Նոյեմբեր-Դեկտեմբեր, երբ արդէն բոլորովին կազմալուծուել է։

Շնորհիւ այն հանգամանքի, որ խմբերի եւ խմբապետական ժողովների արձանագրութեան տետրերն այրուած է, հնարաւորութիւն չկայ խմբերի ժողովների եւ պարապմունքների ստատիստիկան գրելու։ Բայց խմբերի համար մշակուած էր նիւթերի ցանկ, որոնք պարբերաբար խմբերի յատուկ դասախօսներն խօսում էին խմբերում։

Մշակուել էր հետեւեալ ցանկն.—

1) Նախնական ցեղական կոմիւնիզմ
2) Հասարակական նահապետական կոմիւնիզմ
3) Հին ստրկութիւն
4) Ֆէոդալական հասարակութիւն
5) Մանր բուրժուայական հասարակութիւն
6) Առեւտրական կապիտալիստական շրջան
7) Արդիւնաբերական կապիտալիզմ
8) Մեքենայական շրջան
9) Սոցիալական հասարակութիւն
10) Սոցիալիզմ
11) Ի՛նչ է լիբերալիզմը
12) Ազգերի յեղափոխութեան պատմութիւն
13) Քաղաքական կուսակցութիւններ
14) Դաշնակցութեան պատմութիւն
15) Մեր եւ օտար կուսակցութիւնների ծրագրային տարբերութիւնը
16) Կոոպերացիա

Շնորհիւ քաղաքական արտաքոյ հանգամանքների վերոյիշեալ ծրագիրն լրիւ հնարաւոր չի եղել անցնելու։ Բայց յիշեալ ծրագրից դուրս խմբերում կարդացուել են «Շահստանի», «Գիլանի» եւ «Սիփանի» քաղաքական կացութեան տեղեկագրերը։ Խմբերն օգտուել են նաեւ կուսակցութեան «Ե. Թոփչեան» գրադարանից. խմբերն ստանում էին «Դրօշակ», բայց վերջինս շատ անկանոն էր ստացւում։ Կանանց խմբերն կազմակերպել են վիճակախաղ եւ բուֆէթ ներկայացումների ժամանակ։

Ենթակոմիտէ

Ենթակոմիտէական ընտրութիւնը կատարուել է 1911 թ. Յունուարի 12ին։

Կազմը տարուայ սկզբին բաղկացած է եղել հինգ անդամից, տարուայ ընթացքում բացակայել են 3-ը, որոնց փոխարէն հրաւիրուել են ուրիշ ընկերներ։

Ենթակոմիտէն իր գործունէութիւնը կանոնաւոր տարել է մինչ 1911 թ. Նոյեմբեր 11-ն որից յետոյ դադարել է։

Մինչ այդ ենթակոմիտէն ունեցել է երեսուն եւ երեք նիստ։ Ենթակոմիտէի մշտական զբաղումներն են եղել։

1) Խմբերի կանոնաւորման եւ պարապմունքների հարցն։

Ենթակոմիտէն մշակել է դասախօսութիւնների ցանկ խմբերի համար, ուր պարբերաբար խօսել են թէ ենթակոմիտէի անդամներն եւ ուրիշ կարող ընկերներ։

Մեր շրջանումն է եղել «Գիլանի» շրջիկ ընկեր Վաչագան (Վահէ), որն կարդացել է հրապարակային մի շարք դասախօսութիւններ Պարսկ. Սահմանադրութեան, Ֆինանսների եւ ընտրողական օրէնքի մասին։

2) Կուսակցական գրականութեան տարածումն ու պրոպագանդ։

Կուսակցական գրականութիւն տարածելու եւ աւելի ընթացք տալու համար կազմուել է զուտ յեղափոխական գրադարան «Ե. Թոփչեանի» անունով, որն ունեցել է 50 կտորի չափ գրքեր։

Յօգուտ այդ գրադարանի տրուել է մի ընտանեկան երեկոյթ նուիրուած Հ. Յ. Դաշնակցութեան քսանամեայ յոբելեանի։ Երեկոյթի ծրագիրն եղել է զուտ դաշնակցական բնաւորութեամբ եւ բովանդակութեամբ։

Ռուս զինուորների եւ տեղական ռուս կոլոնիայի մէջ տարածուել է Ռ. Ս. — ռեւոլ. ռուսերէն թերթերն «Զա Նարոդ» եւ «Զեմլիա ի վոլիա»[34]։

Տեղական ընկերների եւ հայ հասարակութեան մէջ հանգանակուել է յօգուտ կովկասեան հայ բանտարկեալների շուրջ հինգ հարիւր թուման։ Նշանակալից է այս հանգամանքում տեղական ընկերների առատաձեռն նուիրատուութիւնն. շատ ընկերներ նուիրել են իրենց մի ամբողջ ամսուայ ռոճիկն։

34.- Բնագրին մէջ ռուսատառ:

Հանգանակուել է մի փոքրիկ գումար յօգուտ կուկունեանցի ընտանիքի։

Ենթակոմիտէն ուղղել է երկու շրջաբերական խմբերին, որն վերաբերել է ընթացիկ կարեւոր հարցերին։

Ենթակոմիտէն իր բիւդջէն լրացնելու համար ձեռնարկել է մի ներկայացման, կանանց խմբերն վերցրել են թատրոնների ժամանակ բիւֆէթներ, եւ կազմակերպել են վիճակախաղ յօգուտ կուսակցական կասայի։

Մեր վերաբերմունքը դէպ տեղական հասարակական կուլտուրական հիմնարկութիւններն։

Ինչպէս նախանցեալ տարիներում նոյնպէս եւ այս շրջանում բոլոր հասարակական հիմնարկութիւնների ու վարչութիւնների ղեկն մեր ընկերների կամ համախոհների ձեռքումն է եղել, որոնք ընտրուել են բացառապէս մերոնց քուէներով։

Շնորհիւ մերոնց ջանքերի վաճառականների վրայ տուրքեր են դրուած, որով ստացւում էր իւրաքանչիւր արտահանուող ապրանքից փութին մէկ շահի[31]։ Այդ տուրքն գանձուեց երեք տարի շարունակ եւ որի արդիւնքով կառուցուեց դպրոցական նոր շէնք, որն ըստ արտաքինի բաւական գեղեցիկ է։

Մեր ջանքերով դպրոցում կրթութիւնը դարձուեց պարտադիր եւ մտցուեց պրոգրէսիւ տուրք, որն այժմ էլ շարունակւում է եւ դպրոցի գլխաւոր եկամուտն է։

Մերոնք են կազմակերպել մի շարք թատրոններ ու երեկոյթներ յօգուտ դպրոցի։

Այս դպրոցական տարեշրջանում մերոնք գործից ձեռ քաշեցին եւ գործի գլուխ անցան մեր հակառակորդ բանակից. այժմ դպրոցն խղճալի վիճակում է։

Հասարակական ժողովներում մենք միշտ ճակատ առ ճակատ պայքարել ենք աղայական, թաֆիայական ու բուրժուայական հոսանքների դէմ եւ միշտ բարոյական յաղթութիւնն մեր կողմն է եղել։

Դաշնակցական պարբերական հրատարակութիւններից ստացուել են մեր շրջանում, «Դրօշակ» 10 օրինակ, «Առաւօտ» 50 օրինակ, «Ազատամարտ» 3 օրինակ, «Ուսանող» 1 օրինակ, «Հայրենիք» 1 օրինակ, «Ցառաջ» 1 օրինակ։

Ինքնապաշտպանութիւն

Ինքնապաշտպանութեան հարցն եղել է ենթակոմիտէի լուրջ զբաղմունքներից մէկն։

1910 *թուին նախորդ ենթակոմիտէի ժամանակ, ինքնապաշտպանութեան կազմակերպութիւնը յանձնուած էր ժողովրդին. ժողովրդի կողմից ընտրուած էր մի մարմին ղեկավարելու այդ գործն։ Բայց մի ամբողջ տարուայ փորձն ցոյց տուեց, որ շնորհիւ տեղական վատ պայմանների, գործը այդպիսի ընթացքի տակ դնելն, ոչ մի արդիւնք չի տալիս եւ ընդհակառակն բացասական հետեւանքներ էլ ունենում է։*

1911*-ի ամառն, երբ միապետականներն թալանում եւ ասպատակում էին քաղաքի շրջակայքն եւ լուրջ սպառնում էին քաղաքին, ենթակոմիտէն անմիջապէս գործի գլուխ անցաւ, կազմակերպեց ինքնապաշտպանութեան խմբերն եւ յայտարարեց զինուորական դրութիւն, մեզ հետ միացնելով պարսիկ «Իջթիմայուն Իթհատիններին» եւ «դեմոկրատներին», կազմուեց զինուորական խորհուրդ, որն քաղաքի պաշտպանութիւնն բացառապէս իր վրայ վերցրեց։ Այդպիսի լարուած դրութիւնն տեւեց* 15 *օր, յետոյ Թեհրանից զօրք եկաւ ու գնաց խռովարարներին ցրեց եւ ոմանց ձերբակալեց։ Մեր շրջանն մի քանի անգամ այդպիսի օրեր է անցկացրել, որի ընթացքում կազմակերպութիւնն հանդէս է եկել իր կարող ոյժերով եւ գործն ղեկավարել վայելելով ժողովրդի լայն խաւերի վստահութիւնն։*

Պրոպագանդ պարսիկների մէջ

Հնարաւոր չէ այստեղ մի առ մի թուել այն ջանքերն որ գործադրուել է պարսիկների մէջ մեր կուսակցական ծրագրով ու տակտիկով կազմակերպութիւն առաջ բերելուն։ Երկար ջանքերից, ոգեւորութիւններից ու յուսախաբութիւններից յետոյ կարելի եղաւ ստեղծել մի խմբակ մինչեւ 75 *հոգուց բաղկացած «Կոմիտէի Նօսրաթ» անունով, որ առաջնորդւում էր մեր տուած ուղղութեամբ ու ծրագրով։*

«Նօսրաթ» կոմիտէն հրատարակեց «Ռատ» անունով մի շաբաթաթերթ, բաց թողեց 3 *հատ թռուցիկ, կազմակերպեց մի քանի միտինգներ եւայլն։ Բաւական ուշք էր դարձուած ռազմական խմբին, այդ խումբն Մամադալի Միրզի*[18] *աւանդիւրայի ժամանակ պաշտօնապէս մերոնց հետ միացած մասնակցում էր կռիւներին Եփրեմի բանակում։ Միաժամանակ մենք համերաշխ գործում ենք «դեմոկրատների» հետ ունենալով միջկուսակցական խորհուրդ, մասնաւորապէս հէնց Ցուլիս ամսից սկսեալ մինչ Նոյեմբեր — ռուսաց տիրապետութիւնը։*

Դեմոկրատների հետ կազմակերպել ենք 3 *միտինգ, հրատարակել ենք* 2 *պրոկլամասիոն։*

Սեւ Արիւնի շրջան

«Սեւ Արիւնի» շրջանն շնորհիւ աշխարհագրական աննպաստ պայմանների ենթակոմիտէի անմիջական հսկողութիւնից հեռու է եղել. ամենն շնորհիւ հաղորդակցութեան ճանապարհների ընդհատման, յարաբերութիւնն այդ վայրի հետ կտրւում էր։

Մեր ջանքերով այդ շրջանում բացուել էր 3 *դպրոցներ, իսկ այժմ հազիւ մէկն է մնացել։ Հսկելու այդ շրջանի վրայ եւ մասնաւորապէս կազմակերպական ուղղութեամբ մի գործ կատարած լինելու համար, ենթակոմիտէն շարունակ ուղարկել է այդ շրջանը շրջիկներ, որոնք* 1) *բացել են դպրոցներ* 2) *գանձել են ուսուցիչների ռոճիկներն* 3) *կազմակերպել են գիւղացիական խմբեր* 4) *կազմակերպել են ինքնապաշտպանութիւնը* 5) *հիմնել են գիւղական շտեմարան* 6) *տարածել են կուսակցական գրականութիւնը* 7) *կարդացել են գիւղացիների համար մի քանի զրոյցներ։*

Դժբախտաբար արխիւից բացակայում է շրջիկների տուած տեղեկագրերն, ստատիստիկան եւայլն։ Այդ շրջանի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կարող է հաղորդել ընկեր Վաչագան։

Խմբապետական ժողով

Խմբապետական ժողովն կազմուած լինելով հինգ խմբերի խմբապետներով ունեցել է առնուազն երկու շաբաթն մի անգամ հաւաքում, ուր զբաղուել է խմբերի անմիջական կարիքների եւ այլն հերթական խնդիրներով։ Կապ է պահպանել ենթակոմիտէի հետ ենթ.ի միջնորդի միջոցով։

Խմբապետական ժողովն ունեցեր է իր արձանագրութիւններն, բայց դէպքերի շնորհիւ ոչնչացնել է. այդպիսով հնարաւորութիւն չկայ մանրամասն կանգ առնելու եւ թուելու խմբապետական ժողովի գործունէութիւնը։

Վերջաբան

Վերջացնելով ներկայ ամփոփ տեղեկագիրն, որով «Գաղազան» ենթակոմիտէի գործունէութիւնն դադարում է մինչ 1911 *թ. Նոյեմբեր վերջերն. այնուհետեւ շնորհիւ սկսուած սարսափի եւ յետադարձ շարժման շրջանն ամբողջովին կազմալուծուեց, ենթակոմիտէն դադարեց գոյութիւն ունենալուց եւ գործօն ընկերներն ցրուեցին զանազան կողմեր։ Այդ դրութեան ընթացքում կազմակերպութեան գոյքն անտէր մնաց, զէնքերն մեծ մասամբ փչացաւ եւ այսօր երկաթի կտորներ են դարձել, պակասում է զէնքերից մի քանի հատ եւայլն։ Մնացածի մասին խօսքս թողնում եմ ընկեր «Կայծին» որն իմ տեղեկագիրն միացնելով իր տեղեկագրի հետ կը ներկայացուի «Գիլան» կոմիտէին։*

Բարեւներով

ՄՈՒՇԵՂ

Փաստ. 586-59

Բ 10.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՂԱՐԱՂԱՆԻ[16]

1910 *Ցուլիսի* 20*-ին հասնելով Ղարաղան գաւառը եւ շրջագայելով եօթն հայաբնակ գիւղերը ընդհանուր եւ մանրամասն տեսութեամբ ուսումնասիրեցի հայ շինական ժողովրդի զանազան պարագաները, որի առթիւ գալիս եմ տեղեկագրել ըստ պատշաճութեան հետեւեալը.—*

1) *Ղարաղան գաւառի առաջին գիւղն է Լառ, որը ունի* 83 *տուն հայ բնակիչ,* 217 *շունչ արու,* 198 *շունչ էգ, մի եկեղեցի եւ մի քահանայ, գիւղի մէջ կան նաեւ պարսիկ տնուորներ։*

2) *Ներքին Ջանաղճի գիւղը, ունի* 70 *տուն հայ բնակիչ,* 203 *շունչ արու,* 166 *շունչ էգ, մի եկեղեցի եւ մի քահանայ*, գիւղի մէջ կան նոյնպէս պարսիկ տնուորներ։*

3) *Վերին Ջանաղճի գիւղը ունի* 66 *տուն հայ բնակիչ,* 227 *շունչ արու,* 199 *էգ, մի եկեղեցի եւ մի քահանայ, գիւղի մէջ կան նաեւ պարսիկ տնուորներ։*

4) *Ջամբար գիւղը ունի* 33 *տուն տայ բնակիչ,* 102 *շունչ արու,* 83 *շունչ էգ, կան նոյնպէս պարսիկ տնուորներ գիւղի մէջ։*

5) *Ենի-Խալէ գիւղը ունի* 35 *տուն հայ բնակիչ,* 105 *շունչ արու եւ* 87 *շունչ էգ, կան նոյնպէս պարսիկներ։*

6) *Ամիրապատ գիւղը ունի* 18 *տուն հայ բնակիչ,* 55 *շունչ արու եւ* 53 *շունչ էգ, կան նոյնպէս գիւղում պարսիկ տնուորներ։*

7) *Զարհատ գիւղը ունի* 12 *տուն հայ բնակիչ,* 37 *շունչ արու եւ* 33 *շունչ էգ, կան նոյնպէս պարսիկներ։*

Վերոյիշեալ հայաբնակ եօթն գիւղերի մէջ կայ 317 *տուն հայ բնակիչ,* 946 *տղամարդ եւ* 859 *կին։*

Սոյն հայ գիւղերի տնտեսական վիճակը շատ նուազ բացառութեամբ արգահատելի է, երկու գլխաւոր պատճառներով, առաջինը գիւղատէրերի անխիղճ կեղեքումը, երկրորդը՝ իրենց ներքին ծախսերի արտատվոր շռայլութիւնը. մեծ մասամբ պարտատէրներ են, մինը 200*-ով, միւսը* 150 *եւ մի ուրիշն էլ* 50-60 *թումաններով։*

Այս գիւղերի բարոյական վիճակը եւ նրանց նիստն ու կացը, վարքն ու բարքը մաքուր է եւ նահապետական, սակայն կան մնացած հին սովորութիւններ, որ

---

*) *Սոյն քահանան Տ. Վարդանն է, որի մանրամասնութիւնը կը կարդաք։*

անպայման պէտք է փոփոխել։

Բոլոր գիւղերի պարապմունքներն են հողագործութիւն։

Վերին եւ Ներքին Ջանաղճի եւ Ամիրապատ գիւղերը սեփականութիւն է նայիպ Սալթանային, իսկ մնացեալ չորս գիւղերը զանազան խաների սեփականութիւնը։

Ղարաղան գաւառի հայ ժողովրդական քաղաքական հայեցակէտը հանդէպ հայ յեղափոխութեան տակաւին սաղմի մէջ է. մեր երկամսեայ պրոպականտը միտք է տուել նրանց անպայման զէնք ունենալու, եւ այդ առթիւ Ղազուինից եկած ենթակոմիտէի ընկերների աջակցութեամբ կազմուել է երկու խմբեր յանուն ինքնապաշտպանութեան, որոնք կարող են 100-200 թուման վճարել զէնքի համար. կազմուած երկու ինքնապաշտպանութեան խմբերի արձանագրութիւնը գտնւում է Ղազուինից եկած ընկերների մօտ։

Գիւղերի կրթական վիճակը բոլորովին արգահատելի լինելով, այս անգամ յաջողուեց Ղազուինից ղրկուած ընկերների միջոցաւ բոլոր գիւղերի մէջ հանգանակութիւն բաց անել եւ իւրաքանչիւր գիւղում հոգաբարձուներ ընտրել. միայն Լառ, Վերին եւ Ներքին [Ջանաղճի] երեք գիւղերի մէջ [յաջողուեց] ուսումնարան հաստատել. ուսուցիչներ գտնելու համար Ղազուինի ենթակոմիտէն դիմել է հեռագրով Ռաշտ։

Հանգանակութեան ընթացքում գիւղերը ստորագրել են հետեւեալ գումարները.—

1. Լառ	1400	ղր[ան]
2. Վերին գիւղ	1085	»
3. Ներքին »	1000	»
4. Ծնի-խաչ	500	»
5. Ջամբար	410	»
6. Ամիրապատ	205	»
7. Ջարհատ	180	»
գումար	4780	ղրան

Մի անհրաժեշտ պարագայ ունինք չեշտելու. մեր կրթական գործի ընթացքում, Վերին Ջանաղճի գիւղում երկու եղբայրներ, Ջիրաք եւ Դատաշ անուամբ, որոնք 50-60 տարեկան մարդիկ են, բայց շատ զալում են եւ ունին 10-15000 թուման կարողութիւն. ընկերների գիմումի ժամանակ որոնք առաջարկել էին 30-30 թուման վճարել, յանկարծ ընկերների հացէին՝ լոթի, քաղցած, աւարա, չուանից փախածներ, եւ այսպիսի անունների անարգել եւ մինչեւ իսկ հարս ու կին փայտերով դուրս էին եկել ծեծելու. անշուշտ այդտեղ մեր ընկերները ոչ մի ծանր պարագայի տեղիք չտալու համար լուռ անցել էին խնդրից, իսկ այժմ, ինչպէս իրենք տեղեկագրած են Ղազուինի ենթակոմիտէին, նոյնպէս ես, որպէս նախանձախնդիր իմ դաւանած կազմակերպութեանս շահերին, ջերմ կերպով բողոքում եմ նրանց անվայել վարմունքի եւ կազմակերպութեանս հասցրած վիրաւորանքի համար, պէտք եղած վճռական բնաւորութիւն ունեցող քայլ վերցնել, այդպիսի խուլիգան հոսանքների առաջը առնելու համար։

Այս իմ տուած տեղեկագրի շարքում կայ նաեւ մի այլ խնդիր, որ անմիջապէս կապ ունի Ղարաղան գաւառի կազմակերպչական կամ ինքնապաշտպանութեան եւ մանաւանդ կրթական գործի յաջողութեան հետ. նախքան իմ Ղարաղան մտնելը Ղազուինի ընկերները եկած էին եւ Տէր Վարդան քահանան, որ արտաքսուած է կազմակերպութիւնից, այս անգամ իրեն խառնել էր մեր ընկերների մէջ, որպէսզի, գառան հագուստ հագնելով գայլի պաշտօն կատարէ. ես գործը դժուարութեան չմատնելու համար, ընկերներին ոչինչ չասեցի, քանի որ տեղը չէր, այլ որոշեցի ներկայացնել խնդիրը սոյն տեղեկագրիս մէջ, այնպէս որ, լուսաբանուելիք կէտը ան էր որ Տէր Վարդան քահանան խառնելով մեր կազմակերպութեան շարքին մէջ ինքզինքը, մտադրւում է իր անձնական գործերը եւ մարդկանց (նոյնիսկ Ղարաղանի հայ ժողովրդեան) զուլում անելը Դաշնակցութեան ուժով վարել։

Վերջացնելով իմ տեղեկագիրը, յայտնում եմ որ հակառակ կուսակցութիւնը այս շրջանում ոչ մի գործ չէ տեսած։

Իսկ վերակրկնելով այն երկու կէտերը, որ մի կողմից Վերին Ջանաղճի գիւղի Ջիրաք եւ Դատաշ եղբայրների յախուռն վարմունքի համար, իսկ միւս կողմից Տէր Վարդան քահանայի մասնակցութիւնը կամ յարաբերութիւնները մեր կազմակերպչական գործերի հետ, այս երկու խնդիրների մասին, եթէ որոշ եւ վճռական մի կարգադրութիւն չլինի, ապահովապէս մեր կրթական եւ ապագային սկսելիք գործը կը տուժէ այս անտաշ ժողովրդի շրջանում։

Մնալով ընդմիշտ ջերմ հաւատարմութեամբ իմ դաւանածս կուսակցութեան,

Հ. Յ. Դաշնակցութեան
«Կարկառ» խմբի ընկերներից
ՀՐԱՑՐ-ՌՇՏՈՒՆԻ (ԳԱՐԱԳԱՇ.)

1910 Օգոստոս 28
Թեհրան

Փաստ. 587-45

Բ 11.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՏԱՆԻ

3/16 Հոկտ. 1911

Կառավարութեան բանակը Համատան հասնելով Եփրեմը եւ Սարդար Բհատորը եւ Սարդար Մոհթալէմը իրենց զօրքերով հաստատուեցին Շաւուրեն հայաբնակ գիւղում որ պատկանումէ Ամիրը Աֆխումին եւ որի տունն նոյն գիւղումն է. հասնելուց 2 ժամ յետոյ կողոպտուեց Ամիր Աֆխումի Այգին (այնտեղ ուր Եփրեմը եւ Սարդարները բնակութիւն էին հաստատեր). կողոպտումը կարճ միջոցում այլ կերպարանք ստացաւ այսինքն յետամնաց բախտիարցիք երբ տեսան այլեւս Այգում բան չկայ, սկսեցին խեղճ գիւղացիքին կողոպտել եւ իրանք արին այն ինչ որ չէր երեւակայւում իբր կառավարական զօրք կարող էին իրենց թոյլ տալ։ Բախտիարցիք չկարողանալով իրենց զսպել, չմոռացան նաեւ հայ գիւղացիքի տունը, բայց որովհետեւ Քեռին իւր խմբերով բոլորը հայերի տներումն էին տեղաւորուած, բախտիարցիք անխօս հեռացան. այս հանգամանքից օգտուեցին պարսիկները, ով կարողացաւ իւր իրեղէնները եւ ընտանիքը փոխադրեց հայերի տները ուրտեղ ապահով մինչեւ օրս մնում են։

Կառավարական բանակը Համատանին մօտենալով բոլոր ռէակսիոնէրները փախան, ի շարս որոնց Ամիր Աֆխումի 2 որդիները, որոնք ամենամեծ մասը ունէին ներկայ հարցերում, եւ հեռանալով քաղաքից իրենց գիւղերում ձիաւորներով սկսեցին ասպատակել շուրջ գիւղերը։ Եփրեմը Թեհրան վերադառնալու իրաւունքը ձեռք բերելով ամսոյս 1ին ճանապարհուեց Ղազուինի վրայով Թեհրան. հասնելով այն տեղը ուր էհթեմամ դովլի ձիաւորները կային, վերցնելով մի քանի տղերք պաշարում է գիւղը, գերի վերցնում ձիաւորների հրամանատարներին, հարցաքննում է եւ բանից երեւում է որ 25 աւազակ կայ գիւղումն, բայց միւս խմբերը գիշերով հեռացեր են ուրիշ գիւղեր. տղերքը գնում են որ 25 հոգուն բռնեն, յանկարծ մի տնից կրակ են բացում մերոնց վրայ որտեղ ընկնում է աւանդելով հոգին Արսէնը. վիրաւորւում ուսից Սիմէոն խմբապետը եւ մի ուրիշ պարսիկ, ապա թնդանօթը ուղղում են այն տան վրայ, մի քանի հարուածով ոչնչացնում են չէնքը եւ սպանում 20ի չափ աւազակներ. գերուած աւազակապետներին էլ հրացանի են բռնում։

Եփրեմը այս լուրը անմիջապէս բախտիարցի պետերին հեռախօսով յայտնեց եւ յայտնեց նաեւ որ պէտք է մի 100 ձիաւոր ղրկել որպէսզի միւս գիւղերում եղած ըմբոստներին եւ աւազակներին մաքրեն. արդեօք կ'ուղարկեն թէ ոչ՝ դեռ հարց է։ Եփրեմի տեղս գալով սահմանադրական մասը շատ ոգեւորուեց կարծելով թէ այստեղ էլ չուտով մի կարգի կը դնեն, բայց չուտով յուսախաբուեցինք որովհետեւ [չգիտենք] թէ ինչ պատճառներից դրդուած ոչ մի գործի ձեռք չտուին եւ բոլոր յանցաւորները մնացին անպատիժ։ Նոյն միջոցում Եփրեմը բոլոր ջանքը գործի դրեց մինչեւ կարողացաւ կեդրոնից վերադառնալու հրաման ստանալ եւ վերադարձաւ։ Այս հանգամանքից սկսեցին օգտուել աւազակներն ու ռէակսիոնէրները եւ սորանց քթի տակում արդէն շարունակում են իրենց ասպատակութիւններն. մինչեւ անգամ քաղաքից 5 ֆարսախ հեռաւորութեան վրայ կողոպտեցին կառավարութեան փոստը եւ յարձակեցին Թեհրանից եկող ռազմամթերքի ֆուրգոնների վրայ, թէեւ անվտանգ տեղ հասաւ։ Իսկ բախտիարցի հրամանատարները դեռ իրենց գրպանները լեցնելու մասին են մտածում (բացառութեամբ Սարդար Բհատորին եւ մասամբ Սարդար Մոհթալէմին որ առաջինի հետ միասին է բնակւում)։

Այսօր լուր հասաւ որ հին աւազակապետ Աբաս խանը ձիաւորներ հաւաքած, բացի այն որ Քրմանշահից եկող քարաւաններին թալանում է, մտադիր է յարձակուելու քաղաքի վրայ։

Ցայտնի Ամիր-Աֆխումը իւր հողերից հեռանալով Քուրստանի Ղորքա աւանից մի հեռագիր է ուղղում տեղւոյս հայերին որի բովանդակութիւնը հետեւեալն է. Համատանի, Շաւուրենի եւ Քաղաքի հայ ժողովուրդ, առաջիմ նկատելով որ իմ հակառակութիւնը կարող էր վնասակար լինել իմ քաղաքացիներին, յետ կանգնեցի եւ երեխաներիս վերցրած Համատանի հողից հեռացայ գընալով հին ծանօթ ու բարեկամներիս մօտ. մի քանի հայերի գալով մի կատաղէք. չուտով առողջ կը վերադառնամ իմ հայրենի տունս եւ եթէ այդ հայերը որ եկել են դպչելու լինեն իմ կամ իմոնքներից որեւէ մէկին կամ նրանց ունեցուածքին, կը փոխարինեմ 10 անգամ աւելի, իսկ եթէ նրանք ձեզ խնայելով չեն դպչիր մեզի, այն ժամանակ ես կրկին 10 անգամով կը փոխարինեմ ձեզ դէպի լաւը. զգուշացէք եւ ձեր վարքը իմացէք։

Տեղւոյս հայերը նոյն հեռագիրը նոյնութեամբ, աւելացնելով որ ապահովութիւն են խնդրում այդ սպառնալիքի դէմ, հեռագրեցին Ցովսէփ Միրզայեանցի միջոցաւ cabinetին[35] որի պատասխանը մինչեւ օրս չէ եկեր։

Քաղաքը դեռ պաշտօնապէս դատաւոր չունէ. իբր թէ կառավարում է Սարդար Ջաֆարը։

Մերոնցից ոմանք չմոռացան իրենց հաւաքած զէնքերից մեզ բաժին տալու, որի ցուցակը առանձին միւս անգամ կ'ուղարկենք Ձեզ։ Կան ոմանք որ դեռ անդորրագիր էլ չեն ստացեր. կ'ուղարկենք իրենց ձեր միջոցով։

ԱԽՄԷԹԱՑԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ[15]

35.- Դահլիճ, կառավարութիւն։

Փաստ. 587-43

Բ 12.– ԽՈՐԷՆ ՎԱՐԴ. ՏԷՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԷՆ ԵՓՐԵՄԻՆ

Սուլթանաբաղ, 21 Սեպտեմբերի 1911

Սիրելի Եփրեմ

Գրում եմ նամակս շտապով, որովհետեւ պաշարուած եւ շրջապատուած ենք պարսիկներով։ Իրողութիւնը այս է. ամբողջ երկու շաբաթ է որ ես այստեղի սահմանադրականների հետ աշխատում էի յարձակում գործել դատաւորի վերայ եւ կալանաւորել։ Ամսիս19-ին գիշերով իրագործեցինք մեր ծրագիրը եւ շրջապատեցինք դատաւորին. այն ժամանակ քաղաքի մի քանի յայտնի լիրբ խաներ արգելք եղան զինաթափ անելու դատաւորին, գրգռելով պարսիկ ազգաբնակութիւնը յատկապէս իմ դէմ. միւս կողմից սրեցին անգլիական փոխ-հիւպատոսին, որը իր ծառաներին ուղարկեց մի եւրոպացու հետ եւ դատաւորին քաշեցին տարան հիւպատոսարան։ Յաջորդ օրը ամսի 20-ի առաւօտեան Բէգլար բէգու, Դիվան բէգու, Աղա Դաւութի եւ Քոքեարը Դովլի տղայի դրդմամբ հազարաւոր ամբոխ զինուած յարձակուեցին, բաւականին զոհեր եւ վիրաւորուածներ տուին փախան, բայց հեռու դիրքեր բռնած պաշարել են. կողոպտել են մի քանի սահմանադրականների տներ եւս։ Գնդակների տարափի տակ հայ անձէն կանայք եւ մարդիկ ապաստանեցին մեզանից մի 10-20 քայլ հեռաւորութեան վրայ գտնուող անգլիական փոխ-հիւպատոսարանը, որտեղ ապաստանել էին եւ տեղ էին գտել բոլոր մարդասպան գող աւազակ խաները, սակայն լիրբ փոխ-հիւպատոսի հրամանով անխնայ ծեծի են ենթարկւում եւ դուրս շպրտւում հիւպատոսարանից. սրանք լցուեցին բնակարանս։ Այժմ շրջապատուած ենք. ոոպէ առ ոոպէ սպասում ենք նոր նոր յարձակման, չնայելով Սամսամ-Սոլթանը ամէն միջոց գործ է դնում քաղաքը պահպանելու եւ մեզ պաշտպանելու, բայց անզօր է. ի սէր Աստուծոյ շուտով այստեղի դատաւորին, կամ բախտիարցիներին մի քանի հայ տղաների հետ անմիջապէս ճանապարհէք փոստով, որ մեր եւ հայերի կեանքը վտանգի մէջ է։ Սպասում [եմ]. այլապէս քաղաքը արիւնհեղութեան ասպարէզ կը դառնայ։ Սպասում եմ։

Շնորհաւորում եմ յաղթութիւններդ, մաղթում եմ յաջողութիւն։

Քո ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ[36]

Նոր լուր բերին, որ փոխ հիւպատոսը բողոքել է իմ դէմ ռուսական դեսպանին։

36.- Խորէն վարդապետ Տէր Վարդանեան, առաջնորդական փոխանորդն էր Համատանի եւ Սուլթանապատի:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ. (1909 – 1912)

ԲԱԺԻՆ Գ. (1910 թ.)

Գ. բաժինը յատկացուած է Պարսկաստանի սահմանադրական շարժման 1910 թուականին, երբ երկրին վրայ օտար տէրութեանց գերիշխանութիւնը նուիրականացած բնոյթ ստացած էր արդէն: Իրենց զինուորական ոյժով եւ քաղաքական ու տնտեսական շահագրգռուածութեամբ՝ ռուսերը հիւսիսային Իրանի մէջ, անգլիացիները հարաւը, իսկ կեդրոնը՝ մայրաքաղաք Թեհրանի մէջ, երկու մեծ տէրութիւնները ստեղծած էին տեսակ մը համատիրական խնամակալութիւն սահմանադրական Պարսկաստանի կառավարութեան վրայ: Ռուսիա այնքան ալ խանդավառ չէր ժողովրդավարական կարգերու պահպանումով. գործնապէս ան թիկունք կը կանգնէր միապետականներուն եւ կը պատրաստուէր դիւրացնելու գահընկէց Շահ Մահմեդ Ալիի վերադարձը Իրան: Անգլիացիները արտաքնապէս սահմանադրական կարգերու ջատագով, բայց գործնապէս ոչինչ կը ձեռնարկէին խախուտ այդ վարչակարգի ամրապնդման համար, աւելի շահագրգռուած ըլլալով հարաւի հարուստ նաւթահորերով եւ Հնդկաստանի իրենց նոյնպէս հարուստ գաղութի ճամբուն անվտանգութեամբ:

Այս պայմաններուն մէջ հակասահմանադրական տարրերը՝ քաղաքական անհատ գործիչներէն սկսեալ մինչեւ աւատատէր ցեղապետները, դարադարձները, Արտաբիլի Շահսեվաններ, քիւրտեր եւայլն, լայն ասպարէզ կը գտնէին երկիրը պարբերաբար զինեալ խռովութեանց թատերաբեմ դարձնելու համար: Անիշխանութեան ծաւալումին մէջ թաքուն կերպով քիչ դեր չէին խաղար նաեւ օսմանեան կայսրութեան նոր տիրակալները՝ երիտասարդ թուրքերը, որոնց ազդեցութեան տակ յատկապէս կը շարժէին սահմանային շրջանի քիւրտ ցեղապետները աւարի եւ աւերի ենթարկելով Ատրպատականը իր հայաշատ շրջաններով՝ Ուրմիա, Սալմաստ, Խոյ:

Ահա նման մթնոլորտի մէջ էր որ պիտի գործէին Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները եւ իրենց հերոսատիպ մարտիկները, Եփրեմ, Քեռի, Դաշնակցական Խեչօ եւ միւսները:

Նախորդ՝ Բ. բաժնին մէջ կազմակերպական շրջաններու տարեկան տեղեկագիրները լայնօրէն կը լուսաբանեն տիրող անիշխանական կացութիւնը, լեռնական ցեղախումբերու ասպատակութիւնները, պարսիկ քաղաքական դէմքերու յաճախակի դիմափոխութիւնը, անսկզբունքային վարքը եւայլն. այս բաժնով կը ներկայացուին Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի, Պարսկաստանի մարմիններու, ինչպէս նաեւ այս առթիւ Ռոստոմի, Եփրեմի, Ա. Վռամեանի, Յ. Միրզայեանի, Դոկտ. Յար. Ստեփանեանի միջեւ փոխանակուած գրութիւնները, որոնց մէկ մասը կը վերաբերի նաեւ պարսկական խորհրդարանի մէջ մէկէ աւելի հայ պատգամաւոր ունենալու հարցին:

Ստորեւ տրուած հակիրճ նամակները Եփրեմի կողմէ գրուած են Ահար գիւղաքաղաքէն, ուր գացած էր Եփրեմ ջախջախելու համար Ղարադաղի խռովարար լեռնականներու հռչակաւոր ցեղապետ Ռահիմ խանի եւ Արտաբիլի շահսեվանցիներու ըմբոստութիւնը Թեհրանի մէջ հաստատուած սահմանադրական կառավարութեան դէմ:

Ինչպէս միշտ Եփրեմի պարագային, յանկարծական եւ վճռական հարուածներով 1909 Դեկտեմբերին եւ 1910 թ. առաջին ամիսներուն ան ընկճեց Ղարադաղ, Արտաբիլ եւ Զանջան բռնկած ըմբոստութիւնները: Յաղթական մայրաքաղաք վերադարձին ան պիտի ընդունուէր ժողովրդային մեծ ցոյցերով: Այս անգամ Թաւրիզէն ան իր հետ կը բերէր Քեռին, որ այնուհետեւ պիտի գործէր իբրեւ անմիջական եւ գլխաւոր օգնական պարսկական զօրքերու ընդհանուր հրամանատարին (Եփրեմ):

Նամակներէն առաջին չորսը (թիւ 1728ե-3-4-6-7) ուղղուած է Ստեփանին, որ թուրք-պարսկական սահմանագլուխի դաշնակցական երկարամեայ ներկայացուցիչ յայտնի Սամսոն խանն էր, Քրիստ. Միքայէլեանի քեռորդիներէն Թադէոսեան Ստեփանը (նոյնպէս ծանօթ Գարեգին կուս. ծածկանունով): Հինգերորդ նամակը իր կնոջ՝ Անահիտին, որ աղջկան հետ (Աստղիկ) Զուիցերիա կը գտնուէր: Վեցերորդը՝ (Ընկերներեր) հաւանաբար Ատրպատականի Կեղր. Կոմիտէին, իսկ եօթներորդը՝ գրուած զուարթամիտ եւ երգիծական ոճով, ուղղուած է Յովսէփին, Յովհաննիսեան, որ Թաւրիզ հրատարակուող «Առաւօտ» թերթի խմբագիրն էր (վերջին 2 նամակները միեւնոյն համարակալումը կը կրեն):

Յիշեցնենք որ կռիւներու ընթացքին վիրաւորուած Աշոտը՝ Պարսկաստանի մէջ կուս. ծածկանունն էր Դաշնակցական Խեչոյի, իսկ Գրիշը (Տէր Դանիէլեան) Եփրեմի անձնուէր թիկնապահն էր:

Փաստ. 1728ե-3

Գ 1.– ԵՓՐԵՄԷՆ ՍՏԵՓԱՆԻՆ

Սիրելի Ստեփան!

Ջափից դուրս ձիւնը եւ մասամբ էլ իմ հիւանդութիւնը պատճառ եղան զինադադարի։ Ռահիմ խանը եւ Զարդամը թառել են սարերի ծերպերում։

Մի կողմից ձիւնը, պաշարի պակասութիւնը ու մեր զալպերը[36ա] նրանց սարերից շուտով դէպի Մուղան կ'ուղարկեն։ Եթէ անձնատուր չլինին շատ անխոհեմութիւն կը լինի նրանց կողմից։ Իսկ ես մտադիր չեմ ձմեռը Մուղան գնալու. հետեւապէս մի քանի օրից կը լինի վճռական ճակատամարտը եւ կ'որոշուի իմ մարշրուտը[36բ], հաւանաբար դէպի Վրէժ միմիայն ընկերների հետ տեսնուելու համար։ Վիրաւորներս բոլորը անվնաս ու անվտանգ են. մի քանի օրից դուրս կը գան շատերը հիւանդանոցից ու նորից կը մտնեն կռուողների շարքերը։ Խեչոն բերնիցն է վիրաւորուած ու բոլորովին անվտանգ է. 10 օրից նա էլ կը լաւանայ։ Քո գալը անհաշիւ է։

11 Յունուար 1910, Ահար *Քո՝ ԵՓՐԵՄ*

36ա.- Համազարկերը:
36բ.- Ռազմական երթուղին:

Փաստ. 1728ե-4

Գ 2.– ԵՓՐԵՄԷՆ ՍՏԵՓԱՆԻՆ

Սիրելի Ստեփան!

Նամակդ ստացայ, բայց կէտ առ կէտ պատասխանելու ժամանակ չունիմ. իշալլա շուտով կը տեսնուինք ու կը խօսենք։

Քեռու գալու մասին էիր գրել. ես շատ ուրախ կը լինէի, որ նա մի տասնեակով գար, բայց կարծում եմ չի հասնիլ. մէկ էլ 10 հոգու պատրաստութեան համար չարժէ կառավարութեան դիմել։ Վատ չէր լինի եթէ Սաթտար խանի հետ գային, եւ ապա կը մնային ինձ հետ. բայց լաւ է որ դեռ սպասեն, տեսնենք ինչ կը լինի։ Կարծում եմ էս մի քանի օրերը խնդիրը կը վերջանայ, այնպէս որ շուտով կը տեսնուինք. եթէ կարող էք Աբրահամ բէկին ուղարկեցէք որ կանտամինա [?]։

Համբոյրներով
ԵՓՐԵՄ

12 *Յունուար* 1910

Յ.Գ.- Աշոտը բոլորովին առողջացել է եւ վաղը միւս օրը կը մտնի շարքը։
ՆՈՅՆ

Փաստ. 1728ե-6

Գ 3.– ԵՓՐԵՄԷՆ ՍՏԵՓԱՆԻՆ

Սիրելի Ստեփան!

«Հասանք, տեսանք ու յաղթեցինք». յայտնի աղբարները գերի են. մնում են Խօզաբէլիները, որ այնքան էլ նշանակութիւն չունին։ Մի քանի օրից նրանց խնդիրն էլ կը վերջացնենք ու կ'երթանք։

Մեր մուտքն Արտաբիլ՝ Արշակն արդէն նկարագրել է, տեղդ դատարկ անցել է։ Մի հայ տղայ զոհ ունեցանք մեր թնդանօթի ռումբից. յանցանքը իրենն էր, որ աննկատելի մտել էր Նասրուլայի տունը կողոպուտի համար, մինչդեռ ես տունը ռմբակոծում էի։ Հակառակ կողմից 20 սպանուած. վիրաւորը յայտնի չէ։

Համբուրիր փոքրիկներին. բարեւներ տիկնոջը։

Գրածներդ ի նկատի ունեմ։

Քո ԵՓՐԵՄ

Փաստ. 1728ե-7

Գ 4.– ԵՓՐԵՄԷՆ ՍՏԵՓԱՆԻՆ

Սիրելի Ստեփան

Նամակներդ գրեթէ բոլորն էլ ստացուած է. եթէ մինչեւ հիմա առանց պատասխան են մնացել, յանցանքը իմս չէ այլ տարտամ ու անորոշ կացութիւնս։ Մի կողմից այս վայրենի ու միեւնոյն ժամանակ վախկոտ շահսովաններին զսպելը, որ արդէն հաւաքել եմ մի չիչի մէջ եւ խցանը պինդ-պինդ խցել, միւս կողմից ռուսների տմարդի ինտրիգաները ու բթամիտ քաղաքական մեքենայութիւնները։ Իսկ Թեհրանից հասած նամակներն ու հեռագիրները խամ գլուխս ուռեցրել են։ Այս բոլորից յետոյ կարծում եմ չպիտի մեղադրես թէ ինչու չեմ պատասխանում։

Այնքան եմ յոգնել, որ Թեհրան հասնելուն պէս մտադիր եմ մի կողմ քաշուել։

Գիտես որ ես պետական մարդ լինել չեմ կարող, մանաւանդ որ ռուսական բութ քաղաքականութիւնը յետեւիցս է ընկել։

Ախպէր, էդ Աստուած թիրմաչ[ի][36դ] «Զանգ»ն[30] էլ է սկսել, մօտս է, ինչպէս իրենց օդ է հարկաւոր, իրենց թերթին էլ հայհոյանք է պէտք։ Է՛հ, թողէք որ մեռելները թաղեն իրենց մեռելներին։ Ինչ որ Հաջալու բռնուելու մասին էր գրուած, դա մեր հաջային չլինի։

Մուխպիրին գրուած է հարկաւոր եղածը։ Կը ստանաս 50 թուման. մի կերպ եօլա գնա մինչեւ հասնիմ Թեհրան. տեսնենք ինչ կը լինի։

Ոտքիս ցաւը նորից սկսուեց ու շատ խիստ կերպով. ուռուցք է առաջացել, օպերացիա է պէտք, որ Թեհրանում պէտք է անել տամ։

Շահսովաններից 100 հոգի բռնուել են, որից 50-ը կը տանենք Թեհրան։ Ամբողջ Արտաբիլի շրջանում ոչ մի չչուկ չկայ. եթէ ռուսները թողնեն, արդէն խնդիրը վերջացած է. չէֆերն էլ հաւաքւում են։

Բարեւիր Պիոնեանին եւ Սարգսին ու միւս ընկերներին։ Համբուրիր երեխաներին, բարեւիր Զարինկային։

Քո ԵՓՐԵՄ

Ց. Գ.- Ցովսէփից մի նամակ ստացայ, որ գրում է Հռիփսիմէի հիւանդութեան մասին. հեռագրով հարցրի բայց չպատասխանեց. անձամբ գնա տես ու հեռագրիր Հռիփսիմի ու երեխաների առողջութիւնից։

ՆՈՑՆ

Փաստ. 1728ե-9

Գ 5.– ԵՓՐԵՄԷՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Սիրելի Անահիտ

Ես ողջ ու առողջ եմ. յոյս ունիմ որ թէ դուն ու թէ Աստղիկը առողջ կը լինէք։ Շուտով կ'երթամ Թաւրիզ ու այն տեղից կ'որոշեմ մեր ապրելու տեղը։ Ի հարկէ Աստղիկը դպրոց է գնում. աշխատիր որ դպրոցից դուրս տանն էլ պատրաստել տաս։

Բարեւիր Ալեքսան խանին ու տիկնոջը. Ցովսէփին էլ բարեւիր. Հայկը ուր է կորել, երեւի գնացել է։

Ուսուցիչներին ու Դէդոնց էլ բարեւիր։

ԵՓՐԵՄ

17 *Ցուն[ուար]* 1910

36գ.- Թիրմաչի՝ կտորեղէնի, կերպասեղէնի վաճառական, արհամարհական իմաստով գործածուած «Զանգ» թերթին համար:

Փաստ. 1728ե-10

Գ 6.– ԵՓՐԵՄԷՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Ընկերներ!

Ցունուար 13-ի կռուի մասին արդէն գրել եմ։

Զարղամը արդէն անձնատուր եղաւ ու եղբօրը իբրեւ պատանդ ուղարկեց մեր բանակը։

Ռահիմ խանի ուժը օրէց օր պակասում է. մի կռուից յետոյ կամ անձնատուր կը լինի կամ կը փախնի, այնպէս որ շտապ կը գամ։ Ցոգնել եմ. հանգստութեան պահանջը օրէց օր զգալի է դարձած։

Աչոտը ու միւս վիրաւորները հիւանդանոցից դուրս են եկել։ Վերջին կռւում վիրաւորուածներն են (2 հոգի) մնացել. վէրքեր ոտներից է ու անվնաս։

Բոլոր ընկերները լաւ են եւ կռուի պատրաստ. բարեւում են։

Քեռուն մախսուս[36ե] բարեւեցէք։

ԵՓՐԵՄ

Ահար, 17 *Ցունուար* 1910

Ներփակ ուղարկում եմ մի ռուս օֆիցերի գրած նամակը։

Փաստ. 1728ե-10

Գ 7.– ԵՓՐԵՄԷՆ ՅՈՎՍԷՓԻՆ

Նորին Գերազանցութիւն հեռագրչապետ տէր ու տնօրէն
Համայն հեռագրատների Պարսկաստանի
Ցովսէփ

Խոնարհ խնդիր

Ձերդ Գերազանցութեան նամակը բախտ ունեցաւ կարդալու մեր մեծապատուութիւնը։
Ուղարկածդ հեռագիրը յանձնեցի Հրաչին ու ստացականը Սարաբի վրայով քեզ։
Թեհրան լուր տուր մեր առողջութեան մասին ու Զարղամի անձնատուր լինելը։

Համբոյրներով
ԵՓՐԵՄ

Բոլոր այլասերուածներին ու վիժուածքներին բարեւիր։

17 *Ցունուար* 1910

36ե.- Յատուկ, մասնաւոր կերպով:

Փաստ. 476-110

Գ 8.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Թաւրիզ, 12 Նոյ. 1909

Ընկերնե՛ր,

Ընդհ. Ժողովի պատճառաւ մեր յարաբերութիւնները մի քանի ամիսներից ի վեր ընդհատուած են։ Մեր պատգամաւորը մինչեւ այժմ էլ հասած չլինելով (նա ուշանում է Վիշապում, Ց-ի Յանձնախմբի[37] պարապմունքների պատճառով), մենք համարեա անտեղեակ ենք Ընդհ. Ժողովի աշխատանքների հետեւանքի մասին. այնպէս որ, մինչեւ որոշումների ստանալը խընդրում ենք հաղորդեցէք մեզ նախ մեր շրջանին պատկանող որոշումները եւ ապա կազմակ[երպական] ընդհ. նշանակութիւն ունեցող խնդիրների մասին՝ նամակով։

Մեր յարաբերութիւնը Արեւելեան Բիւրոյի հետ ինչպէս միշտ, վերջերս մանաւանդ, շատ անկանոն է եղել։ Վերջին դէպքերը անշուշտ տալիս են որոշ արդարացումներ, սակայն այդ բաւական չէ եւ եթէ գոյութիւն ունէր թէկուզ ժամանակաւոր Բիւրո, դա պիտի շտապէր կապել ցիր ու ցան եղած եւ կազմալուծուած իր շրջանի մարմինները իրեն հետ եւ այդպիսով բարոյական կապ վերստեղծէր լքուած մարմինների հետ։ Ինչ որ է, այս մասին առանձին ուշադրութիւն դարձրած կը լինի անշուշտ Ընդհ. Ժողովը եւ մի դարման մտածուած։ Մենք իրաւացիօրէն սպասում էինք, որ Ընդհ. Ժողովը ի նկատի ունենալով մեր շրջանի պայմանները, նրա կարեւորութիւնը եւ մանաւանդ որ Պարսկաստանի գործունէութիւնը արդէն պաշտօնապէս ընդունելուց յետոյ, կը յատկացնէր ձեռնհաս գործիչ ընկերներ մեր շրջանի համար, գոնէ մէկը՝ Թեհրանում մնալու համար։ Այդպիսի մի ընկերոջ պէտքը մենք քանիցս չեշտել ենք, եւ յոյս ունենք, որ դուք առանձին ուշադրութեան կ'առնէք այս խնդիրը եւ դրական լուծում կուտաք, ուղարկելով մի այդպիսի ազատ ընկեր մեր շրջանը։

Քաղաքական կացութիւնը մեր շրջանում ձեզ յայտնի կը լինի թերթերից. վիճակը այնքան էլ վարդագոյն չէ։ Արտաբիլի ռէակսիոն շարժման հետեւանքը եղաւ այն, որ ռուսական զօրամասը մտաւ Արտաբիլ եւ յետ մղեց, ինքնաբերաբար, շահսեւան բանակը եւ Ռահիմ խանը, որովհետեւ նրանք իրենց միսսիան վերջացրել էին՝ առիթ տալով ռուսներին ներս գալու Ատրպատականի հիւս. վայրերում եւ այդ տեղերը պնդանալու։

Ռահիմ խանը վերադարձել է Ղարադաղ. նա սկսելու է անշուշտ իր վայրագութիւնները սաստկացած թափով։ Հայ գիւղերի վիճակը դառնալու է սրանից յետոյ անտանելի։ Սրանից առաջ Ղարադաղի խաների ձեռքով կատարուած խժդժութիւնների ամենահամառօտ, նըւազագոյն արձանագրութիւնը դուք կարդացիք անշուշտ մեր «Առաւօտ»ում[3]։ Նրանց ինքնապաշտպանութեան գործը փոքր չափով գոնէ ապահովելու համար մենք բանակցութիւնների մէջ մտանք Թումանեանների հետ, որանք ունեն մի քանի գիւղեր Ղարադաղում, որպէսզի նրանք տային դրամական միջոցներ, գոնէ 30-40 տղաներ այս վտանգաւոր ամիսներին այնտեղ պահելու համար. նրանք սկզբում տրամադրութիւն եւ համաձայնութիւն ցոյց տուին նպաստելու, իսկ յետոյ էլ ձայն ձուն չհանեցին եւ բանակցութիւնները այդպիսով էլ ընդհատուեցին։ Անշուշտ, երբ վտանգը նորից դռան առաջ կը կանգնի, կը սկսին աղմուկ բարձրացնել, դիմել մեզ, բայց այդ ժամանակ արդէն ուշ կը լինի։ Առանց այդպիսի արտաքին դրամական օժանդակութեան մենք նիւթական ոչ մի հնարաւորութիւն չունինք շրջանները զինուորական ուժ ուղարկելու, իսկ առանց դրանց տեղացիների ինքնապաշտպանութեան միջոցները եւ ոյժերը շատ անբաւարար են։ Ի՞նչ պէտք է անել։

Արտաքին եւ ներքին քաղաքական ինտրիգներ Պարսկաստանին, ինչպէս երեւում է, դեռ երկար հանգիստ չեն տալու. ռէակսիոն տարրերը օրէ օր երես են առնում, գլուխ են բարձրացնում։ Նոր կառավարութիւնը, հնի նման, ոչ մի զինուորական ոյժ չունի։ Երկրում կատարեալ անարխիա է. նշանակուած կառավարիչները ուղղակի մի-մի խրտուիլակներ են կուսակցութիւնների, թաֆիաների, հին ու նոր մուջահիդների չէֆերի եւ անհատների պաքարի առաջ։ Միահամուռ ջանքեր են պէտք, անկեղծ, սրտացաւ ջանքեր երկիրը այս անարխիական վիճակից դուրս հանելու համար, սակայն դրանք բացարձակապէս պակասում են։ Ոչ մի վստահելի տարր չկայ մեր հարեւանների մէջ, որոնց մենք ձեռք մեկնէինք։ Թաֆիայական այդ պաքարի մէջ մենք մեզ միանգամայն չէզոք ենք պահում, յայտարարելով, որ մենք մէջտեղ կուգանք երբ հայրենիքի անմիջական շահերին պատկանող մի կարեւոր գործ կայ մէջտեղ. այն ժամանակ միայն կը գործակցինք։

Պարսկաստանը կանգնած է այժմ երկրում գոյութիւն ունեցող զանազան տնտեսական տարրերի որոշականութեան, շերտաւորման նախադռանը. դասակարգերի չփոթ, խառնակ կերպարանքը սկսում է դեռ նոր պարզուելու ճանապարհի մէջ մտնել։ Առաջ են գալիս կուսակցութիւնների նման խմբակցութիւններ, որոնք հաստատուն հողի վրայ կանգնելու ջանքեր են անում, սակայն այդ հաստատ հողը նրանց համար տակաւին բացակայում է բնականօրէն։ Գոյութիւն ունի այստեղ Թաւրիզում «Իջթիմայունի-ամիյուն» (Սոց. դեմոկրատ) եարլիկի[38] տակ երկու կուսակցութիւններ։ Աշխարհայացքի գիտակցութիւն եւ պարզութիւն միանգամայն պակասում է։ Երկու խմբակցութիւնները միմեանց ոխերիմ, մահացու հակառակորդներ են։ Պայքարը աթոռի շուրջն է դառնում. մէկը միւսից աւելի իշխել, տիրապետել է ձգտում եւ աւելի ազդեցութիւն, իշխանութիւն ձեռք բերել է ձգտում։ Ցաւում ենք ի հարկէ, որ մենք ստիպուած ենք սոսկ հանդիսատեսի դերում լինել. մեր միջամտութիւնը եւ ջանքերը նրանց համախմբելու հայրենիքի ընդհանուր շահերի շուրջը դժուար թէ հետեւանք ունենայ, որովհետեւ հակառակ արտաքուստ ցոյց տուած հայրենասիրութեան, նրանց այդ հայրենասիրութիւնը նեղ է եւ շովէն[39]. իսկական հայրենասիրութիւնը պակասում է։

Գոյութիւն ունի եւ Մ[իութիւն] եւ Ց[առաջդիմութիւն] պարսկ[ական] կուսակցութիւնը, որ նոյն հիմունքների վրայ է ուզում դրուիլ, ինչպէս Օսմ[անեան] համանուն կուսակցութիւնը։ Նոյն ձգտումը՝ երկրի կառավարութեան վրայ ազդելու եւ իր ազդեցութիւնը առ հասարակ երկրի քաղաքականութեան եւ նրա ճակատագրի վրայ ուժեղացնելու։ Այդ կոմիտէների կազմութեանը նպաստում են եւ ժէօն-թուրք ագիտատորները թէ՛ այստեղ եւ թէ մայրաքաղաքում։ Կուսակցութեան վերջնական նպատակներից է նաեւ միութիւն առաջ բերել օսմանցիների հետ, ինչ որ համապատասխան է նրանց «Իթթիհադը իսլամ» դեվիզին[40]։ Այդ կուսակցութեան կազմութեանը ոչ պակաս նպաստել է Պոլսի պարսկական «Անջումանը Սաատէթ» միութիւնը, որի ջանքերով եւ դրդումով Պարսկաստան են գալիս ժէօնթուրք եւ պարսիկ գործիչներ։ Ոչ պակաս դեր են խաղում եւ կովկասցի գործիչներ՝ Աղայեւ եւ դոկտ. Կարաբէկով, որոնք ձեզ շատ լաւ ծանօթ դէմքեր են։ Ձեզ յայտնի է, որ դրանք այնքան էլ բարեկամական եւ անկեղծ տրամադրութիւններ չեն սնուցանում դէպի մեզ, սակայն արտաքուստ շատ մօտիկ եւ բարեկամ են ձեւացնում իրանց եւ աշխատում են ամէն կերպ օգտուել այստեղ մեր ունեցած ազդեցութիւնից, յեղ. փոքրաքանակութիւնից եւ սպասում են զանազան տեսակի աջակցութիւն մեզանից, իրանց նպատակների յաջող իրագործման համար։

Մի այլ կուսակցութիւն, կազմուած Թեհրանում, յեղափոխութեան օրերին «Ջհանգիր» անունով, ունի աւելի քան 2000 անդամ։ Թեհրանի գրաւման ժամանակ հանել է 500-ի չափ կռուողներ, ներսից արշաւող բանակին օգնութեան հասնելու համար եւ պաշտպանել է մայրաքաղաքի ազգաբնակչութիւնը Շահի զինուորների վայրագութիւնից, մինչեւ որ ազատարար բանակը քաղաք կը մտնէր։ Մերոնք այնտեղ գործել են այս կուսակցութեան հետ համերաշխ, որ իր աշխարհայացքով մեզ շատ մօտ է կանգնած։ Այդ կուսակցութեան ջանքերով եւ նրա ղեկավարների նախաձեռնութեամբ է հրատարակւում այժմ «Շարգ» (Արեւելք) օրագիրը, որ նըւիրուած է Պարսկաստանի առաջադիմութեան, անկախութեան եւ նրա իրաւունքների պաշտպանութեանը։ Խմբագրական կազմի մէջ գործում են եւ մեր ընկերներից մէկ-երկուսը։ Նրանց ասելով թերթը աշխատում է պահպանել սոց-յեղ[ափոխական] ուղղութիւն եւ դաշն[ակցական]սկզբունքները տարածել երկրում թերթի միջոցաւ։

Մէջլիսի հայ պատգամաւորների ընտրութիւնները դեռ չեն կատարուել։ Ընկերները Թեհրանից տեղեկացրել էին, որ կառավ[արութիւնը] համաձայն է 2 պատգամաւոր (հայ) ընդունիլ Մէջլիսում, բայց մինչեւ այժմ պաշտօնապէս մեզ ոչինչ չի հաղորդուած։ Իբրեւ պատգամաւոր նկատի ունինք մէկը Թեհրանի ընկերներից Յովսէփ Միրզայեանին, իսկ միւսը՝ Յովհ. խան Մասեհեանին, Շէյքսփիրի հայերէնի թարգմանիչը, ձեզ ծանօթ դէմք է, եւ եթէ սա չհամաձայնի՝ այն ժամանակ կը դնենք Իսպահանի ձեռնհաս ընկերներից մէկի թեկնածութիւնը։ Գիւղական, գաւառական թէ նահանգական Անջումանների[33] մէջ էլ աշխատում են[ք] գոնէ մի-մի հայ անդամներ անցկացնել։ Այդ մեզ յաջողուել է Ռաշտում, Սալմաստում, Թաւրիզում։

Սահմանագլխայի[41] վայրերի վիճակը այնքան էլ լաւ չէ. Սալմաստում եւ Ուրմիայում քրդական ասպատակութիւններն ու թալանները նորից վերսկսել են՝ մի փոքր ընդհատումից յետոյ։ Տեղական կառավարութիւնները միանգամայն անզօր են այդ ասպատակութիւնների եւ թալանների առաջն առնելու։ Նրանք տակաւին շարունակում են հին քաղաքականութիւնը.— սիրաշահել աւազակներին, յանձնել նրանց սահմանագլխի, ճանապարհների պաշտպանութիւնը, որպէսզի հանգիստ մնան։ Դա սխալ, աննպատակ միջոց է անշուշտ, որ ցաւին դարման չանելուց բացի բացասական հետեւանքների է հասցնում։

Եփրեմի բանակը, որ Թեհրանից ճանապարհուելով

37.- Ակնարկութիւնը Հ.Յ.Դ. 1909 թ. Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովին է, գումարուած Վառնա, ուր Ատրպատականի Կ. Կոմիտեութեան ներկայացուցիչն էր Մատինեան Նիկոլ՝ Վահան Ծածկանունով։ «9-ի Յանձնաժողովը» Ընդհ. Ժողովին ընտրուած այն յանձնախումբն էր, որ պարտականութիւն ունէր՝ ընդունուած բանաձեւերն ու որոշումները խմբագրելու եւ առկախ մնացած հարցերում լուծում տալու։ Յանձնախումբը այդ գործը կը կատարէր Պոլսոյ մէջ (Վիշապ)։

38.- Պիտակի, ցուցանշանի։
39.- Ազգայնամոլ։
40.- Նշանաբանին։
41.- Նկատի ունի թուրք-պարսկական սահմանը։

այժմ Զանջանում է գտնուում, զբաղուած է ռէակսիոն տարրերի մնացորդների զսպման գործով։ Շահսեւաններին[42] *պատժող այդ բանակը, որ բաժանուած էր երկու մասի եւ որ Արդաբիլի վրայ քալելու միսսիան ունէր, այժմ երբ ռուսները Արդաբիլ են մտել եւ հորդանները հեռ[աց]ած են այդ քաղաքից, որոշ չէ թէ ի՞նչ պիտի անէ։ Այստեղի կառավարութիւնը մտադիր է նրա զօրամասը, պարսկ. կոզակներով այստեղ բերել՝ կառավարութեան ոյժը մեծացնելու համար, որպէսզի իր դիրքը ուժեղացնի եւ կարողանայ երկրի գործերի վրայ՝ այժմ ամենափոքր նշանակութիւն չունեցող՝ իր ազդեցութիւնը մեծացնել։ Թէ բանակը կարող է գալ այստեղ Զանջանից կամ ոչ՝ այդ արդէն այլ բան է. մենք կարող ենք նոյնիսկ համաձայն լինել, երկրի իշխանութեան ազդեցութիւնը հաստատելու տեսակէտից, որ կարգ ու կանոնի հաստատութեան կարող է մեծապէս նպաստել, սակայն միւս կողմից Եփրեմի գալուն մենք այնքան էլ կողմնակից չենք, որովհետեւ նա կարող է ներքին թայֆայական պայքարին ակամայ մասնակից լինել եւ այս ու այն կողմի դիտաւորութիւններին ակամայ գործիք լինել։*

Զգիտենք 9-ի ցանձնախումբը[37] *մեր շրջանի բիւդճէի եւ մեր պարտքերի խնդիրը ինչպէս կարգադրեց, սակայն եթէ դուք հնարաւորութիւն գտնէիք մեզ մի գումար փոխադրել՝ շատ լաւ բան արած կը լինէիք։ Գոնէ Պոլսի Պատ[ասխանատու] մարմնի մօտ եղած մեր շրջանին վերաբերող գումարի հաշուին։*

Սրանից մի քանի շաբաթ առաջ ստացուեց ձեր հեռագիրը ընկ. Մարի[43] *տեսչութեան մասին՝ կենտրոնական դպրոցի համար. պատասխանեցինք, որ շատ ուշ էք մնացել. արդէն վարձուել էին թէ տեսուչը եւ թէ ուսուցիչներ։*

Ընկ. բարեւներով՝
Ատրպ[ատականի] կենտ. Կոմիտէի կողմից՝
ՀԱՑՐԻԿ[44]

Նամակների եւ այլ գրութիւնների մեր հասցէն է՝
Haïrapete Panirian, Tauris (Perse)
Հեռագրի հասցէն՝ Panirian

42.- Շահսեւանները կամ Շահսվանները (բառացի «Շահը սիրողներ») Պարսկաստանի նախկին Շահ՝ Մեհմեդ Ալիի եւ միապետական կարգերու վերականգնումին կողմնակից ցեղախումբ էին Արտաբիլի շրջանին մէջ։
43.- Տէր Մարտիրոսեան Միքայէլ։
44.- Պանիրեան Հայրապետ։

Փաստ. 107-44

Գ 9.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

22 Փետր. 1910

Սիրելիք,

Ստացանք ձեր Փետր. 8-ի նամակը։ Հեռագրական լուրերից իմացանք Եփրեմի քաղաք մտնելը եւ փառաւոր ընդունելութիւնը։

Ընկերական մի ժողովում խօսելով Իրանի արդի կացութեան եւ մեր դիրքի մասին, եկանք այն եզրակացութեան, որ չնայած որոշ տարրի դժգոհութիւններին, նախանձին, որ ժամանակով գուցէ վերածուի դաւերի, չնայած այս բոլոր անախորժութիւններին, Եփրեմը լաւ է որ մնայ իր պաշտօնի մէջ այնքան ժամանակ, որքան դա հնարաւոր է. նոյն այդ կարծիքի են Աղաեւը, Կարաբէկովը[45]*։ Եփրեմի գործի մէջ մնալը ունի ոչ միայն տեղական, այլ եւ ընդհանուր նշանակութիւն։ Պէտք է աշխատել, որ արշաւանքը Մակուի վրայ իրականանայ. ռէակսիոնի այդ ամուր բոյնը եթէ այսօր խաղաղութեան նշաններ է ցոյց տալիս, այդպէս չի լինիլ վաղը, եթէ դրութիւնը նորից խառնուի։ Միապետական հոսանքի այդ գործիքը պէտք է այժմեանից անզօր դարձնել։*

Ընկերները, յայտնելով ձեզ իրենց կարծիքը, սպասում են ձեր որոշումներին։ Միաժամանակ մեզ յանձնարարուած է հաղորդել տեղիս ընկերների ջերմ ողջոյնները Եփրեմին եւ իր խմբին։

Լուսանկարները խնդրենք փութացնել։

Վահանի[37] *գալը չի յաջողուում։ Ներողամիտ կը լինէք, եթէ ծանօթանաք պայմաններին։ Նրա միջոցով կը ստանաք դարձեալ 50 ոսկի օսմ., 200 ֆր. Պիոնեանից։ Պարտքի հաշուին վերցրէք նաեւ Ազատամարտի ապառիկները։*

Ներփակ ուղարկում ենք կազմ[ակերպական] որոշումները[46]*։*

Ընկ. բարեւներով
ԱԲՐՕ[47]

45.- Աղաեւ եւ Կարաբէկով, կովկասցի թուրք գործիչներ, որոնք սերտ յարաբերութեան մէջ էին Պոլիս՝ Արեւմտեան Բիւրոյի հետ, թէեւ իրենց գործունէութիւնը Պարսկաստանի մէջ վերապահութեամբ կ՚ընդունուէր տեղւոյն ընկերներուն կողմէ։
46.- Ակնարկութիւն Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովի որոշումներուն։
47.- Արբօ, Արեւմտեան Բիւրոյի Պոլսոյ կամ Թուրքիոյ հատուածին համար գործածուած ծածկանուն է։ Ներկայ գրութեան ձեռագիրն ալ կը պատկանի Ռոստոմի գրչին։ Վերեւ յիշուած Վահանը՝ Մատինեան Նիկոլն է։



Նմոյշ՝ Ռոստոմի ձեռագրէն

Փաստ. 877-20

Գ 10.– ԹԵՀՐԱՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ

10 / III 1910

Ընկերներ (Թեհրան),

Պարսկական սահմանադրութեան 58 յօդուածի առիթով, որը սահմանափակում է քրիստոնեաների (այսինքն հայերի գլխաւորապէս) քաղաքական իրաւունքները, արգիլելով նրանց ստանձնել պետական բարձր պաշտօններ, Պոլսոյ Ազգային ժողովը մտադիր է բողոք բարձրացնել եւ պաշտօնապէս դիմում անել։ Այդ խնդիրը բերուեց նաեւ Միջկուսակցային համերաշխութեանն ժողովի առաջ[48]։ Մեր կողմից եղան երկու առարկութիւններ։ Նախ նկատեցինք, որ անհրաժեշտ է, նախքան այս կամ այն քայլը անելը, ստուգել, թէ դա ինչ կարգի սահմանափակում է եւ երկրորդ՝ հարցնել իրանցիների կարծիքը, թէ որքան նպատակայարմար է արտաքին բողոքը եւ եթէ, այո, ինչ ձեւով լաւ է, որ արտայայտուի։ Մեր առարկութիւնները ընդունուեցին։ Խոստացան հաղորդել նաեւ Ազգային ժողովի վարչութեանը, որ սպասեն մինչեւ խնդրի ստուգումը եւ յանձնարարեցին մեզ հարկ եղած լուսաբանութիւնները բերել տալ ըստ կարելոյն շուտով։

Արդ, դիմելով ձեզ, խնդրում ենք, խորհրդակցելով ում հետ որ հարկաւոր է, պատասխանել մեր հետեւեալ հարցերին, պատասխանը ուղարկել պայմանական հեռագիրներով՝ արժանութեան համար։ Հասցէն՝ Azatamart *Ռոստոմին։*

1) Եթէ սահմանափակող յօդուածը հին է, նախկին կանոնը էսասիէ մէջ մտած,— հեռագրեցէք 1 *թուանշանը։*

2) Եթէ նոր յօդուած է, մտած մէջլիսի արդի նիստերում,— հեռագրեցէք 2։

3) Եթէ հին է եւ ենթակայ քննութեան ու վաւերացման, հեռագրեցէք 3։

4) Եթէ սահմանափակումը վերաբերում է կրօնական խնդիրների հետ առնչութիւն ունեցող պաշտօններին։— 4։

5) Եթէ բողոքը նպատակայարմար է եւ ազգային պաշտօնական մարմինների կողմից։— 5։

6) Եթէ յեղափոխական այլ եւ այլ խմբակցութիւնների կողմից — 6։

7) Եթէ միաժամանակ երկու կողմից էլ — 56։

Մենք կարծում ենք, որ վերջին պարագային լաւ կը լինէր միացնել պոլսաբնակ իրանցիներին, Կովկասի թուրքերին եւ ժէօն-թուրքերին։

Ուրեմն, եթէ հեռագրէք, օրինակ 256, *դա պիտի նշանակի, որ սահմանափակումը դրուած է արդի մէջլիսի կողմից եւ դրա դէմ պիտի բողոքեն բոլորը։*

Եթէ որեւէ բողոքի պէտք չկայ, հեռագրեցէք Non։

Անհրաժեշտ է, որ բացի հեռագրից, գրէք եւ մանրամասը նամակ՝ խնդիրը հիմնովին լուսաբանող։ Այդ դէպքում հեռագրի մէջ աւելացրէք lettre suit[49].

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Դ. ՊՈԼՍՈՅ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ[50]

48.- Միջ-կուսակցական համերաշխութեան ժողովները կը գումարուէին պարբերաբար Պոլիս, մասնակցութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան, Ս. Դ. Հնչակեան եւ Սահմանադիր-Ռամկավար կուսակցութեանց ներկայացուցիչներուն, թէ՛ ազգային եւ թէ Օսմանեան պետութեան հետ կապուած հարցերու շուրջ միացեալ կեցուածք ճշդելու նպատակով։

49.- Ֆրանսերէն՝ նամակը կը հետեւի իմաստով։

50.- Թէեւ գրութիւնը Պոլսոյ Կ. Կոմիտէի ստորագրութիւնը կը կրէ, ըստ էութեան սակայն Արեւմտեան Բիւրոյէն է։ Ձեռագիրը եւս կը պատկանի Ռոստոմի գրչին։

Փաստ. 477-28

Գ 11.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

Թաւրիզ, 5 Ապրիլ 1910

Ընկերնե՛ր,

Ստացուել է Ձեր նամակները (Փետր. 22ի եւ Մարտ 10ին)։

Եփրեմը անցեալ շաբթու իր բանակով ճանապարհուեց Թեհրան։ Նա կ՚անցնի հաւանօրէն Արտաբիլով եւ ամենայն հաւանականութեամբ ընհարում կ՚ունենայ Շահսէվանների հետ, որոնք վերջերս նորից խլրտումներ են անում այդ անհանգիստ շրջանում. այդ կուումն էլ եթէ նա յաջող դուրս եկաւ, կարելի է ասել որ Պարսկաստանի ներքին խաղաղութիւնը մի քանի տարով ապահովուած է։ Ասում են, որ մէջլիսը, Եփրեմի Թեհրան հասնելու ժամանակ, նուիրելու է նրան ոսկեայ սուր։

Մակւում, Սարդար Իգտալը Սուլթանէի մօտ տեղի ունեցող քրդական պարագլուխներին հաւաքում են, ինչպէս եւ այստեղ. սահմանագլխի վրայ[41] կատարուած խորհրդաւոր շարժումներին պարսկական կառավարութիւնը, ինչպէս եւ հէնց ինքը Եփրեմը, վերաբերում են շատ անփութօրէն։ Հիմնուած Սարդարից ստացած հանգստացուցիչ նամակների եւ հեռագիրների վրայ, որով նա իր հլու հպատակութիւնն է յայտնում ներկայ սահմանադր. կառավարութեան, եւ ցոյց է տալիս որ ամէն պարագայում, նոյնիսկ քիւրդ ցեղապետները ընդունելու եւ տեղաւորելու գործում շարժւում է պարսկ. կառավարութեան ցանկութեամբ՝ այստեղի, ինչպէս եւ գուցէ Թեհրանի վարիչ շրջանները ապագայի համար ոչ մի անհանգստացուցիչ վտանգ չեն նշմարում. իսկ փախստական քիւրդերի վարմունքի վրայ նայում են որպէս մի սովորական բէստիմի[51] ակտ, որ սովորական է Պարսկաստանում իւրաքանչիւր ապաստանի դէպքերում։

Մնում է ուրեմն, որ մենք մեր միջոցները գործադրենք։ Սակայն այդ միջոցների գործադրութիւնը, առ այժմ գոնէ, դժուարութիւնների է հանդիպում, որովհետեւ բորենին, վերջերս կատարուած նմանօրինակ փորձերի պատճառաւ, պահում է իրան շատ զգոյշ։ Միւս կողմից մենք նրա մէջտեղից վերացմանը տալիս ենք մեծ նշանակութիւն, որովհետեւ նա է գլխաւոր առանցքը այն վտանգաւոր շարժմանը, որ իր հետ գլորում է Սմկոներին, Նէմոներին, Քէօռ Հիւսէյիններին եւայլն[52]։ Մենք դեռ կը զբաղուենք այս հարցով եւ յոյս ունինք յարմար առիթին յաջողելու։

Եփրեմը այստեղից, մինիստրութեան ուղարկած իր հրաժարականով, այնտեղից եղած մերժման եւ մեր խորհուրդների հիման վրայ առ այժմ յետ վերցրեց, մինչեւ իր՝ Թեհրան վերադառնալը. սակայն հաւանօրէն նա այնտեղ նորից կը դնէ իր հրաժարականը եւ կը պնդէ, եթէ նկատի, որ իր պաշտօնի վրայ մնալը ոչ մի օգուտ չի տալու, զանազան պատճառներով։

Հարեւանների հետ մեր ընդհատած յարաբերութիւնները (պատճառները Ձեզ յայտնել ենք ժամանակին) վերջերս նորից վերսկսել ենք. այս անգամ յոյս ունինք, որ կը դառնայ հիմնաւոր եւ տեւական. մեր մերձեցումը առ այժմ կրթական գործի շուրջն է, տեղական մի, քիչ թէ շատ բարեկարգ դպրոցի ուսուցչական խմբի հետ, որ միաժամանակ եւ նրանց մի կուսակց[ութեան] հովանաւորութեան ներքոյ գտնուող դպրոցի ուսուցչախումբն է. մեր զբաղումների շրջանը հետզհետէ կը լայնանայ անշուշտ։

Այս առթիւ մենք կը խնդրէինք Ձեզնից, որ Ղարաբէկովի եւ իր այդտեղի ընկերների միջոցաւ մեզ յանձնարարէիք նրանք՝ այստեղի ընկերներին եւ ծանօթներին։ Ղարաբէկովի եւ այստեղից ուրիշների յանձնարարութիւնը անշուշտ իր կարեւոր նշանակութիւնը կ՚ունենայ այս խնդրում։ Անշուշտ անուշադիր չէք թողնի այս հանգամանքը։

Մի հայ պատգամաւորի ընտրութիւնը կատարուեց, այդ տեղեկացած կը լինէք «Առաւօտից»[3]*։ Ընտրուեց Ց[ովսէփ] Միրզայեանը, որին ընտրող պատուիրակները բացառաբար Ատրպատականի շրջանի հայութեան պատուիրակներն էին։ Ներքին Պարսկաստանի հայութիւնը չմասնակցեց։ Նա պահանջում էր գոնէ 2 պատգամաւոր, որ ինչպէս յայտնի է, մերժել է այդ առթիւ կազմուած Մէջլիսի կոմիսիոնը, հակառակ ներքին գործոց մինիստր՝ Սարդարը Ասադի եւ կառավ[արութեան] կուսակից պատգամաւորների պաշտպանութեանը։*

Մեր ակնարկած Ց[օդուածի] 58-ի (կանոնը էսասու) բովանդակութիւնը հետեւեալն է.— «Ոչ ոք չէ կարող նախարարութեան պաշտօնի հասնիլ, բացի նա, որ մահմետական, բուն իրանցի եւ պարսկահպատակ է»։

Մինչեւ այս սահմանափակման դէմ միջոցներ ձեռք առնելը, դեռ հարկաւոր է հիմն ի վեր բարեփոխել «Պարսկաստանի սահմ[անադրութեան] հիմնակ[ան] օ-

51.- Հաւանաբար՝ ապաստան գտնելու իմաստը ունի։

52.- Թուրք-պարսկական սահմանային շրջաններու մէջ (Ուրմիա, Սալմաստ, Խոյ) հայկական գիւղերու դէմ բռնութիւններ բանեցնող քիւրտ յայտնի ցեղապետներ։

րէնքներ» կոչուած սահմանադրակ. այս այլանդակութիւնը, որ ամբողջապէս Շերիաթի վրայ է հիմնուած։ Այն 5 իւլէմաները, որոնք պէտք է ընտրուին Շիա հոգեւորականութեան կողմից իբրեւ անդամ Մէջլիսի, հիմնական կանոնադրութեան Ց[օդուած] 2-ի զօրութեամբ, իրաւունք ունին Պարլամենտի եւ Սենատի մէջ առաջարկուած յօդուածները (օրինագծերը) մանրամասնօրէն քննել եւ (իրենց մէջ) խորհրդակցիլ եւ մերժել առաջարկուած յօդուածներից այն, որ հակառակ կը լինի իսլամական սուրբ օրէնքին եւ այդ մերժուած յօդուածը որպէս օրէնք չէ ընդունւում։ Այս հինգ հոգի իւլէմաներից բաղկացած մարմնի յայտնած կարծիքը ընդունելով, «ամէնքը պիտի հնազանդին եւ հետեւին նրան, եւ այսպիսի մի ընդունուած յօդուած մինչեւ ժամանակակից Իմամի յայտնուիլը, պիտի մնայ անփոփոխ»։ Այսպիսով ամբողջ Իրանի ճակատագիրը գըտնըւում է de jure 5 տգէտ իւլէմաների ձեռքին։ Իսկ թէ ե՞րբ արմատապէս կը բարեփոխուի կանոնը էսասին եւ թէ արդեօք ներկայ մէջլիսը, իր ներկայ կազմով ընդունա՞կ է այդ դժուարին միսսիան կատարելու — շատ դժուար է ասել։ Բարեբախտութիւնը այն է, որ Մէջլիսը մինչեւ այժմ էլ ձգձգել է այդ 5 իւլէմաների ընդունելութեան խնդիրը, հակառակ նրան, որ հոգեւորականութիւնը թէ՛ Պարսկաստանի զանազան վայրերից եւ թէ Նէջէֆի յայտնի մուջթէհիդների եւ ազդեցիկ հոգեւորականների միջոցով, օրէնքներով, իրենց դրած այդ կարեւոր իրաւունքի գործադրութիւնը պահանջել են։

Քեռին միացաւ Եփրեմի բանակին եւ իբրեւ նրա խմբապետներից մէկը, միասին Թեհրան ճանապարհուեց։

Սաթթար խանն ու Բաղըր խաները վերջերս կառավ[արութեան] դէմ բռնած ընդդիմադիր վերաբերմունքի պատճառաւ, Թեհրան ուղարկուեցին։ Պէտք է ասել, որ նրանք օգտուելով անցեալում ունեցած դիրքերից, միջամտում էին ամէն տեսակ գործերի եւ այդպիսով դժուարութիւններ յարուցանում թէ՛ նահանգապետի եւ թէ վարչական հաստատութիւնների գործունէութեան առաջ. գործում էին ինքնագլուխ եւ ոչ մի հեղինակութեան չէին ենթարկւում։ Ենթադրւում է նոյնիսկ, որ նրանք հեռացուեցին Թաւրիզից ռուս կառավարութեան պահանջմամբ։ Փաստն այն է սակայն, որ նրանք հեռացուեցին այստեղից բռնի ուժով. հարկաւոր եղաւ նոյնիսկ, նրանց դուրս գալու օրը, Եփրեմի օգնական Սարդար Բըհատուրի այստեղի զօրամասը շարժման մէջ դնելու (Եփրեմն այդ օրերը իր հրաժարականը Թեհրան էր ուղարկել) եւ Սարդարն ու Սալարը հեռացան բաց աչկարայ հայհոյելով նահանգապետ Մուխետիրի Սալթանէից սկսեալ մինչեւ մինիստրները։ Այսօր, Թեհրանից ստացուած հեռագրից երեւում է, որ նրանք հասել են Թեհրան երէկ երեկոյեան։

Պ. Հ. գործակալութեան սինասիոն[53] լուրերիցն է այն լուրը իբր թէ կովկասեան ֆետայիները Սաթթարի ղեկավարութեամբ ռուս հիւպատոսարանի դէմ սպառնական դիրք են բռնել։ Լուրը միանգամայն մտացածին է։

Պէտք է ասել, որ ռուսակ. քաղաքականութեան կուրսի մէջ (Պարսկ[աստանի] վերաբերմամբ) զգալի փոփոխութիւն է մտել. դա դառնում է, ըստ երեւոյթին գոնէ, հետզհետէ լիբերալ։ Ժամանակամիջոցը լրացած կոնցեսիոնների նորոգութեան համար սպասուած եռանդուն ջանքերը չեն երեւում. ընդհակառակն յամառ լուրեր են պտտում զօրքը հետզհետէ պարսկական տերիտորիայից քաշելու վերաբերմամբ։

Մենք զբաղուած ենք առայժմ մեր շրջանի ներքին գործերով։ Ցեղ[ափոխութեան] օրերի լարուածութիւնից յետոյ այժմ նկատելի է մեր շրջանում, այդպիսի դէպքում սովորական տեղատուութիւն։ Այդ դէպքերի հետեւանօք մեր գործերը ցիր ու ցան են եղել եւ յարաբերութիւնների դժուարութեան եւայլն պատճառներով կիսով չափ կազմալուծուած։ Բաւականին ջանք է հարկաւոր կարգի բերելու համար։ Շրջանները քիչ քիչ կանոնաւորւում են։

Ցանձնարարել ենք Սարգսին[53ա] թղթակցելու «Ազատամարտին»։ Աւազանի[53բ] կոմիտէից ստացանք 50 լիրա։

Ձեր խնդրած «Առաւօտի» 3 համարները ուղարկըւում է «Ազատամարտի» հասցէով։

Ընկերական բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

53.- Զգայացունց:
53ա.- Հաւանօրէն՝ Օհանջանեան Սարգիսին (Ֆարիատ):
53բ.- Տրապիզոնի շրջանին համար գործածուած ծածկանուն:

Փաստ. 585-20

Գ 12.– Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Թեհրան, Ապրիլ 14/27 1910

Սիրելի Ռոստոմ,

Երկու նամակ եմ ստացել քեզանից։ Անցեալ շաբաթ ստացայ յայտարարութիւնը համերաշխութեան մասին եւ ուզուած տեղեկութիւնների ցուցակը, որը յանձնեցի կազմին որպէսզի պատասխանը լինի պաշտօնական եւ կազմակերպական. դրա մանրամասն պատասխանը շուտով կը ստանաք։

Ստացայ նաեւ ձեր հարցերի ցուցակը թէ արդեօք պէ՞տք է բողոքել Պոլսից այն օրէնքի դէմ, որ ոչ մուսուլմաններին Պարսկաստանում իրաւունք չէ տալիս բարձր պաշտօնների հասնել։ Արդէն պայմանական հեռագիր ուղարկուեցաւ ձեզ որ պէտք չէ բողոքել առ այժմ, որովհետեւ այդ օրէնքը մտել է «ղանունէ Ասասիի» մէջ (յօդուած 58երորդ) նախկին Մաջլէսի օրով։ Նոր Մաջլէսը դեռ չէ տպել Ղանուն Ասասիին եւ առ այժմ դպչելու էլ հարց չկայ։

Ձեր բողոքները կը հասնէին — եթէ այժմ արուէին — երբ ոչ ոք այդ հարցով չէ զբաղւում եւ կը մոռացուէին։ Իմ եւ մեր այստեղի ընկերների գաղափարն այն է, որ երբ հայկական պատգամաւորը մտաւ Մաջլէս, այդ հարցը անշուշտ նա կը բերէ սեղանի վրայ, եւ այդ բոպէից եթէ տեղային բողոքներ Պոլսոյ հայութիւնից, Դաշնակցութիւնից, Երիտասարդ Տաճիկներից եւ նոյնիսկ Կովկասից եւ Եւրոպայից, շատ տեղին եւ նպատակայարմար կը լինէին։

Բողոքի խնդիրը իմ կարծիքով պէտք է առ այժմ կազմակերպուի։ Եթէ բողոքողների մէջ լինին մեր Պոլսի պարսիկ մուսուլման, Կովկասի մուսուլման եւ Ֆըրանսացի եւ այլ եւրոպական բարեկամներ շատ լաւ կը լինի։ Ուրեմն առ այժմ պիտի պատրաստել որքան կարելի է բազմաթիւ եւ ազդեցիկ բողոքող կազմեր, հասարակութիւններ եւ անձնաւորութիւններ։ Երբ որ հարցը այստեղ դարձաւ պարլամենտական վիճաբանութեան նիւթ, այն ժամանակ մենք հեռագրով ձեզ իմաց կը տանք եւ դուք մէկը միւսի ետեւից ուղարկել կը տաք այդ բողոքները, որպէսզի տան ցանկացած ազդեցութիւնը յարմար բոպէին։

Շէրէֆէտտինը այժմ Ուրմիա է կոնսուլ, նրան գրեցի որ ժամանակին ինքն ուղղակի գրէ ընկ. Վարդգէսին[54] խմբագրութեան միջոցով։ Եփրեմի կռիւների պատմութիւնը արդէն վերջացրել տուել եմ ընդօրինակութեան։ Շուտով կը ստանաք։ Ի հարկէ հեռագիրներից իմացել էք որ Եփրեմը գնաց դէպի Արտաբիլ, ուր մի երկու ճակատամարտի մէջ բոլորովին ջախջախեց Շահսեվանների ոյժը, այնտեղից ուղղակի Թեհրան է գալու։ Մինչեւ նա չգայ մենք չենք վճռի մեր վերջնական անելիքը պարսիկների հետ։

Մաջլէսի կուսակցութիւնները գնալով կազմակերպըւում եւ շեշտւում են։

Էթէխտալիունները (modérés[54ա] կազմակերպուել են եւ կատաղի կերպով կռւում են Թաղի Զադէականների դէմ (որոնք իրանց social revolutionnistներ[54բ] են կոչում)։

Պարսկաստանում ամէն բան թարս է դառնում։ Վերջինները պիտի աւելի բարեկամ լինէին հայերին եւ առաջինները թշնամի, բայց առայժմ առաջինները բարեկամութեան աւելի նշաններ են ցոյց տալիս, եւ նրանք են որ աշխատում են հայերից առնել երկու ներկայացուցիչ։ Եփրեմի հրաժարականը, հէնց նրա համար էր որ պարլամենտը ուշանում էր հայերի պահանջին նըպաստաւոր պատասխան տալու։ Եփրեմի հրաժարականին լուրը խիստ չչկլցրեց այստեղի բոլոր շրջաններին։ Ներքին գործոց նախարարը դրական խոստումներ տուեց Եփրեմին եւ ինձ յաջողցնելու հայերի պահանջը, որի հիման վրայ ես հեռագրեցի Եփրեմին որ վստահ եմ թէ մեզ կը տան 2 ներկայացուցչի իրաւունք եւ նա էլ իր հրաժարականը յետ վերցրեց ու գնաց Արտաբիլ։ Բոլոր էթէխտալիունները պատրաստուել էին մեր հարցը ի նըպաստ մեզ քուէարկելու, երբ որ Մաջլիսում վերջին անգամ բացուեցաւ այդ խնդիրը, բայց մեր կուսակիցները չկարողացան դիմանալ Թաղի Զադէի կրակոտ ճառերի առաջ հակառակ մեր դատի, եւ չյանդգնեցին քուէարկել՝ վախենալով չչահիլ մեծամասնութիւնը։ Այդ պատճառով էլ յետաձգեցին։ Դրանից յետոյ վրայ հասաւ մինիստրական քրիզիսը, որը դեռ տեւում է, այլապէս ցարդ լուծուած կը լինէր մեր խնդիրը։

Ես տեսնելով որ էթէխտալիունները չեն կարողանում պարլամենտի մէջ ջրել Թաղի Զադէի պատճառաբանութիւնը, մի յօդուածով ջրեցի բոլոր նրա առարկութիւնները եւ իրաւացի դուրս բերի հայերի պահանջը։ Այդ յօդուածը որ երեւաց «Շարդ» թերթի 74 եւ 75երորդ թը-

54.- Սերենկիւլեան Յովհաննէս, աւելի ծանօթ Գիսակ եւ Վարդգէս ծածկանուններով. Օսմանեան խորհրդարանի դաշնակցական պատգամաւոր: «Խմբագրութիւնը» այս պարագային կը վերաբերի «Ազատամարտ»ին:
54ա.- Ֆրանսերէն՝ չափաւորները:
54բ.- Ֆրանսերէն՝ ընկերվար յեղափոխականները:

ւերում, ահագին ազդեցութիւն գործեց Թաղի զադէ-կանների վրայ նրանց ջախջախելով եւ էթէտալիունների վրայ՝ նրանց խրախուսելով։ Թաղի Զադէն, որի ճառե-րի եւ տրամաբանութեան վրայ ուղղակի յարձակուել էի, չկարողացաւ պատասխանել իմ յօդուածին։

Որովհետեւ մեր հեռաւոր ընկերները նոյնպէս պարզ գաղափար չունեն թէ մենք ինչու ենք պահանջում մէ-կից աւելի ներկայացուցիչ եւ յաճախ մեզ խորհուրդ են տալիս տեղի տալ, լաւ կը լինէր որ այդ յօդուածը կար-դային ուր երկար եւ պարզ կերպով բացատրուած է մեր դատը, մի գաղափար կազմելու համար։ Ազատամարտի մէջ էլ կարող է թարգմանաբար արտատպուել։ Ես թարգմանելու ժամանակ չունեցայ բայց կարծում եմ այդտեղ թարգմանիչ շատ կը գտնուի։

Ինձ ի հարկէ գիտես որ Ատրպատականի հայու-թիւնը պարլամենտական ներկայացուցիչ է ընտրել։ Սպասում եմ վաւերաթղթերիս որ գնամ Մաշկէս. երբ մէկ անգամ ներս մտայ, մեր առկախ հարցերը աւելի մեծ թափով առաջ կը մղուեն։

Աղբալեանի հետ շատ լաւ յարաբերութեան մէջ ենք, եւ կազմակերպութեան համար մի մեծ նեցուկ է նա այստեղ։

Երկրորդ պատգամաւորի համար աչքի առաջ ու-նինք այստեղ Ալբերտ Տէր Յովհաննէսեանին որ ծառա-յում էր անգլիական բանկում, այժմ թողել է այդ պաշ-տօնը եւ մտել է ֆինանսական մինիստրութեան մէջ որ-պէս գլխաւոր հաշուապահ։ Հին դաշնակցական է եւ ոչ դոկտոր Բազիլի նման յաղող օրուայ դաշնակցական. լուրջ տղայ է, solide[55] գլխի տէր, քիչ խօսող բայց շատ մտածող ու պարսիկների շրջանում յարգանք կարող է ազդել։ Ալեքսան Թունեանը իր անձնական գործերի պատճառով չէ կարող ընդունել պատգամաւորի պաշ-տօնը։ Բացի դորանից նա իր պաշտօնի մէջ, այն է որպէս մի մեծ դրամատան ներկայացուցիչ, շատ օգտա-կար կարող է լինել։ Պէտք չէ նրան այդտեղից հանել եւ ուրիշ տեղ դնել։

Դոկտոր Բազիլի դէմ կայ եւ այլ խնդիր, որը այն է որ նրա եղբայրները եւ ազգականները Զուղայում կազ-մակերպել են Բագրատական (Բագրատ վարդապետ Վարդազարեան) մի կուսակցութիւն միմիայն մաքառե-լու Դաշնակցութեան տարածման դէմ Զուղայում, եւ նրանք էլ խիստ փափաքում են առաջ մղել Բազիլի պատգամաւորութեան խնդիրը։ Մարդ ապշած է մնում թէ դոկտոր Բազիլը Դաշնակցութեան կանտիտատ[55a] է թէ հակադաշնակցական կանտիտատ։

Ուղարկում եմ քեզ Ազատամարտի համար զանա-զան կտորներ Հաֆէզից եւ այլ բանաստեղծներից, բայց խնդրեմ տես կարող ես «Լեմի Լէյտին» (Scott) Պոլսում տպագրել տալ։ Ես կարծում եմ որպէս թերթօն կարող է առաջ Ազատամարտում դուրս գալ եւ ապա որպէս գիրք. 2000 տուն ոտանաւոր է, օրական 60, 70 տուն տպագրելով Ազատամարտը մի ամսում կը վերջացնէ, եւ ինձ թւում է որ տաճկահայերի մէջ յաջողութիւն կ'ունենայ այդ գիրքը։ Այս մասին գրիր ինձ քո գաղա-փարը։ Ուղարկածս կտորները խնդրեմ տպագրեն ա-ռանց բզբզելու եւ տպագրեն բոլորը։ Եթէ այս երկու պայմանները յարգուին ես շուտ կ'ուղարկեմ, այլապէս ինչպէս եղաւ «Վտակի»[56] մէջ կը դադարեմ ուղարկե-լուց։

Այսօրուայ ուղարկածներս Հաֆէզից են եւ Քըրն-զից։ Ամէն մի թերթը կարող էք մէկ դարձնել։ Բոլորն ի-րար ետեւից շարելը անհամ բան կը լինի։ Պատուիրիր որ Ազատամարտ առանձին ուղարկեն իմ հասցէով։ Թըղ-թակցողից հօ փող չեն առնի։

Համբոյրներով
Քո ՅՈՎՍԷՓ

Յ.Գ.- Շահրիկեանին եւ Սիմէոնին[57] եթէ այդտեղ է համբուրում եմ։

ՆՈՅՆ

55.- Ֆրանսերէն՝ հաստատուն, ամուր։
55a.- Թեկնածու։
56.- Թիֆլիս հրատարակուող դաշնակցական օրաթերթ (1907-1908)։
57.- Ակնարկութիւն Սիմոն Զաւարեանի։

Փաստ. 585-21

Գ 13.– Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Թեհրան, Մայիս 1/14 1910

Սիրելի Ռոստոմ,

Արեւմ. Բիւրոյի 13 Ապրիլ թուագրեալ նամակը ստացայ։ Արդէն հեռագիրներից իմացած կը լինիք որ Եփրեմը Շահսէվանների գործը եւս վերջացնելով մեկ-նել է դէպի Թեհրան։

Ճիշտ է ես ընտրուած եմ բայց ցարդ վաւերաթղթե-րից լուր չկայ եւ դեռ չեմ գնում պարլամենտ։ Հեռագ-րել եմ Թաւրիզ իմանալու համար ինչու են ուշացնում թղթերը, բայց դեռ պատասխանը չեմ ստացել։

Հայերի ներկայացուցչութեան հարցը արդէն նպաս-տաւոր կերպով լուծուած կը լինէր, եթէ տեղի չունենար մինիստրական երկարատեւ տագնապը որի մասին ի հարկէ կարդացած կը լինիք։

Թաղիզադէն եւ իւր կուսակիցները որ ամէնից շատ դէմ էին այդ հարցին, իմ յօդուածից յետոյ լռել են եւ նոյնիսկ Թաղիզադէն ասել է թէ երկրորդ անգամ այդ հարցը դրուելիս ինքը հակառակ չպիտի խօսէ որպէսզի հայերը չմտածեն թէ ինքը ուզում է թշնամութիւն անել նրանց դէմ։ Այս տրամադրութիւնը ի հարկէ ի սէր հա-յերի չէ այլ շնորհիւ այն հանգամանքի որ Թաղիզադէի վարկը խիստ ինկած է հիմա, եւ նրա կուսակցութիւնը շատ թուլացած։ Նա նորից ցանկանում է ունենալ հայե-րի դաշնակցութիւնը, եւ հարցը մինչեւ մի աստիճան էլ առաջ էր գնացել ընկերների շրջանում, եւ մի ժողով ու խորհրդակցութիւն էլ ունեցանք այդ մասին։

Մի վճռական ելքի չյանգանք սպասելով Եփրեմի գա-լուն որպէսզի նա էլ մասնակցի մեր խորհուրդներին։ Իմ գաղափարս այն է որ Դաշնակցութիւնը չթեքուի ոչ Թաղիզադէականներին եւ ոչ էթէտալներին, որովհետեւ այդ կուսակցութիւնները ոչ մէկը այն չեն որ նրանց անունն է յայտնում։ Թաղիզադէի կուսակցութիւնը որ համարւում է ձախակողմեան, լի է չովինիստ պահպա-նողականներով եւ էթէտալիունը որ համարւում է աջա-կողմեան, լի է ազնիւ ազատամիտներով։ Քանի որ անձ-նական են կուսակցութիւնները այդպիսի բաներ շատ կը պատահեն։

Իմ գաղափարս այն է որ Դաշնակցութիւնը իր հա-մախոհ պարսիկներով կազմէ մի երրորդ կուսակցու-թիւն եւ դուրս գայ ասպարէզ այդ անուան տակ. շու-տով կը կապէ իրան թէ աջից եւ թէ ձախից եւ կ'ունենայ շուտով ամէնից ուժեղ կուսակցութիւնը։ Այն ինչ, կապ-ւելով այժմեան մէկ կամ միւս կուսակցութեան, իրան նրանց հետ կ'անուանարկէ։ Այս մասին վճռական քայլը կ'առնուի Եփրեմի գալուց յետոյ, որի մասին կը տեղե-կացնենք ձեզ։

Հայ պատգամաւորի խնդիրը շատ մեծ կարեւորու-թիւն է ստացել պետական շրջանում։ Նախարարապետը որ համարւում է աջակողմեանների գլուխը, վերջերս հինգ առաջարկ է արել պետութեանը իր պաշտօնը շա-րունակելու համար։

1.- Մեղմ վարուել անգլիական եւ ռուսական կառա-վարութեանց հետ։

2.- Դրամ, որի հայթայթելու միջոցը ինքը կ'առաջար-կէ։

3.- Հայերից ընդունել երկու պատգամաւոր. եւ եր-կու ուրիշ որ չեմ յիշում։

Ինչպէս տեսնում էք հայկական ներկայացուցչու-թեան խնդիրը օրուայ ամենակարեւոր հարցերի շարքին է անցել եւ շուտով կը լուծուի նպաստաւոր կերպով։

Համբոյրներով
Քո ՅՈՎՍԷՓ

Մաշկէսի նախագահը Ռոստոմի անձնական ծանօթ-ներից է։

Փաստ. 477-37

Գ 14.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԹԵՀՐԱՆԻ ՇԱՀ ԿՈՄԻՏԷԻՆ

Թաւրիզ, 13 Մայիս 1910

Ընկերնե՛ր,

Ձեր Մարտ 23-ի եւ Ապրիլ 15-ի նամակները ժամանակին ստացուել են։ Երկու օր առաջ ստացանք նոյնպէս ձեր հեռագիրը՝ Թ[աղի-Զադէ]ի պարտիայի հետ կայացրած համաձայնութեան մասին։ Մենք յաջորդ օրը հեռագրեցինք, որ առ այժմ յայտնէք իրենց, որ մշակուած պլատֆորմին դէմ պէտք է որ Դաշնակցութիւնը հէնց ինքն իրան, առանց այդօրինակ համաձայնութիւնների էլ, աշխատի այդ կէտերի իրականացման համար, թէ դրսում ագիտասիոնի միջոցաւ ժողովրդի մէջ եւ թէ ներսում, մէջլիսում՝ իր պատգամաւորի միջոցաւ։

Ձեր կայացրած համաձայնութիւնը պիտի լինէր գործունէութեան հետեւանք այն համաձայնութեան, համերաշխ գործակցութեան, այդպէս ասած մի դաշինքի, որ կռում են երկու կուսակցութիւնները, յանձն առնելով փոխադարձ որոշ յանձնառութիւններ, պարտականութիւններ ինչպէս եւ պահանջներ՝ հանդէպ միմեանց։ Ձեր հեռագրից մեզ համար գոնէ պարզ չէր, թէ արդեօք ակնարկուած նախապայմանները տեղի ունեցե՞լ են, թէ ոչ։

Ի նկատի ունեցէք, որ մենք անցեալում ունեցել ենք նման խնդիրների համար փորձառութիւնների մի շարան եւ այդ անցեալի փորձերը թելադրում են մեզ, որ այդօրինակ համաձայնութիւնների դէպքում, ինչքան էլ մեզ ցանկալի, նոյնքան եւս պիտի աշխատենք, որ դա դրուի տեւական, հաստատուն հիմունքների վրայ, ապահովեցրած լինի, որոշ, կոնկրէտ գարանդիաներով[57ա]։

Անհրաժեշտ պայման է ներկայացնում նախ, որ մեր դիմացի կուսակցութիւնը, կամ թէկուզ պարլամենտական ֆրակցիան մեզ հետ գործ ունենայ ոչ թէ անհատապէս, անձնաւորութիւնների միջոցով, ով այսօր կայ իսկ վաղը չկայ եւ մենք չուարած չգիտենք ո՞ւմ հետ ենք գործ ունենալու դրանից յետոյ, այլ երեւան գայ պաշտօնապէս, կազմակերպուած մի մարմնի միջոցով, մի մարմնի կողմից, որ սոլիդ[58] է, մնայուն եւ ոչ թէ անհատների նման փոփոխական, անցողական։ Ապա որ՝ այդ կուսակցութիւնը գոնէ կարճ անցեալի գործունէութեամբ վստահութիւն ներշնչած լինի, որ՝ այդ կազմակերպութիւնը ոչ թէ նեղ, թաղթայական, անձնական շահերի հետապնդող մի օրգանիզասիոն[57բ] է, այլ գոնէ սահմանադրական, ռազմավարական ոգով տոգորուած, ժողովրդական իսկական շահերին նուիրուած եւ նրա համար միայն գործող։

Երրորդ որ՝ դիմացի կուսակցութիւնը ոչ միայն սոսկ պահանջներ անէ, զոհողութիւններ սպասէ համաձայնուող կուսակցութիւնից (Դաշնակցութիւնից), այլ եւ նրա հանդէպ որոշ յանձնառութիւններ, որոշ պարտականութիւններ յանձն առնէ, ճշտութեամբ եւ բարեխիղճ կերպով կատարելու խոստումով։ Այդ յանձնառութիւնների մանրամասնութիւնները մենք այժմեանից, ի հարկէ, որոշ նախատեսել չենք կարող, բայց օրինակի համար, կարող ենք մատնացոյց անել մի շարք հաւանականութիւններ։ Իբրեւ ազգային կուսակցութիւն մենք կարող ենք, օր[ինակ], առանձնապէս հայ ազգութեան պատկանող խնդիրներով դիմել կառավարութեան։ դիցուք, մի տեղ հայկական կոտորածի երկիւղ կայ — եւ դա անհաւանական էլ չէ, ի նկատի ունենալով պարսիկ ամբոխի զօրեղ ֆանատիզմը, ռէակսիոն տարրերի տակաւին ուժեղ եւ մութ գործունէութիւնը եւ, վերջապէս, արտաքին պրովոկասիոնը[57գ] եւայլն — այդ դէպքում նա պիտի մեր անելիք դիմումներին եւ պահանջներին ոյժ տայ եւ այդ առթիւ ձեռք առնելիք միջոցների մէջ մեզ աջակցէ։ Կամ, օր[ինակ], մի տեղ մեր ազգաբնակութիւնը հալածանքի է ենթարկուած, կալւածատէրերի կողմից ճնշումների է մատնուած, որովհետեւ հայեր են։ Կամ, օրինակ, կառավարական պաշտօնեաների համաձայնութիւնների պատճառով մեր ներքին կուլտուրական որեւէ ձեռնարկի, հաստատութեան դէմ հալածանք է հանուած, այդ դէպքում մեր բողոքներին պիտի ուժգնօրէն ձայնակցէ։ Կամ դիցուք մեր փոխադրած զէնքերը եւ ռազմամթերքը տեղական կառավարութեան կողմից բռնւում են, զէնքեր, որոնք — այդ մասին վստահ պիտի լինին — Դաշնակցութիւնը միայն Սահմանադրութեան պաշտպանութեան համար է գործածելու — եւայլն եւայլն։

Հէնց խնդրի առարկայ եղող կուսակցութեան չէֆ՝ Թ[աղի] Զ[ադէ]ի հետ մենք քանի անգամներ առիթներ ենք ունեցել դաշինքներ կռելու։ Առաջինը կատարուել է ձեր աչքի առաջ, Թեհրանում, երբ Ռոստոմը այդտեղ էր։ երկրորդը՝ Պարսկ[աստանի] ազատագրական շարժումների առթիւ, մօտ երկու տարի սրանից առաջ Մեծքաղաքում[58], ինչպէս եւ այստեղ, իսկ դրանց արդիւնքը գաբնակութեան միջեւ։ Սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ թուրք կամ պարսիկ ազգաբնակութիւնը կարող է այդօրինակ ընտրութեանց ժամանակ ոչ մի հայի թեկնածութիւնը չդնել, համաձայնուել ենք առայժմ առանձին ընտրութեան[60]։ Երկու պատգամաւոր պահանջելու մենք ոչ մի իրաւական հիմք չունինք ներկայ կանոնագրով, ուրիշ բան է եթէ ապագայում 50.000ը տայ մի պատգամաւոր, իսկ այդ դէպքում միւս պատգամաւորների թիւն էլ կը կրկնապատկուի. իսկ եթէ նոյնիսկ 2 կամ 3 հայ պատգամաւոր լինին, ինչ պիտի կարողանան անել, եթէ Մէջլիսում համակիր ուրիշ ֆրակցիա չունենան։ Մեզ համար սկի անցանկալի չէր լինի, եթէ հնարաւորութիւն ունենայինք 50 պատգամաւոր տալու, սակայն այս պարագային մեր երկու պատգամաւոր պահանջելը այն տպաւորութիւնն է թողնում, որ ներկայ օրէնքից չեղումն մենք պահանջում ենք մեր արած ծառայութիւնների եւ մեր անգին զոհողութիւնների փոխարէն — այդ մենք չպէտք է անէինք։

Իսկ խառն ընտրութիւնների ժամանակ յուսալի է գուցէ, մանաւանդ ապագայում երբ մեր յարաբերութիւնները կը բարւոքանան պարսկ. կուսակցութիւնների հետ, անցկացնել մի քանի հայ թեկնածուներ։ Ցանկալի էր, որ հայ պատգամաւորի ընտրութեան չմասնակցող շրջանները իրանց դիրքը որոշէին միանգամայն եւ այն՝ վերեւ մատնանշած տեսակէտներով առաջնորդուելով։

Իսկ ինչ վերաբերում է V Ընդհ. ժողովի մշակած ծրագրի N° 9-ին, դա վերաբերում է թէ՛ ազգային եւ թէ գլխաւորապէս կուսակցական եւ դասակարգային համեմատական պրոպորցիոնէլ ընտրութիւններին որպէսզի մանր ազգութիւնների եւ կուսակցութեանց ձայները չխեղդուին։ Այդ սկզբունքը եթէ գործադրուելու լինէր, օրինակ Գերմանիայում, գերմանական սոցդեմոկրատական հսկայական, մի քանի միլիոն հաշուող մասսան կ'ունենար Ռայխստագում փոխանակ այժմեայ 41 պատգամաւորին՝ գուցէ 150 պատգամաւոր, սակայն այդ չի լինում, չնորհիւ յիշեալ սկզբունքի բացակայութեան գերմ. ընտրական օրէնքներում, ինչպէս եւ ընտրական կուրիաների[61] անարդար բաժանման։

Ընկերական բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

Ձեր պահանջած բրոշիւրները անցեալները ուղարկել ենք պոստով։ «Ծառայի» գրադարանի բրոշիւրներից ձեր պահանջած 5-ական օրինակները պատրաստ են. ինչո՞ւ չէք պահանջում. թէեւ մի քանի N°N°-եր պակաս են, բայց եղածը գոնէ տարէք եւ տարածեցէք ձեր շրջանում։

57ա.- Շօշափելի երաշխաւորութիւններով։
57բ.- Կազմակերպութիւն։
57գ.- Գրգռութիւնը։
58.- Մեծ քաղաքը՝ Թիֆլիսի կուս. ծածկանունն է։
58ա.- Դիմագիծը։
58բ.- Հարցաթերթիկներով։
59.- Քննիչին, վերստուգիչին։
60.- Այսինքն՝ հայ պատգամաւորը կամ պատգամաւորները ընտրուին հայերու կողմէ։
61.- Կուրիա — ընտրաշրջան կամ ընտրողներու կրօնքի, ցեղի եւ այլ խմբաւորումներու պատկանելիութիւն։

Մատեան թիւ 92, էջ 211-12

Գ 15.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԴԻՄՈՒՄԸ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ

1910, 31 mai

[Fédération Révolutionnaire Arménienne]
(Section turco-arménienne de l'Internationale)

Au bureau socialiste International

Cher Camarade,

Malheureusement notre rapport vous arrivera un peu plus tard. On le prépare en Turquie. In ne sera donc pas inséré dans votre grande Collection et sera distribué séparément.

Nos camarades vous prient de bien vouloir introduire dans l'ordre du jour du Congrès de Copenhague une formule réclamant l'action solidaire des partis socialistes contre les immixtions liberticides du tzarisme dans les affaires de Turquie et de la Perse.

Vous savez bien qu'en Perse au cours des dernières années révolutionnaires, le gouvernement russe s'est efforcé d'étouffer par tous les moyens le mouvement constitutionnel. Il continue ses agissements jusqu'à nouvelle victoire de la contre-révolution.

Le gouvernement du tzar travaille en même temps en Turquie, notamment en Arménie turque, où il cherche – nous en avons des preuves évidentes – à exciter les kurdes, l'élément le plus réactionnaire, contre l'état des choses établi et à fomenter des troubles, des pogromes contre les populations arméniennes.

En présence de ces faits très graves qui sont un danger permanent pour les deux jeunes constitutions de l'Orient, le parti Daschnakzoutioun adjure le prolétariat de l'Europe et ses fractions parlementaires, d'user de tous leurs moyens, afin de mettre un terme aux intrigues tzaristes.

Salutations fraternelles
LA REDACTION DU DROSCHAK

<u>ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ</u>

1910, 31 Մայիս

[Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն]
(Միջազգայնականի Թրքահայաստանի հատուած)

Ընկերվար Միջազգայնականի Բիւրոյին,

Սիրելի ընկեր,

Դժբախտաբար մեր տեղեկագիրը քիչ մը ուշ պիտի հասնի Ձեզի: Ուրեմն ան պիտի չներմուծուի ձեր մեծ Հաւաքածոյին մէջ, եւ պիտի բաժնուի [ժողովականներուն] առանձին:

Մեր ընկերները կը խնդրեն, որ Քոփենհակէնի կոնգրէսի օրակարգին վրայ աւելցուի բանաձեւ մը, որմով պահանջուի ընկերվար կուսակցութիւններու զօրակցութիւնը ընդդէմ՝ Թուրքիոյ եւ Պարսկաստանի գործերուն մէջ՝ ցարական իշխանութիւններու միջամտութիւններուն, որոնք ազատութիւնները խափանելու բնոյթն ունին:

Լաւ գիտէք որ Պարսկաստանի յեղափոխութեան վերջին տարիներուն, ռուսական կառավարութիւնը ջանաց բոլոր միջոցներով խեղդել սահմանադրական շարժումը: Այսօր եւս ան կը շարունակէ սադրել. կը շարունակէ իր գրգռութիւնները մինչեւ [հասնի] հակայեղափոխութեան մէկ նոր յաղթանակին:

Ցարական կառավարութիւնը կը գործէ միեւնոյն ատեն Թուրքիոյ մէջ, յատկապէս Թրքահայաստանի – այդ մասին մենք ստոյգ ապացոյցներ ունինք –, ուր կը ճգնի գրգռելու ամէնէն յետադէմ տարրը՝ քիւրտերը՝ ընդդէմ հաստատուած կարգերուն, խռովութիւններ սերմանելով, ջարդեր [հրահրելով] հայ ազգաբնակչութեան դէմ:

Դէմ յանդիման այս ծանրակշիռ իրողութեանց, որոնք մնայուն վտանգ մը կը ներկայացնեն Արեւելքի երկու նորածին սահմանադրութեանց, Դաշնակցութիւն կուսակցութիւնը թախանձագին կը խնդրէ Եւրոպայի բանուոր դասակարգէն [պրոլետարիատ] եւ անոր երեսփոխանական հատուածներէն իրենց բոլոր միջոցները ի գործ դնել, որպէսզի վերջ մը դրուի ցարական սադրանքներուն:

Եղբայրական ողջոյններով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

Փաստ. 585-37

Գ 16.– Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Թեհրան, 12/25 –7– [19]10

Սիրելի Ռոստոմ,

Վաղուց էր քեզանից նամակ չունէի եւ այդ պատճառով վերջին նամակդ խիստ welcome[62] *եղաւ ինձ։*

Նամակումդ ակնարկում ես որ հարկաւոր է համաձայնութեան գալ Թաղի Զադէի կուսակցութեան հետ։ Այդ բանին դէմ են բոլոր այն ընկերները Թեհրանում որոնք Պարսկաստանը, պարսիկներին եւ մասնաւոր կերպով Թաղի Զադէին ամէնից լաւ են ճանաչում, եւ քո գաղափարին են բոլոր այն ընկերները որոնք կովկասից կամ դրսից նոր են եկել եւ խնդիրները միայն երեւոյթներով եւ անուններով կարող են վճռել։ Դէմ եղողները՝ Եփրեմը, ես, Ալեքսանը, Քեռին եւ Մեսրովբեանը։ Համակիր եղողների մէջ են դոկտոր Ստեփանեան, Մատթէոս Խան, Հանգոյցը[63] *եւ մի երկու ուսուցիչներ։ Զմոռանամ ասել որ Հանգոյցը վերջին րոպէին երբ մեկնում էր Պարսկաստանից ինձ յայտնեց որ փոխել է իւր գաղափարը, եւ մեր պէս մտածում է որ մենք առ այժմ պիտի չէզոք մնանք։*

Թաղի Զադէն իր անունը դրել է ձախակողմեան, բայց նրա խմբակը մէկ իսկական դաւանանք ունի, այն է Թաղի Զադէին պաշտել։ Թէ Թաղի Զադէն իւր անձնական անյայտ եւ խորհրդաւոր նպատակներն ունի եւ ձախակողմեան ոչինչ չկայ նրա մէջ բացի անունից, այդ նրա պարլամենտական գործունէութիւնից պարզ երեւում է։ Քանի քանի անգամ սա պաշտպան է հանդիսացել խիստ աջակողմեան գաղափարների երբ դրանք նը-պաստաւոր են եղել իւր յայտարարուած նպատակներին։ Ի միջի այլոց վերջերս ձեռք է եկել մի ապացոյց որ նա ջերմ պաշտպան է եղել այն հարցին որ Սուլթանաբադի ոսկու հանքերը տրուին իւր ազգականներին, երբ աջակողմեան կոչուածները բողոքել են թէ այդ հանքերը գիւղացիներին են պատկանում եւ կառավարութիւնը չպիտի վերցնի եւ տայ monopolist*ների։ Պարսկաստանի պարլամէնտում սկզբունքի հիման վրայ աջակողմ, ձախակողմ եւ կեդրոն չկայ։*

Մոլլաներից եւ վերջերս Սուփահտարն էլ ձախ կողմում են նստում եւ այդպիսի մտքերի եւ տեղերի չփոթութիւն [չատ կայ]։

Մեր գաղափարով, երկու տեղ կայ գործունէութեան. մէկը պարլամանտը եւ միւսը ժողովրդի մէջ։ Պարլամենտական կուսակցութիւնը չենք կարող ունենալ մինչեւ մեր ներկայացուցիչը պարլամենտ չերթայ։ Ժողովրդական կուսակցութիւնը մեզ համար պիտի լինի «էթէֆազ եւ Թարաղղի» կուսակցութիւնը, որ կազմուած է Դաշնակցութեան նախաձեռնութեամբ եւ ծրագրով նոյն իսկ Մամէդ Ալի շահի օրով, եւ որը միակ լուրջ բազմանդամ եւ ծրագրային կուսակցութիւնն է պարսիկների մէջ, ազատ ամէն կերպ անձնական հաշիւներից։ Ինչ վերաբերում է Թաղի Զադէի կուսակցութեան՝ նա դեռ պէտք է հաստատ գործնական ապացոյցներ տայ որ իսկապէս ազատ է ամէն անձնական հաշիւներից եւ զուտ սկզբունքային մի համախմբում է մինչեւ մենք կարողանանք նրա հետ ձեռք ձեռքի տալ։ Առ այժմ թէ դա անձնական է՝ մեծ թուով փաստեր կան։ Եթէ Դաշնակցութիւնը ուզէ համաձայնութեան գալ այժմ այդ մարդու հետ, դա նշանակում է, որ իր անուան ու prestige*[64] *սուրը տուեր է մի մարդու ձեռք, որի նպատակները չէ ճանաչում եւ որի վրայ որեւէ կոնտրոլ չունի թէ նա այդ սուրը ինչպէ՞ս եւ որպիսի՞ շահերի համար պիտի գործ ածէ։ Գուցէ մի ժամանակ կազմակերպութիւնը իմանայ իւր սխալը, բայց դա արդէն ուշ կը լինի, եւ նա արդէն անգիտակից գործիք եղած կը լինի իրագործելու մի նպատակ որ գուցէ բոլորովին հակառակն է իւր նպատակներին։ Դաշնակցութիւնը հիմա Պարսկաստանում նշանակում է ահագին ոյժ, գուցէ այս երկրում միայն երկրորդ ոյժը մոլլաների ոյժից յետոյ։ Այդպիսի ոյժը՝ կարիք չունի աջ ու ձախ կուրօրէն համաձայնութիւններ կռելու,* it can afford and wait[65] *եւ գործել համբերութեամբ եւ վստահելի քարթերով եւ ոչ թէ մութի մէջ որքան էլ քիչ լինի այդ խաւարը։*

Թաղի Զադէի գործունէութիւնը ցարդ ցոյց է տուել որ նա առաջին կարգի չովինիստ է, եւ չովինիստների չովինիստը։ Նա ոչ թէ պարսիկի գերազանցութիւն է ուզում ուրիշ ազգերի վրայ, այլ ատրպատականցու գերազանցութիւնը բոլոր պարսկաստանցիների վրայ։ Եւ ի հարկէ վերջապէս իւր գերազանցութիւնը ատրպատականցիների վրայ։ Ընտրական օրէնքի խմբագրման ժամանակ նա պարզ ցոյց տուեց թէ որքան կողմնապահ էր դէպի Ատրպատականի շահերը հակառակ Պարսկաստանի այլ նահանգների շահերին։ Թաղի Զադէն եթէ խ-

62.- Անգլերէն՝ հաճելի, ողջունելի:
63.- Ալեքսանը՝ հաւանաբար Ալ. Ջալալեանն է. Քեռին՝ հանրածանօթ հայդուկապետ Գաւաֆեան Արշակը, յետագային՝ կամաւորական չորրորդ գունդի հրամանատար: Հանգոյցը՝ Աղբալեան Նիկոլն է:
64.- Ֆրանսերէն՝ վարկ, հմայք:
65.- Անգլերէն՝ ի վիճակի է եւ կրնայ սպասել:

կապէս ձախակողմեան սկզբունքների հետեւող լինէր, սկզբից հակառակութիւն չէր սկսի հայերին եւ Դաշնակցութեան հետ՝ շատ լաւ իմանալով հանդերձ նրանց ձախակողմեան հակումները։ Նա միայն այն ժամանակ հայերին մօտենալու ցոյցեր արեց երբ տեսաւ որ բոլորովին ընկած է, եւ միայն հայերի prestigeը կարող է նրան ոտքի հանել նորից։ Մի երկու նիստ հազիւ ունեցաւ մերոնց հետ համաձայնութեան կէտեր մշակելու համար, եւ դեռ առանց որեւէ համաձայնութեան այնպէս շահագործեց այդ երկու նիստը պարսիկների մէջ որ նորից ոյժ ձեռք բերի, եւ սկսեց գործել։ Նրա գործունէութեան մի արդիւնքն էլ Սէիդ Աբդուլլահի սպանութիւնն է, որի առթիւ ռուսերը ուլտիմատում[65ա] են տրուել պարսից կառավարութեանը զօրք բերելու Թեհրան, եթէ բազարը (որ այդ առթիւ գոցուել էր) նորից չբանան։

Ահա այն հարցերը որ դառնում են կուսակցութիւնների շուրջը։ Բայց ըստ մեզ այդ կուսակցական գործունէութեանը սուր կերպարանք տալ այժմ նշանակում է կորցնել Պարսկաստանի անկախութիւնը։ Իսկ բացառաբար ամէն կուսակցութեան առաջին նպատակը պիտի լինի Պարսկաստանի անկախութիւնը։ Այժմ այդ անկախութիւնը այնքան վտանգուած է, այնպիսի բարակ մի մազից է կախուած, որ ամէն գործունէութիւն պիտի համախմբել ու միացնել այդ մէկ նպատակի շուրջը։ Այդ անկախութիւնը ապահովելուց յետոյ միայն կարելի է ձեռնարկել այնպիսի քաղաքական կտրուկ գործերի որ Թաղի Զադէի կուսակիցները այժմ են կատարում բոլորովին անուշադիր դէպի ռուսերի բռնած սպառնական դիրքը։

Եփրեմին եւ իմ գործունէութեան պլանը այս է։ Ժողովրդի մէջ գործել միայն ուժեղացնելով էթթէֆազ եւ Թարաղղին։ Պարլամէնտում չէզոք մնալ մինչեւ մեր ներկայացուցիչը այնտեղ մուտք գործէ։ Ես վստահ եմ որ պարլամէնտ մտնեմ թէ չէ կարող եմ կազմակերպել մի զօրեղ պարլամենտական կուսակցութիւն ամենամաքուր տարրերից։ Իսկ Թաղի Զադի հետ՝ մնալ այնպէս ինչպէս նա իրական գործունէութեամբ իրան ապագայում արժանի ցոյց տալու է։ Եթէ կազմակերպութիւնը չտապէ այդ համաձայնութիւնը կայացնել այդ խիստ կասկածելի մարդու եւ իր խմբակի հետ, ես եւ իմ համագաղափարները ստիպուած պիտի չէզոք եւ քաշուած դիրք բռնենք մինչեւ որ կազմակերպութիւնը տեսնէ իւր սխալը։

Հանգոյցը[63] մեկնել է այստեղից։ Շուտով կը լինի Պոլսում եւ ձեզ մանրամասն կը պատմէ այստեղի անցքերը։

Կ'աշխատիմ մի ուրիշի յանձնարարել թղթակցութեան գործը մինչեւ նորա վերադարձը։

65ա.- Վերջնագիր։

Հա, մի ուրիշ կէտ, որին խնդրում եմ անմիջապէս կազմակերպական ընթացք տաս։

Թեհրանի բոլոր ընկերների գաղափարն այն է որ հիմա Պարսկաստանի կեդրոնական կոմիտէն պիտի լինի Թեհրանում եւ ոչ Ատրպատականում։ Տաճկաստանի սահմանադրութեամբ Թաբրիզը կորցրեց իր նախկին նշանակութիւնը յեղափոխութեան տեսակէտից եւ Պարսկաստանի սահմանադրական լինելով Թեհրանը ստացաւ մի խոշոր քաղաքական յեղափոխական նշանակութիւն որ առաջ չունէր։ Խիստ յիմար բան է հիմա Թեհրանում նստիլ եւ պարսկական գործերի վերաբերութեամբ հրահանգներ ստանալ Թաբրիզից, այնինչ բոլորովին հակառակը պիտի լինէր։ Թեհրանը միայն իր կեդրոնականութեամբ, իր անմիջական կապերով բոլոր նահանգների հետ կարող է տեսնել, դատել ու վճռել մեր անելիքը։

Ձեմ կարծում գտնուի մէկ ընկեր որ անմիջապէս չտեսնէ թէ որքան աւելի նպատակայարմար եւ գործնական է այս ձեւը, եւ այդ պատճառով էլ կամ Պարսկաստանի համար կեդրոնական կոմիտէն պիտի փոխադրել Թեհրան եւ կամ Թեհրանում ստեղծել մի նոր մարմին «Պարսկաստանի խորհուրդ» կամ մի այլ անունով, որի վճիռները աւելի բարձր լինին Թաբրիզի կեդրոնական կոմիտէի վճռից։ Այս մասին խնդրեմ Բիւրոներին հարկ եղած ճանապարհով գրել տաս եւ հարկ եղած հրահանգներն ուղարկես Եփրեմին որպէս Արեւելեան Բիւրոյի ներկայացուցչի (այդ պաշտօնը կարելի է տալ նրան) որ այդ մարմինը կազմակերպէ Թեհրանում։

Ի հարկէ լաւ կը լինի որ այդ մարմնի մէջ լինին Թաբրիզից եւ Ռաշտից եւ Իսպահանից ներկայացուցիչներ։ Մանրամասնութիւնները թողնում եմ քեզ։

Մի անգամ խնդրեցի որ ինձ «Ազատամարտ» ուղարկել տաս, կարծեմ մոռացար։ Գոնէ առիթ ունենամ տեսնելու թէ իմ թարգմանութիւնները ինչպէս են տպագրում։

Իմ պատգամաւորական թղթերը վերջապէս հասան Թաբրիզից, ուղարկել եմ Մաջլիս։ Հայ պատգամաւորների խնդիրը վերջնականապէս այդ առթիւ շատ շուտով կը դրուի Մաջլիսում։

Հետեւանքը շուտով կը գրեմ քեզ։

Քո ՅՈՎՍԷՓ

Եփրեմը վաղուց այստեղ է։ Յարդ ոչ մի պաշտօն չէ ուզել ստանալ։ Սէյիդ Աբդուլլահի սպանութեան առթիւ քաղաքն այնպէս տակնուվրայ եղաւ որ նորից նրանից աղաչեցին կառավարել մի քանի օր, մի բան որ ընդունեց տասն օրով։ Նրա անունը միայն բաւական եղաւ որ մարդիկ հանդարտուին։

Յ.Գ.- Եփրեմին ասել եմ նոր լուսանկարներ հանելու եւ ուղարկելու համար։

Փաստ. 585-68

Գ 17.– ԵՓՐԵՄԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Սիրելի Ռոստոմ![66]

Համաձայն լինելով Յովսէփի հետ՝ կ'ուզէի Թաղի Զադէի մասին մի ուրիշ բացատրութիւն եւս աւելացնել։ Թաղի Զադէն մի վերին աստիճանի փառասէր ու անյարգոյ եսասէր մէկն է, որի զոհն է դառնում էսօր։ Թաղի Զադէն հեռանում է Պարսկաստանից արձակուրդի պատրուակի տակ. բայց իսկապէս հեռացւում է հէնց նրա համար որ նա ցանկանում է դիկտատոր դառնալ իր փոքրիկ գլխով ու մեծ ամբիցիայով[?]։ Երեւի արտաքին աշխարհում դրա հեռացնելը կը համարեն ռէակցիայի ուժեղացում ու նա կ'անմահանայ։

Էդ մարդը Ֆրազոր[67] է, բառի իսկական մտքով եւ ծախում է այն ինչ որ չունի. բաւական է որ նա ամենաջերմ պաշտպանն է Մաջլիսում ու երեւակայում է մօտ ժամանակներում կովկասը գրաւել։ Ամէն տեսակ մենաշնորհների պաշտպան ու աշխատաւորների շահերին հակառակ, ինչպիսին է աղի խայտառակ հարցը։ Դա իր պարլամենտական կեանքում բացի ինտրիգայից[67ա] ուրիշ բանով չի զբաղուել։

Զգիտեմ ինչն է մեզ ստիպում մօտենալ անգոյն այսինչներին կամ այնինչներին՝ քանի որ մենք կարող ենք թեւադրել մեր ցանկութիւնները որ կողմին էլ որ ուզենանք։

Առ այժմ այսքան. բոլոր ընկերներին բարեւում է Քեռին։

ԵՓՐԵՄ

66.- Եփրեմի այս նամակը անթուակիր է. հաւանական է որ գրուած ու կցուած ըլլայ Յ. Միրզայեանի (փաստ. 585-37) գրութեան, որ կը կրէ 12/25 Յուլիս 1910 թուականը։

67.- Ճոռոմաբան, դատարկախօս։

67ա.- Դաւից, սադրանքից։



Նմոյշ՝ Եփրեմի ձեռագրէն

Փաստ. 585-40

Գ 18.– ՅԱՐ. ՍՏԵՓԱՆԵԱՆԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Թեհրան, 4 Օգոստ. 1910

دکتر استپانیانس
حکیم مدالیاز اطبخرت اقدس ملوکی
طهران
Dr. A. D. Stépaniants
Dentiste de S. M. l. le Schah
Téhéran (Perse)

Téhéran, le 4 1910

Սիրելի Ռոստոմ,

Երկար ժամանակ է նամակ գրած չեմ ձեզ եւ ձեր թանկագին ժամանակից չէի խլեր ի զուր եթէ կարեւոր չհամարէի մի քանի տեղեկութիւններ տալ։

Ձեզ արդէն բաւականին ծանօթ կը լինի մեր շրջանում եղած տարաձայնութիւնները, մեր յարաբերութեան մասին պարսիկ յեղ[փոխական]ների հետ։

Ցաւօք սրտի պէտք է յիշեմ որ բաւականին յարմար մոմենտներ կորցրել ենք համերաշխութեան խնդրի առթիւ եւ մեծաւ մասամբ հէնց դրա համար որ մի քանի ընկերներ, անձնական կամ քաղաքական առանձնայատուկ նկատումներով, արգելքներ են ներկայացրել մեր յարաբերութիւնը կորրեկտ[67բ] ճանապարհի վրայ դնելուց եւ մանրուք[?] քաղաքականութեան ենք հետեւում մի այս կողմ մի այն կողմ, միշտ մեր կազմակերպութիւնը երերուն եւ անորոշ դրութեան մատնելով այս պատմական նշանաւոր օրերում։

Սրանից դեռ երեք ամիս առաջ, երբ տակաւին Եփրեմը բացակայ էր Թեհրանից եւ աջակողմեաններ սանձարձակ գործում էին ինչպէս իրենց կամքն էր եւ գրեթէ սահմանադրութեան հիմունքները վտանգի էին ենթարկուած, տեղական կ[ոմիտէ]ի հետ մի խորհրդակցութեամբ որոշեցինք ձախակողմեաններ ճարել, համերաշխել եւ գործօն դիրք բռնել մեր շրջանի գործերում։ Ահա՛, այս ժամանակ էր որ մի ուրիշ կուսակցութիւն՝ դեմոկրատ-լիբերալ (Թաղի Զադէին) սարսափելի հալածանքի էր ենթարկւում, թէ աջակողմից եւ թէ մոլլաներից։ բոլոր մութ ուժերը հաւաքուած էին, մի ինչ որ սիփահտարական կրուբայի շուրջ եւ ինքզինքներն չափաւոր էին անուանում։

Երկար բանակցութիւններից յետոյ տեղւոյս մարմինը եկաւ այն եզրակացութեան, որ կարելի է եւ անհրաժեշտ միակ քիչ թէ շատ յեղ[ափոխական] ոգի ունեցող եւ ծրագրով գործող դեմոկրատ լիբերալների հետ որոշ փլաթֆորմով հրապարակ գալ եւ որոշ ուղղութեամբ կռուիլ տիրող ռէակցիոնին դէմ։

Այս ուղղութեամբ մինչեւ օրս շարունակուել են բանակցութիւններ եւ մշակուել է մի փլաթֆորմ մօտաւորապէս Հ.Յ.Դ. մինիմալ[67գ] ծրագրի համաձայն, որու մէջ եւ մտցուել է ազգային ինքնավարութիւնները, որը հրատարակուելու է, բայց սպասում է մեր Կ.Կ.ի համաձայնութեանը, որը ձգձգում է յենուելով ինչպէս երեւում է ընկերներ Ե. Դ[աւթ]եանի եւ Յ. Մ[իրզոյ]եանի[67դ] պատճառաբանութեանց, որոնց մեծ մասը հիմնուած է անվստահութեան եւ կասկածի վրայ, եւ մի մասն էլ թերեւս անձնական մանր հաշիւների վրայ, կամ իրարու հետ յաճախ միակողմանի յարաբերութիւններ ունենալուն պատճառաւ։

Ժամանակներ անցնում են արդէն. ինկած դեմոկրատ լիբերալները այսօր իրենց ձեռքումն ունեն ամէն տեսակի ուժեր, պարլամենտում զօրեղ մի ֆրակցիա, կաբինէտում[35], նոյնպէս բոլոր պաշտօնատներում կարեւոր դիրքեր գրաւած եւ ժողովրդականութիւնը հարիւրապատկուած, մասամբ մեր շնորհիւ, բայց մենք տակաւին չկարողացանք վաւերաթուղթեր ստանալ որ բարեկամական յարաբերութիւնները պաշտօնականի վերածենք եւ մասն ու բաժին ունենանք կատարուած մեծ իրողութեանց մէջ։ Ինչ որ եռանդներ եւ զոհողութիւններ ի զուր են վատնուում եւ յարմար մոմենտը ձեռքից շուտ դուրս կը գայ, քանի որ մեզ հետ համերաշխել ցանկացողներն արդէն բաւականին ուժեղացած կը լինին եւ մեր օժանդակութիւնը այնքան էլ մեծ նշանակութիւն չ'ունենար, երբ արդէն առանց մեզ էլ յաջողութիւններ ձեռք բերուին։

Թոյլ փաստեր որ առաջ բերուել են երկու համերաշխութեան հակառակորդներից, այնքան փաստազուրկ են եղել, որ միայն իրենք քուէ տուել են իրենց առաջարկին. որտեղ եղել են վերջին անգամ բացի տեղական մարմնի ներկայացուցիչներից եւ լուրջ տեղացի ընկերներ, ինչպէս նաեւ կռուից վերադարձող ընկերներ, Քեռի, Աշոտ, Արշակ[68], ամէնքն էլ հրամայողական են գըտել վերջ դնել մեր մէն միայնակ գործելու քաղաքականութեան, քանի որ Դաշնակցութեան համակրանք եւ վստահութիւնը մեծ է եւ համերաշխ գործելու լաւ առիթ է ներկայանում։ Երկու կողմից գրուեցաւ կարծիքներ թեր եւ դէմ, ուժեղ կամ թոյլ փաստերով. սպասում եմ, տեսնանք մինչեւ երբ կը ձգձգուի...։

Ի միջի այլոց միայն իմ անհատական գաղափարս կը ցանկանայի յայտնել, որ այստեղ Հ. Յ. Դաշնակցութիւնը չէ որ ցանկութիւն կայ բարձրացնելու, այլ ամէն մարդ իւր ուզած կերպով Դաշնակցութիւնը շահագործել է աշխատում իւր անձնական գործերը ուղղելու համար։ Մեծերից փոքրիկներն էլ օրինակ են առնում եւ ամէն փոքրիկ բանի մէջ յանուն Դաշնակցութեան գործ յառաջ տանում։

Սրտացաւով եմ գրում այս տողեր, քանի որ եղել եմ այս շրջանում երկար տարիներ եւ ամէն մեծ յաջողութիւն կամ անյաջողութիւն բնական է որ ազդէին իմ վրաս։ Ձեմ յուսահատում, ժամանակը շատ բան պէտք է պարզէ, յետոյ յայտնի պէտք է լինի թէ ովքեր շահերով տարուած էին, ովքեր սկզբունքներով։

Ցոյս ունիմ սրտացաւումիս ձեր առաջ բաց անելուս համար չմեղադրէք ինձ. եթէ սխալուել եմ ուեւէ կէտում իբր մեծ եղբայր ուղղութիւն տուէք ինձ, պատրաստ եմ առանց յուսահատուելու գործել եւ մաքառել։

Բարեւ[ներով]
Յ. Տ. ՍՏԵՓ[ԱՆԵԱՆ]

67բ.- Շիտակ, ուղիղ, պարկեշտ։
67գ.- Նուազագոյն։
67դ.- Այլ խօսքով՝ Եփրեմ խանի եւ պատգամաւոր Յովսէփ Միքզայեանի։

68.- Քեռին եւ Աշոտը ծանօթ են յաջորդաբար Գաւաֆեան Արշակ եւ Դաշնակցական Խեչօ։ Արշակը հաւանաբար Սեւիկեան Արշակն է, կուսակցական գործիչ Թեհրանի մէջ։

Փաստ. 585-54

Գ 19.– ԵՓՐԵՄԷՆ ՎՌԱՄԵԱՆԻՆ

20 Հոկտ. 1910

Սիրելի Վ[ահաբ]

Յովսէփին գրածդ կարդացի։ Ա[ղաեւ] եւ Կ[արաբէկով]ների հետ Ձեր բանակցութիւնները արդիւնք կը տային եթէ այդ պարոններից մէկն ու մէկը այստեղ լինէր. հակառակ դէպքում հէնց թղթի վրայ էլ կը մնայ։ Ասեմ թէ ինչու։

Նախ Պարսկաստան ասելով պէտք է հասկանաք ամենավատ տիպի մի աւատական երկիր, զուրկ հաղորդակցութեան ամենատարրական միջոցներից։ Աղքատ բառի ընդարձակ մտքով։

Ժողովուրդը այլասերուած ու սրտահատութեան[?] աստիճանին հասած։

Կրօնամոլութիւնը ու ինքնամոլութիւնը ամէն սահմանից անցած։

Ինտելիգենցիան (եթէ կարելի ասել), ապիկար, ծոյլ, շահամոլ, փառասէր եւ ուրիշի աշխատանքն ու գործունէութիւնը վատաբար յափշտակող ու տեղը եկած ժամանակ կրօնի համար կուրծք ծեծողներ են։ Այս մարդիկը կրօնը զէնք են դարձրել երկիրը կողոպտելու եւ պաշտօններ ստանալու համար։

Երեւի լսած կը լինէք այստեղ գոյութիւն ունեցող երկու կուսակցութիւնների մասին «էհտիտալի» եւ «ինգլաբի»։ Վերջինիս դեմոկրատ անունն էլ են տալիս։

Երկուսն էլ բառի ընդարձակ մտքով ազգամոլներ ու իրենց շահերի յետեւից ընկած թայփաներ են. էհտիտալիները աւելի ճախ են քան դեմոկրատները։ Դեմոկրատների միսիան նրա մէջն է կայացած որ օտարներին հալածեն, ի հարկէ օգտուելուց յետոյ։

Ես Ատրպատականում եղածս ժամանակ մերոնց հետ բանակցութիւն էին սկսել դեմոկրատները, այն ժամանակ որ ընկնելու վրայ էին։

Մերոնք ի հարկէ բանակցում են առանց յետին մտքերի, իսկ նրանք՝ Դաշնակցութեան հմայքից օգտուելու դիտաւորութեամբ. բանակցութեան հեղինակը Թաղի Զատան էր, Ռոստոմին խաբող հռչակաւոր աֆերիստը[68ա]։ Ինչ խօսք որ դեմոկրատները ոտքի են կանգնում ու կառավարութեան բոլոր հիմարկութիւնները լեցնում իրենց անարժան արբանեակներով ու սկսւում է թալանը։

Միւս կուսակցութիւնները նոյն չափ թալանչիներ, լռում են։

Ժամանակն էր Դաշնակցութեանն էլ հարուածել որպէսզի դրութեան տէրը դառնային։ Սկսուեց Դաշնակցութեան դէմ մի լուռ հալածանք. մերոնք չչկուել էին, չգիտէին հարուածները որտեղից են գալիս մինչեւ Վրէժի[68բ] ընկերներից մէկը գրեց Թաղի Զատէի եւ Նօօգարու, երկուսն էլ դեմոկրատ ու պառլամենտի անդամ ու բանակցութեան հեղինակներ, հակադաշնակցական պրոպագանտ[իստ]։ Բանից դուրս եկաւ որ այդ անազնիւ պարոնները մեզանից օգտուելուց յետոյ որ փոխադարձ օգտակար պէտք է լինէին, այդ պարտականութիւնից խուսափելու համար մեր հմայքը ուզում են նսեմացնել, ու հիմա էլ սկսել են Հնչակեան կոչուած թափթփուկների հետ բանակցել։ Ինչ ասել կ'ուզի որ այդ պարոնների աչքածակութեան պատճառով երկրի ամէն կողմը սկսուեց անկարգութիւններ եւ երկիրը արդէն գնալու վրայ էր։ Մենք ստիպուեցինք մի թռուցիկով մեր չէզոքութիւնը յայտարարել։ Դեմոկրատները մեր թռուցիկին պատասխանեցին ամենացինիկ[68գ] կերպով, որպէս թէ Դաշնակցութիւնը յետին մտքեր ունի, որպէս թէ նրա պատմութիւնը եթէ պարսիկ ժողովուրդը իմանայ պէտք է զզուի նրանից եւայլն։ Ի հարկէ այդ կարապի վերջին երգն էր եւ նրանց կաբինէն[35] ընկաւ։

Մեր այդ դաշնակիցները որ մեզ բամբասելով էին զբաղուած, միւս կուսակցութիւններն էլ սկսել էին նրանց մերկացնել հասարակութեան մէջ։

Այս բոլորից յետոյ չգիտեմ ինչ է մնում մեզ անելու. եթէ կուսակցութիւնների անունների հետ դաշնակցելու լինենք պէտք է դեմոկրատների հետ միանանք. իսկ դեմոկրատներին արդէն հասկացաք։ Զգիտեմ պ.պ. Ա[ղաեւ] եւ Կ[արաբէկ]ովները ում հետ կ'առաջարկեն որ մենք միանանք։

Եթէ մի հզօր ձեռք չհասնի այս երկիրը ձեռքից գնում է. ես ստիպուած այս պաշտօնում մնում եմ որ գուցէ կարողանամ օգտակար լինել. ոչ մի բան ինձ չի կապում այստեղից բացի իմ կրած չարչարանքը. ես աշխատում եմ չինել իսկ բոլորը միասին քանդում են. յոգնելու վրայ եմ արդէն։

Բարեւներով
ԵՓՐԵՄ

68ա.- Շահամոլ խաբեբան։
68բ.- Թաւրիզի։
68գ.- Ամենաշնական։

Փաստ. 585-53

Գ 20.– Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆԷՆ ՎՌԱՄԵԱՆԻՆ

Թեհրան, 20 Հոկտ. 1910

Սիրելի Վռամեան,

Կատարելապէս համաձայն լինելով այն բոլոր կէտերի հետ որ Եփրեմը իր նամակի մէջ գրել է, չեշտում եմ նրա գրած մէկ մասնաւոր կէտը։ Այն է որ ձեր պարսիկ, անկեղծ եւ հզօր ընկերներից մէկը պիտի անշուշտ եւ անմիջապէս գայ Թեհրան անկեղծութիւն մտցնելու այստեղի պարսիկ խմբակների մէջ, այլապէս այստեղի մարդկանց հետ մեր գործակցութիւնը կը մնայ ոչ միայն ապարդիւն, այլ գուցէ առիթ տայ մեր նախանձոտ եւ չովինիստ գործակիցներին որ վերջ ի վերջոյ, ի փոխարինութիւն մեր բոլոր զոհողութիւնների եւ անձնուիրութիւնների, անուանարկեն մեզ։

Ամենաձախակողմ կոչուած տարրերի մէջ նախանձը դէպի օտարները այնքան է, որ կ'ուզէին ամբողջ Պարսկաստանը կորցնել եւ ոչ թէ փրկել մի հայի ձեռքով։

Ձեր համերաշխութիւնը եւ նրա մշակած կէտերը գտնում եմ խելացի եւ օգտակար, բայց մի հզօր եւ անկեղծ մուսուլման է հարկաւոր մեզ՝ որի հետ կարողանանք գործակցել։

Ընկերական բարեւներով
Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

Փաստ. 477-71

Գ 21.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 18 Նոյեմբեր 1910

Ընկերնե՛ր,

Ստացել ենք Հոկտ. 4-ի Ձեր գրութիւնը։

Աղաեւի եւ Ղարաբէկովի առաջարկութեան մասին այս երկրորդ անգամ է որ գրում էք մեզ։ Առաջին անգամ գրածին ի պատասխան՝ յայտնել էինք մեր պատրաստակամութիւնը եւ աւելացրել, որ հարկաւոր է, որ յիշեալ անձնաւորութիւնները մատնացոյց անեն մեզ, այստեղ, մեր շրջանում եղող իրենց վստահելի ընկերների վրայ եւ յանձնարարեն նրանց, որպէսզի մենք հնարաւորութիւն ունենանք սկսելու մեր յարաբերութիւնը նրանց հետ եւ մշակենք միասին գործունէութեան ծրագիր այս շրջանի համար։ Ներկայումս այդ աւելի քան անհրաժեշտ է, որովհետեւ, գոնէ Ատրպատականում մենք չունինք ազատական տարրերի (թուրք) այնպիսի խմբակցութիւններ, որոնց կարողանանք ձեռք մեկնել։ Եղածներից, Թաղիզադէի եւ Հաջի-օղլու պարտիաների մասին, ինչպէս եւ մեր՝ նրանց հետ ունեցած յարաբերութիւնների մասին ժամանակին գրել ենք Ձեզ։ Իսկութիւնն այն է, որ մեր դիմացինների մէջ պակասում է վստահութիւնն ու անկեղծ վերաբերմունքը գոնէ դէպի մեզ, իսկ այդ հանգամանքը ուժեղացնում են ի միջի այլոց եւ մեր հայ հակառակորդները, որոնք ոչ մի միջոց չեն խնայի, անմենաանմաքուր միջոցների առաջն էլ կանգ չեն առնի, առանց այն էլ վերին աստիճանի կասկածոտ պարսիկների մէջ արմատացնելու համոզումներ եւ կարծիքներ մեր մասին, որոնք ծանօթ են, եւ վերագրել մեզ դիտումներ, որոնք, ինչպէս երեւում է մինչեւ այժմ էլ, հակառակ մեր հռչակած յայտարարութիւններին եւ հերքումներին, այժմ շրջանառութեան մէջ են մեր պարսիկ հարեւանների «մտաւորական» համարուած շրջաններում։ Արդ, մեզ, դաշնակցականներիս համար խորթ եւ չարամիտ վերագրումները մեր թերթի միջոցով հերքելու դժբախտաբար հնարաւորութիւն չունինք, որովհետեւ հայերէն թերթը անմատչելի է մեր լեզուին բնաւ ծանօթ չեղող պարսիկ շրջաններին, բայց

եւ մենք չենք թերացել այլ միջոցներ ձեռք առնելու այդ պակասը լրացնելու համար։ Նախ՝ մենք ձեռնարկել ենք մեր Մրագրի պարսկերէն թարգմանութեանն ու հրատարակութեանը, ապա, վերջերս Թեհրանի Բարզ՝ պարսկերէն թերթի միջոցաւ, մեր ընկերներից մէկի յօդուածներով ըստ կարելոյն հերքելու այդ անմիտ վերագրումները։

Մխիթարական է, որ վերջերս, մեր ընկերներին յաջողուել է Էնզելիում եւ Ռաշտում կազմելու երկու խառն յեղ. կոմիտէներ — «Կուտրաթ» եւ «Իթթիհատ» (Ռաշտ), որոնց գիտակից անդամները գործում են մերոնց հետ համերաշխ եւ պարբերաբար հրատարակում են օրուայ հարցերի եւ դէպքերի շուրջը պարսկերէն թռուցիկներ եւ տարածում ժողովրդի մէջ։ Սակայն կասկածում ենք, որ այս համաձայնութիւններն էլ նախկինների նման տեւական չլինեն։

Նորից ենք կրկնում, ասել Աղաեւին եւ Ղարաբէկովին, որ մեզ մատնացոյց անեն այստեղ կամ Թեհրան, իրենց վստահելի ընկերներին եւ յանձնարարեն, որպէսզի հնարաւոր լինի մի միացեալ գործ սկսելու։

Սահմանագլխի վայրերի դրութիւնը, չնորհիւ ծանօթ անցքերի, օրէցօր լրջանում է։ Ռոստոմն էլ գրել էր մեզ սահմ. վայրերին վերաբերող Ձեր առաջարկի մասին։ Եփրեմը գիտէք, որ պաշտօնից հրաժարուել է մօտ 3 շաբաթից ի վեր, նոր մինիստրութեան գործի գլուխ անցնելու հետ միաժամանակ. այնպէս որ նա դժուար թէ կարողանայ կառավարակ. միջոցների օժանդակութիւնը խոստանալ այդ գործում. իսկ դա շատ կարեւոր էր, որովհետեւ մեր դժուարութիւնը գլխաւորապէս նիւթական մասն է գործի. գիտէք անշուշտ, որ մեր շրջանի հին պարտքերը դեռ լրիւ հանգցնելու հնարաւորութիւն չենք ունենցել, իսկ նոր պարտքերի տակ մտնել՝ մեր շրջանի կազմակ. միջոցները թոյլ չեն տալիս, թէեւ պահանջը հրամայական է։ Ինքնապաշտպանութեան գործի համար, Թաւրիզում գոնէ միջոցների հայթայթումը դժուարութիւնների է հանդիպում. այստեղ օտար զօրքի ներկայութեամբ բնակչութիւնը «իրեն ապահով է զգում». մնում է սահմանագլխի վտանգուած վայրերը — Ուրմիա, Սալմաստ, Խոյ — որ շատ չնչին բան կարող է հայթայթել։

Այս ի նկատի ունենալով մենք որոշել ենք յոյսը դնել միայն սահմանագլխային վայրերից սպասուող միջոցների վրայ եւ կազմակերպել տեղական միջոցներով եւ առ այժմ տեղակ. ոյժերով ինքնապաշտպանութիւն. դրա համար էլ կանչել ենք Թեհրանից Քեռուն, որից դեռ լուր չունինք, թէ գալու է՝ թէ ոչ։

Մեր շրջանի կազմակ. ստատիստիկան կ՚աշխատինք շուտով հասցնել Ձեզ։ Ձեր հարցացուցակը եւ հրահանգ շրջաբերականը ստանալուց. դեռ սրանից ամիսներ առաջ մենք նոյնօրինակ հրահանգներ եւ հարցեր տուել ենք մեր շրջանի մարմիններին եւ ուղարկել վիճակագրական տախտակներ (տպագրուած), սակայն մինչեւ այժմ դրանց պատասխանները չի ստացուել, նախ շրջանի վայրերի հեռաւորութեան, պոստային յարաբերութեան դժուարութեանց եւ ապա մարմինների դանդաղաշարժութեան պատճառաւ։

Յօգուտ կովկասեան բանտարկեալների դատական պաշտպանութեան գործի, մինչեւ այժմ մեր շրջանից հաւաքուել է մօտ 3500 թուման. հաւանօրէն 4000 թուման կը լրանայ. 3500-ը արդէն փոխադրուած է Պետրոսի[69] միջոցով Կովկաս։ Պետրոսը վերջերս այդ ժողովարարութեան[70] գործին նպաստելու համար անցել էր մեր շրջան՝ Թեհրան։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

P.S. *Ատրպատականի եւ նրա շրջանի նոր նշանակուած շէֆը՝ Մուքարրամը Սուլթանէ մեր մօտ բարեկամներից եւ համակիրներից է. յոյս ունինք նրա միջոցաւ սահմանագլխի եւ ճանապարհների ապահովութեան գործում մեր աջակցութեամբ եւ մեր մարտիկներից մի քանիսին տեղաւորելով վերոյիշեալ կարիքը մասամբ լրացնել։ Մուքարրամը Սուլթանէն սրանից մի տարի առաջ եղել է Վանի պարսկ. կոնսիւլ։*

ՆՈՑՆ

69.- Պետրոս՝ վարպետ զինագործ, Խանասորի արշաւանքին մասնակից, բուն անունով՝ Տէր Յովհաննիսեան Բագրատ, որուն պարտականութիւն տրուած էր Բիւրոյի կողմէ շարք մը վայրերու մէջ (Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան) դրամահաւաք կատարել ի նպաստ կովկասահայ դաշնակցական քաղաքական բանտարկեալներուն։

70.- Դրամահաւաք, հանգանակութիւն։

Փաստ. 585-65

Գ 22.– ԵՓՐԵՄԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻՆ

25 Դեկտ. 1910

Սիրելի Համբարձում![71]

Ստացայ նամակդ եւ տիկնոջ նկարագրութիւնը համաձայն եմ եւ հիանում եմ ձեր փոքրիկովը առանց տեսնելու։

Օդը ելեկտրականացած է։

Ռէակցիան այնքան ուժեղ գլուխ է բարձրացրել որ այլեւս ոչ մի կասկած չկայ որ կոնսպիրացիա[72] *է պատրաստուում. յաղթութիւնը թէ՛ որ կողմը կը լինի չգիտեմ։ Սահմանադրութիւնից երեւակայական գալիքներ սպասող այս դժբախտ ամբոխը՝ հիմա այն բարիքները սպասում է Մամեդ Ալի Միրզի վերադարձից։ Հովի հետ տարուբերող Թեհրանը գլուխը կորցրած անելիքը չգիտէ։*

Նորանոր անակնկալների նախօրեակին ենք գտնըւում։ Ամէն կողմից դիմում են ինձ որ ես մի ճար մտածեմ, իսկ իմ պատասխանս նոյն է։ Ձեմ խառնուում ոչ մի գործի. գնացէք եւ ինքներդ մտածեցէք։ Սպասում եմ վերջին րոպէներին ասելիքս ասելու եւ անելիքս անելու, որ չպիտի ուշանայ։ Էյնի դովլէն մի քանի միջնորդներ է գցել որ իր դէմ (երեւակայական ի հարկէ) չգործեմ. պատրաստ է ինձ օգնական ընտրել տալու, եթէ ես համաձանուեմ։ Պատասխանեցի որ փչրանքներդ առաջարկի քո պնակալէզներին, եւ մի մոռացիր որ մի տարի առաջ էլի միջնորդների միջոցաւ Ղարադաղի դատաւորութիւն էիր ինձնից խնդրում. ես նոյն մարդն եմ եւ ոչնչով չեմ փոխուել։ Ջմոռանամ ասելու որ երբ ուզում էի հրաժարուել, 10 հազար թուման առաջարկեց եւ փոխարէնը մի լաւ հայհոյանք ստացաւ։ Ձգուշացէք որ այստեղի ցոյցերը այդտեղ հակառակ ուղղութիւն չստանայ. ցոյցերը ուղղուած են լինելու ռէակցիայի դէմ որի ներկայացուցիչը ներկայ կաբինէն է։

Մոռացէք առայժմ միրզաքարիմականներին եւ եթէ հնարաւոր է, համերաշխեցէք ընդհանուր թշնամու դէմ։ Սարդարը Մուհին գրեթէ ամէն օր մօտս է լինում եւ երդուել է որ այլեւս բացի ինձնից ոչ ոքի չլսի։ Նամակս տուր ընկերներին կարդալու։ Համբոյրներ բոլորիդ։

ԵՓՐԵՄ

Պատճէնը հաւատարիմ է բնագրին։
Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆ
ՏՈՒՐ. Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

71.- Եփրեմի այս նամակը արտագրութիւն է։ Ուղղուած է իր մօտիկ բարեկամներէն Համբարձում Մելիք Սարգսեանին։

72.- Դաւադրութիւն (հակակառավարական)։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ. (1909 – 1912)

ԲԱԺԻՆ Դ. (1911 թ.)

1911 թուականը սահմանադրական Պարսկաստանի պատմութեան մէջ կը յատկանշուի ռուսական բիրտ միջամտութեամբ, մէկ կողմէ կաշկանդելու համար Թեհրանի իշխանութեանց շարժելու ազատութիւնը, միւս կողմէ՝ աշխուժացնելու երկրին մէջ մենատիրական հին վարչակարգը վերականգնելու միտող գործողութիւնները: Ուստի սահմանադրութեան հաւատարիմ ուժերու տարած յաղթանակները, ինչպէս նաեւ երկիրը խաղաղեցնելու ուղղութեամբ թափուած ճիգերը՝ չէին կրնար անտարբեր աչքով դիտուիլ ցարական իշխանութիւններու կողմէ, որոնք կը վարէին Իրանը մշտապէս խռովայոյզ վիճակի մէջ պահելու քաղաքականութիւնը: Այս մէկը կը համարուէր յարմարագոյն ձեւը թէ՛ ռուս քաղաքական ազդեցութեան զօրացումին եւ թէ զինուորական ներկայութեան նուիրականացումին համար: Պատահականութիւն չէր ուրեմն, որ Եփրեմի եւ ազատական միւս ղեկավարներու իւրաքանչիւր յաջողութեան պարագան առիթ կը ծառայեցուէր եւ՛ ներքին պայքարներու սրումին, եւ՛ ռուսական նոր զօրքերու կեդրոնացումին: Իրանի վրայ խնամակալութիւն հաստատած միւս տէրութիւնը՝ Մեծն Բրիտանիան չէր հակազդեր ցարական ոտնձգութիւններուն, հաւանաբար լռելեայն լիազօրութիւն ստացած ըլլալով իր «դաշնակիցէն» համապատասխան ազատութեամբ գործելու իր «հովանաւորութեան» տակ գտնուող երկրի հարաւային բաժնին մէջ:

Այս պայմաններուն մէջ տեղի կ՚ունենայ 1911 թ. կէսերէն սկսեալ Մահմեդ Ալիի՝ նախկին Շահին վերադարձը Իրան՝ Ռուսիոյ օժանդակութեամբ. ապա անոր կրտսեր եղբօր՝ Սալար Դովլէի գլխաւորած ուժերուն յաջորդական արշաւանքները Թեհրանի ուղղութեամբ, եւ, վերջապէս, ռուսական վերջնագիրը, որ անզօրութեան պիտի մատնէր Թեհրանի պառակտուած կառավարութիւնը:

Հակառակ այս բոլորին եւ հակառակ իր դէմ լարուած դաւադրութիւններուն, Եփրեմ եւ սահմանադրութեան զօրավիգ պախտիար ղեկավար Բահատուր խան իրենց փոքրաթիւ ուժերով սխրանքներ պիտի գործէին ու յաջողէին ետ մղել միապետականներու յաջորդական գրոհները եւ պահպանել ինչ որ կը մնար սահմանադրական կարգերէն:

Խռովութեանց ուրիշ կեդրոն մըն էր Ատրպատականը, ուր հակապետական ուժերը վերստին գործի գլուխ անցած էին: Հ. Յ. Դաշնակցութեան համաձայնութեամբ եւ Թեհրանի կառավարութեան հրաւէրով հոն անցաւ հին ու փորձուած հայդուկապետ Նիկոլ Դուման, որ յաջողեցաւ ի դերեւ հանել պաշարման ենթարկուած Թաւրիզը գրաւելու հակասահմանադրականներու բոլոր փորձերը, մինչեւ որ տարուան վերջերուն ռուսական զօրքի նոր միջամտութեամբ նահանգապետի պաշտօնին վրայ պիտի հաստատուէր Սամադ խանի նման դրածոյ մը... ու արհաւիրքի նոր շրջան մը սկսէր ամբողջ Ատրպատականի տարածքին:

Այս պայմաններուն մէջ, մէկ կողմէն չուզելով հակադրուիլ ռուսական զօրքերուն, միւս կողմէ անիմաստ գտնելով իր եւ դաշնակցական միւս մարտիկներուն ներկայութիւնը Ատրպատականի մէջ, Ն. Դուման իր ընկերներով պիտի հեռանար երկրէն:

Բաժնին մէջ տրուած գրութիւնները – փոխանակուած նամակներ Բիւրոներու, Ատրպատականի Կեդր. Կոմիտէի, Ռոստոմի, Եփրեմի, Ն. Դումանի, Յ. Միրզայեանի, Ա. Վռամեանի, Յոնան Դաւթեանի, Դոկտ. Յար. Ստեփանեանի միջեւ – լայնօրէն կը լուսաբանեն 1911 թ. Իրանի իրադարձութիւնները:

Առանձին տեղ կը գրաւեն անշուշտ Թեհրանի կոմիտէին անունով հանուած կոչերը, ուղղուած հայ ժողովուրդին, հայ զինուորներուն եւ պարսիկ հասարակութեան: Տեղին է, վերջապէս, ընդգծել Հ.Յ.Դ. արխիւ-Արեւմտ. Բիւրոյի Պոլսոյ հատուածին հետ:

Փաստ. 100-28

Դ 1.– ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ (ԿԱՐՆՈՅ ՀԱՏՈՒԱԾ) ԹԵՀՐԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

29-V-1911, Կարին

Ընկերներ!

Այսօր գրեցինք Ռաշտ, որ Սարուստանից[73] *իրանց ստացած բոլոր թղթերը անմիջապէս ուղարկեն Ձեզ. ստանալիս որքան կարելի է շուտ վստահելի մի միջոցաւ ուղարկէք Բենդեր Բուշիր. այնտեղից էլ ժընեւ. լուրջ ուշադրութիւն դարձնելու է որ Բենդեր Բուշիրից այնպիսի գծով ուղարկուի որ ուղղակի արտասահման անցնի առանց Ռուսաստան հանդիպելու. վերջին կէտի վրայ կրկնում ենք որ լուրջ ուշադրութիւն էք դարձնելու. այլապէս կարող են թղթերը վտանգուել Ռուսաստանում։*

Եփրեմի ստանձնած պաշտօնը ժամանակաւո՞ր է արդեօք[74]*. եւ ի՞նչ պայմաններով ստանձնեց. ձեզ գրել ենք արդէն որ շատ ցանկալի կը լինէր որ Եփրեմը մի ուեւէ պաշտօնով կամաց կամաց մօտենար Ատրպատականին թէկուզ հէնց մի արշաւանք սարքէր էլի դարադաղցիների դէմ. Ատրպատականին նրա մօտենալը կարեւոր է. մտածեցէք եւ ինչ կարգադրութիւն որ կ՚անէք իմացրէք մեզ։*

Ընդ. Ժող.ի օրակարգը[75] *երեւի ստացած կը լինիք ցարդ. շտապելու է ժամանակին հասցնել տեղեկագիր եւայլն, որ նորից չաբաթներով չուշանայ ու զուր տեղը չձգձգուի։*

Հաղորդեցէք մեզ տեղիդ գործերի վիճակը. մեզանում դրութիւնը շատ էլ որոշ չէ. հողային չարաբաստիկ խնդրոյ առթիւ վերջերս քիւրտ բէկութիւնը կազմակերպուած տեռորներ է սկսել հայ ժողովրդի դէմ. կառավարութիւնը վարանում է կտրուկ միջոցների դիմել. մէջտեղը տուժողը հանդիսանում է էլի հայ ժողովուրդը։

Ընկ. Բարեւներով
ԱՐԵՒԵԼ[ԵԱՆ] ԲԻՒ[ՐՈՅԻ]
Թ[ՈՒՐՔԻՈՅ] ՀԱՏՈՒԱԾ

73.- Սարուստան – Կովկասի Հ.Յ.Դ. կազմակերպական ցանցին տրուած կուս. ծածկանունը:

74.- Շահին կողմէ Եփրեմ յայտարարուած էր պարսկական բանակի սարդար՝ զօրավար-հրամանատար, «հայրենիքի եզակի հրամանատար» տիտղոսով:

75.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին, որ պիտի գումարուէր Պոլիս, նոյն տարուան Օգոստոսին:

Փաստ. 478-56

Դ 2.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

(Թ[ՈՒՐՔԻՈՅ] ՀԱՏ[ՈՒԱԾ])

Թաւրիզ, 7 Յուլիս 1911

Ընկերներ,

Հաստատում ենք մեր № 26-3 *գրութիւնը, որից յետոյ ստացուեց Ձեր* 14/27 *Ցունխի թուագրեալը։*

Երէկ երեկոյեան Թեհրանից Եփրեմը հեռագրել էր, որ էքս Շահը[76] *արդէն հասաւ եւ Թիւրքմէնների մէջ է, գրութիւնը շատ վտանգաւոր է։ Ցետոյ ուրիշ հեռագիրներ էլ կային, որոնցից պարզւում է որ աւելի քան* 8000 *հոգի ունի հետը եւ* 6 *թնդանօթ։ Սալար-ուդ-Դովլէն*[77] *էլ այդ կողմերն է։ Մի քանի քաղաքներ արդէն իրենց նրա կողմնակից են յայտարարել եւ նոյնիսկ մի քանի տեղեր հրապարակային ուրախութիւններ սարքել, հրապարակաւ Մահմադ Ալի Շահի անունով աղօթքներ կատարուել ու յայտարարութիւններ արուել։ Նրա Պարսկաստան մտնելու լուրը մենք խմացանք եւ Բենտերկէզից, Առաւօտի*[3] *անունով քաշուած մի* urgent[78] *հեռագրից, որը Թեհրանում գրաւուել է եւ մինչեւ այժմ չի տրուում։ Այդ խմացանք հեռագրատան պաշտօնեաներից անուղղակի կերպով։ Այդ հեռագրի մէջ նոյնիսկ կայ նաւի անունը, որով եկել է եւ* 7 *հոգի էլ հետն են եղել։ Ի հարկէ Ազատամարտում Առաւօտի հեռագրի գրաւման մասին ոչ մի ակնարկութիւն։ հեռագրատան ընկեր պաշտօնեաների դրութիւնը կը խախտուի, որը ցանկալի չէ։ Գուցէ դեռ իրը* urgent *հեռագիրը մի օրից յանձնեն։*

Սիւպահտարի Ռաշտ գնալն ու յետ դառնալը կապւում է դրա գալստեան հետ։ Նա աւելի շատ մտածել է եղել Ռաշտը հանել կառավարութեան դէմ, որը չի յաջողուել։ Նա արդէն իր ամբողջ ունեցածը դրել է ռուսական կառավարութեան հսկողութեան տակ։ Անշուշտ ռուսական մատը կայ։ Հեռագրական գործակալութեան հեռագիրները ակնյայտնի Սիւպահտարի քայլերը պաշտպանում են եւ Մահմադ Ալու Օդեասից հեռանալիս, լուր տուին թէ Վիեննա է գնացել, մինչդեռ պարզւում է ճիշտ հակառակը։ Մահմադ Ալին Ռուսաստանից գալիս ունեցել է 7 *հոգի հետը, դեռ չի պարզուել թէ ովքե՞ր են դրանք։*

Իսկոյն եւեթ քայլեր արինք ինքնապաշտպանութիւն կազմակերպել, տեսնենք կը յաջողի միջոցներ ստեղծել։ ռուսաց զօրքի ներկայութիւնը շատերին երես է տուել եւ խնդիրը բարդացնում է։ Ցամենայն դէպս կ'աշխատենք։

Բանտարկեալների օգտին[79] *հանգանակուած դրամի քանակի մասին էք հարցնում։ Մենք ձեզ այժմ ճիշտ գումարը հանգանակուածի ու փոխադրուածի չենք կարող ասել, շրջաններից հաշիւների չստանալու պատճառով։ Խոշոր գումար եղել է հարաւային Պարսկաստանում, հիւսիսը շատ քիչ բան է տուել։*

Իսկ որ Թիֆլիսում փորձեն հանգանակութեան, ներկայ պայմաններում կարծում ենք շատ դժուար կը լինի։ Հասցէ չունենք։ շատ շնորհակալ կը լինենք եթէ Թիֆլիսի եւ Բագուի հասցէները եթէ ունիք անմիջապէս մեզ ղրկեցէք։ ունինք եւ գրում էինք, բայց պատասխան վերջերս չենք ստանում, գուցէ հասցէն վտանգուած է, նորն էլ չեն տուել։ Խառը ժամանակ է, օրը մէկ հասցէ են փոխում։ Ցամենայն դէպս դուք ղրկեցէք։ եթէ մինչ այդ նոր եւ ապահով հասցէ ստանանք չի խանգարի։

Ընդհանուր Ժողովի համար պատգամաւոր ընտրեցինք Կ. Կոմիտէի կողմից ընկ. Պիոնեան, որի վկայագիրը ներփակ է, կը գայ իրեն կը տանք։

Նիկոլը[80] *Սալմաստ է դեռեւս։ հաւանական է շուտով գայ։ Իսկ ինչ վերաբերում է շրջանի գործչին, որ ուզել էինք ձեզնից, միթէ՞ կարծում էք Նիկոլի հետ խորհրդակցելով մեր շրջանում կը գտնենք։ միթէ՞ մեր շրջանի ոյժերին մենք չենք ճանաչում։*

Ազատամարտի հաշիւները ղրկեցինք, իւրաքանչիւր մարմնին յանձնարարելով որ շտապեցնեն գործակալները հաշիւը շուտ վերջացնելու։ Պիոնեանը մի մասը արդէն փոխագրել է, անշուշտ ստացել էք։

Ընկ. Բարեւներով
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

76.- Էքս Շահ, այսինքն նախկին, զահընկէց Մահմադ Ալի Շահը։

77.- Սալար Դովլէն նախկին Շահ Մահմադ Ալիի կրտսեր եղբայրն է։

78.- Ֆրանսերէն՝ ստիպողական, կարեւոր։

79.- Խօսքը Կովկասի դաշնակցական բանտարկեալներու մասին է։

80.- Նիկոլ Դումանն է, որ Ատրպատականի հայ եւ պարսիկ զօրքերու հրամանատարի պաշտօնով հրաւիրուած էր նախկին Շահի վերադարձին առթիւ ստեղծուած խառնութիւնները զսպելու։

Փաստ. 478-56

Դ 3.– ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԷՆ՝ ՍԱՐԳԻՍԻՆ ԵՒ ՅՈՆԱՆԻՆ

11 Յուլիս 1911, Սալմաստ

Սիրելի Սարգիս եւ Ցոնան![81]

Նամակներդ ստացայ։ Քանի որ «Պրոգրէսի» կազմակերպումը դեռ տատանման մէջ է, ես կը մնամ Սալմաստում, փոխանակ փոչի կուլ տալու Թաւրիզում։ Հէնց որ զգաք իմ ներկայութեան կարիքը Թաւրիզում, իսկոյն հաղորդեցէք ինձ, որ ճանապարհ ընկնեմ։

Այժմ Մամետ-Ալի շահի մասին։

Սկզբից ի վեր, ի նկատի ունենալով հայերի ողորմելի թիւը Պարսկաստանում, ես դէմ եմ եղել մեր մասնակցութեանը Պարսից յեղ. շարժման մէջ։ Տարակոյս չկայ, որ այդ շարժման ժամանակ եթէ յաղթէին միապետականները, նրանք — գրգռուած մեր մասնակցութիւնից — հայերին պիտի տրորէին ոտքի տակ։ Բարեբախտութիւն էր, որ նրանք չյաղթեցին, բայց այդ բարեբախտութիւնը, ինչպէս երեւում է, երկար չպիտի տեւի։ Մամետ-Ալին չէր համարձակի մտնել Պարսկաստան, եթէ մի կողմից չունենար ռուսական աջակցութիւնը, միւս կողմից էլ նպաստաւոր հող իր հայրենիքում միապետական նպատակների համար։ Համոզուած եմ, որ նա այդ կրկնակի ոյժը ունի, բայց չեմ կարողանում հասկանալ նրա ապագայ շարժումների ծրագիրը։ Եթէ նա երկու թեւով — Մակու-Ղարադաղ եւ Շահսուվաններ — շարժուէր դէպի Թաւրիզ ու այստեղ աղ ու հաց ընդունէր ռուսաց զօրքից եւ Թաւրիզը յայտարարէր ժամանակաւոր մայրաքաղաք,— այդ ես կը հասկանայի։ Բայց նա այդպէս չի անում ըստ երեւոյթին եւ իրան գցել է Թուրքմէնների մէջ։ չլինի՞ թէ ուզում է բռնել Թեհրանի ճանապարհը։ Բայց ո՞ր գծով եւ որո՞նց հետ։ Այդ գծի վրայ եւ Թեհրանում ո՞րքան ոյժ ունի մօտաւորապէս միապետութիւնը եւ ո՞րքան սահմանադրականները։ այդ ճանապարհի վրայ ռուսները ունի՞ն արդեօք որեւիցէ զինուորական ոյժ եւ եթէ չունին,— հապա ինչի՞ մէջ պիտի կայանայ նրանց աջակցութիւնը Մամետ-Ալիին։ Սրանք հետաքրքիր հարցեր են՝ շարժման ծրագիրը հասկանալու համար եւ եթէ կարող էք ուսումնասիրեցէք հնարաւորութեան չափով։ Բայց մեզ համար կայ աւելի հետաքրքիր ու կենսական հարց.— ի՞նչ դիրք պիտի բռնենք այդ շարժման հանդէպ, որ ապահովուի մեր ժողովրդի ինքնապաշտպանութիւնը։ Մենք գիտենք արդէն, որ Մամետ-Ալին հին թոյն ունի ամբարած հայերի դէմ եւ այժմ — եթէ նա յաղթի — այդ թոյնը պէտք է թափի հայերի գլխին։ Ուրեմն միակ փրկութիւնը կայանում է նրա մէջ, որ նա կրկին անգամ պարտուի։ Ու եթէ այս երկրի մէջ դեռ կան ընդդիմադիր տարրեր, պէտք է նպաստենք նրանց համախմբուելուն (ինչով կարող ենք), եւ միացնենք մեր բոլոր ոյժերը։ Իսկ եթէ չկան ընդդիմադիր ոյժեր, կամ եթէ կան՝ շատ թոյլ են, մեր կողմից խոհեմութիւն չի լինի, որ այս դէպքում ստանձնենք աւանդարդի[81ա] *անյոյս դեր եւ աւելի եւս կատղեցնենք Մամետ-Ալին։ Սրանք բոլորը, ի հարկէ, հարցեր են՝ դեռ չլուսաբանուած. Մամետ-Ալիի Պարսկաստան մտնելն էլ գուցէ դեռ եւս կասկածելի։ Բայց քանի որ կան հրապարակի վրայ այդ հարցերը, մենք պարտաւոր ենք դրանցով զբաղուել, ըստ կարելոյն ճըշտել, լուսաբանել եւ միւս կողմից էլ ցուցակագրել ու կարգի բերել մեր բոլոր մարտական ոյժերը, որ յանկարծակիի չգանք ու չկորցնենք գլուխնիս։ Իսկ ինչ վերաբերում է մի գործնական ծրագրի, դրա մասին առ այժմ ոչինչ չի կարելի անել, քանի որ չգիտենք ո՞րտեղ պիտի գործ ունենանք, ո՞րքան ոյժերի հետ եւ ո՞րքան են մեր սեփական ու դաշնակցական ոյժերը։ Այսքանը մեզ համար առ այժմ պարզ է, որ բոլոր հայկական շրջաններում շուտափոյթ կարգի պիտի բերենք մեր բովանդակ մարտական ոյժերը առ այժմ յանուն ինքնապաշտպանութեան։ Լաւ կը լինի, որ Ձեր ձեռք բերելիք տեղեկութիւնները հետզհետէ հաղորդէիք մեզ։*

Հորտանսին[82] *ջերմ բարեւներս։*

Համբոյրներով՝ ՆԻԿՈԼ

81.- Սարգիսը՝ հաւանաբար Օհանջանեան Սարգիսն է, ծանօթ Ֆարտատ ծածկանունով։ Յոնանը՝ Դաւթեան Յոնանը, որ նոյնպէս կը գտնուէր Թաւրիզ։

81ա.- Առաջապահի։

82.- Հորտանսը՝ Յոնան Դաւթեանի զուգընկերուհի կինն է։

Փաստ. 478-59

Դ 4.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

(Թ[ՈՒՐՔԻՈՅ] ՀԱՏ[ՈՒԱԾ])

Թաւրիզ, 14 Յուլիս 1911

Ընկերներ,

Հաստատում ենք մեր N° Ցուլիս 7ի թուագրեալը։

Դրութիւնը հետզհետէ լրջանում է. Թեհրանում եւ այստեղ զինուորական դրութիւն է հրատարակուած եւ շատ խստութիւններ են անում։ Թեհրանում Եփրեմին տրուած է արտակարգ իրաւունքներ։ Հեռագրները անցած դարձածի մասին առհասարակ արգիլուած է, չնայելով որ այդ ընդհանուր դարձնել չեն կարողանում։

Երէկ չէ առջի օրը կազմուել էր նոր մինիստրութիւն — Սիւպահտարի Ռաշտից դառնալուց յետ մի քանի օրեայ մինիստրութիւնից յետ — Սամսամ Սալթանէի պրիմիէրութեամբ[83]*. այդ նոյն բախտիար չէֆն է, որ* coup d'état-*ից*[84] *յետ իսֆահանում սահմանադրական դրօշ բարձրացրեց։ Դրան մէջ բերելը բախտիարներին սահմ. կառ[ավարութեան] հետ աւելի սերտ կապելն էր նպատակը։ Սամսամ Սալթանէի մինիստրութիւնը հազիւ մի օր կեանք ունեցաւ. երէկ երեկոյեան մասնաւոր կերպով Թեհրանից յայտնեցին մեզ, որ այդ էլ ընկաւ. անորոշ է թէ ովքեր են նորերը։ Այդ միօրեայ մինիստրութիւնը անշուշտ վատ նշան է եւ անհաւանական չէ որ այս նեղ վայրկեանին էլ թայֆայական հաշիւներ կան. ընկնող միօրեայ մինիստրութեան մէջ 4-5 հոգի դեմոկրատ կուսակցութեան պատկանողներ էին։*

Եփրեմը բանակ է կազմում, անշուշտ առաջը գնալու համար. այդ առթիւ Թեհրանի հեռագրահարցին պատասխանեցինք, որ չթուլացնելով ինքնապաշտպանութիւնը, որը ներկայ պարագաներում անհրաժեշտ է, խրախուսել հայերին այդ բանակը մտնելու եւ բոլոր հնարաւոր միջոցներով սահմանադրութեան պաշտպանութեան աշխատել։ Կազմուած է եւ միջկուսակցական ժողով, ուր հրահանգեցինք մտնել ակտիւ կերպով, միայն զգուշանալ մեծ խոստումներից եւ առհասարակ խոստանալ աւելի քիչ քան կը կատարենք յետոյ։

Աչքի առաջ ունենալով որ այստեղ լուրջ անակնկալների համար նոյնիսկ բաւարար կամ աւելի շուտ չափազանց քիչ բան ունինք, հեռագրեցինք Եփրեմին եւ Թեհրանի ընկերներին որ աշխատեն կառավարութեան հետ քայլեր անեն եւ մեզ զինական ու դրամական ոյժեր տրամադրելի անեն. մարդիկ բերել կը տանք։ Դրանով ի հարկէ մի ոյժ ստեղծած կը լինենք, որով կարելի է շատ դժուարութիւններ հարթել եւ պաշտպանել քաղաքն ու շրջակայքը փառաւորապէս, իսկ յետոյ էլ այդ ոյժը կարելի է ուղարկել Ղարադաղ, խաների հետ հարցը ընդմիշտ փակել ու այդ վայրենի շրջանը զինաթափ անել։ Կասկածում ենք որ այդ ծրագիրը յաջողի, բայց յաջողութեան դէպքում շատ փառաւոր գործ կը լինի։

Ղարադաղի դրութիւնը հետզհետէ աւելի բարդանում է. էլի երկու հայ գիւղերի տաւարը տարել են եւ 2 հայ կին փախցրել. սպառնում են եւ մնացած միւս գիւղերին։ Բախչոյին, Կարոյին — նախկին մեր զինուորներից, որ յետոյ հեռացան եւ Ցովհ. Տէր Պետրոսեանի հետ միացած չայկայ[?] կազմելով Ղարադաղում մութ գործերով էին զբաղուած,— իրենց մի թուրք ընկերոջ հետ Ղահրաման խանը բռնել է եւ զինաթափ արել. հաւանական է յանձնի ռուսաց կառավարութեան։ Իսկ Ցովհ. Տէր Պետրոսեանը — Սալմաստի, Նախիջեւանի եւ յետոյ էլ Ղարադաղի այդ տխրահռչակ հերոսը, ծլկուել եւ հասել է քաղաք։

Աչքի առաջ ունենալով որ ղարադաղցի տղաները մէկ-մէկ անցնում են ներս, այդ գործը աւելի կանոնաւորելու եւ ղարադաղցիների մէջ դրամական միջոցներ ստեղծելու համար, ու մի քանի ղեկավար ոյժեր էլ ներս ղրկելու, որոնց կարիքը ամենաշատ զգալին է, ուղարկում ենք այս երկու օրը Կ. Կոմիտէի անդամներից մէկին Կովկաս այդ գործը գլուխ բերելու։ Տեսնենք ի՞նչ յաջողութիւն կ'ունենանք։ Անշուշտ գնացող ընկերը կ'օգտուի առիթից եւ այնտեղի գործերի հետ հնարաւոր չափով ծանօթանալու։

Սալմաստը դեռ խաղաղ է, եւ այնտեղի դրութիւնը մեզ թւում է առհասարակ կապուած կը լինի տաճիկների բռնելիք դիրքի հետ։ Վան գրեցէք խնդրում ենք, որ Սալմաստը խառնուելու դէպքում, եթէ հնարաւորութիւն կ'ունենան հնարաւոր չափով ոյժ ուղարկել այնտեղ, եւ եթէ հնարաւոր է թող այժմուանից իսկ մտածեն այդ առթիւ։

Ընդհանրապէս դրութիւնը շատ անորոշ է, վտանգալից եւ լուրջ. ամէն կերպ աշխատելու է որ Մահմատ Ալի Միրզան[85] *յաջողութիւն չունենայ. ընդհանրապէս շատ վատ կը լինի, իսկ մասնաւորապէս հայերիս համար շատ անախորժ կացութիւն կը ստեղծուի։ Ընկերները երեւի այժմ կամաց-կամաց հաւաքուելիս կը լինեն. խնդրում ենք միասին խորհրդակցիլ եւ մեզ շուտով առնուազը, եւ այդ մինիմուն է, 10.000 ֆրանկ հասցրէք. ինչպէս տեսնում էք դրութիւնը շատ ծանր է, պահանջը մեծ. գուցէ դրանով մի փոքրիկ բան սկսինք, յետոյ կարելի կը լինի արդէն միջոցները ստեղծել եւ լայնացնել այստեղից։ Օրինակ Ղարադաղը այդ դրութեան չէր հասնիլ, եթէ միջոցներ ունենայինք. էլի կարելի է մի բան անել եթէ չտապենք։ Շատ չենք ծանրանում դրա կարեւորութեան վրայ, որովհետեւ խնդիրը շատ պարզ է, եւ հասկնալի ընդհանրապէս։ Շտապելը կարեւորը է։*

«Առաւօտի» դէմ այստեղ պարսիկ կառավարութեան շրջաններում դժգոհութիւն ծագեց, երբ թերթը ըստ իր սովորութեան՝ կարեւոր դէպքերում հանել թռուցիկ թերթ-յաւելուած — հանեց հեռագրների յաւելուած Մահմատ Ալու գալու հետ կապուած հարցերի առթիւ։ Պարսիկ թերթերը բան չեն գրում եւ այդ ապուշները կարծում են ծածկելով շատ մեծ բան են անում, որովհետեւ վառ երեւակայութիւն ունեցող ժողովրդի փսփսուկներով տարածուած լուրերը աւելի մեծանում, ահռելի չափեր են ստանում եւ աւելի բացասական ազդեցութիւն գործում, քան այդ կը լինէր ճիշտ, ազատ եւ կանոնաւոր լուրեր հաղորդելը։ Այդ պարզ ճշմարտութիւնը դրանց հասկացնել չի լինում։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊԱՏ[ԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Ց.Գ.- Քիչ առաջ «Առաւօտին» ազդարարեցին Մահմատ Ալի Միրզայի վերաբերմամբ լուրեր երբեք չգրել։

83.- Վարչապետութեամբ:

84.- Ֆրանսերէն՝ պետական հարուած:

85.- Մահմադ Ալի Միրզա – նոյն գահընկէց Շահն է. անունին աւելցուած «Միրզա» տիտղոսը նշելու համար է պարզապէս իր արքայական ծագումը:

Այս եւ յաջորդ երկու կոչերը, ուղղուած՝ հայ ժողովուրդին, դաշնակցական զինուորներուն, [պարսիկ] հայրենակիցներուն (վերջինս հայերէն եւ պարսկերէն) տպագիր յայտարարութիւններ են: Արխիւներուն մէջ պահուած են նաեւ անոնց ձեռագիր օրինակները, որոնք կը պատկանին Նիկոլ Աղբալեանի գրչին (Հանգոյց), իւրաքանչիւրը մէյ մէկ գոհար հոետորական արուեստի, հայրենասիրական ու գաղափարական վեհ զգացումներու: Աղբալեան 1909-1912 տարիներուն, իբրեւ տեսուչ կը պաշտօնավարէր Թեհրանի Հայկազեան վարժարանին մէջ, միաժամանակ գործօն մասնակցութիւն բերելով կուսակցական աշխատանքներուն:

*«Հայ ժողովուրդ»*ին ուղղուած կոչին տակ ստորագրած են. «Համաձայն եմ» Արշակունի, Ամատունի, Պանդուխտ, Հիլէ, Արմենակ եւ Արսէն:

«Դաշնակցական զինուորներին» ուղղուած կոչին ստորագրած են. «Համաձայն եմ» Արշակունի, Ամատունի, Արսէն, Պանդուխտ, Արմենակ եւ Գուրգէն:



Փաստ. 587-35

Դ 5.– ԹԵՀՐԱՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՉԸ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Պարսկաստանի սահմանադրութեան վտանգ է սպառնում: Իրանի նախկին «տէրը» զանազան մութ ուժերի աջակցութեամբ եւ աւելի մութ ամբոխների գլուխ անցած՝ մի քանի կողմից սպառնում է նոր կարգերին:

Մենք, որ այնքան թանկագին զոհեր ենք տուել ազատ կարգերի յաղթանակին, մենք որ եռանդով մասնակցել ենք Թաւրիզի պաշտպանութեան, Թեհրանի գրաւման եւ Ղարադաղի զսպումին՝ այսօր չենք կարող անտարբեր մնալ, երբ վտանգի մէջ է այն սահմանադրութիւնը, որի համար թափել ենք այնքան ճիգ ու ջանք եւ արիւն:

Մեզ համար դարձի ճանապարհ չկայ. մի անգամ սուր առնելով ազատ կարգերին ի նպաստ՝ այդ սուրը նորից պատեան պէտք է դնենք այն օրը միայն, երբ ազատ կարգերը արմատ կը բռնեն Իրանում եւ նրանց ոչ մի վտանգ չի սպառնայ:

Միայն ազատ կարգերի մէջ հայութիւնը հնարաւորութիւն կը ստանայ լայնօրէն զարգացնելու իր բոլոր կարողութիւնները, ամրացնելու իր քաղաքական եւ տնտեսական դիրքը Իրանում եւ նոյնիսկ դառնալու տիրող տարրին:

Բոլոր իրաւունքները կռուով են ձեռք բերւում: Մենք, որ այս երկրի հիւրերն ենք համարւում, արիւն թափելով այս երկրի համար՝ պէտք է դառնանք ազատ եւ հաւասար քաղաքացիներ՝ Ով կռւում է ազատութեան ի նպաստ՝ իրաւունք ունի նրա բարիքները վայելելու:

Կռուել Իրանի սահմանադրութեան համար նշանակում է կռուել մեր յառաջադիմութեան համար:

Որքան եւ անկատար լինի Իրանի սահմանադրութիւնը, բայց նա իր մէջ սաղմեր ունի զարգանալու, մինչդեռ բռնապետութիւնը, որ սպառնում է նորից հաստատուել երկրում, ամուլ է եւ դատապարտուած մահուան:

Մենք, որ կենդանի ժողովուրդ ենք, կարող ենք եւ պէտք է նպաստենք միայն այն ամէնին, ինչ որ կենսունակ է եւ ապրուն:

Մենք պարտաւոր ենք նպաստելու այն ժողովուրդի ազատագրութեան, որի հետ ապրել ենք դարերով. նրա ազատութեան հետ է կապուած մեր բարեկեցութիւնը, նրա լուսաւորութեան հետ՝ մեր շրջապատի բարձրացումը եւ մեր ու նրանց փոխադարձ յարաբերութիւնների մարդկայնացումն ու ազնուացումը:

Կարգի եւ օրէնքի թագաւորութեան մէջ ամէն անհատ եւ խմբակցութիւն ապրում է ապահով եւ հանգիստ. կարգն ու օրէնքն անհրաժեշտ են անկարգ եւ անիրաւ Արեւելքին, ուր դարերով տառապում է ցրուած հայութիւնը:

Կռուելով սահմանադրութեան ի նպաստ մենք աջակցում ենք այդ բարձր արժէքների իրականացման Իրանի հողի վրայ, որ հեծում է դարաւոր բռնութեան տակ:

Ուրեմն զէնք առ, ժողովուրդ Հայոց, պաշտպանելու Իրանի նորածիլ սահմանադրութիւնը: Այսօր մի վտիտ եւ երերուն ծիլ է նա, վաղը հոգատար ձեռքերի տակ աճելով դառնալու է մի հաստատուն ծառ, որի հովանու տակ ազգերն ապրելու են առանց կրօնի խտրութեան՝ մտերմօրէն եւ խաղաղ՝ պատրաստելով լուսաւոր ապագայ գալոց սերունդների համար...

Կեցցէ, ուրեմն, ազգերի համերաշխութիւնը.
Կորչի բռնապետութիւնը.
Կեցցէ Իրանի սահմանադրութիւնը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԵՀՐԱՆԻ ԿՈՄԻՏԷ

1911 Յուլիս 26

Փաստ. 587-37

Դ 6.– ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՁԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Ընկերներ

Դուք կոչուած էք մի վճռական դեր խաղալու Իրանի պատմութեան մէջ. ձեզ վիճակուում է պաշտպանել սահմանադրութիւնը բռնապետութեան վերջին փորձի դէմ:

Դաշնակցութիւնը, որ հրաւիրում է ձեզ ընդդէմ բռնութեան՝ նայում է ձեզ ակնդէտ. ձեզ է նայում նաեւ ամբողջ աշխարհը:

Արիացէք եւ հաւատարիմ եղէք ձեր կոչման:

Ձեզ քաջալեր թող լինի ձեր նահատակ նախորդների՝ Քրիստափորների, Սերոբների, Չաուշների եւ Մարտիրոսների անմահ յիշատակը:

Արժանի եղէք նրանց յետնորդը կոչուելու եւ նրանց շարքը դասուելու:

Դուք պատկանում էք դաշնակցական այն քաջերի շարքին, որոնք զէնքով հարթում են ազատութեան, արդարութեան եւ եղբայրութեան ուղին եւ հասնում են ամէն տեղ, ուր բռնութիւնը նախճիր է գործում:

Հաւատարիմ եղէք Դաշնակցութեան՝ նրա գաղափարներին եւ աւանդներին. դրանով միայն դուք բարձր եւ մաքուր կը մնաք եւ ձեր անունը անմոռաց եւ անբիծ:

Դուք ազատութեան եւ արդարութեան ասպետներ էք. չաղարտէք Դաշնակցութեան դրօշը ընչաքաղցութեան եւ վեհերոտութեան արատով:

Անվեհեր եւ անշահախնդիր – այս է լինելու ձեր նշանաբանը:

Խմորեցէք ձեր շրջապատը դաշնակցական գաղափարներով. ձեր մաքուր բարքով եւ անվեհեր արիութեամբ օրինակ եղէք ձեր զինակիցներին:

Դաշնակցութեան զինուորին միշտ յարգել է թշնամին. յաղթեցէք ձեր հակառակորդին ոչ միայն զէնքով, այլ նաեւ ձեր անձին հմայքով:

Թող աշխարհն իմանայ, որ դաշնակցական զինուորը կռուում է առիւծի նման եւ անշահախնդիր է ինչպէս մի ասպետ:

Ընկերներ, երկու թանգ պատիւ ձեր ձեռքն է այսօր – Դաշնակցութեան եւ հայութեան պատիւը:

Երկուսն էլ պահպանեցէք սրբութեամբ եւ պաշտպանեցէք ձեր կեանքով:

Վիատութիւնը հեռու ձեզանից, մաքուրն ու արին միշտ յաղթանակում են:

Կեցցեն դաշնակցական զինուորները.

Կեցցէ Իրանի սահմանադրութիւնը.

Կեցցէ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԹԵՀԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԷ

1911 Օգոստոս, Թեհրան

Փաստ. 588-95ա

Դ 7.– ԹԵՀԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՉԸ ՊԱՐՍԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
(ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՊԱՐՍԿԵՐԷՆ)

Հայրենակիցներ

Մենք ապրում ենք պատմական օրեր. Իրանի սահմանադրութեանը վտանգ է սպառնում:

Նախկին շահը գալիս է տապալելու որդուն եւ բռնանալու մեզ վրայ:

Մի իրաւական կնճիռ է սա, որ այսօր պէտք է սրով վճռուի:

Ո՞ւմ է պատկանում Իրանը. շահի՞ն թէ ժողովուրդին – ահա կնճիռը:

Շահերը միշտ կարծել են թէ Իրանն իրենց տունն է եւ երկիրը կառավարել են իրենց տան նման:

Եւ մենք տեսնում ենք այդ կործանիչ վարչութեան տխուր պատկերը:

Ո՞ւր են մեր գիտութիւնն ու արուեստը, ո՞ւր է մեր արդիւնաբերութիւնն ու ծաղկած առեւտուրը, ո՞ւր են մեր երկաթուղիները, մեքենաները, ո՞ւր է բարեկեցիկ, լուսամիտ եւ իրաւատէր իրանցին:

Երկիրը խարխափում է անթափանց խաւարի մէջ.– բռնապետները միշտ փախել են լոյսից՝ իրենց մութ գործերը ծածկելու համար:

Երկիրը գալարւում է աղքատութեան ճիրաններում եւ հեծում է պետական պարտքի տակ.– բռնապետները սիրել են աւար եւ կողոպուտ եւ միլիոններ են վատնել շռայլութեան մէջ:

Ժողովուրդը տանջւում է մեծ ու փոքր բռնաւորների ձեռքին՝ կիսակուշտ եւ մերկանդամ, հոգով ստրկացած ու մտքով խաւար:

Այսպէս են շահերը «տուն» կառավարել...

Ամէնուրեք տնտեսական եւ մտաւոր անապատ ու քայքայում. ամէնուրեք կորովազուրկ, իրաւազուրկ եւ ընչազուրկ ամբոխներ:

Սահմանադրութիւնը եկաւ ասելու, որ ժողովուրդն է այս երկրի տէրը, որ Իրանը պատկանում է իրանցուն եւ շահն առաջինն է հաւասարներից:

Շահերն իրենց կամքն օրէնքի տեղ էին դրել. սահմանադրութիւնն եկաւ բոլոր կամքերը օրէնքի ենթարկելու:

Շահերն ինքնակամ՝ վարել էին այս երկրի ներքին եւ արտաքին գործերն առանց պարտքի եւ պատասխանատուութեան – սահմանադրութիւնն եկաւ ամէն վարիչի պատասխանատուութեան ենթարկելու:

Շահերն ինքնիշխան՝ ծախսում էին այս երկրի եկամուտներն առանց հաշուի եւ հսկողութեան – սահմանադրութիւնն եկաւ ամէն ելք ու մուտք հաշուի տակ առնելու:

Շահերը ցանել են բռնութիւն, կամայականութիւն, խաւար եւ աղքատութիւն – սահմանադրութիւնը բերում է ազատութիւն, օրէնք, լոյս եւ բարեկեցութիւն:

Եւ այսօր երկու տէր մրցում են Իրանի համար. Իրանի շահը եւ Իրանի ժողովուրդը:

Ու քանի՞ զլուխ ունի շահը, որ յաղթէ:

Հայրենակիցներ, իրաւ է. այս երեք տարուայ ընթացքում մեր վարիչներն եղան ապիկար մարդիկ, որոնք իրենց անձնական շահով տարուեցին եւ աւելի իրար դաւեցին, քան հոգացին մեր մասին – բայց այդ բոլոր մարդիկ դուրս էին եկած շահերի ապականուած մթնոլորտից եւ նոր պայմաններում հին զէնքերով էին գործ տեսնում:

Սակայն այսօր դու ես իրաւատէրը, ժողովուրդ պարսիկ, դու միշտ կարող ես հաւատարիմ ներկա[յացու]ցիչներ ունենալ եւ լաւ վարիչներ կանչել պաշտօնի – մինչդեռ բռնապետը քեզ չի ճանաչում. նրա աչքում ժողովուրդը ոչինչ է, իսկ ինքն ամէն ինչ:

Ցոյց տանք, ուրեմն, որ ժողովուրդն ամէն բան է, շահերը՝ ոչինչ:

Ամբողջ աշխարհը քեզ մեռած է կարծում: Երկրագնդի այս յետամնաց անկիւնում, որ Իրան է կոչւում, ընկած ես դու դարերով անկենդան եւ շահերի ու նրանց արբանեակների յանդուգն ոտքը ընկճել է քո պատիւն ու իրաւունքը եւ դու տարել ես անտրտունջ:

Քեզ է նայում քաղաքակիրթ մարդկութիւնը. ցոյց տուր, որ Իրանը մեռած չէ տակաւին, որ թէեւ թմրած՝ բայց նա դեռ ուժեր ունի իր մէջ, որ կարող են բարիք բերել թէ՛ իրան, թէ՛ մարդկութեան: Այն երկիրը, որ աշխարհին սովորեցրեց բարին չարից տարբերել՝ չի կարող չարին ծառայել եւ մահին գերի դառնալ:

Զարթի՛ր, ուրեմն, դարաւոր քնից ժողովուրդ պարսիկ, զէնք առ տիրանալու քո իրաւունքին եւ պատուհասելու դաւաճան բռնապետին, որ օտարի ուժին կոթնած՝ գալիս է բռնութեամբ գահիդ տիրելու:

Առիւծն հարաւից եւ արծիւը հիւսիսից[86] ակնդէտ սպասում են քո վերջին շունչին, որ յօշոտեն անպաշտպան դիակդ:

Ոտքի կանգնիր հինաւուրց հսկաներիդ ոստիւնով եւ ցոյց տուր աշխարհին թէ դեռ կենդանի է Իրանը եւ ապրում է իրանցին:

Կեցցէ՜ ազգերի համերաշխութիւնը:
Կորչի՜ բռնապետութիւնը:
Կեցցէ՜ Իրանի սահմանադրութիւնը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԵՀՐԱՆԻ ԿՈՄԻՏԷ

[1911]

86.- Հարաւի առիւծը՝ Մեծն Բրիտանիան է. հիւսիսի արծիւը՝ Ռուսիան:

Փաստ. 588-95

Դ 8.– ԹԵՀՐԱՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՉԸ ՊԱՐՍԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

بعموم ملت ایـــران مجانب است

هموطنان! ما ایرانیان روزهای تاریخی طی میکنیم. مشروطیت ایران در معرض خطر است: شاه مخلوع درکار آمدن وبرانداختن اولاد خود ودر خیال جور وستم ماست: پیش آمد امروزه مهمی است حقوق که جز باشمشیر یا چیز دیگر نتوان حل نمود: مهم حقوق این است ایران مال ایرانیان است یا مال شاه مخلوع؟

سلاطین ایران همیشه تصور کرده‌اند که ایران خانه ملکی متصرفی خودشان است وبدین جهت مملکت واهل خانه خود اداره کرده‌اند وما امروزه اثرات وخیمه ایران ویران کن آن وضع اداره کردن را که با یك منظره حزن انگیز مجسم است مشاهده مینمائیم: کو مدارس ومکاتیب؟ کجا است دارالفنون و دارالعلم های ما؟ کو علوم وصنایع ما؟ کجا است محصول کارخانجات ما؟ کوطرق آهنین وماشینهای ما؟ کجاست ایرانی راحت ونعمت دیده منوری که دارای حقوق بشری بوده باشد: تمام مملکت در تاریکی ضخیم کور کورانه حرکت مینماید ـ سلاطین مستبد برای اینکه اعمال شنیعه خود را پنهان نمایند همواره از علم و روشنائی فراری بودند: مملکت ایران در پنجه های آهنین. فقر وفلاکت پیچ میخورد ودر زیر بارگران استقراض دولتی نالان است: سلاطین و مستبدین همواره مشغول غارت وچپاول بوده ملیونها پول ملت را در عیش و عشرت صرف کرده اند: ملت ایران در چنگال مستبدین خورد و کلان خونخوار اسیر و در فشار است ـ افراد ملت نیمه سیر و برهنه قواء روحیه آنها در اسارت و قواء فکری او در ظلمت مانده:

سلاطین ایران تا بحال مملکت را باین طریق اداره کرده اند ـ کلیه نقاط مملکت از حیث آبادی وتمدن یك دشت ویرانیرا بنظر میاورد ـ همه جا جماعتهای بی حس بی حقوق بی بضاعت سر گردان ولا تکلیف مانده اند.

مشروطیت آمد با حکم محکم خود بگوید که صاحب حقیقی این مملکت خود ملت است یعنی ایران مال ایرانیان است و شاه هم از حیث حقوق با یك فرد ملت ایران مساوی است:

سلاطین ایران اراده شخصی خود را بجای قانون بلکه وحی منزل میدانسته مشروطیت آمد تمام اراده های شخصی را در تحت قانون در آورد.

شاهنشاهان ایران کلیه امور داخلی وخارجی مملکت را مطابق سلیقه ومیل خود وبدون اینکه مسئولیت یا سیاستی درکار باشد اداره میکردند ـ مشروطیت آمد کلیه عمال وحکام ووزرا وغیره را در تحت مسئولیت بیاورد:

سلاطین ایران تمام عایدات و منابع ثروت مملکت را بدون آنکه بکسی حساب دهند و کسی نظارت داشته باشد می فروختند ومی بخشیدند مشروطیت آمد تمام واردات وصادرات مملکت را در تحت حساب ومیزان صحیح در آورد:

شاهان ایران در کلیه نقاط ایران تخم ظلم ـ ستم ـ اسارت ـ تاریکی ـ جهالت فقر و ظلم افشانده اند مشروطیت با ورود خود آزادی ـ قانون ـ عدالت ـ علم روشنائی ـ رواحق میاورد:

وامروز دو مالك برای تصاحب وتصرف ایران با هم میجنگند ـ یکی محمد علی شاه مخلوع دیگری ملت ایران: مگر محمد علی مخلوع دارای چندین سر میباشد که بتواند تاج شود؟

هموطنان! باید فراموش کنیم که در این مدت زمان مشروطیت رؤسا واولیاء امور ما اشخاص مغرض سست عنصری بوده وبجای آنکه برای آسایش وامنیت ما کار کنند فقط برای منافع شخصی وغرض رانی خود کار میکرده واکثر اوقات باسباب چینی وبتهام یکدیگر میپرداخته اند ـ مسلم است که این اولیای امور ما از تربیت یافتگان هوای کثیف دربارشاهی بودند و در اوضاع جدید مشروطیت بآزربیت وتمدن دورهٔ استبدادی امور مملکت تورا اداره مینمودند

ای ملت ایران! ای مالك وصاحب حقیقی این قطعه زمین! از حقوق مسلمه تواست که نمایندگان امین داشته و اداره کنندگان امین بی غرض فعال برای امور مملکت دعوت نمائی ـ لیکن سلطان مستبد تورا و حقوق تورا نشناخته وملت در نظر او هیچ قدر و منزلتی ندارد تمام هستی ملت را ازوجود خود میداند پس بر ماست که یك جنبش دلیرانه نشان دهیم هرچه هستیم در هستی ملت است وسلاطین هیچ هستند:

ای ملت ایران! تمام دنیا تورا بی حس ومرده تصور مینماید ـ دراین قطعه کره زمین که ایرانش خوانند تو از سالیان دراز بدون ملائم زندگانی افتاده ولکه های متعدد دربار ایران شرف و حقوق تو را پایمال نموده و تو با کمال صبوری و ردیاری متحمل شدهٔ: دنیای متمدن نظرش بتو دوخته ـ هان بیدار شو و بفهما که هنوز ایران زنده و خون ایرانیان بکلی فاسد نشده بدنیای متمدن نشان ده که مملکت ایران دارای قوائی میباشد که هرگاه بکار برده شود هم برای خود نافع خواهد بود هم بری انسانیت: مملکتی که به تمام دنیا اصول نیك وبد سرشت وزیبا آموخت خود چگونه میتواند خدمت بظالم نماید ومطیع مرك شود؟

پس ای ملت ایران! از خواب گران قرون متمادیه بیدار شو! بردار ششیرت و حقوق مسلمه بشری واجتماعی خود را حفظ نما وشاه مخلوع را که بقوه اجنبی اعتماد و تکیه کرده و در فکر آمدن و بخیال تصاحب تخت وتاج تو می باشد قلع و قمعش نما:

عقاب از شمال وشیر از جنوب باچشمهای تیز خود درکمین نشسته منتظر نفس واپسین تو می باشند که جسد بیجان و بی حافظ تو را قطعه قطعه نموده ببلعند:

هان حرکت نما! و بیك جنبش دلیرانه شجاعان و شیران و پسران غیورت را مطلع نما وبدنیا نشان ده که هنوز ایران وجود دارد و ایرانیان زنده هستند؟

پاینده باد اخلاق ملل نیست باد استبداد پاینده باد مشروطیت ایران

کمیته علی فرقه داشناکسوتیون

Փաստ. 478-64

Դ 9.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

(ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 4 Օգոստոս 1911

Ընկերներ,

Հաստատում ենք մեր N° 53 *նամակը։*

Թեհրանից հեռագիր կար Սալար-ուդ-Դովլէի[77] *կողմից Համատանի վերջնական գրաւման եւ Մահմադ Ալու կողմից Սեմնանի գրաւման մասին։*

Մահմադ Ալին դեռ միշտ Սարի (Մեշէդիռադի մօտ) է։ 2 օր առաջ Մահմադ Ալուց մի հեռագիր ստանալով, Սամադ խան Շուջա-էդ-Դովլան, որը սահմ. կառ[ավարութեան] կողմից Սարայ էր գնացել Շահսէվաններին պատժելու, յայտարարած է իրեն բացարձակ կերպով Մահմադ Ալու կողմնակից եւ նրա կողմից նշանակուած է Ատրպատականի ընդհանուր նահանգապետ։ Այսպիսով Ատրպատականում էքս-Շահը ունենում է Շուջա-էդ Դովլային իր ձիաւորներով, Շահսէվաններին, քըրդերի մի մասին, Կազի Ֆաթթուհին, Ղարադաղի եւ Մակուայ խաներին։ Առայժմ պարզ չէ թէ սրանք ի՞նչ ուղղութեամբ կը գործեն, բայց ամենայն հաւանականութեամբ սարդարը կը զբաղեցնի Խոյն ու Սալմաստը, Շուջա-էդ-Դովլան Շահսէվանների հետ Արտաբիլն ու Թաւրիզը, իսկ Ղարադաղի խաները՝ Ղարադաղը։ Շուջա-էդ-Դովլայի դիրքը մեզ համար շատ պարզ եւ հասկանալի էր հէնց այն ժամանակ էլ երբ Սալար-ուդ-Դովլան Սօուլ-Բուլաղ քրդերի մէջ էր, բայց ոչ մի կերպ հնարաւոր չեղաւ ընկեր-թուրքերին հաւատացնել այդ, ու նրան նշանակեցին «պատժող» իրեն նմաններին ու այսօր արդէն մեր գուշակութիւնները դժբախտաբար իրականանում են։ Անչուշտ մարգարէ պէտք չէր լինել գուշակելու համար, ամէն ինչ պարզ էր — ամէն կողմից վստահելի աղբիւրներից մեզ ամէն բան յայտնում էին։

Մի քանի օր առաջ Թեհրանից Եփրեմը հեռագրով յայտնում էր որ «Թող Նիկոլը[80] *պատրաստէ, հարկաւոր դրամը կը փոխադրեմ»։ Անչուշտ միտքը հասկանալի էր։ Նիկոլի հետ խորհրդակցելով գտանք որ հնարաւոր է մի բան անել, եթէ դրամ, զէնք եւ մթերք տալ կարողանայ Թեհրանը։ Բայց որովհետեւ պարզ չէր թէ ի՞նչ քանակութեամբ տրամադրել կարող են եւ կառավարութիւնը այդ տրամադրելի անելով ի՞նչ ուղղութեամբ եւ ծրագրով գործել մտածում է, մենք էլ անչուշտ մեր պայմանները ունենք։ հեռագրեցինք այդ բոլորի մասին իմանալու։ Եփրեմը պատասխանեց՝ նամակի սպասէք. դեռ մի քանի օր կը քաշի ստանալը. ձեզ ժամանակին ամէն բան կը յայտնենք։*

Եթէ մեր ուզած քանակութեամբ մթերք եւ դրամ տրամադրելի անեն, մենք մտածում ենք կազմել մի խառը բանակ եւ Ատրպատականի զանազան վտանգաւոր կէտերում հարկաւոր չափով ոյժ կենտրոնացնել, ունենալ եւ մի յարմար վայրում պահեստի ոյժ, պէտք եղած ժամանակ զանազան կողմեր օգնութիւն հասցնելու։ Այս՝ Ատրպատականի վերաբերմամբ. կարող է պատահել որ կարիք զգացուի եւ շատ աւելի հեռուն գնալ, անշուշտ այդ էլ ապագայում, ըստ պայմանների դասաւորութիւն կ՝անենք եթէ հնարաւոր է։ Դուք յամենայն դէպս նկատի ունեցէք մի քանի ղեկավար ոյժեր, որ եթէ նամակը գալուց յետ, կարողանանք յարմարուել, հեռագրենք, անմիջապէս ճամբայ ելնեն։

Մեզ շատ հետաքրքիր էր եւ կարեւոր, իմանալ թէ տաճիկ կառավարութիւնը[87] *այժմ ի՞նչ է մտածում եւ ի՞նչ դիրք կը բռնէ առ հասարակ։*

Թեհրանում տեղական ինքնապաշտպանութեան մասին մտածելուց յետ, հնարաւոր եղել է եւ Քեռուն ճամբել 25 հոգով ընդհանուր բանակը. հետզհետէ կը կազմուին եւ նոր հայ խմբեր գնալու համար։

Անցեալ նամակով գրել ենք. յոյս ունենք որ մեզ մեր ուզած առնուազը 10.000 *ֆր. կ՝ուղարկէք. ամենաանհրաժեշտ ծախքերի համար դրամ պակասում է։ Զկարծէք որ այսպէս գրելով ուզում ենք ձեզնից դրամը ստանալ եւ կամ այդ մի ձեւ է անպայման դրամ կորզելու. մենք խօսում ենք պարզ եւ առանց կողմնակի ճանապարհների։ Դուք երեւի չէք հաւատալ որ ասենք թէ* 5-10 *թումանի կարիքը ունենք. անչուշտ շատ հեշտ է մի քանի* 5-10 *թումանները գտնելը, բայց երբ դրանք շատ են եւ շատ յաճախ, դեռ չենք խօսում հարիւրների պէտքի մասին — դժուարանում է, մանաւանդ որ պարտքերը հարկաւոր չափով ունենք։ Այո, մեր դրութիւնը այդպէս է։ Շրջաններից՝ մանաւանդ այժմ, հնարաւոր չէ ստանալ, ամէն մի կազմը ունի իր հազարաւոր կարիքները լրացնելու։*

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Յ.Գ.- Յոյս ունենք որ նկատի ունենալով մեր պահանջները, ամէն հնարաւորութիւն կը տրուի մեր պատգամաւորին Ընդհանուր Ժողովին մասնակցելու համար։

Կովկասից ռուսաց հիւպատոսին հեռագրել են, որ Նիկոլն ու Տէր Թովմասեանը եկել են Պարսկաստան, ժողով անում եւ ծրագիրներ են շինում։ Նիկոլը այժմ ապրում է համարեա ծածկուած։

87.- Տաճիկ կառավարութիւնը՝ Օսմանեան Թուրքիան է։ Նշենք որ արեւելահայերուն համար տաճիկը թուրքն էր, Տաճկաստանը՝ Թուրքիան։ Թուրք կոչումը վերապահուած էր թրքախօս մահմեդականներուն, թէ՛ Պարսկաստանի եւ թէ Կովկասի։

Փաստ. 478-68

Դ 10.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

(ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 15 Օգոստոս 1911

Ընկերներ,

Ստացուեց ձեր N° 318 *նամակը։*

Անակնկալ կերպով ընկ. Պիոնեանը եկաւ այստեղ։ Պոլիս չգնալու պատճառը եղել է այն, որ իմացել է թէ ժողովը[78] *պիտի ուշանայ, իսկ ինքը հնարաւորութիւն չի ունենալ մնալու։ Դրա համար, մենք անմիջապէս հեռագրեցինք Վիեննա ընկ. Պանիրեանին, որ Պոլսով գայ. այնպէս որ նա կը մասնակցի ժողովին մեր կողմից, իսկ ձեզ առանձին հեռագրելու պէտք չզգացինք, որովհետեւ ըստ ընկ. Պիոնեանի ասութեան՝ ձեզ իր չգալու մասին գրել է Կիրասոնից. ուրեմն Հայրապետի գալով, ձեզ այդ խնդիրը պարզ կը լինէր։*

Նոր, հեռագրական տեղեկութիւններ չկան. Թեհրանի հետ հեռագրական լարը վաղուց կտրուել է։ Գործում է միայն հնդկեւրոպական գծի մի թելը. 2-ը նրանից է կտրուած, մէկը պարսկական. բացի այդ լուրեր տալը արգիլուած է կրկնակի պատճառով. մէկ որ իբր ժողովրդին չյուսահատեցնեն, երկրորդ՝ գաղտնի գործութեանց եւ կարգադրութեանց համար ոչ մի կողմ չհաղորդուի։

Հաջի Սամադ խան Շուջա-էդ-Դովլան միշտ սպառնական է ու չեհսէվանների հետ. վերջերս Թաւրիզից գնացած մի փոքրիկ խումբ կարողացել է նրանց քշել Գէովգեանից եւ Նուխարչանից[?], երկու կողմից սպանուած են 16 *հոգի։ Այդ երկու կէտերը այնքան կարեւոր վայրեր չէին։ Արդաբիլը վերցուած է Մահմադ Ալու մօտիկ անձնաւորութիւն Մուշալլայից. իրեն յայտարարել է նահանգապետ, ոստիկաններին զինաթափ արել ու քաղաքի պաշտպանութիւնը յանձնել է պարսիկ* 50 *կոզակների։ Պարսիկ կոզակները ամէն տեղ առհասարակ Մահմադ Ալու կողմնակից են եւ շարժւում են ռուսաց թելադրութեամբ եւ կարգադրութեամբ։ Արտաբիլի վերցնելու լուրը ռուսական աղբիւրներից իմացանք, բայց խորհում ենք որ ճիշտ պիտի լինի։*

Մազանդարանից նամակ ունէինք. Մահմադ Ալին դրամ չունի. գրաւած վայրերից հարկերն է հաւաքում։ Նրա առաջապահ եւ վերջապահ մասը կազմում են թիւրքմէնները, որոնք միայն թալանի համար են եկել ու հետզհետէ լքելով օրական 10-15, *երբեմն աւելի հեռանում են. միւս մասն էլ զանազան ցեղեր են, կռուի անընդունակ, բացի Ահմէդ-Մուքարրէմ Լարիջացնցու մարդիկ, որոնք անպայման լաւ կռուողներ են։ Աւելի լուրջ վտանգ սպասել կարելի է Սալար-ուդ-Դովլէից, որը ոյժ ունի եւ խելօք մարդ է ու գործունեայ։*

Թեհրանում զինուորական ամբողջ գործը յանձնուած է Եփրեմին եւ ամէն ինչ նա է կարգադրում. սխալ չի լինի եթէ ասենք, որ Եփրեմը եթէ գործից քաշուի, գործը տանուլ կը տրուի. ամէնքը, ամէնքը նրան են նայում, ու շատ շատ անգամներ մինիստրների կամ մէջլիսի կարգադրութեան չեն լսում, իսկ երբ Եփրեմն է, անպայման կատարւում է. Բախտիարները իրենց բոլոր ցեղերով, գլխաւորաբար Սարդար-Ասադի եւ Սարդար-Բըհատուրի հետ կանչուածները, լսում են եւ գործում միայն Եփրեմով։ Վերջինս էլ գործում է միայն բախտիարների ու մերոնց յոյսով ու նրանց վրայ յենուած։ Ըստ իրա գրութեան, որոշ յայտ ծրագիր չինել է Սալար-ուդ-Դովլէին ծուղակի մէջ գցելու եւ ջարդելու համար, Մահմադ Ալու բանակի յետեւն անցնելու եւ, բացի այդ, այն կողմերը Շուջա-էդ-Դովլայի ու չահսէվանների հետ հաշիւը փակելու։ Շարունակ բանակներ գնում են ու նորերն էլ կազմւում։

Իսկ ինչ վերաբերում է ձեր եւ Թաղի-Զադէի մէջ եղած խօսակցութեան եւ հանգած եզրակացութեան, նախքան այդ մենք գտել էինք այդ միակ հնարաւոր ճամբան ու ինչպէս էլ ձեզ գրել ենք ժամանակին, այդ ուղղութեամբ Թեհրանում Եփրեմի միջոցով քայլեր արել ենք։ Թեհրանում յաջողուել է, բայց դեռ այստեղի նկատմամբ՝ ոչ։ Իսկ Ղարադաղինը, ինչպէս դուք գըրում էք, չի յաջողի. դրա միակ ելքը այն է որ արել ենք, եւ ձեզ էլ գրեցինք։

Այստեղ Թաղի-Զադէի ընկերները միշտ հեռու են պահում. անհասկանալի է այդ մեզ համար. շատ երկար ջանքերից յետ, մի քանի օր առաջ առաջին տեսակցութիւնը ունեցանք, որի ժամանակ մենք հարց բարձրացրինք մնայուն խառը կոմիտէ ունենալու անհրաժեշտութեան մասին, որը արդէն ամբողջ գործը ձեռք առնելով, կը կարգադրէ ամէն ինչ։ Համաձայնեցին. ժամադիր եղանք յաջորդ ժողովի համար. որոշեալ ժամին (երէկ ժամը 10-*ին առ[աւօտ]) *գնացինք եւ ի մեծ զարմանս ծառան յայտնեց՝ քնած են։ Եւ այդ գուցէ որոշ չափով հասկանալի է, դեռ այստեղ անհրաժեշտ կարիքը չեն զգում. սրանք այսպէս են. շատ նեղ պարագային գալիս են ու այդ ժամանակ մինչեւ իսկ ոտներդ լիզում։ Ճիշտ այնպէս, ինչպէս որ Թեհրանումն է, նոյն այդ դեմոկրատները, Թեհրանում Եփրեմի դէմ հալածանք էին*

սկսել, նոյն հէնց ինքը Թաղի-Զադէն, բայց այժմ ուղղակի ոտներն են ընկել, որովհետեւ հասկանում են շատ լաւ, որ առանց Եփրեմի եւ իր ընկերների գործ չինել չեն կարող, որ իրենք ներկայ պարագաներում բացարձակ անպէտք են։ Այո՛, դրանք մեծ յոյսեր են դնում մեզ վրայ, եւ իրենց մէջ մտածում են որ կը մօտենանք երբ անհրաժեշտ է։ Դաշնակցութիւնը արիուն է եւ կը պատրաստուի, եւ տրամաբանում են այսպէս։ եթէ գործը լաւ հետեւանք ստացաւ, արդէն կ'ասենք՝ ամէն ինչ մենք ենք արել, Դաշնակցութիւնը չխառնուեց։ իսկ եթէ չէ, վատ կերպարանք ստացաւ, Դաշնակցութիւնը միշտ կայ ու կայ, հարկաւոր է միայն դիմել եւ խնդրել, նոյնիսկ անհրաժեշտ պարագային ոտները լիզել ու ամէն ինչ կ'արուի։ Ահա դրանց տրամաբանութիւնը։ Անշուշտ սխալւում են, բայց այդպէս է։ անշուշտ դուք շատ լաւ հասկանում էք այդտեղ։ Նրանք մեզ շատ լաւ գիտեն եւ ճանաչում են մեր պայմանները։ գիտեն որ անհնար է մեզ համար շատ հասկանալի պատճառներով ձեռներս ծալած նստիլ։ Նոյնն է Թաղի-Զադէն եւ իր այստեղի ընկերները։ այս բոլորը այսպէս լինելով, էլի միւսների մէջ սրանք են քիչ-շատ տանելին, ինչպէս որ դուք այդտեղ քիչ ու շատ տանելի համարել էք իթթիհատին։

Դեմոկրատների (բացի Թաղի-Զադէի ընկերների) միջոցով առայժմ մեր ծրագրները իրագործել չենք կարող։ գուցէ յաջողուի Թեհրանում կառավարութեան հետ, Եփրեմի ձեռամբ։ Նորէն երէկ այդ առթիւ հեռագրեցինք Եփրեմին։ հետեւանքների մասին կը գրենք։

Այժմ դառնանք մեր ուզած 10.000 ֆրանքին։ Այդ հարցը չնայելով փակուած էինք համարում եւ չպիտի գրէինք էլ, բայց ձեր այդ առթիւ գրածը այնքան լաւ տպաւորութիւն չթողեց մեր վրայ։ Մենք գրում ենք ձեզ եւ պարզում մեր դրութիւնը, ու հարց դնում որ եթէ հնարաւոր է minimum չափով այդքան փոխադրեցէք, բացարձակ կարիքը ունենք, իսկ դուք Թաղի-Զադէի հետ խօսելով ասում էք՝ այդ հարցը փակուած կարելի է համարել։ Այդ ի՞նչ վերաբերմունք է ընկերներ, մենք չենք հասկանում։ տարբեր հարց կը լինէր եթէ ասէիք՝ չկայ, չունենք, հնարաւոր չէ։ լաւ, այդ ժամանակ կը լռէինք, որովհետեւ չեղած տեղը ի՞նչ պիտի անել։ բայց փոխանակ դրան, մեզ ասում էք Թաղի-Զադէի պատմութիւններից։ Միթէ՞ դուք կարծում էիք որ եթէ այդ դրամը մեզ փոխադրէիք ու մենք յետոյ հնարաւորութիւն ունենայինք ձեզ չէինք վերադարձնել եւ կամ եթէ կարելի լինէր աւելին էլ չէինք տալ։ Մենք երբեք այդ տեսակի հաշիւներ նկատի չենք ունեցել եւ չենք էլ ունենալ։ Ոչինչ, այս անգամ էլ եոլա կը գնանք, ոտքներս վերմակի համեմատ կը պարզենք։ Մենք դրամական երբեք լաւ վիճակի մէջ չենք եղել, սովորել ենք։ այս անգամ էլ կը տանենք ինչ ձեւով որ կարող ենք եւ սրանով այս հարցը փակում ենք։

Թիֆլիսից Արեւելեան Բիւրոյից նամակ ունէինք, որով մեզ խրախուսում են եւ յարմար են գտնում մեզ գործի մէջ մտնելու յօգուտ սահմանադրութեան պաշտպանութեան։ Դրա համար նրանք տրամադրելի անում են զէնք, մթերք եւ մարդիկ։ միայն շատ հասկանալի պատճառներով դրամական օժանդակութիւն անել չեն կարողանում։ Ի հարկէ այդ շատ լաւ ազդեց ընկերների վրայ։ Եթէ յարմարութիւններ ունեցանք եւ պէտք եղաւ, անշուշտ նրանց այդ առաջարկից կ'օգտուենք։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1728ա-41

Դ 11.– ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԵՆ ԵՓՐԵՄԻՆ

15/28 Օգոստոս 1911, Թաւրիզ

Սիրելի Եփրեմ !

Ստեփանին գրած նամակիցդ երեւում է, որ Վրէժեանի[88] հեռագիրը բոլորովին սխալ ես հասկացել։ Երէկ այդ ուղղութեամբ երկու նոր հեռագիր տուինք քեզ, բայց ներկայ պայմաններում հեռագրով ամէն բան պարզելն անհնար է, եւ որպէսզի նոր թիւրիմացութեան մէջ չընկնիս, հարկ եմ համարում իրերի դրութիւնն ու ընդհանուր Ատրպատականեան կացութիւնը լուսաբանել նամակով։

Դու հեռագրել էիր, որ «Պատրաստուենք եւ որքան դրամ հարկաւոր է՝ հեռագրենք»։

Հաճելի առաջարկութիւն էր այդ, ի հարկէ, բայց արդի պայմաններում դրամը ամէն բան չէ։ Բացի դրամից, հարկաւոր են մարդիկ, զէնք, ռազմամթերք։ Տեղի վրայ այժմ պատրաստի ունեցածը բաւարար չլինելով՝ ռազմական այդ նիւթերը մենք պէտք է բերել տայինք Կովկասից։ Բայց, դժբախտաբար, այժմ սահմանները այնպէս պինդ են ամրացրած ռուսաց կառավարութեան կողմից, որ դժուար չէ առաջուց նախատեսել, թէ մեր բոլոր ջանքերը այդ ուղղութեամբ պիտի ընթանային չա՛տ դանդաղ եւ պիտի մնային գրեթէ ապարդիւն։ Ամենաշատը որ մեզ աջողէր, պիտի կարողանայինք բերել տալ միայն մարդիկ, այն էլ — վերը յիշած պայմանների չնորհիւ — շատ քիչ եւ դատարկաձեռն։

Ուրեմն մեր յոյսը մնում է Տաճկաստանը — եւ գլխաւորապէս Վասպուրականը, որ սահմանակից է Պարսկաստանին եւ դրա չնորհիւ փոխադրութիւնը հնարաւոր է կատարել համեմատաբար արագ, որը, ինչպէս գիտես, շատ մեծ նշանակութիւն ունի ռազմական տեսակէտից։ Այն էլ գիտես, որ Տաճկաստանից մենք կարող ենք բերել միմիայն անզէն մարդիկ։ Ուրեմն Պարսկաստանում պատրաստի զէնք ու ռազմամթերք ստանալը մեզ համար անխուսափելի անհրաժեշտութիւն է եւ Պարսից սահմանադրական կառավարութեան անմիջական պարտքը, եթէ նա գիտէ լրջօրէն կշռել արդի կացութիւնը։

Բայց սա դեռ բոլորը չէ։

Պարսկաստանը ունի մօտ 9 միլիոն ժողովուրդ։ Դրանց մէջ ցիր ու ցան հայերը, թուով ընդամէնը 70 հազար, կազմում են մի չնչին քանակ։

Պարսկաստանը իր ճակատագիրը, անշուշտ, չի կարող եւ չպէտք է յանձնի այդ չնչին քանակին։

Բայց սովորական կեանքում, մանաւանդ պատերազմի մէջ, նշանակութիւն ունեցողը միմիայն քանակը չէ, այլ եւ որակը։ Որակի կողմից հայերը երկրորդական տեղ չեն բռնում։ Դրա մէջ պարսից այժմեան կառավարութիւնը, ըստ իս, արդէն համոզուած պիտի լինի Ռաշտում, Ղազվինում, Թեհրանում, Թաւրիզում, Սալմաստում։ Իր ետեւը անցեալ ունեցող այսպիսի մի ժողովրդի — ինչքան էլ քանակով փոքր լինի նա — Պարսից սահմանադրական կառավարութիւնը չպէտք է զանցառութեան տայ, եթէ իսկապէս նա ըմբռնում է իր երկրի իրական շահերը։ Ընդհակառակը՝ կառավարութիւնը պարտաւոր է ստեղծել ամենատեսակ յարմարութիւններ եւ հայերին հրապուրել դէպի համերաշխ գործակցութիւն։

Եւ մենք պատրաստ ենք ուրախութեամբ ընդառաջ գնալու սահմանադրական ակտիւ ուժերին, եւ ո՛չ թէ ծափերի համար ճառախօսողներին կամ պատմութեան համար թռուցիկ հրատարակողներին։

Հէնց այդ է պատճառը, որ մենք հեռագրել էինք, թէ «չէ՞ք կարող արդեօք նպաստել Թաւրիզում համերաշխ գործակցութիւն կազմելու ընդդիմադիր տարրերի հետ — ընդդիմադիր՝ միապետութեան եւ անպատճառ ընդդիմադիր զէնքով ու ո՛չ թէ խօսքով կամ թղթով»։ Այստեղ մերոնք շատ են ճանաչում խօսքի ու թղթի մարդիկ եւ եթէ ուզենայինք միանալ սրանց հետ, այն ժամանակ հարկ չէր լինի դիմելու Թեհրան։ Բայց մենք դիտմամբ դիմեցինք Թեհրան, մտածելով որ գուցէ այս եղանակով կարողանանք Ձեր միջոցով կապուել այստեղի իսկական ակտիւ ուժերի հետ եւ ազատուենք «եալանչի փահլեւաններից»։ Այժմ — պարզ լինելու համար — ամփոփեմ մեր պայմանները։

1) Թէեւ որակով ուժեղ, բայց քանակով շատ թոյլ ենք, ուրեմն չենք կարող գործել առանձին եւ դա ամենեւին ձեռնտու չէր լինի ո՛չ կառավարութեան, ոչ էլ մեզ։ Ուրեմն կապեցէք մեզ այստեղի սահմանադրական ակտիւ ուժերի հետ։

2) Որոշակի, անմիջապէս եւ կանխիկ (ո՛չ թէ խոստումներով) մեր տրամադրութեան տակ դրէք զէնք, ռազմամթերք եւ դրամ։

3) Կազմեցէք դիմադրական մի ընդհանուր ծրագիր եւ Ատրպատականին վերաբերեալ մասը յանձնեցէք մեզ՝ ի գործադրութիւն, Ձեր հրահանգներով հանդերձ։

88.- Այսինքն՝ Ատրպատականի Կ. Կոմիտէի։ Ստեփանը Սամսոն խանն է (Թադէոսեան)։

Վերջին կէտը, այսինքն դիմադրական մի ընդհանուր ծրագիր կազմելը, ես համարում եմ անհրաժեշտ։ Դրա համար էլ հարկ եմ համարում տալ հում նիւթեր Ատրպատականին վերաբերեալ, որ ի նկատի ունենաք ընդհանուր ծրագիրը կազմելիս։

Նախկին Շահին Պարսկաստան մտնելու համար համաձակութիւն կարող էր տալ երկու նպաստաւոր պայման. նախ՝ ռուսաց կառավարութեան աջակցութիւնը։

Երկրորդ՝ ուժեղ կողմնակիցներ Պարսկաստանում։

Այդ երկու նպաստաւոր պայմանները նրա համար ներկայացնում է միայն եւ միմիայն Ատրպատականը։ Ատրպատականում ռուսներն ունին մի քիչ զօրք եւ Զուլֆան էլ շատ մօտ է Թաւրիզին։ Ուրեմն այստեղ ռուսները ուժեղ են եւ կացութեան տէրը, հետեւապէս Մամադ-Ալի ex-Շահը այդ կողմից ապահովուած։ Թոյլ չեն եւ միապետական տարրերը, ինչպէս օրինակ, շահսեւովանները, Ղարադաղ, Մակու, Սուջայի-դովլէն եւ քիւրդերը։

Ուրեմն Մամադ-Ալիի համար աւելի հեշտ է մտնել Թաւրիզ, յայտարարել նրան ժամանակաւոր մայրաքաղաք, մի առժամանակ մնալ այստեղ, կազմակերպել իր կողմնակից բաշի-բոզուկներին եւ, յետոյ մեծ բանակով արշաւել դէպի Թեհրան։ Այս ծրագրի իրագործումը հեշտացնելու համար նրան անհրաժեշտ է նախապէս Թեհրանի զինուորական ու տնտեսական ուժերը զգալի կերպով թուլացնել Թաւրիզից հեռու մի անկիւնում — Աստրաբադում եւ շրջակայքում։ Ու այդ մանէօվրը աջող խաղալու համար ռուսաց կառավարութիւնը օգնութեան է հասնում. յենուելով բոլոր օտարահպատակներին պաշտպանելու իր ստանձնած պարտականութեան վրայ, յայտարարում է, որ Թեհրանում 30 կիլոմետրի վրայ թոյլ չի տայ ո՛չ մի կռիւ եւ այս ճարպիկ մանէօվրով հարկադրում է Թեհրանի զինուորական ու տնտեսական ուժերին գնալ Մամադ-Ալիի ուզած տեղը — Աստրաբադ եւ շրջակայքը։ Ex-Շահը իր գործը այնտեղ տեսնելուց յետոյ — ինձ թւում է — որ նա անակնկալ կերպով պիտի յայտնուի Թաւրիզի շրջակայքում։ Այստեղ էլ ռուսաց կառավարութիւնը չի մոռացել իր նախապատրաստութիւնները տեսնելու։

Այստեղի հիւպատոսն էլ հրահանգ է ստացել à la Téhéran[89] յայտարարելու, որ 30 կիլոմետրի վրայ (Թաւրիզից) թոյլ չի տրւում ո՛չ մի պատերազմ, բայց յայտարարելու ո՛չ թէ այժմ... այլ կռուի դէպքում միայն։ Ի՞նչ է նշանակում այս։

Այս պարզապէս նշանակում է ա՛յն, որ Թաւրիզը կը պատրաստուի ինքնապաշտպանութեան, բայց հէնց որ Մամադ-Ալին կը մօտենայ Թաւրիզի պատերին, ռուս կառավարութիւնը կ'արգելի հրացանաձգութիւնը եւ ex-Շահը կը մտնի քաղաք առանց դիմադրութեան, ինչպէս խաղաղ կերպով Արդաբիլ մտան նրա կողմնակիցները այս Օգոստոսի 9-ին։

Գուցէ սխալւում եմ իմ կարծիքների մէջ — եւ տայ Աստուած որ սխալուեմ — բայց վաղօրօք կառավարութեան առանձին ուշադրութիւնն եմ հրաւիրում Ատրպատականի վրայ։ Եթէ յետագայում իմ կարծիքները յայտնուին անհիմն, այնուամենայնիւ կառավարութիւնը ոչինչ չի կորցնի այս նահանգում նախազգուշութիւններ ձեռք առնելով։ Նախազգուշութեան անմիջական նպատակը պէտք է լինի ex-Շահի կողմնակիցների ուժերի չէզոքացումը։

Բայց ի՞նչ գործնական հնարաւորութիւն կայ այդ ուժերը չէզոքացնելու։ Ըստ իս՝ առաջ ու առաջ պէտք է մի ուժեղ բանակ շարժուի դէպի Սարաբ՝ ընդդէմ Սուջայի Դովլայի։ Դրա հետ միաժամանակ մի ուրիշ բաւարար բանակ դէպի Մարաղա նոր դատաւորով։ Պէտք է անմիջապէս գրաւել Մարաղան, պատուաւոր պատանդ վերցնել Սուջայի-Դովլայի ընտանիքը ու բոլոր ազգականներին, կառավարական հսկողութիւն նշանակել նրա կալուածի վրայ եւ այս բոլորից յետոյ իսկոյն բանակցութեան մէջ մտնել Սուջայի Դովլայի հետ, նախ քան նրա հետ ընդհարուելը։

Եթէ խնդիրը զինաթափութեամբ եւ խաղաղ լուծմամբ չվերջանայ, անմիջապէս սկսել պատերազմական գործողութիւնների։ Ասում են, որ բանտարկուած Ռահիմ-խանը վաղեմի Թշնամի է Սուջայի Դովլայի։ Եթէ ճիշտ է այդ եւ եթէ հաւատալ ու վստահիլ կարելի է, նպատակայարմար կը լինէր Մարաղայի համար նոր դատաւոր նշանակել Ռահիմ-խանի որդուն եւ հրահանգ տալ որ իր ձիաւորներով գնայ նստի Մարաղայում։ Այսպիսով ռէակսիոն տարրերը կը հեռանային Ղարադաղից եւ այլեւս հարկ չէր լինի մի ուրիշ բանակ ղրկել Ղարադաղ՝ նրանց չէզոք պահելու համար։ Հակառակ դէպքում, մի փոքր բանակ էլ պիտի մնայ Ղարադաղի մի յարմարագոյն պունկտի վրայ՝ արթուն հսկողի դերում։ Կայ ե՛ւ մի ուրիշ թշնամի — Մակուայ Սարդարը։ Նրան չէզոքացնելու համար, իմ կարծիքով, պէտք է խոյում կազմակերպել մի բանակ եւ նրան ուժեղացնել դրսի ուժերով։ Աչկարա — Սարդարի ականջը հասնելու չափ — հրահանգ պէտք է տալ այս բանակին, որ մակուցիները եթէ յարձակուեն Խոյի վրայ՝ դիմադրել նրանց. իսկ եթէ մակուցիները ուրիշ գծով կ'անցնին դէպի Թաւրիզ կամ այլուր, Խոյի բանակը շարժուի դէպի անպաշտպան Մակուն եւ քարը քարի վրայ չթողի։ Սա կը լինի ամենալաւ զսպումը։

Այս բոլորից յետոյ՝ կը մնան քիւրդերը։ Սրանք ոչինչ չեն կարող անել, եթէ տեսնեն միւս ռէակսիոն տարրերին կաչկանդած վերը յիշած ձեւով։ Այսպիսի պայմաններում նրանք ամենաշատը կը զբաղուեն թեթեւ ալանթալանով, որ — յամենայնդէպս — չի կարող կորստաբեր լինել սահմանադրութեան համար։

89.- Ֆրանսերէն՝ Թեհրանի օրինակով։

Անշուշտ նկատած կը լինիս, որ ասում եմ բանակ ղրկել այս ինչ կամ այն ինչ տեղը, բայց չեմ ասում, թէ քանի հոգուց բաղկացած պէտք է լինի բանակը։ Անհընար է ինձ համար թէկուզ մօտաւոր թուի վրայ կանգ առնել, որովհետեւ չգիտեմ իմ թուած տարրերի ոյժի չափը։ Ո՛չ միայն այդ, չգիտեմ նաեւ, թէ կառավարութիւնը կարո՞ղ է արդեօք զէնք, ռազմամթերք եւ դրամ հասցնել եւ ո՞րքան։ Դեռ աւելին.— չգիտեմ ո՞րտեղ է Մամադ-Ալին, ո՞ւր եւ ի՞նչ ընդհարումներ են ունեցել երկու հակամարտ հոսանքները եւ ի՞նչ հետեւանքներով։ Եւ ես եզակի չեմ, այս անգիտութիւնը ընդհանուր է եւ շատ ցաւալի։ Աֆրիկայի եւ Աւստրալիայի մասին աւելի ճիշտ ու արագ տեղեկութիւն ենք ունենում, քան Պարսկաստանի, որի մէջ ապրում ենք։ Եւ ի՞նչ ասել կ'ուզի — եթէ լինէի պարսկական շարժման կուրսում, անց ու դարձին տեղեակ,— թերեւս աւելի գործնական լինէի դատողութիւններիս մէջ, քան նրանք այժմ կարող են երեւալ։ Յարաբերութիւնդ ինձ հետ պահիր նոր կեղծ-անունով[90]։

Ջերմագին բարեւներով՝
Նիկ.

Փաստ. 478-74

Դ 12.– ՅՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆԷՆ Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻՆ (Ժրնեւ)

[Թաւրիզ], 2 Սեպտ[եմբեր] 1911 թ.

Սիրելի Արտաշէս,

Ստացայ նամակդ եւ շտապում եմ երկտող գրել քեզ։ Շնորհակալութիւն ուղարկածներիդ համար. բոլորն էլ, ինչպէս եւ սրբիչ երկաթը ստացել եմ. չա՛տ ապրիս։

Մեզանից արխային կացէք։ Հեռուից դրութիւնը աւելի վտանգաւոր է երեւում քան թէ կայ։ Էքս-Շահի երեւալու առաջի[ն] օրերումն էր որ կառավարութիւնը եւ ժողովուրդը յուզուեց[ին] եւ մի քիչ էլ գլուխը կորցրեց[ին]։ Այժմ պատկերը բոլորովին փոխուել է։ Հեռագրները ձեզ կառավարութեան յաղթութիւնների մասին լուրեր բերած կը լինեն եւ դա իրողութիւն է։ Հիւսիսցի գործակալութեան հեռագրները բոլորն էլ սուտ են։ Դա ռուսականն է եւ տարօրինակ բթամտութեամբ ռուսական դիպլոմատիան աշխատում է խաբել արտաքին աշխարհը, մոռանալով փաստերը եւ ուրիշ պետութիւնների ներկայութիւնը, որոնք եղելութիւնները արձանագրում են իսկական պատկերով։ Թեհրանի կողմերը մաքրուած են։ Էքս-Շահին տուած է վերջին հարուածը, ինչպէս հաղորդում է մեզ մեր երկկուայ հեռագիրը։ Ինչպէս որ 7 հոգով մտել է Պարսկաստան, այսպէս էլ 7 հոգով փախել է դէպի Ծովը։ Հաւանականօրէն նա կ'երեւայ մի այլ կէտում...

Եթէ ասում եմ թէ՝ մեզանից արխային կացէք, չի նշանակում, որ ամէն ինչ լաւ է։ Էս րոպէին մեր քաղաքը շրջապատուած է, պաշար չէ անցնում, հացը, միսը եւ այլն պակաս են եւ խիստ սուղ։ Պատրաստութիւններ են տեսնւում արժանի հարուածը տալու, տեսնենք։ Ղեկավարը կը լինի Ղարա-Բաբան[90]։ *Սա քեզ ծանօթ է եւ մինչեւ իսկ հայրենակից. ծանօթ անունը չեմ գրում. կարծում եմ որ գլխի ես ընկնում... Հաւանականօրէն Թեհրանից եւս ուժեր կը գան դէպի այս կողմը։ Թւում է թէ մինչեւ 20-30 օրը կառավարութիւնը տէր կը լինի երկրին։ Բայց դրանով ամէն ինչ չէ վերջանում. կը սկսուի մի այլ գործ՝ յանցաւորներին արժանի պատիժը տալ՝ երկիրը ընդմիշտ խաղաղացնելու համար, եթէ միայն մի նոր արտաքին բարդութիւն առաջ չգայ, որ ամէն րոպէ սպասելի է։*

Եթէ դրը-դմփոցը սկսուեց, մէկին կը յանձնարարեմ կանոնաւոր տեղեկութիւններ տան։ Մինչ այժմ տեղեկութիւնները դուք պիտի ստանայիք Թեհրանից. էնտեղ է տեղի ունենում ճակատագրական կռիւը։

Ջերմ բարեւներս Վարդանին[91] *եւ քեզ։ Հարցանողաց բարեւ։*

քո ՅՈՆԱՆ

90.- Պարսկաստանի մէջ այդ օրերուն Նիկոլ Դուման ծանօթ էր Ղարաբաբա անունով։

91.- Խօսքը Խանասորի արշաւանքի հրամանատար Վարդան – Մեհրաբեան Սարգիսի մասին է, որ այդ օրերուն կը գտնուէր Ժընեւ։

Փաստ. 478-84

Դ 13.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 12 Սեպտ. 1911

Ընկերներ,

Վաղուց է նամակ չէք գրում մեզ. նոյնիսկ Ընդհանուր Ժողովի բացման մասին մեզ ոչինչ չգրեցիք. մենք կասկածում էինք որ տեղի ունենայ. այժմ լրագրներից իմանում ենք որ բացուած է եւ կանոնաւոր նիստեր ունի եւ զարմանալի չէ, որ պետ. հեռ[ագրական] գործակալութիւնը մեզնից շուտ է իմանում։

Վանից լաւ լուրեր չեն գալիս եւ մենք աւելի անհանգիստ ենք ու նրանց լռութիւնը մեզ ուղղակի վախեցնում է։ Գիտէք որ այնտեղից տղաներ էինք ուզել եւ դրա համար 70 ոսկի ձեր միջոցով հեռագրով փոխադրեցինք։ Ոչ մի լուր. նորէն հեռագրում ենք. դարձեալ լռութիւն. երրորդ անգամ réponse payée-*ով*[92] *ենք հեռագրում եւ դարձեալ ոչ մի պատասխան։ Ի հարկէ այդ պայմանների մէջ նրանք մեզ օգնութեան գալ չէին կարող եւ չէինք էլ պահանջել, բայց չպատասխանելը անհասկանալի մնաց մեզ. միթէ՞ այնքան անտանելի կացութիւն է ստեղծուել որ հեռագրի պատասխան տալ էլ չեն կարողանում։*

Կառավարութիւնը մեզ դրամ եւ զէնք է տրամադրել բաւարար քանակութեամբ. միայն միջանկեալ ասենք ո՛չ Թաղի-Զադէի շնորհիւ, այլ Եփրեմի, որին յանձնել [են] ամէն ինչ, եւ՛ բացարձակ վստահութիւն, եւ՛ լիազորութիւն։

Դրամը ստանալու պէս ամէն կողմ նամակներ գրեցինք, փող փոխադրեցինք որ որքան կարող են ընկերներ հասցնեն։ Սալմաստից եկել են 10 հոգի, մինչեւ 18ն էլ այստեղ կարողացել ենք դրստել. անհամբեր սպասում ենք կովկասից, բայց դեռ չեն հասել։ Սալմաստից էլի պիտի գան 15 հոգի։

Թեհրանից ընդհանուր հրամանատարութիւնը տրուած էր Նիկոլին (Կարա-բաբա ենք ասում), բայց դեռ չի մտել իր դերի մէջ եւ մենք էլ չենք պնդում եւ թողել ենք այդ դեռ այնտեղի առաջուայ պարսիկ զինւ. հրամանատարին, որովհետեւ Կարա-բաբան քիչ ոյժեր ունի, միւսների վրայ վստահել չի կարողանում. հետեւաբար մի առանձին բան անել չի կարող, որով ամէնքը սկսեն ենթարկուել։

Քաղաքը 15 օրից ի վեր է ինչ պաշարուած է գրեթէ։ 10 օր է կռիւները սկսել են. առաջին օրը մի թեթեւ ընդհարում եղաւ Աջի[93] *կամրջի մօտ, որի ժամանակ կամուրջում գտնուող ռուսաց զօրքը ձերբակալեց 8 հոգի պարսիկ սահմանադրականների ժանտարմի հագուստով, որոնք քաղաք վերադառնալու համար ընտրել էին կարճ ճանապարհը։ Ջնայելով յետոյ յայտնեցին որ սահմ[անադրականների] վրայ կրակելը թիւրիմացութիւն էր, բայց դեռեւս դրանց պահում են «քննութեան» համար։ Դրանից յետ դեռ իրենց չէզոք են պահում եւ կռիւներին երբեք չեն խառնւում։*

Սամադ խանը երբեմնի դադարներով շարունակ յարձակւում է քաղաքի վրայ, բայց մինչ այժմ միշտ էլ կորուստներով յետ է մղուել։ Մի քանի օր առաջ նա կորցրեց Սօուջբուլաղի յայտնի քուրդ ցեղապետ Կազի Ֆաթթուհի որդուն, որի համար երկու օր թալիս[?] էր բռնել։ Այսօր նոր թափով, գիշերուայ ժամը 4-ից սկսեց երեք կողմից յարձակում։ Դեռ յաջողութիւն չունի։ Տելեֆոնով լուր տուին, որ քաղաքի արեւմտեան մասում Շամի Ղազանի կողմից բաւականին մօտեցած են եղել, բայց մեր տղաները վրայ հասնելով քշել են, մի քանիսին խփել, մի քանիսին գերի բռնել. մեր տղաներից մէկը թեթեւ վիրաւորուած է ոտքից։ Մինչեւ կռիւը երեկոյեան չդադարի, հնարաւոր չէ շատ մանրամասնութիւններ իմանալ, որովհետեւ կռիւը շատ հեռու է, տելեֆոնով ճիշտ լուրեր չեն հաղորդում պարսիկները ըստ իրենց «բարի սովորութեան»։ Այնպէս որ տղաներից մէկի վիրաւորուելը եւ Սամադ խանի մի քանի մարդկանց գերի բռնուելը մերոնց կողմից, պիտի վերապահութեամբ ընդունել։ Հետեւանքի մասին կը գրենք յաջորդ փոստով։ Քաղաքը ինքնապաշտպանութեան համար լաւ է, ուժեղ է, բայց ափսոս որ յարձակողական դիրք բռնելու համար ոյժերը մեծաւ մասամբ անընդունակ են. սրանք սովորել են պատերի տակից կռուել եւ չափազանց խեղճանում են դրսում։ Ջնայած քաղաքը կտրուած է եւ գրեթէ պաշար չի գալիս, բայց էլի կարելի է պաշարը բաւարար համարել։

Մահմադ Ալին արդէն ջարդուելով փախաւ. այժմն մնում է Սալար-ուդ-Դովլէն, որը իրեն հետ է աշխատում։ Ինչպէս երեւում է բաւականին ուժեղ է. Եփրեմը հեռագրել էր որ ինքն է դուրս գալիս առաջը եւ յոյս ունի որ կը ջարդի։ Սալար-ուդ-Դովլէի ջարդուելովը հարցը փակուած կարելի է համարել, որովհետեւ միւսները արդէն կամ անձնատուր կը լինեն կամ կը քաշուեն եւ կը գնան. օրինակ հէնց այստեղ Սամադ խանը Սալար-ուդ-Դովլէի կողմնակից է եւ նրա հետ է կանչուած։

Սալմաստը, Խոյը եւ Ուրմիան դեռ խաղաղ են։ Սարդարը (Մակուի) դեռ սպասողական դրութեան մէջ է։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

92.- Ֆրանսերէն՝ պատասխանը վճարուած։
93.- Աջի կամ Աջիչայ, Թաւրիզի գետն է։

Փաստ. 478-91

Դ 14.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 19 Սեպտ. 1911

Ընկերներ,

Հաստատում ենք մեր N° 72 նամակը։

Սեպտ. 12-ի կռուի մանրամասները հետեւեալներն են։ Սամադ խանը որոշում է յարձակուել քաղաքի վրայ։ Արեւելեան եւ հիւսիս-արեւելեան մասերում յարձակումը թեթեւ էր եւ նպատակ է ունեցել ուշադրութիւնը այն կողմերը գրաւել եւ քաղաքի ոյժերը բաժանել. իսկականը եղել է արեւմտեան մասից Շամ-Ղազանից։ Պէտք է ասած շատ յաջող կերպով եկել էին եւ լցուել Շամ-Ղազանի այգիները, սահմ[անադրականների] դիրքերում։ Մերոնք Կարա-բաբայի[90] *առաջնորդութեամբ վրայ են հասնում. անմիջապէս կարգադրւում է մի քանի զալպեր*[94] *դէպի Ղարամելիք, թշնամուն չփոթեցնելու համար, նրանց ենթադրել տալով որ Ղարամելիքի վրայ են քշում. դրա նպատակը այն է եղել որ թշնամուն զրկի հնարաւորութիւնից Ղարամելիքից ոյժ ստանալու։ Դրանից յետ, անմիջապէս զալպերը ուղղած են դէպի այգիներում գտնուող թշնամին. անմիջապէս մի քանի հոգի տղաներից բաժանելով բռնում է դրանց կողքը, որից յետ թշնամին դիրքերից դուրս գալով լցւում է դաշտը ու փախուստի դիմում. թնդանօթի երկու յաջող հարուած էլ հեռու հաւաքուած թշնամու խմբերն է ցրւում։ Այդ օրը թշնամու կորուստը լինում է սպանուած 15 որից 2 դիակ բերում են. եթէ հաշուենք որ անպայման ամէն մի սպանուածին եւ երկու վիրաւորը անպայման կը լինի, կորուստի ընդհանուր չափը կարելի է հաշուել այսքանը՝ 45-50։ Եթէ մեր տղաները ուշ վրայ հասնէին, անպայման Շամ-Ղազանը գրաւուած էր թշնամուց։*

Մենք ստիպուած ենք առայժմ պաշտպանողական դիրք բռնել, որովհետեւ այստեղ կառավարութիւնը բացարձակապէս ոչինչ չունի. կամաւորները, ոստիկանութիւնը եւ ժանդարմերին ընդհանրապէս այնպիսի տարրերից է կազմուած, որոնք դրսի կռուի համար սովոր չեն. մեր ոյժերն էլ առայժմ բաւարար չեն յարձակման ձեռնարկելու, որից յետ պարսիկներն էլ վազեն։ Սպասում ենք ոյժերի Կովկասից, որոնք հաւանականաբար 5-6 օրից կը հասնեն։ Սալմաստում եւ Ուրմիում կան պատրաստ մօտ 40 հոգի, բայց հնարաւորութիւն չունեն առայժմ այստեղ գալու, որովհետեւ ճանապարհները բռնուած են. կարող են զինուած գալ եւ ճեղքել անցնիլ, բայց Սալմաստը մթերքից եւ զէնքից կը դատարկուի, որը ցանկալի չէ, իսկ մենք զէնք հասցնել չենք կարողանում։ Այսօր 600 բառից մի հեռագիր-տեղեկագիր տուինք Թեհրան ընդհանուր դրութիւնը պարզաբանող, որի պատճէնը ներքին գործոց մինիստրութեան, նոյնի պատճէնն էլ Եփրեմին։

Եփրեմը արդէն վաղուց Սալար Դովլէի դէմ է գնացել. 4 օր առաջ հեռագիրը լուր բերեց Սալար Դովլէի Սավայում 4000նոց բանակի չարաչար ջարդուելը. թշնամին թողել է 500 սպանուած, 100 գերի, 5 թնդանօթ, մթերք եւ բոլոր վրանները։ Կռիւը տեւել է 2½ ժամ եւ կառ[ավարական] բանակից սպանուել են միայն 10 բախտիարներ։ Կռիւը եղել է շատ հետաքրքիր եւ ըստ Եփրեմի եւ Ս. Բըհատորի մինիստրութեան տուած տեղեկագրի, պարսկական նոր պատմութեան մէջ մի չտեսնուած ու եզակի կռիւ է եղել։ Տրամադրութիւնը անչուշտ բարձրանում է, եւ պէտք է ասած, որ ամէն կողմից էլ գրում են որ առաջուայ, անցեալների ոգեւորութիւնն ու տրամադրութիւնը չկայ։ Նկատելի է ժողովրդի մէջ յոգնածութիւն եւ անտարբերութիւն. իրաւամբ կարելի է ասել որ այժմ սահմ[անադրութեան] պաշտպանութեան գործը ծանրանում է գլխաւորաբար բախտիարների եւ հայերի վրայ, եւ գործ տեսնողներն էլ նրանք են։ Մազանդարանի եւ այլուր եղած կռիւների մէջ մերոնք հերոսական կռիւներ են ունեցել եւ Մազանդարանից մեզ գրում են, որ Մահմադ Ալու ջարդուած բանակի մնացորդները, երբ փախչելով վերադարձել են, ասել են.— աման ազ դաստը բախտիարի վէ արամընա (աման, բախտիարցոց եւ հայերի ձեռքից)։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Ց.Գ.- 3 օր առաջ այստեղ անջիմանը մի շնորհակալութեան նամակ էր գրել Կարա-բաբային իր ջանքերի համար։ Այսօր պատասխանուեց շատ կարճ եւ քաղաքավարի ձեւով մեր կողմից։

94.- Համազարկեր։

Փաստ. 478-101

Դ 15.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 29 Մեպտ. 1911

Ընկերներ,

Հաստատում ենք մեր Սեպտ. 19-ի N° 79 նամակը։ Զարմանում ենք ձեր լռութեան վրայ։

Ամսոյս 24-ի գիշերը առանց մեզ լուր տալու, անջիւմանը կարգադրած է եղել յարձակում Ղարամելիքի վրայ. մեզ լուր բերում են առաւօտեան ժամը 4-ին եւ մինչեւ կարա-բաբան տեղ կը հասնէր, արդէն ժամը 6-ն է լինում, լուսաբաց։ Ջնայելով որ կարա-բաբան համոզուած է լինում թէ այդ պայմանների մէջ յարձակումը անյաջողութեան պիտի հանդիպի, էլի միանում է նրանց, որպէսզի թիւրիմացութեանց եւ ասէկոսէների տեղիք չտայ։ Եւ ի հարկէ չի յաջողւում. արդիւնքը լինում է այն որ այն կողմից սպանւում են 3 եւ վիրաւորւում 13 թուրքերից. վիրաւորւում են եւ երեքը մեր տղաներից, որոնց վէրքերը ծանր չեն եւ կը լաւանան։

Տղաները շատ դանդաղ կերպով են հաւաքւում։ Կովկասից մինչ այժմ եկել են 9. շատ դժուարանում է նրանց գործը անցագրի պատճառով։ Ուրմիայից 16 հոգի գնացել են Սալմաստ, միանալու Շամից[95] եկած 8 հոգու եւ Սալմաստ եղած մի քանի հոգիների հետ, որ միասին գան, բայց թէ երբ կը հասնեն՝ յայտնի չէ, որովհետեւ ճանապարհը փակ է եւ ամենայն հաւանականութեամբ ստիպուած կը լինեն մի երկու տեղ ընդհարուելու։ Առ այժմ՝ Սալմաստն ու Ուրմիան հանգիստ են եւ սարդարը դեռեւս չի շարժւում, երեւի սպասելով աւելի բարեյաջող հանգամանքների, որովհետեւ Ատրպատականում դեռեւս լուրջ ընդհարումները մնում են ապագային։

Նամակը ստանալուն պէս խնդրում ենք մեզ փոխադրել առ այժմ minimum չափով 10.000 ֆրանք, որի անհրաժեշտ կարիքը ունենք։ Ճիշտ է, կառավարութիւնը որոշ գումար միանգամից տրամադրելի արել էր մեզ, բայց հալուեց։

Բաւականաչափ փոխադրուած է Ուրմիա, Սալմաստ, Կովկաս եւ Շամ, այնպէս որ մնացորդը այստեղ մեզ հազիւ բաւականացնի ամենաշատը մինչեւ Հոկտեմբերի վերջը, որից յետ մնում ենք անորոշութեան մէջ։ Այդ ժամանակ բաւականին հետաքրքիր դրութիւն պիտի ստեղծուի մեզ համար։ Հաւատացած ենք որ կառավարութիւնից երկրորդ անգամ դրամ ստանալ մեզ չի յաջողիլ. յետ քաշուել անհնարին կը լինի թէ՛ կուսակցական պատուի տեսակէտից եւ թէ առհասարակ ընդհանուր գործերի յաջողութեան համար անհնար է թողնել ասպարէզը. սկսած գործը պիտի գլուխ հանել թէկուզ շատ զոհողութեանց գնով։ Ջպիտի մոռանալ որ մենք պիտի մտածենք եւ այն, որ տղաներին ցրելու ժամանակ բաւականին խոշոր ծախսերի առաջ պիտի կանգնած լինենք եւ այժմուանից մտածենք այդ առթիւ, որովհետեւ ապագային եթէ դրա համար պատրաստ դրամ չունենանք այժմուանից, ստիպուած կը լինենք շատ աւելի ծախսեր անելու քան կը պահանջէր եւ կամ կարելի էր փող ունենալով. եւ այդ շատ հասկանալի է, որովհետեւ լիկվիդացիան փոխանակ մի ամսում կատարելու, կը կատարուի վեց կամ աւելի ամիսների ընթացքում, որի ժամանակ ստիպուած կը լինենք եւ հոգալու տղաների ծախսերը ապրուստի եւ հագուստի համար, որը շատ աւելի ծանր կը լինի մեզ համար։ Հաւատացած ենք որ այդ գումարը մեզ կը փոխադրէք անմիջապէս ընդունելով անհրաժեշտութիւնը եւ աչքի առաջ ունենալով կարիքի մեծութիւնը։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

95.- Վանէն, Վասպուրականէն։

Կեղբ. Կոմիտէի նամակի աւարտին, կը գտնուի Նիկոլ Դումանի հետեւեալ երկտողը.–

Ընկերներ!
Վրէժի ուզած գումարը ո՛չ միայն անհրաժեշտ minimum-ն է, այլ եւ ճակատագրական՝ մեր գործունէութեան համար։ Հեշտութեամբ կարող է պատահել, որ չունենալով այդ գումարը՝ ստիպուած լինինք ցրել տղաներին դեռ կռիւը չվերջացած կամ շարունակել կռիւը եւ վերջում՝ մնալով առանց դրամի՝ դիմել բռնութիւնների ու շանտաժի – զինուորների կողմից, ի հարկէ։

ԴՈՒՄԱՆ

Փաստ. 528բ-42

Դ 16.– ՂԱՐԱԲԱԲԱՅԻՆ

Արխիւներում մէջ կը գտնուի այս առթիւ Ատրպատականի պարսիկ զինուորական հրամանատարին հետեւեալ նամակը (փաստ. 528բ-42), որմով կը ջանայ բացատրել իրենց յարձակումին ձախողութեան պատճառը չքմեղանք յայտնելով որ նախապէս տեղեակ չեն պահած Ն. Դումանը եւ հայկական զօրքը։ Պարսկերէն բնագրի կողքին կու տանք նաեւ հայերէն թարգմանութիւնը։



Ցարգելի պրն. Ղարաբաբա!

Բացատրական նամակը որ գրել էիք Ղարամելիքի յարձակման ծրագրի բացակայութիւնից, որ դուք բոլորովին անտեղեակ էք եղել, ճիշտ է։

Ինչպէս խօսակցութեանս ժամանակ ձեզ ասացի, որ ես էլ անտեղեակ էի։ Իսկ ինչ վերաբերում է, որ ես ինքս ներկայ եմ եղել դէպքին, հաստատ գիտէի որ Նազմիի օգնականը, առանց ձեր գիտութեան եւ ծրագրին, գործի չի ձեռնարկել։ Որովհետեւ այսպիսի միջոցներում, որ իսկապէս ընդհանուր յարձակում է, այսպիսի դէպքեր անխուսափելի են, կարող է պատահել. եւ այդ պատճառաւ էր, որ այսպիսի շատ եւ շատ վատ դէպք պատահեց. յոյս ունիմ այլեւս այսպիսի վատ դէպքեր չի կրկնուիլ։ Բայց եթէ այսպիսի մտադրութիւններ կը լինի գործադրելու թշնամու դէմ, ի հարկէ առանց ձեր գիտութեան չի լինիլ. եւ ինչ ծրագիր, որ մշակուի, ձեր գիտութեամբ եւ ներկայութեամբ կը լինի։

Ժամանակից օգտուելով, ձեր ղէյրաթով [պատուով, Ծ. Խ.] գործունէութիւնից եւ ձեր խիզախ ձիաւորներից յայտնում եմ խորին շնորհակալութիւններ։

ԶԻԱԴՈՎԼԷ

Ատրպատականի զինւ. հրամ[անատարի] ինքնագիր նամակի թարգմանութիւնն է։
ՊԵՏՐՈՍ

Փաստ. 478-116

Դ 17.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 31 Հոկտ. 1911

Ընկերներ,

Ստացուեց ձեր Հոկտ. 4/17-ի նամակը։

Ձեր դրած հարցերին պատասխանենք կէտ առ կէտ։

1) Մկրտիչ Սահակեանը այստեղ է եւ ի վիճակի չէ այժմ 12 ոսկին վճարելու. նոր գործ է սկսել եւ դեռ պարտքեր շատ ունի, այնպէս որ խնդրում ենք այդ գումարը դեռեւս մեր վրայ փոխադրած չգրել. երբ ստացանք ձեզ կը յայտնենք, իսկ երբ իրեն խօսեցինք, ասաց որ՝ ես իբր Ոսկանապատի[96] ընկեր վտանգուել եւ այդ կողմերն անցնելու ստիպուել եմ բանտից դուրս գալով. այդ հաշիւը գրեցէք Ոսկանապատի Կ. Կոմիտէին պարտքին, իսկ եթէ ոչ՝ սպասէք, երբ ի վիճակի լինիմ, կը տամ։

2) Թաղի-Զադէի նկատմամբ շատ ուրախ կը լինէինք եթէ դուք ձեր կարծիքների մէջ սխալած չլինէիք։ Սպասենք եւ տեսնենք։ Մենք նրա դէմ առանձին բան չենք ունեցել. միայն նրա նկատմամբ մեր կազմած համոզումն էր երկար փորձերից յետ, մի ամբողջ խմբակի, իսկ այդ պարոնը իրեն լաւ ծածկել կարողանում է, շնորհիւ իր միւսներից խելօքութեան եւ բառիս ընդարձակ նշանակութեամբ՝ խորամանկութեան։ Այդ ոչ առաջին զղջումն է իր եւ ընկերների կողմից Դաշնակցութեան հանդէպ, եւ ոչ էլ կը լինի վերջինը։ Վաղը միւս օրը կը տեսնենք նրանց օրգանների արշաւանքը մեր դէմ. այժմուանից արդէն նշանները երեւում են, այստեղի դրանց թերթի բռնած դիրքից. նոյնը եւ իրենց վերաբերմունքը այստեղ մեզ հետ։ Երանի անկեղծութեան փոքրիկ տոկոսն ունենային։ Երեւակայեցէք որ միւսների հետ համեմատած էլի, եթէ միայն կարելի է անուանել, սրանք քիչ տանելի են։

3) Կովկաս փոխադրել էինք 2000 ռուբլի ընկերներ ուղարկելու. գործը այնտեղ գնաց շատ դանդաղ ու եկան մեր սպասածից շատ քիչ թուով ընկերներ, որոնց մէջ կային եւ շատ անպէտքները, որոնք միայն բեռ լինելուց բացի որեւէ բանի պէտք չեկան. կարգադրեցինք դադարեցնել։ Շամից[95] էլ եկել են բաւական թուով, բայց գրեթէ կէսը անվարժ լինելու պատճառով ստիպուած, մնասի կէսից յետ դառնալու համար, յետ ճամբեցինք. զարմանում ենք որ անվարժներին ուղարկել էին։ Եկան Սալմաստից, Ուրմիայից եւ այստեղ էլ կային։ Այժմ այստեղ ունենք 85-90 տղաներ, 10-ից աւելի էլ Սալմաստում։

4) Կովկասի բանտարկեալների համար հաւաքուած դրամները տարել է հետը Պետրոսը[69], որի գումարի մասին մեզ հաշիւ չէ տուել։ Նոյնիսկ հարաւում, չգիտենք եւ հակառակ մեր գրութեանց մեզ չեն յայտնել մինչ այժմ։ Իսկ ինչ վերաբերում է այստեղի հաւաքուածին, փոխադրեցինք մօտ 800 ռուբլի Կովկաս։ Գուցէ եւ այդ փողը ձեզ փոխադրէինք, բայց արդէն 700 ռուբլու չափ այնտեղ դրամ ունինք, որի համար Պետրոսը գրել էր՝ թողնել իրեն մօտ, ի դիմաց այս դրամի։ Ուրիշ խօսքով մեզ fait accompli-*ի*[97] *առաջ կանգնացրեց։ Նորից այսօր հաշիւները կ'ուզենք եւ եթէ ստացուի ձեզ կը գրենք։ Ոսկանապատը մեզ երբեք չէ գրել. մեր նամակները մնացել են անպատասխան, անշուշտ ձեր ակնարկած «ոստիկանական խստութեանց» պատճառով։ Լաւ է, որ մենք այս բանտարկեալների օգտին հանգանակած գումարների հաշիւների նկատմամբ չխայտառակուենք։ Ինչպէս ասում են՝ շունը տիրոջ չի ճանաչում։*

Պետրոսի գրելով ինքը այժմ այդ գործերի առթիւ պիտի ճանապարհորդի դէպի հիւսիս։

Թեհրանից մեզ գրում են որ Այվատեան եպիսկոպոսը գնալու է Հնդկաստան, իբր թեմական ներկայ լինելու Ժորժ V-ի թագադրութեան եւ Դր. Ստեփանեանն էլ հետն է գնալու. առաջարկել էին մեզ թոյլ տալ 250-300 թուման տրամադրելի անել Դր-ին, իբր ճամբու ծախք, որ բանտարկեալների օգտին հանգանակութիւն անէ Հնդկաստանի հայերի մէջ, որի գումարից յետ կը տրուի այդ փողը։ Մենք նկատի ունենալով որ հարց է թէ կը յաջողուի հանգանակութիւնը թէ չէ եւ մենք այդ գումարն էլ կորցնելու ստիպուած չենք լինի, մանաւանդ նիւթականի այսքան սղութեան ժամանակ, եւ գրում ենք որ չտան. միայն Այվատեանին առաջարկեն, օգտուելով իր այնտեղ լինելուց, կազմի մի յանձնախումբ եւ հանգանակութիւն անեն։

5) Իսկ ինչ վերաբերում է միացեալ պետութեանց կապիտալիստներին կապել — երկաթուղիների եւ այլ մենաշնորհների միջոցով կապել Պարսկաստանի հետ եւ ստեղծել դրանով մի նոր քաղաքական ոյժ Պարսկաստանի մէջ քաղաքա[կա]նութեան հարցին, առանց այն էլ աշխատում է հնարաւոր չափով Շուստերի[98] կողմից, եւ այնքան էլ յաջողութիւն չի ունենում ռուս-անգլիական քաղաքականութեան շնորհիւ։

Այժմ դառնանք այստեղի դրութեան։

Վերջին օրերում սկսուեց Սամադ խանի հետ հաշտութեան բանակցութիւնները, որը դժուար յաջողուի, որովհետեւ երկուստեք էլ ձգձգման քաղաքականութեան են հետեւում եւ անկեղծ չեն։ Սամադը մի քանի օրով ճանապարհները բաց արեց, որով քաղաքը բաւականին մթերք եկաւ, բայց անշուշտ այն նպատակով, որ վաղը միւս օրը եթէ էլի փակի, ժողովուրդը աւելի անհանգստանայ եւ ներքին խլրտման պատճառ դառնայ։ Ձգձգելը Սամադ խանի կողմից եւ այն նկատումով է արւում, որ տեսնի եթէ Մահմադ Ալին հարաւում ինչ յաջողութիւններ է ունենում նորից։ Էքս-Շահը արդէն Բանդարգեազում ջարդել է թուրքմէնների օգնութեամբ Սարդար-Մուհոն, գրաւել է նորից Ասդրաբադը եւ Մազանդարանը։ Այդ անշուշտ կ'ազդի Սամադ խանի լեզուն երկարանալու վրայ։

Տեղեկութեանց վրայ շատ չենք ծանրանում, որովհետեւ «Առաւօտը» տալիս է, որը անշուշտ ստանում էք։

Թեհրանի ամսական տեղեկագրի մէջ ասւում է, որ Եփրեմը երբ Համատան էր, Սալար-Դովլէի դէմ, տեսնելով որ էսերիստները [սոցիալ-ռեվոլուցիոնէրները] անպատմելի թալաններ են անում, շատ բարկանում է, բացատրում է մնասները եւ մինչեւ իսկ մէկի վրայ գնդակ է արձակում երկու հատ, որից մէկը վրիպում է, միւսը վիրաւորւում է գլխից մի բախտիարցու։ Բախտիարները անշուշտ այն չեն, ինչ որ գրւում է. սոսկալի թալաններ են անում եւ դրանց չէֆերը յաճախ միմեանց հետ հին հաշիւներ են մաքրում, որը անպայման ազդում է բացասաբար ընդհանուր գործի վրայ։ Այդ հակասութիւնները մեծանում են եւ Եփրեմը ստիպուած կառավարութեան առաջարկել է այդ միմեանց հետ անձնական հաշիւներ ունեցող բախտիար սարդարներին զանազան կողմերի վրայ ուղարկել, որ միասին չլինին եւ անհամութիւններ չանեն։ Մենք ի հարկէ այդ մասը չթողինք «Առաւօտի» մէջ դնել եւ լաւ կ'անէք եթէ դուք էլ չխօսէք այդ մասին առայժմ։

Ռուսները մտել են Սալմաստ օրթոդոքս ասորիներին պատճառ բռնելով։ Խոյ փոխ-հիւպատոսարան բաց արին 200 կոզակ ուղարկելով։ Այդ բոլորը անշուշտ տաճիկների դէմ է։

Նիկոլը գալուց մի տասնոց ատրճանակ էր բերել հետը. այդ ստացանք, գրէք մեզ վրայ։

Դրամի համար մենք ի պատասխան ձեր հեռագրին՝ կարգադրուած է, հեռագրեցինք այսօր, որ եթէ փոխադրուած չէ, հեռագրէք ցրենք (իմա տղաներին)։

Մենք ենթադրում ենք որ կարգադրուած բառը ասուած է [ի պատասխան] ձեր այդ առթիւ գրած նամակին, որը փոստումն է դեռ. բայց նկատի ունեցէք որ դրամը վերջացաւ եւ դեռ Թեհրանից չենք ստացել, ու հաւանական է չստանանք էլ. ահագին ծախս է գնում եւ անհնար է ներկայ պարագաներում քաշուել. Թեհրան յամենայն դէպս հեռագրել ենք, եւ վստահ եղէք, որ եթէ պէտքը չունենանք, այդ դրամը անպայման կը պահենք եւ յետոյ ձեզ յետ կ'ուղարկենք։ Մեզ հետ դրամական հարցը միշտ այդպէս է եղել եւ մեզ անհասկանալի է. երեւի մեր հեռաւորութիւնն է պատճառը։

Ընկ. բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

96.- Բագուի։
97.- Ֆրանսերէն՝ կատարուած իրողութիւն։
98.- Մորգան Շուստեր՝ պարսիկ կառավարութեան մօտ ելեւմտական հարցերու խորհրդական, ամերիկացի։

Փաստ. 587-53

Դ 18.– ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԹԵՀՐԱՆԻ ՄԷՋ

[18-11-1911]

Ընկեր Թափառականի[99] *հրաւէրով 1911 թ. Նոյեմբեր 18-ին կայացաւ դաշնակցական ընկերների խորհրդակցական ժողով, որի զբաղման նիւթն էր՝ թէ ի՞նչ դիրք պէտք է բռնէ Հ. Յ. Դաշնակցութիւնը դէպի ռուսաց վերջնագիրը (ուլտիմատում) եւ դէպի օտար միջամտութիւնը*[100]*. արդեօ՞ք նա պէտք է շարունակէ իր զինական օժանդակութիւնը պարսիկ շարժման, թէ՞ տեղի պէտք է տայ ռուսների առաջ։*

Ժողովը կառավարելու համար նախագահ ընտրուեց ընկեր Հանդոյց[63] *եւ քարտուղար ընկեր Քաւոր։*

Նախքան խնդրի քննութեան անցնելը հարց եղաւ թէ արդեօ՞ք այս ժողովի որոշումները իրաւական թէ՞ բարոյական նշանակութիւն պէտք է ունենան։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովն եկաւ այն եզրակացութեան, որ ինքը հարկադրելու իրաւունք չունի, բայց քանի որ ժողովին մասնակցում են մեր բոլոր աչքի ընկնող զինուորական եւ մտաւորական ուժերը, ուստի տեղիս մարմինը բարոյապէս պարտաւորուած կը զգայ իրան՝ հետեւելու խորհրդակցական ժողովի որոշումներին։

Այնուհետեւ նախքան որոշում կայացնելը իր բռնելիք ընթացքի մասին, ժողովը դիմեց երկրի դրութեանը լաւատեղեակ ընկերներին՝ ընկեր Թափառականին եւ պատգամաւորին[101]*, իմանալու համար թէ ի՞նչ տրամադրութիւն կայ կառավարական շրջանում եւ պառլամենտում։ Ընկ. պատգամաւորը յայտնում է, որ պատգամաւորների կառավարական շրջանում ակտիւ դիմադրութեան մտադրութիւն չի նկատւում։ Ընկեր Թափառականը յայտնում է, որ պարսիկ ժողովուրդը վճռականութիւն չունի առաջ անցնելու, նրան պէտք է մի առաջնորդ եւ նա կը հետեւէ։ Եւ ինչպէս ներքին թշնամիների դէմ մղած կռիւների մէջ առաջնորդ է հանդիսացել Հ. Յ. Դաշնակցութիւնը, նոյն դերը պէտք է խաղայ նաեւ այստեղ, անցնելով գործի գլուխ եւ դառնալով շարժման ղեկավար։ Ժողովը լսելով այդ բացատրութիւնները քննութեան առաւ մեր մասնակցութեան հիմունքները, եւ մտքերի փոխանակութիւնից յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեան.—*

1.- Ի նկատի ունենալով, որ Դաշնակցութիւնը մի յեղափոխական կուսակցութիւն է, հետեւապէս նրա վրայ բարոյապէս մեծ պարտականութիւն է ընկնում պաշտպանելու Իրանի անկախութիւնը,

2.- Որ անկախ Իրանում աշխատաւոր դասակարգի շահերը աւելի յաջողութեամբ կը պաշտպանուին,

3.- Որ անգլիական եւ ռուսական միջամտութիւնը տնտեսապէս պէտք է հիւծէ Պարսկաստանին եւ աշխատաւոր դասակարգերի տնտեսական վիճակը միանգամայն պէտք է քայքայէ,

4.- Որ այս ոտնձգութեան դէմ կռուելով՝ կողմնակի կերպով կռւում ենք նաեւ ռուսական բռնակալութեան դէմ եւ այդ կռիւը հաւանօրէն արձագանգ կը գտնէ նաեւ Ռուսաստանում՝ արթնացնելով ընդդիմադիր շարժումը,—

Որոշեց դէմ դնել այդ միջամտութեան։

Այնուհետեւ քննութեան առնուեցին հետեւեալ հարցերը.—

1) Ի՞նչ կերպով եւ ի՞նչ միջոցներով պէտք է դիմադրել ռուսաց վերջնագրին եւ

2) Արդեօք այդ դիմադրութիւնը մենակ պէտք է անե՞նք, թէ՞ դաշնակցած ուրիշ ընդդիմադիր տարրերի հետ։

Ժողովը մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ որոշեց.— Ի նկատի ունենալով

1) Որ երբեք ցանկալի չէ դիմադրութեան ամբողջ պատասխանատուութիւնը մեզ վրայ առնել, որովհետեւ անյաջողութեան դէպքում յետադիմական տարրերը կարող են օգտուել այդ հանգամանքից ի մնաս հայութեան,

2) Որ ընդդիմադիր ուժերի միացումը գործի յաջողութեան տեսակէտից մի անհրաժեշտութիւն է,

3) Որ ընդդիմութեան գործի յաջողութեան համար անհրաժեշտ է պահպանել գործունէութեան մի որոշ սիստեմ։

Խորհրդակցական ժողովը որոշեց դիմադրութեան գործում դաշնակցել պարսիկ ընդդիմադիր տարրերի հետ եւ առանձին ասպարէզ չգալ։ Այս ուղղութեամբ գործելու համար խորհրդակցական ժողովը խորհուրդ է տալիս տեղական մարմնին բանակցելու պարսիկ կուսակցութիւնների հետ եւ կազմելու մի միջկուսակցական մարմին, լիազօրելով նրան ղեկավարելու ընդդիմութեան ամբողջ գործը։

Ժողովը հրահանգում է միաժամանակ տեղական մարմնին, կազմակերպելու Թեհրանի եւ շրջակայ հայութեան ինքնապաշտպանութեան գործը։

Այնուհետեւ անցնելով դիմադրութեան ձեւին, ժողովը հրահանգում է նախ դիմել խաղաղ ճանապարհի՝ բոյկոտ, ցոյցեր եւայլն, իսկ ծայրայեղ դէպքում նաեւ զէնքի դիմել։ Ժողովի արձանագրութիւնը ընդփոյթ ուղարկելու է կոմիտէին, հրահանգելով՝ շուտափոյթ ընտրելու ներկայացուցիչներ միջկուսակցական մարմնին մասնակցելու համար, եւ խորհրդակցական ժողովի այս որոշումները շուտով յայտնելու ուրիշ վայրերի մեր մարմիններին։

Նախագահ՝ ՀԱՆԴՈՅՑ
Քարտուղար՝ ՔԱՒՈՐ

99.- Թափառականը՝ Եփրեմ խանն է։

100.- Ռուսական ուլտիմատում-վերջնագիրը։ Նախկին Շահի եւ եղբօր դէմ Եփրեմի ու սահմանադրական զօրքերու տարած ջախջախիչ յաղթանակներէն ետք, Թեհրանի ռուսական դեսպանատունը յաջորդական վերջնագրերով, մէկը միւսէն աւելի նուաստացուցիչ պահանջներ կը դնէր պարսկական կառավարութեան։ Այսպէս՝ պաշտօնանկ ընել ելեմտական խորհրդական Շուստերը, օտարականներ այլեւս պաշտօնի չկոչել, վճարել ռուսական զօրքերու համար ծախսուած գումարները, եւայլն։ Վերջնագիրը 48 ժամուան պայմանաժամ կը ճշդէր։

101.- Թափառականը, ինչպէս գիտենք, Եփրեմն է, իսկ պատգամաւորը՝ Միրզայեան Յովսէփը։

Փաստ. 478-121

Դ 19.– ՅՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆԷՆ Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻՆ (Ժընեւ)

24 Նոյ. [1911, Թաւրիզ]

Սիրելի Արտաշէս,

Նամակդ 2966 ֆր[անկ] չեկով ստացայ եւ գանձեցինք։ Կ'ուղարկուի պաշտօնական ստացագիր։

Դրութիւնը բաւականին բարդացել է։ Ժողովուրդը յուզուած ու գրգռուած է եւ պատրաստւում է դիմադրելու... Անսպասելի էր այս փոփոխութիւնը։ Ռէակցիայի դէմ Թաւրիզը ոչինչ չարեց, անտարբեր մնաց եւ մինչեւ իսկ Նիկ[ոլի][80] կողմից ծրագրուած մի քանի յարձակումներկ ջուրը գցեց։ Իսկ այսօր կ'ասես թէ նա կենդանութեան նշաններ է ցոյց տալիս։ Ես համոզուած եմ, որ այս ժողովուրդը ներկայումս այլեւս անընդունակ է մեծ ժեստերի եւ մեծ զոհաբերութեան. բայց այսօրուայ ցոյց տուած չնչին կենդանութիւնն էլ ինձ զարմացրել է՝ նա այնքան անտարբեր ու մեռած էր ռէակցիայի դէմ կռուելիս։ Ո՞վ կարող է ասել, թէ ռուսական քաղաքականութիւնը չի բերել մի «փոփոխութիւն» ապագայում այս հանգած ժողովուրդի մէջ... ինչ որ էլ լինի ռուսական տիրապետութեան մասին առայժմ խօսք լինել չի կարող. ամենաշատը կը լինի պրոտեկտորատ[102]։ Տիրապետելը ապագայի խնդիր է, իսկ մինչ այդ ո՞վ գիտէ թէ ինչ կարող է պատահել... Եա ման, եա սան, եա Մահմադ շահ[103]։

Էստեղ ուժեղ են դեմոկրատները։ Սրանք նոյն քաղաքականութեան են հետեւում ինչ որ Երիտ[ասարդ] Թիւրքերը — ամենայն հաւատարմութեամբ նրանցից ընդօրինակում են, եթէ չասեմ, թէ ներքին համաձայնութիւն կայ դրանց մէջ։ Արտաքուստ բարեկամական, ներքուստ չէզոքացնել։ Մենք աշխատում ենք մեր գոյութիւնը զգալ տալ... Ձեռք չենք քաշում եւ որոշուած է ամէն տեղ դրանց հետ երեւալ։ Իմ ցանկութիւնն է, որ այդ լինի մեր արժանիքի եւ պատուի համեմատ։

Ենթադրւում է որ մի քանիսի դրութիւնը մեր ընկերների վտանգւում է։ Ես որոշել եմ ի՞նչ որ էլ լինի տեղիցը չչարժուել։ Հերիք է։

Միքայէլը եկաւ. մենա՞կ է, թէ ընկեր ունի։ Ճի՞շտ է որ Ահարոնեանը[104] *էդտեղ է։ Ասա՝ «անցած ըլլայ», ուրախ եմ։ Ջերմ բարեւներ երկուսին էլ, ինչպէս եւ քեզ։ Հարցանողաց բարեւներ։*

ՅՈՆԱՆ

102.- Հոգատարութիւն։

103.- Թուրքերէն՝ կամ ես, կամ դուն, կամ Մահմադ Շահը։

104.- Միքայէլը՝ Վարանդեանն է. Ահարոնեան Աւետիսը՝ ցարական բանտէն վերջերս ազատ արձակուած, Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին մասնակցելէ ետք, անցած էր Ժընեւ։

Փաստ. 478-125

Դ 20.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 1 Դեկտ. 1911

Ընկերներ!

Ստացել ենք ձեր N 460-ը, *հաստատում ենք մեր* N 101-ը։ *Ստացել ենք նոյնպէս ժամանակից ձեր գրած* 3000*ից* 2966,40 *ֆր.*, *իսկ Ամերիկայից* 500 *դոլլար։ Պարտք ենք համարում յայտնել, ընկերներ, որ մենք եւս ամէն կերպ աշխատում ենք կազմակերպական ընդհ. միջոցների վրայ չծանրանալ եւ մեզ այդ առ այժմ յաջողւում է կարծես, բայց թէ ի՞նչ կը լինի ապագայում այդ միանգամայն անհնարին է որոշել այժմ՝ անակնկալներով այնքան հարուստ մեր շրջապատը եւ յարաբերութիւնները դիտելով։*

*«*48 *ժամնոց» ուլտիմատումը արդէն յայտնի է ձեզ, յայտնի է նոյնպէս թէ ինչպէս դիպլոմատիական* 48 *ժամը, որքան երկար ժամանակամիջոց է տեւում։ Կարծես ամէն ինչ մեր իրականութեան մէջ դատապարտուած է դանդաղ քայլելու։ Թեհրանից ստացուող լուրերը խիստ անմխիթարական գոյներով են նկարագրում կենտր. կառավարութեան արդի կացութիւնը։ Շնորհիւ Մէջլիսի նեղ, թաղթայական եւ «գոյութիւն չունեցող կուսակցական շահերի» շուրջը մղուող պայքարի, անհնարին է լինում նախարարական մնայուն կազմ ունենալ՝ ներկայ ճգնաժամին անգամ։ Երկիրը, կարելի է ասել, բացարձակապէս անտէր է, ոչ ոք գոյութիւն չունի արտաքին ուժի դէմ դիպլոմատիական բանակցութիւններ վարելու։ Այս հանգամանքը ստիպում է Եփրեմին եւ իւրայիններին մի չորսժամեայ ուլտիմատումով դիմել Մէջլիսին, որ կարինէտ կազմէ, նոր ընտրութիւններ նշանակէ եւ ընդհանրապէս միջոցներ ձեռք առնէ երկիրը նիւթական ու բարոյական անկումից ազատելու։ Այս ուլտիմատումը ինչպէս երեւում է ռուսական ուլտիմատումից աւելի զօրաւոր է եղել եւ Մէջլիսը չտապել է անմիջապէս բաւարարութիւն տալ տրուած պահանջներին։*

Արդէն յայտնի կը լինի ձեզ, որ ռուսական ուլտիմատումը ստանալով՝ կառավարութիւնը, մերոնց խորհուրդով, անմիջապէս ընդհ. ներումն է յայտարարում ամբողջ երկրում «բացի դաւաճան Մամէտ Ալուց». սակայն այս խրոխտ ժեստն էլ իր արդիւնքը ցոյց չտուեց. ձեւական հաշուութիւն տեղի ունեցաւ, սակայն մինչեւ այժմ էլ միապետականները իրենց դիրքերում են եւ կարծես չեն էլ մտածում միանալ եւ [ձեռք] ձեռքի տրուած դէմ դնել վերահաս չարիքին՝ ռուսական տիրապետութեան։ Ժողովրդի խիստ փոքրաթիւ մասը միայն գիտակցում է թէ ի՞նչ պիտի կորցնէ. մինչեւ այժմ, ընդհանրապէս, մզկիթները հաւաքուելուց, ճառեր լսելուց եւ մէկ-մէկ էլ ազգասիրաբար արտասուելուց բացի՝ ոչինչ տեղի չի ունեցել։

Ռուսները մեզ մօտ[105] *իրենց շատ լաւ են պահում, մէկ-մէկ դեմոնստրատիւ*[106] *կերպով շրջում են փողոցներում, ուրիշ ոչինչ։ Գաւառներում արդէն սկսել են հետաքրքրուել եւ մի շարք «*ռուսահպատակների*» մասին հարց ու փորձ են արել։ Ընկերների դրութիւնը որոշ չափով փափկում է։*

Ղարադաղում էլի թուրք խաները սկսել են թալանել հայ գիւղերը. կառավարութիւնը թէեւ խոստացել է առաջն առնել, սակայն համոզուած ենք, որ ոչինչ չի կարող անել։

Եփրեմը Թեհրան է, մերոնք էլ՝ իրենց դիրքերում։ Ապագան անորոշ է, ներկան էլ հեռու է մխիթարական լինելուց։ Ամէն ժամ նորութիւնների ենք սպասում։

Ջերմագին բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

105.- Մեզ մօտ – այսինքն Թաւրիզ, Ատրպատական։
106.- Ցուցական։

Փաստ. 334-3

(Պատճէն)

Դ 21.– ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ [ԲԱԳՈՒԷՆ]

Ոսկանապատ, 9 Դեկտ. 1911

«Գէօգ-Թեփէ» շոգենաւով այս շաբթուս ուղարկուեց 25000 *հրացան,* 28 *գնդացիրներ Մեհմէդ Ալի Շահի համար։ Օսեդիններ եւ Զէյթիններ ամէն երեկոյ հարիւրներով անցնում են Մեհմէդ Ալի Շահի մօտ. վերջիններուն ղեկավարում են նոյն ցեղի գեներալ-գնդապետներ. լեռնականների թիւը հասնում է* 2000*ի. բացի դա կան ռուսներ եւ վրացիներ։ Ռուսաց ներկայացուցիչը կանչում է թիւրքմէններին եւ յայտարարում, որ հետեւակ զօրքը կը ստանայ օրական* 5-6 *թուման, իսկ ձիաւորը՝* 10-12 *թուման։ Այդ շրջանում, ծովափում կան* 5 *զինուորական նաւ, որոնք թնդանօթները դէպի ափ յառած, ամէն րոպէ գիշերները լուսաւորում են շրջակայքը իրենց պրոժեկտորներով*[106ա]։ *Եթէ Եփրեմը երեւայ այդ կողմերում, հրամայուած է որ քաղաքում գտնուած ռուս զօրքերը անցնեն Մեհմէդ Ալիի կողմը։ Վերջինիս զօրքի թիւը հասնում է հինգ հազարի։ Ռուս կառավարութիւնը մի կողմից յայտարարում է որ չի աջակցում Մեհմէդ Ալիին, իսկ միւս կողմից զինում է նրան այնպէս, որ վերջնական յաջողութիւնը էքսի*[76] *կողմը լինի։ Այս բոլորը մանրամասն գիտեն Զէյթիշլեարի բնակիչները. սրանցից* 20 *վերստի վրայ է գտնւում Մեհմէդ Ալին եւ լեռնականները. զէնքերն էլ արդէն փոխադրւում են Զէյթիշլեարի վրայով։ Երէկ Բագուից մեծ քանակութեամբ զռաններ*[106բ] *տարան դէպի այդտեղ։*

Ամէն երեկոյ, լեռնականները թիւով 60-70-100*ով գնում են դէպի Զէյթիշլէր, իւրաքանչիւր խումբի ունի առաջնորդ զինուորականը։ Ամսոյս մէկին նոյն գծով անցաւ Կնեազ Ամիրաջիբին օսեդին իւր լեռնականներով։*

Կարծում եմ որ այս տեղեկութիւնները, թէպէտ ըստ իս մի փոքր չափազանցուած, սակայն որպէս հաստատ եւ ստոյգ տեղեկութիւն (Ոսկանապատի մեր հին ընկերներից ստացուած) անհրաժեշտ է հեռագրով տեղեկացնել «Թայմզ»ին, «Թան»ին եւ մի քանի մայրաքաղաքների գլխաւոր թերթերի:

Ալիք

Ռուսները էնզելիում եւ Ռաշտում ոստիկանութեան եւ կառավարութեան բոլոր զէնքերը, փամփուշտները գրաւեցին. այդ երկու վայրերում պարսկական կառավարութիւն գրեթէ գոյութիւն չունի. ռուսներն անում են, ինչ ցանկանում են։ Սակայն Ռաշտում դեռ խանութները փակ են, մեծ մասամբ, ռուսները սպասում են, որ եթէ խանութները չբացուեն, կոզակների միջոցով խանութները ջարդել են տալու եւ թալանեն։ Ռաշտի ռուս հիւպատոսը մինչեւ այն աստիճան առաջ է գնացել, որ այդտեղի տաճկաց հիւպատոսարանում ապաստանող եւ տաճկահպատակ մեր մի-երկու ընկերներին ուլտիմատումի ձեւով (48 *ժամ*) *պահանջել է դուրս հանել։ Լսում ենք, որ Խալիդ բէգը հեգնել է այդ պահանջը։ Վերջերս, այս երկու երեք օրերս, ռուսների քայլերը քիչ մեղմացել են, երեւի կամ Մուհարէմի օրերի*[107] *պատճառով՝ աւելի չգրգռելու մահմեդական ամբոխին, եւ կամ, թերեւս, արտաքին միջամտութեանց ազդեցութեան պատճառով։ Ռաշտի ռուս հիւպատոսը մի պարսկերէն ազդ է ցրել, որ իրենք պարսիկ ժողովրդի խաղաղ մասին հետ ոչինչ չունեն, որ իրենք պարսիկներին բարեկամ են եւայլն, սակայն մի քանի խռովարարներ զէնք են արձակել ռուս զինուորների վրայ, որի հետեւանքով ռուս զինուորներն էլ ստիպուած են եղել կրակել եւայլն։*

Ինչպէս լսում ենք, Թաւրիզում դեռ շարունակւում է ռուսների եւ պարսիկների միջեւ կռիւը։ Արքը[108] *ուր ապաստանած եւ կուսում են դիմադրող պարսիկ ոյժերը, խիստ ամուր տեղ է. դեռ մինչեւ նախորդ օրը, ինչպէս լսում էինք, երկուստեք միայն հրացանաձգութեամբ են զբաղուած. այսօր լուր տարածուեց տեղս, որ ռուսները քաղաքին տիրացել են եւ Արքը թնդանօթի կապել։ Ըստ ոմանց* 400-500-*ից աւելի պարսիկ է ընկած. իսկ ռուսներից հազիւ* 20-30 *հոգի։*

Էնզելի ժամանեց բացի «Կրասնավոդսկ» ռազմանաւից մի ուրիշ զրահաւոր մեծ նաւ՝ «Ղարս» անուամբ։ Ակներեւ նկատւում է, որ ռուսները աշխատում են իրենց կառավարութեան տուած զեկուցագրի մէջ ըմբոստութեան մասնակից ցոյց տալ եւ պարսկաստանի հայ ժողովրդին, եւ տաճկահպատակ հայերին. այս մասին պէտք է ամէն կողմ յայտնել, որ ռուսները պրովոկացիա[109] *են սարքում հայերի դէմ։*

«Պորտ Արտուր»ին[29] *նամակ ուղղելիս ուղարկեցէք ռէկոմանդէ*[110], *հետեւեալ հասցէով՝* Enzeli (Perse), Mr. Melik Melikian, *ներսում մի ուրիշ ծրարում՝ պ. Արտուրեանին։*

Այս բոպէիս տեղեկացայ, որ Ռաշտից 10-12 *հոգի պարսկահպատակների, որոնց մէջ եւ* 1-2 *հայեր եւ վրացի, ռուսները ձերբակալած բերին էնզելի, պատերազմական «Ղարս» նաւին յանձնեցին, որ տանեն Բագու։ Ձերբակալուածների մէջ կան Ռաշտի Անջումանի*[33] *անդամներ։*

ԱԼԻՔ

106ա.- Լուսարձակներով։
106բ.- Պարսկական արծաթադրամներ։
107.- Մուհարէմ ամսուան մէջ, Մուհամէտ մարգարէի եղբօրորդի Իմամ Ալիի որդիներուն՝ Հասանի եւ Հիւսէյնի սպանութեան ոգեկոչման օրեր։ Շիա իսլամներու մօտ սգատօն (Աշուրա)։
108.- Արք կամ Ղալա – Թաւրիզի միջնաբերդն է։
109.- Գրգռութիւն։
110.- Յանձնարարեալ, պատուիրուած։ Պորտ Արտիւրը՝ Էնզէլիի դաշնակցական կազմակերպութեան կուս. ծածկանունն է։

Փաստ. 478-127

ԱՐՓԱԼԵԱՆ
ԱՆՏԻՊԱՐԱՆ ԿՈՄԷՔ
1948թ. Դեկտ. 14.

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

DASCHNAKTZOUTIOUN

Դ 22.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԹԵՀՐԱՆԻ ՇԱՀ ԿՈՄԻՏԷԻՆ

Թաւրիզ, 17 Դեկտեմբեր 1911

Սիրելիք!

Ձեզնից նոր նամակ չենք ստացել. երեւի փոստերի չգործելու պատճառով: Հաստատում ենք մեր № 113 գրութիւնը:

Թերեւս լրագիրներից տեղեկացած կը լինէք քաղաքիս վերջին դէպքերի մասին. պարտք ենք համարում այդ առթիւ տեղեկացնել ձեզ, քանի որ չգիտենք թէ այս բոլորը ինչ գոյնով է ներկայացուած մամուլի մէջ: Դէպքերի սկզբնապատճառը ամէն մարդ իր շահերի համաձայն է գունաւորում: Ամենատարածուած լուրը այն է, որ ռուս զինուորները ուզել են բռնի կերպով մտնել ոստիկանատուն իբր թէ տելեֆոնի ինչ որ լար նրա կտուրով անցկացնելու թէ կտրուածը կապելու: Ոստիկանները թոյլ չեն տալիս եւ այդտեղ ռուս օֆիցէրը տեղն ու տեղը սպանում է մէկին: Այդ դէպքը տեղի է ունենում Դեկտ. 7-ի երեկոյեան: Միւս օրը արդէն գրաւուած էր ոստիկանատունը եւ շրջապատուած էր Այալաթն ու նահանգապետարանը: Թուրքերը 8-ի առաւօտեան զէնքի են դիմում: Կռիւը տեղի է ունենում եւ փողոցներում եւ ռ[ուսական] բանակատեղիի ու միջնաբերդի մէջ: Այդ օրը ռուսները ահագին կորուստ են ունենում: Ռուսական պուլէմիոտներն[111] ու թնդանօթները անզօր են լինում որեւէ դրական հետեւանքի հասնելու: Այդպէս կռիւը տեւում է ամբողջ 3 օր: 4րդ օրւանից թուլանում է կռիւը, իսկ 7-րդ օրը բոլորովին վերջանում: Թուրք կռուողները բոլորն էլ քաշւում են, նախապէս բերդը դատարկում, իրենք էլ թագնւում կամ փախչում:

Ռուսական նոր զօրքերը քաղաք մտնելով տիրում են նրան եւ բերդի վրայ իրենց դրօշը ծածանեցնում: Նահանգապետ Ամանուլլահ Միրզան դեռեւս կռուի չորրորդ օրը բաստ է նստում[112] անգլիական հիւպատոսարանում: Թուրք խուժանը յարձակւում է Անջումանի[33] վրայ, քար ու քանդ անում եւ անդամներից մէկին էլ սաստիկ ծեծի ենթարկում: Այժմ արդէն ամէն ինչ վերջացած է եւ ռուսները քաղաքի կատարեալ տէրն են: Այսօրուանից բացել տուին նաեւ բազարները: Երկու կողմից էլ բաւական անգթութիւններ են տեղի ունեցել: Ռուսները կռուի ժամանակ անզօր բարկութիւնից կոտորեցին բանակի շուրջը գտնուող թաղամասերի խաղաղ բնակիչներին՝ առանց հասակի եւ սեռի խտրութեան: Թուրքերն էլ ձեռք անցած կենդանի զինուորներին էին դէս ու դէն թաղում:

Մենք կռիւների ընթացքում ստիպուած էինք չէզոք դիրք բռնել, որովհետեւ նախ քան կռիւները մեզ ոչինչ չէր յայտնուած եւ մենք չգիտէինք թէ ինչ է արւում եւ ինչպէս, երկրորդ՝ որ տեղւոյդ կառավարութիւնը հակառակ էր, երրորդ՝ որ մեր ուժերը անբաւարար էին կռուին մեր ցանկացած տոնը տալու եւ չորրորդ՝ որ յոյս չունէինք թուրքերի դիմացկունութեան եւ յարատեւ կռուի նկատմամբ:

Թերեւս այս կռիւը տեղի չունենար, եթէ կռուողները առաջուց իմանային, որ դիպլոմատիական ճանապարհով արդէն հարթւում է ուլտիմատումը:

Այսպիսի պարագաներում մեզ մտահոգութիւն է պատճառում «Առաւօտն», որովհետեւ եթէ ազատ արտայայտուելու լինինք կարող է բարդութիւններ առաջ գալ, եթէ ոչ, այն ժամանակ չարժէ պահել այն: Կարող է պատահել որ այդտեղ փոխադրելու խնդիր լինի: Այդ մասին մօտիկ ապագայում կը գրենք ձեզ:

Մեր տղաները կռուի երրորդ օրը հեռացան քաղաքից դէպի գաւառները[113]: Տեղւոյս կռուող թուրքերի քէֆին երեւի մի քիչ կպել է մեր այս քայլը:

Գրեցէք այդտեղի քաղաքական դրութիւնից:

Ընկերական բարեւներով
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

111.- Գնդացիրները:
112.- Կ'ապաստանի:
113.- Ակնարկութիւն Նիկոլ Դումանի եւ հայ մարտիկների Թաւրիզն հեռանալուն:

Ց.Գ.- Կարծում էինք, որ մեզ կը յաջողուի 17-ին գրածը թղթատարին յանձնել, որովհետեւ լսել էինք, որ այդ օրը փոստը նամակներ ընդունում է, սակայն ի զուր: Ռուսները գրաւել էին փոստը եւ մինչեւ այսօր էլ գրաւած պահել: Անցեալ գիշեր նշանակուած ռուս զինուորները կատարեալ կողոպուտի ենթարկեցին փոստը եւ ամէն ինչ տակնուվրայ արին: Ասում են, որ այդ յանցագործներին գնդակահար են արել դաշտային դատարանի վճռով: Նոյն այդ դատարանի հրամանով ամսոյս 19-ին կախաղան բարձրացրին տեղւոյս ականաւոր մուշտէյիդ Սըգոթուլ իսլամին, Անջումանի անդամ՝ Շէյխ Սալիմին եւ էլի 6 ուրիշ «խռովարարների»: Այսօր էլի 3 ոչ այնքան յայտնի անձանց եւ այսպէս շարունակաբար թերեւս մի ամբողջ շարան: Հայերի վերաբերմամբ ոչինչ չէ արուած: Երէկ քաղաք ժամանեց արդէն Սամադ խանը[77], ռուսական դրօշակով, որի նահանգապետ լինելու մասին յամառ լուրեր են տարածւում: Այդ բանը մեծ չարիք պէտք է համարել ամբողջ քաղաքի եւ մասնաւորապէս մեր վերաբերմամբ: Ձգիտենք կենտրոնը ի՞նչ է մտածում այդ մասին: Այսօր արդէն նա գրաւոր յայտարարել էր, որ պետական մարդիկ պէտք է նկատել ֆարրաշներին ու իր մարդկանց եւ ենթարկուել նրանց միայն. խոստանում է շուտով քաղաքապետ եւս նշանակել: Ամէն ինչ դէպի հին կարգ ու կանոնն է դիմում: Միեւնոյն ժամանակ լսում ենք, որ նրա մարդկանց զինաթափ են արել ռուսները: Ամէն ինչ անորոշ է: Սակայն անհրաժեշտ դէպքում մենք միշտ էլ հեռագրներով հաղորդում ենք ձեզ: Դուք, պէտք է նկատել, մի քիչ ժլատ էք լուրեր հաղորդելում: Այդ մեզ համար մի զգալի մինուս է:

Ի միջի այլոց գրաւուած է նաեւ Լիլաւայի հայոց դպրոցը, որը ներկայումս կազարմայի տեղ է ծառայում, դասերը դադարեցրուած են այնտեղ: Ուրիշ նորութիւններ չկան: Ռմբակոծելով կործանեցին Սաթուր եւ Բաղր խաների տները:

Ջերմ համբոյրներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 478-128

Դ 23.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՈՅԻՆ (ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ)

Թաւրիզ, 21 Դեկտեմբեր 1911

Ընկերներ!

Ձեզնից նոր նամակ չունինք: Հաստատում ենք մեր № 111-ը:

Մեր ներկայ քաղաքական կացութեան մասին թերթերից տեղեկացած կը լինէք, սակայն փոստային հաղորդակցութիւնից միանգամայն կտրուած լինելով չգիտենք ինչ գունաւորումներով է պատկերացրել մամուլը ամսոյս 7-ից մինչեւ այժմ կատարուած դէպքերը: Ամսոյս 7-ի երեկոյեան հեռախօսի ինչ որ լար ամրացնելու պատրուակով ռուսները մտնել են ուզում քաղաքիս ոստիկանատունը. ոստիկանները թոյլ չեն տալիս: Ռուս սպաներից մէկը տեղն ու տեղը գնդակահար է անում մի ոստիկանի, որից յետոյ սարսափահար ոստիկանները ցրւում են թողնելով չէնքը ռուսներին: 8-ի առաւօտեան արդէն շրջապատուած էր ռուս զինուորներով թէ ոստիկանատունը, թէ Անջումանը (նահանգական) եւ թէ նահանգապետարանը: Միաժամանակ կռիւ է սկսւում փողոցներում եւ միջնաբերդի ու ռուսաց բանակատեղիի մէջ: Թուրք կռուողներին յաջողւում է փողոցները մաքրել եւ ազատել վերոյիշեալ 3 հաստատութիւնները պաշարումից: Ռուսները ահագին զոհեր տալով կենտրոնանում են բանակատեղին, որը գտնւում է քաղաքի ծայրի թաղամասերում: Նոյն յաջողութեամբ թուրքերը կռւում են 4 օր: Մեզ համար միանգամայն անակնկալ էր այդ կռիւը եւ դժուարանում էինք որեւէ դիրք բռնել: Նամանաւանդ մեզ դժուար կացութեան մէջ էր դրել այն հանգամանքը, որ թուրքերը նախ քան կռիւ սկսիլը որեւէ խորհրդակցութիւն չէին արել մեզ հետ. կռուի օրերին էլ ոչ կանչում էին եւ ոչ էլ մի բան ասում. կարծես թէ մենք գոյութիւն չունէինք դրանց համար: Ստիպուած ենք լինում դիմել մայրաքաղաք: Այնտեղից մեզ հաղորդում են, որ որեւէ կռիւ ռուսների դէմ միտք չունի, կենտր. կառավարութիւնը դէմ է դրան եւ արդէն 48 ժամեայ ուլտիմատումով դրուած պահանջներին բաւարարութիւն են տալիս: Մեզ խորհուրդ են տալիս միեւնոյն ժամանակ չէզոք մնալ եւ աշխատիլ մի կերպ վերջ տալ սկսուած կռուին: Մենք էլ ի նկատի ունենալով, որ մեր ասպարէզ նետուիլը առանձին օգուտ չունենալուց բացի կարող է կազմակերպական, քաղաքական եւ ազգային տեսակէտից նոր աղէտների ու հալածանքների դուռ բանալ, որոշեցինք չէզո-

քանալ եւ միեւնոյն ժամանակ տեղական կառավարութեան հետ խորհրդակցիլ մի կերպ պատուաւոր վերջաւորութիւն տալու այս պայքարին։ Կենտրոնից նոյն կարգի հրահանգներ ստացան եւ տեղական կառավարութիւնն ու կռուի ղեկավարները։ Մի կողմից այս հրահանգները, միւս կողմից էլ ռուսական նոր զօրքերի գալստեան լուրը յուսահատեցրին թուրք կռուողներին եւ նրանք կռուի հինգերորդ օրուանից սկսեցին թողնել իրենց դիրքերը աստիճանաբար։ Այս բանը տեսնելով ռուսները իրենց նորից զօրեղ զգացին եւ ամբողջ զօրութիւնը ապացուցելու համար մի օրուայ մէջ սրի անց կացրին մօտ 1500 անմեղ մարդկանց առանց սեռի ու հասակի խտրութեան։ Սկսուեցին բռնաբարութիւններ, կողոպուտներ, ծեծի ու սպանութեանց զազրելի մի շարան։ Մուրացկաններն անգամ, իրենց ողորմելի արտաքինով, զերծ չէին կոտորածից։ 14-ին թէ 15-ին ռուսական նոր զօրքը քաղաք է մտնում թնդանօթների զարկերով ճամբայ հարթելու։ Այլեւս ոչ մի դիրքից թուրքերը չեն պատասխանում. բոլորն էլ ցրւում են, ոմանք փախչում են, ոմանք էլ թագնւում։ Նախ քան այդ, թուրք խուժանը յարձակւում է Անջումանի վրայ, չէնքը ցրիւ տալիս, անդամներից մէկին էլ, որ ուշացել էր փախչել, լաւ ջարդում։ Այս դէպքը կատարւում է ռուսաց կազմակերպած ջարդի օրը։ Նոյն օրը նահանգապետ՝ Ամանուլլահ Միրզան բաստ է նստում[112] անգլիական կոնսուլատը։ Զարմանալի էին այդ օրերին բոլոր պետութեանց կոնսուլները, բոլորն էլ թամաշաչիներ էին դառել, ոչ մէկից ոչինչ չէր լինում հասկանալ եւ աւելի եւս զարմանալի էր տաճկաց կոնսուլը, որը մինչեւ իսկ իր հպատակներին պաշտպանելու չէնք ու շնորքից զուրկ է։

Ամսոյս 15-ից մինչեւ այժմ, քաղաքի կատարեալ տէրը ռուսներն էին, քանի որ ոչ նահանգապետ գոյութիւն ունի, ոչ ոստիկանութիւն, ոչ Անջուման եւ ոչ էլ դատարան կամ պետական որեւէ այլ հաստատութիւն։

16-ից սկսւում են ձերբակալութիւններ, միւս կողմից թուրքերը սկսում են զէնքերի յանձնման տխուր արարողութիւնը։ Ձերբակալուածներից 8 հոգուն ամսոյս 19-ին կախում են քաղաքի ամենամեծ հրապարակում։ Կախուածներից մէկը Սըգոթ-ուլ-իսլամ անունով ականաւոր կրօնապետն էր, մէկն էլ անջումանի ծեծուած անդամը՝ Շէյխ Սալիմը։ Մնացած 6 հոգին երիտասարդ նոյնիսկ պատանի յեղափոխականներ էին։ Դրանցից ամենադեռատին՝ մի 18 տարեկան պատանի էր, որը «կեցցէ սահմանադրութիւնը» պոռալուց յետոյ իր ձեռքով թոկը անց է կացնում վիզը եւ խեղդւում իր մի եղբօր հետ նոյն ժամին։ 3 հոգու էլ այսօր կախեցին։ Դեռեւս շատ շատերի անուններ են տալիս որոնց նոյն պատիժն է սպասում եւ որոնք արդէն ձերբակալուած են։ Ռուսական այդ յաղթանակի օրերին քաղաք է մտնում Սամադ խանի Ֆարրաջբաշին 50 հոգով։ Ինքը՝ Սամադ խանը 20-ին մտաւ քաղաք ռուսական դրօշակով։ Այսօրւանից արդէն կարգադրութիւններ է անում, որպէս նահանգապետ։ Կարծես ամէն ինչ հին, բարի ժամանակների կերպարանքն է սպառնում ընդունել։

Այս բոլոր արիւն-աւերածութեանց մէջ հայկական երկու թաղերը ազատ են մնում եւ մինչեւ այժմ էլ որեւէ անախորժութիւն տեղի չի ունեցել եթէ չհաշուենք այն, որ Լիլաւայի հայկական դպրոցը ռուսական մի հարիւրեակ իրեն կազարման[114] է դարձրել եւ մօտ 400 երեխաներ մնացել են փողոցներում։ Հայերի այս արտօնեալ դրութիւնը պէտք է բացատրել գլխաւորապէս մեր չէզոքութեամբ եւ մեր կռուողների քաղաքից հեռանալով՝ դեռեւս կռուի կատաղի օրերում։

Ընկ. ջերմ բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

114.- Զօրանոց, բանակատեղի:

Փաստ. 478-131

Դ 24.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 29 Դեկտ. 1911

«Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած այս գրութիւնը ձեւով մը կրկնութիւնն է նախորդ՝ Արեւմտեան Բիւրոյի Պոլսոյ հատուածին ուղղուած նամակին, որոշ յաւելումներով։ Իբրեւ համադրական լրատուութիւն՝ 1911 թ. Դեկտեմբեր ամսուն ռուսական զօրքի նոր միջամտութեան Թաւրիզի շրջանին մէջ, գրութիւնը սահմանուած էր յայտնաբար «Դրօշակ»ի ընթերցողներուն։ Արդարեւ պաշտօնաթերթի 1912 թ. 4րդ համարին մէջ (էջ 86-87), «Ռուսական արշաւը» խորագրուած եւ խմբագրական աննշան փոփոխութիւններով հրատարակուած է ան ամբողջութեամբ։

Ընկերներ!

Վերջերս մեզ մօտ եւ Պարսկաստանի միւս քաղաքներում ռուսների հետ տեղի ունեցած ընդհարման մասին պարտք ենք համարում տեղեկացնել ձեզ։ Մամուլում խիստ կցկտուր եւ միակողմանի կերպով է պատկերացրուած այն բոլորը, ինչ որ կատարուեց Դեկտ. 7-ից մինչեւ այժմ եւ պիտի շարունակուի թերեւս սրանից յետոյ էլ։

Ցարական կառավարութեան երկրորդ՝ 48 ժամեայ ուլտիմատումը եւ տարածուած այն լուրը, որ իբր թէ պարսիկ կառավարութիւնը մերժել է ուլտիմատումի բոլոր կէտերը՝ ելեկտրականացրել էր ամբողջ մթնոլորտը։ Երկրում գործող յեղափոխական տարրերը կառավարութեան այդ մերժումը ընդունեցին մեծ յափշտակութեամբ, դրա մէջ տեսնելով Իրանի ոտնահարուած իրաւունքների եւ արժանապատուութեան վերականգնումը։

Այսպիսի մի մոմէնտում բաւական էր մի կայծ միայն հրդեհը բորբոքելու համար, մի փոքրիկ առիթ, որպէսզի ներքուստ ամբարուած դժգոհութիւնը դուրս պոռթկար։ Եւ ռուսական կառավարութիւնը չուշացաւ այդ առիթը ներկայացնել՝ նոր զօրքեր լցնելով Պարսկաստանի ծովափնեայ քաղաքներից Ռաշտ եւ Էնզելի եւ այնտեղից առաջանալով Ղազուին ու սպառնալով մայրաքաղաքին։

Այդպիսի մի կարեւոր մոմէնտում, երբ երկրի անկախութեանն է վտանգ սպառնում, կենտրոնական կառավարութիւնը խիստ ողբալի պատկեր էր ներկայացնում իրենից.— մինիստրութիւն գոյութիւն չունէր, ռէգէնտը[115] իր հրաժարականի վրայ էր պնդում, Մէջլիսը խօսելու, քննադատելու եւ հրաժարեցնելու մէջ միայն վարպետ, իսկ թագաւորը՝ մանուկ։ Էլ ո՞վ պիտի դիմադրաւէ վերահաս վտանգը։ Այսպէս կոչուած դիպլոմատիական մարմնի այս տխուր պատկերին եթէ աւելացնելու լինինք եւ այն, որ երկրի զինուորական ոյժն էլ ex-Շահի դէմ մղած կռիւների ընթացքում ջլատուած էր եւ ասպարէզի վրայ մնացել էր միայն Եփրեմը իր փոքրաթիւ եւ հաւատարիմ մնացած բախտիար ղեկավարներով, միւս կողմից էլ յեղափոխական տարրերի բաժան-բաժան վիճակը, ապա պարզ կը լինի ձեզ համար մեր երկրի մօտաւոր վիճակը այդ ծանր օրերին։

Ծրագրուած եւ յարատեւ պայքար պարսիկների կողմից անհնարին է յուսալ, որովհետեւ ոչ ոք ոչ ոքից տեղեակ չէր եւ միւս քաղաքներում մինչեւ իսկ յայտնի չէր թէ ինչ է կատարւում կենտրոնում եւ ինչ դրութեան մէջ էր այն։ Մի կերպ այս ցաւը դարմանելու համար, Եփրեմը միւս զինուորական ղեկավարներով մի 4 ժամեայ ուլտիմատում է ներկայացնում Մէջլիսին, որպէսզի սա անմիջապէս վերակազմէ մինիստրական կազմը քիչ աւելի լայն իրաւունքներով եւ նշանակէ նոր ընտրութիւն եւ մինչ նոր Մէջլիսի գումարումը, ազգու միջոցներ մտածէ ռուսական ուլտիմատումը հարթելու եւ փոխառութեան խնդրին վերջ տալու։

Այս անակնկալ հարուածը կարծես մի քիչ սթափեցնում է Մէջլիսին եւ նա սկսում է արուած պահանջներին բաւարարութիւն տալ։ ի միջի այլոց նա ընտրում է նաեւ մի կոմիսիա ռուսական ուլտիմատումը քննելու եւ ներկայ դրութեանը մի կերպ վերջ տալու։

Այս բոլորի հետ միաժամանակ սկսւում է նաեւ կռիւը։ Ռաշտում թուրքերը մերոնց հետ մի փոքրիկ ընդդիմադրութիւն են կազմ[ակերպ]ում ռուսների դէմ, որը չի յաջողւում եւ ռուսները ամենայն բարբարոսութեամբ խեղդում են այն։

Հէնց նոյն օրը երեկոյեան (7-ի) մեզ մօտ քաղաքի ոստիկանատանը տեղի է ունենում մի փոքրիկ ընդհարում ռուս զինուորների եւ թուրք ոստիկանների միջեւ, որովհետեւ ռուս զինուորները ինչ որ հեռախօսի լար

115.- Պետական խնամակալ (անչափահաս Շահին):

ամրացնելու պատրուակով ուզել են ոստիկանատան կտուրը բարձրանալ· իսկ ոստիկանները կարծել են որ այդ պատրուակով ուզում են չէնքը գրաւել եւ չեն թոյլ տուել։ Այդտեղ սպանւում են երկու ոստիկան եւ մի ռուս տանտպետ։ 8-ի առաւօտեան ռուս զինուորներով շրջապատուած էին ոստիկանատունը եւ նրան մօտիկ գտնուող կառավարչական հաստատութիւնները, որպիսիք են նահանգապետարան, Անջուման եւայլն։ Թուրք ոստիկաններն ու կամաւորները աշխատում են զինու զօրութեամբ մաքրել փողոցները· դրանցից մի փոքրիկ խումբ էլ ամրանալով քաղաքի միջնաբերդում սկսում է այնտեղից ռմբակոծել ռուսաց բանակատեղին։ Ռուսները, որ երբեք չէին սպասում այդպիսի յանդուգն դիմադրութեան՝ գլուխները կորցնում են թուրքերի ուժեղ գրոհից եւ ամբողջ օրը հազիւ են կարողանում այս ու այն կողմերում իրենց ցրած ուժերի խըղճուկ մնացորդները հաւաքել։ Այդ օրը թուրքերի յաջողութիւնը բացարձակ էր եւ ռուսները ահագին կորուստներ տալով յետ են մղւում եւ կենտրոնանում իրենց բանակատեղին, որը գտնւում էր քաղաքիս ծայրում գտնուող մի այգու մէջ։

Կռիւը նոյն յաջողութեամբ շարունակւում է մինչեւ ամսիս 13-ը, որից յետոյ թուրք կռուողները ընկճուած կենտրոնից տեղացող յորդորների՝ այն է թողնել կռիւը, որ կառավարութիւնը արդէն ընդունել է ուլտիմատումը իր ամբողջութեամբ—, թողնում են միջնաբերդը եւ գրաւած դիրքերը աստիճանաբար։ Սրանց ընկճուելուց ռուսները իրենց ուժեղ զգալով մի վայրագ կոտորած են սկսում բանակի շուրջը գտնուող թաղամասերում, սրի անցնելով ձեռքները ընկած թուրքին առանց տարիքն ու սեռը նայելու։ Ռուսական նոր զօրքերի գալստեան լուրը աւելի եւս կատարեալ, լքումն է առաջ բերում կռուողների մէջ... Մերոնք ծածուկ թողնում են քաղաքը եւ հեռանում։

Տգէտ խուժանը ռուսական այդ խստութեանց միակ պատճառը համարելով Անջումանը եւ սահմանադրութիւնը՝ յարձակւում է Անջումանի վրայ, ցրում այն, անդամներից՝ Շէյխ Սալիմին ծեծի ենթարկում եւ ապա դիմում քաղաքը պաշարող միապետական Սամադ խանին (Շուջայի Դովլէին) որ գայ եւ տէրութիւն անէ իրենց։ Նահանգապետը վախից ապաստանում է անգլիական հիւպատոսարանը։

14-ին արդէն նոր եկած զօրքերը մօտենում են քաղաքին, որը զրկուել էր դիմադրող ուժերից եւ ռմբակոծելով ներս է մտնում։

Սկսւում է ռուսական զօրքի յատուկ վայրագութիւնների շարքը, ծեծ, ջարդ, կողոպուտ, բռնաբարութիւններ։ Չէ՞ որ քաղաքի բացարձակ տէրերն են, մարդիկ տէրութիւն են անում իրենց հասկացած ձեւով։ Մինչեւ 17-ը այսպէս շարունակելուց յետոյ, 18-ից սկըսւում են ձերբակալութիւնները եւ 19-ին քաղաքի կենտրոնում կախաղան են բարձրացնում 8 հոգու, քաղաքի ականաւոր հոգեւորականներից, Անջումանի անդամներից եւ յեղափոխական գործիչներից։ Ինչպէս ռուսներն են վկայում, բոլորն էլ հերոսաբար են կախւում, դրանցից մէկը մի 18ամեայ պատանի երեք անգամ կեցցէ սահմանադրութիւնը գոռալուց յետոյ իր ձեռքովն է անց կացնում թոկը իր վիզը, դահիճներից միայն մի բան խնդրելով, որ թոյլ տան իր հետ կախուող եղբօրը իր կողքին կախելու։ 19-23-ը կախաղան բարձրացրին 20 հոգու, նախապէս կողոպտելով եւ գետնին հաւասարեցնելով դրանց տները եւ ամբողջ ընտանիքները թողնելով բաց երկնքի տակ։

Սամադ-խանը, որ առաջին անգամ մերժել էր քաղաք գալ եւ միայն իր ֆարրաշբաշին[116] *էր ուղարկել, որոնք ռուսական դրօշակը թեւերին կապած դահճի պաշտօն էին վարում, ամսի 20-ին իր շքախմբով ռուսական դրօշակ պարզած մտաւ քաղաք եւ բազմեց նահանգապետական աթոռին։ Այն ինչ չէր յաջողուել նրան երկար ամիսների ընթացքում այժմ յաջողուեց չնորհիւ ռուսական ուժի։ Սակայն ռուսները շարունակում են մնալ քաղաքի իսկական տէրերը եւ Սամադ խանն ու իր ֆարրաշները լոկ գործիքներ են ռուսների ձեռքում։*

Այս բոլորի ընթացքում ամբողջ հայ ազգաբնակութիւնը սարսափահար դիտողի անախորժ դերի մէջ էր եւ հէնց դրան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ ռուսները մինչեւ այժմ որեւէ հայի մազին անգամ չեն դիպել։

Իսկ մասնաւորապէս մեր դիրքը այդ կռիւների ընթացքում եղաւ չէզոք, որովհետեւ նախ՝ մեզ համար այդ անակնկալ կռիւներին՝ թուրքերը որեւէ խորհրդակցութիւն չէին ունեցել մեզ [հետ], որպէսզի մենք իմանայինք թէ մինչեւ որ աստիճան լուրջ եւ մտածուած բնոյթ է կրում այդ եւ երկրորդ՝ կենտրոնական կառավարութեան վերաբերմունքը յուսահատական էր եւ կարող էր պրովոկացիայի[109] *դուռ բանալ մեր դէմ, որպէս չարիքի պատճառի։ Այս եւ մի քանի դրա նման նրկատումներով մենք մեզ չէզոքացրինք եւ մեր մարտիկները հէնց կռուի առաջին օրերին թողին քաղաքը աւելորդ անախորժութիւնների տեղիք չտալու համար։*

Առ այժմ դրութիւնը անորոշ է, սակայն խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները բաւական թուլացել են 3-4 օրից աւելի է։

Թէ ի՞նչ կը լինի վաղը՝ չգիտենք։

Ջերմ բարեւներով՝
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

116.- Խանական (զինեալ) ծառաներու պետ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ.
(1909 – 1912)

ԲԱԺԻՆ Ե.
(1912)

Պարսկաստանի սահմանադրական շարժումներուն յատկացուած հինգերորդ եւ վերջին այս բաժինը կը հասնի մինչեւ 1912 թուականի առաջին կէսը: Շարժման գլխաւոր դէմքի՝ Եփրեմի մահով գրեթէ վերջ կը գտնէ Դաշնակցութեան գործօն մասնակցութիւնն ու բախտորոշ դերակատարութիւնը աւտատիրական այդ երկիրը ժողովրդավար ազատ կարգերով օժտելու փորձին մէջ:

1912 թուականի առաջին կիսամեակը կը յատկանշուի գլխաւորաբար հետեւեալ իրադարձութիւններով.–

1.- Երկրին հիւսիսը՝ Ատրպատականի մէջ ամբողջէն հաստատուած է ռուսական տիրապետութիւնը, որ զինուորական արտակարգ դրութեան հաստատումով եւ դրածոյ կառավարիչներով ահ ու սարսափի վիճակ ստեղծած է՝ կախաղաններով, մահապատիժներով ու այլօրինակ բռնութիւններով յատկանշուած:

2.- Երկրի կեդրոնական մասին վրայ եւս ռուս-անգլիական միացեալ խնամակալութիւնը ուժեղցած է եւ վերջնագրերու ձեւին տակ իր հրահանգները կը թելադրէ Թեհրանի կառավարութեան որ՝ որքան ալ տակաւին ինքզինք «սահմանադրական» դաւանի, ստիպուած է շարժիլ «խնամակալներուն»թելադրանքով. եւ Ատրպատականի օրինակով հոս եւս կը յայտարարուի զինուորական վիճակ, կը խափանուին խօսքի եւ մամուլի ազատութիւնները ու կուսակցութիւններու գործունէութիւնը:

3.- Երկրի ամբողջ տարածքին կը շարունակուի միապետական յետաշրջականներու ճնշումը սահմանադրական իշխանութիւններու դէմ: Յատկապէս Թեհրանն ու շրջակայքը օղակուած են միապետականներու կողմէ, որոնց առաջնորդը՝ Սալար Դովլէն (գահընկէց Շահին կրտսեր եղբայրը) կը սպառնար մտնել մայրաքաղաք ու վերջնական հարուած հասցնել սահմանադրական կարգերուն: Սկզբնական շրջանին Ռուսիա քաջալերող ու օժանդակող էր, ինչպէս գահընկէց Շահ Մեհմեդ Ալիին, նաեւ անոր եղբօրը, մինչեւ այն օրը երբ փաստեր ունեցաւ Սալար Դովլէի սերտ գործակցութեան մասին Թուրքիոյ իթթիհատական կուսակցութեան հետ. որմէ ետք նոյն Ռուսիան կը պահանջէր Թեհրանի կառավարութենէն որ բուռն դիմադրութիւն ցոյց տայ իր այդ վտանգաւոր թշնամիին: Փաստօրէն Իրանը կը դառնար ռուս-թրքական հակամարտութեան մէկ նոր մրցադաշտը:

4.- Հայկական ճակատի վրայ, Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովի (1911 թ. Օգոստոս-Սեպտ.) որոշումը՝ Պարսկաստանը երկրորդ Կեդր. Կոմիտէութեամբ օժտելու մասին՝ գործնական կիրարկում գտաւ 1912 թ. Մարտին միայն: Թեհրանի կոմիտէին եւ Եփրեմի միջեւ ժամանակէ մը ի վեր գոյութիւն ունեցող տարակարծութիւնները, զորս մինչ այդ Թաւրիզի Կեդր. Կոմիտէն կամ Բիւրոն կը ջանային իրաւախոհութիւն թելադրելով գէթ սահմանափակ տարողութեան մը մէջ պահելու, յանկարծ սուր բնոյթ ստացան, երկուստեք ցոյց տրուած յախտոն դրսեւորումներով: Տեղը չէ անշուշտ ստեղծուած տագնապին պատճառներուն կամ մանրամասնութիւններուն մէջ մտնելու: Ներկայացուած փաստաթուղթերը հարկ եղած չափով կը լուսաբանեն կողմերու միջեւ բացուած խրամատին հանգամանքները: Քանի մը խօսքով ըսենք միայն, որ Եփրեմ կը մեղադրուէր որ կը գործէ ինքնագլուխ, կ'անտեսէ կոմիտէն, մինչ հանրային կարծիքը, հայ թէ պարսիկ, անոր գործունէութիւնը, բռնած դիրքն ու արարքները կը վերագրէ ամբողջ Դաշնակցութեան: Միւս կողմէ Եփրեմ, ճիշդ է,

փորձուած ու նուիրեալ դաշնակցական, բայց այժմ իբրեւ մայրաքաղաքի ոստիկանապետ, բանակի ընդհանուր հրամանատար, յաճախ նաեւ իր կամքը թելադրող տկար դիրքերու մէջ գտնուող կառավարութեան մը, դարձած էր բացառիկ դէմք Պարսկաստանի պետական կեանքին մէջ ու բախտորոշ դեր կը խաղար երկրի ճակատագրի տնօրինման մէջ: Կռուի դաշտերուն վրայ իր տարած յաղթանակները զինք դարձուցած էին ինքնավստահ, որոշ իմաստով մը նաեւ յոխորտ մանաւանդ տեղական կոմիտէին նկատմամբ, զոր կը գտնէր ոչ այն բարձրութեան վրայ, որ անհրաժեշտ էր Պարսկաստանի քաղաքական կեանքին մէջ ստեղծուած փափուկ կացութիւնները կշռադատելու եւ ըստ այնմ կողմնորոշուելու համար: Ա՛յդ էր պատճառը, որ անտեսելով Թեհրանի կոմիտէն, կը դիմէր յաճախ գերադաս մարմիններուն՝ Ատրպատականի Կեդր. Կոմիտէին կամ Բիւրոներուն: Ըստ երեւոյթին Եփրեմ իր այդ ընթացքը կը շարունակէր Թեհրանի մէջ Կեդր. Կոմիտէութիւն ստեղծուելէն ետք եւս, ինչ որ վերջնոյս կողմէ անթոյլատրելի վերաբերմունք պիտի համարուէր կուսակցութեան հեղինակութեան տեսակէտէն:

Նորոգուող վէճին տուն տուող գլխաւոր հարցերն էին՝

ա- Եփրեմի ձեռամբ գործադրութիւնը կառավարութեան ձեռք առած այն խիստ միջոցներուն, որոնք, զինուորական դրութեան յայտարարութեան հետեւանքով, կը խափանէին, ինչպէս վերը յիշուեցաւ, ժողովրդավարական ազատութիւնները, խարսկանք դարձնելով Սահմանադրութիւնը ու անով շահուած միւս իրաւունքները.

բ- Սալար Դովլէի դէմ մղուած պատերազմը ու հայոց զօրագունդին մասնակցութիւնը այդ կռիւներուն, զոր այլեւս իմաստազուրկ կը նկատուէր նորահաստատ Կ. Կոմիտէէն: Մինչդեռ Եփրեմի եւ իր կողմնակիցներուն համար Սալար Դովլէի յաղթանակը պիտի նշանակէր միապետական կարգերու վերահաստատումը, սահմանադրութեան ի սպառ ջնջումը եւ, վերջապէս, թրքական զորձօնին զօրացումը Պարսկաստանի գործերուն մէջ:

Մէկ կողմէ Եփրեմի ու իր համախոհներուն, միւս կողմէ Կեդր. Կոմիտէին միջեւ աճող այս ներքին տագնապը 1912 թ. Մարտէն Մայիս երկարող ամիսներուն, տենդոտ գրագրութեան առիթ դարձած էր Բիւրոներուն, Պարսկաստանի զոյգ Կեդր. Կոմիտէութեանց եւ շրջանի պատասխանատու ընկերներուն միջեւ: Նամակագրութեամբ եւ հեռագիրներով օրը օրին փոխանցուած են տեղեկութիւնները՝ հակընդդէմ տեսակէտներու եւ առնուած հակասական քայլերու մասին: Տագնապին առաջքը առնելու համար եւ ստեղծուած փափուկ կացութենէն պատուաւոր ելք մը գտնելու ու կողմերուն հեղինակութիւնը բարձր պահելու նկատումով, Արեւմտեան Բիւրոն ի վերջոյ պիտի հրահանգէր Պատասխանատու Խառն մարմնի մը ստեղծումը՝ երկու Կեդր. Կոմիտէութեանց եւ բոլորին կողմէ յարգանք վայելող ընկերներու մասնակցութեամբ, որպէսզի խորհրդակցաբար եւ փոխադարձ հասկացողութեամբ քով քովի գան ու լուծում գտնեն ներկայացող հրատապ հարցերուն:

Խառն ժողովի նիստերը, որոնց ատենագրութեան արձանագրութիւններով կը փակուի այս բաժինը, տեղի ունեցաւ արդարեւ 1912 թ. Ապրիլ-Մայիս ամիսներուն. այդ միջոցին, կռուի դաշտին վրայ վճռական նոր յաղթանակ մը տանելէ ետք, պատահական գնդակի մը զոհ գնաց Պարսկաստանի մէջ սահմանադրական կարգերու պահպանման ախոյեան հանդիսացող հերոսը՝ Եփրեմ:

*
* *

Խմբագրութեան կողմէ ջանք չէ խնայուած վերոյիշեալ խնդիրներու պարզաբանման համար ի մի խմբելու եւ ներկայացնելու Հ.Յ.Դ. արխիւներու տարբեր թղթածրարներուն մէջ գոյութիւն ունեցող կարեւորագոյն փաստաթուղթերը:

Ժամանակագրական կարգը պահպանելու համար հաշուի առնուած են անշուշտ այն տարբերութիւնները, որոնք հետեւանք են արեւելեան երկիրներու (Պարսկաստան, Կովկաս, Թուրքիա) հին տոմարի եւ արեւմտեանին մէջ՝ նոր տոմարի գործածութեան (13 օրուան տարբերութիւն):

Փաստ. 479-2

Ե 1.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԹԵՀՐԱՆԻ ԿՈՄԻՏԷԻՆ

Թաւրիզ, 8/Ի/ 12 թ. Վրէժ

Սիրելիք!

Շարունակում էք լռել։ Մեզ մօտ հերթը արդէն հայերին է հասել։ Ամսոյս 7-ին [կախաղան] բարձրացրին Պետրոս Մել[իք] Անդրէասեանին[117]*, այսօր դիակը հողին յանձնուեց։ Մեղադրական ակտը ասում են, որ 3 կէտերից է կազմուած. մէկ այն, որ կռուի օրերին եղել է Բերդում եւ դիրքեր է ամրացրել, երկրորդ՝ պահել ու պատսպարել է Մուրադ Սուլթանին (տեղիս նախկին ոստիկանապետին) եւ երրորդ՝ խորհրդակցել է խռովարարների հետ։*

Տեղական ազգաբնակութիւնը սաստիկ յուզուել է այդ դէպքից, բայց այդ յուզումը երբեք էլ գրգռում առաջ չի բերի այստեղ՝ այնքան մեծ է տարածուած սարսափը։ Սակայն ռուսական կոնսուլը կարծելով որ ժողովուրդը կարող է գրգռուել դէպի ռուսական զօրքը, ուստի եւ մի պաշտօնական գրութեամբ դիմել է տեղւոյս առաջնորդարանին, որ հայերը թող չմտածեն վրէժխնդիր լինել, հակառակ պարագայում մէկ զոհի փոխարէն 10-ը կը խլուի ժողովրդից։ Այսօր եպիսկոպոսը մի «շատ յուզիչ» ճառով յորդորեց խաղաղ ժողովրդին դէպի խաղաղութիւն եւ աչալրջութիւն։ Մարդ չի հասկանում թէ ինչ են ուզում այլեւս ժողովրդից, որը սարսափից սմքել ու դիակնացել է։

Խօսւում է նոր ձերբակալութեանց մասին։ Ոչ ոք չգիտէ թէ ո՞վ պիտի երկրորդ, երրորդ կախուողը լինի, որովհետեւ ոչ ոք էլ իրեն ռուսական զօրքին դիմադրելու կամ ի դիմադրութիւն կոչելու յանցանքը չգտնելով իր մէջ՝ հանգիստ է. միւս կողմից տեսնելով Պետրոսի կախաղան բարձրացնելու դէպքը, ամենայետին կօչկարն անգամ կասկածում է, որ մի օր էլ իրեն կարող են կախել, որովհետեւ բոլորն էլ ովքեր ծանօթ են հանգուցեալին շատ լաւ գիտեն, որ կռուի օրերին նա տանն էր կամ միւսների հետ փողոցի այս կամ այն անկիւնում թամաշաչու[118] *դերումն։ Այդ փաստ է, որ ոչ մի հայ բացարձակապէս կողմնակից չէ եղել դիմադրութեան՝ սկսած ամենախուլիգանից մինչեւ ամենածայր ձախակողմեանը, սակայն ինչո՞վ բացատրել ռուսների բռնած այս դիրքը, չգիտենք։ Մեր ծանօթներից շատերին լուրջ վտանգ է սպառնում եթէ այսպէս շարունակուի եւ բոլոր փաստերը գալիս են հաստատելու, որ այս սկիզբն է ապագայ ձերբակալութեանց։*

Ճանապարհները փակ են եւ ելքը խիստ դժուարին։ Բաքան իւր զաւակներով, օլուղ-ջոջուղով գնացել է հայրենիք, որովհետեւ տեղի կլիման վատ էր ազդում նրանց առողջութեան վրայ եւ կարող էին լուրջ հիւանդանալ[119]*։*

Գաւառներն էլ արդէն ռուսական զօրքեր են անցել։

Միւս կոնսուլները անզօր են զգում իրենց հակահայկական գործելակերպին վերջ տալ կամ սահման դնել, մինչեւ իսկ այն դէպքում երբ ձերբակալուածը իրենց հպատակն է։

Լսում ենք, որ Ուրմիում ձերբակալել են արդէն 18 հոգու։

Դուք ի հարկէ հասկանում էք թէ ինչու այս եւ անցեալ նամակը այսպէս ընտիր թղթի վրայ ենք գրում։

Ընկերական ջերմ բարեւներ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

117.- Հնչակեան յեղափոխական մարտիկ, որ պարս. սահմանադրական շարժման առաջին օրերէն կռուած էր Եփրեմի կողքին:
118.- Հանդիսատեսի:
119.- Գրութիւնը տեղ-տեղ շարադրուած է այլաբանօրէն: Ակնարկութիւնը հոս Նիկոլ Դումանին է (Բաքա – Կարաբաքա), որ «իր զաւակներով, օլուղ-ջոջուղով», այսինքն մարտիկներով հեռացած էր Թաւրիզէն, կամ «նամակը այսպէս ընտիր թղթի վրայ ենք գրում»:

Փաստ. 60ա-15

Ե 2.– ՀԵՌԱԳԻՐ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, Ժընեւ

22 Յունուար 1912ը հեռագրի Ժընեւ ստացման թուականն է, հետեւաբար նոր տոմարով. հին տոմարով պիտի ըլլայ 9 Յունուար:

Կախաղան բարձրացած հայը Պետրոս Մելիք – Անդրէասեանն է, Երիրեմի վստահելի մարտիկներէն:

Հեռագրի ստորագրութիւնը՝ Արտաւազդ, ծածկանունն է Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի Կարնոյ հատուածին, ինչ որ ենթադրել կու տայ որ նոյն Բիւրոյի գիտութեամբ հեռագրուած է Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագիր Միք. Վարանդեանին:

Առ ի գործադրութիւն հեռագրի վերջին պարբերութեամբ եղած թելադրանքին, արխիւներուն մէջ չ՝ը գտնենք նաեւ Վարանդեանի ձեռագրով խմբագրուած եւ եւրոպական մամուլին ուղղուած այս եւ յաջորդող (փաստ. 60-3) հեռագիրներուն պատճէնները: Կու տանք երկու հեռագիրներուն պատճէնները հայերէն թարգմանութեանց հետ:



60a-15 Telegramm — Télégramme — Telegramma Contr. №

ève tauris 3 22 22 2/30 s 1nobert

• sissak roserale 29 geneve = la terreur russe rrend proportions formidables nom contents innombrables victimes maisons demolies saccagees representants gouvernement russe ont etabli comme gouverneur un brigand samadkhan qui pendant plusieurs mois assiegea tauris comme partisan mamedali rebelle par consequent au gouvernement etabli horribles exces commis dans quartiers persans grand jour deuil musulman 7 personnes furent pendus parmi eux chef superieur religion sigatislam et plusieurs mineurs quoique tous chefs

tous chefs resistance armee aient quitte ville terreur continue et nombreux innocents executes sans jugement par cour martiale derniere victime armenien absolument innocent participation quelconque au mouvement antirusse auquel pas seul armenien est mele population armenienne entiere etat angoisse indiscriptible attend nouveaux cours tout est possible consul russe prevenu officiellement eveque armenien que plus petite manifestation hostile gouvernement russe serait punie sans misericorde lendemain hostilites traducteur persan consulat russie babayoff tira de son toit sur consulat remarque par membre colonie russe denonce consulat russe fut arrete enferme 24 heures puis relache reintegre poste cela prouve personnages attaches consulat cherchent provquer massacre ou actes terrorisme comment garantir qu en pareils moments actes provocation se produisent pas qui mettront danger communaute armenienne entiere ansique europeens habitant quartier armenien pars sans perdre instant paris par tous moyens prives provoque soit dans presse soit parmi amis mouvement protestation qui pourra peut etre changer evenements pas minute perdre

• ardavasde •

22-1-1912

La terreur russe prend proportions formidables – Non content innombrables victimes, maison démolies, saccagées, représentants gouvernement russe ont établi comme gouverneur un brigand Samad Khan qui pendant plusieurs mois assiégea Tauris – comme partisan Mamed Ali, rebelle par conséquent au gouvernement établi – Horribles excès commis dans quartiers persans – Grand jour deuil musulman – 7 personnes furent pendues, parmi eux chef supérieur religion Sigatislam et plusieurs mineurs quoique tous chefs résistance armée aient quitté ville – Terreur continue et nombreux innocents exécutés sans jugement par cour martiale – Dernière victime arménien absolument innocent participation quelconque au mouvement antirusse auquel pas seul arménien est mêlé – Population arméienne entière état angoisse indescriptible attend nouveaux coups, tout est possible – Consul russe prévenu officellement évêque arménien que plus petite manifestation hostile gouvernement russe serait punie sans miséricorde – Lendemain hostilités traducteur persan consulat Russie Babayoff tira de son toit sur consulat – Remarqué par membre colonie russe – fut arrêté, enfermé 24 heures puis relaché, réintègre poste – cela prouve personnages attachés consulat cherchent provoquer massacres ou actes terrorisme – Comment garantir qu'en pareils moments actes provocation se produisent pas qui mettront danger communauté arménienne entière ainsi que européens habitant quartier arménien – Pars sans perdre instant Paris – Par tous moyens privés soit dans presse soit parmi amis mouvement protestation qui pourra peut être changer événements – Pas minute perdre.

ARTAVASDE

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Թաւրիզ, 22-1-1912

Ռուսական սարսափը ահաւոր համեմատութիւններ կը ստանայ – Չգոհանալով անհամար զոհերէն, քանդուած բնակարաններէն եւ կողոպուտներէն, ռուսական կառավարութեան ներկայացուցիչները որպէս կառավարիչ նշանակեցին աւազակ մը՝ Սամադ խանը, որ ամիսներով պաշարման ենթարկեց Թաւրիզը. իբրեւ Մամադ Ալիի կողմնակից ան, հետեւաբար, ըմբոստ մըն է ներկայ կառավարութեան հանդէպ – Ահռելի բռնութիւնները պարսկական թաղերուն մէջ – Մահմետականներու համար մեծ սուգի օր – Կախաղան բարձրացուեցան 7 հոգի, որոնց կարգին կրօնապետ Սիգատիսլամը եւ բազմաթիւ անչափահասներ – հակառակ անոր որ դիմադրութեան զինեալ բոլոր ղեկավարները հեռացած են քաղաքէն, սարսափը կը շարունակուի եւ բազմաթիւ անմեղներ, առանց դատ-դատաստանի, պատերազմական ատեանի կողմէ մահապատժի կ՚ենթարկուին – վերջին զոհը հայ է, բացարձակապէս անմեղ որեւէ մասնակցութիւն ունեցած չըլլալով հակառուս շարժման մէջ, որուն ոչ մէկ հայ խառնուած է – Ամբողջ հայ ազգաբնակչութիւնը անկարագրելի անձկութեան մէջ է – սպասելի են նոր հարուածներ – ամէն ինչ հնարաւոր է – Ռուս հիւպատոսը զգուշացուցած է հայոց եպիսկոպոսը, որ ռուսական կառավարութեան դէմ նուազագոյն շարժում մը իսկ անգթօրէն պիտի պատժուի – Թշնամութեանց յաջորդ օրը ռուսական հիւպատոսարանի պարսիկ թարգմանը՝ Բաբայով իր [բնակարանի] տանիքէն կրակած է հիւպատոսարանին վրայ – ռուս համայնքի մէկ անդամը նշմարած ըլլալով՝ կը տեղեկացնէ հիւպատոսարան – կը ձերբակալուի եւ կը բանտարկուի 24 ժամ, ապա կը վերահաստատուի իր պաշտօնին մէջ – Ասիկա կը փաստէ որ հիւպատոսարանին կապուած անձնաւորութիւններ կը հրահրեն կոտորածը կամ գրգռիչ արարքները – ինչպէ՞ս երաշխաւորել որ նման պահերու գրգռիչ արարքներ տեղի պիտի չունենան՝ վտանգի ենթարկելով ամբողջ հայ համայնքը ինչպէս նաեւ հայկական թաղամասին մէջ բնակող եւրոպացիները – Առանց ժամանակ կորսնցնելու մեկնիր Փարիզ եւ ամէն միջոցով՝ մամուլով ըլլայ թէ բարեկամներու միջոցով, առաջացուր բողոքի շարժում, որ թերեւս կարենայ փոխել դէպքերու ընթացքը – վայրկեան մ՚իսկ կորսնցնելու չէ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Փաստ. 60-3

Ե 3.– ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

Le 28 janvier [1912]

Monsieur le Rédacteur,

Nous vous serions très reconnaissants de vouloir bien publier la note suivante:

Un télégramme reçu de Tebriz (Perse) à la Rédaction du "Droschak" à Genève, annonce que les russes étant maîtres absolus de la situation, ont procédé à de terribles représailles contre l'élément arménien qui ne s'est point opposé à la dernière incursion des troupes russes mais qui, comme on le sait, a joué depuis quelques années un rôle considérable dans le mouvement constitutionnel en Perse et spécialement dans la campagne contre l'ex Chah. C'est ce que le gouvernement russe ne pardonne pas aux arméniens. Trois arméniens innocents viennent d'être pendus à Tebriz à la suite d'une décision de la Cour martiale. Les repressions continuent.

La politique russe s'exerce de nouveau avec une violence particulière contre le peuple arménien, soumis toujours aux lois exceptionnelles. La méthode "exterminatrice" de Lobanoff et des Galitzine continue avec une suite implacable.

Dans son aveuglement et dans sa fureur réactionnaire, jamais le gouvernement russe n'a su comprendre que les intérêts vitaux de l'Etat demandent à ne pas contrecarrer au développement de ce petit peuple qui est partout – en Perse, en Turquie, jusque dans l'Asie centrale – le propagateur par excellence de la culture russe, du commerce russe, de la langue russe.

On sait que depuis quatre ans l'Arménie russe présente une immense Bastille, où l'on compte déjà une dizaine de morts et des cas de folie. On sait aussi qu'environ 160 de ces prisonniers arméniens, la plupart des intellectuels, vont être jugés à Petersbourg même, par une délégation spéciale du Sénat. C'est le fameux procès du parti "Daschnakzoutioun". Il va commencer le premier février. Le huis-clos est ordonné. Les journaux russes enregistrent que c'est le plus grand procès politique qui ait eu lieu dans les annales russes.

Encore une fois, Monsieur le Rédacteur, nous vous prions respectueusement, de bien vouloir publier la présente note et de venir ainsi au secours à une population terriblement éprouvé.

Veuillez agréer l'assurance de notre haute considération.

Le "DROSCHAK"

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

28 Յունուար [1912]

Պարոն Խմբագիր,

Եռախտապարտ պիտի մնայինք Ձեզի եթէ համէիք հրատարակել հետեւեալ գրութիւնը.–

Թաւրիզէն (Պարսկաստան) «Դրօշակ»ի խմբագրութիւն՝ Ժընեւ ստացուած հեռագիր մը կը ծանուցանէ, որ ռուսերը, բացարձակ տիրապետած ըլլալով կացութեան, ձեռնարկած են ահաւոր բռնարարքներու հայ տարրին դէմ, որ բնաւ չէր ընդդիմացած ռուսական զօրքերու վերջին ներխուժումին եւ որ, սակայն, ինչպէս ծանօթ է, քանի մը տարիէ ի վեր նշանակալի դեր խաղացած է Պարսկաստանի սահմանադրական շարժման եւ մասնաւորաբար նախկին Շահին դէմ [ուղղուած] կռիւներուն մէջ: Ահա ա՛յս է որ ռուս կառավարութիւնը չի ներեր հայերուն: Վերջերս Թաւրիզի մէջ, պատերազմական ատեանի վճռով երեք անմեղ հայեր կախաղան հանուեցան: Ճնշումները կը շարունակուին:

Ռուսական քաղաքականութիւնը դարձեալ կը կիրարկուի մասնաւոր սաստկութեամբ հայ ժողովուրդին դէմ, որ միշտ ենթակայ կը մնայ բացառիկ օրէնքներու: Լորանովներու եւ Գալիցինեներու «բնաջնջման» մեթոտը կը շարունակուի անողոք հետեւողականութեամբ:

Կուրացումի եւ յետադիմական կատաղութեան մէջ, ռուսական կառավարութիւնը չգիտցաւ բնաւ հասկնալ, որ ռուս պետութեան կենսական շահերը կը պահանջեն՝ արգելք չըլլալ զարգացմանը այս փոքր ժողովուրդին, որ ամէնուրեք, Պարսկաստան, Թուրքիա, մինչեւ Կեդրոնական Ասիա – սքանչելի տարածիչն է ռուսական մշակոյթին, ռուս առեւտուրին, ռուսերէն լեզուին:

Ծանօթ է որ չորս տարիներէ ի վեր Ռուսաստանը վերածուած է հսկայական բանտի մը, ուր արդէն տասնեակ մը մահացածներ եւ խելագարուածներ կան: Ծանօթ է նաեւ որ մօտ 160 հայ բանտարկեալներ, մեծ մասամբ մտաւորականներ, պիտի դատուին Պետերբուրգի մէջ իսկ, Ծերակոյտի յատուկ մէկ պատուիրակութեան կողմէ: Ասիկա «Դաշնակցութիւն» կուսակցութեան նշանաւոր դատն է: Պիտի սկսի Փետրուար 1-ին: Հրահանգուած է դռնփակ նիստ: Ռուս թերթերը կը նշեն, որ ասիկա ռուսական տարեգրութեանց մէջ արձանագրուած մեծագոյն դատավարութիւնն է:

Անգամ մը եւս, Պարոն Խմբագիր, յարգանքով կը խնդրենք, որ համէիք հրատարակել ներկայ գրութիւնը եւ այդ ձեւով սատար հանդիսանալ փորձութեան մատնուած ժողովուրդի մը:

Հաճեցէք ընդունիլ մեր բարձր համարումին հաւաստիքը:

«ԴՐՕՇԱԿ»

Փաստ. 1728բ-42

Ե 4.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

27 փետր. 1912, Թաւրիզ

Միք. Վարանդեանին Ժընեւ հասցէագրուած այս նամակը խորքին մէջ կու գայ Ատրպատականի Կեդր. Կոմիտէէն: Թաւրիզի շրջանին մէջ վերջին ամիսներուն տիրող սարսափի ծանօթ մթնոլորտը, հետեւանք ռուսերու ի գործ դրած ծայրայեղ խստութիւններուն, մղած պիտի ըլլար գրութիւնը յղել, զգուշաւորութեան համար հաւանաբար, «Հայրիկ» ստորագրութեամբ եւ պարզ թուղթի վրայ առանց կնիքի եւ խուսափելով գործածելէ, ինչպէս սովորութիւն էր, Կ. Կոմիտէութեան գլխագրութիւնը (**entête**) կրող պաշտօնաթուղթը:

«Հայրիկ»՝ ծածկանունն էր Կ. Կոմիտէի անդամ Պանիրեան Հայրապետի, որ իբրեւ շրջանին պատգամաւոր մասնակցած էր Հ.Յ.Դ. վերջին (6րդ) Ընդհ. Ժողովին:

Կարճ այս գրութիւնը յատկանշական է նոյնպէս շարք մը այլ նկատումներով: Օրինակ, կուսակցական արխիւի Ժընեւ փոխադրութիւնը, որ զգալի չափով կ՚իրագործուէր Թաւրիզի մարմնին միջոցաւ, ուր կը կեդրոնանային յատկապէս բուն Երկրի (Վասպուրական, Տարօն, Կարին եւայլն), եւ Կովկասի (Պաքու, Թիֆլիս, Երեւան եւայլն) եւ Պարսկաստանի կուս. արխիւային նիւթերը (գրութեան մէջ կը յիշուի արդէն Ոսկանապատ-Պաքուն): Կ՚արձարձուի նոյնպէս Պարսկաստանի Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը, իբրեւ Իրանը ներկայացնող ճիւղ, ընկերվար միջազգայնականին անդամագրել տալու խնդիրը, ինչպէս էր պարագան Թուրքիոյ համար:

Սիրելի ընկե՛ր,

Սրանից մի-երկու ամիսներ առաջ 29 կապոցներով ուղարկուել է այդտեղ Ոսկանապատեանի եւ Վրէժեանի գործերի արխիւը (22-ը Ոսկանեանի եւ 7-ը Վրէժեանի)։ Խնդրում ենք, դրանց ստացման մասին մի երկտողով մեզ միամտացրէք. ուղարկուել է Սիսակեանի հասցէով։

Ցաւում ենք, որ վերջին անցքերի պատճառով, ժամանակին կարելի չեղաւ ուղարկել թէ Պարսկ[աստանի] շարժումների պատմութիւնը եւ թէ տեղեկագիրը՝ մեր շրջանի սոց[իալիստական] գործունէութեան, Դ[աշնակցութեան] Պարսկաստանի ճիւղն էլ ինտերնացիոնալում ընդունել եւ ճանաչել տալու համար։ Կեանքը քիչ թէ շատ իր նախկին վիճակի մէջ մտնելուն պէս, այդ աշխատանքները կը կատարուեն եւ կ՚ուղարկուեն ձեզ։

Կախաղանները քանի շաբաթից ի վեր դադարել են գործելուց, [ռուսական] զօրքը մաս-մաս յետ է քաշւում. հետապնդումները եւ սպառնալիքները ընկերների վերաբերմամբ մեղմացել են։

Պետութիւնների հետ բանակցութիւնները դեռ շարունակւում են Թեհրանում. պետութիւնների բոլոր պահանջները բաւարարւում են Թեհրանում. Պարսկաստանի անկախութիւնը այլեւս մեռած եղաւ պիտի համարել։

Ընկ[երական] բարեւներով՝
ՀԱՅՐԻԿ

P.S.- *Դրօշակի անցեալ տարուայ վերջին համարը եւ յունուարի համարները ստացուել են. կ՚աշխատենք բաժանորդների ցուցակը ուղարկել որպէսզի նրանց հասցէով պարբերաբար ուղարկէք թերթը։ Այս օրերին մարդիկ զգուշանում են բաժանորդ գրուել։*

ՆՈՑՆ

Փաստ. 589-4

Ե 5.– ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ [Պոլիս]

[Թեհրան], 7/20 Մարտ 1912

Ընկերներ!

Ձեր գրած նամակից իմացանք, որ մենք կարող ենք կենտրոնական կոմիտէի իրաւունքով գործել։ Դրանով գուցէ յաջողի մեզ մի գործ կատարել։ Տեղիս դաշնակցական մարմինը վերջին մի քանի տարուայ ընթացքում դատապարտուել էր ամլութեան։ Քաղաքական կեանքում երկրի ընդդիմադիր տարրերը, դեմոկրատ կուսակցութիւնը եւ առ հասարակ ազդեցիկ շրջանները Դաշնակցութեան ներկայացուցիչ, եւ կամ թէ աւելի շուտ, Դաշնակցութիւն ասելով Եփրեմին էին հասկանում։ Այդ բանը առաջացել է ինքնաբերաբար։ Թեհրանի գրաւումը եւ յետագայ յաղթանակները, որոնք կարող են անշուշտ նկատուել ոգեւորութեան եւ խանդավառութեան օրեր, իրենց բացասական ազդեցութիւնը ունեցան տեղիս կազմակերպութեան վրայ։ Թռուցիկներն ու ովսաննաները ենթադրել տուին մեր հարեւաններին, որ Եփրեմը Դաշնակցութեան բարձրագոյն մարմինների կողմից է ուղարկուած։ Տեղական ընկերների եւ առհասարակ Դաշնակց[ութեան] անուան շնորհիւ Եփրեմը շուտով հասնում է փառքի գագաթնակէտին։

Անսպասելի յաղթանակներն ու ամէն կողմից նրան ուղղուած ովսաննաներն ունեցան իրենց բացասական ազդեցութիւնը Եփրեմի վրայ։ Նա այլեւս չէր ուզում իւր անելիքի եւ կամ արածի մասին որեւէ կերպ հաշիւ տալ կամ խորհրդակցել տեղւոյս մարմնի հետ։ Նախկին մարմինը շատ աշխատեց այն ուղղութեամբ որ կարողանայ նրան պահել որպէս դաշնակցական ընկեր մեր շրջանում, բայց նրան այդ չյաջողուեց եւ բանը այնտեղ հասաւ, որ Եփրեմը մի հրաժարականով իրեն անքննադատելի դարձրեց մեր շրջանում։ Այդ հրաժարականը մի մտածուած եւ ճարպիկ միջոց էր գլուխ պրծացնելու ընկերական քննադատութիւնից եւ աչալուրջ ու դաշնակցական ընկերներից։

Այդ թշնամանքը նախկին կոմիտ[էի] եւ Եփրեմի մէջ յառաջացել էր շնորհիւ այն հանգամանքի, որ Եփրեմը իւր մի ամբողջ տարուայ գործ[ունէութեամբ] հակառակ ընթացք էր բռնել կոմիտէին եւ ինչ որ կոմիտէն վճռում եւ ուզում էր իրագործել պարսկական շրջանում, նա բոլորովին հակառակն էր կարգադրում եւ այդ նրան յաջողւում էր։

Նամակներ գրուել է Ատրպատական եւ մանրամասն նկարագրուել Եփրեմի արածները, բայց կենտրոնականը միշտ էլ պատասխանել է, որ թողէք այդ մարդուն իրեն համար գործի, մի խառնուէք քաղաքական գործերին։ Այդպիսի կաշկանդումները ամլութեան մատնեցին մարմնին եւ ամբարտաւանացրին Եփրեմին եւ երբ նրան Շրջանային ժողովի կողմից հրաւիրում են ժողովի, նա պատասխանում է, թէ հրաւիրեցէք ալինաղի բախկալին։ *Սա դաշնակցական ընկերոջ վերաբերմունք չէ անշուշտ։*

Մեր օրօք կատարած նրա հակաժողովրդական քայլերը, որոնց մասին ժամանակին հաղորդել ենք ուր հարկն է,– մէջլիսը ցրել, ժողովրդական ցոյցերն արգիլել եւ մի հասարակ չանտաժի համար կախաղանի բարձրացնել։ Այս բոլորն ստիպեցին մեզ եւս բողոքել նրա դէմ կենտրոնականին, որը դարձեալ մնաց անհետեւանք։

Այսօր մենք չենք կարողանում խօսել ոչ մի յառաջ[դիմական] կուսակց[ութեան] հետ, դարձել ենք ծիծաղելի ամէնքի առաջ։

Մեր պաշտօնական եւ կիսապաշտօնական օրգանների մէջ զետեղուած դրուատականները Եփրեմի հասցէին, ստիպել է մեզ լռել եւ հրապարակաւ չյայտարարել մեր ունեցած կարծիքը լիշեալի մասին։ Օգտուելով մեր այդպիսի վերաբերմունքից, նա՝ մոռանալով անգամ կոմիտէի գոյութիւնը, շարունակեց իւր գործը։ Այժմ արդէն մենք սպասել անկարող ենք։ Եթէ լռենք, ընկերներ, այն դէպքերի առաջ, որոնք կատարւում են Եփրեմի անունով, դաւաճանած կը լինենք մեր սկզբունքներին եւ մի խայտառակութեան էջ կ'ունենայինք պարսկ. ազատագրական շարժման մէջ։ Այնուհետեւ մենք դժուար թէ կարողանանք համոզել մեր հարեւաններին, թէ մենք յեղափ. կուսակցութիւն ենք, երբ այժմ նրանք տեսնում են մի կուսակցութեան, որ ներկայումս գործում է անգլօ-ռուսական դիրեկտիւներով։

Մենք ցանկալի չենք համարում թաղել ընդմիշտ մեր յետագայ անունը Պարսկաստանում. մենք այդ ընկերոջ մեր շարքերում ունենալը վարկաբեկիչ ենք համարում կուսակցութեան համար։ Այսուհետեւ մենք նրա հետ դժուար կարողանանք մի գործ անել։ Լաւ կը լինէր եւ միանգամայն անհրաժեշտ է որ Բիւրոյի անդամներից 1-2 հոգի այստեղ գան եւ իրենք անձամբ զգան այն ամէնը ինչ որ գրեցին[ք] եւ կարգադրութիւն անեն։ Հակառակ պարագայում ամէն ինչ տարուած պէտք է համարել։

Մենք մի շրջաբերական-թռուցիկով քանիցս ցանկացել ենք յայտարարել, որ նա դաշնակցական չէ մեր շրջանում եւ մենք կողմնակից եւ մասնակից չենք նրա արածներին։ Բայց ամէն անգամ էլ կուսակցութեան թասիբից[8] դրդուած լռել ենք։ Այժմ արդէն նոյն այդ թասիբը պահանջում է մեզնից խօսել։ Եթէ Բիւրոյից մի հոգի գայ այստեղ, ամէն բան գուցէ խաղաղութեամբ վերջանայ։

Թեհրանից տեղեկութիւններ եւ կանոնաւոր յօդւածներ չկան Ազատամարտի մէջ։ Մենք պարտաւորեցրել ենք այստեղ ընկերներ Արշալոյս Սահակեանին եւ Տիգրան Մնացականեանին թղթակցել այստեղից։ Համարելով ընկերներին սեփական վստահելի թղթակից, թող ուղարկեն թղթակցի վկայականներ, պէտք եղած վայրերը մուտք ունենալու համար։

Բոլոր մոջահէտներին[120] *եւ բախտիարներին զինաթափ են արել եւ ուզում են արձակել։ Սարդար Ասադը եւ իւրայինները շուտով կը հեռանան քաղաքից։ Հաւանականաբար նոյն վիճակին կ'ենթարկուին եւ հայ կըռւողները, որոնց արդէն սկսել են զինաթափ անել։*

Ընկերական բարեւներով՝
ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

Ձեր նամակն ստանալով Ժընեւ գրեցինք որ Կ. Կոմիտէի անուամբ կնիք պատրաստելով ուղարկեն, այնպէս որ յուսով ենք շուտով ստանանք։

Մեր հասցէն է
Hasanabad, Ecole Arménienne
Mr. Tigran Mnatzakanian
Téhéran

120.- Պարսիկ յեղափոխականներ, որոնք կը պայքարէին սահմանադրական կարգերու համար:

Փաստ. 589-7

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

DASCHNAKTZOUTIOUN

1912 Մարտ 14/27
Ստացուած 5 ԱՒԳ 1912
Գաստախանուած 21 ԱՒԳ 1912

Ե 6.– ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ [Պոլիս]

[Թեհրան], 14/27 Մարտ, 1912

Ցաւակցութիւն ամբողջ ազգիս։
Հայերիս։

Ինչպէս յայտնի է, վերջերս Պարսկաստանում յայտարարուած է զինուորական դրութիւն։ Ոչ մի տեղ եւ ոչ մի կուսակցութիւն իրաւունք չունի ժողովներ գումարելու։ Ազատ խօսքը եւ միտքը ճնշուած ու յեղափոխականների պարագլուխները կամ բռնուած, կամ աքսորուած են։

Թեհրանը ամենաբախտաւորն էր բոլոր միւս քաղաքների մէջ, բայց դժբախտաբար նա էլ արժանացաւ միւսների բախտին։

Կառավարութիւնը վերջերս ամենախիստ կերպով սկսել է հալածել այստեղի դեմոկրատներին եւ նրանցից շատերին արդէն այս շրջանից հեռացրել։ Այս առթիւ մենք չկարողացանք բողոքել, որովհետեւ խուսափում ենք նաեւ հասարակ այնպիսի քայլերից, որոնք կարող են առիթ դառնալ մեր եւ Եփրեմի միջեւ սուր ընդհարումների։ Մեր այսպիսի վերաբերմունքը անշուշտ ունեցաւ իւր բացասական նշանակութիւնը մեր կազմակերպութեան համար, որովհետեւ դեմոկրատները եւ շատերը նրանց հետ համոզուած են, որ Դաշնակցութիւնը եթէ ոչ ինքն էլ չի կազմակերպել այդ հալածանքը, առնուազն նա համակարծիք է կառավարութեան հետ։

Վերջերս կառավարութիւնը որոշում է զինաթափ անել բոլոր «մուջահեդներին» — յեղափոխականներին, պատճառաբանելով որ այլեւս նրանց պէտք չունի։ Որոշումը վերաբերում էր ամբողջ մուջահեդներին, հետեւապէս եւ հայկական բանակին։

Եփրեմի հրամանով Քեռին զինաթափ է անում մի խմբի եւ զէնքերը վերցնում, առանց մի կոպէկ վճարելու։ Զինուորները առանց դրամի եւ քաղցած դիմում են մեր ներկայացուցչին եւ խնդրում մի կարգադրութիւն անել եւ առնել զինաթափութեան առաջը, առարկելով որ եթէ իրանց ճանապարհածախս չտրուի, նրանք ստիպուած պիտի լինեն դիմելու զանազան անվայել միջոցների, որոնք կուսակցութեան միմիայն վարկաբեկել կարող են։ Մեր ներկայացուցիչը՝ զգալով զինուորների դրութեան ծանրութիւնը եւ գործի շտապողականութիւնը, առանց մեր որոշման մի ուրիշ ընկերոջ հետ միասին անհատականօրէն մի յայտարարութեամբ բոլոր հայ զինուորներին եւ տեղական դաշնակցականներին ժողովի են հրաւիրում։ Հրաւիրաթղթերից մէկն էլ ուղարկում են Եփրեմին, որ նա էլ գայ։ Այստեղ ի դէպ ասենք, որ եթէ խնդիրը քննութեան դրուէր մեր ժողովում, մի նոյնանման հրահանգ պիտի տայինք։

Եփրեմը ստանում է յայտարարութիւնը, բայց չի գալիս ժողովի, այլ ուղարկում է մի քանի տղաների, որ ժողովի մասին իրեն զեկուցում տան։

Ժողովի օրակարգն էր.

1) Կառավարութեան բռնած դիրքը դէպի հայ զինուորները եւ

2) Վերջինների բռնելիք դիրքը եւ վերաբերմունքը դէպի կառավարութիւնը։

Ժողովը գումարուում է. ընկեր ներկայացուցիչը յայտնում է որ սոյն ժողովը հրաւիրուած է անհատական եւ ոչ թէ Կ. Կոմիտէի կողմից. եւ երկարատեւ մտքերի փոխանակութիւնից յետոյ վճռւում է զէնքերը չյանձնել կառավարութեան, մինչեւ որ վերջինս չվճարէ

ամէն մի զինուորի 2 ամսական աւելի ռոճիկ, որպէսզի կարողանան գոնէ տուն հասնել։

Այս որոշումը դուր չի գալիս Եփրեմին, որը գայրացած հետեւեալ նամակն է գրում Մարմնին.

26 Ջամալ 1330
(3 Մարտ 1912)

Հ.Յ.Դ. Շահի կոմիտէին,

Պատիւ ունիմ յայտնելու յարգելի կոմիտէիդ, որ երէկուայ Հասանաբադի դպրոցում կայացրուած ժողովը, իր բացասական մտքով, ունենալու է շատ տխուր հետեւանք։ Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում Էնզելիի եւ Ռաշտի դրութեան վրայ։ Ի նկատի ունեցէք, որ կազմակերպութեան շահերը վտանգւում են աննկարագիր մարդկանց ձեռքով՝ որոնք մի հարբեցող մատրասի համար տասնեակ տարիների շինած գործը քանդեցին. լաւ է որ պարոնների եռանդը մի քիչ չափաւորուի։

Յարգանօք
ԵՓՐԵՄ

Յ. Գ.- Պարտականութիւնս համարեցի ձեզ յայտնելու։

ՆՈՅՆԸ

Նոյն օրը մի նամակ էլ Նազմիի[121] *կողմից պարսկերէն լեզուով գրում է դպրոցի հոգաբարձութեան, որը թարգմանել ենք եւ արտագրում են բառ առ բառ։*

26 Ջամալ 1330
(Մարտ 3, 1912)

Հայոց ուսումնարանի
Մեծապատիւ հոգաբարձութ[իւն]

Յարգանօք կը յայտնենք Ձեզ ի գիտութիւն, որ երէկ, Ուրբաթ, ներկայ ամսոյս 25ին, Հայոց ուսումնարանի սրահում մի ժողով էր գումարուած եւ այդ ժողովում եղած արտայայտութիւնները հասարակաց անդորրութիւնը խանգարելու ձեւ էին ստացած։

Շատ հաւանական է, որ այդ տեսակ համախմբումները թէ ուսումնարանի եւ թէ կառավարութեան համար լաւ հետեւանք չունենան։

Ուստի խնդրւում է 1. Վերոյիշեալ ժողովը գումարուելու պատճառ եղողների անունները ուղարկէք ոստիկանական Վարչութեան եւ 2. Զինուորական դրութեան կանոնագրի 20-րդ յօդուածը, որը ներփակեալ է, ի նկատի առնէք։

Այսուհետ էլ ամէն Ժողովների եւ Համախմբումների համար ժողովի վիճաբանութեան ծրագիրը նախօրօք ոստիկանական վարչութեան ուղարկէք եւ արտօնութիւն ստանալուց յետոյ ժողով գումարէք։

Ոստիկանական վարչութիւն
(ստորագրութիւն)

Ընկերներ,

Ձեր ուշադրութիւնն ենք հրաւիրում մի հանգամանքի վրայ։ Ընդհանրապէս ամբողջ Պարսկաստանում եւ մասնաւորապէս Թեհրանում չի եղել եւ ոչ մի ժամանակ, որ կառավարութիւնը արգելք դրած լինի հայոց դպրոցի ժողովների վրայ, նոյնիսկ Մամադ Ալի Շահի ամենակատաղի ժամանակը։ Հայերը այստեղ առանձնաշնորհեալ կեանք են վարել մի տեսակ։ Այն որ Եփրեմը մի այդպիսի դոկումէնտ թողնելով Նազմիում, մի տեսակ մեր հայկական անկախ կուլտուրան էլ ենթարկում է պարսից կառավարութեան, որը ցաւով պիտի յիշեմ, որ ոչ թէ սահմանադրական է, այլ ռէաքսիոն եւ ցարական մի կառավարութիւն է։ Վերջին նոտայի ընդունելութեամբ, Պարսկաստանը համարւում է անգլօռուսական գերիշխանութեան տակ գտնուած երկիր. թէ այդպիսի յետադէմ պետութեան ծառայութեան մէջ եւ այն էլ ոստիկանապետի պաշտօնում ինչո՞ւ է մնացել «ընկեր» Եփրեմը, դա անհասկանալի է մեզ։

Նա կատար է ածում պետութիւնների հրամանները եւ պահանջում տեղիս Կ. Կոմիտէի ներկայացուցչին եւ ընկերներից մէկին։ Նրա այս քայլը մեզ չափից դուրս գայրացրել է եւ եթէ կառավարութիւնը բանտարկի կամ աքսորի մեր ներկայացուցչին կամ ընկերոջը, այն ժամանակ ստիպուած պիտի լինենք դիմել ամենախիստ միջոցների։ Աշխատեցէք այդ տեղից հեռագրով այս մասին որոշ կարգադրութիւն անել։ Ձեզանից մէկի ներկայութիւնը այստեղ միանգամայն անհրաժեշտ է։

Ընկերական ջերմ բարեւներով՝
ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

121.- Ոստիկանական վարչութեան։

Փաստ. 589-8

Ե 7.– ԵՓՐԵՄԷՆ ԵՒ Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Թեհրան, 21 Մարտ/3 Ապրիլ 1912

Ընկերներ,

Քաղաքական հարցերը Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի միջեւ այնպիսի ընդհանրական կապ եւ կրիտիկական երեւոյթ են ստանում, որ այդ մասին մի լուրջ խորհրդակցութիւն արտասահմանի ձեռնհաս ընկերների հետ դառնում է մի հրատապ անհրաժեշտութիւն մեր ապագայ ընթացքի ուղղութիւնը որոշելու համար։

Առաջ հարկաւոր է երկու բառով տալ ձեզ Պարսկաստանում տեղի ունեցած վերջին դէպքերի պատմական նկարագիրը որը գուցէ ձեզ յայտնի է։ Գիտէք որ ռուս-անգլիական պետութիւնները զէնքի ոյժով պարսիկներին ընդունել տուին իրենց ուլտիմատումը նախ եւ ապա մի Note, *որով Պարսկաստանը ստիպուեց ճանաչել ռուս-անգլիական դաշնակցութեան որ կնքուել է 1907ին այդ երկու պետութիւնների միջեւ Պարսկաստանի վերաբերմամբ։*

Դաշնագրի մանրամասնութիւնների մէջ մտնելն աւելորդ է որովհետեւ ձեզ համար անծանօթ բան չեն դրքա, բայց, որքան էլ առերեւոյթ այդ դաշնագրի ճանաչումը համեմատաբար թեթեւ բան երեւայ, իրերի իսկական կացութիւնը [այն] է որ Պարսկաստանը մտել է ռուս-անգլիական գերիշխանութեան տակ։ Պարսկաստանի ֆինանսները պիտի կառավարուին վերոյիշեալ երկու պետութիւնների տրամադրութեան համաձայն, Պարսկաստանի ապագայ զինուորական ոյժը պիտի կազմակերպուի մի ձեւով որ անցանկալի չլինի իր երկու հզօր խնամակալներին, Պարսկաստանի արտաքին յարաբերութիւնների ուղղութիւնը պիտի գայ իր երկու դրացիներից եւն։

Այս այսպէս լինելով՝ ռուս-անգլիական պետութիւնները գրպանելով Պարսկաստանը յետ այսու կատարելապէս հաշտ կերպով պիտի ապրեն այս երկրի եւ այս կառավարութեան հետ, որը համարում են ցանկալի եւ բարեյոյս հիմնարկութիւն իրանց համար։ Հէնց այս պատճառով էլ ռուս-անգլիական դիւանագիտութիւնը Պարսկաստանից հեռացրեց Մամէդ Ալի Շահին եւ նրա եղբօրը Շօա-օս-Սալթանային եւ խոստացաւ հեռացնել նաեւ Սալար Դովլէին[77] *— (բայց այս մասին յետոյ)։ Խոստացաւ տալ փոխառութիւն, եւ վճարեց նոյնիսկ կանխավճարը, խոստացաւ տանիլ ռուս զօրքերը Պարսկաստանից եւ տուեց շատ ուրիշ բարեկամական մեծ ու փոքրիկ, կեղծ եւ անկեղծ, դրական եւ խաբուսիկ հաւաստիք։*

Իսկ այս բոլորի մէջ ի հարկէ տուժել է կամ ինքն իրան վնասուած է համարում Պարսկաստանի երրորդ դրացին — այն է Տաճկաստանը, որը իր պատառը խլելու համար Պարսկաստանի աւարից ստեղծել է ու մէջտեղ նետել Սալար Դովլէին։ Ռուս-անգլիական բոլոր սպառնալիքները հանդիպել են խուլ ականջների Սալար Դովլէի կողմից։ Նա պարզապէս յայտարարել է որ ինքը ռուս-անգլիացիների հրամանով չէ եկել Պարսկաստան եւ նրանց խորհրդով էլ դուրս չի գնալու Պարսկաստանից։ Խրախուսուած տաճիկներից նա պատրաստւում է քայլել նախ Համատանի եւ ապա Թեհրանի վրայ։ Քրմանշահի ամբողջ նահանգն ու քաղաքը քարուքանդ անելուց յետոյ, մինչեւ որ նամակը հասնէ ձեզ, Համատանի նահանգն էլ նոյն սեւ օրին է նստեցնելու։

Ռուսաց զօրքերն ի հարկէ պատրաստ են զէնքի ոյժով վռնտելու նրան Պարսկաստանից, բայց նախ քան այդ ծայրայեղ միջոցին դիմելը նրանք առաջարկել են պարսից կառավարութեանը նրա առաջն առնել։

Պարսից կառավարութեան ոյժն էլ, ինչպէս լաւ գիտէք, հայերն են ու բախտիարցիք։ Մէկն առանց միւսի ոչինչ անել չէ կարող։ Տաճկաց դեսպանը շատ լաւ ըմբռնելով այդ կէտը եւ նկատելով որ հայ-բախտիարական բանակներ են կազմակերպւում ուղարկուելու Սալար Դովլէի դէմ մասնաւոր մարդով լուր է ուղարկել Եփրեմին թէ այդ արշաւանքը Սալար Դովլէի դէմ չէ վայելում տաճկական կառավարութեան համակրութիւնը, որովհետեւ ապստամբ արքայազնը վայելում է նրա կառավարութեան — այն է Տաճկաստանի հովանաւորութիւնը։ Եփրեմը տաճկաց դեսպանին պատասխանել է, որ «մենք որպէս յեղափոխականներ չենք կարող մտնել այդ մանր մունր ինտրիգների մէջ եւ չկռուել մի մարդու դէմ որ գալիս է խորտակելու Պարսկաստանի սահմանադրութիւնը, եւ մնացած ամբողջութիւնը եւ անկախութիւնը։ Ի հարկէ եթէ տաճկական կառավարութիւնը պաշտօնապէս պատերազմ յայտարարի որեւէ այլ պետութեան դէմ մենք նրան կ'օգնենք մեր ամբողջ ոյժով, բայց այս դէպքում համակերպուել չենք կարող»։

Սրանով հանդերձ մեր դրութիւնը այստեղ այնպիսի բարդ կերպարանք է ստացել որ մեր անելիքը ապագայում մեզ համար այնչափ պարզ չէ որքան էր մինչեւ այսօր։

Մէկ կողմից Սալար Դովլէն գալիս է, ինչպէս վերն ակնարկուեցաւ, քանդելու Սահմանադրութիւնը, ի սպառ խորտակելու Պարսկաստանի հաշմանդամ անկախութիւնը եւ ծուէն դարձած ամբողջութիւնը։ բացի դորանից նա կոտորելու է բիւրաւոր գիւղացիութիւնը եւ թալանելու է ամբողջ երկիրը մինչեւ Թեհրան — այստեղ չմոռանանք ասել որ շատ մեծ վախ ունինք որ նա ամէն տեղ կոտորելու է հայերին եւս։ Այս բոլորն ի նկատի ունենալով մենք մեզ համար մի տեսակ հրամայական պարտականութիւն ենք համարում կռուել նրա դէմ — միւս կողմից կռուելով Սալար Դովլէի դէմ՝ մենք անուղղակի կերպով նպաստած ենք լինում ռուս-անգլիական քաղաքականութեանը Պարսկաստանում եւ հարուածած լինում տաճկականը։ Չմոռանանք աւելացնել որ Սալար Դովլէի դատը նախապէս դատապարտուած է պարտութեան, որովհետեւ երբ որ պարսից կառավարութիւնը անկարող գտնուի դիմադրել նրան, ինչ որ խիստ անհաւանական է, ռուս զօրքերը ուղղակի դուրս կը գան նրա դէմ։

Ահա իրերի այսպիսի բարդութիւնը ստիպում է մեզ դիմել մեր արտասահմանեան ընկերների խորհրդին, մանաւանդ որ տեղական մարմինը ամենեւին ձեռնհասութիւն չունի այսպիսի լուրջ հարցերը չօչափելու։

Մեզ համար խիստ կարեւոր է լսել մեր ձեռնհաս ընկերների խորհուրդը այն մասին թէ մենք ինչ դիրք պիտի բռնենք Սալար Դովլէի դէմ, մանաւանդ որ մենք մոտալուտ ենք սեպում ռուս-տաճկական ուղղակի ընդհարումը, որի մի փոքրիկ նմոյշն է Սալար Դովլէի խընդիրը։ Կ'ուզէինք նոյնպէս իմանալ թէ ինչ կը լինի մեր կազմակերպութեան բռնելիք դիրքը երբ վրայ հասնի ռուս-տաճկական պատերազմը որի բոլոր նշաններով լի է մթնոլորտը։

Որովհետեւ մեզ թւում է որ շուտով կարիք կ'ունենանք հեռագրական հաղորդակցութեան ձեզ հետ, հետեւաբար առաջարկում ենք իբրեւ ծածկագիր գործածել «Petit Larousse» *բառգիրքը,* Edition 1911։ *Որովհետեւ այդ բառգիրքից շատ տեսակներ կան, ձեզ տալիս ենք մի քանի մանրամասնութիւններ այն հատորի մասին որ մեր մօտ գտնւում է եւ որը մենք գործ կ'ածենք որպէս* code — *նա ունի* 1664 *էջ —* 5800 gravures, 130 tableaux *եւ* 120 cartes։ *Կը գտնէք այն բառը որ ուզում էք հեռագրել եւ բառն էլ հաշուելով կը հեռագրէք* 10*ներորդ բառը դէպի ցած — զոր օրինակ — ուզում էք հեռագրել* «correspondre» *բառը, կը հեռագրէք* «corroboration»։ *Իսկ կարդալուց կը կարդաք տասներորդ բառը դէպի վեր։*

Խնդրում ենք շուտով պատասխանէք այս նամակին եւ եթէ կարելի է հեռագրով։

Ընկերական բարեւներով
ԵՓՐԵՄ, ՑՈՎՍԷՓ

Փաստ. 479-12

Ե 8.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ.Կ.ԷՆ ՇԱՀԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Թաւրիզ, 1912 Մարտ 29

Սիրելիք!

Ստացել ենք Ձեր N 21 գրութիւնը։ Հաստատում ենք մեր 122 եւ 128 եւ երկու առանց համարի նամակները, որոնց ստացուելու մասին ոչինչ չէք գրում։ Ձեր վերջինչալ գրութիւնից երեւում է, որ երբեւէ գրած էք եղել թերթի մասին, սակայն մենք այդպիսի բովանդակութեամբ նամակ չենք ստացել։ Ձեր Դեկտ. 5/18 թուակիրից յետոյ սա առաջին նամակն է որ ստանում ենք։ Ցաւում ենք, որ անհնարին է մինչեւ իսկ այդտեղ մի արժանաւոր օրգան ունենալ, որի կարիքը խիստ մեծ է ներկայ յուսահատական մոմենտում։

Մեզ յայտնի էր Ցրդ Ընդհ. Ժողովի որոշումը, այն է՝ ունենալ տեղումդ երկրորդ Կ. Կոմիտէ. այդ հարցը ամէնից առաջ դրել է մեր պատգամաւորը եւ ինչպէս տեսնում էք յաջողել, սակայն մենք կարծում էինք, որ ներկայ տագնապալից ու լքուած դրութիւնը պիտի որոշ ժամանակով յետաձգէր այդ հարցը, քանի որ ոչ կազմակերպութեամբ եւ ոչ էլ նիւթական միջոցների քանակութեամբ դժուար պիտի լինէր կանոնադրութեան պահանջած ցենզը ունենալ երկու Կ. Կոմիտէութեան համար։ Այժմ արդէն երբ Արեւմտեանը կարգադրել է ի կատար ածել Ընդհ. Ժող.ի որոշումը, հաւանօրէն ի նկատի ունեցած կը լինի այդ բոլորը։ Միւս կողմից դա էլ պիտի նպաստէ, որպէսզի կրկնապատկուած խանդով մեզնից իւրաքանչիւրը աշխատէ կանոնադրութեան պահանջած ցենզը ձեռք բերել։ Յաջողութիւն ենք ցանկանում ձեզ, ձեր դժուարին գործի մէջ։ Մենք հէնց այս թղթատարով կը գրենք Գիլանին[122], ինչ որ պէտք է։ Այդտեղից էլ երկար ժամանակ է, որ լուր չունինք։ Ամիսներ առաջ մի կցկտուր եւ յուսահատական հեռագրով յայտնել էին, որ մարմնի անդամները մեծ մասամբ ցրուած են՝ վտանգուած լինելու պատճառով։ Մոռացել էին նոյնիսկ հասցէ տալ մեզ։

Բնականաբար ձեր նոր գործունէութեան սկիզբը պէտք է հաշուել թուականի սկզբից, իսկ մինչ այդ եղած հաշիւները չտապեցէք ուղարկել մեզ, որպէսզի մենք եւս հնարաւորութիւն ունենանք հին տարուայ հաշիւները փակելու։

Երկար տարիներ է, որ մեր շրջանային ժողովներում Շահը[19] չի ունեցել ոչ իր պատգամաւորը եւ ոչ էլ նոյնիսկ իր գործունէութեան տեղեկագիրը։ Վերջին Ընդհ. Ժողովին պարտք է դրուած մեզ վրայ մանրամասն ներկայացնել մեր Պարսկաստանում ունեցած յեղափոխական եւ սոց. գործունէութեան պատմութիւնը։ Մինչեւ այժմ մենք հնարաւորութիւն չենք ունեցել այդ կատարելու մի երկու կարեւոր շրջաններում եղած գործունէութեան տեղեկագիրը ձեռքի տակ չունենալու պատճառով։ Հաւատացած ենք, որ գործի կարեւորութիւնն ու լրջութիւնը գիտակցելով կ'աշխատէք լրացնել ձեր նախորդների թողած բացը։ Խնդրում ենք որքան կարելի է շտապեցրէք այդ երկուսը։

Վերջերս այդտեղ է եկել մեր ընկերներից եւ Կ. Կոմիտէիս անդամ Ֆ.օն[21] հաւատացած ենք որ նա չի խնայի իր ուժերը օգտակար լինելու տեղւոյդ շարքերում, որի համար եւ յանձնարարում ենք։

Քաղաքական դրութիւնը մեզ մօտ դեռ շարունակում է մնալ անորոշ։ Նոր նահանգապետի գալստեան լուրը քիչ յոյս է ներշնչում տեղական ժողովրդին, մանաւանդ երբ լուր տարածուեց, որ Սամադը նշանակուած է առ այժմ փոխանորդ, իսկ նահանգապետի գալուց յետոյ պէտք է լինի զօրքերի ընդհ. հրամանատար՝ նոր տիտղոսով։ Հալածանքներն ու ռէպրեսիաները[123] դադարել են։ Սահմանագլխի հարցը հաւանօրէն հաշտութեամբ կը վերջանայ։ Ռուս-թրքական պատերազմի ամէն մի հաւանականութիւն ջրւում է։

Ընկերական ջերմ բարեւներով՝
Ա. Կ. ԿՈՄԻՏԷ

Յ.Գ.- Կարեւոր ենք նկատում հաղորդել ձեզ ի գիտութիւն, որ Կ. Կոմիտէս իր Մարտ 6-ի նիստում քննութեան առնելով նախկին դաշնակցական եւ Կ. Կոմիտէիս անդամ Կարապետ Արեանի («Զոկէ») հակայեղափոխական ընթացքը որոշեց 1) հեռացնել Կ. Կոմիտէի անդամութիւնից 2) Պարսկաստանի դաշն. կազմակերպութիւնից 3) այդ առթիւ նամակներով յայտնել բոլոր մարմիններին։ Բարեբախտաբար թէ դժբախտաբար այդ մասին յայտնուած չէ ներկայումս ձեր իրաւասութեան տակ գտնուող շրջաններում, ուստի բարի եղէք հէնց ձեր մօտակայ նամակներից մէկով յայտնել այդ որոշումը ձեր շրջանում գտնուող կոմիտէներին ու ենթակոմիտէներին ի գիտութիւն։ Ներփակ ուղարկում ենք ձեզ վտարուած պարոնին ուղղուած նամակի պատճէնը, որից մասամբ պարզ կը լինի հեռացման պատճառները։

ՆՈՑՆ

122.- Յիշեցնենք որ Գիլանը Կասպից ծովու հարաւ-արեւմուտքը՝ Ռաշտի, Էնզելիի եւ Ղազուինի կազմակերպական շրջանն էր, որ Պարսկաստանի երկրորդ Կեղդ. Կոմիտէութեան կազմութեամբ պիտի միացուէր Թեհրանին։

123.- Ճնշումները, պատժամիջոցները։

Փաստ. 590-4

Ե 9.– ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՉԸ ՀԱՅ ՁԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Հայրենակիցներ!

Նորից հնչում է պատերազմի փողը. բայց ո՞ւմ դէմ եւ ինչի՞ համար:

Գաղտնիք չէ այլեւս, որ այս երկրում շփոթ սերմանողը ռուս-անգլիական համաձայնութիւնն է:

Շփոթը պէտք է նրանց, որ Իրանի անզօրութիւնը պայծառ ցուցադրեն եւ ստիպեն իրանցիներին կամաւ մտնելու իրենց լուծի տակ:

Շփոթը անհրաժեշտ է նրանց, որ ապարդիւն վատնել տան եղած չնչին փոխառութիւնը՝ երկրի անկախութեան գնով ձեռք բերած, եւ ապա նոր փոխառութիւն առաջարկեն աւելի ծանր պայմաններով՝ պարտքի տակ խեղդելու համար Իրանը:

Ինչի համար է այս նոր կռիւը. երկրի անկախութեա՞ն: Ոչ: Իրանի անկախութիւնը արդէն ծախել են այն մարդիկ, որոնք այսօր կառավարում են երկիրը: Ռուս-անգլիական համաձայնութեան պնակալէզ եւ հլու գործակալները չունին այդքան առաքինութիւն:

Գուցէ սահմանադրութե՞ն համար են նորից զէնք առնում: Բնաւ: Սահմանադրութիւնն արդէն թաղուած է Իրանի այսօրուան վարիչների ձեռքով: Փակուած է մէջլիսը, ազատ խօսքն ու մամուլը հալածական, ժողովներն արգիլուած եւ միայն բռունցքն է իշխում օրէնքի տեղ:

Ժողովրդի բարի՞քն է արդեօք նորից մղում կռուի ասպարէզ: Ամենեւին: Երկու բանակ կռւում են իրար դէմ, բայց երկուսն էլ նոյն ախորժակով եւ վայրագութեամբ աւարում եւ աւերում են այն ժողովրդին, որի հացն ուտում են ամէն օր եւ հարկ ստանում իբրեւ ռոճիկ:

Ո՞ւմն է պէտք ուրեմն այս աւերիչ ներքին կռիւը. միայն եւ միայն կռուող կողմերին: Շահախնդիր տէրութիւնները իրանցիներին գործիք դարձրած՝ նրանց արիւնով ու գոյքով մրցում են իրար հետ:

Բայց դուք ի՞նչ ունէք այս անպատիւ կռուի մէջ, հայրենակիցներ:

Դուք եկել էք ձեր ազատ կամքով Իրանի անկախութիւնն ու սահմանադրութիւնը պաշտպանելու: Նոյն այն կառավարութիւնը, որ ձեզ այսօր ուղարկում է նոր կռուի, նա ինքն է ծախել անկախութիւնը եւ խափանել ազատութիւնը: Ինչ կապ կարող է լինել դաւաճանների եւ հայ զինուորի միջեւ:

Ոչ մէկ զինուոր այս կռուին, եւ ոչ մի գնդակ – այս պէտք է լինի մեր նշանաբանը:

Միայն մի կռիւ կայ, որի համար պէտք է պատրաստ լինի ամէն հայ – ինքնապաշտպանութեան սրբազան կռիւը ընդդէմ բռնութեան:

Թող կորչին բռնատրներն ու դաւաճանները:

Կեցցէ՛ գաղափարական զինուորութիւնը:

Կեցցէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

22 Մարտ 1912 թ.

Փաստ. 589-10

Ե 10.– ՇԱՀՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1

Ընկերներ!

Իրանի անկախութիւնն արդէն ծախսուած եւ սահմանադրութիւնը վաղուց խափանուած է այս երկրի անարժան որդիների ձեռքով: Մէջլիսը փակուած է եւ յոյս չկայ, թէ ներկայ կառավարութիւնը նրան բաց կ'անէ նորից: Ընդհակառակը՝ այսօրուայ կառավարութիւնը շատ ուրախ է, որ կարող է գործել առանց հսկողութեան:

Ազատ չեն մամուլն ու խօսքը, ինչպէս նաեւ ժողովները: Գողերը սիրում են մութ գիշեր եւ Իրանի ներկայ կառավարութիւնը իր գողունի գործերը ծածկելու համար՝ խցել է ամէն մի ազատ բերան եւ սքողել մամուլի լոյսը:

Երկիրը կառավարում են մի խումբ դաւաճաններ, որոնք հլու եւ հնազանդ ռուս-անգլիական համաձայնութեան՝ կատարում են նրա որոշումները:

Չինուորական դրութիւնը, որ առժամապէս հրատարակուեց Իրանում, իբր թէ երկրի ապահովութեան համար,– այլեւս դարձել է յարատեւ: Այդ դրութիւնը պէտք է դաւաճաններին՝ ինչպէս համբոյրը Յուդային՝ իրենց սեւ գործերը գլուխ հանելու համար եւ հիմա էլ պէտք է նրանց, որ խուսափեն արդար ցասումից եւ արդարադատ վրէժից:

Մթնոլորտը կատարելապէս ապականուած է եւ երկրի բոլոր կենդանի եւ ապագայով յղի տարրերը կամ թափառում են հալածական ու տարագիր կամ թագնւում են մթին խորշերում:

Այսպիսի պայմաններում չափազանց դժուարանում է մեր դերը եւ ծանրանում մեր պատասխանատուութիւնը: Բայց նոյն այդ դժուարութիւնն ու ծանրութիւնը մեզ ներշնչում է մի.անհուն եռանդ կռուելու արդարութեան եւ ազատութեան համար: Մեզ վիճակւում է կենդանի պահել յեղափոխութեան սրբազան հուրը ազնիւ սրտերում եւ նրանով հրդեհել երկիրը արդար եւ ազատ կարգեր ստեղծելու համար:

Մարդիկ, որ կանգ չառան իրենց հայրենիքը ծախելու առաջ, Արեւելքին յատուկ դաւերով,– անտարակոյս, կը հալածեն նաեւ մեզ, ու թէեւ նրանք չեն մնայ անպատիժ, բայց խոհեմութիւնը պահանջում է հնարատր չափով խնայել մեր ուժերը եւ զգուշանալ մեր դժուարին ճամբան քայլելիս:

Ահա այս նկատումներով առաջնորդուած՝ մենք այսօրուանից Դաշնակցութիւնը մեր շրջանում յայտարարում ենք գաղտնի կազմակերպութիւն, որ այսուհետեւ գործելու է գաղտնի կազմակերպութեանը յատուկ եղանակով:

Ընկերներ! մեզ համար հասել են փորձութեան օրեր եւ փորձութեան մէջ է, որ կ'երեւայ անձնուիրութիւնը եւ հաւատարմութիւնը Դաշնակցութեան գաղափարներին:

Քաջալերուեցէք եւ պատրաստ եղէք դուրս գալու կռուի բռնակալութեան եւ նրա ծառաների դէմ՝ դաշնակցականին վայել անվեհերութեամբ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՀՍՏԱՆԻ
Կ. ԿՈՄԻՏԷ

Յ.Գ.- Բոլոր գործնական ցուցումները ձեր անելիքի վերաբերեալ կը ստանաք տեղական կոմիտէից:

1912, Մարտ 30

Փաստ. 590-5

Ե 11.– ՀԱՅ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Ընկերներ!

Ահա նորից հնչեց փողը պատերազմի: Մենք նորից գնում ենք մարտի դաշտը:

Մի անգամ էլ գնում ենք ջախջախելու այն մարդկանցից մէկին, որ մի ժամանակ Սահմանադրութեան պաշտպաններից մէկը ձեւացնելով իրան, այժմ արդէն այդ կառավարութեան դէմ է բարձրացրել իր զէնքը:

Ընկերներ! Մենք պէտք է խորը գիտակցենք, լաւ պիտի հասկանանք, որ գնում ենք պաշտպանելու նրա դէմ այն կարգերը, որ միայն աշխատաւոր ժողովրդի շահերն են պաշտպանելու, գնում ենք պաշտպանելու այն գիտակցութիւնը, որ մինչեւ հիմա զանազան խաների, արբաբների ձեռքից տանջուելուց յետոյ, այժմ էլ Սալար-Դովլէների, Ամիր Մուֆխամների եւ նման բորենիներից է հեծում:

Ընկերներ! Մենք դուրս ենք եկել աշխատաւոր ժողովրդի ծոցից, մենք որ թողած մեր մաճը, մեր սեփական համեստ գործերը, այժմ զէնքով ու մեր կեանքի գնով դուրս ենք եկել այս երկրի ուժեղների դէմ, միայն եւ միայն աշխատաւոր ժողովրդի շահերը ի նկատի ունենալով, կարո՞ղ էինք արդեօք, այդ իսկ ժողովրդի, այդ բազմաչարչար գիտակցութեան, մեր ծնողների, քոյր եւ եղբայրների շահերին հակառակ գործ բռնել, կարո՞ղ էինք արդեօք նրանց ի վնաս գործել...

Ո՛չ, հազար անգամ ո՛չ...

Ուր էլ որ լինի, ինչ ազգի, ցեղի, կրօնի էլ որ պատկանելու լինի այդ գիտակցութիւնը, այդ աշխատաւոր ժողովուրդը, նա այսօրուայ մեր մօտիկ կամ հեռու հարեւանը, վաղը մեր բարեկամն ու զինակիցն է ընդդէմ բոլոր բռնապետների, հարստահարողների ու շահագործողների:

Կռուե՛նք ուրեմն այսօր մեր այդ հարեւանների համար, պաշտպանենք նրան, որ վաղը միւս օրը ձեռք-ձեռքի տուած, կողք-կողքի կանգնած, աշխատաւորի դատը պաշտպանենք, նրա իրաւունքների համար կռուենք:

Չլսենք ոչ ոքի, որ կ'աշխատի մեզ դուրս հանել այս միակ եւ ճշմարիտ ճանապարհից:

Ընկերներ! Ահա քանի ամիս է ինչ մենք կռուում ենք այս երկրի սահմանադրական կարգերը պաշտպանելու համար, քանի-քանի յաղթութիւններ ենք տարել, մեր թանկագին զինակիցներին ենք զոհ տուել, երբեք չենք նահանջել ու միշտ մենք ենք յարձակուել. սակայն այս բոլորի հետ միասին, մենք կանգնած ենք եղել արդեօ՞ք մեր կոչման բարձրութեան վրայ, կարողացե՞լ ենք արդեօք սրբութեամբ պահպանել մեր ձեռքում եղած թանկ պատիւները – Դաշնակցութեան եւ հայութեան պատիւը...

Ցաւելով պիտի ասենք, որ ոչ բոլորովին ընկերներ:

Մինչեւ այժմ մեզ մոլորեցրել են, աշխատել են մեզ գործիք դարձնել եւ զանազան միջոցներով կարողացել են արատաւորել մեր անունը:

Սակայն երկար չէր կարող տեւել այդ:

Վարագոյրը պատռուեց եւ շատ բաներ երեւացին մեզ իրենց իսկական մեծութեամբ, շատ դէմքեր իրենց իսկական գոյնով:

Եւ այժմ թէեւ ուշ, բայց էլի բանակի սակաւաթիւ դաշնակցական ընկերներով կոչ ենք անում ձեզ, զինակից ընկերներ, Ազատութեան եւ Արդարութեան ասպետներ լինել, չարատաւորել ձեր անունը ընչաքաղցութեան եւ վեհերոտութեան արատով. անվեհեր եւ անշահախնդիր եղէք:

Մեզ քաջալեր թող լինի դաշնակցական նահատակների, Քրիստափորների, Սերոբների, Չաուշների եւ Մարտիրոսների անմահ յիշատակը:

Ընկերներ! Կռուենք միշտ առիւծի նման եւ լինենք անշահախնդիր ինչպէս մի ասպետ, կատարենք սրբութեամբ մեր բոլոր պարտականութիւնները եւ երբեք չհնազանդուենք թալաններ անելու հրամաններին:

Ընկերներ! Մենք թալանչիներ չենք, մենք աշխատաւոր ժողովրդի, գիտացիութեան պաշտպանները եւ ոչ թէ նրան իսկ թալանողներն ենք: Եւ որքան որ կ'ուզեն թող սրանից յետոյ էլ հրամաններ արձակեն թալաններ անելու, գիտացու արիւն քրտինքով աշխատանքը ձեռքից խլելու, հեշտ կերպով հարստանալու, չլսենք նրանց, չենթարկուենք նրանց, իմանանք մեր արժէքը եւ անբիծ պահենք անուն եւ պատիւներս:

Թող կորչին մեծ ու փոքր թալանչիները,
Թող կորչին մեր անունը արատաւորողները.
Կեցցեն հանգիստ խիղճ ու մաքուր ձեռք ունեցող զինուորները.
Կեցցեն գաղափարի զինուորները
Կեցցէ Հ.Յ.Դաշնակցութիւնը.

ԹԵՀՐԱՆԻ ԲԱՆԱԿԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Թեհրան, 1912 Մարտ

Փաստ. 479-16

Ե 12.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ՇԱՀԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Թաւրիզ, 9 Ապրիլ 1912

Սիրելիք!

Հաստատում ենք մեր N 130-*ը. ձեր* N 21-*ից յետոյ որեւէ գրութիւն չենք ստացել ձեզանից։*

Ընկ. Ռշտունու[25] *մեզ հաղորդած մի շարք խնդիրների առթիւ է, որ ուզում ենք այժմ գրել ձեզ։ Դա ձեր եւ Թափառականի*[99] *մէջ եղած տարաձայնութիւնն է, որը ինչպէս երեւում է վերջերս աւելի եւս սուր կերպարանք է ստացել։ Դուք այդ մասին գրել էիք մեզ դեռ եւս Դեկտ. 5/18 թուակիր նամակում, որին պատասխանել ենք իր ժամանակին մեր* 122 *եւ* 128 *համար գրութիւններով։ Դրանցից առաջինում մենք ցաւ էինք յայտնել որ ձեր յարաբերութիւնները ցանկալի չափով սերտ ու մտերմական չեն, իսկ երկրորդում՝ մենք գրել էինք մեր կարծիքը անցած դարձածի մասին, որքան այդ յայտնի էր մեզ ձեր գրութիւնից։ Դրանից յետոյ մենք սպասում էինք, որ դուք աւելի հանգամանօրէն ու մանրամասն կը յայտնէք մեզ դրութեան մասին, միւս կողմից էլ, կարծում էինք, որ Թափառականը եւս կը շտապի իր ասելիքը գրել մեզ, որպէսզի մեր եզրակացութիւնները միակողմանի չլինեն։ Դժբախտաբար դրանից յետոյ մինչեւ այսօր էլ թէ դուք եւ թէ Թափ.ը խորին լռութիւն պահպանելով մեզ էլ կարծել տուէք, որ ցանկութեան համաձայն արդէն կարողացել էք ամէն մէկին իր իրաւանց սահմաններում պահել առանց որեւէ աղմուկի ու սրտնեղութեան։*

Մինչեւ այժմ էլ դեռ եւս մեզ յայտնի չէ թէ Թափ. ի՞նչ բանում է մեղադրւում, սակայն այն բանում, որում դուք մեղադրում էք Թափ.ին՝ իրաւունք ունիք։ Ահաւասիկ տարին լրանալու վրայ է, որ նա գործում է ոչ որպէս դաշնակցական, այլ որպէս Թափ., նրա հետ միասին նաեւ այն բոլոր զինակիցները շարժուել ու գործել են Թափ.ի ցուցմունքներով ու հրահանգներով։ Թերեւս կարելի է աւելին ասել, այն ժամանակից ի վեր, երբ մարմինը դադարել է մասնակցութիւն ունենալ Թափ.ի գործունէութեան մէջ, այդ ժամանակից արդէն մեր շրջանում այդ ամբողջ պատկառելի ուժը կորցրել է դաշն. համարուելու իրաւունքից։ Այս մասին չենք կարծում թէ Թափ.ը կամ որեւէ մէկը այդ խմբից վիճելու լինի։ Դրանից յետոյ միանգամայն պարզ է, որ ոչ նրանք իրաւունք ունին մեր շրջանի (այժմ ձեր), Դաշն[ակցութեան] անունից խօսելու, որոնք կապուած են եղել Թափ. հետ եւ ոչ թէ մեր շրջանի Դաշն.։ Ինքնին սխալ է, ըստ մեզ, այսպիսի փափուկ պարագաներում կազմակերպութիւն մտցնել այն կռուողների մէջ, որոնք դեռ շարունակում են կապուած մնալ իրենց պետական պաշտօններին (միւս կողմից հովանաւորութիւն փընտռելու համար՝ մտնել կազմակերպական շարքերը), բոլորովին աւելորդ է եւ աննպատակայարմար։ Միւս կողմից հարց է առաջ գալիս, ինչպէս վարուիլ, երբ նրանց ամբողջ գործունէութիւնը վերագրւում է Դաշնակցութեան։ Այդ պարագայում մենք համամիտ չենք զանազան յայտարարութեանց եւ գտնում ենք, որ ընկերական դատարանը կարող է մի միջոց գտնել փրկելու համար Դաշնակցութեան պրեստիժը եւ եթէ այդ էլ չեղաւ, Բիւրոյի խորհրդակցութեամբ եւ նրա միջոցներով վերջ տալ այդ լքող ու կազմալուծիչ դրութեան։

Հաւատացած ենք, որ դուք այդ բոլորի հետ անմիջական յարաբերութեան ու շփման մէջ լինելով հանդերձ, ոչ մի ջանք չպիտի խնայէք, լարուած կրքերը հանգըստացնելու եւ խաղաղ ու մտածուած միջոցներով գործին բարեյաջող ու ցանկալի լուծումն տալու. այդ է պահանջում թէ կուսակցական դիսցիպլինան եւ թէ նրա պրեստիժը։

Աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել նաեւ այդ առթիւ թէ ինչ բարձր մարմնի դիրեկտիւներով է գործել Թափառականը. եթէ «աւելի բարձր մարմին» ասելով նա ակնարկել է մեզ, ապա այդ ճիշտ չէ, մենք երբեք դիրեկտիւներ տուողի դերում չենք եղել Թափ.ի նկատմամբ, այլ մեր յարաբերութեան ամբողջ էութիւնը այն է եղել, որ փոխադարձաբար քաղաքի դրութեան մասին հեռագրներով հաղորդել ենք միմեանց կարեւոր նշանակութիւն ունեցող լուրեր։ Իսկ եթէ Բիւրոյին է ակնարկում, մենք չենք կարող կարծել, որ Բիւրոն առանց մեր գիտութեան մեր շրջանում կարգադրութիւններ անէր, այն էլ մի այնպիսի գործի համար, որը կոնսպիրատիւ[124] *ոչ մի բնոյթ չունի։*

Քաղաքական նորութիւններ չկան. մեզ մօտ հայ խմբագրի վերջին ժամանակներս գրչի, մտքի եւ ազնըւութեան դէմ կատարած չահատակութիւններն են օրւայ հարց դարձել։

Ընկերական բարեւներով
Ա[ՏՐՊԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

124.- Դաւադրական, հակապետական։

Փաստ. 60ա-63

Ե 13.– ՔԵՌԻԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԺԸՆԵԻ, ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

(Լատինատառ հայերէն)


Telegramm — Télégramme — Telegramma
Contr. № 1040
Genève
geneva: koom 1: 43 30/4 : /10. hn = via. indo varsav
Aufgegeben den — Consigné le — Consegnato il
Erhalten von — Reçu de — Ricevuto da
= geneva drochak varandian = nerka: petoutune krvoune saiardovli: den chahi kentronakan komitei jriaberarkanov hrahangvoune dachnaktzakan martiknerin tchnasnaktzel krouin martinknere heranatov banake kaykayvoune vtangvoune banaki hajdoghoutune krvi dachtoum spassoumenk buroi anmidjakan hrahangin nasnaktzel tevotch droutune kritikakane heragredtzek tehran stepanianin enkernerin pahoumen nintcher buroi hrahange = keri +

Ժընեւ, Դրօշակ, Վարանդեան 30-4-1912

ՆԵՐԿԱՅ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԿՌՒՈՒՄ Է ՍԱՂԱՐ ԴՈՎԱԻ ԴԷՄ — ՇԱՀԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՈՎ ՀՐԱՀԱՆԳԻՈՒՄ Է ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԵԼ ԿՌՒՒՆ — ՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՀԵՌԱՆԱԼՈՎ ԲԱՆԱԿԸ ՔԱՅՔԱՅԻՈՒՄ Է, ՎՏԱՆԳԻՈՒՄ Է ԲԱՆԱԿԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԿՌՒՒ ԴԱՇՏՈՒՄ — ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԲԻՒՐՈՅԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՆ — ՄԱՆԱԿՑԵԼ ԹԷ ՈՉ — ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԻՏԻՔԱԿԱՆ Է — ՀԵՌԱԳՐԵՑԷՔ ԹԵՀՐԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ — ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ՊԱՀՈՒՄ ԵՄ ՄԻՆՉԵՒ ԲԻՒՐՈՅԻ ՀՐԱՀԱՆԳԸ։

ՔԵՌԻ

Փաստ. 60ա-66

Ե 14.– ԵՓՐԵՄԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԺԸՆԵՒ

(Լատինատառ հայերէն)



Telegramm — Télégramme — Telegramma Contr. № 418

geneve de teheran 45 97 29 2/5 11. = via indo blin =

redaction droschak geneve =

yethe kaznakerpakan karğadroutiuneh saĽardovĽin oğnel yev nerka
karavaroutianeh hakarakeՎ intchou indz tchek haghordeĽ aid
karğadroutiuneh yeth aidpissi ban tcheka: anaijakan nijotsnerov
azatetsek kaznakerpoutianeh varkabekoutiunits aisteghi inknakotch
kedrokaneh kazmavats andzernahasnerits kaghaĽikeh dardzeĽ nikani
ditounavor nardkants dzerkoun yev skseĽeh mi khanğartich djĽatoğh
ğort oune outian vori vat hetevankeh piti andradarnah the
kaznakerpoutian yev the hai azğabnkoutian vra chenorhiv
vori antarkouis therannel tavritzi yev reshti orenkenkni
herağretsek in bernelik dirkeh nakhin dzevovğordzem
the votch yethe teğhakan marneh charounakeh ais himaroutiuneh y
azatem hamaroun amen patskhanatevoutiunits indz herağretsek here
nayev arevpoanin = yepren +

Դրօշակի խմբագրութեան, Ժընեւ

2-5-1912

ԵԹԷ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ Է ՄԱԼԱՐ ԴՈՎԼԻՆ ՕԳՆԵԼ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՀԱԿԱՌԱԿԵԼ, ԻՆՉՈՊԷ ԻՆՉ ՉԵՔ ՀԱՂՈՐԴԵԼ ԱՅԴ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ — ԵԹԷ ԱՅԴՊԻՍԻ ԲԱՆ ՉԿԱՅ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱԶԱՏԵՑԷՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆԸ ՎԱՐԿԱԲԵԿՈՒԹԻՒՆԻՑ — ԱՅՍՏԵՂԻ ԻՆՔՆԱԿՈՉ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԸ ԿԱԶՄՈՒԱԾ ԱՆՇԵՌՆՀԱՄՆԵՐԻՑ, ԽԱՂԱԼԻՔ Է ԴԱՐՁԵԼ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՒՄՆԱՒՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԵՌՔՈՒՄ ԵՒ ՍԿՍԵԼ Է ՄԻ ԽԱՆԳԱՐԻՉ ՋԼԱՏՈՂ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ՝ ՈՐԻ ՎԱՏ ՀԵՏԵՒԱՆՔԸ ՊԻՏԻ ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ԹԷ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԷ ՀԱՅ ԱԶԳԱԲԸՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ — ՇՆՈՐՀԻՒ ՈՐԻ ԱՆՏԱՐԱԿՈՅՍ ԹԵՀՐԱՆՆ ԷԼ ԹԱՒՐԻԶԻ ԵՒ ՌԷՇՏԻ ՕՐՆ Կ'ԸՆԿՆԻ – ՀԵՌԱԳՐԵՑԷՔ ԻՄ ԲՌՆԵԼԻՔ ԴԻՐՔԸ — ՆԱԽԿԻՆ ՇԵՒՈՎ ԳՈՐԾԵՄ, ԹԷ ՈՉ — ԵԹԷ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՅՍ ՅԻՍԱՐՈՒԹԻՒՆԸ, ԵՍ ԻՆՉ ԱԶԱՏ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ ԱՄԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԻՑ: ԻՆՉ ՀԵՌԱԳՐԵՑԷՔ, ՀԵՌԱԳՐԵՑԷՔ ՆԱԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆԻՆ:

ԵՓՐԵՄ

Փաստ. 60-32

Ե 15.– ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

3 Մայիս 1912, Ժընեւ

Սիրելիք,

Ուղարկում ենք Քեռիի եւ Եփրեմի հեռագիրները: Այսօր իրանց հեռագրեցի, որ սպասեն պատասխան ձեզնից:

Դրութիւնը չափազանց խառնակուել է, ինչպէս տեսնում էք եւ հակառակութիւնն կենտրոնականի ու Եփրեմի միջեւ հասել է իր apogée-ին[125]*:*

Չգիտենք, ինչ հեռագրեցիք այդտեղից. կը խնդրենք տեղեկացնել:

Պատասխանը մի մոռացէք, յարաբերութիւն պահեցէք այդտեղից. մենք չենք կարող ամէն տեղ հասնել եւ իրաւունք էլ չունենք որեւէ հրահանգներ տալ: Մինչեւ օրս Թեհրանում չգիտեն անգամ, թէ որտեղից պէտք է հրահանգ ուզեն. դիմում են, ըստ աւանդութեան, Ժընեւ[126]*:*

Ինձ թւում է, թէ պէտք է Վանից մի ձեռնհաս ընկեր ղրկել (թէկուզ Դումանին) — այնտեղի յարաբերութիւնները կանոնաւորելու եւ մտքերը խաղաղացնելու համար: Ահագին տարածութեան վրայ ինչ կարող ենք իմանալ եւ ձեռնարկել: Մը կողմը իրաւունք ունի այս սուր տագնապի մէջ... կենտրոնակա՞նը[127] *թէ Եփրեմն ու Քեռին: Երկու կողմն էլ իրենց որոշ* raison-*ներն*[128] *ունին:*

Խնդրում ենք մեզ եւս տեղեկացնել ձեր որոշումների մասին:

ՎԱՐԱՆԴԵԱՆ

125.- Ֆրանսերէն՝ գագաթնակէտին:
126.- Ակնարկութիւն այն մասին, որ 1911ի Վեցերորդ Ընդհ. Ժողովէն ետք Արեւմտեան Բիւրոյի կեդրոնը փոխադրուած էր Կ. Պոլիս, իսկ Ժընեւը կը մնար իբրեւ կեդրոն «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն:
127.- Այսինքն՝ Թեհրանի Կեդր. Կոմիտէն:
128.- Ֆրանսերէն՝ պատճառ, պատճառաբանութիւն:



Նմոյշ՝ Վարանդեանի ձեռագրէն

Փաստ. 109-56

Ե 19.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՇԱՀԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

21 Ապրիլ / 4 Մայիս 1912

Ընկերներ,

Ստացել ենք ձեր նամակը, որի մէջ յիշուած են զինաթափութեան, դպրոցում կայացած ժողովի, ոստիկանութեան այդ առթիւ հայ հոգաբարձութեանը գրած թղթի եւ այլ խնդիրների մասին։ Ստացել ենք նաեւ ձեր վերջին հեռագիրը։

Հեռագրով արդէն հաղորդեցինք պէտք եղածը թէ Եփրեմի եւ թէ ձեզ։ Այդ նոյն հեռագիրը կարող էինք *եւ պարտաւոր էինք շատ աւելի վաղ ուղարկել, որպէսզի Կ.Կ.ի եւ ընկ. Եփրեմի, Ցովսէփի յարաբերութիւններն այդքան չլարուէին, սակայն գործի լրջութիւնն ու ծանրութիւնը այնքան մեծ էին, որ պահանջում էին արտակարգ զգուշութիւն։ Ձեր հեռագրած խնդիրների մասին ընդարձակ նամակներով բանակցութեան էին մտել եւ կարծիք էին պահանջել նաեւ ընկ. Եփրեմն ու Ցովսէփը։*

Սկսուած է մի մեծ գործ — Պարսկաստանի ազատամարտը, որի մէջ մենք տուինք Մարտիրոսի, Արտեմի, Գանձակեցի Նիկոլի եւ ուրիշ սիրուած ու գուրգուրուած ընկերների պէս զոհեր. մարտնչել ենք մօտ 3 տարի, եթէ ոչ աւելի. այդ քամբախտ երկրի ազատագրման ամէնէն փայլուն էջերը գրուեցին մեր հերոս ընկերների արիւնով. բարձրացաւ մեր կուսակցութեան պրեստիժը. մենք ցոյց տուինք մահմետական աշխարհին, որ մահմետականութեան եւ դրացի թշուառ ժողովուրդների միակ անկեղծ բարեկամներն ենք։ Եփրեմը, Քեռին, Դումանը եւայլն ահագին անուն ձեռք բերին իբր ազատութեան զինուորներ, եւայլն, եւայլն։

*Այդքա՜ն ծանրակշիռ հանգամանքների առջեւ մենք չէինք կարող՝ Արեւմտեան Բիւրոյի չորս անդամներս՝ մեր սեփական պատասխանատուութիւնով մի հակոտնեայ վճիռ տալ։ Այդ պատճառով ժողովի հրաւիրեցինք բոլոր այստեղ եղած հին եւ ձեռնհաս ընկերներին, ինչպէս Վարդանը, Հրաչը, Գարոն, Ակնունին, Գալֆան, Մարը, Մարզպետը*130 *եւայլն. ունեցանք 4 երկար ու փոթորկալի նիստեր. վերջ ի վերջոյ եկանք այն եզրակացութեան, որը հեռագրել ենք ձեզ։*

Մեզ թւում է, որ այժմ արդէն Պարսկաստանը կորցրել է իր անկախութիւնը եւ դառել խաղալիք հիւսիսում ռուսների,հարաւում անգլիացիների ձեռքին, որ Թուրքիան եւ միւս մեծ պետութիւններն էլ ինտրիգներ են լարում այդ երկրում, եւ որ մերինի պէս մի յեղափոխական կազմակերպութեան միջոցներից ու կարողութիւնից վեր է խառնուել այդպիսի խճճուած ու բարդ դիւանագիտական խաղերի մէջ, հասկանալ այդ խաղերը եւ խուսափել այս կամ այն կողմի ձեռքին գործիք դառնալուց։ Այդ պատճառով էլ, որքան մենք ծանօթ ենք այդտեղի եւ դրսի աշխարհի անցուդարձին, մենք եկանք այն համոզման, որ պէտք է ձեռնպահ մնալ Սալար-Դովլէի վերաբերմամբ, ի հարկէ եթէ որեւէ ներքին, մեզ անծանօթ խնդիր չի ստի[պի] ձեզ այլ կերպ ընթանալու։

Բացի այդ, մենք արդէն գրեցինք Եփրեմին, որ քանի դեռ Պարսկաստանը յեղափոխական վիճակում էր, նրա ոստիկանապետ, հրամանատար եւ այլ ամէն տեսակի պաշտօններ վարելը միանգամայն հասկանալի է։ Զմոռանանք, սիրելի ընկերներ, որ Եփրեմը, Քեռին, Խեչոն եւ մեր միւս մարտիկ ընկերները — մանաւանդ Եփրեմը — իրենց կտրիճութիւնով շատ բարձրացրին թէ մեր կուսակցութեան եւ թէ իրենց անունը։ Այդ բարձր, այդ հերոսական անունն իսկ աչքի առաջ ունենալով, մենք գրեցինք ընկեր Եփրեմին, որ «վախենում ենք թէ այժմ, երբ Պարսկաստանը խաղալիք է ռ[ուսների] եւ անգ[լիացիների] ձեռքին, երբ յեղափոխական շրջանն անցել է, կ՚ընկնի թէ կուսակցութեան պրեստիժը եւ թէ մեր ընկերոջ՝

130.- Յաջորդաբար՝ Վարդան՝ Մեհրաբեան Սարգիս (Խանասորի արշաւանքին հրամանատարը), Հրաչ՝ Թիրեաքեան Հայկ, Գարո՝ Փաստրմաճեան Գարեգին (վերջին երկուքը Պանք Օթթոմանի գրաւման ղեկավարներէն), Ակնունի՝ Մալումեան Խաչատուր, Գալֆա՝ Գալֆայեան Յարութիւն, Մար՝ Տէր Մարտիրոսեան Միքայէլ, Մարզպետ՝ Ղազարոսեան Ղազարոս:

Եփրեմի ձեռք բերած այնքա՜ն փառաւոր անունը, եթէ նա շարունակէ մնալ ոստիկանապետ»։ Մենք խորհուրդ տուինք իրեն, որ եթէ կարելի է, մի կերպ թողնէ այդ ամէնը եւ անցնի Եւրոպա հիւանդութեան կամ որեւէ այլ պատրուակով։

Այս է մեր կարծիքը, ի հարկէ, որքան որ հեռուից կարելի է դատել մի երկրի ներքին գործերի մասին։ Սակայն որպէսզի ճշտութեամբ հետեւած լինենք Ընդհ. Ժողովի որոշումներին ձեր երկրի վերաբերմամբ, մենք լաւագոյն համարեցինք՝ առաջիկային բռնելիք դիրքի վերջնական լուծումն ու պատասխանատուութիւնը թողնել ձեզ վրայ — այսինքն Կ. Կոմիտէի բոլոր անդամներին, Եփրեմին, Ցովսէփին, Քեռուն, Խեչոյի եւ այդ բոլորիդ հաւանութիւնով կարեւոր ու ձեռնհաս համարուած՝ տեղումդ գտնուող միւս ընկերների համագումար ժողովին։

Մեր մտածելակերպն ու վարանումները պարզեցինք ձեզ։ Այժմ ձեր այդ ընդարձակ ժողովին կը մնայ խելացի եւ երկրին, հայութեան ու Դաշնակցութեանը վայել քայլեր անել։

Մի ընկերական խնդիր, եթէ կ՚ուզէք՝ նոյնիսկ պահանջ ենք յայտնում ձեզ, այստեղի բոլոր հին ու արդէն փորձանքների մէջ եփուած ընկերներս. ի սէր մեր ազգային, դասակարգային եւ կուսակցական շահերի, աղաչում ենք ձեզ, խնդրում, պահանջում, որ թողնէք մի կողմ անհատական նեղսրտութիւնը, կիրքը, գրգիռը եւ գործի մէջ միայն եւ միայն ընկերական անկեղծութիւն եւ, մանաւանդ, յարգանք ցոյց տաք իրար։

Մեծ յոյս ունենք, որ ամէն կերպ կը ջանաք խաղաղ ելքի յանգել։

Ընկերական ջերմ բարեւներով՝
Արեւմտեան Բ[իւրոյի]
Թ[ուրքիոյ] Հ[ատուած]ի կողմէ
ԱՐՄԻԻԵԱՆ

Փաստ. 60ա-67

Ե 20.– ԵՓՐԵՄԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԺԸՆԵԻ

(Լատինատառ հայերէն)



Դրոշակի խմբագրութեան, Ժընեւ

Թեհրան, 22 Ապրիլ/ 5 Մայիս 1912

ԱՄԷՆ ԿԵՐՊ Կ'ԱՇԽԱՏԵՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ — ԵԹԷ ՉԵՂԱՒ ԻՄԱՑԷՔ ԻՄ ՅԱՆՑԱՆՔԸ ՉԻ — ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՄԷԿԻՆ ՈՒՂԱՐԿԵԼ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

ԵՓՐԵՄ

Փաստ. 60ա-68

Ե 21.– ԵՓՐԵՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌԱԳԻՐԸ ԺԸՆԵԻ

(Լատինատառ հայերէն)



Դրոշակի խմբագրութեան, Ժընեւ

Թեհրան, 24 Ապրիլ/ 7 Մայիս 1912

ՍԱԼԱՐ ԴՈՎԼԻ ԴԷՄ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿԸ ՅԱՂԹՈՒԵՑ — ՍԱԼԱՐ ԴՈՎԼԷՆ ՍՊԱՌՆՈՒՄԷ ՀԱՄԱԴԱՆԻՆ — ԱՅՍՕՐ ԳՆՈՒՄԵՄՆԲԱ ԴԷՄ — ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ ԳՈՒՄԱՐՈՒԵՑ ԱՌԱՆՑ ԱՐԴԻՒՆՔԻ — ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ԳԱԼԸ ԱՆՀՆԱՐ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ ՄԻՆՉԵՒ ՅԱՏՈՒԿ ՄԱՐԴ ՉՈՒՂԱՐԿՈՒԻ — ՊԷՏՔ Է ՇՏԱՊԵԼ:

ԵՓՐԵՄ

Փաստ. 60-12

Ե 22.– ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

9 Մայիսի 1912, Ժընեւ

Սիրելիք!

Եփրեմից 2 հեռագիր եւս ստացանք. մենք իրան հեռագրով խնդրել էինք յանուն կազմակերպութեան պրեստիժի աշխատել համերաշխ գործել կենտրոնականի հետ. դրան պատասխանած է թէ «կ'աշխատեմ ամէն կերպ համերաշխ ընթանալ, բայց եթէ չյողուի, յանցանքն իմը չէ»։

Վերջին հեռագրով հաղորդեց որ իր ճիգերը ապարդիւն անցան, ժողով են արել, բայց համաձայնութեան չեն եկել եւ որ անհրաժեշտ է անմիջապէս մի ձեռնհաս քննիչ ընկեր ղրկել։ Հեռագրում է նաեւ, թէ Սալարդովլէն արդէն ջարդել է կառավարութեան առաջին բանակը եւ որ ինքը Եփրեմը գնում է այժմ նրա դէմ (երեւի առանց մեր մարտիկներին)։

Դուք ոչինչ չէք գրում ձեր արածի կամ անելիքի մասին։

Բարի եղէք մի երկու խօսք գրել. մենք չատ անհամ դրութեան մէջ ենք։ Պէտք է անպատճառ ղրկել մէկին. կամ Նիկոլին (բայց ասում են, թէ նրա յարաբերութիւնները Եփրեմի հետ լաւ չեն) կամ Ռոստոմին, որ ի հարկէ, ամէնից յարմարն է, կամ Վարդանին, կամ թէ Խաչատուրին։ Խաչատուրը հաշտարարի դերը լաւ կը կատարէր, բայց ծանօթ չէ իրադարձութիւններին։

Ռոստոմին նոյնպէս կը գրեմ. մի քիչ վտանգաւոր է նրա Թեհրան գնալը. բայց ի՞նչ արած. նամակները (Թեհրանից եւ Թաւրիզից) չատ մռայլ գոյներով են նկարագրում կազմակերպութեան վիճակը, կատարեալ քայքայումն է եւ դեմորալիզացիա...[131] *սկսել են արդէն ձեռնպահներով*[?] *զբաղուել։*

Տեղւոյն անցքերի մասին էլ գրեցէք։ Եթէ հարկ է, Եւրոպայում փոքրիկ campagne[132] *սկսենք Իթ[թիհատ]ի մեր հանդէպ բռնած դիրքի դէմ։ Շատ վատ [?] տրպաւորութիւն արաւ բոլորիս վրայ Սիմոնի*[133] *յոդուածաշարքը։ Եթէ Սիմոնը այդքան յուսախաբ եւ այդքան զայրացած է, նշանակում է գործերը չատ վատ են։*

Վանի դէպքը մտատանջութեան տեղիք է տալիս։

Այդպէս միշտ ջահել տաքգլուխներին մէկը (մի բուլգ[արացի] Սարգիս) կարող է ահագին փորձութիւնների դուռ բաց անել։

Bérard-*ը*[134] *նորից պնդում է* Pro Arm[enia]*ի*[135] *վրայ...*

Ի սէր Աստծոյ մի երկու խօսք գրեցէք։

Պէ՞տք է արդեօք որեւէ քայլ անել այս կողմերում, թէկուզ մի երկու թերթերի մէջ։ Ակնկալո՞ւմ էք որեւէ լուրջ ռեֆորմ Իթթ[իհատ]ից — խոստումների սահմաններում։

Ջերմ բարեւներով
ՎԱՐԱՆԴԵԱՆ

Ղարիբը[135] *երէկ Պարիզ էր. վերադարձաւ Լօզան։*

131.- Բարոյալքում։
132.- Ֆրանսերէն՝ պայքար, արշաւ։
133.- Զաւարեան Սիմոնի։
134.- Ֆրանսացի քաղաքական անձնաւորութիւն, սերտ բարեկամ Դաշնակցութեան, որ կը ցանկար վերստին հրատարակել Pro-Armenia-ն (դադրած)։
135.- Աւետիս Ահարոնեան։

Փաստ. 60-33

Ե 23.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

9-ին Մայիսի 1912, Ժընեւ

Սիրելիք,

Ժամանակին ստացած ենք ընկ. Վարանդեանին ուղղած ձեր 27 Փետրուար թուակիր նամակը։ Ստացել ենք 29 կապոցները. եթէ էլի կայ ղրկեցէք։ Մինչեւ այժմ սպասում ենք ձեր խոստացած տեղեկագիրներին՝ Պարսկաստանի շարժումների մասին։

Շահից[136] *ստանում ենք ամենատխուր լուրեր։ Հակառակութիւնը Ե[փրեմ]ի եւ Կենտր[ոնական Կոմիտէ]ի մէջ հասել է գագաթնակէտին։ Հեռագիրներ են տեղում մեզ շարունակ Ե[փրեմ]ից, Քեռիից։ Սկզբունքի խոր տարբերութիւն կայ։ Ձենք ծանրանում, երեւի խնդիրը յայտնի է ձեզ։ Սալարի դէմ կռուելու կամ չկռուելու խնդիրն է (մեր մասնակցելու կամ չմասնակցելու)։*

Դուք ի՞նչ դիրք էք բռնած արդեօք։ Մի քիչ աւելի յաճախ տեղեկութիւններ տուէք։ Ց[նան]ի նամակը Վարանդեանը ստացել է, կը պատասխանէ։ «Դր[օշակ]ը» ստանում էք, թէ ոչ։ Ներեցէք, որ երկար եւ ամէն բանի մասին չենք կարող գրել յայտնի պատճառներով։

Ընկեր. բարեւներով՝
ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿ»Ի

Փաստ. 101-28

Ե 24.– ՌՈՍՏՈՄԷՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

27 Ապրիլ 1912

Ռոստոմի այս նամակը գրուած է Կարինէն, որ կեղրոնն էր Արեւելեան Բիւրոյի Հայաստանի հատուածին։ Թուականը՝ 27 Ապրիլ, անշուշտ հին տոմարով է։ Նոր տոմարով պիտի ըլլար 10 Մայիս։

Սիրելի ընկերներ,

10-15 օր առաջ մի փոքրիկ նամակ էի գրել Եփրեմին. յուսով եմ, ստացած կը լինի,– նամակը ապահովագրուած էր։

Պոլսից գրել էին մեզ, որ հեռագրով յայտնենք ձեզ մեր կարծիքը Սալար-ուդ-Դովլէի դէմ պատրաստուելիք արշաւանքի մասին։ Մենք էլ, ի նկատի ունենալով այն, որ Ս.Դ. հանգստութիւն չի տալիս ժողովրդին եւ որոշ չրջան խռովեալ վիճակի մէջ է պահում, խորհուրդ տուինք, որ մեր ընկերները մասնակցեն։ Ուրիշ կերպ, մեր կարծիքով, անկարելի է, քանի դեռ մեր ընկերները չեն հրաժարուել։ Դրա հետ միասին հարկ ենք համարում յայտնել, որ հրաժարուելու եւ հեռանալու ժամանակը արդէն եկել է։ Սրանից յետոյ ինչ խնդիր էլ որ ծագելու լինի, մեր մասնակցութեան հարցը միշտ պիտի անախորժ պարագաների զարնուի. միշտ, որոշ չափով, վարկաբեկիչ պիտի լինի ընկերների նկատմամբ։

Այս էլ չմոռանանք աւելացնել, որ մեր յայտնածը լոկ կարծիք է հիմնուած կցկտուր տեղեկութիւնների վրայ։ Ընկերների խառը ժողովը, յուսով ենք, կը ղեկավարուի նաեւ մեր վերջին ժողովի որոշումներով։

Շատ պիտի խնդրէինք պարզաբանել մեզ Սալ. Դովլի իսկական դերը։

Անցեալ տարի այստեղից անցան դէպի [Թուրք]-պարսկական սահմանագլուխը 3 հոգի, որոնցից մէկը բժ. Կարաբէկովն էր (այժմ Բագու), միւս երկուսը անձնուէր իթթիհատականներ էին։ Մեզ հետ յաճախակի տեսնւում էին. բայց նրանց մեկնելուց շատ յետոյ իմացանք, որ վերջին երկուսը նպաստել են Սալ.-Դովլի արշաւանքի կազմակերպման։ Երբ այդ սպաներից մէկը վերջերս նորից Կարին եկաւ, մեր զարմանքին, թէ ինչպէս կարող էին նրանք նպաստել Իրանի անիշխանութեան զօրեղանալուն, յանցանքը նետեց Կարաբէկովի վրայ, ասելով՝ թէ խաբուած են եղել նրանից։ Աւելացրեց նաեւ, որ այլեւս ոչ մի կապ չունեն հետները։ Վերջին օրերս սակայն իմանում ենք, որ Ս.Դ. գտնւում է Թեհրանի օսմ[անեան] դեսպանատան հովանաւորութեան տակ։

Շատ ցանկալի է ունենալ ձեր տեղեկութիւնները։

Ընկերական բարեւներով՝
ՌՈՍՏՈՄ

136.- Այսինքն՝ Թեհրանից։

Հասցէս՝ Artachess Rostomian
Ecole Sanassarian

Փաստ. 109-59

Ե 25.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

1912 թ. 28 Ապրիլ, Կ. Պոլիս

Ընկերներ,

Այս անգամ էլ գրում եմ մասնաւոր նամակի ձեւով, որովհետեւ դուք ոչինչ չէք գրում, թէ ինչ վիճակի է պոստը — կարելի՞ է վստահիլ եւ պաշտօնական գրագրութեան պահել։ Առ այժմ գրում եմ Կարապետի[137] *հասցէով, որ ձեզ տայ, մինչեւ որ ձեզնից ստանանք որեւէ պաշտօնական գրութիւն։ Այս նամակս էլ ա՛յսքան բաց գրում եմ, որովհետեւ հասցէատիրոջից հաւանութիւն եմ ստացել ազատ գրելու։*

Խնդրում ենք վերսկսել կանոնաւոր յարաբերութիւնը եւ նամակագրութիւնը, որ այսքան երկար խզուած մնաց։

Կարա Բաբայից[80] *ստացանք հաշիւները։ Նա այդտեղ անձեռնմխելի թողել է Ժ[ընեւ]ից ստացուած 3000 frs. եւ կառավարութեան ուղարկած 4000 թումանը, որից իրեն ուղարկուել է յետոյ միայն 1200 թուման։*

Նա մեզ հեռագրել էր ուղարկել իրեն ձեր հաշուին 200 ոսկի եւ ապա պահանջել այդտեղից։ Մենք ուղարկեցինք 150 միայն։ Այժմ խնդրում ենք վերադարձնել ե՛ւ այդ 150 ոսկին, ե՛ւ Ժ-ից եկած 3000 frs.-ը, որովհետեւ այդ ամէնը փոխադրել ենք, յուսալով թէ Շահստանից Ե[փրեմը] ձեզ կ՝ուղարկէ, դուք կը վերադարձնէք։

Մեզ համար դեռեւս անյայտ է, թէ արդեօք Ամերիկայից էլ փոխադրե՞լ են ձեզ 3000 frs.։ Ընդ. Ժ[ողով]ի որոշած բիւջէից շատ աւելի դուք ստացել էք կառավարութիւնից, ուստի կրկին ու կրկին խնդրում ենք շտապել հասցնել եւ Կ[արա] Բ[աբայ]ի ձեր հաշուին առած 150 ոսկին, եւ 3000 frs.-ի մնացորդը. մեր պարտքը չափազանց մեծ է դէպի այստեղի պ. Զիֆոնեանը[138]*, իսկ դրամական միջոցներս ծայրայեղօրէն տկար... մուտքը գրեթէ լիապէս չորացել է։*

Դրա հետ միասին՝ խնդրում ենք շտապեցնել հաշիւները, որքան կարելի է մանրամասն։ Հաշուեքննիչը, չոքած մեր կոկորդին, կը պահանջէ։

Մինչեւ օրս էլ դեռ մանրամասն եւ ստոյգ որեւէ տեղեկութիւն չունինք բանտարկեալների համար հանգանակուած եւ Պ-ի ձեռքով ուղարկուած գումարի մասին։ Խնդրում ենք այդ հաշիւն էլ մաքրել վերջնականապէս։

Շահստանում սարսափելի լարուած էին իրար դէմ Կ.Կ. եւ Ե[փրեմ], հետը միասին նաեւ Ց[ովսէփ] Մ[իրզայեան] ու Քեռին։ Երկու կողմերից էլ ստանում էին[ք] կծու հեռագիրներ ու նամակներ իրար դէմ ուղղուած։ Հարցը սուր կերպարանք էր ստացել Սալար-Դովլէի դէմ արշաւելու խնդրի առիթով։ Մենք հեռագրեցինք, որ ժողով անեն եւ միաձայնութեան գան։ Առաջին ժողովը վատ է եղել, բայց երկրորդ եւ հետեւեալները յաջող են անցել — հեռագիր ստացանք, որը ե՛ւ ուրախացրեց, ե՛ւ հանգստացրեց. համերաշխութեան [են] եկել։

Սակայն մենք մանրամասն նամակ ենք գրել, որ Ե[փրեմը] որքան կարելի է չուտ թողնէ ոստիկանապետութիւնը, որովհետեւ այժմ արդէն յեղափոխական Ե. եւ ոստիկանապետութիւնը իրար չեն սազում...այլեւս յեղափոխական վիճակ չէ Պարսկաստանում։

Խնդրում ենք իսկոյն մտնել յարաբերութեան Շահստանի հետ։

Ընկերական բարեւներով՝
Ի դիմաց Ա[ռեւմտեան]Բ[իւրոյ]ի
ԱՐՄԻԻԵԱՆ

Ստացուած նամակներից երեւում է, որ Ամերիկայից էլ արդէն ստացել էք 3000 frs., ուրեմն յոյս ունենք, որ այդ գումարի էլ հաշիւը կ՝անցընէք ընդհանուր հաշուի մէջ։

137.- Պիոնեան Կարապետ։

138.- Զիֆոնեանը՝ ինքնապաշտպանութեան համար զէնքի հայթայթման մարմինն էր։

Փաստ. 589-18

Ե 26.– ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԷՆ (ՀԱՆԳՈՅՑ) ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1912 Ապրիլ 28

Ընկերներ,

Սրանից առաջ ձեզ մի նամակ ենք գրել մէջը դնելով մեր թռուցիկները[139]*. նրանցից արդէն տեղեկացած կը լինէք թէ՝ երկրի դրութեան եւ թէ մեր դիրքին այդ դրութեան հանդէպ։ Մեր թռուցիկի հետեւանքով շատ զինուորներ հրաժարուեցին մասնակցելու Սալար-Դովլէի դէմ գնացող բանակին։ Նախ քան մեր թռուցիկի հրապարակելը, յառաջապահ մի գունդ արդէն գնացել էր Սուլթանաբադ։ Ստանալով մեր թռուցիկը՝ գնդից 14 հոգի մի հեռագրով դիմել էին մեզ թէ՝ հնազանդելով Կ. Կոմիտէի կարգադրութեան (թռուցիկին) իրանք եւս դուրս են գալիս բանակից եւ խնդրում էին հրահանգ։ Մենք հեռագրով շնորհաւորեցինք նրանց այդ վճռական քայլը եւ հրահանգեցինք հետեւել մեր մի պրոպագանդիստ ընկերոջ կարգադրութիւններին. այդ ընկերը Արշակ (Դոնչօ) մասնակցել էր Իրանի յեղափոխական կռիւներին, բայց վաղուց դուրս էր եկել բանակից, երբ տեղացի գիտակից ընկերների համար արդէն պարզուած էր թէ «հայկական» կոչուած բանակը կազմակերպութեան հետ կապ չունի եւ չի շարժւում դաշնակցական իրաւատէր մարմինների հրահանգով։ Նամակով հրահանգեցինք նրան, որ 14 ընկերներից մի մասին Սուլթանաբադի կողմերը գործի դնէ, մի մասին, որ տեղացիներ են, իրենց գիւղերը ուղարկէ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու եւ շատ քչերին Թեհրան ուղարկէ, որովհետեւ Կ. Կոմիտէն դրամական շատ քիչ միջոցներ ունի։ Ինչպէս յետոյ պարզուեց Արշակի բերանացի զեկուցումից՝ մեր թռուցիկը լքում է առաջ բերել նաեւ պարսիկ շրջանում. պարսիկ զինուորները մտածել են զէնքերն առած՝ անցնել Տաճկաստան եւ այլն։ Մինչ այս մինչ այն հասնում է Քեռին Թեհրանից Սուլթանաբադ. շատ խօսք ու զրոյց է լինում, բայց տեսնելով որ տղաները յամառութեամբ ուզում են Կ. Կոմիտէի հրահանգը ճանաչել միայն եւ մինչեւ իսկ Քեռու Թեհրանից դուրս գալը, երբ մարմինը թռուցիկով յայտնել էր իր տեսակէտը, համարում են կազմակերպութեան կարգապահութեան հակառակ (14 հրաժարուածների մէջ կան գիտակից ընկերներ) — Քեռին առաջարկում է դիմել ձեզ եւ ժընեւ, Կ. Կոմիտէի այս քայլը համարելով «անձնական» խնդիր, անշուշտ լիովին անհիմն. յոյս ունենք, որ մեր թռուցիկով բաւականաչափ պարզուած են մեր տակտիկի հիմունքները, իսկ կեանքն էլ ցոյց տուեց նրա խելացիութիւնը թէ երկրի եւ թէ Դաշնակցութեան պրեստիժի համար, որի մասին յետոյ։ Ընկերները համաձայնւում են եւ հեռագրում են Ժընեւ։ Մենք այս անցուդարձին անտեղեակ՝ զարմանքով կարդացինք Ժընեւից մի հեռագիր, որով հրահանգում էին. «Սպասեցէք Պոլսից հրահանգի»։ Մենք հասկացանք, որ մէկը ձեզ գրել է հեռագրով եղած դէպքերի մասին. ենթադրեցինք, որ Եփրեմն է լինելու. չտապեցինք ձեզ ամփոփ յայտնել մեր տեսակէտը մի հեռագրով թէ «Աջակցել ներկայ կառավարութեան՝ նշանակում է գործակցել հարեւան տէրութիւններին։ Մենք հրահանգել ենք չմասնակցել եւ չեն մասնակցում։ Նոյն մտքով հրահանգեցէք ձեզ դիմողներին»։ Պէտք է ասել, որ Եփրեմը մի տարի էր արդէն հրաժարուած էր տեղումս գործօն դաշնակցական լինելուց եւ գործում էր առանց դաշնակցական տեղական մարմինը նկատի առնելու (այն ժամանակ կոմիտէ էր) եւ ստեղծուել էր մի կեղծ դրութիւն։ Նրա բոլոր քայլերը համարւում էին Դաշնակցութեան գործ, մինչդեռ Դաշնակցութիւնը նրա ոչ մի արածից տեղեկութիւն չունէր, թէեւ գիտակից Իրանի աչքում համարւում էր պատասխանատու ոստիկանութեան եւ կառավարութեան արած բոլոր խայտառակ գործերի համար, իսկ մենք էլ չէինք ուզում արտայայտուել այն մտքով, թէ Եփրեմի արածների համար կազմակերպութիւնը պատասխանատու չի ճանաչում իրան։ Կ. Կոմիտէ դառնալուց յետոյ արդէն կարելի էր տակտիկ պարզել եւ մեր դիրքն ու աշխարհայեացքը պարզ ու որոշ յայտարարել, որ եւ արինք թռուցիկներով, նախապէս յայտարարելով կազմակերպութիւնը գաղտնի. ոստիկանութիւնը սարսափի մէջ էր պահում քաղաքը եւ մենք չէինք կարող վստահել մինչեւ իսկ Եփրեմի ոստիկանութեան։ Այսուամենայնիւ մենք վերը յիշած մտքով յայտարարութիւն չարինք, այլ որոշեցինք մեր ծրագիրը մեր առաջ դրած՝ գործել Իրանում. թող մեզ դատեն մեր ծրագրի հիման վրայ։ Մեր վճռական քայլը ունեցաւ իր հետեւանքը։ Բայց դառնամ դէպքերի յաջորդականութեան։ Այնուհետեւ ձեզանից ստացանք մի հեռագիր, որով հրահանգում էիք մի խառն ժողով գումարել եւ նրա պատասխանատուութեամբ որոշել անելիքները։ Կ. Կոմիտէն ուզեց այդ մէկ առիթն էլ բաց չթողնել համաձայնութեան գալու Եփրեմի եւ Ցովս. Միրզայեանի հետ եւ կազմեց ժողովականների մի ցանկ հետեւեալ հիմքերով. հրաւիրել իբր ձեռնհաս ընկերներ Գիլանի եւ Վրէժստանի մարմնի անդամներին, որոնք այստեղ էին բախտաւոր դիպուածով. Գիլանի անդամները իբրեւ աքսորականներ եւ Վրէժստանինը իր մասնաւոր գործով. տեղական ենթակոմիտէի նախագահին, որ եւ մեր գործօն ընկերներից մէկն է եւ մեր շրջանի պրոպագանդիստ է (Վահէ), ընկեր Արշակին, որ նոյնպէս պրոպագանդիստ է եւ Սուլթանաբադից նոր էր հասել Թեհրան, Կ. Կոմիտէի ներկայ[ացուց]իչը եւ ընկեր Արմենակին[13] ու Հանգոյցին, որոնք Կ. Կոմիտէի կազմի մէջ են, բայց ժողովի նստելու էին իբր պարզ «ձեռնհաս» ընկերներ. իսկ միւս կողմից ընկեր Եփրեմին, Ցովս. Միրզայեանին եւ մի ուրիշին. Քեռին կռուի դաշտումն էր իսկ Աչոտը (Խէչօ) արդէն մեկնել էր Եւրոպա՝ Հնդկաստանի վրայով։ Հակառակ կողմը առաջարկում էր մի քանի հոգի, որոնք «աղաներ» էին եւ կազմակերպական կեանքից հեռու. անցեալում եղած էին օժանդակ, իսկ ներկայում ոչ մի մարմնի չէին մասնակցում։ Ընդունելով նրանց առաջարկածներից ոչ ոքի, բացի մէկից — ստիպուած եղանք մեր ցանկից ջնջելու մի քանի անուն, որպէսզի չհամարուենք ժողովի խանգարիչներ։ Նախ քան ժողովի գումարումը, իբրեւ հետեւանք մեր հրատարակած թռուցիկների, լոյս տեսաւ երկու թռուցիկ, մէկ ինչ որ մարմնի անունով, որոնցից մէկը անուանարկում էր մեր ընկերներից Արմենակին (դոկտ., Ստեփանեան) ներկայացնելով նրան խառնակիչ հասարակաց խաղաղութեան, իսկ միւսը ուղղուած էր Դաշնակցութեան, վարկաբեկում էր նրա կազմը համարելով երեխաների մի խումբ եւ առաջարկում էր կուսակցութիւնից վտարել նրանց, յատկապէս ընկեր դոկտորին, եւ զարմանում էր թէ ինչպէս է Եփրեմը այդ մարդուն կենդանի թողնում ու սպառնում էր, որ եթէ նա չպատժէ դոկտորին, իրենք կը պատժեն նրան։ Թռուցիկը, մեր կարծիքով, հակառակ խմբակի թելադրութեան արդիւնք էր. այդպէս էին կարծում եւ շատ պարսիկներ։ Թռուցիկները որոնց նպատակն էր զայրոյթ առաջ բերել դէպի ներկայ կազմը, բայց մանաւանդ դէպի ընկեր Արմենակը, որ նրանց կարծիքով գլխաւոր թելադրիչն էր մարմնի, միւս կողմից գրուած էին նրան տնտեսական վնաս հասցնելու համար, ունեցաւ հակառակ արդիւնք. մի քանի օր Դոկտորը ստանում էր համակրանքի արտայայտութիւններ պարսիկների կողմից. նրանք կարծում էին, որ ներկայ կառավարութիւնն ու ոստիկանապետը (Եփրեմ) իրենց կուսակցութիւնները ջլատելուց յետոյ, ձեռք են մեկնել ուզում Դաշնակցութեան։ Թռուցիկները մեր կողմից կատարեալ արհամարհանքի ենթարկուեցին։ Այս մանրամասնութեան մէջ մտայ, պարզելու համար այն մթնոլորտը, որի մէջ վիճակւում էր գումարուել ձեր հրահանգած պատասխանատու ժողովին։ Եփրեմը ցանկութիւն էր յայտնել երկու ցուցակներում անվիճելի համարուած ընկերների հետ մի տեսակցութիւն ունենալու իր Համադան մեկնելուց առաջ։ Համաձայնեցինք։ Մեզ ասին, որ մի քանի ասելիքներ ունի։ Ժողովում նա սկսեց վարդապետական տոնով խօսել դաշնակցական ընկերների եւ նրանց բռնած դիրքի մասին եւ վիրաւորական խօսքեր ասել նրանց հասցէին։ Մեր կողմից նա ստացաւ կրկնապատիկը. այդ փոթորկից յետոյ եղանակը պարզեց։ Մենք նրա քայլերը ներկայացրինք այն գոյնով, որ երեւում են դաշնակցական տեսակէտից. մարդիկ աքսորելը, լրագիրներ փակելը, «չանտաժիստներ» կախելը, բանակի թալանները, յետադիմական կառավարութեան ոստիկանապետ լինելը եւայլն, որոնց մասին երկար կը լինէր գրելը, թէեւ շատ հետաքրքրական ձեզ համար, որ անտեղեակ էք մեր քաշածներին եւ այն վարկաբեկումին, որին հասել էր Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Այդ ժողովը, ինչպէս պէտք էր սպասել, ոչ մի դրական արդիւնք չունեցաւ. նա իրաւասու ժողով չէր. սակայն ժողովի վերջում Եփրեմը յայտնել էր Կ. Կոմիտէի ներկայացուցչին, թէ «կ'աշխատէ համակերպել կայանալիք ժողովի որոշումներին»։ Միւս օրը համաձայնութեան եկանք Ցովս. Միրզայեանի հետ ժողովի անդամների մասին եւ հետեւեալ օրը, ամսոյս 23-ին Ա. Նիստն ունեցանք։ Այդ ժողովում մենք պարզեցինք մեր տակտիկի հիմքերը եւ կռուին չմասնակցելը պատճառաբանեցինք։ Հակառակ կողմը — ստիպուա՞ծ թէ համոզուած — մեզ հետ համաձայնեց. ասում ենք ստիպուած, որովհետեւ լքուած հայ ու պարսիկ բանակով Եփրեմը վստահ չէր յաղթելու. իսկ մենք բռնակալ կառավարութեան նպաստելու ոչ մի հիմք չունէինք. նրան պէտք էր ոյժ, որ այս անգամ Կ. Կոմիտէին էր ասում. մանաւանդ որ Եփրեմը զինուորների մի ժողովում յայտարարել էր, որ «ինքը մասնակցում է իբր կառավարութեան մարդ եւ կռուի մէջ գաղափարական բան չկայ» (այդ ճառը նա խօսել էր զինուորներին մեր թռուցիկի հետեւեալ օրը)։ Ինչեւէ։ Ժողովը որոշեց որոշ պայմաններ դնել կառավարութեան առաջ. 1.- հրաւիրել պարլամենտ. 2.- տալ նախապայմաններ կանոնաւոր ընտրութեան համար (այս իմաստով կազմակերպութիւնն արդէն մի պարսկերէն թռուցիկ էր գրել). նախապայման ասելով մենք հասկանում էինք ա. մամուլի եւ ժողովների ազատութիւն, բ. անձի անձեռնխեղիութիւն, գ. զինուորական դրութեան վերացում։ Որոշուեց այդ պահանջները ներկայացնել մինիստրութեան իբր պայման մեր մասնակցութեան եւ պահանջել գրաւոր համաձայնութիւն։ Ընտրեցինք երկու պատգամաւոր (Դոկտ. եւ Ցովս. Միրզ.), որոնք եւ խօսեցին թէ խնամակալի եւ թէ մինիստրներից մէկի հետ։ Սիրալիր ընդունել էին մեր առաջարկները, բայց գրաւոր պատասխան տալու համար խնդրել էին գրաւոր ներկայացնել. այսօր ներկայացրինք. լսեցինք, որ այսօր ժողով է եղել դարբուրում (պալատ) մասնակցութեամբ ռուս եւ անգլիական դեսպանների եւ քննութեան են առնուել մեր գրաւոր պայմանները մեր մասնակցութեան մասին. պատասխանը տալու են վաղը՝ ժամը 10-ին։ Մինչ այդ մենք հեռագրով

139.- Նշուած թռուցիկները տեսնել էջ 123-124:

հրահանգեցինք Սուլթանաբադ եւ Համադան, որ ընկերները մասնակցին։ Այսօր լսեցինք, որ Սուլթանաբադի մեր ընկերները նոր հրահանգ չստանալով (մինչեւ երէկ մենք չէինք կարող որոշ բան գրել. Կ. Կոմիտէի թուղթիկը մնում էր իր ոյժի մէջ) շարժւում են Թեհրանի վրայ՝ զէնքերը ցած դրած։ Եւ որովհետեւ Եփրեմը գնալուց առաջ հրահանգել է տեղիս ոստիկանատանը նրանց ձերբակալել քաղաք մտնելուն պէս, ինչպէս ասաց Ցովս. Միրզայեանը, մենք որոշեցինք վաղը մի մարդ ուղարկել ընդառաջ, որ բացատրէ եղելութիւնը եւ յետ դարձնէ կռուի դաշտը։ Հեռագրատնից լսեցինք, որ այդ հրահանգը ոստիկանատանը տուել է Քեռին կռուի դաշտից. թէ որն է այս երկու տեղեկութիւններից ճիշտ — ստուգել չենք դեռեւս. բայց որ այս տեսակ հրահանգ ունի ոստիկանատունը՝ ձերբակալելու մեր ընկերները, այդ դուրս է կասկածից, քանի որ ասողը Եփրեմի բարեկամ Ցովս. Միրզայեանն է, որ այդ բանը մեզ յայտնեց, հարկ եղածն անելու համար նոր բարդութեանց տեղիք չտալու համար։ Կազմակերպութիւնը այսպիսով դառնում է իսկական տէրը մեր քաղաքական գործունէութեանը. մինչեւ այսօր ամէն ինչ կարգադրում էր Եփրեմը՝ առանց Դաշնակցութեան հրահանգների. մեր առաջ բացւում է գործունէութեան եւ ազդեցութեան մի լայն ասպարէզ, որ անշուշտ կը ծառայեցնենք Պարսկաստանի ժողովուրդի շահերին՝ ներշնչուած մեր ծրագրի ոգով։

Մինչեւ այսօր Դաշնակցութիւնն այստեղ հակառակ իր բերած զոհերին, ոչ մի գործ կատարած չէր պետութեան վերակազմութեան կեանքում, որովհետեւ չնայած իր ազդեցութեան՝ նրա կողմից խօսում էր ոչ թէ ինքը, այլ մի անձն կամ երկու՝ Եփրեմը եւ մի քանի նման անձեր։

Ներկայումս Իրանում մենք միակ կազմակերպութիւնն ենք, որ դեռ յամառում ենք կենդանի մնալ եւ դեռ հաւատ ունինք, որեւէ քայլ անելու այս երկրի ազատագրութեան համար։ Դրանով պէտք է բացատրել այն հետաքրքրութիւնը, որով սպասում են մեր քայլերի հետեւանքներին։

Մինիստրութեան պատասխանը դեռ չստացանք. ստանալուն պէս մեր գրութեան եւ նրանց պատասխանի թարգմանութիւնները կ'ուղարկենք։

Ստացանք բլանկները եւ կնիքը. շնորհակալ ենք։ Մեր պարսկերէն դուրս թռղած թուղթիկների հայերէնները յաջորդ անգամին։

Ընկերական բարեւներով՝
Ն. ՀԱՆԳՈՅՑ

Փաստ. 109-61

Ե 27.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ապրիլ 30 / 13 Մայիս 1912

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 24/7 Մայիսի ընդարձակ նամակը։ Այս պահուս ստացանք նաեւ ձեր Մայիս 9 թուակիրը։ Իթթիհատին տրուած է արդէն մեր վերջնագիրը եւ պայմանաժամ տրուած է Մայիս 5/18-ը։ Հաւանօրէն պիտի խուսափին գրաւոր ռեւէ՛ պատասխան մը տալէ։ Իսկ այդ պարագային՝ եթէ ռեւէ՛ գոհացում չստանանք, որոշուած է հրատարակութեան տալ Իթթիհատի մասին մեր Ցիշատակագիրը եւ յարակից բոլոր թղթակցութիւնները։ Ուստի հիմակուընէ շարած պատրաստ պահեցէք Ընդհ. Ժողովի որոշումը, որպէսզի հեռագրելուս պէս՝ անցնէք առաջիկայ Դրօշակի մէջ։ Ցիշատակագիրը մաքուր կ'արտագրուի այս պահուս եւ կը ղրկուի ձեզ քանի մը օրէն, միւս նամակներու եւ Վերջնագրի պատճէնին հետ։

Շատ բնական է որ հայերէնը երեւնալուն պէս կամ միաժամանակ եթէ ֆրանսերէնն ալ հրատարակուի, ո՛չ միայն բաղձալի պիտի ըլլայ, այլ անխուսափելի։ *Թերեւս* Pro Armenia *վերնագրով յաւելուածով մը ընէք (միայն թէ չարժանանար Կովկ[ասի] բանտարկ[եալների] բրոշիւրի բախտին...)։*

Մեր հեռագրէն ետք, ինչպէս կ'իմանանք Եփրեմի հեռագրէն, Խառն ժողովը կազմուեր է Թեհրանի մէջ, սակայն առաջին գումարումը ապարդիւն անցեր է. հոդ հեռագրուածին պէս՝ մեզ ալ կը կրկնէր Եփրեմ թէ «հասկացողութեան գալն անհնար եմ համարում, մինչեւ յատուկ մարդ չուղարկէք»։ Մայիս 7ին էր այդ. կը սպասենք Կեդրոնականի ալ լուրին։ Մայիս 11ին ստացանք հետեւեալը. «Պատասխանատու ժողովը վերահաստատեց համերաշխութիւնը. Եփրեմի վերջին հեռագիրը չեղեալ համարէք. Յովսէփ»։ Խնդիրը առ այժմ փակուած է. յատուկ մարդ ղրկելու մասին խորհած ենք, բայց որոշումի չենք կրցած յանգիլ. ամէն պարագայի մէջ ձեր առաջարկը կը դնենք ժողովի։ Վարդանը դժուար թէ կարենայ տեղէն շարժիլ. Նիկոլը Վան հաստատուած է եւ գործի ձեռնարկած, Ռոստոմը վարժարանով զբաղած. կը մնայ տրամադրելի Խաչատուրը միայն[130]. տեսնենք։

Թեհրանի կոմիտէն կեդր. Կոմիտէի վերածուելով՝ նոր ընկերներ հրաւիրած է իրեն։ Արդեօք կեդր. կոմ[իտէ]ի կնիք ղրկուեցա՞ւ անոնց։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

Փաստ. 109-65

Ե 28.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՅԷՆ ՇԱՀՍՏԱՆԻ Կ.Կ.Ի ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

7/20 Մայիս 1912

Ընկերներ,

Կը յուսանք թէ այժմ արդէն ստացած կը լինէք 1912 թ. Ապրիլ 21-Մայիս 4 թուակիր նամակնիս, որի մէջ պարզած էինք մեր տեսակէտները ձեր երկրում բռնելիք կուսակցական դիրքի մասին։ Այնուհետեւ հասած հեռագիրների ճնշման տակ, մենք էլ ստիպուած հեռագրեցինք «Պատասխանատուն» կազմելու մասին եւ մեծ հաճոյքով տեղեկացանք Ցովսէփի եւ ձեր հեռագիրներից, որ ընկերական համերաշխութիւնը վերահաստատուել է, կերպով մը ելք էք գտել։

Այժմ դուք պահանջում էք մի ազատ ընկեր, որ գայ եւ ձեր Պատասխանատուն զօրացնէ, նուիրուելով գործին անմիջապէս։ *Միրելիք, այդպիսի միսսիոնով եկող ընկերը պիտի լինի մեր հեղինակաւոր, հին եւ յարգուած ընկերներից, որի ձայնը կարողանայ որեւէ կշիռ ունենալ ձեր շրջանում էլ, ձեզ համար էլ անձնապէս. իսկ այդպիսի մէկը այստեղ մենք չունենք տրամադրելի։ Մտածեցինք իմացնել Բագու Պապաշային[140], բայց խեղճը ծանրաբեռնուած է զաւակներով։ Խօսք եղաւ Նոյն տեղից* Աբլահամին[141] (*հասկացա՞ք թէ ում մասին է!*) *մի կերպ իմացնել, որ գայ, բայց հասցէ չունինք. եթէ դուք Ոսկանապատի հետ կանոնաւոր կամ վստահելի ռեւէ միջոց ունէք գրեցէք կամ Պապաշային կամ Աբրահամին, որ՝ եթէ հնար ունեն, թող գան։ Բացի այդ՝ իմացուցէք նաեւ, որ իսկոյն մտնեն մեզ հետ յարաբերութեան։ Զգուշութիւնը մեզ թելադրում է նրանց նամակ չգրել, մինչեւ որ իրենք,* իբր նոր դուրս եկածներ[142], *մեզ գրեն եւ հասցէ տան։*

Խնդրում ենք մեզ յայտնել, թէ ո՞վ է ձեր հրաւիրած ընկ. Արմենակը[143]. Հանգոյցը գիտենք, բարի եղէք հաղորդել նաեւ Կ.Կ.ի միւս ընկերների ով լինելը, որ գէթ մի քիչ գիտակ լինենք տեղիդ անց ու դարձերին։

150 ոսկու պատմութիւնը դուք թարս էք հասկացել. գործը վերաբերում է Վրէժին։ Զգուշանում էինք այնտեղ գրել, դրա համար դիմեցինք ձեզ, որ դուք գրէք իրենց հաշիւները մաքրելու մասին։ Այժմ էլ ուշ չէ. գրեցէք իրենց (Թաւրիզ) եւ յայտնեցէք մեր գրածները դրամական հաշուի մասին. մենք էլ արդէն գրել ենք, բայց վստահ չենք, թէ արդեօք ձեռքերը կը հասնի՞ թէ ոչ։

Սալար [Դովլէ]ի մասին մենք այստեղ դիմեցինք. մերժում են որեւէ կապ նրա հետ։ Սակայն վստահիլ արտաքին գործերի նախարարութեան ասածների անկեղծութեան եւ մանաւանդ ճշմարտութեան — անկարելի է։ Ցամենայն դէպս՝ սրանք մերժում են որեւէ կապ նրա հետ։

Դուք խնդրում էք այս նամակում բացատրել մեր կարծիքը ձեր բռնած եւ բռնելիք դիրքի մասին. կարծում ենք, որ մեր նախընթացն ստացած եւ մեր տեսակէտներին վերահասու եղած կը լինիք այժմ։

Կնիքի մասին ձեզ արդէն գրել ենք եւ դուք էլ դիմել էք ժ[ամանակ]. ուրեմն՝ կամ այժմ արդէն ստացած կը լինէք, կամ շուտով կը ստանաք. եթէ ուշացնում են, կրկնեցէք ձեր նամակը. մենք էլ կը չտապեցնենք։

Շուտով կ'ուղարկենք ձեր ուզած նամակաթուղթերը։

Մեր յարաբերութիւնները, որ ընտրութիւնների սկզբում այնքա՛ն յուսատու էին Իթթիհատի հետ, այժմ մէկէն ի մէկ ի յայտ բերին, որ մեր եւ նրանց բաժնող վէճը չափազանց մեծ է — դիւրին չէ շուտով լեցնել եւ անվերապահօրէն բարեկամանալ։ Սեբաստիայում ընտրուեց մեր ընկերը, իսկ երէկ իմացուեց, որ Վանից ընտրել են մի Թուրք եւ մի քիւրտ... Ատանա, Հաճըն էլ ոչ մի հայ չանցաւ... կը նշանակէ կրկին խաբեցին՝ գուցէ գիտակցօրէն, գուցէ մասամբ նաեւ անկարող դիսցիպլինի ենթարկելու իրենց գաւառական մասնաճիւղերը։ Մենք ուլտիմատում ենք տուել, որ եթէ մինչեւ 15 օր գործով երաշխիք չտան հայ գաւառների վիճակի բարելաւման վերաբերմամբ, մենք մեզ ազատ կը համարենք կնքուած յանձնառութիւնների վերաբերմամբ։ *Կը նշանակէ խզման սպառնալիք է երեւում, սակայն ընկերների կարծիքները խստօրէն տարբերւում են այդ հարցի վերաբերմամբ։ Կազմուել է մի ջղուտ մեծամասնութիւն, որ պահանջում է դադարեցնել յարաբերութիւնները եւ անցնել դիմադիր բանակը անվերապահօրէն, այն ինչ փոքրամասնութիւնը դէմ է խզման, աչքի առաջ*

140.- Պապաշա – ծածկանունն է Քրիստ. Միքայէլեանի քեռորդիներէն Թադէոսեան Լեւոնի։

141.- Խօսքը Գիւլխանդանեան Աբրահամի մասին է։

142.- «Իբր նոր դուրս եկածներ»ը ակնարկութիւն է այն իրողութեան, որ թէ՛ Թադէոսեան Լեւոնը (Պապաշա) եւ թէ Գիւլխանդանեան Աբրահամը նոր դուրս եկած էին ցարական բանտէն։

ունենալով այս երկրում հնարաւոր բոլոր հետեւանքները։

Երբ հարցը վերջապէս լուծուի, կը գրենք։ Խնդրում ենք աւելի յաճախ գրել եւ մանրամասն տեղիդ անցուդարձի մասին։

Աւելորդ ենք համարում մի անգամ էլ կրկնել մեր խնդիրը — որքան հնարաւոր է համերաշխաբար վարէք այդտեղի պատասխանատու գործը։

Ի դիմաց
Ա[ռեւմտեան] Բ[իւրոյի] Թ[ուրքիոյ] Հ[ատուածի]
ընկերական բարեւներով՝ ԱՐՄԻԻԵԱՆ

Այս վայրկեանիս ստացանք ձեր տխուր հեռագիրը։ «Թափառականի բանակը յաղթական, բայց ինքը սպանուած» — *ստորագրութիւնը՝ Շահստան։ Սակայն չհասկացանք, թէ ո՞վ է Թափառականը... ենթադրում ենք թէ Ե[փրեմն]է... Ջափազանց ցաւալի է*[143]։

143- Զարմանալի է որ վերեւ յիշուած Արմենակի ինչպէս եւ հոս յիշուած Թափառականի ինքնութիւնը, անծանօթ էր Արեւմտեան Բիւրոյի ընկերներուն։ Յիշեցումի կարգով՝ Արմենակը կամ Դոկտորը ատամնաբոյժ Յարութիւն Ստեփանեանն է, անդամ Թեհրանի Կ. Կոմիտէին, իսկ Թափառականը, որուն մահը գուժող հեռագիրը ստացուած է ճիշդ նամակի գրութեան վերջին պահերուն, Եփրեմն է։ Արդարեւ Իրանի ազատագրական կռիւներու գլխաւոր հերոսը, Համատանի ճակատին վրայ միապետական զօրքերուն դէմ իր տարած վճռական յաղթանակի աւարտին՝ 6/19 Մայիս 1912ին զոհուած էր սպանուած զինակից ընկերոջ մը դիակը ազատել փորձելու պահուն։

Փաստ. 479-18

Ե 29.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ ՇԱՀԱՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Թաւրիզ, 1912 Մայիս 10

Սիրելիք!

Ձեր NN 34 *եւ* 38 *ստացել ենք։ Հաստատում ենք մեր* N 132-*ը։ Մինչ մենք պատրաստւում էինք ձեր չօշափած հարցերի նկատմամբ մեր ընկերական կարծիքը յայտնելու, վրայ հասաւ ընկ. Եփրեմի անակնկալ եւ անժամանակ մահուան բօթը։ Կորուստի մեծութիւնը զգալով՝ համակուած ենք խորին վշտով։ Զգում ենք, որ այդ անփոխարինելի պակասը ձեզ եւս մեծ վիշտ պիտի պատճառած լինի այն էլ մի այնպիսի մոմենտում երբ թշնամին այնքան զօրեղ է ու հովանաւորուած, իսկ դուք փոքրաթիւ ու հալածանքի ենթակայ։ Սակայն հաշտուելով իրողութեան հետ մեր առաջին միտքը եղաւ հաղորդել ձեզ որ դիմէք Ա[ռեւմտեան]Բ[իւրոյ]ին մի կարող ընկեր ձեզ ուղարկելու եւ ընկ. Ֆ.օ-ի*[21] *հեռագրից տեղեկանում ենք, որ դուք այդ արել էք արդէն։ Մենք եւս մեր կողմից մի ընդարձակ գրութեամբ բացատրեցինք ներկայ դրութիւնը Ա.Բ.ին եւ պնդեցինք ձեր պահանջի կարեւորութեան վրայ։*

Կառավարութեան հետ ունեցած ձեր համաձայնութեան նկատմամբ մեր կարծիքը բացասական է, եթէ որոշ հանգամանքներում դուք շատ իրաւացի կերպով պնդում էք եւ ապացուցանում, որ երկիրը իրապէս գտնւում է յափշտակիչ պետութիւնների իրաւասութեանց ներքոյ, որոնց ամենեւին ձեռնտու չէ Պարսկաստանում ըմբոստ գրիչ, ըմբոստ ոգի տեսնել, ապա ինչպէ՞ս էք կարողանում հաւատալ երկրի անուանական վարիչների խոստումներին եւ փոխել ձեր տաքտիկան եւ կարելի է ասել՝ սկզբունքը։ Այստեղ արդէն մենք նկատում ենք անհետեւողականութիւնը, որը սակայն չգիտենք թէ ինչպիսի պարագաներում է առաջ եկել։ Մենք տեղեկացանք որ ձեր առաջարկները քննուել է ռուս, անգլիական դեսպանատան ներկայացուցիչների ներկայութեամբ. սրանից աւելի եւս պարզւում է թէ որքան հիմնաւոր են եղել ձեր սկզբնական որոշումները եւ այժմ դուք գործ ունէք ոչ թէ այդ անուանական մինիստրութեան, այլ պարզապէս յափշտակիչ պետութիւնների ներկայացուցիչների, որոնք ամենեւին կարիք չունեն մեր ուժերով խաղաղեցնելու Սալար-Դովլէների սանձարձակ շահատակութիւններից մորմոքուող երկիրը։ Եթէ միայն նրանք ուզենան խաղաղեցնել, վերջ տալ այս անմիտ կռուին՝ բաւական է միայն մատի մի շարժում եւ Սալար-Դովլէն իր համար ծակ անգամ չի գտնի թագնուելու համար։ Մենք կարծում ենք ինչքան որ Սալար-դովլէական կռիւները անմիտ են ու ոչ յեղափոխական, մեր մասնակցութիւնը, նոյնքան ապարդիւն է մեր ներկայ կռիւը եւ անիրագործելի մինիստրութեան խոստումները։

Այս էր մեր համոզմունքը եւ այսպէս էլ կը մնար եթէ մի երկու օր առաջ տեղի ունեցած չլինէր Եփրեմի մահը։

Այժմ երբ արդէն դուք ձեր համաձայնութիւնն էք տուել կռուի եւ Եփրեմի մահն է տեղի ունեցել, այլեւս յետ քաշուել չպէտք է, կուսակցութեանս հմայքը չոչընչացնելու համար։ Մեր դիմացինը պէտք է հասկանայ, որ երբ Դաշն. մի բան խոստանում է, անում է, իսկ անհատները չեն որ կուսակցութիւնն են կազմում, անհատները մեռնում են բայց կուսակցութիւնը դեռ կենդանի է աւելի մեծ ուժով ու կորովով։

Մանր օրեր էք ապրում, ընկերներ, եւ մենք սրտատրոփ սպասում ենք թէ ինչով պիտի վերջանան այս բոլորը, եւ զգում ենք ինչքան մեծ չափով զգուշութիւն եւ հետեւողականութիւն է պէտք պատուաւոր կերպով դուրս գալու այդ պատասխանատու եւ փափուկ դրութիւնից։ Ուրախ ենք, որ յաջողւում է վերջապէս ցրուած ու տարակարծիք ընկերներին համերաշխութեան բերել։ Դա չափազանց կարեւոր է ներկայ պարագաներում։

«*Արշալոյսը*»[144] *լաւ տպաւորութիւն է թողել։ Մեր շրջանի գործնական խնդիրների մասին գրել ենք շրջանները։*

Կիրակի օրը հոգեհանգիստ պիտի կատարենք Եփրեմի համար։ Ամբողջ ազգաբնակութիւնը խորապէս ցնցուած է։ Լիլաւայի[6]*, կաթոլիկների դպրոցում մահուան լուրը լսուելու օրը դասերը դադարեցրին։ Ղալան*[4] *միայն բացառութիւն կազմեց չնորհիւ այն ծախուած մարդու որ ներկայումս խմբագիր անունը վարկաբեկելու ախտաւոր ցաւով է բռնուած։*

Հաշիւների եւ այլ դոկումենտները ուղարկելու համար կը յայտնենք ձեզ, մենք էլ ենք կասկածում փոստերի վրայ։ Մեր հացէն հարցրէք Ֆ.օ-ից, որպէս մնայուն հացէ կարող էք գրել հէնց սոյն տողերը գրողի հացէով որը կարող էք տեղեկանալ էլի Ֆ.օ-ից[21]։

Ընկերական բարեւներով
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Ց.Գ.- Ստացել ենք նաեւ Ա.Բ.ին ուղղած ձեր տեղեկագրի պատճէնը։

ՆՈՑՆ

144.- «Արշալոյս» – Թեհրան հրատարակուող դաշնակցական երկշաբաթաթերթ, որուն կարճատեւ գոյութենէն ետք (միայն 10 համար 1912 թ.) «Առաւօտ»ը Թաւրիզէն փոխադրուեցաւ Թեհրան։

Փաստ. 101-40

Ե 30.– ՌՈՍՏՈՄԷՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

21 Մայիս 1912

Սիրելի ընկերներ,

Մօտ մի ամիս առաջ մի փոքրիկ երկտող էի գրել Եփրեմին, ուրիշ նամակ էլ գրել էի Բժիշկի հասցէով։ Ցուսով եմ, երկուսն էլ ստացուած լինեն։

Եփրեմի վախճանին դժուարանում էինք հաւատալ։ Բայց լուր լուրի ետեւից պարզեցին իրողութիւնը։ Անստոյգ են մնում սակայն մահուան պարագաները։ Ի՞նչն է առիթ տուել տարածելու, թէ նա դաւադրութեան զոհ գնաց։ Գիտէք, թէ որքան մենք պէտք է անհամբեր լինենք իմանալու բուն եղելութիւնը՝ իր բոլոր մանրամասնութիւններով։ Շատ պիտի խնդրէինք, որ ականատեսները իրենք հրապարակ գային։

Պոլսի նամակից իմանում ենք, որ դուք փափաք էք յայտնել, որ Ռոստոմը ձեր կողմերը անցնի։ Գամ ի՞նչ անեմ։ Արդէն իմ խորհուրդն է՝ այդ տեղից հեռանալ։ Եփրեմին ուղղած երկտողիս մէջ հէնց այդ բանն էի շեշտել, ձեզ էլ նոյն առաջարկն էի արել։ Մեր կողմից՝ կ'ուզենայինք իմանալ ձեր պատճառաբանութիւնները, ձեր տեսակէտները։ Ի՞նչ օգուտ կարող ենք տալ այդ դժբախտ երկրին մեր ներկայութեամբ՝ իբրեւ յեղափոխական կուսակցութեան անդամներ։

Եփրեմի համար այս կիւրակի հոգեհանգիստ կատարեցինք։ Կ. Կոմիտէի ցաւակցական հեռագիրը ստացած կը լինէք։

Մեր համբոյրները ողջ մնացած ընկերներին։ Եփրեմից մի քանի յիշատակներ ուղարկէք Ժընեւ։ Եթէ ձեռքին դոկումենտներ է ունեցել, այն էլ ուղարկէք։ Լաւ կը լինէր նրա ամբողջ արխիւը տեղափոխել հէնց այժմեանից։

Ջերմ համբոյրներով՝
Ձեր ՌՈՍՏՈՄ

Փաստ. 60ա-81

Ե 31.– ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՀԵՌԱԳԻՐԸ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ ԵՓՐԵՄԻ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ

(Լատինատառ հայերէն)


Telegramm — Télégramme — Telegramma
Contr. № 9952
Wörter — Mots — Parole
Empfangen von — Reçu de — Ricevuto da
Empfangen am — Reçu le — Ricevuto il
Empfangen um — Reçu à — Ricevuto alle
Empfangen — Reçu — Ricevuto
Empfangen — Reçu — Ricevuto
Empfangen — Reçu — Ricevuto

նան, եթէ չենք ուզում կուս. պրեստիժը գցել մասսաների աչքում։ Գիտենք արդէն որ ձեզ դիմուած է Շահաստանից, որ Եփր[եմը] փոխարինող մի ղեկավար ուժ եւ մի հատ էլ մեր փորձուած, հեղինակաւոր ընկերներից ուղարկուի այնտեղ։ Մենք էլ, ինչքան որ ծանօթ ենք տեղին, դրութեան եւ ընկերներին, գտնում ենք, որ այդ շատ անհրաժեշտ է։

Ի միջի այլոց, այստեղ խիստ տգեղ տպաւորութիւն թողեց Կարապ. եպիսկոպոսի բռնած ընթացքը Եփր. համար կատարուած հոգեհանգստի դէմ։ Հոգեհանգստին ներկայ էին ամբողջ կաթոլիկ հոգեւորականները իրենց թուրք ու հայ աշակերտներով, պսակներով իսկ «սրբազան»ը իր չնաչխարհիկ Ալ. Տէր Վարդ. (խմբագիր եւ տեսուչ) հետ իրենց սենեակներում փակուած երեւի մկների հետ ծակեր էին սակարկում, որ գնեն ու մէջը մտնեն։

Փոստերը ապահով են, կարող էք գրել առանց կասկածելու։ Մենք էլ առայժմ կ'աշխատինք շարունակ գրել ձեզ։ Նորից խնդրում ենք, որ ինչքան կարելի է շուտով կարգադրեցէք մեր հրաժարականի եւ ձեր լիազօրի հարցը, որպէսզի մենք էլ մեր անելիքը հասկանանք։

Ընկերական բարեւներով
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1728ե-43

Ե 33.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 24 Մայիս 1912

Սիրելիք!

Ձեր Մայիս 9 թուակիրը ստացել էինք։ Մենք էլ ենք մնում զարմացած թէ ինչո՞ւ մեր տեղեկագիրը, որ խոստացել ենք, պատրաստւում է պատրաստւում, բայց երբեք էլ պատրաստ չի լինում, որ ուղարկենք ձեզ։ Երեւի մօտ օրերս պատրաստուի վերջնականապէս։ «Դրօշակ» միայն մի օրինակ «Առաւօտ»ի հասցէով ենք ստանում, ոչ աւելի, որովհետեւ տեղումս կազմակերպութիւն չունինք։ Վերջին սարսափները ի սպառ կազմալուծեցին եղածն էլ, կարճ ժամանակում նորից վերակազմելու յոյս էլ չի մնացել, որովհետեւ քաղաքական դրութիւնը հայերի նկատմամբ գնալով վատանում է, ժողովուրդը սարսափի տակ է։ Միակ մարմինը որ գոյութիւն ունի, այդ Կ. Կոմիտէս է իր 4-5 անդամով, որոնցից մի երկուսը երեւի շուտով կը հեռանան։ Բնական է, որ այս ձեւով Կ. Կոմիտէի անուն վրան պահելը հակառակ է մեր կանոնադրութեան, ուստի եւ գրեցինք Պոլիս, որպէսզի մեզ եւս կազմալուծուած համարէ եւ ստանձնէ հաշիւներն ու ինվենտարը[146ա] իր նշանակած կամ ուղարկելիք լիազօրի միջոցով։ Նոյնը ահա ձեզ ենք գրում, սպասում ենք կարգադրութեան։

Շահաստանից վերջերս ստացած տեղեկութիւններից իմանում ենք, որ յարաբերութիւնները աւելի լաւացել են, իսկ այժմ արդէն երեւի այլեւս ոչ մի տարաձայնութեան տեղիք չի լինի. Եփր[եմի] անակնկալ եւ անժամանակ մահով այդ էլ լուծուեց։ Իսկ կռիւը շարունակելու կամ չշարունակելու նկատմամբ մենք իրենց էլ գրել ենք, որ այժմ երբ կռիւը սկսուած է, որի մէջ կորցրել ենք մեր ամենաթանկագին ընկերոջ՝ Եփրեմին, պիտի շարունակել։ Ցետ կանգնելը այն տպաւորութիւնը պիտի թողնէ, որ կուսակցութիւնը Եփրեմի մահից յետոյ այլեւս անզօր է եւ անընդունակ որեւէ գործի, լինի դա Սալար-Դովլէի դէմ եղած կռիւը, որին բոլորս սկզբունքով հակառակ ենք։

Տեղւոյս քաղաքական վիճակը շարունակւում է դեռեւս նախորդների ընթացքով։ Լրտեսութիւնը եւ ոստիկանութիւնը ուժեղացրուած է։ Մարդիկ զգուշանում են նոյնիսկ քէֆերի համար հաւաքուել, որովհետեւ անմիջապէս կասկածւում են ու ձերբակալւում, որպէս գաղտնի ժողովներ կազմող։

Քեռին, մեր ստացած լուրերի համաձայն, մեծ յաջողութեամբ առաջ է շարժւում դէպի Քիրմանշահ։

Մեզ մօտ գաւառներում անհամեմատ շատ աւելի խաղաղ է. թալան, կողոպուտ գոյութիւն չունի, սակայն ժողովուրդը դիակի պէս լուռ ու անշարժութեան է դատապարտուած եւ ամէն մի սահմանադրական միտք ու հաստատութիւն հալածուած ու լուծուած է։ Համատարած քաղցածութիւն։ Այսպիսի խաղաղութեան միայն գերեզմանոցներում կարելի է հանդիպիլ։ Հէնց այդպէս էլ է այժմ, Ատրպատականը մի ընդարձակ գերեզմանատուն է իր գիշերային գիշակերներով։

Ընկերական բարեւներով
ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

146ա.- Գոյքացուցակը։

Փաստ. 109-75

Ե 34.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

24 Մայիս 1912

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 7/20 Մայիս եւ նախորդ նամակները։ Ստացանք ձեր Ապրիլ 28 թուակիրը, ինչպէս նաեւ ձեր գուժաբերը 7/20 եւ 8/21 Մայիս, ողբացեալ Եփրեմի մասին։ Խորունկ կսկիծով ու ցաւով իմացանք արի եւ տաղանդաւոր ընկերոջ մահը, զոր կը նկատենք մեծ կորուստ մը ոչ միայն Դաշնակցութեան, այլ մանաւանդ Իրանի ազատագրութեան կռուին համար։

Այդ ծանր կորուստին առջեւ դժպատեհ կը թուի մեզ՝ մի առ մի պատասխանել ձեր վերջին նամակին, որ խոստովանինք, ընկերներ, գրուած չէր այն պաղարիւնով եւ շրջահայեցութեամբ զոր իրաւունք ունինք ակընկալելու ձեզմէ։ Մանօթ թռուցիկներու հրապարակումը ձեր կողմէ, որքան ալ սկզբունքային տեսակէտներէ կրնային արդարանալ, տակտի պակաս մը կը նկատենք, պարագայ մը՝ որ կրնար դնել մեր կուսակցութիւնը անդարմանելի հետեւանքներու առջեւ։ Ձեր իսկ յիշատակած «մի ինչ որ մարմնի անունով» ի պատասխան ձերիններուն լոյս տեսած թռուցիկները, որոնք մահուան սպառնալիքներ կը պարունակէին ընկ. Արմենակի դէմ՝ կ'արդարացնեն մեր մտահոգութիւնը։ Աւելորդ է ծանրանալ թէ ինչ աղիտաւոր եւ վարկաբեկիչ վիճակ մը պիտի ստեղծուէր կուսակցութեան համար, եթէ երբեք երկուստեք կիրքերն անսանձ ընթանային մինչեւ եղեռնաւոր լուծումի մը։ Ձեր քաղաքական կացութեան տեսակէտէն բանաւո՞ր էր կանգնեցնել Սալար Դովլէի դէմ արշաւող հայ զօրագունդը՝ այդպիսի յեղակարծ եղանակով մը։ Պատասխանը՝ իրողութիւններն իսկ տուին — Ձեր Խառն ժողովն էր որ հեռագրական հրահանգներով թոյլատրեց անոր շարունակելու իր առաջխաղացքը. ըսել է Կ. Կոմիտէի արգելիչ թռուցիկը ծանրօրէն կշռուած որոշումներու արդիւնքը չէր։

Երկու կողմերու միջեւ տարաձայնութիւնները վերցան հէնց որ հնարաւոր եղաւ քով քովի բերել տարակարծիք ընկերները, խորհրդակցիլ ու վիճիլ ընկերաբար։ Եփրեմի համակերպումը այդ Խառն ժողովին հերքում մըն էր այն ենթադրութեան, թէ Եփրեմ չէր ուզած ճանչնալ ընկերական ուեւէ քոնթրոլ։

Ընդհանուր ժողովը, ինչպէս գիտէք, Պարսկաստանի գործերուն ղեկավարումը յանձնած էր Թաւրիզի եւ Թեհրանի երկու կեդր. Կոմիտէներուն։ Պէտք էր այդ ուղղութեամբ ալ գործել՝ բուն պատասխանատու իրաւատէր մարմինները դնելով իրենց դերին մէջ։ Անոնց առջեւ պէտք էր արծարծել, ի հարկին նաեւ երկու Բիւրոներուն, բոլոր այն խնդիրները, որոնք ծագում առին Եփրեմի կարգ մը արարքներէն կամ Եփրեմին վերագրուած կամ անոր պատասխանատուութիւնը չօշափող գործողութիւններէն։ Եւ այն ատեն, վստահ ենք, կը խընայուէին մեզի բոլոր այն ցաւալի բախումները Թեհրանի կոմիտէին եւ Եփրեմին միջեւ, որոնց արձագանգը եղաւ նաեւ օտար մամուլը։

Մենք ուրախ ենք եւ կը շնորհաւորենք ձեզ, որ յաջողեցաք վերջապէս համաձայնութեան մը գալ կամ գոյացնել տեղիդ ձեռնհաս ընկերներու միջեւ՝ կանգնելու համար գետնի վրայ, որ իրական քաղաքականութեան մը պահանջները կը ստեղծէին։ Ինչպէս Արեւելեան Բիւրոյի, նոյնպէս եւ Շամի Կ. Կոմիտէի[96] կարծիքները կը համաձայնին մերինին հետ՝ Սալար Դովլէի դէմ արշաւանքը կամ անոր ուժերուն ոչնչացումը նկատելու համար նախապայման մը, որ պիտի ապահովէր վերջին պատեհութիւնը թերեւս, որով Պարսկաստանը կրնար չեշտել իր ներքին անկախութիւնը, խուսափելով ռուսական միջամտութենէ մը։

Անհամբերութեամբ է որ կը սպասենք նաեւ ձեր պահանջած երաշխիքներու իրագործումին — արդիւնք մը որ ուղիղ պիտի համեմատի Դաշնակցութեան արդէն վաստկած հմայքին եւ այս պահուն ունեցած տրամադրելի ռազմական ուժերուն։

Համաձայն ենք ձեզ հետ թէ «մեր առաջ բացւում է գործունէութեան եւ ազդեցութեան մի լայն ասպարէզ, որ անշուշտ պիտի ծառայեցնենք Պարսկաստանի ժողովուրդի շահերին, ներշնչուած մեր ծրագրի ոգով»։ Սակայն առնուազն անարդար կը նկատենք ձեր այն դիտողութիւնը թէ «մինչեւ այսօր Դաշնակցութիւնն այստեղ հակառակ իր բերած զոհերին ո՛չ մի գործ կատարած չէր պետութեան վերակազմութեան կեանքում, որովհետեւ չնայած իր ազդեցութեան՝ նրա կողմից խօսում էր ո՛չ թէ ինքը, այլ մի անձն կամ երկու՝ Եփրեմը եւ մի քանի նման անձեր»։

Մենք կ'ուզենք հաւատալ եւ վստահ ենք, որ երախտաւոր ընկերոջ թարմ գերեզմանին առջեւ պիտի մոռցուին կամ արդէն մոռցուած են հին թիւրիմացութիւններն ու հակառակութիւնները, եւ թէ բոլոր ընկերներն ալ պիտի համակուին կուսակցութեան գերագոյն շահերուն գիտակցութեամբ եւ կարգապահութեամբը՝ որպէսզի հնարաւոր[ութիւն] ընծայուի Եփրեմի յաջորդներուն եւ զինակիցներուն շարունակել եւ պսակել այնքան տժանքով բայց փառքով սկսուած մեծ գործը։

Կը խնդրենք որ մեր խորին ցաւակցութիւնը յայտնէք

Եփրեմի զինակից ընկերներուն եւ մեր ջերմ մաղթանքները անոր յաջորդող Քեռիին։

Նամակներով եւ հեռագրով ալ արդէն դիմած ենք ընկերներ Ռոստոմին եւ Դումանին աջակից երթալու ձեզ, սակայն պատասխան չունինք տակաւին։ Անունները մի տարաձայնէք լայն շրջաններու մէջ, որպէսզի գալու պարագային՝ արգելքներու չհանդիպին իրենց ճամբուն վրայ։

Պոլսի թերթերէն ալ կ'իմանաք թէ ճիգեր կան Դաշնակցութիւնը վարկաբեկելու համար, Եփրեմը կուսակցութենէն հեռացած կամ հեռացուած ցուցնելու, ձեր ներքին վէճերը խեղաթիւրելու. եղան նոյնիսկ ակնարկներ թէ անոր մահը կրնար արդիւնք եղած ըլլալ ընկերական որոշումի մը կամ դաւաճանութեան մը։ Ուստի շատ պատեհ պիտի ըլլայ, եթէ Կ. Կոմիտէի կողմէ հակիրճ ազդով պատասխանուէր։

— Հոս մեծ սգահանդէս մը կազմակերպեցինք եւ ցաւակցութիւն հեռագրեցինք պարսիկ կառավարութեան. փառաբեղ եւ տպաւորիչ էր հանդէսը։

— Տէր Օհանեան եւ Թ. Մնացականեան[?] առաջարկ ըրած են Եփրեմի կենսագրութիւնը գրելու մեր քոնթրոլի տակ եւ հրատարակելու։ Գրիշան[147] ունի եղեր իր արշաւանքներուն յիշողութիւնները. կրնա՞յ տրամադրուիլ, կարո՞ղ էք հոդ յանձնախումբ մը կազմել այդ գործը կատարելու համար. քանի թարմ են դէպքերը, գրելու է։ Ահագին նշանակութիւն կ'ունենայ կուսակցութեան հմայքին համար մանաւանդ արդի պարագաներուն մէջ։

— Կացութեան մասին յաճախ գրեցէք, գէթ շաբաթն անգամ մը։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

147.- Տէր Դանիէլեան Գրիշ, երիտասարդ խիզախ մարտիկ, Եփրեմի հաւատարիմ թիկնապահներէն, որուն յուշերը արդարեւ Ֆարրոյի (Յ. Յովհաննիսեան-Էլմար) խմբագրութեամբ աւելի ուշ լոյս պիտի տեսնէին «Հայրենիք» ամսագրի 1924-1925, Նոյեմբերէն Մարտի համարներուն մէջ։

Վերջին դէպքերու մասին ձեր ընդարձակ նամակներուն կը սպասենք։ Շաբաթը անգամ մը գէթ գրելու էք։

Փաստ. 589-30

Ե 35.– ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

27/10 Յունիս, 1 Յուլիս 1912

Ընկերներ!

Ստացել ենք Ձեր Մայիս 24 եւ 27 թուակիր նամակները, որոնց իբր պատասխան մնում է մեզ պարզել մանրամասնօրէն Պարսկաստանի արդի քաղաքական վիճակը, նրա անկախութեան սահմանները, հիմնաւորել մեր թռուցիկի ոչ միայն սկզբունքային, այլեւ տակտիկային կողմերը եւ պարզել այն տուեալները, որոնց հիման վրայ Խառը ժողովը ըստ երեւոյթին միայն յանգաւ Կ. Կոմիտէի վճիռներին հակառակ մի որոշման, մինչդեռ այդ պէտք է նկատել իսկապէս մի լրացնող վճիռ՝ մինչ այդ Կենտրոնականի տուած բոլոր որոշումներին։

Պարսկաստանը վերջին անգլօ-ռուս նոտի ընդունելութեամբ իրաւամբ ճանաչւում է վասալական մի երկիր։ Որոշ նահանգներ, ինչպէս օր. Ատրպատականը, Գիլանը եւ մասամբ էլ Խորասանը, համարեա թէ կտրուած են կենտրոնական կառավարութիւնից եւ ղեկավարւում են ռուսական կոնսուլատների դիրեկտիւներով։ Այն նահանգապետները, որոնք լինելով որեւէ յեղ. կուսակցութեան անդամ, կամ համակիր, չեն ուզած ենթարկուիլ տեղական ռուսական ազդեցութեան, անմիջապէս պաշտօնանկ արուելով, փոխարինւում են նոր եւ «քաղաքագէտ» նահանգապետներով։

Անարգել ու անկոնտրոլ այդ երկու պետութիւնները իրենց ազդեցութեան սահմանները տարածել են ոչ միայն կիսագրաւուած նահանգների, այլեւ մայրաքաղաքի — բուն իսկ կենտրոնական կառավարութեան վրայ։ Մինիստրութիւնը, որ ներկայացնում է այս օրուան Պարսկաստանի քաղաքական կեանքի միակ ղեկավարը, առանց անգլիական եւ ռուսական դեսպանների չի կարողանում որեւէ նշանակալից խնդիր քննել եւ լուծում տալ։ Իրբեւ ապացոյց վերոգրեալին, կարող է ծառայել մեր կառավարութեան ուղղած նամակը, որով պահանջում էինք սահմանադրութեան երաշխիքները. այդ նամակը ինչպէս անցեալ անգամ էլ գրել ենք, քննութեան են առել մինիստրութիւնն ու յիշեալ պետութեանց ներկայացուցիչները։ Պարսկաստանի անկախութեան խախտման մասին մեր շրջանում տարբեր կարծիքներ չկան։ Մեզ հետ համակարծիք են նաեւ Արեւելեան Բիւրոն եւ Ատրպատականի Կ. Կոմիտէն. վերջինս կողմնակից է եղել աւելի վճռական քայլերի։ Այն ակնարկը, որ կար ձեր նամակի մէջ, թէ Պարսկաստանի քաղաքական կեանքում ծագած լուրջ հարցերը վճռւում են երկու Կ. Կոմիտէներու փոխադարձ համաձայնութեամբ, մենք միշտ ի նկատի ունեցել ենք եւ պէտք եղած դէպքում գործադրութեան մէջ դրել։ Մասնաւորապէս վերջին դէպքերի նկատմամբ Ատրպատականի հետ համաձայնութեան գալուց յետոյ միայն վճռական քայլեր ենք արել քաղաքական կեանքում։ Այս առթիւ ձեր նկատողութիւնը զուրկ է բանական պատճառաբանութիւններից։ Ի դէպ է հերքել այստեղ ձեր անհիմն կարծիքը, որ միշտ թէ հեռագրներով ու թէ նամակներով յայտնում էք մեր մասին, իբր թէ մենք մեր գործունէութեան ընթացքում ղեկավարուել ենք կրքով։ Ձէք պատճառաբանում, իսկ մենք ինչպէս գրել ենք, նորից գրում ենք, որ մեզ ղեկավարողը եղել է մեր ծրագիրը, եւ մեր վէճերը ունեցել են սկզբունքային բնաւորութիւն։ Նման վէճերը մենք համարում ենք օգտակար եւ տարբերում ենք կիրքից։ Դուք էլ մեզ հետ պէտք է համոզուէք, որ կուսակցութեան մէջ եղած սկզբունքային վէճերը կիրք չեն. այդ բանում դուք վերջնականապէս կը համոզուէք, երբ ուշադրութեամբ հետեւէք Խառը ժողովի արձանագրութիւններին։ Մենք կարծում ենք, մեր իրականութիւնը լաւ ճանաչելու եւ օգտակար լինելու տեսակէտից լաւ կը լինի, որ դուք առանձին զբաղման նիւթ դարձնէք մեր արձանագրութիւնները եւ նրանց լրացնող նամակները։

Պարսկաստանի ներքին կեանքը, նրա մէջ պահուած ուժերը վերջնականապէս ջլատելու եւ քայքայելու հետ, շահագրգռուած պետութիւնները ստեղծում են ներքին կռիւներ, որոնք իսկապէս քայքայիչ եւ դիակնացնող հետեւանքներ են ունենում երկրին վրայ։ Ներքին կռիւների ստեղծման գործում մեծ դեր են խաղում զանազան ընչաքաղց-աւատական խաներ, որոնք սահմանադրական կառավարութեան օրօք ասպարէզը ստիպուած թողել էին ուրիշներին։ Դէպքերի ճշգրիտ ըմբռնողականութիւնից զուրկ լինելով, պարսիկ մասսան ուրախութեամբ է խմբւում այս կամ այն շահագրգռուած խանի շուրջը, թալանելու երկիրը, կռուելու կենտրոնական կառավարութեան դէմ, յոյս ունենալով որ նոր ստեղծուելիք ռեժիմի օրօք, աւելի բարեկեցիկ կեանք պիտի ունենան։ Դրացի պետութիւնները նպաստելով մերթ մէկ, մերթ միւս կողմերին մինչեւ այսօր երկիրը պահել են այնպիսի խայտառակ չփոթութեան մէջ, որպիսին երեւակայելն անգամ շատ դժուար էր։ Եղած ուժերից մէկն էլ Դաշնակցութիւնն էր, յանձին Եփրեմի եւ հայկական բանակի, որը ըստ էութեան ոչնչով չէր զանազանւում սահմանադրութեան համար մեր կռուող-

ներից։ Նա եւս գնում էր կռուելու այս կամ այն դժգոհ խանի դէմ, որին ոգեւորողը եւ թեւ տուողը իրենց իսկ պատերազմի դաշտ ուղարկողներն էին։ Եւ ահա ակամայից Դաշնակցութիւնը իւր ունեցած ուժով դարձել էր լաւագոյնը այն ուժերից, որոնք հարթում էին շահագրգռուած պետութիւնների տիրապետական ձգտումների ուղին։

Այսպիսի պայմաններում մենք անկարող էինք լռել. մանաւանդ որ կային հանգամանքներ, որոնք գալիս էին համոզելու մեզ, որ ներկայ կառավարութիւնից, որի պաշտպանն ենք ուզում հանդիսանալ, աւելի ռէաքսիոն մի կառավարութիւն անկարելի է երեւակայել։

Ցայտարարւում էր զինուորական դրութիւն, որը մինչեւ այսօր էլ կայ. չկայ ժողովների, մամուլի, խղճի ազատութիւն, չկայ անձի անձեռնմխելիութիւն։ Ամէն օր կրկնուող ձերբակալութիւնները ու աքսորները ոչ միայն գաւառներում, այլեւ մեզ մօտ մայրաքաղաքում, սովորական երեւոյթների շարքն էր անցել։ Ձերբակալում էին ոչ թէ միապետականները, հակասահմանադրականները այլ բուն իսկ սահմանադրութեան ջատագովները — յեղափոխականները։ Աքսորւում էին դեմոկրատ կուսակցութեան չէֆերը, վտանգ էր սպառնում նոյնիսկ տեղիս դաշնակցական աչքի ընկնող ընկերներին։ Արգելուած էին ոչ միայն պարսկական ժողովները, այլեւ հայկականը. նշանակում է ներկայ կառավարութիւնը պարսկահայ անկախ կուլտուրայի վրայ էլ իւր սեւ թաթը դրեց։ Այսպիսի բարբարոսային պայմաններում էինք գտնւում մենք, այսպիսի աներեւակայելի բռնութիւններ էր գործ դնում «սահմանադրական» կառավարութիւնը։ Եթէ Սալարդովլէն անցներ անգամ Թեհրան, հազիւ թէ կարողանար բռնութիւնների մի նոր ձեւ ստեղծել, գերազանցող եղածին։ Էլ ի՞նչ էր դրդում մեզ վախենալ նրա յառաջխաղացութիւնից ու կառավարութեան յաղթուելուց։

Երկրում գոյութիւն ունեցող դեմոկրատական տարրերի մէջ ամրանում էր իրաւացիօրէն այն գաղափարը, որ այս հալածանքների մէջ որոշ դեր խաղում էր եւ Դաշնակցութիւնը, որովհետեւ կառավարութեան գլուխը Եփրեմն էր։ Ընկերական շրջանում մեր խորհուրդներն ու բողոքները նշանակութիւն չունեցան Եփրեմի հետ. նա չչեղեց ընթացքը — պահեց դատապարտելի լռութիւն կատարուած դէպքերի հանդէպ եւ շատ անգամ էլ նպաստեց եւ աջակիցը հանդիսացաւ կառավարութեան։ Ցաւում ենք, որ ստիպուած ենք լինում ընկերոջ մահուանից յետոյ պարզել այն դէպքերը, որոնք կապ ունին նրա անձնաւորութեան հետ։

Պարսկաստանի ինքնատիպ եւ այլանդակ մթնոլորտը այն աստիճան ազդեց ընկերոջ վրայ, որ նա շատերի կողմից ճանաչւում էր ռուսական ագենտ։ Այսպիսի պայմաններում տեղական մարմնի միսսիան էր՝ պարզել իրողութիւնները, փրկելու համար Դաշնակցութեան պրեստիժը եւ ազատելու մեր իսկապէս տաղանդաւոր ընկերոջ այնպիսի չեղումներից, որոնք միայն սեւ գծեր պիտի աւելացնէին նրա փայլուն գործունէութեան վրայ։ Եւ այդ յաջողուեց մեզ. մեր թռուցիկները ունեցան իրենց դրական կողմերը։ Եփրեմը ստիպուած եղաւ նախքան կռուի գնալը պահանջել կառավարութիւնից մէջլիսի ընտրութիւններ։ Կառավարութիւնը տեսնելով Դաշնակցութեան բարոյական մեծ ուժը, ստիպուած եղաւ նկատի առնել նրա պահանջները։ Եւ երբ գումարուեց Խառը ժողովը, որի առաջին երեք նիստերի արձանագրութիւնները ուղարկած ենք ձեզ, ահա այդ ժողովում դարձեալ Կ. Կոմիտէի առաջարկութեամբ հարց դրուեց դիմել կառավարութեան՝ պահանջելու սահմանադրութեան երաշխիքները, որից յետոյ տարբերութիւնը տեսնելով ներկայ կառավարութեան եւ Սալարդովլի միջեւ, Դաշնակցութիւնը կը գնայ կռուելու վերջինիս դէմ, որպէս հակասահմանադրական մի հոսանքի։ Կռուել Սալար-դովլի դէմ այն պայմաններում, որ Եփրեմն էր ցանկանում, նշանակում էր Դաշնակցութեան եւ ռուսական բռնապետութեան միեւնոյն դիրքի վրայ կանգնեցնել. կռուել ազատ կարգերը ստանալուց յետոյ նրանց պահպանման համար, որպիսի վճիռ կայացրեց Խառը ժողովը Կ. Կոմիտէի առաջարկութեամբ, միայն պատիւ կարող էր բերել մերինի նման սոց. յեղ. մի կուսակցութեան։ Պարզ էր եւ որոշ մեր տեսակէտը.— Ձենք կռւում Սալար-դովլի դէմ, որովհետեւ սահմանադրական երկիր չենք տեսնում. տուէք սահմանադրութեան երաշխիքները՝ մենք պատրաստ ենք կռուելու։ Եւ նրանք ստիպուած եղան առնլազն խոստանալ գրաւոր։ Եթէ չլինէին մեր առաջին թռուցիկները, թէ կառավարութիւնը եւ թէ Եփրեմը ինչպէս միշտ, այս անգամ էլ առանց ուշադրութիւն դարձնելու մեր անկիւնային բողոքներին, կը շարունակէին իրենց օտարադաւան եւ հակաժողովրդական ընթացքը։ Այսպէս ուրեմն, մենք մեր թռուցիկներով հարկադրեցինք ճանաչել մեզ, որովհետեւ մեր մարտիկները թռուցիկից յետոյ չէին ուզում մասնակցել կռիւներին, իսկ այդ առաջի կարգի անհրաժեշտութիւնն էր կառավարութեան համար եւ ապա՝ ընթանալու մեր ցանկացած ուղղութեամբ։

Պէտք է նկատել ընկերներ, որ Խառը ժողովի որոշման դրդիչները աւելի շուտ տաքտիքական են։ Մենք շատ էլ չենք հաւատում ներկայ կառավարութեան խոստումներին, որովհետեւ ինչպէս գրել ենք, պարսկական անկախ կառավարութիւն չկայ, որ իր խոստումները կատարէ. մենք մի տեսակ երեւոյթ փրկելու համար դիմեցինք այդ պալիատիւ[148] միջոցին։ Եթէ մենք հակառակ որոշման գնայինք, Եփրեմը չէր լսելու մեզ ու մեր միջեւ երկպառակութիւնը ծայր տալով կուսակցութեան հմայքը պիտի ընկնէր։

148.- Պարտկող, կիսամիջոց:

Մեր նամակին մինիստրութիւնը պատասխանեց անմիջապէս այն մտքով, որ իրենք էլ կողմնակից են Մէջլիսի վերաբացման, բայց ներկայ պայմաններում ընտրութիւններ կատարելը միանգամայն անհնարին է։ Երկրի որոշ նահանգները ռուսական անմիջական ազդեցութեան տակ են. մի քանիսն էլ ապստամբուած. անհրաժեշտ է երկիրը խաղ[աղ]ացնել այնքանով, գոնէ որ Մէջլիսի պատգամաւորների օրինական թիւ կազմելու հնարաւորութիւն լինի (գոնէ կէսից մէկով աւելին)։ Մեր դիմումը եւ կառավարութեան պատասխանը ոգեւորութիւն ներշնչեց պարսիկ ամէն կուսակցութիւններին, որոնցից մի քանիսը նոյն նպատակով գործում են արդէն։ Մենք չուտով, երբ արդէն Քիրմանշահը խաղաղուել է եւ հնարաւոր է պէտք եղած թուով պատգամաւորներ ունենալ Մէջլիսում, մի երկրորդ գրութեամբ պիտի պահանջենք ընտրութիւնների սկսումն։ Այդ ուղղութեամբ ուրիշ կուսակցութիւններին էլ ունենալով մեզ [հետ], ոգեւորութեամբ աշխատում են։

Որ Եփրեմը չէր ուզում պահանջել եւ ոչ մի ընկերական կոնտրոլ, դա դուք կարող էք քաղել Խառը ժողովի արձանագրութիւններից։ Բայց աւելորդ չենք համարում, յիշել այստեղ եւս, որ նա չի ենթարկուել եւ ոչ մի ընկերական ժողովի, անգամ Խառը ժողովին, որի անդամներից մէկն էլ ինքն էր։ Համադան գնալուց մի օր առաջ մեր ներկայացուցչին ի պատասխան Կ. Կոմիտէի մի հարցումին, բերանացի պատասխանել է, որ ինքը գընում է, որովհետեւ չի կարող չգնալ, բայց կ'աշխատի ենթարկուելու այս ժողովի որոշումներին։ Ժողովիս քննութեան դրուելիք խնդիրն էր, ներկայ պայմաններում կռուել Սալար-դովլի դէմ թէ ոչ, իսկ նա գնում է առանց ժողովի որոշմանը սպասելու։ Սա ենթարկուել չէ այլ ենթարկել։ Զարմանում ենք, թէ դուք ինչպէ՞ս էք այդ փաստով աշխատում առարկել մեր նախորդ նամակի այդ առթիւ գրածները։ Երբ ժողովը հեռագրեց իրեն եւ բանակին մասնակցելու որոշման մասին, նա անգամ աւելորդ համարեց կարդալ մեր հեռագիրը զինուորների առաջ եւ իր պատմական հեռագիրը ուղղեց ժողովին, որը կը գտնէք Խառը ժողովի III նիստի արձանագրութեան մէջ[149]։

Ընկերներ, խոնարհւում ենք նրա մեծութեան առաջ, բայց չենք ուզում կուրանալ, չենք ուզում չտեսնել նրա բազմաթիւ դրական կողմերի կողքին եւ բացասականները։ Մենք արել ենք այն, ինչ որ պահանջում էր Եփրեմի հմայքը եւ մեր կուսակցութեան պրեստիժը, մազաչափ անգամ չչեղուելով մեր ծրագրի ոգուց։ Եւ արդէն մենք նախատեսնում ենք ապագան շատ փայլուն. երբ կ'անցնին խանդավառութեան ու զգացմունքի այս կարճատեւ օրերը ու կը գան լուրջ քննադատները՝ վերհանելու Եփրեմի գործունէութեան զանազան կողմերը, կը տեսնէք, որ մեր թռուցիկներն ու մեր վերաբերմունքը կը լինի լրացնողը եւ գերազանցողը այն դափնիների, որոնք չահեց Դաշնակցութիւնը, յանձին Եփրեմի։

Բանակը Քեռու հրամանատարութեամբ մի քանի փառաւոր յաղթանակներից յետոյ կանգ է առել Քիրմանշահում եւ սպասում է կարգադրութեան։ Մեր կարծիքով բանակը թողնել միմիայն Քեռու հրամանատարութեան եւ հսկողութեան ներքոյ նպատակայարմար չէ։ Աննպատակայարմար է եւ այն, որ Քեռուն թողած՝ ուրիշ մէկին յանձնուի Եփրեմի բանակում ունեցած գործը, երբ կառավարութիւնը ինքը արդէն նրան ճանաչել է հրամանատար եւ որ իրեն յանձնուած գործը նա ցանկալի յաջողութեամբ էլ կարողանում է տանել։

Բանակի պաշտօնական հրամանատարը կը ճանաչուի Քեռին, իսկ Դումանը կը լինի նրա օգնականը անունով, իսկ մեր կողմից՝ գործերի իսկական ղեկավարը. ուրիշ խօսքով Քեռին ու Դումանը միասին կը վարեն Եփրեմի գործը։ Այս մասին խօսեցէք Դումանի հետ եւ համաձայնութեան դէպքում յայտնեցէք մեզ, որ կարող լինենք այդ առթիւ կառավարութեան հետ խօսել եւ որոշ եզրակացութեան գալ։

Խնամակալը գնաց Եւրոպա ու հաւանականօրէն չդառնալու նպատակով։ Ատրպատականի շրջանում յուզումները եւ կռիւները վերսկսւում են։ Պարսկաստանը անորոշութեան մէջ է եւ յղի քաղաքական նորանոր անակնկալներով։ Աչքի ընկնող քաղաքական, եւ կուսակցական դէպքերը ժամանակին կը հաղորդագրենք։

Ընկերական բարեւներով
Ի դիմաց Շ[ահստանի] Կ. Կոմիտէի
ՁԱՐԵՀ

149.- Խառն ժողովի արձանագրութիւնը տեսնել էջ 153-171, իսկ երրորդ նիստը՝ 160-164:

Մատեան թիւ 113, էջ 135

Ե 36.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԴՐ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ

(Լատինատառ հայերէն)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ

ԵՐԵՒԱՆՑԻՆ[149ա] ՅՕԺԱՐ Է ԵԹԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԼԻԱԶՕՐՈՒԹԵԱՆ [ՀԱՄԱՐ] ԲԱՒԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԷ — ՊԱՏԱՍԽԱՆԵԼ:

ԱՐԵՒՄՏԵԱՆ

28/10 Յունիս 1912, ժամը 4.40ին

Փաստ. 109-79

Ե 37.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

29 Մայիս 1912

Ընկերներ,

Կը հաստատենք մեր Մայիս 24 թուակիր նամակը։ Ընկեր Դուման իր յօժարութիւնը յայտնեց Եփրեմի գործը շարունակելու՝ իբրեւ հրամանատար հայ զօրագունդին, եթէ միայն պարսիկ կառավարութիւնը լիազօրութիւն տայ անոր կազմակերպելու մարտիկ ուժերը եւ առ այդ բաւարար միջոցներ տրամադրէ։ Երէկ այդ իմաստով ալ հեռագրեցինք ձեզ։ Ընկեր Դումանը յարմարագոյն անձն է այդ պարտականութիւնն ստանձնելու համար ամէն պարագաներուն մէջ։ Ծանօթ են ձեզ իր փորձառութիւնը ռազմական գործերուն, իր ծանօթութիւնը պարսիկ նկարագրին եւ իր վարչական ընդունակութիւնները։ Բան մը որ աւելի պիտի նպաստէ ձեզ այդ ընտրութիւնն ընելու՝ այն պարագան է որ թուրք կառավարութիւնը Պարսկաստանէն եկող բոլոր ընկերներէն կը պահանջէ հեռանալ Վասպուրականէն եւ անցնիլ Պոլիս[150]։ Հոն կը գտնուին հիմա՝ Դուման, Թորոս, Սամսոն, Սարգիս Օհանջանեան, Ռուբէն Փայլակ[151]։ Ակներեւ է որ այդ ընկերները Պոլսի մէջ ո՛չ ապրուստ պիտի կրնան ճարել, ոչ ալ գործի օգտակար ըլլալ։ Ռուբէնը իբրեւ տեղացի կրնայ մնալ Պոլիս։ Թորոսին կ'առաջարկենք անցնիլ Տարօն, իսկ Դուման եւ Սամսոնը կրնան օգտակար ըլլալ ձեր շրջանին։

Ձեր պատասխանը փութացուցէք եւ միանգամայն ճամբու ծախքն ալ հետը, որովհետեւ մեր միջոցները չափազանց սուղ են այս պահուս։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ց.Գ.- Եփրեմի եւ ամբողջ մեր մասնակցութեան պատմութիւնը գրելու եւ հրատարակելու պահանջը կը չեշտուի օրէ օր։ Խորհելու է այս մասին։ Պատկերազարդ հրատարակութիւն մը իր բոլոր ծախքերը հանելէ ետք՝ գերազանց կարեւորութիւն մը կ'ունենայ կազմ[ակ]երպութեան համբաւին եւ հմայքին համար։

149ա.- Երեւանցին հոս գործածուած է Նիկոլ Դումանի համար:

150.- Արդարեւ Թուրիզէն հեռանալէ ետք, Նիկոլ Դուման անցած էր Վան-Վասպուրականի շրջանը. սակայն թրքական կառավարութիւնը մտահոգ անոր ինչպէս նաեւ միւս մարտիկներու ներկայութենէն, կը պահանջէր յատկապէս Ն. Դումանի հեռացումը Վանի շրջանէն:

Այսուհանդերձ Եփրեմը փոխարինելու այս առաջադրութեան դիմաց Ն. Դումանի համար գլխաւոր պայման էր, որ հրաւէրը գար ուղղակի Թեհրանի կեդրոնական կառավարութենէն, մինչ այս վերջինը արդէն պարսկական բանակի ընդհանուր հրամանատարութեան համար պաշտօնի կոչած էր Քեռին: Այնպէս որ կուսակցական վերոյիշեալ բաղձանքը չիրականացաւ երբեք:

151.- Յաջորդաբար՝ Տէր Յովհաննիսեան Նիկոլ (Դուման), Ալոյեան Գալուստ (Թորոս), Թադէոսեան Ստեփան (Սամսոն) ,Դերձակեան Ռուբէն (Փայլակ):

Փաստ. 589-23

Ե 38.– ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ՝ ԿԱԶՄՈՒԱԾ ԲԻՒՐՈՅԻ ՀՐԱՀԱՆԳՈՎ՝ ՈՐՈՇԵԼՈՒ ԿՈՒՍԱԿՑ[ՈՒԹԵԱՆ] ԳՈՐԾ[ՈՒՆԷՈՒԹԵԱՆ] ԸՆԹԱՑՔԸ 1912 Թ.

ՆԻՍՏ I

Բիւրոյի հրահանգած Խառը Պատ[ասխանատու] ժողովի առաջին նիստը կայացաւ Ապրիլ 26-ին, մասնակցութեամբ 9 ընկերների, դոկտոր Ստեփանեան, Յովսէփ Միրզայեան, Ներսէս Ներսէսեան, Յովսէփ Յովհաննիսեանց (Ատրպատականի Կ. Կոմիտէի անդամներից), Աւետ Խաչատրեան (Գիլան կոմիտէի անդամներից), Արշակ, Զօրա Սագինեան, Նիկոլ Աղբալեան եւ Տիգրան Մնացականեան որպէս Շահստանի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ։

Բացակայում էին՝ Եփրեմ, Քեռի, Խէջօ եւ Ալեքսան խան։ Առաջին 3-ը քաղաքում չէին։

Կ. Կոմիտէի ներկայացուցիչը յայտարարելով ժողովը բացուած, մի քանի խօսքով պարզեց, թէ ինչ երեւոյթների արդիւնք է Բիւրոյի այն հեռագիրը, որով նա հրահանգում է կազմել Խառը ժողով եւ այդ ժողովի որոշումներով առաջնորդուել քաղաքական գործունէութեան ընթացքում, որպէսզի տարակարծիք ընկերները հնարաւորութիւն ունենան մտքերի փոխանակութեամբ ուղի գծել Պարսկաստանի համար։ Կարդաց Բիւրոյի հեռագիրը եւ առաջարկեց կազմել ժողովի դիւան։

Ընկ. դոկ. Ստեփանեան ընտրուեց նախագահ եւ ընկ. Արշակը՝ քարտուղար։

Ցովս. Միրզ[այեան].— Առաջարկում եմ հրաւիրել ընկեր Համբարձումին[64], որպէս Խառը ժողովի անդամ։

Տիգրան [Մնացականեան].— Կ. Կոմիտէն անյարմար է գտնում Համբարձումին հրաւիրել այսպիսի մի ժողովի, որովհետեւ նման պատասխանատու ժողովներում հրաւիրւում են կուսակցութեան գործօն եւ մտաւորական ուժերէն։ Համբարձումը վերջին 3-4 տարիներում չի եղել Դաշնակցութեան շարքերում եւ բացի այդ նա իւր մտաւոր կարողութիւններով օգտակար չի կարող լինել ժողովին։

Աւետ[ան Խաչատրեան].— Համբարձումը մեր շրջանում վերջին տարիներում չի եղել Դաշնակցութեան շարքերում եւ ոչ մի գործունէութիւն չի ցոյց տուել յօգուտ Դաշնակցութեան։

Ներսէս [Ներսէսեան].— Խնդրին պէտք է մօտենալ այն տեսակէտից, թէ Համբարձումը արդեօք ինքն իրեն համարում է դաշնակցական թէ ոչ։

Ցովս. Միրզ[այեան].— Առաջարկում եմ Համբարձումին հրաւիրել այս ժողովին կուսակցութեան տեսակէտից նրա ունեցած մի քանի առաւելութիւնները ի նկատի ունենալով։ Համբարձումը ունի կուսակցական անցեալ եւ աչքի ընկնող գործունէութիւն, իսկ թէ վերջերս նա հրաժարուել է ժողովներին մասնակցելուց, ես դրան այնքան կարեւորութիւն չեմ տալիս, առանց դրան էլ նրա գործունէութիւնը այնքան ակներեւ է եղել, որ նրան Գիլանից աքսորել են Թեհրան։

Աւետ[ան Խաչատրեան].— Համբարձումը աքսորուել է չնորհիւ իւր անտակտ վարմունքի — նա իրեն Գիլ[անում] ամէն տեղ յայտարարում էր Եփրեմի ներկայացուցիչը։

Ցովս. Միրզ[այեան].— Համբարձումը իր կուսակցութեան գործունէութեամբ ծանօթ է Պոլսից Թեհրան, թէ պարսիկներին եւ թէ մեր ընկերներին։ Բացի այդ նա լաւատեղեակ է եւ Դաշնակցութեան սկզբունքներին։ Իսկ թէ խմբական ժողովներին չի մասնակցել, անդամավճարներ չի տուել, այդ հանգամանքը ես այնքան էլ կարեւոր չեմ նկատում։

Նախագահ.— Ես կարծում եմ դաշնակցական ժողովի հրաւիրուած ենք, ուրիշ շատ խելացի մարդիկ կան դրսում, բայց որովհետեւ դաշնակցական չեն, չեն կարող մասնակցութիւն ունենալ այս ժողովում։

Արշակ.— Խնդիրը աւելի քան պարզ է։ եթէ սկզբունքով մօտենանք հարցին, նախ որ Համբարձումը 2 տարուց աւելի է Դաշնակցութեան շարքերում չի գտնուում։ երկրորդ՝ նրա ամենամեծ պակասութիւնը պարծենկոտութիւնն ու անգաղտնապահութիւնն է։ այդպիսի

անձնաւորութիւնը չի կարող մասնակցել այսպիսի ժողովում։

Նախագահ.— Գիլանի ընկերներից հարցնում եմ. արդեօք Գիլանում ընկերները նրան որեւէ պատասխանատու գործ կատարելու համար ձայն կը տային, թէ ոչ։

Ալեքս[ան Խաչատրեան].— Ո՛չ. եթէ Համբարձումը իրեն դաշնակցական է համարում, թող յանձնարարական բերի Գիլանից։

Ցոլս. Միրզ[այեան].— Իրականութիւնը աւելի զօրեղ է, քան ձեր տուած փաստերը։ Հապա ինչպէ՞ս է, որ ռուսական կոնսուլը աքսորել է Համբարձումին։

Նիկոլ [Ազբալեան].— Այդ փաստը օրինակ չի կարող լինել. Ռուսաստանում էլ Դաշնակցութեան գործում ձերբակալուեցին եւ ոչ դաշնակցականներ, որոնք վերջը դատարանի առաջ արդարացան. ես խնդրում եմ ժամավաճառ չլինել։

Ներսէս [Ներսէսեան].— Ես որքան ծանօթ եմ, Համբարձումը մինչեւ 1909 թիւը եղել է դաշնակցական շարքերում, իսկ նրանից յետոյ թէեւ չի եղել, բայց շրջանային ժողովներում հրաւիրել ենք։ Պարսկական շարժումների սկզբում պասսիւ մասնակցութիւն է ունեցել, հրացաններ է փոխադրել։

Ցոլս. Միրզ[այեան].— Համբարձումի մասնակցութիւնը եղել է ակտիւ եւ ոչ պասսիւ. նա 17-18 տարուայ դաշնակցական գործունէութիւն ունի. ինչո՞ւ նրանից հարցնել դաշնակցական ես թէ ոչ։ Նա այնպիսի անձնազոհութիւններ է ցոյց տուել, որ շատ դաշնակցականներ անընդունակ են անելու. նա շատ դաշնակցականներից, որոնք իրենց դաշնակցական են համարում, շատ բարձր է։

Նախագահ.— Գործօն անդամը նա է, որ ժողովներին մասնակցում է, ամսավճարները տալիս եւ ենթարկւում է կազմակերպութեան որոշումներին։ Նա 3 տարի չի եղել Դաշնակցութեան շարքերում ուրեմն եւ գործօն անդամ չէ, իսկ այդպիսիները խառը ժողովի համար պէտք չեն գալ։ Հարցը փակուած եմ համարում եւ առաջարկում եմ քուէարկել։

Քուէարկելուց պարզուեց, որ 8 ձայնով, ընդդէմ մէկի, Համբարձումի թեկնածութիւնը մերժւում է։

Նախագահ.— Եթէ ժողովի համար նոր անդամներ առաջարկելու են եւ թող անեն, իսկ եթէ ոչ, անցնենք օրակարգին։

Տիգր[ան Մնացականեան].— Մի թռուցիկով Շահստանի Կ. Կոմիտէն յայտարարել է հայ զինուորներին՝ չմասնակցել ներկայ Պարսկաստանի ներքին ուժերը ջլատող կռիւներին, համարելով այդ կռիւները արդիւնք շահագրգռուած պետութիւնների ինտրիգների արդիւնք։ Կ. Կոմիտէն չի տեսնում Պարսկաստանում անկախ սահմանադրական կառավարութիւն. չկայ անձի անձեռնմխելիութիւն, մամուլի ազատութիւն, ժողովների ազատութիւն եւայլն. զինուորական դրութիւնը մեռցրել է այն ամէնը, ինչ որ ազատ էր, ինչ որ սահմանադրական էր։ Մայրայեղ բռնապետութիւն տեսնելով ներկայ կառավարութեան կողմից, Կ. Կոմիտէն իւր կոչումը չի համարում այդպիսի կառավարութեան թեւ հանդիսանալ։

Զօրա [Սագինեան].— Մարմնի թռուցիկները յայտարարուել է շատ կրիտիկական ժամանակում. պէտք է պարզել այն քաղաքական դրութիւնը, որ յառաջացել էր ուլտիմատումից յետոյ եւ մեր վերաբերմունքը որոշել. իսկ մենք ոչ մի դէպքում չենք կարող յարմարուել ուլտիմատումին։

Ցոլս. Միրզ[այեան].— Պարսիկ կառավարութիւնը տուել էր մէկ նոտ եւ մէկ ուլտիմատում. առաջադրեցէք, թէ որի դէմ էք ուզում խօսել։

Զօրա [Սագինեան].— Օտար պետութիւնները Պարսկաստանի նկատմամբ ունին շատ հեռանկարներ եւ շահեր, որոնց հասնելու համար նրանք դիմում են կողմնակի միջոցների շատ անգամ։ Շուստերի[98] հեռացումը ռուսական շահերի ոտնահարման արդիւնքն էր։ Մասնակցել ներկայ կառավարութեան կռիւներին, նշանակում է իրականացնել օտարների ցանկութիւնը. իսկ դա սոց[իալիստական] կուսակցութեան գործը չէ։

Ցոլհան[նիսեանց].— Համաձայն եմ մարմնի տեսակէտին. Թեհրանը գտնւում է զինուորական դրութեան մէջ. Արշալոյս[144] թերթի հրատարակման համար ահագին նեղութիւններ քաշեցինք մինչեւ թոյլտուութիւն ստացանք։ Կարծէք եւ ոչ մի ազատութիւն չկայ, դեմոկրատներին հալածում են, սահմանադրութիւնը խախտուած է, որովհետեւ ներկայ կառավար. չի ղեկավարւում «Մէջլիսի» դիրեկտիւներով. գործում է սահմանադրութեան դէմ եւ ոչ թէ յօգուտ նրան։

Տիգր[ան Մնացականեան].— Պաշտպանում եմ Կ. Կոմիտէի տեսակէտը, ազատութիւնները չկան. ես չեմ վստահանում ներկայ կառավարութեան։ Ասում են այս բռնութիւնները ժամանակաւոր եւ արտաքին կառավարութիւնների թելադրութեամբ — իսկ ես պնդում եմ, որ այդ ժամանակաւոր բռնութիւնները յօգուտ Պարսկ[աստանի] անկախութեան եւ սահմանադրականութեան չեն, այլ յօգուտ ռէակցիայի եւ հարեւան պետութիւնների։ Ռէակցիան կատարելապէս յաղթանակել է, որի դէմ պէտք է պայքարել։

Ցոլս. Միրզ[այեան].— Երկու տեսակէտ կայ. 1-ին. Պարս. անկախութիւնը խախտուած է՞, 2-րդ. ներկայ կառավարութիւնը սահմանադրական չէ՞։

Ցոլ. Ցոլ.— Ներկայ կառավարութիւնը գործում է յօգուտ իր անձնական շահերի.

Զօրա [Սագինեան].— Պարսկական կռիւները բարոյապէս փչացնում են մեր մարտիկներին։

Նիկոլ [Ազբալեան].— Կառավարութիւնը ծրագիր չունի։

Առաջարկւում է կարդալ Բիւրոյի հեռագիրը եւ կարդացւում է։

ՀԵՌԱԳԻՐ

Թեհրան. N.2 Ստեփանեան Դանտիստ եւ Եփրեմ խան – Կազմել Խառը ժողով, մասնակցութեամբ Կենտրոնականի, Եփրեմի, Յովսէփի, Քեռու, Խէչոյի եւ ձեռնահաս ընկերներու. անելիքները որոշել այդ ժողովի պատասխանատուութեամբ չհակասելով Ընդհանուր ժողովի ծանօթ որոշումներուն. կը յանձնարարենք չէզոքութիւն մրցակից պետութիւններու հանդէպ. կը խնդրենք չխախտել ընկերական կապը, մանրամասն նամակով։

ԱՐԵՒՄՏԵԱՆ

Ցոլս. Միրզ[այեան].— Պարսկաստանի անկախութիւնը կարելի է բաժանել 2 մասի — իրաւաբանական եւ գործնական։ Պարսկաստանի անկախութիւնը իրաւաբանական տեսակէտից այնքան էլ չի մնասուել. ի՞նչ է անկախութիւնը, աբսոլիւտ[152] անկախութիւն ոչ մի տեղ գոյութիւն չունի։

Դաշնադրութեամբ պետութիւնները իրենց անկախութիւնը սահմանափակում են, ինչ տեսակի էլ որ դա լինի։ Օրինակ վերցնենք Բուլղարիան, Սերբիան, մանաւանդ Տաճկաստանը. որքան է անկախ, օրինակ Անգլիան, իւր առեւտրական դաշինքներով։

Նիկոլ [Ազբալեան].— Ուրիշ բան է, երբ պետութիւնները իրանց կամքով դաշնադրութիւններ են կապում, ուրիշ խնդիր է Պարսկաստանի վերաբերմամբ, որը արտաքին բռնութեան հարկադրութեան տակ ուլտիմատումներ է ստորագրում։

Ցոլս. Միրզ[այեան].— Պարսկաստանը իր ներքին գործերը կարգադրելու համար անկախ է ինչպէս եւ Աֆղանստանը, որը դրսից անկախ չի երեւում։ Պարսկաստանի անկախութիւնը որ նոտայով սահմանափակուեց, խօսք չունինք դրա դէմ. բայց ո՞ր աստիճան է այդ սահմանափակումը։ Ուլտիմատումը Պարսկաստանի անկախութեան հետ գործ չունի, այլ ասում է.

1. Հեռացրէք Շուստերին եւ նրա մարդկանց. շարունակական անկախութեան ձեռք չի տալիս։ Մենք ասում ենք ազատութիւն չկայ, սահմանադրութիւն չկայ. եթէ չկայ Դաշնակցութիւնը թող յետ կանգնի... բայց ներկայ շրջանում ունի՞նք որեւէ գործ, թէ ոչ։

Նիկոլ [Ազբալեան].— Մենք ընդհանրապէս քննում ենք վիճակի ընթացքը. ուլտիմատում է. Սալար դովլէն է գալիս, նոտ է տրուած եւ այլն։ Ի՞նչ պէտք է անենք. մարմնի կարծիքը շատ պարզ է արտայայտուած թռուցիկի մէջ. իսկ մենք որ հաւաքուել ենք այստեղ, պէտք է հիմք ընդունելով իրականութիւնը, որոշենք մեր դիրքը։

Ցոլս. Միրզ[այեան].— Ազատութիւններ չկան եւ այլն. հարցերը շատ ճապաղ են դրուած. ներկայ կառավարութիւնը այս բոլորը անում է, որովհետեւ Մէջլիսը իւր ժամանակը լրացնելուց առաջ ներկայ կառավարութեանը տուեր է լիազօրութիւններ, որոնց սահմաններում գործում է այժմ կառավարութիւնը։ Այդ լիազօրութեան հիման վրայ բռնեցին Մամադալի Շահի կուսակիցներին։ Եթէ [նոյն]իսկ ներկայ կառավարութիւնը բռնութիւններ է անում, նշանակում է մենք պիտի կռուենք կառավարութեան դէմ եւ ոչ ռեժիմի, որը սահմանադրական է եւ որի արածները դուրս են իր ունեցած լիազօրութեանց սահմաններից։

Պէտք է Մէջլիսի ընտրութիւններ պահանջել. փոխանակ սրան, Դաշնակցութիւնը ասում է չեմ աջակցում սահմանադրական ռեժիմի պահպանման. յետ է քաշւում այն րոպէին, երբ միապետութիւնն է սպառնում։ Այժմ իմ կարծիքով պէտք է օժանդակել ռեժիմի պահպանման եւ ապա կռուից յետոյ տապալել ներկայ կառավարութիւնը, որը Դաշնակցութիւնը կարող է անել։

Ցոլ. Ցոլ[հաննիսեան].— Ճիշտ է ներկայ կառավարութիւնը ընտրուեց սահմանադրական Մէջլիսից եւ լիազօրուեց նրանից, բայց ներկայումս, երբ պարլամենտ չկայ, որ մինիստրութեան գործերը կոնտրոլի ենթարկի, հիմա սահմանադրութեան դէմ է գործում։

Ցոլս. Միրզ[այեան].— Այդ գործերը բնորոշել։

Ալեքս[ան Խաչատրեան].— Ներկայ կառավարութիւ-

152.- Բացարձակ։

նը բռնութիւններ է անում, բանտարկում է, աքսորում է եւ այլն, այդ բոլորը քողարկելով երկրի ազատութեան եւ անկախութեան պատրուակով։

Ցով. Ցով[հանդիսեան].— Մինիստրութիւնը որոշ մոմենտի համար է լիազօրութիւններ ստացել, երբ հակասահմանադրական շարժում կար։

Նիկոլ [Ագբալեան].— Թիւրիմացութիւններ կան. ոչ մի լիազօր չի կարող հակառակ ընթանալ օրէնքին եւ սահմանադրութեան ոգուն։ Թող տուած լինին 2 միլիոն լիազօրութիւններ. եթէ դրանք գործադրւում են սահմանադրութեան ջնջման համար, Մէջլիսի ընտրութիւններ չեն հրաւիրում, այն դէպքում ինչներիս է պէտք այդ լիազօրութիւնները։

Տիգր[ան Մնացականեան].— Սահմանադրական ռեժիմը խախտուած է. եթէ սահմանադրութիւն գոյութիւն ունենայ Մէջլիսի անդամներից մէկին առանց քննութեան կը բռնէի՞ն եւ կ'աքսորէի՞ն։ Ներկայ կառավարութիւնը մնացել է անկոնտրոլ եւ հալածում է երկրի կենսունակ տարրերին։ Ցայտարարւում է, որ շուտով ընտրութիւններ կը լինեն, բայց ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում. սարսափած ժողովուրդը ինչպէս յանդգնի այս բոլոր հալածանքներից յետոյ ասպարէզ գալ եւ ազատ ընտրութիւններ կատարել։ Մենք ականատես եղանք սարսափելի բռնութիւնների։ Մի՞թէ կարծում ենք սահմանադրութիւնը այս թղթի վրայի գրածն է. ոչ երբեք, սահմանադրութիւնը երկրում գոյութիւն ունեցող ուժերի փոխյարաբերութիւններն են։ Իսկ այդ վերջինը պարզօրէն հակասում է հիմնական օրէնքներին։ Թղթի վրայ գրուածները իսկապէս որ այժմս մեռած տառեր են։

Ցով. Միրզ[այեան].— Ասում են սահմանադրութիւնը խախտուած է, իսկ ես ասում եմ, որ իրաւաբանական տեսակէտից այդ բանը գոյութիւն չունի, ոչ մի պաշտօնական թղթով յետ չի առնուել սահմանադրութեան եւ ոչ մի կէտը։ Գործնականի մէջ դարձեալ խախտուած չէ. Մինիստրութիւնը բռնութիւններ է անում ժամանակաւորապէս համաձայն իր ստացած լիազօրութիւնների եւ յոգուտ երկրի անկախութեան ամբողջ[ական]ութեան, սահմանադրականութեան. բարոյական տեսակէտներից եթէ մօտենանք խնդրին, անկարող կը լինենք ներկայ կառավարութեան որեւէ կերպ մեղադրել. ընդհակառակը մենք ինքներս մեղադրուած դուրս կը գանք այն տեղից։ Այժմ գանք այն հարցին, թէ ինչո՞ւ են սահմանադրականներին հալածում եւ ոչ միապետականներին։ Այն ազատութիւնները որ դուք էք ասում, ոչ մի ժամանակ չի եղել Պարսկաստանում, մանաւանդ անձի անձեռնմխելիութիւնը։ Օր. Սարդար Մօհսուն թնդանօթի կապեցին Մէջլիսի օրօք եւ առանց որեւէ դատավարութեան։

Նիկոլ [Ագբալեան].— Մենք այդ էլ ենք քննադատում։

Ցով. Միրզ[այեան].— Ասում էք ինչո՞ւ է սահմանադրականներին հալածում են [եւ] ոչ միապետականներին։ Նախ որ ձեր ակնարկած մարդկանց յեղափոխական լինելը վերին աստիճանի տարակուսելի է, որովհետեւ դեմոկրատները պատրաստում էին մի անարխիա ստեղծել, դրա համար նրանց հալածեցին։ Մենք պէտք է թշնամի լինենք ամէն տեսակի անարխիաների։ Այս բոլորի հանդէպ եթէ Դաշնակցութիւնը ցանկանում է մի բան անել, թող ներկայ քաբինէն փոխի եւ ոչ թէ բանակը ցրի։ Տուէք ինձ 7 վստահելի սահմանադրականների անուն, եւ նրանց մինիստր նշանակել տամ։

Ցով. Ցով[հանդիսեան].— Ընտրութիւնների նախապայմանները չկան. խօսքի, մամուլի եւ ժողովների ազատութիւն, անձի անձեռնմխելիութիւն։

Ցովս. Միրզ[այեան].— Այո՛, մամուլի ազատութիւն եւ ոչ թէ մամուլի սանձարձակութիւն. այստեղ մամուլի համար օրէնք չկայ, որ պատասխանատուութեան կանչի այս կամ այն անձնաւորութեան։

Նիկոլ [Ագբալեան].— Ամէն տեղ գործադրւում է 12 հոգուց բաղկացած երդուեալների դատարան. թող նոյնը արուի եւ այստեղ. բայց ո՞վ է դատել այստեղ մամուլի սանձարձակութիւնը. ի՞նքը փակողը արդեօք։

Ներսէս [Ներսէսեան].— Սուլթանաբադի տղաները[153] սպասում են մեր հրահանգին. ժամանակը կրիտիկական է։ Իմ կարծիքով ներկայ կառավարութեան չպէտք է օգնել ընդդէմ Սալար Դովլի։

Նիկոլ [Ագբալեան].— Սալար Դովլէն սահմանադրութեան անունով է գալիս։

Ցով. Միրզ[այեան].— Ո՛չ, Սալար Դովլէն գալիս է իբրեւ տէր եւ տնօրէն այս երկրի։

Տիգրան [Մնացականեան].— Երբ կառավարութիւնը կը վերացնի զինուորական դրութիւնը, երբ ազատ կը յայտարարուեն, մամուլը, խօսքը եւ անձը անձեռնմխելի, այն ժամանակ միայն Դաշնակցութիւնը կարող է հրահանգել իր մարտիկներին գնալ կռուելու Սալարի դէմ։ Լաւ կը լինի, եթէ մի պատգամաւորութիւն ուղարկէինք մինիստրութեան մօտ եւ յիշուած ազատութիւնների մասին գրաւոր խոստումն ստանայինք։

Ցով. Ցով[հանդիսեան].— Մինիստրութե՞ն մօտ ուղարկել պատգամաւորութիւն, թէ խնամակալի մօտ։

Ցովս. Միրզ[այեան].— Խնամակալը անպատասխանատու է, որովհետեւ զուտ սահմանադրական միապետ է։ Մէջլիսը առաջարկել էր նրան մի քանի լիազօրութիւններ, բայց նա մերժեց։ Նա ստորագրում է միմիայն մինիստրութեան որոշումները։

Նիկոլ [Ագբալեան].— Քեռին եւ ընկերները սպասում են այս ժողովի ելքին, պէտք է գործի անցնել։

Զօրա [Սագինեան].— Ո՞վ պիտի ապահովի նրանց խոստումները. մինիստրութի՞նը, որ միմիայն տգէտներից է բաղկացած։ Ներկայ կառավարութիւնը մի կատարեալ բռնապետութիւն է. Սալար Դովլէն նոյնպէս. թող դոքա կռուեն, մենք ի՞նչ գործ ունենք այստեղ։

Նիկոլ [Ագբալեան].— Այդ բոլորը կ'անենք միմիայն այն պայմանով, որ զինուորական ուժը լինի Դաշնակցութեան տրամադրութեան տակ։

Ցովս. Միրզ[այեան].— Զօրան ասաց, որ ներկայ մինիստրութիւնը բռնութիւններ է անում։ Նրանք 6-7 հոգի են, որոնք համերաշխ չեն գործում եւ նոյնիսկ դաւաճանում են իրար։ Կատարեալ մինիստրական կրիզիս է։ Դոցա մէջ կան Ղաւամը Սալթանէն եւ Վասուղը Դովլէն, որոնք ոչ մի ցեղական, կամ անձնական ուժ չունին. նրանց ուժ տուողը Մէջլիսն է եղել։ Նրանց հետ միասին կան եւ այնպիսիները, ինչպիսին է Սամսամը Սալթ[անէն], որ հազարանոց բանակ ունի եւ որին մինստրները ծառայող կարող են լինել. դրանց ձգտումները տարբեր են եւ իրար ջնջող։ Բացի այդ նրանց գլխին կանգնած է ներկայ Խնամակալը, որը մի կատարեալ սահմանադրական միապետ է. եթէ նրա տեղը լինէր Սարդար Ասադը կամ Սուփահդարը, այն ժամանակ հաւանականօրէն կառավարութիւնը կը դառնար մի բռնապետութիւն։ Իմ կարծիքով, այս ռեժիմը նկատելով որպէս սահմանադրական ռեժիմ, ներկայ մոմենտում Դաշնակցութիւնը պիտի անպատճառ գնայ օգնելու նրան. իսկ յետոյ կռուելով մինստրութեան դէմ փոխարինէ նրանց նոր կազմով, եւ կամ պատգամաւորութիւն ուղարկէ սահմանադրութեան երաշխիքների ապահովութեան մասին խօսելու։

Նիկոլ [Ագբալեան].— Ժողովը նախքան բանակին իր մասնակցութեան հրահանգը տալը պէտք է մինստրութիւնից ստանայ մամուլի, ժողովների, խղճի ազատութիւն, վերացնել տայ զինուորական դրութիւնը եւայլն։

Ցովս. Միրզ[այեան].— Պատգամաւորութիւն ուղարկել մինիստրութեան մօտ եւ բացատրութիւն պահանջել։

Զօրա [Սագինեան].— Ձենք հաւատում կառավարութեանը, հիմք, փաստ թող տայ, որ հաւատանք։

Ցովս. Միրզ[այեան].— Դեմոկրատները ցանկանում են անարխիա ստեղծել։ Ղում աքսորուած դեմոկրատները յայտարարելով իմամի կուսակիցներ, գրգռում են ֆանատիկոս ժողովրդին, ընդդէմ քրիստոնեաների եւ կապեր են պահպանում ապստամբ ցեղերի հետ։ Սէյիդ Քեազմ Եազդին, որը մի ազդեցիկ հոգեւորական է եւ որը մի ժամանակ սրբագործեց Մամադ Ալու գալուստը, այժմս էլ սրբագործում է Սալար Դովլինը։ Մեր ոգեւորութիւնը ի նպաստ դեմոկրատների, չի արդարանում։

Նիկոլ [Ագբալեան].— Մենք հաւատում ենք դեմոկրատիայի յաղթանակին. մենք թողնում ենք, որոմը ցորենի հետ աճի. եթէ իսկապէս դեմոկրատները ուժեղ են, թող տիրեն ասպարէզը, եթէ ո՛չ՝ ո՛չ։ Եթէ Դաշնակցութիւնը մինչեւ այժմ գործիք է դառել զանազան ուժերի, սրանից յետոյ գոնէ, չպէտք է դառնայ. նա պէտք է պահանջներ առաջադրէ յոգուտ իր սկզբունքների, եւ պահանջները բաւարարուելուց յետոյ միայն իր ուժերը կռուի ուղարկի։ Եթէ առանց որեւէ գրաւականի գնանք, ոչ մի նոր բան արած չենք լինի։ Այս մոմենտը պիտի օգտագործենք յոգուտ մեր ծրագրի եւ դրա համար Դաշնակցութեան բարձրագոյն ատեանը մեզ անկարող կը լինի դատապարտել։

Ցովս. Մ[իրզայեան].— Ենթադրենք մինստրութիւնը մեր առաջարկը չընդունեց, առարկելով, որ ինձ հարկաւոր են բռնի միջոցներ, բայց եւ այնպէս կը տամ ընտրութեանց իրաւունք։

Նիկոլ [Ագբալեան].— Կը պատասխանեմ նրանց — էդքու ասածները ես լաւ եմ հասկանում. դուք ուզում էք որ ձեր ուզած մարդիկը գան նստին Մէջլիսում եւ դուք էլ ձեր ներկայ ընթացքը շարունակէք։ Եթէ մեր պահանջներին բաւարարութիւն չտաք, մեր ուժերը յետ կը կանչենք։

Նախագահ.— Մենք տեսնում ենք, որ ներկայ կառավարութեան ընթացքը ռէակցիա է ստեղծում երկրում։ Մէջլիսը չկայ, որ կոնտրոլի ենթարկի վէզիրների արածները եւ նրանց ուղիղ ճամբու վրայ դնի։ Այսօր հալածւում են դեմոկրատները, Իթթիհատականները, վաղը

153.- Խօսքը հայկական զօրագունդի զինուորներուն մասին է։

գուցէ եւ Դաշնակցութեան ձեռք տան։ Վեզիրները ինտրիգներ են լարում, որ երկրի բախտը իրենց ձեռքին մնայ։ Խնամակալը մի ֆիգուրա է միայն, սոսկ խորհրդատուի դերում։ Այս դրութիւնը ներկայ քաբինէն է ստեղծել, հիմնուելով հէնց նոյն ուժերի վրայ, որոնք հիմա բողոքողի դերում պիտի երեւան գան։ Մենք պէտք է աշխատենք քաբինէն ձախ թեքել։ Պէտք է պահանջել սահմանադրական ռեժիմի կատարեալ վերականգնում։ Պէտք է պահանջել ժողովների, մամուլի, խօսքի ազատութիւն եւ անձի անձեռնմխելիութիւն, ապա թէ ոչ, մարդիկ ընտրութիւնների ժամանակ ասպարէզ չեն գայ։

Յովս. Միրզ[այեան].— Առաջարկում եմ հետեւեալ ձեւով դիմել կառավարութեան. ի նկատի ունենալով, որ Սալար Դովլէն գալիս է ներկայ ռեժիմի դէմ, որը պէտք է ամէն կերպ աշխատել չվտանգուի, դիմում ենք կառավարութեան պահանջելու ընտրութեանց նախապայմանները, այս ձեւով։ Եթէ դուք չտաք մամուլի, խօսքի եւ ժողովների ազատութիւն, եւ անձի անձեռնմխելիութիւն, մենք այնուամենայնիւ կ'երթանք միապետական Սալար Դովլի դէմ կռուելու, բայց կռուից յետոյ կը կռուենք եւ ձեր դէմ։

Նախագահ.— Աւելի լաւ է դիմել այս ձեւով. մեր ժողովի որոշմանն են սպասում Դաշնակցութեան մարտական ուժերը. եթէ մեր ցանկացած ազատութիւնները, մամուլի, ժողովների եւայլն ազատութիւն չտաք, մենք մեր իրաւունքը կը համարենք յետ կանչել մեր մարտիկներին։

Յովս. Միրզ[այեան].— Ես կարծում եմ, որ մենք պէտք է մեր պահանջը առաջադրենք ոչ ուլտիմատումի ձեւով. դա կարող է արտաքին միջամտութիւնների առիթ հանդիսանալ։ Մենք բարեկամ ենք Պարսկաստանի անկախութեան եւ սահմանադրականութեան։

Նիկոլ [Աղբալեան].— Կառավարութեան խոստումը պէտք է լինի գրաւոր։

Յովս. Միրզ[այեան].— Որովհետեւ Նայիբ Սալթանէն[154] անպայման սահմանադրական անձնաւորութիւն է եւ քաղաքական դրութեանը աւելի ծանօթ, նրանից խորհուրդ հարցնենք, թէ ի՞նչ ձեւով մեր դիմումը յառաջադրենք կառավարութեան։

Նիկոլ [Աղբալեան].— Դաշնակցութիւնը կարիք չի զգում զանազան Սալթանների խորհրդին. դա անգամ վարկաբեկիչ է կազմակերպութեան համար։ Ցանկալի չէ, որ Դաշնակցութիւնը հրահանգուի մի անշնորհք դիպլոմատից։ Սոնդէ[155] անելու համար կարելի է մի պատգամաւորութիւն ուղարկել նրա մօտ։

Նախագահ.— Առաջարկում եմ ընտրել 2 պատգամաւորութիւն. մէկը խնամակալի մօտ սոնդէի գնալու համար, միւսը մինիստրութեան մեր պահանջները ներկայացնելու։

Ժողովը սոնդէի համար միաձայն ընտրեց Յովս. Միրզայեանին, իսկ մինիստրութեան մօտ գնալու համար դարձեալ միաձայն Յովսէփին եւ դոկտոր Ստեփանեանին (նախագահ)։ Որոշւում է որ առաւօտեան Յովսէփը ներկայանայ խնամակալին սոնդէի համար. եթէ վերջինս աչքի ընկնող դժուարութիւններ չմատնանշեց, այն ժամանակ նոյն օրը Դոկտորի հետ միասին ներկայանալ մինիստրութեան մեր պահանջները անելու հետեւեալ ձեւով։

Դաշնակցութիւնը կռիւներին կարող է մասնակցել միմիայն այն դէպքում, երբ ներկայ կառավարութիւնը անպայման գրաւոր կերպով կը խոստանայ շուտով յայտարարել մամուլի, խօսքի, խղճի ազատութիւն եւ անձի անձեռնմխելիութիւն։

Ժողովը փակուեց ժամը 10.5ին։

Ժողովականներ՝
ԲԱԶՈՒԿԵԱՆ
ԽՈՐԷՆ

ՆԻՍ II

Ապրիլ 27ին

Ժողովականների օրինական թիւը ներկայ լինելով, նախագահը յայտարարում է ժողովը բացուած։

Յովս. Միրզ[այեան].— Այս առաւօտ ներկայացայ Խնամակալին եւ յայտնեցի մեր ժողովի վճիռը։ Խնամակալը միանգամայն հաւանութիւն տուեց մեր որոշմանը եւ խոստացաւ իր աջակցութիւնը մինիստրութեան մօտ։ Իմ յայտնած այն կարծիքին, որ լաւ կը լինի նախ քան մինիստրութեան ներկայանալը նախապէս տեսնել Վուսուղը Դովլին, որպէս ամենաազդեցիկ մինիստրի եւ նրա կարծիքն էլ իմանալ, խնամակալը համակարծիք եղաւ եւ հաւանութիւն տուեց։ Անմիջապէս ժամադրուեցինք եւ Դոկտորի հետ միասին ներկայացանք Վուսուղը Դովլին. թող հիմա Դոկտորը պատմէ մեր այդ տեսակցութիւնը։

Նախագահ.— Խնդրում եմ շարունակէք, դուք աւելի լաւ էք պատմում։

Յովս. Միրզ[այեան].— Կտրուկ ու քաղաքավարի ձեւով պարզեցի կառավարութեան բռնած ընթացքը եւ այն կասկածները, որ ծագել են Դաշնակցութեան մէջ դէպի ներկայ կառավարութիւնը, աւելացնելով, որ այս կասկածները շատ թոյլ են մարմնի մէջ, բայց խիստ ուժեղ մարտիկների մէջ։

Այս կասկածները փարատելու համար կուսակցութիւնը անհրաժեշտ է գտնում, որ ներկայ քաբինէն յայտարարէ Մէջլիսի ընտրութիւններ եւ խօսքի, մամուլի, ժողովների ազատութիւն եւ անձի անձեռնմխելիութիւն։ Վուսուղը Դովլէն պատասխանեց, որ իրենք շատ ուրախ են Մէջլիսի վերաբացման համար, որովհետեւ այնպիսի ծանրակշիռ հարցեր են յառաջանում շարունակ, որ անկարող ենք լինում մենակ մեր պատասխանատուութեամբ վճռել. եթէ Մէջլիսի լինի անշուշտ մեր գործը կը հեշտանայ։ Եթէ մինչեւ այսօր չենք յայտարարել Մէջլիսի վերաբացում, դրա պատճառները եղել են Թաւրիզի դէպքերը եւ առհասարակ արտաքին միջամտութեամբ յառաջացած խռովութիւնները երկրի զանազան կողմերում։ Ապա կանգ առաւ մեր պահանջների կարեւորութեան վրայ եւ յայտնեց իր պատրաստակամութիւնը ընդառաջ գալու մեր պահանջներին։ Մենք կրկնեցինք, որ մինիստրութեան տուած պատասխանը պիտի գրաւոր լինի։ Վուսուղը Դովլէն առաջարկեց մեզ Դաշնակցութեան կողմից գրաւոր դիմումն լինի, որին մինիստրութիւնը կը պատասխանի անշուշտ գրաւոր։

Յովս. Միրզ[այեան].— Առաջարկում եմ մեր գրաւոր դիմումը խմբագրել։

Յով. Յով[հաննիսեան].— Դուք ասացիք, որ մարմնի մէջ այնքան կասկած չկայ ներկայ մինիստրութեան նկատմամբ։

Յովս. Միրզ[այեան].— Ես կարծում եմ լաւ կը լինի այդպիսի կասկած չփաթաթենք մինիստրութեան վզին. դա նախ վիրաւորական կը լինի եւ երկրորդ ինչպէս կարող ենք մեր կասկածները հիմնաւորել, քանի որ ոչ մի գրաւոր փաստ չունինք։ Մեր խօսակցութեան մէջ ընկեր Դոկտորը նկատեց Վուսուղը Դովլին, որ ներկայ մինիստրութիւնը պարտաւոր է իրազեկ պահել ժողովրդին քաղաքական անցքերին, որպէսզի վերջինս տեղիք չունենայ կասկածելու սահմանադրական մինիստրութեան վրայ։

Տիգրան [Մնացականեան].— Առաջարկում եմ անցնել մինիստրութեան ուղղուելիք նամակի խմբագրութեան։

Նախագահ.— Իմ տպաւորութիւնները այնպիսին են, որ կարծում եմ մինիստրութիւնը մեր նամակին կը պատասխանի դրական. լաւ կը լինէր, որ հէնց այժմս խմբագրէինք հեռագիրներ եւ հրահանգէինք մարտիկներին, մասնակցել կռիւներին։ Հեռագիրները յանձնենք Կ. Կոմիտէին, որ նա իր անունից հրահանգէ, որովհետեւ նա է կանգնեցրել բանակը։

Տիգրան [Մնացականեան].— Այսօրուան իմ զինուորների հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ես համոզուեցի, որ նրանք նորից կը մասնակցին կռիւներին միմիայն իբրեւ դաշնակցականներ։

Նիկոլ [Աղբալեան].— Խնդիրը պարզ է իմ կարծիքով. Դաշնակցութիւնը նպաստում է պարսից կառավարութեան, այնպէս, ինչպէս օր[ինակ] նա կարող է նպաստել ենթադրենք մի Աֆղանստանի։ Դաշնակցութիւնը ունենալով զինուորական ուժ գործ է ածում ի սպաս իր զաղափարների պաշտպանութեան. այդ ուժը պիտի լինի կազմակերպութեան իրաւասութեան ներքոյ։ Կառավարութիւնը տալիս է դրամ, իսկ մենք մարտիկներ. այստեղ մեր եւ կառավարութեան իրաւաս[ութեան] սահմանները միախառնւում են, բայց պէտք է աշխատել ճշտել այդ սահմանները։ Եթէ կարելի լինէր, եւ կարող ենք, այդ ուժը մեր ձեռքին պահել, այն ժամանակ մենք այն կը գործադրէինք ի փառս Դաշնակցութեան եւ յօգուտ երկրի շահերին։

Զօրա [Սագինեան].— Պէտք է գործելակերպ մշակել Պարսկաստանի համար առանց որի մենք անկարող կը լինենք առաջ գնալ եւ մեր ու կառավարութեան յարաբերութիւնները ճշտել։

Ժողովը որոշեց հեռագրել Սուլթանաբադի եւ Ղումի ընկերներին, համաձայն՝ Քեռուն, որ գնան միանան բանակին կռուելու Սալար Դովլի դէմ։

Խմբագրուեց մինիստրութեան ուղղուելիք նամակը եւ ժողովը փակուեց։

ԲԱԶՈՒԿԵԱՆ
ԽՈՐԷՆ

154.- Նայիբ Սալթանէն անչափահաս Շահին խնամակալն է։
155.- Հետախուզութեան համար տեսակէտ, կարծիք շօշափել։

ՆԻՍ III

Շահստան, 1 Մայիս 1912

Ժողովը բացուեց ժամը 7-ին. բացակայ էին Նիկ[ոլ Աղբալեան] եւ Զօրա [Սագինեան]։ Դիւանի հրաժարուելու հետեւանքով ընտրուեց նոր դիւան, Յ[ովսէփ] Մ[իրզայեան] նախագահ եւ Յ[ովսէփ] Յ[ովհաննիսեան] քարտուղար։

Նախքան օրակարգին անցնելը, հարց տրուեց թէ համերաշխութեան մասին տրուած հեռագրներին պատասխան ստացուե՞լ է. եթէ այո՛, թող կարդացուեն։

Առաջարկուեց նախ օրակարգի խնդրով զբաղուել եւ անցնել մինստրի նամակի ընթերցման։

Տիգրան [Մնացականեան]։— Եթէ ճիշտ են ստացուած հեռագրների մասին իմ լսածներս, այդ դէպքում ուրեմն այս ժողովը բոլորովին աւելորդ է, քանի որ նա ներկայացնում է համերաշխութեան ծաղրանկար եւ ուրիշ ոչինչ։ Եփ[րեմ]ի տուած հեռագիրը, որով նա չի ուզում ընդունել հրաժարուող զինուորներին իր բանակի մէջ, Կ. Կոմիտէին կողմ է ճանաչում։ Կ.Կ.էն հրահանգել է զինուորներին կռուել. եթէ միայն մեղք կայ, դա Կ.Կ.ին է. ուրեմն ինչու չպէտք է ընդունել զինուորներին։ Դաւադրութեան խօսքը պատրուակ է միայն։

Ղեկտոր։— Զինուորներին ընդունելու համար ժողովը յանձնարարել էր Յով[սէփ]ին այդ ուղղութեամբ աշխատելու։ Նախ պիտի իմանալ թէ Յով[սէփն] ինչ յաջողութիւն է ունեցել այդ խնդրում, յետոյ խօսել։ Եթէ մանրամասն տեղեկագրուի, մենք էլ ըստ այնմ կարող ենք մեր ասելիքն ասել։

Յով[սէփ Մ]իրզայեան։— Այս ժողովը ոչ միայն հաշտեցնող է եւ համերաշխութիւնը հաստատող, այլեւ Պարսկ[ստանում] ունեցած մեր գործերի ղեկավարը։ Ես Եփ[րեմ]ից ոչինչ չեմ լսել հակառակ այս ժողովին, ընդհակառակն նա ինքն էր որ իր գնալուց մի գիշեր առաջ ցանկացաւ գալ այս ժողովին եւ գոնէ մի քանիսի ներկայութեամբ իր ասելիքները ասել։ Զինուորներին չընդունելու հարցը բոլորովին ուրիշ է։ Եփ[րեմ]ին այնպէս են հասկացրել, որ Սիմոնն ու Արշակը դաւադրութիւն են կազմել Քեռու կեանքի դէմ։ Ես հեռագրեցի նրան, որ քեզ խաբել են, որ չպէտք է հաւատալ պարսիկներին։ Նրա խռովականութիւնը այդ կէտի վրայ է։ Ես չեմ ենթադրում, որ Արշակի մտքից նոյնիսկ անցած լինի դաւադրութիւնը։ Ես առաջարկում եմ թողնել այդ հարցը մինչեւ որ Եփ.ն էլ կը վերադառնայ. այն ժամանակ ընկերական դատ կը հաստատենք, դաւադրութեան հարցը մանրամասն քննութեան կ'ենթարկենք. եթէ նա չի սխալուել, ուրեմն շատ պարզ է, որ Սիմ[ոնն] եւ Արշակ կը պատժուեն. հակառակ դէպքում խնդիրը բոլորի համար պարզ կը լինի։

Եփ[րեմ] հեռագրում է, որ եթէ Զոհրաբ խանը չի ուզում լսել իմ հրահանգը, թող հրաժարուի։ Ես նրան հեռագրեցի կծու կերպով թէ Զ[ոհրաբ] խ[անը] հրաժարւում է թէ ոչ, այդ իմ գործը չէ. նա քո ենթադրեալն է, ինքը կ'իմանայ, բայց քո հրահանգը գահավէժ է։

Ղեկտոր։— Հեռագրում ակնարկ կայ, որ իբր թէ նրանք հրահանգուած են եղել Թեհրանից։ Ակնարկը շատ պարզ է. նա Կ.Կ.ին է մատնանշում եւ ինչ որ նազմիէներով[121] ուզում է նրանց վախեցնել։ Բայց յայտնի է որ Դաշ[նակցութիւնը] եւ նրա Կ.Կ.ները Եփ[րեմ]ներից աւելի մեծերից էլ չեն վախեցել եւ չեն վախենայ։ Ո՞վ է Եփ[րեմ]. նա կարգադրում է ձերբակալել դաշ[նակցական]ներին. դրանով ինչ է ցոյց տալիս։ Միթէ՞ նա չգիտէ, որ Զ[ոհրաբ] խ[ան] դաշ[նակցական] է եւ հէնց դաշ. աւանդութիւնների հիման վրայ չի կարող դաշ.ին ձերբակալել։ Այդպիսի վերաբերմունքը խանգարում է համերաշխութեան գործը։ Հիմա երբ ակնարկւում է Կ.Կ.էին ուրեմն Եփ[րեմ] շարունակում է նրան կողմ ճանաչել։ Կ.Կ.էն անցեալը մոռացած է համարում եւ այստեղ եկել է գործունէութեան նոր ծրագիր մշակելու, համերաշխ գործունէութեան պրոգրամ կազմելու։ Մեր համերաշխութեան ձեռնարկից յետոյ, տխուր կէտը հէնց այդ կողմ ճանաչելու շարունակութեան մէջ է։ Այս ժողովը եղած նախկին հաշիւները մի կողմն է գցել եւ մտածում է գործերը այսուհետեւ աւելի լաւ տանել։ Հեռագրի վերջին կէտը նշանակում է, որ այս ժողովները ոչինչ են իրա համար. այդտեղ արդէն խնդիրը աւելի է բարդանում։

Առաջարկւում է կարդալ հեռագիրը։ Կարդացւում է։

Համադանից 30-IV-1912

Յովսէփ Մ[իրզայեան] եւ
Դ[ոկտոր] Ս[տեփանեան]

Սիմէոն, Արշակը որ Արաղումն է եղել, ամենադաւաճանօրէն Քեռու անձին դէմ դաւադրութիւն են կազմած եղել. ժողովները որ պարսիկների հետ են ունեցել արդէն փաստ է – Քեռին ազատուել է շնորհիւ պարսիկների, որ չեն համարձակուել Քեռուն ձեռք տալու։ Այդ դաւաճանութեան համար նրանք հրահանգ են ստացած եղել Թեհրանից – եթէ Սիմոնին ու Արշակին պատժելուց մի որեւէ միջամտութիւն լինի – միջամտողը գործակից կը նկատուի – կոմիտէի եւ Յով[սէփ]ի հեռագիրները բանակում չի կարդացուել որովհետեւ բանակը դրան պէտք չունի – իմ բանակում այլեւս դաւաճաններ չկան։

ԵՓՐԵՄ

Տիգրան [Մնացականեան]։— Հեռագիրը պարզ ցոյց է տալիս, որ նա մոռացել է բոլոր սրբութիւնները. ես նրան այլեւս դաշն[ակցական] չեմ համարում։ Մարմինը նկատւում է իբր դաւաճան, քանի որ շատ պարզ է, որ միջամտութիւնը մարմնի կողմից կը լինի։ Հեռագիրները չեն կարդացուել բանակում. ուրեմն նրա համար ոչինչ մարմինը եւ այս ժողովը։ Հէնց այդ պատճառներով մենք այլեւս չենք կարող նրա հետ գործ ունենալ։ Այս պայմաններում ուրեմն աւելորդ է այս ժողովը։

Այսպիսի ժողովները բացասականից բացի ուրիշ արդիւնք չեն տայ. եթէ ժողովը շարունակուի դրութիւնը աւելի կը բարդացնի։ Նա ոչ թէ պիտի կարգադրէր որ ընկերներին ձերբակալեն, այլ գրէր այս ժողովին որ նրանց ի նկատի կ'ունենայ մինչեւ որ ընկ[երական] դատարան կը նշանակուէր։

Վերջում առաջարկում է ժողովի կողմից հեռագրել Բիւրոյին, որ նրա անդամներից մէկը մեր հաշուով գայ Թեհ[րան]։

Նեռսէս [Նեռսէսեան]։— Մենք մի սխալ ենք ունեցել որ հեռագիրը տուել ենք Կ.Կ.ի ստորագրութեամբ։ Եփ[րեմը] չի ճանաչում Կ.Կ.ին եւ նրան ինքնակոչ Կ.Կ. է համարում. հեռագիրը պիտի լինէր այս պատասխանատու ժողովի կողմից։ Առաջարկում եմ նորից հեռագրել այս ժողովի կողմից։

Բացատրում են, որ հեռագիրը թէեւ Կ.Կ.ի ստորագրութեամբ՝ եղել է յանուն այս ժողովի։

Յով. Յ[ովհաննիսեան]։— Մինչեւ այժմ Եփ[րեմը] միշտ մեղադրում էր մարմնին, որ նա խոչընդոտ է հանդիսանում, որ չի ուզում համագործակցութիւն եւայլն։ Այս հեռագիրը եւ այսպիսի վերաբերմունքը ցոյց են տալիս, որ մեղքը Եփ[րեմ]ի կողմն է եղել. դրանով նա չի ուզում ճանաչել եւ այս ժողովը հակառակ այն բանին, որ գնալուց առաջ ասել է թէ կ'աշխատեմ ենթարկուել այս ժողովի հրահանգներին։

Բողոքում է դաշն. գործիչներին ձերբակալելու հրաման տալու դէմ։

Տիգրան [Մնացականեան]։— Նրա հեռագիրը ցոյց է տալիս, որ նա դաշ[նակցական] չէ, որ այս ժողովը անիմաստ է։ Հիմա երբ չի ուզում ճանաչել այս ժողովը, վաղը կարող է կարգադրել որ այս ժողովի նախագահին կամ անդամներին էլ ձերբակալեն։

Յով. Մ[իրզայեան]։— Խօսակցութիւնները սխալ ուղիի վրայ էք դրել. նրա զայրոյթը այդ դաւադրութեան դէմ է։ Երեւում է որ նրան այնտեղ բոլոր[ով]ին ուրիշ գոյներով են ներկայացրել եւ զայրացրել են։ Նրա հեռագրում ոչ մի ակնարկ չկայ մասնակցելու կամ չմասնակցելու մասին, ոչ էլ ակնարկ կայ Կ.Կ.ի հասցէին։

Ալեք[սան Խաչատրեան]։— Ի հարկէ կայ. եթէ Թեհ[րան] հրահանգողը անհատ լինէր, նրան էլ կը հրամայէր որ ձերբակալեն։

Ղեկտոր։— Ի՞նչ է նշանակում այս, ինչպիսի՞ անուն պիտի տալ այսպիսի վարմունքին։ Եթէ նոյնիսկ հրահանգը Կ.Կ.էն տար, Եփ. ի՞նչ իրաւունք ունի նազմիէով վախեցնել Կ.Կ.ին։ Նա կարող է այդ իրաւունքը բանեցնել իր զինուորների վերաբերմամբ, բայց ոչ կազմակ[երպութեան]։ Հեռագրի վերջում ասում է որ Կ.Կ.ի եւ Յով.ի հեռագիրները չկարդացուեցին բանակում։ Մա ինչպէ՞ս պիտի բացատրել. չէ՞ որ սրանով շարունակւում են անհատական խնդիրները տիրող տեղ գրաւել։ Մենք ոչ մի անհատական բան չենք ունեցել Եփ.ի դէմ։ Մենք խօսել ենք բացարձակ եւ այդ՝ յոգուտ կազմակ[երպութեան] պրեստիժի։ Մեր հակառակութիւնը եղել է սկզբունքային, բայց միշտ աշխատուել է բացատրուել անհատական։ Անհատապէս ես մօտիկ եմ եղել Եփ[րեմ]ի հետ, մտերիմ ընկեր, իսկ սկզբունքային հարցերում հակառակորդ, որովհետեւ ես ի նկատի եմ ունեցել միայն Դաշ[նակցութեան] շահերը։ Վերջապէս պէտք է այդ անհատական-անձնական բաները վերանան, խնդիրներին մօտենանք միայն գործի տեսակէտից։

Յով. Մ[իրզայեան]։— Այս ժողովին պիտի անդամակցէին Եփ[րեմը], Քեռին։ Ես հաւատացած եմ, որ այս ժողովը իսկական համերաշխական կը լինէր եւ մեծ արդիւնքներ կը տար, եթէ բոլորը ներկայ գտնուէին եւ այրող խնդիրները դէմ դիմաց ասուէին եւ բացատրուէին։

Ալեք[սան Խաչատրեան]։— Բայց չպէտք է նոր բարդութիւններ ստեղծել։

Յով. Մ[իրզայեան]։— (շարունակում է) Ես չեմ զարմանում նրա զայրոյթի վրայ, որ նախքան մեր խօսքին սպասելը այդպէս զայրանում է։ Ով լինէր կարծում եմ այդպէս կ'անէր։ Ով գիտէ նրան այնտեղ ինչեր են ասել։ Ես գտնում եմ որ այս ժողովը անհրաժեշտ է եւ պէտք է շարունակուի։ Ես ոչ մի ջանք եւ աշխատանք չեմ խնայի որ համերաշխութիւնը կայանայ։ Չպէտք է այդքան շտապել եւ փութկոտ լինել. մի քիչ համբերութիւն. պէտք է ժամանակ տալ, որ իմ նամակներս հասնին Եփ[րեմ]ին։ Ես երկար գրել եմ եւ նորից կը գրեմ։ Ես հաւատացած եմ, որ եթէ Եփ[րեմը] այստեղ լինէր, անպայման համերաշխութիւնը կը կայանար։ Համաձայն եմ, որ ժողովիս կողմից հեռագրուի Բիւրոյին եւ առաջարկուի որ նրա անդամներից մէկը անպատճառ գայ այստեղ։

Նեռսէս [Նեռսէսեան]։— Իրաւասու մարմնի գործը դեռ չի վերջացել. մինչեւ Բիւրոյի անդամի գալը պէտք

է շարունակենք այս ժողովները։ Եփ[րեմ]ին զայրացրել է Քեռու դէմ եղած դաւադր[ական] գործը. ուրիշ ոչինչ։ Մէկ էլ նա չի ճանաչում կ.կ.ին։ Ուստի պէտք է որ այս իրաւասու մարմնի կողմից հեռագրուի նրան, թէ այդ դաւադրական խնդրի առթիւ քննութիւն կը կատարուի եւ երբ կը տեսնենք որ նա չի ուզում ճանաչել եւ այս ժողովը, այն ժամանակ մենք ուրիշ կերպ կը վարուենք։

Ալեքսան [Խաչատրեան].— Բայց հեռագիրը միայն դաւադ[րութեան] համար չէ. ինչու է արհամարհում ժողովիս տուած հեռագիրները եւ չի կարդում բանակում։

Արշակ.— Դեռ ես Սուլթանաբադ էի, որ Եփ[րեմը] հեռագրել է Քեռուն թէ դաւադրութիւն է կազմուում։ Նրա կարգադրութիւնը դիկտատորական է։ Ես եմ այժմ դատ պահանջում։ Եթէ մի որեւիցէ ռուս նահանգապետ ինձ ձերբակալելու կարգադրութիւն անէր, ես ուրախութեամբ կը տանէի, բայց ինչ ասել, երբ այդ Եփ[րեմ]ն է, որ մինչ այժմ կուսակց. անդամ է նկատուել։ Նա պէտք է միայն մարմնիս հեռագրէր այդ մասին եւ ոչ թէ ոստիկանութեան։ Եթէ ես Սուլթանաբադում չլինէի, չգիտեմ թէ ինչ կը լինէր այդ շրջանը։ Ես անհատական ոչինչ չունեմ։ Այն օրը երբ դատ կը լինի ես բացատրութիւն կը տամ։ Ես դատապարտում եմ Եփ[րեմ]ի այդ քայլը։ Եթէ նա ցանկանում է անարխիա, ես աւելի անարխիա կը ստեղծեմ ու այնպիսին, [որ] երկինքը կը լացի։ Եթէ նա չի լսում այս ժողովին, ես էլ կարող եմ չլսել եւ ինչ ուզեմ անեմ, անարխիա ստեղծեմ։

Ալեքսան [Խաչատրեան].— Ինձ թւում է նախ Արշակի դատը պիտի տեսնենք, յետոյ ժողովը շարունակենք։

Ցովս. Մ[իրզայեան].— Բայց մենք նրան մեղաւոր չենք ճանաչում, կասկածում եմ այդ մասին նոյնիսկ Քեռին լուր չունի։

Արշակ.— Եփ[րեմ]ի այդ կարգադրութիւնը վերագրում եմ միայն անհատական վերաբերմունքի, ուրիշ ոչինչ։

Ցովս. Մ[իրզայեան].— Ես Եփ[րեմ]ից քո մասին ոչինչ չեմ լսել. վերջերում նա աւելի լաւ էր տրամադրուած քան առաջ։ Ցետոյ նկատի ունեցէք որ Եփ.ի ներկայ Համադանում ունեցած եւ այստեղ եղած տրամադրութեան մէջ 10 անգամ տարբերութիւն կայ։ Այստեղ նա համաձայնում էր։ Դաւադր[ութեան] հարցը նրան խիստ զայրացրել է։

Ես առաջարկում եմ ժողովի իսկական նպատակին դիմենք, չգրգռենք տրամադրութիւնները եւ երբ Եփ[րեմ] ու միւսներն էլ գան, կ'առնենք ժողովիս մէջ եւ համերաշխութիւնը անսայթաք առաջ կը գնայ։

Արշակ.— Հրաժարւում է ժողովից, մինչեւ իր դատի վերջը։

Դոկտոր.— Եթէ մէկի մեղադրանքով ժողովից հեռանան, ես էլ կարող եմ Եփ.ին մեղադրել որ նա ժողովին չգնայ։ Վաղն էլ մէկ ուրիշը մի երրորդին կը մեղադրի, յետոյ ի՞նչ կը լինի։ Այս դատն անհրաժեշտ է եւ կը լինի։

Կասկած է յայտնում, որ պարսկական մի ինտրիգ է որպէսզի խորխորատ բացուի մեր մէջ եւ եղբայրասպան կռիւ սկսի։

Ցովս. Մ[իրզայեան].— Համաձայն եմ դոկ[տոր]ի հետ եւ առաջարկում եմ հանգստութեամբ գործերը առաջ տանենք։ Հեռագիրը համարենք միջադէպ։ Ես նամակներ կը գրեմ եւ ամէն բան կը բացատրեմ։ Երկպառակտումը մի կողմ վանենք եւ համերաշխ[ութիւնը] առաջ տանենք։ Իմ կարծիքով ամէն բանից առաջ պէտք է համերաշխութիւն լինի, համերաշխութիւն, առաջ քան ամէն բան, նոյնիսկ Դաշ[նակցութեան] ծրագրի այս կամ այն կէտը, սկզբունքի մի մասը։

Ցով. Ց[ովհաննիսեան].— Ես երբեք չեմ ընդունում այդպիսի համերաշխութիւնը։ էլ ի՞նչ կը մնայ մէջտեղ եւ ինչ միտք կ'ունենայ համերաշխ[ութիւնը] առանց ծրագրի եւ սկզբունքի այս կամ այն կէտին։

Ցովս. Մ[իրզայեան].— Խօսում է հայերի Պարսկ[աստանում] խաղացած դերի եւ նրանց թշնամիներ շատ ունենալու մասին, չեշտում պարսիկ զանազան տարրերի դէպի հայերն ունեցած ոխի մասին, եւ աւելացնում.— Ես նկատուել եմ Եփ[րեմ]ի կուսակից. այո՛, այդ մարդուն յարգում եմ եւ միշտ։ Մեղադրել եմ Եփ[րեմ]ի դէմ եղած մարմնի գործունէութիւնը, եւ այժմ էլ մեղադրում եմ, բայց վճռել եմ, որ ամէն կերպ աշխատեմ համերաշխութիւնը գործադրել։

Դոկտոր.— Մեր վէճերի մեծ մասը սկզբունքային է, կազմակերպական, որոնք դժբախտաբար համարուել են անձնական։ Մենք կազմակերպ[ութեան] պրեստիժի համար ենք աշխատել։ Չեմ կարծում այս ժողովին մասնակցող որեւէ մէկը անկեղծօրէն համերաշխ[ութիւն] գործադրելու չաշխատի։ Իմ կիրքս՝ դաշնակցական կիրք է եւ ոչ անհատական եւ երբ ես կրքով եմ խօսում, այդ միայն կազմ[ակերպութեան] շահն է խօսում իմ մէջ։ Ես խիստ ուրախ էի սկզբի ժողովներում, որովհետեւ բաց էինք խօսում, ներսում ինչ որ կար արտայայտում էինք։ Տիգ[րան]ի խօսքերը բոպէի ազդեցութեան տակ ասուեցին, այնպէս ինչպէս երեւի Եփ[րեմ]ի հեռագիրը։ Համակարծիք եմ որ այս ժողովը շարունակուի, մանաւանդ որ Բիւրոյի կարծիքն էլ դեռ չգիտենք, նամակը ստանանք տեսնենք։ Ցով[սէփը] ինքը պիտի ուղղացնի գործերը եւ դրութիւնը պարզի Եփ[րեմ]ին։ Մեր թիւրիմացութիւնները վերջացրել ենք, մեծ գործեր ենք սկսել։

Տիգրան [Մնացականեան].— Զինուորների հետ ինչպէս ենք վարուելու. հրահանգուած է եղել նրանց չկրուել, հիմա հրահանգում ենք կռուել. իսկ նրանք չեն ընդունում բանակում։

Դոկտոր.— Ես հաւատացած եմ, որ խնդիրը կը հարթուի եւ այս զինուորները կը գնան։ Նրանց խնդիրը այս ժողովը ինքը կը վերցնի. ժողովը հրահանգել է իր անդամներից մէկին — Ցով[սէփ]ին, որպէսզի յաջողեցնի այդ գործը։

Չպէտք է բացակայութեամբ դատել Եփ[րեմ]ին, պէտք է մի քիչ սպասել, Քեռին կարող է թիւրիմացութեան մէջ լինել։

Որոշւում է անցնել օրակարգի խնդիրներին։

Ցով. Մ[իրզայեան].— Պատմում է իր խօսակցութիւնը արտաքին գործ[երի] մինիստրի հետ ազատութիւններ տալու մասին։ Մինիստրը պատասխանում է որ մամուլի ազատութիւն կայ, միայն թերթ հրատարակող չկայ. թող հրատարակեն, արգելք եղող չկայ, միայն պիտի զգուշանան մի քանի բաներից, ինչպիսիք են՝ արտաքին քաղաք[ականութեան] մասին վիրաւորիչ լեզու բանեցնելուց եւ գրգռիչ, ժողովրդին յուզող բաներ գրելուց։ Ցով[սէփն] առաջարկել է այդպիսի յայտարարութիւն տալ, սակայն մինիստրը քիչ մտածելուց յետոյ աւելի յարմար է գտել իր [մօտ] կանչել «Աֆթաբ» թերթի խմբագրին եւ նրա հետ ինտերվիու ունենալ թերթում հրատարակելու համար։ Ժողովների ազատութեան համար էլ յայտնել է որ ազատ են, միայն թէ կռիւ չլինի ժողովում եւ գրգռիչ ընթացք չունենայ։

Ժողովականներից յայտնեցին, որ բոլոր տպարաններին 3 անգամ հարկադրուած է ոչինչ չտպել առանց ցենզուրի[155ա] գիտութեան. գուցէ մինիստրը այդ բանից լուր չունենայ։

Դոկտոր.— Դա երկերեսանի քաղաքականութիւն է — ցոյց տալ որ այդ բոլորը Եփ[րեմ]ի ճնշումն է. քանի որ Եփ[րեմը] քաղաքում չէ, ազատութիւնները տալիս են, իսկ երբ նա կը գայ, իսկոյն յետ կը վերցնեն։ Դա կարող է պրովոկացիա լինել։ Երեւի չուտով Եփ[րեմ]ն էլ կը համոզուի, թէ ովքեր են իր բարեկամներն ու ընկերները։ Անկեղծ ընկերները նրանք են, որ բաց արձակ խօսում են, եւ ոչ թէ նրանք որ հիմա շրջապատում են նրան եւ քծնում։ Իսկական բարեկամն ու ընկերը չի քծնում այլ քննադատում է։

Կարդացւում է մինիստրների նամակի թարգմանութիւնը։

Ցովս. Մ[իրզայեան].— Առաջարկում է գոհացուցիչ համարել պատասխանը։

Ցով. Ց[ովհաննիսեան].— Շեշտում է նամակի մի քանի կէտերի վրայ եւ գտնում ոչ-գոհացուցիչ, քանի որ մինիստրը փախուստի դռներ է թողել։

Դոկտոր.— Մենք ուզում էինք իմանալ թէ ներկայ կառ[ավարութիւնը] սահմանադրակա՞ն է թէ ոչ։ Հիմա այդ պատասխանով իմացանք որ այդ ոգով է ուզում առաջնորդուել։ Այդքանն էլ արդէն բաւական է։ Մեր նամակի ճիշտ պատասխանն է։

Վերջում ժողովի անունից հետեւեալ հեռագիրը տրուեց Բիւրոյին

Կ. Պոլիս, Ազատամարտին.

Համերաշխութիւնը հիմնաւոր դարձնելու համար, յանուն ձեր հրահանգով կազմուած պատասխանատու ժողովի, առաջարկում ենք անպայմանօրէն ուղարկել ձեր լիազօրուած ներկայացուցիչը, նոյնիսկ մեր ծախքով։

Պատասխանատու ժողովը փակուեց 9.5 ժամին։

Մինիստրների նամակը

Ջամադիւլ Աւալ 23-22, Սօյղի 1320

Դաշնակցութեան Թեհրանի Կեդրոնական Կոմիտէին,

Յարգելի կոմիտէիդ Մայիս երեք[?] թուակիր հաղորդագրութեան պատասխանելով յայտնում ենք, որ Պարսկաստանի մինիստրական մարմինը հաճութեամբ գնահատում է այն բարեացակամ դիտաւորութիւնը, որով Դաշնակց. կազմակերպութիւնը կուսակից է հանդիսացել Պարսկաստանի անկախութեան, ամբողջութեան, Սահմանադրութեան եւ կարգապահութեան, եւ ափսոսում է, որ վերջերս, ինչպէս գրում էք, կասկածներ են ծնուել մարտիկների մէջ։

Այս կասկածները վտարելու համար յայտնում ենք, որ (ինչպէս նաեւ կոմիտէն ակնարկել է իր նամակի մէջ) Ան-

155ա.- Գրաքննիչ վարչութեան։

կախութիւնը, Սահմանադրութիւնը եւ կարգապահութիւնը հաւաքաբար եւ անանձնատ կերպով պիտի կազմեն ամէն ազգանուէր կառավարութեան կէտ նպատակը: Եւ եթէ մի ժամանակ անհատական ազատութեան չարաչար գործածութիւնը սպառնայ վտանգել ընդհանուր ազգի քաղաքական ազատութիւնը եւ յանուն երկրի ապահովութեան, սահմանադրական ազատութիւնը ժամանակաւորապէս սահմանափակուի, այդպիսի սահմանափակումը չպէտք էր նկատել որպէս մի քայլ ընդդէմ սահմանադրութեան, մանաւանդ որ սահմանափակումը հիմնուած լինի այն զինուորական օրէնքի վրայ, որը վաւերացուած է Ազգային Խորհրդարանի կողմից:

Ձեր յարգելի կուսակցութիւնը եւ Պարսկաստանի բոլոր կողմնակիցները պիտի վստահ լինին, որ այժմեան կառավարութեան նպատակն է Պարսկաստանի անկախութիւնը, ազատութիւնը եւ սահմանադրական հիմունքը պահպանել. բայց փորձով իմացել ենք, որ աչալուրջ վրճռականութեան եւ զգուշաւորութեան չսահմանուելն [?] կարող է նրա հիմքին վնասել եւ ակներեւ վտանգ պատճառել: Այդ տեսակէտից եթէ ազատութիւնը՝ անհրաժեշտութիւնից ստիպուած սահմանափակուել է, դա արուել է ի նպաստ ազատութեան, եւ եթէ սանձարձակութիւնը եւ փութկոտութիւնը քաղաքական գաղափարների մէջ չափաւորուեն, երկրի առաջդիմութեան եւ պաշտպանութեան համար է դա. եւ սխալ, վնաս եւ վտանգ՝ որ հասնի երկրի անկախութեանը հիմունքներին. նրա յանցանքը կը բարդուի այն անձանց վրայ, որոնք գործ ածելով ականջ խաբող բաների եւ օգտուելով ժողովրդի տգիտութիւնից եւ անիրազեկ լինելով – մի ժամանակ՝ երբ իրական միաբանութիւն եւ համերաշխութիւնը միայն կարող են դարմանել երկրի դժբախտութիւնները – ներքին պառակտում եւ բաժանումն են թաքալերում:

Այս նախաբանից յետոյ, ի պատասխան յարգելի մարմնիդ երկու հարցերին, յայտնում ենք, որ նախ եւ առաջ կառավարութիւնը սրտանց վճռել է – յայտարարել ընտրութիւնները եւ գումարել ազգային խորհրդարան. ցաւում է այն յապաղման համար, որ տեղի է ունեցել. իբրեւ [?] պարտաւորութիւն, կառավարութեան նպատակն է առաջին կարելի բոպէին, այսինքն մի ժամանակ երբ երկրի դրութիւնը այնպէս լինի, որ Թեհրանից եւ նահանգներից կարելի լինի բաւական թուով պատգամաւորներ ընտրուեն, անմիջապէս ընտրութիւնները յայտարարէ եւ ձեռնարկէ գործնականին:

Երկրորդ.– Երբ որ ընտրութիւնները կը յայտարարւին եւ կ'անցնին գործնականապէս, կառավարութիւնը՝ անձի անձեռնմխելիութիւնը, մամուլի եւ ժողովների ազատութիւնը մինչեւ այն աստիճան որ հարկաւոր է ընտրութիւնների կանոնաւոր ընթացքի համար,– կը հաստատէ: Կ'արգելի այնպիսի քայլեր, որ կարող են սահմանափակել ընտրողների ազատութիւնը, որպէսզի ընտրութիւնները կատարուին կատարեալ ազատութեամբ եւ Ազգային խորհրդարանի անդամները լինին ազգի իսկական ընտրեալները:

[*Ստորագրութիւններ մինիստրների*]

Մինիստր նախագահ՝ Վասուղը Դովլէ
Ներքին գործոց՝ Ղաւամը Սալթանէ
Պատերազմի՝ Սարդար Մոհթալամ
Ֆինանսների՝ Մոհթալամ Սալթանէ
Լուսաւորութեան՝ Հաքիմով Մուլք

ԲԱԶՈՒԿԵԱՆ
ԽՈՐԷՆ
ԶԱՐԵՀ[156]

156.- Խառն ժողովի երրորդ նիստի արձանագրութիւնը մեծ մասամբ դժուար, իսկ տեղ-տեղ գրեթէ անընթեռնելի է: Վերջին մասը յատկապէս, այսինքն պարսկական կառավարութեան պատասխան նամակը, ըստ երեւոյթին նիստի ընթացքին, տեղւոյն վրայ թարգմանուած ըլլալով, սեւագրութեան երեւոյթ ունի՝ տեղ-տեղ ջնջումներով եւ սրբագրութիւններով, որոնք աւելի կը դժուարացնեն ընթերցումը:

ՆԻՍՏ IV

Շահատան, 4 Մայիս 1912

Ժողովը բացուեց ժամի 7.30ին։ Բացակայ էին Նիկ[ոլ Աղբալեան] եւ Ալեքսան։

Կարդացուեց անցած 3 ժողովների արձանագրութիւնները եւ որոշուեց վերամշակել նրանց խմբագրութիւնը։ Օրակարգին անցնելով ընտրուեց դիւան Յ. Միր[զայեան]՝ նախագահ եւ Յով. Յ[ովհաննիսեան]՝ քարտուղար։

Յովս. Միր[զայեան].— Զեկուցում է իր բանակցութիւնների մասին, որ վարել է հեռագրով Եփ[րեմ]ի հետ։ Նա աւելացնում է, որ հեռագրել է թէ Պատասխանատու ժողովը վճռել է ընկերական դատ Արշակի եւ Սիմոնի վերաբերմամբ, ուստի թող այնտեղ նիւթեր հաւաքեն եւ երբ երկու կողմերն էլ ներկայ կը լինին ընկ[երական] դատ կը լինի։ Այդ ընդունուել է Եփ[րեմ]ի կողմից եւ նրանց ձերբակալելու կարգադրութիւնը յետ է վերցուել։

Յովսէփը առաջարկում է ժողովին հաստատել իր այդ քայլերը։

Յով. Յ[ովհաննիսեան].— Ինչպէս նրանց՝ մի կողմին նիւթեր հաւաքելու առաջարկ է եղել, պէտք է սրանց՝ միւս կողմին էլ նոյնպիսի առաջարկ պիտի արուի։

Յովս. Միրզ[այեան].— Ես խնդրում եմ խօսել իմ արած քայլերիս մասին — լաւ եմ արել թէ վատ, ժողովը հաստատո՞ւմ է այդ։

Տիգ[րան Մնացականեան].— Ժողովի կողմից հրահանգուած էր Յովս.ին, որպէսզի աշխատի յարաբերութիւնները հարթել։ Երեւում է որ նա ջանք չի խնայել այդ ուղղութեամբ։ Պէտք է դրական գործ համարել այն, որ ընկերների գործը յետ է առնուել Նազմիէից[121] *եւ ընկ[երական] դատը յաջողեցրել է։*

Ժողովը իր համաձայնութիւնն է յայտնում Յով.ի արած այդ գործունէութեան մասին եւ գոհունակութիւն յայտնում նրա աշխատանքից։

Յովս. Միր[զայեան].— Ես ամէն ջանք ու ճիգ գործ կը դնեմ համերաշխութիւնը ստեղծելու համար, համերաշխութիւնը, որին հէնց անցեալ անգամ ես ցանկացայ ինձ ցոյց տալ ամենաուժեղ կողմնակից։ Երէկ առաւօտից մինչեւ ժամի 1-ը ես հեռագրատանն էի Եփ.ի հետ խօսելու համար։ Սկզբում իմ տուած հեռագրներին, իմ տեսակէտով վատ պատասխան ստացայ, բայց վերջը ստացայ հետեւեալ հեռագիրը, որ խիստ ուրախալի է։ Կարդում է հեռագիրը.

Յ. Միր.

Շատ ուրախ եմ, որ Պատասխանատու ժողովը աշխատում է անկեղծօրէն գործելու. ես ինձ դնում եմ այդպիսի մի ժողովի տրամադրութեան տակ, իմ ցանկութիւնը միշտ այդ է եղել, բայց ինձ չեն ուզեցել հասկանալ: Նախանձը երբեմն կուրացնում է մարդկանց, գոհ եմ որ անկեղծ մարդիկ մտնելով գործի մէջ կազմակերպութեան վարկը պիտի բարձրացնեն, որ այնքան թեթեւամտօրէն գցել էին:

Ոչ ոքի պէտք չունեմ, եթէ ինձ դաշնակցական են համարում, բնականօրէն իմ բանակս էլ դաշնակցական է. պէտք չէ որ մի խումբ անպէտքներ ուղարկեն: Երէկ 50 հոգու զինաթափ անելով հեռացրել եմ. քիչ մարդով ես աւելի մեծ գործ կ'անեմ, միամիտ եղիր, շնորհաւորում եմ Պատասխանատու մարմնի յաղթութիւնը:

ԵՓՐԵՄ[157]

Յովս. Միր[զայեան].— Ես խիստ գոհ եմ այս հեռագրից։ Սրա մէջ մի երկու անհարթութիւններ կան, բայց ես վստահ եմ, որ մի երկու շաբաթից, գուցէ քիչ ժամանակակից այս անհարթութիւններն էլ հարթուին։ Իսկ երբ Եփ[րեմը], Քեռին կը գան, այն ժամանակ աւելի լաւ կը լինի։

Դավթաք.— Առաջին եւ երկրորդ հեռագրների մէջ ոգիի մեծ տարբերութիւն կայ եւ անշուշտ այս ամէնքիս ցանկացած արդիւնքն էր. շնորհաւորել[ի] է։ Միայն անկեղծ լինելու համար պէտք է որոշ դիտողութիւններ անել եւ ապագայի բարդութիւններից խուսափելու համար պիտի արտայայտուենք։ Մի երկու թեթեւ ակնարկները անցեալ ցաւի ակնարկներ են. պէտք է աշխատել վերջացնել այդ կէտերը։ Անցեալը սխալ է թէ ոչ, այդ ուրիշ հարց է։ Այս ժողովը յանձնարարուած է որ մեր անելիքների մասին անաչառ որոշումներ տայ։

Ասում է — նախանձը կուրացնում է մարդկանց — Եփ[րեմը] պիտի համոզուէր, որ նախանձը մեր կուսակց. կեանքի մէջ դեր ունենալ չի կարող։ Մենք արտայայտւում ենք չմտածելով, որ մեր խօսքերը անհաճոյ կը լինին սրա կամ նրա համար։ Ես ակնարկ եմ համարում նաեւ «անպէտք» խօսքը։ Զմասնակցութեան եւ մասնակցութեան խտրութիւնն է այս, որ չպիտի լինի։ Մասնակցողների մէջ շատ անպէտքները կան, իսկ չմասնակցողների մէջ պիտանիները։ Ես չեմ պնդում որ ստիպենք Եփ[րեմ]ին, որպէսզի ընդունի նրանց։ Ինքը կռուի դաշտումն է, ինքը լաւ գիտէ պէտք ունի թէ ոչ. ուրեմն պէտք չի զգում նոր ոյժերի, մանաւանդ որ բիւջէի էլ

157.- Եփրեմի այս հեռագիրը, լատինատառ հայերէնով, Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ պահուած է 590-75 համարով:

պակաս կայ, նա երեւի ստիպուած է պակասեցնելու իր բանակի անդամները։

Ես կարծում եմ, որ հեռագրի այս պատասխանը յաջող է եւ մեր ընկերոջ ջանքերը յաջողութեամբ են պըսակուել։

Տիգրան [Մնացականեան].— Հեռագիրը գոհացուցիչ է, բայց դա ես խօսք եմ համարում, համերաշխութիւնը գործնականի մէջ կը տեսնուի. ապագային թողնելով համերաշխութեան կատարեալ լինելը, որին ես յոյս ունիմ, առաջարկում եմ անցնել զինուորների խնդրին։

Նախագահ.— Թողնենք դա այլ հարց է։

Ալ. Խաչ[ատրեան].— Ոչ, զինուորների խնդիրը կապ ունի։

Նախագահ.— Նախ առաջինը, յետոյ զինուորների հարցը։

Զօրա [Սագինեան].— Ուրախալի է այդ հեռագիրը։ Միայն ժողովը մի բան պիտի նկատի ունենայ, այդ այն է թէ այդ բանակցութիւնների պատասխանատուութիւնը այս ժողովը պիտի վերցնի թէ թողնում է միայն Ցովսէփի վրայ։ Պէտք է խմանալ թէ Ցովսէփը ինչպէս է ներկայացրել այս ժողովը, ինչպիսի բանակցութիւն է վարել։ Յետոյ, այս Պատ[ասխանատու] ժող[ովը] ինչպէ՞ս պիտի առաջնորդուի, թէորիապէս եւ իր որոշումներն ու դիրեկտիւները պիտի տայ անշեղ այդ սկզբունքներից առաջնորդուելով։ Եթէ այդպէս լինի, եթէ Եփ[րեմ]ին ստիպելու լինենք որ ոչ մի շեղում չլինի Դաշ[նակցութեան] տակտիկի եւ գործելակերպի եւ սկզբունքների մէջ, նա կարող է չընդունել այդ եւ ապա կը ստեղծուի նորից հին դրութիւնը — հակառակութիւնը։

Ժողովը այս համերաշխութիւնը ողջունելուց յետոյ, աշխատելու է որ այս համերաշխ[ութիւնը] պահպանուի թէորիապէս եւ գործնականապէս։ Պէտք է մշակել թէ ինչ ձեւի յարաբերութիւն պէտք է ունենալ Եփ[րեմ]ի հետ եւ ինչ ձեւի դիրեկտիւներ տալ։

Ցով. Ցով[հաննիսեան].— Եփ[րեմը] այս ժողովի անդամ է, նա ընդունում է, որ կ'ենթարկուի այս ժողովի որոշումներին։ Իւրաքանչիւրը, որ մասնակցում է այս ժողովին եթէ չուզի ենթարկուել, ուրեմն կը հեռանայ եւ այս ժողովը իր դիրքը կ'որոշի նրա դէմ։

Տիգրան [Մնացականեան].— Եփ[րեմը] այս ժողովի անդամ է։

Գործելակերպի մշակումը մարմնին է վերաբերում. մարմիններն են, որ թէորիաները պատուաստում են իրականութեան հետ եւ աշխատում նրանց կիրարկել կեանքի մէջ։ Հէնց այդպէս էլ այս ժողովը պիտի որոշի իր անելիքները։ Եփ[րեմը] այս ժողովի անդամ է, ուրեմն պիտի ենթարկուի այս ժողովի որոշումներին, հակառակ դէպքում, չպէտք է նրան ճանաչել այս ժողովի անդամ։ Այս ժողովն է ղեկավարում Պարսկ[աստանում] ունենալիք մեր գործերը, հետեւապէս չկայ Եփ[րեմը] կամ ուրիշ, այլ այս ժողովը։

Ցովս. Միր[զայեան].— Սա երկար խօսակցութիւն է։ Սա մի հարց է, որ պէտք է ապագային մշակել։ Այդ խընդիրը թողնենք ուրիշ ժողովների, այժմ հարց է տրուած թէ գո՞հ ենք հեռագրից, գոհացուցի՞չ են արուած քայլերը։

Դոկտորը խօսեց ակնարկների մասին. ինձ նոյնպէս դժգոհութիւն պատճառեցին այդ թեթեւ անհարթութիւնները, որոնք վստահ եմ կը վերանան. նոյնիսկ մի շաբաթից այդ անհարթութիւնները վերջացած կը լինին։ Անպէտքներ պէտք է հասկանալ գործի տեսակէտից, նա չէր կարող նրանց անպէտք համարել, այլ որ նոր ոյժերի պէտք չկայ։

Զօրան հարցնում է թէ ես ինչպէս եմ ներկայացրել ժողովը Եփ[րեմ]ին։ Ես խիստ շեշտել եմ, որ ժողովը անկեղծ է, որ անձնական հաշիւներով դրդուած մարդիկ չեմ տեսել եւ որ բոլորն էլ անկեղծօրէն համերաշխութիւն են ցանկանում։ Գլխաւորը, որ համոզել է նրան համերաշխելու այդ այն է, որ անկեղծ են եւ անձնական կիրք չկայ, այլ որոշ սկզբունքի հարց է։ Նրան համոզելու միւս կէտն էլ այն է, որ ժողովը դիւրութեամբ համոզուեց Սալար Դովլէի դէմ կռուելու որոշում տալ։ Ես բոլորը մանրամասն յայտնել եմ Եփ.ին, որ նամակ գրրուեց մինիստր[ութեան] որ մարմնի չկռուելու որոշում տալը հիմնուած է եղել այն բանի վրայ, որ նա մինիստրների տրամադրութիւնից տեղեկութիւն չունէր, իսկ երբ իմացաւ, որ սահմանադ[րութեան] ոգով է ուզում առաջնորդուել, ժողովը կռուելու որոշում տուեց եւայլն։

Այս բոլորը ճիշտ եմ ներկայացրե՞լ։

Ներսէս [Ներսէսեան].— Կարիք չկայ խմանալու ինչ ձեւով ես ներկայացրել։ Այսքանն էլ բաւական է, որ նա իրեն տրամադրելի է դարձնում այս ժողովին։

Որոշուեց փակել այս հարցը։

Նախագահը դրեց զինուորների հարցը։

Տիգրան [Մնացականեան].— Զինուորների համար գործնական մի քայլ պիտի որոշել — կռուի դաշտ կը գնան թէ ոչ։ Գնալու համար Եփ[րեմը] յայտնում է, որ

կարիք չունի, որ նոյնիսկ իր ունեցած ոյժերին հեռացնում է, նշանակում է չենք կարող նրան ստիպել, որ ընդունի իբր կռուողներ։ Այդ դէպքում ինչ պիտի անեն զինուորները։

Կ. Կոմիտէի հրահանգով են նրանք հրաժարուել. եւ այժմ ուղղակի անտանելի վիճակի մէջ են։ Նա գտնում է նրանց այդպէս թողնելը թէ՛ իրենց համար վատ է եւ թէ ի զուր ծանրաբեռնութիւն կը լինի կազմակերպութեան համար։ Ուրեմն կամ պէտք է նրանց համար գործ գըտնել եւ կամ ճանապարհածախս տալ եւ հայրենիք ուղարկել։ Պէտք է կառավարութիւնից Ցովսէփի կամ Եփրեմի միջոցով պահանջ դնել նրանց նպաստ տալու։ Աւելի շուտ Եփ[րեմ]ի միջոցով, որի զինուորներն են եղել նրանք։ Եթէ Եփ[րեմը] այդ աշակցութիւնը չանի, ցոյց կը տայ, որ նա նրանց չի ընդունում միայն այն պատճառով, որ դուրս են եկել իր բանակից։ Ի հարկէ այդ դէպքում մարմինը միջոցներ կը գտնի նրանց համար, դա այլ հարց է։

Թղթի վրայ համերաշխութիւնը նշանակութիւն չունի։ Եթէ Եփ[րեմը] այդ աշակցութիւնն անի, դրանով գործնականապէս ցոյց կը տայ իր համերաշխութիւնը։ Այդ զինուորները կառավարութեան համար աւելի շատ բան են արել քան շատերը, եւ աւելի բան կազմակերպութեան համար։

Ալ. Խաչ[ատրեան].— Եթէ Եփ[րեմը] դաշ[նակցական] է համարւում, պէտք է առաջարկենք նրան, որ սրանց էլ վերցնի հետը։ Ի նկատի պէտք է ունենալ, որ Սալար Դովլէի ներկայ շարժումը համիսլամական է, ուստի չպէտք է այնքան էլ վստահ լինել Եփ[րեմ]ի ունեցած պարսիկ խմբերի վրայ։ Դրանցից դուրս Եփ[րեմը] շատ քիչ ոյժ ունի։ Եփ. պէտք է հայերի մեծ ոյժ ունենայ։

Դոկտոր.— Մեր շրջանի դաշ[նակցական] մարտիկները որոշ կռուի համար են մտել կռուի դաշտ։ Տեղացիները ոչինչ, բայց բազմաթիւ ընկերներ մարմինների կողմից են հրահանգուած եղել. դրանց գալու սկզբնական պատճառը մարմինն է։ Այդ մարտիկները պայմաններով են եկել, կազմակ[երպութիւնը] պիտի հայթայթէր մարտիկներ, իսկ կառ[ավարութիւնը] նրանց ծախսերը, զէնքը եւ վերադարձը պիտի հոգար։ Այս շատ հին խընդիր է։ Հէնց օրինակ Գիլանից այդպիսի յանձնարարականներով 15 հոգի են եկել։

Ամէն պարագայում զինուորները զոհեր չպիտի դառնան, իսկ կազմակերպութիւնն էլ չպէտք է դրամական տուժում ունենայ։ Եթէ խնդիրը դրուած լինէր մեր ծախքով, այդ ուրիշ բան կը լինէր։ Ներկայումս բանակի մէջ եղողների դրամական մասը շատ պարզ է։ Այս դուրս մնացողներն էլ եթէ հետը տարած լինէր, նրանք դուրս չէին ընկի, սա էլ պարզ է։ Մեր ընկերները Սահմանադ. կռուին մասնակցելու են եկել։ Այս բոլորը պիտի հասկացնել Եփ[րեմ]ին, որպէսզի սրանց համար հոգայ։

Համիսլամական շարժման խօսքերը ասէկօսէներ են։ Եթէ այդ ճիշտ լինէր մենք պիտի ձեռնպահ մնայինք կրօնական խնդիրներում ու կռիւներում մենք ոչ մի մասնակցութիւն ունենալ չենք կարող։ Մենք մասնակցում ենք իբրեւ քաղաքական կռիւ։

Զինուորների որոշ քանակ այժմ աւելորդ է համարւում։ Թշնամին փախչում է։ Եթէ պէտք լինէր կ'ուզէր նրանց։ Հիմա ինչպէս մեր, նոյնպէս Եփ[րեմ]ի եւ կառ[ավարութեան] մտատանջութիւնը պիտի լինէր գործից դուրս ընկածների մասին հոգալ։ Ենթադրենք որ նրանք հէնց բանուորներ են, մեր ամենասրբազան պարտականութիւնն է հոգալ նրանց մասին։ Պէտք է միջոցներ տալ նրանց հայրենիք դառնալու։ Եւ որքան շուտ այնքան լաւ։ Նրանք ապրուստի միջոցներ կ'ուզեն, կարող են եւ օրուայ հացի կարօտ լինել եւ ի զուր սրան կամ նրան ծանրաբեռնել եւ ուրիշի հաշուով ապրել, ինչպէս որ ասում են։ Կառ[ավարութիւնը] իր պարտքը պիտի կատարի, երբ նրանց պէտք չունի պէտք է ճանապարհածախս տայ եւ հայրենիք ուղարկի։ Նա պէտք է ի նկատի ունենայ եւ երկրի ներքին խաղաղութիւնը, որ այդպիսի անգործ եւ օրուայ հացի կարօտ մնացողների կողմից կարող է խանգարուել եւ բարդութիւններ ստեղծել։

Եթէ կազմակ[երպութիւնը] ուրիշ գործ ունենար նրանց յանձնելու, ինչպէս է ինքնապաշտ[պանութիւնը] որոշ յանձնարարութիւններ եւ այլն, այդ ուրիշ հարց է եւ նրանց կը պահէր, իսկ այժմ՝ որ գործ չունի, նրանց պահելը աւելորդ ծանրութիւն է նրա համար։

Ներսէս [Ներսէսեան].— Զինուորների խնդիրը լուրջ է։ Պարապութիւնը կարող է առաջ բերել չանտաժ, իսկ դրա հետեւանքը կը լինի կախաղաններ եւ այլն։ Երկու ձեւի զինուորներ կան — կանչուած եւ տեղացի։ Կանչուածների ծախքերը ապահովուած են եղել Եփ[րեմ]ից կամ կազմակ.ից։ Պէտք է ուրեմն նրանց ճանապարհածախս տալ եւ վերադարձնել։ Տեղացիներին էլ պէտք է մի ամսուայ ռոճիկ տալ։ Իսկ գալով այն հարցին թէ պէտք է նրանց Եփ[րեմ]ի մօտ ուղարկել, ես կ'ասեմ, որ նա շատ լաւ է հասկանում կարիք ունի թէ ոչ. եթէ ոչ՝ չպէտք է նրա վզին փաթաթել։

Ցովս. Միրզ[այեան].— Ժողովի տրամադրութիւնն այն է, որ Եփ.ի կամքի դէմ ընկերներ չուղարկել։ Ուրեմն սրանք պէտք է պարապ չթողնել, որ կարող է չարիքներ ծնիլ։ Մարդիկ որքան էլ դաշնակցական լինին, բայց սովածութիւնը նրանց ամէն բան անել կը տայ։ Ես առաջարկում եմ ընտրել մի կոմիսիոն, որպէսզի այդ պարապ զինուորների մանրամասն ցուցակ կազմի — որքան են տեղացիք, որքան հեռացողներ, եւ իւրաքանչիւրը որքան կարիք ունի։ Կառ[ավարութեան] օժանդակութիւնը մենք կ'առնենք, աւելորդ է Եփ[րեմ]ին ասել, նա այժմ պատերազմի դաշտում նոյնիսկ միջոց չի ունենայ դրանով զբաղուելու։

Չեմ ուզում լսել որ կասկած յայտնուի նրա համբաւշխ[ելու] ցանկութեան վրայ։ Նա պարզ է խօսում միշտ. ապացոյց ձեզ՝ նրա արած հեռագիրները, եւ վերջին հեռագրով նա դէմ չի։ Ես կարծում եմ որ նա կ'աջակցի այս խնդրում։

Ես հակառակ եմ այս գործը նրա վզին դնելու։ Մենք միջոց ունինք ինքներս կատարելու։ Թող զեկուցումը գայ, բիւջէն կազմենք եւ կառ[ավարութեան] դիմենք։ Եթէ ժողովը վճռեց ես կը գնամ մինիստրների մօտ եւ կրեդիտ[158] կ'առնեմ։

Տիգ[րան Մնացականեան].— Գոհ եմ, բայց գուցէ կառ[ավարութիւնը] մեր դիմումը չգոհացրեց։

Յովս. Միր[զայեան].— Եթէ կառ[ավարութիւնը] չգոհացրեց, Եփ[րեմ]ից խիստ հեռագիր կը բերեմ։

Դոկտոր.— Իմ կարծիքով պէտք է Եփ[րեմը] այդ գործում մասնակցութիւն ունենայ, որպէսզի յետոյ բարդութիւններ չծագեն։ Զինուորները նրա բանակինն են, մի գուցէ այսպիսի քայլերը ոտնձգութիւն նկատուի իր բանակի ներքին գործերին խառնուելու տեսակէտից։ Մէկ էլ գուցէ նա շուտով նրանց կարիք է ունենալու։

Յովս. Միր[զայեան].— Ժողովը վճռել է նրանց ցրուել, մինչ այդ եթէ կառ. կարիք ունենացաւ չենք ցրի։ Կարող ենք այդ դիմումն էլ անել. նոյնպէս եւ հեռագրել Եփ[րեմ]ին։

Աշչակ.— 10 օրից յետոյ այլեւս կարիք չի լինի։

Աբեքսան [Խաչատրեան].— Ես վստահ չեմ պարսիկների խոստումներին։

Դոկտոր.— Մենք մինիստրներին տրամադրելի չենք անում։ Նրանք կը շահագործեն նրանց։ Մի որեւէ հաքիմի հետ կը վերցնեն եւ 10 հոգու կ'ուղարկեն կամ այդպիսի նման բան։ Մենք մեր մարտիկները Եփ[րեմ]ի հրամանատարութեան տակ ենք դրել եւ ոչ թէ ուրիշի։

Յովս. Միր[զայեան].— Եփ[րեմը] պէտք չունի, դրա համար ցրում ենք. եթէ ուզից կը տանք, եթէ ոչ՝ այլեւս ուրիշ ոչ մի տեղ չենք տայ։ Նրանց նպաստելու համար Եփ[րեմ]ից հեռագիր բերել կը տամ։

Դոկտոր.— Որքան գիտեմ դուրսը մնացած զինուորների վերաբերմամբ որոշ բան վճռուել է. պէտք է Զոհրաբ խանին էլ տեսնել։

Յովս. Միր[զայեան].— Այդ կոմիսիոնն կ'անի, ընտրենք 2 հոգի։ Ընտրուեցին Ներսէս եւ Աշչակ։

Ներսէս[Ներսէսեան].— Պէտք է նկատի ունենալ եւ ցուցակագրել բոլո՞ր դուրսը մնացած զինուորներին, թէ միայն թռուցիկի ազդեցութեամբ հեռացողներին։

Արտայայտուեցին որ՝ բոլորին, Եփ[րեմ]ի բանակում մասնակցած եւ ներկայումս դուրսը մնացած զինուորներին՝ բոլորին։

Դոկտոր.— Ընկերներից Սուլթանաբադում էլ կան, որոնք երեւի անտեղեակ են մեր որոշումներից։ Պէտք է նրանց հեռագրել թէ եթէ Եփ[րեմը] նրանց եւս պէտք չունի, թող վերադառնան Թեհրան։

Յովս. Միր[զայեան].— Աւետիսը հեռագրել էր թէ մասնակից չի ըմբոստութեան այլ հիւանդութեան պատճառով չի կարող գնալ։ Նա հիւանդ է։ Եթէ հիւանդ չի, ուրեմն նա այժմ Համադան գնացած կը լինի։

Տեղեկացուեց որ Սուլթանաբադում 3-4 հոգի կան։

Աբշակ.— Նրանք էլ փողի կարիք ունին։

Դիւանին երկու նամակ էր եկել Աբշակից եւ Սիմէոնից։ Կարդացուեցին այդ նամակները։ Նրանք յայտնում էին որ Եփ[րեմ]ի կողմից կարգադրուած է եղել իրենց ձերբակալել իբր թէ Քեռու կեանքի դէմ դաւադրութիւն (Սուլթանաբադում) կազմելու մէջ։ Նրանք այդ մեղադրանքը զրպարտութիւն էին համարում եւ ընկերական դատ էին պահանջում։

Եւ որովհետեւ երկուսն էլ անձնական գործերով քաղաքից հեռանում են, այդ մասին տեղեկացնելով, յայտնում էին որ միշտ պատրաստ կը լինին, ընկերական դատի հրաւիրուելու դէպքում ներկայ գտնուել։

Ժողովը ընդունեց նրանց առաջարկը։

Թոյլատրեց գնալ։

Յովսէփ եւ Դոկտոր.— Յայտնեցին, որ երկուսը միջանկեալ խօսել են իրար հետ, որ այս բոլորից յետոյ լաւ կը լինի եթէ Եփ[րեմ]ի պրեստիժը բարձր պահելու համար առաջարկել Սիմոնին եւ Աբշակին ժամանակաւորապէս հեռանալ քաղաքից։

1. Աբշակն արդէն գնում է. իսկ Սիմոնը յայտնում է, որ մինչեւ իր դատը չվերջանայ նա չի մասնակցի կռիւներին, եթէ Եփ[րեմը] կամ նոյնիսկ Կ.Կ.էն հրահանգելու լինի։

2. Լաւ կը լինի Պատասխ. ժողովի կողմից յայտնուի Կ.Կ.էնին, որ մի պատճառաբանուած թռուցիկ բաց թողնի կռուին մասնակցելու համար։

Յովս. Միր[զայեան].— Միայն թէ թռուցիկը նախ այս ժողովին գայ յետոյ հրատարակուի։

Ընդունուեց այդ էլ։

Ժողովը փակուեց ժամի 10.15-ին։

158.- Դրամական վարկ։

ՆԻՍՏ V

Շահստան, 7 Մայիս 1912

Բացակայ էին Աբեքսան խան եւ Աբեքսան Խաչատրեան քաղաքից բացակայելու պատճառով (Գիլան է մեկնել)։

Ժողովը բացուեց ժամի 7-ին։

Ժողովականները արդէն գիտէին Եփրեմի կորուստի մասին[143]։ Յովս. Միրզայեան կարդաց Համադանից ստացած իր բոլոր հեռագիրները, որոնցով հաղորդում էին Եփրեմի խփուելու որոշ մանրամասնութիւնները։

Այնուհետեւ զեկուցեց օրուայ ընթացքում խնամակալի եւ մինիստրների մօտ լինելու եւ նրանց հետ ունեցած խօսակցութիւնների մասին։ Ինչպէս Խնամակալը նոյնպէս եւ մինիստրները մեծ կորուստի հանդէպ կորցրած են եղել իրենց։ Նրանք արտայայտուել են, որ Պարսկաստանի գործը նրա մահից յետոյ այլեւս վերջացած պիտի համարել։ Առանձնապէս ընկճուած ճնշուած դրութեան մէջ է եղել Խնամակալը։

Ժամի 5-ին մինիստրներն ու Խնամակալը ժողով են գումարել։ Շանթահարուած նրանք ողբալուց բացի ուրիշ ոչինչ անել չեն կարողացել սկզբի նուազ։ Յովսէփը նրանց սիրտ է տուել եւ առաջարկել է

1) բանակի հրամանատար նշանակել Քեռուն (Եփ[րեմ]ի փոխարէն)

2) եղած հայ տղաներից մի մասին բանակ ուղարկել իսկ միւս մասին էլ քաղաքի պաշտպանութեան համար նշանակել։

3) Եփ[րեմ]ին փոխարինելու համար հրաւիրել դաշ[նակցական] մի կարող անձ։

Շօշափուած այդ հարցերի մասին, նախ քան Յովսէփի գալը, ժողովում խօսում էր եւ մտածւում նոյն մտքով առաջարկներ անել կառ[ավարութեան]։ Յովսէփի այդ առաջարկութիւնները համապատասխան լինելով ժողովի մտածածին, համակրութեամբ ընդունուեց։

Քեռուն իբր ընդ. հրամանատար նշանակելու համար թէ Խնամակալութիւնը եւ թէ մինիստրութիւնը հեռագրել է։ Հեռագրուել է նոյնպէս Բախտիարի հրամանատարներին՝ Քեռուն վերաբերուել այնպէս ինչպէս վերաբերւում էին Եփ[րեմ]ին։ Նոյնպէս կարգադրուել է Սարդար Աշճային 500 բախտիարներով գալ միանալ բանակին։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Քեռին քաջ կռուող եւ լաւ խմբապետ լինելով, զուրկ[159] է վարչական ընդունակութիւնից, որ նա անկարող է բախտիարի կամ այլ մեծերի հետ հարկաւոր եղած յարաբերութիւնները պահել եւ ազդեցութիւն գործել նրանց վրայ, ինչպէս եւ դժուարութեամբ կարող է բանակի ներքին կազմակերպական գործերը ղեկավարել, նրա բաղկացուցիչ մասերը իրար հետ կապել եւայլն,— ժողովում երկար վիճաբանութեան նիւթ դարձաւ մէկ կամ երկու հոգի բանակ ուղարկել, ոչ իբրեւ կռուողներ այլ իբրեւ Քեռու խորհրդատու, իբր վերոյիշեալ պակասները լրացնող, իր հեղինակութեամբ զինուորների վրայ ազդող Ֆարման-Ֆարմայի[160] կամ միւս մեծերի հետ յարաբերութիւններ պահող։ Բանակի բաղկացուցիչ մասերը իրար հետ կապող ի նկատի առնուեց Աշոտը[161]։

Նկատուեց որ եթէ այդպիսի մի կարող անձ ունենայինք շատ լաւ կը լինէր ներկայ ծանր մոմենտից պատուաւոր կերպով դուրս գալու համար, քանի որ կասկած յայտնուեց որ Ֆարմանները կարող են Քեռուն խաբել կամ ամենաբարեյաջող դէպքում նրա ոյժերը ջլատել, ի նկատի առնուեցին Դոկտորը եւ Ներսէսը։

Առաջինը՝ ցոյց տալով պաշտօնի պատասխանատուները եւ իր ոչ այնքան ձեռնհասութիւնը, յամենայնդէպս իրեն տրամադրելի դարձրեց ընկերներին։ Երկրորդը որոշ պատճառաբանութեամբ հրաժարուեց։ Այդ՝ տաճիկ դեսպանի արգելքն էր։ Հէնց այդ նկատումով նոյնպէս անյարմար նկատուեց դոկտորի մեկնումը։

Վերջում որոշուեց կանգ առնել Աշոտի[161] վրայ եւ հեռագրել նրան, որ անմիջապէս բանակ գայ։ Եւ որովհետեւ ոչ հեռագրով եւ ոչ էլ նամակով դժուար կը լինէր նրան ամէն մանրամասնութիւններ եւ գործի դրութիւնը պարզել, դրա համար որոշուեց Աբշակին ուղարկել Ղում՝ որ անձամբ նրա հետ ամէն բանի [մասին] խօսի։ Այդ անհրաժեշտ համարուեց այն նկատումով, որ Քեռու եւ Աշոտի յարաբերութիւնները այն[քան] էլ մտերմական չեն եղել եւ ով գիտէ կարող է բարդութիւններ ծագել եւ գործին օգնելու փոխարէն վնասակար արդիւնք կարող է դուրս գալ։

Որոշուեց նոյնպէս հեռագրել Քեռիին նրա հրամանատար նշանակուելու եւ նրան օգնելու ժողովի պատրաստակամութեան մասին։

Դոկտորը յայտնեց որ Իշխիմայուն-Իթիհատիւն կուսակց[ութեան], (որ Դաշն[ակցութեան] հիմնածն է եւ միշտ նրան է հետեւում), խմբապետները եւ մօտ 400 հոգի բանակումն են։ Կարելի է այստեղ նրանց կոմիտէին տեսնել եւ կողմնակի ազդեցութիւն բանեցնել որ հեռագրեն իրենց ընկերներին, որպէսզի դէպի Քեռին վերաբերուեն այնպէս ինչպէս մի ընդ. հրամանատարի։

Ընդունուեց այդ առաջարկը։

159.- Բնագրին մէջ «լուրջ է», ինչ որ արտագրութեան սխալ պէտք է համարել։ Ուղղեցինք՝ «զուրկ է» ձեւով։

160.- Պաշտպանութեան նախարարի։

161.- Աշոտը կամ Աշոտ խանը, ինչպէս յորջորջուած էր Իրանի մէջ, Դաշնակցական Խեչոն է, բուն անունով Ամիրեան Խաչատուր, որ կանուխէն կը գտնուէր այն մարտական ուժերու շարքին, որոնք կը կռուէին Պարսկաստանի մէջ ի խնդիր սահմանադրական կարգերու ամրապնդման։ Խառն ժողովի այն որոշումը, որ զինք նկատի կ'ունենար Քեռիի կողքին իբրեւ համահրամանատար պարսկական բանակին, գործնական հետեւանք պիտի չունենար պարզապէս այն պատճառաւ, որ Եփրեմի մահէն ետք Դաշնակցական Խեչոն վերջնական կը մեկնէր Իրանէն։

Խառն կամ Պատասխանատու ժողովի վեցերորդ նիստի արձանագրութիւնը խմբագրուած չէ, այլ կը ներկայանայ իբրեւ պարզ նոթագրութիւն՝ աղագրութեան ձեւով, ինչ որ կը դժուարացնէ անշուշտ գրութեան ամբողջական իմացութիւնը: Կու տանք այնպէս ինչպէս կայ:

[ՆԻՍ VI]

11 Մայիս [1912]

Բացակայ.— Ալեք[սան] Խ[աչատրեան] քաղաքից բացակայ. Նիկ[ոլ Աղբալեան] — հիւանդ։

Եփ[րեմի] յիշ[ատակին] ոտքի կանգնելով յարգանք։

Ցով[սէփ Միրզայեան].— Ընկերների համար փողեր ստացուեց։ Գանձապետը վստահութիւն է ցոյց տալիս. Մօրնար[ից][162] — 1000-ներով փող առնել հրաչք է։ Հայկական բանակի համար բիւջէ անմիջապէս ստացուեց։ Պէտք է ի նկատի ունենալ թէ ովքեր ինչ վերաբերմունք են ցոյց տալիս. Անուշաւանի եւ 9 հոգիի հաշիւները մաքրուեց եւ վաղը ճանապարհ կ'ընկնեն։ Երկու Արշակները. Արշակը որ դէմ էր գնալու, խոստացաւ մտածել։ Միւս Արշակը, եւայլն, Գրիշի[163] գալը եւ նրա խօսքերը խորհուրդ չեմ տայ։ Արշակի դէմ շատ գրգռուած է. դա բաւական է որ նա չգնայ։ Նախ քան այդ թիւրիմացութեան պարզուելը լաւ կը լինի որ նա չգնայ։

Ջրիչ.— Աբր[ահամ] Ասատ[ուրեանի] խօսքով Քեռին տրամադրուած է որ Արշակը դրդել է դաւադրութիւնը. Արշակի հեռագրի մինչեւ պատասխան ստանալը.—

1.- Արշակը չգնայ մինչեւ թիւրիմացութիւնը չպարզի։

2.- Արշակի թեկնածութիւնը չվերցնել մինչեւ թիւրիմացութիւնը։

3.- Եթէ Քեռու թիւրիմացութիւնը չջրեց, այն ժամանակ Արշակին չուղարկենք մինչեւ Քեռին գայ եւ թիւրիմացութիւնը անձամբ պարզուի։

Արշակ.— Անձնական գործի պատճառով ուզում է գնալ։ Նա տրամադրելի է, ուր ուզում է գնայ, պէտք եղած ժամանակ կը գայ։

Կամ թողէք գնամ Քեռու մօտ կամ գնամ գործի։ Պղտորողները ամէն միջոց գործ դնել։ Գրգռուած մարդկանց չպէտք է դէմ դէմի դնել։

Ազատ է իր անձնական գործին գնալ մինչեւ որ Քեռիի թիւրիմացութիւնը պարզուի։

Աշոտի խնդիրը[161].— *Աշոտը գնացել է եւ 10 օր է որ անցել է Իսպահանից։ Հիմա Ահվազ կը լինի։ Առողջութիւնը ի նկատի ունենալով, ճանապարհի երկարութիւնը եւայլն, չվերադարձնել։*

Ով լինի նրա տեղը.— Նոր մարդ բերել տալ, պայմանները ուսումնասիրել. Քեռու յաջողութիւնը։ Նա կարող է Եփ[րեմ] լինել. նոր մարդ դժուար թէ շուտով յաջողութիւն ունենայ։

Քեռու օգնական ով լինի — տեղական ընկեր ոչ դրրսից բերել տալ։

Ջրիչ.— Անվեհեր կռուող, բայց ոչ ղեկավար եւ պատասխանատու։ Նա — Աբր[ահամ] Ասատ[ուրեան] անհատաբար էին կապուած Եփրեմի հետ։ Նա աւելի է ծանօթ այստեղ. նա օգտակար կը լինի Թեհրանում։

Ցով[սէփ Միրզայեան].— Նրան միշտ մօտն է պահել Եփ[րեմը] կռիւներում։ Նա խմբապետ է եղել. մանեւրեր կատարելիս էլ մի թեւը նրան է յանձնուած եղել։ Միւս խմբ[ապետներից] ոչ մէկը յարմարութիւն չունի։ Քեռուց հարցնել ումը կ'ուզի օգնական։

Մնացող տղաների հարցը վերջացել է. կառ[ավարութիւնը] ընդունել է նրանց Ջուլֆէ ամսից իբրեւ կառ[ավարութեան] ծառայութեան մէջ են մնալու, մի տեղ ապրեն, ազդեցութիւններ, անյարմարութիւններ եւ յարաբերութիւնների ժամանակ միատեղ, որ թիւրիմացութիւններ էլ չլինեն. նրանք գնան Քեռու տունը։ մուտքի կողմից մէկը կամ երկու նշանակուի, միշտ յարաբերութեան մէջ լինի։ Պարտաւորել որ իրենք ընտրեն խմբապետներին — ռոճիկը 3 մասով։

Իւրաքանչիւր մոլահիդ 40-ական-խմբապետները 20 հոգի են։ Առ այժմ զինուած դուրս չգան. երբեմն անհրաժեշտ դէպքում զինուած դուրս գան։

Մանեւրը՝ լաւ կը լինի մոսին տալու։

Յարաբերութիւնը կապող Ներսէս։

Մոլլաներ յարձակուել են Խնամակալի վրայ — Մեշէդի խնդիր։ Մութ ոյժեր են երեւան գալիս։ Նազմիէն իբրեւ հարկ. հիմնարկութիւն։

Նազմիէն օգտակա՞ր է կազմակ[երպական] տեսակէտից թէ ոչ։

162.- Մօրնարը՝ պելճիքացի, ելեմտական գանձապետի պաշտօնով յաջորդած էր ամերիկացի Մորկան Շուստերին։

163.- Յայտնաբար Տէր Դանիէլեան Գրիշն է։ Տեսնել ծանոթագրութիւն թիւ 147։

Պահանջներին հետապնդել — դեկլարասիոնն ընդարձակ երկրի բարօրութեան համար կարգապահութիւն — մամուլի ազատութիւն։

Զօրա եւ Տիգ[ران] — Ցովս. եւ դոկտոր — Ազդեցութիւն գործ դնել Սալար Ֆթհ., Զ[ոհրաբ] խանին պահելու համար կազմակ. կուսակից լինելու կարգապահ. նրանց օգնութեան գնալ — կազմակ. վստահ լինի որ նրանք չեն խանգարի իրեն։

Նազմիէի վրայ ազդեց[ութիւն] ունենալ եւ ոչ անհատների։

Խօսք կայ որ չուէտացիների են ուզում յանձնել. դրանով կը լինի ռուսակ. ժանդարմ. ուրեմն պէտք է աշխատել պահել նրանց։

Ազդել մինչեւ այն ժամանակ երբ նրա գործունէութիւնը համապատասխանի մեր վերաբերմունքի։

Բիւրոյի նամակը. գրուել է մի մի նամակ կ.կ.ին եւ Եփ[րեմին] ու Ցովսէփին։

Նայիբ Սալթանէն[164] *շնորհակալութիւն է յայտնել. երբ կազմակ[երպութիւնը] ինձ հետ է, ես վաղուց վճռել եմ ձեզ հետ լինեմ։*

Սուլթ[անաբադի] տղաների հարցը — հին տղաները չեն թողել։ Ցովս[էփ] կը հայթայթի տղաների ծախքը, 200 ֆր. ճանապարհածախս։

Քեռուն հեռագրելը Ցովս[էփ]ին։

Թռուցիկ — Զ. Ց.։

Վերադարձող զինուորներին զինաթափ անելուց յետոյ իբրեւ կանոնաւոր զօրք պահել նրանց։

ԿՈՎԿԱՍ
ԵՒ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

ԲԱԺԻՆ Ա.

Կովկասահայ բանտարկեալներուն յատկացուած առաջին բաժինը կը բանանք Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի 1908 թուականի շրջաբերականով, որ ընդհանուր գիծերու մէջ կը նկարագրէ ցարական իշխանութիւններու հաստատած բռնակալական խստագոյն կարգերը ռուսական կայսրութեան ամբողջ տարածքին. Կովկասը բացառութիւն չէր կազմեր եւ հայութիւնը, ու մասնաւորաբար Դաշնակցութիւնը յատուկ թիրախ են: Արդէն հարիւրաւոր կալանաւորներ, ժողովուրդի բոլոր խաւերէն, մեղաւոր կամ անմեղ, լեցուած են բանտերը:

Բանտարկեալներուն անմիջական օգնութիւն հասցնելու, անոնց դատական պաշտպանութիւնը կազմակերպելու, այդ նպատակով անհրաժեշտ գումարները ապահովելու, ապա նաեւ ժողովուրդի բարոյական կորովը բարձր պահելու խնդիրները կը կազմեն կուսակցական՝ մեծ մասամբ ջլատուած մարմիններու գլխաւոր մտահոգութիւնը, մանաւանդ երբ անոնց անդամներէն շատեր բանտն էին արդէն, ոմանք փախստական դարձած, ուրիշներ՝ հետապնդումներէն խուսափած՝ դուրս եկած էին կայսրութեան սահմաններէն: Այս պայմաններու մէջ սակաւաթիւ փրկուածները, ընդյատակ անցած, պիտի փորձէին յաղթահարել ստեղծուած ճգնաժամը:

Տնտեսական միջոցներ գոյացնելու նպատակով կուսակցական վերին մարմիններու հրահանգով ձեռնարկուած դրամահաւաքին մասին կարելի չէ ամբողջական պատկեր մը ներկայացնել, քանի այդ գործը համատարած բնոյթ ստացաւ կազմակերպական բոլոր շրջաններուն մէջ, թէ՛ Ռուսիա ու Պարսկաստան եւ թէ Արեւմտեան Հայաստանի, Թուրքիոյ եւ ամբողջ արտասահմանի տարածքին: Տուած ենք միայն քանի մը նմոյշ, բայց այդ խնդիրը 1908-1912 երկարող տարիներուն միշտ ներկայ է կուսակցական գրագրութեան, մամուլին, ժողովներու եւ մարմիններու զեկուցագրերուն, այդ գործին լծուած ընկերներու տեղեկատուութեանց մէջ: Կովկասահայ քաղաքական բանտարկեալներուն օգնութիւն փութացնելու հարցը դուրս գալով կուսակցական շրջանակներէն՝ վերածուած էր արդարեւ համազգային երեւոյթի,– տեսակ մը փոխ-հատուցում այն թանկագին օժանդակութեան, զոր Կովկասը տարիներ շարունակ բերած էր Արեւմտահայաստանի ազատագրութեան դատին:

Այս բաժնի վերջին մասով ներկայացուած փաստաթուղթերը կը վերաբերին Կովկասի տարածքին այս կամ այն չափով տակաւին գործող կարգ մը շրջաններու (Պաքում, Երեւան, Պաքու, եւայլն) կուսակցական գործունէութեան: Այդ փաստաթուղթերը կը կազմուէին սահմանը անցնող կամ այդ նպատակով գործուղուած ընկերներու հաղորդած բերանացի զեկուցումներէն: Յիշենք այս առթիւ, որ հալածանքներու սկզբնական շրջանի մասին որոշ տեղեկատուութիւն հրատարակած ենք արդէն «ՆԻՒԹԵՐ»ու նախորդ հատորներով (տես Զ. հատոր, էջ 454-480, Է. հատոր, էջ 197-205):

Փաստ. 18-165

Ա 1.– ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Համատարած ռէակցիան օրէցօր աւելի ու աւելի ուժեղանում է:

Բռնակալական սանձարձակութիւնը այլեւս ոչ մի չափ ու սահման չի ճանաչում:

Բիւրոկրատիան չտեսնուած համարձակութեամբ շարունակում է սարսափների քաղաքականութիւնը:

Ամբողջ երկիրը բաժանած ունենալով առանձին սատրապութիւնների՝ զինուորական գեներալ-նահանգապետութիւնների, նա ահաբեկել է ազգաբնակութիւնը բանտերով, աքսորով եւ կախաղաններով:

Նա իր հովանաւորութեան տակ է վերցրել բոլոր մութ ոյժերի, որոնք սեւ ագռաւների նման կռնչում են աջ ու ձախ՝

– Արի՞ւն – աւերածութիւն...

Եւ տնքում է ողջ Ռուսաստանը ցարիզմի լծի տակ:

Բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ այդ լուծը աւելի դաժանօրէն սեղմում է ծայրագաւառները:

Ֆինլանդիա, Լեհաստան ու Կովկաս նորից դարձել են քաւութեան նոխազներ, որոնց գլխին հրէշաւոր դաւեր են ծրագրւում ու նիզակներ ճօճւում:

Եւ համապետական այդ դժոխային պայմաններում, ընդհանուր ծայրագաւառային այդ անզուսպ հալածանքների մթնոլորտում՝ նորից գլուխ է բարձրացրել հայակեր, հայահալած քաղաքականութիւնը, իր բոլոր արտայայտութիւններով:

Ամենայետամնաց գաւառներից սկսած, մինչեւ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսը, լի են բանտերը հազարաւոր անմեղ զոհերով, դառն արցունք են քամում անթիւ ընտանիքներ, իրենց կերակրող ձեռքերից զրկուած: Հալ ու մաշ են լինում հարիւրաւորները հեռո՞ւ, ցրտաշունչ աքսորավայրերում՝ Արխանգելսկից մինչեւ Վեատկա-Սիբիր:

Նոյնիսկ այս վերջին օրերին, երբ Կովկասի բոլոր ծայրերից հլու հպատակութեան ձայներ են հնչում ընդդէմ Պուրիշկեւիչեան զրպարտութիւնների, բռնակալ ցարիզմի գործակալները չտեսնուած ցինիզմով շարունակում են իրենց գործը, աւելի մեծ թափով:

Միայն երկու շաբաթուայ ընթացքում քանի՞ հայ գրողների, ուսուցիչների ու աշակերտների, բժիշկների, փաստաբանների եւ խեղճ ու կրակ շատ բանուորների լցրին Մետեխի մութ մռայլ խորշերը, եւ դեռ քանիսին նոյն վիճակն է սպասում: Բայց այդ դեռ բոլորը չէ: Կառավարութիւնը ձգտում է կաշկանդել հայի ազգային կուլտուրական բոլոր գործօնները:

Նորից սեւ ամպեր են կուտակւում հայ դպրոցների գլխին:

Նորից սատրապները յափշտակիչ հայեացք են ուղղել դէպի հայոց եկ[եղեցական]-դպրոցական կալուածքները:

Իսկ հայ լեզուն ու գրականութիւնը կաշկանդելու, կաթողիկոսական իրաւունքները սահմանափակելու հոգսը վաղուց զբաղեցնում է ցարի մինիստրներին:

Եւ որպէսզի այդ բոլոր հեռաւոր ու մօտաւոր ծրագիրները հեշտութեամբ իրականացնել կարողանան – ահա նրանք փորձեր են անում ոչնչացնելու, ջախջախելու այն խանգարիչ ոյժը, որ հայ աշխատաւոր ժողովրդի ծոցից ծնուած, միշտ էլ պաշտպան է եղել նրա իրաւունքներին ու շահերին:

Այն ոյժը, որ իր կուրծքը դէմ տուեց Պլեւէի, Գուլիցինի ռեժիմին եւ կարողացաւ յետ խլել հայ դպրոցներն ու կալուածները, որ բիւրոկրատիայի հրէշաւոր պրովակացիայի շնորհիւ բռնկուած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ կարողացաւ պաշտպանել ժողովրդի կեանքը, գոյքն ու պատիւը, որ ամէն տեղ հրապարակ է գալիս հալածուածներին, հարստահարուածներին փրկութեան գողգոթան բարձրացնելու – այդ ոյժը ցանկացաւ ոչնչացնել...

Ոչնչացնե՞լ Հայ Յ. Դաշնակցութիւնը. բայց միթէ՞ հնարաւոր է դա:

Միթէ՞ հալածանքներից ընկճուել կարող է այն կազմակերպութիւնը, որ մօտ երկու տասնեակ տարիներ անցել է արեան, բանտերի, կախաղանների ճանապարհով՝ առանց մի րոպէ խոնարհելու իր գլուխը, որ հերոսական քայլերով դիմագրաւել է բռնակալութեան հարուածները՝ առանց մի յուսահատութեան ճիչ արձակելու:

Ո՛չ: Դա անկարելի է: Դա ցնորք է:

Ինչպէս որ համատարած ռէակցիան անկարող է լինելու ոչնչացնել Ռուսաստանի աշխատաւորութեան յարաճուն ըմբոստացումը, ինչպէս որ բռնակալութեան սոսկալի հարուածները միայն աւելի զտելու – եւ անխզելիօրէն շաղկապելու են նրա յեղափոխական տարրերը, ճիշտ այդպէս էլ հակահայկական բոլոր հալածանքները աւելի շեշտելու են Հ. Յ. Դաշնակցութեան անհրաժեշտութիւնը իբրեւ փրկութեան մի փարոսի:

Որքան սաստկանան հարուածները վերեւից, նոյնքան ամրանալու է ընդդիմադիր ոյժը ներքեւից:

Եւ ինչպէս միշտ, նոյնպէս այս ծանր օրերին, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը ծածանէ իր նուիրական դրօշակը, նրա շուրջը հրաւիրելով ժողովրդական լաւագոյն ոյժերը:

Եւ այդ ոյժերը անձնազոհ շարքերով կը շարունակեն յեղափոխական կարմիր պայքարը յանուն ազատութեան ու հաւասարութեան, միշտ բարձր հնչեցնելով նրա նշանաբանը:

ԹՈՂ կորչի բռնակալութի՛ւնը
ԿԵՑՑԷ ազատութիւնը
ԿՈՐՉԻ շահագործումն ու ճնշումը
ԿԵՑՑԷ հաւասարութիւնը
ԿԵՑՑԷ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը:

[1908]

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Փաստ. 18-168

Ներբակալութեանց ծայր տալէն անմիջապէս ետք Արեւելեան Բիւրոն կազմակերպական շրջաններուն ցրուած է նման թերթիկներ, որպէսզի առաջին օգնութիւնը հասցնեն մանաւանդ բանտարկեալներու կարիքաւոր ընտանիքներուն: Մեծ գումարներ պահանջող դատերուն համար աւելի ուշ պիտի դիմուէր կազմակերպական շրջաններուն ընդհանուր հանգանակութեան ձեռնարկելու համար:

Նուիրատուութիւնները կը յայտարարուէին պաշտօնաթերթ «Դրօշակ»ի մէջ: Կը յանձնուէին նաեւ յատուկ ստացագրեր, որոնցմէ նմոյշ մը ստորեւ:

Ա 2.– ՕԳՆԵՑԷՔ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻՆ

Օրէցօր աճող ռէակցիան՝ ոյժ տալով բռնակալութեանը խլում է հասարակութեան ծոցից յեղափոխական ուժերին եւ մութ-մռայլ բանտերը ու աքսորավայրերը լցնում:

Տառապում են նրանք այդտեղ՝ օդից ու լոյսից զրկուած, ընտանիք ու մերձաւորներ անօգնական թողած:

Օգնենք դրանց գոնէ նիւթապէս:

Օգնենք շուտափոյթ հանգանակութեամբ, որովհետեւ կարիքը մեծ է եւ զոհերը բազմաթիւ:

Հ.Յ.Դ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

[1908]

№№		բուլ.	կ.
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
13			
14			
15			
16			

Փաստ. 331-36

Ա 3.– ՅԱԿՈԲ ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Յակոբ Չիլինգարեան, ծանօթ Աշոտ Հայկունի ծածկանունով, նոյնպէս առաջին ձերբակալուածներէն էր (Վաղիկավկազ): Ջրաբերդ-Կարսի Կեդր. Կոմիտէի ազդեցիկ անդամներէն՝ յեղափոխական եռուն գործունէութիւն ունեցած էր յատկապէս դէպի Երկիր ֆետայական խումբերու եւ զէնքի փոխադրութեան, ապա, հայ-թաթարական ընդհարումներու օրերուն, զինամթերքի գնման ու հայթայթման գործին մէջ:

Պահեստի սպայ էր ռուսական բանակին: Զինք փրկելու բոլոր ջանքերը զուր անցան եւ ան տիֆով վարակուած 1912 թ.ին մեռաւ բանտին մէջ:

[*Բագու*], 29-VII [1908]

Սիրելի Ռուբէն

Ամսոյս 25-ին Հայկունուն նորից հարցաքննելիս յայտնել են, որ Գանձակի զին. նահանգապետը նրան ճանաչել է, բայց ինչպէս երեւում է սխալուել է եւ խառնել է Շուշուայ Չիլինկարեանի հետ, գրելով, որ նա դաշ[նակցական] է, յայտնի գործիչներից մինն է եւ որին թէեւ քշել են հեռու Սիբիր, բայց նա փախել է։ Այդտեղ ուղարկել են նրա մանրամասն լուսանկարը, մինչեւ անգամ նկարագրած է մարմնի բոլոր չափերը։ Եթէ այդտեղ հարցաքննեն, թող ասեն, որ չիրաւի ճանաչում ենք Յակովբ Չիլինկարեանին, միայն նկարը նրանը չէ. եթէ հարցնեն, թէ Զ.ը երեսին, ձեռքին կամ որեւիցէ տեղում, ունի՞ աչքի ընկնելու նշան, ասացէք, որ աջ ձեռքը՝ մեծ մատի կէսը ընկած էր, նաեւ աշխատեցէք այդ ուղղութեամբ վկայութիւն տուողների թիւը աւելացնել. ի հարկէ չմոռանաք, որ տեսել էք մի քանի տարի առաջ, 4-6 տարի։

Որքան կարելի է չուտ պատրաստուեցէք, որովհետեւ կարող են Ձեզ անպատրաստ գտնել եւ մինչ օրս դժուարութիւններով շինուածը սխալմամբ քանդել։

Մեր բարեւները
ՁՈՂԱԿ

Յ. Գ.- Իմացէք, որտեղ է ծառայել տեղումդ. այնտեղ էլ պատրաստեցէք. խօսեցէք եւ եղբօրը հետ։ Գուցէ իր պահանջով բերեն այդտեղ, բայց ի հարկէ չէք ճանաչում նրան։

ՆՈՅՆԸ

Սա Ղողակի գրած նամակի պատճէնն է:

Փաստ. 380-10

Ա 4.– ՊԱԹՈՒՄԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, ժընեւ

Նաւահանգիստ[1], 1-5-1909

Մ[իրելի] ընկերներ,

Այստեղ յաման լուրեր են պտտում մի կարգ մարդկանց շրջանում, թէ բժիշկ Մուրատեանցը որոշ ցուցմունքներ եւ մատնութիւններ է արել ռուս կառավարութեանը եւ դրա համար էլ շտապել է հեռանալ արտասահման։

Թէեւ այս խօսքերին մենք հաւատ չենք ընծայում, եւ հաղորդում ենք ամենայն վերապահութեամբ, բայց կարծում ենք, աչալրջութեան եւ զգուշաւորութեան դէմ գործած չենք լինի, երբ ի գիտութիւն Ձեզ՝ տալիս ենք այս լուրը։

Ձեմ կասկածում եւ նրանում, որ մեր ներկայ պայմաններում, հակառակորդ բանակի մարդիկ, ամենաստոր եւ անխիղճ կերպով, կարող են այդպիսի սուտ լուրեր յերիւրել։

Լրագիրներից արդէն տեղեկացած կը լինէք խուզարկութիւնների եւ ձերբակալութիւնների վերջերս մեծ չափեր ստանալը։

Ռուս կառավարութիւնը կարծես նպատակ է դրել Կովկասում ձերբակալելու բոլոր (?) դաշնակցականներին եւ ամենացինիկ կերպով ձգտում է ըստ երեւոյթին դէպի այդ։

Եւ երբ բաւական համարէ ձերբակալուածների թիւը, կը սկսի նրանց երկար դատավարութիւնը, որի հետեւանքը կը լինի՝ ոմանց համար աքսոր, ոմանց համար տաժանակիր աշխատանք, ոմանց համար էլի բանտարկութիւն եւ ոմանց էլ ազատութիւն (երեւի քչերին)։

Եւ ահա ռուս կառավարութիւնը հասած կը լինի իր նպատակին. Հ. Յ. Դաշնակցութիւնը քայքայած, մաքրած եւ արմատախիլ (????) արած կը լինի Կովկասում։

Խառն քաղաքի[2] հանգանակութիւնից ձեր ստացած երկու հազար քառասուն (2040) ռուբլու ստացականը, խնդրում ենք ուղարկէք։

Ընկերական բարեւներով
Ի դիմաց VI կենտ. Կոմիտէի
ԲԱԲԿԷՆ

Յ.Գ.- Կարեւոր ենք համարում տեղեկացնել Ձեզ, որ ներկայ ձերբակալութիւնները, ինչպէս ուրիշ շրջաններում, նոյնպէս եւ այստեղ՝ զրկում են մեզ կարեւոր եւ փորձուած ուժերից, եւ այս պայմաններում՝ որքան էլ որ սիրում ենք հաւատալ որ լքում առաջ չի եկել, այնուամենայնիւ գործը որոշ չափով կանգ է առել եւ ուժերի մեծ կարիք կայ, այս հալածանքների դէմ որոշ դիրք բռնելու եւ մտածած հակահարուածներ տալու եւ գործը աստիճանաբար վերակազմելու համար։

ՆՈՅՆ

1.- Նաւահանգիստը Պաթում քաղաքի կուսակցական ծածկանունն է. Նաւահանգիստ-Պաթումի Կ. Կոմիտէութիւնը կ՚ընդգրկէր Սեւ ծովու հարաւ արեւելեան, արեւելեան եւ հիւսիսային շրջանները մինչեւ Օտեսա եւ Պեսարապիա. Կովկաս-Սարուստանի կազմակերպական ցանցին մէջ ան կը գրաւէր վեցերորդ տեղը (VI):

2.- Խառն քաղաք՝ կուս. ծածկանուն Ազովեան ծովու շրջանի քաղաքի մը. արդեօ՞ք Կրասնոդարի:

Փաստ. 17-137

Ա 5.– ԱՌԱՋԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Նամակը հասցէագրուած է Ժընեւ՝ Արեւմտեան Բիւրոյին կամ անոր անդամներէն մէկուն: Ձեռագրին մէջ տարեթիւը 1907 է. այդ պատճառաւ ալ ան զետեղուած է Արեւելեան Բիւրոյի այդ թուականի թղթածրարին մէջ: Ուղղեցինք 1909-ի, որովհետեւ նշուած թուականին Ա. Ահարոնեան Եւրոպա էր, իսկ իր ձերբակալութիւնը տեղի ունեցաւ նոր տոմարով 1909 թ. Մայիսին:

1909 թ. 7ն Մայիսի, Թիֆլիս

Սիրելի՛ս,

Ի հարկէ այստեղի անծայր ձերբակալութիւնների մասին այդտեղ լսած կը լինէք։ Ապրիլ 23-25ին նորից մասսային ձերբակալումներ կատարուեցան թէ Թիֆլիսում եւ թէ գաւառում։ Թիֆլիսում ձերբակալուած են այս վերջին անգամին ի միջի այլոց Աւետիս Ահարոնեանը, Ստ. Մալխասեանը, Ա. Մելիք-Ազարեանը եւ ուրիշ շատերը։ Գրում եմ Աւետ[իս]ի մասին[3]։

Նա մի կերպ յաջողեցրել էր մի տոմսակ ուղարկել, որով յայտնում է, որ իրան մեղադրում են պատժագրքի 102 յոդուածի հիման վրայ (տաժանակիր աշխատանք 4-ից մինչեւ 8 տարի) Հաագայի Խաղաղութեան կոնֆերանսին պատգամաւոր գնալու համար[4]։

Նա խնդրել էր այդ բանը յայտնել Միքայէլի[5] քրոջը, որպէսզի նա անմիջապէս նամակ գրէ եղբօրը (ի հարկէ ոչ փոստով), որ նա՝ Միքայէլը տեսնուի Փարիզում այն բարեկամ ֆրանսացիների հետ, որոնք մասնակցել են այդ պատգամաւորութեան եւ ուրիշներին, եւ ընդհանուր ուժով համոզեն Կլեմանսոյին եւ ուրիշ քաղաքական գործիչների, որպէսզի կարողանան մի կերպ ազդել ռուսաց կառավարութեան վրայ՝ իրենց ազատելու սպառնացող վտանգից։ Ձերբակալութիւնը կատարուել է ոչ թէ այստեղի ժանդարմական վարչութեան կամ Օխրանայի[6] նախաձեռնութեամբ, այլ Նովոչերկասկի պրոկուրորի[7] եւ քննիչի կարգադրութեամբ։ Հետեւաբար Հաակայի կոնֆերանսին գնալ՝ արդէն այժմեան հովերի շնորհիւ պատժուելու է տաժանակիր աշխատանքով։ Իսկ որովհետեւ Աւետիսը իր գնալը բացասել չի կարող, հետեւապէս օրէնքին այդպիսի իմաստ տալով նա կը դատապարտուի անպատճառ։ Միքայէլին նամակ գրել անկարելի եղաւ. հնարաւորութիւն չկայ, ուստի եւ գրում եմ քեզ եւ ոչ միայն իմ կողմից։ Պիտի աշխատէք անել, ինչ որ կարելի է։ Կամ ինքդ գնա, կամ մարդ ուղարկէք եւ նամակ գրէք Միքայէլին, Խաչատուրին[8], որպէսզի անմիջապէս սկսին գործել յիշեալ ուղղութեամբ։ Պիտի աշխատել շտապեցնել գործը, որովհետեւ թէ մի կողմից գործի շարժողութեան համար երկար ճանապարհ կայ եւ միւս կողմից այստեղ Աւետիսի գործը, ինչպէս երեւում է, շատ են շտապեցնելու։

Թումանեանը[9] եւ ընկերները ձերբակալուած են Դեկտեմբերի սկզբից եւ սակայն նրանց մասին մինչեւ այժմ ոչինչ յայտնի չէ եւ ոչ մի կարգադրութիւն չի եղել, իսկ Աւետիսին ձերբակալել են միայն 14 օր սրանից առաջ եւ երէկ արդէն նրան, Մելիք-Ազարեանին ու երկու ուրիշներին բազմաթիւ քրէական յանցաւորների հետ ամենախիստ հսկողութեան ներքոյ տարան այստեղից, ասում են, Նովոչերկասկ։

Թէ ի՛նչ վիճակ է այստեղ տիրում, մանրամասնօրէն կ'իմանաս նամակաբերից եւ միւսներից։ Այսքանը կ'ասեմ, որ մի աներեւակայելի հալածանք է սկսուել համայն հայ ինտելիգենցիայի դէմ։ Համարեա ամէն մարդ թողնում, փախչում է. շատ տեղերում դպրոցները փակուել են ուսուցիչներից շատերի փախչելու պատճառով։

Համբոյրներս՝
Քո ՏԻԳՐԱՆ

3.- Խօսքը կը վերաբերի Ահարոնեան Աւետիսի, որ այդ օրերուն տեսուչն էր Թիֆլիսի Ներսիսեան վարժարանի։ Ստ. Մալխասեանը հանրածանօթ հայագէտն է, «Բացատրական բառարան»ի հեղինակը։

4.- Արդարեւ Ա. Ահարոնեան մաս կը կազմէր Խրիմեան կաթողիկոսի նշանակած այն պատուիրակութեան (միւս անդամներն էին՝ Կարապետ Եպ. Իւթիւճեան եւ Յովհաննէս Շահնազար), որուն պարտականութիւն տրուած էր հայ դատը պաշտպանել Լահէյի (Հաագա) խաղաղութեան խորհրդաժողովին (Օգոստոս 1907 թ.)։

5.- Խօսքը Վարանդեան Միքայէլին կը վերաբերի։

6.- Ռուսական գաղտնի սպասարկութիւն։

7.- Դատախազի։

8.- Խօսքը կը վերաբերի Մալումեան Խաչատուրին (Է. Ակնունի)։

9.- Բանաստեղծ Յովհ. Թումանեանն է։

Փաստ. 19-13

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Ա 6.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ
(ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՁԵՍՍԻ[10] ԱՌԹԻՒ)

Խիստ գաղտնի

Ընկերներ!

Կանգնած ենք կուսակցական պատուի եւ բազմաթիւ ընկեր-սիրելիների պաշտպանութեան ծանր պարտականութեան առաջ։ Հրէշ կառավարութիւնը պատրաստւում է ոչ միայն վարկաբեկելու ու ջլատման ենթարկելու նրա կուռ կազմակերպութիւնը այլեւ ամենախիստ հալածանքի ենթարկելու նրա համոզուած մարտիկներին։ Ինչպէս միշտ, այժմ մանաւանդ կուսակցական մարմինների եւ ընկերների կողմից պահանջւում է ոյժերի կուտակում եւ էներգիայի լարումն սպասուելիք աղէտի առաջ։ Կուսակցական համապատասխան մարմինը արդէն ձեռնարկել է գործի բովանդակ եւ յաջող կազմակերպման։ Այդ նոյն նպատակով ուղարկւում է որոշ վայրերի մեր շարքերին սոյն շրջաբերականը, հաստատ համոզուած լինելով, որ կուսակցական գիտակցութիւնը եւ ընկերական զգացմունքը կը թելադրեն բոլորիս ճշտութեամբ կատարելու ոչ միայն ի ներքոյ բերուած առաջարկները, այլ եւ առհասարակ բոլոր սոյնանման աշխատանքները ապագայում։

Ի գիտութիւն բանտարկուածների եւ ի կատարումն ընկերների յայտարարւում է.—

1) Պաշտպանութեան գործի յաջողութիւնը եւ ոյժերի բաշխման ու դրամի կանոնաւորման անհրաժեշտութիւնը պահանջում են ունենալ մի կենտրոնական «իրաւաբանական խորհուրդ», որը եւ կը ղեկավարի ընկերների պաշտպանութեան գործը։ Սոյն օրգանին են ուղղում գաւառական բոլոր այդ գործով պարապող ընկերները եւ մարմինները իրենց դիմումները եւ նրանից ստանում անհրաժեշտ ինստրուկցիաներ[10ա]։ Իրաւաբանական խորհուրդը անմիջական յարաբերութեան մէջ է կուսակցական բարձր ատեանի հետ եւ գտնւում է Ոսկանապատում[11]։

2) Ծուցակագրել բանտարկուածներին (այդ մասին գրուած է մի անգամ եւս), որոնք դատւում են իբրեւ դաշնակցականներ, եւ ուղարկել այդ իրաւաբանական խորհրդին։

3) Արձանագրել, թէ բանտարկուածներից՝ ա) ով կարող է եւ ուզում է սեփական առանձին պաշտպանութիւնը ունենալ, բ) ով կարող որեւէ գումար մտցնել պաշտպանական ընդհանուր ֆոնդը եւ գ) ով պիտի օգտուի կուսակցական ընդհանուր պաշտպանութեամբ։

4) Ստուգել, կան արդեօք բանտարկուածների մէջ ընկերներ, որոնք չեն ցանկանալ օգտուիլ կուսակցական պաշտպանութիւնից։

5) Բոլոր վայրերում, ուր կան բանտարկուածներ «Դաշնակցութեան գործ»ով, պիտի ունենալ մի իրաւաբան ընկեր (կամ համակրող) բանտարկուածների հետ կապ հաստատելու, իրաւաբանական խորհուրդներ տալու եւ գործին ընդհանրապէս հետեւելու համար։

6) Կարելոյն չափ շատ թուով բանտարկուածներ պիտի ամենակարճ ժամանակամիջոցում պահանջեն պատշաճ ճանապարհով քննիչից ամբողջ քննութեան պատճէնը կոպիյու սο վսեկօ սլեդստվենՆոգօ պռոիզվոդստվա[12], որը օրէնքով պարտական են տալու։

10.- Դատի։

10ա.- Ինստրուկցիա՝ հրահանգ, ցուցմունք։

11.- Ոսկանապատ – Պաքուի կուս. ծածկանունը։

12.- Բնագրին մէջ ռուսերէն՝ ամբողջ դատաքննչութեան պատճէնը։

7) Քննական այդ մատերիալը բանտարկուած ընկերները պիտի
ա) մանրամասնօրէն ուսումնասիրեն,
բ) ձեւակերպեն իրենց հակաճառութիւնները մեղադրական կէտերի վերաբերմամբ եւ
գ) յանձնեն իրաւաբանական խորհրդին այն վկաների ցուցակը, որոնք անհրաժեշտ են այդ գործի համար:

8) Պահանջել, որպէսզի օբվինիտելնի ակտ[13] յանձնուի բանտարկեալին նրա հաւատարմատարի ներկայութեամբ: Այդ նպատակով քննութիւնը վերջանալուց անմիջապէս յետոյ բանտարկեալներ իշխանութեան ծանուցում են իրենց իրաւաբանի մասին, մատնացոյց անելով (բոլորն էլ) իր վայրում գտնուող իրաւաբան-ընկերոջ վրայ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ (ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ)

Մանօթ.-
1) Բոլորը կատարել ճշտութեամբ եւ արագ.
2) Հետեւանքի մասին տեղեկացնել իրաւաբանական խորհրդին:

Ց.Գ.- Ներկայացնող ընկերոջ յանձնարարուած է ի կատար ածել այդ բոլորը ձեր աչալուրջ մասնակցութեամբ:

ՆՈՑՆ

27-VII-09
Ոսկանապատ

13.- Բնագրին մէջ ռուսերէն՝ մեղադրական ակտ:

Փաստ. 1749-5

Ա 7.– ՌՈՍՏՈՄԸՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

30-2-1910

Արեւելեան Բիւրոյին

Իմացած կը լինէք արդէն, որ փոխադրուած է նաեւ Վ.-ի միջոցով Գագիկին[14] յանձնելու համար 4500 ֆր.: Հիմա քանի որ Գագիկը բացակայ է, մէկ ուրիշի միջոցով գանձեցէք դրամը:

Մասնաւոր կերպով հարցրէք Բագուայ ռուսական Կրեդիտ բանկ-ի[15] բաժանմունքին, ինչո՞ւ չեն փոխադրում Շահրիկեանի դրամը: Ինքը դիմել եւ խնդրել է փոխադրել իրեն՝ Crédit Lyonnais-ի միջոցով: Դա էլ բաւական գումար է:

Գալով բանտարկ[եալներին] յատկացուած դրամին, բոլորովին զուր է ձեր անհանգստութիւնը: Դրամը ամբողջովին կը ստանաք: Միայն թէ բանկային յարմարութիւնների պատճառով պէտք է սպասել մինչեւ մայիս 7: Ինչից գիտէ՞ք, որ դատը սկսելու է մայիսին. բա ինչպէս է, որ միւս կողմից պնդում են, որ դատը կը ձգձգուի մինչեւ 1911 թուականը:

Ցանձնուա՞ծ են արդեօք մեղադրական ակտերը:

Միւս կողմից երկիւղ ենք կրում, թէ չլինի, թէ այդտեղ փոխադրուած դրամի գլխին մի վտանգ գայ, ո՞վ գիտէ. աւելի լա՞ւ չէ, որ մաս մաս ստանաք, ըստ կարիքի:

.....[16] պղինձն ու .....[17] մեզ էին պատկանում. պղինձը բերել է տրուած Գագիկի նախաձեռնութեամբ, յանձնուած է Եղիազարեանին ծախելու: Տիկնոջից առանց այլեւայլի պիտի պահանջէք վերցրած գումարները:

Մանասի[18] խնդրի մէջ մենք ինչո՛վ ենք մեղաւոր: Մե՞նք պիտի պարզենք թէ դուք: Ինչո՞ւ է լռում. ճի՞շտ չէ միթէ, որ Մհերը[19] լուր է ուղարկել, թէ Մանասը իրեն ամէն ինչ պարզել է. ինքը գոհացել է, բայց առայժմ անյարմար է համարում պատճառները յայտնել դուրսը: Եթէ այդպէս է, պէտք է ուրեմն սպասել յարմար բոպէին:

(Թղթակից)

Հասցէն՝ Օննիկ Սրապեանին, Գումրեանի մօտ:[19ա]

14.- Վ.Ն՝ հաւանաբար Վռամեանն է, իսկ Գագիկը՝ Տէր Մկրտչեան Ստեփանը:
15.- Բնագրին մէջ ռուսատառ:
16.- Անընթեռնելի բառ:
17.- Անընթեռնելի բառ: Հարկ է ըսել որ Ռոստոմի այս նամակը աւելի սեւագրութեան կը նմանի եւ դժուարաւ կը կարդացուի:
18.- Մանասեան Սարգիս (բանտարկուած) գինական եւ ինքնապաշտպանութեան գործերու պատասխանատու:
19.- Մեր՝ ծածկանունն է Արեւելեան Բիւրոյի անդամ Օհանջանեան Համոյի, որ նոյնպէս բանտ կը գտնուէր:
19ա.- Բնագրին մէջ ռուսատառ:

Փաստ. 1728ա-36

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ՀԱՐՐԱՐԴ
ԳԱՆՁՐԱՆԱՆ ԿՈՄԻՏԷ
2 յուլիսի 1910 թ.
Բ-գ-.
..

Ա 8.– ՊԱՔՈՒԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԵՓՐԵՄԻՆ

Ընկեր Եփրեմ,

Ձեզ քաջ յայտնի է երեւի Կովկասի ներկայ դրութիւնը եւ մեր բանտարկուած ընկերների ծանր վիճակը որոնց թիւը ներկայումս հասնում է 100-120-ի. նոցա դատական պաշտպանութեան կազմակերպումը պահանջում է առնուազն 50 հազար ռուբլի. սակայն Կովկասը միայնակ իր ներկայ լման օրերին անկարող է այս գումարի նոյնիսկ քառորդն հայթայթել, ուստի այդ մասին պէտք է հոգան դրսի մարմիններն ու ընկերները եւ ամէնից առաջ Պարսկաստանն ու Տաճկաստանը:

Այս պատճառով Կ. Կոմիտէս պարտականութիւն ունենալով դատական գործը կազմակերպել, դիմում է Ձեզ առաջարկելով ձեռնարկել տեղումդ ձեր ձեռքի տակ եղած միջոցներով անհրաժեշտ գումարի մի մասը ժողովելուն:

Հաւատացած ենք, որ դուք կարող էք մեծապէս նպաստել այս գործին, քանի որ պարսկական շրջաններում լայն համակրութիւն էք վայելում: Միաժամանակ վստահ ենք որ Ձեր սրտին միանգամայն մօտ կ'ընդունէք այս գործը եւ կարճ ժամանակամիջոցում մեզ մի պատկառելի գումար կը հասցնէք:

Այս առթիւ մենք դիմել ենք նաեւ Թեհրանի մարմնին, խնդրելով անհրաժեշտ աջակցութիւնը ցոյց տալ Ձեզ:

Ի դիմաց Բագուայ Կ. Կոմիտէի՝
Ա. ԲՕՍԿ.

2 յուլիսի 1910 թ., Բագու

Փաստ. 706-137

Ա 9.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ԿՈՉ Ի ՆՊԱՍՏ ՌՈՒՍԱՑ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՁՈՀԵՐՈՒ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ
ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Երկու տարուց ի վեր ռուսաց կառավարութիւնը առանձնապէս կը հալածէ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Հայ կրթուած ու գիտակից դասից հարիւրաւոր մարդիկ զրկուած են ազատութիւնից եւ 160 հոգի մի քանի ամսից յետ՝ ներկայանալու են Նովոչերկասկի դատարանին իբրեւ «քաղաքական յանցաւորներ»[20]*։*

Այդ դատավարութիւնից է կախուած հարիւրաւոր ընտանիքների բախտը, բազմաթիւ տաղանդաւոր հասարակական եւ կուսակցական գործիչների ապագան։

Եւ որչափ էլ անհաւասար ու դժուար լինի դատարանին առաջ Դաշնակցութեան դիրքը, մենք հարկադրուած ենք մասնակցելու այդ պայքարին, որչափ էլ պահանջէ աշխատանք ու ծախսեր։

Ձեռնպահութիւնն ու լռութիւնը այս պարագայում հակասութիւն ու դաւաճանութիւն կը լինէր մեր 20-ամեայ գործունէութեան, մեր սկսած մեծ դատի իրաւասութեան ու Արդարութեան հանդէպ։

Եւ իրաւի, միթէ՞ պարզ չէ մեզի համար որ «քրիստոնեաների պաշտպան» ցարը գործ կը դնէ այսօր նոյն տեսակէտը, նոյն միջոցները, նոյն «արդարութիւնը», որ այնքա՜ն ծանօթ է մեզի համիտական արիւնոտ օրերից։ Մ՛ով չգիտէ որ Կովկասի մէջ կը հալածուին այսօր անոնք, որոնք կը կռուին ճնշուածների եւ զրկուածների համար, որոնք կը պաշտպանեն Օրէնքը՝ հանդէպ բռնաւորի կամայականութեան։ Ակներեւ է, որ Դաշնակցութիւնը կը հալածուի իբրեւ Ախոյեան Թուրքիայի ու Պարսկաստանի խաղաղութեան ու վերածնութեան, իբրեւ Հայ Ազգային իրաւունքներու ռահվիրան...։

Ընկերներ, հայրենակիցներ,

Կարօտեալին օգնելու պէտքը կը զգայ կարօտութիւն տեսնողը։ Օգնութեան ձեռքը մեկնելու է այն կողմը, ուր մեծ է կարիքն ու վտանգը։

Ռուսահայ հալածուող գործիչներու պաշտպանութեան մասնակցելու ենք մանաւանդ մենք որ 20 տարուան մէջ այնքան օգտուեցինք Կովկասից նիւթապէս, ռազմապէս եւ բարոյապէս։ Որչափ էլ մեծ լինին տեղական պէտքերն ու պահանջները, գիտակցելու է, որ ամէն մէկի տուած չնչին լուման չի ազդեր նուիրատուի նիւթականին վրայ։ Այնր մեր բոլորի ընդհանուր եւ հաւաքական օգնութիւնը կ՛անդրադառնայ 160 բանտարկեալներու եւ կուսակցութեան կացութեան վրայ Կովկասի մէջ։

Մ՛ով որչափ կրնայ, թող օգնէ ռուս բռնակալութեան զոհերուն, նշանակելով իր սրտից բխածը թերթին վրայ։*

ԴՈՒՐԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ
ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Հոկտեմբեր 1910

20.- Նախապէս կը կարծուէր, որ 1910 թ. վերջերում տեղի կ՛ունենայ բանտարկեալներու դատավարութիւնը։ Այս վերջինը ձգձգուելով կայացաւ միայն 1912 թուի Փետրուարէն Ապրիլ ամիսներում։

*) Հանգանակուած գումարների մասին կը տպագրուի կուսակցութեան կեդրոնական օրգանի մէջ։

Փաստ. 108-53 – 108-53ա

Ա 10.– ՍՏԱՑԱԳՐԻ ՆՄՈՅՇ

№ 51

ՆՈՒԷՐԱՑՈՒՄ

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

قافقاسیه ارمنی سیاسی محبوسلری منفعته

AU PROFIT DES DÉTENUS POLITIQUES ARMÉNIENS DU CAUCASE

Ստացաւ } Հարիւրապատիկ Հ. Յ. Դաշնակցութիւն
اخذ اولنمش } թիւս եւ կամ [illegible]

Գումարը } [redacted]
جمع

Նախագահ (رئیس) [illegible]

Գ. Կիւմրի, 29 Մարտի 1911 Գանձապետ (خزینه‌دار) [illegible]

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԿՈՄԻՏԷ 1911 Կ. ՊՈԼԻՍ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ
ԳԱՆՁՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

قافقاسیه ارمنی سیاسی محبوسلری اعانه جمعیتی

COMITÉ POUR LA COLLECTE
EN FAVEUR DES DÉTENUS POLITIQUES ARMÉNIENS DU CAUCASE

№ [illegible] Գ. Կիւմրի, 28 Մարտի 1911

Հ. Յ. Դաշնակցութիւն
Գանձապետ

Գանձապետ

Սիրելի Հայրենակիցներ,

Ստանձնելով շրջանակագրական տարած ի նպաստ նոյնատեսակ խարտեսով բանտարկեալներու 2եր 29 Մարտի ամսոյ մէջ 15.35 գումարը (տասներեք [illegible] հարիւր) Ներքսի կ՛սանամ պատշաճ քննարկիչը (թիւ 51...):

Ի դիմաց Ներքսական Հանձնախմբի՝

ԳԱՆՁԱՊԵՏ

Գ. Կիւմրի

ՀԵՌՈՒ՝ Գ. ՓԱՍՏՐՄԱՋԵԱՆ
Ներքսական Հանձնախմբի Ամբ. Քարտուղար

Կ. Պոլիս

Փաստ. 877-81

Ա 11.– ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

10/23 Նոյեմբեր 1910, Պոլիս

Սիրելի Ռոստոմ!

Երեւի գիտես, որ բանտարկեալների դատավարութիւնը, ինչպէս ասում են, շուտով սկսուելու է[20]։ *Պաշտպանութեան համար դրամական մեծ կարիք կայ։ Կովկասում փող ձեռք բերելու յոյսը կտրած՝ Ոսկանապատը*[11] *յատուկ մարդ էր ուղարկել Ժընեւ եւ Պոլիս։ Ժընեւից առաջ (դեռ ամառը) փոխադրուած էր 15000 ֆր. եւ 800։ Այս անգամ էլ Միքայէլը*[5] *փոխադրել է 32000, ուրեմն քիչ պակաս 50000-ից, որը Ընդհանուր Ժողովի որոշածն է։ Պոլիսը ոչինչ չունի ու ինքն էլ ապրում էր մինչ այժմ գլխաւորապէս Ժընեւով*[21]։ *Եւ ամէնքը աչք են տնկել միմիայն Ամերիկայի վրայ։ Բայց այնտեղ էլ, գիտես էլի, ուստա Խաչատուրը*[22] *խօսքը ամէն բանից բարձր է դասում... եւ առ այժմ դրամական հարցը մնում է նիսիա*[23], *չնայելով որ մի քանի կծու նամակներ են գրուել այստեղից ու Ժընեւից։*

Այսպիսի կացութեան մէջ միակ ելքը մնում է ծանրանալ դա՛ռձեալ Ժընեւի վրայ։ Այստեղ գտնուող բոլոր ընկերները միաձայն որոշել են «Ժընեւից փոխադրել էլի 10.000 ֆր., եթէ այնտեղի գումարը պակաս չէ 20.000-ից»։ Այդ վճռին դէմ է միայն Վահաբը[24] *որ միակ պաշտօնական հանգամանք ունեցող անձնաւորութիւնն է։ Նա պատճառաբանում է, որ Ընդհ. Ժողովի որոշումը միայն 50.000 է եւ, որ գլխաւորն է, նոր փոխադրութիւն կատարելով (եղած 25-30.000-ից)՝ ապագայում քաղցած կը մնան «Ազատամարտն» ու գործիչները։ Մենք դրան հակադրում ենք ա՛յն կարծիքը, որ 50.000-ի սահմանից չանցնելը հարցի միայն իրաւաբանական կողմն է, իսկ մենք մոռանալու չենք նա՛եւ բարոյականը, որը մեզ վրայ պարտք է դնում այդ սահմանը քիչ մը զանցառութեան տալ։ Իսկ ինչ վերաբերում է ապագայում քաղցած մնալուն,— դա աբսուրդ*[25] *է։ պատրաստ փողով ու պենսիայով*[26] *իմ տատն էլ կը գործի, թո՛ղ մարմինները աշխատեն ու ծախսեն, ինչպէս միշտ։ Ինչ եւ իցէ։ Վահաբը դէմ է։ Միքայէլը*[5] *գրել է, որ կարելի է եւ պէտք է փոխադրել 10.000 ֆր., եթէ ուրիշ կողմերից դրամական օգնութիւն չհասնի։ Մնում է քո ու Ցոնանի*[27] *կարծիքը։ Այժմ գրում եմ երկուսիդ, որ ձեր կարծիքները այդ հարցի առթիւ՝ շուտով ղրկէք Ժընեւ։*

Ես վաղուց եմ վերադարձել[28] *եւ այժմ տեղաւորուած եմ մի ֆրանսիական ընտանիքում։ Ռեւմատիզմս հետզհետէ թեթեւանում է՝ չնորհիւ մի անյայտ բժշկի դիագնոզի*[29]։ *Նա գտաւ, որ ռեւմատիզմ չունիմ եւ ցաւերը հետեւանք են արեան անմաքրութեան ու անկանոն շրջանառութեան, որից բժշկուած եմ այժմ։*

Ի՞նչ ես անում դու, ինչպէ՞ս են անցնում օրերդ։

Ցոնանից նամակ ունիմ. շատ գոհ է իր նոր դրութիւնից, մանաւանդ «հալալ աշխատանքով» ապրելու վիճակից։

Համբոյրներով՝ քո ՆԻԿՈԼ

Հասցէս — «Ազատամարտ»։

21.- Այսինքն՝ Ժընեւէն հայթայթուած գումարներով:
22.- Ակնարկութիւն է. Ակնուի – Մալումեան Խաչատուրի, որ այդ օրերուն Ամերիկա կը գտնուէր:
23.- Նիսիա՝ ապառիկ, խոստում, թէական իմաստով:
24.- Վահաբ՝ կուս. ծածկանուն Արեւմտեան Բիւրոյի անդամ Արշակ Վռամեանի:
25.- Անհեթեթ, անիմաստ:
26.- Թոշակով:
27.- Դաւթեան Յոնան, որ այդ օրերուն Թաւրիզ էր տեղւոյն Կենտրոնական վարժարանի տեսուչի պաշտօնով:
28.- Խօսքը կը վերաբերի Ն. Դումանի Հելուանէն (Եգիպտոս) վերադարձին, ուր բուժուելու համար գացած էր եւ մնացած աւելի քան մէկ տարի:
29.- Ախտաճանաչման:

Փաստ. 333-5

Ա 12.– ՊԱՔՈՒԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Սիրելիք,

Շտապում ենք պատասխանել ձեր Նոյեմբ. 21-ին գրած նամակին։ Նախ, մեր ստացուածքների մասին։ Մեղրեցու միջոցով տեղափոխածներդ են 4500+1000+1200+3300=10.000 ֆրանք, ապա առանձին 800 ֆրանկ եւ 11.887 ռ[ուբլի] 07 կոպ[էկ] ամբողջովին ստացուել են։ Օհանէսի միջոցով ստացել ենք միմիայն 1495 ռ. 33 կպ. կամ 4016 ֆրանկ։ Ինչ վերաբերում է ձեր հաշիւների մէջ եղած 1000 ֆրանկին, այդ գումարը չենք ստացել մենք եւ ոչ ինքը Օհանէսը։ Ուրեմն ստացել ենք ձեզանից ընդամէնը մօտ 17.500 ռ[ուբլի]։ Այդ գումարից մնում է մեզ մօտ 15.000 ռ., ուրեմն ծախսել ենք 2500 ռ.։ Այդ կազմում է մի չնչին մաս ամբողջ գումարից, որ այս տարուայ ընթացքում ծախսել ենք բանտի, բանտարկեալների եւ դատավարութեան նախապատրաստական գործողութիւնների շուրջը. բաւական է ասել, որ միմիայն Բագուից կատարուած ծախսերի գումարը հասնում է 10.000 ռբ.։ Հարցնում էք, թէ ի՞նչ է արուած. նոյնիսկ կասկածում էք, թէ արդեօք արուած է մի բան։ Հասկանում էք անշուշտ, որ պատասխանել այդ հարցին ու փարատել ձեր կասկածները մակագրութեամբ մենք ոչ մի հնարաւորութիւն չունինք։ Չգիտենք որո՞նք են ձեր տեղեկութիւնների աղբիւրները եւ ինչն է դժգոհութեան առիթը։ Գիտենք միայն, որ արել ենք այն ամէնը, ինչ մեր հասկացողութեամբ հնարին էր անել։ Ձեզ մնում է միայն՝ կամ հաւատալ մեր ձեռնհասութեան ու պարտաճանաչութեան եւ թողնել մեզ վարել գործերը այնպէս, ինչպէս մենք ենք հասկանում, կամ գալ այստեղ, ընդունել հաշիւները եւ օգնել մեզ ձեր խորհուրդներով։

Ինչ վերաբերում է այն 10.000 ֆրանկին, որ մենք տակաւին սպասում ենք ձեզանից, այդ մեր սպասելիքը հիմնում ենք ձել յայտնի որոշման վրայ, որով յատկացրած է եղել այս գործին 50.000 ֆրանկ. այսպէս՝ ստացել ենք մենք ընդամէնը 46.800 ֆրանկ, ուրեմն 50.000-ից մնում է 3200 ֆր., յետոյ մեր հաշուին ստացել էք դուք Պոլսում եղածը, որ անում է մօտ 5400 ֆր., ընդամէնը 8600 ֆր.։

Մեր սպասելիքը սահմանափակում ենք 10.000 ֆր., որովհետեւ հասկանում ենք, որ դրանից աւել տալու դուք իրաւունք չունէք։ Ուրեմն եթէ չափելու լինինք եղած կարիքի չափով, առնուազը դրա հնգապատիկը կը պահանջէինք։

Հաշուեցէք ինքներդ, ինչպէս հիմա պարզուում է. դատի կ'ենթարկուին մօտ 150 մարդ եւ դատը կը տեւի 6-8 շաբաթ. այդքան մեղադրեալների եւ այդքան երկար ժամանակի համար հարկաւոր թուով փաստաբանների միմիայն հոնորարը կը հասնի մինչեւ 40.000-45.000 ռ. կամ 100.000 ֆր., իսկ միւս ծախսերը անբաժանելի կերպով կապուած են դատավարութեան հետ, որ նոյնպէս կազմում են ու կազմելու են մի պատկառելի գումար։ Տեսնում էք մեր դրութիւնը։ Մենք դիմում ենք ամէն տեսակ կարելի-անկարելի միջոցների, որպէսզի մի կողմից կրճատենք, մինիմունի հասցնենք ծախսերը, միւս կողմից՝ աղբիւրներ գտնենք մասնակի օժանդակութիւնների։ Դա մեզ յաջողուում է մեծ դժուարութեամբ եւ շատ փոքր չափով, որովհետեւ եւ գոյութիւն ունեցող պայմանները չափազանց աննպաստ են։ Եւ մենք նախատեսնում ենք սրտի ցաւով, որ որքան էլ ճիգ թափելու լինինք, այնուամենայնիւ չպիտի կարող[ան]անք կազմակերպել գործը այնպէս, որ մեղանչած չլինենք մեր ընկերների եւ կուսակցութեան առաջ։

Այս է մեր դրութիւնը եւ մենք իրաւունք ենք համարում պնդել, որ մեզ հասնելիք 10.000 ֆր. (կամ՝ եթէ ցանկանաք բծախնդիր լինել 8600 ֆր.) դուք առանց ուշացնելու հասցնէք մեզ Նոյն Մեղրեցու միջոցով ու չխառնէք այս գումարը այն հանգանակութիւնների հետ, որ կատարուում են կամ կատարուելու են Ամերիկայում, Թուրքիայում, Պարսկաստանում. հաւատացած եղէք, որ այդ բոլոր հանգանակութիւններով հանդերձ՝ մեր գործը դարձեալ լիովին ապահոված չի լինել։

Ընկերական բարեւներով՝
ՈՍԿԱՆԵԱՆ

1910 թիւ 22ին Նոյեմբերի
Բագու

Փաստ. 334-1

Ա 13.– ՊԱՔՈՒԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, Ժընեւ

Կուսակցութեան դէմ շղթայազերծուած ընդհանուր հալածանքի տարիներուն Ոսկանապատ-Պաքուի Կ. Կոմիտէն կը յաջողէր այսուհանդերձ որոշ գործունէութիւն ցոյց տալ Կովկասի մէջ։ Հասկնալի պատճառներով Մարմնի կողմէ յղուած գրութիւնները կը ստորագրուէին շարք մը կեղծանուններով, ինչպէս Մաշտոցեան, Ոսկանեան, Արամեանց եւայլն։

Ցարգելի ընկերներ!

Մեզանից շատ քիչ էք տեղեկութիւններ ստանում. նախկին ընկերական յարաբերութիւնները կարծէք մոռացութեան է տրուած եւ մնացել է միայն չոր ու ցամաք պաշտօնական գրագրութիւնը. վերջինն էլ շատ անկանոն։

Մեր վայրը, որտեղից առաջ համարեա ամէն օր դէպի ձեզ նամակներ էր յղում — պապանձուել է. դորա պատճառները շատ են, բայց ամէնից գլխաւորը մեր ընկերներին պատահած դժբախտութիւնն է։ Մեր հին ընկերներն էին, որ անխախտ էին պահում ընկերական կապը ձեզ հետ եւ այժմ նոցա բացակայութեան միջոցին, մենք մեզ այս խնդրումն էլ անզօր ենք զգում։

Բայց այսպէս շարունակել հարկաւ անկարելի է. այս լքման եւ այլասերման բոպէին մենք աւելի ենք կարօտ դրսի ընկերների խրախուսանքին եւ քաջալերիչ խորհուրդներին. մենք այսուհետեւ կ'աշխատենք ձեզ իրազեկ դարձնել այստեղ անցած դարձածի մասին։ Այս նամակը գրում ենք ի պատասխան ձեր գրած վերջին նամակին. այնտեղ մի քանի հարցերի մասին մեզնից կարծիքներ էք հարցնում։ Անցնինք ձեր առաջարկած հարցերին հերթով. խմբագրութիւնը փոխադրելու մասին. մենք կարծում ենք որ խմբագրութիւնը պէտք է մնայ իր նախկին տեղում առանց փոխադրութեան. անցեալ Ընդհ. Ժողովը որոշել է փոխադրութեան հարցը թողնել մինչեւ յետագայ Ընդհ. Ժողով։ Մենք ապագայ Ընդհ. Ժողովումն էլ խմբագրութիւնը Պոլիս փոխադրելուն հակառակ ենք լինելու եւ աշխատելու ենք պահել իր տեղը։ Որքան մենք կարողացանք ըմբռնել փոխադրելը պայմանաւորում են տնտեսական տեսակէտով, եւ այդ տնտեսութիւնը մեր հաշուով լինելու է 1000-2000 ռուբլու, բայց դորա փոխարէն մենք զրկուելու ենք մի այնպիսի յեղափոխական տրիբունից[30], որպիսին է Շուէյցարիան, որտեղ մենք մեր պատուաւոր տեղը ունենք. մենք կարծում ենք մի 1000-2000 ռուբլու համար չարժէ զրկուել մի այսպիսի կենտրոնից. չենք երկարացնում, մանաւանդ որ այդ հարցը քննութեան չի դրուած, այլ միայն հիմնուելով միմիայն Ընդ. Ժող.ի պաշտօնական որոշման վերայ, ասում ենք, որ մենք կատարելապէս հակառակ ենք մինչեւ առաջիկայ Ընդհ. Ժող. խմբագրութիւնը փոխադրելուն։

Ձեզ հետաքրքրող երկրորդ հարցն է. մեր ներկայ դրութիւնը եւ մեր գործունէութիւնը. այդ հարցը շատ կարեւոր է եւ ժամանակին, մանաւանդ եթէ, ինչպէս գրում էք, պէտք է մեր պատասխաններից օգտուէք որոշ յարաբերութիւնների ժամանակ. բայց որքան այդ հարցը կարեւոր է նոյնքան էլ նրան դժուար է պատասխանել, կամ աւելի ճիշտ ասած, դժուար է մաթեմատիկական ճշտութեամբ պատասխանել, թէ ի՞նչ է կատարւում Ռ[ուսաստանի] յեղափոխական կուսակցութիւնների ներսը, թէ նոքա ինչպիսի՞ գործունէութիւն ունեն իրանց մասսաների մէջ. այդ մասին, կարծեմ դուք բաւականին տեղեակ կը լինէք. նոցա գործունէութիւնը կարելի է ասել հաւասարուել է զերոյի. նախկին լեգալ հիմնարկութիւններից (պրոֆես[իոնալ] միութիւն, բանուորական միութ.) համարեա եւ ոչ մէկը գոյութիւն չունեն. մի միութիւն որը ունէր իր ծաղկած ժամանակը 3000 անդամ, այժմ ունի 40-100 անդամ. կոնսպիրատիւ[31] գործունէութիւն մի քիչ կայ, բայց նա էլ շատ թոյլ եւ անկանոն։ Նոյն դրութիւնն է եւ դեռ էլ աւելի եւ մեր մէջ. մենք չունէինք այն լեգալ[32] միջոցները, միութիւններ եւայլն, որտեղ կարողանայինք գոնէ նախկին մեծութեան բեկորները պահպանել. ընդհանուր ռէակցիայի հետ քանդուեցին նաեւ մեր միութիւնները. բացի ընդհանուր պատճառներից մեզ վերայ սարսափելի ազդեցութիւն արեց եւ մեր ընկերների ձերբակալութիւնները. պէտք է խոստովանիլ, որ մենք Կովկասում սովոր չէինք այդպիսի հալածանքի եւ այդ պատճառով ենթարկուեցինք խայտառակ եւ համատարած պանիկայի[33], որից մինչեւ այժմ չենք կարողանում ազատուել. գլխաւորապէս պանիկան տիրեց մեր գործող ընկերներին, այս վերջիններից տարածուեց եւ ամէնուրեք. ի հարկէ շատ հասկանալի է, որ այդ պայմաններում անկարելի էր մի չինարար գործ կատարել. մենք աշխատում էինք եղածը աշխատել պահել, դա էլ շատ տեղերում չյաջողուեց. եւ այժմ այստեղ մենք ունինք միայն մեր մարմինների բեկորներ, շատ տեղերում այդ էլ չկայ. մեր քաղաքում եւ իր շրջանի նաւթաշխարհում նախկին մարմիններ համարեա գոյութիւն ունեն. այստեղ մենք դարձեալ ունենք բանուորների մէջ մեր համակրողների ստուար թիւ. աշխատում ենք որքան հնարաւոր է պաշտպանել նոցա հետ նախկին ընկերական յարաբերութիւնները եւ քիչ քիչ ցանկանում ենք վերականգնել նախկին մեր մարմինները. այժմ արդէն տիրած սարսափը մասամբ անցնում է եւ մենք յոյս ունենք որ կարելի կը լինի գոնէ մասամբ վերսկսիլ մեր նախկին կոնսպերատիւ գործունէութիւնը, բայց այդ մասին եւ առհասարակ մեր այս շրջանում արածի մասին կը գրենք հետեւեալ անգամ։ Մեր գործունէութիւնը այս երկու տարի է գլխաւորապէս պտտում է մեր բանտարկուած ընկերների դատաստանական գործերի շուրջը. այդ մասին ձեզ պատմած կը լինի ընկեր Ղասումեանցը, իսկ նրանից յետոյ եղածի մասին էլ ձեզ կը գրենք հետեւեալ նամակով։

Ստացել ենք ձեր ուղարկած վերջին 2000 ֆր.։

Այսօրուայ թերթերում, Սուրհանդակ, Բագու, գրուած է թէ Սպանդարեանցը կարողացել է յեղափոխական ատեանի առաջ իր անմեղութիւնը ապացուցանել. մենք այդ լուրին չենք հաւատում. եթէ մի բան գիտէք, խնդրում ենք յայտնեցէք։

Ընդունեցէք ընկերական յարգանքներս եւ ողջոյններս։

Ի դիմաց Ոսկանապատի
Կեդրոնական Կոմիտէի
ԱՐԱՄԵԱՆՑ

8 Ցունուարի 1911 թ.
Ոսկանապատ

30.- Բեմէ, ամպիոնէ՝ ազատօրէն արտայայտուելու։
31.- Դաւադրական, հակապետական։
32.- Օրինական, օրէնքով արտօնուած։
33.- Խուճապի։

Փաստ. 21-1

Ա 14.– Մ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

2-VII-1911

(Խնդրում եմ այս նամակը լաւ կարելւոյն շուտ հասցնել ուր հարկն է):

Ընկերներ!

Յունիսի սկզբին (հին տոմարով) Տփխիսում կայացաւ մի խորհրդակցութիւն բաղկացած սակաւաթիւ տեղացի եւ եկուոր ընկերներից։ Քննութեան էր դրուած Արեւելեան Բիւրոյի առաջարկը՝ ընտրել պատգամաւորներ առաջիկայ Օգոստոս 1-15 կայանելիք Ընդհանուր Ժողովի համար։

Խորհրդակցութիւնը յանձնարարեց ինձ իր որոշումները այստեղից գրել Ձեզ – դրանք հետեւեալներն են.–

1) Ընկերները լաւ տեղեակ չլինելով, թէ ինչ պայմաններ Թուրքիայում անհրաժեշտ են դարձնում այդ համագումարի կայանալը Օգոստոսին, Կովկասեան իրականութեան եւ առհասարակ կուսակցական, կազմակերպական եւայլն տեսակէտներից յարմար էին գտնում որ դա յետաձգուի մինչեւ Նովոչերկասկի դատի վերջանալը – որովհետեւ ա) այդ դատը կարող է շատ խնդիրներ հրապարակ հանել, որոնց լուծումը միայն Ընդհ. Ժողովի իրաւասութիւն են վերաբերում եւ բ) այդ դատում հրապարակ եկած շատ երեւոյթներ ամենայն հաւանականութեամբ կազմակերպական բոլորովին նոր սիստեմի, գուցէ եւ ծրագրային փոփոխութիւնների անհրաժեշտութիւն երեւան կը բերեն։

2) Կովկասեան կազմակերպութիւնները ներկայումս այնպիսի քայքայուած վիճակի մէջ են, իսկ ոստիկանական խիստ հսկողութիւնը լայն գումարումները այն աստիճանի անհնարին է դարձրել, որ այնտեղի ընկերները անկարող են կուսակցական ցենզի եւ այլն պահանջներին բաւարարութիւն տուող պատգամաւորներ ուղարկել. մանաւանդ կը դժուարանային ներկայ պայմաններում այդքան պատգամաւորների ծախքը հոգալ։ Հետեւաբար եւ խնդրում են նկատի ունենալ, որ եթէ ժողովը այնուամենայնիւ անխուսափելիօրէն կայանալու է, Կովկասը ոչ մի հնարաւորութիւն չունի օրինական պատգամաւորներով նրան մասնակցելու։

3) Եթէ ընկերները անհրաժեշտ կը համարեն, որ Կովկասից այնուամենայնիւ մարդիկ լինեն այդ ժողովում, արդէն Կովկասի ընկերները հարկադրուած կը լինին արտասահմանում գտնուող երկու ընկեր, որոնք ծանօթ են Կովկասեան գործերին վերջին շրջանում եւ այնտեղից նոր են եկած[34]*, լիազօրել, գուցէ խորհրդակցական ձայնով, ժողովին ներկայ լինել։*

Յայտնելով այս որոշումները խնդրում եմ Ձեզ, ընկերներ, որքան կարելի է շուտ այս մասին Ձեր կարծիքը գրէք Կովկաս։

Ընկերական բարեւներով
Ա. ՇԻՐԱԿՈՒՆԻ[35]



34.- Նկատի ունի Ա. Սահակեանը, Ա. Իսահակեանը եւ Գաբեզին Խաժակ, որոնք դրամական եռաշխատութեամբ բանտէն դուրս գալէ ետք, ոչ օրինաւոր ճամբով անցած էին սահմանը եւ պիտի մասնակցէին արդարեւ 1911 թ. Օգոստ. 17 – Սեպտ. 17 Պոլսոյ մէջ գումարուած Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին։

35.- Մարտիրոս Յարութիւնեանն է, այլապէս ծանօթ եւս Ասլան եւ Ասլան Շիրակունի ծածկանուններով, որ մասնակցած էր 1909-ին Վառնայի մէջ գումարուած Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովին։

Փաստ. 1543-17

Ա 15.– ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Այս եւ յաջորդ փաստաթուղթերը վկայութիւններ են Կովկասի մէջ կիսակազմալոյծ կազմակերպութեան ընդյատակեայ որոշ գործունէութեան, որուն մասին սակաւաթիւ գրութիւններ կամ տեղեկութիւններ այսուհանդերձ կը հասնէին գերադաս մարմիններուն։ Տեղեկութիւնները առ հասարակ կը վերաբերին Պաքուի եւ Երեւանի շրջաններուն։ Անոնցմէ յատկանշական է Սիմոն Վրացեանի կազմածը Երեւանի նահանգին եւ որոշ չափով մը մնացեալ շրջաններուն մասին, շարադրուած այդ վայրերէն հասած բերանացի եւ գրաւոր տեղեկութիւններու վրայ։ Փաստաթուղթը կազմուած է Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին (1911) ներկայացնելու համար։

Ծանօթագրութիւններով լուսաբանած ենք կուս. ծածկանուններով կամ հին անուանակոչումներով տրուած տեղանունները։

Վերջերս այստեղ եկաւ Մրգաստանի[36] *շրջանում գործող եւ գործերին մօտից տեղեակ ընկերներից մէկը, որի տուած տեղեկութիւնները բաւական հետաքրքրական են մեր ամենագլխաւոր շրջաններից մէկի վիճակը պարզելու համար։ Միացնելով այդ տեղեկութիւններին եւ ուրիշներից կամ նամակներից քաղուածքները՝ ներկայացնում եմ Ընդհանուր Ժողովին*[37]*։ Աչքի առաջ ունենալով այն, որ Կովկասից հազիւ թէ գան բաւարար չափով մարդիկ, այս տեղեկութիւններն աւելի եւս արժէքաւոր են հանդիսանում։*

ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ *4 խումբ կայ արհեստաւորներից, բանուորներից եւ գործակատարներից։ Խմբերը ժողովներ անում են, ամսավճար հաւաքում էին, բայց վերջերս չեն վճարում, որովհետեւ դրամը ստացող մարմին գոյութիւն չունի. խմբերը քանիցս դիմել են ուսուցիչ-ընկերներին՝ խնդրելով իրենց հետ զբաղուել, բայց ստացել են մերժում։ Կայ 6 հոգուց բաղկացած մարտական խումբ, որ «գործի» ժամանակ աջակցում է, մեծ մասամբ, խուզարկու դեր կատարելով* սլեժկա[38]*։ Թեմական դպրոցում երկու աշակ[ակերտական] խումբ կայ. 1 խումբ էլ ռուսաց ուսուցչ. սեմինարիայում. թեմականները պարապում են, իսկ սեմինարիստները մարդ չունեն. քանի անգամ դիմել են թեմականի ուսուցիչ ընկերներին, բայց մերժում են ստացել։ Թեմականի մեծ մասը եւ ամբողջ սեմինարիան մեզ հետ են։ Գիմնազիստների մէջ 1 խումբ կայ՝ անունով միայն, թէեւ գիմնազիայի ամենաաչքի ընկնող տղաները մերոնք են։ Կայ ընդհ. գիմնազիստների միութիւն՝ անկուսակցական եւ ապազգային։ Գիմնազիայի ռեժիմը շատ խիստ է։ Օրիորդաց գիմնազիայի աշակերտուհիների մէջ կայ մէկ խումբ, որ պարապում է ինքնազարգացմամբ, յարած է մեզ, աջակցում է մեզ գրականութիւն տարածելու, «մթերք» տեղափոխելու եւ այլն գործերի մէջ։ Գոյութիւն ունի անուանական կերպով մի մարմին, որ համարեա բան չի անում։ Այս գարնանը ահաբեկուեց Աշուղի*[39] *սպանող Խաչոն։ Անցեալ տարի աշնանը մեր ընկերների որոշումով ահաբեկուեց Տիգրան Ջալալեան – գաղտնի ոստիկանութեան ղեկավարը։ Մեր ընկերներից մէկը ինքնաբերաբար սպանեց լրտես Ստոլիարովին, որը մօտիկից ճանաչելով մեր ընկերներին եւ ծանօթ մեր տեղական գործերին՝ աղետաւոր էր դարձել։ Մատնութիւնները, խուզարկութիւնները վերջերս շատ յաճախ են լինում. շատ հայ մատնիչներ են երեւան եկել, բայց ոստիկանութիւնը թոյլ է, դեռ վախենում է Դաշնակցութիւնից։ Չնայած կառավարութեան բռնութիւններին, հասարակութեան տրամադրութիւնը լաւ է, կարելի է կազմակերպել, բայց տեղի ղեկավար ոյժերը՝ մեծ մասամբ ուսուցիչները՝ չափազանց երկչոտ են եւ խուսափում են որեւէ գործ անելուց։ Տրամադրութիւնը լաւ է, մանաւանդ, արհեստաւոր, բանուոր եւ մանր խանութպան տարրերի մէջ, որոնք իրենք ինքնաբերաբար դիմումներ են անում կազմակերպուելու, բայց*

36.- Երեւանի Կ. Կոմիտէութեան կուս. ծածկանուն։

37.- Խօսքը Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովի մասին է, որ պիտի գումարուէր Պոլիս, 1911 թ. Օգոստ. 17 – Սեպտ. 17։

38.- Բնագրին մէջ ռուսատառ՝ հետապնդում (քաղաքական առումով)։

39.- Բուն անունով Յովնանեան Սահակ. նախորդող տարիներում եղած էր անդամ Մրգաստան-Երեւանի Կ. Կոմիտէին։

մարդ չկայ։ Գործակատարների եւ ինտելիգենցիայի տրամադրութիւնը խիստ ընկած է։ Դաշնակցութեան դատը եւ բանտարկութիւնները, բնականաբար, վատ են ազդում, բայց չեն յուսահատեցնում, այլ՝ բողոքի զգացում են առաջ բերում։ Անցեալները մեզ մօտ եկան 15 արհեստաւոր եւ գործակատար երիտասարդներ եւ առաջարկեցին իրենց զէնքերով իրենցից մարտական խումբ կազմել մեր տրամադրութեան տակ։

Այս տղաներից մէկը պատահմամբ բռնուեց մի ահաբեկման ժամանակ, որին ինքը չէր մասնակցում եւ մահուան պատժի դատապարտուեց եւ մահուան վճիռը զարմանալի պաղարիւնութեամբ եւ արհամարհանքով ընդունեց։ Երեւանի ամբողջ հայ ժողովուրդը դիմեց նահանգապետին եւ փոխարքային եւ վճիռը փոխուեց 25 տարի տաժանակիր աշխատանքի։ Անլեգալ գրականութեան մեծ պահանջ կայ, բայց շատ քիչ է հասնում։ Դպրոցական եւ այլ կուլտուրական գործը մերոնց կամ համակիրների ձեռքն է։ Հայ-թուրքական յարաբերութիւնները շատ լաւ են։

<u>ՆՈՐՔ</u>.— Կայ երկու խումբ, որոնց հետ պարապում էր թեմականի վեցերորդ դասարանի մի աշակերտ, բայց վերջերս ձերբակալուեց։

<u>ԷՋՄԻԱՇԻՆ</u>.— Կայ երկու խումբ գիւղացիներից, մէկ խումբ էլ ուսուցիչներից։ Ուսուցիչները շրջում են եւ մօտի գիւղերը։ Ժողովներ լինում են, անդամավճար տրւում է, բայց դրսի հետ կապ չկայ։ Երբեմն-երբեմն անլեգալ գրականութիւն էլ ստացւում է։ Ճեմարանի աշակերտութեան մեծ մասը դաշն[ակցական] է։ լինում են ժողովներ ինքնազարգացման նպատակով։ Ճեմարանցիները երբեմն-երբեմն գիւղ էլ են գնում։

<u>ՕՇԱԿԱՆ</u>.— Կայ 3 խումբ։ ուսուցիչներից մէկը կանոնաւորապէս պարապում է հետերը։ անդամավճար հաւաքւում է, բայց մնում է իրենց մօտ, որովհետեւ չգիտեն ում յանձնել։

<u>ԱՇՏԱՐԱԿ</u>.— Կայ 6 խումբ։ դրամ տրւում է, ժողովներ լինում են, տեղական 8 դաշն[ակցական] ուսուցիչներից ոչ ոք չի պարապում, օշականցի ուսուցիչ-ընկերն է գալիս խմբերի հետ զբաղուելու։ Խիստ լայն ծաւալ է ստացել թաքցութիւնը, որին զոհ գնացին եւ մեր ընկերներից։

<u>ՔԱՐՊԻ</u>.— 1 խումբ։

<u>ՂՐՋՐԼ-ԹԱՄԻՐ</u>[40].— 1 խումբ, պարապում է տեղի ուսուցիչը։

<u>ՔԱՐԱՔԱՐ</u>.— 1 խումբ։

<u>ՔԱՆԱՔԵՌ</u>.— 2 խումբ գիւղում եւ խմբեր շրջակայ գիւղերում։ ունի շրջանային կոմիտէ։ Ուսուցիչները պարապում են խմբերի հետ եւ դուրս են գալիս շրջանի գիւղերը։ Անհատական եւ խմբական խուզարկութիւններն անպակաս են։ Անդամավճար տրւում է, բայց մնում է իրենց մօտ։

<u>ՂԱՄԱՐԼՈՒ</u>[41].— Կայ նշանակովի մարմին, բայց գործ չի անում։ անունով կան մի քանի խմբեր։ Աշուղի[39] սպանիչի ահաբեկումը կատարուեց տեղական ոյժերով։ Տրամադրութիւնը շատ է ընկած։ մատնութիւնները անպակաս են։ թաքցութիւնը զարհուրելի չափերի է հասած։

<u>ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ</u>[42].— Ուսուցիչները դաշնակցական են։ գիւղերը պրոպագանդայի գնացել են, բայց կազմակերպութիւն չկայ։ Տրամադրութիւնը լաւ չէ։

<u>ԴԱՐԱԱԳԵԱԶ</u>[43].— Մի գիւղում միայն մէկ խումբ կայ, որովհետեւ այդտեղ դաշն[ակցական] ուսուցիչ կայ։ Ամբողջ տարի ու կէս պահել են մեր երկու ահաբեկիչ ընկերները։ Միւս գիւղերից տեղեկութիւն չկայ, բայց հաւանական է խմբեր լինեն ցաք ու ցրիւ։

<u>ԴԱՒԱԼՈՒ ԳԻՒՂ</u>[44].— 2-3 խումբ կայ։ տրամադրութիւնը շատ բարձր է, բայց մարդ չունին, որ համախմբէ եւ կազմակերպէ։ ո՛չ մատնութիւն է եղել, ոչ ձերբակալութիւն, ոչ էլ զէնք է խլուած։

<u>ՇԱՂԿԱԶՈՐ՝ ԴԱՐԱՋԻՋԱԿ ՇՐՋԱՆ — ԱԽՏԱ</u>[45] գիւղում իքնաբերաբար կազմակերպուել են, ունին մօտ 60 ռ. դրամ, որը չգիտեն ում յանձնել։ իրենք իրենց պարապում են։ Ստանում են Երեւանի մի ընկերոջ միջոցով գրականութիւն։ <u>ԱԱՔԱԼԱՐՄ</u> մէկ խումբ, ուսուցիչը դաշն։ է, դուրս է եկել եւ հարեւան գիւղերը պրոպագանդայի, բայց չի կազմակերպել։ <u>ԱՐՋԱՔԱՆ</u> (կէսը հայ, կէսը թուրք) — կազմակերպուած են եւ թուրքերը (դաշն։)։ թուրքերի տրամադրութիւնը, մանաւանդ, շատ բարձր է, որովհետեւ ժամանակին հողային խնդիր են ունեցել եւ Դաշն[ակցութիւնը] օգնել է։ <u>ԲՋՆԻ</u> — (կէսը հայ, կէսը թուրք) կայ կազմակերպութիւն։ գիւղը էջմիածնին է պատկանում եւ վերջերս գիւղացիները հրաժարուել են տասանորդ եւ պտղի տալուց։ վանքը դիմել է կառավարութեան։

40.- Այժմ Ոսկեվազ, Աշտարակի շրջան։
41.- Այժմ Արտաշատ։
42.- Այժմ Գաւառ (նախապէս Կամօ)։
43.- Վայոց Ձորի շրջան։
44.- Այժմ Արարատ։
45.- Այժմ Հրազդան։

<u>ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ</u>.— Ոչինչ չկայ եւ շատ քայքայուած վիճակ է։ այստեղ գաւառապետ է Բոգուսլաւսկիի[46] գործակից Սորոկինը, որ ահ ու սարսափ է ազդել բոլորի վրայ։ գազանաբար ծեծել էր տուել մեր ընկերներին բանտի մէջ։ ժողովուրդը ընկճուած է։ Հայ-թուրքերի յարաբերութիւնը լաւ է։

<u>ԱԳՈՒԼԻԱՅի</u> շրջանից հաստատ տեղեկութիւններ պակասում են, այստեղ կազմակերպուել են ինչ որ ժողովրդական միութիւններ, որոնք մի քանի կառավարական գործակալներ՝ տանուտէրեր, գլաւնիներ[47] սպանել են։

<u>ՄԵՂՐԻ</u>.— Կան խմբեր, տրամադրութիւնը շատ բարձր է, միայն վերջին ձերբակալութիւնները քիչ թուլացրին, բայց չընկճեցին։ Ժողովուրդը լաւ զինուած է եւ յեղափոխականօրէն տրամադրուած։

<u>ԻԳԴԻՐ</u>.— Անունով տեղական մարմին կայ, բայց գործ չի արել։ Մի խումբ բուն Իգդիրում կայ։ պարապում եւ դրամ տալիս է։ մի խումբ <u>Իգդիր Մաւայում</u>[48].— պարապում եւ դրամ տալիս է։ Երկու խումբն էլ ինքնաբերաբար են կազմուել։

<u>ԱԼԻ ՂԱՄԱՐ</u>[49].— 1 խումբ։ ԴԱՇԲՈՒՌՈՒՆ[50].— 1 խումբ։ Բոլոր գիւղերում տրամադրութիւնը լաւ է։ դիմում է եղել մի քանի գիւղերից կազմակերպուել, բայց մարդ չկայ։ 8 դաշն։ ուսուցիչներից մէկն է միայն զբաղւում։ Գրականութիւնից կանոնաւորապէս օգտըւում են, օգնում են տեղափոխութեան եւ գրականութիւն պահելուն։

<u>ՇԱԲՈՒԲ</u>.— Տրամադրութիւնը լաւ է, բայց կազմակերպութիւն գոյութիւն չունի, որովհետեւ մի քանի անգամ դիմել են, գնացել կազմակերպել են, բայց ուշադրութիւն դարձնող չլինելու պատճառաւ լուծուել են։

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ շրջանում խմբեր կան ՄՈԼԼԱ-ԲԱՅԱԶԵԻՏ[51], ԿԷՋԷՐԼՈՒ[52], ՍԱՐԴԱՐԱՊԱՏ գիւղերում։ խմբերը յաճախակի ժողովներ են անում, պարապում են ուսուցիչների հետ, դրամ վճարում են։

Շրջանի ժողովրդի տրամադրութիւնը գոհացուցիչ է։ Առհասարակ նկատւում է, որ ժողովրդական տրամադրութիւնը միշտ լաւ է։ ժողովուրդը չի յուսահատւում, չի ընկճւում։ կառավարական բռնութիւնները առաջ են բերում բողոքի զգացում։ Իսկ կուսակցութեան անցեալ փառաւոր շրջանը ոգեւորում է նորից այդ վիճակին հասնելու։ Աշխատաւորութիւնն այժմ շատ է ճնշուած թէ կառավարութեան եւ թէ վաշխառուների կողմից, որոնք գլուխ են բարձրացրել, որովհետեւ Դաշն[ակցութիւնը] թուլացել է, եւ գիւղացիութիւնը դարձեալ [ուզում է] տեսնել այն օրերը, երբ կուսակցութիւնը սանձ էր դրել նրանց բերնին։ Ընդհանրապէս, «ինտելիգենտցիայի» վիճակը, շատ ողբալի է, մանրացած, քայքայուած, այլասերուած, անձնական, եսական կեանքով ապրող եւ ամէն բանից հրաժարուած։ Նոյնիսկ այն ընկերները, որոնց վրայ շատ մեծ յոյսեր էին [դրուած], այսօր բոլորովին քաշուած են գործից եւ ոչնչով չեն ուզում օժանդակել։ Մինչդեռ գործի հնարաւորութիւն կայ։ Ժողովներ առանց վտանգի կարելի է անել, մանաւանդ այգիներում, ուր հարիւրներով կարելի է հաւաքուել։ Չկայ միայն ընդհ. ղեկավարող, կապող ոյժը, որը պէտք է դրսից սպասել։

Գրականութիւնից ստացւում է 100 օրինակ «Դրօշակ», 5 օրինակ «Ազատամարտ», որ շատ անխնամ է գալիս, պատառոտուած,գզգզուած։ «Ցառաջ» մինչեւ հիմա ստացւում էր 5 օրինակ[53], բայց տեղերից պահանջ էր դրուած, եւ այժմ ուղարկւում է 100 օրինակ։ Գրականութիւնը տեղափոխւում է Բայազիտի գծով։ սահմանը անց է կացւում բուռը 5 ռուբլիով։ Եթէ դրամը կանոնաւոր կերպով վճարուի, փոխադրել կարելի է, ինչքան էլ պէտք լինի։ Երկրի ներսը տարածւում են թերթերը տեղական ոյժերով առանց որեւէ ծախքի։ Փոխադրուել է նաեւ «Հոսանքներ» եւ «Վերածնուող հայրենիք» 55 օր[ինակ], «Համաժող[ովրդական] բանակ» 20 օրինակ (էլի են պահանջում), 20 օրինակ Rapport[54], որ կարդացող չկայ լեզուի պատճառով եւ ի զուր է ուղարկուել։ Թերթերը ձրի են Ալեքսանդրապոլ, էջմիածին, Երեւան, Իգդիր։ բայց կարելի է եւ ուրիշ տեղեր ուղարկել։ Ցանկալի է, որ գրականութիւնը շատցուի եւ կանոնաւորապէս ուղարկուի։

Ընդհանուր առմամբ լաւ չէ պահեստների վիճակը, որոնք թէեւ կառավարութիւնից ապահով են, բայց վընասւում են խոնաւութիւնից։ շատ ապրանքներ ժանգոտում, փտում են եւ ոչ մի ճար չկայ մաքառելու դրա դէմ։ Միակ միջոցը համարւում է ցինկէ արկղներով եւ

46.- Նախկին գաւառապետ Իգդիրի, հայատեաց. 1904 թ. ահաբեկման ենթարկուած Դաշնակցութեան կողմէ։
47.- Գիւղական կառավարիչ։
48.- Գիւղ Սուրմալու գաւառին մէջ։
49.- Գիւղ Սուրմալու գաւառին մէջ, Իգդիրի մօտ։
50.- Գիւղ Սուրմալու գաւառին մէջ։
51.- Այժմ Բամբակաշատ։
52.- Գիւղ Նախիջեւանի շրջանին մէջ։
53.- «Դրօշակ»ը Ժընեւ հրատարակուող Հ.Յ.Դ. պաշտօնաթերթն է. «Ազատամարտ»ը (Պոլիս) եւ «Ցառաջ»ը (Թիֆլիս) դաշնակցական օրաթերթեր են։
54.- «Հոսանքներ»ը եւ «Վերածնուող հայրենիքը եւ մեր դերը» Միք. Վարանդեանի երկերէն են. Rapport-ը Դաշնակցութեան կողմէ 1910 թ. Կոպենհագէնի սոցիալիստական կոնգրէին ներկայացուած ֆրանսերէն տեղեկագիրն է, նոյնպէս Վարանդեանի գործ։ Երեք հրատարակութիւններն ալ մաս կը կազմէին «Դրօշակ»ի մատենաշարին։

իւղի մէջ պահելը, բայց այդ դրամական զգալի ծախս է պահանջում։ Մի տեղի պահեստը չնորհիւ երկու (նախկին ընկեր) մատնիչների՝ այժմ վտանգի մէջ է։

Շրջանի գրեթէ բոլոր վայրերում կուլտուրական, դպրոցական գործը մեր ընկերների եւ կամ համակիրների ձեռքն է։ Ժողովրդի տրամադրութիւնը թէ ընդհանրապէս եւ թէ դէպի կուսակցութիւնը լաւ է, ընկճուած չէ, մանաւանդ երկրագործական, այգեգործական եւ բամբակագործական վայրերում, որտեղ անցեալում Դաշն[ակցութեան] հմայքը շատ բարձր է եղել։

Թուրքերի հետ յարաբերութիւնը լաւ է. ժողովուրդը իր զէնքերը ծախում է քրդերին եւ թուրքերին։

Շրջանի մէջ վերաբերմունքը դէպի «Հորիզոնը»[55] խիստ բացասական է. նկատւում է իբրեւ դաւաճան լրագիր։

Ամէն վայրից մարդ են ուզում, կազմակերպող եւ մեծ յոյսեր ունին, որ Տաճկաստանից մարդ կու գայ։ «Երբ Տաճկաստանն էր հեծում բռնակալութեան գըրկում, մենք էինք գնում, այժմ էլ նրանք կը գան» ասում են ամէն կողմից, բայց ցարդ, դժբախտաբար, ոչ մէկը չի եկել եւ ոչ մէկ օգնութիւն չի եղել, որ շատ վատ է ազդում ժողովրդի վրայ։

Շրջանում ուրիշ կուսակցութիւններ գոյութիւն չունին. հատ ու կենտ հնչակեան անհատներ կան, որոնք ոչնչով չեն արտայայտւում։ Եղել են դէպքեր, երբ հընչ[ակեան] մաքուր տարրերը դիմել են մեզ եւ խնդրել, որ ընդունինք իրենց մեր կուսակցութեան մէջ. այսպէս, օրինակ, երեւանցի Մուշեղ Բագրատունի։ Նոյնպէս Երեւանում հնչակեանները դիմեցին մեզ, խնդրելով, որ ուրիշի մօտ գտնուած իրենց զէնքերը մենք ստանանք, որովհետեւ իրենք անոյժ էին ստանալու, եւ մեզ առնենք, բայց մենք մերժեցինք։

Չկան ոչ սոցիալ-դեմոկրատական, ոչ-սոցիալիստ-յեղափոխական եւ ոչ ուրիշ որեւէ կազմակերպութիւններ։

Միւս շրջաններից հատուկտոր տեղեկութիւններ կան մի քանի վայրերից։

<u>ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ</u>[56].— Կայ 8 խումբ. վերջերս, ասում են, աւելացել են. նշանակովի կենտր. կոմիտէ. խմբերը ժողովներ անում են, անդամավճար տալիս են. նորերս եկել են երկու ուսանող ընկերներ, որոնք բաւական եռանդով աշխատում են։ Եփրեմի մահը վատ ազդեց։ Առեւտրական դպրոցի աշակերտութեան մեծ մասը մերն է. եւ չնայած տեսուչ Լեւոն Սարգսեանի ձեռք առած խիստ միջոցների, 2-3 խումբ ունինք այստեղ։ Գիւղերից դիմում է եղել կազմակերպուելու, բայց իրենք չեն գնացել, որովհետեւ մարդ չեն ունեցել։ Տրամադրութիւնը վատ չէ։ 2 խումբ կայ <u>ՂԱՐԱՔԻԼԻՍԱԶՈՒՄ</u>, 1 խումբ <u>ԵՂԱՓԼՈՒՌԻՍ</u>[57]։

<u>ՂԱՐԱՔ</u>.— Բոլորովին քայքայուած է, ոչ քաղաքում ոչ էլ գիւղում՝ ոչինչ չկայ։

<u>ԹԻՖԼԻՍ</u>.— Կան խմբեր եւ ընկերներ, բայց մանրամասն տեղեկութիւններ կը պակսին։ Առանձնապէս լաւ են խօսում ընկ. Արիսի մասին, որ բարեխիղճ կերպով աշխատում է։

<u>ՇՈՒՇԻ</u>.— Բոլորովին ահաբեկուած է. մարդ չի կարող մտնել քաղաքը. ձերբակալութիւնները, խուզարկութիւնները, մատնութիւնները անպակաս են, թէեւ իրենց շրջանի մի քանի մատնիչներ խփեցին։ Ո՛չ մի խումբ, ո՛չ մի գործող ընկեր — ոչինչ չկայ։

<u>ԲԱԳՈՒ</u>.— Համեմատաբար լաւ է, ունին ռոճիկաւոր պրոպագանդիստներ, բայց մանրամասն տեղեկութիւններ չունինք։

<u>ԲԱԹՈՒՄ</u>.— Պայմանները ազատ են, ժողովներ կարելի է անել, բայց ընկերները բան չեն անում. ուսուցիչները տարուած են անձնական կեանքով, ուստի եւ կազմակերպութիւն միայն անունով գոյութիւն ունի։

<u>ԳԱՆՁԱԿ</u>.— Քաղաքում մի քանի խումբ կայ՝ արհեստաւոր եւ բանուոր, որոնք պարապում են իրենք իրենց մի քանի պատրաստուած բանուոր ընկերների ղեկավարութեամբ. զբաղւում են տեսական հարցերով, «Մարքս ու Էնգելսով»։ Անդամավճար տրւում է։ Տրամադրութիւնը լաւ է, բայց ղեկավարող մարդ չկայ։

Գիւղերից մի քանի անգամ յատուկ դիմում է եղել, որ գան եւ կազմակերպեն, բայց գնացող չի եղել, թէեւ քաղաքում բաւական դաշնակցական ուսուցիչներ կան։ Մեծ պահանջ կայ անլեգալ գրականութեան, բայց չի ստացւում։

<u>ԶԱՆԳԵԶՈՒՐ-ՍԻՍԻԱՆ</u> եւ այլն — Կան հատ ու կենտ խմբեր, որոնք ինքնաբերաբար կազմուել են եւ այդպէս էլ մնում են՝ անխնամ եւ առանց ուշադրութեան։

Այս թռուցիկ տեղեկագիրը ցոյց է տալիս, որ ցարական բռնութիւններն անպայման ազդել են ժողովրդի վրայ քայքայելով նրա մէջ եղած կազմակերպութիւնները, բայց բոլորովին չեն խեղդել. ժողովուրդը ապրում է եւ ամէն կողմից ինքնաբերաբար կազմուելը, մարդու եւ գրականութեան պահանջը ապացոյց է նրա կենսունակութեան։ Բոլոր տեղերում կայ կազմակերպական կորիզը եւ առատ հող ընդլայնելու, զարգացնելու։

55.- Թիֆլիս լոյս տեսնող անկուսակցական օրաթերթ։
56.- Այժմ Գիւմրի։
57.- Ղարաքիլիսա՝ այժմ Վանաձոր, Եղափլու՝ այժմ Մեղրուտ, Գուգարքի շրջան։

Միայն — մարդ չկայ։ Այս բացագանչութիւնն է, որ ամէն կողմից լսւում է։ Մարդու սով է։ Տեղացի ինտելիգենցիան ընկճուած է, եսական խնդիրներով տարուած. նրանից բան չի սպասւում։ Նոյնիսկ մեր լաւագոյն, էն յուսալի ընկերները քաշուած են հրապարակից եւ մերժում են ամէն դիմում գործելու։

Բոլորի հայեացքը դարձած է դէպի սահմանի այս կողմը՝ Թուրքիա։ Բոլորը սպասում են մեծ հաւատով, որ տաճկահայ ընկերները կը հասնին իրենց օգնութեան։ Բոլորը կարծում են, որ ներկայ Ընդհ. Ժողովը Կովկասի մասին էլ կը խորհէ, գործնական *որոշումներ կ'անէ, չի բաւականանայ միայն պլատոնական ցանկութիւններով եւ ձեռնհաս ընկերներ կ'ուղարկէ ցաք ու ցրիւ խումբերն ու կազմակերպութիւնները, առանձին-առանձին ապրող ոյժերը միացնելու, համախմբելու ի մի, զօրեղ եւ նախկին թափով ու կարողութեամբ օժտուած կուսակցութեան։*

ՍԻՄ[ՈՆ] ՎՐԱՑԵԱՆ

10 Օգոստ. 1911 թ.
Կարին

Փաստ. 303-2

Ա 16.– ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

1910-ի Փետրուարից տխրահռչակ Բուրգացկու[58] սպանուելուց յետոյ՝ դրութիւնը թէ՛ Երեւանում եւ թէ շրջաններում բաւական կանոնաւորուել, խաղաղուել ու լաւացել էր։ Ժողովուրդը հանդարտուել եւ կարծես թէ մոռացել էր անցեալ խուզարկութիւնների սարսափները։ Կեանքը կամաց-կամաց նորմալ դրութիւն էր ստանում, մարդիկ սկսել էին վերադառնալ հայրենիք — փախած վայրերից ու կանոնաւորել իրենց քայքայուած տնտեսական դրութիւնը։

Ոստիկանութիւնը թէ յայտնի եւ թէ գաղտնի իրեն բաւական կորրեկտ էր պահում, ընդհանրապէս խուզարկութիւնները եւ ձերբակալումները զգալի նուազել էին, եթէ չասեմ բոլորովին վերջացել։ Եւ այդպէս, այդ խաղաղ դրութիւնը շարունակուեց մինչեւ 1910-ի վերջերը։ Այդ ժամանակաշրջանում թւում էր՝ թէ մեզնում ոստիկանութիւն գոյութիւն չունի։

Անցաւ 1910-ը. եկաւ 1911-ը, դրութիւնը զգալիօրէն փոխուեց, նորէն այս ու այն կողմից սկսուեց տեղեկութիւններ ստացուել՝ խուզարկութիւնների ու ձերբակալումների։ Բայց այդ խուզարկութիւնները եւ ձերբակալումները ընդհանրապէս կրում էին մասնաւոր անհատական բնոյթ։ Խուզարկւում ու ձերբակալւում էին այս ու այն կասկածուած կամ անբարեյոյս ճանաչուածները։ Այս բոլորը ժողովուրդը սառնասիրտ կերպով տանում էր, առանց երբեք կարեւոր ուշադրութիւն դարձնելու դրա վրայ եւ հասկանալի էր, չէ՞ որ իւրաքանչիւր ռուս քաղաքացի, նոյնպէս եւ կովկասցին՝ արդէն վաղուց ինչ վարժուել են այդ նման երեւոյթներին,— ռուս բռնակալութեան մանրիկ սատրապների ձեռքով ստեղծուած, էլ ինչու ուրեմն պիտի սարսափէր։ Բայց այդպէս չէր մտածում ռուս արիւնոտ բռնակալը, յանձին իր հաւատարիմ ոստիկանների։ Նրանք կարծում էին, որ այդ միջոցաւ կարող կը լինեն ժողովուրդը պահել ահաբեկուած դրութեան մէջ, մեռցնելով նրա մէջ ամէն մի մաքուր ձգտում ու գործունէութիւն — անգամ կուլտուրական (յաճախ խիստ խուզարկութիւններ է կատարւում հասարակական բանկերում, խանութներում եւ դպրոցներում)։ Բայց նրանք նկատեցին, որ իրենց ցանկութիւնները չեն իրագործւում եւ, որ չարաչար սխալուած են իրենց սպասելիքների մէջ ու դրա համար մտածեցին փոխել գործելակերպը։ Այնուհետեւ խուզարկութիւնները եւ ձերբակալումները բոլորովին նոր ձեւ ստացան։ Սկսեցին խուզարկել ոչ թէ անհատների, այլ ամբողջ գիւղեր։ Գիւղական ոստիկանը եւ մի քանի ժանդարմներ՝ հետները վերցնելով 50-60 ոստիկան-պահակներ՝ կէս գիշերին շրջապատում են մի որեւէ գիւղ եւ բաժանուելով մի քանի մասի միաժամանակ սկսում են խիստ խուզարկութիւն, փնտռելով ինչ որ աներեւոյթ տեռորիստներ։ 4-5 ժամ անընդհատ խուզարկութիւնից յետոյ թողնում եւ անցնում են մի ուրիշ գիւղ եւ այդպէս շարունակաբար։ Քիչ չեն պատահում այժմս նաեւ ծեծի դէպքեր քաղաքականների վերաբերմամբ, օր. Հին-Նախիջեւանի գաւառապետ Սարոկինի. այդ հրէշի ձեռքով քանի-քանի անմեղ մարդիկ սարսափելի ծեծի են ենթարկուել։ Սարոկինը եզակի չէ այդ գործունէութեան մէջ, նրանից պակաս չեն նաեւ Աշտարակի պրիստաւ Առաքելեանը, Երեւանի գաղտնի ոստիկանութեան պրիստաւները[59] եւ այլն, եւ այլն... Ահա՛, այս դրութեան մէջ է այժմս Երեւանը իր շրջանով։ Մէկ

58.- Բուրգացկի, Երեւանի նահանգի ժանդարմերիի պետ. Երեւանի Կ. Կոմիտէի որոշումով ահաբեկուած 1910 թ. Մարտին։
59.- Պրիստաւ – տեղական ոստիկանութեան պետ։

օր քաղաքում, միւս օրը Վաղարշապատում, երրորդ օրը Նախիջեւան եւ այսպէս պարբերաբար ահաբեկելով ու սարսափի մէջ պահելով ամբողջ ժողովուրդը։ Մի քանի օր առաջ Երեւանի ժանդարմ. ռոտմիստրի[60] եւ Աշտարակի պրիստաւի ղեկավարութեամբ Աբարանում խիստ խուզարկութիւններ են տեղի ունեցել, ձերբակալուած եւ ծեծելով Երեւան են տարուած մի քանի գիւղացիներ։ Սրանցից պահանջում են վկայութիւններ տալ, մի քանի ձերբակալուած դաշնակցականների (?) մասին, հակառակ դէպքում սպառնում են ծեծով եւ այլն։ 24-ին (օգոստ.) խիստ խուզարկութիւններ կատարուեցին Իգդիրում եւ մօտակայ մի քանի ուրիշ գիւղերում. հակակառավարչական ոչինչ չի գտնուած, ինչպէս եւ ամէն տեղ։ Երեւանի ժանդարմ ռոտմիստրը եւ ժանդարմները ձեռնունայն յետ գնացին։ Նորից փաստը եկաւ ապացուցանելու, որ գաղտնի լրտես կոչուած զրաւելի ու կեղտոտ արարածների տուած լուրերը միանգամայն չինծու են եւ զանազան միտումների ու թշնամութեան հետեւանք։ Այս առաջին դէպքը չի եւ հաւանօրէն ոչ էլ վերջինը կը լինի, իսկ ռուս ժանդարմը՝ կարծես անընդունակ այս ըմբռնելու՝ ստանալով մի նոր անունիմ[61] մատնութիւն, երեւի նորէն կը շտապի դէպի այս կամ այն շրջանը, այս ու այն գիւղը, փնտռելով ինչ որ աներեւոյթ յեղափոխականներ, զէնքի պահեստներ եւ ահաբեկիչների մեծ խմբեր։ Ցաջողութիւն նրանց...

Այս բոլորը ժողովուրդը լուռ տանում է, սպասելով թէ երբ նորէն պիտի լսուի յեղափոխականի հուժկու ձայնը եւ յեղափոխական մարտիկի անողոք եւ անաղարտ գնդակի սուլոցը։

ՎԱՀԱՆ
(ՎԱՉԱԳԱՆ ՄԵԼԻՔԵԱՆՑ)

Երեւան, 26-VIII-1911 թ.

Ց. Գ.- Օգոստոսի 14-ին՝ երբ մեր մարտիկներից մէկը՝ Ալէքը* (Իգդիրցի) այգում քնած է լինում, տեղական պրիստաւին լուր են տանում այդ մասին։ Նա էլ օգտուելով հանգամանքից հետը վերցնելով մի քանի ստրաժնիկներ[62]՝ շտապում է այդ այգին, երբ մօտենում են այգուն, ընկերը արթնում է եւ անմիջապէս մաուզէրը հանելով՝ կանգնում։ Դրանից չփոթ է առաջ գալիս ոստիկանների մէջ եւ նրանք կանգ են առնում։ Այդ միջոցին Ալէքը ատրճանակը ուղղելով դէպի պրիստաւը՝ գոռում է ստրաժնիկներին յե՛տ գնացէք, եթէ ոչ ձեզ էլ կը խըփեմ. երբ նրանք յետ-յետ են քաշւում, նա նորից դառնալով դէպի պրիստաւը ասում է՝ ահա՛, եթէ ցանկանամ քեզ կը խփեմ, բայց գնդակիս ափսոսում եմ. եւ մէկ հատ կրակելով նրա ոտքերի տակ ու օգտուելով նրանց չփոթութիւնից՝ անյայտանում է։ Այժմս ազատ է։

ՆՈՑՆ

60.- Ռոտմիստր – հեծելազօրքի սպայ։
61.- Անունիմ՝ անանուն։
62.- Ստրաժնիկ – պահակ ոստիկան։

*) Սրան 3 տարի է ինչ փնտռում են։

Փաստ. 765-34

Ա 17.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ընկերներ!

Ստացանք «Դրօշակ»ի N°N° 5-6ը, շուտով կը տեղափոխենք Կովկաս։ Այսուհետեւ թերթերը ուղարկեցէք հետեւեալ հասցէով՝ Բայազիդ Սուրէն էֆէնդիին[63], որովհետեւ Սլաքը[64] գնացել է այստեղից։ Շուտով ուղարկեցէք նաեւ բոլոր գրքերի հաշիւը։ Այդ հաշիւները մենք շուտով կը մաքրենք։ Եթէ «Վերածն[ուած] հայր[ենիքը] եւ մեր դերը»[54] գրքից կայ, ուղարկեցէք մի 30 օր[ինակ], պահանջ կայ։ Թերթերը եւ գրքերը տարածւում են՝ Մրգաստանում եւ Քարում[65]։ Ուրիշ տեղերում թէեւ մեծ կարիք կայ, բայց մենք հնարաւորութիւն չունինք ուղարկելու։

Կուսակցական դրութիւնը Մրգաստանում այժմս բաւական լաւացել է։ Ժողովրդի տրամադրութիւնը զգալի բարձրացել է եւ հիմա հնարաւորութիւն կայ հեշտ կերպով մտնել գիւղերը՝ կազմակերպելու, մի բան, որ անցեալներում բաւական վտանգաւոր էր (1909-ի աշնանը Աբարանում մեր շրջիկներից մէկին ժողովուրդը բռնեց ու յանձնեց կառավարութեանը։ Նման դէպքեր պատահել են նաեւ Հ[ին] Նախիջեւանում, Շարուրում եւայլն, բայց այս վերջիններում բռնել էին ու ծեծելով հեռացրել՝ առանց կառավարութեան յանձնելու)։ Հիմա նման դէպքեր երբեք տեղի չեն ունենում։ Այժմս կենտրոն. [կոմիտէութեան] կարեւոր պունկտերում[66] ունինք շրջանային մարմիններ, թէեւ ի հարկէ նշանակովի մեծ մասամբ։ Խմբեր գիւղերում կազմակերպւում են, բայց շատ զգուշութեամբ, երբեք քանակի վրայ ուշադրութիւն չի դարձւում։ Առհասարակ խմբի մէջ անդամներ ընդունելու համար՝ խիստ ընտրութիւն է կատարւում, յաճախ իսկ ծայրայեղութեան հասցնելով այդ։ Այնուամենայնիւ գիւղերից շատերում կազմակերպուած խմբեր ունինք, որոնց հետ պարապում են կամ տեղի, կամ մօտիկ գիւղի ուսուցիչներից, թէեւ շատ տեղերում ոչ այնքան կանոնաւոր։ Առհասարակ զգացւում է պատրաստի ու ազատ ընկերների խոշոր պակաս։ Ընդհանրապէս գիւղական մտաւորականութիւնը՝ յանձին ծխական դպրոցների «դաշնակցական» ուսուցիչների՝ ծայրայեղ իներտ[67] վերաբերմունք է ցոյց տալիս դէպի գործը, բաւական[ան]ալով միայն փքուն ֆրազներով[68]։ Կարիք է զգացւում նոյնպէս եւ գոնէ մէկ ազատ շրջուն պրոպագանդիստի, որն անընդհատ շրջէր բոլոր շրջանները եւ կապ պահէր նրանց եւ կենտրոնի մէջ։ Ի դէպ՝ այս վերջինս շատ թոյլ է, նոյնիսկ գոյութիւնը չի էլ նկատւում։

Անլեգալ գրականութեան պահանջը շատ մեծ է, ուղղակի խլխլւում է թերթերը ձեռքից-ձեռք։ Բացի «Դրօշակ»ից ստանում ենք նաեւ «Ցառաջ», «Ազատամարտ» (սա բաւական սառն է ընդունւում), «Առաւօտ», Սոցիալ-դեմ. «Ձա ճարող» եւ «Ձճամեայ տրուդա»[69]։ Այս վերջիններից բաժին ենք հանում նաեւ սահմանապահ (ռուսական) զօրքին. ի դէպ՝ սրանց մէջ նկատւում է խիստ դժգոհութիւն. օր չի անցնում որ մէկը, երկուսը, երեքը, յաճախ շատ աւելի (անցեալ անգամ 25 հոգի զէնքերով) չփախչեն։

Դեզերտիրներ[70] գալիս են նոյնպէս եւ Ռուսաստանի ներքին նահանգներից։ «Դրօշակ»ը բաւական անմատչելի է դառել մասսայի համար, բայց եւ այնպէս արտակարգ խնդավառութեամբ է ընդունւում։ Եթէ հնարաւոր լինի «Դրօշակ»ի հետ զուգընթացաբար հրատարակել նաեւ մի փոքրիկ թերթ 4 երեսնոց՝ կուսակցական տեղեկութիւնների ու մանր եւ մատչելի յօդուածների համար, բաւական լաւ կը լինի։ Կովկասից այսուհետեւ կ՚աշխատենք յաճախ լուրեր ուղարկել թերթի թէ կուսակցական կեանքից եւ թէ քաղաքական կեանքից ընդհանրապէս։

Առայժմս այսքան։

Ընկերական բարեւներով
ՎԱՀԱՆ

Հ[ին] Բայազիդ, 30 օգոստոսի [19]11 թ.

Ց.Գ.- Անցեալ օրը «էս-էր»[71] ընկերներից (ռուս) մէկը խնդրեց մեզնից, որ մենք մեր գծով տեղափոխենք նաեւ իրենց ապրանքը, ծախսը ի հարկէ իրենցից։ Ես նրանց դեռ վերջնականապէս չեմ պատասխանել, բայց այնպէս հանաքով հասկացրի, որ մինչեւ դուք ձեր դիրքը չորոշէք մեր վերաբերմամբ, մենք չենք աշակցի, այսպէս էլ վերջացաւ։ Հիմա սպասում եմ ձեր կարծիքին։

ՆՈՑՆԸ

63.- Սուրէն էֆէնտին Դրոն է, Դրաստամատ Կանայեան, որ իբրեւ վաճառական այդ օրերում հաստատուած էր Հին Պայազէտ եւ կը զբաղէր քարիւղի, շաքարի եւ ցորենի առեւտուրով, միաժամանակ կուսակցական տարբեր գործունէութիւն ծաւալելով (զէնքի փոխադրութիւն եւայլն)։
64.- Սլաք՝ ծածկանունն է յայտնի յեղափոխական գործիչ՝ Օխիկեան Արմենակի։
65.- Մրգաստանը, ինչպէս ծանօթ է, Երեւանի, իսկ Քարը Ալեքսանդրապոլ-Գիւմրիի շրջանն է։
66.- Կէտերու, կեդրոններու մէջ։
67.- Մեղկ, անգործօն վիճակ։
68.- Բառին առաջին տառը յստակ չէ. նախընտրեցինք «ֆրազ» ընթերցումը, որ հոս կը նշանակէ բովանդակութենէ զուրկ նախադասութիւն, ասոյթ։
69.- Բնագրին մէջ ռուսատառ։
70.- Դասալիքներ։
71.- Ռուս Ընկերվար Յեղափոխական կուսակցութիւն։

Փաստ. 21-2

Ա 18.– ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՍԱՐՈՒՍՏԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՈՒ ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Ստորեւ ներկայացուած փաստաթուղթը անքուակիր է. կը գտնուի Արեւելեան Բիւրոյի 1911 թ.ի թղթածրարին մէջ: Բովանդակութենէն եւս ի յայտ կու գայ, որ ա՛յդ թուականի գրութիւն է, կազմուած նախքան Պետերբուրգի «Դաշնակցութեան» դատավարութիւնը:

Ըստ էութեան հեղինակին անհատական տեսակէտները պարզող այս վերլուծական գրութիւնը կու տանք նոյնութեամբ եւ առանց մեկնաբանութեան, որքան ալ վերապահութիւն (առնուազն) ներշնչեն հոն արտայայտուած կարգ մը ծայրայեղական գաղափարներ եւ անգործադրելի առաջարկութիւններ:

Յիշեցնենք որ Սարուստանը կուս. հաւաքական ծածկանունն էր Կովկասի տարածքին գործող երբեմնի 10 Կեղր. Կոմիտէութեանց:

Ներկայ վիճակ.— Ընդհանրապէս վերցրած, Սարուստանի վիճակը կարելի է ասել հեռի է միխիթարական լինելուց, հեռի է, որովհետեւ չնորհիւ արտաքին եւ ներքին պայմանների, այժմ բացի մի քանի՝ մնացած բոլոր վայրերում գոյութիւն չունին Հ.Յ.Դ. կազմակերպուած կանոնաւոր մարմիններ, եւ գործունէութիւն: Ինչի՞ վերագրել իրերի այդ դրութիւնը, դժուար է որոշ ասել, բայց որ դրանում դեր է խաղացել հսկողութեան (բարձրը մարմին[ների] կողմից) եւ ուշադրութեան բացակայութիւնը՝ անուրանալի է: Աւելցրած դրա վրայ ռուսական կեանքի ռէակցիայի խոշոր ազդեցութիւնը, ապա մեր ընկերների ձերբակալութիւնն ու միւսների խուսափումը, յետոյ երկարատեւ մաքառումների յոգնածութիւն, տնտեսական կրիզիս, եւն... Այս բոլորն աւել կամ պակաս չափով ազդել են մարմինների եւ շրջանների վրայ, որի արդիւնքում մեզ ներկայանում է այժմեան անմխիթարական դրութիւնը:

Ընդհանուր տրամադրութիւն.— Ընդհանուր տրամադրութիւնը՝ թէ մեր համակիրների, ընկերների եւ թէ հասարակական զանազան դեմոկրատիկ խաւերում, կարելի է ասել անպայման բարձր է, եւ սպասողական՝ նորանոր քաղաքական փոթորիկների: Տրամադրութիւնները բոլոր խաւերի մէջ սրւում, լարւում ու, կարելի է ասել խամրում են անակնկալների զուր սպասման մէջ: Խամրում, որովհետեւ, դժբախտաբար ոչ մի կողմից չի գալիս մի փրկարար խրախոյս, սրտապնդում ու առաջնորդող, այդ տրամադրութիւնը շաղկապող ու շահագործող ձայն: Կարելի է այս մոմենտը բնորոշել «սպասողական դրութիւն»: այդպէս է, որովհետեւ բռնակալութիւնը իր զարհուրելի երկաթեայ ճանկերի տակ այնպէս է ճզմել բոլորին, մեռցրել համարձակութեան ու խիզախ արտայայտութեան ոգին, որ թէեւ բոլորն էլ զգուած այժմեան հարկերից, զգում են դիմադրութեան, կռուի անհրաժեշտութիւնը, բոլորն էլ նոյն զգացումը եւ նոյն հետեւութիւնն են դուրս բերում, բայց հրապարակ գալ, արտայայտուել, կամ կապուել մասսայական զանգուածներով՝ դա անկարող են. եւ ահա դրա համար նրանք սպասում են՝ թէ ո՞վ կը լինի առաջինը՝ ձեռքը պարզողը, առաջին ազդանշանը տուողը, որին իրենք կը լինեն արձագանգող:

Հետեւութիւն.— Պէտք է Հ. Յ. Դաշնակցութեան՝ առաջինը՝ օգտուել այդ նպաստաւոր տրամադրութիւնից:

Կազմալուծուած վայրեր.— Ճիշտ է, մենք Սարուստանի մեծագոյն մասը կազմալուծուած ենք համարում, սակայն դրանով այդ բառը իր իսկական իմաստից դուրս կը լինի: Աւելի ճիշտ կը լինէր ասել, այդ վայրերը մի անգամ կտրուած լինելով ընդհանուր կապերից, առանձնացած ու մոռացութեան տրուելով, եւ թողնելով նրանց իրենց բախտին, վրայ է հասել ընդհանուր լքումն, յուսահատութիւն եւ ցրուումն, առանց դադարելու դաշնակցական լինելուց:

Այդպէս է բոլոր կազմալուծուած վայրերը (Նաւահանգիստ, Քար, Այգեստան, Ապառաժ եւն)[72], այնտեղ կը գտնենք բազմաթիւ հին, վստահելի ընկերներ, որոնք իրենց համարում են դաշնակցական, ցանկանում են աշխատել, բայց պակասում է մի ուժեղ ձեռք, որ նրանց ի մի հաւաքէր եւ դէպի գործ մղէր — ահա ինչ է պակասում:

Ժամանակաւոր մարմիններ.— Ի նկատի ունենալով այս բոլորը եւ այն, որ այժմեան պայմաններում՝ բացի Ոսկանապատից[11] (նա էլ կասկածելի) ոչ մի վայր դեռեւս չի կարող պահանջուած ցենզ լրացնել:

Եւ որ, ցենզ ասել, մենք հեռի ենք միմիայն այդ քանակի եւ դրամական չափի հասկացողութեամբ սահմանափակուելու, այլեւ նկատի ունենք աշխատանքի հոգեկան կողմը, նրա վատնած էներկիան, եռանդը — այդ գնահատելի ու կենսունակ կողմը: Ճիշտ է, թէեւ քանակի եւ դրամական չափի ցենզը մի տեսակ գրաւական, հաւաստիքը կարող է համարուել որեւէ մարմնի վատնած էներկիայի, նրա աշխատանքի արգասաւորութեանը, բայց դա դեռ չի նշանակում՝ որ ցենզ չլրացնող որեւէ մարմին պակաս աշխատանք ու խանդ է վատնել, էներկիա թափել, եւ որ նա ընդունակ չէ նոյնքան օգտակար ու խոշոր գործեր կատարելուց — դա սխալ կը լինէր:

Անհրաժեշտ է ցենզի դէպքում աչքի առաջ ունենալ Սարուստանում տիրող այժմեան պայմանները, երբ ընտրութիւնը պէտք է շատ զգոյշ լինի (քանակի տեսակէտից), հետեւաբար նիւթական աղբիւրները նոյնպէս սակաւ:

Առաջարկելով ժամանակաւորապէս ցենզի նուազումն Սարուստանի մարմինների վերաբերմամբ, նպատակայարմար եմ գտնում առայժմ նկատի չունենալ եւ այդ, անգամ՝ նուազագոյն չափը, եւ կարեւոր վայրերում, ինչպէս օրինակ՝ Նաւահանգիստ, Քար, Այգեստան, Ապառաժ, Ջրաբերդ[73], հաւաքել հին, վստահելի ու կարող ընկերների, եւ նրանցից կազմել ժամանաւոր մարմիններ, որոնց կը յանձնարարուի իրենց շրջանի վերակազմութեան գործը:

Վերակազմութիւն եւ պրոպականտա.— Նկատի ունենալով այն խոշոր տեղը, որ միշտ տեղական կեանքի վրայ ունենում է «դրսի» եկող գործիչի «ներկայութիւնը», որը միանգամայն հետաքրքրութիւն, նպաստաւոր տրամադրութիւն է առաջացնում իր այցելած վայրերում, դրա հետ միասին մշտական սերտ յարաբերութիւն է պահում կենտրոնի եւ զանազան վայրերի միջեւ, գիտակից պահում ամէն տեղ կուսակցական կեանքի հետ,— անհրաժեշտ է Արեւել. Բիւրոյի Սարուստանի հատուածին իր տրամադրութեան տակ ունենալ երկու անջատ շրջիկ, կարող ու վստահելի ընկերներ, եւ մանաւանդ որ բոլոր կարեւոր վայրերում առայժմ դժուար է ունենալ յատկապէս տեղական եւ շրջանային գործերով զբաղուելու համար յատուկ ազատ ընկերներ:

Դա անհրաժեշտ է նոյնիսկ կուսակցական էկոնոմիայի[74] տեսակէտից իսկ:

Ընդունելով, որ յեղափոխութիւնը, անգամ պրոպականտան չի կարելի մարդկանց համար փրոֆեսիա չինել, եւ զբաղուել դրանով՝ նկատելով [այդ] որպէս աշխատանքի աղբիւր եւն եւն. որ դա պէտք է սեփականութիւն համարել ամէն մի գիտակից անհատի, քաղաքացու հոգեկան աշխարհի, որը պէտք է պահանջ զգայ տարածել իր շրջապատում, բարձրացնելու հասարակութեան ինքնադրութեան[?] գիտակցական մակարդակը՝ առանց դրա վրայ որպէս մի չհարբերական կապիտալի նայելու. սակայն այնուամենայնիւ դեռ եւս այժմեան մեր իրականութեան մէջ մենք, աւելի ճիշտը մեր հասարակութիւնը կարիք է զգում քարոզչական անհատների: Ընդունելով մեր իրականութեան պահանջը, մենք պէտք է որ նրան աշխատենք բաւարարութիւն տալ. եւ հէնց այդ տեսակէտից յատուկ պրոպականտայով զբաղուելու համար ընկերների կարիքը անհրաժեշտ է:

Այդ երկու ընկերները, որոնք Բիւրոյի տրամադրութեան տակ կը լինեն, շրջելու են զանազան վայրերում կազմակերպչական եւ պրոպագանդայի պաշտօնով:

Մեծ-քաղաք[75].— Նկատի ունենալով Մեծ-քաղաքի դիրքը՝ շրջանների վերաբերմամբ, տեղական գործերի բազմազանութիւնը, անհրաժեշտ է մի երրորդ ազատ ընկերոջ, որ զբաղուէր Մեծ-քաղաքի տեղական կազմակերպչական եւ պրոպագանդայի գործերով:

Գրաւոր պրոպագանդա.— Գրաւոր պրոպագանդա, որ միշտ զուգընթացաբար է գնում բանաւորի հետ. այժմեան մեր պայմաններում աւելի եւս շեշտւում է նրա անհրաժեշտութիւնը: Աւելի է շեշտւում, որովհետեւ համարեա ընդհանրապէս չափազանց դժուար է բանաւոր պրոպագանդան, չնորհիւ արտակարգ խըստութիւնների ու համատարած սարսափի (խուզարկութիւն, եւն): Այդ պատճառաւ դրա պակասը պէտք է լրացնէ գրաւոր պրոպագանդան՝ տարածելով մեր գաղափարներն ու տրամադրութիւնները, գալիք օրերի համար հող պատրաստել: Եւ որովհետեւ ներքին բաւարար գրականութիւն արտադրել նոյնքան դժուար է, չնորհիւ խստութիւնների եւ հարկաւոր ոյժերի, դրա համար ինքնըստինքեան առաջ է գալիս՝ արտաքին, դրսի մեր կուսակցական գրականութեան ոյժ տալ, ուշադրութիւն դարձնել — գրականութեան ներմուծում՝ ահա հետեւողութիւնը:

Պարզ է, որ կենդանի, միակ կենդանի գործը կարող է մշտական արթնութեան մէջ պահել յեղ[ափոխական] ոյժը, եւ հասարակութեան մէջ վառ՝ խանդն ու յեղ. տրամադրութիւնը. ընդհակառակը, մի վայր որքան բացառապէս սահմանափակուած լինի միմիայն պասիւ[76] դերով, այնքան նա տեղի կը տայ շուտափոյթ լքման, անգործութեան:

Որքան մի որեւէ վայրում յաճախ գաղտնի շշուկներ

72.- Նաւահանգիստը Պաթումն է, Քարը՝ Ալեքսանդրապոլ-Գիւմրի, Այգեստանը՝ Գանձակ, Ապառաժը՝ Ղարաբաղ եւ Զանգեզուր:

73.- Ջրաբերդ՝ կուս. ծածկանունն է Կարսի:
74.- Խնայողութեան:
75.- Մեծ-քաղաք՝ կուս. ծածկանունն է Թիֆլիսի:
76.- Կրաւորական:

են լուում, անձնազոհութեան պատրանքներ, ու «մի ինչ որ գաղտնի գործ կատարելու» գիտակցութիւն կայ, այնքան կեանքը կենսունակ, շարժումը կայտառ, տրամադրութիւնը բարձր, ներքին կապը սերտ ու ուժեղ կը լինի։ Եւ որովհետեւ, այժմ դեռեւս վաղաժամ է խոշոր ակտիւ գործեր կատարելու, որպէսզի ընդհանուր ոգեւորութիւն ու թափ ներշնչէր մասսաներին, հետեւաբար, գոնէ մեր մասսային եւ միւս յեղ. ընդդիմադիր տարրերին բոլորովին մոռացութեան ու անգործութեան չմատնելու համար, եւ նրանց (մեր մասսային յատկապէս) աւելի գիտակ, սերտ կապուած պահելու մեր կուսակցական կեանքի հետ, մնում է գլխաւոր ուշադրութիւնը դարձնել գրաւոր պրոպագանդայի վրայ,— մի բան որից վերջին ժամանակներս Սարուստանի ընկերները բոլորովին զրկուած են եղել։

Արտաքին գրականութիւն (ներմուծումն).— Իրենց յարմարութեամբ եւ իշխանութեան կողմից աննկատելիութեան տեսակէտից երկու պունկտեր[68] են ներկայացնում, Ջրաբերդ, Իգտիր եւ Նաւահանգստի գծերը, ես առաջնութիւնը կը տամ Նաւահանգստին՝ որպէս աւելի ձեռնտու, անմիջական ու նպատակայարմար գծի։

Կազմակերպել Նաւահանգիստ — Պոնտոսեան (Աւազան) գիծը։ Դրա համար հարկաւոր է Նաւահանգիստ — Պոնտոս-Պոլիս երեթեւեկող նաւերից գտնել վստահելի ընկեր նաւաստիների, որոնք յանձն առնեն կանոնաւոր փոխադրել դրսի գրականութիւնը, որոնց կը տրուի մասնաւոր նպաստ։ Բացի դրանից, կարելի է պայմանաւորուել առեւտրական տների հետ, որոնց միջոցաւ հնարաւոր կը լինի կատարել փոխադրութիւնը։ (Գտնւում են թէ՝ այդպիսի առեւ[տրական] տներ եւ թէ ընկեր նաւաստիներ)։ Հակառակ դէպքում՝ աշխատել ընկերներից ընդունիլ տալ մի որեւէ նաւի մէջ, հարկաւոր դէպքում խոստանալ որոշ նպաստ. կարելի է եւ ուրիշ միջոցների դիմել։

Կարեւոր դէպքերում նոյնը կարելի է ասել եւ Կարսի, Իգտիրի գծի առթիւ։

Ներքին գրականութիւն.— Ներքին գրականութեան կարիքը նոյնքան կարեւոր ու անհրաժեշտ է, որը անմիջական կապուած լինէր մեր ներքին իրականութեանը, ու նրա արտայայտիչը։ Այդ տեսակէտից կարող են անպայման օգտակար հանդիսանալ պարբերական թռուցիկներն, գաղտնի պրոշիւրներն ու թերթերը։ Մէկ կողմ թողնելով պրոշիւրն ու պարբերական թռուցիկները, գլխաւոր տեղը բռնում է գաղտնի օրգանը։

Գաղտնի թերթ.— Մենք այժմ համարեա ամբողջ Սարուստանում չունենք «մերը» կոչուելու մի լեգալ օրկան, որ այսպէս թէ այնպէս, ինչպէս դրսին «Ալիք», «Խարիսխ», «Գործ» եւն[77], որոշ չափով, կամ մօտաւորապէս առօրեայ հասարակական նշանակութիւն ունեցող զանազան խնդիրների հանդէպ պարզաբանէր, առաջ քաշէր նաեւ մեր կուսակցութեան հայեացքն ու վերաբերմունքը. դեռ չենք ասում պատասխանէր այն հրէշաւոր յարձակումներին, որ զանազան մութ անկիւններից շպրտւում է մեր կուսակցութեան հասցէին, եւ կամ մերկացնէր մեր հակառակորդների այլանդակութիւնները։ Մենք կուսակցապէս ենթարկւում ենք զանազան պարսաւանքների, բայց հասարակութեան առաջ արդարանալու ոչ մի հնարաւորութիւն չունինք. այդ տեսակէտից իսկ անհրաժեշտ է մի գաղտնի թերթի գոյութիւնը։ Նա կը հանդիսանայ այն կենդանի հնոցը, ուր պէտք է միշտ վառ պահել հասարակութեան մէջ յեղ. տրամադրութիւնը եւ արթնութիւն, հետաքրքրութիւն մեր մարմինների եւ առհասարակ յեղ. տարրերի մէջ։ Նա կը լինի այն միակ ազատ, անկախ ու անողորմ կռանը, որ առաջինը, համատարած բռնակալութեան մէջ կը յանդգնի դուրս գալ, աներկիւղ հարուածել բոլոր անարդարութիւններին, մերկացնելով դիմակաւորուած դէմքերին, եւ որ առաջինը արձագանք տալով տեղական հրատապ հարցերին, անխնայ կը քննադատի եւ կը տայ մեր կուսակցական վերաբերմունքը, որով հասարակութեան նախապատրաստած կը լինի գալիք օրերի դէմ։ Միեւնոյն ժամանակ դա կը լինի այն խրախուսիչ փաստը՝ որ Դաշնակցութիւնը գործում է, որ նա միշտ կռուի ճակատին է, յոյս կը ներշնչէ, թափ կը տայ յեղ. մտքերի խմորման ու կը վարի հրապարակային համայնավարական պրոպագանդան, նախապատրաստելով Կովկասում գործող յեղ. եւ ընդդիմադիր տարրերի միջեւ մերձեցում, համագործակցութիւն, որը անպայման կը նպաստի մտքերի յեղաշրջման, կենդանի տրամադրութեան եւն։

Չպէտք է մոռանալ, որ յամենայն դէպս դրսի գրականութիւնը երբեք չի կարող մեզ համար լայն մասսայի սեփականութիւն դառնալ, հետեւաբար մի այդպիսի թերթը՝ արտատպումներով ու քննադատականներով կը նպաստի մասսաներին մշտապէս գիտակ պահելու արտաքին իրականութեան հետ։ Նա արձագանք կը տայ մեր իրականութեան մէջ երբեմն պոռթկացող յեղափոխական դէպքերին եւ կ'ընդհանրացնի նրան, լայն մտածողութեան եւ վերագնահատութեան նիւթ տալով մասսաներին։

Պարզ է ուրեմն, որ մի այդպիսի թերթի գոյութիւնը որքան անհրաժեշտ ու ճակատագրական նշանակութիւն ունի մեր կուսակցութեան համար թէ այժմ՝ եւ թէ ապագայում։

77.- Թիֆլիսի դաշնակցական «Յառաջ» օրաթերթը ցարական ոստիկանութեան կողմէ բազմիցս խափանուելով՝ կը վերահրատարակուէր «Ալիք», «Խարիսխ», «Գործ» եւ այլ անուանափոխումներով։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԱՐՈՒՍՏԱՆԻ ՀԱՏՈՒԱԾ

Ներկայ վիճակ.— Ներկայումս, համարեա թէ գոյութիւն չունի Սարուստանի հատուածը, այն ընկերները, որոնք ընտրուած եւ նշանակուած էին այդ պաշտօնին, ոմանք ձերբակալուած, իսկ միւսները հեռացած կամ գործից քաշուած են մնում. այնպէս որ իրականութեան մէջ. այդ մարմինը միայն անուանապէս գոյութիւն ունի, որի իրաւունքը իրենց վրայ են վերցրել Մրգաստանը եւ Ոսկանապատը, սակայն առանց որեւէ ակնյայտնի արդիւնք ցոյց տալու։

Նոր ընտրութիւն.— Ինքնըստինքեան հարց է ծագում, որ կազմակերպական եւ գործի յաջողութեան տեսակէտից անհրաժեշտ է մի այդպիսի մարմնի գոյութիւնը, աւելի ճիշտը վերակազմութիւնը, կազմուած մաքուր, վստահելի ու եռանդոտ ընկերներից, որոնք կարողանային նոր թափ ու երանգ տալ յեղ. գործին։

Հնարաւորութեան դէպքում հրաւիրել ռայոնական, աւելի ճիշտը, ինչպէս անցեալ անգամ, մօտիկ գործիչ ընկերների ժողով, որ վերակազմութեան մասին խորհրդակցութիւններ անելուց յետոյ ընտրէր մի այդպիսի մարմին, հակառակ դէպքում նշանակել (նախապէս համաձայնութիւն ստանալով)։

Վայր.— Փորձերը ցոյց են տուել, որ յամենայնդէպս, կազմակերպական տեսակէտից, եւ թէ միեւնոյն ժամանակ քաղաքական ու յարաբերութեան կողմից էլ, միակ նպատակայարմար վայրը մի այդպիսի մարմնի համար այնուամենայնիւ լինելու է Թիֆլիսը։ Թէ այն տեսակէտից, որ նա միակ կովկասեան աչքի ընկնող կենտրոնն է, ուր կարելի է գտնել ինտելիգենտ տարրերի (մեր), եւ թէ նրա համար, որ կենտրոն է, յարաբերութիւնը միւս գաւառների հետ աւելի յաճախ, չփումը աւելի արագ, եւ թէ այն՝ որ անցեալում էլի միշտ Մեծ-քաղաքն է եղել ընդհանուր կապ պահողը դրսի մարմինների հետ, եւ միակ ձեռնհասը հանդիսացել միւսների վերաբերմամբ, [այս բոլորը]գալիս են ապացուցելու, որ հարկաւոր է Մեծ-քաղաքի վրայ արտակարգ ուշադրութիւն դարձնել։ Մեր խորին համոզումն է, մինչեւ Մեծ-քաղաքը ընդհանուր ուղղութիւն ու ազդանշան չտայ, միւս վայրերը երբեք չեն կարողանալ ինքնուրոյն զգալի առաջադիմութիւն ու գործունէութիւն ցոյց տալ։ Օրինակ, չնայած որ 1909-10 այդ հատուածը (Ա. Բ. Սար. հատուած)[78] իր անդամներով բաժանուած էր Մրգաստանի եւ Ոսկանապատի միջեւ, սակայն եւ այնպէս Քարը, Նաւահանգիստը, Այգեստանը, Ջրաբերդը[73] միշտ իրենց յարաբերութիւնը Մեծ-քաղաքի հետ էին պահում։

Եւ նրանց պահանջներին բաւարարութիւն տալում էր՝ մինչեւ Ռուբէնը[79] չէր ձերբակալուել. այնուհետեւ Մեծ-քաղաքը այլեւս դժուարանում էր այդ անել, որով եւ աւելի եւս խզուեց յարաբերութիւնները ու իրաքանչիւրը թողնուեց իր ճակատագրին — արդիւնքը ծանօթ է — կազմալուծում։

Եւ դժբախտաբար Ոսկանապատն ու Մրգաստանը չկարողացան նոյնիսկ որոշ աջակցութիւն ցոյց տալ իրենց մերձաւոր վայրերին, ուր ակնյայտնի կերպով տեղի էր ունենում կազմալուծումը, իսկ Մեծ-քաղաքը չէր կարող օգնել՝ որովհետեւ զուրկ էր միջոցներից։ Նոյնիսկ վերջին ժամանակները նրանք իրենց յարաբերութիւնը կտրել էին Մեծ-քաղաքի հետ, հակառակ այն բուռն պահանջին, որ տեղական գործող ընկերները դիմում էին նրանց — այցելելու մեզ։

Իմ — եւ իմ ընկերների կարծիքով, ամէնից նպատակայարմարն է, անկախ այն բանից, թէ Բիւրոյի մեծամասնութիւնը որտեղ կարող է լինել, յամենայնդէպս նրա ներկայացուցիչը լինելու է Մեծ-քաղաքում, որտեղից միայն կարելի է անմիջական եւ սերտ կապ պահպանել շրջանակների հետ, հսկել եւ ընդհանուր ուղղութիւն տալ գործերին, յարաբերութիւն պահպանել նաեւ միւս յեղ. եւ ընդդիմադիր տարրերի հետ, մանաւանդ որ, ինչպէս հաւաստիացնում են՝ շուտով վերանալու է «զինուորական դրութիւնը», ուրեմն գործը աւելի եւս կը հեշտանայ իշխանութեան կողմից։

Ռեվիզիա.— Բիւրոյի հսկողութեան տակ եւ նրան կից ընտրել մի վերաքննիչ մարմին, ամենավստահելի եւ յեղ. անցեալ ունեցող ընկերներից, որոնք պաշտօն ունենային հնարաւորութեան չափով վերաքննութեան ենթարկելու թէ զինական եւ թէ դրամական հաշիւները։ Կարող է պատահել որ պահեստները դատարկուած են, կամ զանազան անձնաւորութիւնների մօտ զէնքեր, կուսակցական դրամներ են մնում։ Հարկաւոր է, քանի ուշ չէ, նոր փոթորիկներ չեն եկել մոռացութեան տալու, հաւաքել դրանց, կանոնաւորել հաշիւները թէ հին եւ թէ վերջին տարիների, փոխադրել՝ այն ինչ որ պէտք է փոխադրել, իսկ մնացածի մասին կազմել նոր տոմար, եւ յանձնել Արեւ. Բիւրոյի հսկողութեանը։ Այլապէս կարող է պատահել, որ գալիք տագնապալի օրերում այլեւս դժուար կը լինի մտածել եւ որ գլխաւորն է, կարողանալ մաքրել այդ հաշիւները, չափազանց խճճուելու ու անյայտանալու պատճառաւ։

Առկախ հաշիւներ եւ ցրուած ապրանքներ շատ են զանազան անձնաւորութիւնների մօտ...

Ռեվիզիան իր գործունէութեան արդիւնքը կը տեղե-

78.- Արեւելեան Բիւրոյի Սարուստանի հատուած, այսինքն՝ Կովկասի։ Նշենք որ Արեւելեան Բիւրոն ունիր նաեւ Թուրքիոյ կամ Կարնոյ հատուածը, որ միշտ կը մնար գործօն վիճակի մէջ։

79.- Կ'ակնարկուի հաւանաբար Գիւլխանդանեան Աբրահամին, որուն ծածկանուններէն մէկն էր Ռուբէն եւ որ արդարեւ Արեւելեան Ժամանակատոր Բիւրոյի անդամ, ձերբակալուած էր։

կագրի Արեւմտեան Բիւրոյին։ Նոր մարմինը պատասխանատու կը լինի իր հսկողութեանը յանձնուած զինական այլ իրերի մասին։

ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Այլասերուած հասարակակարգ։— Շնորհիւ յեղափոխական նեմեզիտայի-տեռորի երկար ժամանակեայ բացակայութեան՝ ոչ միայն բռնակալական պաշտօնեաները աւելի եւ աւելի անբարտաւանանում, մի-մի պատուհաս դառնում իրենց շրջանի հասարակութեան համար, այլեւ այլասերումը սպառնում է լայն, հասարակական բնաւորութիւն ստանալ։ Մարդիկ աներկիւղ որեւէ յեղափոխական վրէժխնդրութիւնից, համարձակ, օրը ցերեկով սկսում են թշուառ ժողովրդի գլխին նորանոր շահատակութիւններ ու աւերածութիւններ բերել։ Այդ է պատճառը, որ թէ պաշտօնէութիւնն է լրբացել, եւ թէ լրտեսական ցանցը շրջապատել ու թափանցել է հասարակական բոլոր խաւերում։ Մեր բանուորները Մեծքաղաքում յաճախ են գանգատուել, որ իրենց իւրաքանչիւր քայլը, շարժումը իսկոյն խօշինի [?] ականջն է հասնում. այդ է պատճառը, որ նրանք դժուարանում են կազմակերպուել, ժողովներ անել եւն. դա միակ բացառութիւն չէ, պատկերը նոյնն է հասարակական բոլոր խաւերում, հացի ու սիրաշահելու խնդիրը այլասերում է առաջացնում ամէնուրեք։

Այդ պարագան ինքնըստինքեան նոյնութեամբ անդրադառնում է մեր կուսակցութեան դրութեան վրայ, մշտական երկիւղի մէջ է պահում մեր մասսաներին, արգելք է հանդիսանում կազմակերպութեան ծաւալման, ազատ զարգացման, յուսահատութիւն, լքում է տարածում ժողովրդի վրայ, եւ ինքնավստահութիւն ու աւելի դաժան, անողորմ լինելու յատկութիւն է զարգացնում զանազան պաշտօնեաների ու մութ տարրերի մէջ...

Հարցը ճակատագրական նշանակութիւն ունի — ահաբեկում, ահա միակ նպաստաւոր ճանապարհը. մոմենտը բաւականին հասունացած է դրա համար, եւ մի դաւադիր ձեռքի պէտքը՝ հրամայական, որը անյայտութիւնից չանթահարէր այն բոլորին, որոնք հասարակութեան գլխին մի-մի պատուհաս են դառել, որոնք համարձակ, օրը ցերեկով աներկիւղ ամէն լրբութիւն ու շահատակութիւններ են անում, որոնցից չեն պակասում նաեւ մեր նախկին ընկերներից, որոնք լրտեսութեամբ ու պրովակատորութեամբ[80] են զբաղւում. դրանք աւելի քան վտանգաւոր են մեզ համար։ Ես հաւատացած եմ, ինչպէս եւ իմ ընկերներս, որ դեռեւս վաղաժամ է ընդհանուր ակտիւ գործերի համար, ուստի եւ միայն կռուի այդ ձեւը — ահաբեկումն է նպաստաւորը, որը ինքնահաւատ կը ներշնչէր հասարակութեան, յեղ. տարրերին, համարձակութիւն ու տրամադրութիւն կը ստեղծէր, լայն յեղաշրջում կը յառաջացնէր հասարակական մտածողութեան, որի վրայ մղձաւանջի պէս ծանրացել է յոռետեսութիւնը դէպի յեղ. ոյժը, ու ճնշումը բռնակալութեան։ Նա, այդ ահաբեկումը կը սանձահարի եւ պաշտօնէութեան, մանր ու խոշոր բռնակալութեան կը ստիպի հաշուի առնել յեղ. ոյժը ու չափաւորել իրենց կապրիզները[81], որը եւ ռէակցիային հակադրւած ընդհանուր շարժում ու տրամադրութիւն կը ստեղծի — այդ մեր հաւատն է։

Նկատուած ճշմարտութիւն է, որ ամէն մի տեռոր ահագին ահաբեկում կը առաջացնի թէ առհասարակ պաշտօնեաների շրջանում, եւ թէ մանաւանդ լրտեսական շարքերում — իսկոյն շատերը թողնում են այդ զզուելի պաշտօնը ու հեռանում. ես դեռ չեմ խօսի այն ոգեւորութեան ու տրամադրութեան մասին՝ որ տեղի է ունենում հասարակական եւ յեղ. շրջաններում։

Տեռորը այն միակ դրական միջոցն է, որով մենք նրւաճումներ կարող ենք անել թէ բռնակալութեան՝ եւ թէ հասարակութեան շրջանում, որով եւ նախապատրաստած կը լինենք նրան գալիք օրերի անխուսափելի կռուին — տեռոր, դա լոկ անհատական սին ցանկութիւնների արդիւնք չէ, այլ պահանջ մեր այլասերուած, խեղդող մթնոլորտի համար։

Խոշոր, քաղաքական նշանակութիւն ունեցող պատասխանատու տեռորների համար անհրաժեշտ է ստանալ եւ Ա. Բիւր[ոյի] Թուրք[իոյ] հատուածի համաձայնութիւնը, հնարաւորութեան դէպքում՝ կատարել սեփական պատասխանատուութեան տակ։ Միւս սովորական, տեղական բնաւորութիւն կրող տեռորների համար այդ պարտաւորեցուցիչ չէ։

Էքսպրոպրացիա[82].— Ցատուկ ձեռնարկների համար, (օր[ինա]կ բանտարկուած ընկեր ազատելու, դատարանները կաշառելու, կենտրոնական ահաբեկումների եւ[այլն]ի համար) այն էլ միմիայն պետական գանձարանի, անպայման ստանալ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների համաձայնութիւնը, այլապէս պէտք է մի այդպիսի որեւէ ձեռնարկ կուսակցական հողի վրայ համարել դատապարտելի։

Հանգանակութիւն.— Բիւրոյի անմիջական հսկողութեան տակ ձեռնարկել ընդհանուր հանգանակութեան մեր ընկերների եւ համակիրների՝ յոգուտ բանտարկեալ ընկերների եւ վերակազմութեան գործի։

Արդիւնքը յայտարարել «Դրօշակ»ի մէջ։

80.- Գրգռութեամբ, գրգռիչ արարքներով։
81.- Քմայքները, ըստ կամս գործած արարքները։
82.- Բռնագրաւում, ունեցուածքի յափշտակում։

Քոխադրել.— Աշխատել ծախել, եւ կամ հնարաւորութեան դէպքում Թուրքիա փոխադրել այն ապրանքներին, որոնք անխնամութեան պատճառով փտման եւ կորստեան վտանգի են ենթակայ. եւ արդիւնքը յատկացնել նոր ապրանք գնելու, կամ պատշաճ մարմնի մօտ որպէս անձեռնմխելի՝ պահ տալ՝ այդ նպատակի (ապագայում նորից գնելու) համար։

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՄԻԻՍ ՏԱՐԲԵՐԸ

Նկատի ունենալով Ռուսաստանի քաղաքական ներկայ հասարակարգը, որը իրենից ներկայացնում է մի բացարձակ բռնակալութիւն, հիմնուած դեմոկրատ ժողովրդի ճնշման ու շահագործման վրայ, որ այդ կարգերից հաւասարապէս դժգոհ են նաեւ միւս տարրերը՝ թէեւ ոչ զուտ սոցիալիստական, բայց աւելի մօտ նրա հայեցքներին քան բռնակալութեան՝ հետեւաբար մեր վերաբերմունքը ընդհանրապէս դէպի բոլոր այդ կարգի դժգոհ տարրերը լինելու է բարեացակամ, պատրաստ ամէն պարագայի տակ համերաշխելու՝ ընդհանուր դիմադրութեան ու կռուի։ Ուստի պէտք է ամէն կերպ աշխատել յարաբերութիւն ստեղծել այդ տարրերի միջեւ, թէ հրապարակային պրոպագանդայով եւ թէ գաղտնի մասնաւոր դիմումներով պահելով ընդհանրապէս զգուշութիւն։

Աշխատել նպաստաւոր պայմաններում հրաւիրելու համակովկասեան ընդդիմադիր տարրերի խորհրդակցութիւն, մշակելու ընդհանուր գործունէութեան նախագիծ, ընտրելու «միջ-կուսակցական համակովկասեան մարմին», որը իրաւունք ունենար ղեկավարելու համակովկասեան շարժումը։

Էս-էր-ների եւ էս-դեկ-ների մասին[83] յատկապէս աշխատել։

Ցարաբերութիւնը.— Դէպի միւս ազգերը Կովկասում, ընդհանրապէս կարելի է ասել (ազգայնական յարաբերութեան մասին է խօսքը) բարեացակամ է, եւ կարելի է օգտուել այդ տրամադրութիւնից։ Մամուլում երբեմն արտայայտուող չարեացակամութիւնը — պէտք է համարել արդիւնք միմիայն վերին խաւերի, պուրժուա, արիստոկրատների սեփականութիւնը. բուն ժողովրդական խաւերը մաս չունին այդ մտածողութիւնից, եւ համակուած են բարեացակամ զգացումներով,— արդիւնք նոյն վիճակի։

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԹՈՒՐՔ (ԹԱԹԱՐ) ՏԱՐԲԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ներկայ վիճակ.— Թուրքիոյ եւ Պարսկաստանի յեղ. համերաշխ շարժումները մեծապէս ազդել է Կովկասի թաթար ազգաբնակչութեան մտածողութեանը վրայ։ Նրանք այլեւս իրենց նախկին «թշնամու»՝ Դաշնակցութեան մէջ մի ազնիւ բարեկամի են տեսնում, որը ընդունակ է ամէն տեղ ժողովրդական իրաւունքները պաշտպանելու, եւ տոգորուած է ազատական ոգւով։ Այժմ կարելի է ասել երկու ազգերի միջեւ ոչինչ չկայ անցեալի տխուր ու արհաւրալի սեփականութիւնից, բացի բարեացակամութիւն։ Բայց ինչպէս բոլոր ժողովուրդների, նոյնպէս եւ Թուրք հասարակութեան մէջ գտնւում են պուրժուա, կալուածատէր եւ արիստոկրատ — աղալարական դասակարգ, որոնք իրենց շահերը գտնում են ազգային յարատեւ ընդհարումների, խելագար պայքարների եւ իրերասպան դրութեան մէջ, եւ որովհետեւ Թուրք իրականութեան մէջ դեռեւս դեմոկրատիկ դասակարգը դժուարանում է իր վիճակի տէրը լինել, խոշոր չափով գտնւում է այդ շահագործող դասակարգերի ազդեցութեան տակ, այդ պատճառաւ անհրաժեշտ է դրսի ուժերի կարիքը, որոնք աշխատէին ինքնագիտակցութեան բերել նրանց, եւ կապել միւս դժգոհ տարրերի հետ։ Թուրք տարրի այդ ինքնագիտակցութեան յեղաշրջումը ճակատագրական նշանակութիւն ունի համակովկասեան ազատագրական կռուում։

Այժմ, որքան մեզ յայտնի է, նրանց մէջ եւս նկատւում է ընդհանուր դժգոհութիւն դէպի տիրող կարգերը, եւ խմորումն որոշ ընդդիմադիր տարրերի։

Մենք ամէն կերպ աշխատում ենք սիրաշահել, ընդառաջ գնալ այդ շարժման, եւ ընդունել բարեացակամութեան նշան։

Դրսի մարմիններին.— Որքան էլ լինի, այժմեան պայմաններում կովկասում մենք շատ զգոյշ ենք լինելու դէպի ամէն ինչ, որը եւ կարող է պակաս արդիւնաւոր լինել ընդհանուր տեսակէտից Թուրք տարրի մասին. ուզում եմ ասել մենք մեր զգուշութեան պատճառաւ չպիտի կարողանանք խոշոր արդիւնքների հասնել, այդ պատճառաւ պէտք է յանձնարարել մեր դրսի մարմիններին, օրինակ Պոլսի եւ Պարսկաստանի մարմիններին, որպէսզի աշխատեն Կովկաս ուղարկել այդ (Պոլսում եւ Պարսկաստանում) յայտնի, վստահութիւն վայելող Թուրք պրոպագանդիստների, որոնց հետ մենք այլեւս վստահ կարող ենք համագործակցել, եւ նրանց համար կ'աշխատենք դիւրութիւններ տալ՝ կազմակերպելու տեղական Թուրք տարրին։

Այդ կը լինէր ամենախելացի եւ նպատակայարմար միջոցը, կովկասեան Թուրք տարրին արագ կերպով կազմկերպելու եւ յեղ. տրամադրութիւն ստեղծելու։

Վերջ

Շ. ԱՐՄԷՆ

83.- Ընկերվար Յեղափոխական եւ Ընկերվար Դեմոկրատ կուսակցութիւններու։

P.S.

ԹԵՐԹԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Խմբագրութիւն.— Շնորհիւ իր դիրքի եւ մտաւոր կեդրոնավայր լինելու, ուր միշտ կարելի է դաշնակցական կարող գրական ոյժեր գտնել, ամէնից նպատակայարմարը, ըստ իս, այնուամենայնիւ ներկայանում է Մեծ-քաղաքը, ուր մենք կարող ենք զանազան անհատների, ճանապարհորդ՝ բաց վստահելի ընկերների միջոցաւ թղթակցութիւններ եւն ստանալ։ Կարելի է նոյնիսկ խմբագրութիւնների («Հորիզոն», եւն) միջոցաւ ստանալ թղթակցութիւնների դրսի, արտասահմանեան ընկերներից։

Խմբագրական մարմնից մէկին միայն կը յանձնարարուի ստանալ նիւթեր Թերթի համար, իսկ մի ուրիշին, նոյնպէս միայնակ, կապ պահպանել տպարանի եւ էկսպեդիցիայի հետ[84]։ Գաղտնապահութիւնը օրինակելի, ոչ մի ընկեր, բացի նրանից՝ որ կապ է պահպանելու տպարանի հետ, չպէտք է իմանայ որեւէ բան այդ մասին։ Նա ինքն էլ պէտք է կատարի Թերթի սրբագրութիւնը,— որը պատասխանատու կը լինի այդ գաղտնապահութեան համար։

Թերթի տնտեսականը կը յանձնուի այդ նոյն ընկերոջը, որը հաշիւների մաքրութեան եւ վաւերացման համար պատասխանատու կը լինի բարձր մարմնի առաջ։

Միջոցներ.— Նախնական միջոցների համար յատկացնել մի որոշ գումար, իսկ այնուհետեւ աշխատել Թերթին պահպանել իր միջոցներով, իսկ հակառակ դէպքում պիտճէն բաժանել կովկասեան մարմինների վրայ, եւ նրանցից ստացուելիք նպաստով շարունակել։

Կարելի է եւ բացառիկ աղբիւրներ գտնել։

Փոխադրութիւն եւ յարաբերութիւն.— Ինձ թւում է,թէ լաւ կը լինէր, որ թէ արտաքին, ներմուծուող եւ թէ ներքին արտադրուող գրականութեան ցրումը, բաշխումը միւս վայրերի վրայ, կեդրոնացնել մի առանձին աչքի չընկնող վայր։ դրա համար, որպէսզի լինի կանոնաւոր, արագ ու ապահով, պէտք է նախ կազմակերպել Նաւահանգստից — Մեծ-քաղաք — Ոսկանապատ, Քար — Ջրաբերդ, Մրգաստան — Այգեստան երթեւեկող երկաթուղային գիծը։ Կամ գտնել հին, ծանօթ ու վստահելի կոնտուքտորներին[85], համաձայնութեան գալ նրանց հետ, որպէսզի նրանք յանձն առնէին կանոնաւորապէս կատարել այդ փոխադրութիւնը (գրականութիւն, նամակագրութիւն) եւ կամ թէ աշխատել մեր վստահելի ընկերներից մէկին մտցնել այդ գծերում երթեւեկող կառախմբերի մէջ ծառայելու, տալ նրան որոշ նպաստ եւ յանձնարարել նոյն գործը։ հակառակ դէպքում ունենալ յատուկ սուրհանդակ, որպէս էն ապահովը եւ վստահելին։

Մի այդպիսի պունկտ[86] է ներկայացնում օր[ինա]կ Նաւահանգիստը, որտեղից կարելի է ցրել ուղղակի միւս կարեւոր վայրերի վրայ ներմուծուող եւ արտադրուող ներքին գրականութիւնը։

Նամակագրութիւնները անպայման գաղտնի թանաքով, եւ միեւնոյն ժամանակ պայմանաւորուած «Բանալիով»։ օրինակ՝ գրքի կամ ոտանաւորի որեւէ էջով։

ՏԵՌՈՐԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿ

Ահաբեկիչ մարմին.— Ինձ թւում է, որ գործի գաղտնապահութեան եւ չափազանց չտարածուելու համար, աւելի յարմար է «Ահաբեկիչ մարմինը» միացնել Բիւրոյի հատուածի հետ, կամ կազմած նրա մի մասից՝ որը ենթակայ է լինում ամբողջութեան որոշումին։

Տեռ. խմբի կազմը.— Որպէսզի, ինչպէս յաճախ, տեռորիստների միջեւ կասկած ու անվստահութիւն չծագի՝ մէկից դէպի միւսը, տարաձայնութիւնների ու տգեղ երեւոյթների տեղի տուած չլինի, (ինչպէս յաճախ, անգամ վճռական վայրկեանին, որի արդիւնքը լինում է տեռորի կատարեալ անյաջողութիւն) լաւ է մի կարող ու այդ գործին ծանօթ ընկերոջ յանձնարարուի, որպէս-

84.- Առաքումի:
85.- Երկաթուղային գնացքի վարորդներուն:

զի նա կազմի այդ խմբակը իրար ծանօթ, վստահելի ու յեղ. անցեալ ունեցող ընկերներից, որքան կարելի է առաջնութիւնը տալով փորձուած, ինտելիգենտ ոյժերի։

Խմբակը միմիայն մի ընկերոջ միջոցաւ կապ կ'ունենայ ահաբեկիչ մարմնի՝ այն էլ նոյնպէս մէկ անդամի հետ։

Խմբակի այն անդամները, որոնք գտնւում են անմիջական յեղ. ակտիւ գործի տակ, կազմակերպութիւնից ստանում են ապրուստի միջոց, ակտիւ գործից դուրս՝ նրանք ապրում են սեփական աշխատանքով։ Տեռորիստներին (վերջին պահուն) միշտ պէտք է ծանօթացնել ահաբեկուողի յանցանքի հետ, որպէսզի նրանք վառուեն արդար վրէժխնդրութեան ոգւով, եւ տեռորի վրայ նայեն բոլորովին յեղ. տեսակէտից, եւ ոչ թէ լոկ մարդասպանութեան։

Նամակագրութիւն.— Յարաբերութիւնը դրսի մարմինների եւ յայտնի յեղ. անցեալ ունեցող ընկերների հետ պէտք է աւելի հաստատուն հիմերի վրայ դնել։ Նրանց խորհրդածութիւններն ու կարծիքները միշտ կարող են օգտակար լինել ներսի գործի համար։ Յաճախակի նամակագրութիւն պահպանել դրսի, յատկապէս Ա. Բ. թուրքահայ հատուածի եւ Արեւմտ. Բիւրոյի հետ, աւելի սերտ կապուած լինելու համար իրար հետ, ու գիտակ իրար գործունէութեան, ի հարկէ այն չափով՝ որչափով դա չի վնասի իւրաքանչիւրի գործին։ Յարաբերութիւնը դրսի մարմնի հետ պահպանելու է միայն ընկերներից մէկը եւ այն էլ կրկնակի ձեռքով, ոչ անմիջական հասցէով։

Երբեմն աշխատել են դրսի ընկերները այցելել Կովկաս, հէնց թէկուզ ճանապարհորդութեան համար։ դա խոշոր ազդեցութիւն եւ տրամադրութիւն կը յառաջացնի։

Նամակագրութիւնը լինելու է գաղտնի թանաքով եւ պայմանաւորուած բանալիով...

Շ. ԱՐՄԷՆ

---

*) Ծանօթ.— Թերթի ուղղութեան մասին աւելորդ է խօսել, նա կը լինի «Կովկասեան մարմինների» պաշտօնական օրգանը, եւ կը զբաղուի քաղաքական, տնտեսական ու յեղափոխական հրատապ հարցերով, ոյժ կը տայ գլխաւորապէս համերաշխութեան եւ կռուի տրամադրութեանը։ Միանգամայն անողոք ու մտրակող հասարակական, պետական վատ կողմերի վրայ եւայլն։

ԿՈՎԿԱՍ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

ԲԱԺԻՆ Բ.

Բաժինը յատկացուած է կուսակցական զանազան մարմիններու եւ ընկերներու միջեւ փոխանակուած գրութիւններու եւ կալանավայրերէն ուղարկուած նամակներուն, ուր կը շօշափուին մեղադրեալներուն վերաբերեալ այլազան խնդիրներ,– բանտային պայմանները, կալանաւորներու քաղաքէ քաղաք տեղափոխումները, դատախազին ամբաստանագիրը, այլեւ փաստաբաններու ապահովման, դրամահաւաքի, գումարներու փոխադրութեան եւ նման հարցերու կապուած բարդութիւններ: Այս բոլորի մասին ջանացած ենք ի մի բերել կազմակերպութեան արեւելեան շրջաններու՝ արդէն նօսրացած թղթածրարներուն մէջ գոյութիւն ունեցող այն բոլոր փաստաթուղթերը, որոնք այս կամ այն չափով կրնային լոյս սփռել խնդրի վերեւ յիշատակուած երեսներուն վրայ:

Ուշագրաւ են յատկապէս Պետրոսի (Բագրատ Տէր Յովհաննիսեան) հաղորդումները: Բացի դրամահաւաքի գործէն, զոր եռանդագին կը հետապնդէր ան Պարսկաստանի եւ Ռուսիոյ տարածքին, Դաշնակցութեան համեստ բայց ըստ ամենայնի նուիրեալ այս գինուորը ամէն տեղ է. մէկէ աւելի անգամներ կ՚երթեւեկէ Թիֆլիսի, Պաքուի, Նովոչերկասկի եւ Պետերբուրգի միջեւ, կալանաւորներու հետ ուղղակի կապ հաստատելու, դատին հետ կապուած տեղեկութիւններ հաւաքելու եւ արտասահմանի պատասխանատու ընկերները (յատկապէս Ռոստոմը) օրը-օրին իրազեկ դարձնելու համար անոնց մասին պատրաստուող ընդարձակածաւալ ամբաստանագրին, դատական ընթացքի ներքին քայլերուն եւ այլ մանրամասնութիւններու:

Ներկայացուող թղթածրարի վերջին մասով, երբ դատավարութիւնը կը հասնէր իր աւարտական փուլին ու վճռի պիտի արձակուէր ի մօտոյ, կ՚արծարծուի քաղաքական նոր մարտավարութեան հետեւելու խնդիրը: Խաչատուր Կարճիկեանի գրութիւնը կը գծէր արդէն այն ընթացքը, որուն պիտի հետեւէր պաշտպանութիւնը.– քննիչ Լըժինի կազմած ամբաստանագիրը, այլապէս լի կեղծիքներով եւ յերիւրածոյ վկայութիւններով, հիմք չունէր մասնաւորաբար այն էական բաժնին մէջ, ուր Դաշնակցութիւնը կը ներկայացուէր իբրեւ հակապետական գործունէութիւն ծաւալող եւ անջատողական նպատակներ հետապնդող կուսակցութիւն: Լըժինի մեղադրանքները կը վերաբերէին 1903-1906 տարիներու գործունէութեան, երբ եկեղեցական կալուածներու գրաւման եւ թաթարական ջարդերու առիթներով, Դաշնակցութիւնը հանդէս եկած էր հայ ժողովուրդի շահերու եւ զուտ ինքնապաշտպանութեան նկատումներով: Տարբեր տեսանկիւնէ մը մեկնելով, Սիմոն Զաւարեանի համար հարցը, դատավարութեան այս վերջին հանգրուանին, կը վերաբերէր Եւրոպայի մէջ ցարդ տարուած հակառուս, աւելի ճիշդ՝ ցարական վարչակարգի դէմ ուղղուած քարոզչութեան, զոր ըստ իրեն, մարտավարական նկատումներով առնուազն, հարկ էր որոշ բարեփոխութեան ենթարկել: Այդ իմաստով ալ քանիցս կը գրէ ան «Դրօշակ»ի խմբագրութեան, Միք. Վարանդեանին եւ Ա. Ահարոնեանին, որոնք, ֆրանսացի բարեկամներու հետ, կը վարէին հայ դատի եւրոպական քարոզչութիւնը: Այսուհանդերձ, Ռուսիոյ եւ մանաւանդ Թուրքիոյ նկատմամբ դիրքորոշման իմաստով, յատկանշական են Ա. Ահարոնեանի պատասխանատեսումներով:

Փաստ. 1749-3

Բ 1.– ՊԵՏՐՈՍԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

1-11-09

Ստորեւ տրուած նամակը ցարական գրաքննութեան ուշադրութենէն խուսափելու յատկանշական նմոյշ մըն է. ինչպէս Պետրոսի նոյնպէս նաեւ ուրիշներու պարագային յաճախ պիտի հանդիպինք այլաբանական այս ոճին:

Հեղինակը՝ Պետրոս, իսկական անունը Բագրատ Տէր Յովհաննիսեան (1877-1937), դաշնակցական հին գործիչներէն է, Խանասորի արշաւանքին մասնակցած հին մարտիկ, բայց աւելի ծանօթ իբրեւ վարպետ զինագործ Դաշնակցութեան Թաւրիզի «Խարխախ» արհեստանոցին (1896-1904), ուրկէ հաւանաբար իր առաջին ծանօթութիւնը Ռոստոմի հետ, որուն ուղղուած են առ հասարակ իր գրութիւնները:

«Դաշնակցութեան դատի» օրերուն Բիւրոյի կողմէ իրեն պարտականութիւն վստահուած էր դրամահաւաք կազմակերպել Պարսկաստանէն մինչեւ Հնդկաստան, ապա Կովկաս եւ Ռուսիոյ տարբեր կեդրոններուն մէջ՝ բանտարկեալներուն դատական եւ այլ ծախքերը հոգալու համար: Պետրոս այդ գործը տարաւ անձնուիրութեամբ ու յանդգնութեամբ, յաճախ ենթակայ դառնալով ոստիկանական հետապնդումներու եւ բանտարկութեան:

Հասկնալու համար գրութեան մէջ գործածուած այլաբանական ոճը՝ կը բաւէ իմանալ, որ հիւանդանոցը կը նշանակէ բանտ, հիւանդը՝ բանտարկեալ, հիւանդութիւնը՝ դատավարութիւն, բժիշկը՝ դատախազ, օպերացիան՝ տառացի գործողութիւն՝ դատավարութիւն իմաստով: Քեռի, հօրեղբայր եւայլն ակնարկութիւն է այքի զարնող բանտարկեալներուն, ինչպէս Ա. Ահարոնեան, Հ. Օհանջանեան, Ա. Գիւլխանդանեան, Լ. Թադէոսեան, եւայլն:

Սիրելի Ռոստոմ!

Ներողութիւն եմ խնդրում հեռագիր չուղարկելուս համար։ Ծարմարութիւններ չկան ընդունուած ձեւով գրելու։

Գալուցս մտայ հիւանդանոց տեղեկանալու քեռուս դրութեան մասին։ Տեղումդ տարածուած լուրերը նրա մասին հիմնովին սխալ են։

Շարունակւում է նոյն անորոշութիւնը։ Մինչեւ օրս բժիշկը չի բնորոշել հիւանդութեան հիմնական պատճառները։ այդ պատճառաւ անորոշ է նաեւ այն, թէ երբ կը լինի օպերացիան եւ առհասարակ լինելու է նա՝ թէ ոչ։ Հիւանդի մօտ էլ թոյլ են տալիս շատ սակաւ, առարկելով որ դա խանգարում է բժշկական գործին։ Այնպէս որ եղբայրս երբեմն միայն հնարաւորութիւն է ունենում տեսակցել կամ աւելի շուտ նամակ ուղարկել։ Այդ էլ կատարւում է ոչ թէ ոեւէ դրական հետեւանքի համար, այլ ուղղակի հիւանդին յոյսեր ներշնչելու, որպէսզի նա, առանց այն էլ քայքայուած ջղերով, գոնէ տեսնի, որ իր մասին դուրսը մտածող կայ, ծնող, բարեկամ չեն մոռանում նրան։

Որոշել ենք անցնել հօրեղբօրս մօտ եւ նրա հետ խորհրդակցել թէ՛ հիւանդի դրութեան եւ թէ մանաւանդ նրան փոխարինողի մասին։ Որովհետեւ, ինչպէս յայտնի է քեռուս հիւանդութիւնից յետոյ գործերս բաւական անմխիթար դրութեան մէջ են։ Ձէ՞ որ նա էր մեր սիւնը։ Կարծում ենք որ հօրեղբայրս իբրեւ նաւթարդիւնաբերող օգտակար կը գտնուի, մանաւանդ նիւթականի կողմից[86] *— մի բան որ շատ կարեւոր է բժշկութեան եւ նախնական ծախքերու համար։ Առհասարակ շատ բան ենք սպասում նաւթարդիւնաբերող հօրեղբօր հետ կայանալիք տեսակցութիւնից։*

Եղբայրս մինչեւ իմ գալը փորձել է մի ինչ որ ֆելդշերի[87] *միջոցով իմանայ բժիշկների կարծիքի մասին, որովհետեւ վերջիններս մեզնից խիստ կերպով թաքցնում են։ Եւ որովհետեւ այդ ֆելդշերը յայտնել էր որ կան մի քանի գրուած կարեւոր որոշումներ կանսելիումից*[88]*, եւ որ գլխաւորն է նա՝ այդ ֆելդշերը կարող է նոյնիսկ ձեռք բերել գրաւոր այդ դոկումանները եւ յանձնել մեզ, ուստի եղբայրս ամէն կերպ սկսել է ֆելդշերին փայփայել եւ հիւրասիրել։ Առ այժմ նա տուել է մեզ նախնական մի քանի գրութիւններ, որոնք առանձին նշանակութիւն չունին, բայց այդ հանգամանքը մեզ յոյս է ներշնչում որ կարող է բերել եւ կարեւորները։ եղբայրս շարունակում է այդ ուղղութեամբ, չնայած շատ է նստում անպիտանի հիւրասիրութիւնը*[89]*, իսկ մենք փող քիչ ունենք։*

..... գիւղի ոճրագործը իր մեծ եղբօրով գտնուում է մեր կողմերում[90]*. նրան հետեւում ենք ամենախիստ կերպով. գուցէ կարողանանք արդարադատութեան յանձնել*[91]*։*

Բժիշկ Ժակին ասացէք, որ եղբօր կինը անմխիթար վիճակի մէջ է, թող գրի նամակներ եւ յոյսեր տայ, խեղճ է։

Համբոյրներով՝ ՊԵՏՐՈՍ

86.- «Դրրեւ նաւթարդիւնաբերող» խօսքը կը վերաբերի Ոսկանապատ-Պաքուի Կ. Կոմիտէին, որ նիւթական գետնի վրայ Կովկասի մէջ եղած էր կուսակցութեան գլխաւոր հայթայթիչներէն մէկը:

87.- Ֆելդշերը կը նշանակէ բուժակ, բժիշկի օգնական. հոս՝ դատախազի կամ հարցաքննիչի օգնական:

88.- Կանսելիումը բժշկական խորհրդակցութիւն է. հոս՝ դատական թղթածրար:

89.- Հիւրասիրութիւն՝ վարձատրութիւն, կաշառք իմաստով, ինչ որ վկայութիւն է այդ միջոցով գաղտնի փաստաթուղթեր ձեռքբերելու փորձերուն:

90.- Կիտատր տրուած մասը ձեռագրին մէջ ջնջուած է. հաւանաբար խօսքը Եղիշէ Թոփչեանը սպանող Յաքէթի եւ իր եղբօր՝ խմբապետ Միհրանի (Ջէշիշեան) մասին է: Այս վերջինը յայտնի էր ոստիկանութեան մօտ դաշնակցականներու մատնութեամբ:

91.- Ահաբեկելու իմաստով:

Փաստ. 332-20

Բ 2.– ՊԵՏՐՈՍԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Սիրելի հօրեղբայր Ռոստոմ!

Ինձ մեղադրում են Յեղափոխականների Համագումարում մասնակցելու մէջ։ Ի հարկէ բացարձակ թիւրիմացութիւն է արտասահմանեան իմ անմեղ ճանապարհորդութեան նման մեղադրանք վերագրելը։ Երկտողիս նպատակը ոչ միայն այն է, որ քեզ հանգստացնեմ առողջութեանս մասին, այլ եւ մի կարեւոր խնդիր, որը, հաւատացած եմ, առանց յետաձգելու, կը կատարես։ Քեզ յայտնի է թէ ինչպէս արտասահմանի ռուսաց գաղտնի ոստիկանութիւնը փաստերը աղաւաղում է եւ անմեղ մարդկանցից շատ անգամ վրէժ լուծում։ Նա անպատճառ աշխատելու է ժողովարահի տիրոջը եւ ծառայողներին համոզել (ցոյց տալով նկարս) որ ինձ վրայ մատնացոյց անեն՝ թէ ես եւս եղել եմ նրանց հիւրերի մէջ։ Պէտք է զգուշացնել հիւրանոցին վաղօրօք ծանօթացնելով նրան նկարիս հետ։ Բացի այդ կայ եւ երկրորդ ոչ պակաս կարեւոր աղբիւր, որը նոյնպէս կարող է եւ կ'աշխատի շահագործել ռուս ոստիկանութիւնը։ Դա Վառնայի բուլգարական ոստիկանութիւնն է, որը ռուսների առաջարկութեամբ ցոյց կը տայ նրանց ցանկալի ամսաթիւ։ Ես եղել եմ այնտեղ Օգոստոսի 14-17-ը, ուրեմն պիտի հետեւիլ որ տեղական ոստիկանութիւնը ուրիշ թիւ ցոյց չտայ։ Այդ երկու փաստը եթէ ռուս ոստիկանութիւնը հնարաւորութիւն չունենայ շահագործելու, երբեք դատարանը չի կարող իմ վզին փաթաթել այդ անտեղի մեղադրանքը։ Ես արդէն մի ամիս է բանտարկուած եմ. յոյս կայ, որ դեռեւս մինչեւ դատը 6-7 ամիս էլ կը քաշի, այդպէս են տեղական կարգերը! Տրամադրութիւնս լաւ է եւ ուղարկում եմ քեզ ու ամբողջ ընտանիքիդ համբոյրներս։ Զմոռանաք նոյնը մատուցել նաեւ Խաչատուրին եւ Յարութիւնին։ Նամակս ստանալուդ մասին անպատճառ տեղեկացուր Բագու, ինձ կը հաղորդեն։

Քոյդ ՊԵՏՐՈՍ

14 Դեկտեմբերի 09

Յ.Գ.- Եթէ բուլգարական ոստիկանութիւնը եւ հիւրանոցը արդէն գործիք են դարձել ռուսների ձեռքին, այնուամենայնիւ աշխատիր, կարող են փոխել իրենց ցուցմունքը։

ՆՈՅՆ

Փաստ. 332-21

Բ 3.– ԲԱԳՈՒԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐԸ

Յարգելի ընկերներ!

Ուղարկում ենք ձեզ Պետրոսի նամակը եւ լուսանկարը եւ խնդրում ենք սորա մէջը գրածը աշխատէք անմիջապէս իրագործել եւ հետեւանքի մասին մեզ տեղեկացնել. դուք էլ գիտէք, որ խեղճը անմեղ է. հաւանական է մի ուրիշի հետ չփոթած լինեն. իրանք էլ նրա լուսանկարը հանել են. լիայոյս ենք որ այս գործում ձեր կարողացածը չէք մերժի։

Բարեւներով՝ ՄԱՇՏՈՑԵԱՆ[92]

20/XII, Բագու [1909]

92.- Մաշտոցեան կուս. ծածկանունն էր Ոսկանապատ-Բագուի Կեդր. Կոմիտէի անդամ Աղաջանեան Գրիգորի:

Փաստ. 1749-59

Բ 4.– ՌՈՒԲԻՆԱՅԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Նամակագիրը Ռուբինա Արէշեանն է, Ապտիլ Համիտ Բ.ի դէմ գործուած մահափորձին մասնակից ծանօթ Ռուբինան։ Արեւելեան Բիւրոյի անդամներէն Համօ Օհանջանեանի ձերբակալութենէն ետք, անտեսելով Պոլսոյ պատասխանատու ընկերներու խորհուրդները, 1909 թ. Մայիսին մեկնած էր Թիֆլիս եւ բանտէ բանտ, Մետեխէն Ռոստով եւ Նովոչերկասկ հետեւած անոր, դուրսէն ամէն կարգի օգնութիւն հասցնելով նաեւ բանտարկեալ բոլոր ընկերներուն։ Իբրեւ կասկածելի ինք եւս պիտի ձերբակալուէր. ազատ արձակուելէն ետք նոյնպէս հետեւեցաւ աքսորեալներուն մինչեւ Սիպերիա, ուր եւ տեղի ունեցաւ Հ. Օհանջանեանի եւ իր ամուսնութիւնը։

Յատկանշական է Իշխան Յովսէփ Արղութեանի, Կոմսի, Արմէն Գարոյի եւ շատ մը ուրիշներու պարագան. արդարեւ քիչ չէր թիւը այնպիսիներուն, որոնք ձերբակալուած էին ու ամիսներէ ի վեր բանտ կը մնային իբրեւ հետեւանք՝ ամէն գնով դաշնակցականներ որսալու ցարական քննիչ Լոշինի խարդախութեան եւ հապճեպ կարգադրութիւններուն։

Ռուբինայի գրութիւնը, Պոլիս Բիւրոյի ընկերներուն ուղղուած, անթուակիր է. այլ ձեռագրով մը մակագրուած է «Նովոչերկասկից» եւ «Դեկտ. 25-ին գրուած»։ Հաւանական տարեթիւը պիտի ըլլար 1909։

Սիրելիք,

Արդէն քսան օր է մեր խումբ զբօսնում է. գալիս են քաղաքի մէջ մի չէնքում եւ լսում են գործ. ահագին բան է, մի տաս օր էլ կը շարունակուի։ Մեղաւոր չեն մարդիկ, բայց մեղադրանքները մեծ են. տանում են [ժամը] 8-ից մինչեւ 3. ուրախ ենք, գոնէ զբօսնում են եւ մի 7 ժամ ազատ են այն սոսկալի պայմաններից. ի հարկէ այստեղ էլ ի ցոյց է այդ տանել-բերել. տեսնում ենք բոլորին. տալիս են տեսակցութիւնը ազգականներին։ Եղբայրս[93] *լաւ է տանում, առողջ է, բոլորիդ համբուրում է։*

Նամակագրութիւն պահել անհնար է. տեսակցութիւնից իմացայ որ Արղութեանի դէմ մնում է միակ մեղադրանք. մնում է Վանի Իշխանի[94] *տուած ստորագրութիւնները թէ կուսակցական փող է ստացել, զէնք է ստացել եւ փոխադրել երկիրի համար. բանից դուրս է գալիս, որ թէեւ Վանի Իշխանը ռուս կոնսուլին ասել է, որ այդ մարդը ինքն է, բայց չի տուել իւր գիրը. հիմա անհրաժեշտ է որ Վանի Իշխանը նորից գնայ կոնսուլի մօտ եւ ասի իւր իսկական անունը եւ ազգանունը եւ որտեղից լինել, տայ իւր լուսանկարը եւ գրի իւր ձեռքով մի քանի նախադասութիւն հայերէն եւ մի քանի անգամ (10-15) ստորագրի ինչպէս նա սովորաբար ստորագրում էր Իշխան, եւ խնդրի որ այդ բոլորը իւր[ն] է, յայտարարութեան հետ թէ նա եղել է Դաշն[ակցութեան] փող եւ զէնքը ստացողը երկրի համար, թերթերում յօդուածներ գրողը, Իշխան ստորագրութեամբ, ուղարկի Նովոչերկասկ պրոկուրորին*[95]*։ Արղութեան ինք ասել է Իշխանի իսկական անուն, ազգանունը եւ որտեղացի լինելը եւ խնդրել է ստուգել այդ բոլորը եւ կարծում է Իշխան չի մերժի այդ անել եւ փրկել նրան, որովհետեւ միակ փաստը Արղութեանի դէմ դա է, ուրիշ ոչինչ չկայ։ Խնդրում են շատ շուտ հաղորդել այդ Իշխանին եւ շտապեցնել այդ բոլոր անի եւ ուղարկի, որպէսզի Արղութեան կարողանայ պահանջի նորից էկսպերտիզը*[96] *նշանակեն։*

Կայ այստեղ Կարապետ Ղազարեան, որին վերագրում են Գարօ-ի գրածները. թող Գարոն ռուսաց պօսօլի միջոցով ուղարկի պրոկուրորին հոս պալատը իւր պոչիրկը եւ ասէ որ Կարաքլիս գտնուած Անտառապատի սկլադում[98] *գտնուած թղթերը գրուած են շատեր իրա ձեռքով. եւ յետոյ Վռամ Վահանեանին ասում են որ դու Կոմսն ես եւ Բիւրոյի անդամ Վռամեանը։ Պէտք է ձեռք բերել թերթերը Պոլսի եւ Ամերիկայի թերթերից, որ Վռամեան-Բիւրոյի անդամը կայ մինչեւ հիմա եւ գործում է։ Աշխատեցէք շատ շուտ անել այդ բոլորը։ Շատ խճճուած գործ է, պէտք է պարզել եւ ի զուր տեղ մարդկանց չկորցնել։*

Յետոյ կայ այնտեղ Գանձակեցի Ալեքսանդր Մամիկոնեանց, վերցրէք նամակները, որոնցով կազակները մահուան սպառնալիքով պահանջել էին Դաշնակցութիւնից 10 հազար ռուբլի։ Նա այդտեղ պատրաստում

93.- Ակնարկութիւն Համօ Օհանջանեանին:

94.- Իշխան Յովսէփ Արղութեան, որ բանտարկուած էր շփոթելով Վանայ Իշխան՝ Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեանի հետ:

95.- Դատախազին:

96.- Փորձագիտական քննութիւնը:

97.- Խօսքը Ղարաքիլիսա քաղաքին, այժմու Վանաձորի մասին է, որուն կուս. ծածկանունը Անտառապատ էր:

98.- Պահեստում:

էր գիրք տպել այդ առթիւ։

Գործը բաղկացած է 4000 երեսից. շատ տխուր պատկեր է դուրս գալիս, վատ է ազդում. միայն սպանութիւնները եւ կեղտոտութիւնները. կարծես հայկական կեանքում լուսաւոր կողմերը չեն եղել!

Կ'աշխատեմ ուղարկել առաջին յարմար դէպքում Մ[իհ]րանի ցուցմունքները[99]. պէտք է տպէք թերթերում որոշ նկատողութիւններով։ Նա մատնիչ է ոչ միայն կուսակցութեանը այլեւ ազգային դպրոցները եւ այլ ազգային հիմնարկութիւնները. թող տեսնեն ում է պաշտպանել եւ սնուցանել Մշակը[100]։

Անցնինք հիմա մեր սրտաճմլիկ հարցին։ Բոլորը մտնում են ընդհանուր պաշտպանութեան մէջ. պաշտպանութիւնը նստում է շատ մեծ փող, 50, 60 հազար։ Բոլոր ձեր ծանօթները որոշել են դիմել ձեզ, հասցնէք օգնութիւնը. չունեւորների բաժին 25 հազար է, որտեղից... մտածէք, մի բան արէք։

Խեղճ Աւետիսի[101] գործ ծանրացաւ. քննիչը ուզում է դուրս բերի նրան կուսակց[ութեան] ներշնչող, Բիւրոյի անդամ, Հագա գնացող կուսակցութեան կողմից, նախագահ տեռորիս[տ] խումբի եւ այլ խաթաբալէք[102]։

Համբոյրներով
Ռ[ՈՒԲԻՆԱ]

Պատասխանեցէք շուտ իմ հասցէով։

99.- Խօսքը կը վերաբերի նախկին խմբապետ Միհրանին (Քէշիշեան), որ յատկապէս ոստիկանութեան գործիք դարձած՝ լծուած էր դաշնակցականներու մատնութեան գործին։
100.- Խօսքը կը վերաբերի Թիֆլիսի «Մշակ» թերթին, որ տարիներէ ի վեր հակադաշնակցական ընթացք բռնած էր եւ կը պաշտպանէր Միհրանը։
101.- Ակնաբկութիւն Ահարոնեան Աւետիսի։
102.- Փոքրանք, անախորժ դրութիւն։



Նմոյշ՝ Ռուբինա Արէշեանի ձեռագրէն

Փաստ. 449-1

Բ 5.– ՊԵՏՐՈՍԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Սիրելի Ռոստոմ!

Ինձ ազատ են արձակել, բայց երեւի ժամանակաւոր։ Երեւի ուղարկուած նամակը իմ վերաբերմամբ (նկարով) արդէն ստացել ես։ Եթէ չես կարդադրել, կարծում եմ լաւ կը լինի իրագործուի։ Ի հարկէ հարկաւոր դիպուածում պիտի ինձ նեղութիւն քաշեն փնտրելու, բայց եւ այնպէս ծայրայեղ դէպքի համար անհրաժեշտ է, որ արած անզգուշութիւն չկրկնուի։ Թիւը Ե-14 է եւ հիւրանոցի ցուցմունքը կարող է լուրջ նշանակութիւն ունենալ։

Շարունակւում է նոյն տաղտկալի կացութիւնը։ Միւսների վիճակի որոշումը սպասում ենք գարնանը։ Քիչ-միչ քայլում են ընդհանուրի անտարբերութեան դիմաց։

Անվերջ համբոյրներս նաեւ Խաչատուրին։

13-1-1910 Քո՝ ՊԵՏՐՈՍ

Փաստ. 449-2

Բ 6.– ՊԵՏՐՈՍԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

4-2-1910, Պետերբուրգ

Սիրելի Ռոստոմ,

Երեւի նամակս ստացած կը լինիք։ Չնայած պատասխաններ ձեզնից չեմ ստանում, բայց իբրեւ կրտսեր ընկեր, առանց տատանուելու շարունակում եմ գրութիւններս։ Մեր կացութիւնը քանի գնում վատանում է։ Կազմակերպական տեսակէտից բան համարեա չունինք, եւ կուսակցական մեր գործունէութիւնը ազատ կարելի է համարել «բանտային»։ Միայն բանտարկեալների վերաբերմամբ է որ շատ ու քիչ աշխատանք է կատարւում։ Վերջիններիս վիճակը քիչ մխիթարական է. 1) սպասում ենք դատը գարնանը[103]. 2) ենթադրւում է որ տեղի կ'ունենայ Կովկասում. 3) մինչեւ դատը, մի որոշ թիւ ազատ կ'արձակուի, չնորհիւ Դումայում կազմակերպուելիք զապրոս-ի[104]։ Ինչ վերաբերում է իրաւաբանական օգնութեան, այդ մասին մտածւում է բաւարար կերպով։ Նրանց ծանօթացրինք հնարաւորին չափ գործի հետ, կազմակերպութեան անցեալի եւ ներկայի հետ։ Չնայած առայժմ վարձատրութեան մասին չի խօսւում, սակայն ընկերներից մի քանիսը մտադիր են նոցա փողը ունենալ պատրաստ։ Կարծւում է որ քիչ սխալ գործած կը լինենք, եթէ անհրաժեշտ գումարը դատավարութեան օրերից առաջ տեղափոխենք։ Դրան ապացոյց՝ մի շարք գումարներ՝ իբր թէ անձեռնմխելի եւ նշանակուած դատավարութեան համար, կուլ են գնացել կազմակերպական տեղական ծով պահանջներին։

Սրիկայ Մ[իհ]ր[ան][99] շարունակում է ազատ մնալ. այդ հանգամանքը եղած-չեղած աւտորիտերներս[105] էլ ջախջախուեց տեղումս։ Վերջին դէպքը անչափ անյաջողութիւն էր։

Իմ հիւանդութիւնիցս յետոյ, ես 2-3 ամսով օդափոխութիւն եմ կատարելու։ Դա անհրաժեշտ է մի քանի տեսակէտներից։ Ռուբէնը գտնւում է բաւական անախորժ կացութեան մէջ, մանաւանդ որ միւս ընկերները համարեա թէ բացակայում են։ Նա այժմս ձեռնարկել [է] մի փոքրիկ tournée[105ա]։

Սիրելիս, գրիր մի քանի տող ձեր կացութեան մասին։ Գիտեմ դժուար է ժամանակ գտնել անձնական գրագրութեան համար, բայց աչքի առաջ ունենալով այն, որ ներկայումս մեր անմխիթար դրութիւնից քիչ յոյսեր են ներշնչում ձեր կողմերում, քանի մը տող եւ երբեմն ուղարկեցէք մեզ։ Մի բան, որ խնդրում եմ Ձեզնից, շատ կարեւոր է, շուտով ուղարկեցէք։ Դա ջնջելու դեղն է եւ ձեւը. կորցրել ու մոռացել եմ։ Գոնէ այդ պատճառով նամակս ստանալուն պէս, գրեցէք ինձ։

Հասցէս — Պետերբուրգ[105բ]

103.- Ինչպէս նշած ենք արդէն, բանտարկեալներու դատավարութիւնը, որ կը կարծուէր տեղի ունենալ 1910 թ. գարնան, բազմաթիւ յետաձգումներէ ետք եղաւ ոչ թէ Կովկասի, այլ Պետերսբուրգի մէջ 1912 թ.ի առաջին ամիսներուն։
104.- Բնագրին մէջ ռուսատառ՝ հարցապնդում։
105.- Հեղինակութիւնը, ազդեցութիւնը։
105ա.- Tournée – ֆրանսերէն՝ շրջապտոյտ։
105բ.- Բնագրին մէջ ռուսատառ անընթեռնելի հասցէ։

Փաստ. 107-119

Բ 7.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պոլիս 1910, Սեպտ. 22

Ընկերներ,

Ինչպէս Ձեզ յայտնի կը լինի, տղայոց դատը սկսւում է արդէն[103]։ Այդ առթիւ մեզ դիմում կայ՝ Բերլինէն գրուած, ենթադրաբար Մարտիրոսի կողմից, որով հրահանգում է փող փոխադրել Կովկաս։

Այդ նամակը ներփակում ենք որպէսզի իմանաք եւ դրամ փոխադրելու միջոցը։ Հաւանական է որ գրողը լինի եւ բժ. Մուրադեանը։ Թէ ինչ կիւլպէնկեան է, մենք չգիտենք, եւ եթէ ստիպուած լինիք անպատճառ այդ ճանապարհով ուղարկել, լաւ կը լինի որ իրեն (Մուրադեանին) դիմելով՝ հասկանաք մանրամասնութիւնները։

Ըստ մեզ, քանի որ Մեղրեցին այդտեղ է եւ մի քանի անգամ արդէն փող է փոխադրել, լաւ կը լինի որ եղած գումարն էլ նրա միջոցով փոխադրէք։

Դեկտեմբերին այդ նպատակով ուղարկուած 4000 ֆր. Մէքայէլի եղբօր[106] հասցէով ո՞ւմ է յանձնուած։ Այդ էլ ստուգեցէք։

Համոն իր քրոջը[107] այսօր գրած է, որ դատը մինչեւ յունուար պիտի վերջանայ. ուրեմն շտապելու է։ Միւս խընդիրների մասին յետոյ. շտապողականը սա է։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ Թ[ՈՒՐՔԻՈՑ] ՀԱՏՈՒԱԾ

Փաստ. 99-81

Բ 8.– ԳԱՌՆԻԿԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

Սիրելի Ռոստոմ,

Ճանապարհն անչափ դժուարին էր եւ ցուրտ. հասայ 7 օրում։

Դրոյին յանձնեցի ձեր նամակը։

Դրոն չի թողնում գնամ եւ որպէսզի ինձ միանգամայն զինաթափ անէ, խորամանկութեամբ ձեռքիցս առաւ ճանապարհածախսը. ի հարկէ, ինձ համար թանգ է նրա ընկերական հոգացողութիւնը (ասում է — «դեռ սպասի»), բայց ես խեղդւում եմ եւ տօներից յետոյ կ'երթամ։ Այժմ պատասխանեմ ձեր տուած հարցերին։

1) Ցարութիւնի ձին ծախուած է 3 լիրայով եւ փողը, ստիպողական հանգամանքի մէջ, յանձնած են Մրգաստանի կ.կ.ին. նոյն մարմնին տուած են նաեւ Ցարութիւնի (Տրապիզոնից բերած) ձեռքի N°11-ը. այդ երկու սի մասին էլ շուտով կ'ուղարկուի պատշաճ ստացականը։

2) «Ցառաջ»ի գրադարանի գրքերն ու բրոշիւրներն առ այժմ անհնարին է բերել այս կողմը։

3) Գրականութեան տեղափոխութիւնը միանգամայն հնարաւոր է. միայն թէ ամսական երկու անգամ 1-ական պուտ[108] գրականութիւն յղելու համար հարկաւոր է maximum 25 ռուբլի. եթէ այդ գումարը տրամադրելի անէք Սուրէնին[63], ապահով կարող էք լինել, որ ամիսը երկու անգամ Սարուստանը[109] կանոնաւոր կերպով գրականութիւն կը ստանայ, որի համար այսօր եկած ընկերները ասում էին, թէ շատ մեծ պահանջ կայ։

4) Սաշայի մասին տարածուած զրոյցն անհիմն ու վատամիտ է. Սուրէնը հաստատ տեղեկութիւն ունի. մանրամասն առանձին նամակով կ'իմացնենք ձեզ. գրելն անյարմար է, միայն թէ միամիտ եղէք, Սաշան միագամայն մաքուր է, որի մասին արդէն չէր կարելի էլ կասկածել։

5) Դրոն կարին կը գայ Փետրուարի վերջից ոչ ուշ, դրանից առաջ գալը անհնարին է։

6) Սարուստանից լուր կը հաղորդեն եւ կ'աշխատեն կապ հաստատել, որ լուրերը լինին պարբերաբար։ Վաղոն գործով Ի[գդի]ր է. Իգդիր տեղի են ունեցել մի շարք խուզարկութիւններ. խուզարկել են ուսուցիչ Դրամբեանին, Մարտիրոս Թերզիբաշեանին եւ երկու ուրիշ տուն։

Իգդիրից աքսորւում են Կովկասի սահմաններից դուրս 5 տարով — Հայրապետ Կանայեան, Ենովք Խըտոյեան, իսկ Բահռուլից՝ Ղարիբջանեան եւ երկու գիւղացի։ Կանայեանը 2 տարի բանտումն էր առանց փաստի՝ զոհ կամայականութեան։

106.- Վարանդեանի:
107.- Համոն՝ Օհանջանեանն է. քոյրը՝ Սաթենիկ:
108.- Փոքր քանակութիւն իմաստով:
109.- Կովկասի կուս. ծածկանունը:

Բագւում խստութիւններ չկան։ Բուրգացկու սպանութիւնից[58] յետոյ՝ Երեւանում դրութիւնը վատ է, ոստիկանական կամայականութիւններն անչափ։ (Մի որոշ ժամանակ, սակայն, սանձահարուած էր ոստիկանութիւնը, յետոյ արխայինացաւ[110] եւ սանձարձակուեց)։

Երեւանի շրջանի գիւղական ուսուցիչների մօտ տեղի են ունեցել մի շարք նոր խուզարկութիւններ։

Թփխիսում բռնուած տղաներից Կովկասից դուրս 5 տարով աքսորւում են՝ Կորիւն Ղազազեան, Մինաս Մակարեան, Նիկոլ եւ Անդրէաս (ղարաբաղցի)։

Ահարոնեանի ծանր հիւանդութիւնը հաստատւում է։

Լուրեր կան, որ Խաժակին, Լեւոն Մուշեղեանին (այս փաստ է) եւ մի շարք ընկերների գրաւականով արձակած են։ Երեւան մարդ գնաց, 3 օրից կը գայ, յանձնարարեցինք ստուգել, կը գրեմ։

Հասան-Ղալէ Թաղի Զադէին[111] տեսայ, որին նախօրօք ասել էին, թէ մի դաշնակցական Թաւրիզ է գնում. չհերքեցի. խեղճ մարդը երկար խօսեց համերաշխ գործունէութեան մասին, խնդրեց ներկայանալ իր ընկերներին եւ իմ մասին նամակ գրեց Թաւրիզ.— Բաւական ապուշ դրութիւն էր։

Երեւանում զօրաշարժ է, մեծ ոյժեր են կենտրոնանում — նպատակը յայտնի չէ։

Դրութիւնը այստեղ տարտամ է. ոչ մի շարժում, կան խմբեր՝ առանց կանոնաւոր պարապմունքի եւ կազմակերպչական կեանքի։

Առ այժմ այսքան. հասցէս Սուրէնի անունով։ Բարեւներ Բժշկին։ Բարեւ ձեզ՝ Եապոնից[112]։

Ջերմ ողջոյններով ձեզ՝ ԳԱՌՆԻԿ

1910 թ. 29 Դեկտ.

Փաստ. 58-150

Բ 9.– Ա. ՎՌԱՄԵԱՆԻՆ ԵՒ Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻՆ

Սիրելիք, Վահագ եւ Լիպարիտ

Այս ծրարով ուղարկում եմ ձեզ մի ձեռագիր, որ իսկոյն ստացայ Վարդգէսից՝[113] Մոսկուայից. նա նոր է եկել Նովոչերկասկից եւ բերել է այդ ձեռագիրը, ուղարկել է ինձ եւ խնդրել է անմիջապէս հասցնել Պոլիս առանձին գրքով շուտով տպագրելու համար։ Ես կարդացի ձեռագիրը. շատ հետաքրքիր կազմուած է, եւ կարծում եմ կարելի է անմիջապէս տպել եւ «Ազատամարտ»ի մէջ եւ առանձին բրոշիւրով թէ հայերէն եւ թէ օտար լեզուներով։ Ձգիտեմ, գուցէ ռուսերէն հէնց այնտեղ Մոսկուայում թարգմանած լինեն եւ շահագործած այդ նիւթը, բայց արժէր հրատարակել այդպիսի մի բան եւ ֆրանսերէն, եթէ կարելի լինէր նոյնիսկ անգլ[երէն] եւ գերմաներէն։ Գոնէ ֆրանսերէնը շատ կարեւոր կը լինէր։ Այժմ եւ առհասարակ ես ուզում եմ գրել ձեզ, որ ինձ թւում է, թէ մենք բոլորովին անուշադիր ենք թողել եւրոպական մամուլը, այն ինչ ռուսաց կառավարութիւնը բաւական զգայուն է (գոնէ առերես) դէպի այդ մամուլը, եւ ամէն անգամ երբ մի որեւէ աչքի ընկնող երեւոյթի վերայ սկսում են գրել եւրոպական թերթերում, կառավարութիւնը աշխատում է հերքել կամ բացատրութիւններ տալ։

Այն ինչ Ֆինլանդիայի մասին, ուսանողական շարժումների մասին, կամ վերջին բանտային դէպքերի մասին բաւական գրուեց եւրոպական թերթերում, մեր հարիւրաւոր բանտարկեալների ծանր վիճակի մասին եւ առհասարակ այդ ամբողջ դատի մասին ոչ մի խօսք համարեա չի գրւում։ Եւ ով պէտք է գրէ, եթէ մենք լռում ենք, ով որ մեզնից կարող է, ոչինչ չէ անում։— Եթէ մեզնից դիմումներ լինին Բերարին, Ֆիյարին կամ Պրեսանսէին, Ժօրէսին[114], Daily News-ի եւ Ֆրանկֆուրտեր Zeitung-ի խմբագրութիւններին, նրանք անշուշտ եւ կ'աշխատէին եւ կը գրէին,— բայց ոչ ոք չի դիմում։ Ես քանի անգամ Մէքայէլին[106] ասել եմ, որ պէտք է գրել այդ մասին աւելի յաճախ եւ շատ թերթերում. չէ որ նա ծանօթ է թէ յիշեալ անձանց եւ թերթերի խմբագիրներին հետ։ Ասել եմ, նրան նամակներ եմ գրել այստեղից, որ բան անի, բայց ոչինչ չի անում եւ անուշադիր է թողնում[115]։ Իմ խորին համոզմունքով, դա նրա կողմից դատապար-

110.- Ինքզինք ապահով զգաց:
111.- Պարսիկ քաղաքական գործիչ, սահմանադրական կարգերու կողմնակից:
112.- Բժ. Տէր Դաւթեան Յովսէփ, անդամ Արեւելեան Բիւրոյի: Եապոն՝ իսկական անունով Պարոնեան Յովհաննէս, որ ոստիկանական հետապնդումներէն խուսափելով՝ անցած էր սահմանը եւ կը գտնուէր Հին Պայազէտ՝ Դրոյի մօտ:
113.- Վարդգէսը՝ Ահարոնեան Աւետիսի որդին է: Նամակագրի ինքնութիւնը կարելի չեղաւ ստուգել. կու տանք ստորագրութեան պատճէնը:
114.- Նշուած անձնաւորութիւնները՝ Դաշնակցութեան բարեկամ ֆրանսացի քաղաքական դէմքեր են:
115.- Նամակագրին դիտողութիւնը իրաւացի չէ, որովհետեւ մինչ այդ Վարանդեան բազմիցս դիմումներ կատարած էր թէ՛ յիշուած անձնաւորութեանց եւ թէ այլոց:

տելի է միանգամայն,— այդպէս անտարբեր լինել եւ զբաղուել միայն իրեն սենեակում զանազան բրոշիւրներով եւ յօդուածներով, որոնք այս րոպէիս այնքան էլ կարեւոր չեն...

Ես գրում եմ ձեզ, որ այդտեղից նրան պաշտօնապէս այդ մասին գրէք. թող նա գնայ Պարիզ, տեսնուի ում հետ կարելի է, աշխատի մեր բանտարկեալների վիճակի մասին (թէ ինչ են կրում նրանք, ես ներքեւում կը պատմեմ Վարդգէսի խօսքերից իր հօր մասին)։ Մանաւանդ այժմ կարեւոր է, որովհետեւ նոր (Ռուսիոյ) դեսպան Իզվոլսկին փոքր ինչ կորրեկտ եւ լուսամիտ մարդ է. նա կ'աշխատի Ֆրանսիացի դիմողների առաջ իրեն լաւ ցոյց տալ եւ Նելիդովի նման չխաբել։ Միքայէլի վերջին դիմումից D'Estournelles-ի[114] միջոցով անցել է համարեա 9-10 ամիս, եւ այժմ անհրաժեշտ է նորոգել քայլերը։ Եւ ոչ միայն պէտք է դիմել դեսպանին,— դա ի միջի այլոց, այլ պէտք է գրել, խօսել, ժողովներ կազմել, թէ՛ Պարիզ, թէ՛ Լոնտոն. Daily News-ի մէջ գրել, յետոյ Ֆրանկֆ[ուրտեր] Zeitung, Berl[iner] Tagebl[att]-ի ու Vorwärts-ի, մի խօսքով որտեղ միայն կարելի է...

Շատ չեմ երկարացնում, դուք էլ կը հասկանաք, թէ ի՞նչ պէտք է անել... Ուրիշ մարդ չունինք, որ Պարիզում ծանօթութ[իւն] ունենայ. Միքայէլն է եւ խաչատուրը...[116] Ուստի գրեցէք ձեր կողմից էլ Միքայէլին եւ խաչատուրին։ Գուցէ նա շուտով վերադառնալու է Ամերիկայից, ճանապարհին կը հանդիպի մի քանի օր Պարիզ։

Այժմ մի քանի խօսք, թէ ինչ է գրում Վարդգէսը, որ նոր է տեսել հօրը Նովոչերկասկում։ Մօտ երկու ամիս է ահա ինչ 104 հոգի, Աւետիքն[117] էլ թւում, բերուած են Նով[ոչերկասկ]ի բանտը։ Նրանց վիճակը անտանելի ծանր է, ենթարկուած զրկանքների եւ անարգանքների բոլոր ծառայողների կողմից։ Նրանք քնում են ասֆալտի վերայ առանց դոշակի մի բայկի[118] վերմակով միայն։ Բոլորն էլ հագած են կալանաւորների զգեստներ. սաստիկ ցրտերին առանց վերարկուի են, միայն կոտրկայով։ Կերակուրը անընդունելի է, այնպէս որ շատերը ոչինչ չեն ուտում օրերով բացի հացից։ Աւետիսին իբրեւ բացառութիւն տալիս են օրական մի բուլկի[119] եւ մի բաժակ կաթ ընդամէնը։ Դրսից կերակուր բերելը չի թոյլատրւում։ Աւետիսի աղիքների հիւանդութեանը աւելացել է եւ թոքախտը, որը արագ զարգանում է եւ եթէ չուտափոյթ չփոխուի նրա վիճակը, նա կարող է մեռնել հէնց բանտում։ Ուրիշներն էլ քաղցից շարունակ հիւանդանում են։ — Այդ բոլորը նկարագրելով՝ Վարդգէսը ինձ խնդրում է «Հայրիկի բոլոր լաւ ընկերներին» յայտնել այդ եւ խնդրել անել, ինչ որ հնարաւոր է դիմելով Ֆրանսիացի բարեկամներին եւ այլ միջոցների։

Այս նամակի (Վարդգէսի) բովանդակութիւնը երէկ գրեցի Միքայէլին եւ խնդրեցի անպատճառ աշխատել մի բան անել, գնալ Պարիզ կամ գոնէ նամակներ գրել, թէեւ իմ կարծիքով գնալը շատ կարեւոր է. չգիտեմ նա ինչ կ'անի. խնդրեմ այդտեղից էլ նրան գրէք, գուցէ ազդի։

Վարդգէսը գրում է, որ գլխաւոր մեղադրանքներից մէկն է Հաագա գնալը, իբրեւ թէ յեղափոխականների կողմից։ Այդ մասին ասել է Վարդգէսին հէնց ինքը դատախազը, եւ չնայած բոլոր հակառակ պնդումների Վարդ[գէս]ի կողմից, նա իրենն է կրկնել...

Ջերմ եւ սրտագին բարեւներս բոլորիդ էլ։ Ես առայժմ էլի այստեղ եմ։ Գրեցէք ինձ այստեղ, poste restante։ Նորութիւններ ունէք արդեօք ուրիշ, Կովկասից, դատի մասին։ Բարեւներ Նիկոլին, Նատիային եւ միւսներին։

Համբոյրներով, Ձեր



30 — XII — 1910

Շնորհաւոր ձեր Նոր տարին. յուսով եմ, «Ազատամ[արտի]» գործերը լաւ են. յանցաւոր եմ, որ այսքան ժամանակ չեմ գրել մի բան. կ'աշխատեմ քաւել յանցանքներս. Լիպարիտ, ինչո՞ւ ոչինչ չես գրել ինձ, չնայած, որ երկու երեք անգամ խոստացել ես։

116.- Միքայէլը, ինչպէս գիտենք, Վասանդեանն է. Խաչատուրը՝ Մալումեան (Է. Ակնունի)։
117.- Աւետիքը՝ Իսահակեանն է։
118.- Բամպակէ կամ բուրդէ գործուածք։
119.- Փոքրիկ հաց։

Փաստ. 59-60

Բ 10.– ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

Թիֆլիզ, 19-ին յունիսի 1911 թ.

Սիրելի Միքայէլ,

Ներիր, որ այսքան ուշ եմ պատասխանում նամակիդ, որը երկու օր առաջ միայն կարդացի. պատճառը երկարատեւ բացակայութիւնս էր Թիֆլիզից (Ապրիլի 27-ից մինչեւ սոյն յունիսի 16-ը)։ Գնացել էի Ղարաբաղ, իսկ այնտեղից Բագու մի հանրօգուտ գործի համար, որի մասին եղբայրս կը պատմի քեզ։

Նախնական քննութեան պատճէնը յանձնեցին մեզ ու շարունակում են յանձնել՝ այս ու այնտեղ գտնուող մեղադրեալներին։ Մեղադրական ակտերը դեռ չեն յանձնել. ասում են, որ ամառուայ ընթացքում կը յանձնուեն։

Նախնական քննութիւնը մի քանի ահագին հատորներից է բաղկացած. պատմական ու այլ տեսակի հարուստ նիւթ է պարունակում իր մէջ։ Ապագայ պատմաբանը շատ շնորհակալ է լինելու Լր[ին]ից, որ այդպիսի հարուստ նիւթ է ժողովել նրա համար։

Դատը կայանալու է Նովոչերկասկում. վերջնականապէս այդպէս է որոշուած, ասում են։

Նիստը լինելու է անպայման դռնփակ. մամուլի ներկայացուցիչներից ոչ ոքի թոյլ չի տրուելու ներկայ գտնուիլ։ Հրաւիրուած են մօտ 15 փաստաբան, առաջնակարգ ոյժերից։ Մեծ հոնորարներ[120] են պահանջում, 4-ից մինչեւ 8 հազար ռուբլի իւրաքանչիւրը։ Պաշտպանութիւնը ըստ երեւոյթին կը նստի մօտ 80-90 հազար ռուբլի առնուազը։ Եթէ դրան աւելացնենք այն գումարը, որն անհրաժեշտ է մեր վկաների ու մեզ պէս «Տորիչելեան» դատարկութիւն[121] ունեցող գրպանների տէր մեղադրուողների ճանապարհորդութեան ու ապրուստի ծախսերի համար, մօտ 120 հազարի հասնող մի գումար կը պահանջուի՝ բաւարարելու համար բոլոր կարիքները։ Դրամի հոգս պիտի քաշել հիմա ամէնից շատ. ամենաէական բանը հիմա այդ է։ Դրամ շատ քիչ կայ այստեղ. տղերանց ասելով հազիւ մի 20-25 հազար լինի։ Եթէ այդտեղ մի բան կայ, պէտք է աշխատել աւելցնել։ Մեր հասարակութեան անտարբերութիւնը, մանաւանդ ունեւորութեան, ունեւոր, ապահով նիւթականի ու ապահով կաշուի տէր ինտելիգենցիայի եւս առաւել, յանցաւոր է վերին աստիճանի... Աւելի զայրացուցիչ է ապահով կաշուի տէր ինտելիգենցիան, որն այս րոպէին էլ վայելում է աշխարհիս բարիքները ու մի օր առանց կարմրելու ասելու է անկասկած՝ «Մի պախալի»...[122]։ Նա բազմատանջ եզան պոչին նստած իր քէֆն անում է. եզան ջանը թող դուրս գայ, նրա ինչ գործն է այդ... Մեր անարժան ինտելիգենցիայի առնուազն 90%-ը հիմա ասում է՝ «Մոյա խատո սը կրայու»[122ա]։

Տղեքն ասում են, որ աշխատէք, ինչքան հնարաւոր է, ազդել Զարիքովի ու Իզվոլսկու[123] վրայ. եթէ կառավարութեան վերաբերման մէջ որեւէ փոփոխութիւն լինի յօգուտ մեղադրուողների կամ ապագայ դատապարտուածների, այդ կարող է տեղի ունենալ միմիայն մատնանշած դեսպանների շնորհով, մանաւանդ Պոլսի։

Սրտագին բարեւներով՝
Քո ՍՏ.ն[124]

120.- Պատուեգիներ։
121.- Էվանգելիստա Տորիչելլի (1608-1647), իտալացի մաթեմաթիկոս եւ բնագէտ, նշանաւոր աստղագէտ Գալիլէի աշակերտ։ Անոր տեսութիւններէն մէկուն հետեւութեամբ՝ մթնոլորտային ճնշումէն առաջացած պարապութեան տրուած է «տորիչելեան դատարկութիւն» անունը։ Մեր նամակագիրն ալ պատկերաւոր այդ ասոյթը օգտագործելով կ'ուզէ արտայայտել այն իրողութիւնը, որ կազմակերպութիւնը կը գտնուի դրամական կատարեալ տագնապի մէջ։
122.- Բնագրին մէջ ռուսատառ՝ մենք չարչարուեցանք։
122ա.- Իմ տունս ճամբէն դուրս է, իմ գործս չէ իմաստով։
123.- Յաջորդաբար Ռուսիոյ դեսպանները Պոլսոյ եւ Փարիզի մէջ։
124.- Հեղինակը՝ ՍՏ.ն ստորագրութեամբ, արդեօ՞ք Տէր Սկրտչեան Ստեփանն է, ծածկանունը Գագիկ, որ պատասխանատու էր Կովկասի ինքնապաշտպանութեան զիֆոնի բաժնին։

Փաստ. 23-8

Բ 11.– ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՐՃԻԿԵԱՆԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (Կարին)

Ստորեւ ներկայացուած փաստաթուղթին հեղինակը Վազրիկ ծածկանունով, յայտնի իրաւաբան Խաչատուր Կարճիկեանն է (1882-1918), անդամ Արեւելեան Բիւրոյի: Գրութիւնը անթուակիր է եւ կը գտնուի Արեւելեան Բիւրոյի 1914 թ.ի թղթածրարին մէջ, ինչ որ հետեւանք է թիւրիմացութեան:

Ան գրուած պէտք է ըլլայ 1912 թ. դատավարութենէն առաջ, հաւանաբար 1910-ի վերջերուն կամ 1911-ի սկիզբը: Փաստաթուղթը կը կրէ Կարին մակագրութիւնը, ինչ որ ցոյց կու տայ Արեւելեան Բիւրոյի Կարնոյ հատուածին ուղղուած ըլլալը:

1912ի «Դաշնակցութեան գործի» դատավարութեան ընթացքին, Խ. Կարճիկեան խումբ մը հայ իրաւաբաններու հետ պիտի օժանդակէր ռուս ականաւոր փաստաբաններուն՝ հայկական նիւթերու հայթայթման տեսակէտէն:

Սիրելիք

Երկար լռութիւնից յետոյ չտապում եմ գրել նախ տեղիս դրութեան մասին եւ ապա ձեր արած մի քանի առաջարկութեան։

Ներկայիս մեր իրականութիւնը մխիթարական չէ, բայց եւ յուսահատական էլ չէ։ Ռէակցիայի ամենաջինջ շունչը կամաց-կամաց անցնում է. ամբոխի մէջ անասնական վախի զգացմունքը հետզհետէ վերանում է. դրա հետ կազմակերպութիւնը եւս վերականգնում է։ Այժմ այլեւս չենք կարող գանգատուել մասսայի անտարբերութիւնից, որը ցոյց է տալիս կազմակերպուելու մեծ տրամադրութիւն. ինտելիգենտ շրջաններն եւս սկսում են մօտենալ։ Կենտրոնների մարմինները գործում են բաւական նորմալ, ի հարկէ ներկայիս մտքով։ Ամէնից մեծ հարուածը կրել էր այդ տեսակէտից Մեծ քաղաքէին[75], որը ներկայումս վերակազմուել է, եւ որի մասին ես առիթ կ'ունենամ առանձնապէս գրելու։ Նոյնպէս կը գրեմ Բ[իւրոյ]ի մասին, որը համարեա թէ անգործութեան է մատնուած, սակայն որի բացակայութիւնը ամէնից աւելի է զգացւում։ Այս բոլորի մասին ես կը գրեմ շուտով եւ ինչ ձեւով որ հարկն է։

Բանտարկեալների մասին արդէն լսած կը լինէք, որ նախնական քննութիւնը վերջացել է, գործը յանձնուել է պրոկուրորին[95], եւ այս քանի օրս գրաւականով կ'ազատուին բաւական թուով բանտարկեալներ։ Պաշտպանութեան գործն էլ արդէն կազմակերպուած է, մօտաւորապէս հետեւեալ ձեւով.— հարուստները հրաւիրում են մայրաքաղաքների 7-8 աստղեր, որոնք արդէն հրաւիրուած են, իրենց հաշուով, եւ դնում նոցա ընդհանուր պաշտպանութեան տրամադրութեան տակ, իսկ միւսների համար պաշտպաններ հրաւիրում ենք մենք եւ կազմակերպում ընդհանուր պաշտպանութիւն բոլորի համար անխտիր։ Մինչեւ այժմ յաջողուել է մշակել հետեւեալ ընդհանուր գիծը պաշտպանութեան համար. պիտի ձգտել այն ամէնը, ինչ որ կատարուել է հայ-թուրքական կոտորածների շրջանում, մեկնել իբրեւ ինքնապաշտպանութիւն, իսկ այն ինչ որ կատարուել է պետութեան դէմ, եղել է ազգային ինքնուրոյնութեան դէմ եղած ոտնձգութիւնների հակահարուածներ, որոնք ad hoc[125] վերցրած իւրաքանչիւրը իր տեղում ունեցել է այդ մտքով իր պատճառը, եւ դա չէ եղել պետական կազմը տապալելու գործունէութիւն։ Իսկ դրանից դուրս, զուտ յեղափոխական գործունէութիւնը եղել է այդ կազմ[ակերպական] որոշ օրգանների ֆունկցիա, համարեա անկախ ընդհանուր ինքնապաշտպանութեան գործի կազմակերպութիւնից, որպիսի գործունէութեան սակայն բանտարկուածների 99%-ը մասնակից չէ եղել, եւ այդպիսի մեղադրական փաստեր էլ չկան։

Մեր դրութեան մասին առայժմ այսքան. իսկ մի քանի կարեւոր խնդիրների մասին, ինչպէս ասացի, կը գրեմ առանձին։

Ձեր այն առաջարկութիւնը, որ վերաբերում է այդտեղ Զարիկովին դոկլադ[126] ներկայացնելուն, ես ուղարկեցի բանտ ընկերներին որոնց պատասխանին էի սպասում, որպէսզի ձեզ հաղորդեմ, դրսի ընկերների կարծիքով, եթէ այդպիսի մի բան կարելի է անել եւ եթէ դա նպատակայարմար կը լինի։

Դուք խնդրել էիք, որ այստեղից ուղարկենք ձեզ մօտ Պ.ին։ Ներկայումս նա այստեղ խիստ կարեւոր է, մանաւանդ որ նա այստեղի համար դեռ բաւականին ապահով մարդ է, որպիսիներ քիչ կան. նրա փոխարէն եթէ այդտեղ մեծ կարիք կայ նման անձնաւորութեան, կ'ուղարկեմ վտանգուած ընկերներից մէկին, որը նոյնպէս լաւ ծանօթ է այդ գործին եւ որի ով լինելը ձեզ կը յայտնի գրաբերս. ինչ որ վերաբերում է այստեղից իրերի փոխադրութեանը, այդ միայն այն դէպքում եթէ դա դրուի ռուս արտաքին քաղաքականութեան շահերի հողի վրայ։ Կուսակցութեան բնոյթի լուսաբանութիւնը կամ նրա անվնասակարութիւնը պարզելը կը լինի միանգամայն ապարդիւն աշխատանք, որովհետեւ մենք այստեղ կառավարութեան կողմից հալածւում ենք ոչ այնքան իբրեւ յեղափոխականներ, որքան իբրեւ այլազգիներ, յատկապէս հայեր. մի զոհաբերութիւն, որ պիտի անեն ներկայումս պուրիչկեւիչեան քաղաքականութեան Ռուսաստանի բոլոր այլազգիները, եւ դրանով կառավարութեան կարծիքը ոչ մի կերպ չենք փոխելու մեր մասին, ոչ էլ մեր ոչ սեպարատիստ[127] լինելն ենք կարող ժխտել, որովհետեւ այդ հանգամանքը թէեւ շատ լաւ շահագործւում է, բայց դրան իրենք եւս չեն հաւատում։ Ահա այդ տեսակէտից այդ դոկլադի[128] բնոյթը մեր կարծիքով պիտի կապուած լինի Դ[աշնակցութ]եան Տաճկաստանում կատարած դերի հետ, Կովկասի ու տաճկական գաւառների անմիջական կապի եւ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան այդ գաւառներում ունեցած շահերի հետ։ Եթէ այդ մտքով դժուար լինի համոզել այստեղի կառավարութեան փոխելու իր վերաբերմունքը դէպի մեզ, ուրիշ ոչինչ չի օգնել։ Ցամենայնդէպս ես կ'ուղարկեմ ձեզ նոյնպէս բանտարկեալների կարծիքը եւ եթէ կարիք զգացուի պէտք եղած դոկումենտները։*

Այստեղից իրերի փոխադրութիւնը, այդ մասին ես կը գրեմ նոյնպէս առանձին, այժմ արդէն հոգում ենք այդ մասին, բայց ձեր օգնութիւնը անհրաժեշտ է. սպասէք տեղեկութեան։

Հասցէ էիք ուզել, որը կը հաղորդէ ձեզ նամակաբերս։

*Վերջում աւելորդ չեմ համարում յայտնել, որ այստեղի ընկերների վտանգման մէջ պակաս դեր չեն խաղում մեր արտասահմանեան ընկերները իրենց անզգ[ուշ]ութեամբ։ Ներկայումս Ռուսաստանի ագենտուրան[128] արտասահմանում, մասնաւորապէս Տաճկաստանում այնպէս է կազմակերպուած, որ իսկոյն հեշտութեամբ իմացւում է այնտեղի յարաբերութիւնները եւ գործող ընկերների ով լինելը. այդ պատճառով էլ խնդրում են ընկերները զգուշացնել այդտեղի ընկերներին. այդ մտքով է այստեղի գործունէութիւնը կոնսպիրացիա համարուել այդտեղի ընկերների շրջանում եւս եւ իմանան միայն նոքա որ հարկն է իմանալ**։*

Պակասները կը լրացնէ նամակաբեր ընկերը, իսկ այն ինչ որ չէր կարելի գրել այս նամակով — հետեւեալ նամակներս։

Ընկերական բարեւներով
ՎԱԶՐԻԿ

*) Վերոյիշեալ տեսակէտից միանգամայն աւելորդ ենք համարում պաշտպաններից մէկի այստեղ գալը Դակլոտի կազմելու համար, ինչպէս որ դուք էիք առաջարկել, մի բան որ անիրագործելի է մայրաքաղաքի փաստաբանների վերաբերմամբ, իսկ տեղիններին — անօգտաւէտ։ Աւելի լաւ կը լինէր, որ կանչէիք պետական Դումայի հայ անդամներից մէկին — Աջ-ին եւ ոչ թէ Սախ-ին, որոնց մասնակցութիւնը եւ դերը աւելի օգտակար կը լինէր։

**) Վերջերս բանտարկեալների մեծ մասը այդպէս են վտանգուած։

125.- Լատիներէն՝ մինչեւ հոս իմաստով։
126.- Դոկլադ կամ դակլադ՝ զեկուցագիր։

127.- Անջատողական։
Պոտիշկեւիչ՝ պետական Դումայի պատգամաւոր, ծայրայեղ աջակողմեան եւ օտարատեաց։
128.- Գործակալութիւն (լրտեսական)։

Փաստ. 334-2

Բ 12.– ՊԱՔՈՒԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, Ժընեւ

Ոսկանապատ, 25-1-1911

Սիրելիք,

Դատական գործի դրութիւնը հետեւեալն է։

Գործի տակ են 235 մարդ, որոնցից 155ը բանտերումն են (Նովոչերկասում եւ Թիֆլիսում). 80 մարդ մնում են ազատ գրաւականներով՝ 1-40.000 ռուբլի կանխիկ դրամով։ Քննիչը արդէն աւարտել է նախնական քննութիւնը եւ համաձայն օրէնքի ներկայացրել է մեղադրականներին քննութեան հետեւանքը։ Այս նախնական քննութիւնը բռնում է մօտ 1250 տպագրական թերթ, կամ մօտ 20.000 տպագրական էջ։ Գործի ընթերցումը Նովոչերկասում տեւել է 42 օր, Թիֆլիսում 34 օր։ Մեղադրեալները՝ քննութեան հետեւանքներին ծանօթանալուց յետոյ, մատնանիշ են արել նոր հանգամանքներ, եւ պահանջել են լրացուցիչ քննութիւն։ Հաւանականօրէն, այդ պահանջները չյարգուեն եւ գործը կը յանձնուի դատախազին՝ ամբաստանականը (обвинительный акт)[129] կազմելու համար. թէ երբ կ'աւարտի դատախազը այդ գործը, դժուար է գուշակել. եթէ մինչեւ հիմակ դատախազը այդ ուղղութեամբ ոչինչ արած չի՝ նէր, հարկաւոր կը լինէր առնուազը 4-5 ամիս ժամանակ. բայց քանի որ քննութեանը հետ զուգընթացաբար դատախազը ուսումնասիրել է գործը եւ նոյնիսկ (ինչպէս պնդում են ոմանք) վաղուց արդէն ձեռնարկել է մեղադրականի կազմելը, կարող է պատահել, որ մեղադրականը յանձնուի մեղադրեալներին շատ շուտ (օրինակ մէկ ամսուայ ընթացքում)։ Մեղադրականին հետեւելու է դատը։ Բայց թէ երբ պիտի լինի նա, դարձեալ անյայտ է. կարող է նշանակուել այս գարնան (օրինակ Ապրիլին), բայց կարող է յետաձգուել եւ մինչեւ առաջիկայ աշնանը (Օգոստոս-Սեպտեմբ.). անյայտ է նաեւ թէ որտեղ լինելու է դատը։ Կան ենթադրութիւններ, որ դատը լինելու է ոչ Նովոչերկասում, այլ Թիֆլիսում կամ Պետերբուրգում (оunpiէ պրիսուստվություշչիէ սենատա)[129ա] կայսերական յատուկ հրամանով։

Այն բոլորը ինչ որ մինչեւ այժմ անհրաժեշտ ու հնարին էր անել՝ մեղադրուողներին իրաւաբանական օգնութիւն հասցնելու նկատմամբ, արդէն արուած է։ Բայց ամենախոշոր գործը, պաշտպանողների մարմին կազմակերպելը, տակաւին մնում է ենթադրութիւնների ու ծրագիրների սահմաններում։ Խոչընդոտ է հանդիսանում նախ, դատի ժամանակի անորոշութիւնը, ապա, գլխաւորապէս, դրամական պակասութիւնը։ Եղած դրամը միանգամայն անբաւարար է վստահելի պաշտպանութիւն կազմելու համար։ Իսկ թէ ինչ չափի հասնելու է այդ գումարը ապագայում, մեզ համար մնում է անյայտ։ Մի բան միայն գիտենք հաստատապէս, որ այստեղից, Ռուսաստանից ոչ մի կոպէկ օգնութիւն սպասել չենք կարող, եւ մեր ամբողջ յոյսը արտասահմանի, գլխաւորապէս Թուրքիայի եւ Ամերիկայի վրայ է (Պարսկաստանից արդէն մեր սպասելիքը համարեա թէ ստացել ենք)։ Ուստի, մեզ այս եւ այն եղանակի դրութիւնից ազատելու եւ մեր անելիքը որոշելու համար խնդրում ենք. 1) ուղարկել մեզ անյապաղ այն բոլոր գումարները, որ արդէն հանգանակուած են. 2) տեղեկացրէք թէ դրանից յետոյ ի՛նչ գումարների կարող ենք սպասել։

Ընկերական բարեւ[ներով]
ՈՍԿԱՆԵԱՆ

— Ձեր բոլոր հարցերին կը ստանաք պատասխան, որը արդէն յանձնարարուած է մի ընկերոջ։ Ինձ յանձնարարուած էր Վիշապ[130] նամակ գրել, որի պատճէնը ուղարկում եմ ձեզ։

ՆՈՑՆ

— Նոր հեռագիր ստացուեց. Ա. Ահարոնեանին բաց թողելու երաշխաւորութիւն են պահանջում 20.000 ռուբլի։

ՆՈՑՆ

— Վարանդեանի նամակին պատասխանը գրել էինք, ստացել էք թէ չէ։

ՆՈՑՆ

129.- Բնագրին մէջ ռուսատառ՝ մեղադրական ակտ:
129ա.- Բնագրին մէջ ռուսատառ՝ սենատի յատուկ ներկայացուցիչներ:
130.- Վիշապ՝ կուս. ծածկանունն է Կ. Պոլսոյ. այս պարագային կը նշանակէ Արեւմտեան Բիւրոյին:

Փաստ. 450-2

Բ 13.– ՊԵՏՐՈՍԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, Պոլիս

Սիրելիք!

Երկու օր է ինչ տեղս եմ. բոլորը չեն եկել. միայն ռոստովցիներին են բերել թուով 23, ու տեղաւորել են իւրաքանչիւրին առանձին, միւսներին դեռ յայտնի չէ երբ են բերելու։

Տեսնուեցի տեղացիների հետ, խօսեցի հանգանակութեան մասին. խոստացան տօներին ձեռնարկել։ Թէեւ մեծ բան չխոստացան, բայց նորէն օգնութիւն է։ Տեսնուեցի նաեւ մեր ուսանողների հետ. նրանք նոյնպէս խոստացան հանգանակութեան նպաստել եւ որ գլխաւորն է յանձն առան տեղական աջակցութիւն, այն է ներս ուղարկել, որ ներկայում առանձին դժուարութիւն է ներկայացնում առանձին լինելու պատճառաւ։ Ընդհանրապէս դրսի տպաւորութիւնը սպասուածից շատ աւելի լաւ էր։

Փարիզի գործողութիւնների մասին դրական ոչինչ չեմ կարող գրել, միայն մասնաւոր խօսակցութիւնները առանց բացառութեան դէմ էին այդ գործողութեան կատարման[131]. բերում են անշուշտ իրենց պատճառաբանութիւնները, այն է, որ անխոհեմ[?] վերաբերմունք պիտի լինի, մանաւանդ Թաւրիզի վերջին արիւնահեղութիւններից յետոյ[132]։ Ռուս շրջաններում՝ գլխ[աւորաբար] կառավարչական) համոզուած են, որ ռուս զօրքին ջարդողները եղել են գլխաւորապէս դաշնակցականները։ Այդ ուղղութեամբ աջակողմեան մամուլը կատարում է իր թունոտ աշխատանքը եւ դատի դժոխային կերպարանք տալու հող է պատրաստում։

Պաշտպանութեան գործը յաջող է դրուած։ 159 հոգուն պաշտպան է հրաւիրուած 18 հոգի։ Իրաւաբանական տեսակէտից պաշտպանների այդ բանակը միանգամայն բաւարար է։ Որակի տեսակէտից էլ կազմը բացառիկ է, որովհետեւ հրաւիրուած են ռուս իրաւագիտութեան կորիֆէյները[133]։

Մեր ծախսերը շատ են։ Իրաւաբանները մեծ կուզիր[133ա] են վերցնում (որոնց վրայ եւս ռէակցիան իր բացասական ազդեցութիւնը ունեցել է)։ Բանտարկեալներին պիտի օգնել (չուտով — մթերքով, կանխիկ դրամով) մօտ 2½ ամիս Պետերբուրգում եւ յետոյ դատապարտուածներին տանելի կերպով ճանապարհել Սիբերիայի խորքերը։ Ամէն միջոց ձեռք են առնուում հնարաւորին չափ յաջող օգնութիւն հասցնել։ Դժբախտաբար հասարակութիւնը շատ է քարսիրտ դարձել։

Անցնիմ դէպի ձեզ ունենալիք խնդրիս։ Ձեր ուղարկած 21.000-ից միայն 16-ն է ստացուել, իսկ մնացած 800-ի հետ թիւրիմացութիւն է ինչ որ պատահել։ Մեծ քաղաքում[75] պարզել չկարողացանք։ Խնդրում ենք այդտեղ գտնել այդ գումարի հետքերը եւ մեզ իմացնել կարճ ժամանակամիջոցում, որովհետեւ ինչպէս վերը յիշեցի հասցէ չեմ ուղարկում. օր. Սաթենիկին[134] արդէն հասցէ գրուեց, բայց այդ հասցէով ըստ մեր սովորութեան շատ միք ուղարկել մինչեւ մի հիմնականը եւ անվտանգը չուղարկենք։

Խորհրդակցելով մերոնց հետ ես գնում եմ հիւանդանոց պառկելու. բժշկի ասելով ամենաուշը 10 օր բաւական է։ Հիւանդանոցից դուրս գալուց յետոյ, եթէ մինչեւ այդ ժամանակ հաւաքուեն, կը խօսեմ նորէն. եթէ կարիք լինի նորէն իմ մնալը, կը մնամ, եթէ ոչ հանգանակութիւնը վերջացնելուց կը յանձնեմ կոմիսիոնին ու կ'անցնիմ Կովկաս։

Ձերմ բարեւներով՝
ՊԵՏՐՈՍ

17-12-1911
Պետերբուրգ

Սիմէոնի յանձնար[ար]ութիւնը կատարուել է. տուած նամակը փոստով այստեղից ուղարկեցի Կովկաս։

ՆՈՑՆԸ

131.- Փարիզի գործողութիւն, ակնարկութիւն ֆրանսական մամուլի եւ այլ միջոցներով հակառուս արշաւի ձեռնարկելուն: Այս մասին տեսնել Ս. Զաւարեանի, Միք. Վարանդեանի եւ Ա. Ահարոնեանի միջեւ փոխանակուած գրութիւններուն, էջ 223-4 եւ 228-232:
132.- Ակնարկութիւն 1911 թ. վերջերուն Թաւրիզի մէջ պարսիկ սահմանադրականներու կողմէ ռուսական զօրքերու դէմ գործուած յարձակումին, որուն սակայն մասնակից եղած չէր հայկական զօրքը:
133.- Վարպետները, հռչակաւոր փաստաբանները իմաստով:
133ա.- Յաղթաթուղթ:
134.- Օր. Սաթենիկը՝ Մատինեան Սաթենիկն է, որ նոյնպէս հետեւած էր բանտարկեալներուն, յատկապէս բանտակեալ Իշխան Յովսէփ Արղութեանի, որուն հետ աւելի ուշ աքսորի մէջ պիտի ամուսնանար:

Փաստ. 1728ա-39

Բ 14.– ՆԱՄԱԿ ՊԵՏՐՈՍԷՆ

Փոքրաքիր 12 էջերէ բաղկացած համեմատաբար երկար նամակ, որ զարմանալիօրէն կը գտնուի Պարսկաստանի յեղափոխական շարժման դէմքերէն Եփրեմ խանի յատկացուած թղթածրարներէն մէկուն մէջ:

Գրութեան հեղինակը մեզի ծանօթ զինագործ Պետրոսն է, Բագրատ Տէր Յովհաննիսեան (ձեռագիրը եւ գրութեան ոճը այդ կը փաստեն), որ այս անգամ, իբրեւ թէ բժշկական ուսանող ծածկուած է Պ. Խաչատրեան անուան տակ: Իրեն յատուկ հնարքով (բանտապահը կաշառելու միջոցաւ), ան յաջողած է մտնել Նովոչերկասկի բանտ եւ տեսնուիլ կալանաւորներուն հետ: Հիւսիսային Կովկասի Ստաւրապոլ քաղաքէն կը գրէ այդ մասին, իբր թէ համալսարանի իր բժշկապետ դասախօսին, իրողապէս հաւանաբար Ռոստոմին, որուն են ուղղուած ընդհանրապէս Պետրոսի նամակները:

Տարեթիւ չէ նշանակած. ամենայն հաւանականութեամբ 1911 թուականին է, որովհետեւ յաջորդ նամակներէն մէկուն մէջ, որ 28 Դեկտ. 1911 թ.ը կը կրէ, Պաքուէն գրուած, նոյն Պետրոսը պիտի գրէր՝ «Մօտ օրերս գնացել էի տղաների մօտ Չէրքէսների քաղաքը». տեսնել Բ.16-ը էջ 222:

Կատարեալ գաղտնագրութիւն մըն է այս նամակը, զոր բանալու համար անհրաժեշտ է հասկնալ, ինչպէս նախապէս եւս յիշած ենք, այլաբանօրէն գործածուած շարք մը խօսքերուն իմաստը: Այսպէս *հիւանդանոցը* պէտք է իմանալ բանտ, *հիւանդը*՝ բանտարկեալ, *հիւանդապահը*՝ բանտապահ, *հիւանդութիւնը*՝ բանտարկութիւն կամ յանցանք, *բժիշկը*՝ դատախազ, *օպերացիան*՝ դատավարութիւն, *դիագնոզը*՝ ամբաստանագիր, քեռին, *հօրեղբայրը*՝ ծանօթ եւ անուանի բանտարկեալները, *նաւթարդիւնաբերող հօրեղբայրը*՝ Պաքուն է – Ոսկանապատի Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը, որ տակաւին որոշ չափով գործօն վիճակի մէջ էր եւ որ նիւթական իմաստով կրնար օգտակար ըլլալ դատական ծախքերը հոգալու տեսակէտէն:

Սիրելի Դոկտոր!

Անչուշտ հետաքրքիր կը լինի քեզ տալ մի քանի իսկական տեղեկութիւններ հիւանդների մասին։

Ինչպէս արդէն գիտես, ես անձամբ գնացել էի հիւանդավայրը. չգիտեմ ինչպէս եւ ինչ բարեյաջող հանգամանքներում, առիթ ունեցայ անձամբ բոլոր հիւանդներին հետ 1½ ժամ գալաճի անել[135]. կրկնում եմ դա մի դէպք է եզակի ամբողջ պատմութեան մէջ. նոյնիսկ այն բարեկամները, որոնք ամիսներով եղել էին, ուղղակի զարմանքով յիշում էին սանսացիոն[136] տեսարանը, որտեղ[?] օգտուեցին նաեւ իրենք։

Ինչպէս գիտես, երբ ես տեղումդ էի, ասում էի նոյեմբերի վերջերին լինելու է օպերասիոնը, բայց օպերասիոնի փոխարէն եղաւ նրանց դիագնոզի[137] ընթերցումը, իսկ գործադրութիւնը մնում է դեռ անորոշ ժամանակով. բայց նորէն հաւանօրէն յունիս կամ յուլիսին։ Ինչպէս ասացի եղաւ դիագնոզը. այդ դիագնոզը բաղկացած է 8000 երեսից (b N° թերթի երես) տպած կրում են եւ այդ ընթերցումը լինում է այս ձեւով։ Ինչպէս գիտես ի հարկէ 8000 երեսը մէկ օրուան վերջանալիք չէ, ուստի ամէն օր առաւօտեան ժամը 9-ից տանում են հիւանդանոցից խորհրդակցութեան սենեակը. իսկ այդ տարածութիւնը մօտ 1½ վերստ է. տանում են բոլորին միասին, ոտքով եւ մի քանիսին էլ նստեցնում են. սկսում է ընթերցանութիւնը (միջանկեալ՝ այդ ընթերցանութիւնը բոլորին է վերաբերում), բայց որովհետեւ իւրաքանչիւրը առանձին չէ, մէկ կը տեսնես քո մասին այսինչ երեսում մի կարեւոր բան կայ, մէկ էլ 1000 երեսից յետոյ եւ չնորհիւ այդ ձեւի դասաւանդութեան, իւրաքանչիւր մէկը, որպէսզի իւր մասին իմանայ բոլորը, ստիպուած լարուած լսում է եւ միջանկեալ ծանօթանում է բոլորի դրութեան հետ։ Այդպէս ուրեմն սկսում է ընթերցանութիւնը մինչեւ ժամը 3-ը։ Այնուհետ նոյն պաշտօնական ձեւականութեամբ, շրջապատուած հիւանդապահների խոշոր քանակութեամբ, առաջնորդւում են հիւանդանոց. եւ այդպէս այդ ծէսը ահա 20 օր է եւ կը շարունակուի նորէն մի 15 օր։

Ընթերցանութեան ժամանակ մասնաւոր մարդկանց ներկայութիւնը արգելուած է, բացառեալ պաշտօնապէս ճանաչուած բարեկամներից (օրինակ եղբայր, հայր, քոյր եւ կին ու երեխայ) եւ ուրիշ եւ ոչ մի մարդ. ներկայ եղողներն էլ ունեն առանձին լոժա եւ ոչ մօտիկ։ Գուցէ քեզ համար մութը լինի իսկապէս ինչումն է կայանում ընթերցուող դիագնոզը մի քանի խումբով. հետեւեալն է. իւրաքանչիւր մէկին զանազան ժամանակներում յայտնում են ինչ հիւանդութիւն է ունեցել, եւ ինչ փաստեր ունին այդ իւրաքանչիւր հիւանդութեան համար, եւ թէ բժշկական որ դեղատոմսն է, որով պէտք է բժշկուեն իւրաքանչիւրը։ Ի հարկէ բժիշկ ես՝ կ'իմանաս եւ կը հասկանաս. այդ ընթերցումը վերջացնելուց յետոյ լինելու է առաջարկութիւն կոնսիլիումի[138] կողմից. այսպէս ուրիշ հարցեր չունին, եւ որ կէտերին ինչ դեղատոմս ունին աւելացնելու, ու դրանով կը փակեն մինչեւ օպերասիոնը եւ ինչպէս վերը յիշեցի մինչեւ յունիս եւ յուլիս, իսկ այդ ամիսները, ինչպէս գիտես, եղանակները տաք են լինում եւ նպաստաւոր է գործողութեան։

Այժմ պատմեմ թէ ինչպէս ինձ յաջողուեց հիւանդներին տեսնելու։ Ինչպէս գիտես, ժանտախտ հիւանդութիւնը վարակիչ է նաեւ օդի միջոցաւ։ Վարակման՝ պակաս չեն նպաստում նաեւ այն հիւանդապահները, որոնք թէեւ պաշտօն չունին, բայց քանի որ հիւանդութիւնը (ժանտախտը) նոր է եւ դեռ շատ բաներ կան ուսումնասիրելու, հետաքրքրութեան համար գալիս եւ նայում են գաղափար կազմելու։ Այդ հիւանդապահները ոչ պաշտօնական այնքան եկել գացել են որ, ինչպէս ինձ յայտնեց իմ ամենալաւ ծանօթ բժիշկներից մէկը եւ ասաց՝ «նոյնիսկ դրանք էլ վարակիչ են եւ զգոյշ կաց չվարակուես». ի հարկէ այդ նախազգուշութիւնը տեղին էր, բայց նորէն նկատի ունենալով գիտական այդ խոշոր պրոցէսը, որ շատ մեծ նշանակութիւն ունի ինձ՝ բժշկական ուսանողիս համար, այնքան էլ մեծ նշանակութիւն չտուեցի, որոշեցի ինչ գնով էլ լինի անձամբ հիւանդին տեսնել։ Դուք լաւ գիտէք, սիրելի բժիշկ, ինչ կը նշանակէ տեսնել գործնական կերպով կամ լսել լեկցիայով[139]. տարբերութիւնը կարծում եմ խոշոր է, բայց այդ տեսնելը կապուած էր մի խոշոր ծիսակատարութեան հետ, որը գլուխ բերելու համար գուցէ հարկաւոր լինէր մէկ ամիս. միեւնոյն ժամանակ ինչ զարանտիա[140] կար, որ ինքդ չես վարակուի. ուստի որոշեցի դիմել ուրիշ միջոցի, այն է՝ հիւանդապահների գլխաւորի (պաշտօնական գլխաւորը, որը առաջնորդում է հիւանդանոցից դէպի կոնսիլիումի սալոնը) հակառակը մի բարի մարդ էր այդ օրուան հերթականը, մօտեցայ իրեն սանֆասոն կերպով[141], դիմեցի խնդրելով, որ ես մի բարեկամ ունիմ, երկար ժամանակ է տանից բացակայում է, չգիտեմ որտեղ է, գուցէ այդտեղ է, թոյլ տուեցէք նայիմ գուցէ մէջներն է (պէտք է հասկանալ ի հարկէ փողոցումը). օրն էլ կիւրակի էր, ինքն էլ լաւ տրամադրուած. առանց այլեւայլի պատասխանեց «կարող էք բայց մի քիչ հեռու տարածութեան վերայ»։ Ի հարկէ բոպէն թանգ էր. անմիջապէս մօտեցայ։ Սկսւում է լուութեան դրաման, մի դրամա, որ կեանքիս մէջ չէի տեսած եւ որ գլխաւորն է զգացել։ Աչքիս առաջ կանգնած մօտ 200 հիւանդներ, հիւանդանոցի զգեստների մէջ. մի քանիսը կապկպած, գունատ դէմքեր, խճճուած մազեր, խորը հազեր եւ հետը հառաչանքներ. իւրաքանչիւրի դէմքը մի բոպէ փայլում է եւ նորէն մռայլւում ու մի ա՛խ արձակում, եւ այսպէս շարունակ։ Ինձ խօսացնելու հիւանդներին՝ ոչ մի խօսք եղած չէր, բայց ի հարկէ քար սիրտը միայն կարող էր լռել։ Ես որ հեռու եմ քարանալուց, սկսեցի հարցուփորձը եւ դեռ նախադասութիւնը չէի վերջացրել, ամէն կողմից այնպիսի հարցերի կարկուտ տեղաց, որ ես ապշեցի եւ բարւոք համարեցի առաւելութիւնը իրենց տալ իբրեւ հիւանդների։ Ինչպէս թռչունը իւր ձագուկներին երբ կերակուր է բերում, ձագուկները բերանները բացած իւրաքանչիւրը աշխատում է առաջին պատառը ինքը վերցնի իւր մօր կտուցից. ճիշտ նոյն պատկերն էր։ Իւրաքանչիւրը նախ զարմանքով նայում ու հարցնում էր յանկարծակի իմ այնտեղ գտնուելը, որ բոլորովին անսպասելի էր։

Այնուհետ սկսուեց տաքանալ մեր խօսակցութիւնը. բոպէն թանգ էր, իւրաքանչիւրը աշխատում էր մոռանալ իր հիւանդութիւնը, լոյս աշխարհից տեղեկութիւն էր ուզում։

Այդ տեսարանը չարունակուեց 1½ ժամ եւ ինչեր ասես չէր անցնում դառնում, մանաւանդ երբ իմացան, որ Իրանից եմ գալիս, ուրեմն մէկ անգամից երկու երկրի մասին կարող եմ տեղեկութիւն տալ. այն աստիճան փչաքաղիչ էր, որ մի ժամանակ կանգ էի առնում, չէի կարողանում խօսակցութիւնը չարունակել. զգացմունքը խեղդում էր եւ երբ ես լռում էի, իրենք էլ նոյնպէս լռում. եւ ինչպէս կարող էին խօսալ. չէ որ նոյնը զգում էին եւ իրենք։ Մօտենում էր ժամը. մօտեցանք հիւանդանոցին. հիւանդապահը համրում էր եւ ստուգում կարդալով իւրաքանչիւրի անունը, եւ ներս հրամեցէք անում։ Ներս գալիս իւրաքանչիւրը առիւծային մռնչոց արձակում եւ իւր խորհրդաւոր աչքերը ուղղած ինձ, հաշտուելով իւր դրութեան հետ՝ դարձնում երեսը ու մի ջերմ համբոյրով արտայայտում ամէն ինչ։ Պատահեցին դէպքեր, որ երբ իր ազգանունը կարդում էին, խուլ էր ձեւանում. կարծես վճռական քայլը, որ այդ մոմենտում գուցէ եւ անցնում էր մտքում, նրան խլացնում էր, օգտուելու մոմենտից, վայրկեանից, բայց նորէն սթափւում է, որ իւր անզգոյշ քայլից է կախուած դիմացինը, եւ իսկոյն մի բոպէ կանգ էր առնում, ձեռքը թափ տալիս ու հրում էր իրեն, սթափւում, ժպիտ արձակում, որ մոռացութեան տայ իւր բոպէական մտածմունքը եւ որպէս խրախուսանք՝ ինձ եւ միւսներին արձակում էր ծիծաղը, ծիծաղ որը շատ դառն էր եւ նոյնչափ քաղցր դիմացինի համար։ Գուցէ զարմանաս, սիրելի դոկտոր, գրութեանս այս ձեւին. մի զարմացիր. մոմենտը եւ բոպէն երբեմն ամենաանընդունակ մարդկանց բանաստեղծ է դարձնում եւ ես շատ ցաւում եմ, որ զուրկ եմ այդ ընդունակութիւնից։

Կարծում եմ նկարագրութիւնը քեզ պէտք էր շատ բաներ հոգեկան պարզի։ Ես ինձ շատ ուրախ եմ զգում,

---

135.- Զրուցել, շատախօսել:
136.- Զգայացուցց:
137.- Բառացի՝ ախտաճանաչում. հոս՝ ամբաստանագրի իմաստով:

138.- Բժշկական խումբի խորհրդակցութիւն:
139.- Դասախօսութեամբ:
140.- Երաշխաւորութիւն:
141.- Մտերմաբար, առանց ձեւակերպութեան:

եւ երբեք ռիսկը փոխադարձ հոգեկան բաւականութիւնից վեր չեմ համարում։ Այն բաւականութիւնը, որ ես ստացայ, արժէր այդ ռիսկին։

Այդ տեսարանը անցնելուց յետոյ, պէտք էր վերադառնալ տուն։ Երկրորդական հիւանդապահների աչքից ի հարկէ չէր վրիպել այդ։ շատ ցանկանում էին ինձ խօսեցնել, մօտենում, հեռանում, նորէն մօտենում, եւ չգիտեմ ինչն էր նրանց յետ կասեցնում։ Ամբողջ 7 ժամ այդ վարանումների մէջ, եւ ստիպուած դիմեցի ուրիշ միջոցի։ Քաղաքը խոշոր։ երեկոյ էր, ապրանքա տեղը, տրամադրութիւն չունէի գնալու, մանաւանդ որ դեռ պէտք էր դեզենֆեկցիա[142] անել չվարակելու իրերս։ Երկար մտածմունքա ինձ չշմեցրեց։ ուր ուղղեմ քայլերս, մանաւանդ, ինչպէս ասացի, կողմնակիներ շատ էին հետաքրքրւում։ քայլերս գնում է, բայց չգիտեմ ուր են տանում։ գնում եմ ու մտածում։ որոշում եմ նստել կառքը։ պատուիրում եմ քշել այնտեղ որտեղ մարդիկ լոպէկապէս մոռանում են ամէն ինչ։ մի տեղ որտեղ կեանքիս մէջ չեմ եղել բացի Ֆրանսիայից, իսկ միւս երկրներում երբեք, մանաւանդ որ կանխակալ կարծիք ունեմ, որը ոչ նպաստաւոր է այդ տեղերի մասին։

Պատկերի — այդ բաւականութիւնը արժան չնստեց հայնտեղից դուրս գալուց յետոյ։ Հետաքրքրուողները շատ սպասելուց դադրած երեւի, կամ այնտեղի լինելս նրանց հեռացրեց։ Գիշերը անց եմ կացնում Եթենում։ Զարժէ ի հարկէ նկարագրելը։ առաւօտեան գնում եմ սենեակ, գրում եմ մի քանի կարտ փոստալներ, որոնցից մէկը գրել եմ եւ քեզ ու անմիջապէս կայարան, բոլորովին տարբեր ուղղութեամբ, ճանապարհւում եմ։ Վագոնում նստած՝ լոպէական մտածմունքներ արագ արագ անցնում են։ Անցնում է մէկ օր, երկու օր։ երրորդ օրը զգում եմ ինչ որ անախորժութիւն։ զգում եմ մի բան որ կեանքիս մէջ չեմ եղել ինչպէս որ մասնաւոր խօսակցութեան ժամանակ շատ անգամ քեզ ասել եմ։ Ֆակտը կատարուել է։ հիւանդ եմ իսկական, բարեբախտաբար թեթեւ տեսակից, որ շատ սովորական է։ Ստանում եմ Խարփուխ։ սկսում եմ տանջուել։ բժիշկ չկայ։ այդ դրութեան հետ հաշտուելով գալիս եմ տեղս։

Ահա՛ թէ ռիսկը ինչով փոխանցուեց։ շատ ուրախ որ այդպէս արժանով պրծել եմ։

Կարծում եմ կարող եղայ պատկերը լաւ պատկերացնել։ դրա հետ միասին հոգեկան տանջանքը եւ ուրախութիւնը։ Այժմ երկու օրից կը ճանապարհուեմ դէպի հայրենիք։ գուցէ առիթը նորէն լինի քեզ գիտակ պահելու ընդհանրապէս ժանտախտի մասին։ գուցէ եւ անցնիմ հիւսիս, գլխաւոր պրոֆէսորների հետ խորհրդակցել ու վարձել մեր երկրի համար։ Անշուշտ ժամանակին լուր կը տամ։

Ի հարկէ ձեր քաղաքում կը լինին եւ ուրիշ բժիշկներ։ չմոռանաս գրութիւնս եւ նրանց մօտ նոյնպէս կարդալու նոր հիւանդութիւնների, անցած դարձածի գաղափարն ունենան։

Ընդունիր ջերմ ջերմ համբոյրներս՝
Բժշկական ուսանող Պ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

19/XII [1911] *Ստավրապոլ*

142.- Հականեխում։



Նմոյշ՝ Պետրոսի ձեռագրէն

Փաստ. 108-137

Բ 15.– Ս. ՉԱՒԱՐԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

27 XII 1911, Կ. Պոլիս

Դաշնակցական բանտարկեալներու դատավարութեան նախորդող ամիսներուն, կարծիքները բաժնուած էին Ռուսիոյ նկատմամբ որդեգրուելիք մարտավարութեան շուրջ։ Ս. Զաւարեան դէմ է մամուլի եւ հրապարակային միթինկներու ճամբով կատարուած հակառուս բռնն արտայայտութիւններուն, մինչ եւրոպացի, յատկապէս ֆրանսացի հայասէր բարեկամները, որոնք անցնող տարիներուն կորովի եւ ուժգին բողոք բարձրացուցած էին ցարական բռնակալութեան դէմ, ապա նաեւ գործօն դեր ստանձնած հայ քաղաքական բանտարկեալներու (մասնաւորաբար Ա. Ահարոնեանի) պաշտպանութեան գործին մէջ, կողմնակից էին նոյն ուժգնութեամբ շարունակելու պայքարը։ Այս պայմաններուն մէջ, արեւմտեան միջավայրի մէջ գործող ընկերները եւ յատկապէս ուսանող երիտասարդութիւնը, որոշապէս կը գտնուէին անոնց ազդեցութեան տակ եւ հակամէտ նոյն ուղղութեամբ գործելու։

Ստորեւ տրուած շարք մը գրութիւններ, փոխանակուած Ս. Զաւարեանի, Միք. Վարանդեանի եւ Ա. Ահարոնեանի միջեւ, որոշ լոյս կը սփռեն այս տարակարծութեան վրայ։

Նշենք որ Ա. Ահարոնեան, ամբողջ երկու տարի ցարական բանտերու չարչարանքը ճաշակելէ ետք, դրամական մեծագումար երաշխաւորութեամբ ազատ արձակուած էր, առանց սակայն կայսրութեան սահմաններէն հեռանալու արտօնութեան։ Այսուհանդերձ ան, ինչպէս եւ Ա. Իսահակեան ու Գարեգին Խաժակ (նոյն պայմաններով արձակուած) գաղտնօրէն անցած էին Պոլիս, ուր մասնակցած էին նաեւ Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին։ Ահարոնեան անկէ 1911 թ. Սեպտեմբերին անցաւ Ժընեւ, ապա Փարիզ, ուր ֆրանսացի բարեկամներու աջակցութեամբ լծուած էր գործի յօգուտ հայ բանտարկեալներու ազատ արձակման։

Ընկերներ,

Զգիտենք ինչ մտածած էք Աւետիսի եւ միւսների Փարիզ եւ այլուր անելիքների մասին։

Մինչեւ օրս մեզ հասած տեղեկութիւնները հարկադրում են մտածելու որ ներսում եղած մեր ընկերները այնքան էլ տրամադիր չեն դրսում յարուցուելիք աղմուկներից, ճառերից, միտինգներից։ Թէեւ դեռ եւս պաշտօնական լուր չունենք իրենցից, բայց առած մասնաւոր նամակները ցոյց են տալիս, որ նրանց կարծիքով մինչեւ օրս մեր բռնած ընթացքը այնքան էլ լաւ չի ազդել ներսում գտնուածների վիճակի վրայ...

Այս պատճառաւ գուցէ մեզի ձեռնտու լինէր մի առժամանակ չափաւոր վերաբերմունք ունենալ դէպի Ռուսաստանը։ Եթէ ա՛յս քաղաքականութիւնը կապել անցնող դարձող դէպքերի հետ՝ եզրակացնելու է որ դատավարութեան վերաբերեալ campagne*-ը եւս կոպտութիւնների, կծու յարձակումների, հայհոյանքների տեղի չպիտի տայ։ Մեր մէջ ծագեց մի միտք, որ լաւ էր դատի վերաբերեալ նիւթերն ու փաստերը ամփոփել մի յատուկ հրատարակութեան՝ գրքի մէջ, թէկուզ բացառիկ՝* Pro Armenia *վերնագրով*։*

Այդ գրքին իբրեւ յառաջաբան կամ վերջաբան կարելի էր կցել եւ հայ (եւ դաշն.) ռուսական փոխյարաբերութիւնների մի պատմականը։

Պարզելով XVII-XIX*րդ դարուց հայ-ռուսական յարաբերութիւնները ընդհանուր գծերով (երբ հայը եւ ռուսը բնական դաշնակիցներ կը ներկայանային), մանրամասնօրէն ծանրանալու է վերջին* 30 *տարուայ մէջ առաջ եկած փոփոխութեան վրայ։ Ռ[ուսաստան]ը փոխելով իր դիրքը հայերու հանդէպ եւ ուժեղացնելով իր հալածանքները (դպրոցական-ընկերութիւնների հալածանք, սահմանափակում հայ աշխատաւորների պետական շրջանների մէջ, արգելում հայերին բնակուել Կարսի շրջանի ազատ հողերի վրայ,* 95-96*ի իր ընթացքը, կալուածների գրաւում եւ այլն)* քնականօրէն *առաջ բերեց եւ* հակաշարժում *հայերի մէջ։*

Դաշն[ակցութիւն]ը եղաւ արտայայտիչը այդ հակառակ հոսանքի եւ պատասխանելով տեղացող հարուածներին՝ հարկադրուած ուժեղացրեց եւ իր դիմադրութիւնները եւ գործունէութիւնը (մինչեւ 98*-ը համբերութիւն,* 98-1903 *գրաւոր բողոք,* 1903-1904 *ոչ պաշտօնական պայքար,* 1905-6 ռուս *արթնացման շրջանի համապատասխան ոչ սեպարիստական* ծրագիր*, որը իրականութեան մէջ փոխարինուեց ինքնապաշտպանութեան կռուով։*

Ռուսների կողմէ հայերի շահերը անտես առնելը Թուրքիայում (խօսք կար միայն Մակեդոնիայի *ռեֆորմների մասին, մոռացութեան տալով հայկական շրջանները) միւս կողմէ յառաջ բերեց ուժեղ հոսանք հաշտուելու եւ մի* modus vivendi *ստեղծելու համար դրացի ազգերի եւ մանաւանդ իսլամների հետ (Թուրք, պարսիկ)։*

*) *Յատուկ (գրքերի ձեւով)* Pro Armenia*-ի դուրս բերելը այդ ձեւով (բանտարկեալների առթիւ) գուցէ առաջին քայլը լինէր այլ պարագաներում կամ այլ* երեւոյթների *առթիւ եւս դուրս բերել նման կարմիր գրքեր, որպիսին է Պարսկաստանի գործը եւ մեր դերը, Երիտասարդ Թուրքերի վերջին* 3 *տարիների գործունէութիւնը, որ կ'արտայայտուի մեր այս քանի օրս ներկայացնելիք* memorandum*ի եւ պահանջների մէջ։*

Ռուսիայի դաշնակցից (ինչպէս էր XVI-XIX դարերին) հայերը դարձան հաւասար բարեկամներ բոլոր իրենց հարեւանների... Եթէ 1829-ին Երեւանը գրաււում էր ռուս զօրքի եւ հայ կամաւորների կողմէ, այսօր Թաւրիզի հայերն ու պարսիկները կուում են ռուսների դէմ։ Նոյնը տեղի կ'ունենայ անշուշտ ամէն տեղ ուր ռուսաց շահերը ընդհարուին դրացի ազգերի ու պետութիւնների շահերի հետ։

Լոբանով Ռ[ոստովսկի]ն եւ իր հետեւողները դաւաճանեցին իրենց դարաւոր քաղաքականութեան եւ այսօր կը քաղեն ատոր պտուղները։

Արդիւնքը ձեռնտու չէ ոչ հայերին, ոչ մանաւանդ ռուսներին։ Ասոր պատճառը հայերի սեպարատիզմը չէ հարկաւ (որ գոյութիւն չունի եւ չի էլ կարող ունենալ ֆիզիքապէս) այլ միայն ռուսների հայատեաց եւ օտարատեաց քաղաքականութիւնը։

Վերջինիս վերջ դնելը դժուար չէ մանաւանդ համեստ պահանջներ ունեցող հայերի նկատմամբ, քանի որ վերջիններս են՝

1) Հայ կուլտուրական-եկեղեց[ական] ինքնավարութեան պահպանում ու լայնացում (թեմական խորհուրդներով ու ընտրովի առաջնորդներով եւ ազգային հարկ նշանակելու իրաւունքով)։

2) Հայոց տարրական եկեղեցա-թեմական եւ այլ դպրոցները իրենց իրաւական դիրքով, ինքնավարութեան ձեւով նկատել զեմստվոյական[143] եւ ռուս հոգեւոր դպրոցների նման, տալով նրանց նոյն նպաստները։ Կովկասի պետական դպրոցների մէջ հայ տղաների համար պարտաւորեցուցիչ դարձնել եւ կարեւոր տեղ տալ հայերէնին։

3) Կարսայ շրջանի եւ այլ ազատ պետական հողերը յատկացնել նաեւ հողազուրկ կամ սակաւահող հայ գիւղացիներին ինչպէս եւ խտրութիւն չդնել պաշտօնների մէջ ընդունելիս։

4) Արտաքին քաղաքակ[անութեան] մէջ հայերին traité ընել[144] Մակեդոնիայի սլաւոնների չափով...

Երբ, այսպիսով, ոչնչանան ռուսական հալածանքները եւ ռուս կառավարութիւնը փաստերով ու գործերով ցոյց տայ որ փոխած է իր ընթացքը, բնականօրէն, նոյն աստիճան[ական]ութեամբ կը փոխուի եւ հայ մասսաների տրամադրութիւնը, նոյն աստիճանականութեամբ կը փոխէ իր տակտիկը նաեւ ղեկավար յեղափ[ոխական] հայ կուսակցութիւնը։

Կը մնայ մէջտեղը զուտ սոցիալական կռուի խնդիրը որի մէջ Դաշն[ակցութիւն]ը կ'ընթանայ ձեռք ձեռքի տուած Ռ[ուսաստան]ի միւս սոցիալիստական կուսակցութիւնների հետ, բաժնելով անոնց հետ պարտութիւններն ու յաղթութեան արդիւնքները։

Ծրագրի վերջին գլխի (փոխադարձ զիջումների ու յարաբերութիւնների) մասին նորից կը գրենք երբ առնենք նաեւ Արեւել[եան] Բ[իւրոյ]ի կարծիքը, որին դիմած ենք այդ առթիւ...

Վերջապէս Pro Arm[enia]ի այդ չափաւոր ուղղութիւնը կրնայ քննել ու շտկել եւ Դրօշակը։

Կովկասէն եկած պատգամաւորները եւ մենք (այստեղ) ստացած ենք այն տպաւորութիւնը որ այդ ձեւով գուցէ կարելի լինի թեթեւցնել մի քիչ բանտարկուած ընկերների վիճակը, բարելաւել մի քիչ հայ-ռուսական փոխյարաբերութիւնները։

Բարեւներով՝
Ի դիմաց Արեւ[մտեան] Բ[իւրոյի]
ՍՄԲ[ԱՏ] ՕՀ[ԱՆԵԱՆ]

Փաստ. 334-4

Բ 16.– ՊԵՏՐՈՍԷՆ ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

Սիրելի Միքայէլ!

Թեհրանից մի երկար նամակ գրել եմ. նորից կրկնում եմ ստիպուած, Հնդկաստանի խնդիրը[145]։ Դուք մարդ ուղարկելո՞ւ էք թէ ոչ։ Եթէ ուղարկելու էք, այն ժամանակ մեզ լուր տուէք, որ մենք ի զուր գործակատար չփնտռենք։ Դա շատ կաներտոր խնդիր է, կարող է մեծ յաջողութիւն ունենայ։ Այդ մասին ճշգրիտ տեղեկութիւններ մենք ունինք հաւաստի աղբիւրներից։ Եթէ ձեր կողմից գացող լինի չմոռանաք յանձնել իմ Թեհրանից ուղարկած ցուցակը։ Գրեցէք Բագու ձեր ծանօթ հասցէով։ Բայց պատասխանը շուտ ուղարկեցէք, որ ըստ այնմ մենք մեր պատրաստութիւնը տեսնենք։

Մօտ օրերս գնացել էի տղաների մօտ Չէրքէսների քաղաք[146]. առողջութիւնները լաւ են. հետները առիթ ունեցայ խօսելու. դատը երեւի կ'ուշանայ եւ դրամական օգնութիւնը – մեր ձեռքի տակ ունեցածը շատ աննշան է, ընդամէնը 22-երեք զերոներ, մինչդեռ պահանջը խոշոր է, մանաւանդ իրենք էլ պահանջ են դրել հէնց նախասկզբնական գործը, որոնք օր աւուր դուրս են գալիս այս կամ այն վկաները ձեռք բերելու եւայլն։

Ուստի խնդրում է ամէն ջանք՝ աշխատել շուտով կարգադրել, որ ժամանակին հնարաւոր լինի հարկաւոր եղած պաշտպանութիւնը ցոյց տալ։

28-XII-1911 թ., Բագու

Ջերմ բարեւներով եւ համբոյրներով՝
ՊԵՏՐՈՍ

143.- Նահանգային ինքնավարութիւն։
144.- Վարուիլ, վերաբերիլ։
145.- Հարցը կը վերաբերի Հնդկաստանի մէջ յօգուտ բանտարկեալներու հանգանակութեան ձեռնարկելու գործին։
146.- Այսինքն՝ Նովոչերկասկ։

Փաստ. 1749-64

Բ 17.– ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆԷՆ ՌՈՒԲԻՆԱՅԻՆ

Անթուակիր, անստորագիր մէկ էջնոց նամակ։ Ձեռագիրը կը պատկանի Համօ Օհանջանեանին, գրութիւնը ուղղուած պէտք է ըլլայ Ռուբինայինն, որ, ինչպէս գիտենք, բանտ բանտ հետեւած էր իր ապագայ ամուսնոյն։ Գրուած է բանտէն, հաւանաբար Նովոչերկասկի, ուրկէ ինչպէս կը գրէ՝ «մի ամսից երեւի կը լինեմ մայրաքաղաքում», այսինքն Պետերբուրգ։ Պէտք է ենթադրել հետեւաբար, որ 1911ի Դեկտեմբերի կամ 1912 թ. Յունուարի առաջին օրերու գրութիւն է, որովհետեւ բանտարկեալները մայրաքաղաք փոխադրուեցան նոր տոմարով 1912 թ. Յունուարի վերջերուն։

Սիրելիս, լաւիկս,

Առանձին բան չունեմ հաղորդելու. ինչ վերաբերում է փողերին, ես ինչպէս անցեալ անգամ հաղորդել էի, ես հիմա այդ խնդիրներին չեմ խառնւում բնաւ. թող իրանք անեն ինչպէս ուզում են եւ քեզ էլ տեղեկացնեն։ Մի ամսից երեւի կը լինեմ մայրաքաղաքում։ Ինչպէս երեւում է ինձ վիճակուած կը լինի ընդհանուր տեսակէտներ պարզել ընդունելով ինձ վրայ։ Այնպէս որ այս դէպքում հարկաւոր է որ իմ ասածները չլինեն միայն իմ անձնական կարծիքները։ Այդ ուղղութեամբ հարկաւոր է որ այդ տեղից լինեն դիրեկտիւները, որոնք կարելի է հաղորդել պաշտպաններին։ Երկրորդ խնդիրը այն է որ մի քանիների դրութիւնը քանի գնում է վատանում է, որ արդարացնում են թէ փախուստ կարող է լինել։ Պէտք է ենթադրել որ այդ լուրերը կարող են ծագում առած լինեն այդտեղի զանազան խօսակցութիւններից առած. միմար բաներ են ի հարկէ, բայց պէտք է միջոցներ ձեռք առնել որ այդպիսի բաներ չլինեն։

Շատ անյարմար պայմաններում եմ գրում, դրա համար էլ դուրս է գալիս միտքս շատ միմար կերպով արտայայտած, բայց կը հասկանաս։ Անվերջ համբուրում եմ քեզ լաւիկս. եղիր հանգիստ. ինչ արած, կը տանեմ իմ խաչը։

Համբոյրներս հաղորդիր ով ինձ յիշում է։

Քո



Նմոյշ՝ Համօ Օհանջանեանի ձեռագրէն

Փաստ. 450-1

Բ 18.– ՊԵՏՐՈՍԷՆ ԱԿՆՈՒՆԻՒՆ

Ս. Պետերբուրգ, 7-1-[1912]

Ցարգելի եւ սիրելի Խաչատուր,

Ընկերոջ միջոցով ուղարկած բարեւդ ու ցանկութիւնդ ինձ ազատեց անախորժ վիճակից. ենթադրում էի, որ նախորդ նամակիս չպատասխանելը casus belli[147] *պիտի ընդունել։*

Մեծ տրամադրութիւն ունիմ պարբերական նամակագրութեան, սակայն պայմանները չափից դուրս անհամապատասխան են։ Ահա թէ ի՛նչ է մեր մասնակի վիճակը։ Բանտարկեալներին արդէն բերել են Պետերբուրգ եւ վը ounpnjt պրիսուտսվիէ սենատա[147ա] *Ցունուարի 17-ից (Հ[ին] Տ[ոմար]) սկսում է իր սեւ աշխատանքը։ Դատւում են 159 հոգի, որոնցից մի քանիսը փախել են։ Դատաստանական մարմնի կազմը իր լիրբ նախագահ սենատոր Կրիվցով[147բ]-ով չատ խիստն է։ Տիրող կարծիքը,— դրական բան կարող ենք գրել, երբ նախ կը բերեն բոլորին, դրանց հետ կը հաւաքուեն մեր փաստաբանները եւ ընդհանուր որոշմամբ մի վերջնական բան կը յայտնեն այդ գործողութեան մասին ու ձեզ կը հեռագրուի այո կամ ոչ։ Մինչեւ այդ հեռագիրը, խնդրւում է այդ ուղղութեամբ ոչ մի քայլ չանել. առանձին էլ խիստ քննադատում են մինչեւ այժմ եղած բոլոր այդ ձեւի գործողութիւնները։*

Հաստատ աղբիւրներից ինձ յայտնեցին, որ տղաների վերջին 3-ի հեռանալը[148] *մեծ կապ ունի կրկնակի բռնումների հետ. պատճառաբանում են, [որ] նրանք պէտք է սպասէին մինչեւ մեղադրական ստանալը, որից յետոյ նախ նկատելի չէր լինի եւ չէր ազդի նախնական հոգեբանութեան վերայ եւ երկրորդ՝ այն զալմաղանները չէին լինի, որոնք տպուած են եղել մեր թերթի մէջ, որ այժմ իրենց ձեռքին է թարգմանուած եւ, ինչպէս տեղեկացւում է, հրամանը եղել է կրկնակի հաւաքելու երբ լոյս է տեսել նրանց կապերը. նրանց հեռանալը ազդել է նաեւ ներսում եղածների վրայ ինչպէս տեղեկացնում է փաստաբան Բարանովսկին։*

Ակտի օրինակը մօտ ժամանակներում կ'ուղարկուի. էկսպերտներ նշանակուել են մի քանի տեղացի հայերի թուով 3 հոգի եւ մէկ թուրք, որը միեւնոյն ժամանակ լինելու է թարգման դատի ժամանակ, եւ որի մասին պատմում են չատ խուլիգան է։ Այժմ այս ծով քաղաքի փաստաբաններից միայն մէկը ռուս յանձն է առել ձրի պաշտպանել. միւսները այնպիսի գումարներ են պահանջում, որ նոյնիսկ մօտենալ դժուարանում է։ Ինչպէս տեղեկացայ, դեռ փաստաբաններից չատերը դրամ չեն ստացել. ինչպէս երեւում է, փոխադրուած գումարները ուշ են ստացել. միջանկեալ վերջին 10-ը [հազարը] չուտով փոխադրեցէք եթէ մինչեւ այժմ չէք փոխադրել. կարիքը մեծ է։ Բացի այդ՝ բարի եղէք այդ անձնաւորութեանը (որի միջոցով տեղափոխութիւնը կատարուած է) համոզելու, որ նա Մեծ քաղաքում իր եղբօրը ստիպի կորցնել տեղափոխութեան հետքերը։ Տեղափոխութիւնը կատարուած է ո՛չ օֆիցեալ (բանկի կամ փոստայի) միջոցով, միայն մտցրել է՝ հակառակ մեր պնդումների, իր սեփական ելեւմտից գրքերի մէջ, եւ այդ պարագան այժմ վտանգ է առաջացնում։

Սրանով եզրափակում եմ նամակս։ Յետագայի մասին կը հաղորդեմ ձեր նամակ-պատասխանից յետոյ։ Գրեցէք անպատճառ ծածկագրով եւ առ այժմ հետեւեալ հասցէով։ Մայրաքաղաք. համալսարան. ուսանող Գ. Տոկատլեանին։

Համբոյրներով՝
ՊԵՏՐՈՍ

147.- Լատիներէն՝ բառացի նշանակութեամբ՝ պատերազմի առիթ:
147ա.- Բնագրին մէջ ռուսատառ՝ սենատի յատուկ ներկայութեամբ:
147բ.- Բնագրին մէջ ռուսատառ:
148.- Ակնարկութիւն Ա. Ահարոնեանի, Ա. Իսահակեանի եւ Գարեգին Խաժակի երկրէն դուրս գալուն:

Փաստ. 60-4

Բ 19.– ԱՀԱՐՈՆԵԱՆԷՆ ՁԱՒԱՐԵԱՆԻՆ

Սիրելի Սիմոն!

Երկար գրութիւնդ հասաւ ինձ։ Նրանից առաջ եւ նոյն մտքով Խաչատուրն էր գրել։

Չեմ զարմացնի ձեզ անշուշտ, որ ասեմ, թէ համակերպելով ձեր թելադրումներին, ես գրեթէ ոչինչ չարի այստեղ բանտարկուած ընկերների մասին։ Դուք դէմ եղաք աղմուկին եւ էլ աղմուկ հանելու փորձ չարի։ Ո՞վ էր ուղիղ, դո՞ւք, թէ ես, չգիտեմ, բայց կ'ասեմ, որ ձեզ հետ բնաւ համաձայն չեմ եղել եւ չեմ լինի այդ հարցում։

Ես գրեթէ հաւատացած եմ, որ Ձեզ հասած լուրերը պարզ բլըֆներ են եւ ռուս կառավարութիւնը իր աղէս Զարիկովի[123] *ձեռքով կարողացաւ մի պարզ ու նենգ խաղ խաղալ։ Կարդացիք անշուշտ ուրեմն ռուսերէն նշանակալից յօդուածը դատի նախօրեակին — դա պատասխան է մեր լռութեան, մեր յոյսերի եւ մեր միամտութեան...*

Իմ կարծիքին են նաեւ մեր եւրոպացի բարեկամները, որոնք այս ménagement-*ները*[149] *դժուարութեամբ են հասկանում, երբ առաջներս ռուս կառավարութիւնն է, ամէնից չարամիտը, ամէնից անամօթը ու անխիղճը բոլոր կառավարութիւններից։*

Այնուամենայնիւ մի յօդուած պատրաստեցինք Բերարի հետ[150]*, որից՝ ի նկատի ունենալով ձեր ներկայ տրամադրութիւնը — յուսամ գոհ մնաք. կ'ուղարկեմ ձեզ շուտով։ Զգուշացայ միտինգներից, զգուշացայ ծայրայեղ թերթերից, անգամ* Humanité-*ին չգնացի. միայն երկու օր առաջ եղայ։ Այսօր ուղարկեցի ձեզ* Grande Revue-*ի վերջին* N-*ը, ուր մի յօդուած կայ դատի մասին Ֆրանսուհու գրած. տոնը խիստ է, բայց այդ յօդուածը իմ թելադրումով գրուած էր ձեր նամակներից եւ իմ Պարիզ գալուց չատ առաջ։ Անցնում եմ քո միւս խորհրդածութիւններին։*

Pro-Armenia[151]*, կամ դրա նման մի թերթի արտասահմանում հրատարակելու միտքը ես անձամբ լիովին բաժնում եմ։ Չգիտեմ քեզ ասել եմ թէ ոչ, ես Պոլսում մի քանի ընկերների խօսեցի այդ մասին դեռ ամիսներ առաջ։ Թէ Ռուսաստանում եւ թէ Թուրքիայում մենք գրեթէ ամէն բան տանուլ տուինք։ Եթէ ոչ ամբողջը, գէթ չատ բան հարկաւոր է, որ «Ազատամարտը» մի երեսում մեզ անկեղծօրէն յայտարարէ օսմանեան հայրենիքի հաւատարիմ զաւակներ, քիչ հեռու այդ իսկ զաւակների անվերջ խողխողումները նկարագրելու համար։ Ժամանակ է, որ այս տրաժիկ դուալիզմը*[152] *վերջ առնի։ Եթէ այդ անհնարին է Պոլսում, եթէ որոշ պոլիտիկա* s'impose[153] *այդտեղ, ոչինչ չի արգելում, որ մենք օր աւուր արձանագրենք Եւրոպայի առաջ այն զզուելի միստիֆիկացիան*[154]*, որի անունն է Երիտ. Թուրքերի ռեժիմ մեր վերաբերմամբ։ Կարծեմ Երիտ. Թուրքերը չեն էլ ծածկում հայերի վերաբերմամբ իրենց հետամըտած կասկածաւոր, նեղսիրտ եւ սպառնական քաղաքականութիւնը։ Արդէն միայն երկաթուղիների խնդիրը — եթէ ուրիշը չլինէր — միանգամայն բաւական է անդառնալի կերպով հաստատելու համար, որ այդ անուղղելի եւ աչառոտ թուրք գլուխներից չատ սպասելիք չունինք. սարսափելի, տխուր յուսախաբութիւն է, բայց սա փաստ է։ Անկեղծօրէն կամեցանք ձեռք-ձեռքի տուած յառաջ երթալ թուրքերի հետ. որոշեցինք վերածնել այդ դժբախտ երկիրը, որի անունն է Թուրքիա. պատասխանը՝ զալպ[?], անվստահութիւն, նենգ քաղաքականութիւն, անծէր[?] զրկանքներ, հարստահարութիւն, աւազակութեան քաջալերումն։ Այդ դրութիւնը չի կարող շարունակուել։ Դաշնակցութիւնն առաջինը ծանրապէս պիտի տուժէ իր վրայ ընկած պատասխանատուութիւնից, եթէ թոյլ տայ այս վտանգաւոր պատրանքը շարունակուի։*

Կովկասում եւ Պարսկաստանում դրութիւնը լաւագոյն չի։ Ռուս քաղաքականութիւնն ո՛վ գիտէ դեռ ինչ անակնկալներ ունի պահած մեր խեղճ ժողովրդի համար։ Նրա մասին էլ մենք ասելիք ունենք, եւ չատ ասելիք Եւրոպայի առաջ։ Դու չգիտես, երեւակայել չես կարող, թէ ինչպէս մենք մոռացուեցինք Եւրոպայում։ «Հայկական հարցը» իր այնքան այրող, այնքան այժմէութիւն ստացած բնաւորութեամբ թաղուեց փոչիների տակ, որ այնպէս առատօրէն թափուեց նրա վրայ Երիտ. Թուրքերի ստեղծած բլըֆով։ Չեմ երկարացնում. իմ գիտցածը քո եւ մեր ընկերների գիտցածի մի չնչին մասն է։ Ահա թէ ինչո՛ւ, ես լիապէս բաժանում եմ մի թերթի հրատարակութեան միտքը Եւրոպայում։

Դու սակայն այնպէս ես գրում, ասես իսկոյն այս իսկ ժամին հնարաւոր լինէր այդ անել գոնէ մի հատ բրոշիւրի ձեւով նուիրուած դատին։ Խնդիրը ըստ իս

149.- Ֆրանսերէն՝ զգուշութիւնները:
150.- Վիկտոր Բերար, ֆրանսացի քաղաքական անձնաւորութիւն, ծերակուտական, հայասէր եւ Դաշնակցութեան սերտ բարեկամ ու գործակից:
151.- Նշենք որ Pro-Armenia-ի հրատարակութիւնը դադրած էր 1908 թ.ին, օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք:
152.- Ողբերգական երկուութեան:
153.- Ֆրանսերէն՝ պարտադիր է իմաստով:
154.- Խաբկանքը, պատրանքը:

այնքան լուրջ է, այնքան պատասխանատու, որ ես գոնէ մեն-մենակ կամ Միշէլի[155] *հետ յանձն չէի առնի։ Անհըրաժեշտ է մի շուտափոյթ խորհրդակցութիւն մշակելու, սահմանելու համար ընդհանուր սկզբունքներ, ընդհանուր ուղղութիւն այդ հրատարակութեան։ Քո գրածի իւրաքանչիւր պարբերութիւնը բազմաթիւ խնդիրների մայր է, պատասխանատու խնդիրների։ Անշուշտ հնարաւոր է մի բրոշիւր պատրաստել եւ ասել այնտեղ մօտաւորապէս այն՝ ինչ դու ուզում ես, որ ասուի հայ-ռուս յարաբերութիւնների մասին։ Բայց դրանով հարցը չի սպառուի. հայ-թուրք յարաբերութիւնը կայ աւելի կիզիչ, աւելի վտանգաւոր անակնկալներով եւ այդպիսի մի հրատարակութիւն կարող է ունենալ ձախող հետեւանքներ եթէ լաւ չմտածուի. հեռատես հայեացքներով։*

Շատ խնդրում եմ հաղորդել, թէ դուք ի՞նչ էք մտածում այդպիսի մի խորհրդածութեան գաղափարին ժընեւի հետ։

Կարդացի «Զինուոր Մոսոն»[156]*. կարդացի եւ յուզուեցի։ Տեղն է ասել, որ լաւագոյն ստեղծագործութիւնը, լաւագոյն գեղարուեստը ինքը կեանքն է. բայց հարուստ այնքան յուզիչ, այնքան կսկծեցուցիչ երեւոյթներով. քիչ անգամ անհատի կեանքը այդքան լրիւ եւ հարուստ դրագեղիա*[157] *է ներկայացրել որպէս այդ անյայտ մարտիրոսը. եւ քիչ անգամ կենսագիրը այդքան հեռու է եղել էֆֆէկտ*[158] *գործելու դիտաւորութիւնից, որքան դու ես արել, ցնցող հետեւանքի հասնելու համար այդ զարմանալի պարզութեամբ։ Ցնցուած եմ, ինչ զանձեր ունի թագցրած մեր ժողովուրդը իր այրած, իր տառապած ծոցում եւ մեր աչքի առաջ այդ ժողովուրդը պիտի կորչի՞... Ո՛չ, չպէտք է կորչի...*

Համբոյրներով՝
Քո Աւետիս

Գրիր. հասցէս Roseraie 29, Genève, *ինձ։ Թէեւ ես գրում եմ Պարիզից։*

Յունուար 23, 1912, Պարիզ



Նմոյշ՝ Աւետիս Ահարոնեանի ձեռագրէն

155.- Խօսքը կը վերաբերի Միք. Վարանդեանին։

156.- «Զինուոր Մոսոն» խորագիրն է Ս. Զաւարեանի մէկ պատմուածքին, որ լոյս տեսած էր «Ազատամարտ»ի 1912 թ. 1/14 եւ 4/17 Յունուարի համարներում մէջ։

157.- Ողբերգութիւն։

158.- Ուժեղ տպաւորութիւն։

Փաստ. 109-17

Բ 20.– Ս. ԶԱՒԱՐԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

6/19 Փետրուար 1912, Կ. Պոլիս

Ընկերներ,

Ընկ. Արտաշէսի 18 I-ի եւ Միքայէլի[159] *24 I-ի նամակների պատասխանը օրէց օր յետաձգուեց։*

Սկիզբը խոյս էի տալիս գրելուց՝ չուզենալով պաղութիւններով պատասխանել ընկ. Արտաշէսի առնուազը անտեղի եւ անհամեստ նկատողութիւններին։ Յետոյ էլ եկաւ խեղճ Քիյաուի անակնկալ մահը...

Դառնանք մեր դժգոհութիւնը յարուցանող հարցի էութեան։

1) Բանտի մեր ընկերները որոնց հարցուած էր (եւ ոչ թէ ընկ. Արտաշէսի կարծած բարձրաստիճան պետերբուրգցիները) կասկած էին յայտնած դրսի աղմուկների օգտակարութեան մասին։ Մեզ էլ, ազատ վայրում նըստածներիս, դժուար էր չհետեւել բանտարկուած ընկերների կարծիքին եւ չյայտնել այդ կարծիքը ձեզ։

2) Մեր ամենավստահելի ընկերներից մին քանիցս գրած էր՝ փորձել այստեղից ոեւէ միջամտութիւն անել տալ։ Պատրիարքարանը արեց դա. մեր ընկերների վիճակը թելադրում էր հակառակ չլինել դրան, ինչպէս առաջները մենք հակառակ չէինք երբ եւրոպացիները դիմում էին յօգուտ թուրքահայերի։

3) Հէնց գրելու համար «ա՛յն ինչ որ եղած է», չեշտելու է այն բոլոր կէտերը, որ յիշած էինք մենք մեր առաջին նամակի մէջ։ Իսկ եթէ այդպէս անուի, դուրս կը գայ որ Դաշն[ակցութեան] գործունէութեան 3/4ը արդիւնք է ռուսների հալածանքների՝ «ազգայնական» հողի վրայ. դա ազգային գոյութեան ինքնապաշտպանութիւն է։

4) Անշուշտ մենք ունեցել ենք, ունենք, կ՚ունենանք եւ համապետական, ընկերվարական գործունէութիւն։ Այդ ուղղութեամբ էլ վերջանում է մեր նամակը... «կը մնայ մէջտեղը զուտ սոցիալական կռուի խնդիրը, որի մէջ Դ[աշնակցութիւն]ը կ՚ընթանայ ձեռք ձեռքի տուած Ռ[ուսաստան]ի միւս սոցիալիստական կուսակցութիւնների հետ՝ բաժնելով անոնց հետ պարտութեան ու յաղթութեան բաժինները»։ Արդ, այս տողերից միթէ 3 I կէտի մէջ յիշուածի լուսաբանութիւնը որեւէ հակասութիւն կը ներկայացնէ՞ մեր ծրագրի ու որոշումների դէմ։

5) Հրատարակուելիք գրքի «մեղմ» տոնը, պատմական լուսաբանութիւնը 150 ընկերների վիճակը մեղմացնելու նպատակով էր արուում. անշուշտ եւ տպուելու էր Ֆրանսացիների կողմից։ Նախատեսելով այլ եւ այլ թիւրիմացութիւններ, նոյնիսկ նամակում ասուած էր որ «Դրօշակ»ը (իբրեւ պաշտօնական օրգան) կրնայ քննել ու շտկել այդ չափաւոր ուղղութիւնը։

Այս բոլորից պարզ է, որ ձեր վրդովմունքներին ու կծու կծու ակնարկներին տեղի չպիտի տայիք...

Վերջապէս [?], դուք տեսնում էք Կովկասի կիսամեռած վիճակը. երկու տարուայ ընթացքին մէջ կուսակցական գործունէութեան նշան չկայ. Ընդհ. Ժ[ողով]ի որոշումները մնում են թղթի վրայ...

Այդպիսի պարագաներում, մանաւանդ երբ մեր մեծ եղբայր ռուս կուսակցութիւնները չչմուած անորոշ վիճակի մէջ են, լաւ է մենք էլ մի քիչ շրջահայեաց լինենք եւ դուրսը նստած ճճճռան անգործադրելի սպառնալիքներ չկարդանք...

Դ[աշնակցութիւն]ը գործի կուսակցութիւն է եւ լաւ է այդ պատուաւոր ուղիից չչեղուենք։

Վերջապէս, մեր կուս[ակցութեան] մէջ ամէն մարմին իր ներքին գործին մէջ ինքնավար է։ Դուք էլ ինքնավար էք այդ տեղի պրոպագանդի, թերթի հրատարակութեան մէջ։ Եթէ մեր կարծիքի սխալ լինելը ակներեւ էր, կարելի էր չհետեւել, գէթ մեղմացնել... Մենք դժգոհ չենք լինի։ Ժամանակը սպառած չէ. դատը հաւանաբար երկարի։ Արէք ձեր դատողութեան ու խղճի թելադրութեան համեմատ։

Մի քանի նոր փաստեր մեր տեսակէտի աւելի նպատակայարմար լինելուն։

1) Փաստաբանների եւ բանտարկեալների խորհրդակցութեան մէջ (դատից առաջ) որոշուած է ամբողջ գործին չտալ ոչ անհատական բնոյթ (ժխտելով ամէն մէկի յանցանքը), ոչ յեղափոխական, այլ ինքնապաշտպանութեան...

2) Բանտարկեալները նախագահի դէմ «օտվոդ»[160]*ա չեն յայտնած (չնայած որ կարող էին դա անել իբրեւ քննիչի ազգականի), չուզենալով յարաբերութիւնները սրել։*

3) Վերջի թղթակցութիւնը (Պետերբուրգից) — որ այս քանի օրս կ՚ուղարկենք ձեզ — թոյլ պատժի յոյսեր է ներշնչում։ Խուլիգան նախագահը տեղ տեղ պաշտպանում է մերոնց դատախազի դէմ...

Ընկ. Արտաշէսը «պոլիտիկան» արհամարհում է,

159.- Արտաշէս Բաբալեան եւ Միք. Վարանդեան։

160.- Pro-Armenia-ի բազմամեայ խմբագրապետը, նոր մահացած։

160ա.- Բնագրին մէջ ռուսատառ՝ բացարկ։

բայց եւ այնպէս «Դրօշակի» բոլոր համարներում էլ պոլիտիկայի մասին միշտ էլ յօդուածներ է կարդում։ Պոլիտիկան մեծ բան է, ամենամեծ բանը, որը դժբախտաբար շատ անգամ մեր եւ շատերի հասկացողութիւնից եւ ոյժից դուրս է մնում...

Պարսկ[աստանում] բռնած մեր ուղղութիւնը վատ չէր։ Միքայէլը զուր է վրդովւում։ Նիկոլը[161] չի կռուել Թաւրիզում (պատրուակ բռնելով Թեհրանի չդիմադրելու հեռագիրը եւ տեղի թուրքերի անկախ գործելը)։ Այժմս ապահով Վան են բոլոր մերոնք՝ 200 պարսիկների հետ։ Շնորհիւ թուրքերի հետ ունեցած մեր «պոլիտիկայի», նրանց ընդունեցին եւ օգնում են։ Եթէ այդ էլ չլինէր եւ մենք 1, 10, 100 սպանուածներ, կախուածներ տայինք, էլի զղջալու չենք։ Մեծ գործերը, պատմական երեւոյթները մեծ զոհեր են պահանջում։ Մենք լինելու ենք լաւ դրացիական յարաբերութիւնների մէջ պարսիկների-թուրքերի հետ եւ արժէ դրա համար զոհեր տալ։ Այդ 10 կամ 100 զոհերը, չնորհիւ լաւ դրացիական յարաբերութեան, մեզի կը պահպանեն 1000, 10.000 հայ կեանքեր (ապագայում)։ Մանաւանդ որ կռուելով մենք մարզւում, կոփւում ենք... զիջումներ ենք անել տալիս նոյնիսկ ռուս կառավարութեան։

Մտքիս էութիւնը սա է. խօսքի բացատրութեան մէջ համեստ, մեղմ, քաղաքավարի լինենք, իսկ գործի մէջ որչափ կարող ենք ուժեղ, խիստ եւ յանդուգն։

Աւետիսի[162] նամակում յիշածներս չեմ կրկնում։

Ընկ. բարեւներով՝
Արեւմտ[եան] Բ[իւրոյի] կողմից՝
Մ[ՄԲԱՏ] Օ[ՀԱՆԵԱՆ]

Փաստ. 109-22

Բ 21.– Ս. ՁԱՒԱՐԵԱՆԷՆ ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

13/26 – II – 1912

Սիրելի Միքայէլ,

Ահա Պետերբուրգից ստացուած 2րդ նամակը։ Երկրորդը չեշտում է որ կեղծիքները շատ շատ են եւ որ ծածկելու համար կեղծուածները — բանտարկեալներին նպաստաւոր թղթերի մի մասը կորսնցուած է։

Նոր քննութիւն է բացւում գողացուելու առթիւ։

Տղաների տրամադրութիւնը լաւ է։ Համոն, Մանասը, Թաիրեանը եւ ուրիշներ յայտնել են ամբողջ ճշմարտութիւնը, չեշտելով որ վերջի ծրագիրը համարեա թէ հնարաւորութիւն չեն ունեցած գործադրութեան դնել...

Վերջի նամակի մէջ փաստաբանները (երեւի եւ տղաները) յատկապէս խնդրում են դուրսը մի առժամանակ լռութիւն պահել։

Բարեւներով
Քո ՍՄԲ[ԱՏ]

161.- Նիկոլ Դուման։
162.- Ահարոնեան Աւետիսը։

Փաստ. 109-38

Բ 22.– Ս. ՁԱՒԱՐԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

8/21 - III - 1912

Ընկերներ,

Ձեր մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք ներփակ 5 Մարտին մեր ստացած նամակի վրայ (կարմիր խաչով նշանակուած)։

Ակներեւ է որ այդ փոփոխութիւնը կապ ունի Զարիքովի[123] հրաժարեցնելու եւ այլ յարակից մեծ քաղաքական սպասելիքների հետ։ Թղթակիցը ինքը չեշտում է որ ամէն ինչ կախուած է Պետերբուրգի ղեկավար խաւերի մէջ կատարուող մրցման հետ։

Որչափ մի ամիս առաջ մերոնք յուսացող եւ ուրախ էին, նոյնչափ այսօր տխուր են, սպասում են խիստ պատիժների...

Կարեւորը նա է որ ռուս ամբողջ հասարակութիւնը, ողջ մամուլը շահագրգռուած է այդ հարցով։ Լրժինի կատարած զեղծումները չափ ու սահման անցած են։ Երբ ռուս մամուլը այդ դատով կը հարուածէ արդի կառավարական ռեժիմը, մենք աւելի եւս օգտուելու էինք այդ փաստերէն ու տրամադրութենէն։

Ոչ ձեզանից, ոչ Փարիզից լուր չառինք ի՞նչ արուեց արդեօք մինչեւ օրս։ Արդեօ՞ք մեր առաջարկած կամ այլ ձեւով որեւէ գործ պատրաստուեց։ Գէթ քաղուածքներ մեղադրական ակտերից տպագրուեցի՞ն, կամ մտադրութիւն կա՞յ տպագրելու...

Այժմս էլ չտեսնուած զեղծումներն են որ գալիս են մեզի նոր շատ ուժեղ զէնք տալու... Արդեօք ի՞նչ ձեւով ձեր կարծիքով կարելի էր դրանցից օգտուել։ Ի՞նչ է մտածում, ի՞նչ է անում այդ մասին այդ գործի համար մեկնած Աւետիսը[162]. խնդրենք պատասխանը չուշացնէք։

Ընկ. բարեւներով, ի դիմաց Արեւմտ. Բ[իւրոյի]
Մ[ՄԲԱՏ] Օ[ՀԱՆԵԱՆ]



Նմոյշ՝ Սիմոն Զաւարեանի ձեռագրէն

Փաստ. 451-1

Բ 23.– ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԷՆ

Սիրելի Սմբատ, [Պոլիս]

Քո գնալուց մինչեւ այժմ այստեղի դրութեան մէջ առանձին փոփոխութիւն չի եղել, որի մասին կարեւոր լինէր քեզ հեռագրով յայտնելու, ինչպէս դու ցանկացել էիր։ Զորս հոգի միայն, որոնք խնդիրք չէին ներկայացրել ամսոյս 18ին, ուղարկուեցին Իրկուտսկի նահանգը[163]*, այսինքն այն համեմատաբար լաւ վայրը, որին տենչում են մշտնջենական աքսորականները։ Գնացքի վագոնները յարմար էին, ճանապարհին կը լինին միայն 10 օր, որ համարւում է մինիմումը էտապային ճանապարհորդութեան. մնացածների ցանկութիւնն է նոյնպէս օր առաջ ճանապարհ ընկնել եւ բանտերի պատերից դուրս տարիներով տենչացած ազատութեան մէջ լինել, թէեւ հեռաւոր վայրերում եւ իրաւազուրկ. բայց արագացնել դէպքերի ընթացքը, որ նրանց ցանկութիւնը կատարուի, մեզ անհնար է, թէեւ դիմումները եղաւ աւելի գուցէ քան հարկաւոր էր։ Նոյնիսկ Վեհը*[164] *յիշեցրեց արդարադատութեան նախարարին, որ կարեւոր է ներողամիտ լինել ի նկատի առնելով ժամանակը, հանգամանքները, որի մէջ դատապարտուածները ստիպուած են եղել գործելու եւ այն երկար տարիները, որ նրանք տառապել են բանտերում։ Նախարարը պատասխանել է, որ այդ մասին զեկուցում է պատրաստում Պետին*[165] *ներկայացնելու եւ ինքը ներկայացնելու ժամանակ կը յայտնի Վեհի կարծիքը Պետին։*

Այսօր լուր է տարածուած որ զեկուցումը արդէն պատրաստ է եւ շուտով կը ներկայացուի. որքան ճիշտ է, չգիտեմ, բայց այս էլ ճիշտ է, որ Սենատը բարձրագոյն ատեան տուած խնդիրների վերայ մակագրեր է, որ եղած պատիժները մինիմումն են օրէնքով սպասուածների եւ, բացի դրանից, ժամանակը եւ հանգամանքները երբ կատարուել են դատապարտուածների յանցագործութիւնները ի նկատի ունենալով Սենատը արդէն հարկաւոր եղած զիջումներն արել է եւ դէմ է մասնակի կամ այս ու այն անհատի վերաբերեալ ներման։

Ընդհանուր կարծիք է, որ երեւի ներումն կը լինի բայց ոչ մօտերս, այլ մի փոքր ուշ, երբ դատապարտուածները պատժի տեղը հասած կը լինին, մի փոքր պատիժը կրած եւ այն ժամանակ կ'ընկնեն ընդհանուր մանիֆեստի տակ[166]*։*

Ամառն է եւ այստեղ ոչ ոք չկայ արդէն. ուսանողութիւնը ցրուել, գնացել է գաւառները. մնացել են մի քանի հոգի, որոնք էլ կը գնան երեւի։

Քո տեսակցութիւնների հետեւանքի մասին ես ոչինչ չգիտեմ. ինձ թւում է, որ եթէ այդտեղից չդադարէք բանակցութիւն վարել այդ նիւթի վերաբերութեամբ, գործը կարող է գլուխ գալ։

Վեհի տեսակցութիւնը Պետին առանձին կերպով արդիւնաւոր լինելու մասին ես ոչինչ չգիտեմ։ Պատմում էին, որ նրա եւ շրջապատողների ռուսերէն խօսելը շատ լաւ տպաւորութիւն է թողել պալատական շրջաններում, եւ կարծես դրանից դէս էլ յայտնելու բան չկայ, թէեւ չքախումբը տեսակցութեան մասին միշտ յայտնում էր, որ թարգմանիչ չլինելու պատճառով տեսակցութեան ժամանակ ոչ ոք չի եղել եւ ոչ ոք չգիտէ, թէ ինչ է խօսել Պետի հետ կամ ինչ խնդրել նրանից։ Բոլոր նախարարների մօտ եղաւ ինքը եւ բոլորն էլ փոխայցելութեան եկան — հասարակ քաղաքավարութեան ակտ։

Պոլոժենիայի վերաքննութեան մասին ոչինչ չէ խօսուել եւ աննպատակայարմար են համարում այժմեան հանգամանքներում այդ հարցը յարուցանելու։ Ուղղութիւնը լինելու է եղածը աշխատել պահպանել եւ օրէնքի սահմաններից դուրս չգալ։

Գնում եմ Կովկաս. մանրամասնութիւններ այդտեղից։

Քո՝ ԵՐԶԱՆԻԿԵԱՆ

20-VI-1912 թ.
Մ[անկ] Պետ[երբուրգ]

163.- Արեւելեան Սիպերիա:
164.- Խօսքը կը վերաբերի Ամենայն հայոց նորընտիր կաթողիկոս Գէորգ Ե.ին:
165.- Այսինքն Ցարին:
166.- Կայսերական հրովարտակի:

ԿՈՎԿԱՍ
ԵՒ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

ԲԱԺԻՆ Գ.

Քարոզչութիւն Եւրոպայի մէջ

Դաշնակցութեան դէմ ցարական իշխանութիւններու շղթայազերծած հալածանքներուն դէմ եւրոպական հակազդեցութիւնը առաջին անգամ բարձրացաւ 1908 թ. Մայիսի վերջերուն, Աւետիս Ահարոնեանի ձերբակալութեան առիթով: Եւրոպայի մտաւորականներն ու քաղաքական անձնաւորութիւնները անձնապէս ծանօթ էին Ահարոնեանին, որ Միք. Վարանդեանի, բժ. Յովհ. Լորիս-Մելիքեանի եւ այլոց հետ Ֆրանսայի, Զուիցերիոյ եւ արեւմտեան այլեւայլ ուսանողներու մէջ հայ դատի քարոզչութիւնը վարողներէն մէկն էր հանդիսացած: Տակաւին ուսանող, ան դերակատարներէն մէկն էր նոյնպէս Քր. Միքայէլեանի մղումով կեանքի կոչուած Pro-Armenia պարբերաթերթի ծննդոցին: Վերջապէս, քրքական լուծին տակ հեծող արեւմտահայութեան առօրեայ տառապանքները կենդանագրող իր պատմուածքները, որոնք անչափ ժողովրդականացուցած էին իր անունը եւ որոնցմէ շատեր թարգմանուած էին եւրոպական լեզուներով,– հասկնալի կը դարձնեն իր բանտարկութեան առաջացուցած ընդվզումը արեւմտեան աշխարհի մտաւորական շրջանակներուն մէջ:

Մէկդի նետելով իր անունին փակցուած Դաշնակցութեան «ահաբեկիչներու գործադիր խորհուրդի անդամ»ի ամբաստանութիւնը, որ գործն էր նախկին խմբապետ Միհրանի մատնութեան եւ դատական քննիչ Լրժինի՝ Դաշնակցութիւնը ամէն գնով սեւցնելու փութկոտութեան, Ահարոնեանի դէմ արձակուած գլխաւոր մեղադրանքը այն էր, որ 1907 թ. Օգոստոսին ան մասնակցած էր Լահէյի Խաղաղութեան համաժողովին: Խորհրդաժողով, որուն կը նախագահէր ռուս դեսպան Նելիտով եւ որուն կը մասնակցէր Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմեանի առաքած եռանդամ պատուիրակութիւնը,– Գէորգ եպս. Իւթիւճեան, Յ. Շահնազար եւ Ա. Ահարոնեան: Սակայն հայ պատուիրակութիւնը բողոք բարձրացուցած էր բացառաբար Թուրքիոյ դէմ, պահանջելով Պերլինի 61րդ յօդուածով խոստացուած բարենորոգումներու գործադրութիւնը: Նոյնիմաստ դիմում կատարած էր հայասէր եւրոպացիներու պատուիրակութիւնը (Վիկտոր Բերար, Անատոլ Ֆրանս, Ֆրանսիս Դէ Պրեսանսէ, Պիէր Քիյար) շեշտելով որ 29 տարի անցնելէ ետք խոստացուած բարեկարգումները ոչ մէկ կիրարկում գտած են, մինչ հայերուն վիճակը «երբեք աւելի ողբալի չէ եղած քան այսօր»:

Այնուհետեւ, եւ արդէն 1910 թ. Դեկտեմբերէն սկսեալ եւրոպական քարոզչութիւնը կը կեդրոնանայ մնացեալ հարիւրաւոր բանտարկեալներու բազմութեան վրայ, Նովոչերկասկի բանտային անտանելի պայմաններէն մինչեւ Պետերբուրգի պետական Ծերակոյտի կողմէ «Դաշնակցութեան դատ»ի աւարտը:

*
* *

«Դաշնակցութեան դատ»ին առիթով ծաւալած քարոզչութեան վերաբերող փաստաթուղթերու հիմնական մասը քաղուած է արխիւներուն մէջ պահպանուած թիւ 55 եւ 92 մատեաններէն, որոնք կը պարունակեն ուղարկուած նամակներու, հեռագիրներու եւ այլ գրութեանց պատճէնները: Յղումը հետեւաբար կատարած ենք այդ մատեաններուն, համապատասխան էջերու կամ թուականներու նշումով: Ֆրանսերէն բնագրին կողքին թարգմանաբար տուած ենք հայերէնը:

Մատեան թիւ 92, էջ 37-38

Գ 1.– ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՐԻՆ

Genève, 31 mai 1909

M. Victor Bérard,
À Paris

Cher ami,

J'ai la douleur de vous communiquer que notre ami Aharonian, le Recteur du séminaire Nersessian à Tiflis, a été emprisonné et qu'il sera traduit devant le tribunal martial à Novotcherkasse.

On l'accuse d'avoir fait en 1907, en compagnie des européens (Vous et Quillard) certaines démarches auprès du Congrès de la Haye. Notre ami est dans la menace de déportation en Sibérie, aux travaux forcés de 5 à 6 ans.

Ce serait la mort pour Aharonian; il vous adjure du fond de sa prison à faire votre possible auprès l'ambassade russe, afin que celle-ci par la bouche autorisée de M. Nélidoff, fasse entendre au gouvernement du tzar qu'Aharonian ainsi que Victor Bérard et Pierre Quillard se sont rendus, en effet, à la Haye, lors de la dernière conférence, mais que leurs démarches portaient un caractère absolument légal, ayant trait à la question turque et n'ayant rien de désobligeant pour le gouvernement russe.

Je m'empresse de vous transmettre l'appel d'Aharonian. Nous vous serions très reconnaissants de vouloir bien solliciter une intervention. Vous trouverez peut-être les moyens d'agir sur l'ambassade. Vous pourriez peut-être sauver cet homme, accusé sans aucun motif plausible et don't la disparition serait une perte douloureuse pour la littérature et la société arméniennes.

En attendant votre réponse, je vous prie, cher ami, d'agréer l'assurance de ma sincère et profonde sympathie. Mes respectueuses salutations à Madame Bérard.

MIKAEL JOANNISSIAN

Genève, Roseraie 29

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժընեւ, 31 Մայիս 1909

Պ. Վիկտոր Բերարին, Փարիզ

Սիրելի բարեկամ,

Ցաւով կը հաղորդեմ ձեզի, որ մեր բարեկամը՝ Թիֆլիսի Ներսէսեան ճեմարանի տեսուչ Ահարոնեանը բանտարկուած է եւ պիտի դատուի Նովոչերկասկի պատերազմական ատեանին կողմէ։

Կը մեղադրուի ան, որ 1907-ին ընկերակցութեամբ եւրոպացիներու (Ձեր եւ Քիյառի) կարգ մը դիմումներ կատարած է Լահէյի կոնգրէին։ Մեր բարեկամը կը գտնուի Սիպերիա աքսորուելու եւ 5-6 տարի տաժանակիր աշխատանքի ենթարկուելու սպառնալիքին տակ։

Ասիկա Ահարոնեանի համար իսկ եւ իսկ մահ է. բանտին խորերէն ան թախանձագին կը խնդրէ ձեզմէ, որ ձեր կարելին ընէք ռուսական դեսպանատան մօտ, որպէսզի վերջինս Պ. Նելիտովի[167] հեղինակաւոր բերնով բացատրէ ցարական կառավարութեան, որ Ահարոնեան, ինչպէս նաեւ Վիկտոր Բերար եւ Փիեռ Քիյար գացած են արդարեւ Լահէյի վերջին համագումարին, բայց որ իրենց դիմումները բացարձակապէս օրինական բնոյթ ունէին եւ կապուած ըլլալով թրքական հարցին՝ ռուսական կառավարութիւնը անհանգստացնող ոչինչ ունէին իրենց մէջ։

Կը փութամ ձեզի հասցնելու Ահարոնեանի կոչը։ Բոլորս խորապէս երախտապարտ պիտի մնայինք ձեզի, եթէ հաճէիք միջամտութիւն մը խնդրել։ Գուցէ գտնէք դեսպանատան վրայ ազդեցութիւն բանեցնելու միջոցներ։ Գուցէ կարենաք փրկել՝ առանց որեւէ հաւաստի չարժառիթով ամբաստանուած այս մարդը, որուն անհետացումը ցաւալի կորուստ մը պիտի ըլլար հայ գրականութեան եւ հայ հասարակութեան համար։

Ձեր պատասխանին սպասումով, սիրելի բարեկամ, կը խնդրեմ որ ընդունիք անկեղծ եւ խոր համակրանքիս հաւաստիքը։

Ցարգալիր բարեւներս Տիկին Պերարին։

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

167.- Ֆրանսայի մօտ Ռուսիոյ դեսպան, որ միաժամանակ նախագահած էր Լահէյի յիշեալ համագումարին:

Փաստ. 1273-44

Գ 2.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

22-VI-1909, Paris
133 Boulevard St Michel

Սիրելի ընկերներ

Երէկ երեկոյ ստացայ Ձեր նամակը. ինչպէս երեւում է անցեալ շաբաթ ընկեր Յոնանի գրածս նամակում մոռացել եմ հաղորդել Բերարի հետ խօսածս Ահարոնեանի խնդրի մասին։

Բերարը ինձ պատմեց որ Ձեր նամակը ստանալուց յետոյ տեսնուել է Նելիտօֆի հետ եւ վերջինս խոստացել է հարկ եղածը կ'անէ Ահարոնեանի ազատման համար։ Բերարը ինձնից ուզում էր տեղեկութիւններ Ահարոնեանի վիճակի մասին. ինձ մէկը (մի հայ) այստեղ պատմել էր որ իբր ինք կարդացել է՝ Ահարոնեանը, Մելիք Ազարեան եւ մի-երկուսը աքսոր են ուղարկուել մի քաղաք Նովիչէրքէզքի մէջ։ Այդպէս էլ ասացի Բերարին։ Վաղը կամ միւս օր առաւօտ անպատճառ կը գնամ իրա մօտ խօսելու համար նրա հետ այդ մասին։ Արդէն նա ինձ խնդրեց որ հանդիպեմ իրան մի անգամ էլ նախքան մեկնելս։

Կարծեմ մեկնելս կը լինի հաւիւ մի շաբաթից։ Քիյառը[168] մի բաւական հեռու գիւղում է։ Եթէ նա չէ գալու Պարիզ, գուցէ ես տեսնուել գնամ այնտեղ։

Շատ լաւ բարեւներով
ՀՐԱՉԵԱՑ ՄԱՐԱԼ

168.- Հիմնադիր-խմբագրապետ Pro-Armenia-ի հայասէր եւ Դաշնակցութեան մօտիկ գործակից անձնաւորութիւն:

Մատեան թիւ 55

Գ 3.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ

JAURES – HUMANITE AURORE ACTION MATIN

JOURNAL PETITE REPUBLIQUE JOURNAL DU SOIR

ECHORI FIGARO TEMPS

Օգոստոս, 1909

Colonie arménienne Berlin reçoit nouvelle suivante de Tiflis

Aharonian, recteur Académie Tiflis, écrivain arménien le plus populaire,enfermé depuis cinq mois, est actuellement prison Bakou, dans état santé alarmant. En dépit sollicitation Anatole France, Victor Bérard, impossible obtenir du gouvernement caucasien libération provisoire malade, afin soigner tuberculose intestinale progressant rapidement qui met en cause sérieusement vie écrivain. Certains d'autres écrivains arméniens emprisonnés depuis un an attendent encore jugement. Leur crime est avoir repoussé 1905 en lutte armée mouvement vendéen tartare, dirigé contre élément arménien. Le sort prisonniers arméniens est confié fameux Lyjine, type ancien régime, fonctionnaire sans scrupule, accusé même par hautes sphères de menées provocatrices. Voilà comment se fait apaisement annoncé par récentes dépêches presse européenne.

[REDACTION DU DROSCHAK]

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Օգոստոս 1909

Պերլինի հայ գաղութը հետեւեալ լուրը կը ստանայ Թիֆլիսէն.–

Ահարոնեան, Թիֆլիսի Ճեմարանի տեսուչ, ամէնէն ժողովրդական հայ գրողը, բանտարկուած հինգ ամիսներէ ի վեր, այժմ կը գտնուի Պաքուի բանտը՝ առողջական տագնապալի վիճակի մէջ: Հակառակ Անատոլ Ֆրանսի, Վիկտոր Պերարի թախանձանքներուն, անկարելի եղաւ ձեռք բերել կովկասեան կառավարութենէն հիւանդին առժամանակեայ ազատ արձակումը, դարմանելու համար հիւանդին արագօրէն զարգացող աղիքային թոքախտը, որ լուրջ վտանգ է գրագէտի կեանքին համար: Հարիւրաւոր ուրիշ մտաւորականներ, տարիէ մը ի վեր բանտարկուած, կը սպասեն իրենց դատավարութեան: Իրենց յանցանքն է,– զինեալ պայքարով ետ մղած ըլլալ հայ տարրին դէմ ուղղուած թաթարական հակայեղափոխական շարժումը: Հայ բանտարկեալներու ճակատագիրը վստահուած է համբաւաւոր Լրժինին, նախկին վարչակարգի տիպարի մը, անխիղճ պաշտօնեայ, բարձր շրջանակներու մէջ իսկ ամբաստանուած իր գրգռիչ սադրանքներուն համար:

Ահա թէ ինչպէս կ՚իրականանայ այս օրերուն եւրոպական մամուլի մէջ ծանուցուած խաղաղեցումը:

[ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի]

Մատեան 92, էջ 134-135

Գ 4.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԺԱՆ ԺՕՐԷՍԻՆ

1909 le 31 août

Cher citoyen Jaurès,

Nous vous prions de bien vouloir faire insérer notre télégramme dans "L'Humanité", et, si possible, élever votre voix, après Anatole France, afin de sauver notre ami Aharonian que vous avez connu et dont la disparition serait une perte cruelle pour notre petit peuple. C'est une repression sauvage qui nous mène aux temps de Galitzine. Toute la fleur de notre jeunesse est en ce moment dans les prisons et le tribunal martial va sévir. C'est la pacification de l'Arménie russe, après la pacification de la Russie proprement dite. Notre jeunesse est considérée – à tort ou à raison – comme l'avant-garde du mouvement émancipateur au Caucase et les pays limitrophes, en Turquie et en Perse. De là ces repressions systématiques.

En ce moment difficile, nous venons encore, citoyen Jaurès, demander votre puissant concours qui ne nous a pas manqué dans le passé et dont nous vous remercions sincèrement.

Salutations fraternelles.

REDACTION DU DROSCHAK

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

1909, 31 *Օգոստոս*

Սիրելի քաղաքացի Ժօրէս,[169]

Կը խնդրենք ձեզմէ, որ հաճիք «Իւմանիթէ»ի մէջ հրատարակել մեր հեռագիրը եւ, եթէ կարելի է, Անատոլ Ֆրանսէն ետք, ձեր ձայնը բարձրացնել՝ փրկելու համար մեր բարեկամ Ահարոնեանը, զոր ճանչցած էք, եւ որուն անհետացումը սոսկալի կորուստ մը պիտի ըլլար մեր փոքր ժողովուրդին համար։ Վայրագ ճնշում մըն է, որ մեզի կը յիշեցնէ Գալիցինի ժամանակները։ Մեր երիտասարդութեան ամբողջ ընտրանին է, որ այս պահուն կը գտնուի բանտերուն մէջ, եւ պատերազմական ատեանը պիտի պատժէ զայն խստագոյնս։ Ասիկա խաղաղեցումն է Ռուսահայաստանի, բուն Ռուսաստանի խաղաղեցումէն ետք։ Մեր երիտասարդութիւնը, յիրաւի կամ յանիրաւի, կը նկատուի որպէս յառաջապահը ազատագրական շարժման Կովկասի եւ յարակից երկիրներու՝ Թուրքիոյ եւ Պարսկաստանի մէջ։ Այդ պատճառաւ ալ՝ սիստեմաթիկ այս ճնշամիջոցները։

Դժուարին այս պահուն անգամ մը եւս կու գանք խնդրելու, քաղաքացի Ժօրէս, ձեր հզօր աջակցութիւնը, զոր անցեալին չէք զլացած մեզի եւ որուն համար անկեղծօրէն շնորհակալ ենք։

Եղբայրական ողջոյններով՝

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

169.- Ժան Ժօրէս, Ֆրանսայի ընկերվարական կուսակցութեան հանրածանօթ ղեկավար, տեսաբան եւ «Իւմանիթէ» թերթի խմբագրապետ:

Մատեան 92, էջ 136-137

Գ 5.– Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԷՆ JOURNAL DE GENÈVE-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Rédaction du Journal de Genève

Monsieur le Rédacteur,

Nous vous serons très reconnaissant de publier la note suivante:

L'écrivain populaire arménien, Aharonian, qui est en même temps Recteur de l'académie arménienne de Tiflis vient d'être transféré à Novotcherkask pour être traduit devant le tribunal martial. Enfermé depuis cinq mois, traîné de ville en ville, de prison en prison, Aharonian contracta la tuberculose qui met en danger sa vie. Le seul crime d'Aharonian contre le gouvernement russe consiste d'avoir présenté les griefs des arméniens de la Turquie au Congrès de la Haye en 1907 au président Mr. Nélidoff. Malgré l'intervention d'Anatole France, Victor Bérard et autres éminents français, il a été impossible d'obtenir la libération provisoire afin de soigner sa maladie.

Ces faits causent une douloureuse émotion parmi les arméniens de toute la Russie. Environ 400 autres arméniens de toutes classes, pour la plupart intellectuels, instituteurs, écrivains, médecins, sont jetés, depuis bientôt une année, dans les prisons du Caucase, attendant leur jugement. Un procès monstre se prépare. Leur crime est d'avoir repoussé, en lutte armée, le mouvement vendéen tartare de 1905, dirigé contre l'élément arménien.

BUREAU DE LA FEDERATION ARMENIENNE

Le 31 août 1909
Genève

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Journal de Genève-*ի խմբագրութեան*

Պարոն Խմբագիր,

Շատ շնորհակալ պիտի ըլլանք եթէ հրատարակէք հետեւեալ գրութիւնը.–

Սիրուած հայ գրող Ահարոնեան, որ միեւնոյն ատեն տեսուչն է Թիֆլիսի հայկական ճեմարանին, տեղափոխուած է Նովոչերկասկ՝ պատերազմական ատեանին կողմէ դատուելու համար։ Բանտարկուած հինգ ամիսներէ ի վեր, քաշկռտուած՝ քաղաքէ քաղաք, բանտէ բանտ, Ահարոնեան վարակուած է թոքախտով, ինչ որ կը վտանգէ անոր կեանքը։ Ահարոնեանի [գործած] միակ ոճիրը Ռուսիոյ կառավարութեան դէմ՝ այն է, որ 1907ին Լահէյի կոնգրէսին, նախագահ Պր. Նելիտովին ներկայացուցած է թրքահայոց գանգատները իրենց կրած տառապանքներուն համար։ Հակառակ Անատոլ Ֆրանսի, Վիկտոր Պերարի եւ այլ երեւելի ֆրանսացիներու միջամտութեան, անկարելի եղաւ ստանալ անոր ժամանակաւոր ազատ արձակումը՝ հիւանդութիւնը դարմանելու նպատակով։

Այս եղելութիւնները ցաւագին յուզում կ'առաջացնեն Ռուսիոյ բովանդակ հայութեան մէջ։ Շուրջ 400 ուրիշ հայեր, ամէն դասակարգի պատկանող, մեծ մասամբ մտաւորականներ, գրողներ, բժիշկներ, ահա գրեթէ տարիէ մը ի վեր նետուած են կովկասի բանտերը եւ կը սպասեն դատուելու։ Կը պատրաստուի ահաւոր դատավարութիւն մը։ Իրենց [գործած] ոճիրը այն է, որ թաթարներու կողմէ 1905 թուականին հայ տարրին դէմ ուղղուած հակա-յեղափոխական շարժումը ետ են մղած զինեալ պայքարի ճամբով։

Հ. Բ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ

31 *Օգոստոս* 1909
Ժընեւ

Փաստ. 1274-10

Գ 6.– ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՆԵԼԻՏՈՎԻՆ

Genève, 8 mars 1910

Très honoré Monsieur,

Vous vous rappelez qu'à la veille de votre départ pour la Russie, je me suis présenté à Vous à Paris, Vous priant de bien vouloir faire une démarche auprès de M. Stolypine en faveur de l'écrivain arménien Aharonian (gravement malade, tuberculeux) et des autres prisonniers arméniens qui au nombre d'une centaine expient leur faute "d'avoir en 1905 repoussé" l'assaut de la populace musulmane, en Transcaucasie.

Je suppose qu'il Vous a été difficile, pendant le court espace du temps, de saisir un moment propice afin d'en parler à notre gouvernement. Dans ce cas, ne voudriez-vous, très honoré Monsieur, Vous donner la peine d'écrire un mot à M. Stolypine, qui, nous en sommes sûrs, accéderait facilement à Votre demande,– sous la fraîche et agréable impression de Votre visite. Vous pourriez ainsi sauver des vies précieuses qui autrement sont vouées à la Sibérie et aux travaux forcés.

Je rappelle qu'Avétis Aharonian, écrivain populaire d'Arménie et Recteur de l'Académie arménienne de Tiflis, est en ce moment avec les autres prisonniers arméniens à Novotcherkask (Caucase), dans un état de santé précaire. Ils sont livrés aux caprices d'une créature d'ancien régime, du procureur Lygine, un arménophobe intransigeant dont je vous ai parlé et dont vous avez pris des notes.

Je tiens à vous informer qu'on est en train de faire d'autres démarches à Petersbourg, dans le même sens mais il n'y a que Votre autorité qui peut déterminer M. Stolypine à accomplir un acte de justice et d'humanité.

Très honoré Monsieur, Vous avez fait beacoup pour la cause de l'Arménie et c'est ce fait qui nous encourage, mes compatriotes de Tiflis et moi, de solliciter encore une fois Votre généreuse intervention.

Veuillez agréer l'assurance
de ma plus haute considération.
M. WARANDIAN

(Անպատճառ, խնդրեմ, ղրկել. եւ իմ ստորագրութեամբ. հասցէ դրէք Droschak)

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ժընեւ, 8 *մարտ* 1910

Մեծայարգ Պարոն,

Կը յիշէք որ Ձեր Ռուսիա մեկնելու նախօրէին, ներկայացայ Ձեզի Փարիզ, խնդրելով Ձեզմէ որ բարեհաճէիք դիմում մը կատարել Պ. Ստոլիպինին[170] *ի նպաստ հայ գրող Ահարոնեանին (ծանրօրէն հիւանդ, թոքախտ) եւ հայ միւս բանտարկեալներուն, որոնք, շուրջ հարիւրեակ մը, կը քաւեն իրենց մեղքը՝ 1905-ին Անդրկովկասի մէջ մահմետական խուժանին գրոհը ետ մղած ըլլալու յանցանքին համար։*

Կ'ենթադրեմ որ Ձեզի համար դժուար եղաւ այդքան կարճ միջոցի մը ընթացքին պատեհ առիթը գտնել այդ մասին խօսելու մեր կառավարութեան։ Այս պարագային պիտի չուզէի՞ք արդեօք, Մեծայարգ Պարոն, նեղութիւնը յանձն առնել գրելու Պ. Ստոլիպինին, որ, վստահ ենք, Ձեր այցելութեան թարմ եւ հաճելի տպաւորութեան տակ՝ դիւրաւ պիտի ընթացք տար ձեր դիմումին։ Այս ձեւով դուք պիտի կարենայիք փրկել թանկագին կեանքեր, որոնք այլապէս դատապարտուած են Սիպերիա աքսորի եւ տաժանակիր աշխատանքի։

Կը յիշեցնեմ որ Աւետիս Ահարոնեան, Հայաստանի ժողովրդական գրողը եւ Թիֆլիսի հայ ճեմարանին տեսուչը, բազմաթիւ ուրիշ հայ բանտարկեալներու հետ կը գտնուի այս պահուն Նովոչերկասկ (Կովկաս), առողջական անստոյգ վիճակի մէջ։ Բոլոր [բանտարկեալները] յանձնուած են քմահաճոյքին հին վարչակարգի արարածի մը – դատախազ Լըժինի –, անհաշտ հայատեաց մը, որուն մասին արդէն խօսած եմ Ձեզի եւ Դուք նոթագրած էք։

Կը փափաքիմ տեղեկացնել Ձեզի, որ նոյնիմաստ ուրիշ դիմումներ կատարելու վրայ ենք Պետերսբուրգ, բայց միայն Ձեր հեղինակութիւնն է, որ կրնայ վճռական դեր ունենալ պ. Ստոլիպինը մղելու արդարութեան եւ մարդկայնութեան ուղղութեամբ քայլ մը առնելու։

Մեծայարգ պարոն, Դուք շատ բան ըրած էք Հայաստանի դատին համար եւ այս իրողութիւնն է, որ կը քաջալերէ մեզ՝ Թիֆլիսի հայրենակիցներս եւ զիս, անգամ մը եւս խնդրելու Ձեր վեհանձն միջնորդութիւնը։

Հաճեցէք ընդունիլ
խորին յարգանացս հաւաստիքը
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

170.- 1906էն ի վեր Ռուսիոյ վարչապետ եւ ներքին գործոց նախարար։

Մատեան թիւ 92, էջ 257-260

Գ 7.– «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

20 décembre 1910

Պրոֆ. Վիրճիլիո Վերդարո, Վենետիկ,

"Avanti", "L'Humanité",
"Frankfurter Zeitung", "Przedswit"

Cher citoyen,

Le procès qui va avoir lieu à Novotcherkask sera un des plus grandioses. Il est intenté contre le parti socialiste et révolutionnaire arménien "Daschnakzoutioun". Il y a en ce moment environ 200 détenus politiques à la prison de Novotcherkask. Tous arméniens. Ils sont tous soupçonnés d'appartenir à notre organisation (Daschnakzoutioun). C'est toute la fleur de la société arménienne, des écrivains, médecins, instituteurs et autres intellectuels.

Ils sont emprisonnés depuis deux ans.

Le parti "Daschnakzoutioun" est l'objet des poursuites acharnées de la part du gouvernement russe, parce que c'est un parti pour ainsi dire international. Il déploie son activité non seulement sur le Caucase, mais encore sur l'Arménie turque et persane. Il embrasse donc trois Etats. Et partout il a été le porte parole de la révolution.

C'est lui qui a repoussé en 1905-6 le formidable assaut des hordes tartares, dirigé contre l'existence même de la nation arménienne; cet assaut était préparé, organisé par les policiers, gouverneurs du tzar.

Le parti "Daschnakzoutioun" resta vainqueur dans les années de la plus redoutable contre-révolution. Et le tzarisme étant à son tour vainqueur aujourd'hui, tire sa vengeance de toute la nation arménienne. Parmi les prisonniers se trouvent:

1) Aharonian, l'écrivain le plus populaire d'Arménie

2) Koukounian, un des plus vaillants révolutionnaires qui a déjà fait 15 années de Sibérie (il était amnistié); on l'a de nouveau arrêté.

L'écrivain A. Aharonian a contracté la tuberculose dans la prison. Son état est des plus graves.

D'éminents écrivains français et des hommes politiques – Anatole France, Victor Bérard, d'Estournelles de Constans se sont intervenus en sa faveur et ont demandé au gouvernement de Petersbourg de relâcher Aharonian au moins provisoirement, sous caution afin qu'il eût la possibilité de soigner sa maladie.

Toutes ces interventions demeurèrent sans résultat.

Le procès de Novotcherkask est présidé et dirigé par Mr. Lyjine, un triste créature de l'ancien régime.

* * *

Voici les quelques renseignements sur ce grand procès. Ayez l'obligence de nous envoyer le numéro de "l'Avanti", en cas de l'impression.

Salutations fraternelles
REDACTION "DROSCHAK"

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Սիրելի քաղաքացի,

Նովոչերկասկի մէջ տեղի ունենալիք դատավարութիւնը պիտի ըլլայ ամէնէն չռնդալիցներէն մէկը[103]։ Ան բացուած է հայ ընկերվարական եւ յեղափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութեան դէմ։ Այս պահուն շուրջ 200 հայ քաղաքական կալանաւորներ կան Նովոչերկասկի բանտին մէջ։ Բոլորը հայ։ Բոլորին դէմ եղած մեղադրանքը՝ մեր կազմակերպութեան (Դաշնակցութիւն) պատկանիլն է։ Անոնք [կը կազմեն] ընտրանին հայկ. հասարակութեան,– գրողներ, բժիշկներ, ուսուցիչներ եւ ուրիշ մտաւորականներ։

Բանտարկուած են երկու տարիէ ի վեր։

Ռուսական կառավարութեան կողմէ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը առարկայ է կատաղի հալածանքներու, որովհետեւ ան, այսպէս ասած, միջազգային կուսակցութիւն մըն է։ Անոր գործունէութիւնը կը տարածուի ոչ միայն Կովկասի, այլեւ Թրքահայաստանի եւ Պարսկահայաստանի վրայ։ Ուրեմն կը տարածուի երեք պետութիւններու սահմաններէն ներս։ Եւ ամէնուր ան եղաւ բանբերը յեղափոխութեան։

Ան է՝ որ 1905-6ին ետ մղեց թաթար հորդաներու սոսկալի գրոհը, որ ուղղուած էր ընդդէմ հայ ազգի գոյութեանն իսկ. այս յարձակումը պատրաստուած եւ կազմակերպուած էր ցարական ոստիկաններուն եւ կառավարիչներուն կողմէ։

Հակայեղափոխութեան ամէնէն ահաւոր տարիներուն, Դաշնակցութիւնը մնաց յաղթական։ Եւ ցարիզմը, իր կարգին յաղթական այսօր, վրէժխնդիր է ամբողջ հայութեան դէմ։

Բանտարկեալներուն մէջ կը գտնուին.

1) Ահարոնեան, Հայաստանի ամէնէն ժողովրդականութիւն [վայելող] գրողը։

2) Կուկունեան, մէկը ամէնէն քաջ յեղափոխականներէն, որ արդէն 15 տարի [աքսորի] մէջ էր Սիպերիա։ Ներման արժանացած՝ վերստին ձերբակալեցին զինք։

Գրող Ա. Ահարոնեան թոքախտէ վարակուեցաւ բանտին մէջ։ Իր վիճակը շատ ծանր է։ Ֆրանսացի ականաւոր գրողներ եւ քաղաքական անձնաւորութիւններ,– Անատոլ Ֆրանս, Վիկտոր Պերար, Տ'Էստուրնէլ դը Կոնստան, միջամտեցին ի նպաստ իրեն եւ Պետերբուրգի կառավարութիւնէն պահանջեցին, գէթ առժամանակեայ եւ երաշխաւորութեամբ, Ահարոնեանի ազատ արձակումը, որպէսզի հնարաւորութիւն ունենայ դարմանուելու։

Բոլոր այս միջամտութիւնները անցան ապարդիւն։

Նովոչերկասկի դատավարութեան նախագահն ու ղեկավարը Լրժինն է, տխրահռչակ մէկ արարածը հին վարչակարգին։

Ահա կարգ մը տեղեկութիւններ այս մեծ դատավարութեան մասին։ Հաճեցէք, հրատարակելու պարագային, ուղարկել մեզի «Avanti»ի մէկ օրինակը։

Եղբայրական ողջոյններով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

Փաստ. 59-5

Գ 8.– POUR AVETIS AHARONIAN
(ՎԱՄՆ ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ)

Ստորեւ Ա. Ահարոնեանի ազատ արձակման պահանջով, ֆրանսացի անուանի գրող Անատոլ Ֆրանսի գլխաւորութեամբ՝ խումբ մը եւրոպացի հանրածանօթ մտաւորականներու հրատարակած (տպագիր) կոչ-յայտարարութիւնը:

Avétis Aharonian est aujourd'hui l'écrivain le plus justement estimé de l'Arménie russe et turque.

Né à Ygdir (gouvernement d'Erivan) en 1866, il a consacré toute sa vie l'étude et à l'éducation de son peuple. Il a été le poète de la tragédie arménienne durant les massacres hamidiens. Dans ses contes, ses romans et ses drames, *Bacho, Rachid, la Vallée des Larmes, le Silence, les Mères, la Destinée, les Kurdes, l'Oiseau Noir, le Trouvère*, etc., etc., il a pleuré les malheurs et prédit la résurrection de sa race. Il a été traduit en russe, en bulgare, en allemand et en anglais. Le patriarche de tous les Arméniens l'a délégué en 1907 au Congrès de la Haye pour rappeler aux puissances les engagements internationaux de Berlin touchant l'Arménie turque: il fut alors reçu par le président du Congrès, l'ambassadeur russe, M. de Nélidof, dont l'accueil bienveillant et les paroles sympathiques le consolèrent un peu du refus des autres plénipotentiaires. Au retour, la confiance de sa nation l'appelait au rectorat du Séminaire Nersissian, le grand collège supérieur de Tiflis.

Trois mois après, il était arrêté, transféré à Bakou, puis à Rostof-sur-le Don, finalement emprisonné à Novotcherkask et impliqué dans le plus grand procès qu'ait encore instruit la répression de M. Stolypine, le procès du parti arménien *Daschnakzoutioun* (La Fédération): 500 accusés, 1.500 témoins; l'élite arménienne du Caucase, professeurs, médecins, écrivains, tout entière soupçonnée; 104 arrestations, que complètent chaque jour des arrestations nouvelles; **deux ans de prison préventive** pour un jugement qui se fait toujours attendre.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Աւետիս Ահարոնեան ներկայիս արդարօրէն ամէնէն գնահատուած գրողն է Ռուսահայաստանի եւ Թրքահայաստանի մէջ։

Ծնած է Իգտիր (Երեւանի նահանգ) 1866ին, ամբողջ կեանքը նուիրած է ան իր ժողովուրդի ուսման եւ դաստիարակութեան [գործին]։ Եղած է հայկական ողբերգութեան բանաստեղծը՝ համիտեան կոտորածներու ժամանակ։ Իր պատմուածքներուն, վէպերուն եւ թատերակներուն մէջ,– Բաշօ, Ռաշիդ, Արցունքի հովիտը, Լռութիւնը, Մայրերը, Ճակատագիրը, Քիւրդերը, Սեւ Թռչունը, Աշուղը եւայլն եւայլն – ան կ'ողբայ իր ցեղին դժբախտութիւնները եւ կը մարգարէանայ անոր յարութիւնը։ Թարգմանուած է ռուսերէն, պուլկարերէն, գերմաներէն եւ անգլերէն։ 1907ին Ամենայն հայոց կաթողիկոսը իբրեւ պատուիրակ զինք առաքած է Լահէյի խորհրդաժողովին՝ [մեծ] պետութեանց յիշեցնելու համար Թրքահայաստանի նկատմամբ Պերլինի [դաշնագրին] միջազգային յանձնառութիւնները։ Այդ առիթով ան ընդունուեցաւ խորհրդաժողովի նախագահին՝ ռուս դեսպան պարոն Նելիտովի կողմէ, որուն բարեացակամ ընդունելութիւնը եւ համակրական խօսքերը, [յարաբերաբար] ուրիշ [պետութեանց] լիազօրներու մերժումին, քիչ մը սփոփեցին զինք։ Վերադարձին, ազգին վստահութեամբ ան կոչուեցաւ Ներսիսեան մեծ ճեմարանին տեսչութեան պաշտօնին։

Երեք ամիս ետք ձերբակալուեցաւ, փոխադրուեցաւ Պաքու, ապա Տոնի-Ռոստով եւ վերջապէս Նովոչերկասկ, ուր ներգրաւուեցաւ այն մեծագոյն դատավարութեան մէջ, զոր պարոն Մտոլոպինի ճնշիչ [վարչակարգը] յորինած ըլլայ,– Հայկական «Դաշնակցութիւն» կուսակցութեան դատը.– 500 մեղադրեալներ, 1500 վկաներ. Կովկասի հայութեան ընտրանին,– ուսուցիչներ, բժիշկներ, գրողներ, բոլորը կասկածի տակ. 104 ձերբակալութիւններով, որոնց թիւը կ'աւելնայ ամէն օր նորանոր ձերբակալութիւններով. երկու տարուան նախադատ բանտարկութիւն՝ դատավարութեան մը համար, որ միշտ կը ձգուի։

Sur le *Daschnakzoutioun*, pèsent trois ordres de griefs:

1) En 1903, sous le régime Plehwe, lorsqu'un oukaze confisqua les biens des églises et des écoles arméniennes, la Fédération a organisé une protestation populaire, qui fut encouragé par le patriarche de tous les Arméniens et, finalement, consacrée par le tsar Nicolas; en 1905, un autre oukaze rendait aux Arméniens leurs écoles et leurs biens ecclésiastiques.

2) En 1905-1906, après les désastres de Mandchourie, lorsque les hordes tartares se jetèrent sur la population arménienne, la "Fédération" organisa la défense que les autotités russes ne pouvaient ou ne voulaient assurer: durant une année et demie, ce fut elle qui sauva la civilisation du Caucase.

3) Dans cette lutte, tout un parti de *Tchinovniks* (bas et hauts fonctionnaires russes) ayant par cupidité sympathisé avec l'insurrection musulmane, la Fédération les a violemment supprimés.

Le véritable grief est que la Fédération, depuis la chute du régime hamidien et la révolution persane, est devenue à Constantinople, dans l'Arménie Turque et en Perse le meilleur appui des Jeunes-Turcs et des Jeunes-Persans.

*
* *

En tout cela, quelle fut la part d'Aharonian? Quelles accusations précises a-t-on pu formuler contre lui?

1) Il a publié des contes dans le journal de la Fédération, le *Droschak*: ces contes traitent des persécutions hamidiennes.

2) Il est allé au Congrès de la Haye porter les doléances de sa nation.

Mis au courant par ceux qui avaient eu l'honneur d'accompagner à la Haye la délégation arménienne, M. de Nélidof avait témoigné la plus vive surprise d'une arrestation ainsi motivée. Il savait que la délégation n'avait jamais parlé que des Arméniens de Turquie, nommément mentionnés au traité de Berlin. Avec sa courtoisie et son ordinaire bonté, il avait promis d'intervenir en faveur d'Aharonian. Il est mort avant la libération du malheureux, *dont l'état de santé alarme aujourd'hui*

Դաշնակցութեան *վրայ կը ծանրանան երեք կարգի մեղքեր։*

1.- 1903*ին, Պլեւէի վարչակարգի օրով, երբ հրամանագրով մը բռնագրաւուեցան հայ եկեղեցւոյ եւ դպրոցներու գոյքերը, Դաշնակցութիւնը կազմակերպեց ժողովրդական բողոք մը, որ քաջալերութիւն գտաւ Ամենայն հայոց կաթողիկոսէն եւ, ի վերջոյ վաւերացուեցաւ Նիկոլա ցարին կողմէ. 1905ին ուրիշ հրամանագիր մը հայերուն կը վերադարձնէր իրենց դպրոցներն ու եկեղեցական գոյքերը։*

2.- 1905-1906*ին, Մանչուրիոյ աղէտներէն ետք, երբ թաթար հորդաները յարձակեցան հայ ազգաբնակչութեան վրայ, Դաշնակցութիւն կազմակերպեց [այն] պաշտպանութիւնը, զոր ռուսական իշխանութիւնները չէին կրնար կամ չէին ուզեր ապահովել. ամբողջ տարիուկէս ա՛ն է որ փրկեց Կովկասի քաղաքակրթութիւնը։*

3.- *Այս պայքարի ընթացքին ամբողջ հատուած մը* չինովնիկներու (*ստորադաս եւ բարձրաստիճան ռուս պաշտօնեաներ*), *որոնք ընչաքաղց նկատումով համակրանք ցոյց տուած էին մահմեդական ըմբոստութեան,— ինկան Դաշնակցութեան ուժգին հարուածներուն տակ։*

Իսկական մեղադրանքը այն է, որ համիտեան վարչակարգի անկումէն եւ պարսկական յեղափոխութենէն ետք, Կոստանդնուպոլսոյ, Թրքահայաստանի եւ Պարսկաստանի մէջ Դաշնակցութիւնը դարձած է մեծագոյն նեցուկը Երիտասարդ Թուրքերուն եւ Երիտասարդ պարսիկներուն։

*
* *

Այս բոլորին մէջ, ի՞նչ եղած է Ահարոնեանի դերը, ճշգրտօրէն ի՞նչ մեղադրանք կարելի եղաւ բանաձեւել իրեն դէմ.—

1.- *Պատմուածքներ հրատարակած է Դաշնակցութեան թերթին՝* Դրօշակի *մէջ.— Այս պատմուածքներուն մէջ կը խօսուի համիտեան հալածանքներու մասին։*

2.- *Լահէյի խորհրդաժողովին գացած է իր ազգին գանգատները ներկայացնելու։*

Պարոն Նելիտով, Լահէյի մէջ հայկական պատուիրակութեան ընկերանալու պատիւը ունեցողներու կողմէ իրազեկ դառնալէ ետք [հարցին], զարմացած էր մեծապէս նման չարժառիթով կատարուած ձերբակալութեան մը համար։ Ան գիտէր որ պատուիրակութիւնը խօսած էր միայն Թրքահայերու մասին, յականէ անուանէ յիշատակուած Պերլինի դաշնագրին մէջ։ Ազնըւութեամբ եւ իրեն յատուկ բարեացակամութեամբ, ան խոստացած էր միջամտել ի նպաստ Ահարոնեանի։ Մեռաւ [Նելիտով] նախքան ազատ արձակումը դժբախտ

toute la nation arménienne.

C'est dans la prison qu'il a contracté la tuberculose. Soumis au régime des forçats, enfermé dans une cellule infecte avec une quinzaine d'autres détenus, couchés tous pêle-mêle sur le plancher, sans lit, sans nourriture plus ou moins tolérable, Aharonian est poussé à un extrême désespoir; et suivant les derniers communiqués des journaux de Constantinople, son état est des plus graves.

Les écrivains et publicistes français, qui ont obtenu un si beau succès dans leur campagne d'Agram, laisseront-ils passer l'occasion de sauver un confrère? M. Isvolski refuserait-il de renouveler à Pétersbourg les justes demandes de son prédécesseur?

Anatole FRANCE

Ernest LAVISSE

Victor BÉRARD

Francis de PRESSENSÉ,
Président de la Ligue
des Droits de l'Homme.

Georges GAULIS

P. QUILLARD
Vice-Président de la Ligue
des Droits de l'Homme.

Félicien CHALLAYE

A.-F. HEROLD,
Membre du Comité Central
de Ligue des Droits de l'Homme.

STEINLEN

Paris, le 12 janvier 1911

մարդուն, որուն առողջական վիճակով այսօր ահազանգի մատնուած է ամբողջ հայ ազգը։

Բանտին մէջ է որ ան վարակուեցաւ թոքախտով։ Ենթակայ քիապարտներու [յատուկ] դրութեան, փակուած զզուելի խուցի մը մէջ՝ շուրջ 15 այլ կալանաւորներու հետ, բոլորը խառն ի խուռն պառկած տախտակամածին, առանց մահճակալի, առանց քիչ թէ շատ տանելի սնունդի, Ահարոնեան կը գտնուի ծայրայեղ յուսահատութեան մէջ. եւ, ըստ Կոստանդնուպոլսոյ լրագիրներու վերջին տեղեկութիւններուն, չափազանց ծանրակշիռ է իր վիճակը։

Ֆրանսացի գրողներն ու հրապարակագիրները, որոնք այնքան գեղեցիկ յաղթանակ մը տարին Ագրամի[170ա] [զոհերուն] *համար [մղած] իրենց պայքարին մէջ, պիտի փախցնե՞ն արդեօք գրչի եղբայր մը փրկելու [այս] առիթը։ Պ[արոն] Իզվոլսկի պիտի մերժէ՞ վերանորոգելու Փեթերսպուրկի մօտ՝ իր նախորդին արդար պահանջները։*

ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ

ԷՌՆԵՍՏ ԼԱՒԻՍ

ՎԻԿՏՈՐ ՊԵՌԱՐ

ՖՐԱՆՍԻՍ ԴԷ ՊՐԵՍԱՆՍԷ
Նախագահ Մարդկային
Իրաւանց Լիկայի

ԺՈՐԺ ԳՕԼԻՍ

ՊԻԵՌ ՔՎԻՅԱՌ
Փոխ-նախագահ Մարդկային
Իրաւանց Լիկայի

ՖԵԼԻՍԻԷՆ ՇԱԼԼԷՅ

Ա.-Ֆ. ՀԵՐՈԼԴ
Անդամ Մարդկային Իրաւանց
Լիկայի Կեդր. Կոմիտէի

ՍՏԵՆԼԷՅՆ

Փարիզ, 12 Յունուար 1911

170ա.- Գերմանացիներու կողմէ տրուած անուն ներկայի Խրուաթիոյ մայրաքաղաք Զաղրէպի: 1909 թ.ի Ագրամի դատավարութեան ընթացքին աւստրիական կառավարութիւնը փորձած էր կեղծուած փաստաթուղթերով ապացուցանել, որ Սերպիան կը դաւադրէր աւստրօ-հունգարական կայրսութեան դէմ:

Մատեան թիւ 55

Գ 9.– ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ (Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

Փետրուար 1911

ՀԵՌԱԳԻՐ ՊԱՐԻԶԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՆ

Aharonian, écrivain populaire arménien, malade, en faveur duquel écrivains français intervinrent vient d'être libéré provisoirement contre paiement 50.000 [francs], ayant subi 2 années prison préventive.

Certaines d'autres intellectuels arméniens soumis depuis 3 ans atroce régime prisons caucasiennes, attendent toujours leur jugement. Quelques uns devenus fous.

Droschak

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Սիրուած գրող Ահարոնեան, հիւանդ, որուն ի նպաստ ֆրանսացի գրողներ միջամտեցին, երկու տարի նախադատ կալանաւորման ենթարկուելէ ետք, ժամանակաւոր կերպով ազատ արձակուած է 50.000 [ֆրանքի] երաշխաւորութեամբ։

Հարիւրաւոր ուրիշ հայ մտաւորականներ, որոնք 3 տարիէ ի վեր կովկասեան բանտերու մէջ կը գտնուին ահաւոր պայմաններու տակ, կը սպասեն միշտ իրենց դատուելուն։ Ոմանք խելագարած են։

«ԴՐՕՇԱԿ»

ԱՅԼ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ[171]

Փետր. 1911

Paris Anatole France, Pressensé

Aharonian libéré provisoirement – remerciement émus pour votre généreuse intervention.

DROSCHAK

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Փարիզ, Անատոլ Ֆրանսին, Պրեսանսէին

Ահարոնեան առժամանակեայ ազատ արձակուած է։ Խորագոյց շնորհակալութիւն ձեր վեհանձն միջամտութեան համար։

«ԴՐՕՇԱԿ»

171.- Մօտաւորապէս նոյնիմաստ գրութիւններ եւ հեռագիրներ «Դրօշակ»ի խմբագրութիւնը Ահարոնեանի ազատ արձակման առթիւ ղրկած է Իմանիթէ, Օրոր, Ակսիոն, Մաթեն, Ժուռնալ, Փըթիթ Ռեփիւպլիք, Ժուռնալ տիւ Սուար, Էքոքի, Ֆիկարօ, Թան, Ժուռնալ տը Ժընեւ, Կազէթ տիւ Լօզան թերթերուն, ինչպէս նաեւ Ժան Ժորէսին, Անատոլ Ֆրանսին, Պրեսանսէին, Վիկտոր Պերարին, Ջիյառին: Կը նշուի նաեւ *«Նոյն առթիւ նամակներ Բերարին եւ Ջիյառին, նամակներ՝ Journal de Genève-ին եւ Gazette de Lauzanne-ին, որոնք տպել էին circulaire-ը* [շրջաբերականը]*»։*

Փաստ. 60-19

Գ 10.– «ԴՐՕՇԱԿ»Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՄԱՍԻՆ

A L'EUROPE

Un énorme scandale sans précédent – même dans les annales de la justice russe – vient de se révéler à Pétersbourg, au cours du procès monstre, intenté contre 159 arméniens, la plupart des intellectuels, accusés de faire partie de l'organisation "Daschnakzoutiun".

Ce procès politique, le plus grand dans l'histoire de la Russie, se déroule depuis deux mois à huis-clos, devant le Sénat qui, en raison de l'exceptionnelle gravité de l'affaire, s'est constitué en tribunal; les débats ont lieu en présence de l'élite du barreau russe et des centaines de témoins qui ont été transférés avec les 159 détenus du Caucase à la capitale.

Depuis quatre ans ces nombreux accusés – plus nombreux au début – ont subi dans les cachots du Caucase la prison préventive, en attendant leur jugement; tandis que l'instruction suivait son cours lent, désespérant, épuisant toute patience, jetant une dizaine de victimes dans les bras de la mort, de la phtisie ou de la folie.

Or, voici qu'après 4 années d'instruction, d'attente et de souffrances, à la veille du jugement, la défense constate avec horreur qu'un grand nombre de documents ont été faussés au cours de l'instruction, à laquelle présidait une créature de l'ancien régime, le nommé Lyjine. Les experts du Sénat, les sénateurs eux-mêmes, furent frappés, stupéfiés par l'énormité du scandale. D'anciennes dépositions des témoins ont été dénaturées, des signatures faussées, certaines pièces ont disparu, d'autres pièces ont été inventées... On compte une soixantaine de faux, commis par de louches agents de bureaucratie, dans le but évident de perdre à tout prix certains accusés et de donner plus de gravité à tout le procès.

Il serait long d'énumérer tous les faux. Mentionnons deux cas pour donner une idée approximative de ces monstrueuses falsifications. Ainsi, dans le procès-verbal, sous le texte d'accusation concernant le nommé

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒՐՈՊԱՅԻՆ

Ահաւոր գայթակղութիւն մը — աննախընթաց նոյնիսկ ռուսական արդարադատութեան տարեգրութեանց մէջ — տեղի կ'ունենայ Փեթերսպուրկի մէջ վիթխարի դատավարութեան մը ընթացքին, բացուած 159 հայերու դէմ, մեծ մասամբ մտաւորականներ ամբաստանուած «Դաշնակցութիւն» կազմակերպութեան պատկանելու [յանցանքով]։

Քաղաքական այս դատը, մեծագոյնը Ռուսիոյ պատմութեան մէջ, տեղի կ'ունենայ երկու ամիսէ ի վեր, դռնփակ, Մերակոյտին մէջ, որ գործին բացառիկ լրջութեան պատճառաւ վերածուեցաւ դատական ատեանի։ Վիճաբանութիւնները տեղի կ'ունենան՝ ներկայութեամբ ռուս փաստաբաններու ընտրանիին եւ հարիւրաւոր վկաներու, որոնք 159 կալանաւորներուն հետ Կովկասէն բերուեցան մայրաքաղաք։

Չորս տարիներէ ի վեր ամբաստանեալներու այս բազմութիւնը — նախապէս աւելի մեծաթիւ — Կովկասի զնտաններուն մէջ ենթարկուեցաւ նախադատական կալանքի՝ սպասելով դատավարութեան, մինչդեռ նախաքննութիւնը կ'ընթանար յուսահատեցուցիչ, ամէն համբերութիւն սպառեցնող դանդաղութեամբ, մահուան գիրկը նետելով տասնեակ մը հիւծախտաւորներ եւ խելագարուողներ։

Արդ, 4 տարիներու նախաքննութենէ, սպասումէ եւ տառապանքներէ ետք, պաշտպանութիւնը սարսափով կը հաստատէ որ փաստաթուղթերու մեծ թիւ մը կեղծուած է նախաքննութեան ընթացքին — որուն կը նախագահէր Լիժին անունով հին վարչակարգի արարած մը։ Մերակոյտի փորձագէտները եւ ծերակուտականները, իրենք, չանթահարուած, ապշած էին գայթակղութեան առաջ։ Այլափոխուած էին վկայութեանց նախկին արձանագրութիւնները՝ կեղծուած էին ստորագրութիւնները, ուրիշները՝ հնարուած...։ Կեղծուածներու թիւը կը հաշուեն շուրջ վաթսուն, իրագործուած դիւանակալութեան չիլ գործակալներու կողմէ, որոնց դիտաւորութիւնը եղած է ամէն գնով կորստեան մատնել կարգ մը ամբաստանեալներ եւ աւելի եւս ծանրակշիռ հանգամանք տալ ամբողջ դատավարութեան։

Երկար պիտի ըլլար թուել բոլոր կեղծիքները։ Նշենք երկու պարագայ՝ մօտաւոր գաղափար մը տալու համար այս հրէշային կեղծարարութեան մասին։ Այսպէս, Գէորգով կոչուածի ամբաստանագրին պաշտօնական

Guevorkov, figure la signature de l'adjoint du procureur du tribunal de Novotcherkask, Alexéevtzeff. La défense, soupçonnant le faux, fait appeler télégraphiquement le signataire. Arrivé à Pétersbourg, devant le tribunal, Alexéevtzeff déclare qu'il n'a pas signé le document et que c'était là une imitation de sa signature. Autre cas: il y a dans le même procès-verbal la déposition d'un sous-officier, Kerapian, toujours contre les accusés. La défense fait mander le sous-officier en question et ce dernier déclare catégoriquement qu'il n'a jamais fait de déposition, au'il n'a pas été interrogé.

Et ainsi de suite. Toutes ces machinations sont l'œuvre de Lyjine, ce jeune arriviste qui avait déjà acquis une triste célébrité, comme faussaire sans scrupule, lors du procès retentissant de la "République Novorosienne". (Une interpellation fut formulée à ce sujet à la Douma de l'Empire. Et, comme résultat... Lyjine obtint un grade plus élevé dans la hiérarchie judiciaire). C'est à lui que fut confié le sort du peuple arménien du Caucase, où il sévit durant quatre années, perquisitionnant dans tous les coins, remplissant les prisons, terrorisant la population paisible et préparant contre elle cet infâme dossier, ce monstrueux réquisitoire, appuyé sur des faux.

La presse indépendante de toute la Russie battit l'alarme. Le faussaire Lyjine – il n'est, certainement, pas le seul – fut contraint de donner sa démission, tandis que la défense réclame une punition exemplaire: la traduction de Lyjine devant le tribunal.

Qu'en résulte-t-il pour l'affaire de "haute trahison"? 159 détenus arméniens sont accusés d'avoir, comme membres du parti "Daschnakzoutioun", comploté contre l'intégrité de l'Empire, d'avoir poursuivi des visées séparatistes, des projets de restauration de l'Arménie indépendante, d'avoir organisé dans ce but une armée de 100.000 hommes, etc., etc. Or, tout cet absurde réquisitoire repose sur les données d'une instuction qui – comme le prouvent les révélations scandaleuses – est inique, grossièrement partiale, vicieuse d'un bout à l'autre. Devant ces forfaits de magistrature "moderne", la défense, à l'unanimité, déclara qu'il est impossible de continuer le procès et qu'une nouvelle instruction s'impose, quand bien même les victimes dussent attendre encore des mois ou des années dans leurs cellules.

Le tribunal, qui n'est dans le cas présent qu'une sec-

ատենագրութեան մէջ կ'երեւի Նովոչերկասկի ատեանի դատախազի օգնական Ալեքսէյեւցեւի ստորագրութիւնը։ Պաշտպանութիւնը, կասկածելով կեղծիքին, հեռագրով կանչել կու տայ ստորագրողը։ Փեթերսպուրկ հասնելով Ալեքսէյեւցեւ, դատարանին կը յայտարարէ, որ ինք ստորագրած չէ փաստաթուղթը եւ որ եղածը իր ստորագրութեան նմանակումն է։ Այլ պարագայ.— Միեւնոյն ատենագրութեան մէջ կայ, միշտ ամբաստանեալներուն դէմ՝ վկայութիւնը ենթասպայ Կերապետեանի։ Պաշտպանութիւնը բերել կու տայ խնդրոյ առարկայ ենթասպան, որ վճռական կերպով կը յայտարարէ, որ ինք վկայութիւն չէ տուած բնաւ եւ որ ինք հարցաքննուած չէ։

Եւ այսպէս շարունակաբար։ Բոլոր այս մեքենայութիւնները գործն են Լըժինի, այս երիտասարդ բախտախնդրին, որ իբրեւ անխիղճ կեղծարար տխրահռչակ դարձած էր արդէն «Նովորոսեան հանրապետութեան» շունդալից դատավարութեան ընթացքին։ (Այս խնդրով պետական Դումային մէջ հարցապնդում կատարուած էր։ Եւ, որպէս արդիւնք... Լըժին աւելի բարձր պաշտօն ստացաւ դատաւորական նուիրապետութեան մէջ)։ Իրե՛ն է, որ վստահուեցաւ ճակատագիրը Կովկասի հայութեան, ուր չորս տարիներէ ի վեր կը գործէ ան, խուզարկելով ամէն անկիւն, բանտերը լեցնելով, ահաբեկելով խաղաղ բնակչութիւնը եւ պատրաստելով անոր դէմ այս խայտառակ թղթածրարը, կեղծիքներով յօրինուած այս ճիւաղային ամբաստանագիրը։

Համայն Ռուսիոյ անկախ մամուլը ահազանգ հնչեցուց։ Կեղծարար Լըժինը — որոշապէս միակը չէ ան — հարկադրուեցաւ հրաժարական տալու, մինչդեռ պաշտպանութիւնը կը պահանջէ վճռական ու օրինակելի պատիժ մը,— դատի կանչել Լըժինը։

Ինչ կը վերաբերի «քրէական դաւաճանութեան»,— 159 հայ կալանաւորներ՝ իբրեւ անդամները «Դաշնակցութիւն» կազմակերպութեան՝ ամբաստանուած են կայսրութեան ամբողջականութեան դէմ դաւելու, անջատողական նպատակներ՝ անկախ Հայաստանի վերականգնումը հետապնդելու, այս նպատակով 100.000 մարդոցմէ բանակ կազմակերպելու եւայլն եւայլն [յանցանքներով]։ Արդ, այս ամբողջ անհեթեթ ամբաստանագիրը, ինչպէս ցոյց կու տան գայթակղիչ յայտնութիւնները, հիմնուած է տուեալներու վրայ այնպիսի նախաքննութեան մը, որ անօրէն է, խորապէս անարդար ու արատաւոր մէկ ծայրէն միւսը։ «Արդիական» ատենակալութեան մը այս ոճիրներուն դէմ յանդիման՝ պաշտպանութիւնը, միաբան, յայտարարեց որ անկարելի է դատավարութիւնը շարունակել եւ որ անհրաժեշտ կը դառնայ նոր նախաքննութիւն մը, եթէ նոյնիսկ ամբաստանեալները պարտաւոր պիտի ըլլան ամիսներ կամ տարիներ եւս սպասել իրենց [բանտային] խուցերուն մէջ։

Դատարանը, որ այս պարագային արդարադատու-

tion du ministère de justice, fit la sourde oreille à ces légitimes réclamations de la défense. "On n'a pas le temps de procéder à une nouvelle instruction" – déclara le président Krivtzoff... Et demain ces nombreux intellectuels iront épaissir les rangs des condamnés aux travaux forcés!

"On n'a pas le temps" de procéder à une seconde instruction! On n'en a même pas besoin! Car, le verdict est déjà prêt depuis longtemps, dans le cabinet ministériel, chez le fameux Cheglovitoff, le ministre de justice. Toute cette parade de tribunal, des centaines de témoins, des discours éloquents et véhéments des meilleurs avocats de la Russie, n'est qu'une vaine formalité! Le ministère, guidé par Cheglovitoff, est décidé – en dépit des faux et des criantes illégalités – à châtier coûte que coûte la population arménienne qui a su, dans les années sombres et orageuses du Caucase (1903, 1905, 1906) et de toute la Russie, réagir les armes en mains contre la politique de sauvage persécution des Plehve et des Galitzine, contre la confiscation brutale de ses biens nationaux, contre l'assaut formidable de la Vendée tartare que le gouvernement lui-même avait déchaînée, afin d'abattre la révolution menaçante et de paralyser les forces arméniennes!

Plehve et Galitzine ont été répudiés, condamnés par le "nouveau régime" lui-même... Et cependant, on continue à cultiver dans les hautes sphères la triste légende de "séparatisme arménien", et l'on va infliger un nouveau coup draconien au peuple d'Arménie russe.

M. Kokovtzoff partagera-t-il avec son collègue Cheglovitoff cette lourde responsabilité?

L'opinion européenne laissera-t-elle accomplir ce nouveau crime de lèse-humanité?

Nous faisons appel à tous les cœurs, à tous les amis du petit peuple qui cherche à secouer le cauchemar de son martyre séculaire pour entrer dans les voies du progrès, mais que l'aigle russe ne veut pas lâcher de ses griffes, tourmente sans cesse, le poursuivant jusqu'en Perse et en Turquie.

LA REDACTION DU "DROSCHAK"
Organe du Parti "DASCHNAKZOUTIUN"

Avril 1912

թեան նախարարութեան մէկ բաժանմունքն է միայն, խուլ ականջ ձեւացուց պաշտպանութեան այս իրաւացի պահանջներուն դիմաց։ «Ժամանակ չունինք նոր նախաքննութեան մը ձեռնարկելու» — յայտարարեց նախագահը՝ Կրիվզոֆ...։ Եւ վաղը մեծաթիւ այս մտաւորականները պիտի երթան ստուարացնելու տաժանակիր աշխատանքի դատապարտուածներուն շարքերը...

«Ժամանակ չունինք նոր նախաքննութեան մը ձեռնարկելու»...։ Ատոր կարիքն ալ չունին... Որովհետեւ, վճիռը երկար ժամանակէ ի վեր պատրաստ է արդէն նախարարական գրասենեակին մէջ, արդարադատութեան նախարար՝ հռչակաւոր Շեգլովիտոֆի մօտ։ Դատարանային այս ամբողջ խեղկատակութիւնը, հարիւրաւոր վկաները, Ռուսիոյ լաւագոյն փաստաբաններու պերճախօս ու կորովի ճառերը,— ապարդիւն ձեւականութիւններ են, ուրիշ ոչինչ... Նախարարութիւնը, առաջնորդութեամբ Շեգլովիտոֆի, վճռած է, ի հեճուկս կեղծ եւ աղաղակող ապօրինութեանց, պատժելու, ի գին ամէն բանի, հայ ազգաբնակչութիւնը, որ Կովկասի մթին եւ փոթորկալի տարիներուն (1903, 1905, 1906) գիտցաւ զէն ի ձեռին ծառանալ ընդդէմ Պլեւէներու եւ Գալիցիններու վայրագ հալածանքներու քաղաքականութեան, ընդդէմ՝ իր ազգային ստացուածքներու կոպիտ յափշտակութեան, ընդդէմ՝ կառավարութեան իսկ կողմէ շղթայազերծուած՝ թաթար հակայեղափոխութեան ահեղ գրոհին, որպէսզի տապալէ սպառնալից յեղափոխութիւնը եւ ջլատէ հայկական ուժերը։

Պլեւէ եւ Գալիցին, դատապարտուած «նոր վարչակարգին» իսկ կողմէ, հեռացուեցան... Եւ սակայն, վերին խաւերը կը շարունակեն զարգացնել «հայկական անջատողականութեան» առասպելը, եւ [երեւի] ռուսական Հայաստանի ժողովուրդին պիտի հասցուի նոր ու խստագոյն հարուած մը։

Պ. Կոկովցով՝ իր պաշտօնակից Շեգլովիտոֆի հետ պիտի բաժնէ՞ այս ծանր պատասխանատուութիւնը։

Եւրոպայի [հանրային] կարծիքը թոյլ պիտի տա՞յ հակամարդկային այս նոր ոճիրին իրագործումը։

Կոչ կ'ուղղենք բոլոր սրտի [տէր մարդոց], բոլոր բարեկամներուն [այս] փոքր ժողովուրդին, որ յառաջդիմութեան ճանապարհ մուտք գործելու համար՝ կ'ուզէ թօթափել իր վրայէն մղձաւանջը դարաւոր մարտիրոսութեան, բայց զոր ռուսական արծիւը չ'ուզեր արձակել իր ճիրաններէն, կը շարչարէ անդադար, հետապնդելով զայն մինչեւ Պարսկաստան եւ Թուրքիա։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ապրիլ 1912

ԿՈՎԿԱՍ
ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

ԲԱԺԻՆ Դ.

Քարոզչութիւն Ամերիկայի մէջ

1911 թ. Մեպտեմբերին Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէին հրաւէրով է. Ակնունի մեկնած էր Միացեալ Նահանգներ թէ՛ կազմակերպչական գործով եւ թէ յօգուտ կովկասահայ բանտարկեալներուն քարոզչական աշխատանք կատարելու: Երկու ամսուան համար նախատեսուած առաքելութիւնը պիտի երկարէր մինչեւ յաջորդ տարուան Մայիսի վերջերը մէկ կողմէն իրեն սպասող գործի ծաւալին, միւս կողմէ՝ Արեւմտեան Բիւրոյի այն պահանջով, որ ստեղծուած ոգեւորութենէն օգտուելով հարկ էր անյապաղ ձեռնարկել ընդհանուր հանգանակութեան, դարձեալ յօգուտ բանտարկեալներուն: Արդարեւ կարճ ատենուան մը մէջ իր արտակարգ շարժունակութեամբ, ու նաեւ պերճախօսութեամբ, Ակնունի յաջողած էր արդէն մեծ ոգեւորութիւն ստեղծել: Այնուհետեւ ան շարունակեց նոյն եռանդով առաջ տանիլ իր առաքելութիւնը: Շրջեցաւ Միացեալ Նահանգներու եւ Քանատայի շուրջ 40 քաղաքներ. հանդիպումներ ունեցաւ պետական ու քաղաքական դէմքերու եւ մամլոյ ներկայացուցիչներու հետ. ճառեր արտասանեց հայաշատ քաղաքներու մէջ կազմակերպուած բազմամարդ միթինկներուն. յօդուածներ եւ գրքոյկներ գրեց ու հրատարակեց, հայերէն եւ անգլերէն: Հաւաքոյթներու ընթացքին ստեղծուած խանդավառութեան մէջ եղան նուիրատուութիւններ, որոնց գումարը հասաւ 10.000 ամերիկեան տոլարի, ինչ որ աննախընթաց որակուեցաւ պատասխանատուներուն կողմէ:

Պոսթընի Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ պահպանուած են ամերիկացի պետական եւ հասարակական գործիչներու հետ փոխանակուած գրութիւններու, Նահանգային օրէնսդիր ժողովներու եւ հանրահաւաքներու մէջ որդեգրուած բանաձեւերու անգլերէն մեքենագիր պատճէնները: Անոնցմէ մէկ քանին կը ներկայացնենք թարգմանութեան հետ միասին:

Փաստ. 107-145

Դ 1.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

1910, Հոկտ. 26, Կ. Պոլիս

Ամերիկայի Կ. Կոմիտէին

Ընկերներ,

Ընկեր Ակնունուն գրած ենք մի շաբաթ առաջ չեշտելով, որ միայն բանախօսութիւններով չգոհանայ, այլ անմիջապէս ձեռնարկէ հանգանակութեան գործին: Ձեզ եւս ներկայով կը գրենք, որպէսզի դուք եւս գրէք իրեն, որ չտապէ իր պտոյտը վերջացնելով վերադառնալ. այս կողմը անհրաժեշտ գործ չկայ: Նա կարող է եւ պէտք է մնայ, որքան տեղական գործերը կը պահանջեն. թող շրջէ ամէն տեղ, ուրկէ իրեն կ'ուզեն եւ օգտուելով բանախօսութիւններու տպաւորութեան տակ առաջ եկած ոգեւորութենէն՝ անմիջապէս, հէնց հանդիսասրահի մէջ ձեռնարկէ հանգանակութեան: Ինքը գրած է Հոկտ. 18-ին (Ն[որ] տ[ոմար]) որ 14 քաղաք արդէն այցելած է, իսկ հանգանակութեան մասին ոչինչ չէ գրած: Ամենալաւ առիթը փախցնելէն վերջ շատ ուշ կ'ըլլայ յետոյ դրամի մասին խօսիլ, մինչ այդ պէտք էր ընել անմիջապէս:

Կովկասէն շարունակ դրամ կը պահանջեն բանտարկեալ ընկերներու դատական ծախքերու համար. այդ առթիւ արդէն շրջաբերական մը ցրուած ենք բոլոր մարմիններուն: Տաճկաստանէն շատ քիչ յոյս ունինք, իսկ պահանջը մեծ է. այդ ինքն ըստ ինքեան առիթ մըն է ընդարձակ ծաւալով հանգանակութիւն ընել եւ շատ կարճ միջոցի մէջ: Այդ մտքով գրեցէք Ակնունուն, որպէսզի իր պտոյտները պրոպագանդի հետ միասին ունենան նաեւ նիւթական շահ կազմակերպութեան ներկայ սուղ կացութեան միջոցին:

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] Բ[ԻՒՐՈՅԻ] ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՒԱԾ

Հանգանակութեան ձեռնարկի անհրաժեշտութիւնը անմիջապէս չեշտող հեռագիր մը տուէք Ակնունուն, ուր որ է:

Փաստ. 1398ա-10

Դ 2.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԷՆԵՐՈՒՆ

Ընկերներ,

Արեւմտեան Բիւրոյի 7րդ շրջաբերականէն կը քաղենք հետեւեալները կովկասահայ բանտարկեալներու մասին, անգամ մը [եւս] ձեր ուշադրութեան յանձնելու [համար] փութկոտ ըլլալու պէտքը:

«Բանտարկեալները փոխադրուեցան Նովոչերքասք: Բոլորիս ալ ուշ ու միտքը այժմ կը ձգտի դէպի այդ քաղաքը, ուր հաւանօրէն շուտով տեղի պիտի ունենան ռուս կառավարութեան ինքնայատուկ անարդարութիւնները, եթէ բանտարկեալները թողուին իրենց ճակատագրին:

«Բացատրելու պէտք իսկ չկայ պատճառները այդ կատաղի հալածանքներուն, որոնց կէտ նպատակն է ջախջախել միակ կազմակերպութիւնը, որ տակաւին իր գոյութիւնը կը պահպանէ ռուսական բռնակալ ռեժիմի կրծքին վրայ, մինչդեռ ուրիշ կազմակերպութիւններ արդէն քայքայուած են, ոչնչացնել հզօր կուսակցութիւն մը, զոր իր անողոք հակառակորդը կը նկատէ ամէն տեղ ուր քաղաքական արկածներ կը փնտռէ ինք,– Թուրքիա, Կովկաս ու Պարսկաստան:

«Կովկասի մէջ դաշնակցական կազմին պահպանումը սոսկ կուսակցական խնդիր մը ըլլալէ աւելի հայ ժողովուրդի քաղաքական կեանքի հետ գերազանց առնչութիւն ունեցող ընկերային խնդիր մըն է: Հետեւապէս, ո՛չ միայն ամէն դաշնակցական եւ յեղափոխական խորհող անհատի, այլ ամէն խղճամիտ ու գիտակից հայու պարտականութիւնն է կարելին ընել ի դերեւ հանելու ռուսական այդ դաւը որ կը պատրաստուի Դաշնակցութեան դէմ, Նովոչերքասքի դատավարութեան դիմակին տակ:

«Համբաւաւոր ռուս փաստաբանները յօժարութիւն յայտնած են պաշտպանելու բոլոր ամբաստանեալները: Սակայն ատոնց հետ եւ ատոնցմէ առաջ պէտք կայ վարձելու բազմաթիւ երկրորդական փաստաբաններ, ուսումնասիրելու համար այդ հարիւրաւոր ամբաստանեալներու թղթերը, կարգի բերելու, դասաւորելու զանոնք դատավարութենէն առաջ:

«Հարիւր վաթսուն երիտասարդ եւ մտաւորական ոյժերը բանտի հաստ պատերուն ետեւէն լռիկ մեզ կը դիտեն անվրէպ յուսալով թէ իրենց գաղափարակից ընկերներու զոհողութեան գնով է որ պիտի ազատին իրենք կեանքի ու մահու այդ տագնապէն:

«Կոչը մեծ է, պատասխանն ալ մեծ, գործը ծանր է, աշխատանքն ալ ըստ այնմ եռանդուն ըլլալու է:

«Յեղափոխական ոգին միայն ընդունակ է այդ պահանջին գոհացում տալ: Ծախսուելիք վեց հազար ռուբլին երեք հազարը Արեւմտեան Բիւրոն Կովկասէն, երկու հազարը Թիւրքիայէն եւ երեք հազարն ալ Ամերիկայէն կ'ակնկալէ, եւ ամբողջ ընկերներու ու համակիրներուն կոչ կ'ընենք որ ցոյց տանք թէ բանտարկեալները անօգ չեն, թէ հայ ժողովուրդի ամբողջ բանիմաց մասը գիտէ տագնապի պահուն ընդհանուր ցաւերովը տառապիլ ու ապրիլ»:

Բիւրոն նկատել տալով որ ժամանակը շատ կարճ է ստիպողաբար կը յանձնարարէ հանգանակուած գումարները փութացնել, որպէսզի անմեղները չդատապարտուին յապաղումին պատճառաւ եւ Դաշնակցութիւնը անգամ մըն ալ յաղթական ելլէ, նոր ոյժով եւ ոգեւորութեամբ առաջ տանելու համար իր ազատագրական պայքարը Փոքր Ասիոյ մէջ:

Ընկերներ, յայտնի է որ Դաշնակցութիւնը միայն կրնայ վարել [գործը], ռուս եւ հայ փաստաբաններու միջոցաւ: Ուրիշ ոչ մէկ հաստատութիւն կամ մարմին կ'ուզէ այդ խնդրին հետ կապ ունենալու վտանգին ենթարկուիլ: Ուստի հաւաքուած դրամները անհարկի պահել կամ ուրիշ աղբիւրներով ղրկել վտանգաւոր յապաղումներու պատճառ կրնայ ըլլալ:

Մեր տեղական խնդիրներու մասին՝ յաջորդ եւ թերեւս այս տարուան վերջին շրջաբերականով:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Պոսթըն, Նոյեմբեր 20, 1910

Փաստ. 1399-17ա

Դ 3.– THE ARMENIAN PRISONERS IN THE CAUCASUS (ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ)

Ամերիկայի մէջ յօգուտ կովկասահայ բանտարկեալներուն իր ծաւալած գործունէութեան ընթացքին, Է. Ակնունի խմբագրած եւ հրատարակած է «Բողոքի ձայն» գրքոյկը, որ անգլերէնի թարգմանուած եւ 3000 տպաքանակով տարածուած է ամէն կողմ: Նախքան այդ, հանրային կարծիքի նախապատրաստութեան նպատակով կազմուած է ստորեւ տրուած փաստաթուղթը, որ յղուած է ամերիկեան մամուլին, պաշտօնական հաստատութիւններու եւ քաղաքական անձնաւորութիւններու, զանոնք իրազեկ դարձնելու համար Ռուսիոյ տարածքին հայութեան եւ Դաշնակցութեան դէմ ցարական իշխանութեանց շղթայազերծած հալածանքներուն:

Since two years the lives of the Armenian population in the Caucasus have been made miserable by the persecutions of the Russian Government. From 1908 until now Russian police, according to orders from higher authorities, have undertaken arrests and persecutions which spread from one end of the country to the other.

The number of prisoners amounts to 500, but more than 3,000 are under suspicion. Those suspected have taken refuge in countries like Persia and Turkey, which were formerly despotic, and Europe. The prisoners belong to all classes, Armenian poets and writers, 8; Armenian physicians and lawyers, 20; Armenian professors and teachers, 25; Armenian officers, 15; merchants, 50; tradesmen, 70; peasants, 80; and many clergymen and students.

The arrests are the result of absolute despotism and the premeditated policy of oppression of the Russian Government. The conduction of the trial is assigned to Liegen, who is rather a police chief than a judge, and who has been sent specially from St. Petersburg to magnify the case and give it the aspect of revolt, in order to terrorize the whole Armenian population. The trial is postponed indefinitely for the simple reason that there are no proofs in the hands of the prosecution, and the Russian government is well aware that the trial will reveal to the whole civilized world the

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկու տարիէ ի վեր Կովկասի հայ ազգաբնակչութիւնը թշուառ կեանք մը կ'ապրի իբրեւ հետեւանք ռուս կառավարութեան հալածանքներուն։ 1908-էն մինչեւ այսօր ռուս ոստիկանութիւնը, վերին իշխանութիւններու հրահանգով, ձեռնարկած է ձերբակալութեանց եւ հալածանքներու, որոնք կը տարածուին երկրին մէկ ծայրէն միւսը։

Բանտարկեալներու թիւը կը հասնի 500-ի, բայց աւելի քան 3000 հոգի կասկածի տակ են։ Այս կասկածելիները ապաստան գտած են Պարսկաստանի եւ Թուրքիոյ նման երկիրներու մէջ — որոնք նախապէս բռնատիրական էին — եւ Եւրոպայի մէջ։ Բանտարկեալները կը պատկանին ամէն դասակարգի,— հայ բանաստեղծներ եւ գրողներ՝ 8 [հոգի], հայ բժիշկներ եւ փաստաբաններ՝ 20, հայ դասախօսներ եւ ուսուցիչներ՝ 25, հայ պաշտօնեաներ՝ 15, վաճառականներ՝ 50, արհեստաւորներ՝ 70, գիւղացիներ՝ 80, եւ բազմաթիւ կրօնաւորներ եւ ուսանողներ։

Ձերբակալութիւնները արդիւնք են ռուս կառավարութեան բացարձակ բռնակալութեան եւ ճնշումի կանխամտածուած քաղաքականութեան։ Դատավարութեան ղեկավարումը վստահուած է Լիժինի, որ դատաւորէ աւելի ոստիկանապետ մըն է եւ որ յատուկ կերպով ղրկուած է Սանկտ Փեթերսպուրկէն գործը խոշորցնելու եւ, համայն հայ ազգաբնակչութիւնը ահաբեկելու նպատակով՝ ապստամբութեան մը երեւոյթը տալու համար անոր։ Դատավարութիւնը կը յետաձգուի անորոշ ժամանակով, պարզ այն պատճառով որ դատախազութիւնը փաստեր չունի ի ձեռին, եւ ռուս կառավարութիւնը կը վախնայ որ դատավարութիւնը ամբողջ քաղաքակիրթ աշխարհին առջեւ ի յայտ պիտի բերէ ռուսական ինքնակալութեան նենգաւոր անարդարու-

treacherous injustice of the Russian autocracy. This is called the case of the Armenian Revolutionary Federation, and the prisoners are accused of belonging to that party, but in fact nine tenths of them not only do not belong to the revolutionists but are opposed to any revolutionary movement.

The Armenian poet, A. Aharonian, is in prison for the reason that he headed the delegation sent by the Armenian Catholicos to the Peace Conference at The Hague, and was granted an audience by Nelidoff, the Russian representative. The banker Azarian, was arrested and imprisoned for a year and a half because he had transferred some money from Moscow to Tiflis. Dr. Ohanjan is in prison accused of being present at a meeting which had never taken place. Professor Stepan Malkhasian was arrested because his Christian name bore resemblance to that of an escaped convict. Prince Arghoutian was arrested and imprisoned because a man called Prince was pursued by the authorities, though the latter was living in Van, Turkey. The multi-millionaire Adurian was arrested because he had helped the starving families of some prisoners.

It is of common occurrence that an innocent brother is arrested when the authorities cannot find his accused brother. In the Province of Kanzak the police force threatened to arrest the women whose husbands had escaped. Sometimes the whole village has been threaened with arrest to force its population to find the men whom the Government is pursuing. The recklessness of the Russian authorities in making arrests reached its limit when the police arrested in Batum, in 1910, Mr. Garo, a member of the Ottoman Parliament. The Government is increasing the number of police, who are ordered to find by all means the suspected men, and for that reason an innocent person is arrested and imprisoned for having received a letter, or attended a meeting. The prisoners are transferred to Rostov and Novocherkaska, where their situation reminds one of the horrors described by Tolstoy. Ten or even sixteen prisoners are crowded in a small cell, without food, and they are forced to sleep on the bare floor. The prisoners are not allowed to buy food even with their own money; they are forbidden to write or read. When cholera broke

թիւնը։ Այս է պարագան այսպէս կոչուած Հ. Յ. Դաշնակցութեան դատին, եւ կալանաւորները ամբաստանուած են իբրեւ անոր [կուսակցութեան] պատկանողներ, բայց իրականութեան մէջ տասէն ինն անոնց ոչ միայն յեղափոխական չեն, այլ դէմ են ոեւէ յեղափոխական շարժումի։

Հայ բանաստեղծ Ա. Ահարոնեան բանտ կը գտնուի անոր համար որ գլխաւորած է Հայոց կաթողիկոսին առաքած պատուիրակութիւնը Լահէյի Խաղաղութեան խորհրդաժողովին եւ ունկնդրութեան արժանացած Ռուսիոյ ներկայացուցիչին՝ Նելիտովի կողմէ։ Դրամատան մը տէր Ազարեան ձերբակալուեցաւ եւ տարիուկէս բանտարկուեցաւ՝ Մոսկուայէն Թիֆլիս որոշ գումար մը փոխանցած ըլլալուն համար։ Բժիշկ Օհանջան[եան] բանտն է՝ ներկայ գտնուած ըլլալուն համար միթինկի մը որ, ի դէպ, բնաւ տեղի չէ ունեցած։ Փրոֆ Ստեփան Մալխասեան ձերբակալուեցաւ, որովհետեւ իր աւազանի անունը նմանութիւն ունի փախստական ոճրագործի մը անունին հետ։ Իշխան Արղութեան ձերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ, որովհետեւ Իշխան անունով մէկը հետապնդումի առարկայ էր իշխանութեանց կողմէ, մինչդեռ ենթական կը բնակէր Վան, Թուրքիոյ մէջ։ Բազմամիլիոնատէր Ատուրեան ձերբակալուեցաւ, որովհետեւ կարգ մը բանտարկեալներու սովահար ընտանիքներուն օգնած էր։

Ցաճախադէպ է որ անմեղ եղբայր մը ձերբակալուի երբ իշխանութիւնները չեն գտներ իր մեղադրեալ եղբայրը։ Գանձակ նահանգին մէջ ոստիկան զօրքերը սպառնացին կալանաւորել այն կիները, որոնց ամուսինները բացակայ էին[իրենց բնակավայրէն]։ Երբեմն գիւղի մը ամբողջ բնակչութեան ձերբակալութեան սպառնալիք կը տրուի՝ ստիպելու համար որ գտնեն կառավարութեան հետապնդած անձերը։ Ձերբակալութեանց ընթացքին ռուս իշխանութեանց անզգուշութիւնը ծայրայեղ աստիճանի հասաւ երբ 1910-ին Պաթումի մէջ ոստիկանութիւնը ձերբակալեց Պ. Գարոն, Օսմանեան խորհրդարանի մէկ անդամը։ Կառավարութիւնը աւելցնելու վրայ է թիւը ոստիկաններու, որոնց հրահանգուած է որեւէ միջոցով գտնել կասկածեալները, եւ այդ պատճառաւ անմեղ անձ մը կը ձերբակալուի եւ կը բանտարկուի՝ նամակ մը ստացած կամ միթինկի մը ներկայ եղած ըլլալուն համար։ Բանտարկեալները փոխադրուած են Ռոստով եւ Նովոչերկասկ, ուր իրենց կացութիւնը կը յիշեցնէ Տոլստոյի կողմէ նկարագրուած սոսկումի վիճակներէն մէկը։ Տասը, նոյնիսկ տասնեւվեց կալանաւորներ խռնուած են փոքրիկ խուցի մը մէջ, առանց սնունդի եւ ստիպուած քնանալու չոր գետնին վրայ։ Արտօնուած չէ անոնց ուտելիք գնել նոյնիսկ սեփական դրամով. արգիլուած է գրել, կարդալ։ Երբ քոլերան երեւան եկաւ Ռոստովի մէջ, բանտարկեալներու վիճակը դարձաւ ողբերգական։ Ռուս ոստիկանու-

out at Rostov the condition of the prisoners became tragic. The Russian Police is of the opinion that imprisonment is not enough, and it is necessary to make the lives of innocent people miserable by physical tortures and by the dread of the plague.

What is the secret? There is no doubt that the prisoners are innocent; the grounds for their arrests are not proofs. The Stolypin Government is of the opinion that the Caucasus must fall under the Russian persecution while on the north Finland is oppressed by the abrogation of their constitution, on the west the Poles are weakened by terrorism, the Russian Revolution is crushed and enervated, and the Draconic means against the Jews carried out.

The Russian Government desires to avenge itself on the Armenians because they resisted, in 1904, the efforts of Von Plehve to confiscate the Armenian Church property. They fought and defeated the designs of the Russian Government. Then the Government of the Czar tried to have the Armenians exterminated, arming the Tartars and encouraging them against the Armenians. This conspiracy also did not succead.

The anger of Russian Government increased more against the Armenians when the Turkish Constitution was re-established and Abd-ul-Hamid dethroned. According to the reports of the Russian Ambassador at Constantinople, the Russian Government had held the Armenians responsible for these important changes toward constitutional government. Then came the reestablishment of the the Constitution in Persia, which frustrated the design of Russian aggrandizement. The St. Petersburg Government had always cherished hopes of occupying Rashd, Tauris, and Salmast, but the constitutionalist Persians, united with Armenians, shattered that hope to pieces. And to-day it is an Armenian, Eprem Khan, member of the Armenian Revolutionary Federation, who holds the most responsible position in the Shah's domain.

The Russian Government hopes that by annihilating the Armenians it will succeed to arrest the liberal movement in Russia.

That the course of the Russian Government is not

թիւնը այն կարծիքին է, որ բանտարկութիւնը բաւական չէ, անհրաժեշտ է անմեղ մարդոց կեանքը թշուառացնել՝ ֆիզիքական չարչարանքներով, եւ համաճարակին սոսկումով։

Ո՞ւր է գաղտնիքը։ Կասկածէ վեր է որ բանտարկեալները անմեղ են. իրենց ձերբակալութեան հիմքերը չեն փաստուած։ Ստոլոպինի կառավարութիւնը կը կարծէ, որ Կովկասը պէտք է կործանի ռուսական հալածանքներու միջոցով, ինչպէս հիւսիսի մէջ Ֆինլանտան ճնշուած է իր սահմանադրութեան խափանմամբ, արեւմուտքի մէջ՝ լեհերը տկարացած են ահաբեկչութեան միջոցով, ռուսական յեղափոխութիւնը ճզմուած է եւ ջլատուած, եւ հրեաներու դէմ [ի գործ դրուած] կտրուկ միջոցները՝ աւարտին հասած։

Ռուսական կառավարութիւնը կ՚ուզէ վրէժ լուծել նոյնինքն հայերէն, որովհետեւ անոնք ընդդիմացան 1904-ին Ֆոն Պլեւէի կողմէ հայ եկեղեցւոյ կալուածներու գրաւման ջանքերուն։ Անոնք պայքարեցան եւ իր դերեւ հանեցին ռուս կառավարութեան ծրագիրները։ Ապա, թաթարները զինելով եւ դրդելով զանոնք հայերու դէմ, ցարական կառավարութիւնը փորձեց բնաջնջել հայերը։ Այս սադրանքը եւս չյաջողեցաւ։

Ռուս կառավարութեան բարկութիւնը հայերու դէմ աւելի եւս սաստկացաւ երբ վերահաստատուեցաւ Թրքական սահմանադրութիւնը եւ գահընկէց եղաւ Ապտիւլ Համիտ։ Ըստ Կոստանդնուպոլսոյ ռուս դեսպանի տեղեկագիրներուն, ռուս կառավարութիւնը հայերը պատասխանատու կը համարէր՝ դէպի սահմանադրական կառավարում [կատարուած] այս կարեւոր փոփոխութիւններուն համար։ Ապա եկաւ Պարսկաստանի մէջ Սահմանադրութեան վերահաստատումը, որ ձախողութեան մատնեց ռուսական ծաւալումի ծրագիրը։ Ս. Փեթերսպուրկի կառավարութիւնը յարատեւօրէն փայփայած էր Ռաշտի, Թաւրիզի եւ Սալմաստի գրաւման յոյսերը, բայց պարսիկ սահմանադրականները, միացած հայերուն, խորտակեցին այդ յոյսերը։ Եւ այսօր հայ մըն է, Եփրեմ Խան, անդամ Հ. Յ. Դաշնակցութեան, որ բարձրագոյն պաշտօնի վրայ կը գտնուի Պարսկաստանի մէջ։

Ռուս կառավարութիւնը կը յուսայ որ հայերը բնաջնջելով պիտի յաջողի կասեցնել ազատական շարժումը Ռուսիոյ մէջ։

Որ ռուս կառավարութեան ընթացքը արդարանալի չէ՝ կը տեսնուի այն իրողութեան մէջ, որ հայոց նախկին կաթողիկոս Իզմիրլեանին Ցարին կողմէ ունկնդրու-

justifiable can be seen from the fact that when the late Armenian Catholicos, Izmirlian, was granted an audience by the Czar, he was promised that before he reached the Caucasus the Armenian prisoners would be freed. Not only this royal promise was not fulfilled, but the number of the Armenian prisoners increased.

It is the policy of the Russian Government to promise one thing and do the opposite. Six years ago, when the Finnish deputies came to St. Petersburg, to protest against the abrogation by the Czar of their Constitution, and remind His Imperial Majesty of the oath he had taken to remain faithful to the Finnish Constitution, the then Minister answered without blushing: "There is nothing unnatural, the Emperor took an oath, the Emperor can recant it". History repeats itself in the case of the Armenians. And what a grim joke! The Russian soldiers entered the Caucasus with the avowed purpose of defending the Armenians against the Mohammedan persecution, but now the protest against the Russian inhumanity towards the Christian Armenians comes from the Capitals of the Sultan and the Shah. While the members of the Russian Duma are sitting still the members of the Turkish Parliament are raising their voices in behalf of the prisoners. And what a significant contrast! While there is not a single political prisoner in Turkey the Russian prisons are not big enough to hold its political prisoners. Can there be imagined a worse insult than this to be the country of Tolstoy?

Those who protest agianst the Russian injustice are verily the true friends of Russia. In Paris prominent politicians and writers as Pressence, Lavisse, Berard, Anatol France, and Quillard, raised their voices against the Russian despotism. The same thing happened in Vienna and Constantinople, and the same thing is taking place now in this country. Fifty mass meetings have already been held in fourteen different cities in America and Canada, and resolutions passed protesting against the inhuman treatment of these political prisoners by the Russian Government.

It is up to the American public opinion and the Press to join in a mighty protest against the Russsian despotism. This will be an act of friendship to Russian not from her "foes" but from her admirers, because the Russian prisons, full of innocent people, are disgracing Russia in the eyes of the whole world.

թիւն մը չնորհուած ըլլալով՝ խոստացուած էր իրեն որ Կովկաս հասնելէն առաջ հայ բանտարկեալները ազատ արձակուած պիտի ըլլային արդէն։ Թագաւորական խոստումը ոչ միայն չիրագործուեցաւ, այլ կալանաւոր հայերու թիւը աւելցաւ։

Ա՛յս է ռուսական քաղաքականութիւնը,— խոստանալ բան մը եւ ընել հակառակը։ Վեց տարի առաջ, երբ Ֆինլանտացի պատգամաւորները Ս. Փեթերսպուրկ եկան ցարին կողմէ իրենց Սահմանադրութեան խափանման դէմ բողոքելու եւ նորին կայսերական վեհափառութեան յիշեցնելու՝ Ֆինլանտական սահմանադրութեան հաւատարիմ մնալու իր երդումը, օրուան նախարարը պատասխանեց առանց շիկնելու,— «անբնական ոչինչ կայ. կայսրը երդում մը տուաւ, կայսրը կրնայ ետ առնել զայն»։ Պատմութիւնը կը կրկնուի հայոց պարագային, եւ ի՜նչ տխուր կատակ։ Ռուս զինուորները Կովկաս մտան հայերը մահմեդականներու հալածանքներուն դէմ պաշտպանելու բացայայտ նպատակով, բայց այժմ քրիստոնեայ հայերու նկատմամբ ռուսերու [գործած] անմարդկութեան դէմ բողոքը կու գայ Սուլթանին եւ Շահին մայրաքաղաքներէն։ Մինչ ռուսական Դումայի անդամները ձեռնպահ կը մնան, Թրքական Խորհրդարանի անդամները ձայն կը բարձրացնեն ի պաշտպանութիւն բանտարկեալներուն եւ ի՜նչ նշանակալի հակասութիւն. մինչ Թուրքիոյ մէջ ոչ մէկ քաղաքական բանտարկեալ կայ,— ռուսական բանտերը նեղ կու գան իրենց քաղաքական բանտարկեալներուն համար։ Ասկէ աւելի գէշ նախատինք կարելի՞ է երեւակայել Տոլստոյի հայրենիքին։

Անոնք որոնք կը բողոքեն ռուսական անարդարութեան դէմ՝ անկասկած Ռուսիոյ իսկական բարեկամներն են։ Փարիզի մէջ ականաւոր քաղաքագէտներ եւ գրողներ ինչպէս՝ Պրեսանսէ, Լաւիս, Պերար, Անատոլ Ֆրանս եւ Քիյար, ձայն բարձրացուցին ռուսական բռնակալութեան դէմ։ Նոյն բանը պատահեցաւ Վիեննա եւ Կոստանդնուպոլիս, եւ միեւնոյն բանը տեղի կ՚ունենայ այժմ այս երկրին մէջ։ Արդէն զանգուածային յիսուն միթինկներ գումարուեցան եւ որոշումներ կայացուեցան Ամերիկայի եւ Քանատայի տասնեւչորս քաղաքներուն մէջ՝ բողոքելու համար քաղաքական այդ բանտարկեալներու նկատմամբ ռուս կառավարութեան անմարդկային վերաբերումին դէմ։

Ամերիկեան հանրային կարծիքին եւ մամուլին կը մնայ միանալ եւ ուժգին բողոք բարձրացնել ռուսական բռնակալութեան դէմ։ Ասիկա բարեկամական արարք պիտի հանդիսանայ ռուսերուն, ոչ թէ «թշնամիներու» այլ անոնց հիացողներուն կողմէ, որովհետեւ անմեղ բանտարկեալներով լեցուած ռուսական բանտերը կ՚անպատուեն Ռուսիան համայն աշխարհի աչքին։

Փաստ. 1399-11ա

Դ 4.– ՓՐԱՒԻՏԵՆՍ ՔԱՂԱՔԻ ԲՈՂՈՔԸ

PROTEST

At a Public Mass Meeting held on the evening of December 25, 1910, in Fay's Hall Providence, Rhode Island, more than a thousand Armenians gathered to protest against the inhuman treatment of five hundred or more of their countrymen in the hands of the Russian Government.

The meeting was presided over by Mr. T. Gelalian and speeches were made by a number of leading Armenians, including the Honorable E. Aknouni, of Constantinople.

The following Resolutions were adopted:–

WHEREAS:– The present Russian Government with deliberate and premediated policy has begun a general prosecution against the Armenians, people of the Caucasus, and

WHEREAS:– Five hundred Armenians, prisoners, belonging to almost every class, teachers, physicians, scientists, men of letters, merchants, and others are the victims of the above mentioned prosecution, without any legal basis and without trial, be it

RESOLVED:–

1st) To protest against this policy of the Russian Government, which policy is an insult to the Constitution as well as to the idea of civilization.

2nd) To demand immediate trial and the discharge of these prisoners, and the recognition of all their rights as loyal citizens,

3rd) To send copies of these Resolution to the United States Government at Washington, and to the Russian Ambassador at Washington, D.C.

4th) To appeal to Public Opinion of this country and to arouse a sympathetic movement in behalf of these Armenians prisoners, who have no other demands or desires in the Caucasus, except to enjoy the privileges of the Constitution and those rights which belong to every civilized community.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲՈՂՈՔ

Հրապարակային միթինկի մը մէջ, որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 25, 1910ին Փրաւիտենսի մէջ, Ռոտ Այլընտ, հաւաքուած էին աւելի քան հազար հայեր բողոքելու համար ռուսական կառավարութեան անմարդկային [այն] վերաբերումին դէմ, որուն ենթարկուած են իրենց հայրենակիցներէն աւելի քան 500 հոգի։

Միթինկին կը նախագահէր Պ. Թ. Ճելալեան եւ խօսք առին բազմաթիւ ղեկավար հայեր, որոնց կարգին յարգելի է. Ակնունին Կոստանդնուպոլսէն։

Որդեգրուեցան հետեւեալ որոշումները.—

Նկատի ունենալով, որ այժմու ռուսական կառավարութիւնը, դիտումնաւոր եւ կանխամտածուած քաղաքականութեամբ մը, սկսած է ընդհանուր հալածանքի մը կովկասահայերու դէմ, եւ նկատի առնելով որ ամէն խաւի պատկանող հինգհարիւր բանտարկեալ հայեր,— բժիշկ, գիտնական, մտաւորական, վաճառական եւայլն — դարձած են զոհերը վերոյիշեալ քաղաքականութեան, առանց օրինական հիմքի եւ դատավարութեան,

Որոշուեցաւ՝

1) Բողոքել ռուսական կառավարութեան այս քաղաքականութեան դէմ, որ նախատինք մըն է Սահմանադրութեան ինչպէս նաեւ քաղաքակրթութեան գաղափարին,

2) Պահանջել այս բանտարկեալներու անմիջական դատավարութիւնն ու ազատ արձակումը, ու անոնց բոլոր իրաւունքներուն ճանաչումը իբրեւ օրինապահ քաղաքացիներու,

3) Ղրկել այս որոշումներէն մէկական օրինակ Ուաշինկթըն՝ Միացեալ Նահանգներու կառավարութեան եւ Ռուսիոյ դեսպանին,

4) Կոչ ուղղել այս երկրի հանրային կարծիքին եւ համակրական շարժում ստեղծել ի նպաստ այս հայ բանտարկեալներուն, որոնց միակ պահանջն ու փափաքն է՝ Կովկասի մէջ վայելել Սահմանադրութեան առանձնաշնորհումները եւ այն տարրական իրաւունքները, որոնք կը պատկանին քաղաքակրթուած իւրաքանչիւր հասարակութեան։

Փաստ. 1399-10

Դ 5.– ԴԻՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Boston, January 12, 1911

To the Honorable,
Philander C. Knox,
Secretary of State of the United States,
Washington, D.C.

Sir,

Enclosed please find copies of certain Resolutions passed at a Public Mass Meeting by the Armenian residents of Providence, Rhode Island and Boston, Massachusetts. These Resolutions voice the sentiment of fifty thousand or more Armenians who live within the territories of the United States and many of whom have become worthy citizens of this, their adopted country. They desire to express through you, to the Russian Government their bitter resentment at the cruel and merciless manner with which five hundred or more of their fellow countrymen, representing the cream of their race in literature, art and science, have suffered in the hideous prisons of Russia. They also request your Excellency to bring this protest to the knowledge of the Russian Government and to exert your own good influence through proper channels so that these unfortunate men may have humane treatment while in custody, as well as a fair trial when they appear before the tribunal in the near future.

Yours very respectfully

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Պոսթըն, 12 Յունուար 1911

Մեծայարգ
Ֆիլանտր Կ. Նաքս
Պետական քարտուղար Միացեալ Նահանգներու,
Ուաշինկթըն

Պարոն,

Հաճեցէք ներփակ գտնել պատճէնները կարգ մը Որոշումներու, որոնք կայացան զանգուածային միթինկի մը ընթացքին Փրաւիտենսի (Ռոտ Այլընտ) եւ Պոսթընի (Մասաչուսէց) հայ բնակիչներու կողմէ։ Այս Որոշումները կ'արտայայտեն զգացումը յիսուն հազարէ աւելի հայերու, որոնք կը բնակին Միացեալ Նահանգներու հողին վրայ եւ որոնք մեծ մասամբ դարձած են արժանի քաղաքացիները այս երկրին։ Անոնք կը փափաքին Ձեր ճամբով արտայայտել իրենց դառն զայրոյթը ռուսական կառավարութեան դէմ՝ այն անողորմ եղանակին համար, որուն միջոցով հինգ հազարէ[172] աւելի իրենց հայրենակիցները — ազգին ընտրանին՝ գրականութեան, արուեստի եւ գիտութեան [մարզերուն] մէջ — կը տառապին Ռուսիոյ ահռելի բանտերուն մէջ։ Անոնք նոյնպէս կը խնդրեն Ձեր Վսեմութենէն, այս բողոքի մասին տեղեկացնել ռուս կառավարութեան, ինչպէս եւ յատուկ միջոցներով ի գործ դնել անձնապէս ձեր բարեացակամ ազդեցութիւնը, որպէսզի բանտերուն մէջ մարդկային վերաբերում ցոյց տրուի այս դժբախտ մարդոց, ապա եւ արդար դատավարութիւն՝ երբ մօտիկ ապագային անոնք դատարան կը ներկայանան։

Յարգանօք, Ձերդ՝
[ԴՈԿՏ. Վ. ԳԱԶԱՆՃԵԱՆ]

172.- Մեքենագրութեան սխալ է հաւանաբար: Պէտք է ըլլայ հինգ հարիւր:

Փաստ. 1399-11

Դ 6.– ԴԻՄՈՒՄ ՌՈՒՍԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ

Ռուսիոյ դեսպանին ուղղուած այս գրութիւնը, ինչպէս կը յայտնէ յաջորդ փաստաթուղթը, մերժուած ու վերադարձած է իր հասցէին այն պատճառաբանութեամբ, որ դեսպանը «բացակայ է երկրէն» եւ «դեսպանատունը արտօնուած չէ նման գրութիւններ ընդունելու»:

Boston, Mass., January 12, 1911

To the Honorable,
The Russian Ambassador,
Washington, D.C.

Sir:-

You will find enclosed herewith copies of Resolutions adopted at two Public Mass Meetings, held by the Armenians of Providence, Rhode Island and Boston, Mass.

It is the voice of thousands of other Armenians living in the United States, who mourn for the unjust treatment to which five hundred or more their countrymen have been subjected in the horrible prisons of Russia.

Your Excellency is requested to bring this protest to the knowledge of your Government, and also to do all you can to provide these prisoners with better quarters, while in prison, as well as with a fair trial before a competent Court in the near future.

Yours respectfully
V. H. KAZANJIAN D.M.D.
Demonstrator, Harvard Medical School,
Boston, Mass.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Պոսթըն, Մաս[աչուսէց] 12 Յունուար 1911

Մեծայարգ
Ռուսիոյ դեսպանին,
Ուաշինկթըն,

Պարո՛ն,

Ներփակ պիտի գտնէք պատճէնները Փրաւիտենսի (Ռոտ Այլընտ) եւ Պոսթընի (Մաս[աչուսէց]) հայերու կողմէ կայացած հրապարակային երկու միթինկներուն առնուած որոշումներուն։

Զայնն է այս՝ Միացեալ Նահանգներ բնակող ուրիշ հազարաւոր հայերու, որոնք ցաւ կը զգան այն անարդար վերաբերումին համար, որուն ենթակայ են՝ Ռուսիոյ զարհուրելի բանտերուն մէջ՝ իրենց ազգակիցներէն աւելի քան հինգ հարիւրը։

Ձերդ վսեմութենէն կը խնդրուի այս բողոքը հասցնել ձեր կառավարութեան գիտութեան, ու ընել նաեւ ձեր կարելին, որպէսզի այս կալանաւորներուն հայթայթուի [բանտային] աւելի լաւ բնակատեղի, ինչպէս նաեւ ապահովուի անոնց համար մօտիկ ապագայի մը մէջ արդար դատավարութիւն՝ ձեռնհաս ատեանի մը միջոցաւ։

Յարգանօք Ձերդ՝
Վ. Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
Դասախօս
Հարուրդտի Ատամնաբուժական դպրոցի,
Պոսթըն, Մաս.

Փաստ. 1399-14

Դ 7.– ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԵՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

IMPERIAL RUSSIAN EMBASSY
WASHINGTON

The Russian Ambassador is absent from this country.
The letter addressed to His Excellency with enclosure is herewith returned, as the Embassy is not called upon to accept such communications.

January 16th 1911

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռուսիոյ դեսպանը բացակայ է երկրէն։
Նորին Վսեմութեան ուղղուած նամակը իր ներփակեալով կը վերադարձուի ներկայիս, քանի դեսպանատունը արտօնուած չէ նման գրութիւններ ընդունելու։

16 Յունուար 1911

Փաստ. 1399-14ա

IMPERIAL RUSSIAN EMBASSY
WASHINGTON

~~13937~~
REGISTERED
No 13937
RETURN RECEIPT

Mr. V. H. Kazanjian D.M.D.
14537
Demonstrator, ~~Harvard dental school~~
76 Boylston St
Boston, Mass.

Դ 8.– ՆԻՒ-ԵՈՐՔԻ ՄԻԹԻՆԿԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

RESOLUTIONS PASSED AT THE MASS MEETINGS

At a mass meeting held by the Armenian residents of New York at Carnegie lyceum, in the city of New York, on February 5, 1911, the following preambles and resolutions were adopted:

WHEREAS, for two years, more than five hundred Armenians, professors, authors, physicians, lawyers, merchants, artisans and peasants,– are subjected to unspeakable incarceration in Russia;

WHEREAS, ten or fifteen are imprisoned in dampe and cold cells without bread or food;

WHEREAS, this indescribable condition still continues, and their trial is postponed arbitrarily;

WHEREAS, the Russian Government tries to punish innocent people for crimes that have never committed by the accused;

RESOLVED, that we, the Armenian Citizens of the great Republic, protest against the inhuman attitude of the Russian Government, and demand an immediate and just trial of the innocent victims;

RESOLVED, that a copy ot these three resolutions be forwarded to the Government at Washington and request it to please interfere in behalf of these innocent victims as it sees proper;

RESOLVED, that copies of these same resolutions be sent to the foreign representatives at Washington, and to the American Press, requesting all of them to raise their voices in behalf of justice and in behalf ot the political rights ot the injustly persecuted Armenians in the Caucasus, Russia.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Նիւ-Եորքաբնակ հայերու կողմէ 1911 Փետրուար 5-ին Կարնեգի Լիկիոնի մէջ կայացած միթինկի մը ընթացքին որդեգրուեցան հետեւեալ հիմնաւորումներն ու որոշումները.—

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ երկու տարիէ ի վեր Ռուսիոյ մէջ աւելի քան հինգ հարիւր հայեր,— դասախօսներ, հեղինակներ, բժիշկներ, իրաւաբաններ, վաճառականներ, արհեստաւորներ եւ գիւղացիներ — կ'ենթարկուին անասելի տանջանքներու.

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ խոնաւ ու ցրտին խուցի մը մէջ բանտարկուած են 10-15 հոգի առանց հացի կամ անուշդի.

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ այս աննկարագրելի վիճակը կը շարունակուի եւ անոնց դատավարութիւնը կը ձգձգուի կամայականօրէն.

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ ռուսական կառավարութիւնը կը ջանայ պատժել անմեղ մարդիկ [այնպիսի] ոճիրներու համար, որ բնաւ գործուած չեն մեղադրեալներու կողմէ,

ՈՐՈՇՈՒԵՑԱՒ, Որ մենք, հայ քաղաքացիներս այս մեծ Հանրապետութեան, կը բողոքենք ռուս կառավարութեան այս անմարդկային վերաբերումին դէմ, եւ կը պահանջենք անմեղ զոհերուն անմիջական եւ արդար դատավարութիւնը.

ՈՐՈՇՈՒԵՑԱՒ, Այս որոշումներու մէկ պատճէնը ուղարկել Կառավարութեան՝ Ուաշինկթընը, եւ խնդրել անկէ որ հաճի միջամտել, իր յարմար դատած եղանակով, ի նպաստ անմեղ զոհերուն.

ՈՐՈՇՈՒԵՑԱՒ, Միեւնոյն որոշումներէն մէկական օրինակ ղրկել Ուաշինկթընը՝ օտար [պետութեանց] ներկայացուցիչներուն եւ ամերիկեան մամուլին, խնդրելով բոլորէն որ ձայն բարձրացնեն յանուն արդարութեան եւ ի պաշտպանութիւն քաղաքական իրաւունքներուն ժողովուրդի մը, որ անարդարօրէն կը հալածուի Կովկաս՝ Ռուսիոյ մէջ։

Փաստ. 1399-47

Դ 9.– ԱԿՆՈՒՆԻՒ ԴԻՄՈՒՄԸ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆ ՃԷՅՄՍ ՊՐԱՅՍԻՆ

Դերկոմս Ճէյմս Պրայս (1838-1922) հայասէր ծանօթ անձնաւորութիւն է, որ այդ տարիներուն Մեծն Բրիտանիոյ դեսպանն էր Միացեալ Նահանգներու մէջ։ Պատմաբան եւ պետական գործիչ, ան 1876ին հիմնած էր Անգլօ-հայկական ընկերութիւնը, որուն միջոցաւ Անգլիոյ մէջ կը տանէր հայանպաստ գործունէութիւն։ Երկու առիթներով (1876 եւ 1880) ձեռնարկած էր ճամբորդութիւններու դէպի Արեւելք (Կովկաս, Հայաստան եւ Թուրքիա). բարձրացած էր Արարատ լեռը եւ 1877ին հեղինակած «Անդրկովկասն ու Արարատը» գործը։ Համաշխարհային առաջին պատերազմին, երբ Օսմանեան պետութեան կողմէ գործադրութեան կը դրուէր հայկական ցեղասպանութիւնը, բրիտանական կառավարութեան կողմէ պարտականութիւն տրուեցաւ իրեն հաւաքելու եւ հրատարակութեան պատրաստելու կուտակուած փաստագրական արդէն հարուստ նիւթը, ինչ որ Պրայս գլուխ բերաւ աջակցութեամբ այդ օրերուն երիտասարդ, յետագային հռչակաւոր պատմաբան Առնոլտ Թոյնպիի։ Խնդրոյ առարկայ մեծածաւալ գործը "The Treatment of Armenians in the Ottoman Empire" լոյս տեսաւ 1916ին բրիտանական կառավարութեան «Կապոյտ գիրք»ու շարքին։ Հայ եւ մասնաւորաբար օտար ականատեսներու (հիւպատոս, միսիոնար, միջազգային Կարմիր խաչի պաշտօնեաներ, եւայլն) փաստացի հարուստ վկայութիւններով կազմուած այս ժողովածուն յաջորդ տարին իսկ լոյս պիտի տեսնէր ֆրանսերէնով։

Boston, Mass., March 2, 1911

Hon. James Bryce,
British Embassy,
Washington, D.C.

Dear Sir:-

The courteous note of your Embassy of the 27th ult. has been received. As a writer from the Caucasus, it will give me great pleasure to acquaint you with the present condition of the Armenian political prisoners in that country; and I entertain the hope that you will not only as the Ambassador of His Majesty, but as a man who loves justice, will do all you can to aid us in this worthy cause.

I enclose herewith a brief note describing the situation in the Caucasus.

During the last four months I have visited many of the principal cities in the United States and Canada. In all these cities, meetings were held by the Armenians, and resolutions were passed, copies of which were sent to members of Congress.

I need not call your attention to the fact that the Armenians all over the world, to whom you are so well known by your writings and speeches, will be so grate-

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Պոսթըն, Մաս[աչուսէց] 2 Մարտ 1911

Մեծայարգ Ճէյմս Պրայս,
Բրիտանական դեսպանատուն,
Ուաշինկթըն

Սիրելի Պարոն

Ստացած ենք ձեր Դեսպանատան 27 Փետրուարի գրութիւնը։ Որպէս Կովկասէն [եկած] գրողի մը, ինծի համար մեծ հաճոյք պիտի ըլլայ ծանօթացնել ձեզ այդ երկրին մէջ [գտնուող] հայ քաղաքական բանտարկեալներու այժմու վիճակին մասին։ Կը փայփայեմ այն յոյսը որ դուք ոչ միայն իբրեւ Նորին Վեհափառութեան դեսպան, բայց նաեւ արդարասէր մարդ՝ ձեր կարելին պիտի ընէք օգնելու համար մեզի այս կարեւոր խնդրին մէջ։

Այսու կը ներփակեմ հակիրճ գրութիւն մը Կովկասի ներկայ կացութեան մասին։

Վերջին չորս ամիսներու ընթացքին ես այցելեցի Միացեալ Նահանգներու եւ Քանատայի շատ մը գլխաւոր քաղաքները։ Բոլոր այդ քաղաքներուն մէջ միթինկներ կայացան հայերու կողմէ, որդեգրուեցան որոշումներ, որոնց պատճէնները ուղարկուեցան Քոնկրէսի անդամներուն։

Պէտք չունիմ ձեր ուշադրութիւնը հրաւիրելու այն իրողութեան վրայ, որ աշխարհի բոլոր հայերը, որոնք ձեզի քաջածանօթ են ձեր գրութիւններուն եւ ելոյթնե-

ful to you for whatever you do for these prisoners who represent the best there is in the race.

I shall be in Washington in the near future to see a number of people with reference to this matter, and I shall consider it a great pleasure to talk with you about it personally, if you will kindly give me the opportunity.

Thanking you in advance, I remain
Yours respectfully,

9 Knapp street,
Boston, Mass.

ռուն ճամբով, երախտապարտ պիտի ըլլան ինչ որ ընելու ըլլաք այդ բանտարկեալներուն համար, որոնք կը ներկայացնեն ազգին ընտրանին։

Մօտիկ ապագային պիտի ըլլամ Ուաշինկթըն այս հարցով շարք մը մարդոց հետ տեսնուելու համար։ Մեծապէս հաճելի պիտի ըլլայ ինծի անձնապէս խօսիլ ձեզի հետ այդ մասին, եթէ ազնուութիւնը ունենաք այդ պատեհութիւնը ընծայելու ինծի։

Կանխայայտ շնորհակալութեամբ
Մնամ յարգանօք՝
[Լ. ԱԿՆՈՒՆԻ]

Փաստ. 1399-63

Դ10.– Ի ՆՊԱՍՏ ՌՈՒՍԱՀԱՅ ՔԱՂ. ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ԵՒ ԵՐԵՍ. ԺՈՂՈՎԻՆ

Քուէարկուած Մարտ 21ին եւ Մարտ 27ին եւ Ուշինկթըն ղրկուած Մարտ 29, 1911։

Նկատելով որ ռուս կառավարութիւնը Ռոսթովի եւ Ռուսիոյ ուրիշ բանտերուն մէջ բանտարկած է հարիւրաւոր հայեր, որոնք ուսուցիչներ, փաստաբաններ ու խմբագիրներ են եւ բոլորն ալ ծանօթ իրենց յառաջդիմական գաղափարներուն ու գործերուն համար, եւ զանոնք երկար ատեն բանտի մէջ պահած է առանց նախաքննութեան եւ օրինաւոր դատարաններու առջեւ դատավարութեան – բան մը որ մարդկային արդարութեան զգացումին դէմ կատարեալ մեղանչում մըն է, նաեւ

Նկատելով որ յիշեալ ռուս կառավարութիւնը շատ յաճախ թոյլտուութիւն ըրած է խժդժութիւններ, կողոպուտներ, առեւանգութիւններ եւ ջարդեր կատարելու՝ այրերու, կիներու եւ տղայոց վրայ՝ լոկ կրօնական հաւատալիքներու պատճառաւ, նաեւ

Նկատելով որ այսպիսի արարքներ անարգանք են քաղաքակրթութեան եւ ատելի բոլոր անոնց որ արդարութիւնը կը սիրեն եւ Աստուծմէ կը վախնան, ուստի

Մենք, Քալիֆորնիոյ Ծերակոյտ եւ երեսփ. ժողովս, 39րդ օրէնսդրական նիստին մէջ ժողոված, միասնաբար Կ'ՈՐՈՇԵՆՔ որ կը հաւատանք թէ այս աշխարհի գործերուն մէջ ժամանակը ա՛լ հասած է երբ պէտք կ'ըլլայ որ ամէն քաղաքակիրթ ազգ բողոքէ ուրիշ ոեւէ ազգի մը նմանօրինակ արարքներուն դէմ, եւ մենք ասով կ'արտայայտենք մեր զգուանքը ի մասին այն վարմունքին որուն ենթարկուած են Հայաստանի այս զաւակները իրենց քաղաքական համոզումներուն համար (եւ ուրիշ այրեր, կիներ ու տղայք իրենց կրօնական հաւատալիքին համար) նաեւ

Կ'ՈՐՈՇԵՆՔ որ Քալիֆորնիոյ օրէնսդիր մարմինին համոզումով ժամանակը հասած է՝ երբ համաձայն գործունէութիւն մը գոյութիւն ունենայ բոլոր իրենք զիրենք քաղաքակրթեալ ու լուսաւորեալ կոչող ազգերու միջեւ, ստիպելու ոեւէ ազգ մը որպէսզի մարդկութեան եւ հասարակ արդարութեան օրէնքները անպատճառ ի գործ դնէ հանդէպ իր քաղաքացիներուն, նաեւ

Կ'ՈՐՈՇԵՆՔ որ այս որոշմնագրէն օրինակներ ղրկուին Մ. Նահանգաց Նախագահին, եւ Երեսփոխանական Ժողովի (Congress) նախագահին, ստիպողաբար խնդրելով անոնցմէ որ իրենց բարեացակամ միջնորդութիւնը ի գործ դնեն վերոյիշեալ հայոց համար արդար եւ հրապարակաւ դատավարութիւն մը ձեռք բերելու այլեւս առանց ոեւէ յետաձգումի, նաեւ վերջ մը տալու բոլոր այն բռնարարութեանց ու կոտորածներու որոնք ի գործ կը դրուին անմեղ այրերու, կիներու եւ տղայոց վրայ որոնց միակ մեղքն է իրենց հայրերու հաւատքին կառչած մնալը։

«Ասպարէզ», 7 Ապրիլ 1911

Փաստ. 1399-95

Դ 11.– ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆ ՆԻՏԸՄԷՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Washington D.C., June 2, 1911

Central Committee,
Armenian Revolutionary Federation,
Box, 2690, Boston, Mass.

Gentlemen:-

I have your letter of May 26th and have also received the 300 copies of the booklet written by Mr. Aknouni in regard to the condition of the Armenian prisoners in the Caucasus.

I will have these copies distributed among the members of Congress whom I consider the most interested in the question, and will do all I can to serve your interests in this particular.

Very truly yours,
J. C. NEEDHAM

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ուաշինկթըն, 2 Յունիս 1911

Հ.Յ.Դ. կեդր. կոմիտէին
Պոսթըն, Մաս[աչուսէց]

Պարոններ,

Ստացած եմ 28 Մայիսի ձեր նամակը, ինչպէս նաեւ կովկասի հայ բանտարկեալներու մասին պ. Ակնունիի գրած գրքոյկին 300 օրինակները։

Այս օրինակները պիտի ցրուեմ Քոնկրէսի այն անդամներուն, զորս ամէնէն աւելի շահագրգռուած կը նկատեմ հարցով, եւ ամբողջ կարելիս պիտի ընեմ նպաստելու այս յատուկ խնդրին։

Յարգանքներով Ձերդ՝
Ջ. Կ. ՆԻՏԸՄ

Փաստ. 1699-162ա

Դ 12.– ԲՈՂՈՔԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ակնունիի ձեռագրով կազմուած մէկ էջնոց փաստաթուղթ, որ հաւանաբար գրուած է Ամերիկա իր առաքելութեան վերջին շրջանին: Գրութիւնը գրեթէ նոյն շարադրութեամբ զետեղուած է իբրեւ յառաջաբան հայերէն եւ անգլերէն հրատարակուած «Բողոքի ձայն» գրքոյկի «Յաւելուած»ի բաժնին:

Միացեալ Նահանգների եւ Քանատայի մէջ, 35 քաղաքներում տեղի ունեցան բողոքի մեծ միթինգներ, նուիրուած կովկասահայ բանտարկեալներին։ 14 մեծ քաղաքներում, ինչպէս՝ Նիւ Եորք, Ֆիլատելֆիա, Չիգակօ, Պրովիտենս, Բոստոն, Ուսթր, Թրոյ, Ուեստ-Հոբոկըն, Նիւ Հէյվըն, Սան-Ֆրանսիսկօ, Ֆրեզնօ, Լոս-Անգելոս եւ Քանատայի՝ Բրենտֆորտ ու Համիլտոն քուէարկուեցան բողոքի որոշումնագրեր, եւ ուղարկուեցան Վաշինգտոն, Հանրապետութեան նախագահին, արտաքին գործերի քարտուղարին, Կոնգրեսի անդամներին ու [մի] քանի դեսպաններին, յատկապէս ռուսական դեսպանին։ Պատճէնները յանձնուեցան ամերիկեան մամուլին։*

Առաջ ենք բերում մի քանիսը այդ բողոքագրերից։

---

*) *Ռուսական դեսպանատունը Վաշինգտոնի, տարօրինակ ըմբռնումով, պատասխանել է, թէ անկարող է ընդունել եւ ընթացք տալ հանրագիր-բողոքագրերին։ Այդպէս է սովորութիւնը Ռուսաստանի մէջ։*

Փաստ. 1399-45ա

Դ 13.– ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ

ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՄԷՋ

Երեք ամիսէ ի վեր ամերիկահայ գաղութին մէջ համաժողովրդական հաւաքումներով տեղի կ'ունենան համակրանքի զօրեղ արտայայտութիւններ, ուղղուած կովկասահայ բանտարկեալներուն, որոնք առանց ոեւէ յանցանքի, փակուած կը մնան ռուսական բանտերուն մէջ, երկու տարիէ ի վեր։

Այս համակրանքը կ'արտայայտուի երկու ձեւով։ — Հանրային բողոք ուղղուած ռուս կառավարութեան այս անարդարանալի վարմունքին դէմ, եւ յարգանք բանտարկեալներուն՝ դրամական հանգանակութեամբ, յօգուտ անոնց դատական ծախսերուն եւ անոնց կարօտ ընտանեաց։

Համագաղութային մեծ ժողովներ տեղի ունեցան մօտ 40 քաղաքներու մէջ, Արեւմտեան նահանգներէն՝ Ֆրեզնոյէն մինչեւ Նիւ Ինկլէնտի շրջանը՝ ժողովներ՝ ուր քիչ բացառութեամբ հրաւիրուած էին ատենախօսելու Պ. Է. Ակնունի, այլ եւ այլ կուսակցութեանց ներկայացուցիչներ, էզոքներ եւ ամերիկացիներ։

Քանի մը քաղաքներու մէջ, ուր հայ գաղութը շատ փոքր թիւ կը կազմէ, տեղի ունեցած են, ինքնաբերաբար հանգանակութիւններ, փոքրիկ խմբերու մէջ եւ յոյս ունինք, ուրիշ փոքրիկ գաղութներուն մէջ եւս, ուր հրապարակային ժողովներ տեղի չեն ունեցեր, բոլոր հայերը պիտի մասնակցին այս համաժողովրդային բողոքին, իրենց նուէրներով որ նշանը պիտի ըլլար համակրանքի։

Բոլոր ժողովներուն մէջ ալ ընտրուած եւ կազմուած են հանգանակիչ խառն յանձնախումբեր, բաղկացած այլ եւ այլ կուսակցութեանց եւ հասարակութեան ներկայացուցիչներէն, որոնց պաշտօնն է պահել հանգանակուած գումարը, ի հարկին հանգանակութիւնը շարունակել եւ հասցնել համագումարը Կ. Պոլսոյ Կեդրոնական յանձնախմբին։ Ցանկալի է որ տեղական յանձնախմբերը գումարի առաքումը եւ նուիրատուներու ցուցակը տպագրեն ամերիկահայ թերթերուն մէջ։

Կ. Պոլսոյ Կեդրոնական յանձնախումբը բաղկացած է եօթը անդամներէ՝

	Պրն. Սպարթալի
Պրն. Տիլպէր	*Պրն. Զօհրապ*
Պրն. Եսայեան	*Պրն. Վարդգէս*
	Պրն. Փաստրմաճեան
	Պրն. Փափազեան

Առաջին երկուքը Պոլսի հայ հասարակութեան ծանօթ դէմքեր, իսկ հինգը պատգամաւորներ են Օսմանեան փարլամենթին։

Ահա՝ ցուցակը կատարուած հանգանակութեանց՝ մօտաւոր թիւերով՝

1.	*Ֆրեզնօ*	1000
2.	*Սան Ֆրանչիսկօ*	200
3.	*Տիթրոյիթ*	300
4.	*Շիքակօ*	140
5.	*Սէնթ Լուիզ*	75
6.	*Իսթ Սէնթ Լուիզ*	220
7.	*Կրանիթ Սիթի*	500
8.	*Ուէսթ Փուլմրն*	140
9.	*Ռէյսին*	130
10.	*Ուօքէկրն*	200
11.	*Քլիվլէնտ*	100
12.	*Պրէտֆրտ*	300
13.	*Կալտ*	50
14.	*Համիլթրն*	200
15.	*Սէնթ Կատարինէ*	130
16.	*Նիակարա Ֆոլս*	100
17.	*Լորէնս*	125
18.	*Պրաքթրն*	137
19.	*Սէնթ Փօլ*	68
20.	*Ճալիաթ*	17
21.	*Ռոչէսթրը*	24
22.	*Փէթէրսրն*	74
23.	*Լուիզվիլ Քէն*	13
24.	*Քոպլրրն Այտա*	8
25.	*Սփինսրը Մէս*	11
26.	*Փորթլէնտ*	52
27.	*Լին*	150
28.	*Զրլսի*	100
29.	*Նիւպրիփորթ*	40
30.	*Ուստր*	200

31.	*Պոսթրն*	700
32.	*Թրոյ*	800
33.	*Փրավիտէնս*	1500
34.	*Նիւ Պրիթէյն*	100
35.	*Նիւ Եորք*	1500
36.	*Ուէսթ Հոպոքրն*	220
37.	*Ֆիլատելֆիա*	400
38.	*Միլֆրրտ*	45
39.	*Հարտֆրրտ*	35
40.	*Նիւ Հէվրն*	75
41.	*Ուայթնսվիլի ներկայացումէն*	57

Պիտի հանգանակուին՝

41. *Լովէլ*
42. *Նէշուէ*
43. *Ուայթնսվիլ*

Եւ մի քանի այլ վայրերու մէջ։

Հանգանակուած գումարները ուղարկուած են եւ կրնան ուղարկուիլ Կ. Պոլսի Կեդր. յանձնախմբին, հետեւեալ հասցէով՝

Patriarch of Armenian's
Ցանձնելի Կովկասահայ Բանտարկեալներու Օգնութեան Կեդրոնական Ցանձնախմբին
Koumkapou Constantinople (Turkey)
Եւ կամ՝
Mr. K. ZOHRAB
Member of Ottoman Parliament
Ցանձնելի Կովկասահայ Բանտարկեալներու Օգնութեան Կեդրոնական Ցանձնախմբին
Constantinople (Turkey)

Կեդրոնական Ցանձնախմբի պարտաւորութիւնն է հանգանակուած գումարները հասցնել նպատակին եւ այդ մասին մանրամասն հաշիւ տալ հայ հասարակութեան եւ մասնաւորապէս ամերիկահայ գաղութին։

Երեք ամսուայ մէջ 10 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ (50 հազար ֆրանք) աննախընթաց փաստ ամերիկահայ գաղութի հանրային կեանքին մէջ։

Շնորհակալութիւն եւ յարգանք ամերիկահայերուն այդ բուռն համակրանքին համար։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲ

1911 *Փետրուար, Պոսթրն*

Փաստ. 1399-75

Դ 14.– ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՍՏԱՑԱԳԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԷՆ



30 *Ապրիլ* 1911

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէին
Բոստոն

Յարգելի հայրենակիցներ,

Կովկասահայ բանտարկեալներու Կեդրոնական Յանձնախումբը շնորհակալութեամբ ստացաւ Ձեր 2 Մայիս թուակիր նամակը եւ ներփակեալ 150,11 Օսմ. ոսկիի չէքը, Զօհրապ Էֆէնտիի հասցէին։

Ներփակ կը ստանաք պատշաճ ընկալագիրը, իսկ գումարի ստացման համար կը յայտարարուի նախ տեղական թերթերուն մէջ։

Ի դիմաց Կեդրոնական Յանձնախումբի
Յարգանքներով՝
Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺԻՆ Ա.

Խօսք եղաւ արդէն ընդհանուր Յառաջաբանին մէջ ԺԹ. դարուն հայ գրական եւ ազգային Զարթօնքին մէջ ուսանողներու խաղացած դերին, ինչպէս նաեւ դարավերջին Ռուսիոյ եւ Եւրոպայի մէջ հայ ուսանողական միութիւններու եւ խումբերու մասին:

Ռուսիոյ մէջ այդ միութիւններու գործունէութիւնը զուտ դաշնակցական նկարագիր կը կրէր. կոմիտէներ ունէին անոնք գլխաւորաբար Մոսկուայի, Պետերբուրգի եւ Խարկովի մէջ եւ իրենց պատգամաւորներով կը մասնակցէին ռայոնական եւ ընդհանուր ժողովներու, ինչպէս նաեւ կուսակցական այլեւայլ գործունէութեանց:

Նոյնն էր պարագան Եւրոպայի մէջ Պերլինի «Մոլեկիւլ» անունով գործող կոմիտէին, Փարիզի կոմիտէին եւ աւելի ուշ (1900 թ.) կազմուած Ժընեւի «Ջանք» խումբին: Առաւելաբար ուսանողներէ բաղկացած դաշնակցական խումբեր կազմուած էին, նոյնպէս, նկատառելի հայ ուսանողներ հաշուող բազմաթիւ այլ քաղաքներու մէջ, յատկապէս Ֆրանսա, Զուիցերիա, Իտալիա, Պելճիքա: Աչքի կը զարնէին Ֆրանսայի Նանսի քաղաքի ուսանողները, որոնց շարքերէն դուրս պիտի գային 90-ական թուականներու Պոլսոյ դէպքերուն (Պանք Օթթոման, եւայլն) գլխաւոր դերակատարներէն Արմէն Գարօ, Հայկ Թիրեաքեան, Մարգիս Սրենց, Լեւոն Նեւրուզ: Այսուհանդերձ, վերջիններուն յեղափոխական այս տրամադրութիւնը, գէթ առաջին շրջանին համար, կարելի չէ ընդհանրացնել ուսանողութեան մեծամասնութեան վրայ: Գերմանական համալսարաններու մէջ ուսանողները, եկած մեծ մասամբ Կովկասէն, ունեւոր դասակարգի զաւակներ էին, կամ կրթական աւանդապահ ու պահպանողական հաստատութիւններէ շրջանաւարտներ, իսկ գերմանական կառավարութեան թրքամէտ քաղաքականութիւնը թոյլատու չէր բնաւ, մանաւանդ օտարականներու պարագային, յեղափոխական գունաւորում կրող խմբաւորումներու նկատմամբ: Շատ աւելի բացասական էր այս իմաստով Թուրքիայէն եկած ուսանողութեան կեցուածքը, յատկապէս Փարիզի մէջ, ուր համիտեան վարչակարգի արտասահմանեան գործակալները աչալուրջ էին եւ երկիր վերադարձողները պէտք է հաշիւ տային Եւրոպայի մէջ ունեցած իրենց գործունէութեան մասին:

Այսպէս թէ այնպէս, դատելով Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ պահպանուած փաստաթուղթերէն, կարելի է հաստատել, որ 90ական թուականներուն Եւրոպայի տարածքին գոյութիւն ունէին տարբեր անուններով ուսանողական բազմաթիւ խումբեր,– «Ակումբ հայ ուսանողաց», Փարիզ, «Հայ ուս. միութիւն Փարիզի», «Պարիզի Հայ Յեղ. Դաշնակցութեան կոմիտէ», Ժընեւի մէջ՝ «Հայ անանուն ընկերութիւն փոխադարձ օգնութեան», Պերլին՝ «Հ.Յ.Դ. Մոլեկիւլ կոմիտէ», եւայլն:

Յիշուած եւ տակաւին չյիշուած, բայց անպայման գոյութիւն ունեցող ուսանողական խմբաւորումներուն միջեւ կապ եւ միացեալ գործակցութիւն ստեղծելու առաջադրութեամբ՝ նախաձեռնութիւն մը կ'առնուի 1897 թ. Ապրիլին, եւ Գերմանիոյ Հայդելբերգ քաղաքին մէջ կը գումարուի «Եւրոպայի Հայ Ուս. միութեան առաջին համագումարը», որմով եւ հիմը կը դրուի նոյնանուն կազմակերպութեան: Վերջինս կ'ունենայ տարեկան համագումարներ, թիւով 6, մինչեւ 1905 թուականը եւ ամէն անգամ կ'ընտրէ Կարգադիր Յանձնաժողով՝ ընդհանրապէս Ժընեւի անդամներէն, եւ Լիազօր Կոմիտէ՝ տարբեր քաղաքներու ներկայացուցիչներէն (Ցիւրիխ, Փարիզ, Լօզան, Ժընեւ, եւայլն):

Այս համագումարներու եւ միութեան ընդհանուր գործունէութեան մասին մեր ձեռքին տակ կը գտնուին գլխաւորաբար հետեւեալ փաստաթուղթերը.–

1.- Թիւ 1458-2 եւ 3: Ա. Համագումարի ծրագիր-հրաւիրագիրը եւ մասնակից պատգամաւորներու անուանացանկը:

2.- Թիւ 1459-10: «Տեղեկագիր Եւրոպայի Հայ Ուս. Միութեան», 1897/98, 1898/99 թ.թ.: Տպագիր 22 էջնոց պրակ, որ կը բովանդակէ ամփոփ արձանագրութիւնները միութեան առաջին եւ երկրորդ համագու-

մարներուն, մշակուած եւ հաստատուած կանոնագիրը, մասնաճիւղերու գործունէութիւնը եւ «վիճակագրական տեղեկութիւններ Եւրոպայի հայ ուսանողների մասին»: Այս վերջինը առաջնակարգ նշանակութիւն ունեցող փաստաթուղթ է, որ կարեւոր տեղեկութիւններ կը բովանդակէ Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Զուիցերիոյ 15 համալսարաններու մէջ ուսանող շուրջ 230 անդամներու ծննդավայրին եւ հետեւած մասնագիտութեան մասին: Լրացուցիչ փաստաթուղթ է թիւ 1459-7 (ձեռագիր), որ նախորդին հայթայթած ծանօթութիւնները կ'ամբողջացնէ այդ ուսանողութեան անուանացանկով: Տեղին է յայտնելու, որ մասնաւոր ուշադրութիւն դարձուցած ենք՝ եւրոպական տարբեր համալսարաններու մէջ հայ ուսանողներու անուանացանկերու հրատարակութեան: Անոնք մէկէ աւելի տեսակէտներով շահեկան են. հոն կը գտնենք անունները ապագայի մեր հանրածանօթ գրողներուն, հայագէտներուն, պատմաբաններուն, քաղաքական եւ հասարակական գործիչներու մեծ մասին,– Մ. Աբեղեան, Յ. Մանանդեան, Լեւոն Շանթ, Կոմիտաս վարդապետ, Ա. Ահարոնեան, Մ. Վարանդեան, Է. Ակնունի, եւայլն: Յատկանշական երեւոյթ է համեմատական մեծ տոկոսը (աւելի քան 20) Շուշիէն եկած ուսանողներուն, ինչ որ պերճախօս վկայութիւն է արցախեան այս ոստանին կրթական եւ մշակութային երբեմնի փառքին:

3.- Թիւ 1459-3: 1899 թ. «Եւրոպական ընդհ. ուսանողական միութեան II համագումարի արձանագրութիւնները»: Ձեռագիր 16 էջնոց այս փաստաթուղթը շահեկան է՝ ազգային եւ ընկերային հարցերու քննարկումներուն առթիւ՝ Լ. Սեղբոսեան (Լ. Շանթ) եւ Միք. Վարանդեանի եւ այլոց արտայայտած կարծիքներով: Յայտնենք որ ուսանողական համագումարներու թէ խմբական ժողովներու ընթացքին, սովորութիւն դարձած կարգ էր լսել ժողովականներու կամ հրաւիրուած անձնաւորութիւններու կողմէ կարդացուած դասախօսութիւններ, որոնց կը հետեւէին արծարծուած հարցերու մասին մտքերու փոխանակում եւ վիճաբանութիւններ:

4.- Դժբախտաբար Միութեան Երրորդ (1900 թ. Ցիւրիխ) եւ Չորրորդ (1901 թ. Միւնխէն) համագումարներէն փաստաթուղթեր չունինք ձեռքի տակ, բացի Կանոնագրէն. 1900ին վերամշակուած այս կանոնագրի ամէնէն յատկանշականը «Նպատակ» գլուխն է, որ յայտարար է միութեան կեանքին ու յետագայ գործունէութեան մէջ նոր հոսանքի մը երեւան գալուն: Արդարեւ առաջին կանոնագրի «Նպատակը» շատ տարտամ կերպով ձեւակերպուած էր.– «Քարոյական եւ մտաւոր հաղորդակցութեան մէջ դնել հայ ուսանողական խմբերը եւ ուսանողները, սոցա՝ իրար հետ անձնական ծանօթութիւններ անելուն նպաստել եւ ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ»:

Շատ բան չընող այս բանաձեւումը եւ ընդհանրապէս միութեան ղեկավարութեան մէջ տիրող պահպանողական մտայնութիւնը, արդէն, քննադատութեան կ'ենթարկուէր յառաջդիմական մամուլին եւ յեղափոխական նոր գաղափարներով տոգորուած երիտասարդութեան կողմէ, որոնց տեսակէտով Եւրոպայի ազատ պայմաններուն մէջ գտնուող հայ ուսանողութիւնը իրաւունք չունէր կրաւորական դիրք բռնելու հայկական հարցին նկատմամբ, կամ անտարբեր մնալու՝ Արեւմտեան Հայաստանի մէջ համիտեան վարչակարգի գործադրած ջարդարարութեան եւ համատարած արհաւիրքին դիմաց:

Ուստի եւ նոր կանոնագրութիւնը կ'ընդգծէր յատկապէս անհրաժեշտութիւնը թէ՛ ուսանողական խումբերուն, եւ թէ եւրոպացիներուն ծանօթացնել հայկական հարցն ու հայոց կացութիւնը, ապա եւ հրատարակել նոյն հարցին նպաստող ինքնուրոյն եւ քարգմանական գործեր:

5.- «Համարատուութիւն Եւրոպայի Հայ Ուս. միութեան Հինգերորդ Համագումարի», 1902 թ. Միւնխէն: Է. Ակնունիի ձեռագրով կազմուած տեղեկագիր (14 էջ), ուր համապարփակ պատկերը կը տրուի միութեան գործունէութեան, ճիշդ այն ուղղութեամբ որ բնութագրուեցաւ քիչ վերեւ: Միութիւնը տարածուած է արդէն եւրոպական 7 երկիրներու մէջ, ունի 38 մասնաճիւղեր, աւելի քան 350 անդամներով: Միութեան գործունէութեան կարեւորագոյն մարզերն են՝ հայկական հարցի մասին տրուած հրապարակային դասախօսութիւնները՝ եւրոպացի համբաւաւոր դէմքերու կողմէ, հայ դատի արծարծումը միջազգային ատեաններու առջեւ, ինչպէս նաեւ նոյն իմաստով իրագործուած հրատարակութիւնները: Միութեան ձեռնարկած մէկ հրատարակութիւնը՝ ժողովածուն՝ որուն համար անհրաժեշտ պիտուտէն եւ ականատոր դէմքերու աշխատակցութիւնը ապահովուած էր, դժբախտաբար պիտի մնար թերի եւ չիրագործուած:

Վերջապէս, բաժինը կը բովանդակէ նաեւ առանձին գրութիւններ, ինչպէս Ստ. Շահումեանի շնորհատրական նամակները Հ. Յ. Դաշնակցութեան տասնամեակին առթիւ, Միամանթոյի եւ այլոց գրութիւնները:

Փաստ. 1257-11

Ա 1.– ՀԱՅ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ

«Հայ անանուն ընկերութիւն փոխադարձ օգնութեան» անունով 1897ին Ժընեւի մէջ կազմուած ուսանողական միութենէն մնացած է գլխաւորաբար ձեռագիր այս կանոնագրութիւնը: Բացի դիւանական քանի մը թուղթերէ, դիմումնագրերէ եւ ստացագրերէ, ուրիշ ոչինչ: Գիտենք միայն, որ Ժընեւի համալսարանին վարչութենէն հաստատուած այս միութեան հիմնադիր անդամներէն Թ. Մելիքեան եւ Եր. Պալեան իբրեւ պատգամաւոր մասնակցած են 1897ին Հայդելբերգի՝ Եւրոպայի հայ ուսանողական առաջին համագումարին:

ՆՊԱՏԱԿ

Հայ Անանուն Ընկերութեան նպատակն է օգնել նիւթապէս չքաւոր հայ ուսանողներին, հաստատել բարոյական եւ մտաւոր կապ հայ ուսանողութեան մէջ:

ԾՐԱԳԻՐ

Յօդուած I

§ 1.— Ընկերութիւնը իւր նպատակի առաջին կէտը իրագործելու համար դիմում է հետեւեալ միջոցներին, որոնք են.

ա) Անդամների կամաւոր ամսավճարներ

բ) Հանգանակութիւն

գ) Երեկոյթ, պարահանդէս, եւայլն:

Յօդուած II

§ 2.— Նպատակի երկրորդ կէտը ընկերութիւնը կ'աշխատի իրագործել

ա) Կազմելով պարբերական սէանսներ, ուր տեղի կ'ունենան ընթերցանութիւնք:

բ) Պատեհ առիթին հրատարակելով ընդհանուր ուսանողութեան ուժով գիտական թերթ հայերէն լեզուով:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յօդուած I

Կազմակերպութիւն

§ 1.— Ընկերութեան անդամ կարող են լինել միայն այն ուսանողները եւ ուսանողուհիները, որոնք պարբերաբար վճարում են իրենց ամսավճարները:

§ 2.— Իւրաքանչիւր անդամ միայն մի ձայնի իրաւունք ունի ընկերութեան ժողովներում:

§ 3.— Ընկերութիւնը կ'ունենայ տարին 4 անգամ ընդհանուր ժողով:

§ 4.— Բացի որոշուած ժամանակներից կարեւոր պարագաներում մի քանի անդամների պահանջմամբ կամ կոմիտէի հրաւէրով կարելի է կազմել արտակարգ ընդհանուր ժողով:

Յօդուած II

Ընդհանուր ժողով

§ 5.— Ընդհանուր ժողովը կազմւում է ընկերութեան բոլոր անդամներից:

§ 6.— Ընդհանուր ժողովը կայացած է համարւում երբ ներկայ են բոլոր անդամների կէսից աւելին:

§ 7.— Եթէ ներկայ անդամների թուի պակասութեան պատճառով ժողովը չկայացած համարուի, երկրորդ հերթական ժողովը օրինաւոր է համարւում եթէ ներկայ են անդամների 1/3ը:

§ 8.— Ընկերութեան բոլոր գործերն ու հաշիւները վաւերացնում է ընդհանուր ժողովը:

§ 9.— Ընդհանուր ժողովում հարցերը վճռւում են ձայների բացարձակ առաւելութեամբ:

§ 10.— Ընդհանուր ժողովը ընտրում է ընկերութեան կոմիտէն եւ որոշում է կոմիտէի անդամներից մի նախագահ, մի քարտուղար եւ մի գանձապահ:

1.- Կիսամեակ:
2.- Ապահովագրութեան տոմսակ:
3.- Թեկնածու (թոշակ ստանալու):

Յօդուած III

Կոմիտէ

§ 11.— *Կոմիտէն կազմուում է հինգ անդամներից (Նախագահ, քարտուղար, գանձապահ եւ երկու անդամ)։*

§ 12.— *Կոմիտէն վարում է ընկերութեան բոլոր վարչական գործերը։*

§« 13.— *Իւրաքանչիւր երեք ամիսը մի անգամ կոմիտէն կը ներկայացնէ իւր գործունէութիւնների հաշիւը ընդհանուր ժողովին։*

§ 14.— *Կոմիտէն ընտրւում է մի սմէստր*[1] *պայմանաժամով, որի լրանալուց յետոյ նա տալիս է իւր հրաժարականը։*

§ 15.— *Կոմիտէի բոլոր անդամները վերընտրելի են։*

§ 16.— *Կոմիտէն է որոշում այն մարդկանց, որոնք կարող են նիւթական նպաստ ստանալ ընկերութիւնից, ինչպէս եւ նպաստի քանակը եւ ժամանակը։*

§ 17.— *Կոմիտէին է վերապահւում օգնութիւն ստացողի թոշակը դադարեցնել։*

§ 18.— *Տեղի ունեցած տարաձայնութիւնները պարզւում են ընդհանուր ժողովում։*

§ 19.— *Նախագահը կառավարում է կոմիտէի ժողովները։*

§ 20.— *Բոլոր պաշտօնական գրութիւնները վաւերացւում են նախագահի ստորագրութեամբ։*

§ 21.— *Կոմիտէի նախագահը համարւում է պաշտօնական ներկայացուցիչ ընկերութեան։*

§ 22.— *Ընդհանուր ժողովների ժամանակ ընտրւում է ուրիշ նախագահ այդ նիստերը կառավարելու համար։*

§ 23.— *Քարտուղարը կազմում է ընկերութեան եւ կոմիտէի բոլոր ժողովների արձանագրութիւնները։*

§ 24.— *Գանձապահի մօտ են գտնւում ընկերութեան բոլոր եկամուտները եւ դրամական հաշիւները, որոնք նա արձանագրում է կոմիտէից վաւերացուած հաշուետետրների մէջ։ Գանձապահը իւր ստացած դրամի համար տալիս է ստացագիր։*

§ 25.— *Առանց կոմիտէի որոշման գանձապահն անձեռնհաս է որեւէ դրամական գործողութիւն կատարելու։*

Յօդուած IV

Գործունէութիւն

§ 26.— *Հայ Անանուն Ընկերութիւնը կ'օգնէ ժընեւի չքաւոր հայ ուսանողներին եւ ուսանողուհիներին։*

Ծանօթ.- Նիւթական յաջող պայմաններում ընկերութիւնը կարող է բացառիկ եւ անհրաժեշտ պարագաներին օգնութեան հասնել Զուիցերիայի ուրիշ քաղաքների չքաւոր հայ ուսանողներին։

§ 27.— *Օգնութեան դիմողները պարտաւոր են իրենց բնակած տեղերից գրաւոր կերպով ներկայացնել կոմիտէին իրենց խնդիրը ուսման վկայագրի եւ կենսագրական տեղեկութիւնների հետ։*

§ 28.— *Ընկերութիւնից թոշակ ստացողները պարտաւոր են անդամակցել ընկերութեան ձեռնպահ մնալով պաշտօններից։*

§« 29.— *Ընկերութիւնից օգնութիւն ստացող ուսանողը պարտաւոր է կարտ-տ-ասսիւրանս*[2] *վերցնել համալսարանից։*

§ 30.— *Նորեկ կանտիտայի*[3] *համար չի կարելի նախորդի թոշակից պակսեցնել կամ բոլորովին թոշակից զրկել։*

§ 31.— *Օգնութիւն ստացողի վրայ դրւում է բարոյական պարտականութիւն յաջող պայմանների մէջ յետ վերադարձնել իւր ստացած գումարը։*

§ 32.— *Չքաւոր ուսանողների օգտին ստացուած դրամն ամբողջովին գործադրւում է փոխադարձ օգնութեան [նպատակին] առանց այդ դրամից ծախսելու թերթի հրատարակութեան համար։*

§ 33.—*Հարկ եղած ժամանակ ընկերութեան կոմիտէն կարող է դիմել փոխառութեան ի նկատի ունենալով ընկերութեան եկամուտը. ինչպէս եւ ձեռնհաս միջոցին կարող է դրամ փոխ տալ ընկերութեան անդամներին որոշ ժամանակով։*

§ 34.— *Թերթի հրատարակութեան ժամանակ ընկերութեան անդամներից ընտրւում է խմբագրական կոմիտէ, որը կը զբաղուի հրատարակութեան գործերով։*

§ 35.— *Թերթից ստացուած օգուտը յատկացւում է չքաւոր ուսանողներին։*

Հիմնադիրներ՝
ԱՐՏԱՇԷՍ ԳԱՆՁԵԵԱՆ, ԳԱԲՐԻԷԼ ԲԱՀԱԹՐԵԱՆ,
Ց. ԱՐԱՊԵԱՆ, Թ. ՄԵԼԻՔԵԱՆ, ԵՐ. ՊԱԼԵԱՆ

Այս ծրագիրը Փետրուար ամսի 20ին ներկայացուած է Ժընեւի համալսարանի վարչութեան եւ հաստատուած է ռեկտորի ստորագրութեամբ, որով եւ ճանաչուած է Հայ Անանուն Ընկերութեան պաշտօնական գոյութիւնը։

1897 *Ժընեւ*

Փաստ. 1458-2

Ա 2.– ԾՐԱԳԻՐ
ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ամիս	թիւ	ժամ		
		Առաւօտ.	երեկոյ.	
Ապրիլ	11	–	8	Արտակարգ համագումար. ողջունումն եւ ընդհանուր ընթրիք
Ապրիլ	12	10	–	ա) Ժողովի պաշտօնական անձերի ընտրութիւն բ) Դասախօսութիւն՝ պ. Վանցեանի (Ենայից) «Հայերէնի նուագայնութեան ու կոկութեան մասին»:
Ապրիլ	12	–	5	Կանոնադրութեան նախագծի առաջին ընթերցումն եւ նկատողութիւնների ընդունելը:
Ապրիլ	13	10	–	ա) Դասախօսութիւն՝ պ. Աբեղեանի (Բերլինից) «Ազգայնութեան մասին ընդհանրապէս եւ ազգայնութիւնը մեր մէջ»: բ) Կանոնադրութեան նախագծի երկրորդ ընթերցումն եւ քննութիւնը
Ապրիլ	13	–	5	Դասախօսութիւն՝ պ. Պալեանի (Ժընեւից) «Գոյութեան կռիւ եւ բարոյականութիւն»
Ապրիլ	14	10	–	ա) Դասախօսութիւն՝ պ. Նալբանդեանի (Լէյբցիգից) «Մամուլի նշանակութիւնը եւ ռուսահայ մամուլը»: բ) Կանոնադրութեան վերջին ընթերցումն եւ վաւերացումը:
Ապրիլ	14	–	5	Դասախօսութիւն՝ պ. Չիլինկարեանի (Բերլինից) «Կովկասի ներկայ միջնակարգի հայ դպրոցները»:
Ապրիլ	15	10	–	ա) Դասախօսութիւն՝ պ. Մինասեանի (Նանսիից) «Հասարակական պատասխանատուութիւնը անհատական հիւանդութիւնների դէպքում»: բ) Մասնաւոր առաջարկութիւններ գ) Ընտրութիւն երկրորդ ընդհանուր ժողովի կարգադրիչ մասնաժողովի:
Ապրիլ	15	–	–	Ընդհանուր հրաժեշտի ճաշ:

Ծանօթութիւն.– Ազատ ժամերում ցանկութեան համաձայն կը ձեռնարկուին էկսկուրսիաների, քաղաքի եւ շրջակայքի մուզէումների[4] *այցելութեան, եւն., եւն.:*

Ուղարկելով Ձեզ սոյն ծրագիրը մասնաժողովը խնդրում է ձեզանից բարեհաճել մասնակցել ընդհ. ժողովին Ֆրանքֆուրթ (Մայնի վերայ):

Խնդրում ենք տարածել այս ծրագիրը եւ հրաւէրը ձեզ ծանօթ հայ ուսանողուհիների եւ ուսանողների մէջ:

1897, Մարտ 27 ՍԱՄՆԱԺՈՂՈՎ

4.- Խմբական այցելութիւն թանգարանները:

Փաստ. 1458-3

Ա 3.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հէյդելբերգ 1897 թ. Ապրիլի 12-ը

Թիւ	Ազգանուն եւ անուն	որտեղացի	մասնագիտութիւնը	համալսարանը
1	Վանցեան Գրիգոր	Ախալքալաք	Փիլիսոփայութիւն	Ենա
2	Մանուկ Աբեղեան	Աստապատցի	Բանասիրութիւն	Բերլին
3	Սարգիս Ա. Խանդամիրեան	Շուշեցի	Տեխնիկ.	Բերլին – Շարլոտենբուրգ
4	Թովմաս Մելիքեան	Բագու	Բնական գիտ.	Ժընեւից
5	Յակոբ Մանանդեան	Ախալցխայ	Հայագիտութիւն	Ենա
6	Չարըգչեան Արամ	Էրզրում	Բժշկութիւն	Լէյպցիգ
7	Անդրէաս Թառայեանց	Բագու	Քիմիկոս	Ցիւրիխ
8	Սուրէն Ադամեան	Շուշի	Քիմիա	Բերլին
9	Զառաֆեանց Սիմէոն	Շուշի-Ղարաբաղ	Մեքենագործ.	Միւնխէն
10	Երուանդ Սինասեանց	Տրապիզոն	Բժիշկ	Նանսի
11	Արմենակ Անդրէասեան	Երզնկա	Գրականութիւն	Լօզան
12	Երուանդ Պալեան	Թէոդոսիացի	Հասարակ.գիտութ.	Ժընեւ
13	Լեւոն Աբաբէգեան	Շուշի	Հասարակ. գիտութ.	Ցիւրիխ
14	Սկրտիչ Շարաբանդեան	Բագու	Բնական գիտութ.	Լայպցիկ
15	Վահան Նալբանդեան	Վան	Պատմ. եւ գրակ.	Լայպցիկ
16	Աշոտ Տէր Պողոսեան	Վան	Բնական. գիտութ.	Լայպցիկ
17	Յակովբ Ղուկասեան	Շուշեցի	Ուս. լեզ. գիտ.	Ախէն
18	Խաչատուր Սարգսեան	Արմտանցի	Ճարտարագիտ.	Փարիզ
19	Արտաշէս Սինասեանց	Տրապիզոն	Ուսան. քիմիայի	Դրեզդեն
20	Աբրահամ Ղուկասեանց	Շուշի	Փիլիսոփայութիւն	Լայպցիկ
21	Մենտոր Բունիաթեանց	Ցղնա	Քաղաք. տնտես.	Լայպցիկ
22	Եղիազարեան Ղազար	Բագու	Նկարիչ	Միւնխէնից
23	Քրիստափոր Հախումեան	Բագու	Բնական գիտութ.	Լայպցիկ
24	Գասպար Մելիք-Ղարագէօզեան	Թփխիսեցի	Քաղաք. տնտեսագ.	Լայպցիկ
25	Մովսէս Աղայեանց [?]	Շուշեցի	–	Ցիւրիխ
26	?	?	?	?

Փաստ. 1459-10

Ա 4.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 1897/98, 1898/99 Թ.Թ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
քան զանձկալի եղբայր անուն»։
ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Այն օրից, երբ արագաքայլ առաջադիմող քաղաքակրթութիւնը իւր կենսաշունչ ճառագայթները ծագելով հայի վրայ, ցօղեց նորա միտքը լուսաւորութեան գաղափարով, երբ կուլտուրայի տուած բարիքների ճաշակը արթնացաւ նորանում, այն օրից քաղաքակիրթ Եւրոպայի բարձրագոյն դպրոցների դռները բախել սկսաւ, ուր եւ սիրալիր ընդունելութիւն գտաւ հայ երիտասարդ ուսանող, մի սերունդ, որը օրէցօր աճելու վրայ է: Այժմ, դեռեւս հաշուի չառած Ռուսաստանի բարձրագոյն դպրոցների մէջ ուսանող բազմաթիւ հայ երիտասարդները, Եւրոպայի զանազան վայրերում՝ ուր կարելի է գիտութեան պաշար ձեռք բերել, ոչ նուազ պատկառելի թուով ուսանողներ կան, որոնք կոչուած են ապագայում մեր նորափթիթ հասարակական գրական ասպարէզում գործչի եւ առաջնորդողի դեր կատարելու, լուսաւորութեան դամպար[5] հանդիսանալով:

Արդ, շատ բնական էր որ այսպէս զանազան վայրերում ցրուած հայ ուսանողները պահանջ զգացին ճանաչել իրար, անձնական եւ ընկերական մտերիմ յարաբերութիւններ եւ ծանօթութիւններ ստեղծել, դեռեւս ուսանողական նստարանների վրայից բարեկամական ձեռք մեկնել իրար, բանաստեղծի հետ «եղբայր ենք մենք» գոչելով, համերաշխութեան ոգին զարգացնել. այս, շատ բնական էր, որ հայ ուսանողը բարձրանալով իւր անհատականից, եսականից, ջանար հասարակական առաքինութիւններով օժտուելու եւ իւր ընկերների հետ միանալով ձգտէր դէպ ի ընդհանուր իդէալները: Պահանջը նախագծել էր ուղին, մնում էր նախաձեռնող ոգին, եւ ահա «Լայպցիգի հայ-ճեմարանական ընկերութիւնը» իւր ժողովներում քանիցս յուզած լինելով այդ հարցը, վերջապէս սորանից մօտ 3 տարի առաջ նամակներով դիմելով մի քանի ուսանողաշատ քաղաքների ուսանողութիւններին, վերջիններիս հաւանութեամբը եւ առաջարկութեամբ ստանձնեց գործը եւ իւր միջից ընտրեց մի յանձնաժողով 4 հոգուց բաղկացած, որոնց վերայ պարտաւորութիւն դրուեց հրաւիրել մի ընդհանուր ուսանողական համագումար եւ ներկայացնել կանոնադրութեան մի նախագիծ հիմնելու համար մի միութիւն, որի նպատակը ամփոփում էր վերոյիշեալ պահանջների մէջ:

Յանձնաժողովը իւր պարտաւորութիւնը կատարելիս՝ ամէնուրեք օժանդակութեան եւ համակրութեան հանդիպեց եւ 1897ի ապրիլին Հայդելբերգում կայացաւ առաջին համագումարը, ուր քննուելով յանձնաժողովի ներկայացրած կանոնադրութեան նախագիծը ու մի քանի փոփոխութիւններից յետոյ հիմնուեց «Միութիւն», որը զուտ ուսանողական բնաւորութիւն ունի, ըստ ամենայնի մի իսկական ուսանողին նպատակայարմար եւ թոյլատրելի սահմանների մէջ է ամփոփուած եւ որեւէ քաղաքական միտք հեռու է իր նպատակից:

«Միութեան» հիմնելու օրից մինչեւ այժմ, համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում ստացած արդիւնքները մի առհաւատչեայ են, որ նախաձեռնողները մի խիստ ցանկալի գործ են կատարել, սխալուել չեն իրենց ընդգծած ուղին մտնելով եւ կարող են իրենց ջանքերը պսակուած տեսնել:

Պատիւ իրենց եւ խրախոյս մեզ:

5.- Ջահ:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ

Հայդելբերգ, Ապրիլի 12ից – 15ը 1897 թ.

Առաջին նիստը կայացաւ ներկայութեամբ 22 ուսանողների Ապրիլի 12ին։ Դասախօսութեան նիւթն էր «Ազգայնութեան մասին ընդհանրապէս եւ ազգայնութիւնը մեր մէջ մասնաւորապէս», իսկ դասախօսը Պրն. Տ.։ Հետաքրքիր թեման դիսկուսսիոնների[6] երկար առիթ տուաւ։

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ երկրորդ նիստը ներկայութեամբ 24 ուս. որ նուիրուած էր ամբողջովին կանոնադրութեան քննութեանը։ Նախ հարց յարուցուեց թէ ներկայ պ.պ. իբրեւ ներկայացուցիչներ վայելո՞ւմ են հարցերի որոշումներում իրենց ընկերութեան անդամների ձայնը թէ ոչ։ Երկար ու տաք վիճաբանութիւններից յետոյ վճռուեց 13ով ընդդէմ 11ի քննել հարցերը իբրեւ մասնաւոր անձնաւորութիւններ։ Սորանից յետոյ դիմեցին համագումարի անունը հաստատելուն որը վճռական լուծում չստացաւ։

Երրորդ նիստը բացուեց Ապրիլի 13ին առաւօտեան 8¼ ժամին ներկայութեամբ 24 ուս.։ Նախ կարդացուեցաւ արձանագրութիւնը, որը տեղիք տուաւ փոքր վիճաբանութեան եւ որոշուեց արձանագրել հիմնական կէտերը եւ վճիռները — 16ով ընդդէմ 8ի —։ Հապա ձայնը անցաւ պ. Վ[անցեան]ին որը խօսաց «Հայերէնի նուազայնութեան եւ կոկութեան մասին»։ Դասախօսութիւնը, ժամանակի սուղութեան պատճառով, դասախօսը ստիպուած էր ընդհատել եւ որոշուեց մի այլ ժամանակ շարունակել դիսկուսսիոնի համար, իսկ ժողովը դիմեց կանոնադրութեան սկզբունքների քննութեանը։

Չորրորդ ժողովը տեղի ունեցաւ նոյն օրը երեկոյեան 5½ին. ներկայ էին բոլոր անդամները։ Պար. Պ[ալեան] դասախօսեց «Գիտութեան կռիւը եւ բարոյականութիւն». դասախօսութիւնը տեղիք տուաւ հետաքրքիր ու տաք վիճաբանութեան, որին մասնակցեցին բաւական թուով պարոններ։

Հինգերորդ նիստը կայացաւ Ապրիլի 14ի առաւօտեան։ Նախ տեղի ունեցաւ գիտական մասը «Հասարակական պատասխանատուութիւնը անհատական հիւանդութիւնների դէպքում» որ կարդում էր պ. Մ[ինասեան]։ Վիճաբանութիւններից եւ կարճ ընդհատումից յետոյ ժողովը դիմեց կանոնադրութեան քննութեանը։ Վիճաբանութեան գլխաւոր կէտերն էին թէ արդեօք մեր միութեան պիտի՞ նայել իբրեւ «ընկերութիւնների միութեան», թէ «անհատների» եւ թէ ի՞նչն է ընկերութեան իսկական նպատակը։ Յայտնուեցան բաւական տարբեր կարծիքներ թէ մէկի եւ թէ միւսի մասին, բայց ոչ մէկը դոցանից հաստատուած ձեւակերպութիւն չստացաւ։

Վեցերորդ նիստը երեկոյեան շարունակութիւն էր հինգերորդի։ Ձեւակերպութիւնները երկու էին եւ երկար վիճաբանութիւններից ու քուէարկութիւնից յետոյ յայտնուեց որ երկուսն էլ հաւասար ձայների քանակութեամբ են ցանկացւում։ Նորից վիճաբանութիւնները ցոյց տուին որ գործը դորանում էլ կանգ կ'առնի եթէ մի որեւէ կողմը փոքր զիջում չանէ — որը եւ տեղի ունեցաւ եւ 16ով ընդդէմ 12ի հաստատուեցաւ հետեւեալ ձեւակերպութիւնը նպատակների III կէտի համար — (որը եւ գլխաւոր նիւթն էր վիճաբանութիւնների) «կազմել իդէալներ մեր հայրենի հողի վերայ գործելու համար»։ Առաջ. պ. Ա.։

I Արտակարգ ժողով կայացաւ Ապրիլի 14ին երեկոյեան 10½ ժամին որով պէտք է քիչ օգնութիւն հասցնուէր կանոնադրութեան քննութեան հարցին։ Նախ հարց եղաւ փոխել միութեան ծրագրի անունը, բայց փոքր վիճաբանութիւններից յետոյ որոշուեց թողնել Լայպցիգի նախագծում դրուած «Եւրոպայի հայ ուսանողների միութեան» անունը։ Այնուհետեւ ժողովը զբաղուեց «կազմակերպութիւն» գլխի քննութեամբը, որը առիթ տուաւ եւ թերթ ունենալու հարցին։

Ութերորդ նիստը կայացաւ Ապրիլի 15ին առաւօտեան 9½ ժամին 14 հոգու ներկայութեամբ։ Պ. Ն[ալբանդեան] յայտնեց որ ժամանակի սղութեան պատճառով ստիպուած է դասախօսութիւնը չկարդալ։ Հապա սկսուեց կանոնադրութեան քննութիւնը։

Առաջարկուեցին

1. Ընդհանուր ժողովներ տարեկան մի կամ երկու անգամ։

2. Կարգադիր մասնաժողով մի ժողովից մինչեւ հետեւեալը։

3. Պարբերական շրջաբերականներ։

Այս երեք կէտը նոյնպէս եւ այն «համարել ուսանող ամէն մէկին որը ուսանելու նպատակով է եկած, բայց անունը ուսանողական (համալսարանի) տետրակումը չկայ» ընդունուեց միաձայն։ Նորից անդամներից 2ը հարց յարուցին խօսալ նպատակի մասին. ժողովը յարգեց խնդիրքը։ Այս պարոնները առաջարկեցին «միմիայն» բառի տեղ «ըստ կարելոյն»ը դնել, որին առաջարկ ձեւակերպողը զիջանեց եւ այդպիսով նպատակը ստացաւ նոյն ձեւը որին տուել էր Լայպցիգի մասնաժողովը։

6.- Բանավէճերու։

Առաջարկուեց կրկին անգամ վերաքուէարկել նպատակը, որը եւ ձայների մեծամասնութեամբ ընդունուեցաւ։

Վիճաբանութիւններից եւ վերաքուէարկութիւններից յետոյ նպատակի հետեւեալ ձեւակերպութիւնը ընդունուեց իբրեւ հաստատուած.

1. Բարոյական եւ մտաւոր չփում առաջացնել հայ ուսանողական խմբերի եւ ուսանողների մէջ։

2. Անձնական ծանօթութիւն մէկզմէկու հետ։

3. Ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ։

Ձայների մեծամասնութեամբ ընդունուեցան հետեւեալ վճիռները։

1. Ընդհանուր ժողովների վճիռները միայն այն դէպքումն են կանոնաւոր, երբ ընդունուած են ժողովին եկած անդամների մեծամասնութեամբ։

2. Միութեան մասնակցող ուսանողական խմբերը ընդհանուր ժողովի որոշումների նկատմամբ պահպանում են լիովին ազատութիւն։

3. 6 կէտում ընդունուեց Պարիզի ծրագրի այն մասը որը վերաբերում էր միութեան հաշուետուութեան խնդիրներում (12 ձայն)։

4. Յաջորդ կարգադրիչ մասնաժողովի ընտրութիւնը թողուեց առանց փոփոխութեան։

5. Միութեան բոլոր անդամները պիտի հոգան կարգադիր մասնաժողովի եւ ընդհանուր ժողովի ծախքերը։

6. Միութեան մասնակցող ուսանողական խմբերը ունենալու են ամենաքիչը մի մի ներկայացուցիչներ ընդհանուր ժողովում։

7. Գործնական ձեռնարկների վերաբերեալ առաջարկները կարգադրիչ մասնաժողովը յայտնում է նախօրօք, բոլոր ուսանողութեան եւ ուսանողական խմբերի ներկայացուցիչները բերում են իրենց հետ ընդհանուր ժողովին թեր եւ դէմ կարծիքների թիւը, իսկ առանձին ուսանողներ որոնք ոչ մի խմբի չեն պատկանում ուղարկում են գրաւոր իրենց կարծիքները եւ ձայները (ընդունուած 15 ձ.)։

8. Պարիզցիների առաջարկը — 13 կէտ — թէ խորհրդակից անդամները մասնակցում են ընդհանուր ժողովին իբրեւ հիւրեր, առանց ձայնի իրաւունքի՝ ընդունուեց 15 ձայնով։

9. Կարգադիր մասնաժողովի համար ուսանողներից որոշուած մի ուսանողական խումբ ընտրում է իւր կողմից յանձնաժողովը։ 2րդ եւ 4րդ պրակ ընդունուեցան անփոփոխ, իսկ 3րդը քիչ փոփոխուած։

10. Պարբերական շրջաբերականներ լոյս են տեսնելու տարեկան 2 անգամ (15 ձայն)։

11. Անդամավճարն է կազմում առնուազը 80 պֆ[էնիգ] կամ մի փրանկ։

Ձայների մեծամասնութեամբ որոշուեց, որ մեր ներկայ կանոնադրութեան կէտերը կարող են փոփոխուել յաջորդ ընդհանուր ժողովների միայն ձայների ¾ մեծամասնութեամբ։

Յաջորդ մի ընդհանուր ժողովի համար ընտրուեց կարգադրիչ մասնաժողով Պարիզի ուսանողութիւնը, իսկ Պարիզեցոց հրաժարուելու դէպքում Լօզանինը, հակառակ դէպքում Բեռլինի կամ Լայպցիգի ուսանողութիւնները։

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Թէպէտ I համագումարում ընտրուած էր Պարիզի ուսանողութիւնը իւր մէջից կարգադրիչ յանձնաժողովի անդամներ նշանակելու, սակայն նոյն տեղի ուսանողական ընկերութեան ներքին անհամաձայնութիւնների պատճառով միջոց չունեցաւ այդ գործը ստանձնել։ Դորա փոխարէն Բեռլինի ուսանողութիւնը նախօրօք Պարիզի եւ միւս տեղերի ուսանողութիւններից հաւանութիւն ստանալով 1898 թուի ամառային կիսամեակում ընտրեց մի յանձնաժողով չորս հոգուց բաղկացած, բայց կիսամեակն իւր վախճանին մօտեցած լինելու պատճառով, անհնար էր այլեւս համագումարը գլուխ բերել, իսկ 1898-1899 ձմեռային կիսամեակին կարգադրիչ յանձնաժողովի անդամներից 2ը հեռացած լինելով Բեռլինից, ուսանողութիւնը ընտրեց ուրիշ 3 անդամ եւս։ Կարգադրիչ յանձնաժողովը կարողացաւ Եւրոպայի հայ ուսանողների վերաբերեալ մի ստատիստիկա կազմել, թէպէտ թերի, մի քանի քաղաքներից բաւարար տեղեկութիւններ ստացած չլինելու պատճառով։ Համագումարի տեղը եւ ժամանակը որոշելու համար յանձնաժողովը կանխաւ դիմեց բոլոր ուսանողներին եւ ի վերջոյ նշանակեց Հայդելբերգ, իբրեւ բոլոր մասնակցողների համար մի կենտրոն տեղ եւ ժամանակը Մարտ 27ից-31ը։ Դասախօսութիւնները սակաւ չլինելու համար, բացի ընդհանուր դիմումներից, մի քանի ուսանողներին առանձնապէս դիմելու արժան դատուեց եւ եօթն դոցանից դասախօսելու խոստումն տուին, բայց 4ը զանազան արգելառիթներից դրդուած՝ նախ քան համագումարի կայանալը հրաժարուեցին դասախօսելուց, բայց այլեւս յանձնաժողովը միջոց չունեցաւ ուրիշ դասախօսութիւններով փոխարինել դոքա։

Լեմբերգի լեհական-հայ ուսանողներին եւս հրաւէր ուղարկուեցաւ համագումարի մասնակցելու, սակայն դոքա չկարողացան անձամբ ներկայ լինել, այլ միմայն մի գրութեամբ իրենց պատրաստականութիւնը յայտնեցին «միութեան» անդամակցելու, խոստանալով միւս համագումարին անպատճառ ներկայ լինել։ Կարգ. յանձնաժողով հաւաքել է 17 մ. 20 պփ.։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ

Հայդելբերգ՝, Մարտի 27ից-31ը 1899 թ.

Մարտի 28ի երեկոյեան՝ կարգադրիչ յանձնաժողովի կազմած օրակարգով տեղի ունեցաւ անդամների ողջունումն եւ յաջորդ օրը սկսուեցին պարապմունքները ներկայութեամբ 15 *ուս.։*

Առաջք նիստին — մարտի 27 *— կայացաւ պաշտօնական անձանց ընտրութիւնը բոլոր ժողովների համար մի նախագահ, մի փոխ նախագահ եւ երեք քարտուղարներ։*

Կարգադրիչ յանձնաժողովի նախագահը զեկուցումն տուեց յանձնաժողովի գործունէութեան մասին եւ ներկայացրեց հաշիւ։

Լեմբերգի լեհական-հայ ուսանողները, որոնց հրաւէր էր ուղարկուած յանձնաժողովի կողմից, համակրութեամբ իրենց ձեռքն էին մեկնում «միութեանս» եւ ուղարկել էին մի գրութիւն, որը համագումարում կարդացուեց եւ վճռուեց պատասխանել։

Երկրորդ նիստում Պր. Վ. Ն[ալբանդեան] — Լայպցիգից — կարդաց մի դասախօսութիւն «պատմութիւնն ու պատմական ուղղութիւնները նոր ժամանակներում եւ մի համառօտ տեսութիւն հայկական պատմագրութեան մասին». երկար վիճաբանութիւն հետեւեց դասախօսութեան։

Երրորդ նիստը նուիրուած էր Լայպցիգի ուսանողութեան դրած առաջարկի քննութեան, միութեան օրգան ունենալու վերաբերեալ, որն երկար խօսակցութեան առիթ տուեց եւ ի վերջոյ ընտրուեց մի յանձնախումբ այս առաջարկը մշակելու եւ իւր եզրակացութիւնները համագումարին ներկայացնելու։

Չորրորդ նիստում դասախօսութիւն կարդաց Պր. Մ. Ց[ովհաննիսեան] «Հայ համալսարանական կոչման մասին», որը մի շահաւէտ վիճաբանութեան նիւթ դարձաւ։ Միութեան կանոնադրութեան մի քանի կէտերը փոփոխելու առաջարկները քննուեցան եւ վճռուեց միաձայն, IV 2*-ի մէջ «պէտք է» բառերը փոխարինել «իրաւունք ունի» խօսքերով։ Այս նիստի վերջում եւ յաջորդ նիստի սկզբում նոյնպէս միաձայն վճռուեց կանոնադրութեան մէջ մտցնել իբրեւ ծանօթութիւն որ «համագումարը վերապահում է իրաւունք՝ անհրաժեշտ դէպքում օրակարգը փոփոխութեան ենթարկել»։*

Հինգերորդ նիստն ամբողջապէս նուիրուած է կանոնադրութեան մշակմանը։ «Նպատակի» մէջ, իբր առանց իմաստի յիշուած, «բարոյական եւ մտաւոր» բառերը ջնջելու առաջարկները մերժուեցան։ Կանոնադրութեան IV.9. *փոխելու առաջարկը, ինչպէս կարգադրիչ յանձնաժողովի վերջին շրջաբերականներումը գրուած էր, ընդունելի համարուեց, բայց գտնուեց թերի, ուստի ամբողջացնող ձեւակերպութիւններ տրուեցան։*

14 ձայնով ընդդէմ 2ի (մէկը ձեռնպահ) վճռուեց պահել շրջաբերականներում առաջարկած ձեւակերպութիւններն որ էր «գործնական ձեռնարկների վերաբերեալ վճիռները լիազօր են այն դէպքում, երբ դոքա համագումարից յետոյ կարգադրիչ յանձնաժողովի կողմից միութեան բոլոր անդամների քուէին կ'ենթարկուին եւ կը ստանան տուած ձայների մեծամասնութիւնը», ապա աւելացնել «այս ձեռնարկները վերջնականապէս վճռըւում եւ ի կատար են ածւում կամ համագումարի եւ կամ կարգադրիչ յանձնաժողովի միջոցաւ համաձայն առաջնի յանձնարարութեանը»։ VII.1. *վճռուեց միաձայն «նախապէս» խօսքի տեղ մտցնել ժամանակամիջոց «մի ամիս առաջ» խօսքերով։ Կանոնադրութիւնը, առանց բուն իմաստին դպչելու, մի քանի թեթեւ լեզուական փոփոխութիւնների ենթարկուեցաւ։*

Վեցերորդ նիստում դասախօսեց Պր. Գ. Թ[ոքաթլեան] — Բեռլինից — նիւթ ունենալով «Տաճկաստանի հայ երիտասարդութեան մասին»։ Դասախօսութիւնը պատճառ դարձաւ զանազան անդամներին իրենց հայեացքները լուսաբանելու եւ պաշտպանելու որով այս ժողովը նոյնպէս հետաքրքիր անցաւ։

Եօթներորդ նիստին թերթի հարցը մշակող յանձնախումբը յանգած եզրակացութիւնների զեկուցումը ներկայացրեց, բայց համագումարում տեղի ունեցած վիճաբանութիւնները ունեցան հետեւեալ արդիւնքը։ 17 *անդամներից* 14 *ձայնով ձեւակերպուեց այսպէս։ ի նկատի ունենալով զանազան կողմերից յայտնած ցանկութիւնները այսինքն՝ հրատարակել պարբերական տեղեկութիւններ ուսանողների մասին, համագումարը պատուիրում է կարգադրիչ յանձնաժողովին, կանոնադրութեան որոշման համեմատ բաւականութիւն տալ այս պահանջին եւ հրատարակել սեմեստրը մի տետրակ։ Բովանդակութիւնը կը լինի տեղեկութիւններ համագումարի, ուսանողական ժողովների եւ ուսանողների մասին։ համագումարում եւ զանազան խմբերում կարդացած դասախօսութիւններից տեղեկութիւններ եւ ցանկութեան համեմատ կարճառօտ կոնսպէկտներ[7], հետաքրքիր տեղեկութիւններ ուսանողական աշխարհից։ Թերթը* 13 *ձայնով որոշուեց անուանել «Տեղեկագիր Եւր. հայ. ուս. միութեան»։*

Հաւամագումարի վերջին ութերորդ նիստում Ժընեւի ուսանողութեան Պրն. Մ. Ց[ովհաննիսեան] միջոցաւ արած առաջարկն այն է «միութիւնը նախաձեռնող հանդիսանայ եւ ձեռնարկէ գիտական բրոշիւրներ թարգմանելուն եւ հրատարակելուն», ժամանակի սղութեան

7.- Ամփոփումներ։

պատճառով մանրամասն քննութեան նիւթ չկարողացաւ դառնալ եւ վճռուեց խնդրել Ժընեւի ուսանողութեան, մշակել սոյն առաջարկը եւ մի պրոգրամ ներկայացնել կարգադրիչ յանձնաժողովին, որը դառնալու է յաջորդ համագումարի զբաղման նիւթ։ Կարգադրիչ յանձնաժողովի ընտրութեան համար որոշուեց Լայպցիգի ուսանողութիւնը, իսկ սորա յանձն չառած դէպքում Բեռլինի ուսանողութիւնը։

II. համագումարում մասնակցեցան 20 *ուսանողներ եւ մի ուսանողուհի։*

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԼՈՒՐԵՐ

ԲԵՌԼԻՆ

Վերջին մի քանի տարուայ ընթացքում Բեռլինի համալսարանում պոլիտեխնիկումում եւ գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցում բաւական մեծ թուով հայ ուսանողներ են հաւաքուած։ Յաճախ փորձեր են եղած մի «հայ ճեմարանական ընկերութիւն» հիմնելու, սակայն համալսարանի վարչութիւնից թոյլատուութիւն չստանալով, մնացել են անհետեւանք։ Այնու ամենայնիւ ուսանողական գրական ժողովներ տեղի են ունենում, որոնց համար առանձնապէս թոյլատուութիւն ստանալու կարիք չկայ։

Սորանից 3 *տարի առաջ* 2-3 *պարոններ* 600 *մարկի չափ մի գումար նուիրեցին Բեռլինի հայ ուսանողութեան եւ* 1897*ի մարտին, մի ընդհանուր ուսանողական ժողովում վճռուեց այդ գումարով, որի վրայ աւելանում են յաճախ նորանոր նուիրատուութիւններ, հիմնել մի «ուսանողական կասսա», որի նպատակն է «փոխատուութեամբ օգնել այն հայերին, որոնք եկել են Բեռլին ուսանելու»։ Ընտրւում է մի գանձապահ եւ երկու օգնականներ, որոնք ամէն կիսամեակի սկզբին եւ վերջին ընդհանուր ժողով են հրաւիրում ուսանողութեանը եւ ներկայացնում են հաշիւ։ Կայ նոյնպէս մշակուած կանոնադրութիւն։*

Բեռլինի շատ ուսանողների ցանկութիւնը — կազմել Բեռլինում մի ընդհանուր ուսանողական գրական ընկերութիւն, իրականացաւ 1898 *թուի Դեկտեմբերին, երբ* 15 *ուսանողներ հաւաքուած կազմեցին մի կանոնադրութիւն, որը քննուելուց եւ վերաբացնուելուց յետոյ հիմնուեց «Բեռլինի ընդհանուր հայ-ուսանողական գրական միութիւն» որի նպատակը կազմում է՝ «մօտ ծանօթութիւններ եւ մտաւոր շփումն առաջացնել Բեռլինի հայ ուսանողների մէջ»։ Նոյն նպատակն իրագործելու համար կայանում են «պարբերական ժողովներ սեմեստրի ընթացքում»։ Ժողովի զբաղմունքների առարկաներն են «դասախօսութիւններ եւ ուսանողներին հետաքրքրող զանազան հարցեր»։* 1898/99 *ձմեռային կիսամեակում ընկերութիւնն ունեցել է* 9*ը դասախօսութիւններ հետեւեալ նիւթերի մասին։*

1. *«Հայոց ազգային-աշխարհիկ երգեցողութեան մասին* 19*րդ դարում»։*
2. *«Երկու խօսք ժամանակակից հայրենասիրութեան մասին»։*
3. *«Հոգեպաշտութիւնն եւ նորա մնացորդները մեզանում»։*
4. *«Այժմեան բնագիտական աշխարհայեցողութիւնը»։*
5. *«Կրօնին գիտութեան յարաբերութիւնները կամ Անիմանալին* (das Unerkennbare) *ըստ Սպենսերի»։*
6. *«Տնտեսական գործունէութեան զարգացումը միջին դարերում»։*
7. *«Ընտանիքի տնտեսական եւ սոցիալական նշանակութիւնը»։*
8. *«Թոքախտը»։*
9. *«Տաճկահայ կինը»։*

1899 թուի ամառային կիսամեակին նոյն ընկերութեան մէջ եղան դասախօսութիւններ հետեւեալ նիւթերի մասին։

1. *«Հայոց ներքին կեանքի շարժման մի քանի կողմերի մասին»։*
2. *«Գերմանական նորագոյն բանաստեղծութիւնից»։*
3. *«Ֆր. Նիչէ եւ նորա աշխարհահայեացքը»։*
4. *«Կամքի էութիւնն եւ նորա խաբուսիկ ազատութիւնը»։*
5. *«Թոքախտի եւ նորա դէմ կռուելու մասին»։*

Ընկերութիւնն ունեցել է 1898/99 *ձմեռային կիսամեակին* 19 *անդամներ իսկ* 1899 *ամառային կիսամեակին* 18 *անդամներ։*

ԲԵՌԼԻՆԻ «ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»

Բեռլինի ուսանողական «Մատերիալիստական ընկերութիւնը» հիմնուած է 1897 *թուի Նոյեմբերի* 20*ին։*

Նպատակը՝ — ի մի գումարել մատերիալիստական աշխարհայեցողութիւն ունեցող ուսանողներին եւ մտքերի փոխադարձ շփումով պարզել այդ աշխարհայեցողութեան վերաբերուող կէտեր։

Միջոց՝ — ժողովներ ունենալ եւ կապ պահել Բեռլինից հեռացած ընկերների հետ։

1897/8 *ձմեռային սեմեստրում*[1] *անդամների թիւը հասնում էր* 17*ի։ կարդացուել են դասախօսութիւններ հետեւեալ նիւթերի մասին։*

1. *«Մեր սպասելիքները բակտերոլիական քիմիայից»։*
2. *«Իդէալիստական եւ մատերիալիստական աշխարհայեցողութեան պատմութեան մասին»։*
3. *«Հասարակութիւն եւ ինտելիգենցիա»։*
4. *«Ընտանիքի Եւոլիւցիա»։*
5. *«Վաշխառութիւնը Կովկասում»։*
6. *«Կովկասի տնտեսական զարգացման մասին»։*
7. *«Մարքս եւ Մարքսիզմ»։*

8. «*Ընկերութեան կասա, գրադարան եւ ռեֆերատներ*»[8]։
9. «*Գերմանական շկոլայի*[9] *ազդեցութիւնը Կովկասի կեանքի վրայ*»։
10. «*Աշխատանք եւ Ռիթմուս*» (Ritmus)։
11. «*Շերամի արդիւնաբերութիւնը Կովկասում*»։
12. «*Բնագիտութեան եւ քաղաքատնտեսութեան կապը*»։
13. «*Վերադիր արժէք եւ նորա պատմական տէրը*»։
14. «*Կապիտալիզմի լաւ եւ վատ կողմերը*»։
15. «*Վերջնական վճիռներ*»։
16. «*Քիմիան առօրեայ կեանքում*»։

Բացի այս ժողովներից ընկերութիւնն ունեցել է 6 գործնական ժողովներ։

Ամառը 1898 *թուի*

1. «*Տնտեսական մատերիալիզմ*»։
2. «*Բնագիտութիւնն իբրեւ հիմք աշխարհայեցողութեան եւ գործնական կեանքի*»։

Բացի սոցանից երկու գործնական նիստեր։

Ձմեռը 1898/99 *թուի*

1. «*Հոգեբանութեան առաջնակարգ պրոբլեմներից մէկը — հոգի եւ մարմին*»։
2. «*Մատերիալիզմի հիմքերը*»։
3. «*Դարվինիզմ եւ սոցիալիզմ*»։
4. «*Մասնաւոր սեփականութեան առաջացրած հետեւանքները*»։
5. «*Մարդու ծագումը*»։
6. «*Բջիջը եւ նորա կեանքը*»։

Բացի սոցանից երկու գործնական նիստեր։

Ամառը 1899 *թուի*
մի գործնական նիստ

1899 *թուի մարտին Հայդելբերգում կայացած եւրոպական ընդհանուր հայ ուսանողական ժողովում ընտրել էին երրորդ ընդհանուր ժողովի համար Լայպցիգի ուսանողութեան կարգադրիչ, իսկ Բեռլինի ուսանողութեանը կանդիտատ։*

Լայպցիգի ուսանողութիւնն ինչ ինչ պատճառներով չկարողանալով ստանձնել այդ պաշտօնը, յանձնարարեց Բեռլինի ուսանողութեանը, որը Մայիսի 18*ի ժողովով ընդունում է այդ առաջարկը եւ ընտրում է յանձնաժողովի չորս անդամներ։*

Յանձնաժողովի առաջին նիստում — Յունիսի 3*ին — միաձայն որոշուեց դիմել եւ հարցնել եւրոպական բոլոր հայ ուսանողութեան, ժողովների, դասախօսների, դասախօսութիւնների եւ ուսանողութեան թուի մասին։ Ստացուեցան մի քանի քաղաքներից պատասխաններ, ի միջի այլոց Լեմբերգի լեհական հայ ուսանողներից մի նամակ, որն արժանի է ուշադրութեան։ Այդ նամակում Լեմբերգի ուսանողներն ուրախութեամբ իրենց ցանկութիւնն են յայտնում մասնակցելու եւրոպական հայ ուսանողութեան երրորդ ընդհանուր ժողովին եւ խնդրում են Բեռլինի ուսանողութեան գնալ իրենց մօտ (Լեմբերգ) հայոց լեզուն սովորեցնելու։*

ԼԱՅՊՑԻԳ

Լայպցիգի հայ ճեմարանական ընկերութիւնն՝ որն բաղկացած է 9*ը ուսանողներից, անցեալ* (98/99 *թ.*) *ձմեռային սեմեստրում ունեցել է* 12 *դասախօսութիւն։*

1. «*Վրաց եկեղեցւոյ բաժանումը հայոցից իւր նախորդ եւ յետնորդ հանգամանքներով*»։
2. «*Գեղարուեստի էութիւնն ու նպատակը*»։
3. *Մի գերմանացու դասախօսութիւն*
4. «*Գերմանական թատրերգութեան մասին*» — *կարդացել է գերմանացի։*
5. «*Զինական բանաստեղծութիւն եւ կոնֆուսիոս*»— *կարդացել է գերմանացի։*
6. «*Հայոց լեզուի ուսումնասիրութիւնը Եւրոպայում ըստ համեմատական լեզուագիտութեան*»։
7. «*Տեսական աշխարհայեցողութիւն առանց փորձնականութեան*»։
8. «*Քարածխային հանքերը Գերմանիայում*» — *կարդացել է գերմանացի։*
9. «*Հայի այժմեան կեանքի ներքին եւ արտաքին հանգամանքները եւ հայ ուսանողութիւնը*»։
10. «*Քաղաքատնտեսութեան հիմնական սկզբունքները*»։
11. «*Բոյսի եւ մարդու յարաբերութիւնը հայ բանաստեղծութեան մէջ*»։
12. «*Դրեզդենի ժողովրդական դպրոցների աշխատութիւնների ցուցահանդէսը եւ մի ընդհանուր ակնարկ եւրոպական մեծ ազգերի արուեստագիտական յառաջադիմութեան վրայ*»։

ՄԻՒՆԽԷՆ

Միւնխէնի հայ ուսանողութիւնը որը բաղկացած է 8 *հոգուց մինչեւ այժմս կազմակերպուած խումբ չի ունեցել եւ դասախօսութիւններ չէ կարդացուել։*

Յոյս կայ որ միւս սեմեստր ուսանողական ժողովներ տեղի ունենան։

ՑԻՒՐԻԽ

Ցիւրիխի ուսանողութիւնն՝ որն բաղկացած է 9 *հոգուց (երկուսը նորեկներ), կազմակերպուած խումբ չունի, բայց եւ այնպէս անցեալ ձմեռային սեմեստրում կարդացուել են դասախօսութիւններ ա. Պրն. Ա. «Սաղմի զարգացման սկզբնական շրջանների մասին», իսկ ամառուայ սեմեստրում Պրն. Ա. «Արհեստը հայոց մէջ»։*

8.- Գրքի կամ ուսումնասիրութեան համառօտ շարադրանք:
9.- Դպրոց, վարդապետութիւն:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Որքան սեմեստր են լսել
		Ա. ԳԵՐՄԱՆԻԱ 1.- ԲԵՌԼԻՆ		
1	Ներսէսեան դպր.	Փիլիսոփայութիւն	Վան	VI
2	Ռէալական եւ համալսար. Dr. Philos	Բժշկութիւն	Շուշի (գիտից)	XII
3	Ռէալական	Բնագիտութիւն	Բագու	VI
4	Ռէալական եւ Ինժինէրական ինստիտուտ	Մեքենայագիտութիւն	Շուշի	I
5	Գիմնազիայի VII դաս.	Հասարակ. գիտ.	Շուշի	V
6	Առեւտրական դպր.	Հասարակ. գիտ.	Ռոստով	I
7	Գիմնազիայի VII դաս.	Փիլիսոփայութիւն	Շուշի	IV
8	» »	Քիմիա	»	V
9	Լազարեան ճեմ. VI դ.	Փիլիսոփայութիւն	Ն. Նախիջեւան	III
10	Թեմական դպրոցից	Քիմիա	Շուշի	III
11	Ռէալականի V դաս.	Հասարակ. գիտ.	»	I
12	Գիմնազիայի VIII դաս.	»	Աստրախան	III
13	Ճեմարանից	Երաժշտութիւն	Կուտինա	V
14	Գիմնազիա եւ բժիշկ	Բժշկութիւն	Տփխիս	I
15	Քոլէճ (ֆր. գիմն.)	»	»	XI
16	Ռէալական դպր.	Քիմիա	Շուշի	
17	»	Գիւղատնտեսութ.	Գէօկչայի գաւ.	IV
18	» VI դ.	Բժշկութիւն	Ղրիմ	II
19	» դպր.	Քիմիա	Շուշի	VII
20	» »	Հանքային գործարանագիտ. (Hüttenkunde)	Մեղրի	V
21	» »	Բժշկութիւն	Հաղբատ	II
22	Գիմնազիա	Մեքանայագիտ.	Տփխիս	
23	Պերպերեան դպր. (Պոլսում)	Հասարակ. գիտ.	Սամսոն	
24	Ռէալական	»	Շուշի	
25	Առեւտրական դպր.	Քաղաքատնտեսութիւն	Ագուլիս	I
26	Ճեմարան	Երաժշտութիւն	Մոզդոկ	I

Թիւ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Որքան սեմեստր են լսել
		2.- ԲՐԵՍԼԱՒ		
1	Ռէալականից	Մատեմատիկա	Ղրիմ	VIII
		3.- ԴԱՐՄՇՏԱՏ		
1	Ներսէսեան դպր.	Մեքենայագիտ.	Բագու	I
2	»	»	Ախալցխա	III
3	»	»	Տփխիս	II
4	»	»	Բագու	I
5	»	»	»	
6	»	»	Գօրի	
		4.- ԴՐԵԶԴԵՆ		
1	Ռէալական դպր.	Քիմիա	Շամախի	VIII
2	»	»	Տրապիզոն	VIII
		5.- ԼԱՅՊՑԻԳ		
1	Ճեմարան	Աստուածաբան.	Մեծ Սալա, Նոր Նախիջեւան	V
2	Կենդրոնական վարժ.	Մանկավարժութ.	Ակն	I
3	Ճեմարան	Բնագիտութիւն	Վաղարշապատ	II
4	»	Համեմատական Լեզուագիտութ.	Շուշի	V
5	Ներսէսեան դպր.	Բնագիտութիւն	Լոռի	I
6	»	Պատմութիւն	Վան	
7	»	Հասարակակ. գիտ.	Գէօկչայ	VI
8	Ռէալական	Քիմիա	Բագու	VIII
9	Գիմնազիա	»	Տփխիս	I
10	Ռիգա	»	Շամախի	V
11	Ներսէսեան դպր.	Բժշկութիւն	Կարին	V
		6.- ՀԱԼԼԷ		
1	Գէորգեան ճեմարան	Աստուաբանական	Կիլիկիա	I
2	»	»	Ղազախ	V
3	»	Քիմիա	Լոռի	I

Թիւ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Որքան սեմեստր են լսել
		7.- ՄԻՒՆԽԷՆ		
1	Ռէալական դպր.	Մեքենայագիտ.	Շուշի	XII
2	»	»	»	XIII
3	»	»	Տփխիս	III
4	»	»	Բագու	III
5	»	»	Շամախի	III
6	»	»	»	I
7	»	Գրականութիւն	Պոլիս	XII
8	» IV դաս.	Նկարչութիւն	Բագու	V
		8.- ՓԵՏԵՐԲԵՐԳ		
1	Ռէալական դպր.	Լեռնային գործ.	Սիւնիք	II
2	»	»	Ղուբա	III
3	»	»	Զանգեզուր	III
		9.- ԵՆԱ		
1	Ռէալական եւ համալ. Dr. philos.	Բժշկութիւն	Մեղրի	I
		II. ՖՐԱՆՍԻԱ		
		1.- ՄՈՆՊԵԼԻԷ		
1	Անյայտ է	Բժշկութիւն	Կեսարիա	X
2	»	»	Թոգաթ	X
3	»	»	Պոլիս	VI
4	»	»	Թալաս	VI
5	»		Աստրախան	VI
6	»	»	Ֆիլիպպէ	VI
7	»	Գիւղատնտեսութ. (Երկրագործութ.)	Զմիւռնիա	III
8	»	»	Պոլիս	II
9	»	»	»	II
10	»	»	Դարս	II

Թիւ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Որքան սեմեստր են լսել
		2.- ՆԱՆՄԻ		
1	Անյայտ է	Բժշկութիւն	Շամախի	VII
2	»	»	Սեբաստիա	IX
3	»	»	Պոլիս	VII
4	»	»	Կեսարիա	IX
5	»	»	Իզմիտ	VII
6	»	»	Ատաբազար	XI
7	»	»	»	–
8	»	»	Սեբաստիա	IX
9	»	Քիմիա	Շուշի	V

3.- ՓԱՐԻԶԻ

Ուսանողների մասին մանրամասն տեղեկութիւններ չկան, 50-ի մասին կայ թէ ինչ էին ուսանում 1897/8 թ. ցուցակով, իսկ ընդհանուր թիւը կազմում է մօտաւորապէս 130 հոգի

1. Երկրագործութիւն
2. Ճարտարապետութիւն
3. Իրաւագիտութիւն
7. Ինժեներութիւն
18. Բժշկութիւն
8. Գրականութիւն
1. Առեւտրական գործ
5. Նկարչութիւն
1. Նաւային գործ
1. Լեզուագիտութիւն
3. Երաժշտութիւն

II. ՋՈՒԻՑԵՐԻՍ

1.- ԼՕԶԱՆ

1	Անյայտ է	Բժշկութիւն	Ռոստով	I
2	»	»	Կեսարիա	I
3	»	»	Դարաքիլիսա	IX
4	»	Գրականութիւն	Իզմիր	I
5	»	»	Երզնկա	VI
6	»	Ինժիներութիւն	Պոլիս	II

Թիւ	Ի՞նչ հիմնարկութիւններից են եկած	Ի՞նչ են սովորում	Ծննդավայր	Որքան սեմեստր են լսել
		2.- ԺԸՆԵՒ		
1	Ատանայի միջն. դպրոց	Իրաւաբանութ.	Ատանա	I
2	Կեդրոնակ. վարժ.	Ընկերագիտութիւն	Պրուսա	VI
3	Ճեմարան	Հասարակակ. գիտ.	Թէոդոսիա	VI
4	Սանասար. վարժ.	Քիմիա	Տրապիզոն	IV
5	Ազգային վարժ.	Բնագիտութիւն	Պոլիս	III
6	Կեդրոնակ. վարժ.	»	Ակն	I
7	Սանասարեան վարժ.	Քիմիա	Կարին	VII
8	Ռէալական դպր.	Հասարակակ. գիտ.	Դարաառաբազար	VII
9	»	Քիմիա	»	I
10	Ներսէսեան դպր.	Հասարակ. եւ բնական գիտութիւններ	Ախալքալաք	VII
11	Գիմնազիա	Բժշկութիւն	Նոր Նախիջեւան	I
12			Ղզլար	III
13		Հասարակակ. գիտ.	Նոր Նախիջեւան	I
14		Բնագիտութիւն	Շուշի	I
15		Ատամնաբոյժ		
16	Գիմնազիա	Քիմիա		VIII
17	Շուշ. դպրոց	Բնագիտութիւն	Շուշի	VI
18	Գիմնազիա	Բնական գիտութ.	Շուշի	VI
		3.- ՑԻՒՐԻԽ		
1	Ռէալական դպր.	Քիմիա	Բագու	XIV
2	»	Բժշկութիւն	Շուշի	VII
3	Սանասար. վարժ.	Քիմիա	Արաբկիր	V
4	»	Մեքենայագիտ	Կարին	I
5	Ռէալական դպր.	Քիմիա	Մատրասա	VI
6	»	Ֆիզիկա	Շուշի	V
7	Մոսկուայի մեքենայագիտ. դպր.	»		

Բացի վերոյիշեալ ցուցակից, ստացուած են տեղեկութիւններ, որ 1 ուսանող Իտալիայի Պաւիա քաղաքում սովորում է բժշկութիւն, իսկ 4 ուսանող Լիեժում (Բելգիա) սովորում են էլէկտրոտեխնիկա:

Մասնագիտութեամբ դասաւորուած են

Մասնագիտութիւն	Գերմանիա	Ֆրանսիա	Զուիցերիա	Ընդամէնը
Բժշկութիւն	7	32	6	45
Հասարակական գիտ.	18	14	8	40
Բնագիտութիւն	3	–	5	8
Գեղարուեստ	2	10	–	12
Գիւղատնտեսութիւն	1	5	–	6
Քիմիա	10	8	10	28
Մեքենայագիտ. եւ լեռնային գործ.	18	–	1	19
Ընդամէնը	59	69	30	158

Ուսանողների ընդհանուր թիւ

Ռուսաստանից եկած			Տաճկաստանից	
Շուշի	Բագու	Զանազան տեղերից[1]	Պոլիս	գաւառներ
19	8	43	7	31

1) Այսպիսի կաթգաւորման պատճառը այն է որ միւս քաղաքներից եկածները 3ից չեն անցնում:

Այստեղ հաշուած են միայն այն ուսանողները, որոնց ծննդավայրի մասին տեղեկութիւններ կան: Իսկ ընդհանուր, Եւրոպայի հայ ուսանողների թիւ՝ հաշուած եւ Պարիզի 50 հոգին, հասնում է մասնատրապէս 230ի:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ՝

I. ՆՊԱՏԱԿ

Բարոյական եւ մտաւոր հաղորդակցութեան մէջ դնել հայ ուսանողական խմբերը եւ ուսանողները, սոցա՝ իրար հետ անձնական ծանօթութիւններ անելուն նպաստել եւ ընդհանուր իդէալներ զարթեցնել ուսանողութեան մէջ:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ՝

1. *Համագումար տարեկան մի անգամ.*
2. *Կարգադիր մասնաժողով մի համագումարից մինչեւ միւսը.*
3. *Պարբերական շրջաբերականներ (տես պրակ. VI)*

III. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ՝

1. *Միութեան անդամակցելու իրաւունք ունին Եւրոպայի բոլոր հայ ուսանողուհիները եւ ուսանողները, ան-*

*) Կանոնադրութիւնը իւր ներկայ ձեւը ստացել է 1899 մարտին Հայդելբերգում կայացած II ընդհանուր ժողովում:

կախ նոցա մասնակցութիւնից տեղական խմբերում:

Ծանօթ. Ուսանողներ կը համարուին նոքա՝ որոնց անունները գտնւում են կիսամեակի ուսանողական մատեաններում, կամ որոնք իրանց ընդհատած ուսումը շարունակել են ուզում առաջիկայ կիսամեակում:

2. *Ամէն գործօն անդամ ընտրող է եւ ընտրելի:*

3 *Գործօն անդամները պարտաւոր են միութեան ծախսերը հոգալու համար իւրաքանչիւր կիսամեակում հատուցանել որոշ տուրք, որը լինելու է առնուազը մի ֆրանկ կամ 80 պֆէնիգ:*

4. *Գործօն անդամը իւր ուսանողական շրջանն աւարտելուց կամ ընդհատելուց յետոյ եւս կարող է շարունակել իւր անդամակցութիւնը եւ մասնակցել համագումարին առանց ձայնատուութեան իրաւունքի:*

5. *Բոլոր անդամները իրաւունք ունին դասախօսութիւն կարդալու կամ ուղարկելու համագումարին, եթէ ներկայ լինելու հնար չունին:*

IV. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԿԱՄ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝*

1. *Համագումարի տեղը, ժամանակը եւ տեւողութիւնը որոշում է կարգադիր մասնաժողովը խորհրդակցելով ուսանողական խմբերի եւ ուսանողների հետ:*

2. *Ամէն մի ուսանողական խումբ, որը մասնակցում է միութեանը, իրաւունք ունի համագումարին ներկայացուցիչներ ուղարկել:*

Ծանօթ.- Պաշտօնական ներկայացուցիչը քերում է իւր խմբի կարծիքները եւ միութեան վերաբերեալ ռեւէ՛ առթիւ քուէարկութեան արդիւնքը եւ ունի միայն մի ձայն:

3. *Համագումարը բաց է անում կարգ[ադիր] մասն[ախմբի] նախագահը որը եւ առաջարկում է համագումարին համար նախագահ ընտրել:*

4. *Համագումարի պաշտօնական անձերը կազմում են մի նախագահ ամէն մի նիստի համար եւ երեք քարտուղարներ համագումարի բոլոր նիստերի համար — որոնք ընտրւում են բաց քուէարկութեամբ:*

5. *Ընդհանուր ժողովի զբաղմունքները տեղի են ունենում այն ծրագրով եւ օրակարգով որը նախապէս կազմել է կարգադիր յանձնաժողովը:*

Ծանօթ.- Համագումարին վերապահւում է իրաւունք, անհրաժեշտ դէպքում, օրակարգը փոփոխութեան ենթարկել, իսկ ծրագրից դուրս առաջարկած հարցերը կարող են ժողովի զբաղման նիւթ դառնալ բոլոր հերթական հարցերից յետոյ՝ ժողովի միաձայն ցանկութեամբ:

6. *Համագումարի նիստերի զբաղմունքներին առարկայ կարող են լինել կարգադրիչ յանձնաժողովի տուած համարատուութիւնը, միութեան վերաբերեալ ընդհանուր խնդիրներ, դասախօսութիւններ եւ ուրիշ տեղեկութիւններ:*

7. *Դասախօսութեան նիւթ կարող են լինել միայն այն նիւթերը, որոնք որեւէ՛ առնչութիւն ունին հայկական կեանքի հետ:*

8. *Համագումարի նիստերը միայն այն ժամանակ կանոնաւոր են, երբ նորան մասնակցում են ընդհանուր ժողովին եկած անդամների մեծամասնութիւնը:*

9. *Համագումարի վճիռները գործնական կարեւոր ձեռնարկների վերաբերեալ լիազօր են այն դէպքում, երբ դոքա համագումարից յետոյ կարգադիր յանձնաժողովի ձեռքով միութեան բոլոր անդամների քուէին ենթարկուելով, կը ստանան տուած ձայների մեծամասնութիւնը:*

Այս ձեռնարկները վերջնականապէս վճռւում եւ ի կատար են ածւում կամ համագումարի եւ կամ կարգ[ադիր] յանձնաժողովի միջոցաւ՝ համաձայն առաջինի յանձնարարութեան:

10. *Համագումարի վճիռները միայն այն դէպքում են լիազօր, երբ ընդունուած են ներկայ անդամների բացարձակ մեծամասնութեամբ:*

Ծանօթ.- Հակառակ դէպքում երրորդ քուէարկութիւնից յետոյ վճիռ լիազօր է հասարակ մեծամասնութեամբ (եթէ մերժող ձայները մեծամասնութիւն չեն):

11. *Համագումարի վերջին նիստում որոշւում է այն քաղաքը, որի ուսանողները իրանց միջից կարգադիր մասնաժողովը պիտի ընտրեն հետեւեալ համագումարի համար որին եւ յանձնւում են վարչութեան պաշտօնական թղթերը:*

V. ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Համագումարից որոշուած ուսանողութիւնը ընտրում է իւր միջից կարգադիր յանձնաժողովը։
2. Կարգադիր յանձնաժողովը բաղկանում է մի նախագահից, մի քարտուղարից եւ առնուազն երկու անդամներից։
3. Կարգադիր յանձնաժողովը ուսանողներից տեղեկութիւններ է ստանում որ տպագրում է իւր շրջաբերականներում, ուր եւ տպագրւում է ընդհանուր ժողովից մի ամիս առաջ համագումարի վերջնական ծրագիրը։
4. Կարգադիր յանձնաժողովը պաշտօնական թղթերը յանձնում է համագումարի վարչութեանը։

VI. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1. Միութեան մէջ մտնող ուսանողական խմբերը եւ ուսանողները իրար հետ յարատեւ յարաբերութիւններ են պահպանում, հասցնելով իրանց մասին տեղեկութիւններ կարգադիր յանձնաժողովին, որը պարբերական շրջաբերականներով այդ տեղեկութիւնները տարածում է միութեան բոլոր անդամների մէջ։
2. Շրջաբերականները պարունակում են ա) տեղեկութիւններ ուսանողական ընկերութիւնների մասին. բ) վիճակագրական տեղեկութիւններ ուսանողների մասին. գ) տեղեկութիւններ ընդհանուր ժողովի մասին եւ դ) յանձնաժողովի ազդերը դէպի ուսանողները։

VII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Կանոնադրութեան փոփոխման վերաբերեալ առաջարկները մի ամիս առաջ յայտնուելու են կարգ. յանձնաժողովին եւ սա շրջաբերականների միջոցաւ բերելու է ի գիտութիւն միութեան անդամներին։
2. Այդ առաջարկները ենթարկւում են միութեան բոլոր անդամների նախաքուէին եւ հաստատւում են ձայների ¾ մեծամասնութեամբ։

Փաստ. 1459-7

Ա 5.– ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Կազմուած Բերլինի միութեան Կարգադիր մասնաժողովի կողմից, 1897-1898 ծմեռ. սեմեստրին

Անուն, Ազգանուն Պետութիւն ու քաղաք	Միջնակարգ դպրոց	Մասնագիտութիւն	Ծննդավայր	Սեմեստր կամ Տրիմեստր
	Ա. ԳԵՐՄԱՆԻԱ			
	1.- ԲԵՐԼԻՆ			
1.- Ա. Տէր Պողոսեան	Ներսէսեան դպր.	Փիլիսոփայութիւն	Վան	VI
2.- Մ. Տէրտէրեան	Ռէալական	Բժշկութիւն	Միւրիշէն (Շուշի)	XII
	(Աւարտած Բերլին փիլիսոփայ. փակուլտետը)			
3.- Հախումեան	Ռէալական	Բնակ. գիտութ.	Բագու	VI
4.- Շխիեանց	Ռէալական եւ աւարտ. տեխնիկ. ճեմարան, Ռուս	Մեքենայագիտութիւն	Շուշի	I
5.- Ա. Աւետեան	Գիմնազիա, VII դաս.	Փիլիսոփ. (Հասարակ գիտ.)	Շուշի	V
6.- Շապանիքեան	Առեւտրական դպրոց	Փիլիսոփ. (Հասարակ գիտ.)	Ռոստով	I
7.- Գէորգ Մելիք-Կարագոզեան	Գիմնազիայի VII դաս.	Փիլիսոփայութիւն	Շուշի	IV
8.- Գասպար Մելիք-Կարագոզեան	» »	Քիմիա	»	V
9.- Ա. Եղիազարեան		Փիլիսոփայութիւն	Ն. Նախիջեւան	III
10.- Յ. Յովհաննիսեան	Թեմական դպրոց	Քիմիա	Շուշի	III
11.- Ա. Տէր-Գասպարեան	Ռէալականի V դաս.	Հասարակ. գիտ.	»	I
12.- Վ. Աւագեան	Գիմնազիայի VIII դաս.	»	Աստրախան	III
13.- Կոմիտ[աս] վարդ. Գէորգեան	Ճեմարան	Երաժշտութիւն (*հասրկ. գիտ.?*	Կուտինա	V
14.- Խատիսեան. բժիշկ	Գիմնազիա եւ համալս.	Բժշկութիւն	Թիֆլիս	I
15.- Եղիայեան	Քոլէճ	»	Այնուպ [?]	XI
	(Աւարտած Բերլինի բժշկակ. փակուլտետը, հասրկ. գիտ.?)			
16.- Թումայեան	Ռէալական դպր.	Քիմիա	Շուշի	–
17.- Ա. Տէր-Մարկոսեան	»	Գիւղատնտեսութ.	Գիրկ գիւղ (Գէօյչայ գաւ.)	IV
18.- Պետր. Կարա-Մուրզա	» VI դ.	Բժշկութիւն	Ղարասու բազար	II
19.- Սուրէն Ադամեան	» դպր.	Քիմիա	Շուշի	VII
20.- Ղեւոնդ Մեժլումեան	» »	Հանքաբան. (Լեռնայ. Ճիւղ)	Մեղրի	V
21.- Իսախանեան	» »	Բժշկութիւն	Հաղբատ	II
22.- Չարարեան	Գիմնազիա	Մեքանայագիտ.	Տփխիս	Դեռ ուսանող չեն գրուած
23.- Թոքաթլեան	Պերպերեան դպր.	Իրաւաբանութիւն	Սամսոն	
24.- Գր. Սաղեան	Ռէալական	Հաս. գիտութիւն	Շուշի	
25.- Մենտոր Ներսէսեան	Պրակտիկ ճեմարան վաճառակ. գիտութ.	Քաղաքատնտեսութիւն	Ագուլիս	I
26.- Խոսրով Խոսրովեան	Ճեմարան	Երաժշտութիւն	Մոզդոկ	I
Քալանթար Անուշաւան աւարտել է փիլիսոփ. փակուլտ. քիմիական բաժին				

Անուն, Ազգանուն Պետութիւն ու քաղաք	Միջնակարգ դպրոց	Մասնագիտութիւն	Ծննդավայր	Սեմեստր կամ Տրիմեստր
		2.- ԲՐԵՍԼԱՒ		
1.- Պօղոս Կարա-Մուրզա	Ռէալական	Մաթեմատիկա	Ղարսամ-բազար (Ղրիմ)	VIII
		3.- ԴԱՐՄԾԴԱՏ		
1.- Խաչատրեան Անդրէաս		Մեքենայագիտ.	Բագու	I
2.- Յակովբջանեան Դաւիթ	Ներսէսեան դպր.	»	Ախալցխա	III
3.- Յովսէփեան Յովհաննէս	»	»	Թիֆլիս	II
4.- Տէր Յովհաննիսեան Սմբատ	»	»	Բագու	I
Դեռ չեն զբաղած ուսանող				
Իւզբաշեան Յարութիւն	–	–	»	–
Տէր-Աբրահամեան Գէորգ	–	–	Գօրի	–
		4.- ԴՐԵԶԴԵՆ		
1.- Թառայեան Անդրէաս	Ռէալական դպր.	Քիմիա	Շամախա	VIII
2.- Մինասեան Արտաշէս	»	»	Տրապիզոն	VIII
		5.- ԼԱՅՊՑԻԳ		
1.- Յուսիկ վրդ. Զոհրապեան	Ճեմարան	Աստուածաբան.	Մեծ Սալա, Նոր Նախիջեւան	V
2.- Շահէն Ատոմ	Կենտր. վարժ.	Մանկավարժութ.	Ակռ	I
3.- Աբովեան Կոստանդին	Ճեմարան	Բնական գիտ.	Վաղարշապատ	II
4.- Գեանջեցեան Եզնիկ վրդ.	»	Համեմատ. լեզուագիտ.	Շուշի	V
5.- Հովեան Միքայէլ	Ներսէսեան դպր.	Բնական գիտ.	Լոռի	I
6.- Նալբանդեան Վահան	»	Պատմութիւն	Վան	VI
7.- Քոչարեան Սաղաթիէլ	»	Հասարական. գիտ.	Գէօկչայ	V
8.- Շարաբանտեան Նիկերա	Ռէալական	Քիմիա	Բագու	VIII
9.- Ղամբարեան Ստեփան	Գիմնազիա	Բնակ. գիտ.	Տփղիս	I
10.- Սարուխանեան Ստեփան	Ռիկա	Քիմիա	Շամախի	V
11.- Չարդրճեան Արամ	Ներսէսեան դպր.	Բժշկութիւն	Էրզրում	V
		6.- ՀԱԼԼԻ		
1.- Յակոբ Թոփճեան	Գէորգեան Ճեմարան	Աստուաբանք.	Այնթապ (Կիլիկիա)	I
2.- Յովհաննէս Տէր-Յարութիւնեան	»	»	Ղազախ	V
3.- Յովուեան Սիմէոն	»	Քիմիա	Լոռի	I

Անուն, Ազգանուն Պետութիւն ու քաղաք	Միջնակարգ դպրոց	Մասնագիտութիւն	Ծննդավայր	Սեմեստր կամ Տրիմեստր
		7- Միւնխէն		
1.- Տիգրան Ունանեան	Ռէալական դպր.	Մեքենայագիտ.	Շուշի	XII
2.- Զառաֆեան Սիմէոն	»	»	»	VIII
3.- Յարութիւնեան Յովսէփ	»	»	Թիֆլիս	III
4.- Մելիքեան Լեւոն	»	»	Բագու	III
5.- Կարակաշեան Յովհաննէս	»	»	Շամախի	III
6.- Կարակաշեան	»	»	»	I
7.- Սեղրոսեան Լեւոն	»	Գրականութիւն	Պոլիս	XII
8.- Եղիազարեան Լազար	» IV դաս.	Նկարչութիւն	Բագու	V
		8.- ՖՐԱՅԲԵՐԳ		
1.- Մելիք-Ստեփանեանց Ս.	Ռէալական դպր.	Հանքաբան. եւ Լեռն. գիտ.	Սիւնիք	II
2.- Աղայեան Մ.	»	»	Ղուբա	III
3.- Ծատուրեան Շ.	»	»	Քարահունջ Զանգեզ. գաւառ	III
		9.- ԵՆԱ		
1.- Խաչիկեան-Մեժլումեան Յով.	Ռէալական դպր.	Բժշկութիւն	Մեղրի	I
Աբեղեան.– աւարտել է փիլիս. փակուլտետ լեզուագիտ. բաժինը				
		II. ՖՐԱՆՍԻԱ		
		1.- ՆԱՆՍԻ		
1.- Համբարձումեան Լեւոն	–	Բժշկութիւն	Շամախի (Կովկաս)	VII
2.- Տէր-Խաչատուրեան	–	»	Մեթաստիա *(աւարտում է)*	I
3.- Թուլեան Պ.	–	»	Պոլիս *(աւարտում է)*	IX
4.- Մալխասեան	–	»	Կեսարիա	IX
5.- Թովմասեան	–	»	Իզմիտ (Նիկոմիդիա)	VII
6.- Արթինեան		»	Ատաբազար *(աւարտում է)*	XI
7.- Ստեփանեան	–	»	Մեթաստիա	IX
8.- Շխեանց	–	Քիմիա	Շուշի, Կովկաս *(աւարտում է)*	V
9.- Եուսուփեան	–	»	Կեսարիա	IX
10.- Հալաճեան	–			
11.- Քասափեան	–			

Անուն, Ազգանուն Պետութիւն ու քաղաք	Միջնակարգ դպրոց	Մասնագիտութիւն	Ծննդավայր	Սեմեստր կամ Տրիմեստր
	2.- ՄՈՆՊԵԼԻԷ			
1.- Թասլաքեան Կարապետ	–	Բժշկութիւն	Կեսարիա	X
2.- Տիգրան Զարդարեան	–	»	Թոզաք	X
3.- Ֆենոքլեան Պօղոս	–	»	Պոլիս	VI
4.- Կիւլպէնկեան Գառնիկ	–	»	Թալաս	VI
5.- Սարգիսեան Դանիէլ	–	»	Աստրախան	V
6.- Վահան Գուլումճեան	–	»	Ֆիլիպպէ	VI
7.- Սարգիս Սերջօեան	–	Երկրագործութ.	Զմիւռնիա	Բ. տարի
8.- Միսաքեան Հրանտ	–	Բժշկութիւն	Պոլիս	2 P.L.N.
9.- Հեվէնտեան Հեթում	–	»	»	2 P.L.N.
10.- Եդուարդ Արշաւունի	–	»	Կարս	2 P.L.N.
	II. ՋՈՒԻՑԵՐԻԱ			
	1.- ԼՕԶԱՆ			
1.- Միհրան Գարանֆիլեան	–	Բժշկութիւն	Ռոտոսթօ	I
2.- Աւետիս Ահարոնեան	–	Գրականութիւն	Իգտիր	I
3.- Խաչիկ Պօղոսեան	–	Բժշկութիւն	Կեսարիա	II
4.- Աղեքսանդր Աբովեան	–	»	Ղարաքիլիսա	IX
5.- Երուանդ Գարագաշեան	–	Ինժիներ	Պոլիս	II
6.- Արմենակ Անդրէասեան	–	Գրականութիւն	Երզնկա	VI
	2.- ՅԻՒՐԻԽ			
1.- Լեւոն Տէր-Սարգսեան	Ռէալական դպր.	Քիմիա	Բագու	XIV
2.- Լ. Աթաբէգեան	»	Բժշկութիւն	Շուշի	VII
3.- Գ. Ջիգէրջեան	Սանասար. վարժ.	Քիմիա ու Ֆիզիք	Արաբկիր	V
4.- Սիմոն Աղապալեան	»	Մեքենայագիտ.	Կարին	I
5.- Տիգր. Յարութիւնեան	Հելսինգֆորսի լիցէյ	Քիմիա	Մատրասա	VI
6.- Յարութ Մելիքեան	Ռէալական դպր.	Ֆիզիք	Շուշի	V
Յովնան Աբունեան	*(դեռ չէ գրուած ուսանող)*	Աւարտած Մոսկուայի մեքենայագիտ. դպր.		

Անուն, Ազգանուն Պետութիւն ու քաղաք	Միջնակարգ դպրոց	Մասնագիտութիւն	Ծննդավայր	Սեմեստր կամ Տրիմեստր
	3.- ԺԸՆԵՒ			
1.- Զաքար Պզտիկեան	Ատանայի միջն. դպրոց	Իրաւաբանութ.	Ատանա	I
2.- Սարգիս Մինասեան	Կենտր. վարժ.	Ընկերագիտութիւն	Պրուսա	VI
3.- Երուանդ Պալեան	Ճեմարան	Հասարակ. գիտ.	Թէոդոսիա	VI
4.- Արամ Ֆէթվաճեան	Սանասար. վարժ.	Քիմիա	Տրապիզոն	IV
5.- Լեւոն Ժաք	Ազգային վարժ.	Բնակ. գիտ.	Պոլիս	III
6.- Սարգիս Չերազ	Կենտր. վարժ.	»	Ակռ	I
7.- Արմէն Կարօ	Սանասարեան վարժ.	Քիմիա	Կարին	VII
8.- Միք. Յովհաննիսեան	Ռէալական դպր.	Հասարակ. գիտ.	Ղարաբաղ	–
9.- Ղազար Տէր-Ղազարեան	»	Քիմիա	»	I
10.- Գրիգոր Վանցեան	Ներսէսեան դպր.	Հասարակ. եւ բնական գիտ.	Ախալքալաք	VII
11.- Կատար. Քէչէքեան	Գիմնազիա	Բժշկութիւն	Նոր Նախիջ.	I
12.- Հեղինէ Զոհրաբեան	»	»	Ղզլար	III
13.- Եփրոսինէ Կրասիլնիկեան	»	Հասարակ. գիտ.	Նոր Նախիջ.	I
14.- Վարդուհի Ղուկասեան	»	Բնական գիտ.	Շուշի	I
15.- Վարդ. Աթաբէգեան	–	Ատամնարոյժ	»	X
16.- Մարիամ Ամբրումեան	Գիմնազիա	Քիմիա	»	VIII
17.- Նուարդ Յովհաննիսեան	Շուշ. դպրոց	Բնական գիտ.	Շուշի	VI
18.- Վառ. Շահնազարեան	Գիմնազիա	Բնական գիտ.	Շուշի	VI

Փաստ. 1459-1

Ա 6.– ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ

5-ն Յունիսի 1898 թ. Բեռլին

Փարիզի յարգելի հայ ուսանողութեան

Անցեալ տարի եւրոպական հայ ուսանողական միութեան առաջի կոնգրեսում Հայդելբերգում՝ յանձնուեց Փարիզի հայ ուսանողութեան ընտրել իւր միջից միութեան կարգադրիչ մասնաժողով միութեան գործերը վարելու համար մինչեւ II կոնգրէսը, որը այդ մասնաժողովը պիտի գլուխ բերէր մի տարուայ ընթացքում։ Փարիզի հայ ուսանողութիւնը յայտնել էր իւր յօժարութիւնը վերցնել իւր վրայ միութեան վարչութեան ղեկը. բայց ահա անցեր է արդէն մի տարի եւ մասնաժողովը չէ ցոյց տալիս ոչ մի գործունէութիւն, մինչեւ այժմ չէ ստացուած ոչ մի շրջաբերական, չէ կայացած երկրորդ կոնգրէսը, ուսանողութիւնների եւ ուսանողների դիմումները մնում է անպատասխան. իսկ մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, տեղիդ մասնաժողովը լուծուած պիտի լինի։ Վարչութեան այդ անուրախալի դրութիւնը դադարեցնում է միութեան ամբողջ գործունէութիւնը եւ կարող է պատճառ դառնալ նրա քայքայման։ Գերմանական ուսանողները չկամենալով որ նորա մեծ ջանքով կազմած միութիւնը, որի վրայ եւրոպական հայ ուսանողները այնքան մեծ յոյսեր էին դրել, հէնց նորա սկզբում՝ լուծուի, կարգադրիչ մասնաժողով, անփթութեան պատճառով, վճռել են միջոցներ ձեռք առնել գործը վերականգնելու համար։ Լայպցիկի եւ Միւնխէնի ուսանողութիւնների առաջարկով Բեռլինի ուսանողութիւնից ընտրուած մասնաժողովիս ստանձնուած[10] է միութեան գործը վերականգնելու եւ հարկաւոր դէպքում մասնաժողովի պաշտօնը իւր վրայ առնելու։

Արդ, մանաժողովս դիմում է Փարիզի յարգելի հայ ուսանողութեան եւ խնդրում է Փարիզի յարգելի հայ ուսանողութեան պատասխանել, կարող է՞ արդեօք տեղիդ հայ ուսանողութիւնն երաշխաւորել որ առաջի կոնգրէսում ընտրուած մասնաժողովը գոնէ այժմ կը վերսկսի միութեան գործը եւ գլուխ կը բերի II կոնգրեսը այս աչունքուայ արձակուրդներին։ Այլ կերպ կամենում է՞ արդեօք Փարիզի ուսանողութիւնն իւր համաձայնութիւն [տալ] Բեռլինի ուսանողութիւնից ընտրուած մասնաժողովին այդ պաշտօնը ստանձնելու։ Վերջին դէպքում խնդրում ենք [ուղարկել] պաշտօնական բոլոր թղթերը (կանոնադրութիւն, I կոնգ. արձանագրութիւնները եւայլն) եւ այն գումարը որը հաւաքուած է վարչութեան ծախքերի համար։

Ժամանակը կարճ լինելով խնդրում ենք պատասխանել մինչեւ Յունիսի 15ը։ Եթէ մինչեւ այդ օրը ոչ մի պատասխան չստացուի, Բեռլինի ուսանողութիւնից ընտրուած մասնաժողովը ստիպուած կը լինի ստանձնել կարգադրիչ մասնաժողովի պաշտօնը՝ կը միջնորդէ մի ուրիշ հայ ուսանողութեան իւր վրայ առնելու այդ նոյնը՝ նախօրօք համաձայնութիւն կայացնելով մնացած ուսանողութիւնների հետ։

Ի դիմաց մասնաժողովի
Մ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ
Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Յ.Գ.- Հասցէ
Charlottenburg/Berlin
Kant strasse 24 III tr.
Bunjatjan

10.- Պիտի ըլլայ՝ յանձնուած:

Փաստ. 1459-2

Ա 7.– ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԵՐԼԻՆԻ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1898 ԱՄԱՌԱՅԻՆ ՈՒ 1898-1899 ՁՄԵՌԱՅԻՆ ԿԻՍԱՄԵԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անցեալ 98 թ. ամառուայ կիսամեակին Լէյպցիգի ուսանողները մասնաւոր նամակով դիմեցին Բերլինի ուսանողներին առաջարկելով որ սա իր վրայ վերցնի ընդ. Եւր. հայ ուսանողական միութեան գործը առաջ տանելու ինիցիատիւը[11]։ Բերլինի ուսանողները, որոնց ցանկութեան մօտ էր այդ առաջարկը, մի քանի ուսանողների հրաւէրով կազմեցին ընդհանուր ժողով 1898 թ. Մայիսի 16ին ի միջի այլոց այդ հարցի մասին եւս խորհրդակցելու։

Ժողովը ընտրեց 4 հոգի, որոնք պէտք է բանակցութեան մէջ մտնէին Պարիզի ուսանողների հետ եւ դրդեն նրանց կամ վերասկսել յանձնարարուած գործը եւ կամ միանգամայն յայտնել որ հրաժարւում են այդ պաշտօնից։ Ընտրուած մասնաժողովը նախօրօք համաձայնութիւն ստանալով իւր այդ անելիքի մասին Լէյպցիգի եւ Միւնխէնի ուսանողներից, դիմեց Յունիսի 5ին Պարիզի ուսանողութեանը՝ խնդրելով կամ մինչեւ Յունիսի 20ը սկսեն հոգալ II համագումարի մասին կամ յանձնեն այդ մի ուրիշ ուսանողութեան, հակառակ դէպքում Բերլինի ուսանողութիւնը ստիպուած կը լինի այդ գործը իր վրայ վերցնել կամ յանձնել մի ուրիշ ուսանողութեան ստանալով դրա համար նախօրօք միւս ուսանողների համաձայնութիւնը։

Ի պատասխան այս գրութեան Պարիզից ստացուեցան երկու նամակներ։ Նամակի մէկում որ դրոշմուած էր Պարիզի հայ ուսանողական միութեան կնիքով եւ գրուած 1898 թ. Յունիսի 10-ին, յայտնւում էր որ այնտեղ ոչ մի միութիւն ուսանողների մէջ չկայ եւ մի փոքրիկ խումբ, որ ձգտում է կազմակերպուիլ նոյնպէս քայքայման վիճակի մէջ է։ Նրանք ոչ մի տեղեկութիւն չունին Հէյդելբերգի եղած ժողովի եւ Պարիզի ուսանողութեանը արած յանձնարարութեանը մասին։ Միւս նամակով պ. Սարգսեան գրում է, որ արդէն պաշտօնի մէջ էին, երբ ծագուեցան ներքին անբաւականութիւններ եւ դիւանի գործադիր անդամը պ. Պաղտասարեան յայտնել է որ «Դիւան չ'ուզեր հետաքրքրուել միութեան խնդրով, կրնաք պատասխանել ինչպէս կ'ուզէք»։ Նրանք հրաժարւում են պաշտօնից ու յանձնում այդ Բերլինի ուսանողութեանը կարգադիր մասնաժողովը իւր միջից ընտրել։

Ստանալով այս համաձայնութիւնը մասնաժողովը դիմեց բոլոր ուսանողութիւններին եւ ուսանողներին խնդրելով նրանց յանձնել մի որեւիցէ ուսանողութեան կարգադիր մասնաժողովի պաշտօնը եւ նշանակել ժողովի տեղը, ժամանակը, յայտնել ժողով եկողների թիւը, դասախօսութիւն կարդացողների եւ նիւթի մասին եւ այլն։ Ստացուեցան բոլոր ուսանողներից նամակներ եւ բոլորն էլ յայտնելով իրանց ուրախութիւնը, որ սկսած գործը չի քայքայւում, յանձնեցին Բերլինի ուսանողութեան կարգադիր մասնաժողովը իւր միջից ընտրել։ Այսպէս Բերլինի կարգադիր մասնաժողովը պաշտօնապէս ստանձնեց այդ գործը, բայց դժբախտաբար այդ բոլոր գրութիւնների վրայ գործադրուեց շատ ժամանակ եւ հազիւ նշանակուած էր ժողովը, երբ նա լուրեր ստացաւ որ ուսանողութիւնը արդէն ցրւում է եւ անկարող է մասնակցել համագումարին։ Այդ ստիպեց նրան այլեւս յետաձգել ժողովը մինչեւ գալ սեմեստրը։

Անցեալ սեմեստրին ընտրուած յանձնաժողովի երկու անդամների Բերլինից հեռանալու պատճառով մընացած երկու անդամները չէին կարող դիմել գործին անմիջապէս եւ այդ պատճառով հրաւիրեցին ուսանողական ժողովը առաջարկելով նրան հեռացած երկու անդամների փոխարէն ընտրել մասնաժողովի համար 3 անդամ եւս գործը թեթեւացնելու համար եւ այսպէս անցեալ սեմեստրին յանձնաժողովը բաղկացած էր 5 անդամից։

Վերասկսելով Գործադիր յանձնաժողովը իւր նպատակն էր դրել աշխատել ըստ կարելոյն ապագայ ընդհանուր ժողովը դարձնել հետաքրքիր եւ գրաւել շատ ուսանողներ։ Այդ նպատակին հասնելու համար նրան անհրաժեշտ էր բոլոր ուսանողների աջակցութիւնը եւ որից նրանք չհրաժարուեցին։ Բայց եւ այնպէս անհրաժեշտ է նկատել որ մի քանի ուսանողութիւններ, գլխաւորապէս Պարիզի ու Լոնդոնի, վերաբերուեցին բոլորովին անտարբեր եւ կարգադիր յանձնաժողովը չստացաւ նրանցից ոչ մի պատասխան չնայելով կրկնակի դիմումներին։ Մեր պարտքն ենք համարում դարձնել յարգելի ժողովի եւ ուսանողութիւնների ուշադրութիւնը այն դէպքի վրայ, որ շատ տեղի ուսանողներ ուշացնում էին նրա գրութիւնների պատասխանը ստիպելով դիմել նորից. այդ շատ դժուարեցնում էր գործը եւ ձգձգում։ Պիտի նկատել որ այսպիսի դէպքեր պատահում են գլխաւորապէս այն քաղաքներում ուր կայ բազմաթիւ ուսանողութիւն։ Այս տեսակէտից խորհուրդ կը տայինք

11.- Նախաձեռնութիւնը:

ապագայ կարգադիր յանձնաժողովին աշխատել նախ եւ առաջ ամէն մի քաղաքում, եւս առաւել բազմաթիւ ուսանողական քաղաքներում ունենալ մի մի ներկայացուցիչ որը կ'աշխատի մասնաժողովի բոլոր առաջարկութիւններին եւ հարցերին ճիշտ եւ շուտ պատասխանել։ Դրանով յանձնաժողովի գործը կրկնապատիկ կը թեթեւանայ։ Դասախօսութիւնները հետաքրքիր դարձընելու համար յանձնաժողովը դիմեց առանձնապէս մի քանի ուսանողների խնդրելով կարդալ դասախօսութիւն համագումարին, որոնցից շատերը եւ համաձայնուեցին։ Հարկաւոր եմ համարում նոյնպէս յիշել որ միտք յղացաւ եւ հրաւիրել համագումարին դասախօսութիւն կարդալու մեր գրական եւ հասարակական գործիչներից կամ գերմանացի հայագէտ պրոֆեսէօրներից մէկին, բայց ստիպուած էինք այդ միտքը թողնել աչքի առաջ ունենալով դրա համար հարկաւոր նիւթական միջոցները. յամենայնդէպս շատ ցանկալի կը լինէր տեսնել ապագայում իրագործուած. դրանով մենք թէ ժողովը հետաքրքիր դարձրած կը լինինք եւ կը կը գրաւէինք դէպի նա աւելի մեծ թուով ուսանողներ։ Վիճակագրական տեղեկութիւնների վերաբերմամբ պիտի յայտնեմ յանձնաժողովի կողմից նրա խորին ափսոսանքը որ չկարողացաւ նա, չնայելով բոլոր իւր աշխատանքին, ժողովել բոլորովին լիակատար տեղեկութիւններ։ Նրան արուած էր առաջարկութիւն կազմել վիճակագրական տեղեկութիւնները աւելի եւս մանրամասն, մտցնելով տալիք հարցերի մէջ ուսանողների տարիքը, ծնողների պարապմունքը եւայլն, բայց այդ բոլորը յանձնաժողովը անկարող էր անել, որովհետեւ յոյս չունէր որ նա կը ստանայ բաւարարեցուցիչ պատասխաններ. գուցէ այդ կարելի կը լինի անել, երբ յանձնաժողովը կ'ունենայ քաղաքներում իւր ներկայացուցիչները բայց այժմ այդ անկարելի էր եւ իբրեւ ապացոյց կարող է ծառայել այն փաստը, որ տուած հարցերից միմնակարգ կրթութեան մասին նա ստացաւ տեղեկութիւններ միայն մի քանի տեղերից եւ ստիպուած եղաւ այդ հարցը դուրս ձգել ընդհանուր վիճակագրական տեղեկութիւնների միջից։ Միւս հարցերի վերաբերեալ տեղեկութիւններ պակասում են միայն Պարիզից, Լոնդոնից եւ մասամբ Ժընեւից, իսկ միւս բոլոր ուսանողութիւններից որոնց յանձնաժողովը իմացել եւ դիմել է նա ստացել է եւ պատասխան։

Մասնաժողովի մէջ ծագեց եւ այն հարցը՝ արդեօք պիտի դիմել Ռուսաստանի ուսանողներին թէ ոչ։ Այդ հարցի մասին յանձնաժողովի անդամները ունէին զանազան կարծիքներ, այնուամենայնիւ վճռուեց չդիմել պաշտօնապէս աչքի առաջ ունենալով, որ կանոնադրութիւնը հասկանում է ընդհանուր եւրոպ. ուսանողների տակ միայն արեւմտեան Եւրոպայի ուսանողներին։

Նանսիի ուսանողները յայտնել էին յանձնաժողովին, որ Գալիցիայի եւ գլխաւորապէս Լեմբերգի լեհացի հայ ուսանողները նոյնպէս ցանկութիւն են յայտնել մասնակցել միութեան գործին։ Յանձնաժողովը միութեան համագումարի տեղը եւ ժամանակը որոշելուց, թէպէտ եւ մի քիչ ուշ, պիտի խոստովանել այդ, դիմեց նրանց հրաւիրելով համագումարին։ Մի նամակով Լեմբերգի ուսանողները, յայտնելով իւրեանց ցաւակցութիւնը որ այս անգամ անկարող են մասնակցել անձամբ մի քանիսը զինուորական ծառայութեան եւ միւսները ժամանակի անյարմարութեան պատճառով, կը բաւականանան ուղարկելով ժողովին մի մեմորանդում եւ խոստանալով միւս ժողովին մասնակցել անձամբ։

Յանկանալով որոշել միութեան անդամների թիւը եւ անունները, մասնաժողովը դիմեց բոլոր քաղաքների ուսանողներին խնդրելով ներկայացնել իւրեանց անդամների ցուցակը եւ անդամավճարները. յոյս ունինք, որ այս ժողովում կարելի կը լինի պարզել անդամների թիւը։

Յանձնաժողովը ստիպուած եղաւ դնել երկու առաջարկութիւն, որոնք արուած էին ծրագիրը կազմելուց յետոյ, աչքի առաջ ունենալով նրանց անհրաժեշտութիւնը։

Պ. Պ. Աղապալեան եւ Ջիգերդիշեան յայտնեցին յանձնաժողովին որ անկարող են կարդալ խոստացած դասախօսութիւնները, խանգարուած լինելով ներկայանալ ժողովին։

Այս երկու սեմեստրի ընթացքում յանձնաժողովի երեք անդամների՝ Յովհաննիսեանի, Բունիաթեանի եւ Աւետեանի միջոցով ծախսուած է 175.20 պֆ[էնիգ]։ Պարիզի ուսանող պ. Սարգսեանից ստացուած է անցեալ համագումարին ժողոված փողից 9 ֆրանկ կամ 7 մարկ 30 պֆ., որը հանելով 175.30 պֆ. կը մնայ 9 մարկ 90 պֆ., որը եւ պիտի ստանայ յանձնաժողովը։

Սրանով վերջացնելով իմ համարատուութիւնս, յայտնում եմ յանձնաժողովի կողմից խորին շնորհակալութիւն այն բոլոր ուսանողութիւններին եւ ուսանողներին, որոնք որեւիցէ կերպ աշխատել են օգնել եւ աջակցել նրան։

Բերլինի կարգադիր յանձնաժողովի նախագահ
Ա. ԱՒԵՏԵԱՆ

Բերլին 23ին Մարտի 1899 թ.

Փաստ. 1459-3

Ա 8.– ԵՒՐՈՊԱԿԱՆ ԸՆԴՀ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Նիստ
(Մարտ 27 1899 թ.)

Համագումարը նախընթաց երեկոյեան ողջունումից յետոյ, իւր իսկական պարապմունքները սկսեց մարտի[11ա] 27-ի երեկոյեան ժամը 4-ին, որին զանազան տեղերից ներկայ էին 15 անդամներ։

Ամէնից առաջ տեղի ունեցաւ պաշտօնական անձանց ընտրութիւնը։ Վճռուեց բոլոր ժողովների համար ընտրել մի նախագահ եւ նորան մի օգնական ու ընտրուեցին պրն. Միքայէլ Յովհաննիսեան[12] (Ժընեւ) իբրեւ նախագահ եւ պրն. Վահան Նալբանդեան (Էջմիածին), իբրեւ փոխ-նախագահ։ Քարտուղարներ ընտրուեցին պ. պ. Լեւոն Սեղբոսեան[13] (Միւնխէն), Գ. Թոքաթլեան (?) եւ Ա. Տէր-Պօղոսեան (Բերլին)։

Կարգ. յանձնաժողովի պ. նախագահը կարդաց համարատուութիւնը, որով նա մի-երկու գործնական առաջարկութիւններ էր անում, բայց ձայների մեծամասնութեամբ որոշուեց դոցա մասին խօսել կանոնադրութիւնը քննելիս։

Լեմբերգի լեհական-հայ ուսանողներից ստացուած մի երկար գրութիւնը կարդալով,նշանակուեց մի յանձնախումբ, 4 հոգուց բաղկացած, որոնք են պ. պ. Լ. Սեղբոսեան, Լ. Աթաբէկեան, Մ. Բունիաթեան եւ Վ. Նալբանդեան, որոնք համագումարի կողմից պէտք է պատասխանեն նոցա գրութեան եւ սորանով փակուեց նիստը։

Քարտուղար՝ Ա. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

Բ. Նիստ
(Մարտ 28)

Ժողովն սկսեց ժամի 11-ին. նախ քան պարապմունքների սկսելը, պրն. նախագահը կարդում է Ժընեւից ստացուած՝ կրասելնիկեան եւ Պալեան ստորագրութեամբ մի հեռագիր, ժողովի բացումը շնորհաւորող. նոյնպէս եւ մի նամակ Պարիզի ուսանողութիւնից, որով յայտնում են Պ. Եսայեանի իրենց կողմից ներկայացուցիչ ընտրուելը եւ ուղեւորիլը։ Ապա ձայնը տրրւում է օրուայ դասախօս պ. Վ. Նալբանդեանին որը կարդում է «Պատմութիւնն ու պատմագրական ուղղութիւնները նոր ժամանակներում եւ մի համառօտ տեսութիւն հայկական պատմագրութեան մասին» հետեւեալ բովանդակութեամբ. պատմութիւնն իբրեւ գիտութիւն եւ նորա հակառակորդները (Շոպէնհաուէր, Գամբրովիչ, Ռիկէրտ եւն.) եւ պաշտպանները (Լագոմբ).— Օրէնքը պատմութեան մէջ։ Պատմութեան էութիւնը (Բարտ, Բէրնհէյմ), պատմութեան եւ սոցիոլոգիայի յարաբերութիւնը (Վունտ, Շէֆլէ, Ա. Կոնտ).— Օբեկտիվիտէտը[14] պատմութեան մէջ։— Պրագմատիքական[15] պատմագրութիւն.— Գենետիքական[16] ուղղութիւնը.— Պատճառական եւ համեմատական մոմենտները, Գենետիքական ուղղութիւնը Գերմանիայում (Հերտեր եւն.), Անգլիայում (Ֆերգասն) եւ Ֆրանսիայում (Վոլտէր, Մոնտէսքիօ, Կոնտ).— Անհատական քաղաքական ուղղութիւնը Ֆրանսայում (Տարտ), Անգլիայում (Քարլայլ) եւ Գերմանիայում (Ռանքէ, Ձիբէլ, Դալման, Տրայցքէ, երիտասարդ Ռանքէեաններ)։ Կուլտուրական պատմագրութիւնը Գերմանիայում (Գրիմ, Բել, Ֆրայտագ)։ Իտէալիստական եւ տնտեսական ուղղութիւնները (Ղէգէլ, Ֆէօյերբախ, Մարքս, Լօրիա, Լ. Բլան).— Նատուրալիստական ինտելեքտուալիզմը (Բօկլ, Դիւ-Պուա Ռէյմոն).— Դարվինիզմը (Հէյմարտ, Լիպերտ).— Հոգեկան միջավայրի սկզբունքը (Թէն եւ Բուրդօ).— Բուրքարտ, Վ. Ֆօն Հումբօլտ, Ռանքէ եւ միւս իտէալիստները.— Քօլլեքտիվիզմը Գերմանիայում.— Լամպրեխտ.— Հայկական պատմագրութիւնը հնում եւ նորագոյն ուղղութիւնները ու ձգտումները։

Տեղի է ունենում հետեւեալ վիճաբանութիւնները

<u>Սեղբոսեան</u> նկատում է, որ մեր նոր-պատմական բանասիրութեան մասին չէ կարող վիճաբանութիւն լինել, ըստ որում շատ պարզ է պրն. դասախօսի նկատողութիւնները, իսկ հնումը ուրիշ կերպ էլ լինել չէր կարող. հետաքրքիր է միայն ընդհանուր մտքերը, բաց թողած պրակմատիք տեսակէտը, վիճաբանութեան նիւթ դարձնել եւ խնդրում է պրն. դասախօսից, ասել թէ ինքը որ նորագոյն ուղղութիւնն է գերադասում։

<u>Նալբանդեան.</u> իւր հայեացքները բոլորովին յենւում են Լամպրեխտի քոլլեքտիվիզմի տեսակէտի վերայ, որը սխալմամբ միայն համարւում է մարքսիստ. նա չէ համապատասխանում նոյնպէս գենետիկ-նատուրալիս-

11ա.- Ձեռագրին մէջ ապրիլ. ուղղեցինք մարտ։
12.- Միք. Վարանդեանի իսկական անունն է։
13.- Լեւոն Շանթն է։
14.- Առարկայականութիւնը։
15.- Գործնական, կիրառական։
16.- Կենսաբանական, ծառանգական։

տական հասկացողութեան։ Մատերիալիստական եւ նատուրալիստական հայեացքները չեն կարող ամբողջովին ծածկել պատմական լայն աշխարհահայեացքը։ Սէրը եւ սնունդը (որը յիշեց պրն. Սեղբոսեան) չէին կարող մարդուս հոգեկան ամբողջութիւնը հասկանալի դարձնել։

Սարգսեան նկատում է, որ պրն. դասախօսը խօսելով մատերիալիզմի մասին Քաուտսկիից մի-երկու նախադասութիւն մէջբերելով, դատում է ամբողջ մարքսիզմը։ Դասախօսի յիշած խաչակիրների շարժառիթները զուտ տնտեսական պայմանների վերայ են հիմնուած։

Տէր-Պողոսեան ընդունում է տնտեսական պայմանների խիստ մեծ նշանակութիւն ունենալը պատմութեան եւ առհասարակ ամբողջ մարդկային գործառնութեան մէջ, սակայն, շեշտում է, թէ դա չէ միակ ֆակտորը եւ մենք ստիպուած ենք դորա կողքին ուրիշ համարժէք ֆակտորներ դնելու։

Սխալ կը լինէր խաչակիրների մոտիւները «զուտ» տնտեսական անուանել։ մատերիալիզմի եւ նատուրալիզմի գլխաւոր սխալը նորանումն է կայանում, որ դոքա հէնց այնպէս են ըմբռնում եւ բացատրում, որպիսի դրութեան մէջ նորը իրանց պատկերանում է։ հին դրութիւնը նորի չափով են դիտում։

Սեղբոսեան։— Չէ կարելի բացառել ի հարկէ, որ շատ երեւոյթներ շարժուած են եղել մի վերացական գաղափարով, զգացմունքներով, սակայն նոյն այդ գաղափարները իրենց ծագումն առած են տնտեսական ֆակտորներից։ այս հանգամանքում նա հակում է դէպի մատերիալիզմը։

Եսայեան։— Անշուշտ իրաւունք ունի պրն. դասախօսը պաշտպանելով քոլլեկտիվիզմը, քանի որ տնտեսական պայմանները չեն բացատրի ամբողջովին մարդկային ազգի պատմութիւնը։

Աթաբէգեան ասում է, որ մատերիալիզմը պէտք է աւելի լայն ըմբռնել, քան թէ այդ անում է։ մարդուս ներքին ձգտումը ոչ թէ միայն հացը եւ սէրն է, այլ կայ եւ մի ձգտում, որը մղում է դէպի վիճակի բարելաւումը եւ դէպի կատարելագործութիւն։ Այս ֆակտորների միացումից յառաջանում է ոյժերի մի պարալէլոգրամ, որը որոշում է պատմութեան ուղղութիւնը։

Յովհաննիսեան նկատում է, թէ բոլորովին անտեղի է մարդուս մէջ ընդունել մի ինչ որ ձգտումն դէպի կատարելագործութիւն։ Այս դէպքում պատճառախօսական (téléologisch) դրութիւններով խնդիրը չենք կարող պարզել։ Նպատակներ ընդունել իբրեւ մեր շարժման, ամբողջ պատմութեան մէջ տանում է մեզ դէպի թէոլոգիան։ ընդունում է, որ չէ կարելի մարդկութիւնը եւ իւր պատմութիւնը իրանց ամբողջութեամբ տնտեսական-մատերիալիստական պայմաններով եւ դրութեամբ բացատրել։ Արդարեւ մարքսիզմը չէ կարող ամբողջովին բաւարարութիւն տալ, նա թերի է դեռ, սակայն ինքը յոյս է տածում, որ նա պիտի կարողանայ ժամանակի ընթացքում կատարելագործուել։

Խաչանեան։— Շեշտում է որ բոլոր գաղափարական շարժումների առաջացումը տնտեսական պայմաններից է եղել, որը պրն. դասախօսը չպէտք է անուշադրութեան տար եւ պնդում է որ պատմութեան ամբողջութիւնը միայն եւեթ մատերիալիզմի տեսակէտից պէտք է բացատրել։ բոլոր այսպէս ասած գաղափարական շարժումները իրանց հիմքը առել են տնտեսական պայմաններից։

Բունիաթեան ընդհանուր պատմութեան վերայ մի հայեացք ձգելով գտնում է պրն. դասախօսի հայեացքները բազմիցս ճշմարիտ եւ ընդհանուր գծերով համաձայնում է պրն. դասախօսի հետ։

Սարգսեան գտնում է պրն. Յովհաննիսեանի նկատողութիւնները իրաւացի եւ համաձայնում նորա հետ։

Դեռեւս շատերն էին յայտնել ցանկութիւն խօսելու, բայց ժամանակի անյարմարութեան պատճառով, վերջին անգամ ձայն տրուեց օրուայ պրն. դասախօսին, որը շատ հակիրճ իւր խորին գոհունակութիւնը յայտնեց իւր դասախօսութեամբ մտքերի այսպէս փոխանակութիւն եւ մեծ համբերաշխութիւն առաջ բերել կարողանալուն համար, որով իրագործուած էր տեսնում իւր մտադրութիւնը։ Ժողովականները իրանց հաճութիւնը յայտնեցին ծափահարութիւններով ու նախագահը յայտնեց շնորհակալութիւն եւ փակեց նիստը ժամի 1½-ին։

Քարտուղար՝ Ա. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

Գ. Նիստ
28-ին Մարտի, երեկոյեան ժամի 4-ին

Ժողովի զբաղման նիւթը, ըստ օրակարգի , Էէյպեկի ուսանողութեան դրած առաջարկի — միութեան մի օրգան թերթ ունենալու մասին խորհրդակցութիւնն է։

Աւետեան առաջարկում է փոխել օրակարգը եւ նախ քննել կարգ. յանձնաժողովի դրած առաջարկը՝ գործնական կարեւոր ձեռնարկների համար լինելիք նախաքուէի փոխարէն մտցնել այսպէս ասած յետաքուէն, որով եւ թերթի հարցը կարելի կը լինի ենթարկել սոյն կանոնին։

Տէր-Պողոսեան հակառակում է, առարկելով թէ՝ նախ պարտաւոր ենք կանոնադրութիւնը յարգել, զի կանոնադրութիւնը իրաւունք չէ տալիս մեզ Կարգ. յանձնաժողովի կազմած օրակարգը փոխել եւ ապա, առանձին անհրաժեշտութիւն չկայ այդպէս անելու։ Ի նկատի առած որ միմիայն մի քանի դրական ձայներ են հաւաքուած, համագումարը զբաղուելու է թերթի հարցով եւ ապա ամբողջ ուսանողութեան հաւանութեանը ենթարկելու, ինչպէս այդ խնդրել է համագումարից Բերլինի ուսանողութեան մեծամասնութիւնը։

Նալբանդեան (որը կառավարում էր ժողովի ընթացքը) նկատում է որ օրակարգը փոխելու մասին խօսք չէ կարող լինել։ Աւետեանի առաջարկը քուէարկութեան չէ դրւում։

Սեղբոսեան նկատում է, որ թերթի մասին համագումարը խօսելու վիճակին մէջ չէ գտնւում, վասնզի առաջարկը հիմնաւորուած եւ մի ծրագիր կազմուած չէ վաղօրօք։

Աւետեան առարկում է, որ համագումարը կարող է եւ պարտաւոր է թերթի մասին առհասարակ, դորա պարունակութեան, ուղղութեան, նիւթականի եւն-ի մասին խորհել։

Հետեւում է երկար եւ տաք վիճաբանութիւն, որին մասնակցում են բոլորը։ Ոմանք առաջարկում են թերթի համար ծրագրներ։ Ապա տրւում են հետեւեալ առաջարկները քուէարկութեան։

1. Յովհաննիսեանի. խօսե՞լ արդեօք առհասարակ թերթի մասին. 9-ը ձայնով ընդդէմ 6-ի ընդունւում է խօսել. 1-ը ձեռնպահ։

2. Սեղբոսեանի. համագումարը երկար խօսելուց յետոյ, անհնար է գտնում այժմ այդ հարցը վճռել եւ առաջարկում է Լայպցիգի ուսանողութեան, իրանց առաջարկը հիմնաւորել եւ յաջորդ համագումարին ներկայացնել։ Վճիռը մնում է առկախ։

3. Տէր-Պողոսեանի. ընտրել մի մասնախումբ մի ծրագիր կազմելու համար, որը քննուի այս համագումարում։ Ստանում է 6-ը ձայն։

4. Նալբանդեանի. առանց մասնախումբ ընտրելու, խորհրդակցել ժողովում։ Ստանում է 2 ձայն։

Նիստը 5 րոպէ ընդմիջումից յետոյ վերսկսում է։

Նախ առաջարկում է պրն. Աթաբէգեանը, ձայները հաշուելու ժամանակ ձեռնպահներին ի նկատի չունենալ եւ միայն թեր եւ դէմ տուած ձայները հաշուել։ Առաջարկը ընդունւում է 8-ը ձայնով ընդդէմ 4-ի. 1-ը մընում է ձեռնպահ։

Նախկին առաջարկները կրկին անգամ քուէարկութեան դրուելով Տէր-Պողոսեանի առաջարկութիւնը — կազմել մի յանձնախումբ, նախօրօք համաձայն լինելով, ստանում է 10-ը ձայն ընդդէմ 2-ի, եւ 2-ը ձեռնպահ։ Բայց պայմանաւ միայն, որ բոլոր միւս զբաղմունքներից յետոյ քննութեան նիւթ պիտի դառնայ կրկին։

Մասնախումբի անդամներ, ընտրուեցին Աթաբէգեան, Նալբանդեան, Յովհաննիսեան եւ Տէր-Պողոսեան։

Նիստը փակուեց ժամի 7-ին։

Դ. Նիստ
Մարտ 29, ժամի 11-ին

Կարդացուելով նախորդ ժողովների արձանագրութիւնները, փոքրիկ ուղղումներով ընդունուեցան. այնուհետեւ ճառախօսեց պրն. Միքայէլ Յովհաննիսեան, «Հայ համալսարանականի կոչման մասին»։ Նա երկու մասի է բաժանում

1) Համալսարանականի զուտ անհատական պարտականութիւնները, ինքնաշխատութիւն, ինքնազարգացման համար անհատական առաքինութիւններ եւ

2) նորա հասարակական պարտականութիւնները եւ առաքինութիւնները — հետաքրքրուել հասարակային կեանքի մէջ երեւան եկած տարբեր հոսանքներով եւ կուսակցութիւններով եւ անպատճառ գործօն դեր ունենալ։

Տեղի ունեցաւ երկար եւ տաք վիճաբանութիւններ, որին մասնակցեցան ներկայ եղողներից մեծագոյն մասը, պաշտպանելով իրանց տարբեր հայեացքները։ Ժողովի վճռով՝ մանրամասնութիւնները գրելու կարիք չտեսնուեցաւ։

Այն նիստում համագումարն զբաղուեց նաեւ Կարգ. յանձնաժողովի կողմից առաջարկուած կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխութեան հարցով։ Միութեանս կանոնադրութեան IV-րդ հատուածի 2-րդ պրակը ընդունուեց միաձայն, ի նկատի առած նաեւ նախաքուէի միջոցաւ հաւաքուած մեծամասնութեամբ դրական ձայները, փոխել այսպէս,— ամէն մի ուսանողական խումբ, որը մասնակցում է միութեանս, իրաւունք ունի համագումարին ներկայացուցիչներ ուղարկել։ Կանոնադրութեան փոփոխման բ. առաջարկը ձեւակերպելու վերաբերմամբ տեղի ունեցաւ վիճաբանութիւն։ Մի ձեւակերպութիւն տուաւ Տէր-Պողոսեան եւ առաջարկեց քուէարկութեան։ Ապա մի ուրիշը առաջարկեց Բունիաթեան եւ այս վերջինը իսկոյն եւեթ քը-

ւէարկութեան դրուելով, ընդունուեցաւ 10-ը ձայնով, ընդդէմ 7-ի։

Բողոք բարձրացաւ Տէր-Պօղոսեանի առաջարկը քուէարկութեան դրուած չլինելուն համար. բայց ժամի 1:20-ին ժողովը փակուեց։

Քարտուղար՝ Ա. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

Ե. Նիստ
(29 Մարտ երեկ. ժամի 4½-ին)

Ժողովի զբաղման նիւթն էր Կարգ. յանձնաժողովի շրջաբերականներում եղած առաջարկների քննութիւնը։

Ապօրինաւորութիւնից խուսափելու եւ թիւրիմացութեան առաջն առնելու համար նախընթաց ժողովի վերջումը կայացած վճռի առթիւ երկու առաջարկ դնողները՝ Բունիաթեան եւ Տէր-Պօղոսեան համաձայնուելով միայն մի ձեւակերպութիւն առաջարկեցին՝ այսպէս. «Ժողովի զբաղմունքները տեղի են ունենում այն ծրագրով եւ օրակարգով, որը նախապէս կազմել է Կարգ. յանձնաժողովը։

Ծանօթ.- Համագումարին վերապահւում է իրաւունք՝ անհրաժեշտ դէպքում օրակարգը փոփոխութեան ենթարկել, իսկ ծրագրից դուրս առաջարկուած հարցերը կարող են համագումարի զբաղման նիւթ դառնալ բոլոր հերթական հարցերից յետոյ՝ ժողովի մեծամասնութեան ցանկութեամբ։

Այս ձեւակերպութիւնը քննութեան առնելով, ժողովը միաձայն ընդունեց։ Հաւաքուած ձայների միայն մէկը հակառակ էր։

Աթաբէգեան առաջարկում է ի դիմաց իւր եւ իւր Ցիւրիխի ընկերների կանոնադրութեան «նպատակի» մէջ գրուած բարոյական եւայլն խօսքերը ջնջել, գտնելով դոքա այս դէպքում անմիտ, որով միայն կանոնադրութեան արտաքին փոփոխութիւն արած կը լինենք, իմաստին ամենեւին չկպչելով։

Ցովհաննիսեան առաջարկում է, ջնջել նոյնպէս «մըտաւոր» բառը, զի ըստինքեան «չփումն»՝ միութեան տեսակէտից պարունակում է իւր մէջ «բարոյական եւ մտաւոր» գաղափարները։

Քուէարկութեան դրուելով, Աթաբէգեանի առաջարկը ստացաւ 2 ձայն ընդդէմ 13-ի եւ Ցովհաննիսեանի առաջարկը 3 ընդդէմ 12-ի։ Հետեւեալաբար եւ չընդունուեցաւ։

Կարագօզեանի առաջարկը՝ հրատարակել տեղեկութիւններ, որի հետ միանում է Պարիզի ուսանողութիւնն պ. Եսայեանի միջոցաւ առած Bulletin հրատարակելու առաջարկը, որոշուեցաւ յետաձգել մինչեւ թերթի հարցը վճռելը։

Ապա քննուեցաւ կանոնադրութեան IV հատուածի 9-րդ պրակի մասին եղած առաջարկութիւնը։ Գտնում է շատ յարմար, սակայն վճիռներն ի կատար ածելու վերաբերմամբ անորոշութիւն գտնելով, առաջարկում է Տէր-Պօղոսեան մի նախադասութիւն եւս աւելացնել պարզելու համար այդ։ Յետոյ զանազան բանաձեւներ տալիս են Աւետեան եւ Բունիաթեան, նոյնպէս եւ Իսախանեան։

Քուէարկութեան դրուեցին՝ նախ Բունիաթեանի բանաձեւը. ստացաւ 3 ձայն. Տէր-Պօղոսեանի — 7 ձայն, Իսախանեանի — 7 ձայն։

Փոքր ընդմիջումից յետոյ վերսկսելով ժողովը, պ. Նալբանդեան՝ Տէր-Պօղոսեանի եւ Իսախանեանի առաջարկութիւնները նորից խմբագրելով ներկայացրեց ժողովին. առաջարկւում էր հետեւեալ նախադասութիւնը աւելացնել յանձնաժողովի շրջաբերականներում արուած առաջարկութեանը՝ «Այս ձեռնարկները վերջնականապէս վճռւում եւ ի կատար են ածւում կամ համագումարի եւ կամ Կարգ. յանձնաժողովի միջոցաւ՝ համաձայն առաջնի յանձնարարութեան»։

Քուէարկութեան դրուելով 14 ձայնով ի դէմ 2-ի, մէկ ձեռնպահ ընդունուեց։ Կանոնադրութեան մէջ մի քանի թեթեւ փոփոխութիւններ միայն։

Կանոնադրութեան VIIրդ հատուածի 1 պրակում ընդունուեց «նախապէս» խօսքի տեղ մտցնել ժամանակամիջոց «մի ամիս առաջ» խօսքերով։

Ժողովը փակուեց ժամի 1½-ին։

Քարտուղար՝ Ա. ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Զ. Նիստ
(30 Մարտ)

Ժողովն սկսեց ժամի 11-ին եւ արձանագրութիւնների ընթերցումից եւ վաւերացումից յետոյ ձայն տրուեց պրն. Թոքաթլեանին որը ճառախօսեց «Տաճկաստանի հայ երիտասարդութեան մասին»։ Հայ երիտասարդը երեքի է բաժանում, պոլսեցի, գաւառացի, քաղաքային եւ գիւղային։ Հայ ընտանիքի ներքին եւ արտաքին կեանքը նկարագրելով, նրանց մէջ շատ յաճախ դաստիարակութեան պակասը մատնանիշ անելով։ Գտնում էր Պոլսոյ երիտասարդը առհասարակ թեթեւ, թոյլ ոյժի եւ կամքի տէր. դոքա թուով սակաւ են եւ մեծ մասամբ աշխարհաքաղաքացի. գաւառացի երիտասարդը աւելի պակաս մտաւոր ոյժերով, սակայն ազգային կեանքը եւ սէրը աւելի զարգացած։ Գիւղացին ոգեւորուած, բարեպաշտ բայց դաստիարակութիւնը բոլորովին պակասում է։

Վիճաբանութեան մէջ մտան հետեւեալները։

Թիւլեան.— փոխանակ ըսելու միայն թէ ինչ է պոլսեցի երիտասարդը, լաւ կ'ըլլար հարց տալ թէ ի՞նչ եղեր է, ի՞նչ է եւ ի՞նչ կրնայ ըլլալ։ Գեղացին կը սիրէ իւր հայրենի տունը, գեղը, լեռը. տեղական պայմաններն են, որ այսպէս կը ստիպեն զինքը։ Բայց ծանօթանալով եւրոպական կեանքին, այդպիսիները բնականաբար կը գերադասեն մարդկօրէն արժանավայելութեամբ ապրիլը եւ այլեւս տուն չվերադառնալ։ Պոլսոյ երիտասարդութիւնը փոքր ազատութիւն մը վայելած ըլլալով՝ կուլտուրական մեծ յառաջդիմութիւն մը գործած է 50-ական թուականներէն ի վեր, սակայն կեանքի ապահովութիւնը արգելք մ'է ազատաբար գործելու։

Եսայեան գտնում է դասախօսի նկարագրութիւնը բոլորովին ճիշտ, մինչդեռ պ. Թիւլեան աւելի քննադատորէն է վերաբերւում, բայց շատ աւելի խիստ քան հարկաւոր է։ Սա քննելով որ, յեղափոխութեան մուտքը տաճկահայոց մէջ, բացարձակ աննպատակայարմար էր համարում, ընդունելի է որ սխալներ շատ տեղի են ունեցած, սակայն դոքա մեծ մասամբ արդիւնք են ռուսահայ եղբայրներու մեզ նուազ ճանաչելու, քան հարկաւոր էր։ Այնուամենայնիւ բացարձակ կերպով դատապարտել ոեւէ մէկի չենք կարող։

Բունիաթեան հիմնուելով իւր ծանօթութեան վրայ, վիճում է դասախօսի այն կարծիքի դէմ, թէ պոլսեցի հայ վաճառականը եւ մանաւանդ արհեստաւորը ամենեւին չեն հետաքրքրւում հասարակական կեանքով եւ իբր թէ միայն օղիով եւ զուարճութիւններով են զբաղուած։

Սեղբոսեան նկատում է, որ դասախօսը աչքի ընկնող խոպան լեզու է գործածում. նա գովելով մի կողմը եւ պախարակելով միւսը շատ խիստ գոյներով է անում այդ։ Արհեստաւորների սրճարան մտնելը, բաժակ մը օղի խմելը գինեմոլութիւն չպէտք է համարել։ Նոյն ինքն դասախօսը աննկատ կերպով յիշում է թէ սրճարաններում «թաղային» գործերի վերաբերմամբ խօսակցում են։ Սորանից գոհ լինելու առիթներ ունինք։ Ճիշտ է որ եսասիրութիւնը շատ զարգացած է Պոլսոյ երիտասարդութեան բարձր կրթութիւն ստացածների մօտ, սակայն չպէտք է անուշադրութեան տալ այն մի բուռն երիտասարդները, որոնք ջերմագին նուիրուել են ցանկանում հասարակական շարժումներին։ Պոլսոյ երիտասարդութիւնը եւ իւր գրականութիւնը ֆրանսական ռոմանտիք իրականութեան արտաքինի ազդեցութեան տակ, աւելի ծանրախորք[?] բնաւորութիւն մը չունի։ Տաճկահայ դպրոցները բարեկարգելու մասին պրն. դասախօսի յայտնած յոյսերը եւ ցանկութիւնները այս պայմաններում միայն դատարկ utopie-ներ[17] են։ Հարկաւոր է մեր ամբողջ ուշքն ու միտքը մեր այս անտանելի դրութիւնը բարւոքելու ջանալու դարձնել. անկեղծ, անձնուէր, եռանդուն գործը — ակտիւ գործունէութիւնը մեր հայրենիքի տնտեսական վիճակը բարելաւելու,— սա միայն կարող է մեր յոյսերն ու ցանկութիւնները պսակել (ծափահարութիւններ)։

Նալբանդեան գտնում է դասախօսութեան մէջ աւելի պաթետիք[18] մասն, որի հակառակ փաստական մասը պակասում էր եւ որը ամբողջացրին Թիւլեան եւ Սեղբոսեան։ Նա նկատում է, որ յեղափոխութիւնը ազգերի պատմութեան մէջ մի անցողական մոմենտ լինելով, աւելի լայն հիմքերի վերայ պէտք է դնել տաճկահայ եւ ռուսահայ երիտասարդութեան յարաբերութիւնները։

Տիկին Տէր-Յովհաննիսեան նկատում է որ ժողովուրդը նախապատրաստութիւն չունի յեղափոխութեան համար եւ հարկաւոր է գտնում ամենայն խնամքով ուշք դարձնել այս կէտի վերայ։ Ընտանիքի նեղ սահմաններումն եւս մեծ ասպարէզ կայ գործելու։

Իսախանեան.— Ճառախօսների կարծիքից կարելի է եզրակացնել, որ ռուսահայ երիտասարդը աւելի բարձր է կանգնած տաճկահայ երիտասարդներից, սակայն իբր թէ մի պատ անջատում է այդ երկուսին։ Սորա պատճառը պէտք է փնտռել նորանում որ տնտեսապէս ոեւէ յարաբերութիւն չկայ։ Թէպէտ այս մտքով փորձեր եղել են, բայց դոքա արհեստական կերպով լինելով, միշտ անհետեւանք են մնացել։

Տէր-Պօղոսեան ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վերայ, որ նախորդ պ. ճառախօսները համեմատելով թուրքի եւ հայի ընդհանուր դրութիւնը, ի նկատի չեն ունենում բուն հայկական նահանգները, ուր հայը կուլտուրական եւ տնտեսական աւելի բարձր մակերեւոյթի վերայ է կանգնած։— Յեղափոխութեան գաղափարը եւ նորա գոյութիւնը Տաճկահայաստանում մի բռնազբօսիկ եւ արուեստական ներմուծութիւն չէ ռուսահայոց կողմից, ինչպէս ոմանք իրենց թերի տեղեկութիւններովը ենթադրում են. իսկ Սեղբոսեանի նկատողութիւնները դասախօսի իբր թէ ուտոպիական ցանկութիւնների վերաբերմամբ անարդար են, զի կուլտուրայի համար հողը միայն արիւնով չէ, որ պէտք է պարարտացնել, այլ եւ մտքերի մշակումով. նախամտածած գործը միայն նպատակին կարող է հասցնել, եւ, ոչ թէ յեղափոխութիւնը պէտք է պատրաստէ ազգը, այլ ազգը պէտք է պատրաստէ յեղափոխութիւնը։

Սեղբոսեան ասում է, որ թերեւս տեսականապէս

17.- Ֆրանսերէն՝ իտէալական անիրագործելի իղձ, երազանք։
18.- Յուզական։

կարող են ճիշտ լինել նախորդ խօսողների նկատողութիւնները, սակայն որպէսզի մեր ժողովուրդը կուլտուրապէս առաջ երթայ, արդարեւ պէտք է հող պատրաստուած լինի, բայց այդ հողը միմիայն մեր արիւնովը կարելի է պարարտացնել։

Յովհաննիսեան շեշտում է այն հանգամանքի վերայ, թէ գործը ոգեւորում է եւ անհատներին՝ որոնք ընդհանրապէս անտարբեր են. եւ ընդհանուր ոգեւորութիւնը դէպի գործը, ազնիւ, եռանդուն աշխատութիւնը Տաճկահայաստանը տնտեսապէս բարելաւելու համար,— այն կռուանը, որի վրայ յենուած մենք ապահովապէս կ'առաջնորդուինք դէպի յաջողութիւն։ (Մափահարութիւններ)։

Պ. պ. Թիւլեանի, Բունիաթեանի եւ Եսայեանի կարճ նկատողութիւններից յետոյ, վերջին խօսքը տրուեց օրուայ ճառախօս պ. Թոքաթլեանին, որը ասում է, թէ ինքը ցանկացել էր տաճկահայ երիտասարդի մի լոկ պատկերը տալ եւ սահմանափակուել է միայն ներկայով, առանց մտնելու նորա ներկայ դրութեան պատճառների եւ սոցա շարժառիթների մէջ եւ դոքա քննադատութեան մի բովից անցնելու, ինչպէս առաջարկում էին ոմանք, որը, ի հարկէ աւելի ցանկալի կը լինէր, սակայն գոհ էր ուրիշներից լսուած դատողութիւններով։ Նախագահը յայտնեց շնորհակալութիւն, մանաւանդ իւր դասախօսութեամբը այսքան վիճաբանութեան առիթ տուած լինելուն համար եւ ապա փակեց նիստը ժամի 1 եւ 20 րոպէին։

Քարտուղար՝ ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

Է. Նիստ
(Մարտ 30, երեկոյ)

Ժամը 4-ին Molkenkur-ի բարձունքին վրայ կայացաւ այս նիստը ներկայութեամբ 17 անդամներու։

Լրագրական հարցը մշակող յանձնախումբը ներկայացրեց իր պատրաստած տեղեկագիրը, որ է.

I ա) Թերթը եւրոպական հայ-ուսանողական միութեան օրգանն է եւ նշանակուած է ուսանող ընթերցողներին համար.

բ) Թերթի բովանդակութիւնն է համագումարում եւ զանազան ուսանողական ընկերութիւնների ժողովներում կարդացուած դասախօսութիւններ, համառօտ տեղեկագիր համագումարի ընթացքի մասին, վիճակագրական եւ ուրիշ տեղեկութիւններ հայ ուսանողների եւ ուս. առանձին խմբերի մասին Եւրոպայում, հայկական բիբլիոգրաֆիական բաժին։

II. Կարգ. յանձնաժողովին յանձնել խմբագրական-հրատարակչական գործը եւ կամ յանձնաժողովը լինի միայն հրատարակիչ, իսկ խմբագրական մարմին առանձնապէս ընտրուի համագումարից։

III. Թերթը հրատարակել կիսամեակից-կիսամեակ, 2-3 տպագրական թերթի ծաւալով։

IV. Ծախքի աղբիւրները համարւում են անդամավճարները, մասնաւոր նուէրներ եւ հանգանակութիւն՝ այս նպատակով (իւրաքանչիւր համարի լոյս տեսնելուն համար ծախս հաշուած է մօտ 150 մարկ)։ Բովանդակութեան մասին Յովհաննիսեանի առանձին կարծիքն է՝ օրգանի մէջ զետեղել նաեւ այժմ գոյութիւն ունեցող ազգային հրատապ խնդիրներ, մասնաւորապէս տաճկահայերի վերաբերեալ։

Տեղեկագրին յաջորդող վիճաբանութիւնը տուաւ հետեւեալ արդիւնքը. բովանդակութեան վերաբերմամբ երկու առաջարկ տրուեցաւ.

ա) Հրատարակել Եւր. հայ-ուսանողութեան վերաբերեալ վիճակագրական եւ ուրիշ տեղեկութիւններ, այլ եւ թէ՝ համագումարի եւ թէ ուսանողական զանազան խումբերու մէջ կարդացուած ընտիր դասախօսութիւնները ամբողջապէս.

բ) Հրատարակել Եւր. հայ ուսանողութեան վերաբերեալ վիճակագրական եւ ուրիշ տեղեկութիւններ, այլեւ թէ համագումարի եւ թէ ուսանողական խումբերու մէջ կարդացուած դասախօսութիւններու ամփոփումը միայն konspect[7]. երկրորդ առաջարկը 14 ձայնով ընդունուեցաւ եւ ձեւակերպուեց այսպէս. ի նկատի ունենալով զանազան կողմից յայտնած ցանկութիւնները, այսինքն՝ հրատարակել պարբերական տեղեկութիւններ ուսանողների մասին, համագումարը պատուիրում է Կարգ. յանձնաժողովին, կանոնադրութեան որոշման համեմատ բաւականութիւն տալ այն պահանջին եւ հրատարակել սեմեստրը մի տետրակ. բովանդակութիւնը կը լինի՝ տեղեկութիւններ համագումարի, ուսանողական ժողովների եւ ուսանողների մասին. համագումարում եւ զանազան ուս. խմբերում կարդացուած դասախօսութիւններից տեղեկութիւններ եւ ցանկութեան համեմատ կարճառօտ քոնսպեկտներ[7], հետաքրքիր տեղեկութիւններ ուսանողական աշխարհից։ Ծաւալը լինելու է մօտ մի տպագրական թերթ։ Իսկ հեկտոկրաֆով[19] կամ տպագրութեամբ անելը թողնւում է Կարգ. յանձնաժողովի հայեցողութեանը, վարուելու իւր նիւթական միջոցներուն համեմատ։

Թերթը 13 ձայնով որոշուեց անուանել Տեղեկագիր Եւր. հայ-ուսանողական միութեան։

15 ձայնով որոշուեցաւ պարտք դնել Կարգ. յանձնաժողովի վերայ տեղեկագիրները մեր պարբերական մամուլին ուղարկել խնդրելով արտատպել։

Ծրագրի մէջ նախատեսուած հարցերը աւարտած լինելով՝ ժողովը անցաւ նոր առաջարկներու քննութեանը։

19.- Խմորատիպով։

Պարիզի ուսանողութեան եւ Բերլինի մէկ պարոնի արած առաջարկները որոնք իրար նման են, անգամ քննութեան չառնուեց. տեղեկագիրներ հրատարակելու հարցը վճռուած լինելով որով եւ բաւարարութիւն էր տրուած սոյն առաջարկներին։ Պարիզցիների Բ.-րդ առաջարկը միայն մի ձայն ստացաւ։ Գ. առաջարկը բաւարար լուծումն էր ստացել, «մի ամիս առաջ ժամանակամիջոց» որոշուած լինելով. իրանք առաջարկել էին «2 ամիս առաջ», որը չընդունուեցաւ։ Դ. առաջարկը ստացաւ 10 ձայն ընդդէմ 10-ի։ Առաջարկը վերաբերում էր դասախօսութիւններն ըստ կամաց ընտրել կարողանալուն եւ ոչ անպատճառ հայկ. կեանքից։

Բերլինից՝ մի ուսանողի արած առաջարկութիւնը այն է՝ պրն. Ջանգիւլեանին մասնաւոր շնորհակալութիւն յայտնել իր հրատարակած «Բրատսկայա պրոմողչ»[20] գրքի առթիւ, ընդունելութիւն չգտաւ։

Տարաժամած լինելով ժողովը փակուեց ժանի 7-ին։

(Այս երեկոյ պատրաստուած է հրաժեշտի ընթրիքը)։

Քարտուղար՝ Լ. ՍԵՂԲՈՍԵԱՆ

20.- Բնագրին մէջ ռուսատառ՝ «Եղբայրական օգնութիւն»։

Ը. Նիստ
(Մարտ 31)

Համագումարը իր այս վերջին նիստում զբաղուեց պ. Յովհաննիսեանի միջոցաւ Ժընեւի ուսանողութեան առաջարկը քննելով, որ էր՝ Միութիւնը նախաձեռնող հանդիսանայ եւ ձեռնարկէ գիտական փոքրիկ բրոշիւրներ թարգմանելու եւ հրատարակելու, տարածելով դոքա մեր ժողովրդեան մէջ։ Ի նկատի առած խնդրի լուրջ բնաւորութիւնը եւ համագումարի ունեցած սակաւ ժամանակը, մանաւանդ որ մի որոշ պրոգրամ ներկայացուած չէ, որոշեց յետաձգել այդ հարցի լուծումը յաջորդ համագումարին, առաջարկելով միանգամայն Ժընեւի ուսանողութեանը մի մանրամասն պրոգրամ ներկայացնել, միեւնոյն ժամանակ սկզբունքով իւր համակրութիւնը յայտնելով այդ առաջարկին։

Յաջորդ համագումարի համար Կարգ. յանձնաժողով ընտրելը որոշուեց Էյչիգիի ուսանողութիւնը, իսկ սորա յանձն չառած դէպքում՝ Բերլինի ուսանողութիւնը։

Փաստ. 1461-191

Ա 9.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ-ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Մշակուած Միութեան Գ. Համագումարում, 1900 թ. Հոկտեմբերին
Հաստատուած՝ ուսանողական մարմինների կողմից 1901 թ. Յունուարին

I. ՆՊԱՏԱԿ

1. *Բարոյական կապ հաստատել Եւրոպայի հայ ուսանողների եւ ուսանողական խմբերի մէջ։*

2. *Նպաստել նրանց ծանօթութեանը հայոց կեանքի եւ մասնաւորապէս հայերի քաղաքական կացութեան հետ։*

3. *Զգտել ծանօթացնել հայերը եւրոպացիներին։*

4. *Հրատարակել հայոց հարցին վերաբերեալ եւ նոյն հարցին նպաստող՝ ինքնուրոյն եւ թարգմանական գրքեր հայերէն լեզուով։ Նոյնպէս եւ օտար լեզուներով, եթէ կարիք լինի։*

Ծանօթ. Միութիւնը կարող է նիւթապէս օգնել Եւրոպայում գոյութիւն ունեցող հայկական ուրիշ հիմնարկութիւններին՝ նոյն նպատակին ծառայող հրատարակութիւններ անելու համար։

II. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

5. *Միութեան անդամակցելու իրաւունք ունեն Եւրոպայի բոլոր հայ ուսանողուհիները եւ ուսանողները, անկախ նոցա մասնակցութիւնից տեղական խմբերին։*

6. *Ամէն անդամ ընտրող է եւ ընտրելի։*

7. *Իւրաքանչիւր կիսամեակի անդամավճարն է երկու ու կէս ֆրանկ կամ երկու մարկ։ Միութիւնը ընդունում է նաեւ՝ անդամներից եւ ոչ-անդամներից կամաւոր նուէրներ, որոնք արձանագրւում են յատուկ մատեանում։*

Ծանօթ. Անդամները կարգադիր յանձնաժողովից ստանում են անդորրագրեր։

III. ԿԱԶՄԸ

Միութեան գործօն մարմիններն են՝ ա) Համագումար, բ) կարգադիր յանձնաժողով եւ գ) Լիազօր կոմիտէ։

IV. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

8. *Համագումարը տեղի է ունենում տարեկան մի անգամ։ Բացի տարեկան համագումարից, կարեւոր դէպքերում լիազօր կոմիտէն եւ կարգադիր յանձնաժողովը փոխադարձ համաձայնութեամբ կարող են հրաւիրել* արտակարգ *համագումար։*

9. *Համագումարը կազմւում է՝ ա)* պատգամաւորներից *եւ բ)* անդամներից։ *Պատգամաւորը երկու ձայն, իսկ անդամը մի ձայն։*

Պատգամաւորը գալիս է հաւատարմագրով։

Ծանօթ. Ոչ-անդամները կարող են մասնակցել համագումարին իբրեւ հիւրեր, միայն խորհրդատու ձայնով։

10. *Ամէն մի քաղաքի Միութեան անդամները, որոնք կազմում են Տեղական մարմիններ, ուղարկում են համագումարին պատգամաւորներ՝ ընտրուած համեմատական ներկայացուցչութեան սիստեմով։ Միեւնոյն քաղաքում գոյութիւն ունեցող իրարից անկախ ուսանողական կազմակերպութիւնները կարող են ուղարկել պատգամաւորներ՝ ընտրուած նոյն սիստեմով։*

Ծանօթ. Միութեան իւրաքանչիւր 10 անդամի համար ընտրւում է մի պատգամաւոր։ Որպէսզի համագումարին կարող լինեն մասնակցել եւ այն քաղաքները, ուր անդամների թիւը 10-ից պակաս է (առնուազն 3), այդպիսիներին իրաւունք է տրւում ուղարկել մի-մի պատգամաւոր։ Իսկ եթէ մի քաղաքում միայն մի կամ երկու անդամ կայ՝ նրանք մասնակցում են մօտակայ ուսանողաշատ քաղաքներից մէկի պատգամաւորական ընտրութեան։

11. *Պատգամաւոր ուղարկելու ծախքերը՝ նրա անկարողութեան դէպքում՝ հոգում են ընտրողները։ Այն դէպքում, եթէ որեւէ քաղաքի ուսանողները՝ միջոցներ չունենալու պատճառով՝ միանգամայն անկարող են հոգալ իրենց պատգամաւորի ծախքը, կարգադիր յանձնաժողովը յանձն է առնում հոգալ պատգամաւորի ճանապարհածախքը։*

12. *Համագումարը բաց է անում կարգադիր յանձնաժողովի նախագահը, երբ նախապատրաստական մի ժողովում՝ եկած անդամները վճռում են, որ ներկայ եղողների թիւը բաւարար է նիստերը բանալու համար։*

13. *Համագումարի իւրաքանչիւր նիստ միայն այն ժամանակ կանոնաւոր է, երբ նրան մասնակցում է համագումարին եկած անդամների մեծամասնութիւնը։*

14. *Համագումարը ընտրում է՝ ամէն մի նիստի համար նախագահ, եւ երեք քարտուղար՝ բոլոր նիստերի համար։*

15. *Ընտրութիւնները կատարւում են բաց քուէարկութեամբ եւ ձայների պարզ մեծամասնութեամբ։*

Ծանօթ. Նոյն ձեւով են կայանում եւ վճիռները։

16. *Համագումարի զբաղմունքները տեղի են ունենում այն ծրագրով եւ օրակարգով, որ նախապէս կազմել է կարգադիր յանձնաժողովը։*

Ծանօթ. Համագումարին վերապահւում է իրաւունք՝ անհրաժեշտ դէպքում՝ օրակարգը փոփոխութեան ենթարկել. իսկ ծրագրից դուրս առաջարկած հարցերը կարող են համագումարի զբաղմունքի նիւթ դառնալ բոլոր հերթական հարցերից յետոյ՝ ժողովականների մեծամասնութեան ցանկութեամբ։

17. *Համագումարի զբաղմունքներն են՝*

ա) կարգադիր յանձնաժողովի եւ լիազօր կոմիտէի համարատուութիւնը,

բ) նախահաշուի կազմելը,

գ) ընտրութիւններ, դ) դասախօսութիւններ եւ

ե) առաջարկութիւններ։

18. *Դասախօսութեան առարկայ կարող են լինել միայն այն նիւթերը, որոնք անմիջական առնչութիւն ունեն հայկական կեանքի հետ, գերադասութիւն տալով հայոց պատմութեան ու գրականութեան եւ հայոց ներկայ քաղաքական ու տնտեսական դրութեան։*

19. *Համագումարը, իբրեւ Միութեան բարձր ատեան, լիազօր է, կանոնադրութեան սահմաններում, ամէն տեսակի վճիռներ կայացնել։*

20. *Համագումարը որոշում է յաջորդ համագումարի տեղը եւ ժամանակը, նոյնպէս եւ այն քաղաքը, որի ուսանողութիւնը պիտի ընտրէ իր միջից կարգադիր յանձնաժողով։*

V. ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

21. *Կարգադիր յանձնաժողովը բաղկանում է 5 անդամից եւ, եթէ կարիք լինի, 2 փոխ-անդամից։ Յանձնաժողովը իր միջից ընտրում է՝ նախագահ, գանձապահ եւ քարտուղար։*

22. *Ամէն մի կարգադիր յանձնաժողովի գործունէութիւնը տեւում է մի տարեկան-համագումարից մինչեւ միւսը։*

23. *Կարգադիր յանձնաժողովը՝ ա) պահում է դիւանը եւ Միութեան կնիքը, բ) գանձում է անդամավճարները, նուէրները եւ հոգում ծախքերը, գ) վարում է Միութեան բոլոր գրագրութիւնները, դ) մշակում եւ հրատարակում է Տեղեկագիրը։*

Ծանօթ. Տեղեկագիրը պարունակում է՝

ա) վիճակագրութիւն Եւրոպայի հայ ուսանողների,

բ) տեղեկութիւններ համագումարի ու

գ) դրամական եւ այլ հաշիւներ՝ քաղուած կարգադիր յանձնաժողովի եւ լիազօր կոմիտէի գործերից։

24. *Միութեան դիւանը եւ գոյքը գտնւում են կարգադիր յանձնաժողովի մօտ, որը եւ պաշտօնապէս յանձնում է իր յաջորդին՝ իր լիազօրութիւնը լրացած դէպքում։*

25. *Կարգադիր յանձնաժողովը իրաւունք ունի հրաւիրել մասնաւոր անձանց ու զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներին՝ մասնակցելու համագումարին դասախօսութիւններով։ Առանց կարգադիր յանձնաժողովի հրաւէրի եւս՝ նրանք կարող են մասնակցել համագումարին՝ նախօրօք յայտնելով կարգադիր յանձնաժողովին անելիք առաջարկութիւնների ու դասախօսութիւնների մասին։*

26. *Կարգադիր յանձնաժողովի դիմումի համաձայն՝ Միութեան ամէն մի քաղաքի Տեղական մարմինները իրանց միջից ընտրում են մի կամ երկու աշխատակիցանդամ, որոնք հանդիսանում են միջնորդ՝ կարգադիր յանձնաժողովի եւ տեղական ուսանողների մէջ։*

VI. ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ

27. *Համագումարը ընտրում է միութեան անդամներից, մի տարի ժամանակով, լիազօր կոմիտէ՝ բաղկացած 5 հոգուց։ Կոմիտէի անդամները հարկաւոր դէպքում կարող են դիմել կողմնակի ձեռնհաս անձանց աջակցութեանը։*

28. *Լիազօր կոմիտէի պաշտօնը պիտի լինի՝*

ա) կազմել կոնֆերանսներ եւրոպական զանազան քաղաքներում,

բ) ուղարկել կարեւոր դէպքերում ներկայացուցիչներ,

գ) Պրոպագանդ անել եւրոպական մամուլի մէջ հայերի եւ հայկական գործերի օգտին ե

դ) կազմակերպել եւ ընթացք տալ գրքերի հրատարակութեան գործին, որի մասին յիշատակուած է 4-րդ յօդուածում։

VII. ՆՇԱՆՆԵՐ

29. *Միութիւնը ունի իր նշանը եւ կնիքը։ Նշանի ձեւը որոշում եւ հաստատում է համագումարը։ Կնիքը կը-րում է հետեւեալ մակագրութիւնը. «Եւրոպայի Հայ-Ուսանողական Միութիւն» եւ նոյնը ֆրանսերէն* "Union des Etudiants arméniens de l'Europe".

VIII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

30. *Կանոնադրութեան որեւէ կէտի փոփոխութեան առաջարկ կարող է անուել պատգամաւորի միջոցով համագումարին։ Այն դէպքում, եթէ այդ առաջարկը ընդունուի ձայների ¾ մեծամասնութեամբ, նա կը ներկայացուի Միութեան բոլոր անդամների քուէարկութեան, եւ հաստատուած կը նկատուի, երբ ստանայ քուէարկողների ¾ մեծամասնութիւնը։*

Փաստ. 1445-1

Ա 10.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 10ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ «ԴՐՕՇԱԿ»Ի ԵՒ "PRO-ARMENIA"Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ստորեւ երկու նամակներ, գրուած այդ օրերուն սոցիալ դեմոկրատ ուսանող, յետագային համայնավար հանրածանօթ ղեկավար Ստեփան Շահումեանի ձեռքով, շնորհաւորելու համար Հ. Յ. Դաշնակցութեան տասնամեակը: Յատկանշական է, որ օրին Ս. Շահումեանի գրիչը վարանած չէ գովաբանական խօսքեր շռայլելու Դաշնակցութեան հասցէին եւ Ռիգայի ինչպէս նաեւ ռուսահայ ուսանողութեանց անունով ցանկալու՝ «Ձեզ ապագայում եւս վարել հայկական դատը նոյն յաջողութեամբ եւ նոյն հերոսական անձնուիրութեամբ»:

«Դրօշակ»ի մեծարգոյ խմբագրութեանը!

Պատիւ ունիմ յայտնելու Ձեզ, որ Ռիգայի հայ ուսանողութիւնը, ներկայ Հոկտեմբերի 6-ին, տօնեց «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» տասնամեայ յոբելեանը, նուիրելով նրան մի գրականական երեկոյ:

Երեկոյի վերջում որոշուեց ուղարկել «Դրօշակ»ի խմբագրութեանը եւ Թիֆլիզի Բիւրոյին հետեւեալ ուղերձը.

«Ռիգայի հայ ուսանողութիւնը շնորհաւորում է «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» տասնամեայ յոբելեանը եւ ցանկանում է Ձեզ ապագայում եւս վարել հայկական դատը նոյն յաջողութեամբ եւ նոյն հերոսական անձնուիրութեամբ: Ողջունում ենք առանձնապէս այն ուղղութիւնը, որ ընդունել է «Դրօշակ»ը վերջին տարիների ընթացքում: Այո՛, մենք համաձայն ենք Ձեզ հետ, որ այն միջոցին, երբ բոլոր բուրժուական կառավարութիւնները, մարդկութեան այդ դահիճները, ձեռք ձեռքի են տալիս, որպէսզի միացած այժերով արմատախիլ անեն աշխարհիս երեսին ամէն մի ազատական շարժում,– մե՛զ եւս՝ նրանց թշուառ զոհերին, բոլոր երկիրների հալածեալներին ու դժգոհներին, հարկաւոր է եղբայրական կապ հաստատել մեր դահիճների դէմ: Հայկական յեղափոխութիւնը համաշխարհային յեղափոխութեան մի ճիւղը պէտք է լինի:

«Կեցցէ՛ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը», կեցցէ՛ Հայկական Յեղափոխութիւնը, Կեցցէ՛ մեր դաշնակից եւ մեր պաշտպան համաշխարհային յեղափոխական սոցիալ-դեմոկրատիան»:

Բացի այդ, սկզբունքով ընդունուեց Ռիգայի հայ ուսանողական միութեան մուտքի մի մասը ամէն տարի յատկացնել յեղափոխական գործին եւ առհասարակ ամէն կերպ աշխատել նիւթական աջակցութիւն ցոյց տալ Ձեզ:

Ի դիմաց Ռիգայի հայ ուսանողական միութեան՝
Ս. ՇԱՀՈՒՄԵԱՆ

15/X/1901
Ռիգա

P.S.- Խնդրում ենք, մեզ մի հասցէ ուղարկեցէք եւ «Դրօշակ»ի համարները, 4-ից սկսած: Մեր հասցէն՝ *Ռիգա, պոլիտեխնիկում, ստուդ. Շահումեանու*[20ա] առայժմ այսպէս ուղարկեցէք: Այս նամակը մենք ուղարկում ենք Ֆրէյբերգ մեր ընկերներից մէկին, որ նա Ձեզ հասցնի այնտեղից:

Ս.Շ.



20ա.- Բնագրին մէջ ռուսատառ՝ Ռիգա, պոլիտեխնիկում, ուսանող Շահումեանին:

Փաստ. 1445-3

Ա 11.– «ԴՐՕՇԱԿ»Ի ՄԵԾԱՐԳՈՅ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ

Պատիւ ունիմ հաղորդելու Ձեզ, որ Ռուսահայ ուսանողների վերջին համագումարը որոշեց ուղարկել Ձեզ եւ Pro-Armenia-ի խմբագրութեանը հետեւեալ ուղերձները.

Ձեզ. «Ռուսահայ ուսանողական համագումարը ուղարկում է Ձեզ իր ջերմ ողջոյնները եւ ցանկանում է Ձեզ ապագայում եւս նոյն եռանդով ու յաջողութեամբ առաջ տանել հայկական դատի պաշտպանութիւնը: Ուրախութեամբ արձանագրում ենք, որ մեր շրջաններում մի նոր հոսանք, նոր ոգեւորութիւն է սկսուել յեղափոխական գործի նկատմամբ: Ուրախ ենք, որ կարող ենք ամենայն վստահութեամբ խոստանալ Ձեզ մեր ջերմ աջակցութիւնը»:

2) Pro-Armenia-ին
«Ռուսահայ ուսանողութեան համագումարը շնորհաւորում է Ձեր եռանդուն ու արդիւնաւէտ գործունէութեան տարեդարձը եւ յայտնում է Ձեզ դարաւոր նահատակ հայ-ժողովրդի անունից իր խորին շնորհակալութիւնը»:

Խնդրում ենք այս վերջինը հաղորդէք ուր հարկն է: Երկու ուղերձներն էլ կարող էք տպագրել, եթէ յարմար կը դատէք:

27/XII/1901



Ա 12.– ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

Եւրոպայի Հայ ուսանողական Միութիւնը, իր ծրագրի ոգուն համաձայն, որով պարտականութիւն կը ստանձնէ Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ հայկական դատին ի նպաստ բանախօսութիւններ կազմակերպել, հրաւիրած էր Ֆրանսայի նշանաւոր քաղաքագէտ-հրապարակագիր Պ. Ֆրանսիս դը Պրէսանսէին, արեւելեան հարցին էն ձեռնհաս եւ հեղինակաւոր անձնաւորութիւններէն մէկը — ծանօթ մեր հայրենակիցներուն «Պրօ Արմենիայի» խմբագրական կոմիտէի անդամակցութիւնով — որպէսզի Ժընեւի մէջ բանախօսութիւն մ'ընէ հայկական հարցի մասին։

Ազնիւ եւ վեհանձն հրապարակագիրը, որուն անհանգիստ ու փիլիսոփայական հոգին, ուրուրեմն մարդկային ազատագրութեան կռուին մէջ գոհացում գտած է, սիրայօժար ընդունեց լսելի ընել արդարութեան բողոքը ազատութեան Ոստանին, Ժընեւի մէջ, որ համաշխարհային քաղաք մըն է, կամ իր խօսքով «Եւրոպայի զգայասրտութեան կեդրոններէն մէկը»։

Պրէսանսէի անունը բաւական էր արդէն որ ամբողջ Ժընեւը թունդ հանէր։ Ամէն մարդ անհամբեր էր լսել Ֆրանսացի մեծ հրապարակագիրը, որ առաջին անգամն էր կու գար Ժընեւ եւ մանաւանդ շնորհակալ կ'ըլլային հայ ուսանողութենէն, որ այդքան գեղեցիկ եւ թելադրական անակնկալ մը կ'ընէր վայելել տալով իրենց այն անձնաւորութեան ներկայութիւնը, որ Տրէյֆիւսի դատին ատեն[21], արդարութեան էն հզօր, էն քաջասիրտ պաշտպաններէն մէկն եղաւ, նոյնիսկ իր կեանքը վտանգի ենթարկելով։ Ուրիշ բանախօսութիւններ, որոնք տեղի պիտի ունենային նոյն իրիկուն, յետաձգուեցան այդ առթիւ։

Բանախօսութիւնը, որ յիշատակելի պիտի մնայ, տեղի ունեցաւ փետրուար 10-ին երեկոյեան ժամը 9-ին, Ժընեւի էն հոյակապ սրահին մէջ, Վիկտորիա Հոլի մէջ, որ Եւրոպայի էն գեղեցիկ շէնքերէն մէկն է։ Սրահին դռները հազիւ բացուած, արդէն ամբողջ աթոռները գրաւած էին, այնպէս որ ժամ չանցած սրահը ոչ նստելու եւ ոչ ալ անցքերուն մէջ կայնելու տեղ կար։

Ժամը 8-ին բոլոր դռները փակուած էին, ալիքալիք եկող հասարակութեան առաջ։ Երկու հազար հինգ հարիւր հոգի, նստած ու կայնած, ելեկտրական լոյսի ողկոյզներու փողփողումին տակ, անհամբեր ու շունչը բռնած կը սպասէին պ. Պրէսանսէի գալուն։ Տեսարանը ինքնին գրաւիչ եւ ոգեւորիչ էր։ Օտար եւ տեղական պաշտօնական մարմիններ, պրոֆեսորներ, ուսանողութիւն, ընկերութիւններու ներկայացուցիչներ, Ժընեւի ազնուական եւ ժողովրդական դասակարգերը, փութացած էին լսել հայասէր հրապարակագիրը։ Սրահը կը ներկայացնէր չքեղ ծակեփունջ մը, գեղեցիկ սեռի ներդաշնակ եւ հետաքրքիր բազմութիւնովը։ Հայ ուսանողուհիները եւ ուսանողները կը գրաւէին բեմին նստարանները։

Ճիշդ ժամը 9-ին պ. Պրէսանսէ կ'երեւայ բեմին վրայ պ. Ֆավոնի հետ, որոնք կ'ողջունուին բուռն եւ երկար ծափահարութիւններով։ Պ. Ֆավոն Ջուիցերիոյ պետական ժողովի անդամ, եւ Ժընեւի կանտոնին կրթական նախարարն է։ Հակառակ իր ծանր ուժաթափութեան ու ծերութեան, պ. նախարարը ոչ միայն ընդունեց պատուակալ նախագահութիւնը, այլեւ, իր առողջութեան վտանգով, ջերմ փափաք յայտնեց իր պերճախօս եւ մարդասէր ձայնը միացնել պ. Պրէսանսէի բողոքի ձայնին Եւրոպայի անտարբերութիւնը եւ սուլթանի ոճիրները նշաւակելու համար։ Քանի քանի հեղ թարգման հանդիսացած է Ժընեւ քաղաքի հայասիրական վեհանձն զգացումին եւ համակրութեան։

Պ. նախագահը, Եւրոպայի հայ ուսանողական Միութեան կողմէ բացաւ ժողովը, քնարերգակ պերճախօսութեան մը յուզուած խօսքերով, որոնք սարսուռի ալիքներ կ'անցնեն բոլոր սրահին մէջէն եւ կը գտնեն սրտերու ճամբան։ Փոքրիկ, ազատասէր եւ մարդասէր հանրապետութեան մը բողոքի ձայնն էր որ կ'ուղղուէր «ուժեղներուն» կատարած հարստահարութիւններուն եւ ոճիրներուն դէմ, Ֆինլանտայի, Թրանսվալի եւ Հայաստանի մէջ։ «Մեր փոքրիկ Ժընեւը, ըսաւ, գիտէ գնահատել գաղափարի եւ սկզբունքի ասպետները, դժբախտաբար շատ ցանցառ այժմ։ Թէեւ ամէն տեղ ուժը իրաւունքէն առաջ է, բայց սպասենք արդարութեան գոց դռան առջեւ եւ պահենք մեր ուժը օր մը զայն բանալու համար։ Արդարութեան համար անդուլ եւ անվհատ կռիւով ցցենք որ մենք չենք յուսահատիր։ Մենք կը զգանք որ արդարութեան եւ իրաւունքի համար եղած ենք եւ մեր պարտականութիւնն է միացնել մեր ձայնը ամէն անիրաւութիւններու դէմ եղած բողոքին»։

Բուռն ծափահարութենէ ետք, պ. Պրէսանսէ կը բարձրանայ բեմը։ Լեցուն ու պատկառելի դէմք մը, մազերու գորշ ճերմակութեան տակ խորհրդով ու հմտութիւնով ծանրաբեռնուած գլուխ մը, որ զգացնել կու տայ թէ գիտակցութիւնը եւ տիրականութիւնը ունի իր ըսածին։ Իր երեւումը արդէն կ'ողջունուի սրտագին ծափահարութիւնով։

21.- Ալֆրէտ Տրէյֆիւս (1859-1935), ֆրանսական բանակի սպայ, որուն դէմ բացուած շռնդալից դատն ու անոր վերաքննութիւնը ամենաբուռն վէճերու առիթ դարձաւ մտաւորական եւ քաղաքական աշխարհի պահպանողական եւ յառաջդիմական հոսանքներուն միջեւ։

Իր ճառը, որ առանձին գրքոյկով պիտի հրատարակուի ընդարձակ, կը փութանք համառօտել «Դրօշակ»ի մէջ։ Պ. Պրէսանսէ իր բանախօսութիւնը սկսաւ պարզ, այլ մագիստօրէն[22], առանց հռետորական ճիգերու, մէկ ու քառորդ ժամ ամբողջ սրահը իր կուռ, վճիտ եւ հմտալից բանախօսութեան հմայքին տակ պահեց։

Բանախօսութիւնը կարելի է երեքի բաժնել։ 1) Համառօտ ակնարկ մը Ֆրանկո-թիւրք վէճին վրայ եւ Ֆրանսայի վերջի րոպէի հայկական դատի լքումը։ 2) Արեւելեան հարցին պատմական ամփոփ տեսութիւնը եւ 3) Հայաստանի մէջ յեղափոխութեան անհրաժեշտութեան ներքողը, որ ներկայ դժոխային պարագային միակ յենակէտն է Հայաստանի փրկութեան։

«Երջանիկ կը համարեմ ինքզինքս, ըսաւ Պ. Պրէսանսէ, որ եկած եմ հարստահարուած ժողովրդի մը համար իմ ձայնս լսելի ընել Եւրոպայի զգայասրտութեան կեդրոններէն մէկուն մէջ։ Մի կարծէք որ Հայաստանի մէջ այլեւս ոչինչ կը պատահի, ընդհակառակը դրութիւնը աւելի ծանրացած է, վրդովիչ լուրեր կու գան, նոյնիսկ պաշտօնապէս հաստատուած։

Կը յուսացուէր որ Ֆրանսան՝ օգտուելով Ֆրանկո-թիւրք միջադէպէն, առնելիքներու դատին միացնէր Հայաստանի ի նպաստ միջամտութիւն մը։ Երեսփոխանական բոլոր կուսակցութենէ բաղկացած պատգամաւորութիւն մը այդ մասին դիմում ըրաւ պ. Տելքասէին[23], բայց ան իր առջի ծրագրի վրայ նահանջեց նորէն... տոնքիշոտութիւն ըրած չըլլալու համար, թէեւ խնդիրը միայն Պերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը գործադրելու առաջարկին վրայ էր։ Ստուերին մէջէն երկնցած բազուկ մը, Ռուսիոյ բազուկը, կանգնեցուց Ֆրանսան։

Ատենախօսը անցաւ արեւելեան հարցի պատմական եւ քաղաքական երեք ֆազերուն[24], սկսած Պոլսոյ առումէն։

Առաջին ֆազին՝ թիւրքերը յաղթական են ամէն տեղ, Եւրոպան սարսափահար անընդհատ պայքարի եւ բնաջնջումի խաչակրութիւն մը կը ձեռնարկէ։ Լեհաստանը այդ ասպետական խաչակրութեան գլուխը կ'անցնի։

Երկրորդ ֆազին՝ թիւրքիան անկումէ անկում կը դիմէ, այս անգամ թիւրքիոյ տկարացումն է որ Եւրոպայի երկիւղ եւ մտատանջութիւն կը պատճառէ. անոր ժառանգութեան խնդիրը դիւանագիտական բանաձեւ մը կը ստեղծէ՝ «Օսմանեան կայսրութեան պահպանումը»։ Ռուսիան, որ աչք ունի Պոլսոյ, կը ջանայ հետզհետէ տկարացնել թիւրքիան, ասոր համար կը նպաստէ պալկանեան տէրութիւններու անկախութեան եւ ինքնավարութեան։ Այս քաղաքականութիւնը տեւեց մինչեւ 1878-ի Պերլինի Վեհաժողովը։

Երրորդ ֆազին, Անգլիա ռուսօ-թիւրք պատերազմին միջամտելով, արգելք կ'ըլլայ թուրքիոյ բաժան-բաժան ըլլալուն, զոր նուիրագործեց Պերլինի Վեհաժողովը։ Ռուսիա չի փորձեր այլեւս թիւրքիան անդամատել Պոլիսը ձեռք ձգելու համար, այլ կը հետամտի թիւրքիան իր խնամակալութեան տակ պահել։

Այս ֆազին մէջ է որ կը սկսի հայկական կոտորածները։ Եւրոպան, որ համանուագ կրնայ միայն գործել, սնանկութիւն կրեց իր դիւանագիտութեան մէջ, զի իրենց մէջ այնքան մեծ է ոսոխութիւնը։ Սուլթանը, որ բաւականին խելք ունի այդքանը հասկանալու, Եւրոպայի հակամարտութեան դէմ անգործութեան քաղաքականութիւնը կը հանէ, որ կը յաջողի իրեն։

Գործի եւ շահու քաղաքականութիւնն է տիրող ասկէ ետքը, բոլոր տէրութիւններն ալ սուլթանին շնորհներուն կը սպասեն։ Գերմանիոյ Լօհէնկրէնը (կայսրը) Երուսաղէմ գնալիս, կ'երթայ կը համբուրէ սուլթանը Պաղեստինի գծին արտօնութիւնը ստանալու համար։

Առնելիքի միջադէպին հետեւանքով Ֆրանսական քաղաքականութիւնը կու գայ աւելի վատթարացնել հայերու վիճակը։ Կոնստանը վերադարձաւ Պոլիս, նոր մեղրալուսին մը կը սկսի սուլթանին հետ, որ այժմ աւելի ուժեղ պիտի զգայ իր անպատիժ մնալուն։

Կացութեան ծանրութիւնը սակայն պէտք չէ վհատեցնէ մեզ։ Իրաւունք չունինք արդարութեան դատը լքելու եւ դեռ մեր ձեռքին տակ եղած զէնքը, բոլորը չենք գործածած։

Շատերը կը ճանչնան հայերը իբր նահատակ եւ տառապագին ազգ մը. այո, կը տառապին անոր համար, որովհետեւ միշտ դիւցազնական մնացած են. միմիայնակ՝ չընկրկեցան ոչ դժուարութիւններուն եւ ոչ վրտանգներուն առջեւ, իրենց ցաւերուն ու չարչարանքներուն վրայ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու համար չվարանեցան արիւնին թափել։ Այս դիւցազնական ազգը պիտի կրնար ապրիլ, եթէ միջազգային իրաւունքի կանոնները եւ Պերլինի Վեհաժողովին երաշխաւորութիւնները յարգուէին եւ զօրեղ աջակցութիւն մը տրուէր անոր։

Այս սարսափելի պայմաններուն մէջ փրկութեան միջոց մը կայ, կռիւը, ծայրայեղ կռիւ, կռիւ պատմութեան անցեալին եւ կռիւ յեղափոխութեան անունով, այսինքն որ նպատակ մը կը ցցնէ եւ միջոցներ կ'ենթադրէ։ Նահատակներ պիտի ըլլան՝ անոնց արիւնը պիտի բեղմնաւորէ իդէալի դաշտը։ Եթէ երբեք բռնութիւնը արդարացում գտնէ հարստահարութեան մը դէմ, ան ալ հայերու վիճակն է։ Նորերս տէրութեանց դիմում ըրին, չափաւոր եւ համեստ վերջնագրով մը 61-րդ յօդուածի երաշխաւորութիւնը պահանջելով, որպէսզի կարող ըլլան գոնէ իրենց գոյութիւնը ապահովել։ Այս

22.- Հոյակապ կերպով։

23.- Թէոֆիլ Տելքասէ (1852-1923), ֆրանսացի արտաքին գործոց նախարար։

24.- Փուլերուն։

վերջնագիրը ապարդիւն մնաց, ալ ի՞նչ միջոց կը մնայ հայերուն — եթէ ոչ կռիւ։

Հայաստանը չի թողուր որ Հայաստանի իրաւունքը կորի կորսուի, չպիտի յոգնի եսամոլ Եւրոպայի երեսին ճչելէ. «Կայէն, ի՞նչ ըրիր եղբայրդ»։

Պ. Պրէսանսէ կարդաց էտիրնէ կախուող հայ հերոսներուն վերջին սրտայոյզ եւ խրախուսիչ խօսքերը[25], *ցոյց տալու համար հայ ցեղին մէջ դիմադրութեան եւ հերոսական ոգիի գոյութիւնը եւ իդէալը։*

Ի՞նչ կրնանք ընել, հարց դրաւ պ. Պրէսանսէ — օգնելով որբերուն միանգամայն պէտք է ձեռք կարկառել հայերուն իրենց մղած պատերազմին մէջ։ Այս ընելով մենք մեզի ալ ծառայութիւն ըրած կ'ըլլանք չձգելով որ մեր քովի դիակը, Թիւրքիան, փտախտով վարակէ մեզ ալ։ Ճնշում գործենք տէրութեանց վրայ, որպէսզի հայկական արիւնահեղութիւններուն վերջ դնեն եւ այսպէսով Եւրոպայի խաղաղութեան ալ նպաստած կ'ըլլանք։

Ընդհանուր եւ հարեւանցի ակնարկ մը նետելէ յետոյ Եւրոպայի յետադիմական շարժումին վրայ, ազգայնականութիւն եւ կայսերականութիւն անունին տակ, ատենախօսը արեւելեան հարցին լուծման եւ սուլթանէն հարստահարուած ժողովուրդները փրկելու համար, հարկաւոր է որ, ըսաւ, օսմանեան պետութեան ընդհանուր վեհապետութեան տակ, դաշնակցական ռեժիմ մը հաստատուի, որ միանգամայն արեւելեան հարցի բանալին է։ Բայց հեռաւոր ապագայի գործ ըլլալով այդ լուծումը, այս պահուս մենք, չեշտեց պ. Պրէսանսէ, պէտք է առանց վերապահութեան, հայերու դիմադրութեան մեր աջակցութիւնը տանք։ Փափկանկատութիւններու ետեւ ապաստանելու չենք, պէտք է քալել հերոսներուն հետ, կամ նստիլ եւ մեղսակից ըլլալ ոճրագործներուն»։

Տաք եւ բուռն ծափահարութիւններով ընդունուեցաւ Պրէսանսէի վճռական, ազդու եւ ճշմարտութիւնով լեցուն խօսքերը։

Պ. Ֆավոն, յանուն Եւրոպայի հայ ուսանողական Միութեան, որ այդ հիանալի երեկոյթը կազմակերպելու եւ հովանաւորելու նախաձեռնութիւնը ունեցած էր, յուզուած շեշտով շնորհակալութիւն յայտնեց պ. բանախօսին եւ Ժընեւի ժողովրդին, այն փայլուն համակրութեան համար, որ տուաւ այս երեկոյ հայկական դատին, եւ դառնալով հայ ուսանողութեան, սրտագին խրախոյսներ ուղղեց անոր իրենց ազգի արի եւ զոհաբեր պայքարին մէջ եւ հաւաստեց որ Ժընեւի ժողովուրդը սրտով հայ ազգին հետ է իր սուրբ կռուին մէջ։

Պ. Պրէսանսէի ճառը ահագին տպաւորութիւն առաջ բերաւ։ Երկու օր բոլոր թերթերը անխտիր զբաղեցան այդ գիտական ճառի բովանդակութիւնով եւ իրենց ներբողէից կարծիքը կարելի է ամփոփել սա տողերուն մէջ. «Անոնք, որոնք ներկայ էին պ. Պրէսանսէի բանախօսութեան, անջնջելի յիշատակ մը պիտի պահեն անկէ»։

Բանախօսութիւնը աւարտելէն յետոյ, հայ ուսանողները պ. Պրէսանսէն առաջնորդեցին Ժընեւի էն գեղեցիկ պանդոկներէն մէկը, ուր պատուասիրեցին արժանապէս իրենց ականաւոր եւ մարդասէր հիւրը։ Ուսանողներու շնորհակալութեան ճառերուն ի պատասխան պ. Պրէսանսէ քանի մը սրտաբուխ ու անկեղծ խօսքերով սրտապնդեց հայ երիտասարդութիւնը իր իդէալի ճամբուն եւ իր անողոք պայքարին մէջ եւ հասկցուց որ հայերը հերոսական շրջանին մէջ են, եւ թէ իրենց գործունէութիւնով միայն պիտի կրնան դիւանագիտական սինիքութեան[26] *եւ անտարբերութեան զրահները խորտակել։*

Հայ ուսանողութիւնը, ի յիշատակ, յատկապէս լուսանկարով պատրաստել տուած եւ գեղեցիկ շրջանակի մէջ դրուած «Մանուկ Հայաստան»ի խորհրդանիշ մեծադիր պատկերը նուիրեց մեծ հրապարակագրին եւ հայասէրին։

«Դրօշակ», 1902, թիւ 2, էջ 39-41

25.- Ակնարկութիւն Պետրոս Սերեմճեանի եւ հայ ու մակեդոնացի իր ընկերներուն, որոնք թրքական զօրքին դէմ մղուած կռուէ մը ետք ձերբակալուած ու կախաղան հանուած էին (1901, Դեկտ. 9), ուժգնօրէն ձայնելով սուլթանական քաղաքականութիւնը։

26.- Շնականութեան, լրբութեան։

Փաստ. 1462ա-12

Ա 13.– «ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ»
(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Ինչպէս ձեզ յայտնի է, «Եւրոպայի հայ ուսանողական Միութեան» անցեալ տարուայ համագումարը որոշեց, ի թիւս այլ ձեռնարկների, կազմակերպել զանազան կէտերում *կոնֆերանսներ* հայոց հարցի համար, եւրոպացիների մասնակցութեամբ, եւ ի նպաստ նոյն հարցի պրոպագանդ անել *եւրոպական մամուլի* մէջ, զեկուցեալով յօդուածներ ու մատակարարելով տեղեկութիւններ:

Համաձայն այդ որոշման՝ «Միութեան» Լիազօր Կոմիտէն նախաձեռնող եղաւ հրապարակական մի մեծ կոնֆերանսի, որ տեղի ունեցաւ Փետրուարի 10-ին Ժընեւում եւ որի համար յատկապէս հրաւիրուած էր յայտնի ֆրանսիացի պուբլիցիստ[27]-հայասէր *Ֆրանսիս դը Պրեսանսէ:*

Կոնֆերանսը, որին նախագահում էր Ժընեւի կառավարութեան շէֆ՝ Ժորժ Ֆավօն եւ որը գրաւել էր դէպի Վիկտորիա Հալ վիթխարի դահլիճը հազարաւոր մարդիկ (ահագին բազմութիւն դուրս մնաց տեղ չլինելու պատճառով) ազատասէր քաղաքի հասարակութեան բոլոր խաւերից՝ պսակուեց արտակարգ աջողութեամբ, որ եւ արձանագրուեց շվէյցարական ինչպէս եւ ուրիշ երկրների լրագիրներում: Համակրական արտայայտութիւնների արժանացան թէ հայերը, թէ բանախօսը եւ թէ «Եւրոպայի հայ ուսանողական Միութիւնը», որը կազմակերպել էր այդ հրահանգիչ բանախօսութիւնը:

Ուրախ ենք հաղորդելու, որ կազմակերպւում է եւ մօտ ապագայում տեղի պիտի ունենայ *Բերլինում,* համբաւատր սոցիալիստ-թէորէտիկ՝ Էդուարդ Բերնշտայնի հրապարակական կոնֆերանսը՝ նոյնպէս հայկական խնդրի մասին, մի փորձ, որ առաջինն է Գերմանիայում: Բացի դրանից ծրագրուած է կոնֆերանսներ կազմել նաեւ Բրիւսէլ եւ Լիոն, եւ եթէ աջողուի՝ Հռոմ:

Ընկերներ,

Հարկ չկայ ապացուցանելու, թէ որպիսի անվիճելի օգտակարութիւն ունին այդ կոնֆերանսները եւ ընդհանրապէս հայանպաստ պրոպագանդը՝ հայրենիքի ներկայ տագնապալի վիճակում: Հասարակական կարծիքի մեծ նշանակութիւնը հայկական խնդրում շեշտեց ինքը Դելկասէ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը՝ յունուարի 20-ին արտասանած իր նշանաւոր ճառի մէջ: Եթէ հանրային գիտակցութեան բռնկումը չի կարող լուծում տալ հայկական ճգնաժամին, գէթ նա կարող է կանխել Մարդասպանի[28] նորանոր հարուածները: Եւ վերջին երկու տարուայ անցքերը վկայում են, որ նա հասնում է այդ նպատակին:

Ջանանք ուրեմն, մեր ուժերի ներածին չափ, յուզել *հասարակական կարծիքը* եւ ուղղել նրա ալիքները *պաշտօնական* Եւրոպայի դատապարտելի անտարբերութեան դէմ:

Ցոյց տանք Եւրոպային, ինչպէս եւ մեր հասարակութեան թերահաւատ մասին, որ հայ ուսանողութիւնը՝ ինչպէս մի մարմին՝ չոր-ցամաք ուսման երկրպագու չէ եւ ոչ էլ գձուած ու անսիրտ եսասիրութեան ներկայացու-

27.- Հրապարակագիր:

28.- Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ին տրուած որակում:

ցիչ, այլ որ նա ընդունակ է հանրային-ալտրուիստական[29] թռիչքների եւս, որ նա համալսարանական նստարանի վրայ անգամ գիտէ տանջուել իր ազգակիցների անբաւ տանջանքներով:

Լիազօր Կոմիտէն՝ ընկերաբար՝ հրաւէր է կարդում Եւրոպայի հայ ուսանողական խմբերին՝ կատարել իրանց պարտքը, *ընդհանուր* եւ *տեղական* կոնֆերանսներ կազմելով, եւ իրենց բնակած քաղաքների մամուլի մէջ պրոպագանդ անելով: Հողը պատրաստ է ամէն տեղ. հարկաւոր է եռանդ ու նախաձեռնութիւն:

Անհրաժեշտ է համերաշխ, ներդաշնակ գործակցութիւն ընդհանուր մի խնդրում, որի հանդէպ պէտք է չքանան անձնական նեղ նկատումները, անհիմն պառակտումները:

Հարկաւոր է ներշնչուել հաւատով եւ հեռու վանել ամուլ յոռետեսութիւնը: Եթէ նոյնիսկ այս կամ այն դէպքում մեր ճիգերը ապարդիւն անցնեն, մենք դարձեալ չպիտի զղջանք, չպիտի վիատենք: Բաւական է այն գիտակցութիւնը, որ մենք կատարում ենք մեր մարդկային եւ մեր հայ-ուսանողական պարտականութիւնները:

Դէպի գո՜րծ, ընկերներ:

Ընկերական բարեւներով
ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ

1902 Փետրուար 25, Ժընեւ

Հասցէ՝ Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève.

29.- Այլասիրական:

Փաստ. 1462-83

Ա 14.– ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻԷՆ ՈՒՍ. 5ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

31 Մարտ 1902

Ընկերնե՛ր,

Հոգով կը ցանկայի ներկայ գտնուիլ համագումարին, բայց լինելով ուսումնարանական աշակերտ տնօրինութենէն չկրցի արձակուրդներէն շաբաթ մը առաջ հրաման ստանալ եւ Ժընեւ մեկնիլ: Ուստի թող ներուի ինձ գրաւոր կերպով յայտնել իմ միտքը:

Մեր «Միութեան» նպատակն է ծառայել հայրենիքին: Հայրենիքը այժմ ծանր վիճակի մէջ է: Հայաստանի սիրտը արիւն կը կաթկաթէ թրքական անարգ բռնութեան ճիրաններու մէջ սեղմուած: Թրքական անարգ բռնութի՛ւն — այս խօսքը ազատասէր սրտի մը դէպի ատելի կառավարութեան մը նետած ֆրազ թող չգայ Ձեզ, ընկերնե՛ր: Ես ապրել եմ այդ ռեժիմի տակ եւ տեսեր, թէ թուրքը ինչպէս չարաչար կը սպաննէ հայ ցեղը, թէ ինչպէս կը կտրէ եւ արիւնաքամ կ'ընէ ապրելու եւ յառաջդիմելու եռանդով լեցուն հայի երակները: Կոտորած, կախաղան, սով — ահա՛ մեր հայրենիքի ներկայ ողբալի վիճակը: Այսպիսի ճգնաժամային օրերուն հայ կրթուած եւ զարգացած երիտասարդը ունի նուիրական պարտականութիւններ, կատարելու սրբազան գործեր: Բայց այդ գործին մէջ կան առաջնակարգ եւ երկրորդական կարեւորութիւն ունեցող գործեր: Ո՞րն է առաջնակարգ կարեւորութիւն ունեցող գործը — Առաջնակարգ կարեւորութիւն ունեցող գործն է նետուիլ հայրենիքի ազատութեան համար սկսուած կռուին մէջ, մեր կրթութեամբ եւ զարգացողութեամբ օգնել «Անդրանիկ»ներու — խորհրդով եւ բազկով: Միեւնոյն մտքով հրաւէր կը կարդար Զիպրիանի «Միութեան» ուղղած իր կոչին մէջ:

Եւրոպայի հայ ուսանողութիւնը կարմրելով խոստովանելու է, որ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող այս գործին մէջ չէ ունեցած աչքի ընկնող ներկայացուցիչներ: Կուկունեաններ, Շմաւոններ, Գարոներ քիչ են եւ բացառիկ հայ յեղափոխական պատմութեան կարմիր էջերուն մէջ:

Ի՜նչ յիմար միտք. մենք տարիներով համալսարանական գրասեղաններուն վրայ կը նստինք, որ յետոյ Հայաստանի լեռներուն մէջ հրացան ի ձեռին իյնանք մեռնի՞նք: Թոյլ ուսանողը այսպէս պիտի խորհի, բայց տղամարդի վայել բան չէ այս, այլ ինչպէս ըսի թուլամորթի եւ վատի: Պատմութեան մէջ ալ կան այսպիսի փաստեր:

Գերմանական Ազատութեան կռուի ժամանակ համալսարաններու, միջնակարգ դպրոցներու աշակերտները, բրոֆէսորները գիրք եւ գրիչ ձգելով ազգային դրօշին տակ հաւաքուեցան. այն ատեն ուսանող փեսան իր հարսէն եկեղեցւոյ շեմին վրայէն հրաժեշտի ողջոյն տուաւ եւ ըսաւ.

«Ահա՛ կ'երթամ սիրելի հարս,
Քու արտասուք չը հոսէ,
Պատերազմի դաշտին վրայ
Իմ ընկերը կ'ըսպասէ»:

Նուաճուած Գերմանիան, որ գիտցաւ տղամարդի արիութեամբ (Mannesmut) *գլուխ բարձրացնել, ջախջախեց հզօր Նապոլէոնի լուծը: Երբ պատերազմ լինի մեր Զէյթունի — որուն Ազիզ փաշայի վրայ տարած յաղթանակի քառասնամեակը կը տօնէ «Միութիւն»ը — այդ քաջարի Զէյթունի մէջ, վարժապետ, վարդապետ, դըպրոցի աշակերտներ կռուի դաշտ կը փութան: Եւ ահա՛ Զէյթունը մնացած է միշտ անուանելի:*

Որո՞նք են երկրորդական կարեւորութիւն ունեցող գործերը: անոնցմէ մինն է Եւրոպայի մէջ ի նպաստ մեր դատի ընել բրոբականտա, ինչ որ «Միութիւն»ը գովելի եռանդով սկսեր է ընել եւ կը խոստանայ աւելին ընել: Շատ համակրելի, շատ օգտակար գործ, բայց ունի երկրորդական կարեւորութիւն: Ուստի, ընկերնե՛ր, մեր ոյժերը բաժնենք ուղիղ եւ ներդաշնակ համեմատութեամբ: Ունինք մեր գանձարանի մէջ զ[որ] օ[ր]ինակ] 10 ֆր., 8 ֆր.ը տանք զէնքի եւ 2 ֆր.ով հրատարակենք բրոբականտայի համար գրքեր: Իսկ երբ մենք զէնքի ոյժ ցոյց տանք, այն ատեն եւրոպացիները մեր վրայ կը գրեն հազարաւոր գրքեր: Պօէրները[30] ապացոյց են իմ ըսածին:

Հապա՞ Ռուսաց Հայաստանը: Հոն արդէն սկսեր է Շարժում: Պէտք է Եւրոպայի Հայ Ուսանողութիւնը տայ այդ շարժման հայ առաջնորդողներ, որոնք շարժման տան զուտ ազգային-ռամկավարական գոյն, շարժումը առաջնորդեն այն ուղիով, ինչ որ մեզ գծեր են

30.- Հարաւային Ամերիկէի մէջ (Թրանսվալ) հոլանտական ծագումով բնակիչներ, որոնք ապստամբած էին բրիտանական գաղութարարութեան դէմ:

մեր բախտակից լեհացիները։

Մեր ռուսահայ եղբայրներու մէջ կազմակերպուած կուսակցութիւն մը աւելի օգտակար ծառայութիւններ կարող է մատուցանել թրքահայ ազատութեան գործին, քան անկերպարան զանգուածը եւ կղզիացած խումբեր։

Երբ Գերմանիոյ մէջ գործադուլ եղաւ, անգլիական ընկերվարական կազմակերպութիւնը գերմանացի գործաւորներուն հասցուց շատ գնահատելի օգնութիւն։ Այսպէս կ'ըլլայ եւ մեր մէջ։

«Միութիւն»ը 1898 *թուին պատգամաւոր ղրկած էր Լեհաստանի եւ Կալիցիոյ հայ ուսանողութեան, որոնք ոգեւորութեամբ ընդունեցին պատգամաւորը եւ խոստացան եռանդուն աջակցութիւն։ «Միութիւն»ը կարեւոր գործ կատարած կ'ըլլայ, եթէ նոր պատգամաւորներով եւ ուրիշ միջոցներով իր շուրջը հաւաքէ Անիի գաղթականներու այդ մնացորդները։ Հունգարահայք կը հրատարակեն արդէն "Armenia" անունով թերթ։*

Ցուսալով որ խորհրդածութիւններս իմ ընկերներու ուշադրութենէն չեն վրիպիր կը ցանկամ համագումարին շատ յաջողութիւն։

Կեցցէ՛ հայրենիքը, կեցցէ՛ Հայաստանը, կեցցէ՛ «Միութիւն»ը։

Ընկերական բարեւներով
Մնամ Ձերդ անձնուէր
ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ[31]

Lazarian, Schiers (Ch. de Grisons), Suisse

31.- Իսկական անունը Ղազարոսեան Ղազարոս:

Փաստ. 1462ա-59

Ա 15.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
(Ժընեւ 1902)

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷԻ ԵՒ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
(1901-Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ 1902-Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐ)

Ընկերներ,

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ։— Ժընեւում գումարուած ներկայ Համագումարը՝ հինգերորդն է «Միութեան» գոյութեան օրէն, եւ երկրորդը՝ մեր «կանոնադրութեան» վերակազմումից յետոյ, որը, ինչպէս գիտէք, տեղի ունեցաւ 1900*-ին Ցիւրիխում։ Առաջին Համագումարը կայացաւ Հայդելբերգ,* 1897*-ի Ապրիլի* 12-15*-ին։ Երկրորդը՝ նոյն քաղաքում,* 1899 *թուին, Մարտի* 27-31*։ Երրորդը՝ Ցիւրիխ,* 1900*-ի Հոկտեմբեր* 10-14*-ին։ Չորրորդը Միւնխէն, անցեալ տարուայ Ապրիլի* 1-8*։ Առաջինին ներկայ էին* 24 *հոգի. երկրորդին՝* 21*, երրորդին՝* 14*, եւ չորրորդին՝* 48*։ Ներկայ՝ հինգերորդ համագումարը, ինչպէս տեսնում էք, ամենաբազմամարդն է, նախորդների հետ համեմատած. մի հանգամանք, որը մեր գործունէութեան աջողութեան համար կարեւոր նշանակութիւն ունի, եւ ուրեմն արժանի է մեր բոլորի չնորհաւորութեան։*

ԿԱՐԳԱԴԻՐ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ։— Համաձայն Միւնխէնի Համագումարի որոշման, Ժընեւի ուսանողութիւնը, 1901 *թուի Ապրիլի* 30*-ին գումարած իր Ընդհանուր ժողովում կատարեց Կարգ. Ցանձնաժողովի ընտրութիւնը։ Ձայների առաւելութեամբ ընտրուեցին Խ. Մալումեան, Ս. Մինասեան, Ց. Իւզբաշեան, օր. Հ. Զոհրաբեան եւ Գ. Վարդանեան. փոխ անդամներ՝ օր. Ն. Ցակոբեան եւ Գ. Անոփեան — նախորդ տարին, երբ դեռ գոյութիւն չունէր Լիազօր կոմիտէն, համարեա բոլոր գործերը ծանրացած էին Կարգ. Ցանձնաժողովի վրայ։ Համաձայն նոր կանոնադրութեան՝ Միւնխէնի Համագումարում ընտրուած Լիազօր կոմիտէն իր վրայ ստանձնեց «Միութեան» գործունէութեան գլխաւոր ճիւղերը, այնպէս որ Կարգ. Ցանձնաժողովին մնաց երեք բան անելու — կազմակերպել Համագումարը, պատրաստել Տեղեկագիրը, եւ գանձել նուէրներն ու անդամավճարները (յօդ.* 23)։ *Համագումարի կազմակերպութեան՝ Ցանձնաժողովը վերջին ամիսները նուիրեց մեծ աշխատանք, մանաւանդ այն պատճառով որ ուսանողական տեղական մարմինները շատ քաղաքներում դեռ անկազմ վիճակի մէջ էին, մի քանի տեղեր էլ պառակտուած երկու խմբերի, եւ հետեւաբար անհրաժեշտ՝ երկար գրագրութիւններ եւ բանակցութիւններ անելու։ «Տեղեկագիրը», որի օրինակները բաժանուեցին ձեզ, տարաբախտաբար չի պարունակում վիճակագրական այն հարուստ տեղեկութիւնները, որ կային մեր ձեռքի տակ, եւ այդ լոկ այն պատճառով՝ որ Վենետիկի Մխիթարեան տպարանը անկարող եղաւ նրա տպագրութիւնը հասցնել ներկայ Համագումարին*։*

Ցանձնաժողովը մտադրութիւն ունի Եւրոպայի Հայ Ուսանողներին վերաբերեալ այդ վիճակագրական տեղեկութիւնները լոյս ընծայել մօտիկ ապագայում։ —

Դրամական խնդրի մասին, որը կազմում է Կարգ. Ցանձնաժողովի գլխաւոր հոգսը, ես կը խօսիմ քիչ յետոյ։

ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ։— Չորրորդ Համագումարում ընտրուած անդրանիկ կոմիտէն, որի անդամներն են Մ. Յովհաննիսեան[12] *— Պարիզ, Խ. Մալումեան — Ժընեւ, Հ. Օհանջանեան — Լօզան, Լ. Աթաբէգեան — Ցիւրիխ, եւ Մ. Քիւլումջեան — Միւնխէն, եւ փոխ-անդամներ՝ Ց. Աղասէր*[32] *եւ Շ. Տէր Ղազարեան (Սեպտեմբեր ամսին պ. Աթաբէգեան, անձնական զբաղումների պատճառով՝ հրաժարական տուեց եւ նրա տեղ հրաւիրուեց առաջին փոխ-անդամ Աղասէր), Մայիս ամսին Ժընեւում գումարեց իր առաջին ժողովը, եւ մշակեց իր գործունէութեան մանրամասն ծրագիրը, համաձայն այն ցուցմունքների, որ տուել էր Համագումարը եւ համաձայն Կանոնադրութեան տուած լիազօրութեան (յօդ.* 28)։ *Պարապմունքները տեւեցին չորս նիստ։ Կոմիտէի*

*) *Արձանագրութիւնները չենք մտցրել՝ հասկնալի պատճառներով։*

32.- Բուն անունով՝ Գրիգորեան Ցակոբ:

երկրորդ ժողովը տեղի ունեցաւ Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամսին, երբ անդամները գտնուում էին Ժընեւ, ուր ծրագրուեցին աւելի որոշ կէտեր, ձեռնարկելով նրանց իրագործման եւ ընդունելով Ժընեւը՝ իբրեւ «Միութեան» կենտրոն։ Գործունէութեան գլխաւոր կէտերն են, ինչպէս արդէն գիտէք այն շրջաբերականից, որ հրատարակուեց —

1) Կոնֆերանսներ եւրոպական գլխաւոր կենտրոններում, նշանաւոր եւրոպացիների ձեռքով, յօգուտ Հայոց հարցի։

2) Հրատարակել «Մեծ ժողովածուն», ֆրանսերէն, մօտ 1000 երեսից, մասնակցութեամբ ականաւոր եւրոպացի գրողների եւ գործողների։

3) Պրոպագանդ եւրոպական մամուլի մէջ՝ ի նպաստ մեր դատի.

4) Հրատարակութիւն, հայերէն եւ օտար լեզուներով, գրքերի՝ նուիրած Հայոց խնդրին.

5) Դիմումն եւրոպական ուսանողութեան եւ

6) Նպաստ այն հրատարակութիւններին, որոնք պաշտպանում են Թուրքիոյ հայերի դատը, եւ այն մարդոց, որոնք կարող են տեղեկութիւններ հաղորդել երկրից՝ Թուրքաց Հայաստանից։

ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ։— Առաջին հրապարակական մեծ կոնֆերանսը, կազմակերպուած «Միութեան» անւամբ եւ նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ Ժընեւ, Փետրուարի 10-ին, «Վիկտորիա Հոլլ» դահլիճում։ Խօսողներ՝ յայտնի ֆրանսիացի պուբլիցիստ — հայասէր Ֆրանսիս դը Պրեսանսէ, որ այդ նպատակով եկաւ Ժընեւ։ Բազմամարդ ժողովի նախագահութիւնը սիրով յանձն առաւ Ժընեւի կառավարութեան չէֆ եւ ծանօթ հայասէր Ժորժ Ֆավոն։ Կոնֆերանսի աջողութիւնը սպասածից աւելի էր։ Մեծ տպաւորութիւն եւ մեծ ընդունելութիւն մամուլի եւ հասարակութեան կողմից։ Ի պատիւ Պրեսանսէի՝ ուսանողութիւնը կազմակերպեց մի հսկայ բանք[33] եւ մատուցեց մեր դատի տաղանդաւոր պաշտպանին մի յիշատակ «Երիտասարդ Հայաստանը» մեծադիր, որ նկարել տուին նոյն այդ նպատակով։ Պ. Պրեսանսէ յանձնառու եղաւ տալ մի այլ կոնֆերանս Լիոն քաղաքում, եւ մենք սպասում ենք յարմար րոպէին՝ այդ քաղաքի հասարակութեան առաջ դնելու մեր դատը։

Միաժամանակ Լիազօր կոմիտէն ձեռնարկեց նոյն նպատակով կոնֆերանսներ կազմել երեք գլխաւոր կէտերում — Բրիւսէլ, Հռոմ եւ Բերլին։ Մենք ստիպուած կը լինինք երեւի յատուկ այդ գործի համար մարդ ուղարկել իտալական մայրաքաղաքը, որովհետեւ այնտեղ «Միութիւնը» ճիւղ չունի, եւ բացի դրանից իտալացի հայասէրները դեռ չեն կազմակերպուած՝ մի այդպիսի քայլ անելու, առանց կողմնակի միջամտութեան։ Աւելի նպաստաւոր է հողը Բրիւսէլ. այնտեղի յայտնի բելգիացիներ, ինչպէս Vandervelde, Janson, Lorand, *խօսք են տուել մասնակցել եւ խօսել։ Գործի գլուխ կ'անցնի* "La ligue des droits de l'homme"[34]։ *Մենք արդէն բանակցութիւնների մէջ էինք մեր մի քանի ընկերների հետ՝ այնտեղ գնալու եւ կազմակերպելու համար, սակայն Բրիւսէլի տիրող ընտրողական պայքարը ստիպեց մի առ ժամանակ յետաձգել այդ։ Լիեժի ընկերները կարծում են, որ ներկայ Ապրիլ ամսին հնարաւոր է իրագործել այդ մտադրութիւնը։ Ինչ վերաբերում է Բերլինին, պէտք է ասեմ, որ հէնց այս րոպէին կոնֆերանս կազմելու հարցը հերթական է եւ այդ առիթով գրագրութեան մէջ ենք Բերլինի ընկերների հետ։ Հայոց դատի օգտին խօսիլ յանձն է առել յայտնի սոցիալիստ Բերնշտայն, մասնակցութեամբ Բայխստագի[35] անդամ Գրադնաուէրի եւ հաւանօրէն Բեբելի, պարագլուխ սոցիալիստական խմբի։ Պ. Բերնշտայն խնդրեց սպասել մինչեւ իր ընտրութիւնը. Յունուարի 20-ին նա ընտրուեց Բայխստագի անդամ, եւ ուրեմն յոյս ունենք սպասելու, որ այս օրերս նա կը նշանակէ իր դասախօսութեան տեղը եւ ժամանակը։ Սա առաջին փորձն է Գերմանիայում, եւ պէտք է կարծել որ դրան կը յաջորդեն միւսները՝ պատրաստելու մի հակա-հարուած պաշտօնական Գերմանիային, որ այնքա՛ն անխիղճ կերպով մոռացութեան է ուղում տալ Փոքր-Ասիայում իր ազատութեան համար կռուող ժողովրդի դատը։— (Ի դէպ, «Միութիւնը» մի հեռագրով շնորհաւորեց Բերնշտայնի ընտրութիւնը, յոյս յայտնելով՝ որ նա կը լինի ճնշուածների մշտական պաշտպան Բայխստագի մէջ եւս)։*

Սա, ի հարկէ, սկիզբն է միայն. վստահ պիտի լինենք, որ «Միութիւնը» օրէցօր լայնացնելով այդ ցանցը, կարող կը լինի բարձրագոչ բողոքներ պատրաստել յօգուտ այն դատի, որի հանդէպ լռութիւնը կատարեալ յանցանք է։

ՄԵԾ ԺՈՂՈՎԱԾՈՒ։ "L'Arménie et la Question Arménienne"[36]։

Ներկայ տարուայ համար դա «Միութեան» ամենախոշոր ձեռնարկն է, որը, ի դէպ, շատ լաւ ընդունելութիւն գտաւ հասարակութեան եւ մամուլի կողմից, ինչպէս այդ երեւում է թէ մասնաւոր նամակներից եւ թէ տպագրած կարծիքներից։ Պատկերազարդ, 1000 երեսից բաղկացած, ֆրանսերէն այդ մեծ հատորը, որի ծրագրին դուք արդէն ծանօթ էք մեր շրջաբերականներից, պիտի պարունակէ մի կողմից՝ լուրջ ուսումնասիրութիւններ Հայաստանի, Հայոց պատմութեան, ազգագրութեան, գրականութեան, լեզուի եւ հայերի քաղաքական շարժման մասին, եւ միւս կողմից՝ ջերմ կոչեր, գրուած ականաւոր եւրոպացիների ձեռքով։ Նիւթերի մի մասը գրուում են եւ պիտի գրուեն հայերի ձեռքով,

33.- Ճաշկերոյթ, խնճոյք։
34.- Ֆրանսերէն՝ «Մարդկային Իրաւանց Լիգա»։
35.- Գերմանիոյ խորհրդարանի։
36.- Ֆրանսերէն՝ «Հայաստան եւ Հայկական Հարցը»։

միւսը՝ օտարների։ Եւրոպացիների մասնակցութեան մենք կարեւոր նշանակութիւն տուեցինք, եւ ահա թէ ինչո՞ւ երկու հարիւրից աւելի դիմումներ արեցինք զանազան երկրների մեծանուն անձանց։ Ուրախ ենք յայտնելու, որ մենք արդէն ստացանք յօդուած-կոչեր այնպիսի անձինքներից, ինչպէս Էլիզէ Բեկլիւ, Լամբերոզօ, Լամպրեխտ, Պասսի, Բայեր, Հայզէ, Վեբեր, Լորիա, Պիկար, Լ. Էրրադա, Կաուտցկի, պ. Էրրարա, Ջիպրիանի, դը Կոնտանսոն, Գրեքէ, Նովիկով, Բիտ։

Բացի դրանից խոստացել են մասնակցելու «Մեծ ժողովածուին» այնպիսի մարդիկ, ինչպէս՝ Պրեսանսէ, Զոլա, Կլեմանսօ, Ֆիար, Վանդերվելդ, Վիրխոֆ, Բորբախ, Լեպսիուս, Կովալովսկի, Լեհման, Գրադնաուէր, Է. Նավիլ։

Հայ գրողներին եւ գործիչներին յանձնած վաստակին[?] մանրամասն ցուցակը մենք ունենք, եւ եթէ ձեզանից մէկը հետաքրքիր է՝ կարող է ծանօթանալ դրան «Միութեան» մատեաններից։

Եւրոպական մի շարք անձինքներից, ինչպէս օրինակ՝ Հեկկէլ, Զուդերման, Բեբէլ, Միխայլովսկի, ստացած նամակները կրկին անգամ ցոյց են տալիս, որ կան շատ էական կէտեր հայոց շարժման մէջ, որոնք անծանօթ են մեր պատմութիւնները լսող օտարներին, եւ ուրեմն աւելի էլ անհրաժեշտ է շտապեցնել հրատարակութիւնը այն հատորի, որի նպատակն է ամենալայն գաղափար տալ քաղաքակիրթ աշխարհին հայութեան մասին։ Շտապեցնելու տեսակէտից ներկայ Համագումարը ուղղակի պարտականութիւն ունի. հէնց որ կը ձեւակերպուի ծախքի խնդիրը, լիազօր կոմիտէն կարող կը լինի անմիջապէս կազմակերպել մի խմբագրութիւն, մշակելու նիւթերը եւ ձեռնարկելու հրատարակութեան։ Անհրաժեշտ է, մեր կարծիքով, այս գործը կատարել եւ աւարտել այս տարի։

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ։— Մեր գրաւոր դիմումները, աւելի շեշտելու եւ միաժամանակ հայասէրների հետ աւելի մօտ յարաբերութիւն հաստատելու համար, Լիազօր կոմիտէն նպատակայարմար գտաւ անել եւ անձնական դիմումներ։

Այդ նպատակով կոմիտէի անդամ պ. Հ[ամօ] Օհանջանեանէն խնդրեցինք մնալ մի շաբաթ Պարիզ, ուր նա գնում էր, եւ ապա անցնել Բրիւսէլ եւ Բերլին, անձնապէս դիմելու ցանկալի անձանց, այնտեղի մեր ընկերների հետ միասին։ Մեր ընկերը այդ երեք քաղաքներում տեսնուեց բաւական մարդոց հետ, բացատրեց եւ կըրկնեց «Միութեան» նպատակը եւ դիմումները, համաձայն մեր հրահանգների։ Բրիւսէլում նրան աջակցեց ընկեր Թելեան, իսկ Բերլինում ընկեր Գր. Սաղեան, որին, ի դէպ, թոյլ եմ տալիս ինձ՝ յայտնել Լիազօր կոմիտէին շնորհակալութիւնը, իր ջերմ աջակցութեան համար։ Բացի դրանից, Հ. Օհանջանեան յանձն առաւ նոյնատեսակ դիմումներ անել, իբրեւ Լիազօր կոմիտէի անդամ, ռուսաց գրողներին, Ռուսաստան անցած ժամանակ, այլ եւ աշխատել կապել «Միութեան» հետ ռուսաց համալսարանների հայ ուսանողներին։ Այս տեսակ անձնական անմիջական դիմումները գործնական լաւ արդիւնքներ են ցոյց տալիս, եւ այդ տեսակէտից՝ ապագայում չպիտի խնայել փոքրիկ ծախքերը՝ մեր ընկերներից մէկին կամ միւսին այդօրինակ յանձնարարութիւններ տալու համար։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆԳՐԷԻՆ»։— Լիազօր կոմիտէի ամենակարեւոր ձեռնարկներից մէկն է՝ Congrès de la Paix Universelle-*ին*[37] *յատուկ պատգամաւոր ուղարկելը։ Ինչպէս գիտէք, Միջազգային Խաղաղութեան կոնգրէն համաշխարհային ամենանշանաւոր համախմբումներից մէկն է. նա համակրելի է մեզ իր նպատակով, եւ կարեւոր՝ իր միջազգային նշանակութեամբ։ Նրա կենտրոնը՝ Բերն է։ Խաղաղութեան այս տարուայ XIրդ կոնգրէն բացուելու է Մոնակո, Ապրիլի 2-ին, եւ հայոց հարցը «Միութեան» կողմից այնտեղ դնել եւ պաշտպանելը յանձն առաւ մեր յարգելի բարեկամ պ.* Pierre Quillard, *խմբագրապետ* "Pro Armenia"*-ի, հայոց հարցի այդ ամենահամոզուած պաշտպանը Ֆրանսիայում։ Երեւի երկու օրից յետոյ նոյն այն ժամերին, երբ այստեղ, ազատութեան այս փառաւոր կենտրոնում՝ մենք զբաղուած կը լինենք մեր դժբախտ հայրենիքի ցաւերով, նոյն այդ ժամերին՝ Մոնակոյի մէջ, ահագին ժողովի առաջ, կազմուած բոլոր երկրների ներկայացուցիչներից, պ. Ֆիար կը պատկերացնէ այդ ցաւերը՝ նրանց դարման պահանջելով քաղաքակիրթ մարդկութիւնից։ Ես կարծում եմ, որ ձեր բոլորի բուռն ցանկութեան արտայայտութիւն միայն տուած կը լինեմ, առաջարկելով՝ վաղը եւեթ մի յատուկ հեռագրով մեր կոնգրէի ջերմ շնորհակալութիւնը յայտնել պ. Ֆիարին, այն օրինակելի պատրաստականութեան համար, որով նա ծառայում է հայկական դատին։*

Կոմիտէն խնդրել է իր պատգամաւորին՝ տեղեակ պահել մեր համագումարը Մոնակոյի մէջ անցած-դարձածներից, եւ յոյս ունեմ՝ մի քանի օրից մենք կը ստանանք մխիթարական տեղեկութիւններ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ։— Հայկական շարժման հիմնական եւ արդար պատճառաբանութիւնը՝ Եւրոպայի հասարակաց կարծիքին ներկայացնելու համար — որը՝ ի դէպ է ասել՝ շատ թիւրիմացութիւնների ենթակայ է դեռ — մենք նպատակայարմար գտանք սղագրել եւ առանձին գրքոյքով հրատարակել պ. Ֆրանսիս դը Պրեսանսէի կոնֆերանսը, որը մի հիմնաւոր ներբող էր հայկական ապստամբութեան եւ կռուի։ Պ. Պրեսանսէ տրուեց իր սիրալիր համաձայնութիւնը։ Ձեռագիրը ու-

37.- Ֆրանսերէն՝ Համաշխարհային Խաղաղութեան համագումարին։

ղարկուեց հեղինակին սրբագրելու, եւ յոյս ունինք, որ ներկայ համագումարի ընթացքում նա լոյս կը տեսնի։ Որոշուած է այդ գրքոյկի նշանաւոր մասը տարածել ձրիաբար Եւրոպայի զանազան կողմերում։ Գրքին կցած կը լինի նշանաւոր հայասէրի լուսանկարը։

ԱԼԻՇԱՆԵԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ։— Հայ ուսանողութիւնը հայկական կեանքին աւելի տեղեակ դարձնելու, եւ մեր պատմութեան խոշոր փաստերը երիտասարդութեան մէջ աւելի ուժգին շեշտելու համար, կոմիտէն որոշեց չթողնել՝ որ գոնէ ընթացիկ կեանքի բացառիկ դէպքերը աննկատելի անցնին։ Այդ նպատակով մենք առաջարկեցինք ուսանողաշատ քաղաքներին (Ժընեւ, Բերլին, Դարմշտատ, Լայպցիգ եւայլն) կազմակերպել յատուկ Ալիշանեան գրական երեկոյթներ, նուիրուած այդ մեծ հայի կեանքին եւ գործունէութեան, նրա մահուան առիթով։ Այդ երեկոյթները տեղի ունեցան Ժընեւ, Միւնխէն եւ Հալլէ։ Վերջին քաղաքում՝ Ալիշանի երեկոյթը զուտ հայկական չէր։— հրաւիրուած էին եւ գերմանացիներ եւ ուրիշ ազգերի ներկայացուցիչներ, ինչպէս եւ հայ ուսանողներ այլ քաղաքներից։ իբրեւ առաջին փորձ՝ Հալլէի երեկոյթը աջողուած պիտի համարել։ Տարաբախտաբար Լայպցիգ եւ Բերլին այդ երեկոյթները չկայացան։ առաջինում՝ ուսանողական ներքին անհամաձայնութիւնների պատճառով, որ ցաւալի է ի հարկէ։

Միանգամայն ցանկալի է, որ ապագայում եւս, ինչպէս մեր գործիչների, այնպէս եւ մեր կեանքի նշանաւոր մոմենտները նիւթ դառնան ուսանողական երեկոյթների, համախմբումների մի կողմից հայ ուսանողին ծանօթութիւնները աւելի լայնացնելու, միւս կողմից եւրոպացիներին հաղորդելու ցանկալի երեւոյթները։ Նոյն այդ նպատակով է, որ ներկայ համագումարի օրակարգին մէջ մենք մտցրինք Զէյթունի ապստամբութեան քառասնամեակը — մեր նորագոյն պատմութեան այդ ոգեւորիչ էջը։

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ։— 1900 թուի վիճակագրութեամբ, որի համառօտութիւնը միայն մտել է մեր այս տարուայ «Տեղեկագրի» մէջ, Եւրոպայի հայ ուսանողների եւ ուսանողուհիների թիւը այն ժամանակ էր՝ 270։ Այժմ 1901/02 ուսումնական սեմեստրին այդ թիւը աւելի մեծ է։ Ահա մեր ձեռքի տակ եղած թուերից մի քանի քաղուածքներ։

ԱՆԳԼԻԱ	*Լոնտոն*
ԱՒՍՏՐԻԱ	*Լեմբերգ* *Կրակով* *Ջերնովից* *Վիեննա*
ԲԵԼԳԻԱ	*Բրիւսէլ* *Ժամբլու* *Լիէժ - 6*
ԻՏԱԼԻԱ	*Պադովա - 16* *Վենետիկ*
ՇՎԵՑՑԱՐԻԱ	*Ժընեւ* *Լօզան* *Վինտենթուր* *Ցիւրիխ - 4* *Պըզէօ - 1*
ՖՐԱՆՍԻԱ	*Պարիզ* *Նանսի* *Մոնպելիէ - 9*
ԳԵՐՄԱՆԻԱ	*Բերլին* *Բրեսլաւ* *Դարմշտատ - 12* *Դրեզդեն - 3* *Ենա* *Լայպցիկ* *Կարլսրադէն - 3* *Հալլէ - 7* *Հայդելբերգ - 2* *Հոհենհայմ* *Մարբուրգ* *Միւնխէն - 20* *Միթվայդա - 6* *Շտրասբուրգ* *Ցվիկաու - 1* *Ֆրայբերգ* *Գեօթէն* *Ֆրայբուրգ - 1* *Տիւբինգէն - 2* *Վիտցբուրգ - 1*

Մօտաւորապէս Եւրոպայում եղող հայ ուսանող-ուսանողուհիների թիւը պէտք է հաշուել .....[38], որոնցից ուսանողուհիներ՝ մօտաւորապէս .....[38]։ Նկատենք, որ այս բոլոր ուսանողուհիները Կովկասից եւ Ռուսաստանից են։ Թուրքաց Հայաստանից եւ Թուրքիայից հայ ուսանողուհի այժմ Եւրոպայում չկայ։ Եթէ կայ էլ բացառութիւն։— մեզ անծանօթ է։

ԴՐԱՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ։— Կարգ[ադիր] Ցանձնաժողովի գլխաւոր աշխատանքը եղաւ՝ հարստացնել «Միութեան» գանձարանը։ Նախկին Կարգ. Ցանձնաժողովից

38.- Ձեռագրին մէջ թիւեր չեն տրուած. այս տեղեկագրի աւարտական բաժնին մէջ կը յիշուի «աւելի քան 350»։

(Լայպցիգ) մեր ստացած ամբողջ գումարն էր՝ 274 ֆրանկ — «Միութեան» այն ժամանակուայ ամբողջ հարստութիւնը։ Ինչպէս գիտէք, Ժընեւի Կարգադիր յանձնաժողովի ներկայացուցչի կողմից Միւնխէնի Համագումարին առաջարկած «Ծրագիրը»՝ պահանջում էր ահագին գումար — 20.000 ֆրանկ, թէ «Մեծ ժողովածուն» հրատարակելու եւ թէ գործունէութեան միւս կէտերը իրագործելու համար։ Ցանձնաժողովը, ի հարկէ, չէր կարող բաւական[ան]ալ անդամավճարներով եւ ուսանողական նպաստներով. ուստի դիմեց հանգանակութեան՝ Կովկաս եւ Ռուսաստան գլխաւորապէս։ 1901 թուի Յունուարի 1-ից (երբ հաստատուեց մեր նոր կանոնադրութիւնը) մինչեւ ներկայ 1902 թուի Մարտ ամիսը, ուրեմն մօտ 14 ամսուայ ընթացքում մենք ձեռք ենք բերել «Միութեան» գանձարանի համար՝ մի պատկառելի գումար՝ 10.071 ֆրանկ։ Մանրամասները դուք կը գտնէք այն տպագրած հաշուի մէջ, որ կցած է մեր «Տեղեկագրին»։ Թոյլ տուէք այստեղ՝ Համագումարի առաջ՝ մէջ բերել մանրամասները եւ նուիրատուների եւ հանգանակողների անունները (առաջ բերել գանձապահ օր. Զոհրաբեանի պատրաստած ցուցակը), եւ յայտնել նրանց ջերմ շնորհակալութիւն, ծախքի գլխաւոր յոդուածների հետ միասին։

Մեր Ծրագիրը՝ այն է, հանգանակել մեր միամեայ ձեռնարկների համար 20 հազար ֆրանկ — մի Ծրագիր՝ որ անցեալ տարուայ ժողովականների շատերին անհասանելի թուաց — մենք իրագործած կը լինէինք ամբողջապէս, եթէ Համագումարում մեր ընկերներից մի քանիսը՝ իրանց խոստումներով՝ չմոլորեցնէին կոմիտէի անդամներին։ Այդ գումարից մօտ 10 հազար ֆրանկ խոստացան,— եւ այն՝ հրապարակով Համագումարի առաջ,— հանգանակիչ 11 հոգի (նրանց անունները մտցուած են Միւնխէնի Համագումարի արձանագրութեան մէջ), սակայն բոլորն էլ, բացի երկուսից, չկատարեցին իրանց խոստումը։— Գնահատութիւնը թողնում եմ այս ժողովին։ Իսկ մնացած 10 հազար ֆրանկը, ինչպէս տեսնում էք, մենք կարողացանք ձեռք բերել, եւ ուրեմն կոմիտէն կատարեց իր ստանձնած պարտաւորութիւնը։ Եւ մեր ծրագրների կէտերից մէկի կամ միւսի յապաղումը՝ պիտի բացատրել հէնց նրանով, որ գանձապահը չունեցաւ այն գումարը՝ որ նա սպասում էր՝ հաւատալով ընկերների վճռական խոստման։

Հաճելի է կարծել, որ առաջիկայ տարուայ համար այդ երեւոյթը չի կրկնուի եւ «Միութիւնը» աւելի հաստատ քայլեր կ'անի, մանաւանդ որ մեր կազմակերպութիւնը, փաստերին նայելով, ստահութիւն *է վայելում,— մի հանգամանք որ կարեւորագոյն նշանակութիւն ունի՝ դրամական հարցում։ Այդ տեսակէտից, աւելորդ չէ յիշատակել հետեւեալ փաստը։— Հայ դրամատէրերից մէկը, պ. Մ. Խերեան, յայտնել է մեր կոմիտէին, որ նա որոշեց որդեգրել մի հայ ուսանող եւ տալ նրան ամսական 60 ֆրանկ (16 ամսուայ ընթացքում), այն պայմանով, որ ուսանողը այդ գումարը (960 ֆրանկ) վերադարձնէ «Միութեան»։ (ի դէպ, Պարիզի մէջ երբեմն գոյութիւն ունեցող Ուսանողական մի ընկերութիւն, դադարելով գոյութիւն ունենալուց, ուղարկել է մեզ իր գանձապահի միջոցով, իբրեւ վստահութեան նշան «Միութեան», իր ամբողջ հարստութիւնը, որը երեւի դուք կ'ենթադրէք 7 հազար ֆրանկ, կամ գոնէ 7 հարիւր ֆրանկ, բայց որը է միայն 7 ֆրանկ 50 սանտիմ...)։*

Դրամական հաշիւներին աւելի մանրամասն ծանօթանալ ցանկացողները, բացի տպագրածից, կարող են դիմել գանձապահի մատեանին, ուր ամէն ինչ արձանագրուած է կէտ առ կէտ, վաւերագրերով։

ՆՊԱՍՏ։— Լիազօր կոմիտէն տուեց դրամական նպաստ՝ "Pro Armenia"*-ի խմբագրութեան հազար ֆրանկ (1000), եւ 500 ֆրանկ՝ Հայաստանից տեղեկութիւններ բերելու («Դրօշակ»ի խմբագրութեան միջոցով)։*

Աւելի մանրամասն տեղեկութիւններ երկու կոմիտէների գործիչի եւ կարգադրութիւնների մասին՝ հետաքրքրուող ընկերները կարող են գտնել հրատարակած շրջաբերականների եւ արձանագրութեան մատեանի մէջ։

Ընկերներ!

Ներկայացնելով ձեր ուշադրութեան այդ փաստերը, թոյլ եմ տալիս ինձ անել մի քանի եզրակացութիւններ։

Ինչպէս տեսնում էք առաջ բերած փաստերից, «Միութիւնը» Եւրոպայի հայ ուսանողների գտնւում է արագ զարգացման շաւիղի վրայ։ Երկու-երեք տարի առաջ նրա համագումարներին մասնակցում էին միայն մի քանի քաղաքների ուսանողները (Գերմանիայում)։ Այժմ նա կապել է իր հետ եւրոպական համարեա բոլոր համալսարանական քաղաքները։ Անցեալ տարի Ֆրանսիան կատարելապէս դուրս էր «Միութիւնից». այս տարի մենք ունենք պատգամաւորներ Պարիզից եւ Մոնպելիէից։ Նոյնիսկ Ռուսաստանի հայ ուսանողութեան մի մասը արդէն ցանկութիւն է յայտնել յարել «Միութեան», եւ եթէ նրանք այս տարի պատգամաւոր չունեն Համագումարում, այդ պիտի բացատրել այն ծանր վիճակով, որի մէջ, ինչպէս գիտէք, գտնւում է այժմ ուսանողութիւնը ամբողջ Ռուսաստանում (բերել քաղուածքներ նամակից)։ Հիմք ունինք կարծելու, որ գալ Համագումարին պատգամաւոր կ'ունենանք եւ Ամերիկայի հայ ուսանողների կողմից։

Նախկին Կարգ. Ցանձնաժողովը իրան գոհ էր համարում, ունենալով գանձարանի մէջ ընդամէնը 274 ֆրանկ. իսկ այժմ, ինչպէս տեսաք, մեր մուտքը 10.000-ից անց է։ Երբեմն «Միութեան» համագումարներն անգամ անյայտ էին հայ ուսանողութեան ամբողջութեան, իսկ այժմ ձեռնարկած գործերը դրել են այս կազմակեր-

պութիւնը ոչ միայն հայ հասարակութեան, այլեւ եւրոպական հասարակական կարծիքի ուշադրութեան արժանի վիճակի մէջ։ Մենք կատարելապէս հեռու ենք կարծելու — եւ դա լոկ համեստութեան համար չէ — որ այս բոլորը արդիւնք է կոմիտէների ջանքերի, կամ անհատական եռանդի։ Ոչ։ Դրա հիմնական պատճառը այն է, որ «Միութիւնը» իր հիմնական կանոնադրութեան վերակազմութեամբ եւ փոփոխութեամբ (կատարուած Ցիւրիխի Համագումարում, 1900 թուին) կապեց հայ ուսանողութիւնը մեր ժողովրդի այրող հարցերի հետ, դրեց նրան այն վիճակի մէջ, որ նա կարող է գործել Եւրոպայում, եւ այդպիսով լինել արձագանք եւ արտայայտիչ այն ցանկութիւնների եւ ձգտումների, որոնք ջոկ ջոկ գոյութիւն ունէին մեր համալսարանական երիտասարդութեան մէջ, եւ որոնց միացնել, շաղկապելը եղաւ «Միութեան» նպատակը եւ տենչը։

Սա, ի հարկէ, սկիզբն է միայն։ Առաջ գնալով այդ ճանապարհով, Եւրոպայի հայ ուսանողութիւնը, բաղկացած աւելի քան 350 անդամներից, խմբուած մօտ 30 համալսարանական կենտրոններում, ինտելիգենտ, մեծ մասամբ ապահով, չփուող եւրոպական մտքի հետ, կարող է այնպիսի գործեր կատարել, որոնք այսօր՝ շատերի կարծիքով՝ ցնորք են եւ անհասանելի։ Դրա համար հարկաւոր է միայն մի բան.— աշխատանք՝ զրախօսութեան փոխարէն, հաւատք՝ պեսիմիզմի[39] տեղ, եւ ձեռք ձեռքի տուած, համայնական գործունէութիւն, անջատ ու պատահական փորձերի փոխարէն։

Լիազօր կոմիտէի եւ Կարգադիր Ցանձնաժողովի դիմաց՝

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

39.- Յոռետեսութեան։



Նմոյշ՝ Ակնունիի ձեռագրէն

Ա 16.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Եւրոպայի հայ ուսանողներու հինգերորդ համագումարը այս տարի տեղի ունեցաւ մարտ 31-ին Ժընեւ, Hôtel des Alpes-ի ընդարձակ սրահին մէջ, իննսունի չափ պատգամաւորներու, անդամներու ներկայութեան, որոնք եկած էին Եւրոպայի համալսարանական գլխաւոր քաղաքներէն, Պերլինէն, Փարիզէն, Մոնբելիէէն, Պրիւքսելէն, Լիէժէն, Միւնիխէն, Տարմշտատէն, Միտվայդայէն, Քարլսրուհէն, Լայբցիկէն, Հայտելբերկէն, Հալէէն, Թիւպինկէնէն, Գէօթինկէն, Լօզանէն, Ժընեւէն։

Հայկական եռագոյն դրօշակը, կարմիր, ճերմակ եւ կանաչ կը ծածանէր պանդոկին ճակատը։ Մէջտեղը, ճերմակ գօտիին վրայ, լայնքէն երկու հորիզոնական սեւ չերտեր, իբր սուգի նշան, կը կրէին վեց աստղեր, խորհրդանիշ՝ այն վեց մարտիրոս վիլայէթներուն, ուր ազատութեան համար ահաւոր եւ անյուսահատ պատերազմը կը շարունակուի եւ ուր Պերլինի դաշնագրով սուլթանը կը խոստանար «անհրաժեշտ» բարեկարգումներ մտցնել։

Սրահը դալարներով, կանաչ ճիւղերով, պատկերներով եւ նշանաւոր հայ դէմքերու կենդանագիրներով վայելչօրէն զարդարուած էր։ Մէկ կողմը կը տեսնուէր հայկական վերածնութեան ռահվիրաները՝ Ալիշան, Աբովեան, Պատկանեան, Արծրունի, Բաֆֆի, միւս կողմը նոր ու զինուորեալ Հայաստանի հերոսական դէմքերն ու ստուերները՝ Սերոբ, Պետո, Բաբկէն Սիւնի եւ ուրիշներ, մէջտեղը խորհրդանկար մը՝ «քաջամարտիկ Հայաստանը» ներկայացնող, ներշնչուած «Մեր հայրենիքի» «Ահա եղբայր քեզ մի դրօշ»-էն։

Մամուլի, համալսարանական եւ ուրիշ ընկերութիւններու ներկայացուցիչները միայն իրաւունք ունէին բացման ներկայ ըլլալու։

Երեկոյեան ժամը 9-ին ժողովը բացուեցաւ, երբ ամբողջ սրահը լիքն էր. մակեդոնացի խումբ մը ուսանողներ եւ մամուլի ու ընկերութիւններու ներկայացուցիչները բեմին քով առանձին տեղ գրաւած էին։

Հայ ուսանողուհիներու եւ ուսանողներու խմբերգ մը, երգեց «Մեր հայրենիքը», զոր ամբողջ սրահը ծափահարեց։ Յետոյ պ. Խ. Մալումեան, Կ[արգադիր] Ցանձնաժողովի նախագահը, հայերէն լեզուով բարի գալուստ մաղթելով բոլոր ընկերներուն, խօսեցաւ պարագային յարմար ճառ մը։ «Նախ, ըսաւ, սրբազան պարտականութիւն մը ունինք կատարելիք։ Անցնող տարին հայ ազգը երկու ցաւագին կորուստ ունեցաւ.— Ալիշան, որ 50 տարի Հայաստանի վերածնութեան երգը երգեց, եւ Մէրէմճեան ու Թորոսեան, որոնք Էտիրնէի մէջ երկու մակեդոնացի ընկերներու հետ կախաղան ելան, իբրեւ գաղափարի մարմնացնողներ»։

Ժողովը այդ հայրենասէրներու անմոռաց յիշատակը յարգելու համար, ոտքի կանգնեցաւ։

«Կէս դար է, շարունակեց պ. ճառախօսը, որ հայ երիտասարդութիւնը եւրոպական համալսարանները կը յաճախէ։ Առաջին Ֆազին՝ նա նուիրուած էր խաղաղիկ աշխատութեան եւ համալսարանական կեանքէն դուրս ոչինչ կը տեսնէր. երկրորդ՝ այն է ներկայ շրջանին մէջ, հայ ուսանողին աշխարհահայեցողութեան մէջ նկատելի է մեծ փոփոխութիւն.— դա իր հայրենիքի ազատութեան գաղափարով ոգեւորումն է։ Եւ մի քանի տարի է հանդիսատես ենք, թէ ինչպէս հայ երիտասարդները, իբրեւ արձագանք հայկական շարժման եւ կռուի, բողոքի ձայն կը բարձրացնեն եւ ոմանք ալ օգնութեան կը փութան Թրքահայաստան, իրենց ապստամբ եղբայրներուն աջակցելու»։

Պ. նախագահը իր ճառը վերջացուց հրաւիրելով հայ ուսանողները սեղմել իրենց շարքերը, Եւրոպայի առջեւ դնել հայ ժողովրդի մարտիրոսաբանութիւնը, ապա անոր ընդվզումի ու պայքարի պատմութիւնը, քանի այս երկրի մէջն են։

Պ. Մ. Յովհաննիսեան[12] Ֆրանսերէն լեզուով բարովիկ մաղթեց օտար ներկայացուցիչներուն եւ ներբողելով Զուիցերիոյ ու Ժընեւ քաղաքին հիւրասիրութիւնը, ըսաւ. «Իրենց հայրենիքին մէջ կաչկանդուած ու հալածական հայ ուսանողները տեսակ մը խորհրդարան կազմեցին ազատ Եւրոպայի մէջ, ամէն տարի, այժմէութիւն ունեցող խնդիրներու վրայ վիճաբանելու համար։ Ներկայիս մէջ ամենակարեւոր խնդիրը՝ պրոպագանդն է Թրքահայաստանի օգտին, որ պաշիպոզուկներուն ձեռքը ինկած եւ տէրութիւններէն լքուած է, հակառակ հանդիսաւոր խոստումներուն։

«Մնալով օրինական գործունէութեան հողին վրայ, հայ ուսանողները չեն կրնար չարտայայտել իրենց բուռն համակրութիւնը ա[յ]ն քաջերուն, որոնք այսօր Սասունի լեռներուն, Վասպուրականի հովիտներուն մէջ կը կռուին Մեծ Մարդասպանի[28] կառավարութեան դէմ, միաժամանակ համերաշխելով միեւնոյն բռնապետութեան զոհ ուրիշ ազգութիւններու հետ»։

Ատենախօսը մասնաւորապէս ողջունեց մակեդոնացի ուսանողները, որոնք «եկած էին անգամ մը եւս չեշտելու հայ-մակեդոնական եղբայրութիւնը, որ, շատ չ'ըներ, երեւան եկաւ Էտիրնէի կռուին մէջ եւ կախաղաններուն վրայ»։ Ապա դիմելով ուրիշ օտարազգի ուսանողներուն՝ «Բռնակալութեան խարազանը միջազգային է, վերջացուց ճառախօսը, դահիճներուն մէջ համերաշխութիւն կայ, պէտք է որ զոհերուն մէջ եւս համե-

բաշխութիւն ըլլայ»։

Տիկին Իլզէ Ֆրապան, գերման գրագիտուհին եւ աշխատակից «Տոյչէ Ռունտշաու» թերթին, խորապէս յուզուած ճառ մը խօսեցաւ, յայտնելով իր անկեղծ հիացմունքը երիտասարդ Հայաստանին եւ իր խորին ցաւումը գերման կառավարութեան, որ մեղսակից կը հանդիսանայ մարդասպան սուլթանին։ Ճառախօսը բացատրեց ծածանող հայ դրօշակի իմաստը։

Յետոյ՝ Լուի Վարէն, Ժընեւի համալսարանին հասարակական գիտութիւններու բրոֆեսորը փոքրիկ եւ ազդու ճառի մը մէջ իր համակրութեան հաւաստիքը յայտնելով հայ երիտասարդութեան, որուն մէկ մասը իր աշակերտներն են, գովեց անոնց եռանդը եւ աշխատասիրութիւնը։ Խօսելով հայկական հարցի մասին, ի վեր հանեց ցաւագին հակասութիւնը, որ կայ հայոց դատին արդարութեան եւ անոր օգնութեան հասնելու տիեզերական անկարողութեան միջեւ։

Պ. Ս. Բատէվ, «Մակեդոնական Շարժում» ֆրանսերէն կիսամսաթերթի խմբագիրը խօսելով խումբ մը մակեդոնացիներու կողմէն, յուզուած շեշտով մը ծանրացաւ այն համերաշխ կապերուն վրայ, որոնք կը միացնեն մակեդոնացիները «Դրօշակ»ի հայ յեղափոխական կուսակցութեան հետ, ջատագովեց գործնական պրոպագանդը եւ պնդեց միահամուռ եւ աւելի ու աւելի լայն գործունէութեան պէտքին վրայ հայերուն ու մակեդոնացիներուն միջեւ, որոնք միեւնոյն թշնամին ունին իրենց դէմ։ Վերջացուց իր ներբողալից ճառը հայ հերոսներուն եւ հայ ժողովրդին աննկունութեան համար, «Կեցցէ ազատ Հայաստան» աղաղակով։

Այս ճառախօսութիւններէն յետոյ, նախագահը կարդաց համագումարին ուղղուած հետեւեալ նամակներն ու հեռագիրները։

1) Շատ համակրալից նամակ մը պետական խորհրդի անդամ Ժորժ Ֆավօնէն, որ ցաւ կը յայտնէր հայ երիտասարդներու ժողովին ներկայ չկրնալ ըլլալուն, հրաւիրուած ըլլալով Պերն, Դաշնակցային խորհրդին։

2) Ջերմ համակրութեան հեռագիրներ ղրկած էին «Պրօ Արմէնիայի» խմբագրապետը եւ Մարսիլիոյ ընկերվարական ուսանողները։

3) Պ. Կոնտանսոն (Քրիստոնեաները եւ միւսիւլմանները» անուն հեղինակաւոր աշխատութեան հայասէր հեղինակը) անկեղծ համակրութիւնով լի նամակ մը ուղարկած էր Հայաստանի եւ հայկական դատին համար։

4) Լօզանի մակեդոնական ուսանողներու եւ Զուիցերիոյ, Իտալիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ, Ռուսաստանի եւ Պուլկարիոյ հայկական ընկերութիւններու կողմէն հեռագիրներ եւ նամակներ։

5) Բորիս Սարաֆով, մակեդոնական գործադիր կոմիտէի նշանաւոր պետը հետեւեալ նամակը ուղարկած էր։

(ՆԱՄԱԿԸ)[40]

Դիւանի ընտրութենէն յետոյ պ. Խ. Մալումեան ներկայացուց Միութեան՝ վերջացող տարին մէջ կատարած գործունէութեան համարատուութիւնը, ուր կ'երեւար որ հայ ուսանողական Միութիւնը կարեւոր յառաջդիմութիւններ ըրած էր կազմակերպութեան ու պրոպագանդի ճամբուն մէջ։ Լիազօր կոմիտէն, որ երկու տարի կ'ընէ Ժընեւ հաստատուած է, իր ծրագրի ոգու համաձայն պ. Ֆ. դը Պրեսանսէի բանախօսութիւնը կազմակերպեց Ժընեւի մէջ, պ. Պիէռ Քիյառ Մոնաքօ Խաղաղութեան Համաժողովին պատգամաւոր ուղարկած էր հայկական դատը պաշտպանելու համար եւ հրաւիրած էր գերմանացի նշանաւոր ընկերվարական պ. Էդ. Պէրնշտայնը Բերլինի մէջ բանախօսութիւն մը ընել ի նպաստ հայոց։ Կոմիտէն ծրագրած է նմանապէս Հռոմի եւ Բրիւքսէլի մէջ դասախօսութիւններ սարքել, տեղական հեղինակաւոր անձնաւորութիւններու ձեռքով, Եւրոպայի հասարակական կարծիքը հայոց հարցով շահագրգռելու համար։

«Հայաստան եւ հայկական հարցը» մեծ հրատարակութեան համար, որ նպատակ ունի հայ ազգին անցեալը եւ ներկան, իր տառապանքներն ու կռիւները Եւրոպային ճանչցընել, Լիազօր կոմիտէն ստացած է շարք մը յօդուածներ ու համակրական կոչեր Եւրոպայի նշանաւոր գիտուններէ, գրագէտներէ եւլն, ինչպէս Էլիզէ Ռէկլիւ, Լամբրոզօ, Էրնեստ Նավիլ, Ֆրէտերիկ Պասսի, Լամպրէխտ, Պայէր, Լօրիա, Նովիքով եւ դեռ շատեր։

Համարատուութենէն յետոյ նախապէս պատրաստած ծրագրին կարգով սկսան բանախօսութիւնները, որոնք ուղղակի առնչութիւն ունէին հայկական հին կամ նոր կեանքի հետ։

Դասախօսներէն ոմանք իրենց նիւթին մէջ չօշափած էին կովկասահայ իրականութենէն մէկ քանի կարեւոր խնդիրներ, որոնք յարուցին երկարատեւ վիճաբանութիւններ, որուն իբր հետեւանք ընդունուեցաւ Մ.Յ.-ի առաջարկած հետեւեալ բանաձեւը.

«Ե. Հ. Ու. Միութեան 5-րդ համաժողովը՝ գտնելով որ թրքահայերուն դատը իր ներկայ սուր, հրատապ, ստիպողական կերպարանքով առաջնակարգ խնդիրն է ամբողջ հայութեան համար, միաձայն ցանկութիւն կը յայտնէ, որ կովկասահայ ինտելիգենցիան իր ուշադրութիւնը կեդրոնացնէ գլխաւորապէս այդ խնդրի շուրջը»։

Համագումարին աշխատութիւնները տեւեցին մէկ շաբաթ։ Համագումարը՝ իր վերջի նիստին մէջ՝ առաջիկայ տարուան համար կայացուց կարգ մը որոշումներ, որոնցմէ հետեւեալները միայն հրատարակութեան կը տրուին.

40.- Տես Սարաֆովի նամակը՝ ֆրանսերէն բնագրով եւ հայերէն թարգմանութեամբ, էջ 318։

1) Յօգուտ Հայաստանի կազմակերպել բանախօսութիւններ Գերմանիոյ եւ Իտալիոյ շատ մը կարեւոր կեդրոններու մէջ։

2) Հող պատրաստել Գերմանիոյ մէջ հայկական դատը պաշտպանելու համար։ Յատուկ օրկան մը հրատարակելու գերմաններէն լեզուով։

3) Բոլոր աշխարհի ուսանողներուն կոչ մը ուղղել, որ մամուլի եւ բանախօսութիւններու միջոցով պրոպագանդ ընեն Հայաստանի համար։

4) Թուրքիոյ եւ Կովկասի մէջ հայկական հարցի մասին խօսելը անհնար ըլլալով, համագումարը որոշեց այդ նպատակով Եւրոպայի մէջ հրատարակութիւններ ընել։

5) Ընթացիկ տարուայ պրոպականդի համար 25,000 ֆրանքի պիւտճէ մը որոշուեցաւ։ Ներկայ եղողները անմիջապէս ստորագրեցին 5,000 ֆրանք։ Մեծ ժողովածուին համար որոշուած է ծախսել 15-20,000 ֆրանք։

Համագումարը միաձայնօրէն որոշեց նաեւ իր բուռն համակրութիւնը յայտնել 1) «Պրօ Արմենիայի» խմբագրական մարմնին, 2) բոլոր հայասէրներուն, 3) մակեդոնական ժողովրդին եւ 4) բոլոր հարստահարուած ազգերուն։

Որոշեց յայտնել իր հակակրութիւնը՝ Բազէլի սիոնիստներու կոնգրէսին, սուլթանի հետ ունեցած համակրական հեռագիրներու փոխանակութեանը համար։

Համագումարը գոհունակ ծափահարութիւնով ընդունեց Մոնակոյի Խաղաղութեան համաժողովին հայկական հարցի մասին քուէարկած որոշումը աւետող հեռագիրը, ստացուած պ. Քիյառէն։

Վերջի պահուն, աւստրիական լրագիրներուն Պոլսէն հետեւեալ հեռագիրը կու տային.

«Սուլթանը հրաման ղրկեց Բարիզի դեսպան Միւնիր պէյին եւ Զուիցերիոյ տաճկական ընդհանուր հիւպատոսին, ամէն ջանք ու միջոց գործ դնել՝ հայ ուսանողներու համագումարը արգիլելու համար»։

Ի՜նչ սարսափելի ականջներ ունին սա բռնակալները — կ'ըսէր Յոբնազ։

Համագումարը ցրուեցաւ իր ջերմ համակրութիւնը եւ երախտագիտութեան զգացմունքները յայտնելով Զուիցերիոյ կառավարութեան եւ Ժընեւ քաղաքին։

Առաջիկայ համագումարը տեղի կ'ունենայ 1903 ապրիլ 1-ին Պրիւքսէլի մէջ։

«Դրօշակ», 1902, թիւ 4, էջ 71-73

Փաստ. 1462ա-10

Au congrès des étudiants arméniens

à Genève.

Chers camarades,

On a parlé de la solidarité morale des opprimés, de par leurs communes souffrances. Cette solidarité, confinée dans le rêve je la crois illusoire. La solidarité réelle, telle que je la conçois, naît de la résolution d'agir et se manifeste dans l'action.

Une pareille solidarité doit lier Arméniens et Macédoniens dans le même combat obstiné contre le régime qui nous opprime.

Partisan convaincu et enthousiaste d'une semblable entente, j'ai toujours affirmé sa nécessité impérieuse, ainsi que sa beauté morale. À peine élu président du Haut Comité Macédonien, j'ai signé avec les représentants de la Fédération Révolutionnaire Arménienne „Daschnaktzoutiun" une déclaration commune à propos de la conférence de la Haye. Depuis lors, je me suis toujours inspiré de l'engagement solennel que nous prîmes devant l'Europe de lutter, solidaires et unis, contre la tyrannie turque.

Le temps est proche, me semble-t-il, où nous serons appelés à sceller cette union de notre sang, sur les champs de bataille qui seuls décideront notre sort.

À cette heure suprême, j'en ai la certitude, la jeunesse révolutionnaire arménienne qui a fait quelques uns des plus beaux gestes de révolte dans les temps récents, sera là, toute, pour faire tout son devoir — et c'est avec cette espérance que je la salue fraternellement, réunie en congrès à Genève.

B. Sarafoff

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԺՐՆԵՒ

Սիրելի ընկերներ,

Շատ խօսուած է հարստահարուածներու բարոյական համերաշխութեան եւ անոնց միաձայն տառապանքներուն վրայ։ Երազի սահմանին մէջ եղած համերաշխութիւնը պատրանք է։ Իրական համերաշխութիւնը, ինչպէս կ'ըմբռնեմ, գործելու որոշումէն կը ծնի եւ երեւան կու գայ գործունէութեան մէջ։

Այսպիսի համերաշխութիւն մը պէտք է կապէ հայերը եւ մակեդոնացիները միեւնոյն յամառ կռուին մէջ, մեզ հարստահարող ռեժիմին դէմ։

Համոզուած եւ խանդավառ կուսակից նմանօրինակ համաձայնութեան մը, միշտ պնդած եմ անոր աննահանջ պէտքը եւ բարոյական գեղեցկութիւնը։ Մակեդոնական Բարձր Կոմիտէին նախագահ ընտրուեցայ թէ չէ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ, Լահէյի Վեհաժողովին առթիւ, միասին Յայտարարութիւն մը ստորագրեցի։ Անկէ ի վեր, միշտ ներշնչուած եմ այն հանդիսաւոր խոստումէն, զոր մէկտեղ տուինք Եւրոպայի առջեւ, թիւրք բռնապետութեան դէմ համերաշխ ու միացած կռուելու համար։

Ինծի կը թուի թէ մօտ է ժամանակը, ուր մենք այս միութիւնը մեր արիւնով նորէն պիտի կնքենք պատերազմի դաշտերուն վրայ, ուր միայն պէտք է վճռուի մեր ճակատագիրը։

Այդ գերագոյն ժամուն, հաստատ գիտեմ, որ հայ յեղափոխական երիտասարդութիւնը, որ նոր ժամանակներու ապստամբութեան քանի մը էն գեղեցիկ ժեստերը ըրաւ, միահամուռ հոն պիտի ըլլայ իր պարտականութիւնը կատարելու համար, այս յոյսով է որ եղբայրաբար կ'ողջունեմ զայն Ժրնեւի Համագումարին մէջ։

Բ. ՍԱՐԱՖՕՎ

«Դրօշակ», 1902, թիւ 4, էջ 63

Փաստ. 1462-113

Ա 17.– ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԷՆ ԱԿՆՈՒՆԻՒՆ

Մարսէյլ, 12 Մայիս 1902

Մեծապատիւ Տիար Խ. Մալումեան,
Նախագահ Եւրոպ. Հայ Ուս. Միութեան
Լիազօր Կոմիտէին, Ժընեւ

«Արմէնիա»ի 32րդ թուով «Մատենադարան»ի մասին ըրած առաջարկս գործնականապէս եւս Ձեզ ներկայացուցած լինելու համար, կը սկսիմ «Արմէնիա»ն նուէր ղրկել «Միութեան»դ։ Կը ստանաք նաեւ, առանձին ծրարով մը, մէկ մէկ օրինակ մեր հրատարակած այն գիրքերէն, որոնք դեռ բոլորովին սպառած չեն։

Եթէ «Ոգի Հայաստանի»ի պատկերով carte-postale-ները ծախու հանած էք, իմացուցէք ինձ, թէ ինչ պայմաններով կը ծախուին որ մի քանի անգամ ծանուցանեմ «Արմէնիա»ի մէջ. թերեւս այդ կերպով ծառայութիւն մը մատուցած լինիմ անոնց տարածուելուն եւ Միութեանդ գէթ փոքրիկ շահ մը գոյանալուն։

Ջերմ յարգանքներով՝
Ձեր Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ



Նմոյշ՝ Մ. Փորթուգալեանի ձեռագրէն

Փաստ. 1462-117

Ա 18.– ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆԷՆ

Սիրելի ընկերներ!

Վերջապէս հնարաւորութիւն ունիմ ձեզ հաղորդելու այն յաջողութեան մասին, որ ունեցաւ իմ գործ դրած ջանքերը Բերլինում հայերին համար հետաքրքրութիւն զարթեցնելու համար։

Ցունիսի 6-ին, ուրբաթ երեկոյեան, տեղիս ամենայայտնի "Philharmonic" *դահլիճում տեղի է ունենալու «Հայկական երեկոյթ», որին ի միջի այլոց մասնակցելու են.*

1) *Հռչակաւոր պատմաբան-աստուածաբան* prof. Kunck *խօսելու է հայոց անցեալ պատմութիւնից։*

2) Dr. Lepsius — *«Հայերի կոլտուրական դերը Արեւելքում»* (Das Armenische Volk und die Kultivierung des Orients)

3) Dr. Rohrbach — *Մոգական լապտերով ցոյց է տալու մի շարք պատկերներ տաճկահայերի կեանքից — համապատասխան բացատրութիւններով։ Շեշտելու է գլխաւորապէս այն իրողութիւնը, որ հայերը երկրագործ ժողովուրդ են՝ օժտուած լաւ յատկութիւններով։*

4) Prof. Kolir — *Ցայտնի ջութակահար, նուագելու է 1-2 հայկական եղանակներ։*

5) Hecking — *Ցայտնի վիոլոնչելիստ, նուագելու է։*

6) *Կայսեր[ական] օպերայի երգչուհի* Destin, *երգելու է։*

7) Prof. Schmidt — *հսկելու է խմբական երգեցողութեան վրայ**։ *Ինքը երաժշտութեան դասատու է «Երաժշ. բարձր դպրոցում»։*

Երգեցիկ խումբը բաղկացած է 35-40 հոգուց, ամենամեծ մասը ռուսներ, հրեաներ եւ բուլղարներ։ Արդէն 4 երգ պատրաստել են։

Լինելու են նաեւ 2-3 կենդանի պատկերներ՝ մի գերմանացի գեղարուեստագէտի ղեկավարութեամբ։

Բացի դրանից հրաւիրելու ենք, 1-2 դերասանուհիներ՝ ոտանաւորներ (ի հարկէ հայերէն) կարդալու համար։

Առաջ բերած անուններս այնքան հեղինակաւոր են, որ անշուշտ կարողանալու ենք մեծ բազմութիւն գրաւել։ Այնուամենայնիւ խօսել ենք մի քանի խմբագրութիւնների հետ որ համապատասխան օրը նպաստաւոր յօդուածներ գրեն։ Ի հարկէ յայտարարութիւններին էլ զօռ ենք տալու։

Իբրեւ պատուաւոր հիւրեր հրաւիրելու ենք շատ պրոֆեսորների, խմբագրութեան ներկայացուցիչների եւ զանազան հիմնարկութիւնների ու կուսակցութիւնների պարագլուխների։

Ամէնից շատ աշխատելու ենք սոցիալ-դեմոկրատներից ու ազատամիտներից մարդիկ գրաւել։

Երեկոյթի հիմնաքարը պիտի լինի պրոպագանդ, այն է՝ հասարակութեան առաջ դնել հայերի թշուառ վիճակը, նրանց կրած անվերջ հալածանքները եւ միւս կողմից արծարծել այն միտքը, որ նրանք ունեն փառաւոր պատմական անցեալ, ունեն շատ ու շատ գովելի յատկութիւններ, ուստի եւ միանգամայն արժանի են Եւրոպայի օգնութեանը։ Այդ հարցերի մասին յատուկ խորհրդակցութիւն ենք ունեցել prof. Karnak-*ի,* Dr. Lepsius-*ի եւ* Dr. Rohrbach-*ի հետ եւ երեքն էլ խոստացել են շեշտել այդ կէտերը։*

Այժմ երեկոյթի պաշտօնական «նպատակի» մասին։

Սկզբում ուզում էինք դնել «Ուսանողական միութեան» օգտին. բայց բանիմաց մարդիկ խորհուրդ չտուին, ասելով այդ նպատակը այնքան մատչելի-հասկանալի չէ եւ այնքան մարդիկ չի գրաւէ, որքան «հայ որբերի» անունը։ Ահա այդ հանգամանքից դրդուած այժմ մենք հարցնողներին ասում ենք, «հայ որբերի» օգտին, բայց de facto *զուտ եկամուտն ամբողջապէս մերը — «Ուսանողութեան» է լինելու։ Ցոյս ունեմ, որ մի նշմարելի գումար մնալու է զուտ արդիւնք։ Թէեւ երեկոյթը գրանդիոզ*[41] *է, թէեւ ծախսերս մեծ (մօտ 500 մարկ) է, բայց եկամուտն էլ մեծ կը լինի որովհետեւ դահլիճը 800-900 մարդ կը վերցնէ։ Տոմսակների գները շատ էժան պիտի նշանակենք եւ ամէն կերպ աշխատենք բոլորը տարածել***։

Ցամենայն դէպս եթէ նիւթական ոչ մի օգուտ էլ չստանանք, կարծում եմ միայն բարոյական օգտուտն էլ մեծ արժէք ունի։

Գերմանօ-հայկ. կոմիտէի կազմելու մասին խորհրդակցեցի Lepsius-Rohrbach-*ի հետ։ Համակրանքով վերաբերուեցին, բայց մի պայմանով, որ այդ կոմիտէն հեռու մնայ քաղաքական նպատակներից, քանի որ ներկայումս Գերմանիան բարեկամ է Թուրքիային եւ այդ թոյլ կոմիտէն չպիտի կարողանայ փոխել նրա քաղաքականութիւնը։ Եթէ այդ կոմիտէն իր գործունէութիւնը քաղաքական հողի վրայ դնէ, այն ժամանակ մեծ արգելքների կը հանդիպի թէ կառավարութեան եւ թէ հասարակութեան կողմից։ Մնում է բաւականանալ միայն կուլտուրական նպատակով, այն է՝ գերմանացիներին մի շարք դասախօսութիւններով ծանօթացնել հայի անցեալն ու ներկան եւ դրանով գրգռել նրանց հետաքրքրութիւնը դէպի հայկական գործերը։ Նպատակայարմար են համարում այդ դասախօսութիւնների շարքը սկսել եկող սեմեստրից. դասախօսելու են իրենք՝* Lepsius *եւ* Rohrbach. *կը հրաւիրենք նաեւ* Prof. Karnak, Prof. Lehman, *գուցէ եւ* Bernstein-*ին եւ ուրիշներին։ Երեկոյթից յետոյ այդ մասին վերջնական խորհրդակցութիւններ կ'ունենանք։*

«Ուս. միութիւնը» պիտի վերցնէ իր վրայ նիւթական ծախսերը՝ իւրաքանչիւր դասախօսութիւն գուցէ նստի 50-60 մարկ։ Գրէք ձեր կարծիքն այդ մասին։ Ես ինքս կարծում եմ, որ այդ երեկոյթի աջողութիւնից որոշ չափով կախուած է մեր միւս ձեռնարկութիւնների աջողութիւնը։ Ուրեմն ամէն կերպ աշխատելու ենք ամօթով չլինել։

Իսկ դուք ընդհակառակը ձեռ. լռութեամբ կարծես ուզում էք մեզ խայտառակել... Պարզեմ. թէ երգեցիկ խմբի, թէ կենդանի պատկերների համար անհրաժեշտ են հայկական շորեր. այո՛, անհրաժեշտ են, որովհետեւ մենք բոլոր մասնակցողներին ասել ենք, թէ ունենք. իսկ այդպէս ասել ենք, որովհետեւ յոյս ունէինք, թէ դուք իսկոյն կ'ուղարկէք։ Բայց մեր յոյսերը չարդարացան. ես շորերի մասին գրել եմ 3 անգամ եւ 1 հեռագիր «Դրօշակ» եւ 1 նամակ էլ պ. Մալումեանին. սակայն մինչեւ օրս ոչ շորեր ստացանք, ոչ էլ պատասխան։ Դա ի՞նչ վերաբերմունք է... Երեկոյթը նշանակուած էր 31-ին, բայց շորերը չստանալու պատճառով այսօր ստիպուեցանք յետաձգել 6-ին. քիչ էր մնում դրա համար 200 մարկ տուգանքի ենթարկուէինք դահլիճի տիրոջ կողմից։ Մախլաս*[42]*, մի կերպ ազատուեցինք։ Այժմ վերջին անգամ խնդրում եմ, նամակս ստանալուն պէս հաւաքէք այդ բոլոր շորերը եւ ուղարկէք փոստով։ Ծախսը մի խնայէք. եթէ 20-30 ֆր. էլ լինի կը վճարենք։ Ուրեմն իսկոյն ուղարկէք, եթէ չէք ուզում մեզ խայտառակել երկրորդ անգամ։ Այդ շորերը շուտ պիտի ստանանք, որպէսզի նրանց ձեւով մի քանի ձեռք էլ այստեղ պատրաստել տանք։ Անհամբեր սպասում եմ։*

Առայժմ այդքան «երեկոյթի» մասին։ Բերնշտայնի մասին նորութիւն չկայ գրելու։ Նա ամսոյս 3-ին նամակով ինձ յայտնել էր, որ իբր թէ մինչեւ 15-ը պիտի կատարէ իր խոստումը։ Ես այդ նամակին պատասխանեցի շատ քաղաքավարի մի նամակով յայտնելով, որ ես իմ ընկերների հետ նրա տրամադրութեան տակ ենք եւ կ'անենք ինչ որ կը բարեհաճի թելադրել։ Մանրամասնութիւնների մասին խօսել էի անձամբ՝ մօտս եղածը ժամանակ։ Այդ նամակագրութիւնից յետոյ անցան օրեր, բայց Bernstein *լուռ էր. նոյնիսկ խոստացած յօդուածը չգրեց «*Vorwärts*»ում*[43]։ *Մի նամակ էլ գրեցի, բայց դարձեալ անպատասխան թողեց։ Անձամբ չէի կարող գնալ, որովհետեւ նա նախօրօք ասել էր թէ իրա հետ տեսնուել կարող եմ միմիայն* Reichstag-*ում*[35], *իսկ* Reichstag-*ն էլ տօների պատճառով փակուածէ մինչեւ Ցունիսի 3-ը։ Ուրեմն մնում է սպասել մինչեւ այդ օրը։ Ինչպէս առաջին նամակումս էլ գրել էի, այդ մարդն ինձ վրայ թողեց այն տպաւորութիւնը, որ սրտով չի ուզում կատարել իր խոստումը, դրա համար էլ ձգձգում է եւ ուզում մի կերպ պոկ գալ։ Բայց մենք էլ հեշտ կերպով պոկ գալողը չենք։ Ցունիսի 3-4-ին կը գնամ նորից անձամբ խօսելու։ Լաւ կը լինի, որ դուք այդտեղից նրան մի նամակով յիշեցնէք (նամակը գրէք մօտաւորապէս 1-2-ին։ Այդ նամակում ի միջի այլոց կարող էք գրել. «... Ձեզ նամակագրութեան ձանձրոյթիդ ազատելու համար յանձնարարեցինք մեր ընկեր ուս. Ե. Թոփչեանին, որ մի անգամ էլ գայ Ձեզ մօտ, Ձեր կարծիքն ու յանձնարարութիւնները լսելու...»։ Առ այժմ դա էլ մեծ բան է։ Գուցէ հետզհետէ կարելի լինի լայնացնել գործունէութիւնը։*

Նամակս շատ երկարեց. մի քանի խօսք էլ այստեղի ուսանողութեան մասին եւ վերջ...։ Ընկեր պ. Մալումեանը սխալւում է կարծելով, թէ այստեղ 30 հայ ուս[անողներ] կան. այս սեմեստրում շատ քիչ են, այն է՝ «Գրակ. ժող[ովում] 7 անդամ եւ «կրթական ժող[ովում»] 9. կան մի քանի ո՛չ ուսանող հայեր։

Ես հանգանակութիւն սկսել եմ «կրթական ժող[ովում»]. ստորագրել են 72 մարկ. աւելի անհրաժեշտ էր։ Մի քանի անգամ դիմել եմ նաեւ «Գրակ. ժող.ի» ներկայացուցիչներին, որ նրանք էլ մի բան հանգանակեն։ Բայց մինչեւ օրս դրանք դեռ ոչինչ չեն հանգանակել։ Նորից կը յիշեցնեմ։

Ցաւօք սրտի պիտի արձանագրեմ մի փաստ. այդ «Գրակ. ժողովի» կատարեալ անտարբերութիւնն է, որը նկատել են նոյնիսկ օտարները — ռուսները՝ երեւակայեցէք. մինչեւ օրս 5 ժողով ենք ունեցել այդ «երեկոյթի» առթիւ։ Բոլոր ժողովներին եղել եւ հրաւիրել եմ բոլոր ուսանողներին առանց բացառութեան. սակայն «Գրակ. ժողովից» եկել են առաջին նիստին միայն 2 հոգի, այն էլ բացասական կարծիքով։ Առաջին նիստից յետոյ դրանք էլ յետ քաշուեցին, գործի ամբողջ ծանրութիւնը թողնելով 2-3 մարդու վրայ։ Ստիպուած եղայ դիմել ռուս ընկերների օգնութեան։ Ուրախութեամբ մասնակցեցին երգեցիկ խմբին։ Երեւակայեցէք 40 հո-

*) *Խումբը կազմել է ուս[անող] Նազարեան։*

**) *Պատուաւոր տոմսեր պիտի ուղարկենք նաեւ Կովկասի տուզերին*[41ա]։ *Երեւի մը բան կը ստանանք։*

41.- Հոյակապ, մեծաշուք, վեհապանծ:
41ա.- Հարուստներին:

*) *Որովհետեւ Նիկոլը խոստացել էր իսկոյն ուղարկել շորերը, կարծեմ, Խմբագրատանն են։*

42.- Վերջապէս, ինչուիցէ:
43.- Գերման ընկերվարական թերթ:

գուց բաղկացած խմբում միայն 6-7 հայ կան։ Եւ ռուսները զարմացած հարցնում են, թէ ինչո՞ւ բոլոր հայերը չեն մասնակցում. ի՞նչ ասել. ստիպուած ենք զանազան պատրուակներով ծածկել դառն իրողութիւնը։ Սակայն լաւ է, որ այդ ժողովի գոնէ 2 անդամը վերջերս սկսել են մասնակցել. գործի փառաւոր աջողութիւնը ամաչցրել է դրանց։ Երանի թէ միւսներն էլ հետեւէին դրանց օրինակին, գոնէ օտարներից ամաչեն «Մախլա՛ս...»։ Իսկապէս չարժէ այդ մասին գրել եւ չէի գրի եթէ սաստիկ դառնացած չլինէի։ Եւ ինչպէ՞ս չդառնանալ երբ ռուս, հրեայ ուսանողներ գալիս են հայերէն բառերն աղաւաղելով երգում, իսկ հայ ուսանողները այդ ժամանակ կաֆէներում են քաշ գալիս...

Երբ 3-4 հոգի ստիպուած ենք առաւօտից մինչեւ երեկոյ դռնից դուռ փող[ոց]ից-փողոց գնալ գալ, իսկ մեր ընկերները առանց խղճահարուելու հանգիստ սպասում են, որ վերջը օտարների հետ գան եւ երեկոյթին ականատես լինեն։ Ամո՛թ...

Բայց թողնենք այդ դառն հարցը. վերջը թող իրենք ամաչեն...

Վերջացնում եմ նամակս նորից խնդրելով՝

1- Իսկոյն չորերն ուղարկել եւ նամակ գրել.

2- Ուղարկել ուսանողական ներկայացուցիչների հասցէները։

Կրկնում եմ չորերը իսկոյն ուղարկէք։

Ձերմ բարեւներով՝ Ձեր Ե. ԹՈՓՋԵԱՆ

23 Մայիսի, Բերլին [1902]

Փաստ. 1462-122

Ա 19.– Ե. ԹՈՓՋԵԱՆԵՆ ԱԿՆՈՒՆԻԻՆ

Ցարգելի պ. Մալումեան!

Խնդրում եմ նամակս ստանալուն պէս այդտեղ տպագրութեան յանձնէք 100 հատ պատուի տոմս հայերուն։ Թղթի գոյնը եւ ձեւը մօտաւորապէս այնպէս ինչպէս ներփակեալ տոմսակինն է։ Հայերէն բովանդակութիւնը գրած է այդ տոմսի հակառակ երեսի վրայ. շատ լաւ կը լինէր, որ չրջանակն այն ձեւով անել տայիք, ինչպէս գերմաներէն բնագիրն է։ Նորից կրկնում եմ շտապէք, որովհետեւ այդ տոմսակները երեկոյթից գոնէ 1 օր առաջ պէտք է փոստին յանձնենք՝ Ռուսաստան ուղարկելու համար։ Իսկոյն մի կարտ գրէք, թէ ո՞ր օրը կը ստանամ։

Այդ տոմսակները, գերմաներէն-պատկերազարդ ծրագրի եւ համապատասխան նամակների հետ պիտի ուղարկենք Ռուսաստանի հարուստներին։ Ցոյս ունենք մի բան ստանալ։ Այժմ կազմում ենք այդ հարուստների ցուցակը։

Հա՛, ես խոյս եմ տուել «Եւր. Հայ Ուս. Միութիւն» դարձուածքից (ինչպէս նաեւ գերմաներէնի մէջ) եւ գրել եմ միայն «Հայ ուսանողութիւն», որովհետեւ շատ-շատերը արդէն «Միութիւնը» համարում են մի յեղափոխական կազմակերպութիւն* եւ հէնց այդ պատճառով կարող էին խոյս տալ։ Կարծում եմ մեզ համար միեւնոյն է։ Զեւը չէ նշանակութիւն ունեցողը, այլ էութիւնը։

Ունինք նաեւ գերմ. լեզուով տպած պատուաւոր տոմսակներ։ Դրանցով հրաւիրելու ենք ամենաաչքի ընկնող գործիչների, հրապարակախօսների եւ կազմակերպ[ութիւնների] ներկայացուցիչներին։

Շտապում եմ, ուրիշ բաների մասին գրել անկարող եմ։ Վաղը պատրաստ կը լինի երեկոյթի ծրագիրը. կ'ուղարկեմ։ Այժմ ուղարկում եմ 2 օրինակ մեր հրաւիրաթերթերից իբրեւ նմուշ։

Շորերը ստացայ, բայց ուզածս հասցէները — ոչ։ Խնդրում եմ ուղարկէք գոնէ միայն կենտրոնի [?] ներկայացուցչի հասցէն։ Դրանք չունեմ, իսկ միւս տեղերինը հաւաքել եմ եւ երեկոյթի մասին գրել։

Անհամբեր սպասում եմ պատասխանի եւ տպագրուած տոմսերին։

Ընկերական ջերմ բարեւներով՝
Ե. ԹՈՓՋԵԱՆ

P.S. Շահը այստեղ է. ուզում ենք ուսանողութեան կողմից մի քանի պատգամաւորներ ներկայանալ եւ գալուստը շնորհաւորել։

ՆՈՑՆ

30 Մայիսի 1902
Բերլին

*) Ես «Մշակին» գրել էի մի ահագին յօդուած, բայց լոյս տեսաւ միայն կմախքը՝ վիճակագրական տեղեկութիւնները. սակայն այդտեղ էլ խոյս էին տուել «Եւր. Հայ Ուս. Միութիւն» անունը յիշելուց։

Փաստ. 1462-114

Ա 20.– ՆԱՄԱԿ ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶԷՆ

Արգոյ Պարոններ,

Ձեր խնդիրքի համաձայն ահա՛ ուղարկեցի տպագրելիք Ժողովածուիդ համար իմ գրուածքը, որի վերնագիրը պէտք է լինի՝ «Նալբանդեանցը Պետրոս-Պօղոսի բերդում»։

Այդտեղ, ինչպէս որ խօսք է եղել մեր մէջ, կը թարգմանէք դորան ֆրանսերէնի եւ կը տպագրէք Ժողովածուի մէջ։ Եթէ բան է գտնէք, որ դա չատ ընդարձակ է, իրաւունք եմ տալիս ձեզ քաղուածք անելու ու միայն մի քանի գլուխը տպագրելու, ըստ ձեր բարեհայեցողութեան, թէեւ ախորժելի կը լինի ինձ, եթէ ամբողջովին, բոլորը թարգմանուէր եւ տպագրուէր։

Ցաւում եմ, որ մի երկու շաբաթով գրուածքը ուշացաւ։ Այդ եղաւ ինձանից բոլորովին անկախ պատճառով, որովհետեւ, ինչպէս կարող էք տակը դրած ամսաթուից տեսնել, դա պատրաստ է եղել դեռ Ապրիլի 6-ին։ Հարկաւոր եղաւ դորա պատճէնն առնելու, եւ տուի արտագրելու։ Տգէտ արտագրողի ձեռք ընկայ. երեք շաբաթուայ մէջ հազիւ-հազիւ վերջացրեց եւ յանձնեց ինձ։ Դորանից յետոյ էլ հարկաւոր եղաւ համեմատել պատճէնն բնագրի հետ, ուղղել բազմաթիւ սխալները, եւ այլն եւայլն։

Ձեզ ուղարկուածը բնագիրն է, իմ ձեռքով արտագրուած։ Ցոյս ունիմ, որ եթէ գեղեցիկ չէ գրուածքը, գոնէ այնքան պարզ է, որ հեշտութեամբ կարող էք կարդալ։

Դորա մէջ մի աւելորդ խօսք, մի աւելորդ նախադասութիւն չկայ, ամէն բան հիմնուած է հանգուցեալի գրուածների ու նամակների վերայ, որոնց վաւերականները պահւում են անկորուստ։ Եթէ ձեզ մի բան անհասկանալի թուի, խնդրում եմ, որ նեղութիւն քաշէք խսկոյն գրել ինձ, եւ ես կ'աշխատեմ պարզել բոլոր թիւրիմացութիւնները։

Գրուածքը ուղարկեցի ծրարած նամակի ձեւով, որ աւելի անվտանգ լինի. «բանդերոլով» վախեցայ ուղարկել։

Ստացուելու մասին խնդրում եմ մի երկտողով միամտացնէք ինձ։

Բարեացակամ
Ե. ՇԱՀԱԶԻԶ

1902 թ. Մայիսի 17-ին, Նոր Նախիջեւան

Ց.Գ.- Խնդրում եմ տպագրելիք յօդուածիս տակ ստորագրէք կամ դնէք ոչ իմ սովորական ազգանունս, այլ «Ե. Կամսարական», որ նոյնպէս իմ ազգանուան մի մասն է։

Ա 21.– ՀԱՅԱՍԷՐ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(ՆԱՄԱԿ ԲԵՐԼԻՆԻՑ)

Մխիթարական մի երեւոյթ է, որ հետզհետէ հայոց դատի շուրջը համախմբւում են ականաւոր եւրոպացիներ, որոնք աշխատում են գէթ մասամբ թեթեւացնել հայ ժողովրդի տառապանքները եւ նպաստել հայկական արդար պահանջների իրագործման։

Եսական եւ նիւթապաշտ են գերմանացիները. նրանց ամբողջ պատմութեան մէջ չէք տեսնում մի դէպք, որի հիմքը լինէր մարդասիրութիւնը, չէք յիշում մի զոհաբերութիւն, որի նպատակը լինէր այս կամ այն ճնշուած ազգութեանը ազատութիւն պարգեւել։ Գերմանիան սկզբից մինչեւ վերջ եղել է դաժան՝ թոյլերի դիմաց եւ այդ նոյն դաժանութիւնը նա պահպանել է նաեւ հայերի վերաբերմամբ։ Ապացոյց վերջին տարիների արիւնոտ անցքերը եւ Գերմանիայի բռնած ընթացքը... «Պոմերանեան մի գինուորի ոսկորները չեմ փոխիլ ամբողջ հայութեան հետ», ասում էր Բիսմարկ, եւ Գերմանիան մինչեւ օրս էլ հաւատարիմ է մնացել այդ անսիրտ դաւանանքին։

Սակայն հասարակական կարծիքը թէեւ խիստ դանդաղ, թեքւում է հետզհետէ դէպի հայերի կողմը։ Հայ ժողովրդի տառապանքները եւ հայ յեղափոխականների անձնազոհ ու հերոսական գործողութիւնները սկսում են արձագանք գտնել նաեւ գերմանական սրտերում։ Հայասէր պրոպագանդը այստեղ եւս կամաց-կամաց հարթում է իր ճանապարհը։ Այդ ուրախալի երեւոյթի նոր ապացոյցը կարելի է դիտել ամսոյս 6-ին եւ 26-ին Բերլինում՝ տեղի ունեցած «հայկական երեկոյթը» եւ հռչակաւոր Բերնշտայնի հրապարակական բանախօսութիւնը հայոց հարցի մասին։

I

Հայկական երեկոյթը տեղի ունեցաւ «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» նախաձեռնութեամբ Բերլինի յայտնի Germania *դահլիճում։ Ամէն ջանք գործ էր դրուած՝ այդ առաջին երեկոյթը գերմանացիների համար հետաքրքիր ու գրաւիչ դարձնելու եւ միեւնոյն ժամանակ նրա միջոցով հայոց անցեալի ու ներկայի մի ամփոփ պատկերը տալու։*

Այդ ջանքերը պսակուեցին կատարեալ աջողութեամբ. ներկայ էր մեծ բազմութիւն ամենաընտիր հասարակութիւնից. աչքի էին ընկնում տասնեակներով պրոֆեսորներ, ռայխստագի[35] *անդամներ, հրապարակախօսներ եւ ուրիշ հասարակական գործիչներ։ Երեկոյթին մասնակցում էին աչքի ընկնող ուժեր գիտական ու երաժշտական շրջաններից, օրինակ պրոֆ. Հարնակ, պրոֆ. Հալիր, դոկտ. Լեպսիուս, դոքտ. Ռօրբախ, կայսերական օպերայի երգչուհի Դեստինն, նկարիչ Նատէլ եւն։*

Երգուեցին նախ ազգային ու ժողովրդական երգեր, տրուեցին կենդանի պատկերներ, խօսուեցին ճառեր։

Առաջին ճառախօսն էր աշխարհահռչակ գիտնական պրոֆ. Հարնակ, որը հակիրճ ներկայացրեց հայոց եկեղեցու պատմութիւնն ու էութիւնը, շեշտելով գլխաւորապէս այն փաստը, որ հայերը կուլտուրական մի ժողովուրդ են, որը ամէնից առաջ իբրեւ ազգային ամբողջութիւն՝ ընդունել է քրիստոնէութիւնը եւ երկար ու ձիգ դարերի ընթացքում կռիւ է մղել իր լեզուն, կրօնը եւ ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար։

Դոկտ. Լեպսիուս, ...[44] *յայտնի գրքի հեղինակը խօսեց հայերի կուլտուրական դերի մասին Արեւելքում. երկար ծանրացաւ Հայաստանը բարեկարգելու անհրաժեշտութեան վրայ, ցոյց տուեց այն մեծ, անգնահատելի ծառայութիւնները, որ կարող են անել հայերը գերմանացիներին, սրանց խոշոր ձեռնարկութիւնների մէջ Արեւելքում։ Անատոլիայի երկաթուղին շինող ինժիներները միաբերան վկայում են, որ այդ գործի մէջ ամենաընդունակ աշխատաւորները հայեր են եղել։ Ուստի եւ,— եզրափակեց համակրելի ճառախօսը,— հայերը միանգամայն արժանի են Գերմանիայի հովանաւորութեանը։*

Դոկտ. Ռօրբախ, որ 3-4 անգամ ճանապարհորդել է Փոքր Ասիայում եւ լաւ ճանաչում է հայ ժողովրդին, համառօտակի ուրուագծեց հայի նահապետական կեանքը, նիստ ու կացը եւ շեշտեց այն միտքը, որ հայերը գլխաւորապէս երկրագործ ժողովուրդ են, աշխատասէր եւ ընդունակ։

Բերլինի բազմաթիւ լրագիրներ յօդուածներ նուիրեցին երեկոյթին, դրուատեցին հայ ուսանողների հայրենասիրութիւնը եւ շեշտեցին իրենց համակրանքը դէպի հայ ժողովրդի դատը։

II

Յունիսի 28-ին երեկոյեան մօտ 3,000 հանդիսականների առաջ Էդուարտ Բերնշտայն սկսեց իր բանախօսութիւնը։ Նրան լսում էին ամենախորին ուշադրութեամբ. Բերնշտայն այն սակաւաթիւ գլուխներից է, որոնք հասարակական-քաղաքական ամէն մի կնճռոտ պրոբլեմի հանդէպ անհրաժեշտ են սեպում՝ զինուել նախ եւ առաջ գիտական մտքին յատուկ մեթոտով, սեղմ, անողոք տրամաբանութեամբ եւ միանգամայն անաչառութեամբ։ Տաճկա-հայկական մթնոլորտում նշմարուող ամէն մի խոշոր երեւոյթ նա համեմատութեան էր դնում նոյն կարգի երեւոյթների հետ՝ արեւմտեան կեանքի անցեալում ու ներկայում։ Իրականութեան չոր ու պաղարիւն վերլուծումը տեղի էր տալիս երբեմնապէս զգայուն սրտի ցասման արտայայտութիւններին, երբ հարկաւոր էր ի տես դնել հայկական մարտիրոսութեան աղեխարշ էջերը եւ կամ նշաւակել Բիւլովի[45] *անարգ քաղաքականութիւնը։*

«Հայ ժողովրդին մենք չենք ճանաչում,— այսպէս սկսեց Բերնշտայն։ Նա հեռու է միջազգային հաղորդակցութիւնից եւ սրանից քիչ առաջ շատ շատերը եւրոպացիներից գաղափար անգամ չունէին նրա գոյութեան մասին։ Բայց հայ ժողովուրդը շատ հետաքրքրական է մեզ համար. հայկական հարցը մի մասն է արեւելեան մեծ խնդրի, որը դեռ պիտի շարունակէ խռովել միջազգային խաղաղութիւնը։ Թիւրքիայի ամբողջ վարչական սիստեմը մահ է միայն բերում հպատակ ժողովուրդներին, թիւրք ցեղը չի թողնում, որ ուրիշ ցեղերը առաջ գնան, որ առհասարակ կուլտուրան առաջ ընթանայ։ Նա աւերում է Հայաստանի պէս վայրերը, որոնք դրախտ կարող էին դառնալ։ Որո՞նք են արդեօք թիւրք ժողովրդի «լաւ յատկութիւնները», որ ոմանք շեշտում են յաճախ։ Նուաճող ազնուականութեան բարբարոս յատկութիւններն են դրանք — եւ ուրիշ ոչինչ։

Եթէ այլեւայլ ցեղեր թիւրքաց հպատակութեան տակ դարերի ընթացքում պահպանել են իրենց կրօնը եւ ազգայնական ստացուածքները — դա ապացոյց չէ տաճկական համբերողութեան, այլ միայն այն փաստի՝ որ թիւրք ցեղը իբրեւ նուաճող տարր՝ անընդունակ է եղել մարսել այլազաւան տարրերը։ Կայսերական-պապական բռնապետութիւն է Թիւրքիան. սուլթանը՝ նրա աշխարհական եւ միանգամայն կրօնական գլուխը։ Այդ իրողութեան վրայ է կառուցուած ամբողջ Տաճկաստանը եւ դրանից է հետեւում այն բացարձակ թշնամական դիրքը, որ բռնած է սուլթանը եւ առհասարակ մահմետականները դէպի ամէն քաղաքական առաջադիմութիւն։

44.- Գիրքին անունը յիշուած չէ. պէտք է ըլլայ "Armenien und Europa" (Berlin, 1896):

45.- Գերմանիոյ վարչապետ (կանցլեր):

Ճնշումը արտադրում է հակաճնշում։ Եւ հէնց որ մի ոեւէ քրիստոնեայ ժողովուրդ ապստամբում է, հէնց որ յեղափոխական կոմիտէներ են կազմակերպւում՝ ազգային ազատութեան գործը առաջ մղելու համար, վրայ են հասնում արիւնոտ ջարդեր, անզէն ու անմեղ մասսայի կոտորած... Այդպէս էր Յունաստանում, Մոլդաւ-Վալախիայում, Լիբանանում, Սերբիայում ու Բոլգարիայում. այդպէս էր Հայաստանում...»։

Բերնշտայն երկարօրէն ծանրացաւ Հայաստանի ներկայ վիճակի վրայ, նկարագրեց հայ ժողովրդի տընտեսական ու սոցիալական ծանր պայմանները՝ հարկային սիստէմը, փաշայական կամայականութիւնները, սովը, կառավարչական տեռորը։ Եւրոպան անտարբեր էր մնում նոյնիսկ ահռելի ջարդերի միջոցին եւ ահա հարազատ ժողովրդի յուսակտուր վիճակը տեսնելով՝ հայ յեղափոխականները մի թափով գրաւեցին Օսմանեան բանկը։ Ոչ ոքի չսպանեցին, այլ միայն ամրացան բանկի մէջ՝ Եւրոպային հարկադրելու համար։ Դրան հետեւեց դարձեալ կոտորած Պոլսում...

Բերնշտայն միաժամանակ խօսեց եւ պետութիւնների յարաբերութիւնների մասին, որոնք պայմանաւորել են հայկական ճգնաժամի ընթացքը. շեշտեց միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դերը հայկական խնդրում եւ ի վերջոյ մի տաք, կորովի կոչ ուղղեց հանդիսականներին։

«Մեզ այժմ հնարաւորութիւն է տրուած մեր ձայնը բարձրացնելու յօգուտ մի ժողովրդի, որի դէմ դանդաղ բայց յամառ կերպով մղւում է բնաջնջման կռիւը եւ ես յոյս ունեմ, որ ոչ մէկը չի գտնուի ձեր մէջ, որը չմտածէ, թէ մի անգամ ընդ միշտ պէտք է վերջ դնել Թիւրքիայում տիրող յոռի տնտեսութեան... Հնչեցնենք մեր բողոքի ձայնը եւ այնքան բարձր հնչեցնենք, որ նրա արձագանքները հասնեն պետական կանցլերի ականջին։ Հայերին պէտք է օգնութիւն տրուի. սուլթանական անարգ ռեժիմը պէտք է անհետանայ աշխարհի երեսից...»։

Դասախօսութիւնը շուտով լոյս պիտի տեսնի գերմաներէն լեզուով։ «Եւրոպ. Հայ. Ուսանող. Միութիւնը», որ այդ կոնֆերանսի նախաձեռնողն էր, մտադիր է նոյնը հրատարակել ֆրանսերէն եւ հայերէն։

«Դրօշակ», 1902, թիւ 6, էջ 106-108

Փաստ. 1462-170

Ա 22.– ԵՐԵՔ ՆԱՄԱԿ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՅՈՎՍԷՓԷՆ

Շարլոթենբուրգ 12 Նոյեմբ. [1902]

Սիրելի Խաչատո՛ւր,

Վաղուց է ինչ կամենում եմ գրել քեզ, մանաւանդ, որ դու էլ ո՛չ մի տեղեկութիւն չես տալիս,— սակայն, դժբախտաբար, չէր ու չէ յաջողւում. այժմ էլ ստիպուած եմ բաւականանալ հետեւեալ երկտողով կատարելով իմ պաշտօնական պարտականութիւնս։

Այստեղի կրթական ժողովի ամսոյս 8-ին կայացած երկրորդ նիստում ես կրկին ընտրուեցի Աշխատակիցանդամ, որ եւ յայտնում եմ ի գիտութիւն Կարգադիր յանձնաժողովի։ Ո՞նց էք, ի՛նչ էք անում. Միութեան մասին էլ բան չէ լսւում։ Ցաջողուե՞ց կամ յոյս (ի հարկէ հիմնաւոր) կա՞յ, որ ձեր ձեռնարկած բրոշիւրները եւ որ գլխաւորն է, «Մեծ ժողովածուն» երբեւէ լոյս աշխարհ տեսնեն...

Հա՛, այստեղ նորեկ ուսանողներ կան (կրթական խումբը ունի 14 անդամ. միւս խմբի մասին ո՛չ մի հաստատ տեղեկութիւն դեռեւս չունեմ. ասում են մի-երկու հոգի են). դոքա ցանկանում են մօտից ծանօթանալ Միութեան գործունէութեան հետ, հետեւաբար խընդրում են վերջին համագումարի արձանագրութիւնները. Արդեօ՞ք հնարաւոր չէք համարի այս արդարացի ցանկութեան բաւարարութիւն տալու. ուղարկէք գոնէ էական մասերի քաղուածքները — մանաւանդ որոշումները, եթէ պատրաստ չէ ամբողջ արձանագրութիւնը։

Է՛հ, ուրիշ ի՞նչ կայ, ինչպէ՞ս է առողջութիւնդ։

Գրի՛ր այս հասցէով՝
Berlin Charlottenburg, Goethe str. 70.
Gh (Gartenhaus) b/Müller։

Ջերմ ողջոյններս քեզ
Բարեւներ տղերանց։

Քո՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Փաստ. 1462-174

Ա 23.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. Մ. ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Շարլոթենբուրգ 1-ին Դեկտ. [1902]

Սիրելի ընկերնե՛ր,

Տեղւոյս հայ ուսանողները՝ Միութեան անդամները,– որոշել են նախկին ուղղութեամբ յառաջ տանել պրոպագանդայի գործը Բերլինում, ապա ուրեմն եւ Գերմանիոյ մէջ։ Այս տեսակէտից վճռուած է կազմել ձմեռուայ ընթացքում մի շարք հրապարակական դասախօսութիւններ ու սարքել անցեալ տարուայ նման գրական-երաժշտական երեկոյթ։ Վերջինիս, որպէս աւելի բարդ գործի, ձեռնամուխ ենք եղել ամէնից առաջ։ Որոշուած է երեկոյթը տալ Փետրուարին, որովհետեւ աւելի վաղ դահլիճ չկայ։

Երեկոյթը ընդհանուր առմամբ կը պահպանի անցեալ տարուայ բնաւորութիւնը. այս տարի առանձնապէս չեշտուեց ու որոշուեց աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել, աւելի շատ տեղ տալ հայկական ժամանակակից դրութեան վերաբերեալ նիւթերին։ Վճռուած է, ի միջի այլոց, հրաւիրել մի հեղինակաւոր անձն, որ կարդար մի դասախօսութիւն առանձնապէս մեր ներկայի մասին, հայկական հարցի մասին, անշուշտ, խուսափելով տալ իւր խօսքին որեւէ քաղաքական սուր բնաւորութիւն։ Արդէն անում ենք դիմումներ։ Երեկոյթի կազմակերպութեան մասնակցում են Միութեան բոլոր անդամները երկու տեղական ուս. խմբերից ու ո՛չ ուսանող հայեր ընդհանուր համաձայնութեամբ ու համերաշխութեամբ։

Թւում է, որ այս տարի որոշ կարգի դժուարութիւնների աւելի յաճախ հանդիպենք, քան անցեալ տարի. բանը նրանումն է, որ Բերնշտայնի դասախօսութիւնը ըստ երեւոյթին սարսափեցրել է հասարակութեան բարձր խաւերը՝ թէ իր անձնաւորութեամբ, որպէս սոցիալ-դեմոկրատ, եւ թէ դասախօսութեան «քաղաքական» բնաւորութեամբ. վերջին խօսքից պրուսսականները շատ են վախենում։ Ցամենայն դէպս մենք հաւատացած ենք, որ մեր ջանքերը ապարդիւն չեն լինելու եւ մենք հնարաւորութիւն կ'ունենանք հասնել մեր նպատակին առանց արտաքուստ «քաղաքական» գոյն տալու մեր երեկոյթին։ Միակ դժուարութիւնը ներկայումս նիւթական միջոցների պակասութեան մէջն է. գէթ մի փոքրիկ գումար անհրաժեշտ է սկզբնական ծախսերի համար (օր. որպէս գրաւական դահլիճի համար եւայլն). այս իսկ պատճառով, խնդրում ենք Միութեան գանձարանից փոխարինաբար ուղարկել մեզ գէթ 200 ֆրանկ։ Որոշուած է ամէն միջոց ձեռք առնել կանխելու որեւէ նիւթական վնաս, սակայն, ինչպէս անցեալ, այնպէս եւ այս տարի մեզ առաջնորդողը, մեր գլխաւոր նպատակը կը լինի երեկոյթի բարոյական նշանակութիւնը եւ ո՛չ նիւթական օգուտը։ Համոզուած ենք, որ դուք եւս, համամիտ էք մեզ, լիայոյս ենք նաեւ ձեր աջակցութեան վրայ։

Ընդունեցէք մեր ընկերական ողջոյնները։

Ի դէմս Բեռլինի միութեան անդամների՝
Աշխատակից-անդամ՝
ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

P.S. *Անդամների ցուցակը կ'ուղարկեմ հէնց որ պատրաստ եղաւ եւ ժողովեցի անդամավճարները։*

P.S. *Խնդրում ենք վերոյիշեալ գումարը մեզ հասցնել որչափ հնարաւոր է շուտ։ Իմ հասցէն՝* Berlin Charlottenburg, Goethe, str. 70 Gh b/Müller
Joseph Thadewossian.

Փաստ. 1462-180

Ա 24.– ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆԷՆ ԱԿՆՈՒՆԻՒՆ

Միւնխէն, 16-ին Դեկտեմբերի [1902]

Սիրելի Խաչատո՛ւր,

Ցաւով իմացայ նամակիցդ, որ դեռ եւս շարունակւում է տկարութիւնդ։ Վալիան՝ դեռ Բեռլին եղած ժամանակ, պատմել էր այդ մասին, սակայն ենթադրում էի, որ այժմ արդէն առողջացած ու կազդուրուած կը լինիս... Հետեւաբար թոյլ տուր ցանկալ քեզ շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն։ «Դրօշակ»ի վերջին համարը փայլուն կերպով ապացուցեց, որ նա այժմ «որբացել» է... ուրեմն աշխատի՛ր ամէն միջոցներ ձեռք առնելու շուտով առողջանալու։

Անցնելով Միութեան գործերին ամէնից առաջ պէտք է ասեմ, որ ի զուր են ձեր յոյսերը իմ եռանդի վրայ. նախ, որովհետեւ այս տարի ստիպուած եմ ամբողջովին *նուիրուել սեպհական պարապմունքներիս՝ անիծեալ պետական քննութիւններիս պատրաստուելուն, երկրորդ՝ այստեղի միջավայրը իսկապէս ոչ մի կերպ չէ կարող ծառայել որեւէ լուրջ գործունէութեան միակ բացառութեամբ, որ կարելի է մի-մի լաւ նիւթական ժողովարարութիւններ*[46] *անել. ուսանողների մեծամասնութիւնը անտարբեր էակներ են եւ բաւական զարգացած բուրժուական հակումներով, շնորհիւ իրանց նիւթական ապահովութեան։ Եթէ հնարաւոր լինէր գրել մանրամասնօրէն եւ միեւնոյն ժամանակ որեւէ արժէք ունենար զբաղուել սոցանով, կարելի էր բերել շատ փաստեր, սակայն բաւականանում եմ հարեւանցիօրէն յիշելով, որպէս նմուշ, հետեւեալ փոքրիկ բնորոշ փաստը. անցեալ օր վերջապէս կայացաւ երկրորդ նիստը. ի միջի այլոց առաջարկեցի բերել տալ* "Aurore"*-ը*[47] *6 ամսով. դա առիթ տուեց վիճաբանութեան. հարկաւոր էր լսել այդ առարկութիւնները, որպէսզի մարդ համոզուէր, որքան խեղճերը հոգեպէս բորբիկ են...* Նիշչիէ դուխոմ![48] *Ես ստիպուած մի երկու սուր դիտողութիւններ արի, սակայն ինչ օգուտ «սեւին՝ սապոնը, խեւին՝ խրատը...»։ Առաջարկութիւնը չանցաւ...*

Գալով «Մեծ ժողովածու»ի հարցին, իմ կարծիքս ուցանկութիւնս է տեսնել այդ ժողովածուն հեռու որեւէ նմանութիւնից Փափազեանների հրատարակած «ժողովածու»ներէն... Ինձ թւում է, որ այդ «ժողովածու»ն պիտի լինի հաւաքումն լուրջ (եթէ անհնարին է ասել՝ գիտական) յօդուածների հայկական հարցի, հայ գրականութեան, պատմութեան ու կեանքի մասին եւ ո՛չ հաւաքումն կամ դիլլէտանտ[49] *գրուածքների կամ մոմենտի համապատասխան պրոպագանդական ուղղութեամբ գրուածքների. թո՛ղ թէ դոքա գրուած լինին անգա՛մ մեծ շնորհքով, ոգեւորուած եւայլն։ Ինձ թւում է, թէ այդ ժողովածուի հրատարակութիւնը արդարացնող ու պայմանաւորող միակ նպատակը պիտի լինի տալ պատասխան հարցիս՝ «ո՞վ է հայը, ի՞նչ է հայութիւնը» այն օտարին, որ իսկապէս հետաքրքրւում է հայութեամբ եւ ցանկանում է գոնէ մի ընդհանուր գաղափար կազմել եւ միեւնոյն ժամանակ ճանապարհ գտնել աւելի մօտ ծանօթանալու հայկական կեանքի հետ։ Իսկապէս Ձեր «ծրագիրը» եւս կազմուած է հէնց այս ուղղութեամբ, սակայն գլխաւորը՝ նորա գործադրութեան եղանակից ու տեսակից է կախուած։ Իսկ այս ամբողջովին կախուած է Ձեզանից։ Մի փոքրիկ նկատողութիւն եւս. եթէ «ծրագրի» 16-րդ կէտը փոխարինուէր կամ եթէ այդ անհնար է, այն ժամանակ աւելացուէր իբրեւ 19-րդ կէտ հայկական գրականութեան։*

Այստեղ ուսանողների մէջ տիրում է չափազանցութեան հասցրած եւ բաւական խրթին սովորութիւն ամենաչնչին ծախսերի [առթիւ], ստանալիքների համար ներկայացնել անդորրատետր։ Հետեւաբար, եւ դու, բարի եղիր ուղարկելու ինձ մի պաշտօնական ծանուցումն, այդ «խոշոր» գումար՝ 156 մարկի ստանալու մասին։

Է՛, ի՞նչ կայ, ինչ չկայ ձեր շրջանում. ինչո՞ւ ոչինչ չէք գրում։ Արդեօ՞ք Ձեր չափազանց գեղեցիկ եւ մեծ ձեռնարկները (այդ յատկութիւնների համար հէնց մարդ վախենում է, որ կարող են գլուխ չգալ...). իրանց զարգացման ո՞ր աստիճանումն են գտնւում. Մի-մի յիշեցրէք Ձեր գոյութեան եւ գործունէութեան մասին, թէ չէ մենք էլ կարող ենք մոռանալ Ձեզ...

Առաջի ժողովից յետոյ էլ ժողով չէ եղել, որպէսզի ներկայ սեմեստրի անդամների թիւը որոշէի եւ յայտնէի։ Իսկապէս չեմ կարող էլ ասել՝ ժողով էլի լինելու է թէ ո՛չ։ Ըստ կանոնադրութեան ժողովներ տեղի են ունենում երբ կան դասախօսութիւններ, իսկ որովհետեւ ոչ ոք չէ գրում եւ տրամադրութիւն էլ ցոյց չէ տալիս

46.- Հանգանակութիւններ։
47.- Փարիզ հրատարակուող ֆրանսական թերթ։
48.- Բնագրին մէջ ռուսատառ՝ հոգիով աղքատներ։
49.- Ոչ գիտական, անհմուտ, սիրողական։

գրելու, ուստի եւ որոշ ոչինչ չէ կարելի ասել։ Ինչեւէ՛։ Ընդունիր ջերմ ողջոյններս։

Հասցէս սոյնն է՝
Schwind str. 29/I.r.

Քո ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆՑ

P.S. Մոռացայ գրելու, որ կոնֆերանսներ գումարելու մասին առանձնապէս խօսեցի Աղասէրի եւ Քիւրմչեանի հետ, եւ բացի այդ անցեալ ժողովում այդ հարցը եւս շօշափուեց. ո՛չ մի կերպ չենք կարողանում գտնել մի մարդ, որ իսկապէս կարողանար եւ յանձն առնէր այդպիսի մի կոնֆերանսում հանդէս գալու. իսկապէս Գերմանիան այդ կողմից շատ աննպաստ է մեզ համար. լուր կայ որ Բերլին ուզում են Բէրնշտայնին հրաւիրել. եթէ նոցա այդ յաջողուեց, այն ժամանակ մենք եւս կը դիմենք, որ նոյն դասախօսութիւնը գայ այստեղ հէնց յաջորդ օրը կարդայ։ Տեսնենք. դա դժուարին հարց է. գերմաներէն լաւ իմացող էլ մեր մէջ չկայ. այդ էլ մի ցաւ է եւ արգելք որոշ չափով։

Փաստ. 1463-1

Ա 25.– ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆԵԱՆԷՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Եւրոպ. հայ Ուս. միութեան
Մեծարգոյ կոմիտէին

Ստանալով կարգադիր յանձնաժողովի բացասական պատասխանը մեր խնդրի վերաբերմամբ, եւ նկատելով, որ այլապէս անկարող է տեղւոյս ուս. խումբը սուղ միջոցներով «Հայկ. երեկոյթ» տալու, բարւոք համարեց, գոնէ առայժմ յետաձգել այդ մտադրութիւնը աւելի բարեպատեհ րոպէների եւ վճռեց անպատճառ յաջողեցնել մի կոնֆերանս կազմակերպելու։ Մենք որոշեցինք Լայպցիգ հրաւիրել հռչակաւոր Ա. Բեբելին։ Սակայն այս խնդրում մենք մեծ յոյսեր ունինք Ձեր օգնութեան վրայ, իբրեւ պաշտօնական մարմնի եւ ընդհանուր գործը ղեկավարող օրգանի, եւ այդ է պատճառը, որ Բեբելին պաշտօնապէս դիմելու եւ Լայպցիգ հրաւիրելու նախաձեռնութիւնը թողնում է Լիազօր կոմիտէի բարեհաճ կարգադրութեան։

Մենք խնդրում ենք Ձեզ, դիմել Բեբելին եւ յայտնելով մեր՝ Լայպցիգի ուսանողներիս ցանկութիւնը, խնդրել մօտիկ ապագայում այստեղ հայկ. հարցի վերաբերող մի բան խօսելու։ Մենք շատ շանսեր ունինք դրական պատասխան ստանալու, ի նկատի ունենալով նրա համակրանքն ու սիրալիր վերաբերմունքը դէպի մեր շարժումները։ Թոյլ տուէք նաեւ յիշեցնելու, որ թերեւս կարեւոր լինի, եթէ կոմիտէն իւր հրաւիրագրի մէջ յիշատակէ վերջերս «միութիւնից» շրջաբերականով յայտարարուած այն քաղաքների եւ անձնաւորութիւնների անունները, ուր եւ որոնց աջակցութեամբ դասախօսութիւններ պիտի կարդացուին։

Այդ բանը գլուխ բերելու ժամանակը կախուած է Բեբելի ցանկութիւնից, թէ երբ նա ժամանակ կ'ունենայ Լայպցիգ այցելելու յատկապէս այդ առթիւ, այնպէս որ այս կէտի համար եւս շեշտելու է, որպէսզի մենք ըստ այնմ շարժուենք։

Այժմ մնում է մեզ խնդրել Ձեզ, որ մեր խնդիրը Ձեր կողմից յարգուելուց եւ դիմելուց յետոյ, աշխատել մեզ շուտ պատասխանել։

Լայպցիգը մէկն է այն քաղաքներից, ուր տասնեակ տարիներից ի վեր մեծ քանակութեամբ հայ ուսանողներ են սովորում, ունենալով նաեւ իրենց ակադեմիական ընկերութիւնը, եւ մինչեւ օրս զլացել է որեւէ երեկոյթ յայտնի խնդրի առթիւ մի կոնֆերանս կազմելու. սա եւս աւելի քան ամօթալի երեւոյթ է, որ երբեք պատիւ չէ բերում մեզ։

Կարգադիր յանձնաժողովը նկատում է, թէ ինչու մի խումբ ուսանողներ են ձեռնարկում այդ բանին եւ ոչ բոլորը։ Հարցը իսկապէս շատ իրաւացի է, սակայն իրերի դրութիւնը մի այնպիսի անհաշտ բնաւորութիւն ունի, որ միանալ, գոնէ այժմ, այս խնդրում, շատ դժուար է։ Միւս կողմից էլ, թող հաւատացած լինի մեծարգոյ կոմիտէն, որ այս քայլն անողը բացառապէս «միութեան» անդամներն են, իսկ դուրսը մնացած պարոններից մեծ մասը դժբախտաբար ոչ մի առնչութիւն չունին առհասարակ ուսանող. շարժումների հետ։ Այս տեսակ տխուր երեւոյթը անսովոր բան չէ մեր մէջ՝ ուսանող. խմբերում։

Ի դիմաց տեղւոյս ուսանողական խմբի՝
Ընկեր. յարգանքներով՝
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Leipzig, Hain. Str. 14III r. B. Ishhanian

Լայպցիգ, 1903 5/I

Փաստ. 1463-3

Ա 26.– ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԷՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ-ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 17/30 Յունուար 1903

Եւրոպայի հայ-ուսանողական միութեան, Ժընեւում

Յարգելի պարոններ,

Ստացած եմ Ձեր 30 Դեկտ. N 705 նամակը։

Թէպէտեւ ես չափազանց ծանրաբեռնուած եմ ամէն հայաբնակ քաղաքներից ինձ եղած դիմումներով եւ ես բնականաբար հնարաւորութիւն չունիմ ամէն տեղի եւ ամէն տեսակի կարօտութիւնները գոհացնելու, բայց քանի որ դուք առաջին անգամն է, որ դիմում էք ինձ, չէի կարող մերժել։ Ուստի ուղարկում եմ ներփակեալ մի չէքով 3000 ֆրանք եւ յուսամ թէ ձեր ձեռնարկած հաւաքածոն կը համապատասխանէ մտադրուած բարի նպատակին։

Ընդունեցէք խորին յարգանքս
Ա. ՄԱՆԹԱՇԵԱՆ



Փաստ. 1267-43

Ա 27.– ՍԻԱՄԱՆԹՈՅԵՆ ՍԻՄՈՆ ՉԱՒԱՐԵԱՆԻՆ

1903 թուականին Սիամանթօ Փարիզ էր. իրրեւ ազատ ունկնդիր կը հետեւէր Սորպոնի գրականութեան դասընթացքներուն եւ սկսած էր իր բանաստեղծութիւնները լոյս ընծայել «Դրօշակ»ի մէջ: Իր խնդրանքը՝ ուղարկուած բանաստեղծութիւնը ձօնելու Ղարիպին, այսինքն Աւետիս Ահարոնեանին, արդարեւ գործադրուած կը տեսնենք թերթի նոյն տարուան թիւ 6-ին մէջ (էջ 83-84):

Յաջորդը՝ փաստ. 1167-89, բացիկ մըն է դարձեալ ուղարկուած Փարիզէն Քրիստափոր Միքայէլեանի կողմէ 21 Դեկտ. 1903ին. թուականի կողքին «Ժընեվ»ը բացայայտ սխալ է, անուշադրութեան հետեւանք (բացիկը պատկերացնող նկարը՝ Հանրապետութեան յաղթանակը, փարիզեան է, իսկ դրոշմանիշը՝ ֆրանսական): Արդարեւ օր մը առաջ Քրիստափոր մեկնած էր Ժընեւէն դէպի Փարիզ, ուր ղրկած էր իր կինը՝ Ժենիան եւ մանչուկը՝ Ռուբէնը. վերջինս կարօտ էր բժշկական խնամքի, իսկ ինք՝ Քրիստափոր ճամբայ ելած էր ուղեւորուելու համար Սոֆիա, ուր ի մօտոյ պիտի գումարուէր Հ. Յ. Դաշնակցութեան Երրորդ Ընդհ. Ժողովը: Գրութեան մէջ յիշուած Վալիան՝ Արեւմտեան Բիւրոյի անդամ բժ. Յովհ. Լորիս-Մելիքեանն է, Արեւմտեան Եւրոպայի մէջ հայ դատի քարոզչութեան պատասխանատուն:

Բացիկին ձախ կողմը՝ այդ օրերուն «Դրօշակ»ի խմբագրութիւնը վարող Սիմոն Զաւարեանին ուղղուած գրութիւնն է Սիամանթոյի կողմէ, բուն անունով՝ Ա. Եարճանեան ստորագրութեամբ:



27 Յուլիս 1903

Յարգելի պարոն Զաւարեան,

Կը խնդրեմ, որ եթէ ուշ չէ արդէն, «Զոյզումին քափօր»ին տակը պզտիկ տառերով հետեւեալը աւելցնել տալ հաճիք.

ՂԱՐԻՊԻՆ ՀԱՄԱՐ

Մտադիր էի ուրիշ բանաստեղծութիւն մը նուիրել իմ մեծ բարեկամիս ու վարպետիս, բայց զայն յարմար չի գտայ: Նախամեծար պիտի սեպեմ «Զոյզումին քափօրը» նուիրած ըլլամ: Կը խնդրեմ որ ուշադրութեան առնէք այս փոքրիկ պահանջս:

Ձեզ յարգող՝
Ա. ԵԱՐՃԱՆԵԱՆ

Փաստ. 1167-89

Ա 28.– ՔՐԻՍՏԱՓՈՐԷՆ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՈՅԵՆ ՉԱՒԱՐԵԱՆԻՆ

21 Դեկտ. 1903, Ժընեւ

Սիրելի՛ք, երէկ սաղ-սալամաթ տեղ հասայ: Ռուբէնը լաւանում է. այսօր ¼ ժամով դուրս տարայ ման գալու եւ իրեն լաւ էր զգում: Տեսայ մի քանի տղերանց: Ուզում են «Դաշնակցութեան» Բ. Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնները: Ուղարկեցէք 10 հատ «Ծրագիր». ինչ որ կայ նրա մէջ բաւական է. բաց թողած կէտերը ես կը բացատրեմ: Բացի դրանից՝ ուղարկէք հայդուկային խմբերի լուսանկարներից 2 հատ: Դա հարկաւոր է «Հայրենիքի» կլիշէի համար: Ժենիան, Վալիան եւ Ռուբէնը բարեւում են:

Ձեր Ք. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Յարգելի պարոն Զաւարեան,

Կը խնդրեմ ընտրեցէք հայդուկային խմբի այն պատկերներէն որոնք բոօֆիլ նկարուած են. եթէ չի կայ խումբերուն մէջ, ուրիշ ոեւէ հայկական տիպարի մօտեցող նկար ղրկեցէք. միշտ նախամեծար սեպելով բոօֆիլը:

Յարգանքներով՝
Ա. ԵԱՐՃԱՆԵԱՆ

Այս անգամ «Դրօշակ»ները 10 կամ 20 թիւ աւելի ղրկեցէք որովհետեւ Բարիզը այժմ փոխուած է...:

Փաստ. 1464-3

Ա 29.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Լիազօր Կոմիտէի եւ Կարգադիր Յանձնաժողովի անդամներից շատերի բացակայութիւնը (մէկը՝ Ռուսաստան, երկուսը՝ Կովկաս, եւ մէկը՝ Ամերիկա) զգալիօրէն խանգարեց «Միութեան» գործերի կանոնաւոր ընթացքը՝ ներկայ ձմերային շրջանում:

Այդ հանգամանքը, տարաբախտաբար, ազդեց եւ ներկայ տարուայ Համագումարի հրաւիրման վրայ,– Ժընեւ մնացած անդամները, բաւարար թիւ չկազմելով՝ անկարող եղան ժամանակին որոշել, կարգադրել եւ հրաւիրել 1904 թուի Կոնգրէն, որը՝ ըստ սովորութեան՝ տեղի պիտի ունենար ապրիլի 1-ին: Մի ամսուայ ընթացքում, որ մենք ունենք մեր առաջ, անհնարին է տարածել հրաւէրները Եւրոպա, Ամերիկա եւ Ռուսաստան, գումարել տեղական ժողովները, պատրաստել քննուելի խնդիրների եւ դասախօսութիւնների ցանկը, ինչպէս եւ Տեղեկագիրն ու գործունէութեան ծրագիրը, եւ այդ պատճառով ստիպուած եղանք ներկայ թուի Համագումարը նշանակել սեպտեմբերի 25ին, երբ համարեա բոլոր տեղերի ուսանողները օգտւում են արձակուրդներից: Աւելի շուտ, այն է յուլիս-օգոստոսին, անկարող ենք այդ անել, քանի որ գերմանական ընկերները այդ միջոցին ազատ չեն:

Համագումարի նախապատրաստութիւնները տեղի կ՚ունենան ժամանակին:

Ընկերներ,

Թէեւ չափազանց անախորժ է, բայց պէտք է խոստովանենք բոլորս, որ անցեալ ձմերային շրջանը, ամենայարմար միջոցը պրոպագանդի եւ հայոց հարցին նուիրուած դասախօսութիւնների համար, անցաւ *ամուլ* եւ անպտուղ: Ուսանողական տեղական մարմինները, որոնք անցեալ ձմեռ կազմակերպեցին զանազան երկրներում մօտ տասն դասախօսութիւններ՝ նուիրած մեր դատին, այս տարի ցոյց տուեցին անընմբռնելի անկարողութիւն: Ոչ մի մարմին նախաձեռնող չհանդիսացաւ: Արդեօ՞ք ուսանող երիտասարդութիւնը, որ ինքնագործունէութեան եւ նախաձեռնութեան օրինակներ պիտի տայ, սպասում էր որեւէ կողմից յորդոր, պահանջ, մի խթան: «Միութեան» գանձարանը անցեալ տարի դրամ չխնայեց հրապարակական դասախօսութիւնների համար, եւ նոյնը պատրաստ էր անել այս ձմեռ եւս: Դասախօսներ, մեր հարցին համակրող եւրոպացիների շրջանում, շատ կան: Հետեւաբար, այս *ամուլութիւնը* հետեւանք է ոչ թէ արտաքին պարագաների... այլ միմիայն ուսանողական մարմինների անհոգ եւ անտարբեր վերաբերմունքին, որ *կրկնակի* պախարակելի է ներկայ րոպէներին, երբ հայկական կեանքի շուրջը կատարուող ողբերգութիւններ աւելի եւ աւելի հրամայական են դարձնում *բողոքի* եւ *պրոպագանդի* գործը:

Նոյն անհոգութիւնն է նկատւում եւ գրական աշխատանքի կողմից: Դեռ անցեալ տարի ընկերական հրաւէր կարդացինք հայ ուսանողութեան՝ նպաստել «Ազատ-Գրադարանին»՝ թարգմանութեամբ յեղափոխական գրքոյկների, որոնք բազմաթիւ են եւրոպական գրականութեան մէջ: Ոչ մի արձագանք: Մինչեւ այժմ՝

արել էր ինքը՝ Լիազօր Կոմիտէն, կամ պատրաստել Ժընեւում: Մինչդեռ, եթէ «Միութեան» մօտ 400 անդամների կէսը, կէսի կէսը, տարուայ ընթացքում մի բրոշիւր թարգմանէր, բաղկացած 30-40 երեսից, ուրիշ խօսքով՝ նուիրէր մայրենի գրականութեանը օրական հինգ րոպէ, մենք կարող կը լինէինք գրքի ծարաւից պապակող հայ ժողովրդին տալ տարեկան 100 գրքոյկ, եւ տպագրելով իւրաքանչիւրը 2-3 հազար օրինակ, երկու տարուայ ընթացքում կը մտցնէինք մեր երկիրը աւելի քան կէս միլիոն բրոշիւր, մի քանակ, որ կը հեղեղէր հայկական աշխարհը մի ծայրից միւսը...

Ինչ չենք արել ցայժմ, անենք գէթ այժմ:

Խնդրում ենք տեղական մարմիններին՝

1) Պատրաստել եւ ուղարկել մեզ՝ վիճակագրական տեղեկութիւններ ուսանողների թուի եւ մասնագիտութեան մասին, «Տեղեկագրի» մէջ մտցնելու համար.

2) Ուղարկել տարեկան անդամավճարները՝ մինչեւ ապրիլի վերջը.

3) Հասցնել Կարգադիր յանձնաժողովին այն բոլոր ապառիկները, որոնք մնում են ուսանողական տեղական խմբերի վրայ.

4) Ընտրել աշխատակից անդամներ եւ նորոգել հասցէները, կանոնաւոր յարաբերութիւնների համար.

«Միութեան» դրամական հաշիւների մասին տեղեկութիւններ ստանալ ցանկացողները պէտք է դիմեն Կարգադիր յանձնաժողովի գանձապահին: Իսկ հայերէն եւ օտար լեզուներով հրատարակութիւնները ստանալու համար պէտք է դիմել Լիազօր Կոմիտէին:

ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ
ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1904, փետրուար 25
Ժընեւ

Adresse: Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève (Suisse).

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺԻՆ Բ.

Այս բաժինը յատկացուած է 1905 թ. Զուիցերիոյ Պեռն քաղաքին մէջ կայացած Ուս. միութեան 6րդ համագումարին, որ պիտի ըլլար վերջինը դժբախտաբար, որովհետեւ վերջին տարիներուն միութիւնը անգնահատելի ծառայութիւն մատուցած էր հայ դատի եւրոպական քարոզչութեան եւ կը գտնուէր ծաղկման այնպիսի շրջանի մը մէջ, որ դեռ սպասելիքներ կարելի էր ունենալ:

Բաժնի գլխաւոր փաստաթուղթերն են՝

1.- Թիւ 1465-77: «Համարատուութիւն Եւրոպայի հայ ուսանողական միութեան», 1905 թ. (Ակնունիի ձեռագրով 22 էջ):

2.- Թիւ 1465-54: «Ատենագրութիւն [Եւրոպայի] հայ ուսանողական վեցերորդ համագումարի, 1905» (ձեռագիր 48 էջ):

3.- «Մանիֆեստ»: Մէկ էջնոց տպագիր յայտարարութիւն, ստորագրուած «համագումարին մասնակցող սոց.-դեմոկրատ պատգամաւորներ եւ անդամներ»:

1903-1904ին կարելի չէ եղած համագումարներ կայացնել. հետեւաբար Խ. Մալումեան-Ակնունիի տեղեկագիրը կ՚ընդգրկէ միութեան 1902-1905 տարիներու գործունէութիւնը: Մանրամասն տեղեկատուութենէն ի յայտ կու գայ, որ 1901 թուին սկիզբ առած աշխատանքները , աւելի մեծ թափով եւ ընդլայնուած չափերով, կը շարունակուին,– ուսանողական ներքին դասախօսութիւններ, հայ դատի բանաւոր եւ գրաւոր քարոզչութիւն, մեծաթիւ եւրոպացի բարեկամներու ներգրաւում, միջազգային համաժողովներուն հայկական հարցի արծարծում, հայերէն եւ օտարալեզու հրատարակութիւններ եւայլն:

Վեցերորդ համագումարի արձանագրութիւններուն մէջ մեծ տեղ կը գրաւեն կարդացուած դասախօսութիւններուն առթիւ ծագած սուր հարցերը՝ հայ կեանքը յուզող օրուան հրատապ խնդիրներուն մասին: Վիճող կողմերու միջեւ լարուածութիւնը կը սաստկանայ յատկապէս սոցիալ-դեմոկրատ Բ. Իշխանեանի «Թիւրքահայկական խնդրի դիպլոմատիական դրութիւնը» եւ դաշնակցական Տիգրանեան-Խզմալեանի՝ «Յեղափոխական կուսակցութիւններ եւ Կովկասը» դասախօսութիւններու քննարկման առիթներով, յանգելու համար փոխադարձ ծանր ամբաստանութեանց՝ արձակուած թէ՛ Կովկասի եւ թէ Թուրքիոյ մէջ երկու կուսակցութեանց վարած քաղաքականութեան դէմ:

Իրականութեան մէջ այս տաք մթնոլորտը ստեղծուած էր արդէն ժողովէն դուրս, համագումարի կազմակերպման օրերուն, երբ Բ. Իշխանեան (կը յիշուի նաեւ Ստ. Շահումեանի անունը) Պերլինի ուսանողական խումբին մէջ կ՚աշխատէր առաւելագոյն ձայներով ներկայանալ համագումարին եւ յաջողցնել Եւրոպայի հայ ուս. միութեան կազմալուծումը: Այս խուլ պայքարին մասին կը վկայեն համագումարի նախօրեակին իր շտապողական գրութիւնները Կարգադիր յանձնաժողովին, ինչպէս նաեւ Լիպ. Նազարեանցի նամակը Ակնունիին: Փաստօրէն Պերլինը, իւրաքանչիւրը «մի խումբ ուսանողների կողմից», կ՚ընտրէ երկու պատգամաւոր, սոցիալ-դեմոկրատ Բ. Իշխանեանը եւ դաշնակցական Մ. Վարանդեանը, որոնք անունը, ի դէպ, չենք գտներ ո՛չ համագումարին մասնակիցներու անուանացանկին եւ ոչ ալ ժողովի արձանագրութեանց մէջ:

Ի վերջոյ համագումարի 14րդ նիստին «Բերլինի ուսանողութեան մի մասի ներկայացուցիչ պ. Իշխանեան» ուղղակի կը դնէ միութիւնը կազմալուծելու խնդիրը, պատճառաբանելով, որ անոր մէջ «արդէն գոյութիւն ունեն երկու որոշ կուսակցութիւններ՝ տարբեր ուղղութեամբ գործող, որոնք գործունէութեան ժամանակ անպայման պիտի տարբեր ճանապարհների դիմէին»: Վիճաբանութիւնները կը շարունակուին յաջորդ նիստին ընթացքին եւ սոցիալ-դեմոկրատներու առաջարկը մեծամասնութեան ձայնով կը մերժուի, որուն վրայ անոնք 7 պատգամաւորներով (ընդհանուր 51ի վրայ) կը հեռանան համագումարէն հրատարակութեան տալով «մանիֆեստ» մը, որմով կը յայտարարէին թէ «բացարձակապէս անկարելի է... նացիոնալիստ (դաշնակցական եւ հնչակեան) ուսանողութեան հետ որեւէ գործի մէջ իրական գործակցութիւն ունենալ»:

Հակառակ համագումարը լքողներու փոքր թիւին, ուսանողական շարքերուն մէջ յառաջացած պառակտումը յայտնապէս չարաբաստիկ հետեւանքներ պիտի ունենար Ուս. միութեան յետագայ կեանքին ու գործունէութեան մէջ: Վերջինս թէեւ որպէս այդպիսին ժամանակ մը եւս պահեց իր գոյութիւնը, բայց հետզհետէ տկարանալով՝ շիջեցաւ:

Փաստ. 1465-2

Բ 1.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Հայրենիքից եկող լուրերը ստիպում են մեզ՝ դարձեալ մի անգամ յիշեցնելու, որ անհրաժեշտ է վերսկսել հրապարակական *դասախօսութիւնները*, կազմուած եւրոպացիների ձեռքով եւ նուիրուած հայոց դատին: Դա կարեւոր է մանաւանդ Գերմանիայում, ուր հասարակաց կարծիքը ջերմ հրաւէրների է կարօտ հետաքրքրուելու այն ողբերգութեամբ, որը կատարւում է Փոքր Ասիայում: «Միութեան» դրամարկղը, ինչպէս միշտ, պատրաստ է նիւթապէս օգնելու գործին եւ ուրեմն Գերմանիայի մեր ընկերները՝ առանց դժուարութեան՝ կարող են ձեռնարկել կոնֆերանսների կազմութեան:

Հայ ուսանողութիւնը ունի կատարելու բարոյական մի այլ պարտք: Սասուն եւ Մուշ տիրում է սով: Ազատութեան համար կռուող ժողովուրդը, ոչ միայն զէնք չունի, այլ չունի հաց ու ապաստարան: Համալսարանական հայ երիտասարդութեան փոքրիկ աջակցութիւնը, դրամական հանգանակութեամբ, կը լինի ոչ միայն նիւթական նպաստ կարօտեալներին, այլեւ բարոյական յենարան, որին այնքա՜ն կարօտ է կռուող երկրի բնակչութիւնը: Սասունի ապստամբութեան տասնամեակն է: Ժողովներ կազմենք: Յիշենք քաջարի լեռնականների ցաւերն ու վէրքերը եւ անենք ու տանք, ինչ կարող ենք:

1) Լոյս տեսաւ «Հայաստանի քարտէզը», հայատառ, գեղեցիկ կազմով, գինը մի ֆրանկ: Այդ ծայրայեղ էժանութեան նպատակն է՝ միջոց տալ, որ ամէն մի գրագէտ հայ, ամէն մի ընտանիք ձեռք բերի քարտէզը – հայրենագիտութեան այդ անհրաժեշտ միջոցը: Քարտէզը մուտք գտաւ եւ Ռուսաստան:

2) «Միութեան» հայերէն եւ օտար լեզուներով արած հրատարակութիւնները՝ 1) Ազատութեան երգեր, 2) Ապստամբ Սասունը, 3) Հայրենասէրի տաղերը, 4) Հայուհիներին, 5) Հերոսը, 6) Լեռան ռազմիկը, 7) Մարկ Բոցարիս, 8) Հայկական ռեֆորմների ծրագիրը, 9) Բերնշտայնի Les souffrances du Peuple arménien et le devoir de l'Europe, 10) Վանդալի Les Arméniens et la Réforme de la Turquie, 11) Պրէսանսէի L'Arménie et la Macédoine, 12) Բրանդեսի L'Arménie et l'Europe, 13) Sassoun, 14) Բերնշտայնի Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas, 15) Դը Կօնստան, Գօշէն, Պրէսանսէ, Ժօռէս, Լրոօլ, Լրրուա-Բօլիօ Fur Armenien und Macedonien, 16) Բրանդեսի Armenien und Europa, 17) Ֆրապանի Die armenische Frage եւ 18) Սասունի քարտէզը (ֆրանսերէն) տարածւում են, պրոպագանդի համար, ձրիաբար: Յեղափոխական կազմակերպութիւնները կարող են ստանալ այդ հրատարակութիւնները ձրի, եւ վաճառելով՝ արդիւնքը մտցնել իրենց դրամարկղի մէջ, յօգուտ հայկական դատի:

3) Խնդրում ենք ձեռնհաս ընկերներին՝ ձեռնարկել յեղափոխական գրքոյկների թարգմանութեան: Ցանկացողներին տրւում է հոնորար:

4) Պատրաստւում է Կիլիկիայի եւ հայկական նահանգների մանրամասն քարտէզը, լատիներէն գրերով:

5) Համագումարը տեղի կ՚ունենայ ապրիլի 1-ին: Հրաւիրում ենք ուսանողական մարմիններին՝ վաղօրօք անդամագրել բոլոր ընկերներին, ուղարկել մեզ ցուցակներն ու անդամավճարները եւ պատրաստուել մասնակցելու տարեկան կոնգրէսին: Տեղը եւ մանրամասները կը յայտարարուին ժամանակին:

Ընկերական բարեւներով՝
ԼԻԱԶՕՐ ԿՈՍԻՏԷ

1905, յունուար 10, Ժընեւ

Adresse: Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève (Suisse).

Փաստ. 1465-8

Բ 2.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Ներկայ տարուայ Համագումարը կը կայանայ ապրիլի 1-ին, Շվէյցարիայի Բերն քաղաքում:

Այդ առիթով խնդրում ենք բոլոր ուսանողական մարմիններին.
1) Հրաւիրել ժողով եւ ընտրել պատգամաւորներ (Կանոնադր. յօդ. 10):
2) Որոշել այն հարցերը, որ ցանկանում են ենթարկել Համագումարի քննութեան:
3) Ուղարկել մեզ՝ Համագումարին դասախօսել ցանկացող ընկերների անունները, ինչպէս եւ դասախօսութեան վերնագիրը (յօդ. 18):
4) Ուղարկել վիճակագրական տեղեկութիւններ, «Տեղեկագրի» մէջ մտցնելու համար:
Այդ բոլորը պէտք է հասցնել ոչ ուշ քան մարտի 20-ը, որպէսզի կարող լինենք «Օրակարգը» պատրաստել:
Պարտք ենք համարում աւելացնել, որ Համագումարը բանալու համար՝ անհրաժեշտ է ուսանողական մարմինների գոնէ պարզ մեծամասնութեան մասնակցութիւնը:

Ընկերական բարեւներով՝
ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ

1905, մարտի 1
Ժընեւ

Adresse: Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève.

Փաստ. 1465-69

Բ 3.– ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆԵԱՆԷՆ ՉՈՐՍ ՆԱՄԱԿՆԵՐ ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷԻՆ ԵՒ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Ցարգելի ընկերներ!

Ըստ շրջաբերականի հարցերի, պատասխանում ենք Ձեզ հետեւեալը.
2-րդ կէտին.—
ա. Միութեան գոյութեան խնդիրը
բ. Ժողովածուի հրատարակութեան խնդիրը
3-րդ կէտին.— Դասախօսութիւն՝ «Թուրքահայ խնդրի դիպլոմատիական դրութիւնը» — Բ. Իշխանեանի։
[4-րդ կէտին.— Բերլինի հայ ուսանողներ։]

1. Մարգարեան Վարդան, Ախալքալաք, Բէալ դպ., բժշկութիւն։
2. Մելիք Կարակոզեան Գասպար, Թիֆլիս, Բէալ դպ., քիմիա։
3. Ցովհաննիսեան Ցակոբ, Շուշի, թեմ. դպրոց, քիմիա։
4. Ասոյեան Գրիգոր, Շուշի, Բէալ. դպ., բժշկութիւն։
5. Տիկին Ասոյեան Սառա, Շուշի, գիմնազ., փիլիսոփայութիւն։
6. Շահբազեան Արտաշէս, Թավրիզ, Ճեմարան, բժշկութիւն։
7. Իշխանեան Բախշի, Շուշի, Ճեմարան, հասարակական գիտութիւններ։
8. Շահումեան Ստեփան, Թիֆլիզ, Բէալ. դպ., հասար. գիտութիւններ։
9. Մանուչարեան Միքայէլ, Շուշի, Բէալ դպ., հասար. գիտութիւններ։
10. Օրիորդ Պետրոսեան, Թիֆլիս, գիմնազիա, գերմաներէն լեզու։
11. Օր. Պատկանեան, Շուշի, գիմնազիա, լեզու եւ գրականութիւն։
12. Օր. Աւագեան, Աստրախան, գիմնազիա, մանկավարժութիւն։
13. Ա. Սարգսեան, Քութայիս, գիմնազիա, բժշկութիւն։
14. Նազարեան Լիպարիտ, Երեւան, գիմնազիա, հասարակական գիտութիւններ։
15. Մելքոնեան Հայկ, Գանձակ, գիմնազիա, բժշկութիւն։
16. Սողոմոնեան Սոկրատէս, Թիֆլիս, գիմնազիա, պոլիտեխնիկում։
17. Ստեփան սարկաւագ Մելիքեան, Վաղարշապատ, Ճեմարան, երաժշտութիւն։
18. Թովմա-Աղայեան, վարդապետ, վանեցի, Ճեմարան, մանկավարժութիւն։
19. Տէր Մկրտչեան Ստեփան, Ագուլիս, Ճեմար., լեզու։
20. Համբարեան Արտեմ, Բագու, Բէալ դպ., լեզու։

Ցարգանքներով՝ Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Փաստ. 1465-16

Բ 4.– ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

17-III-05

Ցարգելի ընկերներ!

Ըստ Լիազօր Կոմիտէի շրջաբերականի մենք ունեցանք տեղական պատգամաւորի (2 հոգի) ընտրութիւնը (մի խումբ ուսանողների կողմից)։
Ընտրող ուսանողները միանգամայն անկարող լինելով հոգալ պատգամաւորների ճանապարհածախսը, հարկ ենք համարում ըստ կանոնադրութեան 11րդ կէտի դիմել Ձեզ եւ ճանապարհածախս խնդրել։ Խնդրում ենք ըստ կարելոյն շուտ ուղարկել դրամը։

Ցարգանքներով՝
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Charlottenburg (Berlin), Pestaloggi str. 68 I
B. Ischchanian

Փաստ. 1465-30

Բ 5.– ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆԵԱՆԷՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

23-3-05

Յարգելի ընկերներ!

Համաձայն ձեր նամակի շտապում ենք պատասխանել հետեւեալը.

Մի խումբ ընտրող ուսանողների թիւը հասնում է 14 հոգու, որոնք կարողանում են ճանապարհածախսի միայն մի փոքր մասը հոգալ, այնպէս որ մեզ հարկաւոր է ամենաքիչը դեռ 100 ֆրանք եւս ունենալ. խնդրում ենք շտապել այդ գումարը մեզ հասցնել, հակառակ դէպքում Բերլինից պատգամաւոր չէք ունենայ։

Ընկերական բարեւներով՝
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Charlottenburg, Pestaloggi str. 68 I (Berlin)

Փաստ. 1465-44

Բ 6.– ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆԵԱՆԷՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, Ժ.ԸՆԵԱ

31-III-05, *Բերն*

Յարգելի ընկերներ!

Ջնայելով որ մօտ չորս օր առաջ հեռագրել էի Ձեզ հեռագրով փոխադրելու ինձ Ձեր որոշած գումարը՝ 50 ֆրանկը, այնուամենայնիւ մինչեւ օրս նոյն իսկ փոստով չէք փոխադրել։ Ես այժմ Բերն եմ գտնւում, բայց վաղը համագումար լինելու ոչ մի հաւանականութիւն չեմ գտնում։ Խնդրում եմ բարեհաճեցէք փողը ուղարկել ինձ այստեղ փոստի հասցէով, միջոցներս խիստ սուղ են։

Յարգանքներով՝ Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Փաստ. 1465-18

Բ 7.– ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑԷՆ Է. ԱԿՆՈՒՆԻՒՆ

18-3-1905

L. Nasariants
Berlin-Charlottenburg
Schiller str. 94, b/Schöllner

Յարգելի բարեկամ Պ. Մալումեան,

Ստորեւ բերածս տեղեկութիւններից տեղիս ուսանողների մասին կը տեսնէք, որ ինձ միանգամայն անհնարին էր Ձեզ աւելի շուտ պատասխանել։ Ինչպէս գիտէք անցեալ ամառւայ սիմեստրում «Միութեան» աշխատակից անդամը ես էի. յիշեալ սիմեստրի վերջում ունեցանք մի քանի ժողով «Լիազօր կոմիտէի» ուղարկած շրջաբերականների հիման վրայ եւ արդիւնքները յայտնեցինք Ձեզ։ Որովհետեւ ամառը պիտի Կովկաս գնայի, ուստի ժողովը աշխատակցի պարտականութիւնները յանձնեց ուսանող Բ. Իշխանեանին մինչեւ ձմեռուայ կիսամեակի սկսելը, երբ պիտի նոր անդամ ընտրուէր։ Ձմեռուայ սիմեստրում մենք ոչ մի ժողով չունեցանք, որովհետեւ պ. Իշխանեանը, որը պիտի այդ անէր, լուռ էր, իսկ ես՝ զբաղուած լինելով այլ ժողովներով եւ իմ դիսերտացիայով[50], բոլորովին ժամանակ չունէի ուրիշ գործերի կպչելու։ Վերջին ժամանակները, ստանալով Ձեզնից նոր շրջաբերականները, դիմեցի պ. Իշխանեանին, ասելով, որ անհրաժեշտ է ժողով գումարել. վճռուեց մօտ օրերում հաւաքուելու։ Մի քանի օր առաջ պ. Սազեանն էլ տեղեկացրեց ինձ, որ ինքն էլ է ստացել շրջաբերականներ եւ առաջարկութիւն հոգալու պատգամաւոր ընտրելու գործը. իսկոյն գնացի մօտը եւ տանը չգտնելով տոմսակ թողի, որ գայ ինձ մօտ խօսելու։ Ճանապարհին պատահեցի մեր ընկերներից մէկին, որը ինձ յայտնեց, որ հէնց այս երեկոյ նշանակուած է ժողով, որին սակայն հրաւիրուած են ոչ բոլորը։ Մի քանի ժամ յետոյ տեսնուեցայ Իշխանեանի հետ, որը ինձ յայտնեց, թէ ժողովը գումարուում է սոցիալ-դեմոկրատ ուսանողների կողմից, որին մասնակցելու չեն նոքա, որոնք որոշապէս այլ կուսակցութեան են պատկանում (իմա՛ «դաշնակցական»), իսկ եթէ միւսներն էլ կամենում են, կարող են իրենց յատուկ ժողովն ունենալ։ Միեւնոյն ժամանակ նրանից իմացայ, որ մինչեւ այդ ժամանակ նրանք միանգամայն անտարբեր են եղել դէպի «միութիւնը», սակայն վերջին օրերը՝ իմանալով այլ քաղաքներից, որ իրենց համամիտները մտադիր են ներկայանալ համագումարին ստուար թուով, իրենք էլ վճռել են ժողովել այստեղի ուսանողութեան այն տարրերը, որոնք՝ համամիտ լինելով իրենց՝ ձայն կը տան նրանց թեկնածուներին։ Նրանց ժողովը տեղի է ունեցել եւ ընտրուել են 2 սոցիալ-դեմոկրատ պատգամաւոր (Շահումեան եւ Իշխանեան)։

Մի հետաքրքիր մանրամասնութիւն. նոցա նիստին հրաւիրուած են եղել այնպիսիները, որոնք ոչ մի անգամ՝ մի քանի տարի այստեղ լինելով՝ ոչ մի հայկական ժողովի չեն մասնակցել եւ հայերէն էլ չգիտեն։ Բացի դրանից եղել են եւ ոչ-ուսանողներ. վերջապէս՝ եղել են եւ այնպիսիները, որոնք ժողովի չեն եկել եւ ուղարկել են իրենց ձայնը։ *Այդպիսով է միայն հաւաքուել այն թիւը* (12), *որը ըստ կանոնադրութեան կարող է երկու պատգամաւոր ունենալ։ Հարկաւոր է նկատել, որ այդպիսի անջատական ձգտումներ դէպի այն բոլոր ուսանողները, որոնք յիշեալ պարոնների գաղափարները չեն դաւանում, նկատուել է ամբողջ սիմեստրի ընթացքում։*

Բացի այդ ժողովում մասնակցողներից, այստեղ կան դարձեալ 7 հոգի (եթէ հաշուենք միայն ուսանողներին, այլ ոչ թէ ամէն մի հայի), որոնցից 3-ը բացակայ են, իսկ մնացեալ երեքից ոչ մէկը չի ուզում այդտեղ գալ։ Ես անձամբ նոյնպէս զուրկ եմ որեւէ հնարաւորութիւնից համագումարին մասնակցելու, որովհետեւ նախ նիւթականս չի ներում, երկրորդն էլ, որ վերջին ժամանակները ահագին ժամանակ կորցրի այլ ժողովների համար, միեւնոյն ժամանակ զբաղուած եմ իմ քննութիւններով, որոնք մտադիր եմ 2-3 ամսից տալու եւ գնալու Կովկաս։ Իսկ եթէ դասախօսութիւն պատրաստելու լինեմ եւ գամ համագումարին, կը կորցնեմ ժամանակիս համարեա կէսը եւ ստիպուած կը լինեմ մի երկու ամիս էլ մնալու, որ, սակայն, կարող չեմ։

Յիշեալ եօթ ուսանողների մասին կարող եմ տալ հետեւեալ տեղեկութիւնները.

1) *Գրիգոր Սազեան, շուշեցի, բժիշկ, ռէալական դպրոց աւարտած։*

2) *Տիկին Սազեան, շուշեցի*

3) *Տիկին Ն. Վարդանեան, Թիֆլիզ, աւարտել է գիմնազիա, սովորում է երաժշտութիւն։*

4) *Ս. Սողոմոնեան, Թիֆլիզ, գիմնազիա, պոլիտեխնիկ։*

5) *Ն. վարդապետ Թովմա — Աղայեան, վանեցի, Գէորգեան ճեմարան, սովորում է մանկավարժութիւն համալսարանում։*

6) *Մ. Յարութիւնեան, Աղեքսանդրապոլ, Գէորգեան*

50.- Աւարտաճառի պատրաստութեամբ:

ճեմարան, հասարակական գիտութիւններ։

7) Լ. Նազարեան, Լոռի, Մոսկուայի համալսարան, իրաւաբան-հասարակական գիտութիւններ։

Եթէ դարձեալ որեւէ տեղեկութիւններ հարկաւոր լինին, խնդրեմ դիմէք, կը յայտնեմ։ Ցոյս կա՞յ արդեօք, որ «դաշնակցականներ» բաւականաչափ կը լինին համագումարին։

Խնդրեմ այս նամակիս չտաք ոչ մի պաշտօնական բնաւորութիւն. դա մի մասնաւոր նամակ է, որ գրում եմ Ձեզ անձամբ ի տեղեկութիւն։

Ցուսով եմ՝ շուտով կը պատասխանէք։

Ձերմ բարեւներով՝
Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Ինձ մօտ թողել են «Միութեանը» պատկանող իրեր եւ գրքեր, ի՞նչ անեմ։

Սոցիալ-դեմոկրատները, ինչպէս իրենք էլ ասում են, գործին այդքան եռանդով կպել են, որպէսզի կարողանան ստանալ եթէ ոչ ամբողջովին, գոնէ կէսը այն գումարի, որը յատկացրած է մեծ ժողովածուին, իրենց հրատարակութիւնների համար։

Փաստ. 1465-48

Բ 8.– ՊԵՐԼԻՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԷՆ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

Ապրիլ 1, 1905 ամի, Բերլին

Պ. Միքայէլ Ցովհաննիսեանին

Ցարգելի ընկեր,

Ընտրելով Ձեզ Բերլինի մի խումբ ուսանողների կողմից, որոնց ցուցակը Ձեզ ուղարկուած է նախընթաց նամակով, պատգամաւոր՝ առաջիկայ Ե. Հ. Ու. Միութեան համագումարի համար, հարկ ենք համարում պարզել մեր հայեացքները միութեան գործերի վերաբերմամբ։

Այսօրուայ իր նիստում ժողովը զբաղուեց հետեւեալ հարցերով.

1) Որքան հնարաւոր եւ նպատակայարմար է միութեան գոյութիւնը.

2) «Մեծ ժողովածուի» հրատարակութեան խնդիրը։

Գալով առաջին հարցին, ժողովը գտաւ, որ միութիւնը, ինչպէս մինչեւ այժմ եղել է, չէ կարող համապատասխանել Եւրոպայի հայ ուսանողութեան պահանջներին։ Ցիրաւի, եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ չկայ մի ընդհանուր կենտրոն-նպատակ, որի շուրջը կարող լինէին խմբուել բոլոր ուսանողները, կը տեսնենք, որ միութիւն ասած բանը չէ կարող գոյութիւն ունենալ. բացի դորանից, ծրագրի գլխաւոր կէտը — ուսանողների մէջ բարոյական կապ հաստատելը — լինելով մի վերացական հասկացողութիւն առանց կոնկրէտ նշանակութեան, չի կարող ապրելու իրաւունք տալ մի որեւէ հաստատութեան։ Ընդհակառակը, ունենալով տարբեր քաղաքական-հասարակական համոզմունքներ եւ աշխարհայեցողութիւն, ուսանողները կարող են միայն արհեստական կերպով միացրած լինել մի ընդհանուր ծրագրով, որը բռնի կերպով հպատակեցնելով փոքրամասնութիւնը մեծամասնութեան (ինչպէս այդ մինչեւ այժմ տեղի է ունեցել), չէ կարող հաստատել ծրագրում չիշատակուած «բարոյական կապը», այլ կ՚առաջացնէ ներքին շփումներ, որոնք վաղ կամ ուշ վերջ կը դնեն միութեան կեանքին։ Վերջապէս, այդ շփումները, կլանելով միութեան գործող մարմինների ժամանակն ու եռանդը, միայն խոչընդոտ կը հանդիսանան միութեան ամբողջ գործունէութիւնը։ Չէ՞ որ այն փոքր թուով ուսանողները, որոնք մինչեւ այժմ վարել են միութեան գործերը որոշ ուղղութեամբ, կարող են՝ առանց միութեան գոյութեան եւ նոյնիսկ աւելի անկախ, հետեւապէս եւ արդիւնաւէտ կերպով շարունակել իրենց գործը։

Երկրորդ հարցի, այն է «Ժողովածուի» վերաբերմամբ, ժողովն արեց հետեւեալ դիտողութիւնները.

Աչքի առաջ ունենալով, որ «Ժողովածուի» հրատարակութիւնը համապատասխանում է ծրագրի նպատակին՝ այն է — ծանօթացնել հայերը եւրոպացիներին, բացի դորանից — որ նուիրատուներից «Ժողովածուի» ծախքերը ստացուել են յատուկ այդ նպատակով, մենք գտնում ենք իրաւաբանական տեսակէտից, որ յիշեալ դրամին այլ գործադրութիւն տալ չէ կարելի նոյն իսկ «Միութեան» կազմալուծման դէպքում. միակ ինչ կարելի է անել, այն է փոքրացնել «Ժողովածուի» ծաւալը, սահմանափակելով նրա բովանդակութիւնը գիտական եւ քաղաքական-հասարակական յարատեւ նշանակութիւն ունեցող յօդուածներով, դուրս ձգելով միանգամայն ցուցամոլական եւ կոչի բնաւորութիւն կրող յօդուածները (օրինակ՝ գեներալների կենսագրութիւններ, աղերսագրեր եւայլն)։ Այդ դէպքում «Ժողովածուին» յատկացրած գումարի աւելացած մասը յատկացնել նոյն՝ վերը յիշած՝ նպատակին ծառայող հրատարակութիւնների եւ հաստատութիւնների (օր. Pro Armenia եւ այլն) եւ գիտական-ժողովրդական գրականութեան տարածման։ «Ժողովածուի» վաճառումից գոյացած եկամուտը հաշուել իբրեւ մի «պլիւս» միութեան գանձարանի գումարին (բացի «Ժողովածուին» յատկացրած գումարից), որը միայն գործադրելու իրաւասու է ներկայ համագումարը։

P.S. Ցանկալի է, որ Ժողովածուի մէջ մտնի անմոռանալի Քրիստափոր Միքայէլեանի կենսագրութիւնն ու պատկերը։

Խնդրում ենք Ձեզ, յարգելի ընկեր, ներկայացնել մեզ այս նամակում գծուած սահմաններում։

Ժողովի կողմից՝

Գ.Ր. ՍԱՂԵԱՆ[?]

Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Փաստ. 1465-42

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Բ 9.– ՕՐԱԿԱՐԳ
1905 ԹՈՒԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ, ԲԵՐՆՈՒՄ

Առաջին նիստ.– Համագումարի բացումը: Ընտրութիւն Բիւրոյի: Հաստատումն օրակարգի:

Երկրորդ նիստ.– Համարատուութիւն Լիազօր Կոմիտէի եւ Կարգ. Յանձնաժողովի – Նախագահ:

Երրորդ նիստ.– Ուսանողական Հայկարան,– առաջարկութիւն «Բազմավէպի» խմբագրութեան:

«Թիւրքահայկական խնդրի դիպլոմատիական դրութիւնը» – դասախօս. Բ. Իշխանեանի, *Բերլինի համալսարանից:*

Չորրորդ նիստ.– Ռուսաստանի ներկայ յեղափոխական շարժումը. Կովկասում տեղի ունեցած ջարդերը,– առաջադ[րութիւն] «Կովկաս» խմբի, Ժընեւից:

Յեղափոխական կուսակցութիւններ եւ Կովկասը – դասախօս. Ա. Տ.-եանի, Ժընեւի համալսարանից:

Հինգերորդ նիստ.– Ուսանող-պրոպագանդիստներ, առաջարկ. Ժընեւի ուսանողների: Վերջին դէպքերը Կովկասում,– դասախօս. *Ա. Ահարոնեանի:*

Վեցերորդ նիստ.– Յեղափոխական բրոշիւրների խնդիր,– առաջարկ. Ժընեւի ուսանողների եւ «Ձանք» կոմիտէի: Նպաստ սոց. բրոշիւրների համար,– առաջարկ. Հայ սոց. դեմ. խմբի:

Հայկական բանաստեղծութիւնը,– դասախօս. *Ս. Յակոբեանի,* Լօզանի համալսարանից:

Եօթերորդ նիստ.– "Corda Fratres"-ի առաջարկը: «Յեղ. կուսակցութիւնները Կովկասում, սոց. դեմոկրատիան եւ հայ ուսանողութեան դերը»,– դասախօսութիւն Մ. Ֆ.նի:

Ութերորդ նիստ.– Հրատարակութիւնների եւ Ժողովածուի խնդիրը – Բերլինի եւ Ժընեւի ուսանողների կողմից: Առաջարկներ Լայպցիկի ուսանողութեան՝ վերաբերմամբ կանոնադրութեան:

«Յեղափոխութեան փիլիսոփայութիւնը»,– դասախօս. *Խ. Մալումեանի,* Ժընեւի համալսարանից (պայմ.):

Իններորդ նիստ.– «Միութեան» *գործունէութեան* ծրագիրը առաջիկայի համար:

Տասներորդ նիստ.– Որոշումն առաջիկայ Համագումարի տեղի: Ընտրութիւն Լիազօր Կոմիտէի: Ընտրութիւն Կարգադիր Յանձնաժողովի:

Համագումարի փակումը: Համախմբումն:

1905, մարտ 30
Ժընեւ

Փաստ. 1465-77

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Բ 10.– ՀԱՄԱԲԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷԻ ԵՒ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ներկայացուած 1905 թ. Համագումարին (Բերնում)

Ընկերներ,

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ։— *Ներկայ ժողովը, համախմբուած Շվէյցարիայի մայրաքաղաքում, վեցերորդն է «Միութեան» հիմնադրութիւնից, եւ երրորդը՝ մեր «Կանոնադրութեան» վերակազմումից յետոյ, որ տեղի ունեցաւ 1900 թ. Ծիւրիխ քաղաքում։ Առաջին Համագումարը կայացաւ Հայդելբերգ 1897-ին, երկրորդը՝ նոյն քաղաքում՝ 1899-ին։ Երրորդը՝ Ծիւրիխ՝ 1900 թուի Հոկտեմբերին, Չորրորդը Միւնխէն՝ 1901-ին։ Հինգերորդը Ժընեւ 1902-ի Ապրիլին։ Առաջին Համագումարին ներկայ էին 24 հոգի. երկրորդին՝ 21. երրորդին՝ 14. չորրորդին՝ 48 հոգի, երկու սեռից, եւ հինգերորդին 90. մի թիւ որ նիստերից մի քանիսի ժամանակ հարիւրից էլ անցաւ։ Ներկայ ժողովը, մասնակցողների թուի կողմից բռնում է (60) կարեւոր տեղ։ Այդ թուերը ցոյց են տալիս, որ միութեան վերակազմութիւնից յետոյ՝ մեր կոնգրէսները դարձել են հետաքրքրութեան առարկայ եւ գրաւում են բաւական անդամներ՝ ուսանողական շրջաններից։*

Հակառակ մեր ցանկութեան եւ կանոնադրութեան տրամադրութեան՝ 1903-4-ին տարեկան համագումարներ տեղի չունեցան։ Առաջինը այն պատճառով, որ Բրիւսէլի ոստիկանական իշխանութիւնը պաշտօնական թոյլտուութիւն չտուեց մեզ՝ այնտեղ համախմբուելու համար. մի անսպասելի վարմունք, որ յարուցեց Պարիզի մամուլի վրդովմունքը, եւ մի վայրկեան սպասում էր նոյնիսկ հարցապնդման նիւթ դառնալ բելգիական պարլամենտում։ Իսկ միւսը, որն է 1904-ի Համագումարը չկայացաւ Ապրիլին այն պատահական պատճառով, որ Լիազօր կոմիտէի եւ կարգադիր յանձնաժողովի անդամներից շատերը Եւրոպայից բացակայ էին, եւ հնարաւոր չէր տեսնել ժողովի պատրաստութիւնները։ Ժողովը նշանակուեց նոյն թուականի Հոկտեմբերին, որ արձակուրդների ամիս է, սակայն, ի մեծ ցաւ մեր բոլորի, ուսանողական մարմինները, ինչպէս երեւում է, նոյնպէս ցրուած լինելով, արձագանք չտուին, պատգամաւորներ չընտրեցին եւ Համագումարը չկայացաւ։ Այդ փորձերը թելադրում են մեզ ասել, որ ժողովի յարմարագոյն ժամանակը Ապրիլ ամիսն է, որից եւ պէտք է օգտուել ապագայում։

ԺԸՆԵԻԻ ԿՈՆԳՐԷՆ։— *Այս համախմբումը առանձին կարեւորութիւն եւ աջողութիւն ունեցաւ, թէ՛ ընդունած որոշումներով, թէ՛ պարապմունքներով եւ թէ ներկայ եղողների թուով։ Տասնեւեօթ ուսանողական քաղաքներ ուղարկել էին ներկայացուցիչներ եւ բազմաթիւ անդամներ, երկու սեռից, մասնակցում էին նրա պարապմունքներին։ Ժողովը բացուեց Ապրիլի 1-ին (1902) եւ տեւեց մի շաբաթ։ Նիստերը տեղի ունեցան Hôtel des Alpes-ի դահլիճներում, որոնցից մէկը զարդարուած էր հայկական նկարներով եւ յատկապէս պատրաստուած դրօշակներով։ Առաջին անգամն էր այդ, որ մի ժողովարանի ճակատին ծածանում էր հայկական քաղաքական դրօշակը — երեքգունեան, սգանշանով քաշուած եւ վեց աստղերով՝ վեց նահանգների նշաններ — շվէյցարական դաշնակցութեան պաշտօնական դրօշի հետ միասին։ Բացման հանդիսաւոր նիստը պատուել էին իրանց ներկայութեամբ ուսանողական օտար մարմինների ներկայացուցիչներ եւ հայոց դատի զանազան համակրողներ։ Օտարներից ճառեր արտասանեցին համակրելի պրոֆեսոր Լ. Վուարէն, ծանօթ գրող տիկին Իլզէ Ֆրապան, մակեդոնացի հրապարակագիր Բաղեվ, որը եւ կարդաց մակեդոն յայտնի յեղափոխական Բ. Սարաֆովի նամակը՝ ուղղած հայ ուսանող-երիտասարդութեան։ Կոնգրէսն ստացաւ քաղաքական կերպարանք։— Թուրքիոյ կառավարութեան յանձնարարութեամբ, Սուլթանի Պարիզի դեսպանը, Միւնիր բէյ, դիմումներ արեց Ժընեւի կառավարութեան՝ խնդրելով արգիլել հայ երիտասարդութեան համախմբումը։ Ժողովը շրջապատուեց լրտեսներով։ Ժընեւի ամենահամակրելի պետական գործիչներից մէկը, Ժորժ Ֆավոն, որ նախագահն էր Conseil d'Etat-ի[51], ազատախօս եւ հայասէր մի անձ, իբրեւ պատասխան սուլթանական յանդուգն առաջարկին, ուղղեց համագումարին մի զգացած նամակ, յայտնելով նախ՝ իր յարգանքը հայկական դատին եւ ապա՝ իր ջերմ ցաւակցութիւնը՝ որ տկար լինելով՝ անկարող է անձամբ ներկայ լինել նիստերից մէկին։ Անաջողութեան հանդիպելով շվէյցարական քաղաքում Սուլթանի կառավարութիւնը սպառնաց իր սե-*

51.- Ֆրանսերէն՝ Պետական խորհուրդ:

փական մայրաքաղաքից,— հրապարակուեց Սուլթանի կարգադրութիւնը, որով ժողովի մասնակցողներին, յատկապէս հինգ հոգու, իբրեւ «Կոմիտէի անդամների» արգելւում էր Թուրքիա մտնել՝ խստագոյն պատժի սպառնալիքով, մի փաստ, որ արձանագրուեց եւրոպական լրագրութեան մէջ՝ արժանաւոր հեգնութեամբ։

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ։— Համաձայն ժողովի որոշման, Ժընեւի ուսանողութեան յանձնուեց ընտրել իր միջից մի կարգադիր յանձնաժողով։ Ընտրուեցին օր. Հ. Ադամեան, օր. Հ. Զոհրաբեան, պ.պ. Խ. Մալումեան, Ս. Մինասեան եւ Ա. Աբովեան. փոխ-անդամներ՝ Գ. Անոփեան եւ Լ. Նովրուզ։ Յանձնաժողովը իր միջից ընտրեց նախագահ՝ Խ. Մալումեան, գանձապահ՝ Օր. Զոհրաբեան եւ քարտուղար՝ Ս. Մինասեան։

ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ։— Ժընեւի համագումարը ընտրեց Լիազօր կոմիտէ, բաղկացած հետեւեալ անձինքներից՝

Շվէյցարիա — *Խ. Մալումեան եւ Մ. Յովհաննիսեան*[12]

Ֆրանսիա — *Տ. Բուդաղեան*

Գերմանիա — *Բերլին՝ Ե. Թոփչեան եւ Միւնխէն՝ Յ. Աղասէր*[32]։

Համագումարը ճանաչեց Ժընեւը իբրեւ «Միութեան» գործունէութեան գլխաւոր կէտ, ուր գտնւում են Լիազօր կոմիտէի երկու անդամները, դիւանը եւ Կարգադիր յանձնաժողովը. վերջինը որպէս տեխնիկական գործողութիւնների մարմին, քանի որ կանոնադրութեամբ գործունէութեան ղեկը տրուած է Լիազօր կոմիտէին։ Տարաբախտաբար գործող մարմինների մի քանի անդամները երկար չմնացին Եւրոպա, եւ բացի դրանից յաջորդ համագումարի չկայանալը էապէս մնասեց նրանց վերակազմութեան կանոնաւորութեանը։ Այդպէս օրինակ, 1903-ի վերջերին Եւրոպայում մնաց Լիազօր կոմիտէի միայն մի անդամը։ Անդամների մեծ մասը հեռացան կամ մասնաւոր կամ հասարակական գործերով։ Աւելի բախտաւոր չէր Կարգադիր յանձնաժողովը։ Այդ հանգամանքը, անկասկած, բաւական մնասեց գործերի ուժգին ընթացքին, մի հանգամանք որ թելադրում է սրանից յետոյ անպատճառ կայացնել տարեկան համագումարները՝ գործող մարմինները լրացնելու եւ ուժեղացնելու նպատակով։

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ։— Համագումարը ընդունեց եւ վաւերացրեց գործունէութեան այն ծրագիրը, որ ներկայացրեց Լիազօր կոմիտէն, որը պարունակում էր հետեւեալ գլխաւոր կէտերը. ա) պրոպագանդ հայկական դատի համար ամբողջ Եւրոպայում, մամուլի մէջ՝ յօդուածներով, հասարակութեան շրջաններում՝ դասախօսութիւններով, պարլամենտների մէջ՝ հարցապնդում առաջ բերելով. բ) Հրատարակութիւն բրոշիւրների եւրոպական լեզուներով, նպաստող նոյն պրոպագանդին. գ) Տպագրութիւն հայերէն գրքոյկների յեղափոխական ուղղութեամբ. դ) Հրատարակումն «Հայաստանի քարտէզի». ե) Հրատարակութիւն Մեծ ժողովածուի, արդէն ընդունուած պրոգրամով. զ) Պրոպագանդ եւ ուսումնասիրութիւն Երկրի մէջ։ Լիազօր կոմիտէի մի առաջարկը — հիմնել գերմաներէն լեզուով մի յատուկ օրգան, նուիրուած հայոց դատին, անմիջական վաւերացում չգտաւ ժողովի կողմից, որը յանձնարարեց գրել Մարմնին՝ ուսումնասիրել այդ խնդիրը եւ յաջորդ ժողովին զեկուցանել արդիւնքը։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ։— Հրապարակական կոնֆերանսները կազմուած Եւրոպայի նշանաւոր անձանց միջոցով՝ լաւագոյն եղանակներից մէկն է պրոպագանդի համար։ 1902-3 թուականը այդ կողմից գովելի արդիւնք տուեց, չնորհիւ այն օգնութեան որ ցոյց տուեցին մի քանի ուսանողական մարմիններ։ Բերլինը այդ կողմից չնորհակալութեան օրինակ է։ «Միութեան» հրաւէրը, ուղղած յայտնի սոցիալիստ Բերնշտայնին՝ արձագանք գտաւ եւ 1902 թուի Յունիս 28 Բերլինի մի բազմամարդ ժողովի առաջ համակրելի գործիչը իր ազդու ձայնը բարձրացրեց յօգուտ մեր ժողովրդական դատի։ Քիչ յետոյ Բերլինում հրապարակ դուրս եկաւ, չանթահար լեզուով, դանիացի յայտնի գրող Գէորգ Բրանդէս, հայոց հարցի ջերմ պաշտպաններից մէկը։ Այս դասախօսութիւնը տեղի ունեցաւ 1903-ի Փետրուարի 2-ին։ Ջմռանանք յիշատակել անուանի պրոֆեսոր Հարնակին, որ նոյնպէս հրապարակական դասախօսութեամբ շեշտեց հայկական հարցի կարեւորութիւնը։ Սկսուած շարժումը չսահմանափակուեց Գերմանիայի մայրաքաղաքով։ Դասախօսութիւններ տեղի ունեցան եւ Լեյպցիգ ու Համբուրգ, ուր խօսեց Տիկին Ի. Ֆրապան, Հալլէ, Միթվայդա, Դարմշտատ եւայլն։ Ժընեւում հրապարակ դուրս եկողը՝ անուանի Պրեսանսէից յետոյ՝ Պիեր Քիար, որ Լիազօր կոմիտէի յատուկ հրաւէրով Վիկտորիա Հոլլի մէջ, մեծ բազմութեան առաջ պարզեց հայկական դատի պատճառները եւ հայ յեղափոխութեան ծրագիրը։ Նրա հետ միասին խօսեց եւ Դր. Լարդի, մեր ցաւակից եւ դաշնակից խնդրի — մակեդոնական շարժման մասին։ Հրապարակական այդ կարեւոր ժողովին նախագահում էր պ. Ադրիան Լաշընալ, շվէյցարիական հանրապետութեան նախկին նախագահը, մեր դատի լաւագոյն բարեկամներից մինը։

Մեր ծրագրի միւս կէտը՝ կազմել կոնֆերանսներ Աւստրիայում տարաբախտաբար չյաջողուեց, իսկ Պարիզի մէջ միտինգ կազմելու — եւ Միլանում կոնֆերանս

կազմակերպելու միտքը, արտայայտուած մի յատուկ շրջաբերականի մէջ դեռ 1902 Յուլիսին, թողնուեց մի կողմ, քանի որ այդ ձեռնարկը իր վրայ վերցրեց «Դաշնակցութիւնը», աւելի լայն ծաւալով։ — Ցաւալի է խոստովանել, որ 1904 թուականը այդ կողմից կատարելապէս ամուլ եղաւ, եւ հակառակ Լ. կոմիտէի հրաւէրին եւ դրամական աջակցութեան՝ ուսանողական մարմինները անկարող եղան աջողեցնել որեւէ ձեռնարկ։ Նոյն կերպարանքն ունեցաւ եւ ներկայ 1905 թուի առաջին եռամսեակը, թէեւ կովկասեան վերջին արիւնահեղ դէպքերը, մանաւանդ Բագուի աղէտը, հրամայական պարտք էին դնում մեզ վրայ՝ բոլոր ոյժով ձայն բարձացնել ողջ Եւրոպայում այն անարգ բռնութիւնների եւ դաւերի դէմ, որ ցարիզմը իրան թոյլ է տալիս հպատակ ժողովուրդների նկատմամբ։ Մենք փորձեցինք կազմակերպել մի մեծ միտինգ Ժընեւ, յատկապէս Բագուի դէպքերին նուիրուած, մասնակցութեամբ ֆրանսիացի նշանաւոր հռետոր Ժօրեսի. սակայն նրա անկարողութիւնը գալ Ժընեւ, կանգնեցրեց այդ մտադրութեան իրագործումը։ Նոյնպիսի մի միտք յղացուել է եւ Լայպցիգի ուսանողութեան մէջ. «Միութեան» գանձարանը խոստացել է նրան դրամական աջակցութիւն եւ յոյս ունենանք, որ այս տարուայ ընդհանուր անգործութեան մէջ՝ գոնէ մի բացառութիւն կը լինի։ — Անպատեհ չենք համարում այս առիթով առաջ բերել մեր մի շրջաբերականից հետեւեալ խօսքերը՝

«Հարկ չկայ ապացուցանելու, թէ որպիսի անվիճելի օգտակարութիւն ունին այդ կոնֆերանսները եւ ընդհանրապէս հայանպաստ պրոպագանդը՝ հայրենիքի ներկայ տագնապալի վիճակում։ Հասարակական կարծիքի մեծ նշանակութիւնը հայկական խնդրում շեշտեց ինքը Դելկասէ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը՝ Յունուարի 20-ին արտասանած իր նշանաւոր ճառի մէջ։ Եթէ հանրային գիտակցութեան բռնկումը չի կարող լուծում տալ հայկական ճգնաժամին, գէթ նա կարող է կանխել Մարդասպանի նորանոր հարուածները։ Եւ, վերջին երկու տարուայ անցքերը վկայում են, որ նա հասնում է այդ նպատակին։

Չանանք ուրեմն, մեր ուժերի ներածին չափ, յուզել հասարակական կարծիքը եւ ուղղել նրա ալիքները պաշտօնական Եւրոպայի դատապարտելի անտարբերութեան դէմ։

Ցոյց տանք Եւրոպային, ինչպէս եւ մեր հասարակութեան թերահաւատ մասին, որ հայ ուսանողութիւնը՝ ինչպէս մի մարմին՝ չոր-ցամաք ուսման երկրպագու չէ եւ ոչ էլ գձուձ ու անսիրտ եսասիրութեան ներկայացուցիչ, այլ որ նա ընդունակ է հանրային-ազատութիւնական թռիչքների եւս, որ նա համալսարանական նստարանի վրայ անգամ գիտէ տանջուել իր ազգակիցների անբաւ տանջանքներով»[52]։

ՄԱՄՈՒԼԻ ՊՐՈՊԱԳԱՆԴ։— Հայ ուսանողները ցրուած գլխաւոր կենտրոններում, մի կողմից տեղեակ հայկական կեանքին, միւս կողմից՝ եւրոպական լեզուներին, մեծ հեշտութիւն ունին եւրոպական լրագիրների մէջ մտցնելու այն բոլոր տեղեկութիւնները, փաստական եւ ճշգրիտ, որոնք հայկական քաղաքական կեանքին են վերաբերում։ Սակայն, չնչին բացառութեամբ, այդ աշխատանքը կատարուել է եւ կատարւում է կատարելապէս անբաւարար կերպով։ Ճանապարհները բաց են։ Սակայն աշխատանքներ չկան։ Բազմաթիւ են այն խմբագրութիւնները, որոնք սիրով պիտի ընդունէին տեղեկութիւններ, նոյնիսկ պրոպագանդայի յօդուածներ, բայց սակաւաթիւ են տուողները, կամ համարեա չկան նրանք։ Տարօրինակ է այդ հանգամանքը մանաւանդ այն պատճառով, որ տեղեկութիւնների համար կան «Պրօ Արմենիա» եւ յեղափոխական կազմակերպութիւնների օրգանները, եւ այնքան առատ, որ կատարելապէս աւելորդ է այդ նպատակով յատուկ Բիւրօ ունենալ, ինչպէս ծրագրուած էր նախկին համագումարներից մէկում։ Սա անախորժ մի երեւոյթ է եւ ցանկալի է, որ ներկայ ժողովում դարձեալ մի անգամ չեշտուէր այդ երեւոյթի աննպատակ բնոյթը։

ՀԱՑԵՐԷՆ ԲՐՈՇԻՒՐՆԵՐ։— Գրաքննական այն պայմանները, որոնք տիրում են Կովկասում եւ Կ. Պոլսի մէջ կատարելապէս անհրաժեշտ են կացուցել յեղափոխական-ժողովրդական գրականութեան ստեղծումը ազատ Եւրոպայի մէջ, որպէսզի տպագրուած գրքերը այստեղից թափանցէին մեր երկրի խորքերը, հայ ժողովրդի մէջ։ Այդ նպատակով Լիազօր կոմիտէն ձեռնարկեց յեղափոխական բրոշիւրների տպագրութեան։ 1902-1904 թուականներին լոյս տեսան 1) Ազատութեան երգեր, 2) Ապստամբ Սասունը, 3) Հայրենասէրի տաղերը, 4) Հայուհիներին, 5) Հերոսը, 6) Լերան Ռազմիկը, 7) Մարկ Բոցարիս եւ 8) Հայկական Ռեֆորմների ծրագիրը։ Մեր ծրագիրը շատ աւելի լայն էր, քան եղածն է։ Ցանկութիւն կար երկու-երեք տարուայ ընթացքում տալ մօտ կէս միլիոն կտոր գրքոյկ,— մի քանակ որ բաւական կը լինէր մեր ժողովրդին մինչեւ տասն տարի։ Անիրագործելի ծրագիր չէր այդ։ Եթէ հայ ուսանողութեան — մօտ 300 հոգի, կէսը, կէսի կէսը՝ տար ամէն տարի մի մի բրոշիւր, բաղկացած 30-50 երեսից, այսինքն, եթէ ամէն մի ինտելիգենտ երիտասարդ նուիրէր [?] մայրենի գրականութեան օրեկան տասն րոպէ, մենք կարող կը լինէինք այդ առաջին գրադարանը կազմել (տպագրելով իւրաքանչիւրը 2-3 հազար օրինակ) եւ մտցնել երկիր աւելի քան կէս միլիոն բրոշիւր, որ կը հեղեղէր հայկական աշխարհը մի ծայրից միւսը... Բայց ուսանողները, թէեւ օժտուած բոլոր յարմարութիւններ-

52.- Յիշուած շրջաբերականը տեսնել էջ 305-5։

բով, չգիտակցեցին կամ չուզեցին գիտակցել,— հրաւէրները մնացին անարձագանք, յորդորները առանց շօշափելի արդիւնքի։ Ոչ ոք ինքնաբերաբար մի գիրք չթարգմանեց, ոչ ոք իր սեփական նախաձեռնութեամբ գրական մի համեստ ձեռնարկ չարաւ եւ Լիազօր կոմիտէն կարօտ մնաց դրսից որեւէ առաջարկի։— Թարգմանութիւնները եւ հրատարակուած գրքոյկները բոլորն էլ պատրաստուած, պատուիրուած եւ յանձնարարուած են Ժընեւում, կոմիտէի անդամների անմիջական աշխատանքով։

Սակայն, այն ինչ չարուեց մինչեւ այժմ, պիտի անուի սրանից յետոյ անպատճառ, որովհետեւ բրոշիւրների պահանջը աւելի քան մեծ է եւ ստիպողական։ Դրան ապացոյց այն ահագին, հսկայական պահանջները, որ գալիս են բոլոր կողմերից եւ այն մեծ կարիքը, որով սպառւում են այդ գրքոյկները։ Մեր հրատարակութիւնները տպագրուել են 2-3 հազար քանակութեամբ իւրաքանչիւրը։ Լոյս է տեսել աւելի քան 25 հազար օրինակ, եւ եթէ փոխադրութեան ճանապարհները այնքա՛ն դժուարին չլինէին, վաղուց նրանք սպառուած կը լինէին։

ԲՐՈՇԻՒՐՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ։— Սրանց կարեւորութիւնը եւ մատուցած ծառայութիւնը կարելի է չափել տարածման այն լայն ծաւալով, որ նրանք ունեցան։ Մեր ծրագիրն էր՝ այդ հրատարակութիւնները անել չորս լեզուներով՝ ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն եւ անգլիերէն։ 1902-1904 թուականների ընթացքում հրատարակուած են բրոշիւրներ՝

Ֆրանսերէն՝

1) *Բերնշտայն* — Les souffrances du peuple arménien et le devoir de l'Europe.

2) *Վանդալ* — Les Arméniens et la Réforme de la Turquie.

3) *Պրեսանսէ* — L'Arménie et la Macédonie.

4) *Բրանդէս* — L'Arménie et l'Europe.

5) Sassoun (avec une carte géographique).

Գերմաներէն՝

6) *Բերնշտայն* — Die heiden des Armenischen

7) *Դ'Էտուրնէլ, Գոհէն, Պրեսանսէ, Ժօրէս, Լըրոլ, Լըրուա-Բոլիէօ* — Für Armenien und Macedonien

8) *Բրանդէս* — Armenien und Europa.

9) *Ֆրապան* — Die Armenische Frage.

Անգլերէն հրատարակութիւնների ցանկը կարելի է առ այժմ մի կողմ թողնել, քանի որ այդ լեզուով շատ գրքեր կան եւ շատ տարածուած։ Ինչ վերաբերում է իտալերէնին, մենք արդէն բանակցութեան մէջ ենք մի եւրոպացի պրոֆեսորի հետ, որ արդէն ձեռնարկել է մի գրքոյկի պատրաստութեան, նուիրուած հայոց հարցին եւ յարմարեցրած իտալական հասարակութեան ընթերցանութեան։ Օտար լեզուներով բրոշիւրների հրատարակութիւնը պէտք է շարունակել, եւ եթէ կարելի է այն ձեւով, ինչ արուած է մինչեւ այժմ — այն է նախ կազմել յայտնի եւրոպացիների կոնֆերանսներ, ապա տպագրել նրանց դասախօսութիւնները։

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ։— Դա պէտք է համարել «Միութեան» բոլոր ձեռնարկներից մեծը։ Սկսելով այդ գործը՝ Լիազօր կոմիտէն չէր սպասում այնպիսի ջերմ ընդունելութիւն հասարակութեան կողմից՝ որպիսին ունեցաւ այդ քարտէզը։ Մի կողմից այն, որ մինչեւ այժմ գոյութիւն չունի Հայաստանի քաղաքական քարտէզը հայերէն լեզուով, եւ միւս կողմից այն հանգամանքը, ծայրայեղօրէն մատչելի եւ գնի կողմից՝ տուեցին այս գործին անսպասելի տարածում։ Մինչեւ այժմ տպագրուած է՝

1) Հայաստանի հարեւան երկիրներ (3000 կազմով, 3000 լաթի վրայ)։

2) Սասունի քարտէզը, ֆրանսերէն տառերով։

3) Ատրպատականի քարտէզը, ֆրանսերէն տառերով։

Ծրագրուած է վերջինների ձեւով եւ տեսքով հրատարակել՝ Հայկական վեց նահանգների, Անդրկովկասի եւ Կիլիկիայի մանրամասն քարտէզները (վերջինը արդէն պատրաստուած է)։ Դրանք երկու նպատակի պիտի ծառայեն — նախ պիտի զետեղուեն «Մեծ-ժողովածուի» մէջ, համապատասխան յօդուածներով, եւ երկրորդ՝ պիտի տարածուին առանձին-առանձին, իբրեւ սոսկ քարտէզներ։ Հայաստանի քարտէզի առաջին փորձից յետոյ, որ պատրաստուած է յատկապէս ժողովրդական շրջանների համար, մտադրութիւն կայ պատրաստել եւ հրատարակել Հայաստանի մեծ-քարտէզը, աւելի ինտելիգենտ շրջանների համար — մի գործ, որ թէեւ ահագին ծախք կը պահանջէ, բայց աւելի քան անհրաժեշտ է։ Հայաստանի քարտէզը, թէեւ մուտք գտաւ Ռուսաստան մեծ դժուարութեամբ եւ Թուրքիայում պաշտօնապէս արգելուած է, այնքան աջողութիւն ունեցաւ, որ սպառուեց մի քանի ամսուայ ընթացքում (կազմով)։ Ինչ վերաբերում է լաթի վրայ տպուածին (փոքր ինչ անաջող գոյների կողմից — մի հանգամանք որ մեզ ստիպեց ձեռնարկել միւս տպագրութեան)՝ Թիֆլիսում մի խումբ մարդիկ ուզել են գնել նրանից 1500 օրինակ եւ տարածել պարսկահայերի մէջ ձրիաբար, այնպէս որ մի տան մէջ մի հատ լինի։ Մնացածը կը տարածուի Կովկասում։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ։— Մեր հրատարակութիւնները եւրոպական լեզուներով տարածւում են ձրի, պրոպագանդի համար։ Թէ մասնաւոր մարդիկ եւ թէ հիմնարկութիւններ, համաձայն իրանց ցանկութեան, ստանում են այդ գրքոյկներից՝ թէ իրանց ընթերցանութեան եւ թէ տարածելու համար։ Հայերէն գրքոյկները նոյնպէս ձրի են տարածւում։ Մենք յայտարարեցինք, որ հայկական բոլոր յեղափոխական-քաղաքական մարմինները իրաւունք ունեն ձրիաբար ստանալ այդ գրքերից որքան ցանկական, ժողովրդի մէջ տարածելու համար, առաւելութիւն տալով Երկրին — եւ եկամուտը կարող են մտցնել իրանց գանձարանի մէջ, յոգուտ հայկական դատի։ Այդ ճանապարհով արդէն ահագին քանակութեամբ գրքեր են տարածուած՝ Հայաստանի սահմանագլխի գաւառներում, Կովկաս, Պարսկահայաստան, Եգիպտոս եւ Բալկան։ Կովկաս գրքերը մտցւում են գաղտնի ճանապարհով, որովհետեւ ռուս կառավարութիւնը արգելք դրեց մեծ թուով ներմուծելու դէմ։ Թուրքիայում արգելուած է անպայման։ Դա, ի հարկէ, անյաղթելի արգելք չէ, եւ այդ պատճառով՝ յայտնի ճանապարհներով յեղափոխական եւ պրոպագանդի գրքերը քիչ-քիչ մտնում են Երկրի խորքերը եւ կատարում իրանց կարեւոր դերը։

Տպագրուած գրքերից աւելի քան 40 հազար տարածուած է արդէն։

— Օտար լեզուներով տպած գրքերի մի մասը յանձնուեց Ժընեւում, Stapefmuhr գրավաճառին՝ ծախելու համար. տարաբախտաբար այդ խանութը սնանկացաւ եւ «Միութեան» գրքերի մի խոշոր մասը կորաւ։ Մենք կարողացանք յետ ստանալ չվաճառուածները միայն, որը եւ յանձնուեց Ժընեւի մի այլ գրավաճառի՝ Georgին, պարտաւորութիւն դնելով նրա վրայ, որ նա տարածէ եւրոպական այլեւայլ երկրների գրախանութներին՝ իր պատասխանատուութեամբ։

ՄԵԾ-ԺՈՂՈՎԱԾՈՒ։— Ժընեւի կոնգրէսում վաւերացրած ձեռնարկների մէջ այս գործն է, որ մնում չաւարտուած։ Ձեզ յայտնի է այն պրոգրամը, որով պիտի կազմուէր մտաւորական Եւրոպայի համար նախագծած այս հրատարակութիւնը, ինչպէս եւ այն ջերմ համակրանքը, որով ընդունուեց նրա տպագրութեան միտքը։ Գործի էական մասերից մէկը իրականացաւ։ Ժընեւի համագումարից յետոյ՝ մենք կարողացանք ապահովել հրատարակութեան ծախքի մեծագոյն մասը, հաւաքելով եւ բանկի մէջ դնելով յատուկ մի գումար — տասն հազար ֆրանկ։ Այդ գումարը նուիրաբերուած է յատկապէս Մեծ-ժողովածուի համար եւ նրա անունով, եւ ուրիշ գործի վրայ ծախսուել չէ կարող, ինչպէս այդ թելադրում է նուիրատուների կամքը։ Նիւթական կողմը ապահովելուց յետոյ՝ ձեռնարկուեց Նիւթերի հաւաքման, եւ տարաբախտաբար, այդ կողմից աշխատանքները հանդիպեցին բաւական դժուարութիւնների, քանի որ խոստացուած յօդուածներն ու գրուածքները դեռ ամբողջովին չեն ստացուել։ Գործը արագացնելու համար 1903-ի վերջին հրաւիրուեց մի յատուկ անձ Ժընեւում, դրամական վարձատրութեամբ — պ. Վ. Մնչլ, թէ՛ դիմումները կրկնելու եւ թէ հրատարակութեան տեխնիկական մասը հոգալու համար։ Այժմ, երբ գործունէութեան ծրագրի միւս կէտերը լաւ շաւղի վրայ են դրուած մեր կարծիքով, առաջիկայ տարուայ ընթացքում Լիազօր կոմիտէն կարող եւ պէտք է իր ուշադրութեան գլխաւոր մասը դարձնէ «Մեծ-ժողովածուի» խնդրի վրայ եւ աւարտի նրա հրատարակութիւնը, մանաւանդ որ նրան սպասում են շատերը՝ հետաքրքրութեամբ եւ նոյնիսկ անհամբերութեամբ։ Հաճելի է մեզ յիշատակել, որ այդ գրքի համար արդէն ստացուած են կոչ-յօդուածներ այնպիսի ականաւոր անձինքներից, ինչպէս՝ Էլիզէ Բեկլիւ, Լամբրոզօ, Է. Նավիլ, Լամպրեխտ, Պասսի, Բայեր, Հայզէ, Վեբեր, Լօրեա, Պիկար, Լ. Երրարա, Կաուցկի, Պ. Էրրարա, Լըրուա-Բոլիօ, Զիպրիանի, Դը Կոնտանսոն, Գոհէի, Նովիկով, Բիտ։ Խոստացել են՝ Պրեսանսէ, Կլեմանսօ, Ժօրէս, Քիար, Վանդերվելտ, Ֆերրի, Ստեվենսոն, Բերար, Բերնշտայն, Բորբախ, Կովալեվսկի, Լեպսիուս, Գրատնաուէր եւ ուրիշներ։

Մի քանի բաժնի նիւթերը հաւաքուած են. պատկերները մեծ մասամբ բերուած, որպէսզի կլիշէներ պատրաստուին եւ երբ խոստացուած աշխատութիւնների կարեւոր մասը կը ստացուի, անմիջապէս կարելի կը լինի կազմել յատուկ խմբագրութիւն՝ տպագրութեան ձեռնարկելու համար։ Սա մի մեծածախս, բարդ եւ կարեւոր ձեռնարկ է, որ պահանջում է լուրջ աշխատանք։ Եւ ներկայ համագումարի վրայ պարտականութիւն է ընկնում գիտակցել այդ եւ վերաբերել խնդրին համապատասխան լրջութեամբ։

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐ։— Երեք տարուց ի վեր «Միութիւնը» մասնակցում է Խաղաղութեան կոնգրէսին, որ եւրոպական ամենակարեւոր համախմբումներից մին է, եթէ ոչ առաջինը — յատուկ ներկայացուցիչ ուղարկելով։ Ինչպէս գիտէք Congrès de la paix *կայանում է իւրաքանչիւր տարի, զանազան երկրների մէջ։ 1902-ին մենք ներկայացուցիչ ուղարկեցինք Մոնակօ, իսկ 1903-ին Բուան։ Երկու անգամն էլ Հայոց դատի պաշտպանը՝ հայ ուսանողութեան անունից՝ մեր յարգելի բարեկամ Պիեր Քիարն էր, որ իր պաշտօնը կատարեց փայլուն կերպով, մտցնելով ժողովի պաշտօնական որոշումների մէջ՝ հայկական խնդիր։ Անցեալ 1904 թուին Խաղաղութեան կոնգրէսն գումարուեց Ամերիկայի մէջ, Բոստոն քաղաքում. Բերնի մշակած* Bureau*-ի համաձայնութեամբ «Միութեան» ներկայացուցչի պաշտօնը առաջարկեցինք Ամերիկայի յայտնի գործող Պալոգեանին, որը եւ պէտք է պաշտպանէր մեր դատը։ Սակայն մեր այս ներկայացուցիչը այդ ժողովում պաշտօնապէս հրապարակ չեկաւ, քանի որ այդ միջոցին Բոստոն հասաւ հայոց կաթողիկոսի պատգամաւորութիւնը, որ պաշտօն ունէր հարկաւոր դիմումներն անելու։*

Խաղաղութեան կոնգրէին մասնակցելու խնդիրը, մեր կարծիքով, մոռացութեան չպիտի տրուի եւ ապագայում։ Մեր դատի ձեռնհաս բարեկամներից մէկը, յայտնի իտալացի գործող Մոնետա՝ իր գոհունակութիւնը յայտնելով այս ձեռնարկի համար, յորդոր կարդաց շարունակել նոյն ուղղութեամբ, եւ մենք մեզ պարտք ենք համարում Համագումարի առջեւ յիշատակել այդ կարծիքը, իբրեւ ուղեցոյց ապագայի համար։

«Միութիւնը» առիթը ձեռքից բաց չէ թողել հայկական դատը ներկայացնելու եւ այլ համաժողովներում — ինչպէս օրինակ, Մամուլի Միջազգային կոնգրէում, գումարուած այն քաղաքում ուր այժմ հաւաքուած ենք մենք։ Մամուլի կոնգրէն իրան իրաւասու չհամարեց պաշտօնապէս ծրագրի մէջ մտցնելու մեր խնդիրը. սակայն անպաշտօն կերպով՝ նրա անդամների մեծագոյն մասը ստորագրեցին մի բողոքագիր՝ թուրքական ռեժիմի ոչնչացումը պահանջող, եւ միաժամանակ պարտաւորութիւն յանձն առան՝ պաշտպանելու մեր ժողովրդի պահանջները իրանց օրգանների մէջ։ Բացի դրանից, ուրիշ դէպքերում էլ, կամ պաշտօնական գրութեամբ եւ կամ հեռագրով յիշեցրել ենք մեր հարցը՝ այն կարեւոր միջազգային համախմբումներին, պարլամենտական եւ քաղաքական, որոնք գումարուել են վերջին երկու տարուայ ընթացքում Եւրոպայի այլեւայլ կենտրոններում։

ԵՐԿԻՐ ԳՆԱՑՈՂՆԵՐ։— Վերջին կոնգրէին հաստատեց մեր մի առաջարկը — երիտասարդ ոյժեր ուղարկել թուրքաց Հայաստան, ուսումնասիրութիւններ անելու պատրուակով, բայց իրօք՝ պրոպագանդի համար։ Նոյն կոնգրէում երկու ընկերներ պատրաստականութիւն յայտնեցին Երկիր գնալ, որը եւ ընդունուեց ջերմ համակրութեամբ ժողովի կողմից։ «Միութիւնը» յանձն առաւ նիւթապէս նպաստել գնացողներին։ Ցաւ է ասել, որ մեր ընկերներից մէկը՝ դեռ գործի չգնացած, մեռաւ Թոքախտից (Սուրէն Էթմէքճեան), միւսը գնաց, սակայն, հանդիպելով արգելքների, անկարող եղաւ մտնել Երկիր։ Դրանից յետոյ ուրիշ ցանկացողներ մեր համալսարանական երիտասարդութեան մէջ չգտնուեցին, եւ մեր հրաւէրները, արուած մասնաւոր կերպով, դրական արդիւնք չունեցան։

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ։— 1900 թուին, համաձայն վիճակագրութեան որ մենք ունէինք ձեռքի տակ, Եւրոպայի հայ ուսանողների թիւը հասնում էր 270-ի։ Վերջին տարիների ընթացքում այդ թիւը չի աճում, գլխաւորապէս այն պատճառով, որ Թուրքիայից, այդ երկրի քաղաքական-տնտեսական տագնապի պատճառով, եկողների թիւը նուազում է։ Այժմ մենք չունենք Եւրոպայում թուրքահայ ուսանողների այն քանակը, որ կար երբեմն։ Ռուսահայերը նոյնիսկ աւելանում են, թէեւ ոչ շատ զգալի կերպով, բայց մեր թուրքահայ ընկերները՝ նուազում են։ Ահա մի քանի քաղուածքներ եղած թուերից*։

ՖՐԱՆՍԻԱ	Պարիզ Նանսի Մոնպելիէ
ՇՎԷՑԱՐԻԱ	Ժընեւ Լօզան Վինտենթուր Ցիւրիխ Բերն
ԲԵԼԳԻԱ	Բրիւսէլ Լիեժ Ժամբլու
ԻՏԱԼԻԱ	Պադովա Վենետիկ
ԱՆԳԼԻԱ	Լոնտոն
ԱՒՍՏՐԻԱ	Լեմբերգ Կրակով Ջերնովից Վիեննա
ԳԵՐՄԱՆԻԱ	Բերլին Բրիսլաւ Դարմշտատ Դրեզդեն Ենա Լայպցիկ Կարլսրաղէն Հալլէ Հայդելբերգ Հոհենհայմ Մարբուրգ Միւնխէն Միթվայդա Շտրասբուրգ Ցվիկաու Ֆրայբերգ Գեօթէն Ֆրայբուրգ Տուբինգէն Վիտցբուրգ

*) Մանրամասն վիճակագրութիւն ուսանողական մարմիններից չստացանք։ Եղածներն էլ պիտի մտնէին «Տեղեկագրի» մէջ, որը, սակայն, չտպագրուեց (թէեւ արդէն սկսած էր) մի անակնկալ պատճառով — կարգ. յանձնաժողովի ստիպողական մեկնումը դէպի Սոֆիա։

Այս տարի Եւրոպայում եղած հայ ուսանողների թիւը պէտք է հաշուել .....[53]։ Դրանցից ուսանողուհիներ մօտաւորապէս .....[53]։ Տխրութեամբ պէտք է խոստովանել, որ այսքան օրիորդների մէջ չկայ եւ ոչ մի թուրքահայ ուսանողուհի — մի տխուր փաստ՝ օսմանեան կայսրութեան կին-հասարակութեան վիճակի մասին։

ԴՐԱՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ։— Սրանից չորս տարի առաջ, երբ «Միութեան» ղեկը անցաւ այժմեան ղեկավարների ձեռքը, մենք ստացանք նախկին կարգադիր յանձնաժողովից՝ կազմակերպութեան ամբողջ հարստութիւնը — 274 ֆրանկ։ Եւ երբ Միւնխէնի կոնգրէում հարց դրինք թէ պէտք է կազմել 10 հազար ֆրանկի նախահաշիւ, մեր ուսանողութեան մեծամասնութիւնը դա վերագրեց մեր ծայրայեղ միամտութեան։ Բայց հազիւ տարին անցած՝ այդ գումարը արդէն կար։ 1902 թուի Մարտ 25-ին գանձարանը ունէր 10.071 ֆրանկ 35 սանտիմ, ինչպէս այդ երեւում է Ժընեւի կոնգրէին ներկայացրած տպագրական հաշուից։ Ժընեւի համագումարում մենք ներկայացրինք աւելի մեծ նախահաշիւ — 15 հազար ֆրանկ, որը շատերը համարեցին կատարելապէս անիրագործելի։ Սակայն այս էլ իրագործուեց։ 1902-1903 թուականներին գանձարանը մուտք ունեցաւ 13 հազար ֆրանկ, մի գումար, որով մենք համարձակուրէն ձեռնարկեցինք համագումարի որոշումների իրագործման։

1904 թուից Լիազօր կոմիտէն համարեա դադարեց դրամ հանգանակելուց, քանի որ եղած փողերը միանգամայն բաւարար էին գործը շարունակելու համար, իսկ լինելիք եկամուտները, որ գոյանում են Հայաստանի քարտէզից (միակ հրատարակութիւնը, որ վաճառւում է փողով) եւ կը գոյանայ Մեծ-ժողովածուից, բաւական կը լինեն, կարծում ենք, ընթացիկ ծախքերը ծածկելու համար։ Նոր ձեռնարկների համար, այս համագումարից յետոյ, ի հարկէ հարկ կը լինի դիմել նոր ժողովարարութեան[46], եւ այն մեծ չափով, քանի որ «Միութիւնը» այժմ շատ փոքրիկ գումարներով գործ կատարել՝ անկարող է։ Թոյլ տուէք յիշատակել մեծ դառնութեամբ, որ մեր եկամուտների մէջ ուսանողների տուած անդամավճարները կամ նուէրները բռնում են մի աննշան տեղ, այնքան աննշան, որ նոյնիսկ ծանր է առաջ բերել։ Այդպէս օրինակ 1901-2-ին՝ ամբողջ ուսանողութիւնից ստացուել է անդամավճար՝ 617 ֆրանկ։ 1903-ին՝ 140 ֆրանկ. 1904-ին՝ 27 ֆրանկ։ Երեւակայեցէք թէ որքա՛ն ողբալի պիտի լինէր մեր վիճակը, երբ յոյս դնէինք «ուսանողական» եկամուտին վրայ... Դեռ աւելին։ Կան ուսանողական մարմիններ, որոնք ոչինչ չմտցնելով գանձարան, չեն վերադարձրել փոխարինաբար գանձարանից վերցրած գումարը, կամ չեն հասցրել գանձարանին այն եկամուտները, որ ստացել են գանձարանի նպաստով կազմակերպուած երեկոյթներից... Այս փաստերի գնահատութիւնը թողնում ենք Համագումարին։

Մի քանի քաղուածքներ գանձապահի մատեանից՝ 1901 թուի սկիզբէն մինչեւ 1902 թ. Մարտ 25ը գանձարանը մտել է՝ 10.071 ֆրանկ 35 սանտիմ։ Նոյն ժամանակամիջոցում ծախք եղել է 2662 ֆրանկ 66 սանտիմ։

Ժընեւի համագումարից յետոյ՝ մինչեւ ներկայ 1905 թ. Մարտը՝ մուտք եղել է 13.634 ֆրանկ 40 սանտիմ

Ծախք՝ 12.089 ֆ. 15 ս.

Ընդամէնը մուտք 23.705 ֆ. 75 ս.

Ծախք 14.751 ֆ. 81 ս.

Մնացած գումարը Մեծ-ժողովածուի յատուկ գումարն է, որ պահ դրուած է Ժընեւի Comptoir d'Escompte բանկի մէջ։ (Աւելի մանրամասն տեղեկութիւններ կամեցողները պէտք է դիմեն գանձապահին, որի մօտ կայ յատուկ մատեան մուտքի եւ ելքի, ինչպէս եւ նուէրների)։

Դրամական ծախքերի գլխաւոր յօդուածները, ի հարկէ, յիշատակուած ձեռնարկներն են։ Դրանցից դուրս էլ, սակայն, եղել են ծախքեր եւ նպաստներ։ Այսպէս, օրինակ, մենք օգնել ենք քաղաքական հայ բանտարկեալներին, ուղարկել ենք նպաստ Սասունի համար, տուել ենք ուսանող-թարգմանիչներին հոնորար — մի սկզբունք, որի կիրառութիւնը չատ ցանկալի է. աջակցել ենք դրամով ուսանողական-հայկական զանազան երեկոյթներին, հասարակական նշանակութիւն ունեցող ձեռնարկների, ինչպէս Գրիգոր Արծրունու մահուան տասնամեակի երեկոյթները, պսակ՝ Ֆավոնի մահուան առիթով, եւայլն եւայլն։

Ընկերներ,

Ահա համառօտ ուրուագիծը կոմիտէի գործունէութեան։ Այդ գործունէութիւնը, ի հարկէ, համեստ է եւ չի արդարացնում այն գովեստները, որոնք չռայլուել են արտասահմանի հայոց լրագիրների, ինչպէս եւ շատ մասնաւոր անձերի կողմից «Միութեան» հասցէին։ Այդ գովեստները մենք վերագրում ենք նրանց զգացմունքներին, բայց ոչ կատարուած գործին։ Մի բան միայն անհերքելի է.— Որ գործը աստիճանաբար զարգացաւ, առաջ գնաց եւ ընդունեց լուրջ կերպարանք, որ ուսանողութիւնը, իբրեւ մի մարմին, կապուած գաղափարով, ձեռնարկներով, կարող է ե՛ւ հնարաւորութիւն ունի, նոյնիսկ համալսարանական շրջանում, զգալիօրէն ծառայել իր ժողովրդին, նրա դատին, նրա կարիքներին։

Ապագային, աւելի լայն յաջողութեան տեսակէտից՝ հրաշքներ եւ հրաշագործներ չեն պահանջւում, այլ միայն մի բան, որ ուսանող-երիտասարդներս գիտակցենք մեր պարտականութիւնները, եւ գործի մէջ մտցրենք — ինչպէս մի անգամ էլ առիթ ենք ունեցել ասելու — աշխատանք՝ զրախօսութեան փոխարէն, հաւատ՝ պեսիմիզմի տեղ եւ միացած, համայնական վաստակ, անջատ եւ պատահական փորձերի փոխարէն։

Լիազօր Կոմիտէի եւ Կարգադիր Յանձնաժողովի դիմաց՝

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԼՈՒՄԵԱՆ

53.- Ծնագրին մէջ թիւերը չեն նշանակուած։ Այլուր յիշուած են 230, 270 մենչեւ 350-400 թիւերը։ Տարբերութիւնը, կ՚ենթադրենք, Եւրոպայի հայ ուսանողութեան ընդհանուր թիւին եւ միութեան անդամակցողներում միջեւ կը կայանայ։

Փաստ. 1465-54

Բ 11.– ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ – 1905 –

1905 թ. Ապրիլի 3ին Երկուշաբթի երեկոյեան 9ին Շվէյցարիայի Բերն քաղաքի Այդեր հիւրանոցի մեծ դահլիճում գումարուեց Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան վեցերորդ Համագումարը։

Նախապատրաստական ժողովում քննելով համագումարին եկած պատգամաւորների եւ անդամների թիւը, օրինաւոր համարուեց կայանալիք համագումարը, որից յետոյ Լիազօր Կոմիտէի նախագահ պ. Խաչատուր Մալումեանը բացուած յայտարարեց համագումարը։ Ժողովին կային մի քանի հիւրեր եւ եկել էին պատգամաւորներ

(Խնդրում եմ մատեանից արտագրել թէ պատգամաւորների եւ թէ համագումարին մասնակցող ուսանողների անունները)։

Փաստ. 1465-70

1905ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ (ԲԵՐՆ) ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

II Նիստ
(Ապրիլ 4)

1. Գ. Բէկ-Գիլեանց — Ժընեւ
2. Ստեփան Ղամբարեանց — Միւնխէն
3. Յ. Հարբաբչեան — Մոնպելիէ
4. Աւետիք Տէր Պողոսեան — պատգամաւոր Լայպցիգի ուսանողութեան եւ ուսանող նոյն տեղի
5. Սարգիս Օթարեանց — Միւնխէն
6. Միքայէլ Մանդինեան — Ժընեւ
7. Կատարինէ Շախումեանց — Բեռն
8. Կատրամիդէ Գեղամեանց — Բեռն
9. Նատալիա Պապովեան — Մոսկուա[?]
10. Աննա Սամուէլեան — Բեռն
11. Վարսենիկ Պարոնեանց — Բեռն
12. Միհրան Տոկթորեան — Նեոշաթէլ
13. Գէորգ Գրաֆլեան — Ժընեւ
14. Արդուարդ Հազարապետեան — Ժընեւ
15. Գէորգ Մեհրաբեան — Վիտցբուրգ
16. Ա. Կարապետեան — Ժընեւ
17. Ա. Յ. Ճէպէճեան — Բեռն
18. Սոֆիա Գոչալեան — Բեռն
19. Սիրան Զաւէն — Լօզան
20. Սաթենիկ Զաղէթեան — Լօզան
21. Մ. Եաղրճեան — Լօզան
22. Վ. Խաչատրեանց — Բեռն
23. Ա. Մեղրեանց — Յիւրիխ
24. Թ. Ժամկոչեանց[?] — Ժընեւ
25. Յովհաննէս Տէր-Օհանեան
Նոր եկած (նախկին Խարկովի ուսան.)
26. Արամ Աւետիսեան — Բեռն
27. Խունէ Կայալեան[?] — Ժընեւ
28. Անտիկ Մամիկոնեան — Ժընեւ
29. Ժունէ Սիրիբրակեան[?] — Ժընեւ
30. Ռ. Տէր-Ղեւոնդեան — Ժընեւ
31. Մ. Տուրփայեան — Ժընեւ
32. Ս. Կարդաշովա — Բեռն
33. Գ. Թորոսեան — Բեռն
34. Սարգսեան — Յիւրիխ
35. Մ. Բաղդասարեան — Ժընեւ
36. Սուլյայեան — Ժընեւ
37. Աննա Բուդաղեան — Ժընեւ
38. Հայկ Ազատեան — Բեռն
39. Հմայեակ Աւարեանց — Ժընեւ
40. Շուշանիկ Նաբաթեան — Յիւրիխ
41. Սիմէոն Յակոբեան — Լօզան
42. Արամայիս Երզնկեան — Ժընեւ
43. Բ. Իշխանեան — Բերլին
44. Խաչատուր Մալումեան — Ժընեւ
45. Աշոտ Տէր-Պողոսեան — Բեռն
46. Գէորգ Թէլճթեան — Heidelburg
47. Վառվառէ Կաճկաճեան — Լօզան
48. Մ. Պոպովեան — Բեռն
49. Ալեքսանդր Ապաջեան
50. Աննա Տէր-Օհանեան — Ժընեւ
51. Նուարդ Ժամհարեան — Ժընեւ
52. Մարիամ Յովհաննիսեան — Ժընեւ
53. Վրթանէս Սիմէոնեան — Լօզան
54. Նունուֆար Դուշյեան — Ժընեւ

II-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Իշխանեանի։
Ներկայ էին 49։

Նախագահը յայտնում է Ժընեւի «Ջանք» կոմիտէի որոշումը որով իրենց պատգամաւոր պ. Կարապետեան համարուելու է պատգամաւոր երկու ձայնի իրաւունքով. նախագահը յայտնում է նոյնպէս որ օրակարգի մէջ բաց է թողնուած Բերլինի ուսանողութեան առաջարկը այսպէս ձեւակերպուած. «Միութեան գոյութեան խնդիրը», որ մտնում է օրակարգի VIII-րդ նիստի մէջ։ Յիւրիխի ուսանողութեան պատգամաւոր օր. Նաբաթեան բացատրելով թէ Յիւրիխի ուսանողութիւնը գտնուել է բացառիկ պայմանների մէջ՝ չիմանալով համագումարի կայանալը՝ ուշացրել է իր առաջարկները ժամանակին հասցնելու կարգադիր յանձնաժողովին. խնդրում է այժմ եւեթ մտցնել օրակարգի մէջ. միութեան բաժանման խնդիր (խանգարողներին առաջարկել հեռանալ)։

բ. Ժողովածուն հրատարակել հայերէն լեզուով եւ ոչ ֆրանսերէն։

գ. Մրագրին տալ դաշնակցական ուղղութիւն։

Ժողովը լսելով Լիազօր կոմիտէի նախագահի բացատրութիւնը թէ Յիւրիխի ուսանողութեան հրաւիրագրեր չստանալը թիւրիմացութեան արդիւնք է, թէպէտ հաւաստիօրէն ուղարկուած էր, համագումարը որոշեց.

Իբրեւ բացառութիւն ընդունիլ նրանց առաջարկները եւ մտցնել օրակարգի մէջ։

Այնուհետեւ եղան օրակարգի վերաբերեալ նկատողութիւններ. պ. Բաղդասարեանը առաջարկեց նման բնաւորութեամբ խնդիրներ օրակարգի մէջ միացնել. երկար վիճաբանութիւններից յետոյ, որոնք առաջարկում էին օրակարգի զանազան կէտերը միացնելու, համագումարը վճռեց պահել որոշուած օրակարգն անփոփոխ լրացնելով այդ՝ նոր առաջարկներ նրա մէջ տեղաւորել։ Ժամանակի սղութեան պատճառով ժողովը թոյլատրեց պ. Մալումեանին փոխանակ համարատուութեան ըստ օրակարգի, բացատրել «Բազմավէպի» խմբագրութեան առաջարկը Հայկարանի մասին. առաջարկը կայանում է հետեւեալում. կազմակերպել մի տեսակ լսարան գրադարաններ եթէ ոչ Եւրոպայի բոլոր մեծ կեդրոններում, գէթ մի երկու տեղ եւ ձեռնհաս անձանց միջոցով դասախօսութիւններ կարդալ, միջոց տալով հայ կեանքի, գրականութեան եւ այլն ուսումնասիրութեանը՝ լուրջ գիտական հիմունքների վրայ. նիւթական միջոցների մասին յայտնում է որ մի հարուստ 10000 ֆրանկ է յատկացնում յատկապէս այդ նպատակի համար. առաջարկում է նաեւ որ Հայկարանը ունենայ իր օրգան հանդէսը, ուր հրատարակուին միութեան ժողովում կարդացուած ըէֆէրատները[8]։ կամ առնուազն միութիւնը յանձն առնի նման շարժական հիմնարկութիւններ հաստատել որոնք մօտաւորապէս իրագործեն Հայկարանի միտքը։

Ի լրումն այդ առաջարկի պ. Մալումեան յայտնում է թէ ներկայ եղող մեր ընկերներից մինը յանձն է առնում մի կեդրոնական գրադարան հիմնելու համար 3000 ֆրանկ յատկացնել. այս խնդրի վերաբերմամբ շատ դատողութիւններ եղան առանց որոշ եզրակացութեան գալու։

III-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Խզմալեանի (Տիգրանեան)։

Պ. Մալումեան յայտարարելով համագումարին ամէնքիս քաջ յայտնի հայ յեղափ. գործիչ Քրիստափոր Միքայէլեանի եղերական մահը Սոֆիայում, ժողովականները յոտնկայս յարգեցին հանգուցեալի յիշատակը։ Պ. Բաղդասարեան առաջարկեց՝ Դրօշակի խմբագրութեանը պ. Միքայէլեանի մահուան առիթով համագումարի ցաւակցութիւնները յայտնել։ Բանաձեւը պիտի կարդացուի յետոյ։ Պ. Մալումեանը առաջարկեց նոյնպէս ոտքի կանգնելով յարգել յիշատակը հազարաւոր հայ, ռուս, լեհ, հրեայ եւայլն զոհերի, որոնք ռուս ներկայ ռեժիմի գազանութիւններին ենթակայ եղան, մասնաւորապէս չեչտելով Բագուի զոհերը։

Ժողովը յոտնկայս յարգեց նրանց յիշատակը։ Պ. Մալումեանը կարդում է Pierre Quillard-*ին եւ* Corda Fratres-*ին ուղղելիք պատասխանները որոնք են*[54]՝

Paris, Pierre Quillard, Nollet 10.

Congrès d'Union des Etudiants Arméniens d'Europe, réuni à Berne, remerciant votre dépêche, vous envoie l'expression de sa profonde sympathie. La jeunesse arménienne n'oubliera jamais services importants rendu à [la] cause arménienne par vous et par le "Pro Armenia".

Torino, Président de Corda Fratres
Rue Ternsia 44

Touché de votre dépêche de sympathie, Congrès d'Union des Etudiants Arméniens de l'Europe, réuni à Berne, vous envoie ses salutations fraternelles. Convaincu succès cause arménienne, qui est celle de justice, nous continuerons cette lutte, jusque triomphe de liberté. Vive jeunesse italienne.

Président

Այնուհետեւ ժողովն անցաւ հարցին — ուսանողական Հայկարանի խնդրին։ Ժողովականները յայտնեցին երկար թեր ու դէմ կարծիքներ առաջարկի՝ իրագործելի ու անիրագործելի, նպատակայարմար թէ աննպա-

տակայարմար լինելու մասին. պ. Մալումեանը առաջարկեց հետեւեալ բանաձեւը.

Լսելով Մխիթարեան միաբ[անութեան] առաջարկը եւ ենթարկելով նրան քննութեան, համագումարը գտաւ Հայկարանի միտքը սկզբունքով համակրելի եւ հայկական անցեալի ու կեանքի հետ ծանօթանալու տեսակէտից օգտակար։ Քուէարկութեան դնելով ստացաւ 27 ձայն ընդ. 15ի։

2.- Ժողովը որոշեց ընտրել մի յանձնաժողով որը քննելով առաջարկի տեխնիկական կողմը, երկու երեք օրից մանրամասն զեկուցումն տայ համագումարին, որից յետոյ կ'որոշուի միաբանութեան հետ սկսելիք բանակցութիւնները։

Վերոյիշեալ բանաձեւը մեծամասնութեան կողմից ընդունելուց յետոյ, ոմանք պահանջեցին քուէարկել պ. Երզնկեանի բանաձեւը որ բոլորովին հակառակն էր վերոյիշեալին. ստացաւ միայն 13 ձայն։

IV-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Սարգսեանի։

Խօսքը տրուեց Լիազօր կոմիտէի նախագահին որը ներկայացրեց կոմիտէի համարատուութիւնը. բնագիրը մնում է միութեան արխիւում։ Որովհետեւ գանձապահը օր. Զոհրապեանը յարգելի պատճառով չէ կարողացել ներկայ լինել համագումարին եւ մանրամասն դրամական հաշիւ չէ ներկայացուած, ընտրուեցին պարոնայք Հազարապետեան, Աւետիսեան եւ Տուրփայեան որ յաջորդ նիստերից մէկում զեկուցումն տան հաշուի մասին։

Այդ ընտրութիւններից յետոյ եւս եղան երկար վիճաբանութիւններ նոյն խնդրի առթիւ։ Ժամանակն արդէն առաջացած լինելով եւ ժողովի մեծամասնութեամբ այդ նիւթին վերաբերեալ վճիռը կայացրած՝ նախագահը յայտարարեց նիստը փակուած։

V-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Բաղդադեանի։
Ժամը 9 եւ ½ին։

Պ. Նախագահը առաջարկեց կարդալ նախորդ ժողովների արձանագրութիւնները։ Պ. Երզնկեանը, քարտուղար այդ ժողովների, չնայած որ ինքը առաջին ժողովում քարտուղարութեան պաշտօն չի վարել, բայց պ. Նախ. Մալումեանի առաջարկութեամբ նշանակել էր գլխաւոր կէտերը, որոնց մէջ բաց էր թողել ուսանողական անդամավճարների մասին. այդ խնդիրը դելիկատ[55] համարուելով յարմար գտնուեցաւ առանձնապէս չխօսել դորա մասին, բայց մի քանի խօսքով մտցնել արձանագրութեան մէջ։ Առաջին ժողովի արձանագրութիւնը ընդունուելով՝ պ. քարտուղարը չարունակեց երկրորդի ընթերցումը, որը կազմուած էր չափազանց ընդարձակ, երկրորդական կէտերի բոլոր մանրամասնութեամբ. առաջարկուեցաւ չչարունակել ընթերցումը, արձանագրութիւնները կազմել ամփոփ իրանց գլխաւոր կէտերով։ Սորանից յետոյ պ. Բ. Իշխանեանը սկսեց իւր դասախօսութիւնը «Թիւրքահայկական խնդրի տիպլոմատիական դրութիւնը» վերնագրով՝ Հայկական հարցի միջազգային դիւանագիտական բնոյթը. եւրոպական պետութիւնների տնտեսական, ֆինանսական եւ քաղաքական շահերը Թուրքիայի եւրոպական եւ ասիական բաժիններում. այդ շահերի փոխադարձ հաւասարակշռութիւնը ապահովում է արեւելեան խնդրի status quo-ի[56] անխախտութիւնը։

Թուրքիայի յարատեւ գոյութեան եւ պետական անձեռնմխելիութեան ամենամեծ նախանձախնդիրը Ռուսաստանում. եւրոպական պետութիւնների ձեռնպահ եւ բացասական վերաբերմունքը դէպի արեւելեան խնդրի որեւէ հատուածը, այն դէպքում երբ նրանք որեւէ անմիջական շահ չունին այդ խնդրի լուծման մէջ. Ռուսաստանի հեղինակաւոր ազդեցութիւնը արեւելեան հարցի վերաբերեալ տեղի ունեցած տիպլոմատիական ակտերի մէջ. Ռուսաստանը իբրեւ բացարձակ թշնամի հայկական հարցի լուծման. Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ակտիւ (զինուած) գործունէութեան ապարդիւն հետեւանքները արդի քաղաքական տնտեսական շահերի եւ պետական դիպլոմատիական յարաբերութիւնների դասաւորութեան շրջանում. (Մակեդոնիայի դէպքերը).

54.- Թարգմանութիւնը:

Փարիզ. Պիէր Քիւսոին.

Եւրոպայի հայ ուսանողներու միութեան կոնգրէն, գումարուած Պերնի մէջ, շնորհակալութիւն յայտնելով ձեր հեռագրին համար, ձեզի կը յղէ իր խորին համակրանքին հաւաստիքը: Հայ երիտասարդութիւնը պիտի չմոռնայ քնաւ ձեր եւ Pro-Armenia-ի մատուցած կարեւոր ծառայութիւնները յօգուտ հայ դատին:

Թորնիօ, Comte Fratrès-ի նախագահին

Զգացուած ձեր համակրանքի հեռագրէն, Պերն գումարուած Եւրոպայի հայ ուսանողներու միութիւնը կը յղէ ձեզի իր եղբայրական ողջոյնները: Համոզուած որ հայ դատի յաջող ելքը՝ յաջողութիւնն է նաեւ արդարութեան՝ մենք պիտի շարունակենք այս պայքարը մինչեւ ազատութեան յաղթանակը:

Կեցցէ Իտալիոյ երիտասարդութիւնը:

Նախագահ

55.- Փափուկ, նուրբ:
56.- Լատիներէն՝ նախկին դրութեան պահպանման:

(Մարկսի, Էնգէլսի, Մէհրինգի, Լիպկնէխտի, Բէբնշտէյնի եւ այլն կարծիքները Թուրքիայի եւ եւրոպական պետութիւնների դիպլոմատիական յարաբերութիւնների, արեւելեան խնդրի status quo-ի մասին)։

Սուլթանական ռեժիմի քաղաքական ինտիգրալ[57] գոյութիւնը պայմանաւորուած է ցարիզմի թունաւոր գոյութեամբ։ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ակտիւ գործունէութեան անհրաժեշտութիւնը Կովկասում. միայն ռուսական աբսոլիտիզմի[58] վախճանական խորտակումն է, որ շնորհում է Թուրքահայ խնդրի լուծման օժանդակ հիմքեր՝ օպօնենտներ[59]։

Մանդինեան.— Ինչո՞ւ Իշխանեանը հայկական խնդրի լուծումը ամբողջապէս գտնում է դիպլոմատիայի մէջ. Դաշնակցութիւնը ինքը իւր վերջնական յոյսը ոչ թէ դիպլոմատիայի, այլ իւր վրայ է դնում. իսկ դիպլոմատիային դիմելը այդ ոչ ողորմութիւն խնդրել է նշանակում եւ ոչ էլ ամբողջ գործի միակ յոյսը. այլ դրանով արթնացնում է քաղաքակիրթ Եւրոպայի ուշադրութիւնը դէպի մի այնպիսի ազգ, որ ունեցել է իւր անցեալը, իւր կուլտուրան, իւր քաղաքական դերը։ Սխալ է նոյնպէս այն կարծիքը որ հայ ժողովուրդը յեղափոխական չէ. փորձերը այժմ ցոյց են տալիս, որ տաճկահայը ծախում է ամէն ինչ, զէնք գնելու, իւր գոյութիւնը պաշտպանելու։ Պ. Իշխանեանի ասելով, հայ յեղափոխական խմբերը կոտորածներ են առաջ բերում յատկապէս այն պատճառով, որովհետեւ դրանք դրսից եկած խմբեր են. դա եւս մի թիւրիմացութիւն է, կամ աւելի ճիշտ՝ կեանքին անծանօթութիւն, որովհետեւ կռուողները տանջուող ժողովուրդի խաւերիցն են — բուն երկրից։ Դաշնակցութիւնը ընդունում է եւ այն, որ ցարի կառավարութիւնն է հայերի թշնամին։ Նա ունի (Դաշն.) Ռուսաստանում իսկ իւր ակտիւ գործունէութիւնը (օրինակ թէ առաջ եւ թէ այս վերջին դէպքերում)։

Ս. Բակրեան.— Հայկական դատի մասին խօսել, եւ կանգ առնել միայն այն թեմայի վրայ, ինչպէս պ. Իշխանեանն է արել, դա ամենախոշոր թիւրիմացութիւնն է. պէտք է նկատել որ այդ տաճկահայկական խնդիրը, ոչ թէ արուեստականօրէն է առաջ բերուած, այլ Թուրքիայում տիրող խայտառակ ռեժիմից է առաջ եկած. դիպլոմատիային դիմելը՝ Մանդինեանի կարծիքի նման։ Ցարիզմի խորտակման նկատմամբ չպիտի լինել լաւատես, որովհետեւ ցարիզմի փոխարէն հաւանականաբար կը լինի գերմանիզմ, որը դարձեալ աննպաստ է լինելու մեզ համար։ Այն խնդիրը, որ տաճկահայ խնդրի մասին մտածողները, գրողները եւ պրոպագանդիստները սկզբում եղել են, այժմ էլ նոյնպէս [եղել] են ռուսահայերը — այդ էլ ունի իւր պատճառը. ռուսահայը աւելի բարձր է եղել իւր մտաւոր կուլտուրայով եւ ազատագրական ձգտումներով. նա ձեռք է մեկնել դէպի ստրկութիւն ձգտող իւր արիւնակցին, շատ լաւ ուսումնասիրելով թէ նրան եւ թէ երկրի պայմանները։ Յետոյ նկատեց որ հայկական դատը չպէտք է կապել ցարիզմի տապալման հետ, այլ պէտք է հայկական հողի վրայ դնել։

Եզմալեան.— Տաճկահայե՛ր, սպասեցէք որ ձեզ թալանեն, կողոպտեն, սպանեն. սպասեցէք, որ ցարիզմը տապալուի յետոյ ձեզ կ'օգնենք, իսկ ցարիզմից յետոյ կարող է գալ գերմանիզմ, այն ժամանակ ինչ կ'անենք.— թող պատասխանէ պ. Իշխանեանը։ Շարժումների մէջ, ոչ թէ ակտիւ գործունէութիւն ունին ռուսահայերը այլ տաճկահայերը, օրինակ Սասուն, Վանի ժողովրդական կռիւները, Սերոբ փաշա եւ այլն, այս վերջին դէպքերը։ Ռուսահայերը միայն դրամական եւ բարոյական օգնութիւն են հասցրել. չպիտի ուրանալ Դաշնակցութեան գործունէութիւնը Ռուսաստանում-Կովկասում։ Տաճկահայաստանի մէջ յեղափոխութիւնը աւելի ժողովրդականութիւն ունի, քան մակեդոնական յեղափոխութիւնը իւր երկրում։ Մենք մեծ յոյսեր չունինք դիպլոմատիայի վրայ, բայց պէտք է խոստովանինք, որ նրանք էլ որոշ ծառայութիւններ մատուցեցին։ Մենք արուեստական կերպով յեղափոխութիւն չենք առաջ բերում։ Արիւն թափելը անխուսափելի է, երկնքից օգնութիւն չենք սպասում. մեր մեծ յոյսը մենք ենք. ինչ վերաբերում է Կովկասը մի առ ժամանակ աչքաթող անելուն, այդ էլ հասկանալի է որ դեռ անխուսափելի կարիք կայ, այնտեղ էլ պէտք է լինի ակտիւ գործունէութիւն. չմոռանանք որ այժմ կուռում ենք Կովկասում։ Որտեղ չլինի յեղափոխութիւն, այնտեղ առաջ կը գայ ստրկութիւն։

VI-րդ Ժողով

Նախագահութեամբ պ. Աշոտ Տէր-Պողոսեանի

Ինքը նախագահը բանալով ժողովը խօսեց Իշխանեանի դասախօսութեան մասին. նկատեց որ դա ոչ թէ գիտական աշխատանք էր այլ ագիտացիական բովանդակութեամբ մի ճառ։

Դասախօսը որոշ ոգով է մօտեցել խնդրին. անծանօթ է հայ յեղափոխութեան. յեղափոխութիւնը ժողովրդական է։

Երզնկեան.— Սա պաշտպանում էր Իշխանեանին, որ չի կարելի պահանջել ռեֆերատից[8] այս կամ այն նիւթի մասին խօսել. քննադատութեան ժամանակ չպիտի շեղուել նրա դրած նիւթից։ Սա եւս (Երզնկեան) յայտնում էր այն կարծիքը, իբր թէ Դաշնակցութեան ամբողջ գործունէութիւնը եղել է դիպլոմատիայից ողորմութիւն խնդրելը. ամէն ինչ կախուած է ռուս կառավարութիւ-

57.- Ամբողջական:
58.- Բացարձակատիրութեան:
59.- Ընդդիմախօսներ:

նից· այժմ հայկական դատ գոյութիւն չունի, այլ տաճկահայերի դատ առանձին, ռուսահայերի դատ առանձին· ռուսահայը ոչ մի շահ չունի տաճկահայից (տնտեսական շահ), ուրեմն նրա հետ ոչ մի գործ չպիտի ունենայ։

Մարգսեան·— Իշխանեանի դասախօսութիւնը ոչ թէ լուրջ գիտական մի գործ է այլ անթիւ խճողուած բառերի մի կուտակումն, եւրոպական բառերի մի առձեռն բառարան։ Դիպլոմատիայի մասին համարձակ գուշակութիւնները անել, առնուազն խենթութիւն է։

Աւագեան·— Ռեֆերատը ապացուցեց որ Դաշնակցութիւնը ամբողջ յոյսը դրել է դիպլոմատիայի վրայ· եթէ ցարիզմը կործանուի գերմանիզմը չի կարող նրա տեղը բռնել· ազատ Հայաստանի բուրժուազիական իդէալը առաջ տանել եւ երեք երկրների հայերին միացնել չի կարելի։ Եթէ այնտեղ ձեր եղբայրներին կոտորում են միանգամա՛յն չի նշանակում թէ պիտի մոռանալ Կովկասը։ Ինչո՞ւ Դաշնակցութիւնը եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ սկսեց գործել Կովկասում։

Մալումեան·— Պ· Իշխանեանը չի հասկանում թէ ինչ նպատակով է դիմում դիպլոմատիային։ Մի շարք պատմական սխալներ, ինչպէս օրինակ՝ չհամոզուել [որ] յեղափոխութիւնը ժողովրդականացած [է], յետոյ կռուողներին ընդունել դրսից եկած ուժեր, արիւն թափելը անխոհեմութիւն, դիպլոմատիային դիմելը մուրացկանութիւն։ Այն կազմակերպութիւնը, որ արիւնի փոխարէն արիւն է պահանջում եւ իրական կեանքում ընթանում է միշտ, մինչեւ այսօր եւ ապագայում նոյն իսկ նոյն շաւղով,— այդպիսի մարմնին մուրացիկ անուանել, այդ նշանակում է չհասկանալ ամենատարրական մի գաղափար· դիպլոմատիային դիմում ենք եւ մե՛նք, եւ բոլոր միւս յեղափոխական կուսակցութիւնները· դրա վրայ երբեք չպիտի զարմանալ եւ մուրացկանութիւն անուանել։ Շատ գեղեցիկ է երբ որեւէ գաղափար մտցնում ենք կեանքի մէջ, հասկանալով ի հարկէ, ըմբռնելով կեանքի պայմանները եւ այն միջավայրը, որտեղ գործում ենք· բայց անծանօթ կեանքին, նրա կարիքներին, օտար գաղափարները պատուաստել այդ կեանքում դա նշանակում է քամու ջաղացների հետ կռուել։

Բաղդասարեան·— Սկզբում Դաշնակցութիւնը իւր յոյսը դրել էր դիպլոմատիայի վրայ, իսկ այժմ երբ այդ կէտին երկրորդական տեղ են տալիս, դա մի յառաջդիմութիւն պէտք է անուանել· պետութիւնները իրենց շահերի համար, վերջ չեն տալիս Տաճկաստանի հիւանդ մարմնին· նրանք կոնսերվատիւ[60] են նոյնիսկ միմեանց նկատմամբ։ Գերմանիային ցանկալի է Ռուսաստանի ուժիմը։ Ռուսաստանը ցանկանում է Տաճկաստանի անփոփոխ դրութիւնը· սխալ է ընկեր Իշխանեանի այն կէտը, որ հայկական հարցի լուծումը պայմանաւորուած է ցարիզմի տապալումով· ցարիզմին կարող է յաջորդել բուրժուազիական բռնակալութիւն։ Իբր թէ սոցիալ-դեմոկրատները ուշադրութիւն չեն դարձնում տաճկահայերին· եթէ այլ ազգի սոց· դեմոկրատները օգնութեան ձեռք են մեկնում, միթէ՞ չպիտի օգնէ եւ այն մարդը (այդ կուսակցութեան պատկանող) որ առաջ է գալիս այդ ազգից։

Իշխանեան·— Բառի բուն նշանակութեամբ օպոնենտներ չունեցայ· իմ ասածները մարդկանց բջիջներումն է զետեղուել· այստեղ ես տեսայ միայն սենտիմենտալ զգացումներ, եւ ոչ լուրջ կրիտիկա։ Ցայտնեց, որ ինքը հակառակ չէ տաճկահայ խնդրին եւ նայում է իրերին ոչ թէ սենտիմենտալ կերպով այլ սառն քննութեամբ· դիպլոմատիայից ոչինչ չի կարելի պահանջել։

Այստեղ մի քանի կրկնութիւններ դարձեալ իւր նախկին դասախօսութիւնից։ Ցարիզմից յետոյ գերմանիզմ չի կարող յառաջ գալ· պէտք է բռնել այլ տակտիկա· հայ սոց-դեմոկր[ատները] չեն կարող իրենց սիմպատիայի հետ խառնել իրենց դասակարգային շահերը։ Իշխանեանի խօսակցութեամբ ժողովը փակուեց։

VII-րդ Նիստ
Ապրիլի 6ին
Նախագահութեամբ պ· Մալումեանի։

Ժողովի սկզբում կարդացուեց համագումարի կողմից ուղղած ցաւակցական հեռագիրը Դրօշակի խմբագրութեան Քրիստափոր Միքայէլեանի մահուան առթիւ[61]։

(Խնդրեմ մտցնել ատենագրութեան մէջ)։

Ի նկատի ունենալով որ Բեռնում է գտնուում Միջազ· Խաղաղութեան կոնգրէսի քարտուղար Տիւկոմոն, որ միշտ հանդիսացել է հայոց հարցի պաշտպան, պ· նախագահը առաջարկեց յայտնել այդ անձնաւորութեանը մեր յարգանքը մի հեռագրով։

Եղան հակաճառութիւններ այդ մասին, բայց դրուեցան քուէի եւ ձայների մեծամասնութեամբ ընդունուեց ուղարկել հեռագիրը։

Առարկեցին պ· Մալումեանին որ չգրուի միաձայն· *նա յայտնեց որ կը գրուի՝ ուղղարկի* ժողովը։

Կովկաս խմբի ներկայացուցիչ Սուջայեան խօսեց իրենց խմբի կողմից առաջարկել Երզնկեանի կազմած հետեւեալ բանաձեւը·

Ի նկատի ունենալով որ Ռուսաստանի ներկայ պետական-չինովնիքական-բիւրոկրատական[62] *կազմը հասել է նեխման եւ քայքայման եւ որ այդ պոլիցիական*[63] *կազմը կաչկանդել է Ռուսաստանի ժողովրդների ազատ միտքը՝ տնտեսական, հասարակական, մտաւորական եւ բարոյական ազատ զարգացումը, որ՝ միապետութիւնը կատարում է ոչ միայն Ռուսաստանի, այլեւ ամբողջ Եւրոպայի ժանդարմիայի դերը, Եւրոպայի Հայ ուսանողական 6-րդ համագումարը խորապէս համոզուած է, որ այդ ժողովրդների ազատ զարգացման համար անհրաժեշտ է միապետութեան կատարեալ անկումը, զին[ուորական]-բիւրոկրատական կազմի կատարեալ լիկվիդացիան*[64]*, եւ պահանջում է հիմնադիր ժողովի գալը, ուղղակի, գաղտնի, ընդհանուր, հաւասար ձայնատուութեամբ առանց ազգի եւ սեռի խտրութեան։*

Այս բանաձեւի առթիւ եղան երկար վիճաբանութիւններ։ Առաջարկուեցաւ շեշտել եւ Կովկասի մասին, հիմնադիր ժողով Կովկասում։

Ֆեդերատիւ-ռամկական կազմակերպութիւն· այս կէտի նկատմամբ եւս տեղի ունեցաւ երկար վիճաբանութիւններ։ Վերջը նախկին ռեզոլիւցիան[65] *ընդունեց հետեւեալ ձեւը։ «Նկատի ունենալով որ Ռուսաստանի կառավարութեան բիւրոկրատական կազմը հասել է քայքայման եւ որ այդ կազմը կաչկանդել է Ռուսաստանի բաղկացուցիչ բոլոր ժողովուրդների տնտեսութեան ու քաղաքական ազատ զարգացումը, որ միապետութիւնը կատարում է, ոչ միայն Ռուսաստանի այլ նոյնիսկ Եւրոպայի ազատ մտքի ժանդարմիայի դերը, Եւրոպայի հայ ուսանողութեան միութեան 6-րդ համագումարը, գումարուած Բեռն, յայտնում է խորին համոզմունք, որ այդ ժողովրդների ազատ զարգացման համար անհրաժեշտ է միապետութեան ոչնչացումը եւ պահանջում է Ռուսաստանի հիմնադիր ժողովի գումարումը, հիմնուած ընդհանուր, գաղտնի, ուղղակի եւ հաւասար ձայնատուութեան վրայ, առանց ազգի, դասակարգի եւ սեռի խտրութեան։ Միանգամայն անհրաժեշտ է գտնում հիմնադիր ժողովի կոչ Կովկասի համար, ապահովելով, Կովկասի տեղական լայն ինքնավարութիւնը յատուկ օրէնքներով»։*

VIII-րդ Նիստ

Նախագահութեամբ պ· Մանդինեանի։

Այս ժողովում ընդունուեց վերը յիշած բանաձեւը· ապա, պ· Տիգրանեան կարդաց իւր դասախօսութիւնը· «Յեղափոխական կուսակցութիւններ եւ Կովկասը»։ *Դասախօսը կանգ առաւ հետեւեալ կէտերի վրայ՝ «Արմենիա»· Արմենիան, այսպէս ասած, խօսքի կուսակցութիւն· այժմ ոչ յեղափոխական օրգան։ Հնչակեան կուսակցութիւն· սորա դերը պրոպագանդայի գործում սկզբում սոցիալիստական, չի ունեցել յեղափոխական ակտիւ բնաւորութիւն։ «Դաշնակցութիւն»· լուսաբանութիւն Կուկունեանի արշաւանքի, այդ արշաւանքի ունեցած բարոյական ազդեցութիւնը պրոպագանդայի գործում· Կովկասահայ երիտասարդութեան տաճկահայ խնդրին յարուելը· չօվինիզմ*[66] *բառի անմտութիւնը, այնտեղ որտեղ կայ տէրիտորիական ազատութեան պահանջում (դաշնակցականների պահանջ)· Դաշնակցութեան նշանակութիւնը· խօսքից գործի անցնելու քայլեր· զէնքի փոխադրութիւն· Եւրոպային դիմելը ոչ թէ ողորմութիւն, այլ հայ ժողովրդի կուլտուրական ազգ լինել ցոյց տալը· Դաշնակցութեան ժողովրդականութիւնը· Կովկասում ինքնապաշտպանութեան հարց· ինչ դիրք եւ ինչպիսի ծրագիր պէտք է ունենայ Դաշնակցութիւնը Կովկասի վերաբերմամբ· վերջնական նպատակակէտ Կովկասի համար· Ֆեդերատիւ կազմ· համերաշխութիւն ազգերի· պրոպագանդ Կովկասի համար (դիպլոմատիայի միջոցով)։ Այս դասախօսութեան վերաբերեալ հակաճառութիւնները որոշուեցաւ յետաձգել միւս ժողովին։*

Պ· Նախագահն առաջարկեց կարդալ պ· Երզնկեանին Կովկաս խմբի առաջարկութիւնը, որը երկար վիճաբանութիւններից յետոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւով·— Նկատի ունենալով որ .....[67]

(Խնդրեմ մտցնել այդ բանաձեւը)։

IX-րդ Նիստ

Նախագահութեամբ պ· Մալումեանի։

Ժողովի նիւթը կազմում էր Տիգրանեանի դասախօսութեան քննադատութիւնը։

Իշխանեան·— Դաշնակցութիւնը չէ ունեցել գոյն· չպէտք է թոյլ տալ շահագործել այն դասակարգերին, որոնք գործում են այդ ասպարէզում· օրինակ պրոլետարիատ գիւղացիներ· նրանց շահերը չեն համապատասխանում Դաշնակցութեան։ Մինչեւ օրս Դաշնակցութիւնը չի որոշել իւր սահմանները Կովկասում· վերջն էլ մի կոչ ուղղեց դաշնակցականներին իրենց (սոց·-դեմ·) բարեկամութիւնը վայելելու։

Ղազարեան[68]·— Խնդրում է կապ չունեցող դէպքերում Դաշնակցութիւնը հանգիստ թողնել եւ խօսել իւր նիւթի մասին։

60.- Պահպանողական:
61.- Յիշուած հեռագրին պատճէնը չկայ արձանագրութեան մէջ:

62.- Դիւանակալական:
63.- Ոստիկանական:
64.- Կազմալուծում, ոչնչացում:
65.- Որոշում, բանաձեւ:
66.- Ազգայնամոլութիւն:
67.- Ձեռագրին մէջ տեղը բաց ձգուած: Յիշուած բանաձեւը կը գտնուի 7րդ նիստի արձանագրութեան աւարտին:
68.- Ղազարեան կամ Խզմալեան եւ Տիգրանեան (Աղեքսանդր) միեւնոյն անձնաւորութիւնը կը ներկայացնեն: Իսկական անունը Խզմալեան Թադէոս է:

Բաղդադեան.— Խօսում է Դրօշակի մասին անհամեստ տոնով եւ թոյլ է տալիս նոյնիսկ զրպարտութիւն Դրօշակի հասցէին ասելով որ այդ օրգանը Հնչակի համար տուել է կեղտոտ անունը։ Մի բան որ չկար Դրօշակում եւ չկարողացաւ ցոյց տալ։ Դրօշակը խանգարում է սոցիալիստական շարժումներին. գործադուլների ժամանակ առաջարկում է բանուորներին չմասնակցել։ Ռուսահայերի եւ տաճկահայերի միացումը արհեստական գործ է. ինքնապաշտպանութեան կոմիտէն հաստափորների կոմիտէ է եւ ոչ սոցիալիստական հիմնարկութիւն։ Դաշնակցութիւնը աշխատում է օգտուել ժողովրդի ինստինկտներով.[69] վաշխառուներ սպանելով նրանք չեն կարող ուժ տալ իւրեանց կուսակցութեան. մի կուսակցութիւն որ դիմում է բանտին եւ ծեծին չի կարող յեղափոխական կուսակցութիւն կոչուիլ։ Դաշնակցութիւնը չունի հոգու բարձրութիւն, ազնուութիւն։ Այս բոլորը նա ապացուցում էր ասէկոսէներով, փողոցներում լսած խօսքերով։

Սրա դէմ խօսեցին պ. Մանդինեան, Տէր Օհանեան եւ ուրիշները. պարոն Բաղդադեանի մի շարք վիրաւորական եւ զրպարտիչ խօսքերին պատասխանուեց ի հարկէ սառն արհամարհանքով, իսկ գլխաւոր կէտերին մի շարք փաստերով։

X-րդ Նիստ

Աւետիք Տէր Պողոսեանի նախագահութեամբ։

Խօսուեց դարձեալ պ. Տիգրանեանի դասախօսութեան մասին. եղան դարձեալ երկար վիճաբանութիւններ, Մարկս, Էնգէլս. մի շարք սոցիոլոգներ, մի քանի հարիւր անգամ հնչուեցին զանազան բերաններից՝ դասակարգային կռիւ, պատմութեան մատերիալիստ ուղղութիւն, սեփականութիւնից զուրկ բանուորներ, կապիտալիզացիա, սեփականութիւն ունեցող գիւղացիներ, ամէն ինչ խառնեցին միմեանց (օրինակ Աւագեան)։

Պ. Մալումեան.— Շեշտեց որ թէեւ պ. Իշխանեանի խօսածը թոյլ է բայց աւելի պատշաճ սահմաններում էր քան Բաղդադեանինը, որ միանգամայն վիրաւորական լինելով հանդերձ, պատճառաբանութիւնները հիմնուած էին ասէկոսէների եւ Բագուի ֆաղաքային այգում լսած անհիմն լուրերի վրայ։ Բաղդադեանը իւր ամբողջ գիտութեամբ սնանկ. ցրուած հայերին բարոյական կապն է միացնում, այնպէս որ ռուսահայը եւ տաճկահայը միանում են բարոյական կապով եւ ոչ արհեստականօրէն. Դաշնակցութիւնը ունի բարոյական մեծ ոյժ. պլատոնական ցանկութիւն չէ Տաճկահայաստանը կովկասի հետ միացնել. ինչ որ վերաբերում է գեղեցիկ թէօրիաներին, պէտք է նկատել որ, այն ինչ որ Եւրոպային յարմար էր նոյնը չի կարելի անել Կովկասում։ Մեր սոց.-դեմոկ. ենթարկւում է ռուս սոց.-դեմոկրատիային. վերջինս եւս սնանկ է, զբաղւում է բանակռիւներով։

XI-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Ղամբարեանի։

Այս ժողովում եւս շարունակուեցան վիճաբանութիւնները նախկին դասախօսութեան մասին. պ. Բաղդադեանը ուրիշ վարիանտներով կրկնեց իւր նախկին ասածները, յիշեց որ պրոլետարիատը կազմում է 20%. մէկուկէս % Բագուում միայն։ Կովկասում եւս եղել են հայերը խեղճ դրութեան մէջ. այնտեղ էլ հարկաւոր էր ակտիւ գործունէութիւն։ Պ. Սիմէոն Յակոբեան ընդդիմախօսեց պարոնին, ցոյց տուեց որ Կովկասում հալածանքները հայի դէմ եղել են կուլտուրական, այն ինչ Տաճկաստանում այլ. Կովկասում հայերը պիտի կռուէին ռուսացման դէմ խաղաղ ճանապարհով մինչեւ այս վերջին ժամանակները, երբ հարկաւոր էր զէնք ձեռք առնել. սխալ էր համարում այն տեսակէտը որ Տաճկահայաստանի խնդրի լուծումը նշանակութիւն չի ունենայ Ռուսահայաստանի համար. այնտեղ կը բացուի գործունէութեան ասպարէզ, ինտելիգէնտը տեղ կ'ունենայ, կը զարգանայ հայ հանճարը, հայ գրականութիւնը։

Իշխանեան.— Դաշնակցութիւնը ունի դեր Կովկասում. նա ի նկատի ունի ողջ ժողովրդին. սոցիալ-դեմոկ. չի միանում որովհետեւ նա միմիայն բանուորական կուսակցութիւնը ի նկատի ունի, Յակոբեանը իբր թէ սիոնիզմ է քարոզում, միակ կենտրոն Տաճկահայաստան համարելով։

Ղզմալեան (Տիգրանեան).— Նկատեց որ իրեն հակաճառողները բոլորովին չեղուել են նիւթից եւ խօսում են այնպիսի կէտերի մասին որոնք իւր դասախօսութեան նիւթը չեն կազմել. յայտնեց որ ինքը պէտք է խօսի շատ կարճ եւ մի քանի կէտերի դէմ։ Օպոնենտներից[69] մի երկուսը յայտնել էին, որ դաշնակցականները բուրժուաներ են, կղերականներ են (օրինակ բերելով Դումանի կաթողիկոսին փող հասցնելը, Կուկունեանին խաչվառով ընդունելը եւ այլն, որոնք ցոյց են տալիս թէ մարդիկ ինչ չափով են ծանօթ գործին եւ ինչքան ընդունակութիւն ունին քննադատելու որեւէ խնդիր)։

XII-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Մալումեանի։

Ժընեւի ուսանողների կողմից պ. Տիգրանեան դրեց

69.- Բնազդներով։

նրանց առաջարկը «ուսանող պրոպագանդիստների խնդիրը»։— Ժողովը ձայների մեծամասնութեամբ վճռեց միութեան գանձարանից տալ այդպիսի պրոպագանդիստին ծախս ինչ ուղղութեան էլ նա պատկանելիս լինի. ցանկացողները (պրոպագանդա անող) պէտք է դիմէին մինչեւ յաջորդ երեկոյեան նիստը գաղտնի կերպով Լիազօր Կոմիտէի նախագահին։

Պարոն Ահարոնեան հիւանդութեան պատճառով չկարողացաւ կարդալ իւր դասախօսութիւնը «Վերջին դէպքերը Կովկասում»։

Նախկին խնդրի համար, շարունակուեց խօսել եւ որոշուեց՝ պ. պրոպագանդիստներին միջոցներ պիտի տրուի միութեան գանձարանից, թողնելով քանակն ու պայմանները Լիազօր Կոմիտէին։ Այդ խնդիրը, պրոպագանդիստներին ուղարկելը, անցաւ 23 ձայնով հակառակ 17ի, որոնք սկզբունքի խնդիր դարձնելով մերժեցին։ Նրանց համար անհասկանալի էր, թէ ինչպէս դաշնակցական կուսակցութիւնը համաձայն պիտի լինի ուղարկել սոց.-դեմոկ. մի պրոպագանդիստ կամ ընդհակառակը. այդ նոյն իսկ համարում էին սկզբունքների մի դաւաճանութիւն։ Դրանից յետոյ դրուեցաւ յեղափոխ. բրոշիւրների խնդիրը, առաջարկութիւն Ժընեւի ուսանողների եւ Ջանք կոմիտէի։ Հարցը բաւականին պարզ էր. Ժընեւի ուսանողութիւնը խոստանում էր մինչեւ 1905 թուի կէսը կոմիտէին ներկայացնել երեք բրոշիւր, յեղափոխական բնաւորութեամբ. այս կէտը ընդունուեցաւ գլխաւորապէս ի նկատ առնելով այն հանգամանքը, որ ներկայ հանգամանքներում այդ օրինակ հրատարակութիւններ միմիայն արտասահմանում կարելի է անել։ Ջանք կոմիտէի պատգամաւորը պ. Կարապետեան առաջարկեց իրենց խմբի կողմից, հրատարակել սոցիալիստական բնաւորութեամբ բրոշիւրներ, որ կարողանան ծանօթացնել ժողովրդին ներկայիս նոր հոսանքներին. առաջարկեց նոյնպէս մի լուրջ գրուածք «յեղափոխութեան պատմութիւնը»։ Առաջինն ընդունուեցաւ նոյն ձեւով, իսկ երկրորդի մասին յայտնուեց որ ներկայ պայմաններում թէ նիւթի պակասութեամբ եւ թէ նոյնիսկ այդպիսի գործ գլուխ բերող անհատի հազուագիւտութեան պատճառով շատ դժուար է ձեռնարկել այդպիսի մի գործի. բայց որովհետեւ յեղափոխութեան գլխաւոր դէպքերն իսկ անծանօթ են շատ շատերին, որոշուեցաւ գրել պատմութիւն, բայց աւելի պրոպագանդի համար։

XIII-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Մալումեանի։

Պ. Աւետիս Ահարոնեան խօսեց Կովկասի վերջին դէպքերի մասին։ Առաջարկեցին պարոնին թէ որ դասակարգն է մասնակցել, ինչ տոկոս, ինչ դիրք են բռնել սոց.-դեմոկրատները. դասախօսը յայտնեց, որ մասնակցողներ եղել են գլխաւորապէս ստոր խաւերը, թէ ինտելիգենցիան եւ միւս դասակարգերը կարող էին այդ կոտորածի դէմն առնել, բայց այդ չեն արել. վերին աստիճանի դժուար է իմանալ թէ որ տոկոսն է մասնակցել. սոցիալ դեմոկ.-ակտիւ գործունէութիւն չեն ունեցել (չեն կռուել), իսկ թէ այլ ճանապարհներով օգնել են այդ իրեն յայտնի չէ։

XIV-րդ Նիստ

Նախագահութեամբ պ.[70]

Այս ժողովում որոշուեցաւ թէ ինչ ձեւի պատմութիւն պիտի գրել (որոշումը տես XII-րդ նիստի արձանագրութեան մէջ, վերջին մասը, որ սխալմամբ այնտեղ է մտցրուած)։ Սորանից յետոյ դրուեցաւ Ֆրանսերէն լեզուով ժողովածուի հրատարակութեան խնդիրը (որ պէտք էր նստի մօտ 15.000 ֆրանկ, բաղկացած հազար երեսից)։ Եղան բազմաթիւ հակաճառութիւններ։ Ցիւրիխի ուսանողութիւնը իւր պատգամաւորի միջոցով յայտնել էր, որ այդ ձեւի գործ, ոչ մի օգուտ չունի, որ դա կարելի էր փոխարինել հայերէնով. ոմանք յայտնեցին եւս նոյն կարծիքը, բայց պ. Մալումեան, նախկին Լիազօր կոմիտէի նախագահը, յայտնեց որ այդ գործը սկսուած է մի քանի տարի առաջ նախկին համագումարի որոշմամբ, գործը կիսով չափ առաջ է տարուած։ Եւրոպական նշանաւոր հեղինակներից ստացուած են բազմաթիւ գրուածքներ, այդ ժողովածուի համար արդէն ստացուած է 10.000 ֆրանկ, այնպէս որ իրաւաբանօրէն չի կարելի նոյնիսկ այդ խնդիրը մերժել եւ կամ փոփոխութեան ենթարկել։ Ձայների մեծամասնութեամբ որոշուեցաւ հրատարակել ժողովածուն։ Բերլինի ուսանողութեան մի մասի ներկայացուցիչ՝ պ. Իշխանեան առաջ բերեց ուսանողութեան գոյութեան խնդիրը. նա յայտնում էր որ ուսանողական խմբերի մէջ արդէն գոյութիւն ունեն երկու որոշ կուսակցութիւններ որոնք գործունէութեան ժամանակ անպայման պիտի տարբեր ճանապարհների դիմէին, միմեանց հակառակ գործէին. ժամանակն է որ կազմալուծուի ուսանողական միութիւնը եւ մնան միայն կուսակցութեանց միութիւններ։ Այդ խնդրի նկատմամբ եղան թեր ու դէմ կարծիքներ, բայց այս ժողովում չվերջացաւ եւ յետաձգուեցաւ յաջորդ ժողովին։

XV-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Տիգրանեանի (Ղզմալեան)

Շարունակուեցան վիճաբանութիւնները միութեան

70.- Նախագահին անունը նշանակուած չէ։

գոյութեան խնդրի առթիւ. Իշխանեանի եւ իր համախոհ սոց.-դեմոկրատներին յիշեցրին այն հանգամանքը որ հէնց ներկայ համագումարում միութիւնը ընդունեց հրատարակել սոցիալիստական բրոշիւրներ, ընդունեցաւ պրոպագանդիստների խնդիրը, որին համարեա թէ մասնակցեցին սոց.-դեմոկրատները իրենց ձայնատուութեամբ։ Բացի այդ յիշեցին որ ուսանողութեան մէջ ոչ թէ միայն երկու կուսակցութիւններ կան այլեւ չէզոք եւ նոյնիսկ տարբեր կուսակցութեան մարդիկ. այնպէս որ միութեան գոյութեան խնդիրը դնել այդպիսի պայմաններում,— այդ անկարելի է։ Ցիւրիխի ուսանողութիւնն եւս դրել էր բաժանման խնդիր բայց ոչ թէ կուսակցութիւնները առանձին առանձին բաժանելու համար, այլ առաջարկել հեռանալ-բաժանուել այն մասին, որ արգելք է հանդիսանում միութեան գործունէութեանը։ Դրուեցաւ հետեւեալ բանաձեւը՝ Ժողովը լսելով Բերլինի ուսանողութեան մի մասի առաջարկը, միութեան գոյութեան խնդիրը, անցաւ հերթական հարցերին։

Այս բանաձեւը ընդունուեցաւ 34 ձայնով ընդդէմ 17-ին, որից յետոյ իրենց սոցիալ-դեմոկրատներ անուանողները, թուով 7 հոգի, թողին դահլիճը եւ հեռացան յայտարարելով որ այլեւս անկարող են միեւնոյն ֆիրմայի տակ գործել։

Սորանից յետոյ Լայպցիգի պատգամաւոր Աւետիք Տէր-Պողոսեանը, յիշեցրեց իւր առաջարկները հրատարակութիւնների մասին, որ պիտի խուսափել բրոշիւրային հրատարակութիւններից, Հայաստանի քարտէզի հետ անհրաժեշտ է հրատարակել Հայաստանի աշխարհագրութեան մի գիրք։ Պ. Մալումեանը յիշեցրեց որ հրատարակութիւնների մասին խօսելիս կը յիշատակուին եւ այդ կէտերը։ Ապա պ. Աւետիք Տէր Պողոսեանը անցաւ մի ուրիշ խնդրին, որ իւրաքանչիւր պատգամաւոր ունենայ այնքան ձայն, որքան նրան ընտրողների թիւն է կազմում։ Այս խնդրի նկատմամբ եղած վիճաբանութիւններից յետոյ, ժողովն ընդունեց ընտրել փոքրագոյն չարիքը այսինքն — թողնել այս խնդիրը այնպէս ինչպէս նա կար առաջ։

XVI-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Սարգսեանի։

Պ. Ս. Ցակոբեանը խօսեց հայկական բանաստեղծութեան մասին շատ թուցիկ եւ համառօտ կերպով։ Մի քանի խօսքով կանգ առաւ հին շրջանների վրայ (օր. հեթանոսական, կրօնական, աշուղական) եւ յետոյ անցաւ նորագոյն շրջանը, յիշեց Աբովեան, Նալբանդեան, Գամառ-Քաթիպայի «Մայր Արաքսին», Շահազիզ (Էհոնի վիշտը, գտաւ որ նման է Բայրընի Զայլդ Հարոլդին)։ Գամառ Քաթիպայի եւ Րաֆֆու յիշատակները յարգելով անցաւ Ահարոնեանին (յիշեց Մասիսը եւ Մրրիկի սուրբը), խօսեց նոյնպէս Ղարիբ ստորագրութեամբ գրուած մի քանի պատկերների մասին)։ Ահարոնեանից առաջ յիշել էր Յովհաննէս Թումանեանի մասին իբրեւ մեր ամենախոշոր դէմքերից մէկը յիշելով որ նրա գլուխ գործոցն է Սասունցի Դաւիթը։ Կանգ առաւ եւ Աւետիք Իսահակեանի վրայ խօսելով միայն նրա «Հայ գուսան» ստորագրութեամբ գրուած մի քանի ոտանաւորների մասին։

XVII-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Մալումեանի։

Նախագահը առաջարկեց յանձին Մակեդոնական շարժման չէֆին պ. Բորիս Սարաֆովին իր համակրութիւնը յայտնել մակեդոնական գործին. ընդունուեց հետեւեալ բանաձեւը։

Սոֆիա. Բորիս Սարաֆովին

Եւրոպայի Ուս. Միութեան համագումարը խմբուած Բերն, հաճելի պարտականութիւն համարեց արտայայտել իր խորին համակրանքը Մակեդոնական շարժման, յարգանք յեղափոխութեան զոհերին եւ անկեղծ ցաւ որ հայ մակեդոնական կապակցութիւնը ուղղած սուլթանական ռեժիմի դէմ յարատեւի եւ զարգանայ յօգուտ երկու երկրների եւ ժողովուրդների ազատութեան։ Կեցցէ հայ-մակեդոնական դաշնակցութիւնը, Կեցցէ ազատ Մակեդոնիան։

Համագումարը լսելով Լայպցիգի պատգամաւոր պ. Տէր Պողոսեանի նոյն քաղաքից արուած կանոնադրութեան փոփոխութեան վերաբերմամբ առաջարկի հիմնաւորութիւնը (յօդուածներ՝ 9, 10 եւ 11), ժողովը մեծամասնութեամբ վճռեց անփոփոխ թողնել։ Առաջարկուեց ձայնատու անդամ համարել նոցա որոնք ժամանակին անդամակցական վճարը մտցրել են միութեան գանձարանը։ Առաջարկ եղաւ Լիազօր Կոմիտէի անունը փոխելու, քանի որ լիազօր բառը չի համապատասխանում ֆունկցիաներին։ Բայց ի նկատի ունենալով որ կանոնադրութեամբ շատ որոշ սահմանների մէջ է դրած կոմիտէի գործունէութիւնը եւ մի բառի փոփոխութիւնը ձեւականութիւնների հետ է կապուած, ձայների մեծամասնութեամբ վճռուեց թողնել անփոփոխ։ Այնուհետեւ քննուեց իտալական ուսանողութեան "Corda Fratres" կոչուած միջազգային մարմնի առաջարկը թէ արդեօք կամենում է հայ ուսանող. միութ. այդ ընկերութեան մի բաժինը լինելու։

Վճռուեց՝ համերաշխութեան կապ պահպանել "Corda Fratres"-ի հետ առանց սակայն նրա բաժինը կազմելու։ *Այնուհետեւ նախագահն առաջարկեց, որ համագումարը իր համակրութիւնը յայտնի Հայ Յեղափ. Դաշնակցութեան եւ ռուս սոցիալիստ յեղափոխական ընկերութիւնների մէջ առաջացած համերաշխութեան առթիւ մի կոչով. եղան առաջարկութիւններ ուրիշ յեղափոխական կազմակերպութիւնների եւս համագումարի համակրանքը արտայայտել եւ համերաշխութեան հրաւէր ուղղել։ Ընդունուեց հետեւեալ բանաձեւը միաձայն.*

Նկատելով, որ ներկայ պայմաններում յեղափոխական կռիւը Ռուսաստանի մէջ բացառիկ կարեւորութիւն է ստացել, որ այդ կռուի եղանակից ու ոյժից է կախուած ցարիզմի անկման զարգացումը.

Որ յեղափոխական եւ սոցիալիստական մի քանի կուսակցութիւնների եւ խմբերի ներքին պառակտումները՝ հիմնուած երկրորդական կարեւորութիւն ունեցող խնդիրների վրայ, վնասում են անմիջական կռուի գործին,

Եւրոպայի Հայ ուսանող. միութեան համագումարը խմբուած Բերնում համերաշխ գործակցութեան կոչ է ուղղում բոլոր յեղափոխական եւ սոցիալիստական կազմակերպութիւններին,

Ողջունում է այդ համերաշխութիւնը որ սկսուել է ռուս սոցիալիստ յեղափ., լեհական P.P.S. Պէ.Պէ.Էս յեղափ. կազմակերպութեան, Հայ Յեղ. Դաշն. եւ վրաց Սաքարթուելոյի [Միջեւ.], արտայայտում է իր ջերմ համակրանքը բոլոր ճնշուած եւ տանջուող ժողովուրդներին եւ նրանց յաջողութեան գործին։

Սորանից յետոյ ժողովն անցաւ առաջիկայում միութեան գործունէութեան ծրագիրը որոշելուն։ Պ. Մալումեանը ծրագիրը բաժանեց հետեւեալ կերպով.

1. *Հրատարակութիւնների խնդիր հայերէն եւ օտար լեզուներով։*
2. *Կոնֆերանսներ*
3. *Քարտէզների շարք*
4. *Մեծ ժողովածուն*
5. *Հրատարակութիւն սոց. բրոշիւրների*
6. *Զինուորական խմբեր ուսանողութեան մէջ։*

Նախագահը իւր կողմից առաջարկեց մի մեծ գործի Մարկսի Կապիտալի թարգմանութեան ձեռնարկելը, որ պատիւ կը բերէր ուսանողութեանը եւ ինտելիգենտ մարդկանց սեղանի զարդ կարող էր լինել. ժողովը երկար վիճաբանութիւններից յետոյ հետեւեալ վճիռները կայացրեց.

1. *Հրատարակել 25ի չափ բրոշիւրներ։*

Նոյնպէս եւ իտալերէն եւ գերմաներէն լեզուով հայկական հարցին նուիրուած գրքոյկներ հրատարակել, ինչպէս նաեւ ռուսերէն լեզուով մի լուրջ աշխատութիւն նուիրուած հայկական դատին, ինչպէս նաեւ կովկասի թուրք լեզուով որ ծանօթացնէ թուրք ազգաբնակութեան իրերի կացութիւնը եւ համերաշխութեան գաղափարին ծառայի։

2. *Անհրաժեշտ համարուեց առաջիկայում կոնֆերանսներ կազմակերպել Իտալիայում եւ Աւստրիայում։*

3. *Քանի որ Մեծ ժողովածուի համար պատրաստուելու են Հայաստանի վեց նահանգների առանձին քարտէզները, հնարաւոր համարուեց առանձին եւս մաս մաս հրատարակել։ որոշուեց նաեւ առանձին հրատարակել Կիլիկիայի եւ Կովկասի քարտէզները։*

4. *Ժողովածուի խնդիրը արդէն մեծ յառաջադիմութիւն արած լինելով, պարտականութիւն է դնում յաջորդ Լիազօր Կոմիտէի վրայ առանձին ուշադրութիւն դարձնելու այդ գործին եւ ցանկութիւն յայտնուեց առաջիկայ տարում հրատարակուած տեսնելու։*

5. *Հայերէն հրատարակութիւնների շարքում պիտի հրատարակուին մօտ ութ բրոշիւրներ որոնց նիւթը պէտք է լինի սոցիալիստական բովանդակութեամբ։*

6. *Օգտակար համարուեց, յանձնարարել բոլոր ուսանողներին եւ ուսանողուհիներին զինավարժութեամբ պարապելու, մտնելով տեղական նման ընկերութիւնների մէջ։*

7. *Նախագահի առաջարկը Մարկսի Կապիտալի թարգմանութեան վերաբերեալ* մերժուեց *իբրեւ առայժմ աննպատակայարմար։ Պ. Նախագահը խնդրեց համագումարին ի նկատի ունենալ որ առանց միութեան բոլոր անդամների եռանդուն մասնակցութեանը, մեր ծրագրի իրագործումը թերի կը մնայ։*

XVIII-րդ Նիստ

Նախագահութեամբ պ. Մանդինեանի։

Պ. Մալումեանի առաջարկած քանակը բրոշիւրների համար, մինիմում 25, վիճաբանութեան նիւթ դարձաւ, բայց վերջը ձայների մեծամասնութեամբ անցաւ։

Ծրագրի 2-րդ կէտը գերմաներէն եւ իտալերէն լեզուներով գրքեր հրատարակել այդ ազգերին ծանօթացնելու հայ դատի հետ (ենթարկուեց) պատճառ եղաւ վիճաբանութիւնների. ոմանք գտնում էին որ գերմաներէն լեզուով հրատարակելը միտք չունի քանի որ փորձերը ցոյց են տալիս նախկին գերմաներէն հրատարակութիւնների չտարածուելը։ Պ. Մալումեանը առարկեց, որ հասարակութիւնից վերցրած դրամներով ձեռնարկել այդպիսի գործին եւ ձրի տարածել յանցանք չէ եւ կարող է իւր բարերար հետեւանքն ունենալ։ Այս խնդրին եւս անցաւ ձայների մեծամասնութեամբ։

3. Հրատարակել մի գրքոյկ ռուսերէն լեզուով, որի նպատակը պէտք է լինի ռուսաց հասարակութեան ծանօթացնել հայկական հարցի հետ։ Ընդունուեցաւ միաձայն։

4. Մի գրքոյկ թուրքերէն լեզուով, որը կը նպաստէ համերաշխութեան գործին. յարմար համարուեցաւ առայժմ շուտափոյթ կերպով տալ այդպիսի մի գիրք

(մինչեւ մի ամիս) Կովկասի թուրքերին իրենց բարբառով։

Պ. Մալումեանը յայտնեց, որ այդ գործը յանձն է առել մի այլ մարմին. եթէ դա չչաջողեցրեց, այն ժամանակ այդ պարտականութիւնը կ'ընկնի կոմիտէի վրայ։

5. Կազմակերպել կոնֆերանսներ Իտալիայում, Աւստրիայում եւ Գերմանիայում այդ ազգերին հայկական դատին ծանօթացնելու։ (Հայկական դատ ասելով դրա մէջ է մտնում եւ Կովկասը)։

6. Քարտէզների հրատարակութեան խնդիրը երկար վիճաբանութիւնների նիւթ դառնալով վերջը մեծամասնութեան կողմից ընդունուեցաւ ճիշտ նոյն ձեւով, ինչպէս սկզբում առաջարկուել էր։

Մեծ ժողովածուի խնդիրը Ֆրանսերէն լեզուով արդէն ընդունուած էր նախորդ ժողովներից մինում[71]*։*

Դրուեցաւ Մարկսի Կապիտալի թարգմանութեան խնդիրը որ չանցաւ 16 ձայնով ընդդէմ 14-ի։

Պ. Մալումեանը առաջարկեց հոգալ թէ ի՞նչ ձեւով պէտք է դրամ ժողովել, յիշեցնելով որ դրամարկղի 10000 Ֆրանկը ժողովածուին է յատկացրուած։ Ժողովականները յայտնեցին որ այդ խնդրի առթիւ Լիազօր Կոմիտէն կը մտնի բանակցութիւնների մէջ. իւրաքանչիւր ժողովականի վրայ դրուեց այն պարտականութիւնը որ իւրաքանչիւրը իրենց ծանօթների միջոցով աշխատին նպաստել հանգանակութեան գործին։ Ինչ վերաբերում է առաջիկայ համագումարի տեղի որոշման, այդ խնդիրը թողնուեց Լիազօր Կոմիտէին որ ապագայում տեղի ունեցող Համագումարից առաջ մտնի բանակցութիւնների մէջ բոլոր քաղաքների ուսանողութիւնների հետ եւ նրանց կարծիքներով առաջնորդուի։

Կարգադիր յանձնաժողով ընդունուեցաւ կազմել Ժընեւի ուսանողութիւնից հինգ անդամ, երկու փոխանդամ։ Այս ժողովում յիշուեցաւ Կովկասի վերջին դէպքերի առթիւ նպաստ տալու խնդիրը. եղան հակառակ կարծիքներ, բայց յետոյ որոշուեց ձայների մեծամասնութեամբ Բագուի դաշնակցական կոմիտէին հասցնել այդ նպաստը (500 *Ֆրանկ*)։ *Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան Լիազօր կոմիտէի անդամներ, հետեւեալները՝*

Պ.պ. Խաչատուր Մալումեան (Ժընեւ),— 41 ձայն, Աւետիք Տէր-Պողոսեան (Լայպցիգ),— 40 ձայն, Մանդինեան (Ժընեւ),— 38 ձայն, Ղզմալեան (Տիգրանեան) (Ժընեւ),— 37 ձայն, Նիկողայոս Մարգսեան (Ցիւրիխ),— 30 ձայն։

71.- Պէտք է նշել որ տարիներէ ի վեր հետապնդուող այս ծրագիրը պիտի չիրականանար բնաւ։ Պոսքընի արխիւներուն մէջ պահպանուած են հայ եւ եւրոպացի աշխատակիցներու կարգ մը յօդուած-ուսումնասիրութիւնները խնդրոյ առարկայ ժողովածուին համար։

XIX-րդ Նիստ

Ապրիլի 10-ին, առաւօտեան 11 ժամին։
Նախագահութեամբ պ. Մալումեանի։

Պ. Նախագահը յիշեցրեց, որ բրոշիւրներ կազմելու խնդրին պէտք է նպաստեն ուսանողները ինչքան հնարաւոր է. գործի ծանրութիւնը չձգել միայն Լիազօր կոմիտէի վրայ։

«Հայկարան»-ի խնդրով զբաղուող յանձնաժողովը յայտնեց որ տեխնիկական կողմի մշակումը այդ խնդրի նկատմամբ շատ դժուար է եւ պէտք է գրագրութիւններ մտնել Մխիթարեանների հետ այդ առթիւ։ Այս բանակցութիւնները թողնուեցան Լիազօր Կոմիտէին իսկ վերջնական որոշումները այդ խնդրի առթիւ թողնել առաջիկայ համագումարին։

Պ. Հազարապետեանը ներկայացրեց նախորդ համագումարի Լիազօր կոմիտէի գործունէութեան դրամական մանրամասն հաշիւը, որի մէջ սխալմամբ բաց էր թողնուած հազար Ֆրանկ (յայտնուեցաւ որ դա թուաբանական մի սխալ պէտք է լինի հաշուապահի կողմից)։ Նախորդ Լիազօր յանձնաժողովի նախագահ պ. Մալումեանը յայտնեց, որ այդ հաշիւները իրենցից անկախ պատճառներով, տպագրութեան չի տրուել եւ խոստացաւ անպայման ներկայացնել բոլոր մարմիններին տպագրուած մանրամասն հաշիւը։ Ժամանակ չլինելու պատճառով ոչ մի արձանագրութիւն չէր կարդացուել։ Որոշուեցաւ չկարդացուած եւ չստորագրուած արձանագրութիւնները յանձնել Լիազօր կոմիտէին։ Ժողովականները յայտնեցին իրենց շնորհակալութիւնը քարտուղարներին, տեղական ընդունող կոմիտէին, Բերնի կառավարութեան։ Շնորհակալութիւն յայտնեցին եւ նախորդ Լիազօր կոմիտէին յանձին նախագահ պ. Խ. Մալումեանի։ Լիազօր կոմիտէից պ. Մալումեանը յայտարարեց ժողովը փակուած եւ վերջացած այս տարուայ համագումարը։

Քարտուղարներ՝ Գէորգ Մեհրաբեան
Մ. Ղորասանեան

Արձանագրութիւնների մէջ մոռացուել է հայ սոց.-դեմոկ. կազմակերպութիւնների առաջարկը — նպաստ տալ այդ կազմակերպութեանը սոցիալիստական բրոշիւրներ հրատարակելու համար, որը համագումարում ձայների մեծամասնութեամբ չընդունուեց պատճառաբանելով որ սոցիալիստական բրոշիւրներ հրատարակելու է ինքը միութիւնը։

Այս արձանագրութիւնները չեն կարդացուած համագումարի անդամների ներկայութեամբ. հետեւապէս մնում են չստորագրուած։

Քարտուղարներ՝ Գէորգ Մեհրաբեան
Մ. Ղորասանեան

Փաստ. 1465-53

Բ 12.– ՄԱՆԻՖԵՍՏ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԻՆ (1905 թ. Ապրիլ ամսին) ՄԱՄՆԱԿՑՈՂ ՍՈՑ.-ԴԵՄ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ՈՒՂՂԱԾ ԵՒՐՈՊԱՅԻ ԲՈԼՈՐ ՍՈՑ.-ԴԵՄ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ

Ի նկատի ունենալով, որ հայկական կեանքի դասակարգային շահերի անժխտելի դիֆերենցիացան[72] եւ դրանով պայմանաւորուած հասարակական տարբեր իդէալները անհրաժեշտօրէն արձագանք են գտել հայ ուսանող երիտասարդութեան մէջ եւ առաջ բերել հասարակական-քաղաքական զանազանակերպ ձգտումներ.

Ի նկատի ունենալով, որ միանգամայն անկարելի եւ հակաբնական է մի նպատակի շուրջը եւ միեւնոյն ֆիրմայի[73] տակ համախմբել տարբեր աշխարհահայեացքի տէր հետերոգէն[74] տարրեր-ինչպիսին ներկայացնում է այժմ Եւրոպայում սովորող հայ ուսանողութիւնը.

Ի նկատի ունենալով, որ իւրաքանչիւր կոլլեկտիւ[75] մարմին կամ հասարակութիւն անկարող է կուսակցութիւններից բարձր կանգնել, մանաւանդ քաղաքական-հասարական հողի վրայ, եւ նա այսպիսի դէպքում կը դատապարտէ իրեն կատարեալ անգործունէութեան, ինչպիսին վկայում է Հայ Ուսանողական Միութեան վերջին տարիների անպտուղ գոյութիւնը.

Ի նկատի ունենալով, վերջապէս, որ Եւրոպայում սովորող Հայ Սոց. Դեմոկր. ուսանողութիւնը իր յատուկ աշխարհահայեացքով, իր առաջնորդող սկզբունքներով եւ կուսակցական բնորոշ շահերով բացարձակապէս անկարող է թէ տեսականապէս եւ թէ գործնականապէս նոյն միջնավայրում սովորող հայ նացիոնալիստ (Դ[աշնակց]ական եւ Հնչ[ակ]եան) ուսանողութեան հետ որեւէ գործի մէջ տեւական-իրական մասնակցութիւն ունենալ,– ահա ի նկատի ունենալով այդ բոլորը, վերոյիշեալ կոնգրեսին մասնակցող սոցիալ-դեմոկրատները, թուով 17 ձայն ընդդէմ 34-ի, վճռեցին Եւրոպայի հայ Ուսանողական Միութիւնը՝ որպէս այդպիսին, փաստապէս կազմալուծուած եւ հեռացան 6-րդ օրուայ երեկոյեան նիստին։ Այսուհետեւ այդ Միութիւնը չի կարող այլեւս համարուել իբրեւ մի ընդհանուր հաւաքական մարմին, որ իր մէջ ամփոփէ համայն հայ ուսանողութիւնը, որովհետեւ նրանից անջատւում է ուսանողների մի զգալի տոկոս։

Ըստ ինքեան պարզ է, որ թէ ներկայ եւ թէ ապագայ հայ սոցիալ-դեմոկրատ ուսանող երիտասարդութիւնը՝ իր պրոլետարական- դասակարգային շահերի հայեցակէտով, անկարող պիտի լինի մի մարմնի մէջ ձուլուելու եւ միասին գործելու այն ուսանողական տարրերի հետ, որոնք իրենց հասարակական դաւանանքով եւ գործնական ձգտումներով կանգնած են ազգայնական (նացիոնալիստական) շահերի հայեցակէտի վրայ։

Համագումարին մասնակցող
Սոց.-Դեմոկրատ պատգամաւորներ եւ անդամներ

1905 թ. Ապրիլի 8-ին
Բեռն

72.- Տարբերակում, տարանջատում, շերտաւորում։
73.- Հիմնարկութեան, ձեռնարկութեան։
74.- Այլատարր, տարբեր ծագում եւ ուղղութիւն ունեցող։
75.- Հաւաքականութիւն։

Փաստ. 1465-74

Բ 13.– ԱՆՈՒՄՆԱՅԱՆԿ ԱՅՑՊԻԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ

ԼԷՅՊՅԻԳ

Ազգանուն եւ անուն	Ի՞նչ հիմնարկութիւնից են նկած	Ի՞նչ են ապրում	Ծննդավայր	սեռնասդնների քանակը
				մօտ 107
1. Բաղաքեան*	Նախիսեան Թեմ.	Բժշկութիւն	(Տաճկաստան)	–
2. Եղիազարեան, օրդ.	Գիմնազիա	Նորմալ	Երեւան	1
3. Էրիեան Գուրգէն	Ճեմարան	Փիլիսոփայութիւն	Քարվանսարա (Գանձակ)	1
4. Թախչաճեան Լեւոն	Գիմնազիա	Գիւղատնտեսութիւն	Բաքու	11
5. Թամամշեան*	Գիմնազիա	Բժշկութիւն	Թիֆլիս	1
6. Թորոսեան Հայկ	Տաշ. Ռէալական	Բնագիտութիւն	Տաշի	–
7. Խոլոսանեան, օրիորդ	Երեւ. Գիմնազիա	Նորմալ	Երեւան	1
8. Ղազարեան Թադէոս	Երեւ. Թեմական	Գիւղատնտեսութիւն	Քանաքեռ (Երեւան)	3
9. Մայիսեան, օրիորդ*	Պետերբ. հանրալուի վկայագ.	Գիւղատնտեսութիւն	Թիֆլիս	1
10. Միրզոյեան Յովսէփ	Ռէալական. (IV դ.)	Գիւղատնտեսութիւն	Տաշի	2
11. Մուսայէլեան Հայրապետ	Տաշտայ Թեմական	Խանութպան. եւ առեւտր.	Խանցթեմի (Տաշի)	
12. Յովհաննիսեան Հայկ*	Ճեմարան	Բժշկութիւն	Ազուլիս	2
13. Յովնանեան Սարգիս	Երեւանի Թեմական	Գիւղատնտեսութիւն	Իգդիր	–
14. Շիրինեան Աշշակ	Տաշտայ Թեմական	Գիւղատնտեսութիւն	Շիրուանայր (Ջանգեզուր)	6
15. Տէր-Սանուէլեան Լեւոն	»	Գրականութ. եւ առեւտր. բրձրգ. կուրսեր	Դոռնավարդ (Տաշի)	1
16. Տէր Յովհաննիսեան Նեղսես	Նախիսեան Թեմ.	Տնտեսագիտութիւն	Գեանոզեան (Լոռի)	6
17. Տէր-Պողոսեան Աւետիք	Ճեմարան	Բնական գիտութիւններ	Վարդաբերդ (Լոռի)	3
18. Տէր-Վարդանեան Սարգիս*	Երեւանի Թեմական	Քիմիա	Երեւան	2
19. Հասան-Ջալալեան, Նեղսես (Եմեղում)	Տաշտայ Ռէալական	Բժշկութիւն	Վանք գիւղ (Տաշի)	1

*.- Եւրոպայի հայ ասանողութիւն անցամ չէ:

Փաստ. 1374-19

Բ 14.– ԴԱՐՄՇՏԱՏԴԻ Հ.Յ.Դ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1905 19 Ապրիլ, Դարմշտատդ

Յարգելի ընկերներ

Վերին աստիճանի անորոշ էր այս տարի տեղիս հայ ուսանողութեան վերաբերմունքը դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Ձեզ այս դրութեան հետ մօտից ծանօթացնելու համար, մենք հարկաւոր ենք համարում յիշել, որ Դարմշտատդում մինչեւ օրս չի եղել մի կազմակերպուած դաշնակցական մարմին, այլ եղել են Հ.Յ.Դ. համակրողներ, որոնք եւ ազդել են միւսների վրայ լինելով մեծամասնութիւնը. այժմ դրանցից շատերը հեռացած են, իսկ մնացողների գերակշիռ մասը կազմում են ուրիշ ուղղութեան պատկանողներ, որոնց աւելի ոյժ տուին Ռուսաստանի վերջի յուզող դէպքերը։ Կարծում ենք, որ այժմ Ձեզ տարօրինակ չի թուալ տեղիս հ[այ] ուսանողութեան թոյլ վերաբերմունքը Դաշնակցութեան, որովհետեւ դաշնակցական ընկերների դիրքը, տեղիս ուսանողական կազմակերպութեան մէջ, անորոշ էր։

Երկար վիճաբանութիւններից յետոյ վերջապէս մենք այն եզրակացութեան եկանք, որ մեր մէջ ընդհանուր համաձայնութիւն կայանալ չի կարող եւ որ մենք որոշ իրաւունքներ չենք կարող ձեռք բերել այդ կազմակերպութեան մէջ։

Մեզ մնում էր կամ լուելեայն միանալ դրանց հետ եւ կամ հեռանալ։

Հասկանալով, որ պատուաբեր չէ մի հայ ուսանողութեան, որը կարող է եւ պարտական է, իւր ոյժերը ներածին չափ, աջակցել ազատագրական սուրբ գործին, որի համար այնքան արիւն վոթուեցաւ[76]*, մենք թէեւ թուով քիչ, վճռեցինք տեղս դաշնակցական պաշտօնական մի մարմին կազմել, անկախ տեղական հայ ուսանողական կազմակերպութիւնից, համոզուած լինելով, որ կազմակերպուած մարմինը տեղումս աւելի նպատակայարմար է (քան թէ ունենալ համակրող խումբ-ուսանողներ), նամանաւանդ, որ Ռուսաստանից մեր ստացած նամակները պարզ ցոյց են տալիս, թէ ինչպիսի լարուած հետաքրքրութիւն կայ դէպի գործը (Դոնի նահանգ, Խրիմ, Ղզլար, Մոզդոկ) եւ որ այնտեղ կարօտ են թարմ լուրերի ու տեղեկութիւնների։*

Մենք անմիջական յարաբերութեան մէջ լինելով արեւմտեան Բիւրոյի հետ, յանձն ենք առնում թէ այդ պահանջներին բաւարարութիւն տալ եւ թէ այստեղից ուղարկել Դրօշակի համարները եւ այլ հարկաւոր նիւթեր Ձեր նշանակած հասցէներով, մի խօսքով, ինչ որ մեր փոքրիկ ոյժերից բարձր չեն լինի մենք միշտ եւ անյապաղ կը կատարենք։

Ցանկանալով ունենալ մի ամփոփ ծրագիր, մենք խնդրում ենք Ձեր աջակցութիւնը եւ մեր կոմիտէի հաստատումը Բիւրոյից։

Ընկերական ջերմ բարեւներով
ԴԱՐՄՇՏԱՏԴԻ ՀԱՅ Յ. ԴԱՇՆԱԿ. ԿՈՄԻՏԷ

Մեր հասցէն
An Herrn M. Samueljan
D'armstadt
Heinheimer str. 63 III

76.- Թափուեցաւ:

Փաստ. 1465-57

Բ 15.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

«Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» ներկայ տարուայ Համագումարը կատարուեցաւ Շվէյցարիայի Բերն քաղաքում, ապրիլի 3ին, «Այգեր» հիւրանոցում՝ ներկայութեամբ 58 հոգու – պատգամաւորներ, անդամներ եւ մի քանի հիւրեր: Հիւրանոցի ճակատին, ուսանողութեան համախմբման առիթով, կախուած էր հայկական քաղաքական դրօշակը, սեւաւորուած՝ իբրեւ նշան մեր ժողովրդական սուգի:

Համագումարը պատգամաւորներ ունէր Գերմանիայից, Ֆրանսիայից, Բելգիայից, Շվէյցարիայից: Աւստրիական, ինչպէս եւ Անգլիական հայ ուսանողները ներկայացուցիչ չունէին, գուցէ այն պատճառով, որ այդ երկրների մէջ, որպէս եւ Իտալիայում, մեր ուսանողները կազմում են վերին աստիճանի աննշան թիւ, չշաղկապուած «Միութեան» հետ: Ռուսաստանի հայ ուսանողութիւնը շատ կարեւոր թուով, պաշտօնական ներկայացուցիչ չունէր, հաւանօրէն՝ արդիւնք այն անսովոր փոթորկման, որին ենթակայ է համալսարանական երիտասարդութիւնը՝ Միապետութեան սահմաններում:

Համագումարի պարապմունքները տեւեցին մի շաբաթ, նախօրօք պատրաստուած «Օրակարգի» համաձայն: «Միութեան» անցած գործունէութեան մանրամասն տեղեկագրին ծանօթանալուց յետոյ, ժողովը անցաւ դասախօսութիւններին եւ ուսանողական մարմինների կողմից առաջադրուած հարցերի քննութեան: Վերջին նիստերը նուիրուեցին առաջիկայ տարուայ գործունէութեան ծրագրի քննութեան, պատրաստուած Լիազօր Կոմիտէի կողմից:

Դրա գլխաւոր կէտերը հետեւեալներն են՝

ա) *Պրոպագանդ եւրոպական մամուլի մէջ*: Հայ ուսանողները, ծանօթ եւրոպական լեզուների, ունեն բոլոր յարմարութիւնները՝ իրանց ապրած քաղաքներում յարաբերութեան մէջ մտնելու մամուլի օրգանների հետ եւ տեղեակ պահելու հասարակաց կարծիքը հայկական քաղաքական կեանքի ընթացիկ դէպքերին եւ նորութիւններին: Լրագիրների խմբագրութիւնները, ինչպէս ցոյց են տուել մեր փորձերը, սիրով են ընդունում այս աշխատակցութիւնը, եւ հետեւաբար նրա արդիւնաւորութիւնը անկասկածելի է:

բ) *Բրոշիւրներ հայերէն լեզուով*: Նկատելով քաղաքական-յեղափոխական-սոցիալիստական բրոշիւրների ահագին պահանջը մեր ժողովրդի կողմից, այլ նաեւ որ գրաքննական խստութիւնը թէ՛ Կ. Պոլսում եւ թէ Կովկասում՝ անհնար են դարձնում այդ օրինակ գրականութեան հրատարակութիւնը երկրի սահմաններում – Համագումարը որոշեց՝ առաջիկայ տարին կրկնակի ուշադրութիւն դարձնել դրա վրայ: Մինչեւ այժմ «Միութիւնը» հրատարակել է յեղափոխական գրքոյկներ՝ աւելի քան 50 հազար օրինակ: Առաջիկայ տարին յեղափոխական գրականութեան պիտի աւելանայ եւ սոցիալիստականը: Եթէ 250-300 հայ ուսանողների գէթ մի որոշ մասը, օրինակ՝ 50 հոգի, մի-մի բրոշիւր տան, թարգմանական կամ ինքնագիր, մենք կարող կը լինենք տարուայ ընթացքում հայ ժողովրդին տալ ընթերցանողական բաւարար նիւթ: Մի պայման միայն,– ամէն բան չպէտք է սպասել Լիազօր Կոմիտէից, այլ աշխատանքը պէտք է բաժանել ամբողջ ուսանողութեան վրայ:

գ) *Բրոշիւրներ եւրոպական լեզուներով*: Աչքի առաջ ունենալով պրոպագանդային այն խոշոր դերը, որ կատարում են «Միութեան» հրատարակած բրոշիւրները (մինչեւ այժմ տպագրուած է աւելի քան 25 հազար օրինակ ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով), որոշուեց շարունակել դրանց հրատարակութիւնը: Այս տարի պիտի տպագրուեն գրքոյկներ իտալերէն ու անգլերէն լեզուներով եւս: Բացի դրանից պիտի հրատարակ-

ւի եւ մի յատուկ գրքոյկ՝ ռուսերէն լեզուով, որի նպատակը պիտի լինի պարզել ռուս ընթերցողին այն դաւադիր դիրքը, որ բռնել է ռուսաց կառավարութիւնը դէպի հայկական շարժումը՝ թէ՛ Կովկասում եւ թէ Հայաստանի մէջ:

դ) *Հրապարակային դասախօսութիւններ*: Շարունակել կազմակերպել զանազան երկրների կեդրոնական քաղաքներում հրապարակային *կոնֆերանսներ* եւ միտինգներ նուիրուած մեր քաղաքական վիճակին: Դասախօսները պիտի լինեն հեղինակաւոր եւրոպացիներ, ծանօթ հայկական դատին: Անցեալ տարիները՝ Գերմանիայում, Շվէյցարիայում եւ Ֆրանսիայում կազմակերպուած դասախօսութիւնները նուիրուած էին գլխաւորապէս թուրքահայերի դատին: Համագումարը ցանկութիւն յայտնեց, որ սրանից յետոյ կոնֆերանսների նիւթ լինի եւ Կովկասեան հայերի խնդիրը, որը օրէցօր ընդունում է սուր եւ առանձին ուշադրութեան արժանի կերպարանք:

ե) *Մեծ-Ժողովածու*: Համագումարը՝ կրկին անգամ ընդունելով դրա հրատարակութեան կարեւորութիւնը, որոշուած նախորդ կոնգրէի կողմից, յանձնարարեց Լիազօր Կոմիտէին՝ ըստ կարելւոյն շուտ պատրաստել եւ լոյս ընծայել «Մեծ-Ժողովածուն»:

զ) *Քարտէզներ*: Ուշադրութեան առնելով այն բացառիկ ընդունելութիւնը, որ գտաւ «Հայաստանի քարտէզը» հայ հասարակութեան բոլոր շրջաններում, Համագումարը վաւերացրեց Լիազօր Կոմիտէի առաջարկը – պատրաստել Հայաբնակ բոլոր նահանգների առանձին-առանձին, մանրամասն քարտէզներ՝ լատիներէն տառերով, թէ «Մեծ-Ժողովածուի» մէջ զետեղելու, եւ թէ՝ դրանից անկախ տարածելու համար: Մինչեւ այժմ արդէն լոյս են տեսել «Ատրպատականը» եւ «Սասունը»: Պատրաստւում է «Կիլիկիան»: Նախագծած շարքի մէջ պէտք է մտնեն Հայաստանի վեց նահանգները եւ Անդրկովկասը:

Համագումարը միաձայն ընդունեց եւ հետեւեալ որոշումը.– Միութեան բոլոր անդամները, ուսանողներ եւ ուսանողուհիներ, պարտաւոր են տեղական եւրոպական Զինավարժական ընկերութիւնների միջոցով կամ այլ եղանակով, վարժուել հրացանաձգութեան եւ առհասարակ զէնքի գործածութեան, մի մարզանք, որ ներկայ քաղաքական պայմաններում պիտի համարուի կարեւոր եւ օգտակար:

Նախահաշիւ: Նախագծած ձեռնարկների իրականացման համար, Համագումարը կազմեց 25,000 ֆրանկի տարեկան նախահաշիւ: Այդ գումարից գանձարանի մէջ կայ այժմ մօտ տասն հազար ֆրանկ, հանգանակուած յատկապէս «Մեծ-Ժողովածուի» տպագրութեան համար: Մնացած 15 հազար ֆրանկը պիտի հաւաքուի այս տարի, որի համար պահանջւում է թէ՛ Կոմիտէի եւ թէ ուսանողական մարմինների եռանդուն գործակցութիւնը:

Վերջին նիստերում՝ Համագումարը որոշեց յայտնել՝

1) Համակրանք երկու բռնապետութիւնների՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի սահմաններում տանջուող բոլոր ժողովուրդների ազատագրական շարժման.

2) Համակրանք բոլոր յեղափոխական-մարտական կազմակերպութիւններին, որոնք կռիւ են մղում այդ բռնապետական ռեժիմի տապալման համար:

3) Համակրանք «Պրօ-Արմենիայի» խմբագրական կոմիտէին այն ծառայութիւնների համար, որ նա ցոյց է տալիս հայկական դատին:

4) Շնորհակալիք Իտալիայի համալսարանական երիտասարդութեան, հայ ուսանողներին եւ հայկական դատին ցոյց տուած համակրանքի համար:

Համագումարի միւս որոշումները – հրապարակական չեն:

Յաջորդ համագումարը կը կայանայ 1906-ին: Տեղի որոշումը թողնուած է Լիազօր Կոմիտէին՝ ուսանողական մարմինների խորհրդակցութեամբ:

Ընկերական բարեւներով՝
ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ

1905 Մայիս
Ժընեւ

Adresse: Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève (Suisse).

Փաստ. 1465-63

ԵՒՐՕՊԱՅԻ
ՀԱՅ-ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ
—x—
UNION
DES ÉTUDIANTS ARMÉNIENS
DE L'EUROPE
№
1905
GENÈVE

Բ 16.– ԴԻՄՈՒՄ Պ. ԵԴՈՒԱՐԴ ԲԵՐՆՇՏԱՅՆԻՆ

17 Յուլիս 1905

Cher citoyen,

Au nom de l'Union des Etudiants Arméniens de l'Europe, nous vous exprimons nos remerciements les plus sincères pour votre consentemenet de donner une conférence à Leipzig sur la question arménienne de Caucase qui a une actualité importante.

Permettez nous de vous prier de répéter, si c'est possible, cette même conférence à Berlin, où vous en avez déjà donné une, conformément à notre demande, il y a deux ans. En recevant votre approbation nous écrirons tout de suite à nos camarades de Berlin de s'occuper des préparatifs nécessaires.

Nous tenons beaucoup de publier votre conférence de Leiptzig comme nous l'avons fait avec celle de Berlin.

Par cette poste nous vous envoyons quelques brochures qui peuvent vous être utile pour votre conférence.

Salutations respectueuses et fraternelles
[k. MALOUMIAN]

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Պարոն Եդ. Բերնշտայնին

Սիրելի քաղաքացի,

Ցանուն Եւրոպայի Հայ ուսանողներու միութեան անկեղծ շնորհակալութիւն կը յայտնենք՝ ձեր հաւանութիւնը յայտնած ըլլալուն համար՝ Լայպցիգի մէջ դասախօսութիւն մը տալու «Հայկական հարցը Կովկասի մէջ» նիւթին մասին, որ կարեւոր այժմէութիւն կը ներկայացնէ։

Թոյլ տուէք խնդրելու ձեզմէ, որ եթէ հնարաւոր է, դասախօսութիւնը կրկնել Պերլին, ուր արդէն երկու տարի առաջ մեր խնդրանքին վրայ տուած էք անգամ մը։ Դրական պատասխան ստանալէ ետք, անմիջապէս պիտի գրենք Պերլինի մեր ընկերներուն, որ անհրաժեշտ նախապատրաստութիւնները տեսնեն։

Շատ կը փափաքինք հրատակարելու Լայպցիգի ձեր դասախօսութիւնը, ինչպէս ըրինք Պերլինինը։

Ներկայ թղթածրարով ձեզի կը ղրկենք կարգ մը յօդուածներ, որոնք օգտակար կրնան ըլլալ ձեր դասախօսութեան [պատրաստութեան]։

Յարգալից եւ եղբայրական ողջոյններով՝
[Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ]

Փաստ. 1374-61

Բ 17.– ԲԵՐԼԻՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԿՈՉԸ ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՕԳՆԵԼՈՒ

[ԽՄՈՐԱՏԻՊ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ]

Ընկերներ,

Աւելորդ է խօսել այն ցնցման մասին, որ առաջացրին հայութեան մէջ վերջերս Կովկասում տեղի ունեցած դէպքերը։ Առաջ եկաւ հայ ժողովուրդը կորստեան վտանգից ազատելու կարիքը, եւ ժողովուրդի բոլոր խաւերը՝ ըստ հնարաւորութեան՝ եկան նպաստելու ինքնապաշտպանութեան գործին։ Թէեւ վտանգը կորցրել է այժմ իր սուր բնաւորութիւնը, բայց նա դեռ գոյութիւն ունի, եւ հայի առաջ ամէն րոպէ դրուած է նրա լինել չլինելու հարցը։ Միակ միջոցը, որը այժմ կարող է հանել մեր ժողովուրդը իր ծանր դրութիւնից — qhնուելն է։ *Սակայն մի ամբողջ ժողովուրդ զինելու համար ահագին նիւթական միջոցներ են հարկաւոր։ Արտասահմանեան հայ ուսանողութիւնը, իբրեւ մի ամբողջութիւն, զրկուած է ժողովրդին ակտիւ կերպով օգնելու հնարաւորութիւնից։ Սակայն ուսանողութիւնը կարող է օժանդակել նրան զէնք ձեռք բերելու գործում։ Ուստի մենք՝ Բերլինի մի խումբ հայ ուսանողներ, բանալով մեր մէջ — առանց կուսակցութիւնների խտրութեան — հանգանակութիւն, դիմում ենք Ձեզ, ընկերներ, առաջարկելով նոյնը անել տեղիդ հայ ուսանողական շրջանում։ Կը խնդրէինք հանգանակութիւնը՝ ըստ կարելոյն՝ վերջացնել 2 օրուայ մէջ եւ փողը ուղարկել Բերլին այս հասցէով.* Herrn N. Thowma-Agaian, Berlin N.W. Klopstoch str. 32 Gartenhaus III Fr.։ *Բոլոր տեղերից ստացուելուց յետոյ գումարը կ'ուղարկուի Ժընեւ— Գերմանիայի հայ ուսանողութեան անունից — Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյին, որովհետեւ այդ կազմակերպութիւնը ապացուցեց, որ ինքը ամենաձեռնհասն է կովկասեան հայերին զինելու եւ ինքնապաշտպանութեան գործը վարելու մէջ։ Փողը, որի մասին հաշիւ կը տրուի «Դրօշակում», պիտի կազմի «Ուսանողական ռազմական ֆոնդ» (որին, յուսով ենք, կը մասնակցեն եւ միւս երկրների հայ ուսանողները) եւ բացառապէս կը յատկացուի Կովկասում հայ ժողովուրդը զինելուն։ Այս գրութեամբ դիմում ենք* Leipzig, München, Jena, Thale, Marburg, Frieberg, Heidelberg, Darmstadt, Cöthen, Halle, Hannover, Tübingen, Mitweida։ *Եթէ գերմանական ուրիշ քաղաքներ էլ գիտէք, որտեղ կան հայ ուսանողներ, խնդրենք այս գրութեան պատճէն ուղարկէք այդպիսիներին։*

Ընկերական բարեւներով՝
օր. Ն. ԱԴԱՄԵԱՆ
Լ. ՆԱԶԱՐԵԱՆ

Ընկերներ,

Այս կոչով դիմել ենք Գերմանիայի բոլոր ուսանողներին. լաւ կը լինէր, եթէ «Ջանք»ը դիմէր նոյնանման կոչով միւս երկիրների ուսանողներին էլ. աւելի լաւ է, ի հարկէ, եթէ ոչ-կուսակցականներ դիմէին։

Ողջոյններով՝ Ռ. ԼԵՌՆԵԱՆ[77]

77.- Ռ. Լեռնեան ծածկանունն է նոյն Լիպարիտ Նազարեանի։

Մատեան թիւ 48-2, էջ 18-19

Բ 18.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԼԱՅՊՑԻԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ

4 Յունուար [1906]

Ուսանող ընկերներ,

Կովկասից հասնող ծանր ու փոթորկալի լուրերի հանդէպ, ձեր «գրութիւնը» մի հաճելի տպաւորութեան աղբիւր պիտի համարուի։ Երբ Մայր-երկրին մէջ ժողովրդական բոլոր խաւերի հանգստութիւնը խախտուած է, երբ անարգ մի կառավարութեան դաւերի շնորհիւ խաղաղ, աշխատասէր տարրերն անգամ՝ զէնքը ձեռքին՝ միմեանց հանդէպ են դուրս եկել,— այդպիսի պայմաններում — մեր խորին համոզումն է այդ — համալսարանական երիտասարդութեան անտարբեր եւ անմասնակից լինելը՝ ցանկալի չէ անշուշտ։ Եւ այդ տեսակէտից, ձեզանից 16 հոգու որոշումը՝ Կովկաս վերադառնալ, ժողովրդին մէջ մտնելու համար իբր շրջիկներ եւայլն — մենք եւս գտնում ենք կատարելապէս նպատակայարմար։

Ժընեւի ուսանողութեան մէջ այդպիսի մի միտք ծագեց դեռ ամառը։ Նոյնիսկ միտք կայ եւ Բերլինի մի խումբ ուսանողների մէջ։ Ժընեւից գնացողներ եղել են, դեռ ամիսներ առաջ։

Երբ ձեզ աջողուի Կովկաս անցնել, ձեզ է մնում ի հարկէ որոշել ձեր անելիքը, համաձայն ձեր ոյժերի, եւ այդ գործում, վստահ ենք, Դաշնակցութեան տեղական մարմինները չեն զլանայ ձեզ օգնել խորհրդով եւ իրանց ծանօթութեամբ։

Դրամական տեսակէտից ձեր յոյսը միայն ձեր վրայ պիտի լինի, որովհետեւ մեր մարմինները, ներկայ անտոմար պարագաներում, արտակարգ ծախքեր անելու ստիպողական հարկի մէջ են գտնուում։

Մի փոքրիկ ծառայութիւն, որ մենք կարող ենք անել, դա այն է, որ կը տանի ամէն մի վճարողի մի-մի պարբերաբար ատրճանակ որ դուք գործ կ'ածէք իբր կազմակերպութեան զէնք, վերջումը մեր կովկասեան մարմիններին յանձնելու պայմանով։

Երբ լուրջ կերպով քննելով ձեր ձեռնարկի մանրամասնութիւնները, կը գրէք մեզ ձեր վերջնական որոշումը, մենք կարգադրութիւն կ'անենք ատրճանակների մասին։

Ցաւում ենք շատ, որ հաղորդակցութեան ընդհատման պատճառով, անկարող ենք այդ մասին նախօրօք տեղեկացնել կովկասեան մեր մարմիններին։

[ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

Մատեան թիւ 48-2, էջ 43

Բ 19.– ԴԱՐՄՇՏԱԴԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ

22 Յունուար [1906]

Ընկերներ,

Ներփակ վերադարձնում ենք ձեզ Ձեր շրջանի համար կազմած «Ներքին կանոնագիրը», վաւերացուած Բիւրոյի կողմից։

Ցոյս ունենք, որ ձեր ուսանողական խումբը, իր սահմանների մէջ, ցոյց կը տայ եռանդուն գործունէութիւն եւ կարող կը լինի կազմակերպել ոչ միայն Դարմշտադի հայ ուսանողութիւնը, այլեւ քաջալերիչ օրինակ կը հանդիսանայ շրջակայ ուսանողական քաղաքների համար։

Բարեւներով
[ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

Փաստ. 1466-10

Բ 20.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

1905 թուի Համագումարը կայացրեց մեծ այժմէութիւն ունեցող մի որոշումն,– պարտաւորութիւն դնել համալսարանական հայ ուսանողութեան վրայ՝ *զինավարժութեամբ* պարապել ու ընտելանալ անձնապաշտութեան տարրական եղանակին:

Սակայն այն որոշումը, հակառակ մեր կսկծալի իրականութեան հրամայական պահանջին, մինչեւ այժմ մնաց առանց գործադրութեան, թղթի վրայ, լոկ իբրեւ ցանկութիւն: Զինավարժական խմբեր չկազմակերպուեցին. հայ ուսանողները հրացանաձիգ ընկերութիւնների մէջ չմտան, եւ այդ տխուր պատճառով՝ երկիր վերադարձող մեր փոքրաթիւ երիտասարդները երես առ երես կանգնած են մի ծանր կացութեան հանդէպ – ինքնապաշտպանութեան կարիք կայ, բայց զէնք բռնել չեն կարող, զէնք կայ, բայց գործածել չգիտեն:

Յեղափոխական մարտը, միացած միջազգայնական արիւնոտ կռիւներին, հրամայում է երէկեան զինատեաց, խաղաղ ժողովրդին դէպի զէնք վազել՝ ոչ միայն իրաւունք ու պատիւ, այլեւ կեանք պաշտպանելու համար: Բռնապետական շահատակութիւններին մատնուած ապաբախտ երկրի բոլոր ծայրերում հրացան ու ատրճանակ է գոչում ոչ միայն զինուորն ու ֆեդային, մարտիկն ու յեղափոխականը, այլ նոյնիսկ աշակերտն ու գեղջուկը, ուսանողն ու գրողը: Զէնքի է դիմում տնից դուրս եկողը, զէնք է վերցնում երկիր վերադարձողը, զէնք է որոնում ապրել ուզողը: Փաստ է այս, ցաւալի գուցէ, անցանկալի, բայց անհերքելի:

Եւ մեր ուսանողները, որոնք մի տարուց ի վեր, թէեւ նուազ չափով, թէեւ փոքր թուով, վերադառնում են երկիր, յաճախ իբրեւ աջակցողներ իրենց ծննդավայրին, յաճախ իբրեւ գործիչներ ժողովրդի մէջ, դեռ անծանօթ են զինամարզութեան, անծանօթ անձնապաշտպանութեան տարրական միջոցին: Մանաւանդ այժմ, համալսարանական մի քանի քաղաքներից, ուսանող երիտասարդներ վճռական ցանկութիւն են յայտնում վերադառնալ Կովկաս, դէպի կռուի եւ արեան հովիտը, մասնակցելու յեղափոխական-մարտական գործին: Ու այդ գեղեցիկ, ոգեւորող մտքի դիմաց իր ամբողջ, այլանդակութեամբ ծառանում է այն իրողութիւնը, որ կռուի գնացող երիտասարդը կռուել չգիտէ, որ արդարութեան գործին զէնքով յարել ցանկացողը՝ զէնք գործածել չգիտէ: Եւ այդ պատճառով թոյլ է նա, անկար ու անընդունակ պաշտպանողական գործին...

Ընկերներ,

Տարօրինակ է այս վիճակը եւ նոյնիսկ անթոյլատրելի: Սրանից մի տարի առաջ, ուսանողական Համագումարի մէջ հանդիսաւոր կերպով արուած խոստումը՝ իրականացումն է պահանջում: Տարաբախտաբար, յետագայ փաստերը ոչ միայն չթուլացրին այդ խոստման ոյժը, այլ եւ տասնապատիկ արժէք տուին նրան, որովհետեւ հայկական իրականութիւնը դարձաւ աւելի փոթորկոտ, աւելի մարտական, լքցուած զէնքի պահանջով: Անխուսափելի է ուրեմն արձագանք տալ այդ պահանջին եւ զինավարժութեամբ ձեռք բերել տխուր, բայց անհրաժեշտ միջոցը ինքնապաշտպանութեան:

Դժուար գործ չէ այդ: Համալսարանական քաղաքներում շատ կան զինավարժական ընկերութիւններ: Անդամ գրուեցէք: Շաբաթական մի անգամ, կիրակնեայ արձակուրդներին, դուրս գնացէք քաղաքից, վարպետների ղեկավարութեան ներքոյ վարժուեցէք գործածելու այն զէնքը, որ մեր կռուող եւ ինքնապաշտպան ժողովրդի այսօրեան տենչանքն է, եւ առանց որի դուք երկրի մէջ թոյլ պիտի լինիք, անկար, եւ անգործնական: Արգելք չկայ: Եւրոպայում տարածուած մարզանք է այդ, սիրուած սպորտ: Նա մեծ ծախք էլ չի պահանջում: Ուսանողական տեղական մարմինները իրենց գումարներից կարող են հոգալ այդ աննշան ծախքը, իսկ անկարողութեան դէպքում՝ «Միութեան» գանձարանը պատրաստ է մատակարարել այդ փոքրիկ նպաստը – զինավարժական խմբերի անդամակցութեան վճարը:

Դէպի մարզանքի ուրեմն: Եւ դուք, հայ ուսանողուհիներ, նոյնպէս եւ Եւրոպա ապաստանած հայ փախստականներ, միացէք այդ մարզանքին, ձեռք բերէք անձնապաշտպանութեան անհրաժեշտ, տարրական միջոցը, պատրաստուեցէք՝ որպէսզի կարողանաք պաշտպանել թէ ձեզ, թէ ձերոնց եւ թէ արդարութիւնը, որպէսզի կարողանաք լուանալ բոլորիդ ճակատից այն դրոշմը, թէ հայը վախկոտ է, խորշող զէնքից, անընդունակ պաշտպանել իր կեանքը, իր իրաւունքը, իր աշխատանքը: Ինքնապաշտպանութեան անընդունակները ստրուկներն են ու երկչոտները: Ցոյց տուէք, որ դուք ոչ ստրուկ էք եւ ոչ երկչոտ:

Աջողութեան իղձերով՝
ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷ

1906, Փետ. 1, Ժընեւ

Adresse: Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève (Suisse).

Փաստ. 49-88

Բ 21.– ՍԻԱՄԱՆԹՈՅԷՆ ԵՐԵՔ ԳՐՈՒԹԻՒՆ Է. ԱԿՆՈՒՆԻՒՆ

[Փետր. 1906]

Յարգելի պարոն Մալումեան,

Կը պաղատիմ (կը բաւէ՞), կը պաղատիմ որ սովորական 10ով շարել տաք, որովհետեւ այդ տառերը մեր հասարակութենէն չի կարդացուիր եւ իմ ոճս եւ ձեւերս[?] անբուժելիօրէն կը դժուարացնեն[78]:

Չեմ հասկնար գրաշարներուն այս տառերուն համար ունեցած ախորժակը:

Թո՛ղ երկու ժամուան զոհողութիւնը ընեն եւ նորէն շարեն. շատ կը ցաւիմ եթէ այսպէս երեւան գայ «Դրօշակ»ի մէջ. եւ յետոյ ձօնը թուանշաններու տափակութեանը չեմ ուզեր իջեցնել

Փարը եւ սեւ տառերով

Ձօն Հայ Յեղափոխական

Դաշնակցութեան Տասնեւհինգամեակին

Կը խնդրեմ որ պէտք եղած հրամանները տաք գրաշարին եւ այսպէս շարուի:

Բարեւներով՝
Ա. ԵԱՐՃԱՆԵԱՆ

78.- Հաթցը կը վերաբերի Սիամանթոյի Հայրդիները շարքին «Դարերու վրէժ» բանաստեղծութեան, որ նուիրուած էր Հ.Յ.Դ.ի 15ամեակին եւ որ լոյս տեսած է «Դրօշակ»ի 1906 թ.ի առաջին համարին մէջ, էջ 4-5: Սիամանթոյի երկտողին թուականը՝ Փետր. 1906, գրուած է այլ ձեռագրով մը:





Փաստ. 49-91

Բ 22.– ՍԻԱՄԱՆԹՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փետր. 26, 906



Յարգելի ընկերներ,

Ստացայ պատճէնը: Մերը բոլորովին կարճ եւ տարբեր պիտի ըլլայ: Ձեզ կ'իմացնեմ: Ուրիշ նպատակ մը ունիմ. Այժմէն ժողովողական շարժումը յառաջ բերել այստեղի professeurներու օգնութեամբ réunion-monstre[79] մը կազմակերպելով ու միթինկին որոշումը հեռագրով կամ նամակով Վաշինկթըն ղրկել, միշտ հենց կողմէն անշուշտ: Եթէ յաջողուի, ձեզ կը գրեմ մանրամասն եւ կը խորհրդակցինք: Ամէն պարագայի մէջ ձեր կարծիքը նոյնիսկ հիմա, մեզ կրնայ գոհ ձգել:

Ընկերական բարեւներով
Ա. ԵԱՐՃԱՆԵԱՆ

Փաստ. 49-92

Բ 23.– ՍԻԱՄԱՆԹՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փետր. 28, 1906

Յարգելի ընկերներ,

Pro-Armeniaներ ըսելով ուզած էք հասկցնել անգլերէն եւ ֆրանսերէնը[80]. պէտք է հրաւիրենք իրրեւ կազմակերպող այդ միթինկին ամերիկեան եւ անգլիական pasteurները[81] եւս: Մտածեցի որպէսզի մեր դիմումէն առաջ իրենք տեղեկութիւն ունենան հարցին վրայ ուրիշ աղբիւրներէ, իրենցմէ ամէն մէկին ղրկել Pro-Armeniaները եւ դիմումը յետոյ ընել: Ձեր կարծիքը յայտնած էք: Մեր հեռագրին պատճէնը եթէ կ'ուզէք ղրկենք կարդացէք: Դեռ պէտք եղած գումարը ամբողջ չէ հեռագրին համար: Հետաքրքիր եմ իմանալ թէ Ժընեւի հեռագիրը ինչ դրամական միջոցով տուիք:

Բարեւներով
Ա. ԵԱՐՃԱՆԵԱՆ

79.- Ֆրանսերէն՝ միթինկ, բազմամարդ հաւաք մը: Հաթցը կը վերաբերի անոր, որ Լահէյի Խաղաղութեան համաժողովի գումարման առթիւ, Արեւմտեան Բիւրոյի ցուցմունքով հայկական տարբեր գաղութներու մէջ կը կազմակերպուէին բազմամարդ միթինկներ եւ հեռագիրներ կը յղուէին Միացեալ Նահանգներու նախագահ Թէոտոր Ռուզվելթին թիկունք կանգնելու հայկական դատին: Զուիցերիոյ մէջ նման միթինկներ եւ դիմումներ եղան հայ ուսանողներու կողմէ Ժընեւ եւ Լօզան: Սիամանթօ այդ տարիներուն հաստատուած էր Լօզան եւ գործօն մասնակցութիւն ունէր ուսանողներու հասարակական կեանքին մէջ:

80.- Pro-Armeniaն լոյս կը տեսնէր ֆրանսերէն: 1905 թ. Նոյեմբերին Լոնտոնի մէջ հրատարակուած է անգլերէն մէկ թիւ:

81.- Ֆրանսերէն՝ հովիւ, աւետարանական քարոզիչ, ժողովրդապետ:

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԲԱԺԻՆ Գ.

Զ. Համագումարէն ետք, 1906 թ.ին արդէն կը դադրի Եւրոպայի Հայ ուս. միութեան գործունէութիւնը: Միութենական հաւաքական կեանք գոյութիւն չունի. համալսարանական քաղաքներու խումբերը թէեւ կը շարունակեն իրենց առանձին, անջատ կեանքը, բայց եւ զգալի է բացակայութիւնը եւրոպական քարոզչական բեմին վրայ հայ ուսանողութեան հաւաքական գործին, որ այնքան արդիւնաւէտ էր եղած նախորդող տարիներուն: Այս պայմաններուն մէջ, յատկապէս դաշնակցական եւ համակիր ուսանողներէ բաղկացած խումբերուն մէջ, կը ծագի միտքը՝ զուտ կուսակցական հողի վրայ եւ գաղափարական աւելի որոշ ծրագրով միութեան մը ստեղծումին: Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովի նախօրեակին՝ 1906-1907 թուականներուն այս գաղափարը կը հասունցնայ կուսակցական շրջանակներուն մէջ. եւ մինչ Հ.Յ.Դ. Երկրորդ (1898) եւ Երրորդ (1904) Ընդհ. Ժողովներուն Եւրոպայի եւ Ռուսիոյ դաշնակցական ուսանողութիւնը մէկական ներկայացուցիչով, բայց *խորհրդակցական* ձայնով միայն մասնակցած էր, Չորրորդին անոնք կը հրաւիրուին *վճռական* քուէի իրաւունքով: Ուշագրաւ է, ի դէպ, Եւրոպայի ուսանողութեան պատգամաւոր ընտրուած Արշակ Իսահակեանի (Ջամալեան) լիազօրագիրը, ստորագրուած գրող, «Վարդանանք» պատմավէպի ապագայ յայտնի հեղինակ Դերենիկ Դեմիրճեանի կողմէ, որ այդ օրերուն Ժընեւի համալսարանի ուսանող՝ կ՚անդամակցէր նոյն քաղաքի դաշնակցական «Ջանք» խումբին:

Ուսանողութեան վերաբերող Չորրորդ Ընդհ. Ժողովի քննարկումներէն կարելի չէ ուղղակի հետեւցնել, որ ծրագիր կայ Եւրոպայի մէջ դաշնակցական ուս. միութիւն ստեղծելու: Երեւի մեզի ծանօթ եւ, արտաքնապէս գէթ անկուսակցական հողի վրայ գործող միութեան փաստացի կազմալուծումը, ինքնին, իմանալի կը դարձնէր անհրաժեշտութիւնը զայն փոխարինողի մը կեանքի կոչուելուն: Արդարեւ, Ժողովի փակումէն քիչ անց, 1907 թ. Յուլիս 20ի նիստին, Արեւմտեան Բիւրոն կ՚որոշէ՝

«Առաջարկել Եւրոպայի հայ ուսանողներին, դաշնակցական, կազմել ուսանողական մի խորհրդակցութիւն, պարզելու 1) ինչպէս կարող են ուսնողները օգտակար լինել կազմակերպութեանը եւ 2) երբ եւ ինչպէս կազմակերպել դաշնակցական ուսանողութեան մի համագումար»:

(Տեսնել այս մասին, «ՆԻՒԹԵՐ»ու Է. հատոր, էջ 34 եւ 39):

Ահա այս նպատակով է, որ Բիւրոյի կողմէ Ա. Իսահակեան-Ջամալեան կը գործուղուի Զուիցերիոյ եւ Գերմանիոյ ուսանողութեան մօտ նախապատրաստական աշխատանքներու ձեռնարկելու: Իր ներկայացուցած զեկուցագրին հիմամբ կ՚որոշուի կայացնել առաջին համագումարը, որ տեղի կ՚ունենայ Ժընեւ 1908 թ. Ապրիլին եւ ուր հիմը կը դրուի Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան:

Համագումարը կը մշակէ միութեան կանոնագրութիւնը, կը զբաղի կուսակցութեան օրակարգին վրայ գտնուող քաղաքական, գաղափարախօսական եւ կազմակերպական հարցերով, կ՚որոշէ անյապաղ լոյս ընծայել միութեան պաշտօնաթերթը «Ուսանող» անունով, կ՚ընտրէ միացեալ մէկ մարմին թէ՛ իբրեւ Գործադիր մարմին եւ թէ «Ուսանող»ի խմբագրութիւն:

Բաժինը կը բովանդակէ գլխաւորաբար հետեւեալ փաստաթուղթերը.–

1.- Թիւ 50-117: Արշակ Իսահակեան-Ջամալեանի զեկուցագիրը Արեւմտեան Բիւրոյին:
2.- Թիւ 1468-163 եւ 1468-53: Բերլինի դաշնակցական ուս.խմբակի հրաւէրն ու զեկուցագիրը Ա. Համագումարի կազմակերպման մասին:
3.- Թիւ 1468-51: «Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողների համագումարի ատենագրութիւնը», ձեռագիր, մեծադիր 40 էջ:
4.- 1468-57: «Կանոնագիր Եւրոպայի Հայ յեղ. դաշնակցական ուսանողների միութեան», 1908, Ժընեւ, տպագիր 7 էջ:

Մատեան թիւ 48-2, էջ 65

Գ 1.– ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԺԸՆԵՒԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ «ՋԱՆՔ» ԽՄԲԻՆ

Ցարգելի ընկերներ,

Ուղարկում ենք ձեզ առաջիկայ Ընդհանուր Ժողովի «Օրակարգը» (որը գաղտնի պիտի մնայ մօտիկ ընկերների շրջանում) եւ խնդրում ենք ըստ կարելոյն շուտ դաշնակցական ուսանողների ժողով գումարել, ձեռնարկել ձեր ներկայացուցչի ընտրութեան եւ կատարել կարծիքների փոխանակութիւն, ուսանողութեան քննութեան ենթարկելով «Օրակարգի» կէտերը:

Համաձայն կազմակերպական կանոնների, եւրոպական դաշնակցական ուսանողութիւնը մի պատգամաւոր պիտի ուղարկէ Ընդհ. Ժողովին: Ժընեւի դաշնակցական ուսանողական խմբին է յանձնուած յարաբերութեան մէջ մտնելու ուսանողական միւս քաղաքների հետ՝ պատգամաւորի ընտրութիւն կատարելու նպատակով:

Տեղանքի մասին խնդրում ենք մեզ տեղեկացնել:

Բարեւներով
[ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ]

[1906]

Գ 2.– ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆԻՆ

1907, 23 յունիս, Ժընեւ

Հայ Յեղափոխական
Դաշնակցութեան
Արեւմտեան Բիւրոյին,

Համաձայն ձեր առաջարկութեան՝ Ժընեւի «Ջանք» դաշնակցական ուսանողական խումբը կազմակերպելով այն պատգամաւորի ընտրութիւնը, որ համաձայն Դաշնակցութեան կանոնադրութեան՝ Եւրոպայի դաշնակցական ուսանողները կարող են ուղարկել առաջիկայ Ընդհանուր Ժողով, պարտք է համարում յայտնել ձեզ, որ ընդհանուր քուէարկութիւնից յետոյ՝ ընտրութեան մասնակցող Եւրոպայի զանազան քաղաքների դաշնակցական ուսանողութիւնը, ձայների մեծամասնութեամբ, ընտրեց Բերլինի ուսանող Արշակ Իսահակեանին, որ եւ ներկայացնում ենք ձեզ:

Ի դիմաց խմբի
ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՋԵԱՆ
Ռ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

Ստորեւ երկու նշխար մեծանուն բանաստեղծներ Աւետիք Իսահակեանէն եւ Դանիէլ Վարուժանէն:
Առաջինը կը գտնուի 1907ին Վիեննա գումարուած Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովի մէկ թղթածրարին մէջ (թիւ 1536), որ կը պարունակէ ժողովական այլազան նոթագրութեանց վերաբերող տետրակներ: Յայտնի է որ Ա. Իսահակեան մասնակից էր պատմական այդ ժողովին իբրեւ պատգամաւոր Ալեքսանդրապոլի եւ երեւի պարապոյ մէկ ժամուն տետրակի ազատ մէկ էջին վրայ գրի առած է այս երկու քառեակները:
Երկրորդը բացիկ մըն է Դանիէլ Վարուժանէն, այդ օրերուն ուսանող Կանտի (Պելճիքա) համալսարանին մէջ: Ամառնային արձակուրդը ան պիտի անցընէր Իտալիոյ Թորինօ քաղաքը. ճանապարհին ան հանդիպած էր Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրատուն:

Թղթածրար թիւ 1536

Գ 3.– ՆՇԽԱՐ ՄԸ ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԷՆ



Շափաղ կու տաս բաղի միջին,
Ամ, կարմիր վարդ, շաղի միջին.
Բուրմունքի պէս հիւսուում ես վեր
Իմ զառ ու լալ խաղի միջին...

Խելքս է տարուել քու ալ-վարդին,
Ճար չեմ անում իմ ծով դարդին,
Բլբուլի պէս թռնեմ քեզ մօտ —
Կարօտցել եմ ծոցիդ վարդին...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

27 մարտի, Վիեննա

Փաստ. 1271-96

Գ 4.– ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



4/IX/07, Դուրին

Ազնիւ բարեկամներուն
(«Դրօշակ»ի խմբագրութեան)

Հասած եմ արդէն Դուրին: Կրած քաղցր ազդեցութիւնս Ձեզ ըրած իմ կարճ այցելութեանս միջոցին՝ ինծի պարտք կը դնէ Ձեզի այս երկտողս գրել: Ձեր մասին վերյուշումներս հաճոյք մը պիտի ըլլան ինծի: Դաշնակցութեան անկեղծ գործիչները կը համակրիմ, վասնզի ես կը սիրեմ Դաշնակցութիւնն ի՛նքը՝ քանի որ ան կը տեսնեմ որ օրէ օր ժողովուրդին գիտակից կամքը կը դառնայ:

Սիրալիր ողջոյններով, Ձերդ
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Փաստ. 50-117

Գ 5.– ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Սիրելի ընկերներ,

Շտապում եմ մի համառօտ զեկուցումն տալու ինձ յանձնուած միսիայի մասին: — Բացի Ժընեւից՝ եղել եմ հետեւեալ ուսանողական քաղաքներում՝ Բերն, Ցիւրիխ, Միւնխէն, Լայպցիգ, Ենա, Բերլին եւ Դարմշտադտ: Լօզան չմտայ, որովհետեւ ինչպէս Ձեզ էլ յայտնի է, ընկեր Յակոբեանը գրել էր, որ ուսանողները ցրուած են:

Վերոյիշեալ քաղաքներում ուսանողութիւնը հետեւեալ վիճակն է ներկայացնում.

Բեռն.— Ժողովին ներկայ էին մօտ 12-15 հոգի, որոնցից 6-7 հոգի դաշնակցականներ են. ուսանողները համախմբուած են, իրար հետ բաւական լաւ յարաբերութեան մէջ: Դաշնակցականների մէջ կան համոզուած եւ որոշ չափի պատրաստութեան տէր տղաներ:

Ցիւրիխ.— Ժողովին ներկայ էին մօտ 12-14 հոգի. մի քանիսը դաշնակցական — կամ դրա նման մի բան — իսկ մնացածները բացառութեամբ մի ս.-դ.-ի[82] բացարձակապէս անգոյն: Ուսանողութեան քաղաքական հասունութեան վիճակը շատ անմխիթար է: Ուսանողները մի ինչ որ երեկոյթի առթիւ սարսափելի պառակտուած են իրար հետ:

Միւնխէն.— Կայ մօտ 20-ի չափ ուսանող. իմ այստեղ եղած ժամանակ կային մօտ 10-ը հոգի, գոնէ այդքան հոգի մասնակցում էին ժողովներին: Կան մօտ 5-6 դաշնակցական, որոնցից մի երկուսը բաւական լաւ տղաներ են: Ընդհանուր առմամբ Միւնխէնի ուսանողները քաղաքական հարցերով հետաքրքրուող մարդկանց տպաւորութիւն են թողնում:

Լայպցիգ.— Այստեղ պէտք է ուսանողութիւնը շատ լինի, սակայն չգիտեմ ցրուած էին թէ ինչ, ժողովներին ներկայ էին լինում 15-20 հոգի: Դաշնակցականները 7-8 հատ են. մնացածները մեծ մասամբ անկուսակցական. կան մի քանի հատ էլ ս.-ր.-ներ: Ուսանողների յարաբերութիւնները լաւ իրար հետ եւ ընդհանուր առմամբ գիտակից մարդկանց տպաւորութիւն են թողնում:

Ենա.— Ժողովին ներկայ էին 11 հոգի, որոնցից 2-ը դաշնակցական, մի երկուսը ս.ր.[82] եւ մնացածները սոց. դեմ. Դաշնակցականների թիւը կարծեմ 4 է (երկուսը մեկնել էին): Ուսանողների մէջ կուսակցական ոգին զարգացած է. իւրաքանչիւր խմբակ առանձնացած է իւր համար. ընդհանուր առմամբ սրանց մտաւոր վիճակը լաւ է:

Բերլին.— Հայ ուսանողներ ընդհանրապէս շատ կան այստեղ, բայց Հայոց ժողովի շուրջը համախմբուածները 25-38 հոգի են: Դրանցից ժողովին ներկայ էին մօտ 20-25 հոգի: Մեծ մասը դաշնակցականներ են. կան մի քանի անջատականներ[83] եւ ս.-դ.-ներ եւս: Ուսանողների մտաւոր վիճակը բաւարար է, թէ դաշնակցականների եւ թէ անջատականների մէջ կան համոզուած եւ բաւականաչափ պատրաստուած կուսակցականներ:

Դարմշտադտ.— Ուսանողների թիւը մօտ 12 է. գրեթէ բոլորն էլ դաշնակցական. այնտեղ եղածս ժամանակ կային միայն 4 հոգի, որոնք եւ ներկայ էին «Ժողովին»: Ընդհանրապէս քաղաքական հասունութեան տեսակէտից յետ ընկած ուսանողութիւն է:

Ահա մօտաւորապէս այս է անցածս քաղաքների ուսանողութեան պատկերը:

Վերոյիշեալ քաղաքներում, երբեմն մի, երբեմն երկու դասախօսութեան մէջ զեկուցել եմ Ընդհ. Ժողովի մասին ընդհանրապէս եւ տաճկահայ դատի, անջատման խնդրի եւ Դաշնակցութեան ծրագրի մասին մասնաւորապէս: Հակաճառողներ ամէն տեղ եղել են սոցիալ-դեմոկրատներ եւ մի երկու տեղ էլ անջատականներ: Բացի դասախօսութիւններից ընդհանուր ուսանողական ժողովներում՝ մի քանի տեղ էլ ունեցել եմ ընկերական զրոյց մասնաւորապէս դաշնակցականների հետ: Զեկուցումներիս ընդհանուր բնաւորութեան մասին գաղափար կարող էք կազմել, այն ռեզոլիւցիայից[65], որ ուղարկում եմ սրա հետ եւ որը տարբեր վար-

82.- Ս.-դ.ն՝ ռուսական սոցիալ դեմոկրատ, իսկ ս.ր. սոցիալ-յեղափոխական կուսակցութիւնն է:
83.- Անջատական անունը կը տրուէր Հ. Յ. Դաշնակցութենէն հեռացած այն խմբակին, որուն համաձայն երկու տարբեր կուսակցութիւններով պէտք էր վարել «տաճկահայ» եւ կովկասեան գործունէութիւնը, որ պիտի գործէ կովկասեան եւ համառուսական շարժումներու շրջանակին մէջ:

խացիաներով[84] *ընդունուել է բոլոր քաղաքներում (Բերլինի մասին դեռ տեղ[եկութիւն] չունիմ, իսկ Ենայում դաշ[նակցական], քիչ լինելու պատճառով ռէզոլիւցիա չառաջարկեցի ինքս)։*

Ընդհանրապէս Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան մտաւոր վիճակը եւ կուսակցական ֆիզիոնոմիան[85] *վերին աստիճանի անմխիթարական տպաւորութիւն է թողնում։ Ամբողջ ուսանողութեան մէջ հազիւ մի 5-6 հոգի կարելի է թուել, որոնք կուսակցութեան արդի կարիքներին բաւարարութիւն տալու պատրաստութիւնը ունենան։ Անհրաժեշտ է առաջիկայ աշնանը եւեթ կազմակերպել «Եւրոպ. Դաշ. Ուս. Միութիւն» եւ օրգանական-մտաւոր աշխատանք սկսել՝ եթէ ուզում էք որեւէ օգուտ ստանալ այս ուսանողութիւնից։ Զգիտեմ այս առթիւ գրածս կոչը ի՞նչ արիք դուք. ինչո՞ւ մինչեւ հիմա լոյս չի տեսնում։ Կազմակերպուած ուժերով տասնապատիկը կարելի է անել այն բոլորի, ինչ որ «արւում է» այսպէս ցրուած վիճակում։*

Ընկերական բարեւներով
ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

84.- Տարբերակներով:
85.- Դիմագիծը:

Փաստ. 50-117ա

ՀԱՇԻՒ

Արեւմտ. Բիւրոյից շրջագայութեանս համար ստացել եմ 150 *ֆր.*

Ունեցել եմ հետեւեալ ծախսերը
ճանապարհածախս

Այստեղից Ժընեւ	6,35+50=6,35
Վերադարձ	6,35+50=6,35
Այստեղից Բերն	2,30+50=3,30
Բերնից-Բերլին եւ վերադարձ	83,30
Միւնխէնից Լայպցիգ (5 *օր*)	20,00
Լայպցիգից Ենա (5 *օր*)	2,20
Բերնից այստեղ	3,30
Ընդամէնը	126,308

Մնացած ծախսերի համար մնում էր 23,708 *որ մօտ* 25 *օրուայ ճանապարհորդութեանս համար չդիմացաւ, դրա համար ստիպուած էի պարտք վերցնել։ Մալումեանից (Ենայում)* 27 *մարկ, Վանեցեանից* 5 *մարկ եւ Մէլիքեանից (Բերլին)* 10 *մարկ, ընդամէնը՝* 42 *մարկ։*

[*Օգոստոս* 1907]

Փաստ. 1468-163

Գ 6.– ԵՒՐՈՊԱՅԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆԸ[86]

Ընկերնե՛ր,

Դաշնակցութեան IV Ընդհ. Ժողովը, նոյնիսկ հակառակ ուսանողութեան ներկայացուցիչների կարծիքի, որոշել է առաջիկայում եւս կուսակցութեան բարձրագոյն հաստատութեան մէջ մեզ վճռական ձայնի իրաւունք տալ:

Հայ ուսանողութեան երկու խոշոր հատուածներից իւրաքանչիւրին (Ռուսաստանի եւ Եւրոպայի) մի մի կենտրոնական կոմիտէի իրաւունքով օժտելը եւ ընդհանրապէս Ընդհ. Ժողովի արտայայտած վստահութիւնը դէպի ուսանող երիտասարդութիւնը անհրաժեշտօրէն ենթադրում է վերջինիս կողմից որոշ, օրգանական աշխատանք կուսակցութեան ծրագրի եւ որոշումների սահմաններում:

Դժբախտաբար վերջին ժամանակներս այդ կուսակցական գործունէութիւնը, գոնէ մեզ մօտ, Եւրոպայի դաշնակց. ուսանողութեան շրջանում, շատ չնչին է եղել թէ՛ իւր քանակով եւ թէ որակով: Եւ այդ կուսակցական ամուլութիւնը իւր գագաթնակէտին է հասել մանաւանդ մեր օրերում: Ապրելով առանց կազմակերպութեան, առանց փոխադարձ շփման, շատ անգամ բոլորովին անտեղեակ կուսակցութեան ընթացիկ կեանքի ամենախոշոր հարցերի եւ ամենահրատապ կարիքների հետ՝ Եւրոպայի ուսանողութիւնը, որ Դաշնակցութեան ամենազգայուն շրջանից մէկը պէտք է լինէր՝ կորցրել է կենդանի հետաքրքրութիւնը դէպի գործը եւ հետզհետէ համակուած է շրջապատի անգոյն եւ տարտամ տրամադրութեամբ կամ թէ չէ, հասարակական այլ հոսանքների մէջ լուծւում, անհետանում...

Այս աննորմալ կացութիւնը չէր կարող երկար ժամանակ անուշադիր մնալ ուսանողութեան կողմից. եւ ահա այս տարուան սկզբներից եւ մանաւանդ Ընդհ. Ժողովից յետոյ, որ կուսակցութեանն առաջ գործունէութեան այնպիսի նոր ասպարէզներ է բանում, որոնք յարմար են ուսանողական ուժերի գործադրութեան համար – զանազան քաղաքների ուսանողութեան շրջաններից բուռն ձայներ են լսւում՝ դուրս գալու վերջապէս մեր իներտ[87] դրութիւնից եւ կուսակցական պարտականութիւնների ճանապարհի վրայ կանգնելու...

Արտայայտիչ լինելով վերոյիշեալ տրամադրութեանը՝ Բերլինի Դաշն. Ուս. խմբակը սրանով դիմում է բոլոր արտասահմանեան դաշնակցական ուսանողութեանը կազմակերպելու կուսակցական հողի վրայ եւ միահամուռ ուժերով նուիրուելու ընդհանուր գործին:

Քննելով սոյն առաջարկի նպատակայարմար գործադրութեան խնդիրն՝ Բերլինի դաշն. ուսանողութիւնը եկել է հետեւեալ եզրակացութիւններին.

1) Անհրաժեշտ է շուտով վերակազմել բոլոր տեղական խմբերը Դաշն. կազմակերպական կանոնների հիման վրայ եւ աշխատել որեւէ գործնական ձեռնարկով (դասախօսութիւն, երեկոյթ եւայլն) ամրապնդել վերակազմած խումբը:

Ծանօթ.– Իւրաքանչիւր խմբակ պէտք է կապեր հաստատէ հարեւան քաղաքներում հատ ու կտոր ցրուած ուսանողների հետ եւ նրանց իւր շուրջը համախմբի:

2) Անմիջապէս քննութեան առնել Եւրոպայի դաշնակց. ուսանողութեան Համագումար կազմելու հարցը եւ որոշել այս ձեռնարկի գործնական պայմանները,– տեղը, ժամանակը, մանակցելու եղանակը, նիւթական միջոցներ եւայլն:

3) Պատրաստել օրակարգի նախագծեր Համագումարի զբաղմունքների համար:

4) Պատրաստել ռեֆերատներ[8] Դաշնակցութեան աշխարհայեացք, ծրագրային առանձնայատկութիւններ, տակտիքական եւ այլ նման խնդիրների մասին: Պատրաստել նաեւ ռեֆերատներ դաշն. ուսանողութեան առաջիկայ գործունէութեան մասին՝ պարզելու համար այն հարցը թէ ինչո՞վ կարող են եւ պէտք է արտայայտուի մեր ուսանողութեան կուսակցական պարտականութիւնները:

5) Ընտրել մի Յանձնաժողով Համագումարին վերաբերեալ գործերը վարելու համար:

Ծանօթ.- Որովհետեւ մինչեւ այդպիսի մի Յանձնաժողովի ընտրութիւնը անհրաժեշտ է, որ ուսանողութեան կարծիքները ժողովուին՝ Բերլինի խմբակը եւ ժամանակաւորապէս յանձն է առնում այդ մարմնի ֆունկցիաները[88]:

Ընկերական բարեւներով՝
Բ[ԵՐԼԻՆԻ] Դ[ԱՇՆ.] ՈՒՍ. ԽՄԲԱԿ

Հասցէ.- Arshak Isahakianz, Berlin. W.15, Ludwigskirchstrasse 7 III

Ծրարի վրայ գրել «կուսակցական»:

86.- Խմորատիպ շրջաբերական, որմով Պերլինի խմբակը նախաձեռնութիւն կը վերցնէ կազմակերպելու Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան հիմնադիր Ա. Համագումարը:
87.- Անգործօն, անտարբեր:
88.- Պաշտօնները, դերը, գործառոյթը:

Փաստ. 1468-16

Գ 7.– ԵՒՐՈՊԱՅԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆԸ
[ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ – ՀՐԱՒԷՐ]

Ընկերներ, 22- 2-1908, Բերլին

Մեր նախկին նամակի առթիւ ստացել ենք պատասխան մինչեւ այժմ հետեւեալ քաղաքներից, Լայպցիգ, Միւնխէն, Ժընեւ, Բերն, Ցիւրիխ, Բրիւսէլ, Պատովա եւ Մոնպելիէ: Միտվայտայից եւ Լօզանից խոստացել են շուտով գրել, իսկ Ենա, Հալլէ, Դարմշտադտ, Հայտելբերգ, Անվերս եւ Փարիզ քաղաքներից մինչեւ հիմա մեզ անհասկանալի պատճառով ոչ մի պատասխան չենք ստացել: Մինչեւ այժմ մեր ստացած պատասխանները բոլորն էլ դրական են, ուսանող ընկերները յայտնում են իրենց խորին համակրանքը ձեռնարկուած գործին, որի կարիքը վաղուց էր զգացւում: Իսկ Ժընեւի ընկերները ուղարկել նաեւ մի նախագիծ ապագայ միութեան կանոնադրութեան համար:

Լիազօրութիւն ստացած լինելով գրեթէ բոլոր տեղերի դաշնակցական ուսանողներից Համագումարի նախապատրաստական աշխատանքները կատարելու եւ գրեթէ ոչ մի առանձին հրահանգ ստացած չլինելով, որ կարելի լինի դաշ. ուսանողութեան մեծամասնութեան տրամադրութեան արտայայտութիւն համարել՝ Բերլինի դաշ. խմբակը անհրաժեշտ համարեց իւր կողմից որոշել Համագումարի իրագործման պայմանները, հարկաւ օգտուելով այն հատուկտոր առաջարկներից, որ մի քանի տեղերից եղել են այս խնդրով:

Ստորեւ առաջ ենք բերում այդ որոշումները՝ նրանց մանրամասն հիմնաւորումը – եթէ դրան կարիք կը լինի – թողնելով Համագումարի վայրում տալու.

ա. Տեղը.

Համագումարը տեղի կ՚ունենայ Միւնխէնում, որովհետեւ այդ քաղաքը կենտրոնատեղի է ուսանողութեան մեծամասնութեան համար.

բ. Ժամանակը

Համագումարի ժամանակամիջոցն է Ապրիլի 1-10, ի նկատի ունենալով արձակուրդային յարմարութիւնները.

գ. Մասնակցութեան պայմանները.

1. Համագումարին կարող է մասնակցել ամէն մի դաշնակցական ուսանող, որովհետեւ ցանկալի է ըստ կարելոյն բազմամարդ անել առաջիկայ համագումարը, որ ապագայ Միութեան հիմնադիր ժողովն է լինելու:

Ծանօթ.- Ինչպէս իւրաքանչիւր անձնատրութեան, նոյնպէս եւ ամէն մի ուսանողի դաշնակցական լինելը կամ չլինելը որոշւում է կուսակցութեան կազմակերպական կանոնների առաջին կէտով: Կազմակերպական կանոնները դեռ անցեալ տարի առանձին բրոշիւրով լոյս է տեսել եւ եթէ ուսանողների մօտ չկայ՝ կարող են ստանալ «Դրօշակ»ի խմբագրութիւնից:

2. Իւրաքանչիւր ուսանողական քաղաք, ուր կան դաշ. ընկերներ, պարտաւոր է ուղարկել իւր պաշտօնական ներկայացուցիչը կամ ներկայացուցիչները Համագումարին, որպէսզի Համագումարի իրագործումը ազատ եւ անպատասխանատու տրամադրութիւններից կախուած չլինի:

3. Քաղաքների վրայ ներկայացուցչական ձայների բաշխումը կատարւում է հետեւեալ կարգով. եթէ մի քաղաքում դաշ. ուսանողների թիւը 10-ից չէ անցնում, այդ քաղաքը ուղարկում է մէկ ներկայացուցիչ,

10-20 դաշ. ուսանողները ուղարկում են երկու ներկայացուցիչ, 20-30-ը՝ երեք եւ այլն այս համեմատութեամբ:

դ. Նիւթական միջոցներ

1. Համագումարին ինքնակամ մասնակցող ընկերները իրենք են հոգում իրենց ծախքերը:

2. Ներկայացուցիչները եւս իրենք են հոգում իրենց ծախսերը, եթէ միջոց ունին. հակառակ դէպքում անհրաժեշտ ճանապարհածախսը հոգում են ընկերները: Եթէ ընկերներն էլ հնարաւորութիւն չունին [հոգալ] ամբողջովին կամ գոնէ մասամբ ներկայացուցչի ճանապարհածախսը, այն ժամանակ միայն կարելի է այդ ծախսը վերցնել տեղական խմբակի կասսայից:

Սակայն եթէ առանձին տեղական կասսա չկայ՝ այդ դէպքում պէտք է դիմել Բերլինի խմբակին, նշանակելով ծախքի մօտաւոր քանակը:

3. Եթէ բացի ներկայացուցչից կայ ընկերների մէջ եւ ռէֆէրէնտ[88ա], որի ներկայութիւնը Համագումարում տեղական խմբակի կողմից կարեւոր է համարւում՝ նրա վրայ եւս տարածւում են նախորդ կէտի որոշումները:

Համագումարի օրակարգը պէտք է մշակուի Համագումարում համաձայն այն ռէֆէրատների եւ նիւթերի, որոնք հանդէս կը գան այնտեղ:

Ընկերնե՛ր, որպէսզի մեր առաջին Համագումարը շտապողականութեան եւ դրա հետ կապուած անկանոնութեան կնիք չկրի իւր վրայ՝ խնդրում ենք որքան կարելի է շուտ յարդարել վերոյիշեալ գործնական պայմանները եւ առ ուշը մինչեւ Մարտի 15-ը պատրաստ լինել Համագումարի համար:

Ընկերական բարեւներով
Բ[ԵՐԼԻՆԻ] Դ[ԱՇՆԱԿՑԱԿԱՆ]
ՈՒՍ[ԱՆՈՂԱԿԱՆ] ԽՄԲԱԿ

Հասցէ.- Charlottenburg, Heibnue str. 35
Արշակ Իսահակեանին

88ա.- Ռէֆէրատը՝ զեկուցում-դասախօսութիւն է. ռէֆէրանտը՝ դասախօսը:

Փաստ. 1468-53

Գ 8.– ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԷԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Եւր. Դաշ. ուսանողական միութիւն կազմակերպելու նպատակով մի համագումար գլուխ բերելու համար Բերլինի կազմակերպիչ կոմիտէն 1907-ի Նոյեմբերի կէսերէն կոչեր է ղրկել հետեւեալ քաղաքները.— Փարիզ, Լայպցիգ, Միւնխէն, Ժընեւ, Բերն, Ցիւրիխ, Բազէլ, Բրիւսէլ, Պատովա, Մոնպելիէ, Միտվայդա, Լօզան, Ենա, Հալլէ, Դարմշտատդ, Հայտելբերգ, Անվերս եւ Նէօշատէլ։ Բոլորովին պատասխան չի ստացուել Անվերսից ու Նէօշատէլից։ Պատովայից նոր-տարուց յետոյ լուր չկայ։ Հայդելբերգում եղել է այդ միջոցին մէկ [ուսանող], որ շուտով հեռացել է։ Բրիւսէլից, Մոնպելիէից եւ Միտվայդայից համագումարի սկսուելու օրերում ստացուել են շնորհաւորական գրութիւններ, որոնցից երեւում է, որ այդ տեղերից անկախ պատճառներով անկարող են մարդիկ ներկայ լինել։ Համագումարին մասնակցել են հետեւեալ տեղերի խմբակները.— Բերլին, Փարիզ, Լայպցիգ, Միւնխէն, Ժընեւ, Բերն, Ցիւրիխ, Բազէլ, Լօզան, Ենա, Հալլէ եւ Նէօշատէլ։ Նէօշատէլի ընկերները հէնց համագումարի բացման օրը հեռախօսով իրենց ձայնը տուել էին Ժընեւում գտնուող ընկերներից մէկին։

Բացի վերոյիշեալ վայրերի հետ ունեցած գրագրութիւններից կազմակերպիչ կոմիտէն առաջարկել է տեղական խմբերում համագումարի նիստերի եւ ապագայ միութեան համար կանոնադրութեանց նախագծեր կազմել։ Համագումարի սկզբին երեւաց, որ այդպիսի աշխատանք կատարել են Բերլինի եւ Ժընեւի ընկերները։

Դրամականի համար կազմակերպիչ կոմիտէն ստիպուած է եղել պարտքի դիմել, որովհետեւ Բերլինի խմբակի բոպէպէս տրամադրութեան տակ եղած փողը (մօտ 400 մարկ) չէր կարող բաւականացնել, մանաւանդ համագումարի տեղը Միւնխէնից Ժընեւ փոխուելուց յետոյ։

«Ջանք» խմբից կազմակերպիչ կոմիտէիս տրամադրութեան տակ է դրուել 140 ֆր., մնացած ծախսերը լրացնելու համար Արեւմ. Բիւրոյից պարտք է արուած 400 ֆրանկ։

Համագումարի տեղ որոշուած էր Միւնխէնը՝ իր կենտրոնական դիրքի եւ ժողովների ազատութիւն ունենալու համար, սակայն մարտ ամսի երկրորդ կէսին այնտեղ բռնուել էր հայերի մի ժողով, որ կասկածների առիթ տուեց՝ համագումարի կանոնաւոր նիստերի նկատմամբ։ Կազմակերպիչ կոմիտէն մտածում էր համագումարը կայացնել Ենայում, սակայն այդ փոքր քաղաքին ծանօթ անհատներ ասացին, որ այնտեղ բազմամարդ եւ յաճախակի ժողովները հեշտութեամբ ուշադրութիւն կը գրաւեն։ Խօսք եղաւ Լայպցիգում անել՝ յոյս ունենալով, որ հնարաւոր կը լինի օգտուել այնտեղի հայ ուսանողների ունեցած ճեմարանական ընկերութեան արտօնութիւնից. դիմում եղաւ այնտեղի ընկերներին եւ պատասխան ստացուեց դրական մտքով։ Սակայն ի նկատի առնելով մի կողմից ա՛յն, որ մօտ տասնօրեայ (օրեկան 2 անգամ) ժողովներն անշուշտ սաքսոնական ոստիկանութեան ուշադրութիւնը կը գրաւեն, իսկ միւս կողմից ա՛յն, որ այդ յաճախակի եւ երկարատեւ հաւաքումները չի կարելի ծածկել զուտ տեղական ուսանողական մի ընկերութեան անուան տակ,— կազմակերպիչ կոմիտէն աւելի բարւոք համարեց կատարեալ ապահովութեան համար Ժընեւն ընտրել։

Կազմակերպիչ կոմիտէի վերջին գործն էր սոց. յեղափոխական Գերշունիի[89] թաղմանն ունեցած մասնակցութիւնը. այդ առթիւ գրուել է Փարիզի ընկերներին, որպէսզի դաշ. ուս. միութեան անունից մի պսակ դնեն։ Նախ քան մեր դիմումն ստանալը Փարիզի ընկերները որոշած են եղել, որ իրենց պատգամաւորը լինի նաեւ իրենց խմբակի ներկայացուցիչը Գերշունիի թաղման ժամանակ։ Այդ միջոցին գործով Փարիզ գնաց Բերլինի ընկերներից մէկը, որ եւ պսակ է դրել Միութեան կողմից, իսկ տեղական խմբակի ներկայացուցիչն է լինում Փարիզի պատգամաւորը։ Հակառակ դէպքում, Փարիզի պատգամաւորը պիտի ներկայանար Միութեան անունից։

Կազմակերպիչ կոմիտէի կողմից՝
Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ

15. IV. 08

89.- Գրիգորիյ Գերշունի, ռուս ընկերվար (Էս. Էր) կուսակցութեան ղեկավար դէմքերէն, որ մահացած էր Ցիւրիխ, 1908 թ. մարտ 17ին։

Փաստ. 1468-56

Գ 9.– ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Մանդատների վերստուգիչ յանձնաժողովը, քննելով պատգամաւոր-պատգամաւորուհիների մանդատները, գտաւ, որ նոցանից միայն մի քանիսն ունին առանձին պաշտօնական մանդատներ, իսկ միւսների պատգամաւորութիւնը հաստատւում է այն նամակներով, որոնք իւր ժամանակին ուղարկուած են կազմակերպիչ մարմնին։ Այս հանգամանքն ի նկատի առնելով յանձնաժողովը առաջարկեց համագումարին, թէ արդեօք հնարաւո՞ր չէ յիշեալ նամակներով բաւականանալ, գործի սկզբնաւորութիւնն ի նկատի առնելով, թէ դիմել խմբակներին, որ պաշտօնական մանդատներ ուղարկեն։ Ժողովը որոշեց այս անգամ զիջող լինել եւ բաւականալ եղած փաստաթուղթերով։

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Փաստ. 1468-58ա

Գ 10.– 1908 Թ. Հ. Յ. ԴԱՇ. ԵՒ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1. *Միութեան գործադիր մարմինը բաց է անում համագումարը, երբ ներկայ են պատգամաւորների երկու երրորդ մասը։*

2. *Բացման ճառերից յետոյ համագումարը ընտրում է իւր բոլոր նիստերի համար մի մշտական նախագահութիւն, բաղկացած երեք անդամից, որոնք հերթով վարում են նախագահի պաշտօնը։*

3. *Համագումարն ընտրում է իւր դիւանը բաղկացած ատենադպրից եւ չորս մշտական քարտուղարներից։*

Ծանօթ. ա) Ատենադպիրը հսկելու է համագումարի բոլոր նիստերի ընթացքում գրագրութիւնների վրայ. նրա մօտ են կենտրոնանալու գրաւոր բոլոր փաստաթղթերը եւ նիստերի արձանագրութիւնները։

Ծանօթ. բ.) Քարտուղարները մտցնում են արձանագրութեան մէջ խօսածների մտքի ամփոփումը։

Ծանօթ. գ.) Ցանկացողները կարող են իրանց խօսածները գրաւոր տալ արձանագրութիւններին կցելու այն պայմանով միայն, որ այդ գրութիւնը նոյն օրն եւեթ յանձնեն քարտուղարին։

4. *Համագումարի նիստերը տեղի են ունենում ամէն օր — օրական երկու անգամ առաւօտ 9-12 ժ. եւ երեկոյեան 2-6 ժ.։*

Ծանօթ. ա.) Կարեւոր դէպքերում համագումարի որոշմամբ նիստի տեւողութիւնը կարող է երկարել։

Ծանօթ. բ.) Նշանակուած ճիշտ ժամին սկսւում է համագումարը։

5. *Նիստը օրինաւոր է, երբ ձայների երկու երրորդը ներկայ է.*

6. *Իւրաքանչիւր նիստի սկզբում կարդացւում է նախընթաց նիստի արձանագրութիւնը։*

7. *Համագումարի նիստերին երեք անգամ ուշացողին ժողովին մէջ նախագահի կողմից ազդարարութիւն է արւում. երեք նիստի բացակայող պատգամաւորը նկատողութեան է ենթարկւում եւ այդ մասին յայտնւում է համապատասխան խմբին։*

8. *Համագումարում խօսելու իրաւունք ունին միայն Եւրոպայի դաշնակցական ուսանողները, նաեւ այն դաշնակցական անհատները, որոնք համագումարի կողմից իբրեւ որեւէ խնդրի գիտակ անձինք — յատկապէս հրաւիրւում են։*

9. *Իւրաքանչիւր զեկուցանող կամ որեւէ բան առաջարկող ազատ է խօսելու տեւողութեան նկատմամբ։*

10. *Նոր հարցի մասին միեւնոյն անձը առաջին անգամ կարող է խօսել 15 րոպէ, երկրորդ անգամ՝ 10, իսկ երրորդ անգամ՝ 5 ր.։ Ընդդիմախօսներին՝ պատասխանի համար 20 րոպէ։*

Ծանօթ. Որոշուած ժամանակամիջոցը լրանալուց 3 րոպէ առաջ նախագահը ազդարարում է ճառախօսներին։

11. *Համագումարում ըստ կարգի խօսել կարելի է միայն մի անգամ, ոչ աւելի քան երեք րոպէ։*

12. *Համագումարի քուէարկութիւնն առաջարկուելիք ամէն մի բանաձեւ կամ եզրակացութիւն նախապէս գրաւոր նախագահին պիտի յանձնել։*

13. Բանաձեւը քուէարկելուց առաջ նախագահը թոյլ է տալիս թեր ու դէմ երկու հոգու խօսելու, իւրաքանչիւրին ոչ աւելի քան երկու րոպէ։

14. Նախագահը կարող է առաջարկել համագումարին փակել ցանկը կամ կրճատել նրանց թիւը. նոյն իրաւունքը պահւում է ժողովականներից երեքին։

15. Անկարգութեան դէպքում որեւէ մէկին ձայնից զրկելու կամ ժողովից հեռացնելու վերաբերումը նախագահութեան խորհրդակցութիւնից յետոյ է տեղի ունենում. առաջին դէպքում նախագահի լիազօրութեամբ, իսկ ժողովից հեռացնելու համար՝ համագումարի համաձայնութեամբ։

16. Համագումարի մեծամասնութեան որոշումները պարտաւորիչ են փոքրամասնութեան համար, համաձայն Դ[աշնակցութեան] Ընդհանուր Ծրագրի (14րդ երես, 25 յօդ.)։

17. Օրակարգից դուրս ամէն մի առաջարկութիւն ժողովին է յայտնւում, երբ հինգ հոգու կողմից է։

18. Երեք հոգու առաջարկութեամբ նախագահը քննութեան է դնում խօսողների ցանկը փակելու առաջարկը։

19. Համագումարում խնդիրները վճռւում են ձայների հասարակ մեծամասնութեամբ։

Շարադրութիւնների մասին

20. Համագումարն իւր առաջին նիստում ընտրում է մի յանձնաժողով բոլոր նիստերի համար չորս հոգուց բաղկացած — առաջարկուած շարադրութիւններին ծանօթանալու եւ Նախագահութեան հետ նրանց կարդալու հերթը որոշելու։

Մանօթ. ա.) Իւրաքանչիւր շարադրող համագումարի նիստերի սկզբում պէտք է իր շարադրութեան մանրամասն ծրագիրը գրաւոր յանձնի յիշեալ մասնաժողովին։

Մանօթ. բ.) Մասնաժողովն իրաւունք ունի որեւէ շարադրութիւն անյարմար համարել կարդալու համար։

Մանօթ. գ.) Որեւէ շարադրութիւն անյարմար համարելու հիմք կարող է ծառայել երկու կամ աւելի շարադրութիւնների կրկնութիւնը կամ շատ մօտիկ նմանութիւնը եւ հետագայ յօդուածը։

21. Համագումարում կարդացուելիք շարադրութիւնները անմիջական կապ պէտք է ունենան Հ. Յ. Դաշնակցութեան հետ — պարզաբանելով նրա տեսական կամ գործնական կողմը։

22. Շարադրութեան ընթերցումից եւ այդ առթիւ առաջ եկած վիճաբանութիւններից յետոյ, շարադրողի ցանկութեամբ եւ նրա կողմից առաջարկուած եզրակացութիւնը դրւում է ժողովի քուէարկութեան ընդունւած կարգով։

Մանդատների մասնաժողով

23. Համագումարն իւր առաջին նիստում երեք հոգուց բաղկացած մի մասնաժողով է ընտրում քննելու եւ ստուգելու պատգամաւորների մանդատները։

24. Մասնաժողովը իւր գործի մասին 4 նիստից յետոյ զեկուցում է տալիս համագումարին։

25. Համագումարը իւր բացուելու օրից սկսած մինչեւ վերջը տեւելու է ոչ աւելի քան տասն օր։

Նախագահութիւն
Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ
ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Մ. ՁԱՌԱՓԵԱՆ

Ատենադպիր՝
Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ

Փաստ. 1468-51

Գ 11.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ Յ. ԴԱՇ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առաջին նիստ
(3 Ապրիլ 1908)

Ապրիլ 3ին կէսօրից յետոյ ժամը 3ին սկսուեց Եւրոպայի Հ. Յ. Դաշնակցութեան ուսանողների Համագումարի առաջին նիստը։ Ներկայ էին 13 պատգամաւոր եւ դաշնակցական ուսանողներ զանազան քաղաքներից եւ ժրնեւից, ընդհանուր թիւ 37։

Ժողովը բացաւ ընկեր Արշակ Իսահակեան կազմակերպիչ կոմիտէի կողմից եւ յիշելով այս Միութեան ծնունդ տուող հանգամանքները, շեշտելով թէ ինչպիսի բարոյական պարտք է ծանրանում հայ, դաշնակցական ուսանողութեան վրայ եւ թէ ինչպիսի՛ ակնկալիքներ ունի Դաշնակցութիւնը ուսանողութիւնից՝ վերջացրեց աւելացնելով, որ պէտք է նախագահ ընտրել եւ զբաղմունքները սկսիլ. միեւնոյն ժամանակ յայտարարեց որ այդ վայրկեանէն սկսած դադարում է կազմակերպիչ կոմիտէի գոյութիւնը։

Նախագահ ընտրուեցաւ ընկեր Մարտիրոս Յարութիւնեան, որ շնորհակալութեան եւ շնորհաւորութեան ճառից յետոյ առաջարկեց երկու յանձնախումբ ընտրել, մէկը մանդատները քննող եւ միւսը օրակարգը մշակող։

Մի քանի ընկերներ առաջարկեցին ձայնի իրաւունքը քննել, թէ արդեօք միայն պատգամաւորները քուէարկելու իրաւունք ունին թէ բոլոր ներկայ եղող դաշնակցական ուսանողները։

Նախագահը առաջարկեց նախ խօսել ձեւականի մասին. վիճաբանութիւնները տեւեցին երկար։ Նախագահը՝ համաձայն երեք ընկերների առաջարկի՝ խօսողների ցանկը փակեց։

Արտայայտուած կարծիքները ամփոփելով՝ նախագահը յայտնեց որ երեք տեսակ կարծիք կայ.

1) Ձայնի իրաւունքը պէտք է որոշէ ներկայ ժողովը.

2) Ձայնի իրաւունքը պիտի որոշեն պատգամաւորները.

3) Այն ժողովը, որը բաղկացած կը լինի պատգամաւորներից եւ վերջինների աշխատանքին կանոնաւորապէս մասնակցողներից։

Հարցն աւելի պարզաբանելու համար նախագահն առաջարկեց կամ մանդատների յանձնախումբ ընտրել եւ կամ խօսել քուէի հարցի մասին ըստ էութեան։ Որոշուեցաւ նախ խօսել քուէարկութեան իրաւունքի մասին։ Վիճաբանութիւնների շարքում մի քանի ընկերներ առաջարկեցին մեկնել մի կէտից, որի վրայ բոլոր ներկայ եղողները համաձայն լինին — այդպիսի մի հիմք կարող է լինել ընդհանուր ուսանողութեան տրամադրութիւնը այդ մասին։ Պատգամաւորների զեկուցումից յայտնուեցաւ որ ուսանողութեան մեծագոյն մասը այն կարծիքին է, որ ժողովը պէտք է լինի պատգամաւորական, ոչ-պատգամաւորները կ'ունենան խորհրդատու ձայնի իրաւունք. նախագահը իբրեւ եզրակացութիւն յայտնեց, որ հարցի մասին պէտք է շարունակել խօսել ըստ էութեան, իսկ վճիռը կը տրուի պատգամաւորների քուէարկութեամբ, թէ արդեօք որոնք պէտք է վճռական ձայնի իրաւունքով մասնակցեն ժողովներին։

Հինգ րոպէ դադարից յետոյ վիճաբանութիւնները շարունակուեցին նոյն խնդրի շուրջը։ Մի մասը առաջարկում էր քուէի իրաւունք տալ նաեւ նրանց, որոնք կը յայտարարեն թէ կանոնաւորապէս կը մասնակցեն ժողովներին, իսկ պատահական կամ անկանոն կերպով ներկայ եղողները կ'ունենան միայն խորհրդատու ձայն։

Նախագահը փակեց ձայների ցանկը եւ ամփոփեց մեծամասնութեան կարծիքը հետեւեալ ձեւով։

1) Ձայնի խնդիրը վճռելու գործում միայն պատգամաւորները քուէարկելու իրաւունք ունեն։

2) Ներկայ ժողովը նախապատրաստական չէ, այլ պատգամաւորական եւ հիմնադիր ժողով։

Նախագահն առաջարկեց միայն պատգամաւորին ձայնի իրաւունք տալ քուէի հարցը վճռելու համար։ Ընդհանուր ժողովի նախագահը շարունակեց նախագահել եւ պատգամաւորական ժողովին։

Ոմանք առաջարկում են մի սկզբունք,— որչափ կարելի է շատ թուով ձեռնհաս մարդիկ ունենալ ժողովում ձայնի իրաւունքով, ուրեմն կարելի է ներկայացնել մի ցանկ ոչ-պատգամաւորների, բայց վկայուած կամ առաջարկուած տեղական խմբակի կողմից, եւ նրանց ձայնի իրաւունք տալ։ Ոմանք՝ խմբի պատգամաւորներից մէկը յայտնեց որ Ջանքի անդամները ձայնի իրաւունք չեն պահանջում աշխատանքներին մասնակցելու համար։ Առաջարկւում է համբաւաւոր եւ հեղինակութիւն վայելող անհատների ձայնի իրաւունք տալ։

Ուրիշներ առաջարկեցին ընդհանրապէս ընկերների կողմից առաջարկուած անհատների քուէի իրաւունք տալ։

Արդ բոլոր վիճաբանութիւններից յետոյ նախագահն առաջարկեց բանաձեւեր պատրաստել քուէարկելու համար։

Մի քանի բանաձեւերից 9 ձայնով անցաւ հետեւեալը՝

Համագումարում ձայնի իրաւունք տալ բոլոր այն ուսանողներին, որոնց ներկայութիւնը համագումարում տեղական խմբերի կողմից կարեւոր է նկատուել։ Իսկ տեղական ընկեր ուսանողների վերաբերմամբ կիրառել կօօպտացիայի սկզբունքը քանակական համեմատութեամբ։*

Նախագահը յայտնեց որ յաջորդ ժողովը կը լինի միւս օրը (4 Ապրիլ) առաւօտեան ժամը 9ին եւ կը զբաղուի ձայների իրաւունք տալու խնդրով եւ մասնախմբեր ընտրելով։

Նախագահ Մ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Քարտուղար՝ Վ. ԿՐՄՈՑԵԱՆ

Արձանագրութիւն դաշնակցական ուսանողական միութեան համագումարի Ապրիլ 4ի նիստերի

1908 թ. Ապրիլ 4-ին առաւօտեան ժամը 9-ին կայացաւ դաշնակցական ուս. միութեան համագումարի Պրդ նախապատրաստական նիստը։ Ժամանակաւոր նախագահ ընտրուեցաւ Գ. Ալթունեան եւ ժամանակաւոր քարտուղար Մ. Քրիչչեան։

Նախագահը ժողովը բանալով յայտնեց, որ հերթականօրէն պէտք է արդէն որոշել, թէ բացի պատգամաւորներից՝ ժողովականներից էլ ուրիշ ովքե՞ր կարող են վճռական ձայնի իրաւունք ստանալ։ Որովհետեւ հարցը պէտք է լինէր ներկայ գտնուող անձնաւորութիւններից շատերի մասին, որպէսզի կարծիքները ամենայն ազատութեամբ յայտնուին, որոշուեցաւ խորհրդակցել ոչ պատգամաւորների՝ այսինքն ձայն չունեցողների բացակայութեամբ, ինչպէս եւ եղաւ։

Նախորդ ժողովում ընդունուած բանաձեւի համաձայն՝ անմիջապէս ձայնի իրաւունք տրուեցաւ ռեֆերենտներին[88]ա, որոնք ուղարկուած էին տեղական խմբերի կողմից։ Մնացած այս կամ այն անհատին ձայն տալու վերաբերմամբ ժողովը որոշեց ղեկավարուել տեղական խմբակների կամ պատգամաւորների տուած ցուցմունքներով։ Այս հիման վրայ ձայնի իրաւունք ստացան ընկեր Արշակ Ղազարեան եւ ընկեր Արզումանեան։ Ժրնեւի ընկերների նկատմամբ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը. թէեւ Ժրնեւի ոչ պատգամաւոր ընկերները թէ գրաւոր եւ թէ բանաւոր յայտարարութիւններով մի որոշ տեսակէտով հրաժարուել են վճռական ձայնի իրաւունքից, խոստանալով առանց այն էլ մասնակցել աշխատանքներին, սակայն համագումարը այսօր այլ տեսակէտի վրայ կանգնած լինելով, որոշում է նոցա եւս վճռական ձայնի իրաւունք տալ ի հարկէ չմոռանալով արդէն ընդունուած համեմատական չափի սկզբունքը։ Գալով այն հարցին թէ արդեօք յատկապէս ո՞ր անձանց ձայնի իրաւունք տալ՝ ժողովը թողնում է նստաշրջանի ընթացքում որոշելու որովհետեւ ժողովականները իրենք անձամբ չէին ճանաչում ընկերներին իսկ տեղական պատգամաւորների տուած ցուցմունքները անբաւարար համարուեցին։

Այնուհետեւ ժողովը լսեց ընկեր նախագահի հետեւեալ առաջարկութիւնը. «Համագումարը տեղի ունի ինչպէս գիտենք Ժրնեւում, ուր գտնուում է հայ յեղափոխ. Դ-թեան Արեւմտեան Բիւրոն որը բոլորիս էլ արդէն լաւ յայտնի է, թէ ինչպիսի գործօն է հանդիսացել հայ յեղափոխական պատմութեան մէջ եւ պիտի հանդիսանայ ապագայում։ Ուստի ես առաջարկում եմ այս դ[աշնակցա]կան ուս-կան համագումարում հրաւիրել նաեւ Բիւրոյից մի ներկայացուցիչ վճռական ձայնի իրաւունքով։ Հրաւիրել նմանապէս ընկեր Արարատսկուն, որը ոչ միայն ամբողջ կուսակցութեան մէջ ներգործական դեր է կատարել եւ կատարում, այլ յատկապէս ուսանողական շրջանների կազմակերպման եւ զարգացման գործին մեծ զարկ է տուել եւ տալիս»։

Հալէպի եւ Փարիզի պատգամաւորները յայտնեցին, որ իրենց տրուած մանդատները թոյլ չեն տալիս բացի ուսանողներից ուրիշ որեւէ մէկի մասնակցութիւնը ուսանողական համագումարում։ Սակայն տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնից յետոյ ժողովը միաձայն ընդունեց ընկեր նախագահի առաջարկը։

Ե րոպէ դադար

Նիստը վերսկսելով նախագահը առաջարկում է պրեզիդիում[90] ընտրել եւ քարտուղարներ։ Որոշում է, որ պրեզիդիումը բաղկացած լինի երեք անդամից։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրւում են նախագահներ՝ Իսահակեան, Ալթունեան, Զառաֆեան։ Գալով քարտուղարների կազմին, երկու առաջարկութիւն է արւում. առաջինը Բերլինի խմբակի կողմից որ հետեւեալն է։ Ընտրել մէկ ատենադպիր, որ պատասխանատու լինի ժողովի առաջ բոլոր ատենագրական աշխատանքի համար եւ ամէն օր ընտրուած երկու քարտուղարներ արձանագրութիւն կազմելու համար. միւս առաջարկը ընկերներից մէկի կողմից հետեւեալն էր. Թող լինի այդպիսի ատենադպիր, բայց քարտուղարները (4 հոգի) ընդմիշտ ընտրուած լինին եւ պարբերաբար յաջորդեն միմեանց։ Բերլինի պատգամաւորը յետ վերցնելով իր առաջարկը միացրեց վերջինին, որից յետոյ գաղտնի քուէարկութեամբ քարտուղար ընտրուեցին՝ ընկ. ընկ. Քրմոյեան, Մուսայէլեան, Շահլամեան, Քրիչչեան, իսկ ատենադպիր՝ Բարսեղեան։

Ժողովի վերջում հարց բարձրացաւ. արդեօք պէ՞տք է թոյլատրել ոչ դաշնակցականներին ներկայ լինել նիստերին. ոմանք թոյլատրելու կողմն էին (ռեֆերատների ժամանակ) պատճառաբանելով, որ այդպիսով համագումարը պրոպագանդայի մի միջոց կը հանդիսանայ, սակայն մեծամասնութիւնը որոշեց առհասարակ թէ՛ նիստերը եւ թէ ռեֆերատները դռնփակ անել, իսկ պրոպագանդայի մտքով օգտուել հանգամանքից եւ կազմակերպել հասարակական ժողովներ։

Նիստը փակուեցաւ ժամը 12-ին։

Նոյն օրը ճաշից յետոյ ժամը 3-ին նախագահ Ալթունեան նիստը բանալով առաջարկում է անցնել մանդատներ եւ ռեֆերատներ քննող յանձնաժողովների ընտրութեան. բաց քուէարկութեամբ առաջին յանձնաժողովի անդամ են ընտրւում ընկերներ Հ. Ցովհաննիսեան, Բարսեղեան եւ Նարինեան, իսկ երկրորդի համար գաղտնի քուէարկութեամբ՝ ընկերներ՝ Իսահակեան, Նարինեան, Ցովհաննիսեան, Ցարութիւնեան եւ Սրապեան։

Այնուհետեւ ժողովը անցնում է ռեգլամենտում[91] կազմելու հարցին։ Պատրաստի ռեգլամենտում են հանդէս բերում ընկեր Մաշուրեանը իր կողմից եւ Բերլինի խմբակը իր կողմից։ Երկուսի ընթերցումից պարզւում է, որ գրեթէ նոյնն են ուստի առաջարկւում է կարդալ մէկն ու մէկը եւ փոխ առ փոխ լրացնել, որ եւ կատարւում է տեղն ու տեղը։

Այնուհետեւ նախագահը առաջարկում է ժողովականներին, յայտնել անմիջապէս կարդացուելիք ռեֆերատների, զեկուցումների մասին եւ տալ գրաւոր մանդատներն, զեկուցումներն ու առաջարկութիւնները, որպէսզի պրեզիդիումը հնարաւորութիւն ունենայ ըստ կարելոյն շուտ օրակարգ կազմել։

Ռեֆերանտներ յայտնուեցան հետեւեալ անձինք. Իսահակեան, Բարսեղեան, Ֆրանգեան, Քրմոյեան, Սրապեան, իսկ զեկուցումներ պիտի կարդային Կազմակերպիչ կոմիտէի կողմից՝ ընկ. Բարսեղեան, Լայպցիգի պատգամաւոր Հ. Ցովհաննիսեան, Միւնխէնից Քրիչչեան, Պարիզից Զառաֆեան։ Վերջին երեքը յայտնում են, որ բացի զեկուցումներից խմբակների կողմից ունին նաեւ որոշ մանդատներ։ Զեկուցմանց մասին մի առաջարկութիւն է լինում, որ զեկուցումները ոչ թէ պատահական բնոյթ պիտի կրեն կախուած այս կամ այն պատգամաւորի անձնական ցանկութիւնից, այլ նոքա պարտադիր լինեն բոլոր պատգամաւորների համար որ եւ ընդունւում է ժողովի կողմից։ Որոշւում է զեկուցումները միեւնոյն ժամանակ եւ գրաւոր տալ արձանագրութիւններին կցելու համար եւ որ ռեֆերատների կարգը պէտք է որոշի յանձնաժողովը խորհրդակցութեամբ պրեզիդիումի։

Նախագահը առաջարկում է որքան կարելի է շուտ յանձնել ռեֆերատներն ու գրութիւնները եւ նիստը փակում երեկոյեան ժամը 7-ին։

Քարտուղար՝ Մ. ՔՐԻՇՉԵԱՆ
Նախագահ՝ Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Արձանագրութիւն դ[աշնակցական] ուս[անողական] միութեան Համագումարի Ապրիլ 5-ի նիստի։

1908 թ. Ապրիլ 5-ին, Կիրակի առաւօտեան ժամը 10-ին նախորդ 3 նախապատրաստական նիստերից յետոյ տեղի ունեցաւ Դ-կան ուս. միութեան Համագումարի պաշտօնական բացումը։ Բացմանը ներկայ էին բացի պատգամաւորական ամբողջ կազմից, ռեֆերատներից եւ ընկեր ուսանողներից — յատուկ հրաւէրով՝ Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Դաւթեան, ապա ընկերներ Արարատսկի, Գալֆայեան, Վարդան եւ այլ հիւրեր[92]։*

Նախագահ՝ ընկեր Ա. Իսահակեան ժողովը բանալուց եւ յարգելի հիւրերին ժողովականներին ներկայացնելուց յետոյ դարձաւ իւր ընկերներին այն միտքը յայտնելով, որ ճիշտ է այսօր նոքա ժողովուել են զանազան կողմերից մի գործ սկսելու սակայն չպէտք է մոռանալ որ բուն գործի ռահվիրաները քաջածանօթ եւ բազմաթիւ անյայտ նահատակների շարքերն են եղել եւ հրաւիրեց ոտքի կանգնելով յարգել նոցա յիշատակը։ Ժողովը յոտնկայս յարգեց նաեւ վաղամեռիկ Գր. Գերշունու[89] եւ նորա գաղափարակից նահատակների յիշատակը, որոնք յեղափոխութեան դրօշի տակ աննկուն մարտնչել էին մի կողմից ցարական բռնակալութեան դէմ եւ միւս կողմից աշխատաւորների դատի պաշտպան հանդիսացել։

Խօսեց այնուհետեւ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը՝ յայտարարելով, որ կուսակցութեան, կազմակերպութեան դռները լայն բաց են ինչպէս ինտելիգենտների այնպէս եւ ուսանողների առաջ, որովհետեւ կուսակցութիւնը խորը գիտակից է այն նշանակութեան, որ ունեն այդ տարրերը կուսակցական կեանքում։ Ընդայելով հակառակորդ եւ ամբաստանող ձայները հակառակն են պնդում եւ ճգնում ապացուցանելու, որ

*) *Այսինքն որտեղ համագումարը տեղ ունի։*

90.- Նախագահութիւն, դիւան։

91.- Ժողովական կանոնագրութիւն։

92.- Յաջորդաբար՝ Դաւթեան Յոնան, Արարատեան Սարգիս, Գալֆայեան Յարութիւն, Մեհրաբեան Սարգիս (Խանասորայ Վարդան)։

(*) *Տես պատգամաւորների ցանկը կից արձանագրութեանս։*

Դաշնակցութիւնը հետզհետէ բարոյապէս եւ մտաւորապէս սնանկանում է ինտելիգենտ ուժերի տարամերժմամբ, եւրոպական դաշնակցական ական ուսանողութիւնը, յանձին իւր այս հանդիսաւոր խմբման արդէն ցայտուն կերպով ցոյց է տալիս, թէ ո՛ր աստիճանի անիրաւացի են այդ ամբաստանութիւնները։ Վերջացնելով իր խօսքերը, նա ցանկութիւն յայտնեց լիովին արդարացրած տեսնել այն յոյսերը որ դրւում են ինչպէս ընդհանրապէս դաշնակցական ուսանողութեան մասնաւորապէս ներկայ համագումարի վրայ։

Խօսեց նաեւ ընկեր Մարտիրոսը։ Նա կանգ առաւ այն հանգամանքի վրայ, որ Դաշնակցութեան դաշինքն են կազմում աշխատաւոր գիւղացիութիւնն, բանւորութիւնը եւ ինտելիգենցիան եւ չեշտելով վերջինիս ապադասակարգային ընոյթը, նաեւ այն միտքն յայտնեց, որ չնայելով վերջինս չահագրգռուած չէ ապագայ սոցիալիստական կարգերի մէջ, հակառակ մարքսիստ մատերիալիստական աշխարհայեցողութեան, միշտ էլ մարտնչող է հանդիսացել աշխատաւորութեան դատի յաղթանակի համար։ Ելակէտ ընդունելով այս, նա պարզեց դ-ական ուսանողութեան դերը կուսակցութեան մէջ։

Այնուհետեւ կարդացուեցին հեռագիրները, Բերլինի խմբակի կողմից եւ 3 մասնաւոր անհատներից, շնորհաւորութիւններ զանազան քաղաքներից, որից յետոյ ժողովը անցաւ զեկուցումներ լսելուն։

Առաջին զեկուցումը կարդաց կազմակերպիչ կոմիտէի կողմից ընկեր Ա. Բարսեղեան։

Ուշադրութիւն գրաւեց այն հանգամանքը, որ Միութիւնը դեռեւս իր գործունէութեան սկզբում մի պատկառելի գումար պարտքի է դիմել եւ հարց բարձրացաւ անմիջապէս ծածկել այդ պարտքը տեղական խմբակների վրայ բաժանելով։ Սակայն առարկութիւն եղաւ, որ այդ հարցը առայժմ թողնել որովհետեւ դրամական մասին խօսելիս ինքնստինքեան կը լուծուի։ Ժողովը կազմակերպիչ կոմիտէին իր գոհունակութիւնը յայտնելու համար ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Դ-ական Ուսանողութեան Միութեան Համագումարը լսելով կազմակերպիչ կոմիտէի զեկուցումը եւ գնահատելով նորա աշխատանքը համագումարի յաջողութեան եւ իրագործման համար, յայտնում է իր ընկերական շնորհակալութիւնը»։

Այնուհետեւ Ժընեւի «Ձանք» խմբակի ներկայացուցիչը արաւ իր զեկուցումը, որը առանձին հարցերի առիթ չտուեց. այդ տեսակէտից աւելի նկատելի անցաւ Փարիզի պատգամաւորի արած զեկուցումը, որից յետոյ զանազան հարցեր տրուեցան, որոնցից ուշադրութեան արժանի էր այն՝ թէ ինչո՞ւ Փարիզի տաճկահայ ուսանողները այնպէս անտարբեր են վերաբերւում դէպի քաղաքական հարցերը եւ Դաշնակցութիւնը, քանի որ առհասարակ այնպիսի մեծ առնչութիւն կայ նոցա ճակատագրի, այս հարցերի եւ կուսակցութեան մէջ։ Ինքը պատգամաւորը բացատրեց այնու, որ մեծ մասամբ հարուստ դասակարգին են պատկանում եւ առաջնորդւում են դասակարգային դիտումներով, իսկ աղքատները, որոնք նպաստ են ստանում ուրիշներից, աշխատում են բարեյոյս մնալ բարերարների եւ կառավարութեան աչքում իւրեանց ապագան չվտանգելու համար։

Ժողովը այնուհետեւ լսեց Լայպցիգի պատգամաւորի զեկուցումը որից յետոյ նիստը փակուեց ժամը 12-ին։

Կիրակի լինելու պատճառաւ ճաշից յետոյ ժողով չկար։

Նախագահ՝ ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՔՐԻՇՋԵԱՆ

1908 Ապրիլ 6ի նիստի ատենագրութիւնը

Նիստը բացուեցաւ առաւօտեան ժամը 9½ին։ Նախագահում էր ընկեր Զառաֆեան։ Ներկայ էին 28 անհատ։

Ծանօթ.- Ընկեր Հազարապետեանի տկարութեան պատճառաւ «Ձանք» խումբի կողմէ պատգամաւոր նշանակուած էր ընկեր Արտաշէս Բաբալեանց։

Քուէի իրաւունք տրուեցաւ նաեւ ընկեր Քրմոյեանին։ Նախորդ նիստի արձանագրութիւնը կարդալէ եւ մի քանի փոփոխութիւնից յետոյ հաստատուեցաւ։ Ապա ժողովը անցաւ օրակարգի խնդիրներին, որոնք էին պատգամաւորների զեկուցումների շարունակութիւն եւ օրակարգ մշակող յանձնախումբի ընտրութիւնը։

Զեկուցումների շարքի մէջ կարգը Հալէի պատգամաւորինն էր, որը վերջացնելուց յետոյ հարց տրուեցաւ մասնաւորապէս թէ Հալէի դաշնակցական ուսանողները ներքին ի՞նչ ըմբռնում ունին, ինչպէ՞ս են վերաբերւում դէպի Դաշնակցութիւնը եւ մասնաւորապէս դէպի կուսակցութեան Դ. Ընդհանուր Ժողովը։

Ընկեր պատգամաւորը բացատրեց որ ընդհանրապէս քննադատական է եւ լաւ չեն տրամադրուած դէպի կուսակցութեան ա՛յն վերաբերմունքը, որ յերեւան եկաւ նախորդ կաթողիկոսի մահուան առթիւ եւ մասամբ նկատւում է դէպի ապագայ կաթողիկոսական ընտրութիւնները։

Միւնխէնի, Ենայի եւ Ցիւրիխի պատգամաւորներին առանձին հարց չուղղուեց։

Լօզանի պատգամաւորի զեկուցումից յետոյ հարց

*) *Ի նկատի առնելով, որ զեկուցումները պէտք է կցուին արձանագրութեան, բովանդակութեան մասին այստեղ չի խօսւում։*

տրուեցաւ թէ ինչո՞ւ 34 հայ ուսանող Լօզանում, որոնցից միայն մի երկուսն են ուրիշ կուսակցութեան պատկանում, դաշնակցական ընկերների թիւն այդպէս քիչ է։ Այդ խնդրի շուրջը վիճաբանութիւնները երկար են տեւում։ Ընկերներից մէկը մի բանաձեւ է առաջարկում հետեւեալ մտքով. «ընկերներից մէկին ուղարկել Լօզան այնտեղի դաշնակցական խումբը աւելի ուժեղացնելու»։ Այս մտքով կազմուած բանաձեւի առթիւ նախագահը առաջարկում է երկու հոգու ձայն տալ — թեր եւ դէմ, որից յետոյ որոշւում է քուէարկել քանի որ պատգամաւոր ղրկող քաղաքներից շատերը՝ դաշնակցական միութիւնները նման դրութեան մէջ են։

Բազէլի, Բեռնի եւ Նէօշատէլի պատգամաւորներին առանձին հարցեր չտրուեցին։

Զեկուցումներից յետոյ նախագահը հարց տուեց թէ մանդատները քննող եւ բանախօսութիւնները որոշող յանձնախումբերը ի՞նչ են արել։ Մանդատները քննող յանձնախումբի անդամներից մէկը յայտնեց որ մանդատ ստացած է Բերլինի, Ժընեւի, Միւնխէնի, Լայպցիգի պատգամաւորներից։ Բանախօսութիւնները որոշող յանձնախումբը յայտնեց որ ստացած է առայժմ 6 դասախօսութեան ծրագիր։

Ապա նախագահը առաջարկեց անցնել կանոնագրի նախագծին։ Ընկերներից մէկը յայտնեց որ աւելի լաւ է նախ լսել ընկեր Արշակ Իսահակեանի բանախօսութիւնը, որ կը լինի կէսօրից յետոյ եւ որ իբր նիւթ ունի դաշ. ուսանողութեան պարտականութիւնը կուսակցութեան մէջ, եւ ապա խօսել կանոնագրի մասին, քանի որ կանոնագրի մշակման ժամանակ հարց պիտի լինի ամէնէն աւելի ծանրանալ նպատակի վրայ։ Այդ առաջարկը ընդունուեցաւ։

Նախագահը հարց դրեց՝ ընտրել մի յանձնախումբ օրակարգը մշակելու համար, բայց աւելի նպատակայարմար թուաց օրակարգի մշակումը թողնել նախագահութեան. այդպէս ալ վճռուեցաւ։

Ընկերներից մէկը առաջարկեց ընտրել մի յանձնախումբ, որ նկատի ունենալով Ժընեւի եւ Բերլինի ընկերներին պատրաստած նախագծերը, ինչպէս նաեւ մանդատներում եղած առաջարկները, Միութեան կանոնագրի մի նախագիծ մշակէ եւ ներկայացնէ ժողովի քննութեան։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան ընկ. ընկ. Ալթունեան, Յովհաննիսեան, Մաշուրեան, Աւետիսեան եւ Նարինեան։

Ժողովը փակուեց ժամը 12-ին։

Կէսօրից յետոյ ժողովը բացուեց ժամը 3ին. շարունակում էր նախագահել ընկեր Զառաֆեան։ Որոշուած էր լսել ընկեր Արշակ Իսահակեանի բանախօսութիւնը, բայց դասախօսի հիւանդութեան պատճառաւ տեղի չունեցաւ։ Նախագահը յայտնեց որ պէտք է անցնել կանոնագրի նախագծի մշակման եւ մասնաւորապէս մեր Միութեան նպատակի որոշման, բայց նախքան այդ հարցուեց թէ արդեօք կա՞ն արտակարգ առաջարկներ։

Ընկերներից ոմանք ի նկատի ունենալով որ զանազան քաղաքներում կանոնաւոր կազմակերպուած խմբեր չկան եւ այդ քաղաքների կողմից եկած պատգամաւորներից ոմանք չունեն կանոնաւոր մանդատներ, առաջարկում են անհրաժեշտ չհամարել ձեւականապէս խիստ լինել եւ նրանցից հաւատարմագիր պահանջել, այլ գոհանալ եղածով։ Այս առաջարկն ընդունուեցաւ։

Ապա ժողովն անցաւ Միութեան նպատակի որոշման։ Կարդացուեցան Ժընեւի եւ Բերլինի ընկերների պատրաստած նախագծերի նպատակները։ Ընկերներից մէկն առաջարկեց փոխել Ժընեւի ընկերների պատրաստած նախագծի առաջին կէտը, որովհետեւ այդ իբրեւ համազօր չէ կարելի ընդունել յաջորդող երեք կէտերին։

Ընկերներից մէկը առաջարկեց նպատակի մի նոր ձեւակերպում. աւելի նպատակայարմար դատուեցաւ որ այդ ձեւակերպումը յանձնուի նախագիծը մշակող յանձնախումբին։

Ընկերներից ոմանք կարեւոր համարեցին նախ որոշել, թէ ի՞նչ պիտի լինի Ե. Հ. Դաշ. Ուս. Միութեան դերը եւ ապա խօսել նպատակի մասին։ Ուրիշ ընկերներ առաջարկեցին թողնել այդ կէտը յանձնախումբին, որ մշակելուց յետոյ կը դնէ ժողովի քննութեան։ Մէկն առաջարկեց իբրեւ նպատակ դնել հասարակական գործիչներ պատրաստել, միւս կէտերը գրել միջոցների մէջ։ Մի ուրիշը առաջարկեց իբրեւ նպատակ. «Աշխատել իրագործել Դաշնակցութեան նպատակը»։

Նախագահը ձայների ցանկը փակեց եւ վիճաբանութիւններից յետոյ յայտնեց որ մի քանի երկրորդական առաջարկներից զատ նոր բան չասուեց այն նպատակի վերաբերմամբ որ դրել է Ժընեւի ընկերների պատրաստած նախագիծը. վիճաբանութիւններ եղան միայն ձեւականի մասին. նոր յաւելում բնաւ չեղաւ, նոյնպէս խօսք չեղաւ այդ առաջին կէտի ոգու դէմ, իսկ միւս երեք կէտերի հետ բոլորը համաձայն են։ Ապա 7 բոպէ ընդմիջում յայտարարեց եւ առաջարկեց բանաձեւեր պատրաստել։

Ժողովը վերսկսելիս ընկերներից ոմանք առաջարկեցին այդ բանաձեւերը հաւաքել եւ յանձնել նախագիծը մշակող յանձնախմբին։

Ոմանք առաջարկեցին քուէարկութեան ենթարկել Ժընեւի ընկերների ձեւակերպած նպատակը անփոփոխ եւ յետոյ այն փոքրիկ փոփոխութեամբ, որ մտցնում են ընկերներից ոմանք. 13 ձայնով անցաւ այսպէս՝

Եւրոպայի Դաշ. Ուսանողական Միութեան նպատակն է սերտ կապ հաստատելով դաշնակցական ուսանողական խմբերի եւ ուսանողների միջեւ՝

1.- Խօսքով թէ գրչով տարածել Դաշնակցութեան պատմա-փիլիսոփայական աշխարհհայեացքը։

2.- Սերտ յարաբերութեան մէջ լինել Երկրի (Կովկա-

սի, Տաճկահայաստանի եւ Պարսկահայաստանի) ինչպէս նաեւ գաղութների իրականութեան հետ, նաեւ ուսումնասիրել տիրող քաղաքական-տնտեսական եւ սոցիալական պայմանները այդ երկրներում։

3.- Նպաստել անդամների ինքնազարգացման հասարակական-քաղաքական գործունէութեան համար։

Այս խնդրից յետոյ նախագահը հարց դրեց, թէ Եւ.ի Դաշ. Հայ Ուս. Միութիւնը ի՞նչ դիրք պէտք է բռնի դէպի Եւ. Հ. Ուս. Միութիւնը։

Ընկերներից մէկը առաջարկեց մի զեկուցում լսել այդ միութեան անցեալի եւ ներկայի մասին։

Ընկեր Աւետիսեանի զեկուցումից յայտնուեցաւ որ այդ Միութիւնը ունեցել է բաւական բեղմնաւոր անցեալ, եւ քաղաքական ծրագիր ընդունելուց յետոյ հասած է իր գործունէութեան եւ փառքի գագաթնակէտին, բայց ժամանակի ընթացքում զանազան շերտաւորումների պատճառով դիմած է դէպի կազմալուծում։ Արդի դրութիւնը ոեւէ յոյս չի ներշնչում որ նա կարող է վերակենդանանալ։ Լիազօր կոմիտէն ցրուած է եւ իսկապէս չկայ վարիչ մարմին։ Միութիւնը դեռ ունի 8-9000 ֆրանք, որն արդէն յատկացուած է մի հաւաքածուի հրատարակութեան, որը պէտք է պարունակէ Եւ.[րոպայ]ի ականաւոր անձերի նամակները, յօդուածները եւ այլն հայկական հարցի վերաբերեալ։ Վերջերս Լիազօր Կոմիտէի անունից 1 կամ 2 հոգի հրաւէր է ղրկել հայ ուսանողութիւն ունեցող քաղաքներ համագումար կայացնելու, բայց 25 քաղաքից միայն վեցն են պատասխանել դրական, իսկ միւսները արձագանգ չեն տուել։

Զեկուցումից յետոյ ժողովը անցաւ վիճաբանութիւններին ըստ էութեան։

Համարեա՛ թէ բոլորի կարծիքն այն էր, որ այդ միութիւնն ապրել է, իր պատմական դերը խաղացել է եւ զգալապէս օգտակար եղել ընդհանրապէս հայ ուսանողութեան, բայց այլեւս չի կարող ապրել, որովհետեւ Ուսանողութեան մէջ ժամանակի ընթացքում յառաջ են եկել բազմաթիւ շերտաւորումներ, իսկ այդ բոլոր այլատարր եւ հակադիր ոյժերը մի ուղղութեան, մի ընկերութեան մէջ կազմակերպել չէ կարելի։

Այս ուղղութեամբ շարունակուեցին խօսակցութիւնները. ընկերներից մէկը յայտնեց, որ եթէ այդ Միութիւնը միայն կուլտուրական գործով զբաղուէր, մենք դաշնակցական ուսանողներս կարող էինք մասնակցել, բայց խօսողների մեծագոյն մասը դրան էլ դէմ էր առարկելով որ Դաշնակցութիւնն արդէն կուլտուրայով էլ է զբաղւում։

Ընկերներից ոմանք առաջարկեցին շնորհակալութիւն յայտնել։ Նախագահն այդ բոլոր արտայայտուած կարծիքների ամփոփումը անելով ասաց որ հարկաւոր է մի եզրակացութիւն, մի որոշում հանել. առաջարկուեցան զանազան բանաձեւեր. անցաւ հետեւեալը.

«Եւրոպայի դաշնակցական ուսանողների համագումարը իր խորհրդածութեան նիւթ դարձնելով Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան կեանքն ու բնաւորութիւնը, գնահատելով նրա անցեալը եկաւ այն եզրակացութեան, որ յիշեալ Միութիւնը դադարել է ժամանակի պահանջներին ընդառաջ գնալուց, հետեւապէս մեզ՝ դաշնակցականներիս համար դադրել է ընդհանրապէս գոյութիւն ունենալուց։

Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 7ին։

Նախագահ՝ Մ. ՉԱՌԱՖԵԱՆ
Քարտուղար՝ Վ. ՔՐՄՈՑԵԱՆ

VIIրդ նիստի արձանագրութիւն

Նիստը տեղի ունեցաւ ապրիլի 7-ին առաւօտ. ժամը 9.½ին, նախագահութեամբ ընկ. Ալթունեանի։ Ներկայ էին բոլոր պատգամաւորները, բացառութեամբ Ա. Ղազարեանի։

Նախագահի կողմից ժողովին քննութեան առաջարկուեց ուսանողական զանազան խմբակներից եկած մի շարք առաջարկներ։ Նախ քննութեան դրուեց միութեան օրգան ունենալու հարցը։ Այս խնդրի առթիւ եղաւ բաւական երկար խօսակցութիւն։ Խօսակցութիւնից երեւաց, որ օրաթերթ ունենալը միանգամայն անիրագործելի պիտի համարել, միայն խօսք լինել կարող է մի ամսաթերթ կամ որեւէ ժողովածու հրատարակելու մասին։ Մի մասն առաջարկում էր մի պարբերական ամսաթերթ, իսկ միւս մասը մի ժողովածու, որը ոչ պարբերական բնաւորութիւն պիտի կրէ։ Նախագահը նախ քուէարկութեան դրեց այն հարցը, թէ ընդհանրապէս ընդունւում է օրգան ունենալու առաջարկը։ Առաջարկն անցաւ համարեա թէ միաձայն, բացառութեամբ մէկ ձայնի։ Յետոյ քուէարկութեան դրուեց այն հարցը թէ օրգանը պարբերական մի ամսաթերթ պիտի լինի թէ ոչ — պարբերական մի ժողովածու։ Այս առթիւ առաջարկուեց հետեւեալ բանաձեւը. Համագումարը լսելով զանազան խմբերի կողմից եկած առաջարկները, որ Դաշ. Ուսան. Միութիւնը մի օրգան ունենայ, մտքերի փոխանակումից յետոյ որոշեց սկզբունքով ընդունել հրատարակութեան առաջարկը, նրա պարբերական դարձնելը թողնելով ապագայի յարմարութեանն. իսկ այս ձեռնարկի համար ընտրել 3 հոգուց բաղկացած մի մասնաժողով նրանց պարտաւորեցնելով մի ուրուագիծ բերել թերթի բնաւորութեան եւ հրատարակութեան պայմանների մասին։ Առաջարկն անցաւ ձայների բացարձակ մեծամասնութեամբ եւ մասնաժողովի անդամ ընտրուեցին ընկ. Ֆրանգեան, Սրապեան եւ Խաչակեան։ Այս ընդունելուց յետոյ կարդացուեց նախորդ նիստի արձանագրութիւնն, որն ընդունուեց։ Յետոյ քննութեան դրուեց Հալէպի պատգամաւորի կողմից թղթակց[ական] բիւրօ հիմնելու առաջարկը։ Նա այս առաջարկը հիմնաւորեց հետեւեալ կերպ. աչքի առաջ ունենալով այն հանգամանքն, որ մեր կուսակցական մամուլի մէջ լուրջ թղթակցութիւնների պակասը խիստ աւելի աչքի է ընկնում, մանաւանդ այնպիսի թղթակցութիւնների, որոնք վերաբերում են արեւմտեան Եւրոպայի քաղ. սոցիալիստական կեանքին, կարեւոր է այդ պակասը լրացնել, հիմնելով թղթակցական մի բիւրօ, որի նպատակը պիտի լինի, լուրջ թղթակցութիւններ ուղարկել մեր մամուլին։ Կարճ վիճաբանութիւնից յետոյ երեւաց որ առանձին մի կարիք չկայ այդ տեսակ բիւրօ հիմնելու եւ վերն ակնարկուած պակասը կարելի է եւ ուրիշ միջոցներով լրացնել։ Այս մասին առաջարկուեց հետեւեալ բանաձեւը. Համագումարը պարտաւորեցնում է Եւրոպ.ի դաշն. ուսանողներին կենդանի կապ հաստատել եւրոպական կեանքի եւ մեր կուսակցական օրգանների միջեւ եւ հրահանգում է իր կողմից թղթակցող ընկերներին, փոխադարձ համաձայնութեամբ, աշխատանքի բաժանում կատարել թղթակցական գործունէութեան մէջ, որպէսզի մի կողմից նրանց թղթակցութիւնները բազմակողմանի եւ մասնագիտական լինեն եւ երկրորդ՝ վերանայ այն անցանկալի երեւոյթը որ մի քանի ընկերներ միեւնոյն նիւթի մասին գրելով աշխատանքի անօգուտ վատնում են կատարում։

Յետոյ քննութեան դրուեց Ժընեւի խմբակի կողմից արուած առաջարկը՝ կոչ անել Ռուսաստանի դաշն. ուսանողութեան կազմակերպուել կուսակցական հողի վրայ։ Այդ առթիւ յայտնուեց, որ Ռուսաստանի դաշն. ուսան[ողների] մէջ այդ միտքն արդէն յղացուել է ու իրագործուելու վրայ է եւ, փոխանակ կոչի, աւելի լաւ է մեր ողջոյններն ու բարեմաղթութիւններն ուղարկել նրանց։ Այդ առթիւ առաջարկուեց հետեւեալ բանաձեւը. Համագումարը լսելով, որ Ռուս.ի դաշ. ուսանողութիւնը որոշել է մօտիկ ապագայում մի կոնֆերանս գումարել եւ Ռուսաստանի Դաշ. Ուսանող. Միութիւն հիմնել, որոշեց ուղարկել Ռուս.ի դաշ. ուսանող[ութեան] իր ընկերական ողջոյններն եւ լաւագոյն ցանկութիւնները մտադրուած ձեռնարկի յաջող եւ արդիւնաւոր ելքի համար։ Համագումարը չէ տարակուսում այն մասին, որ Ռուս. Դաշ. Ուսանող. Միութիւնը կազմելուց յետոյ, Եւրոպայի եւ Ռուսաստանի դաշն. [միութիւնների] յարաբերութիւնն աւելի սերտ եւ օրգանական բնաւորութիւն կը ստանայ, որով կուսակցական կեանքի այն առանձնակի արտայայտութիւններն,

որոնք նկատւում են դաշ. ուսանողութեան այդ երկու հատուածների մէջ կը միանան միեւնոյն հոսանքի մէջ կուսակցութեան կեանքին աւելի բեղմնաւոր կերպով ազդելու համար։ Այս բանաձեւն ընդունուեց միաձայն։ Ապա Ժընեւի խմբակի կողմից առաջարկուեց մի առաջարկ, որ ուսանողական միութիւնը պէտք է նպատակ դնէ ընդհանրապէս հայ իրականութեան հետ կապ ունեցող ազգերի ուսանողութեան հետ կապ պահպանել եւ մասնաւորապէս աշխատել թուրք եւ պարսիկ ուսանողութիւնը կազմակերպել Հ. Յ. Դաշն. Ուսան. Միութ. սկզբունքների հիմամբ։ Առաջարկն ընդունուեց միաձայն։

Յետոյ քննարկութեան դրուեց Ժընեւի, Մինխէնի, Լայպցիգի ուսանող. խմբերի կողմից արած մի առաջարկ — պարզել մեր վերաբերմունքը դէպի Փարիզի միութիւնը։ Մինխէնի պատգամաւորն առաջարկեց նախ այն պարզել՝ թէ ինչ բնաւորութիւն են կրում այդ միութեան մասնակցող կուսակցութիւնները եւ ցանկութիւն յայտնեց, որ այդ հարցին պատասխանէ Բիւրոյի անդամներից մէկն, որպէս գործին աւելի տեղեակ։ Ժողովն ընդունեց կոչը ստորագրող կուսակցութիւնների բնութեան որոշելու խնդիրը քննել, իսկ Բիւրոյի անդամներից այդ առթիւ հրաւիրելը տեղեկութիւն տալու նպատակով, համարեց աւելորդ եւ առաջարկեց Փարիզի պատգամաւորին, որ նա այդ կուսակցութիւնների մասին որոշ տեղեկութիւն տայ։ Փարիզի պատգ.ը յայտնեց, որ միութեան մասնակցող 4 տաճիկ կուսակցութիւններից միայն մէկը զուտ դեմոկրատական սկզբունքներով է ղեկավարւում, որն է իշխան Սապահէդդինի խմբակը, իսկ մնացածներից երկուսը դեռ երիտասարդ են, իրենց յետեւը մասսա չունեն, իսկ երրորդը լիբերալ-բուրժուական մի կուսակցութիւն է։

Ժամանակի սղութեան պատճառով, որոշուեց այս հարցը յետագայ նիստում քննել։ Ժողովը փակուեց ժամը 12-ին։

3½ ժամի նիստը (կէսօրուայ նիստի արձանագրութիւնը). Նիստը բացուեց ժամը 3½ին։ Նախագահը նախ առաջարկեց պրէզիդիումի կողմից, որ ձայնի իրաւունք տրուի Ժընեւի «Ջանք» խմբի չորս անդամին՝ Հոգիյանեան, Զէյթունեան, Աղայեան եւ Տէր-Սահակեանին։ Առաջարկն ընդունուեց։

Այնուհետեւ ընկեր Ֆրանգեան կարդաց իր «Պատմական մատերիալիզմը էմպիրիո կրիտիցիզմի դատաստանի առաջ» վերնագիրը կրող ռեֆերատը։

Քարտուղար՝ ՀԱՑ-ՄՈՒՍԱ
Նախագահ՝ Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Ութերորդ նիստ
(8 ապրիլ առաւօտ)

Նախագահում է Իսահակեան։

Ներկայ են 16 պատգամաւոր եւ 9 հանդիսական։

Կարդացւում է նախորդ օրուայ արձանագրութիւնները եւ որոշ փոփոխութիւններով ընդունւում։

Նախքան օրակարգին անցնելը հարց է բարձրանում թէ պէտք է արդեօք շարադրութիւնները արձանագրութեան մէջ անցնել թէ ոչ։ Թեթեւ վիճաբանութիւնից յետոյ, որոշուեց արձանագրել իւրաքանչիւրի համառօտ բովանդակութիւնը եւ այդ առթիւ արտայայտուած կարծիքների որոշ հոսանքները համառօտապէս։

Ապա Հոգիլեանեան եւ Զէյթունեան յայտարարում են որ իրենք հրաժարում են իրենց վճռական ձայն ունենալու իրաւունքից։

Ժողովը անցնում է օրակարգին.

1) Մեր դիրքը դէպի Պարիզի կոնգրէսն[92ա]*.— Արտայայտւում են երկու ուղղութեան կարծիքներ, առաջին՝ կոնգրէսին մասնակցող թուրք կուսակցութիւնները մաքուր յեղափոխականներ չեն եւ նրանց մէջ մեծ դեր է խաղում անձնական մոմենտը*[93]*. Նրանք իրենց հետ չունեն յեղափոխական մասսա եւ ոչ էլ իրենց ետեւում յեղափոխական անցեալ. դրանք անհատներ են եւ ոչ խմբակցութիւններ կամ կուսակցութիւններ բառի իսկական նշանակութեամբ. երկրորդ՝ այդ միութիւնը միայն տակտիկայի գործ է եւ ոչ սկզբունքային խնդիր, պէտք է գնահատել միայն գաղափարը եւ անհրաժեշտ է իրրեւ համակրական արտայայտութիւն կոչ ուղղել այդ խմբակցութեան։ Ապա այս առթիւ առաջարկւում են բանաձեւեր, որոնցից անցնում է հետեւեալը ձայների բացարձակ մեծամասնութեամբ.*

«Եւրոպայի դաշնակցական ուսանողների պատգամաւորական ժողովը իւր խորհրդակցութեան նիւթ դարձնելով նորերս Պարիզում տեղի ունեցած Թուրքիայում գործող ընդդիմադիր ուժերի ներկայացուցչական ժողովը յայտնում է իր համակրանքը բռնապետութեան դէմ մարտնչող այդ համագումարի առթիւ եւ ցանկանում, որ այդ ուժերն այսուհետեւ աւելի համերաշխօրէն, գիտակցաբար ու աւելի դեմոկրատիկ ոգով դիմեն սուլթանիզմի տակ տառապող ժողովուրդների ազատագրութեան գործին միջազգային միացեալ ուժերով»։

2) Մեր վերաբերմունքը դէպի Դ. Ընդհ. ժողովը։ Վիճաբանութեան ընթացքում ոմանք քննադատում են կուսակցութեան անհետեւողականութիւնը եղած որոշումների նկատմամբ, ուրիշներ ծանրանում են Դաշնակցութեան մէջ գտնուող եւ նրանից հեռացող դժգոհ տարրերի մասին. առաջինները յայտնում են, որ կուսակցութեան շարքերում կան դեռեւս այնպիսիներ, որոնք չեն ընդունում սոցիալիզմը, այնպիսիները որոնք դեռեւս չեն մարսած ծրագրի ոգին եւ պահում են իրենց մէջ նախկին աւանդականութիւնը եւ առաջնորդւում նրանով. վերջինները փորձում են դժգոհութիւններն ու անջատումները բացատրել մասամբ մեր ծրագրի ոգու եւ մեր աշխարհահայեացքի անհասկացողութեամբ եւ պրոպագանդայի բացակայութեամբ, մասամբ ոմանց կողմից կովկասահայ եւ տաճկահայ դատի, իբրեւ հակասոցիալիստական մի երեւոյթ, մի կուսակցութեան մէջ տեսնելու անկարելիութեամբ. սրա համար մի կոչ ուղղել դաշնակցական մասսային հիմնաւորելով եւ բացատրելով ծրագրի ռացիոնելութիւնը[94]*։ Այս առաջարկը անցնում է 12 ձայնով։ Ապա ընտրւում է 3 հոգուց (Մաշուրեան, Քրիչչեան, Բարսեղեան) բաղկացած մի մասնախումբ, որպէսզի կազմէ մի այդպիսի կոչ ներկայացնելու ժողովին՝ վերջնական ընդունելութեան համար։*

Իններորդ նիստ
(8 ապրիլ, երեկոյեան)

Նախագահում է Իսահակեան։

Ներկայ են 19 պատգամաւոր եւ 17 հանդիսական։

Օրակարգն է Ֆրանգեանի դասախօսութեան քննադատութեան շարունակութիւնը։

Առաջարկում են դիւրութեան եւ նպատակայարմարութեան համար նշանակել մի կորրեֆերատ շարադրութիւնը ուսումնասիրելու եւ ժողովին որոշ խնդիրներ ներկայացնելու՝ դրանց մանրամասն քննելու համար։ Ոմանք ժամանակի սղութեան համար անյարմար են համարում այդ առաջարկը, թէեւ սկզբունքով ցանկալի գտնում որոշ բեֆերատների համար. ուրիշներ առաջարկում են շարունակել սկսուած կերպով, հետագաներին վերապահելով այդ սկզբունքը։ Քուէարկուելով 12 ձայնով ընդունւում է կորրեֆերատի առաջարկը։ Ապա բեֆերատների յանձնախմբի մի անդամը կարդում է բեֆերատի կոնսպեկտը[7] *ժողովականների առաջ, որպէսզի վերջիններս ծանօթանալով նիւթերի հետ ըստ ցանկութեան ստանձնեն կորրեֆերատի դերը։*

Ժողովը անցնում է օրակարգի յաջորդ նիւթի եւ

92ա.- Ակնարկութիւն 1907 թ. 27-29 Դեկտեմբերին Փարիզի մէջ կայացած Օսմանեան Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու կոնգրէին, ուր որոշուեցաւ միացեալ ուժերով տապալել Սուլթան Համիտ Բ.ը եւ երկիրը օժտել սահմանադրութեամբ եւ ժողովրդավար կարգերով։

93.- Բնոյթ, պարագայ։

94.- Բանականութիւնը։

լսում է Իսահակեանի շարադրութիւնը՝ «դաշնակցական ուսանողութեան պարտականութիւնների մասին»։

Նախագահում է Զառաֆեան։

Սկսում է մտքերի փոխանակութիւնը։ Համարեա բոլորը պնդում են հասարակագիտութեան անհրաժեշտութիւնը ամէն մի ուսանող անհատի համար, ինչ մասնագիտութեան էլ հետեւելիս լինի նա, մեծ պարտականութիւն դնելով այդ առարկաների մասնագիտօրէն ուսումնասիրողի վրայ, որից ակնկալում են մանաւանդ տեսական հարցերի ճշգրիտ հիմնաւորումը համաձայն գիտութեան ներկայացուցիչների եւ ղեկավարների։ Ի միջի այլոց գտնում են որ բեֆերենտը չի չեշտել մեր միջնակարգ դպրոցների կարգաւորման խնդիրը, որտեղից դուրս են գալիս մեր ուսանողները ոչ բոլորովին պատրաստ, որ ինքնակրթութիւնը կարեւոր ազդակներից մինը պէտք է լինի դրա համար, իբրեւ ներկայ դարի ամէն մի անհատի անհրաժեշտ պահանջ, որ անհատական հակումները մեծ տեղ են գրաւում կուսակցութեան, մտաւորին եւ գործնականին հետեւելու խնդրում։

Դասախօսը գտնելով որ յիշուած առաջարկութիւնները չեն հակասում իւր ասածներին, այլ մի մի յաւելումներ են, ընդունում է ամբողջութեամբ։

Յաջորդ հերթական հարցն է. «Մեր վերաբերմունքը դէպի Հաագայի կոնֆերանսը»։

Նախագահի առաջարկութեամբ որոշւում է կրկնութիւնից խուսափելու համար այդ հարցով զբաղուել Բարսեղեանի դասախօսութեան առթիւ, ուր շօշափւում է այդ խնդիրը։

Ապա օրակարգի համաձայն Իսահակեան առաջարկում է «Մեր կուսակցութեան պարբերական հրատարակութիւնները մատչելի դարձնել բոլոր դաշնակցական ուսանողութեան»։

Առաջարկութիւնը ընդունուեց միաձայն. կարծիքների տարբերութիւն կար, թէ ում պէտք է յանձնել գործի կազմակերպութիւնը։ Այս առթիւ եղան երկու տեսակ կարծիքներ ա) Թողնել խմբերին եւ բ) Յանձնել միութեան գործադիր մարմնին։

14 ձայնով անցաւ վերջինը։

Նախագահ՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐԶՊԵՏ[31]

9 Ապրիլի 1908.
Առաւօտեան նիստ

Ժողովը բացուեցաւ 9½ին. նախագահում էր ընկեր Զառաֆեան։ Ներկայ էին 18 անդամ պատգամաւոր, ընդամէնը 25։

Նախորդ ժողովի ատենագրութիւնը կարդացուելուց եւ մի քանի ուղղումներով հաստատուելուց յետոյ ժողովն անցաւ օրակարգին.— Նախագծի քննութիւն։ Ամբողջական ընթերցումից յետոյ ժողովը կանգ առաւ նըպատակի որոշման վրայ։

Ընկերներից ոմանք առարկեցին, որ նախորդ ժողովներից մէկի մէջ արդէն նպատակը որոշուած է, որը վերջացած պէտք է համարել. նախագիծ մշակող յանձնախմբի անդամները նկատեցին, որ նպատակի այդ որոշումը վերջնական չէր, եւ ուրեմն յանձնախմբը իրաւունք ունէր մի անգամ ձեւակերպածը քննութեան ենթարկելու։

Թեր եւ դէմ վիճաբանութիւններից յետոյ իբրեւ նպատակ միաձայն ընդունուեցաւ յանձնախմբի պատրաստածը։ Ապա ժողովն անցաւ նախագծի միւս կէտերի քննութեան։ Հարց բարձրացաւ թէ ուսանող անուան սահմանում պէ՞տք է տալ թէ ո՛չ. թիւրիմացութեան տեղիք չտալու համար որոշուեցաւ մի ծանօթութիւն մտցնել ուսանող բառը որոշելու համար եւ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը. «Ուսանող է նա, որ ուսանում է կամ ուսանելու նպատակով Եւրոպայում է գտնւում»։

Ժողովը շարունակեց նախագծի միւս կէտերը քննել եւ հասաւ մինչեւ Համագումարի պարտականութիւնների եւ իրաւունքների վերջը։

Ժողովը փակուեցաւ 12ին։

Կէսօրուան նիստ

Ժողովը բացուեցաւ երեքուկէսին. նախագահում էր ընկեր Զառաֆեան. ներկայ էին 42 հոգի, որոնցից 22 ձայնի իրաւունքով։

Օրակարգ.— Վիճաբանութիւն ընկեր Ֆրանգեանի բանախօսութեան մասին. ընդդիմախօսն էր ընկեր Արշակ Իսահակեան, որ իր երկար եւ մանրամասն քննադատութեան մէջ աշխատեց ցոյց տալ որ շարադրութեան մէջ տիրում է բացատրութիւններու մեծ չփոթ, ներքին հակասութիւններու տիրապետութիւն, ապա ուրեմն շարադրութիւնը իբրեւ մի փոքր պատմամատերիալիստական հոյակապ չէնքը տապալելու եւ մեր կուսակցութեան պատմափիլիսոփայական սկզբունքները հիմնաւորելու — չէ յաջողած։

Դեռ շարունակուեցան վիճաբանութիւնները. ընդ-

դիմախօս ընկերոջ առարկուեցաւ որ նա կանգ առաւ աւելի ձեւականի վրայ, չխօսեց այն տեսակէտի, այն ուղղութեան դէմ որ ընկեր Ֆրանգեան մեր առաջ դրած էր։

Վերջին խօսքը պատկանում էր բանախօսին, որ յայտարարեց թէ ինքը քաջ ծանօթ է իր շարադրութեան թերութիւններին, բայց իր հասկացողութեամբ եկել են այստեղ ոչ թէ իրար ըմբռնումը ջախջախելու, այլ խօսելու, վիճելու, թէկուզ բոլորը քննադատելու, բայց այդ բոլորի տեղ մի նորը դնելու եւ այդ նորով մեր կուսակցութեան աշխարհահայեացքը պարզելու, նրա գոյութեան իրաւունքները ապացուցանելու. նոյնպէս չեշտեց որ ընդդիմախօսը ծանրացաւ ֆորմէլ կողմերի վրայ, ոչինչ չասաց էութեան, ոգու դէմ։

Այդ վիճաբանութիւններից յետոյ դեռ երկար ժամանակ ունենալու պատճառաւ իր շարադրութիւնը կարդաց ընկեր Մուսայէլեան նիւթ ունենալով «Պետութեան եւ իրաւունքի մասին»։

Բանախօսութիւնից յետոյ փոքր ընդմիջում։

Վերսկսելիս խօսեց ընկեր Արարատսկի մի առաջարկ անելու։ Շնորհակալութիւն յայտնելով որ ժողովն իրեն ձայնի իրաւունք է տուել, յանձն առաւ ցոյց տալ դաշնակց. ուսանողներից նրանց, որոնք կը կամենան մասնաւորապէս մօտից ծանօթանալ էսէրական եւ դաշնակցական գրականութեան հետ, այն բոլոր աղբիւրները, որոնք կարեւորագոյններն են։

Ժողովը այդ առաջարկը ընդունեց ծափահարութեամբ։ Նախագահը ժողովի կողմից շնորհակալութիւն յայտնեց ընկերոջ։

Ժամանակի սղութեան պատճառաւ ընկեր Մուսայէլեանի բանախօսութեան ընդդիմախօսութիւնները թողուեցան յաջորդ օրուան։

Նախագահ՝ Մ. ՁԱՌԱՖԵԱՆ
Քարտուղար՝ Վ. ՔՐՄՈՑԵԱՆ

Տասներկուերորդ նիստ
[Ապրիլ] 10-ի (առաւօտ)

Նախագահում է Ալթունեան։

Ներկայ են 15 պատգամաւոր, 7 հանդիսական։

Օրակարգն է կանոնագրի քննութեան շարունակութիւնը։

«Յօդուած 23». երկու կարծիք է առաջ գալիս. առաջին՝ եթէ գործադիր մարմինը մի քաղաքից կամ մօտաւոր քաղաքներից ընտրուի, մեծ դիւրութիւն կ'ունենայ խորհրդակցելու հարկաւոր խնդիրների առթիւ, երկրորդ՝ եթէ զանազան երկիրներից կամ հեռաւոր քաղաքներից ընտրուի, նրա անդամները աւելի մօտիկից կարող են ծանօթանալ բոլոր խնդիրների հետ, թղթակցութիւնը աւելի կը հեշտանայ ու ծախսերը կը թեթեւանան։

Քուէարկութեամբ անցնում է սոյն յօդուածը ամբողջապէս։

Ընդունւում են նմանապէս 24-27 յօդուածները առանց որեւէ փոփոխութեան։

Ապա կարդացւում եւ հաստատւում են նախորդ օրուայ արձանագրութիւնները։

Օրակարգի համաձայն առաջ է գալիս կանոնադրութիւնը փոփոխելու հարցը։ Ժողովը ընդունում է որ կանոնադրութեանը մի մասը կամ ամբողջը փոփոխութեան է ենթարկւում այն կարգով, ինչ կարգով որ ընդունուել են, այսինքն ձայների հասարակ մեծամասնութեամբ։

Ապա առաջարկում են հետեւեալը. «Գործադիր մարմնի պարտականութիւնն է հոգալ միութեան օրգանի հրատարակութեան գործը եւ հսկել նրա կանոնաւորութեան վրայ»։ Ժողովը անցնում է այն հարցին թէ մեր եկամուտի որ մասը պէտք տալ Դաշնակցութեան ընդհանուր գանձարանին։ Առաջ է գալիս երկու որոշ կարծիք, առաջին՝ ուսանողական միութիւնն էլ կուսակցութեան մի օրգանն է, ուստի եւ պէտք է ենթարկուի ընդհանուր կանոնադրութեան, երկրորդ՝ ուսանողութիւնը բացառիկ դրութեան մէջ լինելով ունի եւ բացառիկ կարիքներ։ Այս առթիւ առաջարկում են հետեւեալ բանաձեւերը՝

1) Իսահակեանինը՝ «Համաձայն Դաշնակցութեան կանոնադրութեան ------- կէտի, Գործադիր մարմինը միութեան անհրաժեշտ ծախսերը հոգալուց յետոյ մնացած դրամական միջոցները յանձնում է կուսակցութեան գանձարանին»։

2) Նարինեանինը՝ «Իւրաքանչիւր անգամ Համագումարը որոշում է իւր կասսայից՝ կուսակցութեան տալիք նիւթական օժանդակութեան հարցը, Գործադիր մարմնի տարուայ հաշիւները ընդունելուց եւ նախահաշուի քննութիւնից յետոյ։

3) Աղայեանինը՝ կուսակցութեան գանձարանին տալ զուտ եկամուտի 25%։

Քուէարկութեամբ անցնում է երկրորդ բանաձեւը 9 ձայնով. առաջինը ստանում է 8 ձայն եւ երրորդը 3 ձայն։

Օրակարգի համաձայն խօսք է տրւում միութեան օրգանի մասին զեկուցում պատրաստող յանձնախմբին որի մի անդամը կարդում է զեկուցումը՝ կէտ առ կէտ։

1) Տեսական բաժին.— Այս առթիւ առաջ են գալիս զանազան կարծիքներ. ոմանք ցանկալի են համարում որ Ռուսաստանի ուսանողութիւնն էլ մասնակցի օրգանին, ուսանողների մէջ որոշ կապ հաստատած լինելու համար. մի քանիսը յայտնում են որ նիւթը պէտք է լինի մեր աշխարհահայեացքի շուրջը, եթէ դա պարբերական օրգան է, իսկ զանազան գիտական հասարակական խնդիրները ոչ թէ պարբերաբար այլ երբեմնակի կարող են հրատարակուել. ուրիշներ՝ թէ զուտ կուսակցական խնդիրները՝ պէտք է առանձին հրատարակել եւ ուղղել միայն խմբակներին։

Ժամանակը լրացած լինելով շարունակութիւնը թողնւում է յաջորդ օրուան։

Նախագահ՝ Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐՋՊԵՏ

Տասնեւերեքերորդ նիստ
Ապրիլ 10-ի (երեկոյ)

Նախագահում է Ալթունեան։

Ներկայ են 18 պատգամաւոր եւ 20 հանդիսական։

Օրակարգն է Մուսայէլեանի ռեֆերատի վիճաբանութիւնը։

Առարկութիւնները գլխաւորաբար հետեւեալներն են։

Դասակարգերի ծագումը առաջացել է ոչ միայն ռասսայական մոմենտից[95] այլեւ գլխաւորաբար տնտեսական կեանքի զարգացման ֆակտորներից. վաճառականութիւնը սկզբներում առաջացել է ոչ թէ ինչպէս ասում էր դասախօսը՝ հեռաւոր երկիրների հետ ունեցած ապրանքների փոխանակութիւնից. դա կարող էր եւ յառաջանալ նոյն տեղում աշխատանքի բաժանումից, ուր միջնորդի դեր են կատարել վաճառականները. դասախօսը չյիշատակեց թէ Պլատոնը ի՞նչ հիմամբ էր պետութիւնը 3 դասակարգի բաժանում եւ որ պետութիւնն ու իրաւունքը շատ աւելի բարդ պատճառներից են առաջացել։ Պետութիւնը ծագել է բարբարոս ցեղերից պաշտպանուելու համար վարձուող զինուորների պէտքից, որոնք եւ դարձել են ապագայ տիրապետողները։ Պատմութեան պրոցեսի մէջ մարդու հոգեկան կողմը մեծ դեր է խաղացել հասարակութիւնների եւ պետութիւնների կազմութեան համար. սկզբնական հասարակութիւնների մէջ տեսնում ենք համայնակեցութիւնը եւ համայնական գործունէութիւնը, որը որոշ սոցիալական էտիկական[96] մղումներ է առաջացրել մարդոց մէջ. ահա այս մղումը իբրեւ դարաւոր ժառանգութիւն, այժմ յառաջ է գալիս մարդոց մէջ, որը ցոյց է տալիս դասակարգերի կազմութեան մէջ գոյութիւն ունեցող նաեւ էտիկան եւ սոցիալական մոմենտը։

Ի պատասխան այս առարկութիւնների դասախօսը դարձեալ չեշտում է իւր այն կարծիքը, որով պետութիւնը առաջացել է ռասսաների ընդհարումներից, վաճառականութիւնը՝ հեռաւոր երկիրների ապրանքների փոխանակութիւնից, բուրժուազիան՝ ոչ միայն արհեստաւորներից այլ եւ տիրողներից։

Փոքր ընդմիջումից յետոյ ժողովը լսում է Սրապեանի ռեֆերատը՝ «Յեղափոխական ռեֆորմ»։

Այս առթիւ եղած վիճաբանութիւնները ծանրանում են գլխաւորաբար այն բանի վրայ որ յեղափոխութիւնն ու ռեֆորմը հակադրութիւն են, որ ամէն ռեֆորմ մօտեցնում է մեզ մեր վերջնական նպատակին եւ մենք չպէտք է խոյս տանք պարլամենտից միայն նրա համար, որովհետեւ այստեղ կան յետադիմական տարրեր, որոնք նմանապէս մասնակցել են այդ ռեֆորմի ընդունելութեան, թէեւ ի նկատի ունենալով իրենց դասակարգային շահերը։

Դասախօսը ի պատասխան ասում է իւր եզրակացութիւնը. « Յեղափոխականը իւր հասարակական քաղաքական գործունէութեան ծանրութեան կենտրոնը եւ կամ նրա մի մասն իսկ չպէտք է համարի պարլամենտարիզմը։ Նրա գործունէութիւնը իւր ամբողջ թափով պէտք է արտայայտուի միմիայն մասսաների մէջ յոգուտ նրանց տնտեսականի եւ մտաւոր զարգացման, որը ներկայ բուրժուապետական պարլամենտից չի կարելի սպասել։

Նախագահ՝ Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐՋՊԵՏ

Ապրիլի 11-ի նիստի
արձանագրութիւնը

Ապրիլի 11-ի նիստը բացուեց առաւօտեան ժամը 9½-ին, նախագահութեամբ ընկ. Ա. Իսահակեանի։

Նախագահի կողմից ըստ օրակարգի առաջարկուեց մի յանձնաժողով ընտրել մինչեւ այժմ եղած հաշիւները քննելու եւ մի նախահաշիւ կազմելու։ Առաջարկն անցաւ եւ յանձնաժողովի անդամ ընտրուեցին ընկ. Բարսեղեան, Զառաֆեան եւ Քրմոյեան։ Յետոյ Փարիզի պատգամաւորի կողմից եղաւ առաջարկ որ միութեան կողմից շրջիկ դասախօսներ ուսանողութեան մէջ շրջեն պրոպագանդի նպատակով եւ ռեֆերատներ կարդան։ Այս խնդրի առթիւ եղաւ երկար խօսակցութիւն։ Սկզբունքով բոլորն ընդունում էին շրջիկ դասախօսի ունենալը։ Ոմանք առաջարկում էին որ այդ շրջիկ դասախօսներն ընտրուեն խմբագրական մարմնի կողմից, մի մասը առաջարկում էր որ դրանք ընտրուեն խմբակների կողմից, իսկ ոմանք էլ առաջարկում էին, որ դրանք ընտրուեն Գործադիր մարմնի կողմից։ Այս երեք առաջարկներից անցաւ վերջինը հետեւեալ բանաձեւով.— Շրջիկ ռեֆերենտի ընտրութիւնը վերապահւում է Գոր-

95.- Ցեղային բնոյթն:
96.- Բարոյական:

ծադիր մարմնին, որը սակայն պէտք է այդ առթիւ խմբագրական մարմնի հետ փոխադարձ համաձայնութեան գայ. իսկ խմբագրական մարմին չեղած դէպքում, այդ իրաւունքը վերապահւում է ամբողջովին Գործադիր մարմնին։

Ընդունուեց նաեւ որ շրջիկ դասախօս կ'ուղարկուի միայն միջոցներ եղած տեղ կամ եթէ նա երկու լուրջ դասախօսութիւններ կայացնէ։

Կէսօրուայ նիստի արձանագրութիւնը

Նիստը բացուեց ժամը 3½-ին։ Նախագահում է ընկ. Խահակեանը։

Նախ կարդացուեց Միութեան օրգանի կանոնադրութիւնն, որը յատուկ դրա համար ընտրուած մի յանձնաժողով կազմել էր։ Կանոնադրութիւնը չնչին փոփոխութիւններից յետոյ ընդունուեց։ Օրգանի բովանդակութեան վերաբերմամբ եղաւ առաջարկ, որ այնտեղ մտցուի եւ փլետրիստիքական[?] բաժին։ Այս առաջարկութիւնը անցաւ, միայն այն սահմանափակումով, որ այդ ընդարձակ մտքով չհասկցուի, այլ նա պէտք է սոցիալիստական գաղափարի շուրջը պտտի։

Խմբագրական մարմինն առայժմ միացուեց Գործադիր մարմնի հետ եւ Գործադիր մարմնի անդամների թիւն, որը սկզբում երեք էր որոշուած, հինգի բարձրացրուեց։ Բացի այդ որոշուեց երկու փոխանդամ եւս ունենալ։

Օրգանի կանոնադրութեան կէտերի քննութեան ժամանակ երկար վէճ առաջացաւ այն խնդրի շուրջը, թէ նիւթերի ընտրութիւնն կատարելիս ինչ տեսակէտով պէտք է առաջնորդուել։ Ոմանք առաջարկում էին, որ նիւթերը ընտրելիս առաջնորդուի նրանց գիտական-գրական արժէքով, առանց երկար ծանրանալու այն խնդրի վրայ թէ որքան այդ նիւթերը համապատասխանում են կուսակցութեան հիմնական սկզբունքներին։ Ոմանք էլ առաջարկում էին, որ այն նիւթերին տեղ տրուի, որոնք չեն հակասում կուսակցութեան հիմնական սկզբունքներին։ Այս մտքով եղան երկու բանաձեւեր եւ տասնմէկ ձայնով ընդդէմ ութի անցաւ առաջինը։

Յետոյ որոշուեց օրգանի անունը ՈՒՍԱՆՈՂ դրուի։

Կանոնադրութեան ընթերցումից յետոյ ընկեր Բարսեղեան կարդաց իր բեֆերատը «Դաշնակցութիւնը եւ տաճկահայ դատը» վերնագրով։ Ժամանակի սղութեան պատճառով բեֆերատի վիճաբանութիւնը թողնուեց յաջորդ նիստին։

Նիստը փակուեց երեկոյեան ժամը 6-ին։

Նախագահ՝ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Քարտուղար՝ ՀԱՑ-ՄՈՒՍԱ

12 Ապրիլ 1908
Առաւօտեան նիստ

Նախագահում է ընկեր Զառաֆեան. ներկայ էին 20 պատգամաւոր, 13 հանդիսական։

Նախորդ ժողովի ատենագրութիւնը կարդալէ եւ մի քանի փոփոխութիւնից յետոյ ընդունուեցաւ։

Օրակարգ.—

1. Նախահաշիւ պատրաստող մասնախմբի հաշուետուութիւն։

2. Թերթի համար յօդուածները որոշելու չափանիշի որոշում

3. Գործադիր մարմնի ընտրութիւն

Նախահաշուի յանձնախմբի անդամներից մէկը յայտարարեց որ Միութիւնը իսկապէս ո՛չ պարտք ունի, ոչ էլ դրամ. ապա մի քանի ենթադրական թուեր տուաւ մեր տարեկան ծախքի եւ մուտքի համար եւ այն եզրակացութեան եկաւ, որ մեզ կը յաջողի մեր բոլոր ծախսերը գոցել։ Ընկերներից մէկն առաջարկեց մի որոշում հանել դրա համար եւ ձեւակերպեց այսպէս. «Համագումարը լսելով նախահաշուի զեկուցումը յանձնում է Գործադիր կոմիտէին ի դիտողութիւն»։ Ընդունուեցաւ։

Նախորդ ժողովում տրուած վճիռը թերթի բովանդակութեան բնորոշման համար շատ անդամների առաջարկութեամբ դարձեալ քննութեան ենթարկուեց։

Յանձնախումբը իբրեւ գնահատման չափ առաջարկել է յօդուածի գրական-գիտական արժանիքը։ Ոմանք առաջարկեցին աւելացնել նաեւ կուսակցական չափը, որպէսզի Դաշնակցութեան հիմնական սկզբունքներին հակառակ գրութիւններ տեղ չգտնեն թերթի մէջ։ Ոմանք առաջարկեցին նոյնիսկ Դաշնակցութեան զարգացման, բարգաւաճման համար լինել աւելի ազատ, տեղ տալ եւ այն գրութիւններին, որոնք կը հիմնաւորեն մի նոր տեսակէտ, նոյնիսկ հակառակ Դաշնակցութեան հիմնական կոչուած սկզբունքների ոգուն։ Ազատ քննադատութիւններից կարելի է կուսակցութեան կենսունակութիւնը յուսալ։

Կրկին հարց եղաւ թերթի մասին, թէ ի՞նչ գոյն պիտի ունենայ, արդեօք պէտք է լինի մեր Միութեան պաշտօնական օրգա՞նը, մի կուսակցութեան օրգան, թէ Դաշնակցութեան ուսանողների մարզարան, մի դիսքուսիոնի[97] օրգան։

Ժամանակի սղութեան պատճառաւ վերջնական եզրակացութիւնը թողուեցաւ օրուան երրորդ նիստին։

97.- Բանավէճի։

Կէսօրուան նիստ

Ժողովը բացուեցաւ 3½-ին, կը նախագահէր ընկեր Զառաֆեան. ներկայ էին 23 պատգամաւոր, 16 հանդիսական։ Թերթի մասին երկար վիճաբանութիւններէն յետոյ անցաւ հետեւեալ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով, որ «Ուսանող»ը մի դիսքուսիոնի օրգան է դաշնակցական ուսանողների համար նուիրուած կուսակցութեան ծրագրի եւ գործունէութեան ուսումնասիրութեանը եւ լուսաբանութեանը՝ խմբագրութիւնը որեւէ յօդուած ընդունելու համար կարող է ղեկավարուել, բացի այն որ նիւթերը պէտք է լինեն համաձայն այն բովանդակութեան, որ որոշել է համագումարը, նաեւ յօդուածի գիտական, գրական լրջութեամբ։ Թերթը կուսակցական պաշտօնական օրգան չէ եւ նրա պատասխանատուութիւնը ո՛չ կուսակցութեան եւ ոչ էլ ոեւէ պաշտօնական մարմնի վրայ չէ ընկնում»։

Այս խնդրից յետոյ համագումարը հարց ուղղեց պատրաստող յանձնախումբին թէ ի՞նչ է արել. յայտնեցաւ որ արել է շատ քիչ բան եւ յանձնախումբը այդ թողնում է Գործադիր մարմնին։

Նախագահն առաջարկեց խօսել ընկեր Բարսեղեանի դասախօսութեան վրայ, ինչպէս նաեւ Եւրոպական դիպլոմատիայի՝ հայկական հարցում։

Երկար վիճաբանութիւններէ յետոյ ընկերներից մէկն առարկեց որ մենք իսկապէս իրաւունք չունենք ասելու թէ արդեօք Դաշնակցութիւնը պէ՞տք է ուշք դարձնէ եւրոպական քաղաքականութեան վրայ թէ ո՛չ։ Իսկ խօսելով Հաագայի հարցի մասին, յայտարարեց որ Արեւմտեան Բիւրոյի վարմունքը եղել է շատ ուղղամիտ եւ համաձայն համագումարի որոշումներին մեր ընկերներից մէկի հետ գրագրութիւն պահելու հարցում Հաագայի դիմումի ժամանակ։

Ընկերներից մէկն առարկեց որ կարելի է խօսել եւրոպական դիպլոմատիայի վրայ հայկական հարցում, քանի որ լայն կերպով չօչափւում է ընկ. Բարսեղեանի բանախօսութեան մէջ։ Ընկերներից մի ուրիշը պնդեց որ հարցի մասին վիճաբանութիւն չի կարող լինել սկզբունքի հայեցակէտով, քանի որ տաճկահայ իրականութիւնը բոլորովին բացառիկ պարագաների մէջ է գտնւում։

Վերջին խօսքը պատկանում էր դասախօսին, որ աւելի խօսեց իր բանախօսութեան դէմ եղած վիճաբանութիւնների դէմ։

Պատասխանից յետոյ որոշուեցաւ մի վճիռ հանել. անցաւ հետեւեալ բանաձեւը՝

«Լսելով եւրոպական դիպլոմատիայի հարցի շուրջը առաջացած կարծիքների փոխանակութիւնը, եւ ի նկատի ունենալով, ա) խնդրի լրջութիւնը եւ երկրորդ որ դեռ հարցը բաւարար կերպով չէ լուսաբանուած, համագումարը որոշում է յետաձգել այս խնդրի լուծումը մինչեւ Դաշնակցութեան առաջիկայ Ընդ. Ժողովը, միեւնոյն ժամանակ յանձնարարում է իր անդամներին ուսումնասիրելու այս խնդիրը բազմակողմանի եւ լուրջ կերպով»։

Փոքրիկ դադար

Վերսկսելիս որոշուեց «Գործադիր մարմին»ը ընտրելու. առաջարկուեցան թեկնածուներ եւ որոշուեցաւ իւրաքանչիւր թեկնածուի մասին խօսել նրա բացակայութեան, ընտրութիւնները աւելի բարեյաջող կայացնելու [համար]։

Գաղտնի քուէարկութեամբ Գործադիր կոմիտէի անդամ ընտրուեցան ընկ. ընկ. Ալթունեան, Յարութիւնեան, Խահակեան, Զառաֆեան, Քրմոյեան, իսկ փոխանդամներ՝ ընկ. ընկ. Մելքոնեան Հայկ եւ Երուանդ Ֆրանգեան։

Ժողովը փակուեցաւ 7½-ին։

Նախագահ՝ Մ. ԶԱՌԱՖԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՔՐՄՈՅԵԱՆ

Ապրիլ 13-ի նիստի արձանագրութիւնը

Նիստը բացուեց ժամը 10-ին։ Նախագահում էր ընկ. Ալթունեան։ Կարդացուեց Միութեան կանոնադրութիւնը, [որը] սրբագրած եւ չնչին փոփոխութիւններից յետոյ ընդունուեց։ Աւելացան հետեւեալ կէտերը. 1. Ռայոնական ժողովին ուսանողութեան ներկայացուցչին ձայնի իրաւունքով ուղարկում է Միութեան Գործադիր մարմինը. 2. Տեղական մարմինները իրենց գործերը վարում են ըստ իրենց տեղական կանոնադրութեան, որը հիմնուած պիտի լինի Միութեան կանոնադրութեան վրայ. 3. Երկու ամիս առաջ համագումարից Գործադիր մարմինը ժողովում է տեղական խմբերից համագումարին տրուելիք հարցերի ցուցակն եւ այդ ուղարկում է բոլոր խմբերին ի գիտութիւն եւ ի քննութիւն։ Գործադիր մարմնի անդամների թիւն աւելացնելու առաջարկը ընդունելութիւն չգտաւ։ Կանոնադրութիւնը որոշուեց վիմատիպ տպել եւ խմբակների մէջ ցրել։ Որոշուեց նոյնպէս մեր կուսակցական օրգաններում տպագրել եւ համագումարի կայացրած որոշումները։ Իսկ արձանագրութեան վերաբերմամբ որոշուեց չտպագրել։

Յետոյ հարց եղաւ այն ընկեր բեֆերենտներին, որոնց բեֆերատը համագումարում կարդացուել է կամ առաջարկուել, բայց ժամանակի սղութեամբ չի կարդացուել, պարտաւորացնել, որ իրենց բեֆերատները յանձնեն միութեան օրգանին տպագրելու։ Պարտադիր դարձնելը ժողովը գտաւ աւելորդ, այլ ցանկալի համա-

րեց, որ այդ բեֆերատները յանձնուին Գործադիր մարմնին տպագրելու։ Յետոյ անցած ժողովի արձանագրութիւնը կարդացուեց, որը եւ ընդունուեց։

Ընկեր Իսահակեան առաջարկեց իր մի բանաձեւը, ուղղուած Դաշն. IVրդ Ընդհանուր Ժողովին դէմ բողոքողներին, արձանագրութեան մէջ մտցնել, որն ինքը նախորդ նիստերից մէկում առաջարկել եւ ընդունուել էր, բայց ինքը մէկ էլ յետ էր վերցրել։ Ժողովը որոշեց այդ բանաձեւը արձանագրութեան մէջ մտցնել։

Այդ բանաձեւն է. Համագումարն իր խորհրդածութիւնների նիւթ դարձնելով այն բոլոր դժգոհութիւններն եւ բողոքներն, որոնք առաջացել են կուսակցութեան IVրդ Ընդհանուր Ժողովից յետոյ եւ ի նկատի ունենալով, որ Ընդհանուր Ժողովն իր մշակած ծրագրով եւ կայացրած որոշումներով միանգամայն բարեխղճութեամբ է ընդառաջ գնացել հայ իրականութեան եւ մեր կուսակցութեան պահանջներին, գտնում է որ վերոյիշեալ բողոքները զուրկ են «իդէալական» հիմունքներից եւ արդիւնք կամ անհատական տրամադրութիւնների եւ կամ Ընդհանուր Ժողովի կատարած գործը չհասկանալուն։ Համագումարն ոչ մի տարակոյս չունի, որ յատկապէս վերջին տեսակի բողոքող տարրերն իսկական ճանաչողութիւն ձեռք բերելով մեր իրականութեան պահանջների վերաբերմամբ՝ կը վերադառնան դէպի կուսակցութեան շարքերը իբրեւ համոզուած դաշնակցականներ։

Այս բանաձեւով նիստը փակուեց ժամը 12-ին։

Կէսօրուայ նիստի արձանագրութիւնը

Նիստը բացուեց ժամը 4-ին։ Նախագահում էր ընկ. Աւետեան։ Ընկեր Արզումանեան կարդաց իր զեկուցումը Դաշնակցութեան եւ սոց. ռեվոլիւցիոնների միջեւ տեղի ունեցած տարաձայնութեան մասին, որն առաջացրել է սոց. ռեվոլիւց.ների դէպի անջատականները եւ դէպի Դաշնակցութիւնը բռնած երկդիմի վերաբերմունքը։ Ընկերն այդ բանի մէջ մեղադրում էր մեծ չափով սոց. ռեվոլիւց.ների կուսակցութեան եւ առաջարկում էր, որ այդ երկդիմի դիրքը որոշուի, որպէսզի տարակուսանքի առիթ չտայ եւ մտքերի մէջ մթութիւն առաջացնի։ Ընկերոջ առարկութիւններին ոմանք պատասխանեցին եւ ցոյց տուին, որ այդ բանում այնքան մեղաւոր չէ սոց. ռեվոլուց.ների կուսակցութիւնն, որքան Դաշնակցութիւնը։ Բաւական հետաքրքիր վիճաբանութիւնից յետոյ այդ առթիւ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

Եւրոպայի դաշն. ուսանողների համագումարը քննութեան առնելով սոց. յեղափոխականների կուսակցութեան բռնած դիրքը Դաշնակցութեան եւ դաշնակցական անջատուածների վերաբերմամբ եւ ի նկատի ունենալով

1) Որ նոյնիսկ կուսակցութեան հիմնուելու օրից սկսած, երբ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը կենտրոնացրած էր միմիայն Տաճկահայաստանում, բարեկամական յարաբերութեան մէջ է եղել Ս. Ռ. կուսակցութեան հետ, քանի այդ կուսակցութիւնների մէջ չէ նկատուել ոչ մի սկզբունքային տարաձայնութիւն։

2) Որ Ս. Յ. կուսակցութիւնը շատ անգամ իր պաշտօնական օրգանի էջերում դաշն. սկզբունքները Սոց. Դեմ[ոկրատների] յարձակումներից պաշտպանելու դերումն է հանդէս եկել։

3) Որ այդ երկու կուսակցութիւնները յաճախ իրար բարոյապէս աջակցելու առիթներ են ունեցել Կովկասում

4) Որ դաշնակցական IV-րդ Ընդհանուր Ժողովում, ուր վերջնականօրէն ձեւակերպուել եւ հիմնաւորուել են այն սկզբունքներն, որ ընդհանուր են երկուսի համար եւս, պիտի գար աւելի եւս ամրապնդելու շեշտուած համերաշխութիւնը երկու կուսակցութիւնների միջեւ։

Որ չնայած այդ բոլորին Սոց. յեղ. կուսակցութիւնը վերջերս բռնած իր դիրքով գոյութեան իրաւունք է տալիս Դաշն.-ից առանց սկզբունքային լուրջ հիմունքների բաժանուած անհատների առանձնացած գործունէութեան, որն իւր կարգին անդրադառնում է աշխատաւոր մասսաների գիտակցութեան վրայ բացասական մտքով, յայտարարում է, որ սոց. յեղ. կուսակցութեան բռնած դիրքը չէ բխում հայկական իրականութեան եւ Դաշնակցութեան կրած էւոլիւցիայի ճիշտ ծանօթութիւնից, չի համապատասխանում աշխատաւոր մասսաների շահերին։ Սրա հետ միասին համագումարը չի տարակուսում, որ Ս. Յեղ.ի առաջիկայ ընդհ. ժողովը միջոցներ ձեռք կ'առնի մի modus vivendi[98] ստեղծելու երկու կուսակցութիւնների համերաշխ գործունէութեան համար՝ վերացնելով մէջտեղից այն անջրպետը, որ առաջացել է երկու կուսակցութիւնների միջեւ յանձին «Սոց. յեղափոխական հայ կազմակերպութեան», որը ս. յեղ. դպրոցի տեսակէտից ոչ մի սկզբունքային նորութիւն չմտցնելով հայ իրականութեան մէջ, ամենալաւ դէպքում միայն պառակտում կարող է առաջացնել աշխատաւոր մասսաների համերաշխ կազմակերպութեան գործին մէջ։

Սրանից յետոյ ընկ. Արարատսկի տուաւ մի մանրամասն զեկուցումն եւ ծրագիր սոցիալիստ յեղափոխականների ընդհանուր աշխարհահայեցքի հետ ծանօթանալու եւ ուսումնասիրելու նպատակով։

Այս զեկուցումից յետոյ եղան համագումարի փակման առթիւ մի շարք զգացուելից ճառեր եւ ժամը 8-ին նախագահը պաշտօնապէս փակեց համագումարը։

Նախագահ՝ Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Քարտուղար՝ ՀԱՑ-ՄՈՒՍԱ

98.- Լատիներէն՝ փոխադարձ հասկացողութեան։

Փաստ. 1468-57

Գ 12.– ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

(Մշակուած եւ հաստատուած Միութեան առաջին եւ հիմնադիր համագումարում, 1908 թ. Ապրիլին – Ժընեւ)

ՆՊԱՏԱԿ

1. Եւրոպայի Դաշնակցական Ուսանողների Միութեան նպատակն է՝ սերտ կապ հաստատելով դաշնակցական ուսանողական խմբերի եւ անհատների միջեւ. ա) Գրչով ու խօսքով լուսաբանել եւ տարածել Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքները. բ) Նպաստել Կովկասի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանների ուսումնասիրութեան. գ) Հետեւել Եւրոպայի զանազան երկրներում՝ սոցիալիստական տարբեր ուղղութիւններին եւ արտայայտել այդ՝ մեր կուսակցութեան օրգաններում։

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

2. Միութեան անդամակցելու իրաւունք ունին այն ուսանող-ուսանողուհիներն, որոնք ընդունում են ամբողջովին Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը եւ ենթարկւում են Եւր. Դաշն. Ուսանողների Միութեան կանոնագրին։

Ծանօթ.- Ուսանող է նա, որ ուսանում է կամ ուսանելու նպատակով գտնւում է Եւրոպայում։

3. Եւրոպայի Դաշնակ. Ուսանողների Միութեան իւրաքանչիւր անդամ կարող է մասնակցել ուրիշ ոչ-կուսակցական խմբակցութիւնների։

4. Իւրաքանչիւր դաշնակցական ուսանող իւր եկամուտի 2%ը անդամավճար է տալիս. տեղական խմբերին է թողնւում այդ նորման[99] պայմանների համեմատ փոփոխելու իրաւունքը։

Ծանօթ.- Աշխատել պրոգրեսիւ[100] եկամտային տուրքի սկզբունքը կիրառել անդամավճարների գործում։

ԽՈՒՄԲ

5. Իւրաքանչիւր քաղաքի դաշնակցական ուսանողները կազմում են միայն մի խումբ։

Ծանօթ.-

ա) Խմբի անդամների նուազագոյն թիւը երեք է։

բ) Եւրոպայում գտնուող ոչ-ուսանող դաշնակցականներ կարող են մասնակցել տեղական խմբերին վճռական ձայնով խմբակի համաձայնութեամբ.

գ) Խմբի այն անդամները, որոնք աւարտում են իրենց ուսումը եւ մնում նոյն քաղաքում, համարւում են Միութեան անդամ.

դ) Որեւէ խմբակի անդամ օտար քաղաքում ժամանակաւորապէս գտնուած դէպքում կարող է ձայնի իրաւունքով մասնակցել տեղական խմբի նիստերին։

6. Ամէն մի խումբ ունի իւր ներկայացուցիչը, քարտուղարն ու գանձապահը։

7. Խմբերի եկամուտներն՝ անդամավճար, նուէրներ եւ երեկոյթներից եկած հասոյթներ։

8. Խումբը իւր դրամական հաշիւների մասին երեք ամիսը մի անգամ զեկուցում է տալիս Գործադիր Մարմնին ուղարկելով ծախսերից մնացած փողերը։

Ծանօթ.- Խմբի տեղական ծախսը եկամտի մի երրորդից աւելի չպէտք է լինի։

9. Խմբերը իրար եւ Գործադիր Մարմնի հետ պաշտօնական յարաբերութեան մէջ են իրենց ներկայացուցիչների միջոցով։

10. Խմբերն ունենում են բանախօսութիւնների եւ կուսակցական այլ նիւթերի համար պարբերական ժողովներ։

11. Իւրաքանչիւր խումբ պարտաւոր է կիսամեակի վերջին իւր բովանդակ գործունէութեան մասին մանրամասն զեկուցում տալ Գործադիր Մարմնին։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

12. Եւրոպայի Դաշնակցական Ուսանողների բարձրագոյն մարմինը պատգամաւորական ժողովն է, որ տարեկան մի անգամ է գումարւում։

Ծանօթ.-Դաշնակցութեան Ընդհ. Ժողովի եւ ուրիշ ստիպողական դէպքերում արտակարգ համագումար է հրաւիրւում։

13. Մինչեւ 7 անդամ ունեցող խումբը մի պատգա-

99.- Չափանիշը։
100.- Յառաջատուական։

մաւորական ձայնի իրաւունք ունի. այնուհետեւ 11-14-ը 2 ձայն. 18-21-ը 3 ձայն. 25-28-ը 4 ձայն եւ այսպէս շարունակաբար։

14. *Համագումարը օգտւում է կոոպտացիայի*[101] *իրաւունքով։*

Ծանօթ.- Համագումարը կոոպտացիայի իրաւունքը սահմանափակում է իւր ձայների քանակի մի երրորդ մասով։

15. *Միութեան իւրաքանչիւր անդամ կարող է Համագումարին մասնակցել խորհրդակցական ձայնի իրաւունքով։*

Ծանօթ.- Համագումարը խորհրդակցական ձայնով կարող է հրաւիրել նաեւ ոչ-ուսանող դաշնակցական անհատներին։

16. *Ուսանողութեան Համագումարին Արեւմտեան Բիւրոն մասնակցում է համաձայն Դաշն. ընդհ. կանոնագրի 92-րդ յօդուածի։*

17. *Համագումարն օրինաւոր է, երբ ներկայ են պատգամաւորների երկու երրորդը։*

18. *Համագումարի զբաղմունքներն են. ա) մանրամասն զեկուցումներ նախկին Համագումարից մինչեւ ներկան եւ հիմնովին ծանօթութիւն խմբական կեանքի. բ) Առաջարկներ խմբերի եւ անհատների կողմից եւ դրանց քննութիւնը, գ) դասախօսութիւններ, որոնք անմիջական կապ պիտի ունենան Հ. Յ. Դաշնակցութեան հետ պարզելով նրա տեսական կամ գործնական կողմը. դ) Զանազան մարմինների եւ անդամների ընտրութիւն. ե) Միութեան նախահաշիւ։*

19. *Համագումարը որոշում է յաջորդ համագումարի ժամանակը, տեղի որոշումը թողնելով Գործադիր Մարմնին։*

20. *Հրամայական մանդատի*[102] *սկզբունքը չի ընդունւում համաձայն Հ. Յ. Դաշնակցութեան ընդհ. կանոնագրի 101-րդ յօդուածի։*

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

21. *Համագումարն ընտրում է Գործադիր Մարմին բաղկացած երեք անդամից եւ երկու փոխանդամից։*

Ծանօթ.-

ա) Առաջին Գործադիր Մարմնի հետ միանում է նաեւ Խմբագրական Մարմինը մինչեւ եկող համագումարը, ուստի բաղկացած է 5 անդամից եւ երկու փոխանդամից։

բ) Նոյն քաղաքում Գործադիր Մարմնի երկու անդամից աւելի չպէտք է լինի։

գ) Գործադիր Մարմնի անդամ կարող է ընտրուել նաեւ Համագումարի ոչ-պատգամաւորը։

22. *Գործադիր Մարմինը պարտաւոր է հսկել Համագումարի որոշումների ճիշտ իրագործմանը եւ խմբերին գիտակ պահել կուսակցական եւ Միութեան գործերի ընթացքին։*

23. *Գործադիր Մարմինը պահում է Համագումարի արձանագրութիւնները, Միութեան դիւանը եւ կնիքը, գանձում է խմբերի ծախսերից մնացած աւելի գումարները։*

24. *Գործադիր Մարմինը հոգում է Համագումարի նախապատրաստական աշխատանքները, պաշտօնապէս բաց է անում Համագումարը եւ մասնակցում է նրան մի ձայնով։*

25. *Գործադիր Մարմինը մանրամասն զեկուցում է տալիս իւր բովանդակ գործունէութեան մասին Համագումարի առաջ։*

26. *Գործադիր Մարմինը նախահաշուի համաձայն Միութեան գանձարանից անում է իւր ծախսերը ինչպէս եւ հոգում հրատարակութեան գործը։*

27. *Գործադիր Մարմինը Բայոնական ժողովին մասնակցում է մի ձայնով։*

28. *Համագումարից երկու ամիս առաջ Գործադիր Մարմինը իւրաքանչիւր խմբից Համագումարին արուելիք հարցերը հաւաքելով եւ մշակելով ուղարկում է բոլոր խմբերին ի քննութիւն։*

ԿՆԻՔ ԵՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

29. *Միութիւնն ունի իւր կնիքը հետեւեալ մակագրութեամբ. «Եւրոպայի Հ. Յ. Դաշն. Ուսանողների Միութիւն». եւ նոյնը ֆրանսերէն.* "Union des Etudiants Arméniens Daschnaktzakans de l'Europe".

30. *Միութեան կանոնագրի որեւէ կէտի կամ նրա ամբողջութեան փոփոխութիւնը լինում է սովորական կարգով — ձայների պարզ մեծամասնութեամբ։*



Նախագահութիւն՝
ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ
Մ. ՋԱՌԱՖԵԱՆ

Ատենադպիր՝
Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ

101.- Համալրումի, այսինքն յաւելեալ ժողովականներ հրաւիրելու։

102.- «Հրամայական մանդատ»ի սկզբունքով՝ պատգամաւորները պարտաւոր էին քուէարկել համաձայն զիրենք առաքող ժողովի կանխաւ տուած որոշումին, ինչ որ ընդունուած չէր Դաշնակցութեան կանոնագրով, որուն սահմանումով՝ «պատգամաւորները ձայն կու տան իրենց համոզմունքներու համաձայն»։

Փաստ. 1468-91

Գ 13.– ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆԷՆ ՔՐՄՈՅԵԱՆԻՆ

4-6-1908

Սիրելի Քրմս,

Ստացայ զեկուցումը եւ նկատողութիւններդ։

Նկատողութիւններիդ ըստ էութեան չեմ անդրադառնում, որովհետեւ ես որոշեցի ուղարկել զեկուցումը «Վտակին»[103]*, որպէսզի այնտեղից նա տպագրէ ինչ հարկաւոր կը համարէ. այսպէս վարուելուս պատճառն այն է, որ Ալթուն[եան]ի եւ Մարտիրոսի*[104] *ասած ձեւով նստել եւ նոր յօդուած գրելու համար ժամանակ չունեմ, իսկ որոշումները հօ պէտք է վերջապէս լոյս տեսնեն։*

Եթէ «Վտակը» ներկայ ցենզուրական պայմաններում չկարողանայ տպագրել զեկուցման կարեւոր մասերը, այն ժամանակ համաձայն եմ այդ զեկուցումը խմբերին ղրկել կարդալու համար։ Սակայն նկատողութիւններիդ առաջին կէտը, որ իրաւական եւ ընկերական նշանակութիւն ունի՝ չեմ ուզում անուշադիր թողնել։— Ես ամենայն ուրախութեամբ եւ անաչառութեամբ կը յիշէի, «Զանք»ի դերը «Միութեան» ծագման պատմութեան մէջ, եթէ «Զանքը» այդպիսի դեր կատարած էր եղել. չէ՞ որ Բերլինի եւ Բերն-Լօզանի ընկերների կատարած դերը յիշել եմ։ «Զանքը» ոչ ամբողջութեամբ եւ ոչ ի դէմ իւր այս կամ ընկերոջ մասնակցութիւն չէ ունեցել. որքան ինձ յայտնի է, այս գործում, միայն Մալումեանը եւ ես ցանկացել ենք «Զանքին» այս գործի գլուխը քաշել, որ դժբախտաբար չի յաջողուել։

Դառնում եմ այժմ Ալթուն[եան]ի եւ Մարտիրոսի ղրկած շրջաբերականին. ես վճռականապէս հակառակ եմ այդպիսի մի շրջաբերական հրատարակելուն։ Ամիսների լուութիւնից յետոյ վեր կենալ ապլոմբով[105] *մի շրջաբերական հրատարակել եւ այդ շրջաբերականում կրկնել այն ինչ որ կանոնագրի մէջ է ասուած՝ ես չգիտէի սա ինչի նման է։ Այս շրջաբերականը ուղղակի ծիծաղելի կը դարձնէ Գործադիր մարմինը, որի դէմ, ի դէպս, արդէն դժգոհութիւններ լսւում են։ Գոնէ այնտեղ մի որեւէ նոր բան ասուէր, որ կանոնագրի մէջ չէ ասուած, գոնէ պարապմունքների մի ծրագիր, մի նոր հրահանգ լինէր...*

Միանգամայն համաձայն եմ քեզ հետ, որ պէտք է կոչ ուղղել այսպէս ասած համակրող դաշնակցականներին եւ ընդհանրապէս Եւրոպայի հայ ուսանողութեանը, եւ խնդրում եմ, որ ինչպէս որ մտադիր էլ ես, այս բանը յայտնես Ալթուն[եան]ին եւ Մարտիրոսին։

IV *Ընդ. ժողովին վերաբերեալ կոչը ի՞նչ եղաւ։ Խնդրում եմ այնտեղ, որ Մարտիրոսը գրի այդ կոչը ինչպէս խոստացել է. Զառաֆեանը ճիշտ է ասում, որ պէտք է Համագումարի որոշումները յարգենք։*

Թէպէտ ես եւս համաձայն չեմ Ալթունի եւ Մարտիրոսի ղրկած կոչին, սակայն ինչ խօսք, որ դու այն պէտք է տպես, քանի որ 4 հոգու համաձայնութիւնը կայ արդէն։

Խմբագրատանը խնդրել էի, որ «Pro Armenia»-ի այս տարուայ համարները ղրկեն ինձ. խնդրեմ այս բանը յիշեցրու Տիար Անտոնին[105ա] *ընդունեն եւ իմ կողմից խնդրիր նրան ղրկել խնդրածս համարները։ Նրան շատ կը բարեւես նաեւ իմ կողմից։*

Բարեւներով
ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

103.- Թիֆլիսի Դաշնակցութեան կիսապաշտօնական թերթը «Յառաջ»ն էր, որ 1906-1909 տարիներում ցարական գրաքննութեան կողմէ խափանուեցաւ բազմաթիւ անգամներ. փոխարէնը, անուն եւ խմբագիր փոխելով, թերթը լոյս տեսաւ աւելի քան 10 տարբեր անուններով, որոնցմէ մէկն էր «Վտակ»ը։

104.- Յարութիւնեան Մարտիրոս, ինչպէս եւ գրութեան մէջ յիշուած միւս անունները՝ Քրմոյեան, Ալթունեան, Զառաֆեան Ա. Համագումարի կողմէ ընտրուած Գործադիր մարմնի անդամներ են։

105.- Ինքնահաւանութեամբ, պարծենկոտութեամբ։

105ա.- Տիար Անտոն կամ Անտոն Գոշ՝ դիւանապետն էր «Դրօշակ»ի խմբագրութեան, իսկական անունով՝ Պոյաճեան Անտոն (1849-1927)։

Փաստ. 1468-98

Գ 14.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՄԲԵՐԻՆ

Ընկերներ,

Արդէն անցել է 2 ամիս մեր միութեան համագումարից, ուր մենք կանոնադրութիւն կազմեցինք եւ առաջիկայ գործունէութեան որոշումներ կայացրինք: Գործադիր Մարմինն ի հարկէ համոզուած է, որ պատգամաւորը ընկերները վերադառնալով արդէն զեկուցել են տեղական ընկերներին Համագումարի զբաղմունքների մասին: Անշուշտ արդէն խմբերը կազմակերպ-ուել են կանոնադրութեան յօդ. 6-ի պահանջման համեմատ: Եթէ կան տեղեր, ուր ընկերները դեռ չեն կազմակերպուել, պարտք ենք համարում յիշեցնել, որ կազմակերպուեն եւ համաձայն կանոնադրութեան, որը արդէն տպագրուել է եւ ցրուած խմբերին, վարեն խմբերի գործերը:

Գործադիր Մարմինս հրաւիրում է ընկերների յատուկ ուշադրութիւնը կանոնագրի յօդ. 10ղի վրայ, որի համեմատ խմբերը պիտի պարբերական գումարումներ ունենան եւ այդ գումարումների ժամանակ նաեւ դասախօսութիւններ Հ. Յ. Դաշն. ծրագրային եւ գործելակերպային խնդիրների շուրջը: Գործադիր Մարմինս աւելորդ է համարում նորից շեշտել դասախօսութիւնների կարեւորութիւնը, քանի որ մեր Միութեան բուն նպատակը կազմող կէտերը ամէնից լաւ իրագործում կը գտնեն դասախօսութիւնների եւ նրանց շուրջը եղած մտքերի փոխանակութեան միջոցաւ: Գործադիր Մարմինս պարտք է համարում ընկերներին յիշեցնել համագումարի այն որոշումը, որի համեմատ պիտի շրջիկ բանախօսներ ուղարկուեն զանազան քաղաքներ: Խմբերի մէջ կարդացուած բանախօսութիւններից նրանք որոնք իրենց առաւելութիւններով այլ խմբերի մէջ էլ արժանի կը համարուեն կարդացուելու պէտք է խմբերի կողմից առաջարկուեն Գործ. Մարմնին. նոյնպիսի առաջարկութիւններ կարող են լինել նաեւ անհատ ընկերների կողմից: Ահա այն բանախօսութիւններից է որ Գործադիրը կ'ընտրէ յարմարագոյնները եւ նրանց հեղինակներին միջոց կը տայ շրջելու զանազան քաղաքներ բանախօսելու: Խնդրում ենք արագօրէն գործադրել այս իրաւունքը եւ այդպիսով Գործ. Մ.ին էլ միջոց տալ խմբերին միշտ թարմ նիւթ մատակարարելու: Բացի այդ, կարեւոր է մօտ քաղաքների խմբերը իրար մէջ բանախօսութիւններ փոխանակեն:

Ահա այս մի քանի կէտերի վրայ հրաւիրելով ընկերների ուշադրութիւնը Գ. Մ.ը խնդրում է իրեն տեղեկացնել այս երկու ամսուայ մէջ կատարուած գործունէութեան մասին, որպէսզի ինքն էլ իր կողմից կարողանայ գոհացում տալ կանոնագրի յօդ. 22-ի պահանջներին:

Ցանկանալով ընկերներին յաջողութիւն,
ընկերական բարեւներով՝

ԵՒՐ. Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ժընեւ, 11 Յունիս 1908

UNION des ÉTUDIANTS ARMÉNIENS DASCHNAKTZAKANS DE L'EUROPE 1908

Փաստ. 1468-106

Գ 15.– ԵՒՐՈՊ. Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ Ի ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

3-ին Յուլիսի 1908, Լօզան

Լօզանի Դ. Ուս. խմբակը Յունիս ամսից արդէն կազմակերպուած է. անդամների թիւն առ այժմ 13 է (մէկ տիկին, մէկ օրիորդ եւ 11 տղաներ). ունի իր կանոնաւոր ժողովներն, որ տեղի են ունենում շաբաթը մէկ անգամ: Պարապմունքի նիւթերը եղած են պատգամաւորի զեկուցումը Եւր. Հ. Դ. Ուս. Համագումարի մասին. Դաշնակցութեան դերն ու անհրաժեշտութիւնը (թռուցիկ ակնարկ). Յեղափոխութեան սկզբնաւորութիւնը մեր կեանքում (պատմական ակնարկ). խորհրդակցական ժողով Արեւմտեան Բիւրոյի կողմից առաջարկուած օրակարգի մասին. Մարքսիստական պատմահայեցողութիւնը (վերջինս հրապարակական): Ամսավճարները սկսուել են նոյն ամսից եւ առ այժմ հաւաքուած է 12 ֆր. 50 ստ.:

Խմբի կողմից պաշտօնական անձինք ընտրուած են՝

Ներկայացուցիչ՝ Արշակ Ղազարեան: Գանձապահ՝ Հր. Լուսինեան: Քարտուղար՝ Գարեգին Դիւրգերեան: Խումբն ունենալու է իր ժողովների համառօտ արձանագրութիւնը:

Ընկերական բարեւներով՝
Ա. ՂԱԶԱՐԵԱՆ

Հասցէ՝ A. Gazarian, Route d'Echalens 78 II, Lausanne

Փաստ. 1468-58բ

Գ 16.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԻՆԽԷՆԻ ԴԱՇՆ. ՈՒՍ. ԽՄԲԱԿԻ

(Ամառուայ սեմեստր)

1908 թ. Ապրիլ 3-13-ին Ժընեւում կայացած Հ.Յ.Դ. Ուսանողական համագումարին Միւնխէնի խմբակն եւս մասնակցեց յանձին իր մէկ պատգամաւորի, ուղարկուած 6 անդամի կողմից: Պատգամաւորի վերադարձից յետոյ, խմբակը ունեցել է շաբթեկան մէկ անգամ ժողովներ, որոնց ընթացքում ծանօթացել է (քննութեան են առել) Ժընեւի համագումարի որոշումներին, կանոնադրութեան, ռեֆերատներին եւ չօշափուած ծրագրային հարցերի շուրջ տեղի ունեցած մտքերի փոխանակութեան, ծրագիր մշակել իր պարապմունքների համար եւ զբաղուել մի շարք ծրագրային-սկզբունքային հարցերի լուսաբանութեամբ:

Բացի այդ խմբակը կազմակերպել է Ժընեւի համագումարի շուրջը մի ժողով՝ նպատակ ունենալով տեղւոյն չէզոք տարրերին իր կողմը գրաւել: Այդ միեւնոյն ժամանակ մի զեկուցում է եղել եւ այն մասին՝ թէ ինչպէս է հասկացել համագումարը ուսանողութեան դերը կուսակցութեան մէջ (Ընկեր պատգամաւորը կարդացել է այս ժողովում մի բանախօսութիւն «Ուսանողութեան դերը կուսակցութեան մէջ»):

Օգտուելով Բազէլի ուսանող ընկեր Մուսայէլեանի ներկայութիւնից, խմբակը կազմակերպել է նաեւ մի գաղութային բանախօսութիւն, ուր ընկերը կարդացել է «Պետութեան եւ իրաւունքի մասին» ռեֆերատը: Դ.եան խմբակի երկրորդ ցանկութիւնը կազմել մի հրապարակային ժողով եւս ուր ընկերը կարդար «Ագրարական դրութիւնը Կովկասում»՝ չիրագործուեցաւ. սակայն նոյն դասախօսութիւնը կարդաց խմբական ժողովում մի քանի հիւրերի ներկայութեամբ:

Խմբակի անդամների թիւը սոյն սեմեստրի ընթացքում 9-ի է հասել (Տիգրան Ունանեան, Լեւոն Մելիքեան, Նազարէթ Սերովբեան, Պետրոս Տէր-Պետրոսեան, Լեւոն Հազարապետեան, Անտոն Ղորղանեան, Մ. Քրիշչեան, Տիկ. Միրիմանեան եւ Տիկ. Ալիբէգեան):

Դրամականը հետեւեալ պատկերն է ունեցել. մուտք 70 մարկ. ծախք՝49,75 (44 մարկ պատգամաւորի, 5,75 մանր ծախքերի): Անդամավճարը ընդհանուր առմամբ 2% է բայց ունինք նաեւ այնպիսի անդամ որ ոչինչ վճարել չի կարող: Յուլիս ամսից դրամականն եւս կ'ընթանայ ըստ կանոնադրութեան:

Գանձարանում մնացած 20 մարկը ուղարկում ենք կենտրոնական գանձարանիդ:

Յ. Գ.- Շնորհակալութեամբ ստացել ենք մինչեւ այժմ «Վտակ»ի մի N.: Սակայն որովհետեւ այժմ գաղութում ստացւում է, այդ մէկ N-ը մենք դնում ենք Ձեր կամ խմբագրութեան տրամադրութեան տակ:

Նախագահ՝ ՏԻԳՐԱՆ ՈՒՆԱՆԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՔՐԻՇՉԵԱՆ

1908 թ. Յուլ. 10
Միւնխէն

Դրամականի հաշուետուութիւնը վերաբերում է Յունուարից սկսած մինչեւ Յուլիս ամսի սկիզբը եղած ժամանակամիջոցին:

ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (1909)

ԲԱԺԻՆ Դ.

Բաժինը յատկացուած է Եւրոպայի Հ. Յ. Դաշնակցական ուս. միութեան երկրորդ համագումարին (1909 թ. Ապրիլ, Լայպցիկ, Գերմանիա) եւ 1909-1910 տարիներու գործունէութեան: Ներկայացուած փաստաթուղթերու կարեւոր մէկ մասը քաղուած է միութեան պաշտօնաթերթ «Ուսանող»էն, որուն առաջին համարը լոյս տեսած էր արդէն (1909 թ. Փետրուար) համագումարի բացումէն առաջ*:

Հրատարակուած տեղեկագրէն ի յայտ կու գայ, որ միութեան ստեղծումը, ինչպէս նաեւ «Ուսանող» պարբերագրքի հրատարակութիւնը ինչ մեծ հետաքրքրութիւն եւ ոգեւորութիւն առաջ բերած են ընդհանրապէս կուսակցական, եւ մասնաւորապէս ուսանողական շրջանակներուն մէջ, մղելով վերջիններս խանդավառ աշխատանքի, թէ ընկերային ու տեսական հարցերու ուսումնասիրութեան մէջ, եւ թէ գործնական կեանքի պահանջներուն ընդառաջ: Այս իմաստով հետաքրքրական է տեսնել միութեան մասնաճիւղերուն մէջ կարդացուած դասախօսութեանց ցանկը, նուիրուած եւ տեսական, եւ այժմէական խնդիրներու քննարկման:

Ուշադրութեան արժանի է 1470-9 համարը կրող փաստաթուղթը.– *«Տեղեկագիր Լօզանում կայացած հայ ուս. միութեան VII համագումարի, 1910 Յունուար 2–8:»*

Հարցը կը վերաբերի արդէն 5 տարիներէ ի վեր գործելէ դադրած «Եւրոպայի հայ ուս. միութեան», որ մեծ դժուարութեամբ վերջին համագումար մը կազմակերպելով՝ վերջնական լուծարքի վճիռ կը կայացնէ, հաստատելով որ «Միութիւնը փաստօրէն դադրել է գոյութիւն ունենալէ» եւ «որ Ե. Հ. ուս. միութեան ճնշող մեծամասնութիւնը բացարձակօրէն բացասական վերաբերում ունի դէպի Միութեան վերակենդանացումը»: Կ'որոշուի նոյնպէս միութեան դրամական ունեցուածքին ¾-ը յատկացնել Տարօնի տարրական դպրոցներուն, ¼-ը «Ուսանող միակ ուսանողական թերթին», կնիքը պահ տալ «Դրօշակ»ի արխիւը եւ գոյքերը ցրուել գրադարան-ընթերցարաններուն:

Բաժինը կը փակուի Սիմոն Վրացեանի երկու գրութիւններով, ուր կը խօսուի Պետերբուրգի ուսանողութեան կողմէ՝ Եղիշէ Թոփչեանի յիշատակին նուիրուած «Պսակ» ժողովածուի հրատարակութեան մասին:

*) 1909-1914 տարիներու ընթացքին, տպարան ու քաղաք փոխելով, լոյս տեսած են «Ուսանող»ի 8 համարներ (ընդհանուր 1012 էջերով). Փարիզ՝ թիւ 1, 2 եւ 5, Ժընեւ՝ թիւ 3, 4, 6 եւ 8, Պոլիս՝ թիւ 7:

Դ 1.– «ՈՒՍԱՆՈՂ»Ի ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. Միութեան Ա. Համագումարի որոշման համաձայն, 1909 թուականի սկիզբներուն լոյս տեսած է միութեան պաշտօնական պարբերագիրք «Ուսանող»ի Ա. թիւը:

Ստորեւ առաջին խմբագրականը, ուր կը պարզաբանուին «Ուսանող»ի հետապնդելիք նպատակները եւ կը բնորոշուի անոր բովանդակութեան ստանալիք ուղղութիւնը:

Կը յաջորդէ նոյն համարէն վերցուած «Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. Միութեան Ա. Համագումարից» խորագրով յօդուածը, ուր կը ներկայացուին քաղուածքներ այդ համագումարի հիմնական որոշումներէն:



ՈՒՍԱՆՈՂ

ՕՐԳԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Մեր Նպատակն ու Ծրագիրը . . . . . Խմբագրութիւն.
2. Ս. Ընկեր. մեզմէ . . . . . Ա. Ճիրակոսեան.
3. Դաշնակցութիւնը եւ կրթ. գործը . . . . . Ա. Տ.
4. Տարրական դպրոցական բնաւորութեան հարցը . . . . . Ա. Ա.
5. Ուրիշներու տեսակցութիւնը . . . . . Ս. Ե.
6. Հանդուգնութիւն առուստաներեն . . . . . Ռ. Ա.
7. Մեր կովկասեան գիրքը . . . . . Ա. Ա.
8. Ընտրական պարտականութիւնը . . . . . Ռ. Ա.
9. Տարտամութիւն . . . . . Դ. Ա.

ՓԱՐԻԶ — 1909

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. Միութեան առաջին Համագումարի որոշմամբ ձեռնարկելով «Ուսանող» հանդիսի հրատարակութեան, մենք հարկաւոր ենք համարում, ընդունուած սովորութեան համաձայն, սոյն առաջին համարում պարզել ընթերցողների առաջ մեր հրատարակութեան նպատակն ու ծրագիրը։

Լինելով քաղաքական հողի վրայ առաջացած մի կազմակերպութեան օրգան «Ուսանող»ը կոչուած է նախ եւ առաջ այդ կազմակերպութեան նպատակներին ծառայելու։ Այդ նպատակները, որոնք ձեւակերպուած են Միութեան առաջին համագումարում, հետեւեալ կէտերի մէջ են ամփոփուած.—

1. Գրչով ու խօսքով լուսաբանել եւ տարածել Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքները։

2. Նպաստել Կովկասի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական պայմանների ուսումնասիրութեան։

3. Հետեւել Եւրոպայի զանազան երկրներում սոցիալիստական տարբեր ուղղութիւններին եւ արտայայտել այդ մեր կուսակցութեան օրգաններում։

Այսպէս ուրեմն համաձայն Միութեան առաջադրած նպատակներին, «Ուսանող»ի առաջին գործը պիտի լինի գրչով լուսաբանել եւ տարածել Դաշնակցութեան սկզբունքները։ Սակայն «Ուսանող»ի այդ լուսաբանութիւնները, համաձայն համագումարի որոշման, պաշտօնական բնոյթ չեն կրում, հետեւաբար ամէն մի ընկեր կարող է ազատ կերպով արտայայտել իր կարծիքն ու տեսակէտը Դաշնակցութեան տեսական եւ գործնական կեանքի այլեւայլ խնդիրների մասին։ Այսպիսով «Ուսանող»ի էջերում քննադատական մտքի ազատ ու անկաշկանդ կիրառումը ապահովելով,— որ միակ մի-

ջոցն է կուսակցութեան ինտելիգենցիայի մէջ նկատուող տարաձայնութիւնները փոխադարձաբար հասկանալու եւ հարթելու համար — Համագումարը միեւնոյն ժամանակ աչքի առաջ է ունեցել, որ Միութեան օրգանը արտայայտելով կուսակցութեան մէջ եղած տարաձայնութիւնները շատ դէպքերում կարող է այն թիւրիմացութիւնը առաջ բերել, որ անհատ ընկերների կարծիքները իբրեւ կուսակցութեան կարծիքը կ'ընդունուին։ Նման թիւրիմացութիւններից միանգամայն խուսափելու համար Համագումարը որոշել է, որ Միութեան օրգանը Կուսակցութեան պաշտօնական հրատարակութիւններից չէ եւ նրա պատասխանատուութիւնը չէ ընկնում ո՛չ Կուսակցութեան եւ ոչ էլ նրա որեւէ պաշտօնական մարմնի վրայ։— Հարկաւոր համարելով «Ուսանող»ի վիճաբանական բնոյթը չեշտել մեր նպատակների հէնց առաջին կէտում, մենք անցնում ենք երկրորդ կէտին։

Տարիներից ի վեր մեր կուսակցութեան մէջ կարիք է զգացւում մեր գործունէութեան միջավայրի, գլխաւորապէս Տաճկաստանի, ներքին կեանքի պայմանների մասին մի հիմնական ուսումնասիրութիւն ունենալու։ Այն ժամանակ, երբ Համագումարը իր նպատակի մէջ այս կէտը մտցնելով կամենում էր Կուսակցութեան այդ հրամայական կարիքին ընդառաջ գնալ, Տաճկաստանի ուսումնասիրութեան գրեթէ միակ աղբիւրը եւրոպացի ճանապարհորդների եւ միսիոնարների տեղեկութիւններն էին կազմում, որովհետեւ երկիրը անձամբ ուսումնասիրելու հնարաւորութիւն չկար։ Այժմ՝ չնորհիւ բռնապետական կարգերի տապալման այդ հնարաւորութիւնը ստեղծուել է, բայց եւ այնպէս վերոյիշեալ օտար աղբիւրների ուսումնասիրութիւնը իր արժէքը չի կորցրել, որովհետեւ դրանք բաւական շատ նիւթ են պարունակում իրենց մէջ որպէսզի առանց այլեւայլութեան կարելի լինէր դրանց մի կողմը թողնել։ Բացի դրանից, մեր գործունէութեան միջավայրի զանազան գաւառակները անձնապէս ուսումնասիրելու հնարաւորութիւն ունեցող մարդկանց համար էլ հարկաւոր է որոշ ուղեցոյց, որոշ մեթոդ, որ իրենք այդ ուսումնասիրողները դժուարութեամբ կարող են ձեռք բերել։— Ահա այս նկատումներով «Ուսանող»ը իր էջերը լայն բաց է անում բոլոր այդ կարգի ուսումնասիրութիւնների համար։ «Ուսանող»ը մի առանձին վստահութեամբ կարող է ձեռք զարկել այս խնդրին, որովհետեւ մեր հասարակութեան զանազան տարրերից ոչ ոք այնքան դիւրութիւն չունի այս խնդրով զբաղուելու, որքան Եւրոպայի Ուսանողութիւնը։

Համաձայն Միութեան նպատակի երրորդ կէտին՝ «Ուսանող»ը լուրջ ուշադրութիւն է նուիրելու Եւրոպայի սոցիալիստական եւ բանուորական շարժման տեսութեանը։ Եւրոպայի սոցիալիստական բանակը իւր այսօրուայ պատկառելի կազմակերպութեամբ եւ երկիւղ ազդող ուժով մի օրում կամ տարում չէ ստեղծուել, այլ տասնեակ տարիների խարխափումների, օրօրումների եւ սայթաքումների բովից է անցել։ Եւ այսօր նրա ամէն մի կատարած քայլի, ամէն մի վճռի մէջ տարիների փորձառութիւնն է խօսում։ Հ. Ց. Դաշնակցութիւնը, որ մի յետամնաց երկրի եւ ժողովրդի յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնն է շատ բան ունի սովորելու եւրոպացի մեր ընկերներից։ Որքան սխալ քայլերից եւ անիմաստ վճիռներից խուսափած կը լինէինք մենք, եթէ միայն ծանօթ լինելով եւրոպական սոցիալիստական շարժման հետ, չանէինք այն սխալները, ինչ որ արել են մեր այնտեղի ընկերները։ Ահա կուսակցական գործունէութեան այս էկոնոմիայի եւ առհասարակ սոցիալիստական շարժման ներկան ու անցեալը ճանաչելու անհրաժեշտութեան տեսակէտից «Ուսանող»ը պիտի աշխատի հայրենիքում գործող մեր ընկերներին իրազեկ պահել եւրոպական սոցիալիստական եւ բանուորական շարժման եւ այդպիսով նրանց նիւթ տալ իրենց կուսակցական փորձառութիւնը զարգացնելու համար։

Ահա ընդհանուր գծերով այն խնդիրները, որ առաջադրել է իրեն «Ուսանող»ը։ Ի հարկէ վերոյիշեալ կէտերով «Ուսանող»ի բովանդակութիւնը չէ սպառւում։ Մեր թերթում կը լինի մամուլի տեսութիւն, կուսակցական կեանքի տեսութիւն, մատենախօսութիւն եւայլն, որոնք հետզհետէ առաջ կը գան։

Կարեւոր ենք համարում յիշել, որ «Ուսանող»ը մինչեւ Միութեան երկրորդ Համագումարը հրատարակուելու է իբրեւ ոչ-պարբերական հանդէս։ մինչեւ որ երկրորդ Համագումարը կը որոշի նրա պատասխանատու խմբագրական կազմը եւ հրատարակութեան վերջնական ձեւը։

«Ուսանող»ի բնորոշման համար վերեւ առաջ բերածը բաւական համարելով, մենք մեզ վրայ դրած պարտականութիւնը բարեխիղճօրէն կատարելու համար՝ խնդրում ենք բոլոր ուսանող եւ ոչ-ուսանող ընկերներին իրենց գրական եւ նիւթական օժանդակութեամբ, ինչպէս եւ խմբագրական եւ հրատարակչական աշխատանքներին մասնակցելով նեցուկ լինել այս նոր ձեռնարկին։ Մենք լիայոյս ենք, որ յատկապէս Ռուսաստանի եւ Տաճկաստանի Դաշնակցական ուսանող ընկերները առանձնապէս շահագրգռուած լինելով «Ուսանող»ի յարատեւութեամբ եւ բարգաւաճմամբ, չեն յապաղի իրենց կենդանի հետաքրքրութիւնը եւ եռանդուն աջակցութիւնը ցոյց տալ մեր այս ընդհանուր գործին։

ԽՄԲ. ՄԱՐՄԻՆ

Դ 2.– ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ

Շուտով լրանում է մի տարին այն օրից, երբ Եւրոպայի դաշնակցական ուսանողների Ա. Համագումարը բացուեց Ժընեւում։ Այն խմբերը, որոնց ուղարկած պատգամաւորները Ժընեւի Համագումարում Միութեան ապագայ կեանքն էին նախագծում, հատ հատ ընկերներից էին բաղկացած, առանց խմբական կեանքի, առանց ներքին կապերի։ Այն ժամանակ համալսարանական համարեա իւրաքանչիւր քաղաքում ընկերներ ունէինք, բայց ոչ մի խումբ։ նիւթը կար, բայց առանց ձեւի։

Պատկերն այժմ փոխուած է, Համագումարում մշակուած կանոնագրի համաձայն Համագումարից անմիջապէս յետոյ ընկեր պատգամաւորները շտապում են ամէն մէկն իր քաղաքը ու կազմակերպում են տեղական խմբերը այն բոլոր ֆունկցիաներով[88], յատկանիշներով, որ նախատեսուած է կանոնագրի մէջ։ Այդպիսով առաջ են գալիս Եւրոպայի զանազան երկիրներում եւ զանազան քաղաքներում կանոնաւոր կազմակերպուած խմբեր որոնց ներքին բովանդակութիւնը, խմբական կեանքը ընթացել է համաձայն կանոնագրի սահմանների։

Ի հարկէ մեր նպատակն է ամբողջ Եւրոպայում — նրա բոլոր երկիրների դաշնակցական ուսանողներին համախմբել մի Միութեան շուրջը. դա մեզ չեռ չի յաջողուել լիովին, մասամբ այն պատճառով, որ խիստ դժուար էր մեզ համար իմանալ օրինակ Իտալիայի, Անգլիայի, Հոլանտայի... դաշնակցական ուսանողների հասցէները, մեզ յայտնի չէ նոյնիսկ, այդ երկիրներում ունինք ընկերներ թէ ոչ. յամենայն դէպս մեր Միութեան երկրորդ շրջանում անշուշտ կ'ամբողջանայ, կը լրանայ նրա կազմը համապատասխան զանազան երկիրներում տարածուած դաշնակցական ուսանողների։

Մեզ համար առանձնապէս հետաքրքրութիւն ունէր Ռուսաստանի դաշն. ուսանողների վերաբերմունքը. ինչ խօսք որ մենք բուռն ցանկութիւն ունէինք տեսնել մեր ընկերներին նաեւ այդ երկրում խմբուած մի Միութեան շուրջը այն գեղեցիկ հեռանկարով, թէ մի օր այդ երկու միութիւններից — Եւրոպայի եւ Ռուսաստանի դաշնակցական ուսանողների Միութիւնից կը ծագի ընդհանուր մի կապ բոլոր դաշ. ուսանողների միջեւ։ Այդ ցանկութեան արդիւնքն էր Ա. Համագումարի հեռեւեալ բանաձեւը, որին յանգան պատգամաւորները, լսելով Ռուսաստանի դաշ. ուսանողների գրութիւնը.

«Եւրոպայի դաշ. ուսանողների Համագումարը լսելով, որ Ռուսաստանի դաշ. ուսանողները որոշել են մօտիկ ապագայում մի կոնֆերանս գումարել եւ Ռուսաստանի դաշ. ուսանողների միութիւն հիմնել՝ ուղարկում է Ռուսաստանի դաշ. ուսանողներին իւր ընկերական ողջոյնները եւ լաւագոյն ցանկութիւնները՝ մտադրուած ձեռնարկի յաջող եւ արդիւնաւոր ելքի համար։

«Համագումարը չէ տարակուսում այն մասին, որ Ռուսաստանի դաշ. ուսանողների Միութիւնը կազմուելուց յետոյ՝ Եւրոպայի եւ Ռուսաստանի դաշ. ուսանողների յարաբերութիւնը աւելի՛ սերտ եւ օրգանական բնաւորութիւն կ'ունենայ, որով կուսակցական կեանքի այն առանձնակի երեւոյթները, որոնք արտայայտւում են դաշ. ուսանողութեան այդ երկու հատուածներում, կը միանան միեւնոյն հոսանքի մէջ՝ մեր կուսակցութեան զարգացման վրայ աւելի շօշափելի, աւելի բեղմնաւոր կերպով ազդելու համար»։

Ոչ միայն դաշնակցական ուսանողների համերաշխութիւնն ու միութիւնն էր ծրագրում Ա. Համագումարը, այլ եւ երկար խորհրդածութեան նիւթ էր դարձընում օտար սերունդների հետ եթէ ոչ նոյնպիսի միութիւն, գոնէ ներքին մտաւոր մօտիկ կապ հաստատել, ապագայի քայլերն այդ ուղղութեամբ թեթեւացնելու եւ հեշտացնելու համար։

Ահա այդ էր հիմքը, որ Ա. Համագումարը առանց վիճաբանութեան ընդունեց եւ որոշեց.

«Յանձնարարել բոլոր դաշ. ուսանողական խմբերին սերտ կապ հաստատել վերոյիշեալ ազգերին պատկանող ուսանողական կազմակերպութիւնների հետ, իսկ որտեղ այդպիսի կազմակերպութիւններ չկան՝ ձգտել առաջ բերել եւ նրանց մանրամասնօրէն ծանօթացնել Դաշնակցութեան ծրագրի եւ գործունէութեան հետ։ Համագումարը գտնում է, որ այսպիսի կապերի եւ ծանօթութիւնների միջոցով վերոյիշեալ օտարազգի ուսանող երիտասարդութեան մէջ կ'արծարծուի եւ կ'ամրապնդի ազգերի համերաշխ գործունէութեան գաղափարը, որ անշուշտ իւր բարերար ազդեցութիւնը կ'ունենայ այդ ուսանողների քաղաքական ինքնորոշման գործում ապագայում, եւ ընդհանրապէս մի թեթեւ զարկ տուած կը լինի միջազգային ուժերով բռնապետութիւնների դէմ մաքառելու գաղափարին, որը այնքան յամառութեամբ առաջ է մղում այժմ մեր կուսակցութիւնը»։

Համերաշխութեան ու ընկերական միացեալ ուժերով գործելու ջերմ գաղափարով ներշնչուած մեր Առաջին Համագումարի պատգամաւորները այլ կերպ չէին կարող նայել Փարիզի ընդդիմադիր տարրերի վերջին կոնգրէսի վրայ, քան միացեալ ուժերով գաղափարական կռուի մտնելու մի ուժգին փորձի վրայ. այդ մտքով

այնտեղ առաջարկուեց ու ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

«Եւրոպայի դաշ. ուսանողների Միութեան Համագումարը իւր խորհրդածութեան նիւթ դարձնելով նորերս Փարիզում տեղի ունեցած Թուրքիայում գործող ընդդիմադիր ոյժերի կոնգրէսն յայտնում է իւր համակրանքը բռնապետութեան դէմ կռուող այդ կոնգրէսին եւ ցանկանում, որ նրան մասնակցող կազմակերպութիւնները գիտակցաբար, համերաշխ եւ դեմոկրատիկ ոգով դիմեն սուլթանիզմի տակ տառապող ժողովրդների ազատագրութեան գործին, միացեալ ոյժերով խորտակեն Օսմանեան բոլոր ազգերի վրայ ծանրացող սուլթանական բաստիլեան»:

Այս ընդհանուր ցանկութիւնների եւ ձգտումների մէջ անշուշտ աննկատելի չէր կարող մնալ այսպէս կոչուած «Երիտասարդ դաշնակցականների», «Անջատականների» եւ դրանց հետ անխզելի կապուած սոցիալ-յեղափոխական կուսակցութեան վերաբերմունքը. այդ նիւթը, ինչպէս եւ պէտք էր սպասել, ընկերների շրջանում թէ մասնաւորապէս եւ թէ համագումարի մի քանի նիստերում տաք հետաքրքրութեան եւ վիճաբանութիւնների առարկայ եղաւ, որի եզրակացութիւնը հետեւեալ բանաձեւը եղաւ.

«Ե. Դ. Ուս. Միութեան համագումարը քննութեան առնելով Սոց. Յեղ. կուսակցութեան բռնած դիրքը դէպի Դաշնակցութիւնը եւ Դաշնակցութիւնից անջատուած նախկին «երիտասարդ դաշնակցական»ները եւ ի նկատի ունենալով.

1.- «Որ նոյնիսկ այն ժամանակ, երբ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը կենտրոնացած էր միմիայն Տաճկահայաստանում Սոց. Յեղ. կուսակցութիւնը եւ Դաշնակցութիւնը բարեկամական յարաբերութեան մէջ են եղել, քանի որ նրանց մէջ սկզբունքային տարաձայնութիւն չէ եղել.

2.- «Որ այդ երկու կուսակցութիւնները յաճախ իրար բարոյապէս աջակցելու առիթներն են ունեցել Կովկասում, եւ Սոց. Յեղ. կուսակցութիւնը շատ անգամ իր պաշտօնական օրգանի էջերում Դաշնակցութեան սկզբունքները Սոց.-դեմոկրատական յարձակումների դէմ պաշտպանելու դերումն է դուրս եկել:

3.- «Որ չնայած այդ բոլորին Սոց. Յեղափոխական կուսակցութիւնը, Դաշնակցութիւնից առանց սկզբունքային լուրջ հիմունքների բաժանուած եւ դէպի Դաշնակցութիւնը թշնամական դիրք բռնած անհատների ու խմբերի վերջերս առաջացած առանձնացած գործունէութեան սանկցիա է տուել Սոց. Յեղ. կուսակցութեան դրօշի տակ:

4.- «Այլեւ ծանօթանալով այն մոտիւներին որոնցով պայմանաւորուած է եղել այսպիսի մի քայլ Սոց. Յեղ. կուսակցութեան կողմից՝

«Գտնում է, որ Սոց. Յեղ. կուսակցութեան բռնած դիրքը այս խնդրում չէ բխում հայկական իրականութեան եւ Դաշնակցութեան կրած եւոլիւցիայի ճշգրիտ ծանօթութիւնից եւ չի համապատասխանում աշխատաւոր մասսաների դասակարգային գործի շահերին:

«Սրա հետ միասին համագումարը յոյս է տածում, որ Սոց. Յեղ. կուսակցութեան առաջիկայ ընդհ. ժողովը միջոցներ ձեռք կ'առնի հաստատելու modus vivendi[98] երկու կուսակցութիւնների համերաշխ գործունէութեան համար՝ վերացնելով մէջտեղից այն անջրպետը, որ առաջացել է երկու կուսակցութիւնների մէջ յանձին *«Սոց. Յեղ. հայ կազմակերպութեան»*, որը սոցիալիստ յեղափոխական դպրոցի տեսակէտից ոչ մի սկզբունքային նորութիւն չի մտցնելով հայ իրականութեան մէջ՝ ամենալաւ դէպքում կարող է շփոթ առաջացնել աշխատաւոր մասսաների գիտակցութեան մէջ եւ նրանց համերաշխ կազմակերպութեան գործը խանգարել»:

Գլխաւորապէս այս զգացմունքներն ու ցանկութիւններն էին մեզ ոգեւորողը ամիսներ առաջ, երբ գընում էինք Համագումարի. այսօր երկրորդ Համագումարի մասին է մտածւում, դարձեալ համերաշխութեան, ընկերական ու խմբական գործունէութեան իդէալն է, որ նոյն ուժով ու կրկնակի թափով փայփայում ենք։

Ֆելիքս

«Ուսանող», 1909, թիւ 1, էջ 45-48

Փաստ. 1468-55

Դ 3.– ՄԻՆԽԷՆԻ ԴԱՇՆ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՌԱՋԱՐԿԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍ. ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ընկերներ!

Սոյն առաջարկը որ գալիք համագումարի կայանալուն թէ չկայանալուն է վերաբերում՝ պատրաստւում էինք մենք արդէն ուղղելու Զեզ, երբ ստացուեց Կեդրոնական Մարմնի հրաւէրը՝ պատգամաւոր ընտրելու եւ պատրաստութիւններ տեսնելու Ապրիլի 1-ին կայանալիք համագումարի համար։ Այնուամենայնիւ խմբակս դեռ եւս ուշ չէ համարում առաջարկել միւս ընկերներին վերաքննելու այս տարի կայանալիք Համագումարի կարեւորութիւնն համեմատած նորա հետ կապուած ծախքերի հետ — չմոռանալով հանդերձ, որ անցեալ Համագումարի որոշումները դեռեւս գրեթէ չեն իրագործուած դրամական միջոցների պակասութեան պատճառով։

Սակայն թող չկարծեն ընկերները, թէ սորանով է միայն սահմանափակւում մեր առաջարկութեան հիմնաւորումը։ Անցեալ տարի էլ մենք լաւ գիտէինք, որ Համագումարը մեր ուժերի հետ համեմատած մեծ ծախք է պահանջում, ինչպիսի աղբիւրներից էլ գոյանալու լինէր այն, բայց եւ այնպէս մենք հրճուանքով ողջունեցինք մի խումբ ընկերների հրաւէրը գումարուելու եւ կազմակերպուելու, լաւ գիտակցելով, որ դաշնակցական ուսանողների կազմակերպուելը մի շատ ուրախալի երեւոյթ է կուսակցական կեանքում եւ գնահատելի մի գրաւական կուսակցութեան մէջ ինտելիգենտ ուժերի բարգաւաճման, իսկ Ա. Համագումարը — որպէս սահմանադիր-կանոնադիր ժողով՝ անվիճելի անհրաժեշտութիւն։ Դորա հետ միասին մենք գիտակցում ենք նաեւ առաջիկայ Համագումարի նշանակութիւնը։ Մենք զգում ենք որ նա կարող է որոշ չափով դարձեալ խթան հանդիսանալ մեր կեանքի ներքին բարգաւաճման, որ նա կարող է խաւար ուժերին ապացուցանել որ նոցա դէմ միշտ կանգուն են դեռ եւս գաղափարական ուժերը, ամբողջապէս համակուած պայքարի ու յաղթանակի տենչ ու մտորումներով. բայց միեւնոյն ժամանակ հարցի վրայ մի քիչ առարկայօրէն նայելով, մենք գտնում ենք, որ այդ գեղեցիկ ու վեհ նշանակութիւնը չափազանց սահմանափակ է նախ եւ երկրորդ՝ Համագումարը միակ ճանապարհը չէ նոյն նպատակին հասնելու համար, եւ որ ընդհակառակը Համագումարը ոչ միայն մեր շուրջը գտնուող մրցակից ուժերի այլ մինչեւ իսկ մեր իսկ շարքերում գտնուող մի շարք ընկերների ձեռքին հեգնելու առիթ կը ծառայէ թէ՝ դաշնակցական ուսանողութիւնը էապէս ոչնչով չկարողանալով նշանաւոր դարձնել իւր գոյութիւնը, Համագումարը մի շատ լաւ միջոց է դարձրել մի քանի անհատների անձնական բաւականութեան. այո՛, ընկերներ, որքան եւ տհաճ լինի այսպիսի մտքեր արձանագրել — այնուամենայնիւ մենք յանձն ենք առնում այդ տհաճ պարտականութիւնը, որովհետեւ մենք այդ աւելի նպատակայարմար ենք գտնում քան աչքաթող անելը։

Միանգամայն կ'արհամարհենք մենք այդ բոլորը, եթէ առարկայօրէն հարցին նայելիս, կարողանայինք համոզուել Համագումարի տալիք առարկայական օգուտների մէջ. դժբախտաբար չենք կարող համոզուել եւ ահա թէ ինչու.

Ամէն մի համագումարի բուն նպատակն է կազմակերպութեան գործերի ամբողջութիւնը քննելով, տեսնել ի՞նչ չափով են առաջադրուած որոշումներն ու նպատակները իրագործուած եւ նոր որոշումների անցնել է. անշուշտ այս բոլորից առաջ ենթադրւում է փոքր ի շատէ բովանդակալից կեանք, կազմակերպութեան հետ կապուած փոքր ի շատէ բացարձակ նշանակութիւն ունեցող դեր։ Բայց մի՞թէ մեզ բոլորիս համար պարզ չէ, որ մեր մէկ տարուայ կեանքը թէ դրամականի, թէ մտաւոր-բարոյականի կողմից մի համագումարի համար բաւարար անգամ նիւթ չեն մատակարարում. եթէ մենք սխալւում ենք, չափազանց ուրախ կը լինենք որեւէ կերպով ապացուցուած տեսնել այդ սխալը։ Բայց եթէ մենք մի այդպիսի կասկած յայտնում ենք, յայտնում ենք հիմնուած հետեւեալ փաստերի վրայ. ամբողջ մի տարի է անցել գրեթէ եւ մեր դրամական ուժերը այնքան սնանկ էին, որ կեդրոնական մարմինը, բնաւ, ինչպէս այդ երեւում էր մի շարք գրութիւններից, հնարաւորութիւն չունէր «Ուսանող»ի առաջին N-ը հրատարակելու — մինչդեռ անցեալ Համագումարի ամենակարեւոր որոշումներից մէկը այդ էր — միեւնոյն ժամանակ «Ուսանող»ը կարող է լինել կազմակերպւած դաշն. ուսանողութեան մտաւոր կարողութեան ու բարոյական նշանակութեան պայծառ ապացոյցը. նմանապէս անցեալ Համագումարի ամենանշանաւոր որոշումներից մէկն էր շրջիկ ընկերներ ուղարկել ռեֆերատներով այցելելու խմբերին. սա եւս մեր կազմակերպութեան յոյսերը արդարացնող իրական միջոց կը լինէր — թողնում ենք մանրամասնութիւնների մէջ մտնելը. արդեօք այս բոլորից յետոյ ոչ բարեմտօրէն տրամադրուած տարրերը ընդհակառակը Համագումարը*

*) *առայժմ, մի կողմն ենք թողնում պատճառների քննութիւնը։*

զէնք չեն ծառայեցնի իրապէս եւ թերեւս իրաւապէս անուանարկելու մեր կազմակերպութիւնը յայտարարելով թէ «թող գործով ապացուցանեն իւրեանց գոյութիւնն ու նշանակութիւնը եւ ոչ թէ շվէյցարական լճերի ափերին ճեմելով կամ "Vergnügungsreise"ներ[105ա] կազմակերպելով։ Խնայենք Համագումարի հետ կապուած ծախքերը այս տարի, ժողովենք մեր բոլոր բարոյական-մտաւոր ուժերը գէթ կիսով չափ իրագործելու անցեալ Համագումարի իղձերը եւ ապա նորին դիմենք։

Այս առաջարկն անելիս մենք որոշ չափով խոնարհուում ենք մի հանգամանքի առաջ՝ այդ Դաշնակցութեան V Ընդհ. Ժողովն էր որից առաջ անշուշտ չափազանց ցանկալի կը լինէր գումարուել եւ խորհրդակցել, սակայն այդ նախ իրական ուժ կարող էր ստանալ վերոյիշեալների իրագործումից յետոյ, երկրորդ՝ կարող ենք փոխարինել հետեւեալ ձեւով. թող խմբերը ձեռնարկեն անմիջապէս V Ընդհ. Ժողովի պատգամաւորի ընտրութեան, եւ Գործադիր Մարմինը Բեռլինի խմբակի հետ միասին, որոնք եւ, պատիւ իրենց, մինչեւ այժմ տարել են գրեթէ ամբողջ ծանրութիւնը եւ եթէ որոշ չափով իրագործուած են անցեալ Համագումարի իղձերը՝ նոցա ենք պարտական — V Ժողովի օրակարգը թերեւս մօտիկ քաղաքների մասնակցութեամբ, քննութեան առնեն եւ այնուհետեւ պատգամաւորը Ընդհ. Ժողովից 2 շաբաթ առաջ շրջագայելով գլխաւոր կենտրոնները զեկուցանէ եւ նոր կարծիքներ ժողովէ Ընդհ. Ժողովում մեր կողմից անելիք առաջարկների եւ ուսանողութեան կատարելիք դերի մասին. այսու խմբերը գոնէ ամբողջապէս աւելի մօտիկից գրգիռ ստացած կը լինեն եւ մօտիկից էլ ընդհանուր ուժերով մասնակցած գործին։

Խնդրում ենք այս առաջարկութիւնը մանրամասն բացատրութեամբ հանդերձ ուղարկել բոլոր ընկերներին ի հայեցողութիւն, իսկ որպէսզի սոյն առաջարկը, (եթէ ընկերները կը գտնեն, որ Համագումարը այնուամենայնիւ պիտի կայանայ), գործերի ընթացքին չխանգարէ, Գործադիր Մարմնի բոլոր առաջարկներին մենք ընթացք ենք տալիս, ինչպէս այդ կ'անենք Համագումարի անպայման կայանալու դէպքում։

Գործադիր Մարմնին

Սիրելի ընկերներ,

Խնդրելով վերոյիշեալ գրութիւնը ուղարկել որչափ կարելի է շուտով միւս ընկերներին ի հայեցողութիւն, յոյս ունենք կատարուած տեսնելու այն, կամ Համագումարի անհրաժեշտութեան հիմնատրումը ձեզնից ստանալ։ Ինչ վերաբերում է այն բանին թէ, հնարաւոր է Համագումարը Միւնխենում կայացնել – որքան եւ այդ ցանկալի լինէր մեզ համար – պէտք է յայտնենք, որ այստեղի քաղաքական պայմաններն գրեթէ նոյնչափ աննպաստ են որչափ եւ Գերմանիայի միւս մասերում. յամենայն դէպս ոչ մի երաշխաւորութիւն չենք կարող վերցնել մեզ վրայ։

Մեր զեկուցումները կ'ուղարկենք մինչեւ Մարտ 15-ը նոյնպէս եւ V Ընդհ. Ժողովի օրակարգի մասին մեր խորհրդածութիւնների արդիւնքը։ Այս վերջինը մանաւանդ աւելի շուտ անհնար էր մեզ համար։

Ներկայացուցիչ՝ Տ. ՈՒՆԱՆԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՔՐԻՇՅԵԱՆ

105ա.- Գերմաներէն՝ հաճոյքի ճամբորդութիւններ։

Փաստ. 1469-11

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

UNION DES ÉTUDIANTS ARMÉNIENS DASCHNAKTZAKANS DE L'EUROPE

17. III. 1909

№

Դ 4.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

17-III-1909, Բեռլին

Համաձայն կուսակցական կանոնադրութեան 92-րդ եւ Միութեան կանոնադրութեան 16-րդ յօդուածների Գործադիր Մարմինը խնդրում է մի ներկայացուցիչ ուղարկել Միութեանս II Համագումարին մասնակցելու։

Մեզ համար շատ ցանկալի կը լինէր տեսնել Բիւրոյի ներկայացուցչին մեր մէջ, որը եւ կը կարողանար Համագումարին ծանօթացնել վերջին ժամանակուայ նշանաւոր դէպքերին եւ կուսակցութեան վիճակին։ Իսկ եթէ զանազան պատճառներով Բիւրոն հնարաւորութիւն չի ունենալ իր ներկայացուցիչը ուղարկել, ապա խնդրում ենք ձայնը տալ այս շրջանի ընկերներից մէկին։

ՆԻՒԹԵՐՈՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ UNION des ÉTUDIANTS ARMÉNIENS DASCHNAKTZAKANS DE L'EUROPE 1908 Ս. ՍՊԻՌՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ՈՒՍ. Մ.
ԳՈՐԾ. ՄԱՐՄԻՆ

Դ 5.– ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (1909)

«ՆԻՒԹԵՐ»ու Զ. հատորին մէջ լոյս ընծայած ենք արդէն Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. Միութեան 1908 թ.ի տեղեկագիրը (էջ 516-522)։ Ներկայ փաստաթուղթը լայն բաժիններ ներառած ըլլալով հանդերձ վերոյիշեալ տեղեկագրէն, աւելի ընդարձակ է ու ամբոջական, եւ կը բովանդակէ տեղեկատուութիւն Միութեան Երկրորդ համագումարին մասին, որ կայացած է 1909 թ.ի Ապրիլ 10-15 Գերմանիոյ Լայպցիգ քաղաքին մէջ։ Համագումարի որոշմամբ ան լոյս տեսած է Միութեան հրատարակած «Ուսանող» պարբերագրքի 3րդ համարին մէջ, էջ 199-220)։

Հոն ուր կարեւոր նկատած ենք, ամբողջացուցած ենք սկզբնատառերով նշուած անունները։

Ո Ի Ս Ա Ն Ո Ղ

ՕՐԴԸՆ

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Խմբագրութեան կողմից.
2. Դաշնակցական պատգամաւորների դերը Թիւրքիայի պարլամնտում. — Ասլան Շերակոսի
3. «Նոր Թիւրքիան», «Եւրոպական դիպլոմատիան» և Դաշնակցութիւնը. — Մէմմ
4. Հնկերվարութեան անհրաժեշտութիւնը Թիւրքիոյ մէջ. — Գարամեան Ե. Յ.
5. Էթիկ և Սոցիալիզմ. — Ե. Յ.
6. Հ. Ց. Դաշնակցութիւնը և ազգային կուլտուրական կեանքը. — Ա. Արիսեան
7. Եւրոպայի Հ. Ց. Դաշ. Ուսանողների Բ. Համագումարը — ∴
8. Մատենախօսութիւն. — Ա. Շիր.

ԺԷՆԵՎ
Imprimerie moderne
1909

Եւրոպայի Դաշ. Ուսանողների Միութեան տարեկան համագումարը տեղի ունեցաւ ներկայ տարուան Ապրիլ 10-15-ին Գերմանիայում։

Այդ համագումարը հերթական նշանակութիւն ունենալէ աւելի անհրաժեշտ էր նրանով, որ Ուսանողութիւնը գտնուելով Դաշ. Ե. Ընդհ. Ժողովի նախօրեակին պէտք է հաւաքուէր, խորհրդածէր իր կարծիքը արտայայտելու այն հարցերի վերաբերմամբ, որոնք Ե. Ընդհ. Ժողովի օրակարգն են կազմում։

Նախքան Դաշնակցութեան Ընդհ. Ժողովի հրաւէր ստանալը Միութեան շատ անդամներ, նոյնիսկ Գործադիր Մարմնի անդամներից ոմանք համագումար կայացնելուն կողմնակից չէին։ Իսկ Միւնխէնի խմբակը մի գրութիւնով առաջարկում էր Գործ. Մարմնին համագումար չհրաւիրել, որովհետեւ դա մեծ ծախսեր կը պատճառի Միութեան եւ մի առանձին անհրաժեշտութիւն չի ներկայացնում։ Նա առաջարկում էր ուրիշ միջոցներ ձեռք առնել փոխարինելու Համագումարը. օրինակ՝ մի ձեռնհաս ընկերոջ շրջագայութեամբ քաղաքները եւ դասախօսութիւններ տալով Կուսակցութեան սկզբունքային հարցերի շուրջը։ Ե. Ընդհ. Ժողովի հրաւէրը վճռեց համագումարի անհրաժեշտութիւնը։

Փետր. 20-ին ղրկուած մի շրջաբերականով Գ. Մ.-ը հարկ եղած հրահանգները տուեց խմբերին զեկուցումներ կազմելու եւ պատրաստ լինելու համագումարին։ Իսկ Մարտ 15-ին ղրկեց համագումարի օրակարգը որոշելով նաեւ ժողովի ժամանակն ու տեղը, ըստ որում տեղի նշանակման համար վճռական եղաւ Գերմանիայի ընկերներին լայն չափերով մասնակցելու հնարաւորութիւն տալու նկատառումը։

* * *

Համագումարի աշխատանքները սկսուեցին Ապրիլ 10-ի առաւօտեան 10-ին։ Խմբերի մեծագոյն մասի ներկայացուցիչները ներկայ լինելով ժողովը համարուեց օրինաւոր։ Ընկ. Ա[ղշակ] Ի[սահակեան] Գործադիր

Մարմնի կողմից բացեց ժողովը, հրաւիրելով մի առժամանակեայ նախագահ ընտրել նախապատրաստական աշխատանքների համար։ Միաձայնութեամբ ընտրուեց ընկ. Մ[արտիրոս] Ց[արիւթիւնեան], որ պաշտօնի գլուխն անցնելով առաջարկեց ա) կազմել ներքին գործավարութեան կանոնագիրը. բ) Մանտաթները ճշտել, գ) Միութեան կանոնագրի համաձայն օգտուել ինքնալրացման (cooptation) իրաւունքից. դ) Կարդալ համագումարի օրակարգը եւ լրացումներ ու փոփոխումներ մտցնել եւ ե) Ընտրել դիւանական մարմինները։

1) Ժողովը I Համագումարի ըէկլամենտը[91] ընդունեց ամբողջովին, միայն այն պայմանաւ որ չպէտք է աշխատել տառացի կերպով գործադրել այդ եւ այդպէսով ժողովը կաշկանդել։

2) Մանտաթների քննութիւնն եղաւ անմիջապէս։ Հրաւէր ստացած մարմիններից զանազան պատճառներով պատգամաւոր չէին ղրկած՝ Արեւմտեան Բիւրոն, Բերն, Ցիւրիխ եւ Մ.։

Փարիզի եւ Լօզանի խմբերը 2 ձայնի իրաւունք ունենալով, բայց չատ ծախս չընելու նկատումներով ղրկած էին մէկ մէկ պատգամաւոր, իսկ երկրորդ ձայնի վերաբերմամբ վարուած էին այս ձեւ՝ Լօզան իր երկրորդ ձայնը յանձներ էր ընկ. Մ. Ց.-ին իսկ Փարիզ երկրորդ ձայնը թողել էր իր պատգամաւորի տրամադրութեանը։ Փարիզի երկրորդ ձայնը համագումարը իր իրաւունքը համարելով, յանձնեց ընկ. Գ. Շ.-ին։

3) Ըստ կանոնագրութեան կօօպտացիայի իրաւունքը սահմանափակւում է ժողովի անդամների մի երրորդ մասով, ուստի պատգամաւորները լինելով 12 հոգի, վճռեցին 4 հոգի ձայնի իրաւունքով հրաւիրել ժողովի. գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին հետեւեալները՝ Ա. Բ., Ե. Ն., Ս. Ն. եւ Ք. Ք.։

Որոշուեցաւ հեռագրել դրանց ու այնպիսիներին, որոնք հնարաւորութիւն կ'ունենան գալու եւ ժողովի զբաղումներին մասնակցելու։

4) Գործ. Մարմնի կազմած օրակարգը հետեւեալն է՝

1. Համագումարի բացումը.

2. Գործ. Մարմնի տեղեկագիրը 1908 Ապրիլ 1-ից.

3. Խմբերի տեղեկագիրները.

4. Ուսանող-ի հրատարակութեան հարցը.— ա. պատասխանատու խմբագրութիւն. բ. պարբերական դարձնել։

5. Կանոնադրութեան յօդ. 21-ի բ. ծանօթի վերաքննութիւն.

6. Ինչպէս կանոնաւորել ամսավճարների գանձումը.

7. Կուսակցութեան Ե. Ընդհ. Ժողովի օրակարգի քննութիւն.

8. Պատգամաւորի եւ Միութեան մարմինների ընտրութիւն.

9. Զանազան առաջարկներ.

10. Դասախօսութիւններ։

Այս օրակարգին միացած էր նաեւ Ժընեւի առաջարկներու ցանկը.

1. Միութիւնը իր անդամներով փոխարինէ կովկասում ձերբակալուած ընկերներին։

2. Ուսանողի փոխարէն հրատարակել բրոշիւրներ.

3. Ուղարկել մի ընկեր Թիւրքիա ուսումնասիրութիւններ անելու.

4. հրատարակել մի բրոշիւր գալիք ուսանողներին Եւրոպայի հետ ծանօթացնելուհամար.

5. հրատարակել վիճակագրական տեղեկութիւններով մի գրքոյկ Եւրոպ. հայ ուսանողների կեանքից։

Օրակարգի վերջնական պատրաստումը թողնուեց նախագահութեան։

5) Դիւանական մարմինը կազմուեց հետեւեալ կերպով՝ գոց քուէարկութեամբ մնայուն նախագահ ընտրուեցին ընկ. ընկ. Վ[ալադ] Վ[ալադեան] Ա[բա] Մ[ամիկոնեան] եւ Ս. Ց., որոնք այդ պաշտօնը պիտի վարէին փոխնիփոխ։ Քարտուղարութիւն ընել յանձն առան Մ[արտիրոս] Ց[արութիւնեան] եւ Վ. Ք[ոչչեան]։ Դիւանապետութեան պաշտօնը յանձնուեց Գ. Շ.-ին։

Նախապատրաստական աշխատանքները սրանով սպառուած համարուեցին։

Վերջնականապէս կազմակերպուած ժողովը բաղկացած էր 16 իսկական ձայնի եւ մի քանի խորհրդատու ձայնի իրաւունքից օգտուող անդամներից։

Պաշտօնապէս ժողովը բանալուց եւ շնորհաւորական հեռագիրներն ու նամակները կարդալուց յետոյ, Համագումարը անցաւ օրակարգի քննութեան սկսելով նախ խմբերի զեկուցումներից։

Իւրաքանչիւր խմբի զեկուցումէն յետոյ ընկերները զանազան հարցերով լրացուցիչ տեղեկութիւններ էին ուզում զեկուցանող ընկերոջից։ Այսպէս ահա Լ[օզան]ի ներկայացուցչին հարց տրուեց թէ ինչո՞ւ Դաշ. ընկերները այնչափ քիչ են, հազիւ 3 հոգի ամբողջ 40-45 ուսանողների մէջ. դրան պատասխանուեց որ ընդհանրապէս Լ-ի ուսանողութիւնը հարուստ է եւ մի ստուար տոկոսը հետեւում է վաճառականական վարժարանի ընթացքին, ուստի չի հետաքրքրւում յեղափոխական եւ մանաւանդ սոցիալիստական գործունէութեամբ։

Փարիզի ներկայացուցչի զեկուցումը տեղի ոչ-փայլուն դրութեան մասին եւ Լօզանի խմբի ներկայացուցչի

*) Ձայնի իրաւունքով հրաւիրուած ընկերներից միայն մէկն եկաւ, իսկ միւսները տեղի հեռաւորութեան եւ կամ ուրիշ արգելքներու պատճառաւ չկարողացան գալ. յետագային համագումարը ձայնի իրաւունք տուեց Տիկ. Ե. Ա.-ին Մ. Ց. եւ Դ.-ին։

յայտարարութիւնները՝ թէ տեղական խմբի «հանդէս բերած զարմանալի անգիտակցութիւնն ու անհետաքրքրութիւնը» վերագրելի է նրան, որ խմբի մեծագոյն մասը տաճկահայերից է կազմուած, առիթ տուաւ տաճկահայ ուսանողութեան վերաբերեալ մի ընդարձակ վիճաբանութեան, որից յետոյ Համագումարը վճռեց մի բանաձեւով իր տրամադրութիւնն արտայայտել. միաձայնութեամբ ընդունուեց հետեւեալ եզրակացութիւնը.

«Համագումարը դիտողութեան առնելով Լօզանի պատգամաւորի այն արտայայտութիւնը թէ Լօզանի խմբի կուսակցական անհետաքրքրութեան եւ անգիտակցութեան պատճառն այն է որ այնտեղ ընկերների գերակշռող մեծամասնութիւնը տաճկահայեր են, գտնում է, որ այդ երեւոյթը իր բնական արդարացումը գտնում է նրանց կրթութեան առանձնայատուկ պայմանների մէջ եւ վստահ է, որ այդ ընկերները մի առժամանակ մնալով Դաշնակցութեան մթնոլորտում միանգամայն կը համակուեն դ[աշնակց]ական գործչի համար անհրաժեշտ գիտակցութեամբ եւ հետաքրքրութեամբ»։

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԵՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Որովհետեւ Գ. Մ.-ի զեկուցումը ամփոփումն է բոլոր խմբերի զեկուցումների եւ մի որոշ պատկեր է տալիս Միութեան մի տարուայ գործունէութեան, մենք յառաջ ենք բերում այն՝ լրացումներ կատարելով խմբի տեղեկագրից եւ փոքրիկ փոփոխութիւններով։

«Եթէ մէկը մեր Միութեան I համագումարի արժէքը այն մտքով է հասկացել, թէ հէնց որ Համագումարը իրաւաբանօրէն կազմակերպեց դաշ. ուսանողներին մի միութեան մէջ, անմիջապէս պէտք է այդ ուսանողները մի արտակարգ գործունէութիւն, արտակարգ եռանդ արծարծէին իրենց կուսակցական պարտականութիւնների շաւղի վրայ՝ ապա նա դիտելով մեր Միութեան այս մի տարուան կեանքի ընդհանուր պատկերը՝ պէտք է հիասթափուէր եւ ասէր, որ Առաջին Համագումարը չէ արդարացրել նրա յոյսերը։ Սակայն ով որ առաջին համագումարի հետ աւելի ռէալ յոյսեր է կապել, ով որ նրա գնահատութեան ժամանակ չի մոռացել այն հանգամանքը, որ ուսանողների կուսակցական գործունէութիւնը կապուած լինելով որոշ մտաւոր-թէորիական պատրաստութեան հետ՝ հանդէս կու գայ ան չափով ինչ չափով որ ուսանողը այդ մտաւոր-թէորիական ասպարէզում յառաջադիմում է, ով գիտէ որ այդ յառաջադիմութիւնը մի անգամից չի ստացւում այլ տեւական, յարաճուն աշխատանք է պահանջում, նրա համար պարզ կը լինի, որ մեր Ուսանողութեան այս մի տարուայ գործունէութիւնը անցեալի համեմատութեամբ չէր կարող թռիչքային բնաւորութիւն ունենալ։ Եւ եթէ նա այս կանխամտածողութեամբ մօտենալու լինի մեր Միութեան այս մի տարուայ գործունէութեան եւ գնահատութեան, նա կը տեսնէ որ առաջին Համագումարը դաշ[նակցական] ուսանողների վրայ ազդեցութիւն ունեցել է եւ այն էլ խիստ բարերար ազդեցութիւն։

Այդ ազդեցութիւններից մէկը եւ գլխաւորը այն է, որ դաշ. ուսանողները, չնայած չրջապատի քաղաքական ապատիկ[106] տրամադրութեանը, այսօր աւելի սերտ կերպով են կապուած իրենց կուսակցութեան հետ, քան առաջ էր. նրանք այսօր աւելի են հետաքրքրւում կուսակցութեան մէջ անցած դարձածով քան անցեալ եւ նախանցեալ տարիները, երբ քաղաքական մթնոլորտը համեմատաբար չատ աւելի բարձր, չատ աւելի նպաստաւոր էր այս տեսակէտից։

Երկրորդ բարերար ազդեցութիւնը, որ առաջինի հետեւանքն ու շարունակութիւնն է կազմում, այն զգալի հետաքրքրութիւնն է, որ մեր ուսանող ընկերները տածում են դէպի հասարակագիտական հարցերը։ Եթէ առաջներում չնորհիւ Դաշնակցութեան առանձնայատուկ պայմաններին քաղաքական-հասարակական գործունէութեան այս ղեկավարող կողմը պակասել է մեր ուսանողութեանը՝ այժմ յոռետես ընկերներն անգամ ստիպուած են խոստովանելու, որ դաշնակցական ուսանողները իրենց տեւական հետաքրքրութեամբ — եթէ չասենք պատրաստութեամբ — առաջին տեղերից մէկն են բռնում մնացած ուսանողութեան մէջ եւ այս հետաքրքրութիւնը մեր մէջ զարկ է ստանում յատկապէս վերջին տարին։ Այդ հետաքրքրութիւնը երեւում է թէ այն անհամբերութեան մէջ, որով ուսանողները սպասում են «Ուսանողի» լոյս տեսնելուն, թէ մեր օրգանի գտած ընդունելութեան մէջ, թէ այն մի չարք թէորիական[107] բնաւորութիւն կրող դասախօսութիւնների մէջ, որ իրենց ուժերի չափով կազմակերպել են մեր ուսանողները զանազան տեղերում, եւ թէ մեր կուսակցական օրգաններում ուսանող ընկերների ստորագրութեամբ լոյս տեսած յօդուածների մէջ։

Այնուհետեւ՝ համագումարի ո՛չ անէական[108] ազդեցութիւններից մէկը պէտք է համարել այն, որ չատ ուսանողներ, որոնք մինչեւ համագումար մի տեսակ անորոշ եւ տարտամ տրամադրութիւն ունէին իրենց քաղաքական գունաւորման տեսակէտից՝ վերջնականապէս ինքնորոշուեցան եւ հաստատապէս տեղ բռնեցին դաշնակցական շարքերում։

Համագումարի արդիւնքներից մէկն է «Ուսանող»-ը որի կարեւորութեան մասին խօսելն իսկ աւելորդ է եւ

106.- Անտարբեր, անհոգ:

107.- Տեսական:

108.- Երկրորդական. ոչ անէական՝ ոչ երկրորդական:

որի մասին կը գրուի իր տեղին։

Համագումարի արդիւնքներից է, որ դաշնակցական ուսանողը աւելի քան երբեւիցէ իրեն պարտաւորուած է զգում նիւթական զոհաբերութեամբ եւս արտայայտելու իր կուսակցական պարտականութիւնը եւ այլն եւ այլն։

Հեռու գնացած կը լինէինք եթէ մանրամասնութիւնների մէջ մտնելով մի առ մի թուէինք այն բոլոր դրական ազդեցութիւնները, որ թողել է դաշն. ուսանողների վրայ Առաջին համագումարը. այսքանը եւս, կարծում ենք, բաւական է համոզելու համար, որ Առաջին համագումարը դաշն. ուսանողների կուսակցական գործունէութեան տեսակէտից մի բան կատարել է. այն էլ վերին աստիճանի արդիւնաւէտ բան։

Առաջին համագումարի թողած ազդեցութիւնների մասին այսքանը բաւական համարելով՝ դառնում ենք մի ընդհանուր պատկեր տալու Միութեան այս մի տարեան գործունէութեան մասին, համաձայն այն համառօտ տեղեկագիրների, որ Գործ. Մարմինը ստացել է միութեան խմբերից*։

ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՒԸ

Միութեան մէջ մտնում են հետեւեալ խմբերը եւ անհատ ընկերները.—

Փարիզ 19 հոգի,
Ժընեւ 19
Լօզան 13
Ցիւրիխ 2
Բերն 2
Բազել 2
Միւնիխ 6
Հալէ 5
Լայպցիգ 3
Ենա 5
Բերլին 8
Դրանցից զատ անհատ ընկերներ կան
Հայտելբերգ 1
Մօնպէլիէ 1
Կանտ 1
Պրիւքսէլ 1
Անվէրս 1, եւ այլն։

Եթէ այս խմբերի եւ թուերի վրայ մի փոքր քննական հայեացք ձգենք, կը տեսնենք, որ արդի աննպաստ պայմանները հաշուի առնելով, Միութեան կազմակերպական վիճակը բարեյաջող կարելի է համարել։ Չնայած այն հանգամանքին, որ քաղաքական ռէակցիայի եւ դրա շնորհիւ քաղաքական ապատիայի[106] պատճառով կուսակցական կեանքը ներկայումս ընդհանրապէս քիչ հրապոյր է ներկայացնում Ուսանողութեան համար։

Գործադիր Մարմնին հասած տեղեկութիւններին նայելով միայն մի հոգի է թողել Միութեան շարքերը՝ սկզբունքային նկատումներով։ Անդամների թուի պակասելը անցեալ տարուայ համեմատութեամբ բացատրւում է նրանով, որ անցեալ տարուայ ընկերներից շատերը հեռացել են Եւրոպայից։ Այսպէս՝ Փարիզից 2 հոգի, Ժընեւից 21, Լօզանից 1, Բազելից 1, Նէօշատէլից 3, Ցիւրիխից 2։

Սակայն նոր անդամներ եւս մտել են Միութեան մէջ, նորեկ ուսանողներից, որոնք գլխաւորապէս տաճկահայեր են։ Այսպէս Փարիզի խումբը ընդունել է 5 , Ժընեւ՝ 14, Լօզան 1, Գերմանիա 1։

Նորեկ ընկերների թիւը թերեւս աւելի լինէր, եթէ վերջերս պակասած չլինէր ուսանողների հոսանքը դէպի Եւրոպա, մասնաւորապէս կովկասահայերից, որոնք միշտ ստուար թիւ են կազմել դաշնակցական ուսանողների մէջ։ Սրանք այժմ դէպի Ռուսաստանի համալսարաններն են դիմում։

Միութեան անդամների մեր ներկայացրած թիւը թերեւս աւելի խոշոր լինէր եթէ Գ. Մարմնին յաջողուէր կապ հաստատել Եւրոպայում գտնուող բոլոր դաշ. ուսանողների հետ. դժբախտաբար այդ չի յաջողւում հասցէներ չլինելու, եւ այլ հանգամանքների պատճառաւ։ Այսպէս օրինակ Գործ. Մարմնի՝ Լիէժ մի պատահական հասցէով գրած նամակին պատասխան է ստացւում, որ Լիէժում եղած մօտ 35-40 հայ ուսանողներից ոչ մէկը Դաշնակցութեան չէ պատկանում. մի բան, որ շատ է անհաւանական։

Այժմ մի քանի խօսք մեր խմբերի գործունէութեան մասին։ Այդ գործունէութիւնը կարելի է բաժանել երեք տեսակի. 1) ընթացիկ հարցերի վերաբերեալ. 2) կուսակցական տեսական հարցերի վերաբերեալ եւ 3) դրամական։

Ա.— Խմբերի ընթացիկ կեանքի վերաբերեալ գործունէութիւնը զուտ տեղական խնդիրների շուրջն է, որոնք ընդհանուր հետաքրքրութիւն չունեն։ Ընդհանուրը դրա մէջ դրամական կարգադրութեան խնդիրն է, որի մասին կը խօսենք երրորդ կէտում։

Բ.— Կուսակցական եւ տեսական գործունէութեան տակ հասկացւում են. 1) քննութիւններ այնպիսի խնդիրների, որոնք զուտ տեղական բնաւորութիւն չունեն եւ առնչութիւն ունեն ընդհանուր կուսակցական կեանքի հետ. 2) խմբերում կարդացուած թէորիական բնաւորութեամբ դասախօսութիւններ։

Առաջին կարգի գործունէութիւնը արտայայտուել է գլխաւորաբար ծրագրուած, բայց չկայացած Արեւմտեան Ռայոնական ժողովի եւ V Ընդհանուր ժողովի օրակարգերի քննութեամբ։ Այդ առթիւ թէ խմբերը եւ թէ հիւսիսային Գերմանիոյ դաշ. ուսանողների հաւաքական ժողովը՝ խմբուած Ենայի խմբի առաջարկութեամբ, հանել են եզրակացութիւններ։

Երկրորդ կարգի գործունէութիւնը, որ արտայայտուել է, ինչպէս ասացինք մի շարք թէորիական բնաւորութիւն կրող դասախօսութիւնների մէջ աւելի հետաքրքրական է եւ հաստատում է մեր խօսքը դաշ. ուսանողների դէպի տեսական խնդիրները ունեցած հետաքրքրութեան մասին։ Մեր ձեռքը հասած տեղեկութիւնների հիման վրայ՝ Միութեան խմբերում այս մի տարուան ընթացքում (Առաջին համագումարից մինչեւ Բ. համագումարը) կարդացուել են հետեւեալ դասախօսութիւնները։

1. Տպաւորութիւններ անցեալ եւ ներկայ Թուրքիայից (Ժընեւ)
2. Պարսկաստանի յեղափոխութիւնը (Ժընեւ)
3. Կովկասեան դաշնակցութիւնը (Ժընեւ)
4. Կաթողիկոսական հարցի մասին (Ժընեւ)
5. Դաշնակցութեան հին եւ նոր գործունէութիւնը (Լօզան)
6. Միքայէլ Նալբանդեան եւ նրա յարաբերութիւնը Բակունի[ն]ի եւ անարխիստների հետ (Լօզան)
7. Մարքսիստական պատմափիլիսոփայութիւն (Լօզան)
8. Հողի համայնացում (Լօզան)
9. Պետական դուման եւ բոյկոտը (Լօզան)
10. Պետութիւն եւ իրաւունք (Միւնխէն)
11. Ագրարային հարցը Կովկասում (Միւնխէն)
12. Թուրքիայի յեղափոխութիւնը եւ հայերը (Միւնխէն)
13. Ի՞նչ է յառաջադիմութիւնը ըստ Միխայլովսկու (Ենա)
14. Ընտանիքի եւ Պետութեան ծագումը ըստ Էնգէլսի (Ենա)
15. Սինտիկալիզմ (Ենա)
16. Անարխիզմ (Ենա)
17. Պատմական մատերիալիզմ (Ենա)
18. Ագրարային հարց եւ հողի համայնացում (Լայպցիգ)
19. Սոցիալիզմ եւ Ազգութիւն (Լայպցիգ)
20. Սոցիալիստական գործունէութեան հիմքերը Թուրքիայում (Բերլին)
21. Տաճկաստանի արդի դրութեան մասին (Ժընեւ եւ Լօզան)։

Այս դասախօսութիւնների շարքը, որքան էլ որ պակասաւոր լինի, կարծում ենք, մի ընդհանուր պատկեր կը տայ մեր ընկերների մտածողութեան ուղղութեան մասին եւ եթէ դրանց վրայ աւելացնենք այս կամ այն հարցի մասին զանազան խմբերում կազմակերպուած վիճաբանութիւնները, այն ժամանակ իրաւամբ կարող ենք ասել, որ տեղական խնդիրների ուսումնասիրութեան տեսակէտից Միութեան մէջ կազմակերպուած ընկերների կեանքը նախկին տարիների համեմատութեամբ շատ աւելի բովանդակալից է եղել։

Այստեղ աւելորդ չենք համարում մի երկու երեւոյթի վրայ կանգ առնել, որոնք թէեւ մի երկու խմբի կողմից են կատարուել բայց եւ այնպէս Միութեան ընդհանուր տրամադրութիւններից են բխում։ Այս երեւոյթներից մէկն է Լօզանի տաճկահայ ընկերների կողմից ձեռնարկած եւ գլուխ բերած "Club Libéral Ottoman"ը[109], որ ուղղակի գործադրութիւնն է Առաջին համագումարի այն հրահանգի, թէ պէտք է որտեղ այդ հնարաւոր է՝ համերաշխութեան կապեր հաստատել պատմականօրէն մեզ հետ վիճակակից ազգերի հետ։ Այդ ակումբը կազմուել է անցեալ տարի (1908 Հոկտեմբերին) եւ այդտեղ մեր ընկերները տուել են երկու դասախօսութիւն ապակենտրոնացման հարցի մասին որոնցից մէկը նուիրուած է եղել այդ հարցի գործնական իսկ միւսը տեսական կողմին։

Այն վառ հետաքրքրութիւնը, որ երեւան են բերել մեր ընկերները այդ ակումբում, այն դիրքը որ ձեռք են բերել կարելի է համարել բացառիկ եւ եթէ նրանք քաշուեն գործից, club-ը կը կորցնէ իր գոյնը եւ կը քայքայուի, հակառակ նրան, որ դաշ. ընկերներ 5 հոգի են 30 անդամների մէջ, ժողովի ոգին դաշնակցական է։

Լօզանի օրինակի համաձայն Օսմ. Ուսանողական Միութիւն կազմուած է նաեւ Փարիզում։

Երկրորդ երեւոյթն է Ժընեւի ընկերների կողմից ձեռնարկած մի հրապարակային դասախօսութիւն՝ ատենախօսուած Պրոֆ. Միլհօ-ի կողմից "Le socialisme et le crédit public"[110] նիւթին մասին։

*) Մեր Միութեան առաջին համագումարի մասին մի ընդարձակ զեկուցում հրատարակուած է Բագւում Հ. Յ. Դաշ. տպարանից։ Տեսէ՛ք «Գրոհ»ի գրադ. № 2 գրքոյկը։

109.- Ֆրանսերէն՝ «Օսմանեան ազատական ակումբ»։
110.- Ֆրանսերէն՝ «Ընկերվարութիւնը եւ հանրային վարկը»։

ՄԻՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒԸ

Որքան էլ նախկին տարիների համեմատութեամբ դաշնակցական ուսանողները նիւթապէս աւելի զոհած լինին իրենց կուսակցական կարիքների համար եւ որքան էլ այս տեսակէտից մենք իրաւունք ունենանք Միութեան դրամական դերը այս կէտում եւս չեշտելու, այնուամենայնիւ բացարձակ կերպով վերցրած, Միութեան դրամական վիճակը չի կարելի բաւարար համարել։

Ինչպէս յայտնի է, Միութեան եկամտի աղբիւրները կազմւում են անդամավճարներից եւ մի շարք կողմնակի աղբիւրներից որպիսիք են՝ երեկոյթներ, դասախօսութեանց կազմակերպումն, վիճակախաղ եւ այլն։ Այս անգամ, անդամավճարների ընդհանուր պատկերը կարելի է ուղղակի անբաւարար համարել։ շատ տեղերում մի տարուայ ընթացքում գրեթէ ոչինչ չէ գանձուել։

Արտակարգ եկամուտների ընդհանուր վիճակը եւս բաւարար չէ։ Երեկոյթներ եւ այլ նման բնաւորութեամբ ձեռնարկներ կազմակերպուել են ո՛չ ամէն հնարաւոր վայրերում եւ եղածներն էլ ցանկալի արդիւնք չեն տուել։

խումբ	Նախորդ տարուան մնացորդ	անդամավճար	կողմնակի մուտք	ծախք	Գ[ործադիր] Մ[արմնին]	խմբում մնացած
Բերլին	121 մ[արկ]	108 մ.	231,25 մ.	11,15 մ.	413,85 մ.	35,25 մ.
Եենա	–	64,50	–	10	54,50	–
Հալլէ	–	28,50	–	–	20	8,50
Լայպցիգ	–	40,28	2,40	–	42,68	–
Միւնխէն	35,50	187,40	–	54,17	101	65,73
Ժընեւ	0,80	27,60	92	19,80	88,80	11,80
Լօզան	–	48	353,42	5,60	323,02	72,80
Բերն	–	–	–	–	–	–
Ցիւրիխ	–	–	–	–	–	–
Բազել	–	10	–	–	10	–
Փարիզ	–	–	–	–	–	–
	155,30	514,28	679,07	100,72	1053,85	194,08
		1348,65 մկ.			1348,65 մկ.	

Ինչպէս երեւում է անդամավճարները տատանւում են ամսական 2 մ[արկ]ից մինչեւ զեռօ. մի վերին աստիճանի անմխիթար երեւոյթ, մանաւանդ որ ի նկատի ենք ունենում, որ դաշնակցական ուսանողների գոյութեան պայմանները մօտաւորապէս նոյնն են։

Գործադիր Մարմնի գանձարանը մտած գումարը ծախսուած է հետեւեալ ձեւով.

1. Դիւանական ծախս	89,67 մ[արկ]
2. «Ուսանող»-ի տպագրութեան եւ տարածման	452,78 մ.
3. Արեւմտեան Բիւրոյին	100 մ.
4. Բ. համագումարի ծախս եւ պատգամաւորների ճանապարհի ծախք	327,25 մ.
5. Զանազան հեռագիրներ	5,30 մ.
6. Առաջին համագումարի ծախսի մնացորդ վճարած	20,00 մ.
Գումար	986,70 մ.
Գանձարանում մնացած	64,15 մ.

ՄԻՈՒԹԵԱՆ ՕՐԳԱՆ

Ընայելով որ «Ուսանող»-ը մեր Միութեան ամենագլխաւոր ձեռնարկն է, չնայելով բոլոր խմբերը եւ միութեան անդամները իրենց անընդհատ նամակներով ուղղուած Գ. Մ.-ին իրենց անհամբերութիւնն էին արտայայտում «Ուսանող»-ի լոյս տեսնելու վերաբերմամբ, Գործ. Մարմինը չկարողացաւ շուտով գլուխ բերել այդ ձեռնարկը։ Առաջին համագումարէն անցան 11 ամիսներ եւ ապա լոյս տեսաւ մեր օրգանի առաջին N°-ը. այդ յապաղման արգելքները շատ էին. ի մասնաւորի Միութեան տնտեսականի անձկութիւնը, տպարանական անյարմարութիւնները եւ մանաւանդ այն հանգամանքը որ Գործ. Մարմնի 5 անդամները բոլորն ալ գտնւում էին զատ զատ քաղաքներում։

1908 թուի ձմեռուայ սեմեստրին միայն Գ. Մ.-ի երեք անդամները զիրար գտնելով Բերլինում կազմեցին խմբագրական մարմին թերթի պատասխանատուութիւնը իրենց վրայ առնելով՝ համաձայն Գ. Մ.-ի որոշման։

Վերոյիշեալ նիստում որոշուած էր անպատճառ 2 թիւ հրատարակել մինչեւ նոր տարին, մանաւանդ որ չչուկ էր պտտում թէ Դաշ. Վ Ընդհ. ժողովը լինելու է Յունուարին. ուստի ըստ կանոնագրութեան ստիպողական լինելով Ուսանողական համագումարը, անհրաժեշտ էր դառնում գէթ երկու թիւ լոյս ընծայել որպէսզի համագումարը կարողանար դրանց վրայ հիմնուած մի վճիռ կայացնել։

Այստեղ միայն տպարանական անյարմարութիւնները ուշացուցին գործը եւ միայն Փետր. ամսի վերջերին լոյս տեսաւ N° 1-ը, իսկ N° 2-ը հրատարակուեցաւ Ապրիլի սկզբներին. այդպէս Միութեան համագումարը երկու թիւ ունեցաւ իր աչքի առաջ։

Գուցէ աւելորդ չի լինի [նշել] նաեւ թէ ինչպէս են ցրուած թուերը։

Կ. Պոլիս	200
Զմիւռնիա	50
Կարին	20
Վան	20
Թաւրիզ	20
Սալմաստ	10
Թեհերան	15
Ժընեւ (նաեւ Ցիւրիխ եւ Բերնի համար)	80
Լօզան	20
Բերլին (Գերմանիայի համար)	100
Բուլգարիա	30
«Հայրենիք»-ին Բոստոն	35
Կովկաս	50
Տրապիզոն	10
	660

Եթէ այդ բոլոր ղրկուած թուերը սպառուեն եւ արդիւնքը մեր ձեռքը հասնի, միայն այն ժամանակ կարող ենք ասել որ թերթը գոցում է իր ծախսերը։

*
* *

Գործադիր Մարմինը այդ վիճակագրական տեղեկութիւններէն յետոյ իր տեղեկագիրը վերջացնում էր հետեւեալ տողերով՝

— Ահա այս է մեր Միութեան մի տարուայ գործունէութեան ընդհանուր պատկերը «որը ըստ ինքեան որքան էլ պակասաւոր լինի բայց եւ այնպէս այս ռէակցիայի օրերում մի խոշոր քայլ է դէպի առաջ, դէպի կուսակցական պարտականութիւնների բարեխիղճ կատարումը։

Այս բոլորից յետոյ թերեւս աւելորդ չի լինիր որ մի ընդհանուր ակնարկ ձգենք Եւրոպայի դաշնակցական ուսանողների արդի տրամադրութեան վրայ՝ համաձայն այն տպաւորութիւնների, որ Գ. Մարմինը ստացել է այս մի տարուայ ընթացքում։

Քաղաքական տրամադրութիւնը այն մեծութիւններից մէկն է, որը չափելու եւ ճշտօրէն գնահատելու համար ամենամեծ չափով պէտք է ի նկատի ունենալ միջավայրը, ժամանակը եւ հանգամանքները։ Եւ մեր ուսանող ընկերների տրամադրութիւնը գնահատելու համար եւս չպէտք է աչքաթող անենք այդ մոմենտները։

Արդ մենք մի քանի անգամ արդէն առիթ ունեցանք շեշտելու բոլորին յայտնի քաղաքական այն անտարբերութիւնը, որ այսօր համակել է ոչ միայն ուսանողութիւնը այլ եւ երէկուայ ակտիւ կռուով յափշտակուածների բանակը. բաւական է մի հարեւանցի ակնարկ ձգել մեզ հետ միեւնոյն միջավայրում գործող քաղաքական կուսակցութիւնների վրայ, բաւական է միանգամ պատկերացնել նրանց լքուած շարքերը — եւ մեզ համար պարզ կը լինի այն ընդհանուր վհատութիւնը եւ յոգնածութիւնը, որ այսօր պատել է յեղափոխական տարրերին։ Իսկ ոչ-դաշնակցական ուսանողութիւ՞նը։ Դուք գիտէք թէ ի՞նչ է անում այդ ուսանողութիւնը։ Նա կամ բացարձակ հեգնանքով անցնում է յեղափոխութեան տրադիցիաների մօտից եւ անձնատուր լինում «կուլտուրական» գործունէութեան մանրալիք հոսանքներին եւ կամ թէ չէ, լաւագոյն դէպքում յուսահատուած յեղափոխութեան յաղթանակին մէջ՝ քաշուել է իր ուսանողական խուցիկը եւ նուիրուել գիտական աշխատանքի՝ անզգայ դէպի ինքը ուղղուած օրհասական աղաղակները։ Մենք դեռ խօսում ենք փոքր ինչ վայելուչ ուսանողութեան մասին, որ իւր հասարակական կոչման գիտակցութիւնը դեռ չէ կորցրել։ Հապա ուսանողական այն ամբոխը որի գոյութեան նպատակը սրճարաններում ու կանաչ սեղանների շուրջն է դառնում։ Այս-

պէս է ահա այն ուսանողական մթնոլորտը, որի մէջ ապրում է դաշնակցական ուսանողը. պահանջել, որ նա այդ մթնոլորտում էլ երեւան հանէ նախկին տարիների յեղափոխական աւիւնը իր բոլոր ցայտուն պոռթկումներով դա չափազանցութիւն կը լինէր, բայց պահանջել որ նա չխեղդուի այդ անձուկ մթնոլորտում, որ նա հաւատարիմ մնայ յեղափոխութեան աւանդութիւններին, որ նա կենտրոնացնի իւր մտաւոր, բարոյական ուժերը եւ պատրաստուէ գալիք մեծ պայքարի համար՝ այդ կարելի է եւ դաշնակցական ուսանողութիւնը այսօր իսկ ընդհանրապէս արդարացնում է այդ պահանջը»։

*
* *

Գործադիր Մարմնոյ զեկուցումը լսելէն յետոյ ժողովը վիճաբանութեան նիւթ դարձրեց այդ Մարմնոյ գործունէութիւնը. թեր ու դէմ վիճաբանութենէն յետոյ անցաւ հետեւեալ բանաձեւը՝

«Ժողովը լսելէ վերջ Գ. Մ.-ի տեղեկագիրը եւ բացատրութիւնները նկատեց որ թէեւ եղած են ինչ ինչ գործեր, որոնք կամ անտեսուած են եւ կամ դանդաղօրէն յառաջ տարուած՝ սակայն վերահասու լինելով թէ նա ամէն ջանք չէ խնայած իր պաշտօնին յանձնուած կիրառութեան համար, յայտնելով իր գոհունակութիւնը անցնում է օրակարգին»։

Միութեան բիւրջէն քննելու համար ընտրուած յանձնաժողովը հետեւեալ տեղեկութիւնը ներկայացրաւ.

1. Ա. Համագումարի համար եւ նրա ընթացքում եղած հաշիւը չկայ։

2. Ամբողջ Միութեան մէկ տարուան հաշիւը չկայ, այլ միայն Գործադիր Մարմնի հաշիւներն են ներկայացրուած*։

3. Գործադիր Մարմինը իր առօրեայ ծախսերի մասնաւոր տեսր չունի։

4. Միութեան ընդհանուր միջոցներից չնորհաւորական կամ ցաւակցական հեռագիրներ տալ չի կարելի։

5. Հաշիւները թէեւ ցրուած եւ անկանոն, բայց ճիշտ են։

*) Այն հաշիւը որ մենք ներկայացրել ենք յետոյ է կարգի բերուել։

*
* *

Զեկուցումները լսելէ եւ նրանց հետ առնչութիւն ունեցող աշխատանքները վերջացնելէ յետոյ ժողովը անցաւ օրակարգի միւս հարցերին։

«ՈՒՍԱՆՈՂ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆը

Կարելի է ասել որ օրգանի հարցը դարձաւ համագումարի զբաղումներու գլխաւորագոյնը եւ ամէնէն աւելի ժամանակ խլեց։

Վիճաբանութիւնները դարձան հետեւեալ խնդիրների շուրջը.

1. Ուսանողի հրատարակութիւնը շարունակել թէ դադրեցնել։

2. Ի՞նչ պայմաններով հրատարակել. ա) պարբերական բ) պատասխանատու խմբագրութիւն, գ) տեղը եւ այլն։

3. Ինչպէ՞ս ապահովել նրա գոյութիւնը։

Ա.— Առաջին հարցի վերաբերմամբ կարծիքները խմբւում էին էապէս երկու տեսակէտի շուրջը. ոմանք բոլորովին դէմ էին «Ուսանող»-ի հրատարակման եւ իրենց պատճառաբանութիւնը հետեւեալ բանաձեւով քուէարկութեան դրին.

«Ի նկատի ունենալով, որ Եւրոպայում հրատարակուելիք օրգանը ենթարկուած պիտի լինի մշտական պատահականութիւնների՝ թէ բովանդակութեան եւ թէ նիւթական տեսակէտից, որ այդպիսի թերթը գլխաւորապէս մասնակցող ընկերների համար մի վարժարան պիտի լինի, իսկ այդ նպատակը չպիտի արդարացնի այն ծախսերը եւ ուժաբաժանումները, որ պիտի գործադրուի դրա վրայ, որ այդպիսի մի թերթի ֆունկցիաներից շատերը կարելի է կատարել մեր միւս օրգաններում աշխատելով, որ այժմ այդ թերթը միամսեայ դարձնելու ոչ մի նախենթադրութիւններ գոյութիւն չունեն, որ երկամսեայ կամ եռամսեայ դարձնելու դէպքում՝ նրան վերագրուած արժէքներից շատերը պիտի կորչեն եւ որ նիւթական հնարաւորութեան դէպքում աւելի մեծ արդիւնքով կարելի է Տաճկաստանում կամ Կովկասում մի շաբաթաթերթ կամ օրաթերթ կեանքի կոչել՝ առաջարկում է «Ուս.»-ի հրատարակութիւնը դադրեցնել»։

Ժողովի ճնշող մեծամասնութիւնը կողմնակից էր թերթի հրատարակման. 11 ձայնով ընդդէմ 2-ի, 1-ի ձեռնպահութեամբ անցաւ հետեւեալ բանաձեւը։

«Ընդունելով, որ ներկայումս կուսակցութեան իրականութեան մէջ «Ուս.»-ը իր տեսակի մէջ մի օրգան է որ հնարաւորութիւն ունի՝

1. Պարզաբանել կուսակցութեան ծրագիրն ու սկզբունքները,

2. Քննադատօրէն անդրադառնալ կուսակցութեան կեանքի զանազան արտայայտութիւնների վրայ, 3. դիմագրաւել այն յարձակումները, որ մեր կուսակցութեան դէմ կատարում է հակառակորդ մամուլը. 4. օրգանական կապ հաստատել Միութեան խմբերի եւ ցրուած անդամների միջեւ. 5. հրապուրել ուսանող ընկերներին կուսակցութեան համար հարկաւոր գրական գործունէութեան. այլ եւ նկատի ունենալով այն ընդունելութիւնը, որ գտել է «Ուս.»-ը թէ Միութեան խմբերի եւ թէ դրսի ընկերների կողմից՝ Համագումարը որոշում է առաջիկայում հրատարակել «Ուս.»-ը հետեւեալ հիմունքներով. ա) «Ուս.»-ը համարւում է Միութեան պարբերական օրգանը. բ. «Ուս.»-ի համար ընդունւում է մի պատասխանատու խմբագրական մարմին, որի խմբագրական իրաւասութեան սահմանները որոշւում են առանձին կանոններով»։

Բ.— Թերթի մանրամասների շուրջը եղած վիճաբանութիւններու արդիւնքը լինում են հետեւեալ որոշումները.

1. Թերթը լինելու է պարբերական. երկամսեայ, մինչեւ 1910 Յունուար պէտք է դեռ լոյս տեսնէ չորս թիւ աւելի մեծ ծաւալով։

2. Խմբագրական մարմինը կազմուած է լինում 3 անդամից եւ 2 փոխանդամից, որոնք ընտրւում են համագումարից եւ պատասխանատու են նրա առաջ։ Եթէ մինչեւ յաջորդ համագումար խմբագրութեան անդամները պակասեն, խմբագրութեան մնացած անդամները եւ Գոր. Մարմինը միասին նշանակում են նորերին։

3. Թերթի դրամական հաշիւը պահում է խմբագրական մարմինը ամէն թուէն վերջ մանրամասն հաշիւ տալով Գործ. Մարմնին։

4. Թերթի տպագրութեան տեղի վերաբերեալ եղած երկար վիճաբանութիւնից յետոյ որոշուեց յանձնարարել ապագայ Գործ. Մարմնին եւ խմբագրութեան ջանալ յարմարութիւն ստեղծել, որ թերթը տպագրուի Ժընեւում, եթէ այդ չեղաւ, շարունակել տպագրութիւնը Պարիզում, իսկ եթէ այդ էլ անհնար դարձաւ, նոր միայն մտածել Պոլսի կամ Զմիւռնիայի մասին։

5. Խմբագրութեան իրաւասութեան սահմանների մասին տեղի ունեցած թեր ու դէմ կարծիքները յանգան մի եզրակացութեան՝ հետեւեալ բանաձեւի մէջ.

«Խմբագրութիւնը պատասխանատու է եւ պարտաւոր է հսկելու որ՝

1. Իւրաքանչիւր յօդուած ըստ իր բովանդակութեան համապատասխանի «Ուսանող»-ի ծրագրին,

2. Յօդուածը ունենայ գրական գիտական լրջութիւն, մշակուած եւ օտարաբանութիւններից ազատ լեզու։

3. Թերթը իր լրիւ բաժիններով հանդէս գայ։

4. Խմբագրութիւնը պիտի տեղ տայ բոլոր վիճաբանական յօդուածներին սկզբունքային հարցերի վերաբերեալ, բայց նրա իրաւունքն է մերժել այնպիսի յօդուածներ, որոնք կարող են վտանգել կուսակցութեան այս կամ այն ձեռնարկը»։

Գ.— Ապա համագումարը անցաւ թերթի նիւթականը ապահովելու խնդրին։ Վճռուեց յանձնարարել ապագայ խմբագրական Մարմնին եւ Գ. Մ.-ին ջանալ կանոնաւորել տարածման գործը զանազան քաղաքներում նշանակելով գործակալներ ընկերներից։ Շտապեցնել գանձել մինչեւ այժմ ցրուած օրինակների գինը. բանալ բաժանորդագրութիւն եւ աշխատել պահանջի համեմատ բարձրացնել հատավաճառի գինը։

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Այս կէտի վրայ առանձնապէս չենք ուզում ծանրանալ, քանի որ սրբագրուած կանոնագիրը լոյս պիտի տեսնէ շուտով առանձին գրքոյկով, որով եւ հնարաւոր դարձուցած կը լինի ընթերցողներին տեղի ունեցած փոփոխութիւնները անձամբ նկատելու։

ՁԱՆԱՁԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Համագումարը ընդունեց զանազան խմբերու կամ անհատ ընկերներու կողմէն եղած հետեւեալ առաջարկները։

1. Համագումարը պարտաւորեցնում է Եւրոպայի Դաշ. Ուսանողներին չէզոք եւ անկուսակցական ուսանողների շրջանում բեֆերատներ[8] կարդալ ծրագրային եւ այլ ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող խնդիրների մասին եւ այդպիսով մասամբ գոնէ շարժել այդ ուսանողների հետաքրքրութիւնը դէպի հասարակական հարցերը։

2. Խմբերում տեսական աշխատանքները ընդհանուր դարձնելու համար համագումարը առաջարկում է որ այն խմբերում, որտեղ նոր ուսանողները իրենց պատրաստ չեն զգում ինքնուրոյն բեֆերատներ կարդալու՝ գոնէ աշխատեն զանազան հասարակագիտական նշանակութիւն ունեցող հեղինակութիւնների կոնսպէկտներ[7] անել եւ այդ առթիւ վիճաբանութիւններ կազմել։

3. Համագումարը ընդունում է, որ ռուէ խմբի կողմից եթէ մի գործի է ձեռնարկւում, որի մասնակցութիւնը տարածւում է բոլոր խմբերի վրայ՝ պէտք է նախապէս առնէ Գործ. Մարմնի համաձայնութիւնը։

4. Համագումարը յանձնարարում է Գործ. Մարմնին մի անկէտ[111] կազմել իմանալու համար Եւրոպայում գտնուող բոլոր դաշ. ուսանողների թիւը։

5. Համագումարը դիտողութեան առնելով այն դրժբախտութիւնը, որ հասել է Սոցիալիստ Յեղափոխական կուսակցութեան յանձին Ազէվի[112] պրովոկացիայի՝ յանձնարարում է Գործ. Մարմնին Միութեան անունից ցաւակցութիւն յայտնել մեր գաղափարակից կուսակցութեան*։

6. Համագումարը ընդունելով տաճկահայ ուսանողութեան կազմակերպութեան անհրաժեշտութիւնը բուն իսկ երկրում իր դրօշակի տակ, յանձնարարում է Գործ. Մարմնին պատեհ առիթից օգտուել այդ նպատակը իրագործելու, իսկ մինչեւ այդ աշխատել լայն յարաբերութիւն պահպանել այդ ուսանողութեան հետ։

7. Նկատելով որ անցեալ տարի խմբերը մի անբացատրելի անտարբերութեամբ մեծ մասամբ չեն տուած իրենց անդամավճարները՝ համագումարը իր ցաւն յայտնելով այդ մասին յանձնարարում է խմբերին եւ անհատներին աւելի գիտակցօրէն վերաբերուել դրան եւ ապառիկների հետ յաջորդ ամսավճարներն ալ գանձել անյապաղ։

8. Համագումարը յանձնարարում է Գործ. Մարմնին աշխատել տեղեկանալ կուսակցութեան գործունէութեան մասին եւ պարբերական տեղեկութիւններ տալ խմբերին։

*) Գործ. մարմինը այդ պարտականութիւնը կատարել է. ուղարկուած ցաւակցականն է.

ՌՈՒՍ ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐ. ՄԱՐՄՆՈՅՆ՝
Փարիզ

Սիրելի ընկերներ,

Եւրոպայի Հ. Յ. Դաշ. Ուսանողների Միութիւնը իր երկրորդ համագումարում՝ կայացած 1909 ապրիլ 10-15-ին միաձայն վճռեց Ձեզ արտայայտել իր խորին համակրութիւնը այն դժբախտութիւններու առիթով, որոնք Ձեզ են հասել Ազեվի ստոր դաւաճանութիւնների պատճառաւ։

Գիտակ այն փառաշուք անցեալին, որով պսակուած է Ձեր կուսակցութիւնը մենք հաւատացած ենք որ շուտով Ձեզ կը տեսնենք կռուի դաշտում յաղթանակին համար այն իտէալի որով խանդավառուած էք դուք։ Սիրելի ընկերներ, Մենք Ձեզ ղրկում ենք մեր երիտասարդական լաւագոյն բաղձանքները որ Ձեր կուսակցութիւնը վերականգնի այս ցաւոտ փորձանքներէն. բան մը որ հրճուանքը պիտի կազմէ բոլոր անկեղծ յեղափոխականներու՝ նաեւ մեր՝ Ձեր ընկերներու։

Եղբայրական բարեւներով
ԳՈՐԾ. ՄԱՐՄԻՆ

Այս ընդունուած առաջարկներէն զատ մասնաւորապէս երկար վիճաբանութիւնների տեղի տուեց Ժընեւի «Ձանք» խմբի կողմէն եղած այն առաջարկը թէ ուսանողները պէտք է գնան կովկասում ձերբակալուած ընկերների տեղը բռնելու։ Այդ խնդրի շուրջը կար երեք կարծիք. ոմանք գտնում էին որ համագումարը պէտք է նշանակէ կարող անձնաւորութիւններ եւ նրանց վրայ բարոյական պարտք դնէ արձագանգ տալ կարիքին։

Ոմանք գտնում էին, որ ուսանողից այդ տեսակ զոհողութիւն պահանջել շատ ծանր է եւ կարող է ճակատագրական դեր խաղալ նրա ապագայի վրայ։

Երրորդ խումբ մտածողները գտնում էին որ քուէարկութեամբ գնալը պարտաւորիչ դարձնել այս կամ այն ընկերոջ համար չէ կարելի. չէ կարելի այն պարզ պատճառաւ, որ գուցէ ընկերը պատրաստ չէ զգում իրան եւ կամ պարզապէս չի ուզում գնալ, այդ զոհողութեան ընդունակ չէ, ուստի կը բաւէ փաստը պատկերացնել եւ կոչ անել ընկերներին արձագանգ տալու այդ մեծ անհրաժեշտութեան։ Այս վերջին տեսակէտը չահեց ձայների մեծամասնութիւնը։

Այդ առաջարկներէն զատ ընկ. Մ[արտիրոս] Ց[արութիւնեան] զեկուցանելով «Ազատութեան Մատենադարանի» մասին, յայտնեց որ ընկերների հսկողութեան տակ յառաջ է տարուում մի շարք հանրամատչելի, աժան եւ անհրաժեշտ գրքերի հրատարակութիւն, որ ինքը նամակ է ստացել այդ ձեռնարկի վարիչներից հարցը պարզել համագումարում եւ հրաւիրել ընկերներ աշխատակցելու, որ արդէն մի քանիսը ձեռնարկած են զանազան գրքոյկների պատրաստութեան, ուստի ցանկալի է որ այդ օրինակը չմնայ կղզիացած այլ ընդհանուր դառնայ։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Համագումարը իր ներքին աշխատանքը աւարտած համարելով անցաւ ընտրութիւններին։

Ըստ որոշման պէտք է լինէին Գործ[ադիր] եւ Խմբագրական զատ մարմիններ տարբեր ֆունկցիաներով, իւրաքանչիւրը բաղկացած 3 անդամէ եւ 2 փոխանդամէ։

Ցանկալի էր համարուում նաեւ որ այդ մարմինները զատ-զատ երկրներում լինեն, իսկ անդամները ըստ կարելւոյն իրար մօտ։

Գաղտնի քուէարկութիւնը տուեց հետեւեալ արդիւնքը.

Գործ. Մարմնի անդամներ են ընկ. Վ. Ք[րմոյեան], Ա[րա] Մ[ամիկոնեան] եւ Ա[րտաշէս] Բ[աբալեան]։ Փոխանդամներ՝ ընկ. ընկ. Գ[արեգին] Տ[իւրկէրեան] եւ Տ[իգրան] Ո[ւնանեան]։

Խմբագրական Մարմնի անդամ ընկ. ընկ. Վ. Վ[ալադեան], Մ[իմոն] Ն[արինեան] եւ Բ[արսեղ] Կ[իւլպէնկեան]. Փոխանդամ՝ Ա[րմենակ] Բ[արսեղեան] եւ Մ[ելքոն] Ք[րիչչեան]։

Այսպէսով խմբագրութիւնը համարեա կենտրոնացաւ Գերմանիայում իսկ Գ[ործադիր] Մ[արմին]ը Շվէյցարիայում։

Այդ նշանակումներէն վերջ ժողովը անցաւ Ուսանողութեան պատգամաւորի ընտրութեան V Ընդհ. ժողովի համար։

Միաձայնութեամբ պատգամաւոր կարգուեց ընկ. Մ[արտիրոս] Ց[արութիւնեան] իսկ թեկնածու (ընկ. Մ. Ց.ի չկարենալ գնալու դէպքում փոխարինող) ընկ. Հ[այկ] Մ[ելքոնեան]։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ V ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Մօտենալ այդ օրակարգի քննութեան ամբողջ լայնութեամբ առանց ժամանակի սահմանափակում ի նկատի ունենալու կը նշանակէր մի քանի շաբաթ տրամադրելի ընել։ Իսկ այսչափ մնալ ոչ մի ձեւով չէր կարելի. օրինակ ութ ժամ տեւող ժողովների առթիւ յոգնածութիւն եւ մանաւանդ Գերմանական ոստիկանութեան հսկողութիւնը անհրաժեշտ էին դարձնում շուտով վերջացնել համագումարը, ուստի ժողովը կարճ ժամանակի մէջ շատ գործ կատարելու դիտաւորութեամբ ընտրեց տեսական գլխաւոր յօդուածները եւ զանոնք միայն քննութեան ենթարկեց. իւրաքանչիւր ընկեր յանձն առաւ այդ ընտրուած հարցերէն մէկի մասին զեկուցանել. այդ զեկուցումներէն յետոյ միայն սկսում էին վիճաբանութիւնները։ Այդ հարցերի քննութիւնը աւելի լիակատար կերպով կատարելու համար վճռուեց նաեւ «Ուսանող»-ի միջոցաւ ջանալ լուսաբանել այդ խնդիրները, դրանից զատ հրահանգ տալ Միութեան խմբերին իրենց ժողովներում լայն կերպով մօտենալ այդ հարցերին եւ ապա եզրակացութիւններ հանել։

*
* *

Ժողովի փակումը տեղի ունեցաւ ամսի 15-ի երեկոյեան նիստին։ Երբ ընկ. Ա[րա] Մ[ամիկոնեան] վերջացրեց իր զեկուցումը Պարսկական շարժումների մասին յիշելով թէ ինչպէս Հ. Ց. Դաշնակցութիւնը այդտեղ երեւան է եկած իր մաքուր յեղափոխական գաղափարականութեամբ կռուելու միջազգային ազատութեան համար, որ այդ ազատութիւնը մեզ համար շատ թանկ է որովհետեւ մեր կուսակցութիւնը թանկագին զոհեր է տուել այնտեղ յանձին Սաքոների, Մարտիրոսների եւ Զուլումաթների. խօսք վերցրեց ընկ. Մ[արտիրոս] Ց[արութիւնեան] շեշտելով առանձնապէս այն զուտ իտէալական գործը, որ յերեւան են բերում այդ հերոսները, որ նրանք ժողովրդի իսկական զաւակ լինելով մարմնացնում են այդ ժողովրդի կոյս եւ անպաճոյճ բայց հզօր գաղափարականութիւնը. ինչո՞վ բացատրել այն երեւոյթը, որ նոյնիսկ կարդալ գրել չգիտցող մէկը այնպիսի մի համոզմունք եւ գիտակցութիւն է դնում իր անօրինակ անձնազոհութիւնների եւ հերոսութիւնների մէջ, որ ամէն մարդ իսկ մնում է շուարած. դա նոյն ժողովուրդն է, որ իր բնածին ուժեղ հերոսութիւնն է կենտրոնացնում այդ անհատների մէջ։ Այդ անմոռանալի ռազմիկ ընկերների յիշատակը յարգելու համար ընկերը առաջարկում է ոտքի կանգնել, որ եւ կատարւում է։ Ապա խօսելով մեր Միութեան մասին մի համեմատութիւն է անում առաջին եւ երկրորդ համագումարների մէջ եւ գտնում է, որ թէեւ առաջին համագումարը աւելի էր շքեղ իր արտաքինով եւ աւելի ոգեւորուած տրամադրութիւն էր իշխում այնտեղ, երկրորդը դրա փոխարէն աւելի խորն է ըմբռնել իր անելիքը եւ աւելի գործի բնաւորութիւն է կրում։ Նա գտնում է մեր Միութեան ծառայութիւններից մէկը նրանում, որ մի շարք ընկերներ նրանից ստացած մղումների շնորհիւ նուիրուել են ինքնազարգացման եւ հսկայական յառաջադիմութիւն արել։ Նա փակում է իր խօսքը ասելով որ այս հանգամանքը գրաւական է որ Միութիւնը ապագայում նոյն ուղղութեամբ աւելի ինտենսիւ[113] քայլեր կ'անէ։

Վերջին խօսքի մէջ նախագահող ընկ. Ա[րա] Մ[ամիկոնեան] համեմատում է ընդհանուր լքման եւ դասալքութեան հետ մի խումբ ուսանողներ, որք ոչ միայն չեն դաւաճանել իրենց գաղափարին, այլ դեռ զոհաբերում են իրենց ժամանակը եւ դրամը եւ ձգտում են իրենց սիրած գործին յաջողութիւնը ձեռք բերելու, ու դրա մէջ է գտնում ժամանակակից մռայլ իրականութեան միակ մխիթարական կողմը։

Բարի երթ մաղթելով ընկերներին ժողովը փակում է։

«Ուսանող», 1909, Գ. թիւ, էջ 199-220

111.- Հարցաթերթ, հարցախոյզ։

112.- Ռուս Ընկերվար-յեղափոխական կուսակցութեան «մարտական կազմակերպութեան» ղեկավար, որուն երեւան գալը իբրեւ դաւաճան եւ լրտես ցարական գաղտնի սպասարկութեանց՝ մեծ ցնցում առաջացուցած էր այդ կուսակցութեան շարքերուն մէջ։

113.- Ուժգին, արդիւնաւէտ։

Փաստ. 1469-154

Դ 6.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Սիրելի ընկերներ,

Անցան արձակուրդային ամիսները եւ դուք այժմ նորէն հաւաքուելով վերսկսելու էք այն աշխատանքը, որն ընդհատել էք Յուլիսին:

Այժմ երբ իւրաքանչիւր ուսանող իր հետ բերում է մտքի թարմութիւն, կազդուրուած ուժեր, երբ շատեր պատեհ առիթից օգտուելով բերում են նորութիւններ, երբ խմբերը ստուարանում են նորեկ ուսանողներով՝ պատրաստ անձնուիրաբար աշխատելու այն գործի համար, որից է կախուած մեր՝ ուսանողներիս անունն ու հմայքը, այժմ մենք կարծում ենք, որ բոլոր ընկերները մի նոր թափով կը փարեն գործին, նրան տալով արժանի թռիչք, որ այն գաղափարները, որոնց շուրջը հաւաքուել ենք, աւելի լայն չափով հոսեն դէպի այն ժողովուրդը, որի զաւակներն ենք, դէպի այն դասակարգը, որի դատն է ստանձնել մեր կուսակցութիւնը:

Գործադիր Մարմինս, ողջունելով բոլոր խմբերը, եռանդ եւ ոգեւորութիւն ցանկալով բոլոր խմբերին եւ անդամներին թէ՛ իրենց անհատական աշխատանքների մէջ եւ թէ կուսակցական գործերում, խնդրում է ըստ նել պարբերական հաւաքումները, մասնաւորապէս ուշադրութիւն դարձնել Ուսանողական Բ. համագումարի զեկուցման վրայ («Ուսանող», 3րդ թիւ) եւ ջանալ բացասական կողմերը չէզոքացնել, իսկ դէպի դրական կողմերը աւելի ինտանցիւ[113] քայլեր անել:

Խնդրում ենք նմանապէս ամենակարճ ժամանակամիջոցում մեզ ղրկել՝

ա) Տեղական Վարիչ Մարմնի անդամների անունները եւ ներկայացուցչի հասցէն.

բ) Մի մանրամասն զեկուցում Բ. Համագումարից մինչեւ այժմ,– խմբի անդամների թիւը, անդամավճարների հաշիւը, դասախօսութիւնների քանակը, նիւթը եւայլն:

գ) Անմիջապէս գանձել մնացած անդամավճարները եւ խմբում եղած դրամի հետ մեզ փոխադրել: Այս կէտը մասնաւորապէս ընկերների ուշադրութեանն ենք յանձնում նկատի ունենալով Միութեան նիւթական դեղ կացութիւնը եւ այդ պատճառաւ «Ուսանող»ի հրատարակութեան դժուարութիւնները:

դ) Մեզ հաղորդել Ձեր տպաւորութիւնը «Ուսանող»ի մասին՝ հարցին մօտենալով բազմակողմանի կերպով.– յօդուածների, ծաւալի, լեզուի եւայլն: Ցանկալի է որ այս ուղղութեամբ իւրաքանչիւր ընկեր ընդարձակ բերել մեր շարքերից դուրս, թող մեզ հաղորդակից անեն: Այդ գնահատականները եւ քննադատականները հիմք կը ներկայացնեն «Ուսանող»ի խմբագրական Մարմնին գործը աւելի համապատասխան կերպով տանելու:

Այս կէտերէն զատ մենք ընկերների ուշադրութիւնն ենք հրաւիրում «Ուսանող»ին լայնօրէն մասնակցելու անհրաժեշտութեան վրայ. դրանով միայն կարելի է լեցնել այդ թերթի հրատարակութեան գլխաւոր նպատակներից մէկը:

Վերջացնելով նամակը մենք յոյս ունենք, որ խմբերը հնարաւոր վայրերում երեկոյթներ սարքելով Գ. Մ.ին հնարաւորութիւն կու տան համագումարների որոշումները նոյնութեամբ կատարելու. մենք յոյս ունենք նաեւ որ ներկայ տարին իրեն բովանդակութեամբ, իր կեանքով անբաղդատելիօրէն բարձր կը լինի:

Ընկերական բարեւներով՝
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

ՆԻՒԹԵՐՈՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
UNION
des ÉTUDIANTS ARMÉNIENS
DASCHNAKTZAKANS
DE L'EUROPE
1908
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

13-11-1909, Ժընեւ

Փաստ. 1469-142

Դ 7.– ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Դամասկոս 25 Դեկտ. 1909

Սիրելի ընկերնե՛ր,

Տաճկահայ ուսանողութիւնը՝ տասնեակ տարիներէ ի վեր բռնապետութեան ահաւոր ճիրանին ներքեւ ինկած, եւ չկրնալով դիմանալ հակառակ նոյնքան ճիգերուն, գրեթէ մինչեւ այսօր խելայեղ վիճակի մը մէջ կը գտնուի։

Թէեւ Տաճկաստանի անուանական սահմանադրութեամբ երկրին կարգերուն եւ ընկերական հիմքերուն փոփոխութեան մը կը սպասէինք, սակայն դեռ մեր ապրած միջավայրի ժողովրդեան տրամադրութեանց համաձայն, տարիներ եւս պէտք են մինչեւ որ հին ռեժիմի եւ կամ գերութեան բարոյական եւ ֆիզիքական ստրկացումները վերնան եւ ժողովուրդը ամոքուի իր դարաւոր ցաւերէն եւ մաքրուած՝ իր ազատ զգացումներուն եւ թռիչքներուն կաչկանդումէն, դիմէ այն իտէալին, որը հայ մտաւորականութեան նշանակէտն է։ Սակայն, ինչպէս ձեզ յայտնի է, կիկլոններ եւ ահագին փոթորիկներ՝ օդի անզգալի հոսանքներու արդիւնք են, նմանապէս պատմութեան մէջ միշտ անհատներ եղած են ժողովուրդը դէպի բարձրագոյն գաղափարականին առաջնորդող։

Դամասկոսի Հ.Յ.Դ. ենթակոմիտէն, որ բժշկական վարժարանի ուսանողական տարրերէն կազմուած է, քիչ բացառութեամբ, այսօր պարտք կը զգայ ըլլալ ռահվիրան՝ կազմակերպելու [համար] ընդհանուր տաճկահայ ուսանողական միութիւն մը, յենած Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան առաջնորդիչ դերին, լեցնելու ահագին պակաս մը, որմէ զուրկ են հայ ուսանողները։

Ուստի մեր նորակազմ միութիւնը նախ կը շնորհաւորէ ձեր ջերմեռանդ գործունէութիւնը, մանաւանդ «Ուսանող» ամսագրի այն դերին համար, որը հոգեբանական եւ գաղափարական ահագին ներգործութիւն կ'ընէ տաճկահայ ուսանող տարրին։

Մի վհատիք ընկերներ, եւ մենք ձեզ կը հետեւինք արդէն. ձեր գաղափարին յաղթանակը տանելու համար մի խնայէք այն ինչ որ հարկաւոր կը սեպէք, եւ օր մը պիտի տեսնէք ձեր աշխատանքը պսակուած։ Իսկ որպէսզի ձեր նպատակը աւելի արդիւնաբեր ըլլայ, ոյժ տուէք տաճկահայ ուսանողին մտաւորական զարգացման եւ մանաւանդ մի խնայէք ձեր աջակցութիւնը մեզ՝ ըլլալու ձեզի հետեւողներ՝ կազմակերպելու [համար] տաճկահայ ուսանողութիւնը։

Այս առթիւ կը խնդրենք որ մեզի ուղարկէք ձեր ամսագիրը (բաժնեգինը վճարելու պատրաստ ենք), նաեւ ձեր կազմակերպական ծրագիրն ու կանոնագիրը։

Մենք այստեղ պիտի պատրաստենք նոր ծրագիր մը, համաձայն կամ քիչ տարբերութեամբ ձերինին. յետոյ արդէն թղթակցիլ սկսած ենք Տաճկաստանի եւ Հայաստանի գոլէճներու եւ ազգային բարձրագոյն վարժարաններու ուսանողաց հետ։ Եթէ Ծրագիր շատ ունիք, մեծ քանակութեամբ ղրկեցէք մեզի, որ միւս տեղերը ղրկենք։ Յետոյ երբ միւս ճիւղերու հետ երբ համաձայնինք, յառաջիկայ 1910 Յուլիսի առթիւ կը յուսանք ուսանողական պատգամաւորական ժողով մը գումարել վերջնական ծրագիրը եւ գործելակերպը պատրաստել[ու]։ Կը յուսանք չէք խնայեր ձեր աջակցութիւնը։

Ընկերական բարեւներով՝
ԴԱՄԱՍԿՈՍԻ Հ.Յ.Դ.
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Hagop K. Kenderian
Faculté de Médecine
Damas (Syrie)

Փաստ. 1469-186

Դ 8.– ՆԱՄԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Լոզան, 28 XII 909

Գործադիր Մարմնին

Սիրելի ընկերներ,

Ստացանք Ձեր 13 նոյ. թուակիր նամակ-շրջաբերականը, որով ողջունելով մեր խմբակը, ներկայ տարւոյ համար որոշ ցանկութիւններ, յորդորներ եւ մաղթանքներ կ'արտայայտէիք։

Մեր խմբակը համալսարանական տարւոյն հետ սկըսաւ իւր գործունէութեան եռանդագին։ Մենք գիտակից մեր բարձր կոչումին պիտի ջանանք կարելի եղածին չափ մեր վրայ դրուած յոյսերն ու ակնկալիքները իրականացնել. պիտի դիմենք դէպի ապագան աւելի յուսալից եւ աւելի խանդավառ։

Անցեալը ունենալով մեզ իբր հայելի, ներկայիս մէջ պիտի ջանանք կատարելագործուիլ եւ մեր բացասական կողմերը լրացնել, առաւելապէս փարելով վսեմ գործին։

Կը փութանք Ձեզ հաղորդել այս տեղեկութիւնները զորս պահանջած էիք։ Մեր տեղական վարիչ մարմինը կը բաղկանայ հետեւեալ ընկերներէ,— Գարամեան ներկայացուցիչ՝ հասցէ K. Amadian St. Roch 38. Ն. Լուսինեան գանձապահուհի, Տ. Խազանճեան՝ քարտուղար։

Բ. Համագումարէն մինչեւ այժմ խումբէն պակսած են 7 անդամներ, ներկայ տարեշրջանին աւելցած են 4 նորեր։

Անդամավճարները այնքան գոհացուցիչ վիճակ մը չեն ներկայացներ, սակայն պիտի աշխատինք աւելի կանոնաւորել։ Ասկէ գրեթէ 2 շաբաթ առաջ անմիջական պէտքի համար Ուսանողին ղրկած ենք 20 ֆր. փող, այժմ գանձին մէջ կարելի է ըսել փող չկայ։

Բ. Համագումարէն մինչեւ հիմա ունեցած ենք 4 դասախօսութիւններ, որոնցմէ 2ը Club libéral ottoman,[109] *մէջ, 2ը տեղական ուսանողական Արմէնիա միութեան մէջ։* Clubի *մէջ դասախօսած են ընկ. Ջիլինկիրեան՝ նիւթ ունենալով* Féminismeը *Թուրքիոյ մէջ, եւ Գարամեան՝ նիւթ ունենալով կրօնքներու դերերը։ Տեղական ուսանողական միութեան մէջ դասախօսած են ընկ. Բերունի՝*[114] *նիւթ ունենալով ռուս յեղափոխութիւնը եւ ընկ. Գարամեան նիւթ ունենալով՝ պատմական, տնտեսական եւ քաղաքական եւրոպ. Թուրքիան։*

Որպէսզի դասախօսութիւններէն աւելի լայն չափով օգտուողներ ըլլան, մեր խմբակը որոշած է դասախօսութիւնները ընել տեղական ուս. միութեան մէջ, նկատելով որ արդէն բոլոր մեր ընկերները այս վերջնոյն կ'անդամակցին։

Ընկերական բարեւներով

Ի դիմաց Լոզանի Դաշն. Ուս. խմբակի
ԳԱՐԱՄԵԱՆ
Ներկայացուցիչ

114.- Իսկական անունը՝ Յակոբեան Սիմոն։

Փաստ. 1469-181

Դ 9.– ՄՈՆՊԵԼԻԷԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵՆԷՆ ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷԻՆ

Ստորեւ տրուած փաստաթուղթը կը վերաբերի նախկին «Եւրոպայի Հայ Ուս. Միութեան», որուն գործադիր մարմինը, ինչպէս գիտենք, կը կոչուէր Լիազօր կոմիտէ: Այդ միութիւնը, որ վերջին աւելի քան երեք տարիներուն դատապարտուած էր անգործունէութեան, Լոզանի մէջ 1910 թ. Յունուար 2 – 8 ունեցաւ վերջին համագումար մը, որուն համառօտ արձանագրութենէն (տես յաջորդ՝ փաստ. 1470-9) ի յայտ կու գայ որ ան վերջ կու տար իր գոյութեան, լուծարքի ենթարկելով նաեւ իր գոյքն ու մօտը գտնուած գումարները:

Ցարգելի ընկերներ, Լիազօր Կոմիտէին,

Մոնպելիէի այն հայ ուսանողութիւնը, որ մասնակցել է Ե. Հ. Ուս.Միութեան, ուղարկելով վերջինիս համագումարներին իր ներկայացուցիչները, այժմս ամբողջովին ցրուած է։

Մեր ժամեան ուսանողութիւնը, ստանալով Լիազօր Կոմիտէի շրջաբերական նամակները, որով մեզ հրաւիրում էր մասնակցել կայանալիք համագումարին, ամսի 19-ին ժողով գումարեց՝ որոշելու իր բռնելիք դիրքը դէպի Ե. Հ. Ուս. Միութիւնը։

Աչքի առաջ ունենալով, որ Ե. Հ. Ուս. Մ.ը կարող է հայ ուսանողական կեանքի մէջ որոշ դրական գործունէութիւն ցոյց տալ՝ ժողովը ցանկութիւն յայտնեց մասնակցելու Միութեան։ Ուստի առաջարկում ենք մտցնել օրակարգի մէջ հետեւեալ երկու առաջարկութիւնները, որոնք միաձայն վճռուեցին մեր ժողովում եւ որոնց պաշտպանութիւնը յանձն կ'առնեն մեր ներկայացուցիչները կայանալիք համագումարին.—

1- Սոցիալական գրադարան։

2- Գիտական գրադարան։

1) Մեր իրականութիւնը՝ թէ Կովկասում, թէ Տաճկաստանում եւ թէ նոյնիսկ դարաւոր քնի մէջ ընկղմած Պարսկաստանում մեծ փոփոխութիւնների է ենթարկըւել վերջին հնգամեակի ընթացքում։ Դասակարգեր են առաջ եկել եւ յանուն դասակարգի կռիւներ են մղուել։ Սխալները շատ գործուեցին յանուն դասակարգի եւ ի վնաս ճնշուած դասակարգերի։ Առաջ են եկել նոր կարիքներ, որոնց թւում ամենաէականներից է՝ սոցիալական լուրջ գրականութիւն։ Ուսանողութիւնը հեշտութեամբ կարող էր այդ կարիքին բաւարարութիւն տալ՝ հրատարակելով ինքնուրոյն կամ թարգմանական երկեր։ Այս հրատարակութիւնները կարող էին ուղղակի կերպով օգտակար հանդիսանալ աշխատաւոր ժողովրդին, կամ անուղղակի կերպով նոյն նպատակին հասնել՝ իբրեւ ուղեցոյց ծառայելով քիչ դաստիարակութիւն ունեցող, բայց եռանդոտ պրոպագանդիստներին։ Մենք համոզուած ենք, որ այս գործունէութեան մէջ Եւր. Հայ ուսանողութիւնը կարող է դրական գործ կատարել։

2) Ուսանողութեան ամբողջութիւնը անկարող է զբաղուել սոցիալական հարցերով, որովհետեւ ամբողջութիւնը չէ ընտրել իբրեւ իւր մասնագիտութիւն՝ սոցիալական գիտութիւններ։ Անշուշտ, կարող են լինել այլ մասնագիտութիւն սովորողների մէջ այնպիսի անհատներ, որոնց պատրաստութիւնը աւելի բարձր լինէր քան ռեւէ սոցիալական գիտութիւնների ուսանողինը. այսպիսի անհատներ անշուշտ օգտակար կարող են լինել սոցիալական գրադարան կազմելու դէպքում։ Սակայն ուրիշ ուսանողներ կարող են իրենց անզօր զգալ հասարակական հարցերի խնդիրներում, բայց օգտակար դեր կատարել ուրիշ ասպարէզներում, այսինքն այնպիսի ասպարէզներում, որտեղ նրանք ապագայում գործելու են։

Միւս կողմից աչքի առաջ պէտք է ունենալ, որ մեր ուսումնարանները՝ ստորին թէ միջնակարգ, զուրկ են դասագրքերից. մեր գրականութիւնը համարեա ոչինչ չէ տուել այնպիսի օգտակար եւ անհրաժեշտ գիտութիւնների կամ արուեստների մասին ինչպիսի են՝ բնագիտութիւն, ֆիզիք, քիմիա, բժշկութիւն, գիւղատնտեսութիւն եւայլն։ Այս գիտութիւններն ու արուեստները մեծ դեր ունին եւ անհրաժեշտութիւն է, որ դրանք տարածուին եւ լայն խաւերում տեղ բռնեն մի այնպիսի ժողովրդի մէջ, որպիսին մերն է, որ ձգտում է դէպի մի նոր կեանք եւ այժմս վերածնութեան օրերումն է։

Եւր[ոպայի] հայ ուսանողութեան ձեռնհաս անդամները հեշտութեամբ կարող են այսպիսի գիտական գրադարան կազմելով՝ անպայման օգտակար գործ կատարել։

Եւրոպայի հայ ուսանողութիւնը կազմակերպուելով մի չէզոք ընկերութեան մէջ, որպիսին է Ե. Հ. Ու. Մ.ը կարող է միայն այս երկու տեսակի գրադարաններ կազմելու ասպարէզում գործ տեսնել։ Այս գործունէութիւնը կարող էր ի մի խմբել զանազան կուսակցու-

թիւնների անդամներ Ե.Հ. Ու. Միութեան դրօշակի տակ եւ մի ուրիշ ոչ նուազ կարեւոր գործ կատարել, այսինքն համերաշխութիւն մտցնել ընդդիմադիր կուսակցութիւնների գործունէութեան մէջ ընդդէմ ընդհանուր թշնամուն։

Այս վճիռները կայացնելու ժամանակ ժողովը վճռեց միեւնոյն ժամանակ, որ հրատարակութիւններին յատկացրած գումարի կէսը գործադրուի սոցիալական գրադարան կազմելուն, իսկ միւս կէսը գիտական գրադարան կազմելուն։

Ընկերական բարեւներով՝
ՄՈՆՊԵԼԻԷԻ ՀԱՑ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

25-12-09, *Մոնպելիէ*

Կարդացուած եւ ընդունուած 24-12-ի ժողովին։

Փաստ. 1470-9

Դ 10.– ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԼՕԶԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

1910 Յունուար 2-8

Հրաւէրներ ուղարկուել էին

17 քաղաքների 23 խմբերի

1)	Պարիզ	– 2	խումբ
2)	Մոնպելիէ	– 1	»
3)	Նանսի	– 1	»
4)	Բրիւսէլ	– 1	»
5)	Լիէժ	– 1	»
6)	Բերլին	– 2	»
7)	Լայպցիգ	– 1	»
8)	Միւնխէն	– 2	»
9)	Հալլէ	– 2	»
10)	Ենա	– 1	»
11)	Ցիւրիխ	– 1	»
12)	Բազէլ	– 1	»
13)	Բեռն	– 1	»
14)	Լօզան	– 2	»
15)	Ժընեւ	– 2	»
16)	Հայդելբերգ	– 1	»
17)	Նէոշաթէլ	– 1	»

Նամակներով կարծիք էին ուղարկել երկու խումբ.

1) *Ենայի հայ ուսանողութիւնը,*
2) *Միւնխէնի ուսանողութիւնը։*

Հրաւէրին չէին պատասխանած Բրիւսէլ, Լիէժ, Հայդելբերգ, Նէոշաթէլ. Բերլինի ուսանողութիւնը հրաժարուել էր նոյնիսկ կարդալ շրջաբերականը։

Համագումարին մասնակցում էին —

Քաղաք	խումբ	պատգ.	ուսան. անդամ
Պարիզ	2	7	
Մոնպելիէ	1	1	1
Նանսի	1	1	
Բերլին	1	1	
Հայդելբերգ	1	1	
Միւնխէն (գրատոր կարծիք)	1	1	
Հալլէ	2	2	
Ենա (գրատոր կարծիք)	–		
Ցիւրիխ	1	2	
Բազէլ	–	–	1
Լօզան	2	2	8
Ժընեւ	2	6	3
Բեռն	1	1	
13	15	25	13

Որոշումներ

Մանդատների քննելուց յետոյ Դ. նիստում համագումարն իրեն օրինական համարեց եւ անցաւ օրակարգին։

Համագումարի պաշտօնական բացուելուց յետոյ 3 հոգի (Լայպցիգ, Մոնպելիէ եւ Ժընեւ) հեռացան, հրաժարելով համագումարին մասնակցել՝ նրան ապօրինի յայտարարելով. որից յետոյ ժողովում մնացին 13 խմբի պատգամաւորներ թուով 23 հոգի եւ 10 անդամներ, որոնք միշտ ներկայ էին։

Ա. Նիստ

1910 *Յունուար* 2-*ին* Maison du peuple-*ում. նախագահ՝ Բերեան. մշտական քարտուղարներ՝ Զ. Սագինեան, Ա. Ջիլինկիրեան եւ Տ. Խաչիկեան։ Ներկայ էին* 16 *պատգամաւորներ եւ* 14 *անդամ։*

Բանաձեւ (Իսահակեանի).— «Ի նկատի ունենալով միութեան անցեալ կեանքը, կանոնադրութիւնը եւ նախկին համագումարների կազմութիւնը, մենք գտնում ենք, որ սոյն համագումարն օրինական է տնօրինելու ընկերութեան վիճակը, եթէ նա ներկայացնում է հնարաւոր մեծամասնութիւնը այն բոլոր խմբերի, որոնց ուղղուել է կոչը եւ որոնք արձագանգ են տուել այդ կոչին»։

Քուէարկութիւն.— Դրական՝ 13 *պատգամաւոր եւ* 9 *անդամ. մէկը՝ ձեռնպահ. դէմ են՝* 3 *պատգ. եւ* 5 *անդամ։*

Բ. Նիստ

1910 *Յունուար* 3-*ին* Maison du peuple-*ում. նախագահ՝ Ագուլեան, մշտական քարտուղարներ. ներկայ են* 28 *հոգի։*

Այս նիստը զբաղուած է եղել մասնաւորապէս պատգամաւորներու մանդատների ստուգութեամբ եւ որեւէ բանաձեւ չէ արտայայտել։

Նիստ Գ.

Նոյն օրը, կէսօրից յետոյ, նոյն տեղում. նախագահ՝ Ագուլեան, ներկայութեամբ 30 *հոգիի։*

(Տոքթ. Պաղտասարեան) բանաձեւ.— «Համաժողովն ինքզինքը լիազօր յայտարարելէ ետք՝ զբաղելու համար Եւր. Հ. Ուս. Միութեան վիճակով, կարող է հետեւիլ պատգամաւորներու իրաւասութեան քննութեան [ըստ] միութեան կանոնագրին եւ նախորդ համաժողովներով ընդունուած սովորութիւններու, որմէ վերջ իրեն կը վերապահէ իրաւասութիւն՝ կանոնագրի փոփոխութեան մէջ»։

Դրական՝ 15 *պատգ.* 11 *անդամ. հակառակ՝* 3 *պատգամաւոր։*

Նիստ Դ.

Նոյն օրը, երեկոյեան, նոյն տեղում։ Նախագահ՝ Ա. Իսահակեան. ներկայութիւն՝ 30 *հոգի։*

Բանաձեւ.— Համագումարին մանդատներն ստուգելուց եւ վաւերացնելուց յետոյ եւ գտնելով որ ուսանողական մարմիններու թիւը 25-*էն աւելի չէ, ինչպէս Լիազօր Կոմիտէն ալ յայտարարել է իր շրջաբերականին մէջ. նկատելով նոյնպէս, որ Եւր. Հայ Ուս. Միութեան նախկին համագումարներն ալ օրինական են համարուել, երբ ներկայ է եղել մարմինների պարզ մեծամասնութիւնը. այլեւ ընդունելով, որ այս երկրորդ անգամ է, որ կոչ է արուած ուսանողական մարմիններին՝ համագումար կազմելու. նկատելով որ մարմինների կէսից աւելին այժմ ներկայ են համագումարին, ինչպէս որ տրամադրում է հրաւէրը, համագումարն համարում է իրան իրաւասու»։*

Ե. Նիստ

Լօզան 4-1-10, *նոյն տեղը. ներկայ* 28 *հոգի. նախագահ՝ Ա. Ղազարեան։*

Այս նիստում ոեւէ որոշում չէ անցած։

Նիստ Զ.

Կէսօրէն ետք, նոյն տեղը. ներկայ 28 *հոգի. նախագահ՝ Տք. Պաղտասարեան։*

«Համագումարը երկար քննելով Եւր. Հ. Ուս. Միութեան վերակենդանացման եւ լուծման խնդիրը եւ նկատի ունենալով.—

1) *Որ միութիւնը հայ անցեալ իրականութեան [մէջ] եւ վերջին տարիներում մասնաւորապէս ծառայել է Եւրոպայում տաճկահայ դատի պրոպագանդին, որին համար նա որոշ պատմական դեր է կատարել։*

2) *Որ ներկայումս հայ կեանքն իր հասարակական, քաղաքական ամբողջ բովանդակութեամբ հիմք չի տալիս մի անկուսակցական միութեան գոյութեանը։*

3) *Որ միութեան պատմութիւնն ու փաստերը ցոյց են տալիս, որ անհնարին է համախմբել հայ ուսանողութիւնը մի անկուսակցական մարմնի մէջ։*

4) *Որ միութիւնը փաստօրէն դադրել է գոյութիւն ունենալէ։*

5) *Որ Ե. Հ. Ուս. Մ.եան ճնշող մեծամասնութիւնը բացարձակօրէն բացասական վերաբերում ունի դէպի միութեան վերակենդանացումը։*

6) *Որ կանոնագրին մէջ կէտ չկայ լուծման նկատմամբ, ուրեմն եւ համագումարը լիազօր է այդ խնդրում Ե. Հ. Ու. Մ.ը լուծուած յայտարարելու։*

Ծանօթ.- Այս նիստէն յետոյ՝ մինչեւ 11րդ նիստը ոեւէ բանաձեւ քուէարկուած չէ:

Նիստ ԺԱ.

Լօզան 6-1-10, *նոյն տեղը։ Ներկայ* 30 *հոգի, նախագահ՝ Իսահակեան։*

Բանաձեւ.—

«Ի նկատի ունենալով, որ ընկեր Քրմոյեանի վարմունքը, որի մասին մենք այսօր իմացանք, ոչ մի կերպով չի խախտում մեր համագումարին օրինաւորութիւնը, բայց գտնելով, որ նրա վարմունքն կարող է կրել յանցաւորութեան բնոյթ, համագումարը ընտրում է իր միջից մի յանձնախումբ քննելու նրա վարմունքը

եւ ճշգրտելու նրա յանցաւորութեան չափը, որից յետոյ ընկեր Քրմոյեանը կը յանձնուի դատի — Լօզանի հայ ուսանողներու մէջէն կազմուած մարմնին»։

Նիստ ԺԲ.

Լօզան, 6-1-10 նոյն տեղը, ժամը 3։
Նախագահ՝ Զ. Սագինեան։

Ի. Բանաձեւ.—

«Համագումարն ի նկատի ունենալով, որ Եւր. Հ. Ու. Միութեան Լիազօր Կոմիտէն մի քանի անգամ դիմել է նոյն միութեան համագումարը կայացնելու. նկատելով, որ այդ դիմումներուն միշտ ալ մերժումով են պատասխանել. նկատելով, որ միութիւնը փաստօրէն լուծուած է եւ որ Լիազօր Կոմիտէն իր վերջին Շրջաբերականին մէջ խմբերին դիմել է՝ հաւաքուել գոնէ վերջին անգամ պաշտօնապէս վերջ տալու համար միութեան կեանքին»։

Դրական ձայներով՝ 14 պատգ. եւ 6 անդամ. դէմ՝ 3 պատգ., 6 անդամ։

II. Բանաձեւ.—

«Ի նկատի ունենալով, որ համաձայն միութեան նախկին անդամների միաձայն վկայութեան, միութեան յարաբերութիւնը խմբերի հետ անցեալում եւս ձեւակերպուած պաշտօնական բնաւորութիւն չէ ունեցած, այն մտքով, որ միութիւնը իւր համագումարին մասնակցելու իրաւունք տալու համար, խմբերից ցենզ պահանջէ, բացի դրական որոշ տուրքը, որը նոյնպէս վերին աստիճանի անկանոն կերպով է վճարուել, որու չկարենալը հիմք չէ եղել այս կամ այն խմբին համագումարին մասնակցելու իրաւունքից զրկելու. որ ներկայ ընտրական շրջանում այդպիսի մի կապ աւելի եւս անկարելի պէտք էր լինէր, որովհետեւ միութիւնը տարիներից ի վեր անգործունէութեան է դատապարտուած,— համագումարը գտնում է, որ այդ օրկանական կապի բացակայութիւնը չէ կարող հիմք նկատուել ներկայ համագումարը ոչ-օրինական համարելու»։

Դրական՝ 14 պատգ. եւ 6 անդամ. դէմ՝ 3 պատգ. եւ 6 անդամ։

III Բանաձեւ.—

«Մանդատների վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը լսելուց եւ մանդատները ժողովի մէջ զննութեան առնելուց յետոյ, ժողովն ի նկատի ունենալով, որ ներկայ են զանազան ուսանողական խմբեր իրենց ներկայացուցիչներով՝ համագումարի բացման համար քուէարկութիւն կատարեց. ներկայ ժողովին կազմը բաւարար համարեցին 14 պատգ. եւ 6 անդամ, ոչ բաւարար՝ 3 պատգ. եւ 1 անդամ»։

Ժողովին նախագահը քուէարկութեան իբր հետեւանք յայտարարեց համագումարը բացուած։ Համագումարի բացումէն ետք, ժողովից հեռացան 3 պատգ. ընդդէմ ձայները՝ պ.պ. Ս. Սրապեան (Լայբցիգ), Ս. Տ. Պաղտասարեան (Մոնպելիէ) եւ Ա. Ջիլինկիրեան (Ժընեւ)։

Նկատի ունենալով որ նախքան համագումարի հաւաքումը Ե. Հ. Ու. Մ.եան անդամները 3/4-ից շատ աւելիով լուծման կողմնակից են յայտարարել իրենց. նկատի ունենալով, որ Եւրոպայի ուսանողական խմբերի նոյնպէս 3/4 ձայնով նախորդ նիստում լուծման որոշում է տուել։ Բացի դրանից միութեան կանոնադրութեան մէջ ո՛չ մի կէտ, ո՛չ մի հրահանգ եւ ոչ մի արգելք չգտնելով միութեան լուծման վերաբերեալ, իր Ժբ.րդ նիստում որոշեց վերջնականապէս վերջ տալ Եւրոպայի ուսանողական միութեան։

Այս բանաձեւն անցնում է 18 պատգ. եւ մէկ անդամի ձայնով (37 անդամ). ընդդէմ՝ 4 պատգ. եւ 5 անդամ (7). ձեռնպահ՝ 1 պատգ.։

Նիստ ԺԷ.[115]

Նախագահ՝ Այվազեան։

«Համագումարը ընդունեց յատկացնել Ե. Հ. Ու. Մ.եան դրամական գոյքը՝ 3/4-ը Տարօնի տարրական դպրոցներին, 1/4-ը «Ուսանող» միակ ուսանողական թերթին. կնիքը պահ տալ «Դրօշակ»ի արխիւը եւ գոյքերը ցրուել գրադարան-ընթերցարաններին»։ Անցնում է միաձայն։

Նիստ ԺԸ.

Համագումարն զբաղւում է պատգամաւորների ծախքի խնդրով եւ որոշում է.—

— Եթէ պատգամաւորն ուղարկող մարմիններն անկարող են պատգ.ին ծախքը վճարելու, եթէ պատգամաւորն անկարող է ինքը հայթայթել, համագումարն այդ դէպքում միայն միջոցներ կու տայ։

Ընտրւում է նոր Լիազօր Կոմիտէ՝ Ե. Հ. Ու. Մ.եան բոլոր առկախ հաշիւները կանոնաւորելու, նրա գոյքը տնօրինելու, հաշիւները մաքրելու եւ համագումարի որոշումները գործադրելու համար։

Պաշտօնական լիազօրութեան թուղթ է տրւում նրանց եւ ասոնք պատասխանատու են իրենց ընտրող պատգամաւորների ներկայացուցած մարմինների առաջ։

Ընտրւում են՝ Բերեան, Տ. Պաղտասարեան, Ա. Իսահակեան, Մ. Այվազեան, Պ. Զ. Սագինեան։

Նախքան համագումարը փակելը, նախագահը խընդրում է յարգել միութեան հին, մեռած, ոգեւորուած հիմնադիրներին, անդամներին եւ գործակիցներին, եւ շնորհակալութիւն յայտնելով բոլոր ներկաներին փակում է համագումարը։

Լօզան 8-1-10, ժամը 7-ին։

115.- Կը պակսին ԺԳ., ԺԴ., ԺԵ. եւ ԺԶ. նիստերու արձանագրութիւնները, հաւանաբար որոշումներ կայացուած չըլլալու հետեւանքով։

Փաստ. 1469-216

ՆԻՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

UNION DES ÉTUDIANTS ARMÉNIENS
DASCHNAKTZAKANS DE L'EUROPE

Դ 11.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ընկերնե՛ր,

Մենք սկզբունքով գտնելով, որ տարեկան համագումարը մի շատ ցանկալի գործ է մեզ համար, որ նոյնիսկ եթէ չլինեն շատ հրատապ հարցեր այդ ժողովի օրակարգի մէջ, այնուամենայնիւ համագումարը որպէս այդպիսին մի պլիւս է կուսակցական տեսակէտից. այնուամենայնիւ մենք չենք կարողանում համագումարի մասին դրական վճիռ կայացնել աչքի առաջ ունենալով մեր միութեան նիւթական անձուկ կացութիւնը. եւ օգտուելով այն հանգամանքից, որ ըստ կանոնագրի խմբերի մեծամասնութեան որոշումով համագումարը կարող է յետաձգուել, մենք ձեզ ենք թողնում այդ հարցը վճռել: Եւ որովհետեւ դրամականն է գլխաւոր դերը խաղացողը, ուստի մէջ կը բերենք մեր միութեան դրամական մօտաւոր պատկերը հնարաւորութիւն տալու ձեզ՝ աւելի նպատակայարմար վճիռ կայացնելու համար:

Միութիւնը երկրորդ համագումարից մինչեւ այժմ ստացած է 942 ֆրանք, որից 633,45 ֆր. անդամավճար. 158,35 ֆր. ի հաշիւ «Ուսանող»ի դրսից. մնացածը՝ նուէրներ, կամ ի հաշիւ «Ուսանող»ի՝ խմբերից: Ելքը մօտաւորապէս 920 ֆրանք եղած է, որի մեծագոյն մասը յատկացուած է «Ուսանող»ի հրատարակութեանը: Մենք դեռ շատ գանձելիքներ (մօտ. 7-800 ֆր.) ունենք ի հաշիւ «Ուսանող»ի. բայց թէ ե՞րբ կը ստանանք եւ որքա՞ն՝ ոչինչ չգիտենք, եւ դժբախտաբար յոյս էլ չունենք, քանի որ մեր բազմաթիւ դիմումները մեր գործակալներին՝ մնացեր են մինչեւ այժմ անպատասխան: Միութիւնը պարտք ունի (Արեւմտեան Բիւրոյին, տպարանին եւ մեր գրաշարին) 500 ֆրանք, որից 350ը Ա[րեւմտեան] Բ[իւրո]յին, որը անհրաժեշտ է վճարել նախքան մեր դրամը ուրիշ բանի ծախսելը. ուստի եթէ շուտով ստանանք Եւրոպայի Հ. Ուս. Միութեան դրամի մի չորրորդը (1200 ֆրանք), համաձայն այդ միութեան վերջին համագումարի որոշման, մեր պարտքը վճարելէն յետոյ մնացած 700 ֆր. համարեա՛ ամբողջովին կը գործածուի համագումարին համար, եւ այդպիսով նորընտիր Գործադիր Մարմինը ձեռնունայն պիտի սկսի իր շրջանն ինչպէս այս երկու տարիները:

Համագումարն փոխարինող միջոց, առաջարկում ենք հետեւեալը. հաւաքելով բոլոր խմբերի զեկուցումները եւ այն բոլոր հարցերը, որոնք համագումար լինելու պարագային օրակարգում պիտի մտնէին, ադոնցմէ մի ընդհանուր զեկուցում եւ օրակարգ կազմելով, դրանց միացնելով Գ. Մ.-ի եւ Խմբ. Մ.-ի զեկուցումները կը դրկենք խմբերին ի ծանօթութիւն եւ ի քննութիւն: Վերստանալով ռէզոլուցիաները[65] «Ուսանող»ի կամ շրջաբերականների միջոցով՝ կ'ուղարկենք բոլոր խմբերին: Գալով Գործ. եւ Խմբ. Մարմինների ընտրութեանը, կը կատարենք պլեպիսցիտով[116]: Այս ձեւով համագումար չկատարած՝ նրա պակասը կը լրացնենք առանց դրամական զոհողութիւն կրելու:

Որպէսզի մեր համագումարը լինելու պարագային չկրէ շտապողականութեան կնիքը, ուստի խնդրում ենք առ առաւելն մինչեւ փետր. 20ը [1910] մեզ դրկել

ա.- Ձեր կարծիքը՝ համագումարի լինել չլինելու մասին

բ.- Այն հարցերը, որոնք կ'ուզէիք օրակարգի մէջ մտցնել:

Իսկ մինչեւ մարտ 10 մեզ դրկել նաեւ զեկուցումները:

Կը յուսանք, որ ընկերները շուտով կը պատասխանեն վերոյիշեալ հարցերին, իսկ զեկուցումները կը կազմեն հարկ եղած խղճմտանքով:

ՆԻՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
UNION des ÉTUDIANTS ARMÉNIENS DASCHNAKTZAKANS DE L'EUROPE
1908
Ս. ՍՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

[1910 թ.]

Ընկերական բարեւներով
ԵՒՐ.Ի ՈՒՍ. Դ. Մ.ԵԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

116.- Հանրաքուէով։

Փաստ. 1470-27

ԵՒՐՈՊԱՑԻ Հ. Յ. ԴԱՇՆ.
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

UNION DES ÉTUDIANTS ARMÉNIENS
DASCHNAKTZAKANS DE L'EUROPE

3 Գրպ. 19/0
№

Դ 12.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՆԱՄԱԿ

3 փետր. 1910, Լօզան

Ընկերնե՛ր,

Համաձայն մեր կանոնագրին (յօդ. 12րդ) մենք համագումար պէտք է ունենանք Ապրիլի սկզբին, եթէ խմբերի մեծամասնութիւնը այդ ցանկանայ. ուստի ըստ 28րդ կէտին Գործադիր Մարմինը երկու ամիս առաջ ձեռնարկում է նախապատրաստական աշխատանքներին։

Առաջուց չիմանալով թէ ի՞նչ կը լինի խմբերի կարծիքը համագումարի մասին, Գործ. Մարմինը ներկայ շրջաբերականով առաջարկում է բոլոր խմբերին իրենց ամբողջ տարուան բովանդակ զեկուցումը տալ, որպէսզի հնարաւոր լինի ըստ կարելւոյն մի լիակատար պատկեր ստանալ ներկայացնելու ամբողջ Միութեան համագումարին կամ «Ուսանողի» միջոցաւ։

Ուստի խնդրում ենք ըստ կարելւոյն լայնօրէն պատասխանել հետեւեալ բոլոր կէտերին.

I.- Մանրամասն զեկուցում խմբերի՝ Միութեան Բ. համագումարից սկսած

ա) անդամների թիւը։

բ) Դրամական հաշիւ

(անդամավճար, կողմնակի մուտք, տեղական ծախս եւ Գործ. Մարմնի փոխադրուած)։

գ) Գրքերի հաշիւ (քանի՞ կտոր, ի՞նչ լեզուով եւ ի՞նչ գրքեր)։

դ) Քանի՞ ժողով։

ե) Քանի՞ դասախօսութիւն (խմբի մէջ), նիւթը, խօսողի անունը, դասախօսութեան եւ ընդդիմախօսութեան ամփոփումը։

II.— Հրապարակային դասախօսութիւններ եւ կուսակցական բնաւորութիւն կրող ուրիշ ձեռնարկներ։

III.— Ընկերներից որո՞նք մասնակցած են կուսակցական մամուլին, եւ ի՞նչ չափով. տալ ընկերոջ անունը, յօդուածների նիւթն ու քանակը, թերթի անունը, ուր տպագրուած են թղթակցութիւնները։

IV.— Խմբերու դիրքը տեղական հայ ուսանողութեան մէջ, թուական եւ բարոյական. միւս կուսակցութիւններու վերաբերմունքը դէպի մեր կուսակցութիւնը. ինչո՞վ է արտայայտւում այդ։

V.— Խմբերի պատճառաբանուած կարծիքը «Ուսանողի» մասին (ինչքան կարելի է մանրամասն)։

VI.— Այս կէտերէն զատ մենք խնդրում ենք բոլոր խմբերին եւ ընկերներին ապառիկ հաշիւներ չթողնել յաջորդ տարիների վրայ, որը դժուարացնում է հաշուեպահութիւնը եւ հնար չի տալիս աւելի պարզ գաղափար կազմելու դրամական վիճակի մասին. ուստի խնդրում ենք գանձել բոլոր ապառիկները, ինչպէս նաեւ մինչեւ Ապրիլ 1-ի անդամավճարները եւ մեզ ղրկել։

Զեկուցումները պէտք է կարդացուած լինին խմբերի առաջ եւ կրեն վարչական մարմնի (ներկայացուցչի, քարտուղարի եւ գանձապահի) ստորագրութիւնը։

Դրամը ղրկել Ժընեւ Ա. Բարսեղեանին՝ Rue de Carouge 92, *իսկ նամակներն ու զեկուցումները Վ. Քրմոյեանին,* Le Genépie, Chailly-Lausanne.

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
UNION
des ÉTUDIANTS ARMÉNIENS
DASCHNAKTZAKANS
DE L'EUROPE
1908
Ս. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Փաստ. 1470-186

Դ 13.– ԶԵԿՈՒՅՑՈՒՄ Հ.Յ.Դ. «ՋԱՆՔ» ԽՄԲԻ

1909-1910 թ., Ժընեւ

Տարուայ սկզբից խմբիս անդամակցել են 22 հոգի, որոնցից 21-ը ուսանող են, իսկ 1-ը արհեստաւոր։

Տարուայ վերջերին խմբից հեռացել են 5 հոգի։ Կան անդամներ, որոնք գրուելով հանդերձ ներկայ չեն գտնուել ժողովներին եւ անդամավճար չեն տուել։

Ներկայիս խմբին անդամակցողները հետեւեալներն են.

1) *Լուսեղէն Բ. — իրաւագիտութիւն*
2) *Թաթուլ Հ. — իրաւագիտութիւն*
3) *Եդուարդ Տ. Ս. — բժշկութիւն*
4) *Միշէլ Դ. — բժշկութիւն*
5) *Մինօ Ա. — բժշկութիւն*
6) *Արտաշ Ա. — բժշկութիւն*
7) *Ժորժ Տ. Ա. — իրաւագէտ*
8) *Կարօ Մ. — իրաւագէտ*
9) *Տիգօ Խ. — բնական գիտութ.*
10) *Զօ[րա] Սագ[ինեան] — հասարակ. գիտութ.*
11) *Գրիգոր — մեքենագործ.*

Գրուած են, բայց չեն մասնակցում ժողովներին.

1) *Արտաշ Մ. — բժշկութիւն*
2) *Ղեւոնդ Ա. — բժշկութիւն* } *հրաժարած*
3) *Արշակ Ց. — բժշկութիւն* } *հրաժարած*
4) *Ցովսէփ Վ. — բժշկութիւն*
5) *Տ. Եղիս Ն. — մանկավարժ*
6) *Օր. Նիկ. Ցակ. — մանկավարժ*
7) *Օր. Ազ. Ցակ. — մանկավարժ*
8) *Օր. Տէր Ներսեան[?] — բժշկութիւն*
9) *Ժէօրժէթ Ց. — բժշկութիւն*

Հրաժարուած՝

Աբրօ Ի. — բժշկութիւն

Խումբը յեղափոխական ոեւէ գործ չի կատարել, չունի եւ յարաբերութիւն տեղումս գոյութիւն ունեցող ռուս. սոց. յեղափոխականների եւ ուրիշ կուսակցութիւնների հետ։ Պատճառը կարելի է բացատրել միայն ընկերների անտարբերութեամբ։ Փակագծի մէջ պէտք է նկատել, որ միակ կազմակերպութիւնը, որ մենք կարող կը լինէինք բարեկամական կապ հաստատել, ռուս. սոց. յեղափոխականների հետ, նոքա էլ միայն անուամբ գոյութիւն ունին տեղումս. հաւաքումներ շատ քիչ են տեղի ունենում եւ այն էլ հատուկենտ ընկերներով։

1909 թ. ապրիլի 7-ից մինչեւ 1910 փետրուարի 21-ը, «Ջանք» խումբը ունեցել է 10 ժողով։ Պարապմունքի առարկաներն եղել են՝ դասախօսութիւններ եւ զանազան հարցերի շուրջ վիճաբանութիւններ. խումբը զբաղուել է նոյնպէս Դաշնակցութեան V Ընդհանուր ժողովի դրած հարցերով։ Բացի սրանից, այս տեսակ ժողովներից խումբը ունեցել է խորհրդակցական ժողովներ, որոնց մասին արձանագրութիւն չի կազմուել։ Տուել է մի հրապարակային դասախօսութիւն, ուր խօսել է ընկ. Արմէն Գարոն «Տաճկաստանի իրականութիւնից»։

Առաջին ժողովի օրակարգն եղել է 1) ընկ. Ա. Կ.ի Տըպաւորութիւնները փարիզեան պոստ-հեռագրատան ծառայողների գործադուլի մասին. 2) Դաշնակցութեան V Ընդհ. ժողովի օրակարգի քննութիւնը։

Ընկ. Ա. Տ.— Փարիզի պոստ-հեռագրական գործադուլը գտնում է սոցիալիստական աշխարհի համար մի նոր յաղթանակ եւ ոգեւորուած պատմում է՝ ինչպէս ծառայողները, կին եւ այր մարդ, առաջ են տանում իրենց արդար պահանջը եւ չեն ընկճւում ոչ մի կոպիտ արտաքին ոյժի դէմ, ինչպէս, օրինակ, կապիտալիստները, որոնք սպառնում էին կառավարութեանը հարկ չվճարելու, եթէ գործադուլը չարունակուի, իսկ կառավարութիւնը իրենց ձեռքին զէնք են դարձնում զօրքը, որը կատարում է միայն պոստի ծառայութիւնը։ Ջնայելով սրան, պոստ-հեռագրական ծառայողները չեն դադարում գործադուլը, որովհետեւ ոյժ եւ համակրանք են ստանում ընկերների եւ հասարակութեան կողմից, եւ մինչեւ վերջին օրը կուում են իրենց արդար պահանջի համար, եւ յաղթող դուրս գալիս։ Կառավարութիւնը, յանձին Կլեմանսոյի, յաղթուած, բաւարարութիւն է տալիս, իսկ ծառայողները ոչ մի բոպէ չկորցընելով գնում են ծառայութեան, ստանալով հասարակութիւնից ծափեր եւ ծաղիկների փնջեր։

Դրանից յետոյ ժողովը անցնում է Արեւելեան Բիւրոյի շրջանի հրատարակութիւնների, ուսումնարանների, կաթողիկոսական հարցերին։

Առաջին խնդրի վերաբերմամբ երկար վիճաբանութիւններից յետոյ անցնում է հետեւեալ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով, որ ներկայումս «Գործը»[116ա] *չի կարող հարազատ արտայայտիչը լինել մեր կուսակցութեան սկզբունքներին, չնորհիւ ներկայ մոմենտում*

116ա.- Թիֆլիսի դաշնակցական «Յառաջ» թերթի փակումէն ետք, 1908-1909ին այդ անունով հրատարակուող լրագիր։

Ռուսաստանում տիրող ռէակցիայի, որը սեղմում է ճանկերի մէջ ընդհ. ազատագրական շարժումը, առաջարկւում է հրատարակել մի անլեգալ թերթ, որը կարողանայ հարազատ արտայայտիչը լինել կուսակցութեան»։ Անցնում է 8 ձայնով։

Երկրորդ՝ դրւում է Դաշնակցութեան կուլտուրական եւ հասարակական գործունէութիւնը։ Այս խնդրի վերաբերմամբ դրւում է երկու բանաձեւ.

1) ընդունելով դպրոցական գործին ակտիւ մասնակցելու կարեւորութիւնը, անհրաժեշտ է, որ մենք ունենանք մեր որոշ կուսակցական տակտիկը այդ խնդրի վերաբերմամբ.

2) Դաշնակցութիւնը, իբրեւ յեղ. սոցիալիստական կուսակցութիւն, պէտք է իրեն բոլորովին հեռու պահի այդ ձեւի հիմնարկութիւններից, իբրեւ մի ծանր եւ խանգարիչ գործ։

Վերոյիշեալ բանաձեւերից առաջինը անցնում է 12 ձայնով։

Ժողովը կաթողիկոսական հարցը չի քննում, այլ անցնում է պարսկական յեղափոխութեան մասնակցելու խնդրին, եւ շատ իրաւացի է գտնում Արեւելեան Բիւրոյի կատարած որոշումը մասնակցելու մէջ եւ յարմար է համարում սանկցիա տալ։

II Ժողովը կայացել է 1909 ապրիլի 24-ին. օրակարգ

1) Վիճակահանութիւն. 2) Համագումարի պարապմունքների զեկուցում. 3) Հին Վարիչ Մարմնի հաշուետուութիւն. 4) Նոր Վարիչ Մարմնի ընտրութիւն։

Վիճակահանութիւնից յետոյ ժողովը անցնում է երրորդ եւ չորրորդ հարցերին, պատգամաւորների չլինելու պատճառով։ Ընտրւում են Արա Մամ[իկոնեան] (նախագահ), Արշակ Ց. (գանձապահ), Աբրօ Ի. (քարտուղար)։ Դրանից յետոյ ժողովը անցնում է Մայիսի 1-ը տօնելու խնդրին։ Մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ որոշւում է, որ եթէ Դաշնակցութիւնը կը հրաւիրուի քաղաքում գոյութիւն ունեցող ընդհ. սոցիալիստական Բիւրոյի կողմից այդ օրուայ հանդիսին մասնակցելու, խումբն էլ իբրեւ մի դաշնակցական մարմին կը մասնակցի, հակառակ դէպքում անհատները ազատ են մասնակցելու կամ չմասնակցելու։

III Ժողովը կայանում է 1909 Մայիսի 8-ին. օրակարգ

1) Պատգամաւորների զեկուցում. 2) Անհատական առաջարկներ։

Ժողովը նախ քան օրակարգի անցնելը լսում է ընդհ. Կարս Մ.-ից ստացուած մի նամակը, որով վերջինս ժողովի ուշադրութեան է հրաւիրում իր վերաբերմամբ յայտարարած որոշման վրայ եւ պահանջում է որոշումը փոխել, այլապէս դադարում է խմբին անդամակցելուց։ Այս խնդրի վերաբերմամբ ժողովը ընդունում է հետեւեալ ռեզոլիւցիան[86] *— որ նամակը խիստ սպառնական եւ պահանջողական է, որի դէմ ուժգին բողոքում է, որ ապրիլի 27 ժողովից յետոյ ընդհ. Կարսն անկորեկտ է պահել եւ իրեն թոյլ է տուել անպատուել «Ջանք»ին, թքելով նրա վրայ։ Խումբը իրեն վիրաւորուած զգալով՝ որոշում է նամակով բացատրութեան կանչել, բայց հրաժարեցումը քարտուղարութիւնից անփոփոխ պահեց։ Յետոյ ժողովը լսում է ընդհ. պատգամաւոր Արայից զեկուցումը Հ.Յ.Դ. Ուսանողական Միութեան II Համագումարի գործունէութեան մասին։*

IV Ժողով 1909 Մայիսի 15. օրակարգ 1) պատգամաւորի զեկուցում (շարունակութիւն). 2) Գործադիր Մարմնի շրջաբերականների ընթերցումը 3) ընդհ. Կարսի խնդիրը։

Ժողովը անցնում է իսկոյն եւեթ առաջին կէտին, եւ ընդհ. պատգամաւորը տալիս է իր զեկուցումը։ Ժողովը լսելուց յետոյ գոհ սրտով շնորհակալութիւն է յայտնում պատգամաւորներին։ Կարդացւում է Գործ. Մարմնի շրջաբերականները։ Յետոյ ընդհ. նախագահը կարդում է ընդհ. Կարսի նամակը, որով նա յետ է վերցնում վիրաւորական խօսքերը եւ վարմունքը, եւ չեշտում է նորից քննել ընդհ. Թ.-ի եւ իր մէջ եղած խնդիրը։ Որովհետեւ այդ խնդիրը շատ է ծծծուել՝ ժողովը որոշում է ընդմիշտ փակել այդ եւ ընդհ. Կարսին խմբին մասնակցելու խնդիրը թողնել իր ազատ կամքին։

V ժողով, 1909 մայիսի 29. օրակարգ 1) դրամական խնդիր. 2) գրադարանապետի ընտրութիւն. 3) ընդհ. Արայի դասախօսութիւնը՝ Ազգային հարցի վերաբերմամբ։

Ժողովը անմիջապէս անցնում է օրակարգի առաջին կէտին եւ որոշում է որ դրամարկղում եղած գումարի ¾-ը ըստ միութեան կանոնադրութեան տրուի Գործադիր Մարմնին։ Ընտրւում է գրադարանապետ ընդհ. Լուսեղէն Բ., որից յետոյ անցնում է օրակարգի 3րդ կէտին։

Դասախօսութիւնից յետոյ սկսւում են վիճաբանութիւններ։ Խօսող ընկերները գտնում են, որ դասախօսութիւնը չի համաձայնւում իր վերնագրին, այլ մի ակնարկ է տաճկական կառավարութեան հայ ազգին հասցրած զրկանքներին։ Բացի դրանից համաձայն չեն այն կէտին, որ ժխտում է եւրոպական միջամտութիւնը հայկական հարցում, այլ ընդհակառակը պնդում են, որ ներկայումս, աւելի քան առաջ, հարկաւոր է առաջ բերել այդ միջամտութիւնը, որքան էլ այդ տէրութիւնները շահադիտական նպատակով նայելու լինեն խնդրին։ Այս հայեցակէտերին հետ համաձայնւում է եւ ինքը դասախօսը։

VI ժողով, 1909 Յունիսի 5. օրակարգ 1) Եւրոպայի նախկին հայ ուսանողական միութեան համագումարի մասին. 2) ընդհ. Դեր.-ի դասախօսութիւնը «Դաշնակցութիւնը եւ կուլտուրական գործը»։

Առաջին խնդրի վերաբերմամբ կարճ խօսակցութիւնից յետոյ ընդունւում է հետեւեալ բանաձեւը՝ դիմել ընդհ. Ակնունուն իբրեւ Լիազօր Կոմիտէի անդամ, որը ժողով հրաւիրէ Եւրոպայի բոլոր ուսանողների պատգամաւորներին։

Դրանից յետոյ անցնում է դասախօսութեան։ Դասախօսութեան մի քանի կէտերի մասին վիճաբանութիւն է տեղի ունենում, որից յետոյ շնորհակալութիւն յայտնւում է ընկերների կողմից ընդհ. դասախօսին։

VII ժողով, 1909 հոկտ. 24, օրակարգ 1) հաշուետուութիւն. 2) Վարիչ Մարմնի ընտրութիւն. 3) Գրադարանի հարց. 4) մեր անելիքները։

Ժողովը լսում է համառօտ կերպով նախկին ժողովների արձանագրութիւնները եւ հաշուետուութիւնը. բաւականացուցիչ համարելով անցնում է երկրորդ կէտին. ընտրւում են ընդհ. Մին. Ա. (նախագահ), Տիգօ Խ. (գանձապահ)։ Գրադարանի վերաբերմամբ որոշւում է տրամադրելի անել 25 ֆր. պահարանի համար. յետոյ ունեցած գրքերը միացնել խմբագրատան[117] *եղած գրքերի հետ եւ կազմել մի կանոնաւոր գրադարան։ Ժողովը որոշում է խնդրել ընդհ. Դաւթեանէն տալ «Ջանքում» տեղեկութիւններ Դաշնակցութեան V Ընդհանուր Ժողովի վերաբերմամբ։ Խնդրել ընդհ. Արմէն Գարոյէն տալ մի հրապարակային դասախօսութիւն. խնդրել ընդհ. Զո[րա] Սագ[ինեանէն] մի դասախօսութիւն տալ տեղւոյս ուսանողական շրջանակում։ Երեկոյթի վերաբերմամբ որոշում է տալ մի փոքրիկ երեկոյթ հայկական շրջանակի համար «Ջանքի» նախաձեռնութեամբ։*

Ընտրւում է մի կոմիսիա 4 անդամից բաղկացած. ընդհ. Դեր. Գ., Նիկ. Ցակ., Արտաշ Մ., Ժէօրժէթ Ց.։

VIII ժողով, 26 Նոյեմ. 1909. օրակարգ 1) երեկոյթի խնդիր. 2) Գործադիր Մարմնի ստացած շրջաբերականը. 3) անհատական առաջարկներ։

Ընկեր նախագահը յայտնում է, որ կոմիսիան չի հաւաքուել եւ հրաժարուել է գործից, ուստի խնդրում է, որ ժողովը ինքը զբաղուի այդ խնդրով։ Որոշւում է տալ Նոր տարուայ գիշեր «Մարուող ճրագներ»։ Եւ յետոյ, չորրորդ գործողութեան փոխարէն, պարսկերէն, թրքերէն, վրացերէն, արաբերէն ոտանաւորներ արտասանուեն։ Կազմակերպելու համար ընտրւում են 3 անձնաւորութիւն։ Դրանից յետոյ ժողովը անցնում է Գործադիր Մարմնի շրջաբերականների ընթերցման։ Դրանից յետոյ ժողովը որոշում է գրել ընդհ. Ակնունուն, որ նա անմիջապէս նամակ գրէ օր. Ցակ. համագումարի վերաբերմամբ։

IX ժողով, 1910 փետ. 18. օրակարգ 1) բացատրութիւններ ընդհ. Ղեւոնդ Ա., Արշակ Ց., Ցովսէփ Վ., 2) Գործադիր Մարմնի շրջաբերականը եւ Բեբելի 75ամեայ յոբելեանը։

Ժողովը լսելով ընկերներից բացատրութիւնները, անցնում է երրորդ կէտին եւ ընդունւում է հետեւեալ ռեզոլիւցիան, որ դէմ չեն տօնելու եւ որ անհատները ազատ են գնալու, որ եթէ Արեւմտեան Բիւրոն ստանայ հրաւէր, իրանք էլ կը մասնակցեն։ Եւ ապա կարդացւում է ընդհ. քարտուղար Աբրոյի հրաժարականը։ Ժողովը չի ընդունում նրա հրաժարականը եւ բացատրութեան է կանչում մի քանի մութ կէտերի վերաբերմամբ։

X ժողով, 1910 փետրուար 26. օրակարգ 1) Զրոյց՝ «Տնտեսական մատերիալիզմը եւ դրական գիտութիւնները», Արտաշէս Բաբալեանի։

Ընկերը պաշտպանում է այն միտքը, որ հին դարերում գիտութիւնների ծնունդն ու նրանց զարգացումը արդիւնք չեն եղել տնտեսական գործօնի, բխած չեն եղել տնտեսական պատճառներից. մենք տեսնում ենք գիտութիւններ, որոնք մարդու տնտեսական կարիքների հետ հեռաւոր կապ անգամ չունէին. այսպէս՝ ամենահին գիտութիւններն են.— մարդաբանութիւնը, ֆիզիքական գիտութիւնների մէջ՝ տեսողութիւն (լոյս) եւ ձայն (լսողութիւն) եւ մաթեմատիկան։ Առաջին երեքը ոչ մի կապ չունէին տնտեսական կեանքի հետ, իսկ վերջինիս զարգացումը առաջ է գալիս այնպիսի երկրներում, ուր վաճառականութիւնը ամենաթոյլ կերպով էր զարգացած, մինչդեռ Փիւնիկէն, հին դարերի այդ խոշոր վաճառականական կենտրոնը, վերցնում է մաթեմատիկան Հնդկաստանից։ Նոյնը կարող ենք ասել եւ երկրաչափութեան մասին, որ թոյլ զարգացում ունէր Հռոմում, ուր հողային հարցը կարեւոր նշանակութիւն ունէր։ Միւս կողմից գիտութիւնների մէջ տեսականի եւ գործնականի զարգացումը յաճախ իրար չեն համապատասխանում։ Մենք տեսնում ենք թէորիայի[107] *երեւան գալը դարեր առաջ, իսկ պրատիկ կիրառումը մնում է եւ կամ ընդհակառակը։ Այնուհետեւ ընկերը մի առ մի թւում է այն պատճառները, որոնք իրարից անկախ խրթան են հանդիսացել այս կամ այն գիտութեան երեւան գալու եւ նրա զարգացման. կրօնը, գեղասիրական մղումները, աշխարհագրական դիրքը, ցեղային յատկութիւնները եւ պատահականութիւնները, որ չի ժխտւում նոյնիսկ մարքսիստների կողմից. իսկ ամենախոշոր ֆակտորը դա մարդ անհատի՝ իրեն մէջ [պէտք է] փնտռել. նրա տենչը իշխելու հարուստ բնութեան յորդ ոյժերի վրայ, բացատրելու տարերային երեւոյթները. ապա ամենամեծ խթանը գիտութիւնների զարգացման գործում։*



117.- Հարցը կը վերաբերի «Դրօշակ»ի խմբագրատան գրադարանին։

*) Նախագահի բացակայութեան պատճառով կոմիտէի երկու անդամներն ստորագրեցին։

Փաստ. 448-3

Դ 14.– ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԷՆ

Երկու նամակները կը պատկանին Սիմոն Վրացեանի (Սիզ) գրչին, որ այդ օրերուն ուսանող էր Պետերբուրգի մէջ: Բացի ուսանողներու մասին տրուած տեղեկութիւններէն, նամակներուն մէջ, յատկապէս առաջինին, կը յիշուի Եղիշէ Թոփչեանի յիշատակին նուիրուած ժողովածու մը հրատարակելու ծրագիրը: Նախ Եղիշէ Թոփչեանի մասին հակիրճ.– Երիտասարդ փայլուն մտաւորական ու կուսակցական այս գործիչը համալսարանական իր ուսումը ստացած էր Պետերբուրգի եւ Պերլինի մէջ, խմբագիր էր եղած Թիֆլիս եւ ապա Կարին հրատարակուող «Յառաջ» թերթին. անդամ էր Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյին, մասնակցած էր Հ.Յ.Դ. Չորրորդ (1907 թ. Վիեննա) եւ Հինգերորդ (1909 թ. Վառնա) Ընդհ. Ժողովներուն: Այս վերջինի աւարտին, Պոլսոյ վրայով Կարին վերադարձի ճամբուն վրայ, Բաթերդի մերձակայքը, դաւադրաբար կը սպաննուի աւն խմբապետ Միհրանի եղբօր՝ Յարէքի կողմէ (1909 թ. Հոկտ. 23):

Ահա մտաւորական այս գործիչի յիշատակին նուիրուած պիտի ըլլար Պետերբուրգի հայ ուսանողներուն հրատարակելիք «Պսակ» ժողովածուն: Հատորը մեծ դժուարութեամբ կը տպագրուի Մոսկուայի մէջ (1910 թ.) եւ տպարանէն ուղարկուած առաջին օրինակը Ս. Վրացեան կը ստանայ Կարնոյ մէջ, մինչ մնացեալ 3000 տպագրեալ օրինակները ցարական ոստիկանութիւնը գրաւած եւ այրած էր: «Պսակ» ժողովածուի փրկուած միակ օրինակը Ս. Վրացեանի հետ տասնամեակներ ամբողջ աստանդական շրջելէ ետք երկրէ երկիր, այժմ հանգրուանած է Համազգայինի Պէյրութի Ճեմարանի գրադարանը:

Ռուսերէն յետ գրութենէն ի յայտ կու գայ, որ գրութիւնը ուղղուած է Ժրնեւ Յոնան Դաւթեանին:



„Պսակ"
Ժողովածու Եղիշէ Թոփչեանի յիշատակին.
Տպուած Մոսկուա. 3000 օրինակ.
2999 օրինակը գրաւեց և այրեց ռուս ցարական-ոստիկան-
Այս մէկ օրինակը մնաց փրկուած է.

Ս. Վրացեանի վկայութիւնը «Պսակ»ի ճակատագրի մասին:

1910 թ. մարտին մեր ուսանողների նախաձեռնութեամբ Պետերբուրգում լոյս է տեսնելու գիտական-գրական մի ժողովածու՝ նուիրուած Եղ. Թոփչեանի յիշատակին: Ժողովածուն ունենալու է հետեւեալ բաժինները.

I

Սոցիալ-տնտեսական եւ պատմա-գիտական բաժին

1) *Բանուորական հարցն ու բանւ. քաղաքականութիւնը Կովկասում*
2) *Հողային հարցն ու հողային յարաբերութիւնները Կովկասում*
3) *Ազգային հարց*
4) *Գիտական-փիլիսոփայական հարցեր*
5) *Կուլտուրական հարցեր*
6) *Քաղաքական հարցեր*
7) *Ռուս. հասարակական շարժման բնաւորութիւնն ու վերլուծութիւնը*
8) *Թուրք-պարսկական հեռանկարներ*

Եւ այլն: Եւ այլն: Եւ այլն:

II

Գրական-գեղարուեստական բաժին

Բացի Պետերբուրգի ուսանողներից՝ ժողովածուին մասնակցելու են եւ հրաւիրուած են մասնակցելու հետեւեալ անձինք.

Ալթունեան Գ., Ահարոնեան Ա., Աղբալեան Ն., Անոփեան Ռ., Արամայիս, Գեանջեցեան Ա., Զարդարեան Ռ., Զաքարեան Վ., Թումանեան Յովհ., Իսահակեան Աւ., Իսահակեան Արշ., Իփէկեան Գ., Nemento Mori, *Մուսայէլեան Հ., Յարութիւնեան Մ., Նարինեան Ս., Շահխաթունեան Ա., Սիմանթօ, Վալադեան Վ., Տէր-Յակոբեան Ա., Տէր-Յակոբեան Ս., Փափազեան Վահ[ան], Քեալաշեան Գ., Ֆրանգեան Ե., եւ այլն:*

Սրանով խնդրում ենք Ձեր մասնակցութիւնը՝ յուսալով, որ մինչեւ փետրուարի կէսերը կ'ուղարկէք Ձեր աշխատութիւնը ժողովածուի մէջ զետեղելու համար:

Հրապարակիչ մարմին՝

[Խ. ԿԱՐՃԻԿԵԱՆ]
[Ս. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ]
[Հ. ՏԷՐՏԷՐԵԱՆ]
[ՀԱՅԿ ԹՈՐՈՅԵԱՆ]
[Ս. ԳՐՈՒՋԻՆԵԱՆ [ՎՐԱՑԵԱՆ]

P.S. Дорогой Ованес! Получил я два письма, но не знаю - почему не хотели вы мне написать подробно письма о наших делах. Присылаю Вам это письмо, как найдете, но если среди студентов найдутся желающие послать нам свои статьи, то пусть дадут нам адрес и этому постарается содействовать Нашему Наханагю, або как Наша, найдя полные сведения в Вашей статье. Стоит ли фотографировать сборник: основные причины нашей жизни, наши мировоззрения не подвергаются критике с точки зрения других существующих течений. Вопрос. Критика выражена только в общей своеобразной форме мнений и требований всего Нашего мировоззрения. Пишите больше пока в виду, что издание будет касаться в Петербурге. Надеюсь, всё от вас зависит отныне. Если знаете адрес Арпака, пришлите.

С товарищеским приветом
Твой Миша.

P.S. Прошу отвечать тщательнее адресу:
Петербург. Петербургская Сторона
Б. Проспект д.17 кв. 1. Вартану Ованесу.

[1909 թ.]

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.–

P.S. *Թանկագին* Hownan! *Ես ստացայ քո նամակը, բայց չգիտեմ ինչու դու չես ցանկացել ինձ մանրամասն նամակ գրել մեր գործերի մասին: Ուղարկում եմ ահա այս նամակը, մենք յուսով ենք, որ եթէ ուսանողների մէջ գտնուեն իրենց յօդուածները մեզ ուղարկել ցանկացողներ, դուք նրանց կը տաք մեր հասցէն + դրան կ'աշխատէք օժանդակել մեր նախաձեռնութեանը, քանի որ մեր նպատակը, յուսով եմ, Ձեր կողմից կը գտնի լիակատար ըմբռնում: Յօդուածները պէտք է համապատասխանեն հետեւեալ պայմաններին. մեր գաղափարախօսութեան հիմնական սկզբունքները, մեր աշխարհահայեացքները չեն ենթարկուում քննադատութեան գոյութիւն ունեցող այլ սոցիալիստական դոկտրինների տեսանկիւններից: Քննադատութիւնը հնարաւոր է միայն մեր աշխարհահայեացքի հիմնադրոյթների իւրօրինակ ընկալման եւ մեկնաբանման շրջանակներում: Գրողները պէտք է նկատի ունենան, որ հրատարակութիւնը կը լինի լեգալ, բայց Պետերբուրգում: Յուսով եմ, կ'անէք ձեզնից կախուած ամէն ինչ: Եթէ գիտէք Արշակի հասցէն, խնդրում եմ, գրէք:*

Ստեղծագործական ողջոյններով՝ քո ՄԻՇԱ

P.S. *Խնդրում եմ պատասխանը գրել հետեւեալ հասցէով.*
Պետերբուրգ. Պետերբուրգսկայա Ստորոնա
Մ[եծ] Պողոտայ, տուն 17, բն[ակարան] 1, Վարդան Այվազեանին:

Փաստ. 449-3

Դ 15.– ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիրելի ընկերնե՛ր,

Պետերբուրգի դաշնակցական ուսանողների ընդհանուր ժողովը՝ լսելով ընկեր Հ-ի զեկուցումը կուսակցութեան արդի վիճակի եւ գործունէութեան մասին, եւ տեղեկանալով, որ ներկայումս կուսակցութեան յեղափոխական ուժերը կենտրոնացած են քաղաքական գործունէութեան վրայ, ուժեղացրած է բանաւոր եւ գրաւոր պրոպագանդը, առանձին հոգ է տարւում կուսակցութեան շարքերի ամրապնդման եւ որակով արժէքաւոր անդամների գրաւման մասին, գտնում է, որ այդ ուղղութիւնը, որ գալիս է իրականացնելու Ե. Ընդհ. Ժողովի որոշումները, համապատասխանում է ներկայ մոմենտին։ Ողջունելով այդ գործունէութիւնը իւր կողմից ուսանողութիւնն զգում է, որ ներկայում մեծ պարտականութիւն է ընկնում կուսակցութեան մտաւորական խաւերի վրայ, ուստի յայտնում է պատրաստակամութեան դնելու իւր ուժերը կազմակերպութեան տրամադրութեան տակ։

սանողութեան մասին ասեմ։ Պետերբուրգի բոլոր բարձրագոյն դպրոցներում 1000-ի չափ հայ ուսանողուսանողուհի կայ, որոնցից հազիւ 100 հոգին դաշնակցական է, իսկ գործօն անդամներ 40-50 հոգի կը լինէր։ Գոյութիւն ունի դաշն. ուսանողների միութիւն, որը սակայն ոչ մի չօշափելի արդիւնք ցոյց չի տալիս։ Ուրախալի է սակայն այն վառ հետաքրքրութիւնը, որ կայ «երկրի» գործերի նկատմամբ։ Կապը «երկրի» եւ ուսանողութեան միջեւ միշտ պահպանւում է։ Երբեմն-երբեմն ուսանողութիւնից գնում են Կովկաս տեղի ընկերներին օգնելու համար։ Ներկայ բանաձեւը հետեւանք է վերադարձած ընկերներից մէկի տուած զեկուցման, որից պարզուեց, որ Կովկասում կազմակերպութեան գործերն այնքան էլ վատ դրութեան մէջ չեն։

Եղիշէի յիշատակին հրատարակուելիք ժողովածուի խմբագրական աշխատանքներն սկսուած են արդէն, ուստի խնդրում ենք նիւթ ուղարկողներին փութացնել։

Ցարգանքներով՝
ՍԻԳ

P.S.- *Ուղարկում եմ ներկայ բանաձեւը խմբագրութեան ի գիտութիւն եւ ոչ հրատարակութեան համար։ Առիթից օգտուելով մի-երկու խօսք դաշնակցական ու-*

13 փետր. 1910
Պետերբուրգ

ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ Գ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ (1911)

ԲԱԺԻՆ Ե.

Երրորդ Համագումարին առթիւ տրամադրելի փաստաթուղթերը հազիւ ընդհանուր պատկերացում մը կու տան Եւրոպայի Հ.Յ.Դ. ուս. միութեան 1911 թուականի գործունէութեան մասին։ Ամփոփ է «Ուսանող»ի 6րդ համարին մէջ «Կազմակերպական կեանք» խորագրով տրուած տեղեկատուութիւնը. նոյնն է պարագան Համագումարի աւարտին Գործադիր մարմնի հանած շրջաբերականին։ Այսուհանդերձ յաջորդ համագումարին ներկայացուած տեղեկագիրները լայնօրէն կ՚անդրադառնան 1911 տարուած գործունէութեան։

Այս բաժնին մէջ տրուած են նոյնպէս Միութեան վերամշակուած կանոնագիրը, «Տաճկաստանի եւ Պարսկաստանի հայրենակից ուսանողներուն» ուղղուած եռալեզու (հայերէն, օսմաներէն, ֆրանսերէն) կոչ-յայտարարութիւնը, ինչպէս նաեւ Պոլսոյ մէջ Հ.Յ.Դ. ուսանողական միութեան կազմութիւնը աւետող նամակը։

Փաստ. 1457-1

Ե 1.– ԳՈՐԾ[ԱԴԻՐ] ՄԱՐՄՆԻՆ Ե[ԻՐՈՊԱՅԻ] Դ[ԱՇՆԱԿՑԱԿԱՆ] ՈՒՍ[ԱՆՈՂԱԿԱՆ] ՄԻՈՒԹԵԱՆ, ժընեւ

Ընկերներ!

Ստացանք Մարտ 6 թուակիր ձեր հրաւէրը։ Որովհետեւ այստեղ դաշնակցական ուսանողներու միութիւն չունէինք, անհատ ընկերոջ մը նախաձեռնութեամբ հրաւիրուեցաւ Պոլսոյ դաշնակցական ուսանողներու ընդհ. ժողով, որ ի պատասխան ձեր հրաւէրին պարտադրեց մեզ իր հետեւեալ որոշումը հաղորդել ձեզ։

«Նկատելով որ հրաւէրը ուշ է ստացուած եւ մինչեւ Ապրիլ 1 (ն[որ] տ[ոմար]) անկարելի է կուսակցական խիստ կարեւոր այժմէական հարցերու շուրջ որոշումներ կայացնել, միւս կողմէն կուսակցական ուսանողներու մեծ մասին նիւթական աննախանձելի վիճակը նկատի ունենալով՝ խիստ դժուար է պատգամաւորի մը մինչեւ ժընեւ ծախսը հոգալ մէկ քանի օրուան մէջ, ցաւելով կը յայտնէ ձեզ թէ՝ հակառակ Ե. Դ. Ուս. III համագումարին մասնակցելու բուռն ցանկութեան չպիտի կարողանայ իր պատգամաւորը ուղարկել»։

Այստեղ ունինք Ուս. Ինքնազարգացողական միութիւն մը, որ չէզոք հողի վրայ դրուած է, սակայն մեծ մասը դաշնակցականներ են եւ վարչութիւնը մեր ձեռքն է։ Ինչպէս այդ միութեան գործունէութեան վրայ, նոյնպէս դաշնակցական ուսանողներու թիւին ու գործունէութեան մասին ձեզ կը գրենք առաջին պատեհութեան։

Մենք կը զգանք թէ՝ մեր մասնակցութիւնը ձեր III համագումարին խիստ օգտակար պիտի ըլլար փոխադարձաբար, բայց ափսոս որ վերոյիշեալ պատճառներով անկարելի եղաւ. եթէ աւելի կանուխ լուր տրուէր, գուցէ յաջողէինք մասնակցիլ։ Խիստ ցանկալի է, որ Պոլսոյ ընկերներու հետ գրաւոր յարաբերութիւններ պահէք այսուհետեւ եւ III համագումարի մէջ ձեր անցուցած որոշումները մեզ տեղեկացնէք։

Մեր ընկերական բարեւները կ՚ուղարկենք համագումարին մասնակցող ընկերներուն եւ յաջողութիւն կը մաղթենք։

Պոլսոյ Դաշն. Ուսանողներու առժամեայ դիւան՝
Մ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, ԶԱՒԷՆ ԿՈՐԿՈՏԵԱՆ

27 Մարտ 911, Պոլիս

Մեր հասցէն.
Rédaction "Azadamard"
M. Bedrossian, Péra, Constantinople

Ե 2.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԵՒՐ. Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ

(Թեթեւ կրճատումներով արտատպում ենք Եւրոպայի Դ. Ու. Մ. հրատարակած թռուցիկը):

Ընկերներ,

Վերջացաւ III Համագումարը:

Մի աւելորդ անգամ եւս՝ նա եկաւ ապացուցանելու Միութեանս կենսունակութիւնը եւ ամրապնդելու անոր հիմքերը: Զուր չէ եղած մեր հիմնադիր ընկերներու այնքան գեղեցիկ յղացումը, ընդառաջ գնալու հրամայական պահանջի մը – կազմակերպել անհատ ընկերները – ոչ թէ մի դրօշի տակ, ուր անոնք անհատապէս մտած էին արդէն, այլ անհատներու բաժանուած ուժերը օգտագործելու հաւաքական գործակցութեամբ արդէն նուիրական նպատակի մը իրականացման մէջ, թէեւ աննպաստ մի հողի վրայ, սակայն խանդավառ բազմութեան մը մէջ: Զուր չեն եղած նաեւ մեր ընկերներու ոգեւորութիւնն ու անդուլ ջանքերը, որով գրեթէ առանց բացառութեան շտապեր էին գալ Համագումարին՝ իրենց անհատական փոքրիկ ուժերը միացնելու մի մեծ գործի շուրջ, ատոր համար պահանջուած մեծ ուժը ստեղծելով:

Համագումարը եղաւ արտայայտիչը Եւրոպայի մէջ ապրող, ոգեւորուող եւ մտածող դաշնակցական ուսանողութեան: Այնտեղ պատկերացաւ Միութեանս ամբողջ կացութիւնը: Ուսանողական այնքան այլազան կեանքը երբեք բեռ մը դարձած չէ մեր այն ընկերներու համար, որոնք մեծ մտածողներու շրթունքէն կախուած, կամ անոնց երկերու մէջ խորասուզուած՝ կարողացած են յամենայն դէպս սիրած գաղափարի յառաջադիմութեան համար գտնել ժամանակ զոհելու եւ աշխատելու: Պարբերական հաւաքումները դաշնակցական մտածողութիւն եւ մթնոլորտ ստեղծելու նոյն քաղաքնի մէջ եղողներու համար՝ ցանկութենէ աւելի, պահանջի պէս զգալի են եղած եւ դրական արդիւնքներ տուած բոլոր խումբերու մէջն ալ: Այնտեղ հայկականութեան եւ գործնական կեանքի բոլոր նշոյլներէն կտրուած ուսանողութիւնը լսած է թէ ի՛նչ կը կատարուի հեռուն, մշուշապատ հորիզոններու ետեւ, ուր հայկական կեանքն է սփռուած անտէր եւ բազմակարօտ. կամ մարդկային գերագոյն Մտքի ծաղիկները ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել մեր իրականութեան պահանջներու հետ եւ այնտեղ իբրեւ լուսատր ջահ մը, մեր ապագայ մթագնած ուղին լուսաւորել...

Հասարակական կեանքը, իր այնքան բազմակողմանի շերտաւորումներու մէջ՝ եղած է բուռն հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան բեւեռը, ու անոր օր օրին ստեղծած հրատապ հարցերը իրենց հրամայական պատասխաններով, դարձած են տեսակ մը կապ այն ուսանողութեան համար, որ գիտակցութիւնը ունի տանջուած ժողովրդի մը որդին լինելու եւ անոր բեռը թեթեւցնելու համար ուժ եւ կարողութիւն ամբարելու:

Համագումարը տեսաւ, թէ ինչպէս տարիներէ ի վեր Դաշնակցութեան ծրագրած համերաշխութեան եւ համագործակցութեան ջանքերը հարեւան ժողովուրդներու հանդէպ մեր ամբողջ Միութեան մէջ յաճախ արդիւնաւոր կերպով իրականացած են՝ մեր ապագայ գործունէութեան համար հիմքեր մշակելով: Ու յարաբերութիւնները գնալով աւելի կը սղմուին ու կը սերտանան ո՛չ միայն Եւրոպայի, Տաճկաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի եւ գաղութներու հայ ուսանողութեան միջեւ, այլեւ մեր կողքին, մեզ պէս մտածող ու գործող այլ սոցիալիստական եւ յեղ. ուսանողական կազմակերպութիւններու հետ: Այս բոլորը առաւել կամ նուազ չափով արտայայտուեցաւ, վերագնահատման ենթարկուեցաւ եւ նոր նոր ծրագիրներու համար հիմքեր դարձան՝ աւելի խորացնելու մեր գիտակցութիւնը, մեր իդէալներու իրագործման մէջ:

Եւ վերջապէս «Ուսանողը» մեր ա՛յնքան փայփայած եւ ա՛յնքան արտայայտիչ գործը: Երիտասարդ՝ մե՛նք ալ, ա՛յն ալ. բայց մեր կարճ գործունէութիւնն ու պատմութիւնը տուած են մեզ պէտք եղած փորձառութիւնը – գոնէ այդպէս կը մտածենք մենք – պակասները դարմանելու եւ դնելու զայն ցանկալի բարձրութեան մը վրայ. «Ուսանողը» ոչ միայն մեր արտադրութիւնն է եւ պատկերացումը, այլեւ մեր մէկ մասը, անբաժանելի եւ անհրաժեշտ: Նա դարձաւ խարիսխը մեր գործունէութեան եւ ա՛լ աւելի ապագայ գործունէութեան: Համագումարը այնքան ջերմ վերաբերմունք եւ հոգածութիւն ցոյց տուաւ «Ուսանողի» հանդէպ, որ անոր վճիռներն ու որոշումները ընդարձակ տեղ մը բռնելով, պէտք է երեւան գան տարեկան Տեղեկագրի մէջ, որ շուտով լոյս է տեսնելու:

Համագումարը իր աշխատանքները արդիւնաւորած տեսնելու համար՝ ընտրեց համապատասխան Մարմինը:

Գիտակ եւ պարտաճանաչ իր բոլոր յանձնառումներուն՝ Գործադիր Մարմինը կը կարծէ կատարած լինել Համագումարի իր վրայ դրած պարտաւորութիւնները կոչ ընելով բոլոր ընկերներուն՝ միանալ սիրած գործի շուրջ, ստեղծել եռուն խմբական կեանք, արծարծել եւ սերտացնել համերաշխութեան կապերը թէ՛ ընկերներու, թէ՛ Սոց. Յեղ. կուսակցութիւններու եւ թէ հարեւան ցեղերու հետ, վերջ տալ անձնական հակամարտութիւններուն, բարձր պահել կուսակցական գիտակցութիւնը եւ Դաշնակցութեան հոյակապ դրօշը, որու ծածանումներու տակ մենք ալ մեր աշխատութեան բաժինը պիտի բերենք, միշտ վստահ մեր բոլոր ընկերներու աջակցութեան եւ եռանդի վրայ:

Այս բոլորի համար անհրաժեշտ են՝ գործնական մասնակցութեան հետ նաեւ *տեսական պատրաստութիւն*, որ մեր ուղղակի պարտականութիւնն է եւ որու վրայ կը հրաւիրենք մեր ընկերներու ուշադրութիւնը, ի նկատի ունենալով այն միջավայրը, ուր կ'ապրինք եւ այն՝ ուր մենք պիտի գործենք իրականացնելու համար մեր կուսակցական իդէալները:

Վստահ ենք, որ մեր ընկերները մեզի հետ միասին ձեռք ձեռքի տուած կը նպաստեն իրագործելու այն ծրագիրները, որ մշակեց III Համագումարը եւ այնպէս ներկայանալու IV Համագումարին միշտ աւելի գիտակից եւ պարտաճանաչ Միութեանս եւ առաւելապէս Դաշնակցութեան պատմական առաքելութեան:

1911 Ապրիլ 15 *«Դրօշակ», 1911, թիւ 3-4, էջ 55-56*

Ընկերական բարեւներով՝
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ե 3.– ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԵԱՆՔ

«Ուսանող»ի այս բաժնով կ'ուզենք մի պատկեր տալ Եւրոպայի դաշնակցակ[ան] ուսանողութեան, վերջին համագումարէն մինչեւ այսօր, ունեցած գործունէութեան մասին։

Եւրոպայի դաշնակց. ուսանողութեան կեանքը, լինելով մի հասարակական երեւոյթ, նա պայմանաւորուած է երկու էական գործոններէ. ա) Սեփական ընդհանուր կացութենէն եւ բ) առհասարակ եւրոպական համալսարանական կուսակցութեան մտաւորականութեան օրուայ դրութենէն։

Անցեալ տարուան տեղեկագրին մէջ հարեւանցի կերպով ակնարկուած է այդ երկու տեսակէտները, իբրեւ պարագաներ, որոնք ազդող դեր կը խաղան մեր միութեան կեանքին մէջ։ Այստեղ, գուցէ, անշահեկան չի լինիր, մի քիչ մանրամասնել այդ հանգամանքները եւ գլխաւորաբար երկրորդ հարցը։

Միութիւնը լինելով կուսակցութեան ընդհանուր իրականութենէն բխած, նա անպայման կ'արտայայտէ իր կեանքին մէջ զուգընթացաբար այն բոլոր ֆազերը, որոնցմով կ'անցնի մեր կուսակցութեան բովանդակ աշխարհը։

Եթէ միայն ակադեմիկ աշխատութիւնը կլանէր Եւրոպայի մեր դաշնակց. մտաւորականութիւնը, գուցէ այդ զուգընթացութիւնը շատ չչեշտուէր. բայց նա իր քաղաքական ներշնչումներով հաւասարապէս տարուած է օրուան տաքտիքական հարցերով, ինչպէս մեր ամբողջ կուսակցութիւնը, եւ այդ պատճառով էլ նա հարազատ կը կրկնէ այն խանդավառութիւնները եւ լքումները, որոնցմով մեր ընդհանուր վիճակը կը բնորոշուի ներկայ քաղաքական փոթորկալից ժամանակներուն։

Զարգուշակ ռէակցիան մթագնած է մեր հորիզոնները եւ վախկոտ հեռապատկերներու ուրուանկարով կ'ահաբեկէ ընդհանուր հոգեբանութիւնը։ Հակահոսանք՝ սահմանադրութիւններու դէմ՝ ընդհանուր պետական աշխարհներում, հակահոսանք սեփական ժողովրդի ծոցին մէջ, մինչեւ այլանդակուած գաղափարադաւ լրագրականութիւն, կը հիասթափեցնեն իր իրականութեան աչքերը յառած դաշնակց. եւ առհասարակ համալսարանական ուսանողութիւնը։ Բացի այդ, կուսակցական հետաքրքրութեամբ կլանուած երիտասարդ մտաւորականը, զգալով զինքը ֆիզիքապէս չատ հեռու շահագրգռող միջավայրէն, կը մնայ լսողի դերին մէջ եւ այդ պայմաններով նա նոյնիսկ չհետեւելու անյարմարութեան դատապարտուած է շատ անգամ, իրողութիւններուն անձամբ չծանօթանալով։ Գործունէութեան տենդով մղուած անհատի հոգեբանութեան մէջ այդ կրաւորական կեանքը իր ձանձրացնող միօրինակութեամբ կը թուլացնէ հետաքրքրութիւնը եւ շատ անգամ կը ստեղծէ statique-*անշարժ դրութիւն։*

Այս դժբախտ փաստը ամբողջութեամբ կ'ապացուցի այլազգի կուսակցական ուսանողութիւններու շարքերուն եւ բարեբախտաբար ոչ ամբողջովին մեր դաշնակց. ուսանողութեան մէջ։

Եւրոպայի դաշնակց. ուսանողութեան գործունէութեան էական հիմքերէն են՝ ինչպէս շատ անգամ կրկնուած է, համագործակցութիւն՝ դրացի ուսանողներու հետ, մասնաւորաբար կուսակցական, եւ միջնորդ հանդիսանալ եւրոպական քաղաքական եւ սոցիալական շարժումներու եւ մեր իրականութեան միջեւ։ Նրա գոյութիւնն արդարացնող այս երկու խարիսխները իբրեւ մեկնակէտ ընդունելով՝ մենք կը հանինք այն հետեւողական եզրակացութեան, որ որքան կեանք կայ դրացի ուսանողութեան մէջ, դաշնակցական ուսանողութեան համագործակցութեան շանսերը կ'աւելնան եւ որքան սոցիալական շարժումները բարձր բարեխառնութիւն ունին Եւրոպայում, նոյն համեմատութեամբ կը ներգործեն մեր ուսանողական իրականութեան վրայ։

Իտալօ-թրքական պատերազմը անմիջապէս թուլցուց օթթոման կազմակերպութիւններու ոգեւորութիւնը, առաջացնելով ընդհանուր հիասթափութիւն միջավայրին հանդէպ. ռուսական ուսանողութիւնները վաղուց ընկել են apatie-*ի*[106] *գիրկը, մինչեւ վերջին աստիճան մանրացնելով կուսակցական հարցերը եւ հետաքրքրութիւնը։ Իսկ այդ ամենամեծ գործոններու պակասը մեզանից կը խլէ գործունէութեան դաշտ։ Փոքրիկ դաշնակց. խմբակներու էներգիան*[118] *անբաւական է կռուել այդ ընդհանուր հիասթափութեան դէմ։*

Այս կերպով մենք կը նկատենք, որ մեր կուսակցական կեանքը կը սահմանափակուի ներքին ակադեմիկ տեղական զբաղումներով։ Իսկ ոչ ոք կարող է ժխտել, որ միայն ակադեմիկ հետաքրքրութիւնը, ակտիւ մի կուսակցական կազմակերպութեան պատկանող խմբակներու, անկարող է բաւականութիւն տալ։

Զրկուած սեփական իրականութենէ, զրկուած դրացի ուսանողական ոգեւորուած կեանքէ, զրկուած առողջ գաղափարական միջավայրէ, հազիւ թէ բարգաւաճի առանձնացած, կղզիացած մի կազմակերպութիւն։

Ահա այդ պատճառներով դաշնակց. ուսանողութեան արտայայտութիւնը կը լինի յաճախ թոյլ մեր իրականութեան մէջ եւ մինչեւ անգամ յուսախաբող շահագրգռող շրջաններու համար։

Դեռ այն, ինչ վերեւ յիշեցինք, կը կազմէ բարոյական պատճառը՝ այս ընդհանուր ուժասպառութեան։ Ատոր

118.- Ոյժ, կորով, եռանդ:

վրայ պէտք է աւելցնել ուսանողական գործնական անյարմարութիւնները, որոնց առարկայ է ուսանողական կեանքը։ Հազիւ մի խմբակ 4/5 անդամով կազմակերպուեր է, եւ ահա կը սկսի անդամահատումը, մասամբ աւարտող ընկերներու հեռանալով, տեղափոխութեամբ եւ կամ ակադեմիկ զբաղումներով։

Բայց այդպէս չէ եւ եւ պիտի չլինի մեր Թիւրքայի ընկեր ուսանողներու համար, որոնց մանուկ կազմակերպութիւնը կու գայ ոգեւորել մեր շրջանները։

Նա իր միջավայրումն է, շրջապատուած մեր իրականութեան ամենացայտուն ալիքներով, հարուստ տպաւորութիւններով եւ ակտիւ գործունէութեան հնարաւորութիւնով։ Բացի ընդհանուր իրականութենէն, մտիկ մասնաւորաբար կուսակցական ամենաճոխ կեանքին՝ նա միանգամայն կ'ազդուի եւ կ'արտայայտուի։ Առանց այս երկու էական հանգամանքներու դեր խաղալը, միօրինակ կուսակցական բնաւորութիւնը անկատար է եւ նուազ բախտ ունի ոգեւորուած մնալու։

Իսկ ոչինչ լաւ բան չենք կարող ըսել, դժբախտաբար, մեր ռուսական իրականութեան համար, ուր կօզակներու կառավարութիւնը վարժեցուց չանհանգստանալ ուսանողութեան, նոյնիսկ համալսարանի օտիթուառներու[119] դռներուն առաջ Նիկոլայի ոստիկաններու մշտական ներկայութենէն։ Այդտեղ ոչ թէ քաղաքական, այլ ակադեմիկ ազատութիւններու խօսքն ընելն անգամ ժամանակավրէպ է։

Այս ընդհանուր ակնարկէն ետք, մի քանի ուրուագիծ տանք 1911 ապրիլէն մինչեւ այս վերամուտ մեր միութեան խմբական եւ արտաքին կեանքի մասին։

Ուսանողական վերջին համագումարէն անմիջապէս ետք, ինչպէս կը սպասուէր, բոլոր շրջաններում գործունէութիւնը եղած է բաւական ոգեւորուած։ Հակառակ համալսարանական զբաղումներու եւ ամառնային քննութիւններու պատճառած անյարմարութիւններուն, բոլոր քաղաքներում, ուր կային խմբակներ, վերակազմուեցան եւ շարունակական կապ պահեցին մարմնին հետ։

Խմբերու կազմութիւնը 1911-ի ապրիլէն ետք շատ աննշան փոփոխութիւններու ենթարկուած է.

1)	Լօզան	5
2)	Ժընեւ	24
3)	Լիէժ	4
4)	Փարիզ	18
5)	Լայբցիգ	7
6)	Բերլին	10
7)	Միւնխէն	4
8)	Բերն	3
9)	Վիեննա	2
10)	Ցիւրիխ	2
11)	Հալլէ	3
12)	Նանսի	5

119.- Լսարաններու։

Անհատ ընկերներ ունեցեր ենք,— Մոնբելիէ՝ 2, Հայդելբերգ՝ 1, Բրիւքսէլ՝ 2, Ժամպլու՝ 2, Իտալիա՝ 4, որոնց վրայ աւելցնելով վերջերս հասած ընկերներու թիւը, կ'ունենանք մօտաւորապէս 106 անդամ։

Այս վերամուտին Ժամպլուի ընկերներու թիւը հասնելով 4-ի, կազմակերպուած է առանձին խմբով, որով միութեան խմբերու թիւը կը բարձրանայ 13-ի։

ԽՄԲԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ապրիլի Համագումարէն մինչեւ յուլիսի սկիզբները* խմբերու մէջ կարդացուեր են հետեւեալ դասախօսութիւնները.

1) Մարդու ծագումը (Ժընեւ)։
2) Իրաւունքի ծագումը (Ժընեւ)
3) Ժան-Ժակ Ռուսսօ (Ժընեւ)
4) Անգլօ-գերման հաւանական պատերազմի պատճառները (Ժընեւ)
5) Ընդհանուր ակնարկ Թուրքիոյ ժամանակակից կացութեան մասին (Ժընեւ)
6) Նոր Թուրքիա (Լիէժ)։
7) Ընկերվարութիւնը եւ կուլտուրական գործը (Լօզան)։
8) Ինչո՞ւ կը հեռանան Դաշնակցութենէն (Լօզան)
9) Ռեֆորմները Տաճկաստանում (Լօզան)։
10) Քրիստոնեայ ազգութիւնները Տաճկաստանում (Լօզան)։
11) Կովկասահայերու տնտեսական կացութիւնը (Ենա)։
12) Ինտելիգենցիան եւ կուսակցութիւնը (Ենա)։

Փարիզէն, Բերնէն եւ Բերլինէն տեղեկագիր չստանալով, որոշապէս չգիտենք ներքին աշխատութիւններու մասին, բայց նամակներով տեղեկացուած է, որ նոյնիսկ սակաւանդամ խմբերու մէջ զրոյցներ կազմակերպուած են։

Լօզանի խումբը պարբերաբար դասախօսութիւններ տուած է տեղին Օթթօման կլուբին մէջ։ Նոյնպէս Ժընեւի ընկերները նոյն ընկերութեան մէջ յաջորդաբար կարդացել են հրապարակային դասախօսութիւններ.

1) Մարդու ծագումը։
2) Վերածնուող Թուրքիա եւ իր մտաւորականութիւնը։

*) Յուլիսէն մինչեւ հոկտեմբեր արձակուրդներու պատճառով խմբական կեանք չէ եղեր։

Այդ նախաձեռնութիւնները պատճառ են դարձեր, որ նոյն միութիւններու մէջ յաճախակի դասախօսութիւններ տրուին Թուրք ուսանողներու կողմէ։

Օթթօմանեան կլիւպներում յարաբերութիւնները այս կերպով սերտանալով, աշխատուած է հետզհետէ պատրաստել մտքերը առաջացնելու՝ մօտ ժամանակի մէջ Եւրոպայի օթթօման ուսանողներու մի համագումար, որուն նպատակը լինի օրկանական կապ հաստատել ցրուած եւ առանձնացած միութիւններուն միջեւ։ Այս միտքն սկսուած է մեր ապրիլի համագումարով, մշակուում է Ժընեւի Օթթօմանեան կլիւպի ժողովներում եւ մի նախաքայլ առնուած է մեր Լօզանի ընկերներուն կողմէ։ Համագումարի որոշմամբ հրատարակած ընդհանուր կոչը, պարսիկ ուսանողութեան նման շարժումները, մեր դրացի Թուրք ուսանողներուն հետզհետէ մատչելի կը դարձնեն մի այդպիսի կենսական կապի անհրաժեշտութիւնը։ Պատերազմի առթիւ յիշեալ միութիւնները, զանազան քաղաքներու մէջ կազմակերպուած բողոքի միտինգների շնորհիւ, բնական կարիք զգացին բանակցիլ, համագործակցիլ իրարու հետ։ Այդ օրէն սկսած այդ ձգտումները մտած են բաւական գործնական ֆազի[24] մը մէջ։

Մեր դերը պիտի լինի օգտուել այդ նպաստաւոր առիթէն եւ անպատճառ իրականացնել այդ կենսական ամբողջութիւնը օթթօման ընկերութիւններու։ Որովհետեւ այդ կապով միայն կարելի կը լինի համագործակցութեանը տալ ընդհանուր բնոյթ եւ զուգընթացութիւն հաստատել բոլոր վայրերու գործունէութիւններու միջեւ։ Այդ կապի չգոյութեան պատճառով բոլորովին հակասական ծրագրեր որդեգրուած են յիշեալ միութիւններու կողմէ. մինչդեռ ընդհանուր կազմակերպութեամբ կարելի կը լինի այդ հակասութիւններուն առաջքն առնել եւ բոլոր ջանքերը կենտրոնացնել մի միակ ուղղութեան շուրջ։

Բացի վերոյիշեալ աշխատանքներէն, զանազան ընկերներ, Բերնէն, Փարիզէն, Ցիւրիխէն, Ժընեւէն, Թուրինէն, Բերլինէն աշխատակցեր են կուսակցական մամուլին — Ազատամարտին, Ազ[դակ] շաբաթաթերթին, Հայրենիքին, Ցառաջին, Ուսանողին։

Լօզանի միջազգային սոցիալիստական միութեան մէջ մերինները շարունակեր են գործակցութիւն։

ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Գործադիր Մարմինը, բաղկացած 5 անդամներէ եւ երկու փոխանդամներէ, սկսած է իր աշխատութիւնը ապրիլի 25-էն։

Մինչեւ այդ՝ խմբերը կիսակազմալոյծ դրութեան մէջ լինելուն, առաջին առթիւ փութացել է վերակազմել զանոնք, հրատարակելով մի ընդհանուր շրջաբերական։ Ուս. համագումարի կողմէ վերակազմուած կանոնագիրը անմիջապէս հրատարակել տալով, ցրուած է բոլոր խումբերուն մէջ։ Առանձին գրքոյկով հրատարակած է Դաշ. Ուս. Միութեան երկու տարուան գործունէութեան եւ վերջին համագումարի աշխատանքներու տեղեկագիրը։ Հրատարակեր է նոյնպէս մի ընդհանուր կոչ՝ ուղղուած Թուրք եւ իրանեան ուսանողութիւններու՝ հրաւիրելով զանոնք համագործակցութեան[120] (որի մասին դժբախտաբար մեր կուսակցական մամուլը ո՛չ մի արձագանք տուաւ)։ Շարունակական կապ ունեցեր է Եւրոպայի մեր խումբերուն, Ռուսաստանի ուսանող ընկերներուն եւ Տաճկաստանի ուսանողներուն հետ։

Թերթի հրատարակութեան վայրի որոշումը իրեն վերապահուած լինելուն, փոխադրած է զայն Փարիզէն՝ Ժընեւ։ Խմբերու մօտ գտնուած գոյքերու կահացուցակը պատրաստած է մասամբ։

Ինչպէս յայտնի է համագումարի որոշումներէն, նա ստանձնած է նոյնպէս «Ուսանող» հանդէսի խմբագրական ամբողջ աշխատանքը։

Թերթի նիւթականն ապահով դրութեան մէջ դնելու համար, աշխատեր է Թուրքիոյ եւ զանազան վայրերու գործակալներու ղրկուած հին թիւերու արժէքները գանձել, բայց դժբախտաբար յաճախ անբարեխիղճ վերաբերմունքի է հանդիպել եւ շատ չնչին արդիւնք է ձեռք բերել։ Ուստի փոխեր է նախկին գործակալներէն շատերը եւ որոշած հին առնելիքները հրապարակաւ պահանջել։

Համագումարի որոշմամբ թերթը [տարին] երկու անգամ լոյս պիտի տեսնէ։ Առաջին թիւը հոկտ.-ին պէտք էր երեւնար, բայց մէկէջ աւելի սովորական եւ արտակարգ խոչընդոտներով ուշացաւ։

Բովանդակութեան մասին դատել՝ ընթերցող հասարակութեան կը մնայ։ Միայն այն, ինչ կը վերաբերի ընկերներու աշխատակցութեան, անկեղծօրէն խոստովանելով, սպասուածէն աւելի թոյլ եւ անճշտապահ եղած է, մին այն հանգամանքներէն, որոնք պատճառ են դարձել յապաղման եւ յոդուածներու բովանդակութեան համապատասխան չդասաւորելուն։

Նիւթական աննախանձելի դրութիւնը թոյլ չտուաւ այս անգամ ալ կատարելու մի շարք պարտականութիւններ, որ կուսակցութիւնը կ'ակնկալէ Միութենէն։ Խօսքը մօտակայ վայրերու մէջ դաշնակց. պրոբականդին վրայ է։ Միայն ամէն կերպ աշխատեր ենք պարտադրել զանազան վայրեր մեկնած ընկերները, որ իրենց ջանքերը չխնայեն այդ ուղղութեամբ։

Բոլոր խմբերէն տեղեկագիր ստացած չլինելով, չենք կարող դրամական հաշուետուութեան մասին մի տախտակ տալ։

ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

120.- Յիշեալ կոչը տեսնել էջ 442-443։

«Ուսանող», 1911, թիւ 6, էջ 257-263, Ժընեւ

Ե 4.– ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

(Վերամշակուած եւ հաստատուած Միութեան երրորդ Համագումարում –1911)

ՆՊԱՏԱԿ.

Յօդ. 1.– Եւրոպայի Դաշնակցական Ուսանողների Միութեան նպատակն է՝ սերտ կապ հաստատելով դաշնակցական ուսանողական խմբերի եւ անհատների միջեւ,

ա) Գրչով ու խօսքով լուսաբանել եւ տարածել Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքները. բ) Նպաստել Կովկասի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանների ուսումնասիրութեան. գ) Հետեւել Եւրոպայի զանազան երկրներում սոցիալիստական տարբեր ուղղութիւններին եւ արտայայտել այդ՝ մեր կուսակցութեան օրգաններում:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ.

Յօդ. 2.– Միութեան անդամակցելու իրաւունք ունեն այն ուսանող-ուսանողուհիներն, որոնք ընդունում են ամբողջովին Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը եւ ենթարկւում են Եւրոպայի Դաշնակցական Ուսանողների Միութեան կանոնագրին:

Ծանօթ.– Ուսանող է նա, ով ուսանում է կամ ուսանելու նպատակով գտնւում է Եւրոպայում:

Յօդ. 3.– Եւրոպայի Դաշն. Ուսանողների Միութեան իրաւաքանչիւր անդամ՝ կարող է մասնակցել ուրիշ ոչ-կուսակցական խմբակցութիւնների:

Յօդ. 4.– Իրաւաքանչիւր դաշնակցական ուսանող անդամավճար է տալիս առնուազն իր եկամուտի 1%-ը: (Համաձայն Դաշնակ. կանոնագրին պարտադիր է 2%-ը):

Ծանօթ.– Աշխատել պրոգրեսիւ[100] եկամտային տուրքի սկզբունքը կիրառել անդամավճարների գործում:

ԽՈՒՄԲ.

Յօդ. 5.– Իրաւաքանչիւր քաղաքի դաշնակցական ուսանողները կազմում են միայն մի խումբ:

Ծանօթ.– ա) Խմբի անդամների նուազագոյն թիւը երեք է.

բ) Երեքից պակաս անդամ ունեցող խմբերը միանում են մօտակայ քաղաքի խմբին, կամ իրար հետ միանալով առանձին խումբ են կազմում.

գ) Եւրոպայում գտնուող ոչ ուսանող դաշնակցականները կարող են մասնակցել տեղական խմբերին վճռական ձայնով՝ խմբակի համաձայնութեամբ.

դ) Խմբի այն անդամները, որոնք աւարտում են իրենց ուսումը եւ մնում քաղաքում, համարւում են Միութեան անդամ:

ե) Որեւէ խմբակի անդամ օտար քաղաքում ժամանակաւորապէս գտնուած դէպքում կարող է ձայնի իրաւունքով մասնակցել տեղական խմբի նիստերին:

Յօդ. 6.– Ամէն մի խումբ ունի իւր խմբապետը, քարտուղարն ու գանձապահը:

Յօդ. 7.– Խմբերի եկամուտներն են՝ անդամավճար, նուէրներ եւ երեկոյթներից եկած հասոյթներ:

Յօդ. 8.– Խումբը իւր դրամական հաշիւների մասին երեք ամիսը մի անգամ՝ զեկուցում է տալիս Գործադիր մարմնին, ուղարկելով ծախսերից մնացած դրամները:

Ծանօթ.– Խմբի տեղական ծախսը եկամտի մի երրորդից աւելի պէտք չէ լինի, բացառիկ դէպքում պէտք է ստանալ Գործադիր մարմնի հաւանութիւնը:

Յօդ. 9.– Խմբերը իրար եւ Գործադիր մարմնի հետ պաշտօնական յարաբերութեան մէջ են իրենց խմբապետների միջոցով:

Յօդ. 10.– Խմբերն ունենում են բանախօսութիւնների եւ կուսակցական այլ նիւթերի համար պարբերական ժողովներ:

Յօդ. 11.– Իրաւաքանչիւր խումբ պարտաւոր է կիսամեակի վերջին իւր բովանդակ գործունէութեան մասին մանրամասն զեկուցում տալ Գործադիր Մարմնին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ.

Յօդ. 12.– Եւրոպայի Դաշնակցական Ուսանողների Միութեան բարձրագոյն մարմինը Պատգամաւորական ժողովն է, որ տարեկան մի անգամ է գումարւում:

Ծանօթ.– ա) Գործադիր մարմինը Պատգամաւորական ժողով հրաւիրում կամ յետաձգում է նախօրօք խմբերի հաւանութիւնը ստանալով.

բ) Յարգելի պատճառներ եղած դէպքում՝ համագումարը հրաւիրում է առնուազն երկու տարին մի անգամ.

գ) Դաշնակցութեան Ընդհ. ժողովի եւ ուրիշ ստիպողական դէպքերում արտակարգ համագումար է հրաւիրում:

Յօդ. 13.– Մինչեւ 3-5 անդամ ունեցող խումբը մի պատգամաւորական ձայնի իրաւունք ունի. այնուհետեւ 6-10-ը՝ 2 ձայն. 11-15-ը՝ 3 ձայն. 16-20-ը՝ 4 ձայն եւ այսպէս շարունակաբար:

Ծանօթ.– Ոչ մի պատգամաւոր իր ձայնը ուրիշին տալու իրաւունք չունի, առանց խմբի համաձայնութեան:

Յօդ. 14.– Համագումարը օգտւում է կոռպտացիայի[101] իրաւունքով:

Ծանօթ.– Համագումարը կոռպտացիայի իրաւունքը սահմանափակում է իւր ձայների մի երրորդ մասով:

Յօդ. 15.– Միութեան, ինչպէս նաեւ Դաշնակցութեան

իրաւաքանչիւր անդամ՝ կարող է Համագումարին մասնակցել խորհրդակցական ձայնի իրաւունքով:

Յօդ. 16.– Ուսանողութեան Համագումարին Արեւմտեան Բիւրոն մասնակցում է մէկ ձայնի իրաւունքով:

Յօդ. 17.– Համագումարն օրինաւոր է, երբ ներկայ են պատգամաւորների երկու երրորդը:

Յօդ. 18.– Համագումարի զբաղմունքներն են. ա) Մանրամասն զեկուցումներ նախկին Համագումարից մինչեւ ներկան եւ հիմնովին ծանօթութիւն խմբական կեանքի. բ) Առաջարկներ խմբերի եւ անհատների կողմից եւ դրանց քննութիւնը. գ) Դասախօսութիւններ, որոնք անմիջական կապ պիտի ունենան Հ. Յ. Դաշնակցութեան հետ, պարզելով նրա տեսական կամ գործնական սկզբունքները. դ) Զանազան մարմինների եւ անդամների ընտրութիւն. ե) Միութեան նախահաշիւ:

Յօդ. 19.– Հրամայական մանդատի[102] սկզբունքը չի ընդունւում, համաձայն Հ. Յ. Դաշնակցութեան ընդհ. կանոնագրի 111-րդ յօդուածի:

Յօդ. 20.– Միութիւնը Արեւմտեան Ռայոնական ժողովին մասնակցում է մէկ ձայնով:

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ.

Յօդ. 21.– Համագումարն ընտրում է Գործադիր մարմին՝ բաղկացած երեք անդամից եւ երկու փոխանդամից:

Ծանօթ.– ա) Յանկալի է, որ Գործադիր Մարմնի անդամները հնարաւոր եղածին չափ իրար մօտ լինին:

բ) Գործադիր մարմնի անդամ կարող է ընտրուել նաեւ Համագումարի ոչ-պատգամաւորը:

Յօդ. 22.– Գործադիր մարմինը պարտաւոր է հսկել համագումարի որոշումների ճիշտ իրագործմանը եւ խմբերին գիտակ պահել կուսակցական եւ Միութեան գործերի ընթացքին:

Յօդ. 23.– Գործադիր մարմինը պահում է համագումարի արձանագրութիւնները, Միութեան դիւանը եւ կնիքը, գանձում է խմբերի ծախսերից մնացած գումարները:

Յօդ. 24.– Գործադիր մարմինը հոգում է համագումարի նախապատրաստական աշխատանքները, պաշտօնապէս բաց է անում համագումարը եւ մասնակցում է նրան մի ձայնով:

Ծանօթ.– Գործադիր մարմնի անդամները չեն կարող պատգամաւոր ընտրուել խմբերի կողմից:

Յօդ. 25.– Գործադիր մարմինը մանրամասն զեկուցում է տալիս իւր բովանդակ գործունէութեան մասին համագումարի առաջ:

Յօդ. 26.– Գործադիր մարմինը նախահաշուի համաձայն Միութեան գանձարանից անում է բովանդակ ծախսերը, ինչպէս եւ հոգում հրատարակութեան գործը:

Ծանօթ.– Որոշ նպատակների յատկացուած գումարները պէտք է գործածել իրանց նպատակին:

Յօդ. 27.– Համագումարից երեք ամիս առաջ, Գործադիր մարմինը իւրաքանչիւր խմբից համագումարին տրրուելիք հարցերը հաւաքելով եւ մշակելով ուղարկում է բոլոր խմբերին ի քննութիւն:

Յօդ. 28.– Գործադիր մարմինը որոշում է համագումարի տեղը:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՆԻՔ.

Յօդ. 29.– Նպատակի փոփոխութեան համար անհրաժեշտ է Միութեան անդամների եւ Համագումարի 2/3-ի մեծամասնութիւն:

Յօդ. 30.– Միութեան կանոնագրի մնացեալ կէտերի փոփոխութիւնը լինում է սովորական կարգով – ձայների պարզ մեծամասնութեամբ, նախապէս առնելով խմբերի կարծիքը:

Յօդ. 31.– Եթէ համագումարի ընթացքում նկատուի կանոնագրութեան մէկ կամ մի քանի կէտերի փոփոխութեան անհրաժեշտութիւնը, այն ատեն, համագումարի որոշումն օրինական սանկցիա[121] կը ստանայ Միութեան անդամների մեծամասնութեան հաւանութիւնը ստանալով:

Յօդ. 32.– Միութիւնն ունի իւր կնիքը հետեւեալ մակագրութեամբ. «Եւրոպայի Հ. Յ. Դաշն. Ուսանողների Միութիւն». եւ նոյնը ֆրանսերէն՝ "Union des Etudiants Arméniens Daschnaktzakans de l'Europe":

121.- Վաւերացում, հաստատում:

Փաստ. 1470-190

Ե 5.– ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ [122]

تورکیه‌ده و ایرانده تحصیل علوم ایله مشغول اولان وطنداشلره

AUX ÉTUDIANTS COMPATRIOTES OTTOMANS ET PERSANS



Compatriotes!

La solidarité des races tant au point de vu
réalisation du grand Idéal social qu'à celui d
rêts fondamentaux, concernant particulièremen
pays devant demeurer sans conteste la seule i
rectrice de nos actions; et d'une autre part en
éduqués au sein d'un parti, dont le Credo et la
se basent sur cette idée maîtresse, les Etudiants n
du «Dasdnaktzoutiounn» (la Fédération), de p
décision prise au III congré du Parti, se son
le devoir imperieux de poursuivre le développe
la propagation de cette idée *particulièrement*
sphères des Etudiants orientaux, ces derniers co
logiquement l'avant-garde des idées progressa
leur Patrie. *La conservation et le maintien d*
Ottoman ne peuvent dépendre que de la Solid
plus étroite des éléments qui la composent et
être et progrès de chacun d'eux ne sont gara
par la réalisation de cette solidarité seule.

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայրենակիցնե՛ր,

Լաւ գիտակցելով ազգերի համերաշխութեան գաղափարի նուիրականութիւնը համամարդկային իդէալների տեսակէտից ընդհանրապէս եւ մեր հայրենիքի ամենակենսական շահերի տեսակէտից մասնաւորապէս, միւս կողմից որդեգրուած եւ դաստիարակուած լինելով մի կուսակցութեան գրկում, որ անդաւաճան կերպով դաւանել ու կրել է այդ գաղափարը իր դրօշի վրայ, Եւրոպ. Հայ Յեղ. Դաշ. Ուսանողները իրենց III Համագումարման սեպուհ պարտականութիւններից մէկը համարեցին հանգամանօրէն զբաղիլ այդ հարցով – ի՛նչպէս իրագործել այդ նուիրական գաղափարը, յատկապէս հայրենակից ուսանողութեան շարքերում, որ կոչուած է երկրի յառաջդիմող տարրը հանդիսանալու:

Օսմանեան ազգերի ընհանուր համերաշխութիւնը այդ պետութեան գոյութեան եւ բարգաւաճման անհրաժեշտ հիմքն է ու միանգամայն իւրաքանչիւր ժողովրդի բարօրութեան գաղափարը:

Ահա մեր կուսակցութեան բարձրաձայն յայտարարած դաւանանքը, որ անշուշտ մեզ համար եւս գաղտնիք չէ եւ որ պիտի առաջնորդէ մեզ ընդմիշտ: Մենք յոյս ունինք, որ դուք այժմ այլեւս կարեւորութիւն ու արժէք չէք տալիս Աբդիւլ Համիդի օրերից ի վեր հրապարակում շրջող այն անհեթեթ շշուկներին, որոնք ձգտում են ստուեր ձգել մեր համերաշխութեան դաւանանքի վրայ, վերագրելով մեզ ինչ որ «անջատական» ծրագիրներ:

Քսան տարուայ ամենավտանգաւոր խութերի վրայից խոյացող, միշտ բաց-ճակատ, միշտ հպարտ մեր կուսակցութիւնը չէր թաքցնի իւր անջատողական ձգտումը եթէ այդպիսին յիրաւի լինէր – այլ բացորոշ կերպով կ'արձանագրէր իր ծրագրի մէջ եւ կը մարմնացնէր այն իւր ամէն մի գործնական քայլում: Սակայն Դաշնակցութեան ողջ գործունէութեան ընթացքում, գրաւոր թէ բանաւոր պրոպագանդայի մէջ, անկարելի է գտնել մի հատիկ փաստ, որ հաստատէր այդպիսի մի ենթադրութիւն:

122.- Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. Երբորդ համագումարի կոչը հայերէն, օսմաներէն եւ ֆրանսերէն, ուղղուած թուրք եւ պարսիկ ուսանողներուն:

Ահա Պարսկաստանը, ուր անջատողականութեան մասին մտածելն անգամ երազ է եւ ուր Դաշնակցութեան բազմաթիւ հերոսներ փարած իրանց գուրգուրած դրօշին, զոհեցին իրանց կեանքը միջազգային համերաշխութեան եւ ազատութեան վեհ սկզբունքին:

Ձեզ ենք դիմում, պարսիկ հայրենակիցներ, ընկեր եւ ուսանողներ, գնահատելու անձամբ տեսածը, պատմելու իրողութիւնը:

Այդ թիւրիմացութեան պատճառը թերեւս մեր *ապակենտրոնացման պահանջն է*, որ արել ենք եւ պիտի յայտարարենք, որովհետեւ այլ կերպ անկարող ենք պսակուած տեսնել Օսմանեան հայրենակից ազգերի իսկական համերաշխութեան եւ համագործակցութեան բախտաւոր միութիւնը: Այստեղ տեղը չէ ապակենտրոնացման մասին խօսել ըստ էութեան, բայց չենք կարող մի հարց չտալ.– մի՞թէ Զուիցերիան իր երեք ապակենտրոն ազգերով, որ մեզ միշտ օրինակ է հանդիսացել՝ հայրենասիրութեան ամենափայլուն օրինակը չէ տուել, ստեղծելով իր գրկում ազատ ու դեմոկրատիկ մի երկիր, միեւնոյն ժամանակ հասնելով բարգաւաճման ու ծաղկման նախանձելի դրութեան:

Հայրենակիցնե՛ր, մենք կոչ ենք անում սրանով Օսմանեան եւ Պարսկական երկրի անկեղծ, ազատական տարրերին, կոչ ենք անում յատկապէս մեր ուսանող հայրենակիցների ակադեմիական ոգուն ու պարտաճանաչութեան, մօտեցէք այս հարցին գիտական-հասարակական տեսակէտից եւ թիւրիմացութեան մեծագոյն մասը ոչնչացած կը լինի: Օսմանեան եւ Պարսկական Սահմանադրութիւնները եւ նրանց ամրապնդումը, յարատեւումը, մի ազատ բարգաւաճող Հայրենիքի ծառայելու բուռն ձգտումը՝ *ահա այս կոչի բուն դրդապատճառն ու ծնունդ տուողը:*

Ո՞րքան վէրքեր են մնում դեռ մեր հայրենիքին, որ միայն մի անձնուէր համերաշխութիւն կարող է բուժել. ո՞րքան ճանաչուելու, ուսումնասիրուելու է կարօտ նոյն այդ հայրենիքը, որ մեր բոլորի անկեղծ, խանդավառօրէն ձեռք ձեռքի տուած գործունէութեամբ է հնարաւոր. էլ չենք ասում լուսոյ այն հեղեղը, որն անհրաժեշտ է դարերից ի վեր կուտակուած խաւարը ցրելու եւ դէպի երջանիկ ապագան առաջնորդելու համար: Բայց այդ բոլորից առաջ անհրաժեշտ է որ ճանաչենք մենք ինքզինքնիս, միմեանց, փոխադարձաբար մեր իսկական հակումներն ու ձգտումները եւ այն ժամանակ կը պարզուի ամէն մէկիս համար էլ շատ աւելի ահռելի ու սոսկալի՝ քան երեւակայական սեպարատիզմը – Հայրենիքի թշնամին: Ով ուզում է հայրենիքի հարազատ, անկեղծ զաւակը լինել, նա չի կարող մի վայրկեան վարանել համերաշխութեան գաղափարին փարելու եւ իսկական թշնամի՝ հրէշը, վերջնականապէս գետին տապալելու ցանկութիւնից:

Արեւելքը զարթնում է... բերկրանքով ողջունեցին ազատութեան յաղթանակները բոլոր երկրի անկեղծ ազատականները: Ձեզ ենք ուղղում մեր խօսքերը, թուրք, պարսիկ, քուրտ, յոյն, ասորի, հրեայ, արաբ, բուլգար, ազատութեան գաղափարով տոչորուած հայրենակիցներ: Սեղմենք մեր շարքերը, մեր անհուն խանդավառութեամբ միացնենք մեր համեստ ոյժերը եւ քիչ յետոյ, ազատութեան բոլոր անձնուէր մարտիկները – գրչի թէ խօսքի – առիթ կ'ունենան ողջունելու այն փաստը, որ Արեւելքը ոչ միայն բռնութեան օրրանը եղաւ, այլ եւ նրա գերեզմանը:

Կեցցէ՞ ազգերի համերաշխութիւնը:
Կեցցէ՞ վերածնուող Արեւելքը:
Կեցցէ՞ այդ գաղափարներով տոչորուած Միջազգային Ուսանողութիւնը:

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
III ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

[1911 թ.]

Փաստ. 1399-115

ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

CENTRAL COMMITTEE OF AMERICA

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION

DASCHNAKTZOUTIOUN

(„Droshak", Party's Organ, published in Geneva, Switzerland.)

ՀՕՍՏՕՆ

19[illegible] Յ. Փետ. 12.

№ [redacted]

Ե 6.– Ամերիկայի Հ. Յ. Դ.
Ռուսական մասնաճիւղ

Սիրելի ընկերներ,

Ստացանք Ձեր 3-րդ Համագումարի տեղեկագիրը եւ ուրախ եղանք անոր յաջող ելքին համար։ Ուրախ եղանք մանաւանդ անոր համար, որ համագումարը աւելի որոշ կերպով շեշտած է ուսանող ընկերներու մասնակցութիւնը կազմակերպական պրոպականտին, ըլլայ այդ գրաւոր կամ բանաւոր եւ կասկած չունինք, որ իւրաքանչիւր ընկեր այդ ուղղութեամբ օգտակար ըլլայ այն ժողովուրդին, որուն մէջ մտաւորական եւ մանաւանդ որոշ ուղղութիւն ունեցող գաղափարականներու այնքան պէտքը կայ։

Ամերիկայի մէջ եւս ունինք դաշն[ակցական] ուսանողներ, որոնք ներկայիս շատ փոքր քանակ մը կը կազմեն եւ ցրուած զանազան տեղեր, իրար հետ գրեթէ կապակցութիւն չունին։ Օրէ օր հոս եւս դաշն. ուսանողութիւնը աճելու վրայ է, որոնցմէ միշտ օգտուիլ կը ջանանք բոլոր պատեհ առիթներով։ Դժբախտաբար հոս, ուսանիլը այնքան դժուար է, որ յաճախ ուսանող ընկերներ ստիպուած են իրենց վարժարանի զբաղումներէն դուրս չարաչար աշխատիլ ոեւէ պարապումով ճարելու համար ապրուստի անհրաժեշտ գումար մը եւ կամ վարժարանին տարեթոշակը, եւ այդ իսկ պատճառաւ շատ մը ուսանողներ հազիւ թէ կրնան լծուիլ կազմակերպական գործին։

Ընկերներ, Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ կէտի վրայ։ Թերթի մը հասարակութեան մէջ գտնելիք ժողովրդականութիւնը կախում ունի իր պարունակութենէն, լուրջ ուսումնասիրութիւններէն եւ գիտական յօդուածներէն։ Հայրենիքը, այդ կարգի օժտուած թերթ մը ընելու համար ջանք չենք խնայած, եւ սակայն միշտ պակսած են կարող ուժեր, որոնք կարենային իրենց յօդուածներով թերթը ճոխացնել աւելի քան ինչ որ հիմա է։ Այս պարտքը մասամբ կը ծանրանայ մեր մտաւորական ուժերու, մեր ուսանող ընկերներու վրայ։

Տեղեկագրին մէջ յիշած էիք, որ «Հ[այրենիք]»-ին աշխատակցած էք, բայց ոչ պահանջուած չափով եւ փափաք կը յայտնէք առաջիկայի համար աւելի կանոնաւոր աշխատակցութիւն ապահովել։

Քաջալերուած Ձեր այդ տրամադրութենէն մենք շատ պահանջկոտ չպիտի ըլլայինք սակայն։ Պիտի խնդրէինք, որ Միութեանդ ընկերները իրենց դասախօսութիւններու նկարագրութիւնը գրէին եւ երբեմն ալ յօդուած-թղթակցութիւններ գրէին «Հ»-ին, շատ չէ, գէթ 2-3 շաբաթը անգամ մը, եւ կը հաւատանք որ իրենց անհամեմատ մեծ օգուտները կ'ունենային եւ այդ թերեւս մղում մը կ'ըլլար ուրիշ կարող աղբիւրներու։

Արդէն «Հ»-ը աշխատակցութիւններ վարձատրելու սովորութիւնը ունի եւ այդպիսով կարելի էր Ուսանողի գանձին նուէր մը ղրկել «Հ»-ի վարչութեան կողմէն. օգուտը կ'ըլլար կողմնակի սա տարբերութեամբ [որ] մեր ուժերը, մեր կարողութիւնները մեր մէջ փոխանակելով կրկնակի օգուտ դուրս կու գար։

Արդ, ընկերներ, վստահ ենք թէ յառաջիկայ շրջանին համար պէտք եղած յանձնարարութիւնները կ'ընէք մեր ուսանող ընկերներուն յաճախ գրելու «Հ»-ին, որուն այնքան պէտք ունինք։

Ցուսալով որ այս նոր շրջանը Ձեզ համար կ'ըլլայ աւելի արդիւնաւէտ եւ փայլուն միշտ յաջողութիւն ցանկալով, մնամք

Ընկ[երական] բարեւներով
Ի դիմաց Ամեր. Կ. Կոմիտէի

Ս. Բարսեղեան
Գրագրաց քարտուղար Ա. Ի. Սոնա

ՍԱՆՏԱԼ

Փաստ. 1457-2

Ե 7.– Կ. ՊՈԼՍՈՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵՆԷՆ Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ժընեւ

25 հոկտ. 1911, Կ. Պոլիս

Ընկերներ!

Կ. Պոլսոյ դաշնակցական ուսանողներ շարք մը ժողովներէ յետոյ Հոկտ. 2-ին կազմեցին Պոլսոյ շրջանի Ուս. Միութիւնը, որուն կանոնագիրը ներփակ կը ղրկենք Ձեզ։

Ուրախութեամբ է որ կը յայտնենք գաղափարի մը իրականացումը, որուն անհրաժեշտութիւնը կը շեշտուէր ամէն կողմէ։

Ներկայ տագնապալի պայմաններուն մէջ նորակազմ Դաշն. Ուս. Միութիւնը ծանր պարտականութիւններու առջեւ կը գտնուի։ Ցաղթել բոլոր խոչընդոտներու եւ ստեղծագործական խաղաղ աշխատանքի շրջան մը բանալ դէպի կուսակցութեան իտէալները, Պոլսոյ ամբողջ ուսանողութեան մէջ հասարակական ոգի մտցնել եւ հասցնել դաշն. ուսանողութիւնը իր կոչման բարձրութեան, ահա թէ ինչ պիտի լինի ընդհանուր կերպով մեր անմիջական գործը։

Այս պարագային Եւրոպայի Դաշն. Ուս. Միութեան փորձառութենէն սպասելիքներ ունենալով՝ թանկ պիտի արժեն անոր ընկերական խորհուրդներն ու բարոյական օժանդակութիւնը։

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ Ուս. Միութեան
Վարչութեան քարտուղար՝
ՀՄ[ԱՑԵԱԿ] ՄԱՆՈՒԿԵԱՆ

Յ.Գ.- Մեր հասցէն է՝
— Բերա, Համալ Պաշի, «Ազատամարտ»ի ակումբը, Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ Ուս. Միութեան Վարչութիւն։

ՆՈՅՆ

Փաստ. 1472-23

Ե 8.– ՅՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆԷՆ ՌՈՒԲԷՆ ՏԱՐՕՆԱՑԻԻՆ [ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ]

Սիրելի Ռուբէն,

Journal de Genève-*ում կարդացի որ դու արդէն* licencié *ես։ Շնորհաւորում եմ սրտանց։ Ինձ առանձնապէս ուրախացնում է այս դէպքում ե՛ւ մի այլ բան, ու ջերմապէս կը ցանկանայի, որ յաճախ տեղի ունենար այդ։ Վերջին ժամանակներս մեզանում մի անցանկալի երեւոյթ է տեղի ունենում.— մեր մտաւորականների ու մեր ֆետայիների փոխադարձ վերաբերմունքն ու գնահատումը։ Առաջինը բարձրից է նայում մի քիչ արհամարհանքով, իբրեւ կոպիտ ոյժի, եւ նրա բարոյական մեծ արժէքը չի կարողանում իր ծաւալի մէջ դնել։ Երկրորդը իր հերթին ոչ պակաս արհամարհանքով է նայում իբրեւ գրչի մարդու, իբրեւ վախկոտի, իբրեւ տաքսենեակի մարդու։ Ես կ'ուզենայի որ երկուսն էլ հասկանան, որ ֆետային կարող է լինել ե՛ւ մտաւորական, ե՛ւ գիտութեան մարդ, ինչպէս եւ մտաւորականը՝ ե՛ւ ֆետայի, ե՛ւ հրացանի մարդը։ Սրա մէջ է մեր պայքարի ուրոյն բնաւորութիւնը, մեծութիւնը, ու այս հարմոնիի մէջ ե՛ւ գեղեցկութիւնը։ Գարոյի եւ քո դէպքը ինձ համար անգնահատելի է, չափազանց ուրախացնող, որովհետեւ երկու ուժերն իմ աչքին ունեն իր նշանաւոր եւ մեծ դերը, մէկը միւսին լրացնում, ամբողջացնում, գոյն ու կեանք տալիս։ Ու որքան շատ, այնքան լաւ, մենք աւելի ուժեղ կը լինենք ու աւելի բարձր։ Շնորհաւորում եմ եւ օրհնում քեզ. բարով մուրազիդ հասնիս։*

Կարինից գրում են, որ քեզ Մուշ են սպասում։ Ի՞նչ վսեմ զուգադիպութիւն։ Բայց ամբողջ սրտով կը ցանկանայի, որ բարով անցած [?] լինի ու քո նախկին հայրենիքը գնաս կրակի տեղ լոյս տարածելու։ Ի՞նչ պէտք է անել, մեր կեանքը այսպէս է — լոյսը կրակի հետ է. դեռ մենք ուրիշ լոյս չունինք, դեռ մենք կրակի լոյսով ենք ապրում...

Իմ ու Յորդանսի[123] *առողջութիւնը վատ չէ. մանաւանդ ես լաւ եմ։ Կը բարեւես Անտոնին*[124] *եւ իր միւս լաւ ընկերներին։ Յորդանսի եւ իմ ջերմ բարեւները. համբուրում եմ՝*

ՅՈՆԱՆ

2-2-1912, Թաւրիզ

123.- Յորդանսը՝ Յոնան Դաւթեանի զուգեղբուհի կինն էր։
124.- Անտոն, Անտոն Գոշ (Պոյաճեան) «Դրօշակ»ի խմբագրատան դիւանապետն էր։

ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ Դ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ (1912)

ԲԱԺԻՆ Զ.

1912 թուականի թղթածրարը հարուստ է թէ՛ Գործադիր-Խմբագրական մարմնի եւ թէ տարբեր մասնաճիւղերու տեղեկագրերով, որոնց ճամբով հետաքրքրական ծանօթութիւններ կը հայթայթուին Եւրոպայի ուս. միութեան 1911-12 տարիներու բազմերես գործունէութեան մասին: Միութիւնը կը հաշուէ շուրջ 100 անդամներ՝ Ֆրանսայի, Գերմանիոյ, Զուիցերիոյ եւ Պելճիքայի համալսարանական քաղաքներուն մէջ: Պաշտօնաթերթ «Ուսանող»ի խմբագրման, տպագրութեան եւ տարածման հետ կապուած խնդիրները կը կարօտին մեծ ճիգերու. անոնք կը գրաւեն Գործադիր մարմնի աշխատանքներուն մեծագոյն մասը. բայց արդէն լոյս տեսած են 6 համարներ 1000 տպաքանակով. բաժանորդներ ունի գլխաւորաբար՝ Եւրոպայի 11, Թուրքիոյ 16 քաղաքներուն մէջ, ինչպէս նաեւ Ամերիկա, Պալքաններ, Պարսկաստան, Եգիպտոս: Ծանօթ պատճառներով արգիլուած է անոր մուտքը Կովկաս:

Շահեկան է յատկապէս ընդարձակ արձանագրութիւնը 1912 թ. Ապրիլին Ժընեւ կայացած համագումարին, որուն կը մասնակցէին՝ այդ օրերուն Զուիցերիոյ մէջ ուսանող Ռուբէն Տէր Մինասեան, եւ հոն գտնուող Արամ Մանուկեան, որ եւ դասախօսութիւն կը կարդայ Թուրքիոյ քաղաքական ուժերու եւ շերտաւորումներու մասին:

Բաժնին մէջ տրուած են գլխաւորաբար հետեւեալ փաստաթուղթերը.–

1.- Թիւ 1472-64: «Տեղեկագիր Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողների միութեան», 1911 Ապրիլ 1-ից 1912 Ապրիլ 1, հրատարակուած «Ուսանող»ի թիւ 7ի մէջ, էջ 273-288:

2.- Թիւ 1472-82: Զեկուցագիր «Ուսանող»ի մասին, ձեռագիր 18 էջ:

3.- Թիւ 1472-87, 90-96, 180, 187: Ժընեւի (Զանք), Փարիզի, Լայպցիգի, Ցիւրիխի, Լոզանի, Նանսիի (Երկիր) եւ Լիէժի դաշնակցական խումբերու զեկուցագրերը:

4.- Թիւ 1472-97: Ատենագրութիւն Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողական միութեան Չորրորդ Համագումարի, ձեռագիր 22 էջ:

Փաստ. 1472-64

Զ 1.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

1911 Ապրիլ 1-ից 1912 Ապրիլ 1-ը

Համաձայն Դ. համագումարի որոշման ներկայ տեղեկագիրը զետեղւում է «Ուսանող»ի այս թուի մէջ: Ճիշտ է, բաւական ուշ է ներկայանում այն թէ մեր խմբերին եւ թէ մեր Միութեամբ հետաքրքրուող կուսակցական այլ շրջանակներին, բայց այս հանգամանքի *միակ* պատճառը Միութեան նիւթական անճուկ կացութիւնն է:

Մեզ չի վերապահուած այս մի քանի տողերում գնահատել կամ քննադատել ներկայացուելիք տեղեկագրի պարունակութիւնը: Մենք մեր պարտքն ենք համարել տալ հնարաւոր չափով ճշգրիտ ու ամբողջական պատկեր Միութեան միամեայ գործունէութեան ու կեանքի եւ Դ. համագումարի պարապմունքների եւ որոշումների մասին:

Մենք վստահ ենք, որ տեղեկագիրը պիտի դրականապէս անդրադառնայ Միութեան ընդհանուր եւ խմբական-տեղական կեանքի վրայ: Մեր գործունէութեան յաջողուած ու գոհացուցիչ կողմերը մեզ քաջալերանք պիտի հանդիսանան, իսկ մատնանշուած թերութիւններն ու սայթաքումները եւ համագումարի որոշումները պիտի նուազին եւ վերանան ու գործադրուին մեր բոլորիս յարաճուն գործակցութեամբ կատարուած աշխատանքովը: Գործադիր-խմբագրական Մարմնի անկեղծ ցանկութիւնն է, որ բոլոր խմբերի ու ընկերների աջակցութեամբ ներկայումս եւ ապագայում կատարուի այնքան բեղմնաւոր աշխատանք, որ Միութիւնը միշտ էլ ի վիճակի լինի բովանդակալից ու արժէքաւոր տեղեկագրեր եւ ոչ թէ միայն որոշումներ ու ցանկութիւններ հրապարակ դնելու: Մեզ բոլորիս համար պարզ է այն հանգամանքը, որ եթէ մենք ուզում ենք *լինել ու մնալ կուսակցական Ուսանողութիւն*, մեր զուտ ուսանողական պարապմունքների կողքին պիտի ունենանք աշխատութեան, մտածելու եւ ապրումների մի բաժին եւս մեր կուսակցական կեանքի համար: Մեր կուսակցական կենդանի գործից հեռու, այս վայրերում մեզ նրա հետ կապող ամենաթոյլ երակն անգամ կենսատու է մեր կուսակցականութեան համար, իսկ մեր Միութիւնն այն ուժն է, որ ի վիճակի է այդ թոյլ կապերն աւելի բազմաթիւ ճիւղերի վերածել ու մի նոր կեանք ստեղծել:

Ընկերներ!

Մեր կուսակցական եւ այլ շրջանակները, որք պարբերաբար հետեւել են եւ հետեւում են մեր Միութեան կեանքին, անշուշտ, իրաւացիօրէն, պիտի նային մեր տեղեկագրին ու որոշումներին քննադատողի տեսակէտով եւ ուզեն տեսնել «որոշումների» ինչ չափով «գործ»ի վերածուած լինելը։ Գործադիր-խմբագրական Մարմինը իր դերը լրիւ կատարած կը լինի, երբ ի վիճակի լինի յաջորդ համագումարում ներկայանալու մի տեղեկագրով, ուր բացակայ են «որոշումների չգործադրուած լինելը»։ Այդ բանը հնարաւոր է բոլորիս, մեր նիւթական, բարոյական եւ ժամանակի զոհողութեամբ։ Իսկ դրանցից եւ ոչ մէկը կը պակսի, եթէ մենք այդ զոհողութիւնը չանենք միայն «աւելորդից», *այլ իբր մի անհրաժեշտութիւն, վերցնենք մեր պարապմունքների ժամերից, նիւթական ու մտաւոր միջոցներից։ Ահա այս ոգով կատարուած աշխատանքը միայն կը լինի գիտակցական, կազմակերպուած-կուսակցական ընկերների եւ ոչ թէ «սիրողների» մի ձեռնարկ։*

Հակառակ ընկերների ցանկութեան հնարաւոր չեղաւ Դ. համագումարը Ժընեւից դուրս, մի այլ խմբի քաղաքում կայացնել, պատճառը նորէն նիւթական միջոցների պակասը եւ տեղի անյարմարութիւնն էր։ Ի հարկէ, դեր էր խաղում եւ այն պարագան, որ պէտք էր հնարաւոր չափով շատ ընկերներ ի մի համախմբել։

Գործ.-խմբագրական Մարմինը ժամանակին խմբերի համաձայնութիւնն առնելով եւ օրակարգի կազմութեան հարցը վերջացնելով, համագումարը նշանակել էր Ժընեւում, իսկ բացումը ապրիլ 7-ին։ Բայց համագումարի բացումը հնարաւոր եղաւ միայն ապրիլ 9-ին, երբ արդէն եկել էին համարեա բոլոր գալիք պատգամաւորները։

Դ. համագումարը բացուեց 1912 *ապրիլ 9-ին, առաւօտեան ժամը* 9½*ին* "Brasserie Universelle"*ի սրահում։ Գործ.-խմբագրական Մարմնի ներկայացուցիչ ընկ. Ղ.*

Ա[ճէմեան] յայտարարեց, թէ քանի որ պատգամաւորների մեծամասնութիւնը եկել է, ուստի ինքն իրաւունք է համարում Գործ.-խմբագր. Մարմնի կողմից Դ. համագումարի նախապատրաստական ժողովը բացուած համարել եւ առաջարկեց ընտրել մի առժամեայ նախագահ։ Միաձայնութեամբ նախագահ ընտրուեց ընկ. Դ. Խ. [Դաւիթխանեան] որն իր պաշտօնին անցնելով ստուգեց ու յայտնեց ժողովի կազմը.

Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչ — 1

1. *Ժընեւ* 4 *պատգամաւոր*
2. *Լօզան* 1 »
3. *Նանսի* 1 »
4. *Ցիւրիխ* 1 »
5. *Ժամբլու* 1 » *(Ժընեւից ընտրուած, որի հրաժարուելով հեռագրուեց իրենց)։*
6. *Բեռլին* 1 » *(Ընտրութիւնը համագումարին թողնուած)։*
7. *Փարիզ* 3 » *(2-ի ընտրութիւնը համագումարին թողնուած)։*
8. *Լայպցիկ* 1 »
9. *Գործ.-խմբագր.* 1 »

Ժողովը պատգամաւորների մանդատները ստուգելուց եւ հաստատելուց յետոյ, անցաւ Բեռլինի եւ Փարիզի 3 *պատգամաւորների ընտրութեանը։ Ընտրուեցին Ջանքի ընկերներից* 3 *ընկերներ եւ մի ընկերուհի։*

Ապա ժողովը օգտուելով ինքնալրացման cooptation *իրաւունքից, ընտրեց* 4 *ընկերներ, որոնցից* 2*-ը հէնց ա. պաշտօնական ժողովից մինչեւ վերջը մասնակցեցին համագումարին. մէկը անձնական յարգելի պատճառներով չկարողացաւ ներկայանալ հակառակ իր ցանկութեան, իսկ միւսը հասաւ միայն վերջին* 3-4 *նիստերին։*

Նախապատրաստական ժողովը քննեց ու վերջնականապէս ձեւակերպեց համագումարի օրակարգը։ Որոշեց ընտրել 3 *նախագահ ու* 3 *քարտուղար, որք օրական հերթով պիտի յաջորդէին իրար։*

Համագումարն ունեցաւ ընդամէնը 11 *նիստ եւ վերջացաւ ապրիլ* 14*-ին։*

Դիւանի ընտրութիւնը թողնուեց համագումարի պաշտօնական ժողովի բացման սկզբում։ Այդ ժողովի բացումն եւս կատարուեց Գործ. խմբագր. Մարմնի ներկ. կողմից եւ ժողովն անցաւ դիւանի ընտրութեան։ Ընտրուեցին նախագահներ՝ ընկերներ Մ. Ղ[ազարեան], Բ. Կ[իւլպէնկեան], Դ. Խ.[Դաւիթխանեան], Քարտուղարներ՝ ընկերներ Մ. Դ[էմիրեան], Գ. Դ[իլէնեան], եւ Տ. Ս. [Տէր Ստեփանեան]։

Նախագահ Դ. Խ. պաշտօնի անցնելով խօսքը տուաւ Արեւմ. Բիւրոյի ներկ. ընկ. Վ[արանդեան]ին, որը ողջունեց Դաշ. Ուսանողութեան այս համախմբումը, մի քանի խօսքով ստուերագծեց կուսակցութեան արդի վիճակը եւ յոյս յայտնեց, որ ուսանողութիւնն իր բաժին զոհողութիւնը պիտի բերէ ընդհ. գործին։ Ժողովին ներկայ էին նաեւ ուրիշ հին ու երկար ժամանակ կուսակցութեան գործով տարուած ընկերներ, Ա. Ս. Մ., որոնք էլ իրենց խնդակցութիւնը յայտնեցին, յոյս ունենալով, որ առաջին դժուարութիւնների վերացած այս պարագային, ուսանողութիւնն իր մտաւոր ու գրական կարողութիւններով, պիտի բեղմնաւորէ կուսակցութեան ստեղծագործական աշխատանքը։ Խօսք առան նաեւ ընկ. պատգամաւորներ Դ.Գ., Ղ. Խ., Դ. Խ., որոնք նոյնպէս ողջոյնի ու պարտականութեան խօսքերով դիմեցին ընկերներին։ Ապա ժողովն իր յարգանքն ու ընկերական ողջոյնները ղրկեց ցարական նորագոյն «արդարադատութեան» զոհ մեր բոլոր ընկերներին։

Ապա ժողովն անցաւ օրակարգի կէտերին։

Ստորեւ մենք կը տանք որոշ բաժիններով տրուած տեղեկագիրների եւ որոշումների ընդհանուր պատկերը։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԽՄԲԵՐՈՒ ՄԻԱՄԵԱՑ ԿԵԱՆՔԻ

1. ԽՄԲԵՐՈՒ ԿԱԶՄԸ 1911 I/IV — 1912 I/IV

Քաղաքներ	Անդամների թիւը	Ծանօթութիւններ
Ժընեւ	22	
Լօզան	5	1.- Խումբը կազմուած 1912ի Մարտին
Բերն	3	
Ցիւրիխ[1]	6	
Փարիզ	30	2.- Բելճիքայի մի փոքրիկ քաղաք, ուր տեղի բարձրագոյն գիւղատնտեսական վարժարանի մէջ կ'ուսանին մեր ընկերները։
Նանսի	9	
Լիէժ	3	
Ժամբլու[2]	3	
Բեռլին	7	
Միւնխէն	2	
Լայբցիկ	7	

2. ԽՄԲԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Խումբերու տեղեկագիրներու այս բաժինը կը պարունակէ իրենց դրամական գանձումներն ու հաշիւը, պարբերական ժողովներ (երկշաբաթեայ կամ մի շաբաթեայ) հերթական տեղական կամ կուսակցական հարցերու շուրջ եւ դասախօսութիւններ, տրուած մեր ընկերների կողմից խմբի մէջ կամ հայ ուս. շրջանակում։

Ա.— ԽՈՒՄԲԵՐՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒԸ

1911 1/IV — 1912 1/IV

Քաղաք	ՄՈՒՏՔ 1911, 1/IV դրամարկղ	ՄՈՒՏՔ անդամավճար	ԵԼՔ Գ[ործադիր] Մ[արմնին]	ԵԼՔ տեղական ծախս	ԵԼՔ 1912, 1/IV դրամարկղ	ԾԱՆՕԹ
Ժընեւ	58,45	226,10	70	90,05[1]	124,50	Հաշիւները ֆրանքով
Լօզան	17,00	30,00	33,00	–	14,00	
Ցիւրիխ	–	–	–	–	–	1) Սրա մէջ կը մտնեն եւ Գ. համագումարի առթիւ արուած ծախսերը։
Բեռն	–	–	–	–	–	
Փարիզ	86,00[2]	83,10	74,70[2]	94,40[3]	–	2) 60 ֆր. այս երկու գումարի մէջ գանձուած է խմբի հին առնելիքէ մը։
Նանսի	–	72,25	30	15,80	26,45	
Լիէժ	–	18,20 (նուէր)	38	–	–	3) Դ. համագումար. պատգամ. ծախսն էլ մէջն է։
Ժամբլու	–	15,00	3,50	3,15	8,35	
Բեռլին	–	–	–	–	–	4) Բ. համագ. պատգամ. ճանապարհածախսը։
Միւնխէն	–	–	4	–		
Լայպցիկ	66,00	28,00	66,00	28,00[4]	–	
Ենա	–	6,75	6,75	–	–	

Բ.— ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Խումբերու տեղեկագիրները ցոյց կու տան որ բոլոր խմբերը ունեցած են պարբերական ժողովներ, իսկ դրանց յաճախակի գումարումը աւելի կախուած է եղել ունեցած յարմարութիւններից եւ խմբի անդամների քանակից։

Գ.— ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

I. *Ժընեւ*

1. *Մարդու ծագումը։*
2. *Ժ. Ժ. Ռուսսօ իբրեւ ընկերաբան։*
3. *Գերման-անգլիական յարաբերութիւնների լարումը, հաւանական պատերազմ մը երկուսի միջեւ եւ ատոր հետեւանքները։*
4. *Իրաւունքի ծագումը։*
5. *Թուրքիոյ արդի կացութիւնը։ Զեկուցում եւ խորհրդակցութիւններ։*
6. *Զեկուցում Պարսկաստանի կացութեան եւ Դաշնակցութեան դերի մասին։*
7. *Պարսկական շարժումները եւ Դաշնակցութեան կատարած դերը։*
8. *Ի՞նչ շահեցաւ թուրքահայն օսմանեան սահմանադրութիւնից։*
9. *Թուրքիայից տպաւորութիւններ։*
10. *Եւրոպական սահմանադրութիւնների համեմատական քննութիւն։*
11. *Աշակերտական միութիւններու կուսակցական եւ անկուսակցական լինելու հարցը։*
12. *Զեկուցում Դաշնակցութեան Զ. Ընդհ. Ժողովի մասին։*
13. *Հայկական քաղաքականութիւնը պայմանաւորուած* 3 *երկիրների տուեալներով։*
14. *Դաշնակցութեան գործելակերպը* 3 *երկիրներում։*
15. *Ոճիրը եւ դրական իրաւունքը։*

II. *Լօզան*

1. *Դաշնակցութեան դերն անցեալում, ներկայումս եւ ապագայում։*
2. *Թուրքիոյ սահմանադրութիւնը եւ հայերը։*
3. *Պարսկաստանի վերջին շարժումները։*
4. *Ինչո՞ւ ազգայնական եմ։*
5. *Ընկերներէն մէկը «օթթօման» քլիւպի մէջ տուել է ֆրանս. լեզուով դասախօսութիւն մը* "Les réformes en Turquie".[125]

Այս բոլորին ներկայ են եղել նաեւ ոչ դաշնակցականներ։

125.- Ֆրանսերէն՝ «Բարենորոգումները Թուրքիոյ մէջ»։

III. *Փարիզ*

1. *Տաճկաստանի ներկայ վիճակը։*
2. *Նախնական հայ ամուսնութիւնը եւ իր կապը* matriarcat-*ի*[126] *հետ։*
3. *Տպաւորութիւններ Զէյթունէն։*
4. *Հայ հին աշխարհագրութիւնը պատմական նոթերով։*
5. *Երկու վիճաբանական զրոյց-դասախօսութիւններ դաշնակցական ուսանողութեան բռնելիք ուղղութեան մասին։*
6. *Հայ լրագրութիւնը։*
7. *Իսլամն ու իր* communisme-*ի*[127] *հետ ունեցած առնչութիւնը եւ միջազգային համերաշխութիւնը։*
8. *Հայ ազգի ծագումն ու լեզուն։*

IV. *Լայպցիկ*

1. *Դաշնակցութիւնը ու նրա արդի քաղաքականութիւնը Պարսկաստանում ու Թուրքիայում։*
2. *Դաշնակցութիւնը եւ բռնած ու բռնելիք դիրքը Թուրքահայաստանում։*
3. *Ընկերվարութիւն ու բարոյագիտութիւն։*

Ներկայ են եղել նաեւ ո՛չ դաշնակցական ուսանողներ ու անհատներ։

V. *Նանսի*

1. *Դաշնակցութեան հետեւած քաղաքականութիւնը օսմ. ազատութեան հաստատութենէն ի վեր համապետական, ազգային եւ տնտեսական տեսակէտներով։*
2. *Ազգային հարցը հայկական երեք հատուածներում։*
3. *Աշխատութեան օրէնսդրութիւնը արդի ընկերութեան մէջ։*

Վիճաբանական ժողովներ։

4. *Ինչ կերպով եւ ինչ ծրագրով հիմնելու է տեղս օսմ. ուսանողական միութիւն։*
5. *Քոլէքթիվիստ եւ քոմիւնիստ վարդապետութեանց մասին։*
6. *Ժառանգութեան մասին։*
7. *Ներկայի պահանջները չէ՞ն ստիպեր, որ Դաշնակցութիւնը կանգնի սոցիալիստական հողի վրայ։*
8. *Աշակերտական միութիւնները կուսակցակա՞ն թէ անկուսակցական հողի վրայ պէտք է կանգնին։*

Ընկերներից մէկը տուել է մի դասախօսութիւն տեղի օսմ. ուսանողական միութեան մէջ ազգերի համերաշխութեան շուրջը։

VI. *Լիէժ*

1. *Դաշնակցութեան ծրագրային հարցի շուրջը։*
2. *Օսմանեան յեղափոխութեան մասին։*

Ընկերներից մին տուել է մի դասախօսութիւն տեղի Օսմ. Ուսանողական Միութեան "Les origines et les conséquences de la révolution et contre révolution ottomanes"*.

Խմբական գործունէութեան մի նոր եւ շատ կարեւոր մասը նոյնպէս արժանի է յիշատակութեան։ Այդ հայ ժողովրդին դրացի ազգերին պատկանող ուսանողութեան եւ սոց-կուսակցութիւնների հետ յարաբերելու խնդիրն է։ Մեր թրքահայ ընկերները մասնակցած են օթթոմանեան քլիւպներուն եւ կամ յարաբերած են օսմանցի ուսանողներու հետ, ինչպէս նաեւ պարսկահայ ընկերները պարսիկներու հետ։ Յարաբերութիւնները ուրախառիթ են Նանսի, Լօզան, Ժընեւ եւ Լիէժ, իսկ Փարիզում յարաբերութիւնները չեն կարողացել մի մտիկ կապ ստեղծել, չնորհիւ օթթօմ. քլիւպի մէջ եղած ոչ ուսանող մի քանի անհատների դաւերին։ Այս յարաբերութիւնների հիմքն է կազմել արեւելքի նորածիլ սահմ. եւ ազգերի համերաշխութիւնը։ Մի քանի վայրերում փորձեր են եղել յարաբերել ռուսաստանցի ընկերվարական ուսանողութեան հետ։ Այդպիսի յարաբերութիւն պաշտօնական գոյն է ստացել Ժընեւում, ուր մեր ընկերներին բաժին է ընկել միջնորդ դատաւորի դեր Ռուսաստանցի ընկերվ. ուսանողների ներքին անհամաձայնութիւնների խնդիրներում։ Ժընեւում մեր ընկերները պաշտօնապէս մասնակցել են 1911-ի Մայիս 1-ի տօնին եւ ապա մի ցոյցի, կազմուած ընդդէմ ցարական կառավարութեան, Բ. պետական Դումայի սոց.-դեմ. պատգամաւորների գործի առթիւ։

Տեղեկագիրներից երեւաց, որ կուսակցական մամուլին, ուսանողների կողմից եղած մասնակցութիւնը, աւելի նուազել է, քան շատացել։

Խմբերի գործունէութեան մասին կատարուած քննադատութիւն-գնահատումներից յետոյ համագումարի կողմից ընդունւում է հետեւեալ բանաձեւը.

Համագումարը լսելով խմբերի եւ Գործ.-խմբագրական Մարմնի զեկուցումները խմբական գործունէութեան մասին եւ ապա կատարելով իր կողմից քննադատութիւններ, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Որ՝

1. *Միութիւնն իր գոյութեամբ աւելի է նպաստել ընկերների քաղաքական հետաքրքրութեան եւ կուսակցական խնդիրներով զբաղուելուն։*
2. *Միամեայ գործունէութիւնն իր աստիճանական զարգացման սահմանի եւ գոյութիւն ունեցող պայմանների մէջ բաւարար եւ գոհացուցիչ է։*
3. *Միութիւնը հակազդել է դաշնակցական ընկերների անհատական կղզիացմանը եւ մանր խմբակցութիւններ առաջացնելուն։*
4. *Միութիւնն իր գոյութեամբ դրականապէս է ազդել, անկուսակցական հայ ուսանող. խմբակցութիւնների գոյութեան ու գործունէութեան վրայ, վերջիններ եղած վայրերում։*
5. *Միութիւնն իր պարտականութիւնը կուսակցութեան հանդէպ չի կատարել գոհացուցիչ չափով (պրոպագանդ, մամուլի աշխատակցութիւն եւայլն)։*
6. *Խմբերում կարդացուած դասախօսութիւնները իրենց բովանդակութեամբ եւ յարուցած վիճաբանութիւններով եղել են խիստ հետաքրքիր եւ արդիւնաւէտ, մանաւանդ ընկերային հարցեր չօշափողները։*
7. *Դժբախտաբար նորէն նկատւում է, որ որոշ վայրերում նիւթական պարտականութիւնները կատարւում են անբաւարար կերպով։*
8. *Հայ ժողովրդի հարեւան ազգերին պատկանող ուսանողութեան հետ սկսուած են ու շարունակւում են յարաբերութիւններ, թէեւ որոշ տեղերում ոչ գոհացուցիչ վիճակում։*

Համագումարը կ՚առաջարկէ՝

1. *Եղած տեղերում ուժեղացնել խմբի կազմը, չեղած տեղերում ջանալ նոր խումբեր կազմել։*
2. *Ընկերների հակակարգապահական վարմունքների համար, նրանց հետ վարուել համաձայն Դաշնակցութեան ընդհանուր կանոնագրութեան տրամադրութիւնների։*
3. *Ջանալ դասախօսութիւններին ու վիճաբանութիւններին տալ այն ցանկալի ուղղութիւնն ու բովանդակութիւնը, որն աւելի է նպաստում ընկերների կուսակցական աշխարհահայեացքի ընդլայնմանն ու կազմակերպմանը։*
4. *Երկար ժամանակ միութեան մասնակցող այն ընկերները, որոնք չեն ընդունում կուսակցութեան ընդհանուր աշխարհահայեացքը եւ գործելակերպը, չէզոքացնել, նախօրօք խորհրդակցելով Գործ.-խմբագր. Մարմնի հետ։*
5. *Մեր ընկերները* գործօն *մասնակցութիւն չպիտի ունենան այն միութիւններին ու խմբակցութիւններին, որոնք իրենց ձգտումներով ու գործելակերպով հակառակ են մեր սկզբունքներին*։

6. *Հարեւան ազգերին պատկանող ուսանողների հետ ունենալիք յարաբերութիւնների համար նկատի առնել Գ. համագումարի այդ մասին ընդունած բանաձեւը։*
7. *Շարունակել Թուրքիայի, Ամերիկայի եւ Ռուսաստանի դաշն. ուսանողութեան հետ սկսած յարաբերութիւնները եւ ջանալ այն աւելի սիրտ ու արդիւնաւէտ դարձնել։*
8. *Կուսակցական մամուլին մասնակցիլ աւելի մեծ չափով ու աւելի կանոնաւոր կերպով։*
9. *Դասախօսութեանց նիւթերի համար Գործադիր-խմբագր. Մարմինը կազմէ եւ տարածէ մի ցանկ։*
10. *Թէ Գործադիր-խմբագր. Մարմինը եւ թէ խմբերը իրենց պարտաւոր զգան հնարաւոր միջոցներով յարաբերութեան մէջ մտնել Ռուսաստանի դաշնակց. ուսանողութեան հետ։*

ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Համագումարէն անմիջապէս յետոյ Գործ.-խմբագր. Մարմինը ձեռնարկել է իր աշխատանքներին։ Անդամներէն մէկը Մ. Թ. հրաժարուելով, Մարմնի մէջ է մտել փոխանդամ ընկ. Ղ. Ա.։ Գործադիր-խմբագր. Մարմինն իր տեղեկագրի մէջ չեչտած է հետեւեալ խնդիրները։

1) *Նիւթական միջոցները մնում են նոյն անգոհացուցիչ վիճակի մէջ, որով հնարաւոր չէ եղել ձեռնարկել մնայուն ֆոնդի սկզբնաւորութեանը, վճարել կուսակցական տուրքը, չրջիկներ ունենալ եւ «Ուսանող»ի հրատարակութիւնն ազատ տեսնել նիւթական արգելքներից։*

2) *Շատ խումբեր ճիշտ ժամանակին եւ կանոնաւոր ու մանրամասն նամակներով չեն պատասխանել Մարմնի նամակներին եւ հարցերին։*

3) *«Ուսանող»ի 6-րդ թուի ուշացումը բացառապէս հետեւանք է յօդուածների պակասութեան եւ եղածների շատ ուշ ստացուելուն։ Սկզբէն խոստումներ եղել են 12-15 յօդուածների համար, իսկ յետոյ, այն էլ շատ ուշ հա-*

126.- Ֆրանսերէն՝ մայրիշխանութիւն։
127.- Ֆրանսերէն՝ համայնավարութիւն։
128.- Ֆրանսերէն՝ «Օսմանեան յեղափոխութեան եւ հակայեղափոխութեան ծագումն ու հետեւանքները»։

*).- *Ման.- Որոշ չրջաններ ունին իրենց մասնաւոր գրադարանները բաղկացած գլխաւորապէս (հայերէն եւ օտար լեզուներով) սոցիալիստական գրականութիւնից։*

*).- *Այս խնդրի հետ կապուած վիճաբանուել է նաեւ ընկերների մասնակցութիւնը զանազան կրօնական ընկերակցութիւնների։ Իբրեւ յաւելուած 5-րդ կէտի ընդունուել է հետեւեալը.*

«Ընդունելով հանդերձ մեր ընկերների խղճի ազատութիւնը, նրանք չպէտք է մասնակցին այն բոլոր խմբակցութիւններին եւ միութիւններին, որոնք քաղաքական չյինելով հանդերձ, իրենց ձգտումներով եւ գործունէութեամբ դէմ են Դաշնակցութեան սկզբունքներին ու ուղղութեանը»։

զիւ է դրանց կէսը ստացուել։ Բազմակողմանիութեան պակասը պիտի վերագրել ընկերների ո՛չ բուռն մասնակցութեան։ No 6-ը տարածուել է բաւական գոհացուցիչ։ Համաձայն Գ. համագումարի որոշման, դեռ մի թիւ էլ պիտի լոյս տեսնէր այս մի տարուայ մէջ, բայց յօդուածների եւ նիւթականի պակասութիւնն այդ բանին արգելք են հանդիսացել։

4) Այլ երկիրների դաշնակցական ուսանողութեան հետ ձեռնարկուած յարաբերութիւնները ցանկալի եւ պարբերական ընթացք են ստացել միայն Թուրքիոյ հետ, չնորհիւ այն հանգամանքի որ Պոլսում կազմակերպուել է ուժեղ Դաշնակց. Ուս. Միութիւն։ Միւս երկրներում կամ չկան կազմակերպ. դաշնակց. ուս. միութիւններ եւ կամ չնորհիւ երկրի պայմանների (Ռուսաստան) հնարաւոր չի եղել պարբերական եւ կանոնաւոր կապ ստեղծել խմբակցութիւնների հետ։

5) Միութիւնն ունեցել է իր պատգամաւորը Դաշնակց[ութեան] 6-րդ Ընդհ. Ժողովին։

ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒԸ
1911 1/IV — [1912] 1/IV

ՄՈՒՏՔ

Հին մարմնից	527,50
Խմբերից	363,65
«Ուսանող»ի ապառիկներից	236,80
N° 6 «Ուսանող»ից եւ բաժնեգ.	471,50
Եւ Հայ Ուս. Միութիւնից	100,00
Հին «Ուսանող»ի վաճառումից	4,50
Ընդհանուր մուտք	1703,95

ԵԼՔ

N° 6 «Ուսանող»ի տպագրութեան եւ առաքման ծախսերը	1020,10
Գործ.-խմբագր. Մարմնի ծախսերը	370,75
Ընդհանուր ելք	1390,85

(Այստեղ մտնում են Գ. եւ Դ. համագումարի մի քանի պատգամ[աւորների] ճանապարհածախսի մի մասի հոգացումը, կանոնագրի եւ տեղեկագրի տպագրութիւնը, դիւանական ու բացառիկ ծախքերը)։

1911 Ապրիլ 1-ին պատրաստի գումար՝	313,10

«ՈՒՍԱՆՈՂ»ԻՆ 6-ՐԴ ԹԻՒԸ

Տպագրուած է 1000 օրինակ

1)	Եւրոպա	92 օրինակ
2)	Թուրքիա 16 քաղաքներ	221 »
3)	Պարսկաստան	70 »
4)	Ամերիկա	222 »
5)	Բուլգարիա	55 »
6)	Եգիպտոս	21 »
7)	Ռումանիա	13 »
8)	Հունգարիա	1 »
		695 »

Մնում է 305 օրինակ։

Գործադիր-խմբագրական մարմնի հաշիւների ու գործունէութեան քննութեան համար ընտրուած յատուկ յանձնաժողովը, իր զեկուցում տալուց եւ համագումարի կատարած քննադատութիւններից յետոյ, ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.

Համագումարը յենուելով տրուած տեղեկագիրների եւ հաշուեքննիչ յանձնախումբի զեկուցման վրայ գտաւ.

Որ Գործադիր-խմբագրական Մարմնի հաշիւները պահուած են կանոնաւոր եւ ճիշտ, յենուած համապատասխան փաստաթուղթերի վրայ.

Որ խմբերի եւ անհատ ընկերների հետ թղթակցութիւն յարաբերութիւնները պահուած են գոհացուցիչ կերպով.

Որ այլ երկիրներու դաշնակցական ուսանողութեան հետ աշխատած է պահել յարաբերութիւն, բայց իր կամքէն անկախ պատճառներով, այդ հնարաւոր է եղել միայն Թուրքիոյ Ուս. Միութեան հետ։

Որ ջանացել է որոշ վայրերու մէջ ուժեղացնել խմբերը եւ նորերն ստեղծել.

Որ մի քանի որոշումներու չգործադրելը անկախ է եղել այդ Մարմնի կամքից։

Այդպիսով համագումարս անոր խմբագրական, դրամական եւ յարաբերական վարչական գործերը գոհացուցիչ գտնելով, իր գոհունակութիւնը կը յայտնէ։

«ՈՒՍԱՆՈՂ»

«Ուսանող»ի հարցը օրակարգի մէջ կը պարունակէր նաեւ Պոլսի Դաշնակ. Ուս. Միութեան հետ հրատարակելու խնդիրը։

Համագումարը երկար զբաղուեց այս խնդրով, անդրադառնալով մասնաւորապէս միասին հրատարակելու, նրա տուած օգուտներու եւ մեր Միութեան կեանքի վրայ անելիք ազդեցութիւնների մասին եւ որոշեց «Ուսանող»ը նորէն պահել միայն իբր մեր միութեան հրատարակութիւնը։

«Ուսանող»ի մասին անցաւ հետեւեալ բանաձեւը.

1. Մի հանդէսի գոյութեան շարունակութիւնն անհրաժեշտ է մեր միութեան համար։

2. «Ուսանող»ի վերջին թիւը համեմատաբար աւելի խնամուած է, տարածումն ու բաժանորդագրութիւնը եւ գանձումները համեմատաբար բաւարար։

3. «Ուսանող»ը շարունակուի հրատարակուել նախորդ համագումարի որոշած ծրագրով ու ձեւով։

4. «Ուսանող»ին կարող են մասնակցել նաեւ ոչ ուսանող ընկերներ։

5. Գործադիր-խմբագրական Մարմինն աշխատի գանձել բոլոր ապառիկները։ Ստեղծել աւելի պարտաճանաչ գործակալներ։

6. «Ուսանող»ը պէտք է կրի «Եւրոպ. Հ. Յ. Դաշն. Ուս. միութեան հրատարակութիւն» մակդիրը։

7. Հրատարակութեան ծաւալը 400-600 էջ, մի տարուայ համար, մէկ կամ մի քանի անգամից հրատարակելը թողնելով Գործ.-խմբագր. Մարմնին։

8. «Ուսանող»ի N° 7-ը հրատարակել նախորդ մարմնի ծրագրով ու նուիրել հայկական տպագր[ութեան] 400-ամեակի յոբելեանին, զետեղելով նաեւ պատշաճ յօդուածներ։

Ստորեւ կը դնենք օրակարգի կարգ մը հարցերու վիճաբանութիւններից յետոյ համագումարի ընդունած բանաձեւերը։

Հասարակագիտական գրականութեան եւ Դաշնակցութեան պատմութեան պահանջը։

«Շեշտելով հասարակագիտական գրականութեան անհրաժեշտութիւնը, կ՚առաջարկենք մեր ընկերներին նպաստել կուսակցական հրատարակչական մարմիններին, ինքնուրոյն եւ թարգմանական աշխատութիւններով եւ տարածելու գործում։ Հրատարակութիւնների համար ընկերութիւններին դիմել Գործ.-խմբագրական Մարմնի միջոցով։ Կուսակցութեան պատմութեան մասին Զ. Ընդհ. Ժողովի որոշումը գտնելով շատ անհրաժեշտ, առաջարկել, որ այդ որոշումը իրագործուի մօտիկ ապագայում»։

Աշակերտական միութիւնների կուսակցական-անկուսակցական լինելու հարցը

«Ի նկատի ունենալով աշակերտական միութիւնների կուսակցական կամ անկուսակցական լինելու խիստ կարեւոր նշանակութիւնը գործնական տեսակէտից եւ խնդրի ոչ պարզաբանուած լինելը տեսականօրէն, համագումարն առաջարկում է ընկերներին, արծարծել այս հարցը կուսակցական մամուլի եւ խմբական ժողովների մէջ, առաջիկայ համագումարին թողնելով այդ մասին արտայայտուելը»։

Մեր խմբերի եւ ընկերների գործօն մասնակցութիւնը տեղական ընկերվարական կազմակերպութիւնների մէջ

«Ցանկալի է, որ բոլոր վայրերի ընկերները եւ խմբերը բարեկամական եւ կուսակցական կապ պահպանեն ընկերվարական-յեղափոխական խմբակցութիւնների եւ կուսակցութիւնների հետ, աշխատեն ծանօթանալ նրանց պայմաններին, գործունէութեանն ու կազմակերպութեանը եւ փորձառութիւն ձեռք բերեն մեր կուսակցական կեանքում նրանից օգտուելու համար։ Գործօն մասնակցութիւնը թողնում է անհատներին եւ խմբերին, նկատի ունենալով տեղական-պետական եւ քաղաքական պայմանները։

Գործադիր-խմբագրական Մարմնի ընտրութիւնը

Թէեւ վիճաբանութիւնները համագումարին բերին այն եզրակացութեան, որ մարմնի մի տեղում կեդրոնացնելը նպաստաւոր է գործին, բայց հնարաւորութիւն չունենալով ընտրութեան ժամանակ գոհանալու միայն մի վայրի ընկերներով, նորից ընդունեց մարմնի անդամների տարբեր վայրերում լինելու երեւոյթը։

Ընտրութիւնը տուաւ հետեւեալ արդիւնքը՝ Մ. Ղ., Լ. Բ., Ե. Տ-Ս., Դ. Խ., Մ. Թ.։

Փոխ անդամներ Ե. եւ Շ.։

Համագումարը հաստատեց խմբերի եւ Գործադիր-խմբագրական Մարմնի համար հետեւեալ տարեկան-ելմտացոյցը (պիւտճէ), կազմուած յատուկ յանձնախումբի մը կողմանէ։

I ԽՄԲԵՐԻ

Խումբ	Տեղական մուտք	Տեղական ելք	Գործ.-Խմբագր. Մարմնին
Փարիզ	300,00	150,00	150,00
Ժընեւ	200,00	50,00	150,00
Նանսի	120,00	40,00	80,00
Լօզան	50,00	20,00	30,00
Լայպցիկ	50,00	20,00	30,00
Ցիւրիխ	100,00	30,00	70,00
Ժամբլու	40,00	10,00	30,00
Բեռլին	60,00	20,00	40,00
Բեռն	20,00	5,00	15,00
Միւնխէն	25,00	5,00	20,00
Ընդհ. գումար	965,00	350,00	615,00

II ԳՈՐԾ.-ԽՄԲԱԳՐ. ՄԱՐՄՆԻ

ՄՈՒՏՔ

1) Կանխիկ գումար	313,00
2) Եւր. Հ. Ուս. Մ.-ից	100,00
3) Խմբերից	615,00
4) «Ուսանող»ի եւ խմբերից ապառիկներ	775,00
5) N⁰ 7 «Ուսանող»ից	500,00
	2265,00

ԵԼՔ

1) «Ուսանող»ի տպագր.	1200,00
2) » առաքումը	200,00
3) Դիւանական ծախս	100,00
4) Համագումարի ծախս	100,00
5) Այլ եւ այլ ծախս	50,00
6) Կուսակցական տուրք	100,00
	1750,00

Այլեւայլ որոշումներ

1) Խումբերը եւ Գործ.-խմբագր. Մարմինը կարող են մասնակցել այնպիսի հանդէս-յոբելեանների եւ կամ նման առիթներում արտայայտուել, երբ այդ երեւոյթները կրում են կուսակցական յեղափոխական բնոյթ։ Նոյնպէս այնպիսի կուլտուրական-գրական եւ հասարակական հաստատութիւնների ու անձերի յոբելեաններին, որոնք դեմոկրատիք գործունէութիւն եւ ձգտում են ունեցել։

2) Տեղեկագիրը հրատարակել «Ուսանող»ի 7-րդ թուին մէջ։

3) Համագումարի Դիւանը պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնի «Դրօշակ»ի խմբագրութեանը բոլոր տրուած դիւրութիւնների եւ աջակցութիւնների եւ մանաւանդ «Ուսանող»ի 6-րդ թուի տպագրութեան գործին մեծապէս նպաստած լինելուն համար։

(Համագումարի վերջին ժողովը «Դրօշակ»ի խմբագրատունը տեղի ունենալով, օրուայ նախագահը ժողովի ներկայութեան այդ որոշումը գործադրեց, յայտնելով ժողովին ներկայ՝ Դրօշակի խմբագրին ընկեր Վ[արանդեան]ին)։

4) Փորթուգալեանի յոբելեանի մասին գործադրել նախորդ համագումարի որոշումը։

Կանոնադրութեան մէկ կէտն արգիլում է Գործ.-խմբագր. մարմնի անդամներին համագումարին պատգամաւոր ընտրուել։ Առաջարկւում է այս կէտի ջնջման հարցը քննութեան ենթարկել խմբերում եւ դնել առաջիկայ համագումարում։

5) Ամէն խումբ իր միջոցներով «Դրօշակ» ստանայ։

Համագումարի օրակարգը կը պարունակէր նաեւ շարք մը դասախօսութիւններ, որոնցմէ միայն 4-ը տեղի ունեցան, իսկ միւսները զեղչուեցին ժամանակի սղութեան պատճառով։

Դասախօսութիւններից յետոյ տեղի ունեցած վիճաբանութիւններէն վերջ համագումարն արտայայտուեց չօշափուած խնդիրներու մասին, առանձին առանձին բանաձեւերով։

1. Կուսակցական-դասակարգային շերտաւորումը Թուրքիոյ մէջ համապետական տեսակէտից

«Ողջունելով այն դեմոկրատիկ եւ ընկերվարական շարժումները, որ սկսել են երեւան գալ Թուրքիոյ ժողովուրդների մէջ, ցանկալի ենք գտնում, որ Դաշնակցութիւնը համերաշխի այդպիսի շարժումների կողմնակից տարրերին ու խմբակցութիւններին եւ դրանց չեղած տեղերում աշխատի ստեղծել այդպիսիներ»։

2. Դասակարգային պայքարը թուրքահայ կեանքի մէջ

«Ձնայելով, որ Թուրքիայի ներկայ պայմանները նորէն հարկադրում են երբեմն համազգային պահանջներով հանդէս գալ ընդդէմ տիրապետող տարրի եւ պետութեան,

Բայց նկատի ունենալով մեր ազգային շրջանակի մէջ քաղաքական, տնտեսական ու կուլտուրական շահերի հակադրութիւնները եւ ներքին պայքարն ազգային սահմանադրական մարմինների ու հաստատութիւնների մէջ,

Գտնում ենք, որ երբեք չպիտի ձեռնթափ լինել դասակարգային պայքարից ազգային սահմանադրական մարմինների ու կուլտուրական գործի շրջանակում։ Սկսուած պայքարը պիտի մղել ի հարկէ պայմանների եւ հայ ժողովուրդի մեծամասնութիւնը կազմող աշխատաւորութեան ընդհանուր, պետական-քաղաքական, տնտեսական-կուլտուրական շահերի պահանջների համաձայն, դիմելով նաեւ հարկ եղած գործակցութեան հայկական եւ այլ կուսակցութիւնների հետ։

3. Դաշնակցութեան բռնելիք դիրքն իր գործելավայրերի միւս ժողովուրդների մէջ

«Նկատի ունենալով,

Որ մենք թէ Թուրքիայում, թէ Կովկասում եւ թէ Պարսկաստանում ապրում ենք խառն եւ բազմաթիւ ժողովուրդների հետ,

Որ այդ ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական վիճակի եւ քաղաքական հասունութեան աստիճանի տարբերութիւններն իրողութիւններ են,

Որ դրանց յառաջդիմութիւնը միեւնոյն միջավայրում կարող է տեղի ունենալ ընդհանուր կերպով եւ քիչ թէ շատ ներդաշնակօրէն,

Որ ուրեմն թէ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը եւ թէ հայ աշխատաւորութեան վիճակի բովանդակ զարգացումը պայմանաւորուած է շրջապատող ազգերի ու ցեղերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական դրութեան աստիճանովը,

Գտնում ենք,

Որ պիտի արձագանգ լինել նաեւ այդ ժողովուրդների արդարացի պահանջներին ու կարիքներին,

Որ պիտի օր աւուր ուժեղացնել մեր պրոպագանդական գործունէութիւնը նրանց մէջ,

Որ պիտի ստեղծել համագործակցութիւն տեղային ընդհանուր պահանջների շուրջ,

Որ պիտի ուժեղացնել երկրի ամբողջութեան համար սահմանադրական, ազատ քաղաքական կարգերի եւ ժողովուրդների համերաշխութեան անհրաժեշտութեան գաղափարներու համոզումը։

Միջցեղային յարաբերութիւնների ու ուղղութեան մասին նկատի ունենալ Հ. Յ. Դաշնակցութեան Դ., Ե. եւ Զ. Ընդհանուր ժողովների եզրակացութիւն-որոշումները։ Պիտի հասկանալի լինի որ այդ գործունէութիւնը կեդրոնացնելու է գաւառների մէջ, ուր այդ ժողովուրդներն ապրում են»։

4. Հ. Յ. Դաշն. կեանքն ու գործունէութիւնն այս վերջին տարուան մէջ.– (Արեւմ. Բիւրոյի ընկ. Վ.)

«Ընկ. Վ[արանդեան]ի դասախօսութեամբ ծանօթանալով կուսակցութեան վերջին տարուայ գործունէութեան ու կեանքի ընդհանուր պատկերի եւ ներկայ վիճակի մասին մեր խնդակցութիւններն ենք յայտնում կուսակցութեան աշխատանքների համար եւ մեր ընկերական յարգանքներն ու ողջոյններն ենք ուղարկում ցարական «արդարադատութեան» արժանացած, երկրում գործող եւ կռուի դաշտում պայքարող մեր բոլոր ընկերներին»։

Համագումարի վերջին նիստը փակուեց ընկերներից մի քանիսի յաջողութեան ու ոգեւորութեան կոչ-խօսքերով, որոնց ընդհանուր միտքը հետեւեալն էր, որով եւ մենք էլ ուզում ենք վերջացնել այս տեղեկագիրը.

«Ցանկանք ու աշխատենք, որ մեր որոշումները միայն բաղձանք չմնան այլ եւ գործի վերածուեն ու դառնան մի մասնիկն այն մեծ գործունէութեան որ տարածւում է Հ. Յ. Դաշնակցութեան դրօշի շուրջը»։

ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲԱԳՐ[ԱԿԱՆ] ՄԱՐՄԻՆ

«Ուսանող» թիւ 7, 1912, էջ 273-288

Փաստ. 1472-82

Զ 2.– ԶԵԿՈՒՑԱԳԻՐ «ՈՒՍԱՆՈՂ»Ի ՄԱՍԻՆ

Թիւ 1472-82 համարը կրող փաստաթուղթը տետրակ մըն է, որուն առաջին մասը յատկացուած է «Ուսանող»ի հաշուականին, մանրամասն ելքի եւ մուտքի բաժիններով: Վերցուցած ենք եւ զետեղած զեկուցագրի վերջաւորութեան: Տեղեկագրական մասը կու տանք ամբողջութեամբ:

Մի քանի խօսք Միութեան նիւթական վիճակի մասին

Մեր դրամական մանրամասն հաշիւները տալէ վերջ՝ մեզ կը մնայ ծանրանալ 1-2 կէտերու վրայ:

Միութեան մուտքը իր ներկայ վիճակին մէջ ո՛չ մի ժամանակ կարող է գոհացում տալ նրա բոլոր կարիքներին: Նիւթական պատճառով՝ այս տարի ալ ոչինչ ըրինք գաղութներու մէջ պրոպականդ ընելու մասին, մի բան որ անհրաժեշտ է ոչ միայն անոր համար որ այդ գործը շատ մօտիկ է միութեան սրտին, այլ եւ որովհետեւ կուսակցութեան Ընդհ. Ժողովն ալ մեր վրայ պարտք է դրած այդ ուղղութեամբ գործել: Նոյնպէս խումբերու մօտ շրջիկ դասախօս ընկերներ չկարողացանք ուղարկել, ոչ ալ Ընդհ. Ժողովի մեր պատգամաւորին ուղարկեցինք խումբերին զեկուցում տալու: Ժամանակ է որ խորհինք միջոցներ՝ եկամուտի աւելի հաստատուն աղբիւրներ գտնելու մասին: Անցեալ համագումարի մէջ որոշուած էր խումբերու ուշադրութեան յանձնել Միութեան մնայուն ֆոնդ կազմելու հարցի մասին խորհել. այդ ուղղութեամբ Գործ. Մարմինը մի անգամ դիմում ըրաւ խումբերուն, բայց իր հարցը ո՛չ մի լուծում գտաւ:

Հա՞րկ է աւելցնել նոյնպէս թէ ժամանակ է որ խումբերը հասկնան թէ անդամավճարները կանոնաւոր հասնելու են Գործ. Մարմնին, որը ոչինչ կարող է ընել առանց նիւթական միջոցներու:

Միութիւնը չկարողացաւ նոյնպէս ոչինչ տալ իբրեւ կուսակցական տուրք Արեւմտեան Բիւրոյին:

Զեկուցումը «Ուսանող»ի

«Ուսանող»ը կը խլէ միշտ Գործ. Մարմնի ամբողջ ժամանակը եւ կուլ կու տայ նրա ամբողջ կորովը, ինչպէս նաեւ Միութեան դրամական միջոցները:

Գ. Համագումարը պարտադրեց Գործ. Մարմինը՝ «Ուսանող»ը վերածել վեցամսեայ հանդէսի. իւրաքանչիւր թիւ պէտք է բաղկանար 300 էջերէ եւ պէտք է բովանդակէր գիտական, հասարակական ուսումնասիրութիւններ, թարգմանութիւններ, գրական մի բաժին. ասկէ զատ՝ երկրի երիտասարդ ընկերների գիտութեան համար, երկրի ուսումնասիրութեան պայմաններու մասին մեթոդներ պիտի ցոյց տրուէին: Գործ. Մարմինը՝ իր գործունէութեան առաջին օրէն իսկ միջոցներ ձեռք առաւ գոհացնելու այդ պահանջները: VI թիւի հրատարակութեան սկսելու համար նիւթական միջոցներ ունէինք, բարեբախտաբար, միայն թէ որոշեցինք «Ուսանող»ի հրատարակութեան չձեռնարկել մինչեւ որ մշակուած յօդուածներ մեր ձեռքը չհասնէին: Ու սկսանք թղթակցիլ բոլոր քիչ թէ շատ գրիչ շարժող ընկերներու հետ. մեր ընկերները բոլորն ալ չզլացան մեզ շռայլել առատ խոստումներ. այնպէս որ մօտաւորապէս 12-15 յօդուածներ պէտք է ունենայինք գիտական, սկզբունքային թէ այլ հետաքրքիր հարցերու լուսաբանութեան նուիրուած. վստահելով այդ խոստումներուն՝ մենք սկսանք տեխնիքական աշխատութիւններուն: Հարկ էր գտնել մի տպարան. Փարիզինը սուղ էր. դիմեցինք Պոլիս «Ազատամարտ»ի տպարանին. արդարեւ մեզի բաւական նպաստաւոր պայմաններ առաջարկուեցան. բայց կար սրբագրութիւններու հարցը, որ բաւական կը դժուարացնէր մեր գործը: Այս վայրկեանին մեզ օգնութեան հասաւ «Դրօշակ»ի խմբագրութիւնը, որ իր գրաշարը եւ գիրերը մեր տրամադրութեան տակ կը դնէր. սա ո՛չ միայն անհամեմատ կը դիւրացնէր մեր գործը, յարմարութիւններ ստեղծելով սրբագրութիւնները անձամբ կատարելու, այլ եւ մեզի կ'ապահովէր նիւթական կարեւոր մի շահ, մեզ կը մնար հոգալ միայն թղթի, կազմի, առաքումի եւ ուրիշ մանր ծախքերը: Բայց արդէն Ցունիսի մէջ իսկ երբ Գործ. Մարմինը կ'ուզէր սկսիլ յօդուածները դասաւորելու, մեզ խոստացուած գրութիւնները կ'ուշանային: Յօդուածագիր ընկերներէն ոմանք մեկնեցան Եւրոպայէն, ուրիշներ ուշացուցին աւելի կամ նուազ կարեւոր պատճառներով, ուրիշներ ոչինչ չտուին, միշտ խոստանալով մասնակցել յաջորդ թիւերուն. արձակուրդները սկսան եւ դեռ շատ քիչ բան կար պատրաստ, մինչ գրաշարը պարապ կը սպասէր:

Հասկանալի է որ երբ մեր պահանջած բոլոր յօդուածները մեր ձեռքը չեն հասնիր, իսկ մեզ ղրկուածներն

ալ պէտք եղած ժամանակէն շատ ուշ կը հասնին, մեզ համար անկարելի կը դառնայ թերթին տալ այն բազմակողմանի գոյնը, որ մեր ծրագիրը կ'ընդգրկէր. ոչ իսկ կարելի էր նիւթերը դասաւորել համաձայն որոշ գաղափարի. թերթը խոստացուածէն 30 էջ պակաս ծաւալ ունեցաւ. նաեւ ստիպուեցանք հիւրընկալել գրութիւններ, որոնք կը խորհէինք նախապէս մէկդի թողուլ: Սրբագրութիւնները շատ դանդաղորէն առաջ գնացին. միւս կողմէ կազմի եւ տպագրութեան համար ալ մեր ակնկալածէն երկար ժամանակ վատնուեցաւ. այնպէս որ Դեկտեմբերի մէջ հազիւ կրցանք թերթերու առաքումը կատարել:

Ահաւասիկ համառօտ պատմութիւնը «Ուսանող»ի թիւ VI-ի հրապարակ գալուն: Ի՞նչ ընդունելութիւն գըտաւ նա. արդեօք պակուեցա՞ն մեր յոյսերը: Այդ մասին խօսիլ ուրիշներուն կ'իյնայ: Մեր կողմէ՝ համեստութենէ թելադրուած չենք, երբ ըսենք թէ դա՛ մարմնացումը չէր մեր բոլոր բաղձանքներուն. մենք կ'ուզէինք հոն տեղ չտալ այնպիսի գրութիւններու, որ հայ ընթերցողը կարող էր գտնել ուրիշ հրատարակութիւններուն մէջ եւս. հակառակ մեր բոլոր ջանքերուն կարելի չեղաւ նրա բովանդակութեան տալ աւելի այլազան մի գոյն: Արդէն տրուած ըլլալով նաեւ մեր փոքրաքանութեան սահմանը, ինչպէս նաեւ մեր պայմաններու ոչ նախանձելի դրութիւնը, յաւակնութիւն ալ չունէինք կատարեալ մի բան դուրս բերելու: Բայց մեզ ուղղուած գնահատական բազմաթիւ արտայայտութիւնները մեզ թոյլ կու տան հաւատալու թէ մեր բոլոր յոգնութիւնները, տաղտուկները եւ զոհողութիւնները բոլորովին ալ զուր չեն եղած: Այսպէս, ուսանողական-ընկերական շրջանակներէ հասած վկայութիւնները, առանց բացառութեան, քաջալերական եղած են. կուսակցական ինտելիգենտ շրջանակէն յայտնի ընկերներ նմանապէս գովեստով խօսած են մեր հրատարակութեան մասին. իսկ ընթերցող հասարակութիւնը, ամէն պատեհութեամբ, յայտնած է իր անվերապահ համակրանքը մեր թերթին հանդէպ. վերջին համարի թէ նիւթերը եւ թէ լեզուն շատ աւելի մատչելի եղած են նրան: Այսպէս Պուլկարիոյ ընկերները ամէնէն աւելի խանդավառութիւն ցոյց տուած են մեր գործին հանդէպ: Ամերիկայի կեդր. կոմիտէն 2 թուղթիկներ հրատարակած է իր շրջաններուն յանձնարարելու համար «Ուսանող»ը: Գործ. Մարմնի ընկերներէն մին արձակուրդի միջոցին Եգիպտոսի եւ Թուրքիոյ մի քանի քաղաքներում կատարած իր պտոյտի միջոցին անձամբ իմացած է թէ ինչքա՛ն երիտասարդ տարրը ծարաւի է հասարակական գրականութեան մը եւ թէ ինչպէս այդ երիտասարդութիւնը կը սպասէ իր յագուրդը գտնել նաեւ, ի միջի այլոց, «Ուսանող»ի մէջ. VI թիւի հրատարակութիւնն ալ մի առիթ ընծայեց որ բազմաթիւ քաղաքներու գործակալներ արտայայտեն կրկին անգամ միեւնոյն զգացումները:

Այս գլուխը փակենք մի պզտիկ միջանկեալով՝ յիշեցնելու համար մի խոշոր ցաւ. դա՝ կուսակցական մամուլի մէկ մասին անհասկանալի անտարբերութիւնն էր «Ուսանող»ի նոր թիւի երեւումին հանդէպ. արդարեւ նոյնիսկ պէտք եղաւ որ անձնական դիմումներ կատարուին որպէսզի երբեմն թերթեր բարեհաճին ծանուցանել իրենց էջերում «Ուսանող»ի նոր բովանդակութիւնը, մինչդեռ հակառակորդ մամուլն անգամ մի հետաքրքիր բան գտած էր իր էջերում արտատպելու համար «Ուսանող»էն: Ուրիշ կուսակցութիւններ իրենց ճղճիմ Աշակերտական Միութիւններու պզտիկ գործերը խոշորացոյցերով կը դիտեն, իսկ մերիններէն ոմանք անձնական միջնորդութիւններու կը սպասեն մեր գործը ծանօթացնելու համար: Պէտք է միայն յիշատակել այն շատ համակրելի վերաբերումը, որ ցոյց տրուեցաւ «Դրօշակ»ի խմբագրութեան կողմանէ[129]:

«ՈՒՍԱՆՈՂ»Ի ՏԱՐԱԾՈՒՄԸ

Մեր թերթը կարելի եղած չափով, ամէն կողմ տարածելը բարոյական թէ նիւթական իր կրկնակ օգուտը ունի. նախ՝ ընթերցող հասարակութեան մատչելի անելով նրան մի ծառայութիւն մատուցած կը լինինք եւ երկրորդ ինչքան աւելի ցրուենք նիւթապէս այնքան աւելի շահաւոր դուրս կու գանք: Արդարեւ կային քաղաքներ, ուր երիտասարդութիւնը լսած լինելով «Ուսանող»ի հրատարակման լուրը, ակնդէտ կը սպասէր թէ ե՞րբ ինքն եւս պատեհութիւն պիտի ունենար մի օրինակ ձեռք բերելու. պատահած է որ Թուրքիայում շատ երիտասարդներ կողմնակի միջոցներով դիմած են մինչեւ Պոլիս մի օրինակ «Ուսանող» ճարելու համար: Նախորդ շրջաններու մէջ «Ուսանող»ի ամբողջ գործակալների թիւը կը հասնէր 12-ի: Իսկ այժմ գործակալներու ստուար մի թիւ ունենք տարածուած գլխաւորապէս երկրի, Պարսկաստանի եւ գաղութներու մէջ: Թիւ VI-էն հրատարակուած է 1000 օրինակ որի 750ը, ցրուած է շուտով. սա նշանակելի մի յաջողութիւն է հայ իրականութեան մէջ, ուր գրեթէ թիրաժը հազիւ քանի մը հարիւրը կ'անցնի: Ահաւասիկ մի ամփոփ ցանկ գաղափար մը տալու համար «Ուսանող»ի տարածումին մասին:

I- <u>*Եւրոպա*</u> *(Ուսանողական շրջաններում).*— 11 *քաղաքներ՝ ուղարկուած* 92 *օրինակ:*

II- <u>*Թուրքիա*</u>.— 16 *տարբեր քաղաքներ* 221 *օրինակ*

129.- Արդարեւ «Դրօշակ» 1912 թ. Յունուարին (էջ 11-15) ընդարձակ յօդուածով մը կ'անդրադառնայ ընդհանրապէս Եւրոպայի Հ.Յ.Դ. Ռա. Միութեան գործունէութեան, մասնաւոր կերպով ծանրանալով «Ուսանող»ի 6րդ համարին վրայ եւ այս վերջինիս բովանդակութիւնը ներկայացնելով իր գնահատելի եւ թեքի կողմերով:

ուղարկուած։ Գործակալութիւնները կը բաժնուին այսպէս՝ Պոլիս եւ շրջանները՝ 5 քաղաք։ Սեւ ծովի եզերքը՝ 4 քաղաք։ Հայկական գաւառներ՝ 6 քաղաք. Սուրիա եւ Կիլիկիա՝ մէկ գործակալ, որու միջոցով կը տարածուի ուրիշ 2-3 քաղաք եւս։ Մակեդոնիա 1 բաժանորդ։

III- Պարսկաստան.— 5 քաղաք՝ 70 օրինակ։

IV- Գաղութներ

Ամերիկա.— Ունինք մի ընդհանուր գործակալութիւն, որի միջոցով կը տարածուի 222 օրինակ։

Պուլկարիա.— 8 քաղաքներ՝ 55 օրինակ։

Ռումանիա.— 2 քաղաք՝ 13 օրինակ։

Հունգարիա.— 1 քաղաք՝ մի բաժանորդ։

Եգիպտոս.— 2 քաղաք՝ 21 օրինակ։

Երկրում «Ուսանող»ի տարածումը զգալիօրէն շատցած է նախորդ շրջաններու վրայ. բայց կան դեռ գեւտիններ ուր մենք ոտք չենք կոխած. այդ տեղերը եւս պէտք է մուտք տալ մեր օրգանին։ Պարսկաստանին կարելի էր կրկնապատկել քանակը, եթէ ծանօթ քաղաքական չփոթութիւններ չպատահէին։ Իսկ Կովկաս տարածելու միջոցներից զուրկ էինք։ Երկրի մէջ այդքան տարածուելուն մեծապէս օգնեց կուսակցութեան երկրի շրջաններում երկար ատեն գործող մի ընկերոջ թանկագին աջակցութիւնը, Գործ. Մարմնի անդամներից մէկի երկիր այցելութիւնը եւ միւս անդամների անձնական ծանօթութիւնները։

«ՈՒՍԱՆՈՂ»Ի ՀԱՇԻՒՆԵՐԸ

Հին հաշիւներ

Նախկին Գործ. Մարմինը մեզ յանձնեց frs. 1084,20ի ապառիկներ գանձելու համար. այդ գումարէն միայն fr. 235,80 կարողացանք գանձել, հակառակ մեր բոլոր ջանքերուն։ Պէտք է ըսել որ այդ պահանջի մեծ մասը անգանձելի է եւ նրան պարտինք համարել գրեթէ ոչընչացած։

Նախկին մարմինները թերթերը ուղարկեր են կուսակցական հասարակական հաստատութիւններուն. մի ցաւալի մտայնութիւն՝ արմատացած կուսակցական մասսայի մէջ, կ'ուզէ որ արտասահմանէն հասած կուսակցական գրականութիւնը բաշխուի ամէն հանդիպողի, շռայլօրէն, առանց մի սանթիմ իսկ փող պահանջելու. արդ այս աւանդութիւնը շատ սուղի է նստեր մեր օրգանին։ «Ուսանող»ներ ուղարկուած են կուսակցական հասարակական հաստատութիւններին, իբրեւ գործակալներ, թերթերը ցրուրուած են անհաշիւ կերպով եւ մեզի ո՛չ մի հաշիւ չէ ներկայացուած. այդ հաստատութիւնները եւս յաճախ փոխած լինելով իրենց վարիչները, անկարելի եղած է մէկ կամ միւս անհատի օձիքէն բռնելով նրանից հաշիւ պահանջել։ Նոր մարմինը այդ վէրքին դարման տանել մտածեց գտնելով, կարելի եղածին չափ, վստահելի տարրեր, որոնց «Ուսանող» ուղարկուած է ուղղակի իրենց անհատական պատասխանատուութեան տակ. եւ եթէ կարողացանք մի քիչ հաւաքել, դա կը պարտինք մեր նոր միջոցին։ Մենք կու տանք, նաեւ, առանձինն մի ցուցակ հին գործակալներու պարտքի քանակին մասին, թէեւ այնքան ալ վստահ չլինենք թէ շատ բան կարելի կը լինի գանձել նրանից։

Նոր հաշիւներ

Դժբախտաբար ներկայ Գործ. Մարմինն ալ իր յաջորդին ժառանգ է թողնելու ապառիկներու բաւական պատկառելի մի գումար. միայն կը փութանք յայտնել թէ մեր ապառիկները բոլորովին անապահով ձեռքերու չեն յանձնուած. մենք վստահ ենք մեր գործակալներու մեծ մասի բարեխղճութեան վրայ։ Մեզ անկարելի է ապառիկներու ճիշդ քանակը որոշել, որովհետեւ մենք գործակալներուն կ'ուղարկենք այնքան թիւ «Ուսանող» որքան նրանք կը պահանջեն. ղրկուածներէն մէկ մասը կը վաճառուի բաժանորդագրութեամբ, իսկ մի մասը հատավաճառութեամբ. մեր գործակալները մեզի չեն յայտնած թէ ի՛նչ տոկոսը կը ծախուի բաժանորդագրութեամբ եւ որքա՛ն հատավաճառութեամբ, այդ պատճառով չենք գիտեր թէ իւրաքանչիւր գործակալ ի՞նչ կը պարտի մեզ։ Գանձապահի զեկուցումէն կը տեսնուի որ թիւ VI «Ուսանող»ի հաշուէն մինչեւ ցարդ ստացուած է ֆր. 471,50 մինչդեռ միեւնոյն թիւը մեզ արժած է ֆր. 911,10։ Ուրեմն մեր ծախքի կէսէն մի քիչ աւելին միայն կարողացեր ենք հաւաքել. վստահ ենք որ մնացած ապառիկների առնուազն կէսը հաւաքել անպայման կը յաջողուի. մենք առանձինն կը յանձնենք նաեւ մեր գործակալներու հասցէները, նրանց ուղարկուած թերթերի քանակը եւ նրանցից ստացուած փոխարժէքը։

Մենք մեզի թոյլ կու տանք կատարել հետեւեալ բաղդատութիւնը. նախորդ շրջաններում «Ուսանող»ների հրատարակութեան համար եղած ծախսերի հազիւ 1/3-ը հաւաքուած է. իսկ մեր օրով՝ կարողացեր ենք գանձել եղած ծախսերի կէսէն աւելին։ Այս պարագան յիշելու մէջ՝ ո՛չ նախորդ մարմիններին քննադատելու եւ ոչ ալ մեզի գովեստ հիւսելու նպատակ ունենք, այլ կ'ուզենք մատնանշել այն իրողութիւնը թէ ինչքա՛ն ապահով է ամէն քաղաքի մէջ ունենալ վստահելի տարր եւ ուղարկել թերթերը ուղղակի նրա անձնական պատասխանատուութեան տակ։

«ՈՒՍԱՆՈՂ» ԹԻՒ VII
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեռ ներկայ տարուայ Յունուարի առաջին օրէն՝ Գործ. Մարմինը իր հերթական ժողովին մէջ որոշեց ձեռնարկել թիւ VIի նախապատրաստութիւններուն. աչքի առաջ ունէինք մի շարք ընկերներ, որոնց անմիջական դիմումները ըրինք յօդուածներ ձեռք բերելու համար. նաեւ բոլոր խմբերուն գրուեցաւ. նորէն խոստումները չռայլուեցան մեզ առատօրէն. բոլորն ալ կը խոստովանէին թէ՝ դա մի պարտականութիւն է. բայց բոլորն ալ չէին մոռանար աւելացնել նաեւ իրանց բացառիկ զբաղումներն ու պայմանները. ասոր հետ մէկտեղ մեզ յաջողուեցաւ ստանալ 4-5 յօդուածներ. նոյնքան մըն ալ պատրաստուելու վրայ են եւ կը հասնին ներկայ ամսու վերջերը. յօդուածներու այսքան ուշանալուն պատճառով էր որ մեզ չյաջողուեցաւ ձեռնարկել թերթի հրատարակութեան։ Բայց թիւ VII-ի դուրս գալուն միակ արգելքը նրա բովանդակութեան հարցը չէր, պէտք էր նաեւ նիւթական միջոցներ։ Նոր թիւը «Դրօշակ»ի տպարանում շարել կարելի չէր. պէտք էր դիմել Պոլիս «Ազատամարտ»ի տպարանին։ Այս պարագային Պոլսի Դաշն. ուսանող ընկերները խոստացան մեզ օգնել տեխնիքական աշխատութիւններուն համար։ Սակայն «Ազատամարտ»ի մեր ընկերները թերթի տպագրական աշխատութիւններու ձեռնարկելէ առաջ կը պահանջեն 500 ֆրանկ կանխիկ, իսկ մեզ համար կարելի չեղաւ մեր գանձարանում 500 ֆրանկ միասին հաւաքել. խմբերը ամսավճար չէին ուղարկեր, գործակալները բաժնեգինները կ'ուշացնէին։ Ահաւասիկ այս դրութեան մէջ հասանք համագումարի օրերուն։ Մեզ խոր ցաւ կը պատճառէ առանց այդ թիւը կարենալ հրատարակելու մեր պաշտօնավարութեան վախճանին հասնիլ։ Բայց մենք կատարեցինք ինչ որ մեզ համար կարելի էր։ Ուրախ ենք որ գէթ մեր յաջորդներուն գործը մի քիչ թեթեւացուցած կը լինենք։

Ահաւասիկ «Ուսանող»ի վիճակը իր իսկական գոյնով. ի՞նչ պիտի լինի նրա ապագան. կան ընկերներ, որ յուռետես են նրա նիւթական ապագային մասին, կան ուրիշներ որ կը զլանան նրա գոյութեան իրաւունքը, չեն ընդունիր նրա դերն ու նշանակութիւնը։ Մենք չենք պատասխաներ վերջիններին, որովհետեւ ամէն անգամ որ դաշնակցական ուսանողութիւնը միասին հաւաքուած է խորհրդակցելու համար «Ուսանող»ի մասին, միշտ էլ ընդունուած է այն տեսակէտը թէ մեր օրգանը իր որոշ դերը ունի հայ իրականութեան մէջ. ուսանողութիւնը զգացած է թէ կայ մի պահանջ, որին գոհացում տալ իր նուիրական պարտականութիւններու սահմանին մէջ կ'իյնար։ Տարիներու փորձառութիւնը մեզ կը սորվեցնէ աւելի մօտէն ուսումնասիրելու, լաւագոյն կերպով գնահատելու այդ պահանջը եւ նրան գոհացնելու միջոցները։ Գալով նիւթականին՝ պէտք է ըսել թէ միշտ դրամը չէ որ կը պակսի մեզ, այլ շատ անգամ բարեխղճութիւնն է որ կը բացակայի։ Ուսանողութեան ուղարկուած է 92 օրինակ թերթ. դրա 1/9-ի փոխարժէքը հազիւ ստացուած է։ Կը բաւէ որ ուսանողութիւնը իր պարտքը կատարէ — նիւթական իմաստով անշուշտ — եւ ահա մեր օրգանը կեանք կը ստանայ՝ օգտուելով մի քանի շատ խղճամիտ գործակալներու զոհողութենէն։ Ահաւասիկ մեր բոլոր ըսելիքները այս մասին։

ՊՈԼՍԻ ԱՌԱՋԱՐԿ

Վերջացնելէ առաջ՝ ձեզ կը ներկայացնենք Պոլսի ընկերներէն հասած մի առաջարկ։ Կ. Պոլսի Հ. Յ. Դաշն. Ուսանողների Միութիւնը հրատարակելու է իր սեփական օրգանը, միայն թէ մտածելով որ իր թերթի հրատարակութիւնը կարող է վնասել մեր օրգանի տարածման, նա մեզ առաջարկում է միացնել երկու օրգաններին հետեւեալ պայմաններու տակ։ «Ուսանող»ը կը լինի Եւրոպայի եւ Կ. Պոլսի Հ. Յ. Դաշն. Ուսանողների միացեալ օրգան։ Բովանդակութիւնը կը մնայ նոյնը, միայն թէ Պոլսի մէջ հրատարակուելով՝ կը ստիպուի մի քիչ տեղ տալ օրուայ կեանքի եւ շարժումներու մասին, կ'ունենայ ուսանողական կեանքի լուրերու բաժին. կը հրատարակուի ամիսը մի անգամ։ Խմբագրական Մարմնի մէկ մասը կ'ընտրուի Պոլսի միութենէն, միւս մասը մեր կողմանէ. թերթի տեխնիքական գործերը կը վարուին Պոլսի միութենէն, նիւթական հոգսի մեծ մասը նրանց վրայ կը ծանրանայ քանի որ վաճառելու գործը իրենց վրայ է. բովանդակութեան հոգը առաւելապէս մեր վրայ է ծանրանալու։ Ահաւասիկ նրանց պայմանները, որ վերջնական չեն եւ, ինչպէս երեւում է, նրանք տրամադիր են ընդունելու մեր կողմէ եղած փոփոխութիւններ։

ԳՈՐԾ. ՄԱՐՄՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅԷ ԴՈՒՐՍ ԳՏՆՈՒՈՂ ԴԱՇՆ. ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ուսանողութեան բոլոր համագումարները կը պարտաւորեն Գործ. Մարմիններին սերտ կապ պահպանել Եւրոպայէ դուրս գտնուող Դաշն. ուսանողութեան հետ. դժբախտաբար Գործ. Մարմինը քիչ բան ունի ըսելիք այդ ուղղութեամբ իր գործունէութեան մասին։ Ռուսաստան ըրած մեր դիմումները մնացեր են միշտ առանց պատասխանի։ Ամերիկայի Կեդր. Կոմիտէին դիմում ըրինք որպէսզի մեզի հաղորդեն դաշն. ուսանողներու հասցէներ. մեզ ղրկուած պատասխանը որոշ չէր. Ամերիկայի հայ ուսանողութիւնը կազմակերպած է թէեւ մի ընդհանուր միութիւն, բայց դա կուսակցական

գոյն չունի, իսկ նրա ղեկավարներն ալ այնքան լաւ տրամադրուած չեն դէպի Դաշնակցութիւնը եւ կուսակցական հողի վրայ գործ տեսնել կարելի չէ նրանց հետ. մեզ [ոչ] մի կերպ կարելի չեղաւ Ամերիկայի համալսարաններու մէջ ուսանող անհատ ընկերների հասցէները ունենալ։ Կ. Պոլսի մէջ այս տարի կազմակերպուեցաւ Կ. Պոլսի Հ. Յ. Դաշն. Ուսանողներու Միութիւնը, որու հետ տեւական յարաբերութեան մէջ ենք։ Դրանից առաջ կար Հայ Ուսանողական Ինքնազարգացողական Միութիւնը, կազմուած գլխաւորապէս դաշնակցական տարրերէ. մեր ընկերները, յարմար դատեցին վերջնականօրէն մէկդի ձգել այդ պիտակը եւ յայտարարուեցան իբրեւ Դաշն. Ուս. Կազմակերպութիւն։ Նրանց տեղեկագիրը կը կարդացուի մեր խումբերու զեկուցումներուն հետ. իսկ նրանց մի առաջարկի մասին կը խօսուի «Ուսանող»ի զեկուցումէ վերջ։

Ընդհանուր Մուտք

«Ուսանող»ի ապառիկներէն		236,80
«Ուսանող»ի VI թիւէն բաժնեգին		471,50
Խմբական տուրքերէ	38 +	265,64
Այլ եւ այլք		50,50
Նուէր		100
		1138,44
Հին Գործ. Մարմնէն ստացուած		527,50
Ընդհանուր Մուտք		1665,94

Ընդհանուր Ելք

«Ուսանող»ի համար	911,10
Գործ. Մարմնի ծախքեր	370,74
Գումար	1281,84

Կշիռ

Ընդհանուր Մուտք	1665,95
Ընդհանուր Ելք	1281,84
Կշիռ	384,11
Կազմարարի ծախք	109
	275,10

Փաստ. 1472-90

Զ 3.– ԶԵԿՈՒՑՈՒՄ «ՁԱՆՔ» ԽՄԲԻ

1911 թ. Նոյ. – 1912 թ. Ապ[րիլ]

Ձանք խմբի անդամ-անդամուհիների թիւը անցեալ տարեշրջանում չնայած եղել է 25, սակայն, պէտք է ասել նրանցից 5-ը միշտ բացակայելիս է եղել եւ վերջն էլ ընդմիշտ թողած ժողովներին յաճախելը։ Ներկայումս խմբիս անդամ-անդամուհիների թիւը 21 է, որոնցից առհասարակ մի քանիսը բացակայելիս են եղել հերթային ժողովներից։ Ժողովներին ընդհանրապէս մասնակցել են 15-18։

Անցեալ տարեշրջանի գանձապահից ստացուած է սնդուկում մնացած	7,50
Նոյն տարեշրջանի ապառիկներից գանձուած է	13
Մուտքի ընդհանուր գումար	118,50
Ծախս է ունեցած	18,50
Գանձարանում մնում է	100,00 ֆր.

Խմբի անդամներ	Հետեւած ճիւղերը
1. Արարատեան Սարգիս	Բնական գիտութիւն
2. Ղազարեան Միսաք	»
3. Ռուբէն	»
4. Օր. Սողոմոնեան Ա.	»
5. Օր. Ցովսէփեան Մ.	»
6. Խաչիկեան Տիգ.	»
7. Հայրանեան Թաթուլ	Իրաւագիտութիւն
8. Գազանճեան Տրդատ	»
9. Մաղազաճեան Ցար.	»
10. Օր. Երկանեան	Երաժշտագիտութիւն
11. Հայրանեան Արշակ	Բժշկութիւն
12. Դեմիրեան Մ.	»
13. Բայբիչեան Լուս.	»
14. Վարդանեան Ցով.	»
15. Ամէմեան Ղեւոնդ	»
16. Տէր Ստեփանեան Եդուարդ	»
17. Ոսկանեան Ռուբէն	»
18. Բաբալեան Արտաշէս	»
19. Այվազեան Մինաս	»
20. Մոմջեան Ռուբէն	»
21. Գրիգոր	Մեքենագործ

Բոլոր անդամակցողները վճարում են իբր անդամավճար ամսական մի-մի ֆրանք, բացառութեամբ մէկի, որ վճարում է 6 ֆրանք։ Խումբը ամսական վճարում է 24,50 ֆրանք։ Հաշուելով ներկայ տարեշրջանը 1911 Նոյեմբ[երից], անդամավճարների ընդհանուր գումարը անում է մինչ 1912 Մարտի վերջը — 122,50 ֆրանք։ Պէտք է յիշեցնենք, որ սոյն գումարից մի մասը չի գանձուած (24,50 ֆր.)։

122,50 — 24,50 = 98,00

Ձանք խմբի ներքին գործունէութիւնը

Խումբը վերջին 8 ամսուայ ընթացքում կանոնաւորապէս ունեցել է իւր հերթական ժողովները թուով — 16. (Ցարգելի պատճառով մի քանի ժողովներ տեղի չի ունեցել)։ Ժողովների ընթացքում խումբը զբաղուել է առհասարակ դասախօսութիւններով (կազմուած խմբի անդամներից եւ դրսի ընկերներից) եւ խմբին վերաբերող ընթացիկ գործերով։

Դասախօսել են հետեւեալ ընկերներ

1. «Զեկուցում պարսկական շարժումների մասին եւ մեր կատարած կուսակցական դերը» — *ընկեր Ղազարեան Միսաք*։
2. «Ինչ շահեցաւ տաճկահայը Սահմանադրութիւնից» — *ընկեր Արամ [Մանուկեան]*։
3. «Թուրքիայից տպաւորութիւններ» — *ընկ. Ղեւոնդ Ամէմեան*։
4. «Եւրոպական Սահմանադրութիւնների համեմատական քննութիւն» — *ընկ. Թ. Հայրանեան*։
5. «Աշակերտական միութիւնները պէտք է լինին կուսակցական թէ ոչ» — *ընկ. Արամ*։
6. «Զեկուցում Վեցերորդ Ընդհանուր Ժողովի» — *ընկ. Մ. Վարանդեան*։
7. «Հայկական քաղաքականութիւնը պայմանաւորուած երեք երկրների տուեալներով» — *ընկ. Արարատեան*։
8. «Դաշնակցութեան տակտիկը երեք երկրներում» — *ընկ. Բաբալեան*։
9. «Ոճիրը եւ դրական իրաւունքը» — *ընկ. Աղայեան*։

Դասախօսութիւնները կրել են կուսակցական բնոյթ, բացառութեամբ երկուսի եւ եղել են շատ հետաքրքիր ու տեղի տուել երկար վիճաբանութիւնների, որոնց մասնակցել են քիչ բացառութեամբ համարեա բոլոր ընկերները։ Աչքի է ընկել գլխաւորապէս Դաշնակցութեան եւ Իթթիհատի փոխ-յարաբերական գործունէութեան մասին եղած վիճաբանութիւնները, որոնց ընթացքում առհասարակ ընկերների վերաբերմունքը դէպի Իթթիհատը սկեպտիկ է եւ ոչ հաւատ ներշնչող Իթթիհատի կողմից արտայայտուած զգացմունքներին։ Առհասարակ նկատելի է, որ կովկասահայ իրականութիւնից դասախօսութիւններ չեն տրուել եւ դա բացատրւում է Կովկասի վերջին ժամանակների կուսակցական կեանքի թուլութեամբ՝ արդիւնք տիրող քաղաքական պայմանների։ Չնայած տարեշրջանի սկզբում ընկերների ցանկութիւնն է եղել, որ ապագային տրուելիք դասախօսութիւնները կրէին բացի կուսակցականից՝ եւ հասարակագիտական, կենսաբանական եւ տնտեսագիտական բնոյթ՝ սակայն ընկերների այդ ցանկութեանը լիովին բաւարարութիւն չի տրուել։ Պակասել են առհասարակ կենսաբանական, բնագիտական բնոյթ կրող դասախօսութիւնները։ Դասախօսութիւններից դուրս ժողովները ունեցել են որպէս նիւթ խմբի ներքին եւ արտաքին կեանքին վերաբերող ընթացիկ հարցեր։

Խումբը մտադրուել է տարեշրջանի սկզբում ձեռնարկել երեկոյթ կուսակցութեան օգտին, սակայն ի նկատի առնելով, որ տեղիս հայկական ուսանողական միութիւնը տրամադիր է կազմել իւր տարեկան երեկոյթը, որտեղ աշխատանքի մեծ մասը պիտի ծանրանար խմբիս անդամների վրայ, միւս կողմից խումբն ցանկանալով իւր եւ տեղական օթթօման կլուպի հետ սերտ կապեր հաստատել, որ պիտի նպաստէր երկու կողմերի ազգային համերաշխութեան գաղափարին, խումբս բարոք է համարել ձեռնարկել նոյն Օթթօման կլուպի հետ երեկոյթ, որի հասոյթի մի մասը կը յատկացուէր մեր կազմակերպութեան։ այդ ուղղութեամբ խումբս որոշ աշխատանք է ունեցել, ընտրել է իւր պատգամաւորները, որոնք անցել են մի շարք ժողովներ նրանց ներկայացուցիչների հետ, մշակել նոյնիսկ ծրագիրը եւ բաժանել աշխատանքը, սակայն Օթթօմանեան կլուպի մէջ եղած զանազան ներքին անհամաձայնութիւնների պատճառով չէ կայացել երեկոյթը։ Խումբս մասնակցել է իւր մի ներկայացուցիչի միջոցով տեղական «Բունտիստների» (հրէական բանուորական սոց. դեմոկր.), վրաց ուսանողական եւ ռուսական ուսանողական միութիւնների մէջ առաջ եկած ներքին դժգոհութիւնների պատճառով տեղի ունեցած դատավարութեան, որպէս տեղիս սոցիալիստական խմբակը, կայացնելով իւր եզրակացութիւնը, գրաւոր յայտարարել է շահագրգռող կողմերին ու գաղութին։

Նոյն ընկերը մասնակցել է, խմբի կողմից որպէս պատգամաւոր, տեղիս զանազան սոցիալիստական խմբակցութիւնների կողմից տեղումս ձեռնարկուած միթինկին, բողոքելու համար պետական երկրորդ դումայի սոց. դեմ[ոկրատ]ներ պատգամաւորների դէմ մղուած տէրութեան կողմից կազմուած պրովոկասիոնի, որպէս ցարի դէմ մահափորձ կազմակերպողների։

Մեր տաճկահայ ընկերներից 6-ը մասնակցում են տեղական Օթթօմանեան կլուպին, եւ պարսկահայ ընկերներից 9-ը պարսիկ ուսանողական ընկերութեան։ Նրանց դերը կայանում է նրանում, որպէսզի աշխատին կուսակցական կապեր ստեղծելու նրանց հետ։ Անհատ ընկերներ կան եւ զանազան ընկերութիւնների շրջանում։ Խումբը ի նկատի առնելով Օթթօման կլուպի հետ ձեռնարկած երեկոյթի չյաջողուելը — կազմակերպել է վիճակախաղ 50 սթ-ոց 600 տոմսակներից, որի կէսը յատկացուած է (150 ֆր.) կազմակերպութեան։

Խումբը զբաղուել է մի ընկերոջ եւ խմբի մէջ տեղի ունեցած դատին իւր երկու ընկերոջ միջոցով եւ որ լուծել է խաղաղ միջոցով։

Խումբը տեղական ռուսական գաղութին մէջ իւր աչքի ընկնող վարկը ունի եւ հեղինակութիւն է վայելում նրանց կողմից ամէն տեսակի ձեռնարկութիւնների մէջ։

Բանաւոր պրոպագանդայի գոյութիւնը չի շեշտուել այն հասկանալի պատճառով, որ տեղիս ուսանողական շրջանը ընդգրկում է այնպիսի մասսա, որ քիչ թէ շատ գիտակ է իւր քաղաքական աշխարհահայեացքներին եւ եթէ խմբիս թիւը չի աւելանում մի կողմից բանաւոր պրոպագանդայի բացակայութեամբ, միւս կողմից՝ այն պարզ պատճառով, որ տեղիս հայ ուսանողութիւնը, որ կազմում է դաշնակցականների եռակի թիւը անտարբեր է դէպի սոցիալիստական կուսակցական կեանքը, ի բացառութեամբ որոշ անհատների, որոնք պատկանելով սոց. դեմոկր. եւ հնչակեան կուսակցութիւնների, բաւականանում են իրանց անուանական կոչումով եւ որեւէ գործակցութիւն ցոյց չեն տալիս, եւ որոնց թիւը 6-ից չի անցնում։

ԿՈՄԻՏԷ ՋԱՆՔ ԽՄԲԻ

Նախագահ՝ Թ. ՀԱՑՐԱՆԵԱՆ
Քարտուղար՝ ՄԻՇԷԼ
Գանձապահ՝ ՇԱՆԹ

Փաստ. 1472-91

Զ 4.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԲԱՐԻԶԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՄԲԻ

6 ապրիլ 1912

Բարիզի խմբի անդամներու թիւն է երեսուն, որոնք առ հասարակ հետեւեալ ճիւղերու կը հետեւին. 5 գիտութեան ուսանող, 7 գեղարուեստական ուսանող, 3 իրաւագիտական ուսանող, 3 դպրութեան, 1 երկրաչափութեան եւ 3 բժշկութեան ուսանող եւն։

Մինչեւ ապրիլ ամիսը տասն երկու ժողով ունեցած ենք որոնց ընդհանուր բնոյթն էր հաշուետուութիւն, հաշուառութիւն, մարմնոց ընտրութիւններ, դասախօսութիւնք եւ ծրագիրներու պատրաստութիւնք։ Կարգ մը ընկերական յարաբերութեանց շուրջ մասնաւոր վիճաբանութիւններ։ Փիյառի մահուան առթիւ թաղման եւ սգահանդէսի մասնակցութիւն, ինչպէս նաեւ Լաֆարժի առթիւ, եւ ի վերջոյ քանի մը ժողովներ համագումարի կայանալուն թէ չկայանալուն մասին եւ օրակարգի հարցերու քննութիւններ. այդ մասին մեր պատգամաւորը մեր որոշ եզրակացութիւններէն տեղեակ է։

Ունեցած ենք ինը դասախօսութիւններ, Ա.- Վրացեան. Տաճկահայաստանի կեանքի մասին։ Բ.- Իփէկեան. Նախնական հայ ամուսնութիւնը եւ իր կապը matriarcat[126] *հետ։ Գ.- Հապէշեան. Զէյթունէն տպաւորութիւններ։ Դ.- Բասմաճեան. Հայ հին աշխարհագրութիւնը պատմական նօթերով։ Ե.- Ընկ. Շահրիկեանի ներկայութեամբ երկու վիճաբանական դասախօսութիւններ մասնաւորաբար դաշնակցական ուսանողութեան առնելիք ուղղութեան մասին։ Զ.- Կիւլպէնկեան. Հայ լրագրութիւնը։ Է.- Եսայեան. Իսլամութիւն եւ իր* communismeի *հետ ունեցած առնչութիւնը եւ միջազգային համերաշխութիւն։ Ը.- Բասմաճեան. Հայ ազգին ծագումը եւ լեզուն.- Ընկ. Ահարոնեան եւս մօտ ատենէն դասախօսութիւն մը պիտի տայ։*

<u>Խմբի դրամական հաշիւները</u>

<u>Մուտք</u>

Նախորդ համագումարէն մինչեւ նոր վարչութեան ընտրութիւնը	
Հին վարչութեան ունեցած մուտքը	26
Նոր վարչութենա մուտքը սոսկ անդամավճարներէ գոյացած (բացի 20 ֆրնք.է, որ փոխ առնուած է)	83,10
Տէրոյեանի միջոցաւ ընկ. Ալեքսանէն գանձուած	60
	169.10

<u>Ելք</u>

Նախորդ վարչութեան ելքը մինչեւ նոր վարչութեան ընտրութիւնը	
(այս ելքին մէջ է նաեւ նոր վարչութեան յանձնուած 7.30frs.)	26
Վարչութեան ընդհ. ելքը (զանազան ծախքեր, ինչպէս նաեւ պատգամաւորի ճանապարհի ծախքը)	83.10
Տէրոյեանի միջոցաւ Կեղր. Գործադիր Մարմնոյն ղրկուած	60
(Ասկից զատ Գործ. Մարմնոյն ղրկուած է նաեւ 14 frs., այս 14 ֆրանքը՝ մեր ելքի մէջ տեսնուած 26 ֆրանքի մասը կը կազմէ)	169.10

Ի դիմաց վարչութեան
ԻԼԱՆՃԵԱՆ, ԱՐՍ. ՊԱԼԵԱՆ

Փաստ. 1472-92

Զ 5.– ԼԱՅՊՑԻԳ

Լայպցիգի Հ.Ց.Դ. ուսանողական խմբակը վերսկսել է իր գործունէութիւնը — խմբական հաւաքումները — անցեալ տարուայ դեկտեմբերի սկզբից եւ վերջացրել սոյն տարուայ [1912] *մարտի վերջը։ Խմբակը ունեցել է 7 իսկական եւ մի քանի էլ օժանդակիչ անդամ։ Այդ ժամանակամիջոցում խմբակը երկու շաբաթը մի անգամ ունեցել է իր հերթական ժողովներ։ Բացի խմբակին վերաբերեալ հարցերից խմբակում տեղի են ունեցել զրոյցներ եւ դասախօսութիւն։ Դեկտեմբերի* 15*ին ընկ. Թ-ի կողմից զրոյց «Դաշնակցութիւնը եւ նորա դիրքը Տաճկաստանում եւ Պարսկաստանում» եւ յունուարի* 5*ին ընկ. Ս.-ի կողմից, «Դաշնակցութիւնը եւ նորա դիրքը Տաճկաստանի հայկական շրջաններում»։ Փետրուարի* 3*ին ընկ. Տ. Գ. կարդացել է մի հրապարակական դասախօսութիւն «Սոցիալիզմ եւ էտիկա»։ Զրոյցների վերաբերեալ եղել են թեր ու դէմ կարծիքներ, բայց վերջը յանգել են որոշ հաշտեցուցիչ եզրակացութեան։ Դասախօսութեան առթիւ տեղի ունեցած հակաճառութեան մի մասը, ժամանակի սղութեան պատճառով յետաձգուել է։ Աչքի առաջ ունենալով նիւթի կարեւորութիւնը, ընկերներից մէկը ցանկացել է մի կոնտր-ռեֆերատ կարդալու, բայց դժբախտաբար, ժողովի սկզբում, առաջ եկած ջղային տրամադրութիւնը արգելք է հանդիսանում դորան, որը եւ առիթ է տալիս նորան խմբից հրաժարուելուն։ Խմբակը ամէն կերպ աշխատել է հետեւորդներ ձեռք բերելու հայ ուսանողներու մէջ, իսկ օտար սոցիալիստական միութիւնների հետ ոչ մի յարաբերութեան մէջ չի եղել։ Խմբակի անդամներից* 1*-ը հետեւում է բժշկութեան,* 3*-ը փիլիսոփայութեան,* 2*-ը առեւտրական գիտութիւններին եւ* 1*-ը գիւղատնտեսութեան։*

[1912]

Փաստ. 1472-93

Զ 6.– ՅԻՒՐԻԽ

Ցիւրիխի խումբը բաղկացած է 6 *հոգուց՝ Տիկին եւ պարոն Իւզբաշեաններ, օր. Յակոբջանեան. այս երեքը ուսանողներ են. ոչ ուսանող դաշնակցականներ են՝ պարոններ Սիմէոն Յակոբեան, Տիգրան Աղամալեան եւ Համբարձում Մելքումեան։*

Հին դաշն[ակցական] ուսանողները (թիւով 2 *հոգի) աւարտելով հեռացեր են Ցիւրիխից։*

Նոր խումբը կազմակերպուել է 1912 *թ. Մարտի* 1*-ից. եղել են* 3 *ժողովներ, որոնց մէջ քննադատուած են միայն Գործ. Մարմնի առաջարկած կէտերի մասին. ուրիշ գործունէութիւն ի հարկէ չենք ունեցել։*

Վիճակախաղի տոմսակները (թուով 10 *հատ) սպառուած են եւ փողը յանձնել ենք Գործ. Մարմնին։* 2 *հատ ուսանողները սպառած են։*

Հայերի ընդհանուր թիւն է 11*, որոնցից* 8*-ը ուսանողներ են։*

Դաշնակցական ուսանողների մասնագիտութիւններն են՝

Տ. Իւզբաշեան — մանկավարժութիւն

Պ. Իւզբաշեան — բժշկութիւն

Օր. Յակոբջանեան — մաթեմատիկա

Փաստ. 1472-94

Զ 7.– ԶԵԿՈՒՅՈՒՄ ԼՕԶԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԻ 1911 – 1912 ՁՄԵՌՆԱՅԻՆ ՍԵՄԵՍՏՐԻ

Ընկերներ,

Այս տարի Լօզանի դաշնակց. խումբը կազմակերպուեցաւ 1911 *Դեկտ. ամսուայ սկիզբը։*

Խմբի անդամները թէեւ սկիզբէն եօթը (7) *հաշուեցինք սակայն ստուգուեցաւ որ անոնցմէ երկուքը՝ դաշնակցական կամ համակիր Դաշնակցութեան՝ խմբի անդամ չեն համարուիր իրենց իսկ յայտարարութեամբ. ասոնք են՝ Ռ. Ջիլինկիրեան եւ Խոսրով Փանոսեան։*

Հետեւաբար մեր խումբը ունեցած է 5 *անդամ։*

1. *Օր. Հ. Լուսինեան ուսանող երաժշտութեան*
2. *Պ. Ս. Քրմոյեան » իրաւաբանութեան*
3. *Պ. Գ. Մէօթէմէտեան » երկրաչափութեան*
4. *Պ. Կ. Խաչատրեան » առեւտրկ. վարժարանի*
5. *Պ. Գ. Տիլէնեան » մանկավարժութեան*

Այս շրջանին խումբը ունեցած է ինը ժողով եւ չորս դասախօսութիւն

Ա. դասախօսութիւնը տուած է Պ. Ա. Ահարոնեան, նիւթ ունենալով՝ Դաշնակց. դերը անցեալում, ներկայիս եւ ապագային, *ուր՝ յարգելի դասախօսը համառօտելով Դաշնակց[ութեան] քսանմեայ գործունէութիւնը յայտնեց որ այդպիսի մի ոյժ՝ պէտք է որ գոյ[ութիւն] ունենայ միշտ, ի պահանջել հարկին ազգ. գոյութիւնը պահպանելու համար, ինչպէս այդ պատահեցաւ հայ-թրքական ընդհարումների ժամանակ։*

Պ. Ա. Ահարոնեան ցանկութիւն յայտնեց որ ամէն հասարակական ջիղ ունեցող անհատ մօտենայ եւ սեղմէ շարքերը այդ կուսակցութեան՝ քանի որ ան «իտէա»ի տեսակէտից ալ կը գոհացնէ իր ընկերվարական, ազգայնական եւ ապակեդրոնացման լայն ծրագրով։

Ներկաներէն մի քանին քննադատեցին Դաշնակց.ը որ վերջին տարիներու ընկերվարական գործունէութեան համար մեծ énergie[118] *կը սպառվէ իր ուժերը ցրուելով եւ անօգուտ վատնելով եւ ցանկութիւն յայտնեցին որ ան ամփոփուի միայն ազգայնական* nationaliste *գործունէութեան մէջ։ Անոնք քննադատեցին նաեւ՝ դաշնակցական — Իթթիհատ համաձայնութիւնը, որը ոչ մէկ արդիւնք չէ ունեցած եւ կառավարական կուսակց.ը (Միութիւն եւ Առաջդիմութիւն) իր խոստումներէն ոչ մէկը գործադրած է։*

Ուրիշ ընկերներ ընդդիմախօսելով սոյն անտեղի քննադատութեանց՝ յայտնեցին նախ՝ որ Դաշնակցութեան վերագրուած ընկերվարական գործունէութիւնը չափազանցուած է եւ թէ վերջին ժամանակներս նա աւելի ազգայնական գործունէութեան ոյժ կու տայ եւ ատոր համար ալ կը քննադատուի ո՛չ միայն ուրիշ կուսակցութիւններէն այլեւ մեր կուսակցութեան անդամներէն. ապա աւելցուցին որ յեղափոխական առաջդիմական կուսակցութիւն մը՝ որպիսին է Դաշնակցութիւնը, ինչպէ՞ս կրնայ անտարբեր մնալ բանուորական աշխատաւորական դատին հանդէպ, քանի որ այդ զրկուած դասակարգին շահերը պաշտպանելը՝ իր ծրագրային գլխաւոր սկզբունքներէն մէկն է։

Իսկ Իթթիհատի հետ համաձայնելուն պատճառը արդարացուցին անով որ՝ ատիկա ոչ միայն անհրաժեշտ այլեւ ձեւական է Թուրքիոյ մէջ սահմանադրութիւնը ամրապինդ պահելու համար։

Վերջին խօսքով՝ Պ. Ահարոնեան ջախջախիչ փաստերով ապացուցեց Դաշնակցութեան հակառակորդներուն սխալ մտայնութիւնը որոնցմէ ոմանք իբր "nationaliste" *իսկ ուրիշներ* "socialiste" *կը քննադատեն զայն։*

*
* *

Երկրորդ դասախօսութեան նիւթն էր Թուրքիոյ սահմանադրութիւնը եւ հայերը:

Դասախօսը ընկ. Տիլէնեան՝ թերի գտնելով հանդերձ ներկայ սահմանադրութիւնը ըսաւ որ անիկա մեծ բարիք մըն է Թուրքիոյ բնակչութեան համար ընդհանրապէս իսկ հայ ժողովրդին մասնաւորապէս։

Համառօտ ակնարկ մը նետելով հին «ռեժիմ»ին վրայ բաղդատեց զայն նորին հետ եւ ցոյց տուաւ այն խոշոր տարբերութիւնը որ գոյութիւն ունի, ներկայ կարգերի շնորհիւ որոնք մեզ կու տան ազատ մամուլ, ազատ խօսք, ազատ գումարումներ եւն։

Մենք հնարաւորութիւն ունինք ո՛չ միայն խաղաղ զարգացման, առաջդիմութեան, եւ ազգերու մէջ համերաշխութեան ոգին ուժեղացնելու՝ այլ քննադատելով նոյնիսկ այդ թերի սահմանադրութիւնը մենք կը հասնինք ցանկալի կարգերու:

Ընկերը եզրակացուց որ առնուազն քաղաքական տհասութիւն կը լինի ըսել «այս տեսակ սահմանադրութիւն մեզ պէտք չէ»՝ ընդհակառակը մեզ՝ հայերուս պարտականութիւնն է մեր բոլոր ուժով փարուել սահմանադրութեան՝ եւ ապահովել անոր գոյութիւնը. այս

տեսակէտէն Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող ազատական տարրերու հետ համերաշխելով՝ մենք մեծ ապահովութիւն կ'երաշխաւորենք նորածագ սահմանադրութեան. ուստի Իթթիհատի հետ մեր կուսակցութեան ժամանակաւոր համաձայնութիւնը գտաւ շատ բանաւոր եւ խելացի»։

Մի քանի ներկաներ ջանացին հակասական գտնել այդ համերաշխութիւնը Թուրք չօվէն[130] կուսակցութեան հետ եւ յայտնեցին՝ քանի որ ան իր խոստումները չյարգեց լաւ էր միանալ ընդդիմադիր կուսակցութեան հետ։

Ուրիշ ընկերներ ջախջախիչ փաստերով հերքեցին այդ առարկութիւնը եւ պարզեցին որ այսօրուայ ընդդիմադիր կուսակց.ը կազմուած ազատական անուան տակ՝ ուրիշ բան չէ՝ բայց եթէ փաթթոցաւորներու եւ էշրաֆներու կոյտ մը՝ հազուագիւտ բացառութեամբ, եւ թէ անոնց հակասահմանադրական, առնուազն հակառաջդիմական եւ ծայրայեղ ազգայնական ըլլալը քանիցս ապացուցուած է իրենց ձգտումներով եւ խօսքերով։

*
* *

Գ. դասախօսութիւնը՝ Պարսկաստան եւ վերջին շարժումները՝ տրուեցաւ Պ. Ա. Սարգիսեանի կողմէ։

Պ. դասախօսը համառօտ ակնարկ մը նետելով Պարսկաստանի ներքին կեանքին վրայ՝ բացատրեց այն պատճառները որոնք ծնունդ տուին յեղ. շարժման եւ ապա՝ այն պատճառները՝ որոնք ծնունդ տուին հակայեղափոխական շարժման։ Եւ վերջացուց ցաւ յայտնելով Պարսկաստանի վերջին անորոշ ու տխուր կացութեան վրայ որի անկախութեան հարցը վտանգի տակ է։

Ներկաներէն 1-2ը Դաշնակցութեան մասնակցութիւնը Պարսկաստանի վերջին ազատական շարժումներուն աւելորդ գտան. իրենց անվստահութիւնը եւ յոռետեսութիւնը յայտնելով այդ՝ ինչպէս առհասարակ «իսլամ» ցեղերու առաջդիմութեան եւ քաղաքակրթութեան համար։ Իսկ մի քանի ընկերներ ընդհակառակը կը պնդէին թէ Դաշնակցութեան ընթացքը եւ կատարած դերը վեր է քննադատութենէ, քանի որ ան կռուած է յետադիմական, հակասահմանադրական, բռնակալական ախորժակներու դէմ, աջակցելով երկրի մէջ գոյութիւն ունեցող ազատական յեղափոխական տարրերու հետ։ Քանի որ պարսկահայերը այդ երկրին մէկ մասը կը կազմեն, եւ բռնակալական կարգերու վերահաստատումով՝ անոնց ալ դիրքը բաւական կը դժուարանար։ Դաշնակցութիւնը, հայ յեղ. կազմակերպութիւն մը, բնական է որ կրաւորական դիրքի մէջ չէր կրնար մնալ։ Պ. բանախօսը վերջին խօսքով շատ խելացի եւ գովելի գտաւ մեր կուսակցութեան բռնած ընթացքը եւ փափաք յայտնեց որ ան մինչեւ վերջ չարունակէ այդ դրժբախտ երկրի ազատագրման գործը։

*
* *

Դ. դասախօսութիւնը տրուած է Պ. Ռ. Զիլինկիրեանի կողմէ, նիւթը՝ «Ինչու նասիոնալիստ»։ Դասախօսը նասիոնալիզմի գաղափարը խիստ բնական գտնելով ըսաւ որ ամէն անհատ պարտական է ազգային ոգով տոգորուած լինել եւ թէ քանի որ մեծ ազգութիւնները իրենց անյագ ախորժակները գոհացնելու համար կ'աշխատին ձուլել փոքր ազգութիւնները, փոքր ազգութիւններն ալ՝ որոնց շարքին մէջ եւ հայերը՝ պարտաւոր են նասիոնալիստ լինելու, բայց մերինը défensif[131] նասիոնալիզմ պէտք է լինի։

Եւ այդ նպատակաւ գաւառներու մէջ զարկ տալու է այդ գաղափարին՝ ստեղծելով դպրոցներ եւ զանազան կուլտուրական հաստատութիւններ։

Մի քանի ընկերներ դիտել տուին որ կոյր, միակողմանի նասիոնալիզմը բացասական հետեւանքներ կրնայ ունենալ, մեր ջանքը պէտք է լինի նաեւ համերաշխ ոգի մը ստեղծել մեր հարեւաններու հետ եւ թէ հնարաւոր եղած չափով աշխատիլ՝ անոնք ալ մեզի հետ կամ ետեւէն քալել տանիլ քաղաքակրթութեան շաւղով, այլապէս՝ եթէ մենք միայն մեր ուժեղացումը՝ այսինքն հարստացումը, զարգացումը, բարգաւաճումը եւայլն մտածենք՝ մեր գոյութեան հարցը վտանգուած կ'ըլլայ մեզ շրջապատող աղքատ, տգէտ, ու ոչ լոսաւորեալ ազգերու մէջ։

*
* *

Ընկերներ!

Լօզանի դաշնակց. խմբի ամենաարդիւնաւոր եւ հետաքրքիր գործը սոյն ժողովներու կազմակերպումը եղած է։

Այս ժողովները յաճախուած են միշտ Լօզանի ոչ-դաշնակցական ուսանող-ուսանողուհիներէ, որոնք ամէն անգամին ալ ուրախ եւ գոհունակ մեկնած են ցանկութիւն յայտնելով որ միշտ կազմակերպուի այդ կարգի ժողովներ։

Ժողովները ինչպէս կ'երեւին վերը տրուած տեղեկութիւններէն՝ միշտ վիճաբանական եղած են, շահեկան դիտողութիւններով եւ լուսաբանութիւններով։

130.- Ազգայնամոլ, մոլեռանդ։
131.- Ֆրանսերէն՝ պաշտպանողական։

*
* *

Գալով հարեւան ազգերու պատկանող ուսանողներու հետ մեր ունեցած յարաբերութեան՝ պէտք է ըսել որ անցեալ տարուան չափ սերտ չէ եղած. մեր ընկերներէն երկուքը մասնակցած են օթթոմանեան «քլիւպ»ի ժողովներուն եւ ընկ. Քրմոյեանն ալ դասախօսութիւն մը տուած է՝ նիւթ ունենալով՝ "Les réformes en Turquie" (բարեկարգումները Թուրքիոյ մէջ)։

Իսկ սոսիալիստական խմբակ գոյութիւն չունենալով՝ այս տարի Լօզան այդ ուղղութեամբ յարաբերութիւններ չէ մշակած։

*
* *

Դրամական հաշիւ		*Ֆր.*
Անդամավճարներից գանձուած		30
Նախորդ հաշուէն մնացած		17
Ուսանողներից գանձուած (բաժանորդագր.)	10.50 + 47	57.50
Գործ. Մարմնի ղրկուած եւ «Ուսանող»ի առաքման ծախս	2.25+40 =	42.25
Գանձում մնում է		15.25

ԲԱՆԱՁԵՒԵՐ՝ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

I *«Ուսանող»ը Եւրոպայի եւ Թուրքիոյ դաշնակցական ուսանողներու օրգան դարձնելու հարցը*

— Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողական Միութիւնը իր անդամներու քանակով եւ որակով ներկայացնելով ամէնէն ձեռնաս եւ պատրաստուած կազմակերպութիւնը քան բոլոր միւս դաշնակցական ուսանողական կազմակերպութիւնները՝ պարտաւոր է իր մարմնի միջոցաւ շարունակական կապ պահպանել Թուրքիոյ ուսանող. միութիւններու հետ՝ միշտ օգտակար թելադրութիւններ եւ ուղղութիւններ տալով անոնց. իսկ այդ կապը աւելի ամուր հիմերու վրայ կարելի է դնել՝ «Ուսանող»ը միացեալ օրգան դարձնելով, որը կը լինի միութեան օղակը Թուրքիոյ եւ Եւրոպայի դաշնակցական ուսանողներու։

Լօզանի խումբը ցանկութիւն կը յայտնէ որ այդ կապը ոչ միայն Թուրքիոյ ուսանողներու՝ այլեւ Ամերիկայի եւ Ռուսաստանի ուսանողներու մէջ եւս գոյութիւն ունենայ, ու այդ մասին Գործ. Մարմինը հարկ եղած դիմումները եւ կարգադրութիւնները ընէ։

II *Եւրոպայի դաշն. ուսանողներու գործօն մասնակցութիւնը տեղական սոսիալիստական կազմակերպութիւններու մէջ*

Նկատելով որ Եւրոպայի դաշնակց. ուսանողներու գործունէութիւնը տեղական սոսիալիստական կազմակերպութիւններու հետ՝ կը նպաստէ Դաշնակցութեան միջազգայնացման, եւ նախաքայլը կը հանդիսանայ ապագայ պատեհութիւններու առթիւ միասին գործակցելու՝ Լօզանի խումբը կը ցանկայ որ Գործ. Մարմինը հրահանգ տայ Եւրոպայի զանազան քաղաքներու մէջ գտնուած խումբերուն, նոյնիսկ անհատներու, որ անպայման տեղական սոսիալիստ. խմբակներու եւ կազմակերպութիւններու հետ յարաբերութեան մէջ մտնեն, կազմելով անոնց հետ ժողովներ, դասախօսութիւններ, որտեղ մեր ընկերները պատրաստ լինին իրենց կողմէ «ռեֆերատ»ներ պատրաստել։

III *Հասարակագիտական գրականութեան եւ Դաշնակցութեան պատմութեան պակասի պահանջը*

Շատ հետաքրքիր եւ զգալի պակաս մը լրացած կ'ըլլայ եթէ աշխատուի գոհացում տալ Դաշնակցութեան պատմութեան եւ հասարակագիտ. գրակ. պահանջին որ գրեթէ ընդհանուր բաղձանք մը դարձած է. «Դրօշակ»ի եւ «Ուսանող»ի վերջին համարները այդ իմաստով յօդուածներ կը պարունակեն, կը փափաքինք որ չարունակուին այդ կարգի յօդուածները եւ եթէ կարելի է Գործ. Մարմինը այդ մասին իր բաղձանքը յայտնէ Արեւմտ. Բիւրոյին որ բրոշիւրներով կամ գրքերով ընդդէմ երթայ այդ պահանջին, քանի որ այդ տեսակի հրատարակութիւններ մեծապէս կը նպաստեն կուսակցական դաստիարակչական գործին։

IV *Կուսակցական շերտաւորումը Թուրքիոյ մէջ (համապետական տեսակէտով)*

Ուրախալի երեւոյթ մէ Թուրքիոյ մէջ վերջին կուսակց. շերտաւորում առաջ գալը։

Այդ շերտաւորումները ինչքան ալ խակ, տհաս լինին եւ շատ անգամ յետին մտքերով եւ ցանկութիւններով ղեկավարուին չեն դադրիր մխիթարական երեւոյթ ըլլալէ. քանի որ ատոնք գրգիռ կ'ըլլան զարկ տալու գոյ[ութիւն] ունեցող ազատական, առաջդիմական կուսակցութեանց ուժեղանալուն եւ զարգանալուն, որով պայքար առաջ գալով՝ Թուրքիոյ քաղաք. կեանքն է որ կը վերածնի, կը հասուննայ։

Դաշնակցութեան դերը պիտի ըլլայ աշխատիլ ստեղծել, իր ծրագրին նման կամ մօտ, ուրիշ քաղաք. կուսակցութիւններ, հնարաւոր չեղած պարագային՝ ազատական սկզբունքներով առաջնորդուող կուսակցութիւններ, զարկ տալ եւ գործակցիլ անոնց ժամանակաւորապէս, պահպանողական տարրերու եւ կուսակցութիւններու դէմ պայքարելու համար։

V Դասակարգային պայքարը
Թրքահայ կեանքին մէջ

Դասակարգային ուժեղ շերտաւորում դեռ գոյութիւն չունենալով Թուրքիոյ մէջ, Դաշնակցութիւնը պէտք է համախմբէ բոլոր տարրերը՝ առանց դասակարգային խտրութեան՝ պաշտպանելու համար ազգային ինքնուրոյն շահերը ինչպէս՝ կրթական, կուլտուրական եւ այլ ձեռնարկներու մէջ։ Իսկ ազգ. ընդհ. շահերէ դուրս ան թոյլ պիտի չտայ ի հարկէ, որ աշխատաւորութիւնը ճնշուի կապիտալիստներու ախորժակներէն եւ ոտնձգութիւններէն։

Զգուշանալու է սակայն դասակարգային պայքար ստեղծելէ այն վայրերուն մէջ՝ ուր այդ պաքարը գոյ[ութիւն] չունի։

V Պարսկական շարժումները
(պետական եւ ազգային տեսակէտով)

Պարսկաստանի շարժումներու ժամանակ Դաշնակցութեան բռնած դիրքը որոշ եւ օրինական էր,— կռիւ յետադիմական, հակասահմանադրական կարգերու եւ ցանկութիւններու դէմ։ Սակայն եթէ այդ երկրի դրժբախտ ճակատագիրն է զրկուիլ իր անկախութենէն՝ ենթարկուելով Ռուսիոյ եւ Անգլիոյ տիրապետութեան, եւ նկատելով որ Դաշնակցութիւնը գերմարդկային ջանքերով իսկ ոչինչ կրնայ փոխել այդ որոշուած ճակատագրէն, տխուր ու դժբախտ համակերպումով մը միայն կրնայ ընդունիլ այդ, հակառակ իր ցանկութեանց։ Բայց միւս կողմէ տեղական յեղափոխական տարրերու հետ միշտ աջակից՝ կռուիլ բռնակալութեան դէմ յարմար դատուած պարագային։

VI Ռուսական շարժումները եւ
կուսակցութիւնները

1905ի ազատագրական շարժումներուն եւ խանդավառ օրերուն յաջորդող այս «ռէակցիան» շատ տխուր ու ցաւալի պատկեր մը կը ներկայանէ Ռուսաստանի մէջ։ Նոյնքան եւ աւելի տխուր ու անմխիթարական [է] երկրի մէջ գոյ[ութիւն] ունեցող կուսակցութիւններու թմրած կամ գրեթէ թմրած վիճակը։

Դաշնակցութիւնը անկեղծ ուրախութեամբ ողջունելով հոն սկսելիք յեղ. շարժումները, պարտական է մասնակցիլ ազատագրական շարժման՝ միւս յեղ. կազմակերպութեանց հետ. բայց երբեք ազդանշան տալ, քանի որ իր դիրքը շատ փափուկ է եւ ադին Թուրքիոյ ու Պարսկաստանի մէջ ահագին գործունէութեամբ կլանուած է։

VII Կովկասահայ շերտաւորման նշանակութիւնը
մեր տեսակէտից

Սոյն խնդրոյն շատ քիչ ծանօթ լինելով՝ [ի վիճակի չենք] որոշ եւ բաւարար բանաձեւ մը կազմել. կը բաւականանք ըսելով որ՝ Դաշնակցութիւնը ողջունելով այդ շերտաւորումը իբր քաղաք[ական] հասունութեան նշան՝ հարկ եղած պարագային կ'աջակցի իր ծրագրին աւելի մօտիկ եղող կուսակցութեանց հետ՝ պայքար մղելու աւելի պահպանող. կուսակցութեանց եւ տարրերու դէմ։

VIII Դաշնակցութեան բռնելիք դիրքը
հարեւան ցեղերի մէջ

Դրացի ցեղերի մէջ, Դաշնակցութիւնը պէտք է ջանայ 1.- Ստեղծել սոսիալիստ կուսակցութիւններ։ Հնարաւոր չեղած դէպքում՝ իր ծրագրին համեմատաբար մօտիկ ծրագիր ունեցող կուսակցութիւններ [ստեղծել], 2.- Մշակել անկեղծ եւ բարեկամական յարաբերութիւններ, 3.- Աշխատիլ համագործակցական միութիւններ կազմակերպել (սպառողական coopératif) միութիւններ։ 4.- Միջազգային բանուորական կազմակերպական միութիւններ հիմնել։

IX Ինքնապաշտպանութիւն։

Ամենաէական եւ կենսական հարց մը նկատելով այս թրքահայութեան համար, Լօզանի խումբը Դաշնակց. Ուս. Միութեան հետեւեալ բանաձեւը կը ներկայացնէ աւելի ընդարձակ կերպով արտայայտուիլ յանձնարարելով իր պատգամաւորին.

«Նկատելով որ Տաճկաստանի մէջ դեռ Սահմանադրութիւնը ամուր հիմքերու վրայ դրուած չէ, եւ ամէն րոպէ կարող է զանազան անակնկալներ պատահիլ, ապագան միշտ անորոշ՝ ջարդի, թալանի վախը ժողովրդի գլխին դամոկլեան սուրի նման կախուած է։ Ինքնապաշտպանութեան հարցը՝ հրամայական պահանջ դառնալով՝ Լօզանի դաշնակց. խումբը կ'առաջարկէ որ՝ Եւրոպայի Հ. Յ. Դաշնակցական Ուսանողների Դ.րդ Համագումարը զբաղուի այդ խնդրով։

Գանձապահ՝ Հ. ԼՈՒՍԻՆԵԱՆ
Քարտուղար՝ Գ. ՏԻԼԷՆԵԱՆ

Փաստ. 1472-95

Ջ 8.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆԱՆՍԻԻ Հ.Յ.Դ ՈՒՍԱՆՈՂ. «ԵՐԿԻՐ» ԽՄԲԻՆ

Նանսիի «Երկիր» խումբը կազմուած է 1911-1912 ուսումնական տարուան սկիզբը եւ բնաւ կապ չէ ունեցած նախապէս գոյութիւն ունեցող մարմնի հետ, որ տարաբախտաբար քայքայման ենթարկուած էր անդամներու հեռացման պատճառով։

Խումբը միշտ ձգտած է Հ.Յ.Դ. Ուս. Միութեան նըպատակի իրագործման, իր միջավայրին եւ պարագաներուն թոյլատրած չափով եւ միջոցներով։

Խումբն ունեցած է ինն (9) անդամներ, ամէնքն ալ թրքահայեր, թէպէտեւ քաղաքիս ռուսահայ մի քանի ուսանողներէն մասնակցութեան խոստում եղած է, բայց դժբախտաբար չէ իրականացած։

Ուսանող ընկերներէն 4-ը կը հետեւին ելեքտրո-մեքենագիտութեան, 3-ը՝ ակրոնոմիի, 1-ը՝ վաճառականութեան, 1-ը վարժապետանոց։ Ընկերներէն մին Մարտի վերջերուն ստիպուած եղաւ երկիր վերադառնալ անհատական պատճառներէ դրդուած։

Ընկերներու՝ միութեան հանդէպ ունեցած վերաբերումը ընդհանուր առմամբ լաւ է եղած։ Ժողովները վայելած են ընկերներու ստէպ ամբողջութեան եւ երբեմն ալ գնահատելի մէկ մեծամասնութեան մասնակցութիւնը։

Վճարումները մինչեւ Յունուար շատ կանոնաւոր եղած են։ Յունուարէն մինչեւ Մարտ 1, երեք ընկերներ միայն իրենց անդամավճարները չեն վճարած մինչեւ այսօր, դրամական նեղ դրութեան մէջ գտնուելով, բայց հաստատօրէն կրնանք ըսել որ մօտ օրէն այդ դրամները պիտի գանձուին։

Հոկտ. 30-ին	ունեցած ենք		12 ֆր. 50 սանթիմ
Նոյ. 30-ին	»	»	13 ֆր. 25 »
Դեկտ. 30-ին	»	»	15 ֆր. 25 »
Յունուար 30-ին	»	»	11 ֆր.
Փետր. 28-ին	»	»	11 ֆր.

Մարտ ամիս տակաւին չէ գանձուած։ Յունուարի եւ Փետրուարի ամսականներէն կը պակսի 7 ֆր. 50 սնթ. որ կերպով մը գանձուած կը համարենք։ Ամբողջ մուտքի դրամ՝ 72,25, որմէ ծախսած ենք։

Ուղարկած ենք (Գործ. Մարմնին) Յունուար 1-ին	30 ֆր.
Ապսպրած են գրքեր	9,80
Փարիզ հեռագրի դրամ	3,75
Նամակի ծախքի դրամ	1,50
Տետրակի եւայլնի ծախք	0,75
ծախ[սուած]	45,80
72,25 — 45,80	26,45

Մեզ ուղարկուած են 10 «Ուսանող», մի հատ ալ մեր հաշուոյն ուղարկուած Պոլիս. դրամները տակաւին չեն գանձուած։

Միութիւնս իր նպատակի իրագործման համար կազմակերպած է ժողովներ առնուազն ամիսը մի անգամ, ուր տեղի ունեցած են զանազան վիճաբանութիւններ, դասախօսութիւններ։

Տրուած են հետեւեալ դասախօսութիւնները

ա) Դաշնակցութեան հետեւած քաղաքականութիւնը Օսմ. ազատութեան հաստատութենէն ի վեր, համապետական, ազգային եւ տնտեսական տեսակէտներով, ընկեր Յ. Աշմանեանի կողմէ, 19 նոյ. 1911։

բ) Ազգային հարցը հայկական երեք հատուածներուն մէջ, ընկեր Հ. Սերենկիւլեանի կողմէ, 26 նոյ. 1911։

գ) Աշխատութեան օրէնսդրութիւնը արդի ընկերութեան մէջ, ընկեր Ա. Սեղբոսեանի կողմէ, 30 դեկտ. 1911։

Դասախօսութիւններուն յաջորդող վիճաբանութիւններէն զատ, միութիւնս ունեցած է նաեւ զանազան վիճաբանութիւններ իր ներքին կազմին, թաքթիքին եւայլն որոշումներու, առաջարկներու մասին։

Վիճաբանութեան որպէս կարեւոր նիւթեր ունեցած է, օրինակ,

1- Ի՞նչ կերպով եւ ի՞նչ ծրագիրներով հիմնելու է տեղս Օսմ. Ուսանողական միութիւն մը։

2- Քոլլեկթիվիստ եւ քոմիունիստ վարդապետութեանց մասին։

3- Ժառանգութեան մասին։

4- Ներկայի պահանջներ չե՞ն ստիպեր որ Դաշնակցութիւնը կանգնի ազգայնական հողի վրայ։

5- Աշակերտական միութիւնները կուսակցակա՞ն թէ անկուսակցական հողի վրայ պէտք է կանգնին։

Խումբս կազմած է իր փոքրիկ մատենադարանը, բերել տալով L'Humanité-ի գրաշարքէն քանի մը հատորներ։

Ուղարկուած են տեղէս մի քանի թղթակցութիւններ «Ազատամարտ»ին եւ «Յառաջ»ին Սերենկիւլեանի եւ Սեղբոսեանի կողմէ։

Տեղւոյն Օսմ. Ուս. միութիւնը կազմուած է մեր նախաձեռնութեամբ. մեծ մասը կը կազմեն հայեր եւ

թուրքեր. կան նաեւ հրեաներ, յոյներ եւ արաբներ։ Ամիսը երկու անգամ ժողովներ ունինք. վիճաբանութիւնները բաւական մխիթարական են (առայժմ կը զգուշանանք զանազան խրտչեցուցիչ նիւթերու մասին վիճաբանելէ)։ Ընկեր Սեր(ենկիւլեան)ի կողմէ տրուած է մի համառօտ դասախօսութիւն ազգերու համերաշխութեան շուրջ։

Յարաբերութիւններս ընդհանրապէս շատ լաւ են. կը յուսանք որ այսպիսով պիտի կարողանանք մեր որոշեալ նպատակին հասնիլ։

Ընկերները անհատական լաւագոյն յարաբերութիւններ մշակած են տեղացի եւ օտարազգի ուսանողներու հետ. ընդհանրապէս անոնցմէ սիրուած են։

Մեռած է շրջապատի կեանքը. ոչ մէկ սոցիալիստական շարժում կը տեսնուի. եղածներն ալ անօգուտ եւ չնչին բաներ են։

Այսչափ մեր գործունէութեան մասին։

Ի դիմաց «Երկիր» խմբին
ՀԱՅԿ ՍԵՐԵՆԿԻԻԼԵԱՆ

[1912]

Փաստ. 1472-96

Զ 9.– ԼԻԷԺԻ ԽՈՒՄԲԷՆ
ԵՒՐ. Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Ընկերներ!

Համաձայն ձեր քանիցս եղած դիմումներին, որը հարկաւ խոստովանում ենք, ուղարկում ենք «Լիէժ» խմբի 1911-12 թուի գործունէութեան տեղեկագիրը։

Նախ, այս պիտի ասել, որ մեր տեղեկագիրը, որ զետեղում ենք ստորեւ, այնպիսի ձեւ եւ բովանդակութիւն չունի, որ կարելի լինի ամբողջովին տեղաւորել ընդհանուր տեղեկագրների մէջ։ Գործադիր Մարմնիդ ենք թողնում քաղուածքներ անել եւ այնպէս տպագրութեան յանձնել։

«Լիէժ» խումբը կազմուել է 1911 թ. Մարտի 15-ին, այսինքն Երրորդ համագումարից մօտ 15-20 օր առաջ. անդամների թիւը եղել է 4, որոնցից երկուսը ներկայ են եղել III Համագումարին՝ ընկեր Թ. Ղազարոսեանը, որպէս պատգամաւոր, իսկ ընկ. Մալիեմեզեան Գ. որպէս դաշնակցական ընկեր։

Համագումարից յետոյ խումբը ունեցել է 5 ժողով, որոնց նիւթը եղել է համագումարից վերադարձած ընկերների զեկուցումն, երկու դասախօսութիւն ծրագրային հարցերի շուրջը, մի դասախօսութիւն եւս Օտտոմանեան յեղափոխութեան շուրջը եւ ապա խումբը ընդարձակելու եւ աւելի լայն հիմքերի վրայ դնելու հարցը։ Յուլիսից յետոյ խումբը չի ունեցել եւ ոչ մի ժողով ընկերներից 3-ի քաղաքից հեռանալու եւ համալսարանական քննութիւնների մօտենալու պատճառով։

Հոկտեմբերին ցանկութիւն եղաւ խումբը վերակազմել եւ ընկերների թիւը աւելացնել, բայց հակառակ եղած ջանքերին, բոլորովին ուրիշ արդիւնք ունեցանք. եղած ընկերներից մէկն էլ վերջնականապէս հեռացաւ Լիէժից Նանսի։

Այսպիսի դրութեան մէջ տեսնելով հայ ուսանողական շրջանակի մէջ գործելու առայժմ անհնարաւորութիւնը, որոշեցինք մեր գործունէութեան փոխարէն տեղւոյն Օտտոմանեան միութիւնը։

Օտտոմանեան միութեան նախկին ծրագիրը, որ ունէր այնչափ պակաս կողմեր, իր անմիտ սահմանափակումներով հանդերձ առաջարկուեց փոխել. ընտրուեցաւ մի կոմիսիա, որին մասնակցում էր մէկը մեր ընկերներից։ Նոր ծրագիրը թէեւ նորից պակասաւոր էր, բայց այսուհանդերձ ունէր նախկինի վերաբերմամբ շատ առաւելութիւններ։ Սկսուեց բաւականին հետաքրքիր կեանք. սոցիալիզմ, քաղաքականութիւն, եւայլն այլեւս նրանց չէր խրտնեցնում եւ հէնց նոյն միութեան առաջարկութեամբ բելգիացի սոցիալիստ պատգամաւոր Պ. Թրօկլէն տուեց Օտտոմանեան կլուբում երկու դասախօսութիւն սոցիալիստական խնդիրների շուրջը։ Մեր ընկեր Թ. Ղազարոսեանը եւս կարդաց մի դասախօսութիւն, որի մասին անցեալները գրուած է, հետեւեալը նիւթ ունենալով "Les origines et les conséquences de la révolution et contre-révolution Ottomanes".[132]

Պիտի ասել, որ թէեւ մենք չկարողացանք հետաքրքրութիւն առաջացնել Դաշնակցութեան շուրջը հայ ուսանողութեան մէջ, բայց մեզ մասամբ յաջողուեց այդ Օտտոմանեան միութեան մէջ։

Ներկայում առաջ է եկել մի զարմանալի հետաքրքրութիւն Դաշնակցութեան շուրջը. խիստ ցանկութիւն կայ ծանօթանալու նրա անցեալի եւ ներկայի գործունէութեանն եւ ծրագրին։

132.- Ֆրանսերէն՝ «Օտտոմանեան յեղափոխութեան եւ հակայեղափոխութեան ծագումն ու հետեւանքները»։

Լսում ենք, որ նոյն միութեան Գործադիր Մարմինը մտադիր է մօտերս դիմել «Դրօշակ»ի խմբագրութեանը իրենց ուղարկելու Դաշնակցութեան շուրջը լոյս տեսած բոլոր ֆրանսերէն լեզուով եղած հրատարակութիւնները։ Յոյս ունինք, որ նման դիմում եղած դէպքում դուք եւս կ'աշխատէք հնարաւոր եղածին չափ նպաստել դիմումն բաւարարելու։

Առ այժմ Լիէժում Գործադիր Մարմինդ կարող է ի նկատի ունենալ երկու անհատ դաշ. ընկերներ. մօտիկ ապագան գուցէ մեզ հնարաւորութիւն կը տայ դարձեալ մի փոքրիկ խումբ կազմել հայ ուսանողական շրջանում։

Փոխադրուած է ընկեր Սարգիս Շահնազարեանի հասցէով յիսուն (50) ֆր. յանձնելու Գործադիր Մարմնիդ, որից

3 անդամի վճար 6 ամսուայ	18 ֆր.
(Նանսի գնացած ընկերից դեռ չի գանձուել իր անդամավճարը)	
Նուէր ստացուած ընկ. Թ. Ղազարոսեանից	20 ֆր.
Ուսանողի 4 բաժնեգին	3 ֆր. 12 ֆր.
գումար	50 ֆր.

Ընկեր Թորգոմ Ղազարոսեանը նուիրել է տեղի խմբին 10 ֆրանկի գրքեր

1 օր. Նախագիծ ժող. ինքնապաշտպ[անութեան]
1 օր. Համաժողովրդական բանակ
1 օր. Յեղափոխ. մտքեր
1 օր. Քաղաք. կուսակց. ռուս.
1 օր. Սոցիալիստի նամակներ
1 օր. Ուղեցոյց ընկերներին
1 օր. Վեպածնուող հայրենիք
1 օր. Հոսանքներ

Գրքերը պահւում են մեզ մօտ։

Ցաւում ենք, որ գուցէ եւ շատ չնչին պատճառով հնարաւորութիւն չունեցանք մասնակցելու IV Համագումարին։

Յոյս ունինք չուտով ստանալ ընդ. տեղեկագիր ծանօթանալու համար Համագումարի զբաղմունքների ընթացքի հետ։

Եռանդ ենք ցանկանում նոր Գործադիր Մարմնիդ։

Ընկերական ջերմ բարեւներով
ՍՏԵՓԱՆ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Թ[ՈՐԳՈՄ] ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

1912 թ. 5 Մայիսի
Լիէժ

Խնդրում ենք նամակներ ուղարկել այս հասցէով
Rue Publémont 40
St. Ter Mardirossian, Liège

Փաստ. 1472-85

Զ 10.– ՉՈՐԲՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախապատրաստական աշխատութիւններ:
2. Զեկուցում Գործադիր-Խմբագրական Մարմնի:
3. Զեկուցում խմբի պատգամաւորների:
4. «Ուսանող»ը Եւրոպայի եւ Թուրքիոյ դաշնակցական ուսանողներու օրգան դարձնելու խնդիրը:
5. Եւրոպայի դաշն. ուսանողներու գործօն մասնակցութիւնը տեղական սոցիալիստական կազմակերպութիւններու մէջ:
6. Հասարակագիտական գրականութեան եւ Դաշնակցութեան պատմութեան պակասի պահանջը:

ՌԵՖԵՐԱՏՆԵՐ[8]

7. Կուսակցական շերտաւորումը Թուրքիոյ մէջ (համապետական տեսակէտով):
8. Դասակարգային պայքարը թրքահայ կեանքի մէջ:
9. Պարսկական շարժումները (պետական եւ ազգային տեսակէտներով):
10. Ռուսական շարժումները եւ կուսակցութիւնները:
11. Կովկասահայ շերտաւորման նշանակութիւնը մեր տեսակէտից:
12. Դաշնակցութեան բռնելիք դիրքը հարեւան ցեղերի մէջ:
13. Ինքնապաշտպանութիւն:

13ա. Գիտական-ընկերային հարցերի մասին:

14. Զանազան առաջարկներ:
15. Մարմինների ընտրութիւն:

Փաստ. 1472-79

Զ 11.– ԵՈՒՍՈՒՖԵԱՆԻ ԲԱՑԻԿԸ ՈՒՍ. ՉՈՐԲՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ[133]

Լozան, 10-4-1912

Ընկերներ!

Ստացայ ձեր հրաւիրագիր հեռագիրը։ Ցատուկ շնորհակալութիւն ձեր այդ վերաբերմունքի համար։ Արդէն իմ ալ փափաքս էր ներկայ լինել ձեր ժողովներին, սեղմել ձեր ձեռքը, ծանօթանալ ձեզ հետ, բայց, դժբախտաբար, հակառակ իմ բոլոր ցանկութեան, անկարող եմ այդ անել հիւանդութեանս պատճառով։ Վերջին օրերս լաւ մը մրսեցի եւ երէկուընէ մտայ անկողին։

Ողջունում եմ ձեր ժողովների բացումը եւ ի սրտէ ցանկանում ձեր ժողովներին յաջողութիւն եւ արդիւնաւորութիւն։

Ի միջի այլոց բարեմաղթեմ, որ դուք, ընկեր ուսանողներ, որպէս մէկ-մէկ ժրաջան մեղուներ աշխատեցէք եւրոպական գիտութիւնների, փիլիսոփայութեան եւ քաղաքակրթութեան ալուան-ալուան ծաղիկների հիւթերից անոյշ մեղր եւ հոտաւէտ մոմ պատրաստել, որ ապագայում մէկով քաղցրացնէիք մեր բազմատանջ ժողովրդի ծով ցաւերն ու խոր-խոր տարտերը, իսկ միւսով լո՛յս, լո՛յս եւ լո՛յս տայիք մեր խաւարում նստած վիրաւոր ժողովրդին։

Կեցցէ՛ հայ ժողովրդի կեանքով ապրող, նրա վէրքերը բուժող եւ նրա ցաւերին ցաւակից ու նրան լո՛յս տուող հայ ուսանողութիւնը, նրա ծաղիկ յոյսերը։

Ց. ԻՈՒՍՈՒՖԵԱՆՑ

(Կարդացուեց Համագումարում)

133.- Եուսուֆեան Յովհաննէս Դաշնակցութեան առաջին սերունդի ականաւոր դէմքերէն է, եղած է կազմակերպիչը Կ. Պոլսոյ եւ Ամերիկայի Հ.Յ.Դ. կազմակերպութեանց, անդամ Արեւելեան Բիւրոյի (1904), քաղաքապետ Նոր Պայազիտի (1905). Լոժինեան հալածանքներէն խոյս տալով անցած էր Զուիցերիա, ուր ապրեցաւ հիւանդ վիճակի մէջ մինչեւ իր մահը (1920):



Փաստ. 1472-97

Զ 12.– ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

(Նախապատրաստական ժողով)

Համագումարի Ի-ին ժողովը տեղի ունեցաւ 1912 Ապրիլ 9-ին։

Ժողովը բացուեց ժամը 9½-ին։Գործ.-Խմբագրական Մարմնի ներկայացուցիչ ընկ. Ղեւոնդ Աճէմեանը ժողովը պաշտօնական համարելով բացեց համագումարի նիստը։ Միաձայնութեամբ նախագահ ընտրուեց ընկ. Դաւիթխանեան — Լայպցիգի պատգամաւոր։ Ժողովը վաւերական համարեց համագումարը, նկատելով որ պատգամաւորների մեծամասնութիւնը ներկայ էր, որով եկել էին հետեւեալ խմբերի պատգամաւորները.

1) Ժընեւի խմբի կողմից 4 պատգամաւոր— Միշէլ, Ղազարեան, ընկ.Հի Երկանեան, Տէր Ստեփանեան
2) Լօզանի 1 պատգամաւոր ընկ. Դիլենեան
3) Ցիւրիխի 1 » ընկերուհի Ցակոբջանեան
4) Լայպցիկ 1 » ընկ. Դաւիթխանեան
5) Փարիզ 1 » ընկ. Գիւլպէնկեան
եւ երկու ձայն ժողովի տրամադրութեան տակ
6) Նանսի 1 պատգամաւոր ընկ. Սերենկիւլեան
7) Բերլին 1 (ընտրութիւնը համագումարի կողմից ընկ. Բաբալեան)
8) Ժամպլու 1 (պատգամաւորը հրաժարուելով հեռագրուեց)
9) Գործ.-Խմբ. Մարմնի ներկայացուցիչ 1 պատգամաւոր՝ ընկ. Աճէմեան

Ժողովը անցնում է քարտուղարի ընտրութեան — ընտրւում է ընկ. Դիլենեան։

Առաջարկուեց խորհրդակցական ձայնով հրաւիրել ոչ ուսանող ընկերներից համագումարի նիստերին։

Ցետոյ անցնում են կօօպտացիայի ձայների բաշխման եւ որոշեց տալ 4 ձայն. ընտրուեցին — ընկ. Ռուբէն, Թերլեմեզեան[134], Իւզբաշեան եւ Քրմոյեան։

Որոշուեց օրական երկու անգամ ժողով ունենալ. առաւօտեան ժամը 9-12 — երեկոյեան 2-6։

Քննուեց օրակարգը եւ մի քանի կէտեր աւելացնելով ընդունուեց ժողովի կողմից։ Ցետոյ քննուեց ներքին կանոնագիրը եւ հաստատուեց ժողովի կողմից. որպէս փոփոխութիւն 4-4 նախագահ եւ քարտուղարի փոխարէն որոշուեց ընտրել 3 նախագահ եւ 3 քարտուղար — որոնք պիտի կազմէին դիւանը։

Փարիզի երկու ձայնը որոշուեց տալ տեղական ընկերներին։

Նոյնը եւ Բերլինի ձայնը — իսկ Ժամպլուի պատգամաւորի հրաժարման պատճառով — հեռագրուեց խմբի համաձայնութիւնը ստանալու համար, որ համագումարին տայ իւր ձայնը։

Ի դիմաց նախագահ Դաւիթխանեանի
Նախագահ՝
Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

Ի դիմաց քարտուղար Դիլանեանի
Քարտուղար՝ ՄԻՇԷԼ

ՆԻՍՏ II
9/IV/ 912 կէսօրից յետոյ

Համագումարը պաշտօնապէս բաց է անում Գործադիր Մարմնոյ ներկայացուցիչ ընկ. Ղ. Աճէմեան։

Կատարւում է դիւանի ընտրութիւն։

Ընտրւում են 3 նախագահներ. ընկերներ՝ Դաւիթխանեան, Ղազարեան, Կիւլպէնկեան եւ 3 քարտուղարներ. ընկերներ՝ Մ Դէմիրեան, Գ. Դիլէնեան, Ե. Տէր Ստեփանեան, միաձայն հաւանութեամբ։

Համագումարը անցնում է օրակարգի հարցերին, նախագահութեամբ ընկ. Դաւիթխանեանի։

Նախքան օրակարգի անցնիլը, զանազան ընկերներ ձայն են ուզում խօսելու։

— Ընկ. Վարանդեան — Բիւրոյի կողմից ողջունում է համագումարը։ Ուրախալի է գտնում, որ մեր համեստ թուով ամէն տարի կարող ենք հաւաքուել եւ ոգեւորութիւն յառաջացնել։ Ցաւալի է որ մենք չունինք կազմակերպուած հակառակորդներ։ Ռուսաստանի կուսակցութիւններից էլ դժբախտաբար մնում են թափթփուքներ։ Եթէ կայ մի կուսակցութիւն, որ իր պրեստիժը պահպանած է Ռուսաստանում, դա էլ մեր կուսակցութիւնն է։ Չնայած ներկայ ճնշող ռեժիմին, նա դեռ իր ազդեցութիւնը պահում է Կովկասի մէջ, ընտրութիւնների եւ այլ երեւոյթների առթիւ։

Մեծ, արիւնոտ զոհողութիւնների շրջանը անցած՝ մնում է ուսանողներին, այն մի տեսակ արտօնեալ տարրին, որ հնարաւորութիւն ունի սովորել բարձր համալսարաններում, օգտուել Եւրոպայի թէորիական գիտութիւններից եւ ապագայի ռահվիրաները լինել մեր երկրին։

— Ընկ. Արամ[135] — Ցիշում է այն երկար տարիները որ ապրած են գաւառներում, երազել են տեսնել այն ինտելիգենցիան, որ գնալու է երկիր զիրենք փոխարինելու։ Ցիշեցնում է այդ ինտելիգենցիային, թէ դեռ յեղափոխութիւնը չէ վերջացել։ Եւրոպայի ուսանողութիւնը պէտք է միշտ յեղափոխական ճանապարհին հետեւի, պէտք է գործի [եւ] յեղափոխականներ պատրաստէ։

— Ընկ. Ղեւոնդ — Ցիշում է իրենց գործունէութեան ժամանակ, Գործադիր Մարմնոյն եկած գրութիւնները, որոնք եղած են քաջալերող, ոգեւորիչ, եւ կը ցանկայ որ այս միութիւնը միշտ կանգուն մնայ։

— Ընկ. Դաւիթխանեան — Դիմում է մեր աւագ ընկերներին, համագումարի ընկերների կողմից իր շնորհակալութիւնը յայտնելու. եւ ընկ. պատգամաւորներին, որ ժամավաճառ չլինելով, իւրաքանչիւրը իր ունեցած պաշարին համեմատ օգտաւէտ լինի։

— Ընկ. Ղազարեան — Առաջարկում է յիշել ռուսական բանտերում տառապող մեր ընկերները։

Համագումարին եւ միութեան մաղթանքներ են անում. ընկերներ Սարիբէկ, Խաչիկեան, Բժիշկ, Դիլէնեան, Սէրենկիւլեան, Գազանճեան։

Զեկուցում Գործադիր Խմբագրական Մարմնի

Ա.- Խմբական կեանք
Բ.- «Ուսանող»
Գ.- Ցարաբերութիւն խմբերի հետ
Դ.- Դրամական հաշիւ

Գործադիր Մարմնոյ նախկին անդամ ընկ. Տէրոյեանի հրաժարման պատճառները ուզում են իմանալ ընկերներ Կիւլպէնկեան, Ղազարեան։ Գործ. Մարմնոյ կողմից բացատրութիւններ կու տան ընկերներ Արարատեան եւ Աճէմեան, որոնք գտնւում են բաւարար։

Ընտրւում է քննիչ յանձնաժողով, բաղկացած 3 հոգուց քննելու Գործ. Մարմնոյ եւ այլ հաշիւները։ Ընտրւում են ընկերուհիներ Երկանեան, Ցակոբջանեան եւ ընկ. Սէրենկիւլեան։

Պարիզը ուղարկել է մի պատգամաւոր, իրաւունք ունենալով 5 հոգի եւս ընտրել, իր իրաւունքը տալիս է համագումարին։ Նոյնը եւ Բերլին։

Նախքան ընտրութիւնները միաձայն ընդունւում է Գործ. Մարմնի անդամները պատգամաւոր ընտրելու իրաւունք ունենան, պայմանաւ որ իրենց գործունէութեան վերաբերեալ խնդիրներու քուէարկութեան չմասնակցին։ Ընտրւում են ընկերուհի Լուսինեան, ընկերներ Գազանճեան, Պայպիչեան. առաջին երկուքը Փարիզի իսկ վերջինը Բերլինի պատգամաւոր։

Խմբերի զեկուցումներ
Զեկուցում Ժընեւի «Ջանք» խմբին
Զեկուցում Լօզանի խմբին
Զեկուցում Պարիզի խմբին։

Այս առթիւ ընկ. Արամ դնում է հետեւեալ առաջարկը. «Զբաղիլ այն հարցով, թէ Դաշնակցութեան պատկանող ընկերները կարո՞ղ են միեւնոյն ժամանակ անդամակցիլ այնպիսի միութիւնների, որոնք իրենց ձգտումներով հակառակ են մեր աշխարհահայեացքին»։ Առաջարկը ընդունուելով, վիճաբանութիւնները յետաձգւում են յաջորդ ժողովներին։

Ընկ. Կիւլպէնկեան առաջարկում է Քիյառի տիկնոջ մի ցաւակցական նամակ գրել։ Կ'ընդունուի։

Ի դիմաց նախագահ Դաւիթխանեանի
Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՆԻՍՏ III
Ապրիլի 10-ին

Ժողովը բացւում է ժամը 9½-ին, ընկ. Կիւլպէնկեանի նախագահութեամբ։ Կարդացւում է նախորդ ժողովների արձանագրութիւնները եւ մի քանի փոփոխութիւններ մտցնելով վաւերացւում է ժողովի կողմից։

Խօսքը տրւում է Լայպցիկի պատգամաւորին, որը զեկուցեց Լայպցիկի խմբի կողմից։ Զեկուցումից երեւաց, որ Լայպցիկի խումբը չի ունեցել կուսակցական խմբակների հետ յարաբերութիւններ, որովհետեւ տեղումս ուսանողական քաղաքական կազմակերպութիւններ չկան. մի ընկերոջ խմբից դուրս գալու մասին բացատրութիւններ է պահանջւում, բաւականութիւն ստանալով՝ համագումարը անցնում է Ցիւրիխի պատգամաւորուհու զեկուցման։

Ցիւրիխի պատգամաւորը շատ համառօտ կերպով տալիս է իւր զեկուցումը իրանց քիչ ժամանակուայ գործունէութեան մասին։

Նանսիի պատգամաւորը յաջորդում է նախորդին եւ տալիս Նանսիի «Երկիր» խմբի կողմից զեկուցում։ Զեկուցումից երեւաց, որ Նանսիի ընկերների ունեցած յարաբերութիւնները (Թուրք) Օթթոմանեան քլիւպի հետ շատ մխիթարական է։ Ունեցած են նոյնպէս Ռուս Սոց. Ցեղափոխական կուսակց. ուսանողների հետ յարաբերութիւններ, բայց որոշ գործունէութիւն չեն ցոյց տը-

134.- Խօսքը Ռուբէն Տէր Մինասեանի եւ Միհրան Թերլեմեզեանի (Վանիկ) մասին է, որոնք այդ օրերուն կ'ուսանէին Ցուրիխոյ մէջ։

135.- Արամ Մանուկեանն է, որ 1911 թ. Նոյեմբերէն ի վեր կը գտնուէր Ցուրիխիա հանգստանալու համար։

ւել, որը կարող էին [?] ունենալ Ֆրանսերէն լեզուով կազմուելիք ռեֆերատների միջոցներով։ Նոյնպէս ունեցած են յարաբերութիւններ սինտիկալիստների հետ, ժողովներին մասնակցել են ոչ վճռողական ձայնով։ (Նկատողութիւն է արւում, որ ամսական մի անգամ հերթական ժողով ունենալը քիչ է)։

Սիոնիստների հետ ունեցած են որոշ յարաբերութիւն, որի մասին լինելիք վիճաբանութիւնը թողուեց յետագայ ժողովներին։

Ժամպլուի պատգամաւորը չլինելով՝ Գործ. Մարմնի կողմից տրւում է մի քանի տեղեկութիւններ (4 անդամ ունի խումբը)։

Պոլսոյ Դաշնակցական Միութեան մասին էլ տրւում է Գործ. Մարմնոյ կողմից տեղեկութիւններ (նրանց թիւը հասնում է 130-ի)։ Ժողովները կարգին եւ հետաքրքիր են. հրատարակում են կուսակցական սկզբունքներ բացատրող գրքեր. մտածում են նոյնպէս հրատարակել օրգան (Գործադիր Մարմնի ունեցած յարաբերութիւն)։

Զեկուցումները տրուելուց յետոյ առաջարկւում է մի որոշ ռեզոլիւցիայով համագումարը արտայայտուի միամեայ խմբական եւ Գործ. Մարմնի գործունէութեան մասին։

Վիճաբանութիւնները սկսւում են այս հարցի մասին, որտեղ ընկերների մեծամասնութիւնը բաւարար է գտնում խմբերի եւ Գործ. Մարմնի գործունէութիւնը. յետոյ սկսում են վիճաբանել Դաշն. Ուսանողական միութիւնների զտման մասին, որովհետեւ մի քանի խմբեր զեկուցեցին որ իրանց շարքերում գտնւում են անհատներ, որոնք Դաշնակցութեան փիլիսոփայութիւնը եւ տեսակէտները չեն ընդունում եւ դէմ են գնում յաճախ Դաշնակցութեան տակտիկի եւ պրեստիժին։ Ընկերների վերաբերմունքը դէպի այսպիսիները բացասական է (եւ պահանջւում է նրանցից լինել կամ դաշնակցական կամ չէզոքանալ)։ Օթթոմանեան քլիւպի հետ պէտք է զգուշութիւն պահպանել եւ դուրս չգալ նրանց հետ ազգային-շովէն եւ կրօնական խնդիրներում, այլ զուտ կուսակցական պրոպագանդան առաջ տանիլ։

Ժողովը այս 3 կէտերի մասին երկար վիճաբանութիւն անելով անցնում է քուէարկութեան եւ ընդունում է հետեւեալ բանաձեւը (երեկոյեան նիստ)։ Համագումարը լսելով Գործադիր Մարմնի եւ պատգամաւորների զեկուցումները եւ տուած բացատրութիւնները՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան՝ որ

1.- Միութիւնը իր գոյութեամբ աւելի է նպաստել ընկերների քաղաքական հետաքրքրութեան եւ կուսակցական գործունէութեան զբաղուելու (անցնում է միաձայնութեամբ — 14 ձայն)։

2.- Միամեայ գործունէութիւնը իր աստիճանական զարգացման սահմանի եւ գոյութիւն ունեցող պայմանների մէջ բաւարար եւ գոհացուցիչ է (անցնում է 12 ձայնով — մէկ դէմ եւ 1 ձեռնպահ)։

3.- Միութիւնը հակազդել է դաշնակցական ընկերների անհատական կղզիացման եւ մանր խմբակցութիւններ առաջացնելուն (անցնում է 13 ձայնով — 1 դէմ)։

4.- Միութիւնը իր գոյութեամբ դրականապէս է ազդել անկուսակցական հայ ուսանողական խմբակցութիւնների գոյութեան ու գործունէութեան վրայ (անցնում է 13 ձայնով — 1 դէմ)։

5.- Միութիւնը իր պարտականութիւնը հանդէպ կուսակցութեան (պրոպագանդա — մամուլի աշխատակցութիւն, եւայլն) կատարել է ոչ ցանկալի չափով (անցնում է 13 ձայնով — 1 դէմ)։

6.- Խմբերում կարդացուած դասախօսութիւնները իրանց բովանդակութեամբ եւ առաջ բերուած վիճաբանութիւններով եղած են խիստ հետաքրքիր եւ արդիւնաւէտ, մասնաւորապէս ընկերային բնոյթ կրողները (անցնում է 13 ձայնով — 1 դէմ)։

7.- Դժբախտաբար նորէն նկատւում է, որ որոշ վայրերում նիւթական պարտականութիւնները կատարւած են անբաւարար կերպով (ընդունւում է միաձայնութեամբ)։

8.- Հարեւան ցեղերին պատկանող ուսանողների հետ ունեցած յարաբերութիւնները շարունակւում են՝ թէեւ որոշ տեղերում ոչ բաւարար (անցնում է միաձայնութեամբ)։

Կ'առաջարկէ

1.- Եղած դէպքում ուժեղացնել խմբական կազմը, չեղած դէպքում նորերը ստեղծել (ընդունւում է միաձայնութեամբ)։

2.- Ընկերների հակադիսցիպլինական ընթացքում՝ գործադրել Դաշնակցութեան կանոնադրութեան տրամադրութիւնը (ընդունւում է միաձայնութեամբ)։

3.- Ջանալ դասախօսութիւններին եւ վիճաբանութիւններին տալ այն ցանկալի ուղղութիւնն ու բովանդակութիւնը, որն աւելի է նպաստում ընկերների կուսակցական աշխարհահայեացքի ընդլայնման եւ կազմակերպման (ընդունւում է միաձայնութեամբ)։

4.- Երկար ժամանակի ընթացքում Միութեան մասնակցող այն ընկերները, որոնք չեն ընդունում կուսակցութեան ընդհանուր աշխարհահայեացքը եւ գործելակերպը չէզոքացնել՝ նախօրօք խորհրդակցելով Գործադիր Մարմնի հետ (ընդունւում է 13 ձայնով — 1 դէմ)։

5.- Մեր ընկերները ակտիւ կերպով պիտի չմասնակցին այն միութիւններին ու խմբակցութիւններին, որոնք իրանց ձգտումներով ու գործելակերպով հակառակ են մեր սկզբունքներին (թողնւում է վիճաբանութեան)։

6.- Հարեւան ցեղերի պատկանող ուսանողների հետ ունենալիք յարաբերութիւնների մասին լիչեցւում է III Համագումարից ընդունուած բանաձեւը (ընդունւում է միաձայնութեամբ)։

7.- Շարունակել Թուրքիայի, Ռուսաստանի եւ Ամերիկայի դաշնակցական ուսանողների հետ ունեցած յարաբերութիւնները եւ ջանալ աւելի սերտ դարձնել (ընդունւում է միաձայնութեամբ)։

8.- Կուսակցական մամուլին մասնակցութիւնը աւելի կանոնաւոր դարձնել (ընդունւում է միաձայնութեամբ)։

9.- Գործադիր Մարմինը դասախօսութիւնների ցանկ պատրաստի եւ առաջարկի խմբերին (ընդունւում է միաձայնութեամբ)։

10.- Պարտաւորիչ դարձնել ռուսական համալսարանի դաշնակցական ուսանողների հետ մտնել յարաբերութեան մէջ թէ Գործ. Մարմնին եւ թէ խմբակներին (ընդունւում է միաձայնութեամբ)։

Քուէարկութիւնից յետոյ դրւում է 5 կէտը վիճաբանութեան։

Ընկերները ընդունում են իրանց մասնակցութիւնը այնպիսի խմբակցութիւնների եւ ընկերութիւնների մէջ, որոնք իրանց գոյութեամբ եւ գործունէութեամբ վնասակար չեն Դաշնակցութեան սկզբունքներին եւ որ մտնելը այդպիսի ընկերութիւնների մէջ — ոչ վնաս կը բերի իրանց, այլ օգուտ հասարակական գործունէութեան տեսակէտից։

Իսկ այնպիսի խմբակցութիւնների մէջ, որոնք որ որոշ աշխարհահայեացք եւ որոշ միտում եւ քաղաքականութիւն ունեն կատարելիք, պահուած որոշ դիմակի տակ — նրանց մէջ մտնելը գտնում են աւելորդ եւ նոյնիսկ հրահանգւում է այդպիսիներին իրանց դիրքը որոշել դէպի կուսակցութիւնը։ Ժողովը երկարելով, ձգւում է միւս օրուան։

Ի դիմաց նախագահ Կիւլպէնկեանի
Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

Քարտուղար՝ ՄԻՇԷԼ

V ժողով
11 ապրիլ

Ժողովը բացւում է ընկ. Մ. Ղազարեանի նախագահութեամբ։ Ժամը 9½. ներկայ են պատգամաւորների մեծամասնութիւնը։

Կարդացւում է ընկ. Խուսուֆեանի նամակը, որով յայտնում էր, որ չէ կարող խորհրդակցական ձայնով ներկայ գտնուել համագումարի նիստերին հակառակ իր ցանկութեան, հիւանդ լինելու պատճառով։

Ժողովը անցնում է նախորդ օրուայ վիճաբանութեան համար ձգած կէտին եւ ի միջի այլոց «դաշնակցական» ընկերների մասնակցութիւնը կրօնական միութիւններին, խնդրի վիճաբանութեան։

Ժողովը երկար վիճաբանեց այս խնդրոյ առթիւ, քննելով նրան խղճի ազատութեան, բարոյական եւ կրօնական տեսակէտով եւ ձայների մեծամասնութեամբ ընդունեց հետեւեալ ռեզոլիւցիան։

«Ընդունելով հանդերձ խղճի ազատութիւնը՝ մեր ընկերները պէտք չէ մասնակցեն այն բոլոր խմբակցութիւններին եւ միութիւններին, որոնք քաղաքական չլինելով հանդերձ՝ իրանց ձգտումներով եւ գործունէութեամբ դէմ են Դաշնակցութեան սկզբունքներին» (*ստացաւ 9 ձայն*)։

(*Միւս բանաձեւը չկայ, որ ստացել է 7 ձայն*)։

Մանօթ.- Բանաձեւը դրուած էր Արշակի կողմից որ յետ է վերցուած իր կողմից։

Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

Երեկոյեան նիստ VI

Ժողովը բացւում է ընկ. Ղազարեանի նախագահութեամբ։

Ժողովը անցնում է օրակարգի VI-րդ կէտին։ «Ուսանող»ը Եւրոպայի եւ Թուրքիոյ դաշնակցական ուսանողների միացեալ օրկան դարձնելու հարցին։ Կարդացւում է խմբերի կողմից եկած բանաձեւերը՝ որոնցից մեծամասնութիւնը կողմնակից է միացման, ինչպէս է Լօզանի, Նանսիի եւ Ցիւրիխի, որոշ պայմաններով, իսկ Ժընեւը հակառակ էր միացման։ Նոյնը եւ Փարիզի ներկայացուցիչը, բայց համաձայն է մի քանի փոփոխութիւններ մտցնել «Ուսանող»ի պարունակութեան մէջ։ Համագումարն էլ սկզբունքով դէմ կանգնեց միացման։ Յետոյ սկսւում է «Ուսանող»ի կոչման եւ բովանդակութեան մասին վիճաբանութիւններ։ Վիճաբանութիւնները վերջանալով ընդունւում է հետեւեալ ռեզոլիւցիան.

1.- Մի հանդէսի գոյութեան շարունակութիւնը անհրաժեշտ է (միաձայնութեամբ ընդունւում է)։

2.- «Ուսանող»ի վերջին համարը գտնում ենք համեմատաբար խնամուած (ընդունւում է միաձայնութեամբ)։

3.- «Ուսանող»ը աւելի լաւ է տարածուած եւ բաժանորդագրութիւնը կատարուած համեմատաբար բաւարար (միաձայնութեամբ ընդունուած)։

4.- «Ուսանող»ը շարունակուի նախկին համագումարի ծրագրած ձեւով (ընդունւում է միաձայնութեամբ)։

5.- «Ուսանող»ում մասնակցելու հնարաւորութիւն տրուի ոչ ուսանող ընկերներին (ընդունւում է միաձայնութեամբ)։

6.- Հրահանգ տալ Գործ. Մարմնին գանձել բոլոր ապառիկները (ընդունւում է միաձայնութեամբ)։

7.- Որպէս միջոց ստեղծել նոր ու բարեխիղճ գործակատարներ (ընդունւում է մեծամասնութեան կողմից)։

8.- Միասին հրատարակելու հարցը ընդունել թէ ոչ (չի ընդունւում մեծամասնութեան կողմից)։

9.- «Ուսանող»ը պէտք է կրի Եւրոպայի Հ.Յ.Դ. Ու-

սանող. Միութեան հրատարակութեան մակդիրը (ընդունում է 8 ձայնով)։

10.- Հրատարակութեան բովանդակութիւնը տարեկան 400-600 էջ (ընդ[ունում է] միաձայնութեամբ), թողնելով Խմբագր. Մարմնին դարձնել նրան եռամսեայ, վեցամսեայ եւ միամեայ հանդէս։

11.- N° 7 պէտք է հրատարակուի նախկին Գործ. Մարմնի ծրագրով (Ընդ[ունում է] միաձ[այնութեամբ])։

12.- «Ուսանող»ի յետագայ համարը նուիրել առաջիկայ հայ տպագրութեան 400-ամեակի յոբելեանին, նուիրելով եւ մի յոդուած այդ առթիւ։

Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

Ի դիմաց քարտուղար Դիլանեանի՝
Քարտուղար՝ ՄԻՇԷԼ

12 IV 912

Ժողովը բացւում է ընկ. Դաւիթխանեանի նախագահութեամբ։

Միւնխէնի ընկերներ գրել են մի նամակ, յայտնելով մաղթանքներ IV համագումարին։

Ընթերցւում նախորդ նիստի ատենագրութիւնները։

Ընկ. Միհրան առաջարկում է արձանագրութիւններին տալ մի ամփոփ ուղղութիւն, առանց անունները առանձին-առանձին յիշելու։ Նոյնպէս կրճատել օրակարգը, եւ իւրաքանչիւր հարցի մի որոշեալ ժամանակ տալ։

Մեծամասնութեամբ ընդդէմ մէկի, օրակարգից դուրս է ձգւում «ինքնապաշտպանութեան» ռեֆերատը։ Միաձայն ընդունւում է դուրս ձգել նաեւ «Ռուսական շարժումները» ռեֆերատը։

Իւրաքանչիւր ռեֆերատի տրւում է 2 ժամ ժամանակ։

*Ընկ. Սէրենկիւլեան կարդաց քննիչ յանձնախմբի կողմից Գործ. Մարմնոյ ներկայացուած հաշիւները, որոնք պահուած են եղել շատ լաւ եւ շատ մաքուր։ Ընկ. Կիւլպէնկեան գտնում է որ, քննիչ յանձնախումբը պէտք էր միեւնոյն ժամանակ տար Գործ. Մարմնոյ ընդհ. գործունէութեան հաշիւը**։

Ընկ. Արշակ առաջարկում է ճշդել, թէ ի՞նչ պարագաներում մեր միութիւնը կարող է, շնորհաւորական կամ ցաւակցական հեռագիր եւ լն, ուղարկել։

Ճի դէմ 7 ձայնով անցնում է հետեւեալ բանաձեւը.

«Միութիւնը պարտաւոր է իր վերաբերումը ունենալ հանդէպ այս կամ այն կուսակցական, հասարակական, գրական, կրթական հիմնարկութիւնների յոբելեաններին, կամ այլ հանդէսների վերաբերմամբ։ Այս խնդիրը բաժանելու է երկու մասի. նախ կուսակցական յեղափոխական-ընկերվարական բնոյթ կրողներին, երկրորդ կուլտուրական, գրական եւ հասարակական միայն այն յոբելիեաններին (եւայլն) որոնք դեմոկրատիկ բնոյթ են ունեցել իրենց գոյութեամբ»։

Օրակարգի 5րդ հարց. «Եւրոպայի Դաշն. Ուսանողների գործօն մասնակցութիւնը տեղական սոցիալիստական կազմակերպութիւնների մէջ»։

Միաձայն ընդունւում է հետեւեալ բանաձեւը.

«Ցանկալի է որ բոլոր վայրերի խմբերը եւ անհատ ընկերները բարեկամական եւ համերաշխութեան կապ պահեն սոցիալիստական եւ յեղափոխական խմբակցութիւնների եւ կուսակցութիւնների հետ, աշխատելով որ նրանց պայմաններին ծանօթանալ, փորձառութիւն ձեռք բերելու, մեր երկրում նոյնանման գործունէութիւն ստեղծելու համար։ Գործնական մասնակցութիւնը, տեղական, պետական, քաղաքական պայմաններին համեմատ, թողնել տեղական խմբերի որոշման»։

Միաձայն ընդունւում է կոմիսիայի բերած բանաձեւը Գործ. Մարմնոյ դրամական հաշիւների [մասին]։

«Ցանձնաժողովը գտնելով, որ Գործ. Խմբագրական Մարմնի հաշիւները պահուած են մաքուր եւ ճիշդ կերպով, յենուած համապատասխան փաստաթղթերին վրայ, իր գոհունակութիւնն է յայտնում յիշեալ մարմնին»։

Օրակարգի 6րդ հարց. «Հասարակագիտական, գրականութեան եւ Դաշն.եան պատմութեան պակասի պահանջը»։

Միաձայնութեամբ ընդունւում է հետեւեալ բանաձեւը.

«Շեշտելով հասարակագիտական գրականութեան անհրաժեշտութիւնը, կ'առաջարկուի նպաստել կուսակցութեան նոյնանման հրատարակչական մարմիններին, ինքնուրոյն, թարգմանական աշխատութիւններով. եւ մանաւանդ թարգմանական եւ ինքնուրոյն հեղինակութիւններ հրատարակելու եւ տարածելու գործը ղեկավարել Գործ. Մարմնոյ միջոցաւ։ Կուսակցութեան պատմութեան վերաբերմամբ, վերջին Ընդհ. ժողովի որոշումը գտնելով շատ անհրաժեշտ, առաջարկել որ այդ որոշումը իրագործուի մօտ ապագայում»։

Օրակարգի 7րդ հարց. «Աշակ. միութիւնները պէ՞տք է լինին կուսակցական»։

Կոմիտէի կարծիքն է առհասարակ որ աշ. միութ.ները կուսակցական չլինին։ Իսկ ընկերներից ոմանք գտնում են որ կուսակցութիւնը մի դպրոց է, որտեղ պէտք

*) *4ի դէմ 7 ձայնով ընդունւում է, որ՝ քննիչ յանձնախմբի բերած Գործ. Մարմնոյ դրամական հաշիւների համար մի առանձին ռեզոլիւցիա հանուի։*

է դաստիարակուի ամէն անհատ եւ որովհետեւ մեր ինտելիգենցիայի մեծագոյն մասը կազմում է աշակերտութիւնը, պէտք է նրանց անպայման կուսակցութեան մէջ առնել։

Ցիւրիխի խումբը առաջարկում է, բարձր դասարանի աշակերտներից միայն կազմակերպել։

4ի դէմ 8 ձայնով ընդունւում է հետեւեալ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով աշ. միութիւնների անկուսակց. եւ կուսակցական լինելու խնդրի խիստ կարեւոր նշանակութիւնը գործնական տեսակէտից եւ ոչ պարզաբանուած վիճակը տեսական տեսակէտից, Համագումարը առաջարկում է ընկերներին, արծարծել այս խնդիրը կուսակցական մամուլի մէջ, առաջիկայ համագումարին թողլով նրա վերջնական որոշումը»։

Ի դիմաց նախագահ Դաւիթխանեանի
Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

Քարտուղար՝
ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

12/IV/912
(*Կէսօրից յետոյ*)

ՌԵՖԵՐԱՏՆԵՐ

Ա.– Կուսակցական շերտաւորումը Թուրքիոյ մէջ (համապետական տեսակէտից) — *Ընկ. Արամ։*

Նախասահմանադրական շրջան։ Մի հօտ, մի հովիւ երկրում։

Արտասահմանեան կուսակցութիւններ. Իթթիհատ եւ Սապահեդտին զանազանութիւնները քաղաքական վարչական հարցերի շուրջը։

Յեղափոխութենէն վերջ։ Պարլամենտ. խմբակցութիւններ, բաժանումներ ըստ ազգութեան. Թուրք 120, արաբ 60, այբանացի 25, յոյն 23, քիւրտ 20, հայ 11, պուլկար 4, հրեայ 4, սերպ 4, ուլահ 1։

Կուսակցութիւն Ա) Իթթիհատ — Ահրար, Բ) Իթթիհատ — Մուզահէրէթ, Գ) Իթթ. ժողովրդական եւ չափաւոր ազատական, Դ) Իթթ. — Իթիլաֆ։

Թուրքեր — Աշրաֆ-վաշխառու դրամատէր, Սոֆթաներ, պաշտօնէութիւն, ինտելիգենցիա, արհեստաւորներ, մանր բուրժուազի, բանուորներ, գիւղացիութիւն։

Առաջին խաւերի ներկայացուցիչը Իթիլաֆ, երկրորդի՝ Իթթիհատ։

Արաբ — Ֆէօդալներ, գիւղացիութիւն, մանր առեւտրականներ, ինտելիգենցիա։ Կուսակցութիւն չունի յատուկ։

Այբան — Ֆէօդալներ, գիւղացիութիւն եւ ինտելիգենցիա, արհեստաւորներ (պաղպաղակ, լիմոնաթ, եւայլն)։

Քիւրտ — Ֆէօդալ, գիւղացիութիւն, ինտելիգենցիա, կուսակցութիւն չունին, հոսանքներ ազգային ուղղութեամբ։

Յոյներ — Կղերականներ, բուրժուազի, ինտելիգենցիա, բանուորութիւն, գիւղացիութիւն, Պոլսոյ միութիւններ։

Պուլկար — սերպ, կոզակ-վաշխառուներ, բուրժուազի, ինտելիգենցիա, բանուորութիւն եւ գիւղացիութիւն։ Կուսակցութիւններ, «Սելանիկի բանուորական Ֆեդերացիան, Սանդանսկու կլուբիստները։

Հրէաներ — Բուրժուազի, բանուորութիւն։ Կուսակցութիւններ, Սիոնիստ (Jeune Turque), *սոցիալիստական խմբակցութիւններ։*

Հայեր — Համեմատաբար ամենազարգացածը, հասարակական հարցերի տեսակէտով։

Պէտք լինելով ամէն ռեֆերատից յետոյ մի ռեզոլիւցիա, Արամի բանաձեւը միաձայն ընդունւում է.

«Լսելով դասախօսութիւնը «Շերտաւորումներ Թուրքիոյ ժողովուրդների մէջ»։

Նկատելով այն խոշոր շարժումները որ սկսել են այլեւայլ ժողովուրդների միջեւ դեմոկրատիկ կամ ընկերվարական դրօշով։ Ողջունելով այդ շարժումները, ցանկալի ենք գտնում որ Դաշնակցութիւնը, համերաշխի ընկերվարական կամ դեմոկրատիկ խմբակցութիւնների հետ, եւ այն տեղերը, ուր չկան այդպիսիները, աշխատի ստեղծել»։

Բ.– Դասակարգային պայքարը թրքահայ կեանքին մէջ — *Ընկեր Միհրան Թերլեմեզեան։ Միաձայն ընդունւում է ընկ. Միհրանի բանաձեւը.—*

«Չնայած որ Թուրքիայի ներկայ պայմանները նորէն հարկադրում են երբեմն համազգային պահանջներ հանդէպ տիրապետող տարրի եւ պետութեան, բայց նը-կատի ունենալով մեր ազգային շրջանի մէջ քաղաքական, տնտեսական ու կուլտուրական շահերի հակադրութիւնը եւ ներքին պայքարը ազգային սահմ[անադրական] մարմինների մէջ,

«Գտնում ենք որ երբեք չպիտի ձեռնթափ լինել դասակարգային պայքարից, Ազգ. սահմ. մարմինների ու ազգ. կուլտուրական գործի շրջանակում։

«Սկսուած պայքարը պիտի մղել ի հարկէ պայմանների եւ հայ ժողովրդի մեծամասնութիւնը կազմող աշխատաւորութեան ընդհ. պետական, քաղաքական, տնտեսական եւ կուլտ. շահերի պահանջումովը, հարկեղած գործակցութեան դիմելով հայկական եւ այլ կուսակցութիւնների հետ։

1. Տնտեսական գունաւորումը հայ ժողովրդի զանազան շերտերի։

ա. Վաճառականութիւն.—
Պոլիս եւ նահանգային կեդրոններ։

բ. Մանր-առեւտր. եւ արհեստ. քաղաքներում։

գ. Գիւղացիութիւն։

Մանր-առեւտր., արհեստ. ու գիւղիութիւնը կազմում են հայ ժողովրդի 80-95%ը։

Թուրքիոյ քաղաքական պայմանները բռնակալութեան օրերին եւ հայ ժողովուրդի ներքին ազգ. կեանքը։

Թուրքահայ սահմ[անադրութիւն]ը հետեւանք ոչ թէ համազգային պայքարի ընդդէմ պետութեան, այլ հետեւանք աղայականութեան ու ամիրայութեան դէմ ազատամիտ մտաւորականութեան՝ առաջնորդութեամբ գաւառի ու արհեստ[աւորներուն] մղած կռուի։ Համազգային շահերն ու գոյութեան պահպանումը հարկադրել են Դաշնակցութեան, թողնել ներքին հակապայքարը եւ թէեւ մինակ թողնուելով վերի դասերէն, եւ այս հակառակ նրանց ճիգերի, կատարել ամենածանր գործը։

Պայքարը թրքահայ կեանքին մէջ վերջին երեսնամեակին, կեդրոնացել է այս եւ այն մեծ աղայի ու վաճառականի շուրջ, եւ ժողովուրդը քաշուել է մէկի կամ միւսի ետեւից։ Թուրքիոյ նոր պայմաններն ու նրանց տուած հնարաւորութիւնն ազգ. մարմինների եւ կեանքի մէջ, [կը թոյլատրեն] պայքարելու ըստ դասակարգերի։

Փորձեր Դաշնակցութեան դերը վերջացնելու կամ վերջացնել ցոյց տալու։

Քողարկուած պայքարի բացատրուելուն։

Պայքարը կեանքի մէջ եւ ազգային ժողովների ու մարմինների մէջ։ Ազգային Կեդր. ժողովը եւ ուժերի դասաւորութիւնը այնտեղ։

— Մեր գործակցութիւնը ազատական-ժողովրդական տարրերին հետ, ընդդէմ պահպանողական-աղայականների։

— Ուժգին մասնակցութիւն գաւառների մարմիններին ու կուլտ. գործին։

— Հարկադրուած պարագայում, համազգային պահանջներով հրապարակ գալով հանդերձ, մղել դասակարգային, ազգային քաղաքականութիւն՝ պետութեան եւ ազգային ներքին կեանքում։

Գ.— «Դաշնակցութեան բռնելիք դիրքը հարեւան ցեղերի մէջ» — *Ընկ. Մաղազաճեան։*

Ընկ. Սարգիս.— Գտնում է դասախօսութիւնը շատ լաւ կազմուած, միայն դասախօսը չխօսեց այն հարցի մասին, որ իր վերնագիրը ցոյց է տալիս։

Ի դիմաց Նախագահ Դաւիթխանեանի՝
Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

IX *ժողով*
13/IV/912

Ժողովը բացւում է ժամը 9½-ին ընկ. Դաւիթխանեանի նախագահութեամբ։

Ներկայ են պատգամաւորների մեծամասնութիւնը։ Կարդացւում է նախորդ նիստերի արձանագրութիւնները եւ մի քանի փոփոխութիւններ մտցնելով, հաստատւում է ժողովի կողմից։

Ժողովը վերսկսում է նախորդ նիստին տրուած ռեֆերատի մասին եղած վիճաբանութեան.— «Դաշնակցութեան բռնելիք դիրքը հանդէպ հարեւան ազգերի»։

Ժողովս լսելով վիճաբանութիւնները, որը դառնում էր հարցի թէ բարոյական եւ թէ քաղաքական տեսակէտից՝ ընդունեց հետեւեալ ռեզոլիւցիան.

Նկատի առնելով հետեւեալ իրողութիւնը՝

Որ մենք թէ Թուրքիայում, թէ Կովկասում եւ թէ Պարսկաստանում ապրում ենք խառն այլ բազմաթիւ ազգերի եւ ցեղերի հետ,

Որ ցեղերի կուլտուրական ու տնտեսական վիճակը եւ քաղաքական հասկացողութեան աստիճանի տարբերութիւնները ու զանազանութիւնները՝ իրողութիւններ են,

Որ քաղաքական, կուլտուրական ու տնտեսական դրութեան յառաջդիմութիւնը միեւնոյն միջավայրում տեղի ունենալու է ընդհանուր կերպով եւ քիչ թէ շատ ներդաշնակօրէն,

Որ ուրեմն թէ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը եւ թէ հայ աշխատաւորութեան տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վիճակի զարգացումը պայմանաւորուած է շրջապատող ազգերի ու ցեղերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական աստիճանով՝

Գտնում ենք՝

Որ պիտի արձագանք լինել նաեւ մեզ շրջապատող ցեղերի արդարացի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական պահանջներին ու կարիքներին, Որ պիտի օր աւուր ուժեղացնել մեր լուսաբանական ու պրոպագանդական գործունէութիւնն այդ ցեղերի շրջաններում,

Որ պիտի ստեղծել համագործակցութիւն տեղային, ընդհ. տնտեսական ու կուլտուրական պահանջների շուրջը,

Որ պիտի ուժեղացնել երկրի ամբողջութեան ու այդ բանի համար սահմանադրութեան եւ ազատ կարգերի ու համերաշխութեան անհրաժեշտութեան գաղափարը,

Միջցեղային յարաբերութիւնների բնաւորութեան ու ուղղութեան մասին ի նկատի ունենալ Հ. Ց. Դաշն. Դ., Ե. եւ Զ. Ընդհ. Ժողովների եզրակացութիւնները։ Պիտի հասկանալի լինի որ այս գործակցութիւնը նոյն ժողովրդների մէջ պիտի ստեղծուի» (ընդունւում է միաձայն)։

Ժողովը անցնում է հաշուեքննիչ անդամների ներկայացուցած տարեկան պիւտճէի մասին վիճաբանութեան եւ ընդունւում է հետեւեալ պիւտճէն.

Բիւտճէն
Գործ. Խմբագրական Մարմնի

ՄՈՒՏՔ

1) *Կանխիկ դրամ*	275 ֆր.
2) *Նուէր Եւր. Հայ Ուսանող. Միութիւնից*	100 ֆր.
3) *Անդամավճարներից մուտք.—*	

Մուտք	*Ելք* (տեղական ծախս)		
300	150 ֆր.	*Փարիզ*	150 ֆր.
200	50	*Ժընեւ*	150 ֆր.
120	40	*Նանսի*	80
50	20	*Լօզան*	30
50	20	*Լայպցիկ*	30
100	30	*Ցիւրիխ*	70
40	10	*Ժամպլու*	30
60	20	*Բերլին*	40
20	5	*Բերն*	15
25	5	*Միւնխէն*	20

4) *Ստանալիքներ խմբերից եւ «Ուսանող»ի ապառիկներից*	775
5) N 7-ի «*Ուսանող*»*ից*	500
Ընդհ. գումար	2265 ֆր.

ԵԼՔ

1. *Ուսանողի ծախս (տպագր.)*	1200 ֆր.
2. *Ուսանողի փոխադրութիւն*	200
3. *Դիւանական ծախս*	100
4. *Կոնգրէսի ծախս*	100
5. *Կուսակցական տուրք*	00
6. *Այլ եւ այլ*	50
Ընդհ. գումար	1750 ֆր.

Ժողովս հաստատելով այս բիւտջէն ընդունում է հետեւեալ ռեզոլիւցիան նախորդ Գործ. Մարմնի գործունէութեան թէ դրամական եւ խմբական հաշիւների վերաբերեալ — ներկայացուած յանձնախմբի կողմից։

«Յանձնախումբը մօտէն ծանօթանալով Գործ. խմբագրական մարմնի գործունէութեան, գտաւ.

Որ խմբերի ու անհատ ընկերների հետ թղթակցական յարաբերութիւնները պահուած են գոհացուցիչ չափով,

Որ Ռուսիայի, Թուրքիայի եւ Ամերիկայի դաշն. ուսանող. միութիւնների հետ աշխատած է պահել յարաբերութիւն, բայց իր կամքէն անկախ պատճառներով յաջողած է միայն Թուրքիոյ Դաշն. Միութեան հետ։

Որ ջանացել է զանազան վայրերու մէջ խմբերը ուժեղացնել եւ մի քանի վայրերու մէջ նորերը ստեղծել։

Այսպիսով անոր խմբագրական, դրամական, յարաբերական եւ կազմակերպական վարչական գործերը եղած են գոհացուցիչ։

Իրա կամքէն անկախ պատճառներով մի քանի որոշումներու գործադրութիւնը չէ եղած, ինչպէս շրջիկ պրոպագանդիստներու ուղարկելը խմբերի եւ երկրի համար, որի գործադրութիւնը ցանկալի է իրագործել յառաջիկայ շրջանի համար» (ընդունւում է միաձայնութեամբ)։

Երեկոյեան նիստ X

Կիւլպէնկեանի նախագահութեամբ։

Ժողովը անցնում է Գործ.-Խմբագրական Մարմնի ընտրութեան։ Այս խնդրի շուրջը երկար վիճաբանութիւններ դուրս եկաւ, որովհետեւ առարկողներ կային — որ պէտք է զանազան քաղաքներից ընտրել — իսկ ոմանք դէմ էին — եւ վերջապէս որոշուեց ընտրել 3-ը Ժընեւից, իսկ 2-ը այլ տեղերից։ Ժընեւի մասին եղած որոշումը կապ ունի զանազան յարմարութիւններ ի նկատի առնուելուն։

Ներկայացուեց ցանկը կանդիդատների[136] *— որոնցից ընտրուեցին հետեւեալները* (ձայնի իրաւունքով ժողովին մասնակցում էին 15 հոգի)։

Ղազարեան (14 ձայն), *Բարսեղեան Լ.* (11 ձայն), *Տէր-Ստեփանեան Եր.* (9 ձայն) *Ժընեւից։ Թերլեմեզեան* (12 ձայնով), *Դաւիթխանեան* (14 ձայնով) *Լայպցիկից։*

Որով Գործ. Խմբագրական Մարմնի քանակը լրացած համարուեց. յետոյ անցան փոխանդամի ընտրութեան. ընտրուեցան — Եսայեան (13 ձայն) *Փարիզից եւ Շաւարշեան* (14 ձայնով) *Լայպցիկից։*

Ընտրութեանց շուրջը ստացուեց երկու բանաձեւեր — ներկայացուած Փարիզի պատգամաւորների կողմից։

I — *Համագումարը անկեղծօրէն ցանկանալով հանդերձ որ Փարիզ կենտրոնացնէ իւր Գործ. Մարմնի վարչութիւնը, բայց ի տես խմբի անդամներուն ոմանց յառաջիկային մեկնումը եւ ոմանց ալ այդպիսի պաշտօն մը ստանձնելու չկարենալու որոշ պատճառները, կը ցաւի այս ցանկութեան գոհացում չտալուն»* (*Կիւլպէնկեանի բանաձեւը ընդունուեց միաձայնութեամբ*)։

II — *Տրդատի բանաձեւը.*

«Ես ձեռնպահ եմ Գործադիր Մարմնոյ ընտրութեան մէջ, ի նկատի ունենալով, որ հակառակ Փարիզի Թուա-

136.- Թեկնածուների։

կան առաւելութեան, որով գրեթէ համագումարը ներկայացնողներուն կէսն էր, ժողովը նրան վճռական ձայն զլացաւ տալ Գործ. Մարմնոյ մէջ եւ տուաւ մի ձայն խորհրդակցական, միմիայն ձեւականութեան համար. (ստացաւ միայն իր ձայնը ժողովի կողմից)։

Յետոյ խօսք տրուեց ընկ. Վարանդեանին, որը խօսեց «Կուսակցական կեանքը երեք երկրներում»։

Ընկ. Վարանդեանը ընդհանուր գծերով նկարագրեց կուսակցական կեանքը զանազան վայրերում, համեմատեց ուրիշ կուսակցութիւնների հետ, գտաւ գոհացուցիչ դաշնակցական կեանքը. համեմատաբար մանրամասն կանգ առաւ բացառիկ դէպքերի առաջ, ինչպիսին է ռուսական ռէակցիան եւ կովկասահայ դաշն. բանտարկեալները, Պարսկաստանի շարժումները եւ մեր կատարած գործը, Եփրեմի գործունէութիւնը եւ Դաշնակցութեան յարաբերութիւնները Իթթիհատի հետ Թուրքիայում։ Ժողովը այս առթիւ ընդունեց հետեւեալ ռեզոլիւցիան։

«Լսելով ընկ. Վարանդեանի դասախօսութիւնը, ծանօթանալով կուսակցական կեանքին երեք վայրերի մէջ ունեցած վերջին գործունէութեանը, եւ գտնելով այն մխիթարական շարժումները, որ սկսում են մեր երեք վայրերում, յայտնում ենք մեր խնդակցութիւնները եւ ուղարկում ենք մեր ողջոյնները երկրում գործող ընկերներին, իրենց սկսած ստեղծագործող աշխատանքի համար։

Սրան կից ուղարկում ենք մեր յարգանքի ողջոյնները ռուսական «արդարութեան» զոհ մեր ընկերներին, եւ քաջալերութիւն կռուի դաշտում եղածներին»։

Ի դիմաց Նախագահ Դաւիթխանեանի
Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ
Քարտուղար՝ ՄԻՇԷԼ

14/IV/912

Ժողովը սկսեց ընկ. Ղազարեանի նախագահութեամբ։

Մեծամասնութեամբ ընդունւում է համագումարը վերջացնել կէսօրին։ Ժամանակն ուշ լինելուն, մի քանի ռեֆերատներ թողնւում է։

Զանազան առաջարկներ.— Ընկ. Սարգիս առաջարկում է՝ «Որ Գործ. Մարմնոյ անդամները պատգամաւոր ընտրելու իրաւունք ունենան։ Այս առաջարկը Գործ. Մարմնոյ նկատողութեան կը յանձնուի, խմբերին մէջ արծարծելու եւ յաջորդ համագումարին որոշելու համար։

Ընկ. Սարգիս առաջարկում է «Դրօշակ»ի խմբագրութեան շնորհակալութիւն յայտնել մեր «Ուս[անող»ին] իր ցոյց տուած աջակցութեան համար։

Ընկ. Բասմաճեան իր պատրաստած Հայաստանի քարտէսին համար համագումարին մի նամակ գրած էր։ Ի՞նչ պատասխան տալ։

Ընկ. Ռուբէն — Առաջարկել մեր խմբերին որ այդ գործը ի գլուխ հանեն, օժանդակութեամբ Հայ Ուս. Միութիւններին։ Գործ. Մարմինը իր վրայ կը վերցնէ այդ գործի ղեկավարութիւնը։

Ընկ. Բարսեղ[եան] — «Ծանկութիւն յայտնել որ առաջիկայ կոնգրէսն Փարիզ գումարուի, եթէ դրամական պայմանները թոյլ կը տան։ Ընդունւում է։

Ընկ. Հայկ — Հրահանգել որ ամէն խումբ ստանայ Դրօշակը։

Ընկ Սարգիս — Փորթուգալեանի մասին նախկին համագումարի որոշումը գործադրել տալ, մասնակցել յոբելեանին։

Ընկ. Հայկ — Շրջանային ժողովներ գումարել յարմար վայրերում, եթէ հնարաւոր է այս տարի։

Վերջին խօսքեր։

Ընկ. Միհրան — Դուք անձամբ գիտէք ընտրուած ընկերների ուժերը։ Պէտք է խումբերը իրանց գործունէութեամբ հնարաւորութիւն տան Գործ. Մարմնին գործ կատարելու։

Ա. «Ուսանող»ի գործ։

Բ. Այլ վայրերի հետ յարաբերութեան խնդիր։

Գ. Խմբի ներքին կեանք, նիւթական եւ վարչական։

Աշխատեցէք այնպէս անել որ մենք պարզերես ներկայանանք առաջիկայ կոնգրէսին։

Ընկ. Ղազարեան — Կոնգրէսի որոշումները թող գործի անցնեն։

Ընկ. Վարանդեան — Բաղձանք որ ամէնքդ ունենաք այն գիտակցութիւնը, որ որոշումները մեռած տառ չմնան, որ դուք կարողանաք վաղը օգնել մեր գործին։ Մեր արածը շատ քիչ է. շատ գործեր կան անելու, եւ ներկայացնելու մեր ժողովրդին քաղաքակրթուած ժողովրդների շարքում։

Ժողովը փակւում է «Կեցցէ դաշնակցական ուսանողութիւնը» արտայայտութեամբ եւ լաւ տրամադրութեան տակ։

Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ
Քարտուղար՝ Ե. ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Փաստ. 1472-122

Զ 13.– ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՄԲԵՐԻՆ

Ընկերներ!

Միութեան Դ-րդ Համագումարով բոլորեցինք մի տարի եւս, որի գնահատութիւնն ու քննադատութիւնը կազմեց Դ-րդ Համագումարի զբաղմունքների մի մասը: Թէ ինչ չափով արդիւնաւէտ է եղել անցեալ տարին Միութեան նպատակների տեսակէտից, այդ պիտի տեսնեն ընկերները այն տեղեկագրից, որ նորընտիր գործադիր-խմբագրական մարմինը պիտի զետեղէ «Ուսանող»ի 7-րդ թուի մէջ: Այդ տեղեկագիրը պիտի պարունակէ ոչ միայն խմբերի եւ Միութեան մի տարուայ գործունէութիւնը, այլեւ Դ-րդ Համագումարի զբաղումների ու որոշումների էական մասերը:

Ներկայիս մենք գալիս ենք մի քանի խօսք ասելու ընկերներին:

Ի հարկէ մեր գործերն իդէալական ու կատարեալ լինելուց շա՜տ հեռու են, բայց այն իրողութիւնը, որ կուսակցական գիտակցութիւնը չի բացակայում խմբերի միջից, մի դրական գրաւական է Միութեան յառաջադիմելուն, յենուած ընկերների ունեցած բարոյական ու նիւթական կարողութիւնների վրայ, մեզ շրջապատող պայմանների թոյլտուութեան չափով:

Համագումարը յենուած ընկերների պատրաստակամութեան ու համագործակցութեան վրայ, տուեց իր որոշումները Միութեան ու խմբերի առաջիկայ անելիքների մասին, իսկ անելիքներ որոնելու հոգսից զուրկ ենք: Կուսակցութեան կեանքն ու գործունէութիւնը, նրա գործելավայրերի հրամայական կարիքներն ու պահանջները մեզ ցուցադրում են հարցերի ու խնդիրների մի անսահման առատութիւն, որոնցով զբաղուելն ու որոնց լուծման նպաստելը մեր կուսակցական պարտականութիւնը պիտի լինի:

Կուսակցական աշխարհահայեացքի հետ կապուած տեսական հարցերը եւ կուսակցական գործնական կեանքի երեւոյթները ամենաէական մասը պիտի կազմեն մեր խմբական դասախօսութիւնների, զրոյցների եւ «Ուսանող»ի: Մեր կուսակցական-ընկերվարական ուսանողութիւն լինելու հանգամանքը մեզ պիտի թելադրէ գնահատել ու քննադատել եւրոպական ընկերվարական աշխատաւորութեան ընթացիկ պայքարն ու իդէալները, ըմբռնել դասակարգային պայքարի էութիւնն ու երեւոյթները մեր ուսանողական միջավայրերի մէջ:

Արեւելքի նորածին քաղաքական կազմը, ցարիզմի սպանիչ յարատեւութիւնը հրամայականօրէն մեզ թելադրում են յամառօրէն շարունակել համերաշխութեան ու համագործակցութեան փորձերը այն բոլոր տարրերի հետ, որոնք շահագրգռուած են Թուրքիոյ եւ Պարսկաստանի սահմանադրութիւններով ու հիւսիսի բռնակալութեան ջախջախումով:

Ընկերներ! Արձագանք տանք այս բոլոր ու այլ անթիւ հրամայական պահանջներին ու կարիքներին: Նորընտիր Գործադիր-Խմբագրական Մարմինը ողջունում է ձեզ Միութեան գործունէութեան մի նոր տարուայ մէջ թեւակոխման առթիւ եւ ցանկանում յաջողութիւն ձեր ներքին խմբական պարապմունքների ու գործերի մէջ ու առատ աջակցութիւն Գործ.-Խմբագրական Մարմնին, իր վրայ դրուած պարտականութիւնների իրագործման համար: Ընկերների պատրաստակամ աջակցութեան եւ հաւաքական գործունէութեան հանդէպ ունեցած վստահութիւնը մեզ քաջալերեց ստանձնել այս պաշտօնը, որը կ'արդիւնաւորուի նոյն ընկերների աջակցութեամբ եւ մեր տրամադրելիք ժամանակի ու մեր ունեցած ուժերի գործադրութեամբ:

Ընկերներ! Համախմբուելով այն դրօշակի շուրջը, որի անքիւ կողմնակիցները իրենց դերի գիտակցութեամբ ու կատարումով բարձր պահած կը լինին այն՝ ուղարկենք մեր ընկերական յարգանքներն ու քաջալերանքի ողջոյնները ցարական «արդարադատութեանն» արժանացած ու արեւելքի քառսի մէջ զէնքով, գրչով ու խօսքով կռուող մեր ընկերներին ու ամբողջ կուսակցութեանը եւ կատարենք գործի մեզ ընկած նուազ ու թերեւս «ամենահեշտ» բաժինը:

Գործ.-Խմբագրական Մարմինը հրաւիրում է ձեզ կանոնաւորել խմբական պարապմունքները, «Ուսանող»ին նպաստել յօդուածներով, կանոնաւորապէս գանձել կանոնագրի սահմանած ամսավճարները, պահպանել կանոնաւոր յարաբերութիւն մեզ հետ, մասնակցել կուսակցական մամուլին, ստեղծել յարաբերութիւն հայ ժողովրդի դրացի ազգերին պատկանող ուսանողութեան հետ, մեզ աջակցել Ռուսահայ Դաշ. ուսանողութեան հետ յարաբերելու գործում, տալով հաստէներ եւ տեղեկութիւններ:

Ընկերներ, առանց վարանքի ձեռնարկենք գործի եւ վստահ լինինք, որ դրանով կատարած կը լինինք կուսակցական ուսանողութեան ընկած դերի գոնէ մի մասը:

Հ.Յ.Դ. Ե[ՒՐՈՊԱՅԻ] Ո[ՒՍԱՆՈՂՆԵՐԻ] ՍԼԻՈՒԹԵԱՆ]
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

1 մայիս 1912

Հ. Յ. Դ. Ս. Ս. Մ. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

[Վաւերական ստորագրութիւններ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ, Լ. ԲԱՐՍԵՂԵԱՆ, Ե. ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ]

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ
UNION
des ÉTUDIANTS ARMÉNIENS
DASCHNAKTZAKANS
DE L'EUROPE
1908
Ս. ՍՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Փաստ. 1472-180

Ջ 14.– Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ, Ժընեւ

Փարիզ, 26 նոյ. 1912

Ցարգելի ընկերներ,

Մեր ընկեր Վարանդեանը ինծի հաղորդեց Ժընեւէն ստացած իր մէկ նամակի մասին ըստ որում հարց էք տուեր իրեն Փարիզի խումբի վերաբերմամբ։

Փարիզի խումբը վերակազմուած է այս տարի արդէն մօտ ամիսէ մը ի վեր։ Այժմ ունինք 29 անդամներ, որոնց մէկ մասը ոչ-ուսանող։ Այս վերջինները ուզեցին բաժնուիլ եւ առանձին խումբ կազմել, բայց համաձայնեցանք դեռ որոշ ժամանակ ալ միասին գործել, ինչպէս եղեր է անցեալին մէջ, մինչեւ որ մեր անդամներու թիւերը շատանան եւ հնարաւոր ըլլայ այդ բաժանումը կատարել առանց գործին վնասելու։

Ցոյս ունինք որ շատ շուտ կ'ունենանք արդէն 30-35 անդամ։

Աշխատութիւններ կ'երթան կանոնաւոր եւ տրամադրութիւնները լաւ են։

Վարչութեան անդամներն են.—
Բ. Շահպազ — ներկայացուցիչ
Տ. Եսայեան — Քարտուղար
Ռ. Շիշմանեան — Գանձապահ
Գ. Տէր-Միքայէլեան
Ե. Առաքելեան

Անդամավճարներու հարցի մասին կը գրեմ յաջորդիւ։

Մեր ընկերները ցանկութիւնը ունին իմանալու այն մասին թէ ուրիշ քաղաքներու մէջ դաշն. ուսանողական խումբերը ինչ վիճակի մէջ են եւ տրամադրութիւնը ինչպէս է։ Այդ պիտի ծառայէր ծանօթանալու նոյն իտէալին ձգտող միւս կազմերուն։

Բարի եղէք գրել այսուհետեւ հետեւեալ հասցէով։

Ընկերական բարեւներով
ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

P. Schahbaz
12, rue Monge, 12, Paris (Ve)

Փաստ. 1472-187

Ջ 15.– ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ. ՄԱՐՄՆԻՆ, Ժընեւ

Փարիզ, 18-12-1912

Ընկերներ,

Ստացանք Դեկտ. 10ի Ձեր նամակը։ Շնորհակալութիւն բովանդակութեանը համար։

Ընկեր Եսայեան, վաքանսի ամիսներու ժամանակաւոր ներկայացուցիչը Փարիզի խումբին, կը յայտնէ թէ առանձին նամակով պատասխանած է նոր խումբին կազմութենէն առաջ ձեր գրած նամակներուն։

Համաձայն Միութեան որոշման վաղն իսկ ղրկելու ենք «Դրօշակ»ին 5 ֆրանք տարեկան մի բաժանորդագին։

Արդէն ունեցանք նոր անդամներ. այժմ ունինք 40է աւելի ընկերներ ուսանող եւ ոչ-ուսանող։ Որոշեր ենք ունենալ ամսական 3 ժողով ամէն ամսի 1ին, 10ին եւ 20ին։ Ցարդ ունեցանք երեք դասախօսութիւն. ընկեր Ահարոնեան խօսեցաւ առաջինը հայութեան քաղ. դրութեան մասին, ընկեր Վարանդեան շարունակեց նիւթը երկրորդ դասախօսութեան մը մէջ։ Վերջին անգամ ալ ստորագրեալ ընկերը խօսեցաւ Դ[աշնակցութ]եան անցեալի ու կազմ. կանոններու մասին։

Ընդհանրապէս թէ դասախօսական եւ թէ խմբական մեր ժողովները ցարդ անցած են հետաքրքիր բոլորի համար։

Կը խնդրենք որ շուտով մեզ ուղարկէք 10ական օրինակ Հ.Յ.Դ. Ծրագիր եւ կազմ[ակերպական] կանոններ ինչպէս նաեւ մեր միութեան կանոնագրէն։

Այս բոլորէն այստեղ բնաւ չկայ։

Ինչ կը վերաբերի դրամական խնդրին, ըստ կանոնի, եռամսեայ հաշիւ եւ մնացորդ դրամը կ'ուղարկուին ձեզ ժամանակին։

Ցարգանքով ընկերական բարեւներ
Փարիզի խմբին ներկայացուցիչ
Բ[ԱՐՍԵՂ] Շ[ԱՀՊԱԶ]

Փաստ. 1472-87

Զ 16.– ԺԸՆԵԻԻ «ՋԱՆՔ» ԽՄԲԻ 1912-Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

«Ջանք» խումբն իր աշխատանքները վերսկսել է դաշնակց. ուսանողութեան Դ-րդ համագումարէն ետք։

Ինչպէս նախընթաց շրջաններում, վերջին ամառնային գործունէութիւնն էլ սահմանափակւում է ժողովական զբաղումների մէջ։ Ամէն շաբաթ, գրեթէ, տեղի ունեցած ժողովները կլանուել են դասախօսութիւններով, յեղափոխական, տեսական եւ տակտիքական հարցերու շուրջ, գլխաւորաբար Տաճկաստանի շարժումներուն վերաբերմամբ եւ երկրորդաբար Ռուսաստանի եւ Պարսկաստանի մասին։ Մեր ժողովները թէպէտ եղել են յաճախուած, բայց կրելով միօրինակ ինքնակրթական բնաւորութիւն, չեն յարուցած կուսակցական-յեղափոխական ոգեւորութիւն։ Համեմատած նախորդ սեմեստրերի հոգեբանութեան հետ, 912-ի ամառը եղել է աւելի թոյլ։ Օսմանեան ուսանողութեան հետ մեր ունեցած յարաբերութիւնները դադարել են, իսկ այդ յարաբերութիւնները, որոշ ոգեւորութիւն բերած են նախորդ շրջաններում։

Հակառակ յաջորդական չորս համագումարներով չեշտուած ստիպողականութեան ոչ մի ընկերական կամ քաղաքական-կուսակցական կապ պահպանուած է ռուս-սոց. յեղափոխականներու եւ այլ խմբակցութիւններու հետ, իսկ տեղական սոցիալիստական խմբակցութիւններից եւ նրանց շարժումներից մնացել ենք բոլորովին անտեղեակ, որը նոյնպէս չի համապատասխանում համագումարներու որոշումներուն եւ պատճառ է դառել, որ մի քաղաքական-յեղափոխական խմբակցութիւն ստանայ ակադեմիկ ընկերութեան բնաւորութիւն։

Վերոյիշեալ նկատողութիւնները որքան որ ճիշտ են «Ջանք»ի անցեալ սեմեստրի արտաքին յարաբերութիւններու մասին, նոյնպէս ճիշտ է, որ խումբը գիտակից է եղել իր կուսակցական ներքին պարտականութիւններուն. համարեա բոլոր ժողովներում ամէն մի ընկեր իր մտաւոր աշխատանքի բաժինն ունեցած է. ընկերական համերաշխութիւնը եղել է լաւ, հազուադէպ բացառութեամբ եղել է որոշ հետաքրքրութիւն դէպի մեր ընդհանուր կուսակցական եւ քաղաքական կեանքը, որը կ'ապացուցուի քիչ վերջ դասախօսութիւններու բովանդակութիւնից։

Սեմեստրի սկզբէն խմբին կանոնաբար անդամակցել են հետեւեալ ընկերները.—

1. *Բայբիչեան*
2. *Հայրանեան Թ.*
3. *Խաչիկեան Տ.*
4. *Դէմիրեան Մ.*
5. *Մաղազաճեան*
6. *Բաբալեան*
7. *Գրիգոր*
8. *Հայրանեան Ա.*
9. *Վարդանեան Ե.*
10. *Ահէմեան Ղ.*
11. *Շահնազարեան Ս.*
12. *Ռուբէն*
13. *Տ. Ստեփանեան*
14. *Ղազարեան*
15. *Սողոմոնեան*
16. *Ցովսէփեան*
17. *Երկանեան*
18. *Փոլատեան*
19. *Գապանճեան*

Դրսի ընկերներից ժողովներուն յաճախակի մասնակցել են ընկ. Անտոն, Վարանդեան, Ս. Ցակոբեան։

Ամբողջ շրջանին ունեցած ենք 9 ժողով։

Բացի առաջին ժողովից, որի միջոցին խումբն զբաղւում է ձմեռնային սեմեստրի կոմիտէի հաշուետուութեամբ, նոր կոմիտէի ընտրութեամբ, եւ Գործադիր-Խմբագրական Մարմնի շրջաբերականով, միւս բոլոր ժողովներում ունեցած ենք հետեւեալ դասախօսութիւնները.—

1. Տաճկաստանի արդի կացութեան մասին (*Ռուբէն*)[134]
2. Թուրքահայոց Սահմանադրութիւնը (*Գապանճեան*)
3. Ռուսաստանի ժամանակակից կացութեան մասին (*Շահնազարեան*)
4. Արեւմտեան պուրժուազիայի կեանքից (*երկու ժողով — Խաչիկեան*)
5. Քրտերու մասին (ազգագրական-քաղաքական) *Ռուբէն*
6. Ժան-Ժաք Ռուսսօ – դաստիարակ (*Փոլատեան*)

Գործադիր-Խմբագրական Մարմնի ջանքերուն համապատասխան «Ջանք»ի անդամներից ոմանք աշխատութիւններ ղրկած են «Ուսանող»ի նոր համարին համար, իսկ կուսակցական լրագրութեան եւ այլ պարբերականներու ոեւէ աչք ընկնող աշխատակցութիւն չէ եղել, ամառային սեմեստրի համեմատաբար կարճ լինելով եւ համալսարանական զբաղումներու հետեւանքով։

Խումբն իր բոլոր ժողովներում զբաղուած է եղել անդամավճարներու ճշգրիտ գանձման հարցով, որի արդիւնքը կ'երեւի դրամական հաշուից։

«Ջանք»ը ձմեռնային սեմեստրին ձեռնարկած էր մի վիճակախաղ, որը չունեցաւ շօշափելի արդիւնք համեմատած այն աշխատանքին եւ ժամանակին, որը սպառուեց խմբի կողմից։ Վիճակախաղի գործը չփոխանցուեց նոր կոմիտէին, այլ շարունակուեց ձեռնարկող ընկերների կողմից, որոնք առանձինն կը զեկուցանեն այդ մասին։

Սեմեստրի սկզբից «Ջանք»ի մարմնի անդամներն են եղել Շահնազարեան, Բաբալեան եւ Ա. Հայրանեան. վերջինը հրաժարելով, Խաչիկեանը շարունակել է նրա գործը։

«Ջանք»ը լինելով նախանձախնդիր ընկերական համերաշխութեան պահպանման աշխատել է բարոյական միջոցներով կարգադրել անհատական խնդիրները, որոնք բարեբախտաբար շատ հազուադէպ են եղել։

«Ջանք»ի աշխատութիւնները շարունակուել են մինչեւ Ցունիսի վերջերը։

Քարտուղար՝
ԽԱՉԻԿԵԱՆ

20 Նոյ. 912, *Ժընեւ*

ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ (1913)

ԲԱԺԻՆ Է.

1913 թուականին Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան գործունէութիւնը, բացի ընթացիկ աշխատանքներէն, պիտի կեդրոնանայ յատկապէս Թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ ներմուծուելիք *բարենորոգումներուն* եւ հայ ժողովուրդի *ինքնապաշտպանութեան* կապուած խնդիրներուն վրայ:

Արդարեւ, Պալքանեան պատերազմի (1912-1913) աւարտին եւրոպական դիւանագիտութիւնը վերստին օրակարգի վրայ պիտի բերէր Արեւելեան հարցը: Եւ որովհետեւ արդէն 35 տարիներ առաջ Պերլինի դաշնագրով օսմանեան պետութեան ստանձնած պարտաւորութիւնը՝ հայկական նահանգներու մէջ բարենորոգումներ կատարելու՝ չէր յարգուած ինչպէս համիտեան վարչակարգի, նոյնպէս եւ սահմանադրական Թուրքիոյ կողմէ, հետեւաբար, բանակցութեանց սեղանին վրայ դրուեցաւ նաեւ հայկական հարցը: Թուրքիան, ըստ իր սովորութեան, բացասաբար հակազդելով արտաքին այս միջամտութեան, ձեռնամուխ եղաւ հակահայ նոր խռովութիւններու հրահրումին: Կիլիկեան ջարդերու օրինակով նոր աղէտի մը սպառնալիքը բնական է, որ հայութիւնը մղէր մտածելու ապահովական եւ ինքնապաշտպանման միջոցներու մասին: Պարագաներու այս զուգորդութեան մէջ պէտք է տեսնել ուսանողներու այն տրամադրութիւնը, որմով իրենք եւս կ՚ուզեն բաժին ունենալ (իրենց հնարաւորութեան սահմաններուն մէջ անշուշտ,– քարոզչութիւն, դրամահաւաք եւայլն) հայ ժողովուրդի ֆիզիքական ապահովութեան համար թափուած ջանքերուն: Ուշագրաւ են կարգ մը շրջաբերական-կոչերու մէջ արտայայտուած մտքերը, յախտոն, բուռն հնչեղութեամբ, կարծես վերահաս աղէտի մը կանխագուշակութեամբ: Ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ միջոցներու հայթայթումին համար, Ուս. համագումարը պիտի առաջարկէր նոյնիսկ վերականգնումը «Փոքրիկ»ին, այսինքն բռնի միջոցներով դրամահաւաքին, որուն վրայ վերջին բոլոր Ընդհ. Ժողովները արգելք դրած էին:

Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Հինգերորդ եւ վերջին համագումարը կայացաւ Փարիզ, 1913 թ. Դեկտ 25 – 30ին, օրակարգի վրայ ունենալով վերեւ մատնանշուած հարցերը: Քննութեան առարկայ էր նոյնպէս՝ կանոնաւոր յարաբերութիւններու պահպանումը եւ փոխադարձ գործակցութիւնը տարբեր միջավայրերու մէջ գործող ուսանողական միութիւններու հետ: Ռուսահայ ուսանողներու ջանքերը՝ համագումար մը կայացնելու ճամբով վերակազմակերպուելու՝ պիտի չարդիւնաւորուէին: Ամերիկայի մէջ, երեւի հեռաւորութիւններու պատճառաւ, ուս. միութիւն առաջացնելու փորձերը պիտի ձախողէին: Պոլսոյ մէջ 1911ին հիմնուած էր Հ.Յ.Դ. Ուս. միութիւն, որ յաջորդ տարին սկսաւ հրատարակել «Երկունք» պարբերաթերթը: Պէյրութ 1904 թուականէն սկսեալ ունէր Ս. Զաւարեան ուսանողական խումբը, որուն գործունէութիւնը, առաւելաբար կուսակցական, կ՚ընթանար Լեռնավայր-Կիլիկիոյ Կ. Կոմիտէութեան շրջագծէն ներս: Նոյնն էր պարագան Դամասկոսի Հ.Յ.Դ. ենթակոմիտէութեան, կազմուած մեծ համեմատութեամբ ուսանող անդամներէ: Այս բոլորին հետ Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան յարաբերութիւնները սահմանափակուած էին նամակագրութեամբ եւ «Ուսանող» պաշտօնաթերթի միջոցով պահպանուած կապերուն:

* * *

Եօթներորդ բաժնին մէջ ներկայացուած են գլխաւոր հետեւեալ փաստաթուղթերը.–

1.- Թիւ 1473-5: «1913 Յունուար 8ին Լօզանում կայացած ֆրանսիական եւ շուէյցարական չորս քաղաքներու (Պարիզ, Նանսի, Լօզան, Ժընեւ) հայ ուսանողութեան խորհրդակցական ժողովի որոշումները», տպագիր:

2.- Թիւ 1473-31: «Կոչ ուղղուած հայ ժողովուրդին», տպագիր:

3.- Թիւ 1473-107: «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան Գործադիր-Խմբ. մարմնի գործունէութեան», 1911 Ապրիլ 9ից – 1913 Դեկտ. 25, ձեռագիր 26 էջ:

4.- Թիւ 1473-116: «Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան V համագումարի արձանագրութիւն» (25-30 Դեկտ. 1913), ձեռագիր 61 էջ:

5.- Թիւ 1474-11: «Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպ. ուսանող. V համագումարի որոշումները» (ամփոփում եւ քաղուածքներ), ձեռագիր-խմորատիպ, 6 էջ:

Փաստ. 1473-80

Է 1.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԽՄԲԵՐԻՆ

Ընկերներ!

Բալկանեան պատերազմով հայկական հարցը նորից օրուայ խօսակցութեան առարկայ է դառնում:

Բնականաբար քաղաքական այսպիսի մոմենտում Հ.Յ.Դ.-ը որպէս հայկական հարցի ամենաջերմ պաշտպան ու ջատագով կուսակցութիւն ունենալու էր իր յատուկ գործելակերպը, իսկ Եւր.ի Դաշն. Ուս. Միութիւնը որպէս մի ամբողջութիւն կազմող մասը կազմակերպութեան վերցնելու էր գործունէութեան մի կարեւոր բաժինը, համապատասխան իր ուժերին. սակայն որպէսզի մեր գործունէութեան եղանակը պարզ լինէր ու համապատասխան կազմակերպութեան ընդհանուր գործելակերպին, Գործ. Խմբ. Մարմինս դիմեց Արեւմտեան Բիւրոյին, ստանալու համապատասխան հրահանգներ, խմբերին յայտարարելու համար:

Մեզ տրուած հրահանգների համաձայն, ընկերնե՛ր, մեր անելիքը պիտի կենտրոնացած լինի գլխաւորապէս երկու կէտի վրայ

Ա) *Ջանագան միջոցներով* (միտինգ եւ լրագրական յօդուածներ) պահանջել օսմ. կառավարութիւնից Հայաստանի բարենորոգում եւ

Բ) *Նպաստել ինքնապաշտպանութեան.* այս վերջին հարցը ամենաէականն է:

Իրապէս ազդեցիկ միջոցի առջեւ է, որ խոնարհւում են թոքէ խոստումներն: Փոքրիկ ազգերին իր status-quo-ով սպառնացող «արդարասէր» պաշտօնական Եւրոպան խոնարհւում է իր իսկ զէնքերի առաջ: Այդպէս կը լինի նաեւ աւելի անհրաժեշտականօրէն Թուրքիոյ մէջ: Այնտեղ՝ ուր հրացանի գնդակն է սուրում եւ օրուայ կառավարութիւնը առանց դրան իր գոյութիւնն անհասկանալի համարում, այնտեղ ճառերն ու հեռագրական բողոքները չեն հակազդելու իրական միջոցները: Հաւասար զէնքեր պիտի գործածել, մանաւանդ երբ *«պաշտպանելը»* ժամերի, վայրկեանների հարց է: Վասպուրականում, երեւացել է ինքնապաշտպանողական խումբ, դա իրականութիւն է եւ դրական փաստ: Մասնակցենք եւ մենք, թող լինի շատ անկատելի գումարով: Առաջարկում ենք Ձեր վայրերում ընկերների մէջ կամ դրսում հանգանակելով, երեկոյթներով կամ հնարաւոր եւ արագ միջոցներով գոյացնէք «ինքնապաշտպանութեան» համար մի որոշ գումար եւ իսկոյն մեզ փոխադրէք: Ձեռնարկների համար մտածելը թողնում ենք Ձեր տեղական յարմարութիւններին: Ուղարկում ենք կնքուած թերթիկներ հանգանակութեան համար: Աւելի լաւ է կարճ ժամանակամիջոցում փոքրիկ գումար, քան լայն ծրագիրներ եւ ապագայի անելիքների հետ կապուած մեծագումար խոստումներ: Այս կը լինի մեր այն չնչին «իրական» մասնակցութիւնը որ կարող ենք անել ներկայում:

Այժմ դառնանք մեր միութեան մի քանի հարցերին:

I- «Ուսանող»ի N°7-ը շատ աւելի ուշացաւ քան սպասւում էր: Մեզ յոյս են տալիս գոնէ 2 շաբաթից յանձնել. խնդրում ենք իսկոյն հաղորդել մեզ, թէ քանի՞ օր[ինա]կ ուղարկենք Ձեզ. (ի հարկէ խմբի իւրաքանչիւր անդամ պարտաւոր է վերցնել), եւ մեզ ուղարկել [19]12 N°8-ի համար յօդուածներ կամ յօդուածների խոստումներ (նիւթն ու ուղարկելու ժամանակն իրապէս որոշելով):

II- Յառաջիկայ համագումարի հարցը: Գործ.-Խմբագրական Մարմնի անդամներից մի քանիսը հեռանում են (Եւրոպայից) եւ այս հանգամանքը մեզ հարկադրում է հարցն այժմից արծարծել: Մենք կ՚ուզէինք, որ խմբերն իրենց մէջ արծարծէին հետեւեալ հարցերը.

1) Հարկաւո՞ր է յառաջիկայ ապրիլին, համագումար կայացնել, եթէ այո, ի՞նչ անհրաժեշտ ու իրական հարցերի համար:

2) Չէ՞ր կարելի արդեօք Գործ.-Խմբ. Մարմնի լրացումը ժամանակին կատարել, նախորդ համագումարում ընտրուած փոխանդամներով եւ մնացորդ անդամների պատասխանատուութեամբ նորերը հրաւիրելով, եթէ համագումարի համար այլ անհրաժեշտութիւններ չեն նկատւում:

3) Ո՞ւր գումարել համագումարը եւ մօտաւորապէս ի՞նչ հարցեր կարող են օրակարգի մէջ մտնել:

Մեր մտադրութիւնն է այս հարցերի Ձեր պատասխանները միացնել, հաղորդել բոլոր խմբերին, որպէսզի իւրաքանչիւր խումբ միւսների կարծիքներն էլ իմանալով տայ համագումար կայացնելու մասին իր վերջնական կարծիքը: Այդ երկրորդ պատասխանների մեծամասնութիւնը պիտի լինի այդ հարցը վճռողը: Ուրեմն շտապեցէք եւ այս հարցով զբաղուել, որ համագումարի հարցը որոշ լինի գոնէ փետրուարի կէսերին:

Ընկերական բարեւներով

Հ.Յ.Դ. ԵՒՐ. ՈՒՍ. ՄԻՈՒԹ. ԳՈՐԾ.-ԽՄԲ. ՄԱՐՄԻՆ

Ժընեւ, 9/I/1913

Փաստ. 1473-5

Է 2.– 1913-Ի ՅՈՒՆՈՒԱՐ 8-ԻՆ ԼՕԶԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՒ ՇՈՒԷՅՑԱՐԱԿԱՆ ՉՈՐՍ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ *(ՊԱՐԻԶ, ՆԱՆՍԻ, ԼՕԶԱՆ, ԺԸՆԵՒ)* ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1) Չունենալով պատգամաւորներու պահանջուած թիւը, ներկայ պատգամաւորները կայացնելիք ժողովը յայտարարել են վերոյիշեալ 4 քաղաքներու խորհրդակցական ժողով:

2) Ժողովի որոշումները պարտադիր են մասնակցող 4 քաղաքներու ուսանողական Միութիւններուն, իսկ նոյն որոշումները, չմասնակցող քաղաքներու Միութիւններուն հաւանութեանն ենթարկելէ ետք, պարտադրելի կը դառնան եւ այդ քաղաքներու Միութիւններուն:

Ա. ՊԸՐՈՊԱԳԱՆԴ.–

3) Յօգուտ Հայկական Հարցի կ՚ընդունուի եւրոպական մամուլի օգտակարութիւնը (առանց քաղաքական հայեացքներու տարբերութեան):

4) Մամուլի համար իւրաքանչիւր քաղաքի ուսանողական Միութիւն պարտադրւում է պարբերական յօդուածներ հրատարակել Հայկական Հարցով պարապուող թերթերի մէջ եւ նպաստել, հայկական կեանքից թարմ լուրեր հասցնելով այդ թերթերին: Առանձինն համակրանք արտայայտել այդ հարցով զբաղողներուն:

5) Դիմել հայասէր օտար գրագէտներուն Հայկական Հարցի շուրջ մամուլին աշխատակցելու համար:

6) Դիմել եւրոպաբնակ հայ գրագէտներու, նոյն մտքով:

7) Աշխատել բազմամարդ միտինգներ կազմակերպել զանազան քաղաքներու մէջ, նոյնպէս մասնաւոր դասախօսութիւններ՝ հայկական կեանքի շուրջ:

8) Յանուն ուսանողութեան մի կոչ հրատարակել՝ ուղղուած եւրոպական հասարակական կարծիքին եւ որը չլինի մեր միւս շրջանների կոչերու բովանդակութեամբ, այլ մասնաւորապէս արտայայտի ուսանողութիւնը:

9) Պարտադրել իւրաքանչիւր քաղաքի ուսանողական Միութեան, որ իր միջոցներով ցրուէ Փարիզի թերթը[137] իր քաղաքի հասարակական հիմնարկութիւնների մէջ (հատով):

Բ. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԴԻՊԼՈՄԱԹԻԱՅԻՆ.–

10) Համարելով հանդերձ, որ մեծ բան չի կարելի սպասել եւրոպական դիպլոմաթիայից ճնշուած ժողովուրդների հարցերի լուծման տեսակէտից, համաձայնւում ենք ազգ. պաշտօնակ. ներկայացչութեան պահանջներին եւ յարմար ենք գտնում Բրեսանսէի բանաձեւը «Հայաստանում մի մեծ Լիբանան ստեղծել»:

11) Մեր ձայնը տալիս ենք ազգային ներկայացչութեան:

12) Բողոք-կոչը ուղղել եւրոպական դիպլոմաթիային, պարլամենտների նախագահներին եւ կուսակցական խմբակցութիւններու պետերին (հարկ եղած դէպքում աւելցնել եւ ներկայացչութեան բանաձեւած պահանջները):

Գ. ՄԵՐ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ ԹԻՒՐՔԻԱՆ.–

13) Դէմ լինել բացարձակապէս թիւրք կառավարութեան, ո՛չ անջատական մտքով եւ բարեկամ՝ թիւրք ժողովուրդին:

Դ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.–

14) Ժողովը գտնում է ինքնապաշտպանութիւնը անհրաժեշտ մեր իրականութեան համար եւ որոշում է նպաստել նրան:

137.- «Փարիզի թերթ» ակնարկութիւնը կը վերաբերի "Pour les peuples d'Orient" թերթին, որ 1908 թ.ին դադրած Pro-Armenia-ի օրինակով եւ դարձեալ Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ ու նիւթական յատկացումով՝ լոյս կը տեսնէր Հայ դատի քարոզչութեան նըպիրուած: Գլխաւոր խմբագիրներն էին կուսակցութեան հին բարեկամներէն Ֆրանսիս Դէ Պրեսանսէ, Վիկտոր Բերար, Ժան Լոնգէ:

15) Կազմակերպել եւրոպական ուսանողութեան եւ գաղութի մէջ հանգանակութիւն (երեկոյթ, անդամավճար, վճարաքարթ եւ նշաններ):

16) Հաւաքուած դրամները յանձնել երկրում ինքնապաշտպանութեամբ զբաղող չէզոք մարմիններին:

17) Ցանկալի է, որ քաղաքական կուսակցութիւնները հսկեն ինքնապաշտպանութեան:

18) Ցանկալի է այդ հանգանակութիւնները կատարել ազգային շրջանում, իսկ տեղական պայմանները թոյլատրած դէպքում եւ օտարներու մէջ:

19) Ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեան շուրջ մի կոչ ուղղել բոլոր վայրերի հայերին, յիշեցնելով նրա ստիպողականութիւնը իբրեւ մարդկային բնական մի օրէնք:

20) Պարտադրել բոլոր ուսանողական Միութիւններուն մասնակցել տեղական նշանառութեան ընկերութիւններին (ուր որ հնարաւոր է):

21) Այն քաղաքներում, ուր հնարաւոր է աշխատել անդամավճարներ սահմանել Միութեան անդամների վրայ:

Զ. ԱՆԱՁԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

22) Ընտրում է մի Մարմին (եռանդամ) բոլոր որոշումներու գործադրման հսկելու եւ պատասխանատու բոլոր հանգանակութիւններից գոյացած դրամներու հաւաքման եւ առաքման հարկ եղած վայրը. նա պիտի կատարէ անկեղը[111]. հարկ եղած դէպքում նա իրաւասու է եւրոպական ընդհանուր ուսանողութեան համագումար հրաւիրելու:

23) Այս որոշումները մնում են իրենց օրինական ուժին մէջ մինչեւ նոր տնօրինութիւն:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՒ ՇՈՒԷՅՑԱՐԱԿԱՆ ՉՈՐՍ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ
ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

12 Յունուար 1913, Ժընեւ

Փաստ. 1473-23

Է 3.– Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Ընկերներ,

Երէկ «Դրօշակ»ի խմբագր[ութեան] անունով ձեզ փոխադրեցի 105 ֆր. որից 85 ֆր. հանգանակուած է ինքնապաշտպանութեան համար, իսկ մնացեալ 20 ֆր. կազմում են տեղիս խմբի անդամավճարները։ Խնդրում եմ ձեր ընդհանուր հաշուի մէջ մտցնէք ոչ թէ 20, այլ 27½ ֆր. ստացուած։ Ընկեր Թերլեմեզեան 7½ ֆր. վերցրեց ի հաշիւ Գործադիր Մարմնի (իր արած ծախսերի)։

Մի քանի խօսք մեր խմբի մասին։

Անցեալ սեմեստրին խումբը բաղկացած էր վեց հոգուց։ Ունեցել ենք պարբերական հաւաքումներ. մեզնից չորս հոգի դասախօսել են հետեւեալ նիւթերի մասին.

1. Ֆրանսական սինդիկալիզմը:
2. Հայկական ապագան:
3. Ի՞նչ է ինտելիգենցիան:
4. Դասակարգային պայքարը դպրոցում:

Խմբիս ձեռնարկութեամբ Բերլինից հրաւիրուել է այստեղ Ռ. Դարբինեան, որը ռուս ուսանողութեան դասախօսել է «Թիւրքական արդի կրիզիսը» նիւթի շուրջը։

Փետր.17-ին խմբիս եւ ռուս սոց. յեղափ. խմբակի ջանքերով կազմակերպուել է մի երեկոյթ։ Որովհետեւ հաշիւները ցայսօր պարզուած չեն, ուստի անկարող եմ որոշակի բան ասել արդիւնքի մասին։ Մեզ հասանելիք արդիւնքը յատկացուելու է ինքնապաշտպանութեան գործին։

Այսչափ։

Դրամի ստացման մասին խնդրեմ մի երկտողով յայտնէք։

Ընկերական բարեւներով
Ի դիմաց խմբի՝
Ա. ՇԱՒԱՐՇԵԱՆ

9 Մարտի 1913, Լայպցիգ

Հասցէս
Leipzig, Härtel str. II[III], Stud. A. Schawarchian

Յ. Գ.) Ուղարկում եմ նամակիս հետ հանգանակութեան թերթը։

ՆՈՅՆ

Փաստ. 1473-31

Է 4.– ԿՈՉ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հայ ժողովուրդ!

Դարձեալ սարսափը ծածկեց քո երկրի հորիզոնները. թալանն ու սպանութիւնը փոխն ի փոխ սկսան վրդովել քո կիսաւեր գիւղն ու քաղաքները. քո շուրջը կը փչէ հայատեցութեան դաժան շունչը՝ միջնադարեան դիւահար ֆանատիզմէ բռնուած քո դրացի տգէտ ժողովուրդներու սրտէն: Ապիկար վարչութիւնը ո՛չ միայն անտարբեր ականատես է այդ դրութեան, այլ եւ քաջալերող ոճրագործի դերին մէջ է: Նոյն վարչութեան պալքանեան այլատեաց, անհեռատես եւ անխոհեմ քաղաքականութիւնը բռնկեցուց երկրասասան փոթորիկը – պատերազմը, որի մէջ օսմանցի հայ երիտասարդութիւնը օրինական կերպով առատօրէն տուաւ իր արեան բաժինը, *ի փոխարինութիւն քո երկրի տէրերու հայրավայել խնամքներուն:* Մեզ չի հետաքրքրեր Մակեդոնիոյ պաշտպանութիւնն ստանձնող պալքանեան պետութիւններուն քաղաքական շահախնդրութիւնը. փաստը այն է, որ *Մակեդոնիան ունեցաւ իր պաշտպանը:*

Իսկ դո՛ւ, հայ ժողովուրդ քո ամենահամեստ ցանկութիւններով, ափրիկեան վայրենիներու վայելած ազատութիւններով իսկ բաւականանալու տրամադրութեամբ, մոռացուած ես ի սպառ Թուրքիոյ, եւրոպական դիւանագիտութեան եւ քաղաքակիրթ մարդկութեան ապերախտ յիշողութենէն:

Ո՛չ մի ազգի պատմութիւնը այնքան ըմբոստացնող միօրինակութեամբ չի կրկնուիր իր դժբախտ ֆազերով, ինչպէս քոնը, եւ երեւի ո՛չ մի ազգ, ո՛չ մի անգամ այնպէս թոյլ չի եղել, ինչպէս մենք, արմատապէս կտրելու համար մեզ շրջապատող չարիքներու վերերեւումը:

Վերջին 30-40 տարուան հալածանքներու պատմութիւնը ցոյց տուաւ եւրոպական մամուլի, բեմերու, հայասէր բուրժուազիայի եւ ինտելիգենցիայի, նոյնիսկ համակիր աշխատաւորութեան բացարձակ անկարողութիւնը մեզ դրական օգուտներ հասցնելու տեսակէտով. ճիշտ է, որ բարոյական ուժը եղեր է մեր կողմը բայց այդ ուժը անբաւական է եղեր Եւրոպայի քարտէսէն շատ հեռու ճօճացող քրդի սրի եւ թրի հարուածը կասեցնելու, կամ մեղմելու աշխարհէն ամէն տարրական հաղորդակցութենէ զուրկ հայկական հեռաւոր նահանգներու մէջ կրկնուող հարստահարութիւնները:

Մեր օրերու քաղաքակրթութեան հետ չհաշտուող այս հիասթափեցուցիչ իրականութեան առաջ ժամանակն է, որ բոլոր ուժով թօթափենք մեր վրայէն *համամարդկային զգացումներու* եւ *բարձրագոյն բարոյականի* վերաբերմամբ մեր ունեցած սխալ ըմբռնումները, եւ սկսինք համարել *բարոյականութիւններու ամենաբարոյականը՝ ինքնապաշտպանութիւնը:*

Ինքնապաշտպանութիւնն է ղեկավարող ոգին մարդկային քաղաքակիրթ թէ անքաղաքակիրթ համայնքներու կեանքը, մինչեւ կենդանական եւ բուսական աշխարհներու յարատեւութիւնը:

Ողջ աշխարհն այդ մեծագոյն օրէնքին է պարտական իր բոլոր մարդկային եւ հասարակական հիմնարկութիւնները – գիտութիւն, քաղաքակրթութիւն, արհեստ եւ վաճառականութիւն:

Շնորհիւ ինքնապաշտպանութեան ուժեղ գիտակցութեան մարդը գերազանցել կ՚աշխատի եւ չէզոքացնել բնութեան բացասական ազդեցութիւնները եւ ամէն ինչ որ կը ձգտի կաշկանդել անհատի, համայնքի, ազգի եւ երկրի ազատ զարգացումը:

Պատմական տխուր ճշմարտութիւն է այլ եւս, որ քաղաքակրթական արժէքներու գերազանցութիւնն առանձինն անընդունակ է մի ազգի, մի ժողովուրդի գոյութիւնն ապահովել, իրմէ աւելի անքաղաքակիրթ, բայց ֆիզիքապէս ուժեղ ցեղերու արշաւանքին դէմ: Որ մի քաղաքակիրթ ցեղ նոյնքան դիւրութեամբ կ՚անհետանայ պատմութենէն ենթարկուելով շրջապատող ցեղերու կոպիտ ազդեցութեան, եթէ նա իր գոյութիւնը պաշտպանող տաղանդի մտքով ֆիզիքական գործօններէն զրկուած է: Կարճ, ֆիզիքական գերազանցութիւնն ամէնէն ապահով գրաւականն է մի ժողովրդի գոյութեան համար, եթէ ի հարկէ նա չի սպառիր յարձակողականի մէջ, այլ կը գործադրուի անհրաժեշտ պաշտպանողականի համար, որովհետեւ շարունակական յարձակողականով շրջայտուած ֆիզիքական ուժն ալ ի վերջոյ կը սպառի, ինչպէս փայլուն կերպով կու գան ապացուցել թրքական վերջին պարտութիւնները:

Ուրեմն սթափուինք եւ չոգեւորուինք մեր քաղաքակրթական գերազանցութիւններով: Բաւական է որքան մեզ տուինք արեւելքի մէջ քաղաքակրթական *միսիոնով* օժտուած ժողովրդի դեր: Մեր այդ *միսիոնն* ալ չյաջողեցինք իրագործել մեր ֆիզիքական թուլութեան պատճառով:

Վերջապէս բաւակա՛ն է *մեզ խղճան, ողորմին,* իբրեւ *ջարդերու եւ հարստահարութիւններու, դասական զոհերու,* այդ կարեկցութիւնը այլ եւս *ամօթ է եւ նախատինք* մեզ համար:

Մեր համակիրներն անգամ մեր երեսին կու տան, որ ո՛չ մի համաժողովրդական տկար քայլ չառինք մեզ պաշտպանելու համար, որ մեր մէջ տարվինական բնազդը – ապրիլ ուզելու, գոյութիւնը պահելու ցանկութիւնը – դաղրեր է խօսելէ, որ մեզ պաշտպանելու միջոցները անհամապատասխան են մեր միջավայրին եւ ժամանակի ոգուն:

Քաղաքակիրթ երկրներու մէջ, ուր խաղաղասիրական ոգին աւելի շուտ պիտի նախատիրող լինէր, մենք հակառակը կը տեսնենք,– քաղաքակրթութիւն եւ սպառազինութիւն զուգընթաց զարգացեր են: Մենք չենք մտներ բացատրութիւններու մէջ թէ այդ սպառազինութիւնը ո՞ւմ է ծառայելու. ժողովուրդը հաւաքականօրէն վերցնելով, *ամէն սպառազինութիւն ինքնապաշտպանութիւն է,* մէկդի թողնելով չափազանցութիւնները:

Ժամանակն է, որ ամէն հայ յարգել սորվի ինքզինքը *ֆիզիքապէս,* որ իր հակառակորդին ալ ինքզինքը յարգել տայ. բաւական է ստոյիկեան առաքինութեամբ ներել մեր *ուժեղ* հակառակորդներուն. *մեզմէ թոյլերուն ներել վեհանձնութիւն է, մեզմէ ուժեղներուն ներե՞լ, ստորութիւն եւ անբարոյութիւն է մեր անձին դէմ:*

Եթէ մեզ վիճակուած է բնաջնջուիլ, թող այդ թանկ նստեցնենք մեզ բնաջնջողներուն եւ *թող անհաւասար կռիւը արձանագրուի պատմութեան մէջ իբրեւ պատճառ հայկական ժողովրդի ոչնչացման:*

Մենք, Եւրոպայի զանազան համալսարաններու հայ ուսանողներս, քաղաքական տարբեր հայեացքներու պատկանող, մի խորհրդակցական ժողովի մէջ արտայայտուեցանք հայ ժողովրդի այս *քրիթիկ* կացութեան առթիւ: Այդ առթիւ պարզուեցաւ, որ մեր ձգտումները իրենց հիմնական գծերով երբեք իրարմէ չեն զանազանուիր, որ մենք կը համարենք հայ ժողովրդի դատը մի *արտաքասակարգային* դատ, մարդկային տարրական եւ անբաղդատելի ծանրակշռութեամբ մի դատ, որ այդ, ֆիզիքական մտքով, *գոյութեան հարց է* եւ հետեւաբար ամէնէն ստիպողաբար լուծելի եւ *ամէնէն նախապատիւը մնացած բոլոր մարդկային հասարակական եւ դասակարգային* բնաւորութիւն կրող հարցերու մէջ եւ *հետեւաբար միակ եզրակացութիւնը բնաջնջման սպառնալիքի տակ ապրող ժողովրդի համար, համաժողովրդական ինքնապաշտպանութիւնն է, զէնքի միջոցաւ:*

Մեր ուժերը, բարոյական թէ նիւթական, դրեր ենք այդ նպատակի իրագործման համար եւ հետեւաբար բոլոր կոչ կ՚ուղղենք հայ ժողովրդի բոլոր հատուածներուն, գաղութներուն, յարանուանութիւններուն, քաղաքական, կուսակցական ղեկավար շրջաններուն, հայ մտաւորականութեան եւ մեր ժողովրդի բաղկացնող բոլոր դասակարգերուն, առանց երկրային կամ դասակարգային մասնատր նկատումներու հետապնդման, միանալ այս զուտ մարդկային եւ բնական անվիճելի ձեռնարկին շուրջ եւ ջանալ ազատել մի ժողովուրդ արհամարհալից մահէ:

Թիւրքահայ, թէ միւս հատուածներու *բարեկեցիկ* դասերը եւ իրենց *թարգման մամուլը* թող մոռանան մի առժամանակ խոհեմութեան երեմիականները, որոնք ոչխարացուցին հայ կորովի ժողովուրդը, որ իր կողմէ երանի՞ հայ քաղաքագէտներու անպէտք ծանրախոհութենէն դաղարի օգտուիլ, եթէ այդ քաղաքագէտները այնքան ենթ երեւակայութիւն ունին, որ միանգամ գոնէ մտքով չեն կարող փոխադրուիլ հայկական քարուքանդ նահանգները՝ ըմբռնել կարենալու դառն կացութիւնը այն ժողովրդին, որու անունով եւ *ի պատիւ* որի դիրքեր եւ հարստութիւն են ստեղծեր *օսմանեան հայրենիքէն ներս եւ դուրս:*

Համերաշխութիւն, համագործակցութիւն, միութիւն, եղբայրակցութիւն բառերը մանաւանդ վերջին չորսամեակին ձանձրացնող առատութեամբ կրկնուեցան մեր հրապարակախօսական բեմերէն, մամուլէն, մեր հոգեւորականներէն, հազարաւոր ձեռնարկներ եղան խառն միութիւններ, ընկերակցութիւններ առաջ բերելու, բազմահատոր գրականութիւն դիզուեց, անձնուէր կեանքեր թառամեցին, այնքան ազնիւ եւ թանգ ուժեր վատնուեցան ժողովուրդներու մերձեցման *իտէայի* իրագործման համար. ամէ՛ն ինչ ի զուր անցաւ: Այդքան ուժ մեր ներքին կեանքին համար գուցէ բազմապատիկ դրական արդիւնքներ աւելցնէր մեր արժէքներուն վրայ: Իսկ այժմ՝ ո՛չ միայն այդ բոլորը ի զուր անցաւ, այլ եւ դառն հեգնանք կը կլլենք մեր հակառակորդներէն:

Մեր դրացիները եկան մեզ գործնականապէս հասկցնել, որ բոլոր վերոյիշեալ քաղաքացիական, դրացիական կեանքի առաքինութիւնները հաւասարներու միջեւ կարող են փոխանակուիլ, որ *թոյլ կեաւուրի* հետ *ֆիզիքապէս ուժեղ քիւրդը, թիւրքը* կարիք չունին եղբայրանալու, գործակցելու:

Ուրեմն, հայ ժողովո՛ւրդ, *յանուն եղբայրակցութեան եւ ցեղային համերաշխութեան իդէալի ապագայ իրագործման, ջանա՛ ուժեղանալ ֆիզիքապէս, հաւասարելու համար քո դրացիներուն. այդ ո՛չ միայն հասարակական, այլ եւ գիտական-առարկայական ճշմարտութիւն է:*

Մի՛ ատիր քո դրացիները, ինչպէս չես ատեր քո ամբողջ պատմութեան ընթացքին մէջ, բայց մի՛ թոյլ տար, որ քեզ ատեն. եթէ թոյլ տաս, իրաւունք ունին քեզ ատելու. *«թոյլին ներէ՛, առաքինութիւն եւ վեհանձնութիւն է, իսկ ուժեղին մի՛ թոյլ տար, այդ կը լինի ստորութիւն եւ անբարոյականութիւն քո անձի դէմ»:*

Ուրեմն դէպի *համաժողովրդական ինքնապաշտպանութիւն*՝ դէպի՞ զէնք:

Այն ատեն կեցցէ՛ *ինքնապաշտպան հայ ժողովուրդը:*

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

19 ապրիլ 1913, Ժընեւ

Փաստ. 1473-81

Է 5.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԽՄԲԵՐԻՆ

Ընկերներ!

Դեռ յունուար ամսին Ձեզ ուղղուած մի նամակում շօշափել էինք առաջիկայ «համագումարի» հարցը եւ խոստացել այդ հարցի մասին գոնէ մինչեւ փետրուարի կէսերը մի վերջնական եզրակացութիւն հաղորդել Ձեզ, յենուելով, խմբերից գալիք պատասխանների վրայ: Դժբախտաբար այդ պատասխանները ճիշտ ժամանակին չստացուեցին եւ մենք ի վիճակի չեղանք դեռ ձմեռային կիսամեակի վերջին, այս տարուայ համագումարի խնդիրը որեւէ կերպով լուծուած յայտարարելու: Օգտուելով ամառային կիսամեակի առթիւ ընկերների կրկին համախմբուելուց, ներկայ շրջաբերականով ուզում ենք Ձեզ ներկայացնել Միութեան ընդհանուր դրութիւնը, «Ուսանող»ի վիճակը եւ խմբերի կարծիքները առաջիկայ համագումարի մասին:

I. 1912 Ապրիլից մինչեւ այժմ նիւթական տեսակէտից խմբերը շատ քիչ են օժանդակել. պատճառը կամ խմբերի շատ քիչ անդամներից բաղկացած լինելն է եւ կամ թէ այդ մասին շատ քիչ հոգածութիւն ունենալը: Քիչ շատ կանոնաւոր խմբական գործունէութիւն տեղի է ունեցել Ժընեւ, Լայպցիկ, Փարիզ եւ Լօզան: Խմբերի ներկայ վիճակը շատ էլ մխիթարական չէ. կարող ենք ասել որ խումբ ունինք Ժընեւ, Լօզան, Փարիզ, Լայպցիկ եւ Բերլին (վերջերս կազմուած, բայց դեռ մեզ հետ չեն թղթակցել): Մէկ կամ աւելի անհատ ընկերներ ունինք, Նանսի 2, Ժամբլու 2, Լիէժ 1, Ցիւրիխ 2, Բերն 1, Վիեննա 2:

II. Հազիւ կարողացանք յաջողեցնել հրապարակ հանելու «Ուսանող» № 7-ը: Մի կողմ թողնելով իր արժէքի որակի հարցը, Ձեզ կը ներկայացնենք մի քանի թուեր որոշ գաղափար տալու նրա հետ կապուած ծախսի հետ: Տպագրութիւն 1280 ֆրնք., 800 օրինակի փոխադրութեան ծախս 306,50 ֆր.: Ներկայումս գանձարանի մէջ ոչինչ չունենք, մինչ «Դրօշակ»ի խմբագրութեան պարտք ենք 700 ֆրանք «Ուսանող»ի տպագրութեան հաշուին եւ 200 ֆրք. անցեալ եւ այս տարուայ կուսակցական տուրքը:

№ 8-ի տպագրութեան կարելի է ձեռնարկել միայն այն ժամանակ երբ գոնէ 300-400 ֆրք կանխիկ դրամ ունենանք եւ նոյնքան էլ վստահելի առնելիք-եկամուտ ու միւս կողմից յօդուածների ամբողջութիւնը, մինչդեռ ներկայումս ունենք միայն մի յօդուած: Խնդրում ենք խմբերից ու անհատ ընկերներից, գոնէ իրենց վերցրածների գումարն իսկոյն մեզ փոխադրեն:

III- Համագումարի հարցը կարող է այժմ ամրան, կամ աւելի ուշ ժամանակի համար արծարծուել: Խմբերի եւ անհատ ընկերների պատասխանները միատեսակ չեն: Նախ խմբերից ո՛չ մէկը չէ՛ արտայատուել այն մասին, թէ իրենք պիտի կարողանան հոգալ իրենց պատգամաւորի ծախսը «համագումար» կայացնելու դէպքում, եւ յետոյ որովհետեւ նպատակայարմար է համարւում որեւէ բազմանդամ խմբի քաղաքում գումարել ժողովը, այդ-տեղերի խմբերը պիտի օգնե՞ն փոքրիկ խմբերին ծախսի խնդրում: Այդ տեսակէտից Ժընեւի ու Փարիզի խմբերի դիրքը շատ կարեւոր եւ վճռական կարող է հանդիսանալ քանի որ Ժընեւ եւ Փարիզը կը նկատուեն որպէս ամենայարմար վայրեր:

Խմբերու կարծիքները ինչպէս եւ անհատ ընկերներու հետեւեալն է.

I) <u>Ժընեւ, Լայպցիկ եւ Վիեննա</u> առ այժմ աւելորդ եւ նիւթապէս անհնար կը գտնեն համագումարը, գտնելով որ նա վճռական ու գործնական որեւէ դեր չպիտի խաղայ, ներկայ քաղաքական դրութեան մէջ: Մարմնի ընտրութիւնը կարող է կատարուել, «փոխանդամների» գործի անցնելով կամ լրացուցիչ ընտրութիւններով,

II) <u>Լիէժի եւ Ժամբլուի</u> ընկերներն ընդհանուր առմամբ օգտակար են գտնում համագումարը, եթէ հնարաւոր է: Իրենք հնարաւորութիւն չունեն մասնակցելու (նիւթականը):

III) <u>Փարիզ եւ Լօզան</u> կողմնակից են մասնաւորապէս հայկական հարցի ներկայ կացութիւնը եւ քաղաքական վայրկեանը ի նկատի առնելով: Համագումարը պիտի զբաղուի կուսակցութեան ներկայ գործելակերպի քննութիւնով: «Ուսանող»ի հարցը եւ խմբական-ընկերական վէճերն եւս համագումարը անհրաժեշտ են դարձնում:

Ընկերներ!

Մեր կարծիքով «անպայման» պէտք էր գումարել «համագումարը», եթէ նա իրական որեւէ օգուտ ունենար այն հարցերի մասին որոնք *էական* են: Մեր կարծիքով *«համագումարը»* ոչինչ չպիտի *աւելացնէ* կամ պակսեցնէ այն գործելակերպին որին ներկայումս կը հետեւի մեր կուսակցութիւնը: Մի կողմ թողնելով նրա գնահատութիւնը կ'ասենք՝ այդ գործունէութիւնն ունի երկու ուղղութիւն,– 1) *Ինքնապաշտպանութիւն* եւ 2) *Դիւանագիտութիւնը.* ա-ը իր ամենաչնչին արդիւնքով անգամ *դրական.* բ-ը *բացարձակապէս* մեզնից անկախ եւ մեր այդ ուղղութեամբ թափած ջանքերն ի զուր են: Բայց նորէն վճռողը խմբերը պիտի լինեն: Առանց այդ հարցերին էլ համագումարը միութեան կարեւոր օրգանն է, միայն թէ մտածենք նրա *նիւթական հնարաւորութեան* մասին: Խնդրում ենք ձեր տալիք պատասխանների մէջ 1) ի՛նչ գումար եւ յարմարութիւններ կը տրամադրէք համագումարին ձեր կամ մի այլ քաղաքում եղած պարագային եւ 2) ինչո՛ւ կ'ուզէք ձեր թէ մի այլ քաղաքում գումարուելը:

Ընկերական բարեւներով՝
ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲ. ՄԱՐՄԻՆ

Ժընեւ, 16-5-1913

№ 7
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. Դ.
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՒՍԱՆՈՂ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
400 ՕՐԻՆԱԿԻ
ՑԻՐԱՏԱԿԻՆ
ՊՈԼԻՍ
1912


ԵՐԿՈՒՆՔ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹ
ՕՐԿԱՆ Հ. Յ. Դ. Կ. ՊՈԼՍՈՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
1/14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913 Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 6
Ե. ՉԵՐԵՐԵԱՆ

Փաստ. 1457-4

Է 6.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս, Նոյեմբեր 1, 1913

Ընկերներ,

Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ Ուսանողական Միութեան տարեկան համագումարը տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 24-ի կիրակի օրը (Ը[ստ] Թ[ուականի])։

Ներփակ կ'ուղարկենք ձեզ մեր համագումարի Օրակարգը եւ կը խնդրենք որ նկատի ունենաք հոն նշանակուած հարցերը եւ անոնց մասին ձեր կարծիքներն ու դիտողութիւնները ձեր նոր առաջարկներու հետ միասին ուղարկել պատգամաւոր ընկերի մը հետ, եթէ հնարաւոր է, իսկ հակառակ պարագային նշանակել հոս ընկեր մը որ մեր համագումարին մէջ ներկայացնէ Եւրոպայի Դաշնակցական Ուս. Միութիւնը։ Կը խնդրենք մանաւանդ ուշադրութեան առարկայ ընէք մեր Օրակարգի 3, 4, 5, եւ 8րդ հարցերը եւ անոնց մասին ձեր առաջարկները մեզ ուղարկէք։

Ցանկալի էր մեզ համար նմանապէս, լսել ամփոփ տեղեկութիւններ մեր համագումարի մէջ, Եւրոպայի Ուս. Միութեան գործունէութեան մասին՝ ձեր պատգամաւորի միջոցաւ։

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Դ. Կ. ՊՈԼՍՈՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Մեր հասցէն՝
Péra, Boîte Postale Ottomane, N° 24

Փաստ. 1457-3

Է 7.– ՕՐԱԿԱՐԳ Կ. ՊՈԼՍՈՅ Հ.Յ.Դ. ՈՒՍ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

1913, Նոյեմբեր 1, Կ. Պոլիս

Ընկեր,

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Ուս. Միութեան տարեկան համագումարը տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 24ի կիրակի օրը ժամը 10-ին (Ը[ստ] Ե[ւրոպական]):

Օրակարգի հարցերն են՝

1) *Վարչութեան հաշուետուութիւն*
2) *Հրատարակութիւններու խնդիրը*
3) *Ուս. Միութեան օրկան՝ «Երկունք»ը։*
4) *Կանոնագրի վերաքննութիւնը։*
5) *Յարաբերութիւններ գաւառի եւ արտասահմանի դաշնակցական ուսանողական միութիւններու հետ։*
6) *Յարաբերութիւններ հայ եւ ոչ-հայ ուս. միութիւններու հետ։*
7) *Գրադարան եւ դասախօսութիւններ։*
8) *Ուսանող ընկերներու կազմակերպական աշխատանքը (Պոլսոյ եւ գաւառներու մէջ)։*
9) *Պիւտճէի բաժանումը։*
10) *Նոր առաջարկներ ընկերներու կողմանէ։*
11) *Ընտրութիւններ։*

Ի նկատի ունենալով մեր այս համագումարի բացառիկ հանգամանքը, հարկ կը համարենք յանձնարարել որ ներկայ օրակարգը ստանալէ վերջ, աշխատիք ձեր դպրոցական եւ կամ խմբական ընկերներու հետ հարկ եղած նախնական խորհրդակցութիւնը կատարել, նախապատրաստ[ու]ած ներկայանալու համար ժողովին, որպէսզի հնարաւոր ըլլայ 2-3 նիստով վերջացնել օրակարգի հարցերը [եւ] շուտով մեր Միութեան գործերուն աւելի կանոնաւոր ընթացք մը տալու համար։

Ընկերական բարեւներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Փաստ. 1473-82

Է 8.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ – ՆԱՄԱԿ (ԹԻՒ 6) Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ

Ընկերներ,

Համալսարանական տարեշրջանը վերսկսում է. դրա հետ նաեւ մեր խմբական հաւաքումները: Եթէ մի ընդհանուր ակնարկ ձգելու լինինք անցեալ տարեշրջանի մեր խմբական գործունէութեան վրայ, դժբախտաբար մը-խիթարական շատ բան չպիտի ունենանք ներկայացնելու ընկերներին որպէս արդիւնք այդ գործունէութեան: Բացառութեամբ մի քանի բազմանդամ խմբերի, միւսներից ոմանք անգործունէութեան են մատնուած եղել առարկելով գլխաւորապէս ընկերների սակաւութիւնը իրենց շրջանում, ոմանք էլ դրան հակառակ, իրենց սակաւաթիւ անդամներով հանդերձ ապացուցել են որ հնարաւոր է կապուած լինել գործին, զոհաբերելով նրան հնարաւորը: Փորձը ցոյց է տուել, ընկերներ, որ եւրոպական ցամաքի այն վայրերում, ուր մինչեւ այժմ եղել են խմբեր, դրանք այնպիսի վայրեր են, որ հազիւ թէ դատարկուին կուսակցական ուսանողութիւնից, ու այդպիսով մի շրջան որ որոշ ժամանակով դադարեցրել է իր գործունէութիւնը վերոյիշեալ առարկութիւններով, յանկարծ մի կամ երկու ընկերոջ գործ դրած ջանքերով վերակազմուել, նոր կեանք ու կենդանութիւն ստացել, ոգեւորել միւս ընկերներին եւ, սխալուած չենք լինի ասելու՝ *անցել նոյնիսկ ամենակենսունակ խմբերի շարքում*: Այս հակիրճ ծանօթութիւնը տալով կոչ ենք անում մի անգամ եւս ընկերներին եւ յատկապէս կազմալուծուած խմբերի ընկերներին աւելի սրտացաւ վերաբերմունք ցոյց տան դէպի կուսակցական գործը, ձեռք ձեռքի տուած մնացող ընկերների հետ, ամէն ջանք գործ դնեն, անեն հնարաւոր զոհողութիւնը իրենց շրջանի խմբերը վերակազմելու եւ կանոնաւոր կապ պահպանելու մարմնիս հետ: Մենք մեզ իրաւունք ենք համարում այսպէս արտայայտուելու, ընկերներ, ի նկատի ունենալով անցեալ տարեշրջանի մի քանի խմբերի աննախանձելի վիճակը: Մոռ այդ վիճակը փոխանակ յուսահատութեան՝ նո՛ր խթան լինի ընկերների կուսակցական գիտակցութեան արթնացման եւ մղէ նրանց գործի ասպարէզ:

2.- Զանազան պատճառներով, որոնց տեղեակ էք արդէն մեր նախորդ շրջաբերականներից, հնարաւոր չեղաւ անցեալ տարեշրջանին յաջողեցնել «Ուսանողական համագումարը»: Մարմինս իր կողմից անհրաժեշտ եւ հնարաւոր է համարում նրա գումարումը ներկայ տարեշրջանում (ըստ հնարաւորութեան առաջիկայ տօների արձակուրդներին, այն է Դեկտ. 25-31 – Յունուար 6) հետեւեալ պատճառներով.

1.- Որոշ խմբերի կազմալուծման եւ միւսների գործունէութեան թուլութեան բուն պատճառների պարզաբանումը:

2.- Խումբ չեղած վայրերում կազմակերպելու հնարաւորութիւնն ու միջոցները:

3.- «Ուսանող»ի հրատարակութեան լուրջ հարցը, նրա նիւթական վիճակի ապահովումը կամ մի այլ պարբերականի վերածումը: Արդէն պարզ է ընկերներին N° 7-ի հրատարակութեան հետ կապուած մի շարք բարոյական, նիւթական ու տեխնիկական դժուարութիւնները, որոնք ստիպեցին մեզ որ համարը իր խոստացուած ժամանակից շատ աւելի ուշ հրատարակել մարմնիցս միանգամայն անկախ պատճառներով, իսկ N° 8-ը, հակառակ մեր գործ դրած ջանքերին ու ցանկութեան, մինչեւ այժմ էլ հնարաւորութիւն չունեցանք հրատարակել:

4.- Տեղի ունեցած կուսակցական VIIրդ Ընդհ. Ժողովի որոշումների հետ ծանօթանալն ու մեր պարտականութիւնների ճշտումը նրանց վերաբերմամբ:

5.- Գործադիր Նոր մարմնի ընտրութեան անհրաժեշտութիւնը (որովհետեւ Լայպցիգի հատուածը լուծուել է. ընկերներից մէկը հրաժարուել է վաղուց եւ մեկնել երկիր, իսկ միւսը փոխադրուելով Բերլին՝ իրեն մենակ է զգում եւ նպատակայարմար գտնում հրաժարուել կազմից):

Տալով վերոյիշեալ պատճառաբանութիւնները, առաջիկայ համագումարի հրաւիրելու առթիւ, խնդրում ենք ձեր առաջիկայ հերթական նիստերի նիւթ դարձնէք եւ աշխատէք մեզ շուտով պատասխանել հետեւեալ հարցերին.

ա) Համարո՞ւմ էք ձեր կողմից եւս անհրաժեշտ առաջիկայ համագումարը:

բ) Լինելու դէպքում ո՞ւրտեղ (անցեալ համագումարը ցանկութիւն յայտնած է Փարիզ գումարելու):

գ) Ե՞րբ էք յարմար գտնում նրա գումարումը (մեր կարծիքով կարելի է օգտագործել առաջիկայ տօների արձակուրդները (Դեկտ. 25 – Յունուար 6):

դ) Հնարաւորութիւն ունէ՞ք պատգամաւոր ուղարկելու. ցանկալի է ամէն ջանք գործ դնէք պատգամաւոր տա-

լու, որը անպայման կը նպաստէ համագումարը աւելի հետաքրքիր եւ արդիւնաւէտ դարձնելուն:

ե) Կարո՞ղ էք ձեր պատգամաւորի ամբողջ կամ գոնէ կէս ծախքը հոգալու:

Խնդրում ենք ուղարկէք օր առաջ ձեր կողմից օրակարգի մէջ մտցուելիք հարցերը, որպէսզի մարմինս հնարաւորութիւն ունենայ կազմելու ընդհանուր օրակարգը եւ ցրելու խմբերին, որպէսզի պատգամաւոր ընկերները իրենց հետ բերեն համագումարին իրենց շրջանի կարծիքները:

Խնդրում ենք Զաւարեանի որդու կրթութեան ֆոնդի հանգանակութիւնը շարունակէք: Ձեռնարկը մերժուած լինելով ընկերոջ մօր կողմից, մարմինս մտածում է հանգանակութեան արդիւնքով ժողովածու հրատարակել նուիրուած ընկերոջ յիշատակին, իսկ նրանից ստացածները յատկացնել նրա յիշատակին բացուելիք գիւղատ. դպրոցների ֆոնդին, թողնելով վերջնական որոշումը համագումարին:

Ընկերական բարեւներով՝
ԳՈՐԾԱԴԻՐ-ԽՄԲ. ՄԱՐՄԻՆ

Ժընեւ, 20-11-1913

Փաստ. 1473-85

Է 9.– ՓԱՐԻԶԻ ԽՈՒՄԲԷՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Գործադիր Մարմնին,

Ստացանք 21 Նոյ.ի ձեր նամակը, յարակից շրջաբերականով։

Ճիշդ է, անցեալ տարի շատ եռանդով գործի սկսանք եւ առաւել կամ նուազ արդիւնք ձեռք բերինք, բայց ինչպէս այն ժամանակ ալ ձեզ գրած ենք, անցեալ տարի Փարիզի մէջ կարողացանք մէկ խումբի մէջ հաւաքել բոլոր դաշնակցականները, ուսանող թէ արհեստաւոր։

Արհեստաւոր տարրը մեր անցեալ տարւոյ աշխատանքներուն մէջ ունէր խոշոր բաժին նիւթապէս եւ բարոյապէս։ Ուսանողները՝ հազուագիւտ բացառութիւնները մէկ կողմ առնելով՝ չէին ներայացներ ոչ նիւթական եւ ոչ բարոյական մասնաւոր արժէք մը։ Տարուած մեծ մասամբ մեծամիտ երեւակայութիւններով, միանգամայն անտեղեակ մեր ծրագրային աւանդական ուղղութեան եւ մանաւանդ ազգային եւ կուսակցական ռէալ պայմաններուն, իրենց վրայ պարտք վերցուցած ըլլալ կը թուէին, ժողովները զբաղեցնելու ակադեմական եւ խակ բնազանցական բանավէճերով։ Ասոնք պատահաբար եղեր էին դաշնակցական. ոչ մէկ տեղ՝ ոչ մէկ առթիւ չեն եղած դաշն. շարքերու մէջ։ Քննադատութիւն կուսակցութեան կազմակերպական սիստեմի մասին, քննադատութիւն՝ գործիչներու անձնաւորութեան մասին, քննադատութիւն՝ ուղղութեան մասին եւ այլն։ Արդիւնքը եղաւ, ինչպէս գրեցինք ատենին, բանուորներու բաժանումը որոնք կը ցանկային աւելի քոնքրէթ կուսակցական աշխատանք կատարել։ Կազմեցին ենթակոմիտէ մը, որուն միացան ուսանող-ուսանողուհիներէն անոնք որոնք տրամադիր էին գործով զբաղելու աւելի՝ քան խօսքով եւ իբրեւ դաշն. մարմին Փարիզի՝ սկսան աշխատիլ Արեւմտ. Բիւրոյէն ստանալէ յետոյ համապատասխան համաձայնութիւն։

Այժմ այդ ենթակոմիտէն, ուրախալի է ասել, կը գտնուի բաւական կենսունակ գործունէութեան մէջ, ունի մօտ 40 անդամ, կը հաւաքէ կանոնաւոր ամսավճար զոր կը ղրկէ Ժընեւ, կը կազմակերպէ դասախօսութիւններ, հանդէս եւայլն եւայլն եւ թէ մենք, թէ ընկ. Վարանդեանը կու տանք անոր մեր համեստ աջակցութիւնը։

Եթէ անպայման ուզէինք ուս. խումբ կազմել, պիտի պարտաւորուէինք երթալ ենթակոմիտէին մասնակցող ուսանող-ուսանողուհիները դուրս բերել — ինչ որ կը՝նար տեղի տալ նոր դժուարութիւններու եւ փոխանակ դրականի յառաջ բերել բացասական հետեւանք։

Եզրակացնելով, ըստ մեզ, եւ այս մասին խօսեր ենք նաեւ ընկ. Վարանդեանին, լաւ է ուժ տալ Փարիզի այս ենթակոմիտէին քան թէ երկպառակութիւն մտցնել իրենց կազմին մէջ, կամ դուրսը մնացած խայտաբղէտ տարրերով խումբ կազմել։

Այս պայմաններուն մէջ այլեւս մեզի չի մնար կարծիք յայտնել համագումարի մասին։ Աւելորդ է ըսել թէ մենք, քանի որ այնուամենայնիւ ուսանող ենք եւ դաշնակցական, կը մնանք ձեր տրամադրութեան տակ այն ամէն բարոյական աջակցութեան համար, զոր կարող ենք ընծայել ձեզ։

«Ուսանող»ի մասին մենք ունինք մեր առաջարկները — եթէ ուզէք լսել կը գրենք։

Ընկերական բարեւներով
Բ. ՇԱՀՊԱԶ
Ռ. ՇԻՇՄԱՆԵԱՆ

Փարիզ, 25-XI-13

Փաստ. 1473-121

Է 10.– ՓԱՐԻԶԻ ԽՈՒՄԲԻՆ ՏԵՍԱԿԷՏԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գործադիր Մարմնին

Ընկերներ,

Ամսոյս 7-ին խմբական ժողովին մէջ Ձեր վերջին շրջաբերականի ընթերցումէն վերջ՝ ընկերները հետեւեալ եզրակացութեան եկան.

ա. Համագումարը այնքան ալ անհրաժեշտ չգտնուեցաւ. եղած հարցերէն ամենագլխաւորը — Դաշնակցութեան գործունէութեան մասին, խումբս համաձայն է Գործադիր-Խմբ. Մարմնի տեսակէտին — «Որ համագումարը ոչինչ չպիտի աւելացնէ կամ պակսեցնէ այն գործելակերպին վրայ՝ որուն կը հետեւի ներկայիս մեր կուսակցութիւնը»։

բ. Երկրորդ կարեւոր հարցը — Ուսանողի հրատարակութեան հարցն է. նախորդ ժողովներու մէջ մեր խումբը այդ մասին իր կարծիքը յայտնած էր. այս անգամ կարդալով շրջաբերականը եւ վերահասու ըլլալով «Ուսանող»ի նիւթական դրութեան՝ խումբս կը հաստատէ իր նախորդ ժողովներու մէջ յայտնած կարծիքը —«Դադրեցնել «Ուսանող»ի հրատարակութիւնը, եւ եթէ նիւթական հնարաւորութիւն կայ, հրատարակել ամսական փոքրիկ bulletin *մը՝ Եւր. հայ ուսանողական կեանքը պատկերացնող։ Իսկ եթէ նիւթական պայմանները այդ ալ թոյլ չեն տար՝ սպասել առայժմս։*

Պիտի աւելցնել որ մեր խումբն ալ նիւթական լաւ պայմաններու մէջ չի գտնուիր թէ իր պատգամաւորի ծախսը հոգալու եւ թէ համագումարը Փարիզ գումարուած պարագային միւս խումբերու պատգամաւորներու ճանապարհածախսին մասնակցելու։

Ըստ մեր կարծիքին աւելի յարմար կը լինէր որ միւս խումբերն ալ «Ուսանող»ի եւ ուրիշ հարցերու մասին իրենց կարծիքները Ձեզ հաղորդելէ վերջ՝ դուք այդտեղ խումբերէն եկած կարծիքներու վրայ հիմնուած պէտք եղած կարգադրութիւնները ընէիք։

Վերոյիշեալ պատճառներու համար խումբս գոնէ այս տարուայ համար աւելորդ կը գտնէ համագումարը։

Գործադիր Մարմնի ընտրութեան մասին Ձեր առաջարկած ձեւը յարմարագոյնն է.— պակսած անդամներու տեղ անցունել փոխ անդամները։

Հ.Յ.Դ. ՓԱՐԻԶԻ ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԻՑ

Քարտուղար՝ Գ. ԵՐԱՄԵԱՆ — *Ներկայացուցիչ՝* ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

[1913 թ.]

Փաստ. 1473-124

Է 11.– Հ.Յ.Դ. ԵՒՐ. ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ. ՄԱՐՄՆԻ ԺԸՆԵՒԻ ՀԱՏՈՒԱԾԻՆ

Սիրելի ընկերներ,

Այս րոպէիս ստացայ Ձեր ուղարկած նամակը։

Պոլսոյ ուսանողական միութեան համագումարին մասնակցելու հրաւէրը պէտք է ընդունիլ ուրախութեամբ։ Ցուսանք, որ դորանով հիմք է դրուելու մեր աւելի մօտիկ յարաբերութիւններին։ Ձեր առաջարկը՝ կեդրոնների մէջ կապ պահպանելու եւ մի տեղեկատու բիւրօ ստեղծելու Ուսանողական միութիւնների համար, ես էլ եմ գտնում շատ էական։ Այդ հարցը մենք էլ անշուշտ կը մտցնենք մեր համագումարի օրակարգի մէջ։

Փարիզի նամակը կարդացի։ Համագումարը այնտեղ անելու մասին խօսք չի կարող լինել։ Ընտրութեան ժամանակ չպէտք է մոռացուի եւ այն հանգամանքը, որ համագումարի վայրը կարող է լինել այնպիսի մի քաղաք ուր խմբակը ուժեղ է, [որպէս]զի վերջինի անդամները կարողանան համագումարին ներկայացնել այն խմբակները, որոնք սեփական պատգամաւոր չեն կարող ուղարկել։ Վատ չէր լինի, եթէ մենք այդ տեսակ ընկերների ցանկը կազմելով նախապէս ուղարկենք վերեւ յիշածս վայրերը։ Այդ տեսակէտից այժմ Բերլինը ամենայարմարն է. կան բաւականի կուսակցականներ, ափսոս միայն, որ հեռու է կենտրոնից։

Երկու օրս տեղի ունեցաւ մեր հաւաքումը շրջաբերականի առթիւ։ Որոշուեց՝

1) Մասնակցել համագումարին
2) Համագումարը կայացնել Դեկտեմբերին
3) Հոգալ պատգամաւորի ամբողջ ծախքը
4) Ցետագայ համագումարը նշանակել Բերլին։

Երկու օրից յետոյ ժողովելու ենք օրակարգի մասին խորհելու համար։

Ընկերական բարեւներով՝
ԴԱՒԻԹ [ԽԱՆԵԱՆ]

[1913 թ.]

Փաստ. 1473-79

Է 12.– ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԷՆ

Սիրելի Մարգիս!

Մի քանի օր է Պետերբուրգ եմ. եկել էի զեկուցումներ տալու։ Նորից եմ վերադառնում Խարկով քննութիւնների համար։

Տեղւոյս դաշնակցական ուսանողների մէջ միտք է ծագել այս յունուարին համառուսական համագումար հրաւիրել։ Միտքը արդէն բաւական հասունացած է. լինում են ժողովներ այստեղի մօտ 100-ի չափ ընկերների կողմից ընտրուած ներկայացուցիչների։

Եւ շատ շուտով պիտի դիմումներ անեն նաեւ այլ քաղաքներ, ինչպէս եւ ձեզ։

Խնդրում եմ նամակս ստանալուց փակ փոստով ուղարկես Եւ. Դ. Ուս. Մ. կանոնադրութիւնից մի քանի օրինակներ, որպէսզի օգտուին այստեղի ծրագրի համար։

Ուղարկիր ինչ որ անհրաժեշտ է, դու կ'իմանաս։

Ահա հասցէներ՝

1) Սանկ Պետերբուրգ, Քարէ կղզի, Գիւղատնտեսական դասընթացքների ուսանող Մանգաս Մարկոսեանին[138];

2) Սանկ Պետերբուրգ, Հոգեջղային ինստիտուտի ուսանող Կիրակոս Զարբաբեանին[138];

Ի հարկէ շատ լաւ կը լինէր, որ Ե. Դ. Ուս. ներկայացուցիչը գար այդ համագումարին։ Կարծում եմ, որ Համագ.-ը գլուխ կը գայ։ Այստեղի գործերը վատ չեն։

Խարկովից կ'ուղարկեմ իմ հասցէս եւ մանրամասն կը գրեմ։

Բոլոր ընկերներին ջերմ բարեւներս։

Միշէլին խնդրիր, որ Խարկով դո վոստրեբովա-ցիէ[138ա] *ինձ, գրի* Վերա Նաումովա-ի[138] *հասցէն. հարկաւոր է ինձ։ Միքայէլին*[12] *ուղարկիր բարեւներս։*

Ջերմ համբոյրներով՝
ԱՐՏԱՇԷՍ [ԲԱԲԱԼԵԱՆ]

14/ *Նոյեմբերի* 1913 *թ.*
Պետերբուրգ

Փաստ. 1472-177գ

Է 13.– ԺԸՆԵԻԻ «ՋԱՆՔ» ԽՈՒՄԲԷՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Ընկերներ!

4-XII-1913

«Ջանք» խմբի 27-ին Նոյեմբերի 1913 *թ.հերթական ժողովում (ներկայութեամբ* 21 *հոգու) իբրեւ օրակարգի հարց, կարդացուեց Գործադիր Մարմնիդ* N°6 *շրջաբերական նամակը։*

Համաձայն լինելով այն բացատրութիւններու հետ, որ Գործադիր Մարմինդ տուել է Միութեան համագումար հրաւիրելու առթիւ, յայտնում ենք «Ջանք»ի որոշումները՝

1) *«Ջանք» խումբը (միաձայն) սկզբունքով ընդունում է Եւր. Հ.Յ.Դ. Ուս. համագումարի անհրաժեշտութիւնը։*

2) *Համագումարին «Ջանք» խումբը տալիս է իւր պատգամաւորները։*

Ծանօթ՝ Պարիզ լինելու դէպքում 2 հոգի եւ Լօզանում – 5 հոգի:

3) *«Ջանք»ը հոգում է իւր պատգամաւորների ծախքը (ճանապարհածախք եւ ապրուստի աւելորդ ծախք) լիովին։*

Համագումարի տեղի մասին խօսելիս՝ համագումարը հրաւիրելու համար երկու քաղաքների մասին ցանկութիւն յայտնուեց, այն է Փարիզ, որի համար ձայնակցեցին 9 *հոգի եւ Լօզանի* – 10 *հոգի։*

«Ջանք»ը իւր յետագայ ժողովներում կը մշակէ Միութեան համագումարի օրակարգի մէջ առաջարկուելիք հարցերը եւ ժամանակին կ'ուղարկէ Մարմնիդ։

Ընկերական բարեւներով
Ի դ[իմաց] «Ջանք» ուսանողական խմբի քարտ[ուղար]՝ ՄԻՇԷԼ

138.- Բնագրին մէջ ռուսատառ:
138ա.- Խարկով պահանջելու ինձի համար:

Փաստ. 1457-5

Հ. Յ. Դ.
Կ. ՊՈԼՍՈՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Է 14.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Բերա, 22 Նոյեմբեր 1913

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Ուս. Միութեան տարեկան համագումարը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Կիրակի Նոյ. 24*ին, առտուան ժամը* 10*ին (Ը[ստ] Ե[ւրոպականի]) – ներփակ օրակարգերով զբաղուելու համար։*

Երկուքուկէս տարիէ ի վեր գոյութիւն ունի Դաշնակցական Ուսանողական Միութիւնը, որ ունեցած է իր որոշ գործունէութիւնն այս շրջանին մէջ։

Այս տարուան համագումարը Միութեան համար վերակազմութեան *եւ* ուժեղացման *գլխաւոր առիթն է։*

Ցաւով կը յայտնենք որ կազմութեան օրէն մինչեւ հիմա, կուսակցութեան ղեկավար մարմինները ոչ միայն միութեան բարձրացման եւ ցանկալի ուղղութիւն մ'ունենալուն չեն նպաստած եւ ընկերական անհրաժեշտ թելադրանքներն ու խորհուրդները չեն տուած, այլ նոյնիսկ քանի մ'անգամ բացասական դիրք են բռնած անոր հանդէպ եւ վարկաբեկած զայն, որ ինքնին կուսակցութեան վարկաբեկումը կը նշանակէ։

Հ. Յ. Դաշնակցութեան ծոցին մէջ մտաւորական երիտասարդութեան մը համախմբումն ու համապատասխան ուղղութեամբ պատրաստութիւնը, նոյն կուսակցութեան համար որքան անհրաժեշտ լինելը մեզմէ աւելի լաւ կ'ըմբռնէք։ Ցանկանալով, ոչ միայն վերջ տալ թիւրիմացութիւններու, այլ աւելի արդիւնաւոր դարձնելու միութիւնը կուսակցութեան համար, կը փափաքինք որ Ձեր կողմէ մէկը, մասնակցէր համագումարին, լսէր մեզի եւ թոն ու ուղղութիւն տար ընկերներուն։

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Դ. ՊՈԼՍՈՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Փաստ. 1473-92

Է 15.– Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

25 ԴԵԿՏ. 1913Է ՄԿՍԵԱԼ

[Հրաւէր եւ Օրակարգ]

Ընկերներ,

Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուսանողական Միութեան V-րդ Համագումարը տեղի կ'ունենայ ամսիս [Դեկտ. 1913] 25-ի առաւօտեան ժամը 9-ին՝ Փարիզում։

Խմբերը հրաւիրւում են ներկայ օրակարգը իրենց հերթական նիստերի նիւթ դարձնելով, պարզաբանել իւրաքանչիւր հարց եւ խմբի թէ մեծամասնութեան եւ թէ փոքրամասնութեան կարծիքները իրենց պատճառաբանուած բանաձեւերով, խմբի պատգամաւոր ընկերոջ հետ ուղարկել Համագումարին։

Օրակարգի հարցերն են.

1) *Ժողովի կազմը եւ բացումը։*
2) *Պատգամաւոր ընկերների մանդատների վաւերացումը։*
3) *Դիւանի ընտրութիւն։*
4) *Գործադիր Մարմնի զեկուցում եւ հաշուետուութիւն։*
5) *Խմբերի զեկուցում։*
6) *«Ուսանող»ի հրատարակութեան նիւթական միջոցների ապահովում կամ մի այլ պարբերականի վերածելը։*
7) *Կուսակցական VII-րդ Ընդհ. Ժողովի որոշումներն ու մեր պարտականութիւնները։*
8) *Որոշ խմբերի կազմալուծման եւ միւսների գործունէութեան թուլութեան պատճառները. խումբ չեղած վայրերում կազմակերպելու հնարաւորութիւնն ու միջոցները։*
9) *Զանազան երկրներում (Եւրոպա, Ամերիկա, Ռուսաստան եւ Տաճկաստան) գոյութիւն ունեցող Դաշն. Ուս. Միութիւններու փոխյարաբերութիւնները եւ դրանց կողմից ընտրուած մի տեղեկատու բիւրոյի կամ մարմնի անհրաժեշտութիւնը։*
10) *Մեր յարաբերութիւնները Եւրոպայի զանազան շրջաններում կազմակերպուած դաշնակցական ոչ ուսանողական խմբերի ու մարմինների հետ։*
11) *Մեր վերաբերմունքը դէպի հայկական բարենորոգումները։*
12) *Խմբերից ու անհատ ընկերներից եկած առաջարկներ։*
13) *Միութեան կանոնագրի վերաքննութեան հարց։*
14) *Գործադիր Մարմնի ընտրութիւն։*
15) *Առաջիկայ համագումարի ժամանակը եւ տեղի որոշումը։*
16) *Դասախօսութիւններ։*

Մանօթ.- Խնդրում ենք՝ ա) Համաձայն ներփակ աղիւսակի կատարէք խմբիդ վիճակագրութիւնը եւ կցէք խմբի գործունէութեան զեկուցման եւ հաշիւներին։ բ) Առաջարկում ենք իւրաքանչիւր պատգամաւոր ընկերոջ պատրաստել մի դասախօսութիւն, նախօրօք յայտնելով նիւթը Մարմնիս, նախ քան Համագումարը։

Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ժընեւ, 11 Դեկտ. 1913

Փաստ. 1473-93

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. Դ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ
UNION DES ÉTUDIANTS ARMÉNIENS DASCHNAKTZAKANS DE L'EUROPE
13 Դեկտեմբեր 1913
Ժընեւ
N° 223.
Բուած 2 օրի օրինակ.

Է 16.– Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, Ժընեւ

Ընկերներ!

Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուսանողական Միութեան V-րդ համագումարը որոշուած է ամսիս 25-ին Փարիզում։ Համագումարին մասնակցելու են Եւրոպայի զանազան վայրերում ունեցած ուսանողական խմբերի պատգամաւորները։

Ներփակ ուղարկելով համագումարին օրակարգը, խնդրում ենք ծանօթանալ եւ Ձեր կարծիքները Բիւրոյիդ պատգամաւոր ընկերոջ հետ ուղարկէք համագումարին։

Ընկերական բարեւներով
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. Դ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ
UNION
des ÉTUDIANTS ARMÉNIENS
DASCHNAKTZAKANS
DE L'EUROPE
1908

Փաստ. 1473-91

Է 17.– Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

Դժբախտաբար, Ձեզ ոչ մի բանում գոհացում տալու հնարաւորութիւն չունինք ոչ պատգամաւոր կարող ենք ուղարկել եւ ոչ էլ՝ տեղեկագիր կամ որեւէ գրաւոր զեկուցում՝ որովհետեւ այս րոպէիս դեռ Ռուսաստանում պաշտօնապէս գոյութիւն չունի դաշնակցական ուսանողական միութիւն, այլ միայն՝ կայ մի նախաձեռնող մարմին, որը աշխատում է նման կազմակերպութիւն առաջ բերել նաեւ մեզ մօտ Ռուսաստանում։ Այդ ուղղութեամբ արդէն որոշ աշխատանք կատարուած է ու վերջնականապէս համաձայնութեան ենք եկած՝ Ռուսաստանի համալսարանական քաղաքների — Մոսկուայի, Խարկովի, Կիեւի, եւ Իւրեւի[?] — դաշնակցական ուսանողների հետ, որոնք նոյնպէս տեղական մարմիններ են կազմում միութեան ու համագումարի հարցերով զբաղուելու համար։

Այժմ արդէն որոշ բան կատարուած է ու համագումարը նշանակուած՝ գալիք տարուայ փետրուար ամսի վերջերին։

Սա մեր անդրանիկ համագումարն է։

Այս է պատճառը, որ մենք իրաւամբ չհամարեցինք պաշտօնապէս մասնակցիլ համագումարիդ — ոչ պատգամաւոր ուղարկելով եւ ոչ էլ որեւէ գրաւոր զեկուցում տալով։

Զսփազանց ցաւում ենք, որ մեր համագումարը ուշացաւ ու մենք ձեզ հետ միկտեղ աշխատելու հնարաւորութիւնից զրկուեցանք։

Ցանկանում ենք ձեզ եռանդ ու յաջողութիւն՝ թէ համագումարիդ աշխատանքների եւ թէ՝ միութեանդ գործունէութեան ընթացքում։

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Դ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆ
Ի դիմաց ընկերների՝
[*Ստորագրութիւնը անընթեռնելի*]

Ց.Գ.- Խնդրում ենք ուղարկել մեզ համագումարիդ որոշումները։

Համագումարիդ օրակարգի 9 պունտը[139] *ու նրա որոշումը ձեզ մօտ՝ խորհրդակցութեան՝ նիւթ կը ծառայէ նաեւ մեր համագումարին։ Ի դէպ է ասել, որ ռուսահայ ընկերների վերաբերմունքն դէպի այդ հարցը՝ դրական է։*

Մեր հասցէն
Սանկտ Պետերբուրգ, Գիւղատնտեսական բարձրագոյն դասընթացքների ուսանող Մանգաս Մարկոսեան[139ա]։

Ս. Պետերբուրգ, 9 Դեկտ. 1913 թ.

139.- Յիշուած 9դդ կէտը տեսնել նախորդ փաստ. 1473-92ի մէջ։
139ա.- Բնագրին մէջ ռուսատառ։

Փաստ. 1473-107

Է 18.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՄԲ. ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1911 Ապրիլ 9-ից – 1913 Դեկտ. 25

ՄԻՈՒԹԵԱՆ V-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ընկերներ!

Մարմնի գործունէութեան գլխաւոր զբաղմունքներից մէկը լինելով «Ուսանող»ի հրատարակութիւնը, կ'ուզէինք ընդհանուր գծերով ծանօթացնել ընկերներին նրա անցեալ եւ ներկայի վիճակին՝ նկարագրելով նրա նիւթական վիճակն ու ընդունելութիւնը ինչպէս եւ տարածումը զանազան շրջաններում։

Մարմինս IVրդ համագումարից անմիջապէս յետոյ գործի անցնելով տուել է իր անդրանիկ շրջաբերականը ուր կոչ է արել մեր շրջանի բոլոր ընկերներին աջակցել «Ուսանող»ին իրենց աշխատակցութիւնով եւ նպաստել նրա տարածման. բացի դա, ի նկատի առնելով IV-րդ համագումարի որոշումը որով «Ուսանող»ը ուսանողական օրգան լինելուց դադարում եւ դառնում էր «Հըբատարակութիւն» Եւրոպայի Դաշն. Ուս. Միութեան, ուր մասնակցել կարող էին ո՛չ ուսանող ընկերներ, դիմումներ է արել այդպիսիներին Եւրոպա, Տաճկաստան եւ Պարսկաստան, քիչ յետոյ էլ Ռուսաստան, չնայած տիրող քոնսպիրացիա[140] պայմաններին. եւ պէտք է ասել որ այդպիսի ընկերներ նպաստել են իրենց յօդուածներով «Ուսանող» N° 7-ին, որի բովանդակութեան 16 նիւթերից 6-ը պատկանում է ո՛չ ուսանող ընկերներու աշխատակցութեան։ Նման դիմումներ եղել է նաեւ խմբերին, լինի դա շրջաբերական կոչի կամ պաշտօնական գրութիւններու միջոցով. դժբախտաբար ընկերներու մասնակցութիւնը, համեմատած եղած դիմումներուն եղել է շատ դանդաղ, ոմանք պատճառաբանելով իրենց ժամանակի սղութիւնը. ոմանք էլ «Ուսանող»ի հրատարակութեան խոստացուած ժամանակից ուշացուիլը. մի բան որ նպաստել է «Ուսանող» N° 7-ի անխնամ լինելուն որին կ'անդրադառնանք յետոյ։

Չնայած նախորդ Գործադիր Մարմինը մեզ յանձնել է իր տրամադրութեան տակ գտնուած յօդուածներ N° 7-ի համար եւ Մարմինս իր հերթին, գործի անցնելուց անմիջապէս յետոյ, ինչպէս վերը յիշեցինք, իր շրջաբերական կոչ ու նամակներով դիմումներ է արել ուսանող եւ ոչ ուսանող ընկերներին նպաստելու իրենց յօդուածներով «Ուսանող»ին, բայց եւ այնպէս «Ուսանող» VII-րդ համարը ցրել է խոստացուած ժամանակից 6 ամիս աւելի ուշ (փոխանակ 1912-ի Սեպտեմբեր, 1913-ի Փետրուարին) որը տեղի է տուել շատ բաժանորդների իրաւացի բողոքներին ու պահանջներին, սակայն պատճառները միանգամայն անկախ Մարմնից եւ հակառակ նրա ցանկութեան [էին]։ Մի կողմ թողնելով մի շարք մանր ու մունր պատճառները կ'ուզէինք քիչ կանգ առնել նրանց 3 գլխաւորների վրայ.

ա) Նիւթերի պակասութիւն.

բ) Ուսանողական կենտրոնից եւ Գործ. Խմբ. Մարմնի խնամքից հեռու լինելու պատճառ եւ

գ) Նիւթականի պակասութիւն։

Նիւթերի պակասութեան հարցի առթիւ պիտի ասենք։ Ընդունելով հանդերձ այն իրողութիւնը որ N° 7-ի 16 նիւթերից 10-ը արդիւնք է ուսանող ընկերներու աշխատակցութեանց, սակայն դրա հետ միասին չենք կարող չընդգծել այն փաստը, որ այդ յօդուած ու նիւթերի մեծ մասը (եթէ չասենք բացառութեամբ մի երկուսի) մեր ձեռքն է հասել շատ աւելի ուշ քան պէտք էր եւ դա մի շարք դիմումներից յետոյ. պատճառը պէտք է վերագրել մեր կարծիքով նախ ընկերների դէպի կուսակցական մամուլը տածած անտարբերութեան եւ ապա նրան որ մեր ուս. ընկերներ չեն ձգտում առ հասարակ գրական ասպարէզում սիստեմատիկ կերպով որոշ աշխատանք կատարելու՝ եթէ անտես առնենք մի քանի ընկերների այդ ուղղութեամբ ունեցած տրամադրութիւնը. այդ իսկ պատճառով պիտի նկատել որ մարմնիս էներգիայի[118] աչքի ընկնող մասը վատնուել է ուսանող եւ ո՛չ ուսանող ընկերներին արած դիմումների վրայ – «Ուսանող» N° 7-ի պակաս յօդուածները լրացնելու համար. դրանից յետոյ չնայած դիմումները նոյն ուղղութեամբ շարունակուել են N° 8-ի համար, սակայն մինչեւ օրս բացի յօդուածների խոստումից եւ ո՛չ մի յօդուածը որեւէ ընկերոջից ստացուած է։

«Ուսանող» N° 7-ը Պոլսում տպագրելու հարկադրուած լինելը նոյնպէս եղել է նրա ուշանալու բուն պատճառներից մէկը։ Հնարաւորութիւն չունենալով օգտուելու «Դրօշակ»ի տպարանից, ստիպուած ենք եղել «Ուս»-ը հրատարակել «Ազատամարտ»ի տպարանում, որի հետ միասին սկսել ենք ահագին թղթակցութիւն թէ մարմնիս Լայպցիկի հատուածի հետ ստացած յօդուածների առթիւ կարծիքների փոխանակութեան համար, թէ «Ազատամարտ»ի վարչութեան հետ նրա տպագրական ու այլ աշխատանքների (սրբագրութիւն, յօդուածների փոխադրութեան, արժէքի եւայլնի) մասին թէ Լուսաղբիւր հրատարակչական ընկերութեան հետ նրա փոխադրութեան առթիւ. ներկայ պատճառները կապելով նրա ուշանալուն հետ կ'ուզէինք մի քանի խօսք ասել նրա խնամքի մասին ի նկատի ունենալով այն հանգամանքը որ մի շարք յօդուածագիր ընկերներ իրենց դժգոհութիւնն են յայտնել N° 7-ի հրատարակութեան անխնամ լինելու առթիւ։

Ինչպէս ասացինք տեղումս ազատ կամ տրամադրելի տառեր չլինելով ստիպուած ենք եղել «Ուսանող» N° 7-ը հրատարակել Խմբ. Մարմնի վայրից հեռու, որը ունեցել է իր մի շարք տեքնիքական ու այլ անյարմարութիւնները մի կողմ թողնելով սղութիւնը, որը նոյնպէս առանձին նշանակութիւն ունի միութեան նիւթական վիճակի համար։ Վերցնենք նրա բարոյական կողմը՝ Խմբագրական Մարմնից հեռու տպագրելու պատճառով։ Հակառակ նրա գործ դրած բոլոր ջանքերին, սըրբագրութեան, ոճի ուղղութեան, լեզուի պարզութեան եւն բաները կանոնաւոր առաջ տանելու, նա դուրս է գալիս (գոնէ 7-րդ համարը այդպէս է եղել) անխնամ եւ շատ թերութիւններով. տիպիկ օրինակ կարող է լինել 7-րդ համարը – որի սրբագրութեան եւ այլ խնամքի համար, հակառակ մեր մի շարք յանձնարարական նամակների ուղղուած «Ազատամարտ»ի վարչութեան եւ մասնաւոր ընկերների այդ առթիւ, մնաց անհետեւանք եւ իր անխնամ հրատարակութեամբ տեղի տուեց մի շարք դժգոհութիւնների։ Հակառակ մեր ցանկութեան եւ մեր գործ դրած բոլոր ջանքերին հնարաւորութիւն չենք ունեցել նոյնիսկ «Ուսանող» N° 7-ի վերջին սրբագրութիւնը մեր ձեռքով կատարելու, որովհետեւ դրա դիմաց էլ «Ազատամարտ»ի վարչութիւնը առարկութիւն է ունեցել, տրամաբանելով այն տեսակէտից որ հնարաւորութիւնը չպիտի ունենայ տառերը 2-3 շաբաթով պարապեցնել՝ մինչեւ տպագրուած յօդուածների մեզ ուղարկել, սրբագրել եւ վերադարձնելը եւ, բացի դա, այդ անելու համար խոստանում էր մի ամիս աւելի ուշ տալ – մինչդեռ առանց այն էլ խոստացուած ժամանակից 6 ամիս ուշացել էր եւ մենք ստիպուած ենք եղել սրբագրութեան ամբողջ գործը Պոլսոյ ընկերների եւ «Ազատամարտ»ի վարչութեան վստահանալ։ Ի նկատի ունենալով N° 7-ի հետ կապուած բոլոր դժուարութիւններն ու բարդութիւնները, կը յանձնարարէինք առաջիկայում ընտրուելիք Գործադիր Մարմնին ըստ հնարաւորութեան խուսափիլ N° 8-ի հրատարակութիւնը Մարմնի գտնուած վայրից հեռու հրատարակելու, համոզուած լինելով նրա խնամքի գործը ինչպիսի պայմաններում էլ որ գտնուելու լինի պիտի որոշ չափով տուժէ։

Գալով նիւթականի պակասին, կ'ասենք այն պայմաններում ինչ եղել է N° 6 եւ 7-ը, բաւական աննախանձելի է եւ եթէ արմատական միջոցներ ձեռք չառնուեն նիւթականի վիճակը բարեկարգելու անպայմանօրէն պիտի կաղայ առաջիկայ համարների հրատարակութեան գործը։ Մի թեթեւ ծանօթութիւն բաւական պիտի լինի ապացուցելու մեր ասածները։ «Ուսանող» N° 7-ը տպուել է 1000 օրինակ որի համար տրուած է տպագրութեան, թղթի եւ լաթի ծախք մօտ 1200 ֆրք., նրանից ցրուած է 800 օրինակ զանազան երկրներում եւ տըրուած [է] 300 ֆրք.-ից աւելի փաստային ծախս, մինչդեռ ցրուած 800 օրինակի փոխարժէքի դիմաց մարմինս, գործակալ ընկերներին արած բազմիցս դիմումներից յետոյ, ստացել է 860,70 ֆրք. միայն, մի գումար որ չէ ծածկում ամբողջ ծախքի կէս մասը. թերեւս առարկութիւն կը լինի որ ահագին ապառիկներ կան ստանալիք, որոնք կարող են ծածկել եղած բացը – որին կը համաձայնէինք եւ մենք, սակայն գործակալ ընկերներից մի խոշոր մասի ցոյց տուած վերաբերմունքը դէպի իրենց ստանձնած պարտականութիւնը մեզ տանում է յոռետեսութեան ի նկատի ունենալով այն հանգամանքը որ մեր գրած պաշտօնական նամակներն, ուղղած կոչերը որոնցով բացատրել ենք «Ուսանող»ի նիւթական վիճակի անձուկ դրութիւնը, կամ բոլորովին կամ շատ քիչ արձագանք են գտել նրանց կողմից։ Մինչդեռ եթէ «Ուսանող»ը պիտի հրատարակուի դա իր փոխարժէքներից է որ պիտի ծածկէ իր բոլոր ծախքերը, քանի որ միութեան երկրորդ նիւթական աղբիւրը, որ է խմբերից ստացած վճարները, հազիւ հազ են ծածկում մարմնի վարչական ծախքերը։

«ՈՒՍԱՆՈՂ»Ի ՏԱՐԱԾՈՒՄԸ

«Ուսանող»ը, ինչպէս ասացինք տպագրուած է 1000 օրինակ եւ տարածուած հայաշատ կենդրոնները, Ամերիկա, Եւրոպա, Եգիպտոս, Տաճկաստան եւ Պարսկաստան։ Ռուսաստանում տիրող կոնսպիրատիւ[140] պայմանները թոյլ չեն տուել այնտեղ եւս ցրել, բացառութեամբ մի քանի օրինակների որոնք ուղարկուած են հայ թերթերու խմբագրութեանց։

Ամերիկայում բաժանորդների թիւն է	*75 օրինակ*
Ամերիկայում հատավաճառութեամբ ցրուած է	*125 օրինակ*
Եւրոպա, Բալկանեան թերակղզում բաժանորդներ	*9 օրինակ*
Եւրոպա, Բալկ. թերակղզ. հատավաճառութեամբ	*–*
Եւրոպայի ուսան. խմբերի ընկերներին	*136*
Եգիպտոսի բաժանորդներին	*21*
Տաճկաստան »	
որի մի մասը հատավաճառութեամբ	*248*
Պարսկաստան բաժանորդներ	*97 օրինակ*
Պարսկաստան հատավաճառներ	*–*

Սակայն ընդունելով հանդերձ N° 7-ի տարածման

140.– Գաղտնի, գաղտնիացման։

առթիւ բաժանորդ եւ հատով ծախուածները — փաստացի թուեր, դիտել պիտի տանք որ «Ուսանող»ը անպայմանօրէն դրանից աւելի կը տարածուի, որովհետեւ N° 7-ի հրատարակութեան շրջանը եղել է աննպաստ — նրա տարածման տեսակէտից։ Թուրք-բալկանեան պատերազմի պատճառով շատ գործակալ ընկերներ հեռացած են եղել իրենց շրջաններից եւ հնարաւորութիւն չեն ունեցել կատարելու ժամանակին իրենց պարտականութիւնը։ միւս կողմից «Ուսանող»ի գնող ու ընթերցողները, լինելով այդ երկրներում երիտասարդ տարրը, մինչդեռ դրանիցից մի խոշոր մասը մասնակցելով պատերազմին, անշուշտ չէ գնել «Ուսանող»ը կամ հնարաւորութիւն չէ ունեցել գնելու, որից անպայմանօրէն տուժել է որոշ չափով տարածման գործը։ Պարսկաստանը նոյնպէս այդ շրջանում չէ գտնուել նպաստաւոր պայմաններում չնորհիւ ռուսական բիրտ քաղաքականութեան եւ երկրի ներսում ունեցած ուժեղ միջամտութիւններին (քոնտրոլ մամուլի, փոստային վարչութեան եւն)։ այնպէս որ եղած թուերը Տաճկաստան, Պարսկաստան եւ Բալկանեան երկրներում չպիտի ընդունել որպէս բազ կամ իսկական քանակը «Ուս»-ի տարածման։

«ՈՒՍԱՆՈՂ»Ի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

«Ուսանող»ի ընդունելութեան մասին մենք չէ որ մեր կարծիքը պիտի յայտնենք ընդունելով որ այդ դերը պատկանում է նրա ընթերցողներին, սակայն մեր պարտքն ենք համարում արձանագրելու այն թեր եւ դէմ կարծիքները որոնք ստացել ենք զանազան շրջանների ուսանող եւ ոչ ուսանող ընկերներից, կցելով դրան կուսակցական եւ անկուսակցական մամուլի կարծիքները,— նախ «Ուսանող»ը որպէս հրատարակութիւն Եւրոպայի կուս. ուսանողութեան եւ հետեւապէս արտայայտիչ նրա գաղափարների ու աշխարհայեացքների ի՞նչ չափով է կարողացել ծառայել իր նպատակին։ Եթէ հիմնուելու լինինք VII-րդ համարի բովանդակութեան վրայ պիտի տեսնենք որ նրա մի խոշոր մասը նուիրուած է կուսակցական տեսակէտներ պարզաբանող նիւթեր ու խնդիրների վրայ եւ հետեւապէս այդ տեսակէտից նա հնարաւորութիւն է ունեցել եթէ ոչ լրիւ գոնէ որոշ չափով բաւարարութիւն տալու այդ պահանջին։ Մենք չենք մերժել գիտական, պատմական ու քննադատական յօդուածները, որովհետեւ դա հակառակ կը լինէր նախորդ համագումարի որոշման։

Ուղղութեան մասին մեր ստացած զանազան շրջանների կարծիքները՝ Եւրոպա, Տաճկաստան եւ Պարսկաստանից, քաջալերական են եւ տեղի չկայ դժգոհելու։ «Ուսանող»ի ընթերցողները լինելով մեծ մասամբ ուսանող եւ ոչ ուսանող կուս. ինտելիգենցիան, այդպիսիներից պէտք է ասել որ քննադատական գրութիւններ չենք ստացել նիւթերի կամ առհասարակ բովանդակութեան մասին։ այդպիսի քննադատութիւն եղել է կուսակցական օրգաններից «Դրօշակ», «Ազատամարտ» եւ «Հայրենիք»ում, իսկ ոչ կուս. մամուլից՝ «Հորիզոն» եւ «Բիւզանդիոն»ում։ յատկապէս «Հորիզոն»ը իր «գրախօսական»ի բաժնում զետեղել է մի շարք քննադատական յօդուածներ նուիրուած N° 7-ի սոցիալիստական տեսակէտներ պարզաբանող յօդուածներին, որոնք նը-պաստաւոր են եղել ընդհանուր առմամբ։ Երկրի զանազան վայրերից ստացել ենք (մասնաւոր անհատ կամ ազգային ու կուլտուրական հիմնարկութիւններից) քաջալերական գրութիւններ որոնցով ուզել են «Ուսանող»ը որպէս Եւրոպայի կուսակցական մտաւորականութեան ձեռնարկ ծանօթանալու նրա բովանդակութեան հետ եւ ցրելու իրենց շրջանում, բայց դրանց հետ միասին ստացել ենք նաեւ երկրի գաւառների գործակալ ընկերներից, այնպիսի գրութիւններ, որոնք ցաւ են յայտնելիս եղել «ուսանող»ը չկարենալ իրենց շրջանում տարածելու համար չնորհիւ այն հանգամանքի, որ նրա բովանդակութեան մեծ մասը անմարսելի է գաւառացի միջակ կրթութիւն ստացած երիտասարդութեան համար, որովհետեւ նա չօշափում է նաեւ այնպիսի հարցեր, որոնց իւրացնելու պատրաստականութիւնը չունին գաւառացի երիտասարդութեան մեծ մասը։ Ընդգծում ենք այս փաստը այն տեսակէտից որ նա ուշագրաւ է «Ուսանող»ը երկրի գաւառներում տարածելու եւ նրան այսպէս կուսակցական պրոպագանդայի միջոց ծառայեցնելու համար, յանձնելով նրան ապագայ Գործադիր Մարմնի հայեցողութեան։

Չնայած Մարմինս իր բոլոր հնարաւոր միջոցներով ձգտել է «Ուսանող»ի լեզուն ազատել եւրոպականացումից, մատչելի դարձնելու իր ընթերցողներին յատկապէս ի նպատակ առնելով գաւառացի կամ գաւառական քաղաքներում գոյութիւն ունեցող ընթերցողները, սակայն նրան չէ յաջողուել արմատական բարեփոխում մտցնել այդ կէտում, որի համար նոյնպէս ստացել ենք երկրի զանազան վայրերից դժգոհութեան արտայայտութիւններ։ որոշ գործակալներ «Ուսանող»ի իրենց շրջանում չտարածուելն էլ վերագրել ու պատճառաբանել են այդ երեւոյթով, մի բան որ երբեք աչքաթող անելու [չէ] առաջիկայ N° 8-ի հրատարակութեան ժամանակ։

Աւելորդ ենք համարում խօսել «Ուսանող»ի գոյութեան անհրաժեշտութեան մասին, քանի որ նրա կատարած եւ կատարելիք դերը կուս. ուսանողութեան շրջանակում մեծ է, նոյնիսկ շատ մեծ։ նա է որ Եւրոպայի զանազան վայրերում մեր ուսանողութեան շաղկապող հանգոյցը պիտի հանդիսանայ եւ ակամայից մեր ոյժերը իր շուրջը ժողովէ։ Այս ասածներս ո՛չ թէ լոկ մարմնիս կարծիքն ու համոզումն է այլ մեր ընկերների մի խոշոր մասի համոզումը։ Հարկ կայ եւ մեր կարծիքով հնարաւոր է մեր համեստ ոյժերով հանդերձ ապահովել «Ուսանող»ի բարոյական եւ նիւթական վիճակը նոյն ծաւալով ու բովանդակութեամբ ինչ եղել են N° 6 եւ 7-ը։ միայն կանոնաւորելու է նրա բաշխման գործը, ընտրութիւն անելու գործակալներու եւ ամէն կերպ աշխատելու է հնարաւորութեան սահմաններում տպագրական աշխատանքը կատարելու մարմնի գտնուած վայրում կամ նրան շատ մօտիկ մի վայրում։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ

«Ուսանող»ը որպէս Միութեան հրատարակութիւն եղել է նրա գրաւոր պրոպագանդայի միջոց։ նրա բովանդակութեան մեծ մասը չօշափել է գլխաւորապէս կուսակցական ու ընկերվարական հարցեր, բացատրելով զանազան ընկերվարական տեսակէտներ, նրանց գործունէութեան եղանակն ու ներկայի վիճակը։ Մարմինս տուել է նոյնպէս շրջաբերականներ բացատրելով ընկերներին մոմենտի նշանակութիւնը հայկական հարցի առթիւ եւ Եւրոպայի կուսակցական ուսանողութեան կատարելիք կարեւոր դերը նրա նկատմամբ, թարմ պահելով Եւրոպայի հասարակական շրջանակի մէջ մեր հարցը, լինի դա բանաւոր պրոպագանդայի միջոցով (միտինգ-հաւաքումներ եւն.) կամ Եւրոպայի զանազան երկիրներու ընկերվարական թերթերին թղթակցելով։ այդ ուղղութեամբ եղել են թղթակցութիւններ գերմանական, ֆրանսական, աւստրիական եւ չվեցարիական թերթերում մեր ընկերների կողմից նուիրուած հայկական հարցին ինչպէս եւ մի քանի դասախօսութիւններ նոյն երկրներում։

Դժբախտաբար նիւթական միջոցների սղութեան պատճառով չենք կարողացել նոյնիսկ որեւէ շրջիկ ուղարկել, գոնէ մի քանի քաղաքներ, ուր խմբերը չնայած կազմալուծուել, սակայն հնարաւորութիւն կար վերակազմելու, որովհետեւ այդ կազմալուծումը արդիւնք է եղել տեղական ընկերների ընկած տրամադրութեան։

Հայկական Հարցի վերաբերմամբ Մարմինս դիմել է Արեւելեան ու Արեւմտեան Բիւրոներին եւ հարց տուել կուսակցութեան բռնելիք դիրքի մասին եւ ուսանողութեան կատարելիք դերի մասին եւ, ստանալով համապատասխան հրահանգներ, շրջաբերական հանել խմբերին ու ընկերներին։ Խմբերի տրամադրութիւնը համարեա թէ նոյնն է եղել։

ա) Պահանջկոտ եւ խիստ դէպի տաճիկ կառավարութիւնը,

բ) Համաձայն «Մեծ Լիբանան» ստեղծելու ծրագրին եւ

գ) Ռեֆորմներ անպայմանօրէն եւրոպական կոնտրոլի տակ

դ) Հակամէտ[?][141] անջատողական որեւէ ձգտումի

ե) Ամենամեծ կարեւորութիւնը տուել երկրի ինքնապաշտպանութեան հարցին կասկածելով եւրոպական մեծ պետութիւններու յաճախակի խոստումներին, եւ

զ) կատարեալ անվստահութիւն դէպի տաճիկ կառավարութիւնը հակառակ նրա շռայլ խոստումներին։

Վարչական Մարմինը առաջարկել է խմբերին հանգանակութիւն, վիճակախաղ, երեկոյթ եւ այլ հնարաւոր միջոցներով նպաստել երկրի ինքնապաշտպանութեան ֆոնդին, որը յաջողուել եւ դրամները ուղարկուել է Արեւմտեան Բիւրոյին, Պոլիս, որի մանրամասնութիւնը գտնւում է դրամական հաշիւներում։

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ԱՑԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1.- IV-րդ համագումարի որոշումով եւ համագումարից անմիջապէս յետոյ Մարմինս ցաւակցական նամակ է ուղղել համագումարի անունից հանգուցեալ Pierre Quillard-ի այրիին իր՝ ինչպէս եւ մեր մեծ կորստի համար։

2.- Ի նկատի ունենալով այն հանգամանքը որ մեր խմբերում դասախօսութիւններ չեն տարւում որոշ սիստեմով եւ յատկապէս այն հարցերի շուրջ որոնց բացը զգալի եւ այժմէական բնոյթ է կրում, մի շրջաբերականով դասախօսութիւնների ցանկ է ուղարկել խմբերին առաջարկելով որ ընկերներ աշխատեն իրենց դասախօսութիւնները պատրաստել հնարաւորութեան սահմաններում տրուած նիւթերի շուրջ, համոզուած որ այդպիսով դասախօսութիւններ աւելի են ծառայում կուսակցական պրոպագանդային եւ ընկերների կուսակցական հայեացքներու զարգացման։

3.- Շրջաբերական նամակի միջոցով կոչ արել ընկերներին, իրենց ուժերը ներածին չափ օգնեն Պոլսոյ Ուսանողական միութեան օրգան «Երկունք»ին թէ յօդուածներ ու թղթակցութիւններ տալով եւ թէ իրենց շրջանում տարածելով։

4.- Դիմել է «Հայրենիք»ի խմբագրութեան եւ առաջարկել ընդունելու Բասմաճեանի պատրաստած Հայաստանի քարտէզի հրատարակութիւնը, որի առթիւ [հեղինակը] դիմել էր Մարմնիս եւ առաջարկել Միութեան որ յանձն առնէ որոշ պայմաններով իր վրայ վերցնելու նրա հրատարակութիւնը։ նոյն նպատակի առթիւ դիմում է խմբերին եւ առաջարկուել որ ընկերներ ձգտեն իրենց շրջանի ոչ ուսանողական միութիւնների հետ միացած յաջողեցնեն իրենց վրայ վերցնելու ձեռնարկը որը ունի բարոյական եւ նոյնիսկ նիւթական որոշ օգուտ։ դժբախտաբար այդ չէ յաջողուել խմբերին ու ընկերներին։

5.- Ի նկատի ունենալով որ Եւրոպայի զանազան երկրորդական քաղաքներում, ուր գոյութիւն չունեն խմբեր սակայն համալսարանների գոյութեան պատճառով կան հայ ուսանողներ որոնց շարքում կարող են լինել նաեւ կուս. ուսանողներ, որոնք սակայն կտրուած են մնում կուսակցական կեանքից իրենցից անկախ պատճառներով, ահա այդ անհատ ընկերներն ու տրամադրութիւնները մեզ կցելու դիտաւորութեամբ Մար-

141.– Պէտքէ ըլլայ՝ հակառակ։

մինս «Ազատամարտ»ի միջոցով կոչ է արել այդպիսիներին որ իրենց անհատական թղթակցութիւններով կապ պահպանեն Մարմնիս հետ. դժբախտաբար մեր կոչին արձագանք տուող չենք ունեցել։

6.- *Նախորդ համագումարի որոշման համաձայն Ռուսաստանի կուս. ուսանողութիւնը մեզ հետ կապելու եւ սերտ յարաբերութեան մէջ դնելու ցանկալի նպատակով Մարմինը, բացի իր ունեցած թղթակցութիւններից, օգտուելով այն հանգամանքից որ Գործ. Մարմնի Լայպցիկի հատուածի մի ընկեր արձակուրդներին գնացել է Ռուսաստան յանձնարարել է*

ա) Տեսնուել Պետերբուրգի մեր ուսանող ընկերներին եւ խորհրդակցել մեր յարաբերութիւնները աւելի մօտեցնելու արմատական միջոցների

բ) «Ուսանող»ին նրանց մասնակցութեան կարեւորութեան հարցի ինչպէս եւ նրա տարածման հնարաւորութեանն ու միջոցների մասին։ Վերջինի համար ընկերներ յուռեսես են վերաբերուել ի նկատի ունենալով երկրում տիրապետող կարգերի եւ կոնսպիրատիւ[140] պայմանները. ինչ վերաբերում է յարաբերութիւնների մօտեցնելուն, նրանք որպէս միջոց գտել են իրենց մասնակցութիւնը «Ուսանող»ին եւ խոստացել էին մի երկու յօդուածներ տալ VII-րդ համարին եւ որից մէկը պիտի նուիրուած լինէր Դաշնակցութեան Գործին[142]։ Դժբախտաբար այդ յօդուածներ չպիտի հասնէին VIIրդ համարին եւ VIII-րդի համար էլ չենք ստացել։ Պիտի խոստովանենք որ հակառակ մեր ցանկութեան սերտ կապ չենք պահպանել Պետերբուրգի ուսանողութեան հետ որովհետեւ մեր առաջին գրածները մնացել են անպատասխան եւ երկար ընդհատումից յետոյ միայն երբ ստացել ենք նոր հասցէ եւ տեղեկացել նրանց գործունէութիւնից (որը պէտք է ասել բաւական խրախուսական է) վերսկսել ենք մեր թղթակցութիւնը ներկայ համագումարի առիթով. նրանց ուղարկել ենք համագումարի օրակարգն եւ հրաւիրել մի պատգամաւորով մասնակցելու համագումարին, ցանկութիւն յայտնելով կայանալիք համագումարի կողմից լսելու իրենց գործունէութեան մասին եթէ ոչ ընդարձակ գոնէ ամփոփ տեղեկագիր։

7.- *Ի նկատի ունենալով, նախ քան հայկական հարցի վերարծարծման իր տաք փուլի մէջ մտնելը, երկրում սկսած մասնակի երբեմն էլ խմբական սխրագործութիւններն ու սպանութիւնները, Մարմինս յանուն Ս.-ի Դաշն. Ուս.-ի բողոքի հեռագիր է ուղղել «Ազատամարտ»ի միջոցով տաճիկ կառավարութեան դատապարտելի անտարբերութեան դէմ, երկրում կրկնուող սպանութիւնների առթիւ եւ դիմել է խմբերին նոյնը անեն իրենց կողմից որը եւ եղել է։*

8.- *Ստանալով Արեւմտեան Բիւրոյից կուսակցական VII-րդ Ընդհանուր Ժողովի օրակարգն ու նրան մասնակցելու հրաւէրը, Մարմինս անմիջապէս օրակարգը հաղորդել է խմբերին եւ հրաւիրել նրանց իրենց հերթական նիստերի զբաղմունքի առարկայ դարձնեն եւ շտապեն իրենց կարծիքները հաղորդելու մարմնիս, որպէսզի նա եւս իր հերթին ի մի ամփոփելով յղէ Ընդհ. Ժող.-ին իր տեղեկագրի հետ միասին. սակայն Ընդհ. Ժողովը իր նշանակուած ժամանակից էլ կանուխ բացուելով մարմինս հնարաւորութիւն չունեցաւ արտայայտուելու դէպի նրա օրակարգը ուղղակի կերպով այլ անկախ իր ցանկութիւնից ստիպուեց բաւականանալ իր երկամեայ գործունէութեան տեղեկագիրը ուղարկելով եւ ցաւ յայտնելով որ չպիտի կարողանայ արտայայտուել դէպի VIIրդ Ընդհ. Ժողովը, եւ իր կողմից ընկեր Քրմոյ(եանի) պատգամաւորութեան ձայն ուղարկելով որը եւ մասնակցել է Միութեան կողմից։*

9.- *Լօզանի ընկերներից մէկը թարգմանած լինելով* "La question arménienne au clair des documents" *աշխատութիւնը*[143] *եւ դրած լինելով Մարմնիս տրամադրութեան հրատարակելու միութեան անունից, սակայն ի նկատի ունենալով միութեան դրամական անձուկ վիճակը, մինչդեռ նրա հրատարակութեան համար անհրաժեշտ է եղել՝ Փարիզ հրատարակելու համար 5-600 ֆրք., դիմումներ է կատարել «Ազատամարտ»ին եւ «Հայրենիք»ին ստանձնելու նրա հնարաւորութիւնը — «Հայրենիք»ը ստանձնել է միայն բանասիրականի բաժնում հրատարակելու պայմանով, սակայն մինչեւ այժմ չէ տրուած հրատարակութեան։*

10.- *Մարմինս Թեհրանի «Արշալոյս» թերթին ցաւակցական հեռագիր է ուղղել ընկեր Եփրեմի մահուան առթիւ, համաձայն նախորդ համագումարի որոշման եւ ցանկութեան։*

11.- *Միութեան անունից մասնակցել ենք «Բեբել»ի թաղման տալով պատգամաւոր եւ ուղղելով ցաւակցական հեռագիր Գերմանիայի* "Vorwärts" *սոցիալիստական թերթին։*

12.- *Չնայած մարմինս իր ժամանակին շրջաբերականով հարց է տուել խմբերին համագումար կայացնելու առթիւ իրենց կարծիքները արտայայտելու, սակայն որոշ խմբեր քաջքայուած լինելու պատճառով համագումարը կայացնել կամ չկայացնելու որոշման հարցում ձեռնպահ են եղել արտայայտուելու որպէս այդպիսին եւ բաւականացել յայտնելու իրենց դրական կամ բացասական կարծիքը։ Այսպէս՝ անհատներ, խմբերի մի մասը (Լայպցիկ, Ժընեւ, Վիեննա, Լօզան) բացասական արտայայտուելով համագումարը կայացնելուն ունենալով իրենց ուժեղ պատճառները — մարմինս շարունակել է իր գործունէութիւնը յայտարարելով խմբերին համագումարի յետաձգումը, սակայն զուգադիպաբար*

142.- Այսինքն Կովկասի բանտարկեալներու դատավարութեան։

143.- Նշուած գործի ճիշդ խորագիրն է "La Question arménienne à la lumière des documents", լոյս տեսած Փարիզ 1913ին։ Հեղինակը՝ Մարսէլ Լէար ծածկանունով՝ ծանօթ գրող Գրիգոր Զօհրապն է։

անմիջապէս յետոյ ստացած լինելով կուսակցական VII-րդ Ընդհ. Ժողովի օրակարգն ու Միութեան նրան մասնակցելու հրաւէրը, եւ գտնուելով ստիպողական պայմաններում համագումար կայացնելու եւ որպէս ամենակարճ միջոցը Ընդհ. Ժող.ի օրակարգը քննելու, կարծիքներ արտայայտելու եւ նրան մասնակցող պատգամաւորի ընտրութիւն կատարելու, մանաւանդ որ շատ կարճ ժամանակամիջոց էր մնում մինչեւ Ընդհ. Ժողովի բացումը, սակայն այս անգամ էլ չի յաջողւում համագումարի կայացումը եւ Մարմինս բաւականանում է պատգամաւորական ձայն տալու Ընդհ. Ժող.ի վայրում գտնուող մի ընկերոջ մեր կողմից մասնակցելու նրան, ուղարկելով իր գործունէութեան երկամեայ տեղեկագիրը։

13.- *Մարմինս հրաւիրուել է անցեալ ամսուն վերջին (մասնակցելու) Հ.Յ.Դ. Պոլսոյ Ուսանողական Միութեան կողմից մասնակցելու ամսիս 7-ին կայացրած իրենց համագումարին մի պատգամաւորով. հնարաւորութիւն չունենալով պատգամաւոր ուղարկելու բաւականացել ենք ուղարկելու մեր վերջին երկամեայ գործունէութեան տեղեկագիրը, ինչպէս եւ կարծիքները օրակարգում նշանակուած այն հարցերի որոնք առնչութիւն ունէին մեր միութեան հետ եւ հետեւապէս Մարմնիս կարծիքները որոշ արժէքներ կ'ունենային համագումարի համար։ Փոխադարձաբար հրաւիրել ենք նոյն Միութեան մասնակցելու ներկայ համագումարին մի պատգամաւորով ուղարկելով համա(գումարի) օրակարգը, ցանկութիւն յայտնելով լսելու իրենց կարծիքները նրա մէջ նշանակուած իրենց հետ առնչութիւն ունեցող հարցերի ինչպէս եւ գործունէութեան մասին որոշ զեկուցում։*

14.- *Հրաւիրուած են նոյնպէս մասնակցելու համագումարին մի մի պատգամաւորով Պետերբուրգի կուս. Ուսանողական միութիւնն ու Ամերիկայի Նորակազմ Ուս. Միութիւնը, թէեւ այս վերջինից Մարմինս ոչ մի տեղեկութիւն չէ ստացած, լինէր դա ուղղակի կամ անուղղակի։*

<u>Նիւթական վիճակ</u>.— Նախորդ համագումարը քննելով եւ գտնելով ընկերներու վճարներու անկանոնութիւնը որի պատճառով Միութեան նիւթական վիճակի աննախանձելի դրութիւնը, որոշել էր տարեկան մինիմում բիւրղէ իւրաքանչիւր խմբի համար. դժբախտաբար, պիտի ասենք այդ մինիմում չափն անգամ չի իրագործուել որոշ խմբերի կողմից (բացառութեամբ մէկի) որի մանրամասնութիւնը կը տրուի դրամական հաշուետուութեան ժամանակ, սակայն աչքաթող չպիտի անել նաեւ այն, [որ] երկրի ինքնապաշտպանութեան առթիւ եղած հանգանակութիւնը կայ եւ ոչ կուսակցական ուս. միութիւններու կողմից ինչպէս նաեւ նրանց կողմից տրուած վիճակախաղ ու երեկոյթները, որոնք մասնաւորապէս վերջին տարիում յաճախ են գոյութիւն ունեցել եւ ազդել են ընկերների նիւթական վճարների վրայ։ Համագումարի ուշադրութեանն ենք յանձնում վճարների եւ առհասարակ դրամական աղբիւրների հարցը վերարծարծելու խնդիրը եւ առաջարկում որոշ արմատական միջոցների մասին մտածել նիւթական վիճակը աւելի բարձրացնելու քան է ներկայումս, առանց որի շատ անհրաժեշտ պահանջներ մնում են առանց գործադրութեան. որպէս տխուր փաստ այն որ Միութիւնս չի կարողացել կուսակցական Ընդհ. Ժողովի որոշած Միութեանս վճարի տարեկան մինիմում 100 ֆրանքը եւ դա երրորդ տարիին համար. սրա հետ միասին պիտի արձանագրենք եւ այն ուրախալի երեւոյթը, որ մեր որոշ խմբեր եւ յատկապէս ամենաուժեղ եւ կանոնաւոր խմբերը վերջերս ինքնուրոյն կերպով զգալով այդ հարցի կարեւորութիւնը կանոնաւորել են վճարներու կարեւոր հարցը եւ առաջարկել իրենց ընկերներին, անդամավճարները գանձել կուսակցական ընդհ. օրէնքի համապատասխան 1-2%-ը , որը մասամբ իրագործուել է. մնում է կոչ անել միւս խմբերին եւս հետեւելու սկսած օրինակին որը բաւականաչափ պիտի բարելաւէ Միութեանս նիւթական վիճակը։

15.- *Կուսակցական այն մեծ ու անդառնալի կորուստը որ ունեցանք յանձին հանգուցեալ ընկեր Զաւարեանի եւ որի բօթաբեր ու անսպասելի հեռագիրը դառն վշտով համակեց կուս. ուսանողութեան վրայ, Ժընեւի ընկերների մէջ միտք յղացաւ ընկերոջ անմահ յիշատակը յաւերժացնելու համար ձեռնարկել մի ֆոնդ նրա միակ զաւակի կրթութեան գործը ապահովելու համար։ Մարմինս ինխսիատիւը*[144] *իր վրայ վերցնելով մահուան հեռագիրն ստացած օրն իսկ հեռագրեց իր որոշումը (Արեւմտ. Բիւրոյին) «Ազատամարտ»ին ինչպէս եւ կովկասեան թերթերին ու իր խմբերին եւ անմիջապէս ձեռնարկեց հանգանակութեան, որի անունից ցարդ ստացած դրամների հաշիւը կը տրուի առանձին։ Ձեռնարկը մեծ համակրութիւն գտաւ մեր շրջանակում, սակայն հանգուցեալի մայրը մերժեց ֆոնդի գումարները ընդունիլ զաւակի կրթութեան համար քանի որ ընկերոջ եղբայրները հոգում են այդ եւ առաջարկեց յատկացնել գիւղատնտեսական մի դպրոցի նրա յիշատակին նուիրուած։ Մարմինս մասնակցել է ընկերոջ յուղարկաւորութեան մի ցաւակցական հեռագրով եւ ընտրելով ընկեր Խաժակին*[145] *միութեանս կողմից պատգամաւոր, յատկացրել է ուղարկել 50 ֆրանք եւ 20 ֆրանք էլ պսակի փոխարէն ձեռնարկուած ֆոնդին։*

16. *Մարմինս իր գործունէութեան ընթացքում տրուել է 6 շրջաբերականներ ուղղուած խմբերին զանազան առթիւ որոնց բնագիրները գտնուում են մարմնիս արխիւում։ — Գրել է 335 նամակ որոնց մանրամասնութիւնը գտնուում է առանձին ցուցակում։*

144.- Նախաձեռնութիւնը։

145.- Գարեգին Խաժակ, իսկական անունը՝ Չագալեան Գարեգին։

Փաստ. 1473-116

Է 19.– Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

(25 – 30 ԴԵԿՏ 1913)

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

25-XII-[19]13, *ժամը* 2-7

Հ.Յ.Դ. Ուսանողական Միութեան V համագումարի ընտրուած պատգամաւորների մեծամասնութիւնը ներկայ լինելով՝ նոյն համագումարի նախապատրաստական ժողովը տեղի ունեցաւ 25-ին Դեկտեմբերի ճաշից յետոյ ժամը 2-ին։ Ժողովը բացեց Գործադիր Մարմնի կողմից (յանձնարարագրով հաստատուած) ներկայացուցիչ ընկ. Մ. Ղազարեանը։

Ամէնից առաջ ստուգուեցին մանդատները, որից պարզուեց, որ ներկայացուցիչներ են ուղարկուած հետեւեալ խմբերից.

Ժրնեւի «Ջանք» խումբից	4	*պատգամաւոր*
Լօզանի խումբից	2	»
Բերլինի խումբից	1	»
Գործ. Մարմին	1	»

Այս 8 պատգամաւորների մանդատները եւս համարուեցան վաւերական, որից յետոյ ժողովն անցաւ, ըստ կանոնադրութեան 14 կէտի եւ նորա ծանօթի, կօպտացիայի իրաւունքով իւր կազմը լրացնելուն։ Որոշուեց հրաւիրել փարիզաբնակ դաշնակցական ընկերներից երեք հոգի — երկուսը աշխատաւորներից եւ մէկը ուսանողներից։

Աշխատաւորներից երկուսը ընտրելու գործում կիրառուեց հետեւեալ տեսակէտը՝ ի նկատի ունենալով, որ պատգամաւոր ընկերները անձամբ չեն ճանաչում տեղային ընկերներից եւ ոչ մէկին, որոշում է հրաւիրել տեղական ենթակոմիտէի ընտրութեան ժամանակ ամենաշատ քուէ ստացող երկու ընկերները՝ Գուստիկեան եւ Խմիրճեան։

Ուսանող ընկերներից որոշուեց հրաւիրել ընկեր Բ. Շահբազ։

Ապա ժողովն նոր հրաւիրուած այդ երեք ընկերներին հրաւիրելով մասնակցելու, շարունակեց ժողովը ու անցաւ դիւանական կազմի ընտրութեան։

Ընտրուեցին նախագահներ՝

Ընկ. Արարատեան — 10 ձ[այն]

Ընկ. Յովհաննէսեան — 8 ձ.

Ընկ. Շահբազ — 6 ձ.։

Քարտուղարներ՝

Ընկ. Սամուէլեան — 9 ձ.

Ընկ. Մնացականեան — 8 ձ.

Ընկ. Քրմոյեան — 7 ձ.։

Ժողովն յուսալով, որ մինչեւ հետեւեալ օրուան առաւօտը կարող են նոր պատգամաւորներ հասնել՝ որոշեց համագումարի պաշտօնական բացումը նշանակել 26 Դեկ. առաւօտեան 9 ժամին՝ յայտարարելով այդ մասին բոլոր ընկերներին (Պարիզ գտնուող)։

Ժողովն որոշեց ունենալ երկու նիստ, ճաշից յետոյ 2ժ-7ժ եւ երեկոները 8-12 գիշեր։

Նախագահ՝ Մ. ՂԱԶԱՐԵԱՆ
Քարտուղար՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

25 - XII, *Փարիզ*

ԲԱՑՄԱՆ (Ա.) ՆԻՍՏ

26-XII-13, *ժամը* 9-12

Հ.Յ.Դ. Եւր. Ուս. Միութեան V համագումարի բացումը՝ Առաջին նիստը, տեղի ունեցաւ 26 XII Պարիզ, առաւօտեան 9 ժամ, salle Sigal-*ում, նախագահութեամբ ընկ. Ս. Արարատեանի եւ քարտուղարութեամբ ընկ. Մ. Սամուէլեանի։ Բացման նիստին ներկայ էին՝*

Ժրնեւի 4 պատգ., Լօզանի 2 պ., Բերլինի 1 պ., Ցիւրիխի 1 պատ., Պարիզի 3 պատ. եւ 7 դաշ. Պարիզ գտնուող ընկերներ։ Ընդ. 18 հոգի։

Ընկ. Նախագահը բանալով ժողովը բարի գալուստ մաղթեց ընկեր պատգամաւորներին եւ ողջունելով համագումարի բացումը ցանկութիւն յայտնեց, որ նրա գործունէութիւնը լինի օգտաւէտ եւ խօսքի իրաւունքը տուեց Գործ. Մարմնի ներկայացուցչին։ Գործադիր Մարմնի ներկայացուցիչ ընկ. յայտնելով, որ հեռագրով յայտնուած է Լիէժի եւ Լայպցիգի պատգամաւորներին համագումարի բացման մասին, տալիս է միութեան 1911 թ. ապր. մինչեւ 1913 Յունիսի գործունէութեան տեղեկութիւն (նայիր Գործ. Մարմնի գրաւոր զեկուցում)։

Ապա Գործ. Մարմնի կազմի կողմից ողջունելով համագումարի բացումը եւ ցանկանալով աշխատանքի յաջողութիւն, մի համառօտակի ակնարկ է նետում Հ.Յ.Դ. վերջին տարուայ գործունէութեան վրայ։ Կանգ է առնում այն կորստի վրայ, որ ունեցաւ Հ.Յ.Դ. յանձին Ս. Զաւարեանի, բացատրելով նորա արտակարգ նշանակութիւնը կուսակցական կեանքում։ Ապա յայտնում է, որ Գործ. Մարմինը իրան լիազօրեր է առաջարկելու համագումարին յոտնկայս յարգելու վաղամեռիկ ընկեր Ս. Զաւարեանի յիշատակը։

Ժողովը յոտնկայս յարգում է այդ ընկերոջ յիշատակը։

Ընկ. նախագահը հարցնում է ընկերներին, արդեօ՞ք ժողովը ցանկանում է լսել խմբերի ներկայացուցիչների մանրամասն զեկուցումը իրանց խմբերի մասին, թէ ժողովը բաւականանում է Գործ. Մարմնի տուած զեկուցումով։

Կարծիքներ են յայտնւում, որ զեկուցումները տրուին մանրամասն որպէսզի խմբերը հնար ունենան ծանօթանալ, որ միայն լրացուցիչ տեղեկութիւններ տրուին, ի նկատի առնելով, որ Գործ. Մարմնի տուած զեկուցումը բարեխղճօրէն կազմուած լինելով ներկայացնում է ուսան. խմբերի գործունէութեան պատկերը։

Ժողովն որոշում է, որ պատգամաւոր ընկերները տան միայն լրացուցիչ տեղեկութիւններ։

Նախագահը առաջնորդուելով ներք. կանոնադրով յայտարարում է, որ ընկերներից առաջին անգամ խօսք խնդրողին տրւում է 10 ր. եւ երկրորդ անգամ միայն 3 րոպէ ժամանակ միեւնոյն հարցի մասին խօսելիս։

Խօսք է առնում Լօզանի պատգամաւոր ընկ. Ա. Յով[հաննիսեան], որը յայտնում է՝ թէ Լօզանի խումբն ունի 15 հոգի. նոր անդամ ընդունելու համար խումբը որոշել է կիրառել Հ.Յ.Դ. կանոնագրի այդ վերաբերեալ կէտերը ամենայն խստութեամբ։

Խումբի զբաղմունքն է ինքնազարգացում դասախօսութիւններով, որի վերաբերեալ իւրաքանչիւր անդամի վրայ դասախօսելու պարտաւորութիւն է դրուած։ Խումբը Հոկտեմբերից մինչեւ Դեկ. 23-ը ունեցել է 2 դասախօսութիւն։ Անդամավճարներ՝ խումբը որոշել է իւրաքանչիւր անդամի եկամտի 2%։

Բերլինի պատգամ. ընկ. Հ[այկ] Տ[էր] Օ[հանեան]։— Խումբը նոր է. ունի ---- անդամ, ստանում է 3 հայերէն թերթ. իւր ծախքով ուղարկել է V համագումարին պատգամաւոր։ Խմբի նախաձեռնութեամբ Բերլինի գաղութի մէջ հանգանակութեան է սկսուած։

Բերլինի հայ ուսանողների Միութիւնը (Verein), *որի պաշտօնն է յարաբերութիւն հայ ուսանողութեան եւ համալսարանական վարչութեան միջեւ, քայքայման վրայ էր, երբ դաշ. ուսան. խումբը որոշելով անդամակցիլ, ազատեց նորան անկումից։ Խումբը օտար ուսան. կազմակերպութեան հետ յարաբերութիւնների մէջ է։ Նա մինչեւ օրս զբաղուել է (իւր ժողովներում) կազմակերպչական հարցերով եւ դասախօսութիւն չի ունեցել։ Նա զբաղուել է հետեւեալ հարցերով՝*

1) Ոչ դաշնակցական համակրողների վերաբերեալ խմբի դիրքը, եւ որոշել է նրանց ընդունել խմբի անդամ ընտրելու եւ ընտրուելու իրաւունքով։

2) 2-4 ժող. նուիրել է V Համագումարի օրակարգին։

3) Կազմակերպել է Բերլինի բանուորութիւնը իբրեւ կուսակցական առանձին խումբ եւ պահել նորա հետ սերտ յարաբերութիւն։

Բանուորական խումբը թէեւ անջատ է կազմակերպութիւնից, բայց ուսան. խմբակի հետ մշտական յարաբերութեան մէջ է։ Ուսան. խմբական ժողովին միշտ ներկայ է բանուորական խմբի ներկայացուցիչը եւ ընդհակառակը։

Բանուորական խումբը իւր եկամտի մի մասը յատկացրել է տեղական ծախքերին, միւսը ուսան. խմբի միջոցով Բիւրոյին։

Բանուորական խմբակը որոշել է Եւր. գտնուող բոլոր ոչ-ուսան. կազմակերպութիւնների հետ յարաբերութեան մէջ մտնելու այդ բոլորին ի մի ձուլելու համար։ Խումբը օգտուելով իւր ընկերներից մէկի ճանապարհորդութիւնից Զուիցերիա, Ֆրանսիա, նրա վրայ պարտականութիւն է դրել անցնել բանուորաշատ քաղաքները, հնար եղած վայրերում կազմակերպելու եւ յարաբերութեան մէջ մտնելու։ Բերլ. բանուոր. խումբը զգալով, որ մի օտար միջավայրում առանց ուսան. ընկ[երների] աջակցութեան դժուար է օգտակար գործունէութիւն, այս տօներին որոշել է ուսանող. խմբի հետ միատեղ մի շարք ժողովներ գումարել, պարզաբանելու մի շարք կուսակցական բնոյթ կրող հարցեր։

Ժրնեւի պատգամաւոր Մ. Ա.— Ունի 28 անդամ։ Ունեցել է 8 ժող., որոնցում զբաղուել է Ս. Զաւարեանի սգահանդէսի կազմակերպմամբ, ճչտելով ուրիշ հակակուսակցական ընկ[երութիւնների] մասնակցող ընկերների վերաբերմամբ իւր դիրքը եւ զբաղուել է V համագումարի օրակարգով։

Պարիզի պատգամաւոր Շ.— Պարիզի ուս. միութեան խմբի ուսանող եւ ոչ-ուսանող ընկերների մէջ, չնորհիւ մի քանի ուսանող ընկերների ծայրայեղութեան, առաջ է եկել անջատում։ Եղել են ընկերներ, որոնք մնալով դաշ. խմբի մէջ ցանկացել են հրատարակել անարխիստական ուղղութեամբ թերթ։ Խումբը չհամաձայնուելով այդպիսի իրականութեան հետ, այդ 2-3 հոգին հեռացել [են] խմբին անդամակցելուց։ Մնացած ուսանող ընկերներն էլ չեն ցանկացել որեւէ պարտականութիւն ստանձնել եւ ցանկացել են լինել ինքնավար-ինքնագլուխ՝ չհպատակուել որեւէ կազմակերպական մարմնի, առաջարկելով որ կուսակ. ապակենտրոնացումն հէնց այդ է պահանջում։

Ոչ ուսանող ընկերները տեսնելով ուսանող ընկերներու այդպիսի վերաբերմունքը դէպի գործը, թողել հեռացել են ուսանողական խմբից, կազմել են մի ենթակոմիտէ եւ յարել են Արեւմտեան Բիւրոյին։

Ուսանողութիւնը մնալով անկազմակերպ, մի 3-4 հոգի մտել են ենթակոմիտէի խմբերի մէջ. աւելացնում է, որ կազմակերպել հնարաւոր է, միայն հարկաւոր է մի ուժեղ ձեռք, որը մասնաւոր ջանք թափէ զտում կատարելու ու կազմակերպելու։ Ցանկութիւն է յայտնւում, որ Պարիզեան խումբը կազմակերպելու համար

1) Համագումարը ընդհանուր հրաւէր կարդայ տեղս գտնուող դաշնակցական ընկերներուն (ուսանող եւ ոչ ուսանող) համագումարի ժողովներին ներկայ գտնուելու։

2) Ոչ մի հրաւէր չուղղել, ի նկատի առնելով որ Գործադիր Մարմինը ժամանակին յայտարարել է համագումարի մասին եւ անիրաւացի է մտածել որ կան դաշնակ. ընկերներ, որոնք չգիտեն Միութեան համագումարի մասին։

3) Առանձին առանձին նամակներով դիմել Պարիզ գտնուող բոլոր դաշ. ընկերներուն առաջարկելով որ նրանք ներկայ լինին համագումարի նիստերուն եւ այդ հրաւէրը տարածելու տալ ենթակոմիտէն։

Առաջարկւում, քուէարկւում եւ 10 ձայնով ընդունւում է հետեւեալ բանաձեւը՝

Հ.Յ.Դ. Ուսան. Միութեան V համագումարն այսօր գումարուելով Պարիզում եւ սկսելով իւր աշխատանքները՝ ցանկալի է համարում, որ Պարիզ գտնուող դաշնակ. ընկերները ներկայ գտնուին համագումարին՝ մասնակցելով նրա աշխատանքներին խորհրդակցական ձայնով, խնդրելով ենթակոմ[իտէին], որ ոչ մի ընկերոջ անուն չմոռացուի։

Ժողովն որոշում է այդ որոշման տարածումը յանձնել տեղիս ենթակոմիտէին, դիւանական ծախքը իւր վրայ վերցնելով եւ խնդրել ենթակ. որ մինչեւ օրս իրանց դաշնակ. յայտնող ոչ մի ընկեր ցանկից դուրս չմնայ։ Նախ խնդրում է որ ընտրուի մի մարմին, 3 հոգուց, որը Գործադիր Մարմ. ներկայացուցչի հետ միասին ճշտի Գ. Մ. զեկուցումը եւ մշակի օրակարգի մէջ եղած եւ մտնելիք հարցերը ու պատրաստէ զեկուցում համագումարի նիստերին ներկայացնելու։

Բաց քուէարկութեամբ միաձայն ընտրւում են Ռուբէն (Ցիւրիխ), Հայկ (Բերլին), Խաչիկ (Ժընեւ)։

Ժողովը փակւում է ցերեկը ժամը 12ին, յաջորդ նիստը նշանակելով նոյն օրը երեկոյեան 8½ին։

Նախագահ՝ Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

26-XII, Պարիզ

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ
26-XII-13, ժ. 8½ գիշ.

Հ.Յ.Դ. Եւր. Ուս. Միութեան V համագումարի 2-րդ նիստը տեղի ունեցաւ Hôtel de Vienne-ի սրահում, նախագահութեամբ ընկ. Ար. Յովհաննէսեանի եւ քարտուղարութեամբ ընկ. Սեն. Քրմոյեանի. բոլոր պատգամաւորներն ներկայ էին, ներկայ էին 12 ընկերներ։

Կարդացուեց ընկերներ Վարանդեանի եւ Սարիբէկի Մարսէլից եւ Դաւիթեանեանի Բերլինից — հեռագիրները — շնորհաւորութիւններ, նոյնպէս Լայպցիգի պատգամաւորի նամակն, որով նա իր ցաւն էր յայտնում, որ չի կարող ներկայ լինել համագումարին ու շնորհաւորում [էր]։

Օրուայ զբաղմունքի առարկան «Ուսանող»ի հրատարակման հարցն էր։

Յանձնախմբի անդամ Տ[էր] Օ[հանեա]նը յայտնեց յանձնախմբի կարծիքը, թէ «Ուսանող»ի իւր նպատակին չծառայելու պատճառներից ամենագլխաւորը նորա բովանդակութիւնն է, ապա որ Կովկասը հնարաւորութիւն չի ունեցել մասնակցելու, որ խմբագրական մարմինը ցրուած է եղել Եւրոպ. զանազան քաղաքներում — այդպիսի հանգամանքներում ուրիշ կերպ լինել էլ չէր կարող։ Գործադիր Մարմինը «Ուսանող»ի վերաբերեալ արել է ամէն ինչ որ հնարաւոր է եղել։

Յանձնախմբի երկրորդ անդամ Խաչիկ՝ այդ իրողութեան պատճառը գտնում է այն բանի մէջ, որ փոխանակ «Ուսանող»ը դառնալու մի գործիք, դառել է իսկապէս ուսան. միութեան միակ նպատակը, խլելով Գործ. Մարմնից ամբողջ ուշադրութիւնը եւ երկրորդ, որ ներկայումս հայ ուսանողութեանը մեծամասնութիւնը հետեւում է գործնական գիտութիւններին եւ չի ներկայացնում այն մակարդակը, ինչ որ նա առաջ ունէր։ «Ուսանող»ի աշխատակցելու համար պէտք է օգտուել մեր ոչ ուսանող ընկերներից։

Երրորդ անդամ Ռ. Իւզ[բաշեանը] նկատում է, որ այդ բոլորից բարձր կայ մի էական պատճառ, դա այն ընդհանուր թմրութիւնն է, որ տիրում է մեր բոլոր խմբերի մէջ։ «Ուսանող»ը չի ծառայում որեւէ նպատակի այն բովանդակութեամբ, ինչ որ նա մինչեւ օրս ներկայացրել է. պէտք է դադարեցնել նորա հրատարակութիւնը եւ դրա փոխարէն չրջիկ-պրոպագանդիստներ ուղարկել կազմակերպելու Եւր. հայ ուսան[ողութիւնը] եւ դա աւելի մեծ նշանակութիւն կ'ունենար։ Ընկ. Շ գտնում է, որ հարկաւոր է կռուել գրելախտի դէմ, քանի որ նա դարձել է ընդհանուր երեւոյթ հայ իրականութեան մէջ։

Ընկ. Ար. եւ Յով. պաշտպանում են այն միտքը որ գրելախտի դէմ չէ որ պիտի կռուել, այլ չգրելու դէմ, որովհետեւ վերջինիս պակասը աւելի մեծ չափերով է նկատւում հայ իրականութեան մէջ։

Խօսք է առնում Գործ. Մարմ. ներկայացուցիչ Մ. Ղ[ազարեան], որը հիմնուելով Խմբագր. Մարմնի իրարից զատուած լինելու, «Ուսանող»ի հրատարակութեան վայրի հեռու լինելու վրայ, պնդում է, որ այն թերութիւնները որոնք մինչեւ օրս կան,— կը մնան, եթէ այդ պայմանները չփոխուին։

Նախագահը ապա առաջարկում է, որ խմբերի ներկայացուցիչներն արտայայտեն իրանց խմբերի կարծիքը։

Ընդհանուրը անհրաժեշտ է գտնում «Ուսանող»ի հրատարակութիւնը, բայց նորա ուղղութեան, կազմի հարցի մասին վիճաբանութիւններ տեղի չի ունենում, նկատի առնելով, որ յանձնախումբը դեռ չի ներկայացրել իւր վերջնական զեկուցումը այդ հարցի շուրջը։

Նախագահն առաջարկում է հետեւեալ բանաձեւը, որն ընդունւում է 11 ձայն, 1 ձեռնպահ։

Հ.Յ.Դ. Եւր. Ուսան. Միութեան V համ. անհրաժեշտ է համարում ունենալ մի հրատարակութիւն։

Ժողովը փակւում է ժամը 12-ին գիշերուայ, յաջորդ նիստը նշանակելով 27 դեկ. ցորեկը 1 ժամին։

Նախագահ՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Քարտուղար՝ Ս. ՔՐՄՈՅԵԱՆ

28 դեկ. 1913, Պարիզ

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ
27-XII-13 ցեր. ժ. 1

Հ.Յ.Դ. Եւր. Ուս. Միութ. V համագումարի երրորդ նիստը տեղի ունեցաւ ցորեկը ժամը 1½-ին, նախագահութեամբ ընկ. Շահպազի եւ քարտուղարութեամբ ընկ. Մնացականեանի։ Ներկայ էին 12 պատգ., նաեւ Լիէժի պատգամաւոր ընկ. Ղազարոսեանը, որը նոր էր Պարիզ ժամանել։

Կարդացուեց Պետերբուրգի Հ.Յ.Դ. ուսանողական միութեան նախաձեռնող մարմնի Եւր. Հ.Յ.Դ. Ուս. Միութ. Գործ. Մարմնին ուղղած նամակը, որով յայտնւում էր Գործ. Մարմնին թէ առայժմ կազմակերպուած Միութիւն չկայ, բայց առ այժմ կազմուած է միայն ցանկալի[146] խմբերն, որ այդ դրութեամբ նրանք անկարող են մասնակցել համագումարին։

Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը եւս մի նամակով շնորհաւորելով համագումարի բացումը մաղթում էր արդիւնաւէտ գործունէութիւն, ցաւ յայտնելով, որ հիւանդութեան պատճառով անկարող է համագումարին ներկայ լինել։ Համագումարի նիստերի միջեւ եղած ժամանակամիջոցի կարճութեան պատճառով ընկեր քարտուղարները անկարող լինելով մի նիստի արձանագրութիւնը ներկայացնել յաջորդ նիստին, ժողովն ընդունեց լսել ա. ժողովի արձանագրութիւնը III նիստում։ Ընկերները աւելորդ գտան անուանական սիստեմը, որով մինչեւ այժմ կատարուել է մինչեւ օրս, առաջարկելով՝ արձանագրել մի միայն որոշումները ու աչքի ընկնող կարծիք-հոսանքները։

Անուանական ձեւով արձանագրութիւն ցանկացողները աչքի առաջ ունէին այդ արձանագրութիւնների խմբերին ցրելու փաստը, բայց պարզուեց որ խմբերին ուղարկուելու է բանաձեւերն ու իրանց պատճառաբանութիւնները միայն։

Քուէարկուեց եւ միաձայն ընդունուեց հետեւեալ բանաձեւը՝

«Արձանագրութիւնները լինելու են ոչ անուանական, սակայն հնարաւորին չափով պիտի ներկայացնեն ժողովում արտայայտուած կարծիքներն ու նրանց պատճառաբանութիւններն։

Քննիչ մասնախումբը լրացրած լինելով իւր աշխատանքը «Ուսանող»ի առթիւ, տուեց հետեւեալ պարզաբանութիւնը։

«Ուսանող»ը հրատարակուել է մի որոշ ժամանակաշրջանում Ժընեւ, Պարիզ։ Տպագրական որոշ անյարմարութիւնների պատճառով Գործադիր Մարմինը ստիպուած է եղել այն տպագրել Կ. Պոլսում, համոզուած լինելով, որ այնտեղ աւելի աժան պիտի նստի, սակայն Կ. Պ. հրատարակելով «Ուսանող»ը նիւթականի հետ միասին ունեցել է նաեւ այն թերութիւնները, որ Խմբ. Մարմնից հեռու տպագրուելով եղել է անխնամ եւ սխալներով։

«Ուսանող»ը չի տարածուել ցանկալի չափով. տարածուած համարների դրամներն էլ կարգին չի ստացուել, որի շնորհիւ «Ուսանող»ը իւր ծախքի կէսն նոյնիսկ չէ ծածկել։ Շնորհիւ գործակալ ընկ[երների] եռանդի պակասի եւ բարոյական ոչ բաւարար աջակցութեան «Ուսանող»ը դարձել է մի բեռ Գործ. Մարմնի համար, զբաղեցնելով նրան աւելի քան պէտք էր. անհնար է դարձել Գործ. Մարմնի համար Ուս. Միութ. միւս գործերով աւելի զբաղուել։

Որպէսզի աւելի շատ տարածուի, առաջարկւում է աւելի շատ համար տպագրել եւ գինը իջեցնել։

Յանձնախմբի զեկուցումից յետոյ ժողովն անցնում է այն խնդրին, թէ ի՞նչ բովանդակութիւն եւ ծաւալ պիտի ունենայ միութեան հրատարակելիք օրգանը կամ հանդէսը։

Կարծիքների փոխանակութիւնից եւ մտքերի երկարատեւ բախումներից յետոյ ժողովականների միջեւ այդ հարցի առթիւ առաջարկուեցան երկու տրամագծօրէն իրար հակառակ բանաձեւեր՝ որոնք եւ քուէարկուեցան

Ի նկատի ունենալով որ

I- Ուսանողական Միութեան բարոյական եւ նիւթական միջոցները չեն բաւում գիտական մէկ կամ մի քանի ժողովածու հրատարակել

II- Տպագրական վայրը հեռու լինելով մեր հսկողութիւնից մինչեւ այժմ միշտ տեղի է տուել բազմաթիւ անյարմարութիւնների

III- Հանդէսը չի ծառայում չփման ու հետաքրքրութիւն չի առաջացնում։

Առաջարկում ենք

Ա. Հրատարակել «Դրօշակ»ի ծաւալով 24 էջերից բաղկացած մի երկամսեայ պարբերական աւելի խնամած ժողովրդականացրած ոճով։

146.- «Ցանկալի»ն հոս իմաստ չունի։ Նշուած նամակին մէջ կը խօսուի նախաձեռնող եւ տեղական մարմիններու կազմութեան մասին։ Տես փաստ. 1473-91, էջ 503։

Բ. Անպայման տեղ տալ Եւրոպայի ուսանողական կեանքի վերաբերեալ բոլոր երեւոյթներին իւրաքանչիւր համարի մէջ։

Գ. Անպայման ունենալ որոշ բիւրեղ եւ չչեղուել համագումարի որոշումներից։

Դ. Հրատարակել Եւրոպայում։

Ե. Եթէ բարոյական ու նիւթական տեսակէտից յարմարութիւնները թոյլ տան, Խմբագրական Մարմինը իրաւասու է թերթի էջերի թիւը բարձրացնել 32-ի։

Զ. Չհրատարակել շարունակելի յօդուածներ։

Է. Քանի օրինակ հրատարակելու հարցը թողնել Գործ. Մարմնին։

Այս բանաձեւի կողմնակիցները ընդունում են նաեւ այն, որ թերթի մէջ տեղ պիտի բռնեն եւ հայկական կեանքում առաջացած որոշ երեւոյթների գնահատումը, ինչպէս նաեւ հասարակական քաղաքագիտական որոշ խնդիրների մեկնումն ու պարզաբանումը։ Ընդունում են նաեւ այն, որ գիտական ու թէորիական հանդէսի պակասը շատ զգալի է եւ այդ ուղղութեամբ արուելիք աշխատանքը անհրաժեշտ, բայց գործնական ու բարոյական անհնարաւորութիւնները ի նկատի ունենալով (տպարան, եւայլն), առաջարկում են սակաւաթիւ էջերով յիշուած օրգանը, ի նկատի ունենալով, որ «Դր[օշակի]» խմբագրատանը եղած տառերը կը բաւեն այդ ձեւի հրատակարութեան եւ որ հնարաւոր է նուիրատուութեամբ եւ այլ միջոցներով նոր տառեր բերել տալ։ Ընկ. Ռ. Իւզբ[աշեանը] խոստացաւ պէտք եղած գումարի մի մասը հանգանակել։

2րդ բանաձեւի կողմնակիցները

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ դաշնակցական եւ ոչ դաշնակցական ինտելիգենցիայի մեծագոյն մասը՝ միջին ինտելիգենցիան, հնարաւորութիւն չունի եւրոպական որեւէ լեզուի չտիրապետելով օգտուել Եւր. հասարակագիտական գրականութիւնից, որ մեր ծրագրի ըմբռնումը պահանջում է այդ հարցերի նկատմամբ անպայման որոշ ծանօթութիւն որ հայ գրականութեան մէջ շատ քիչ են եղել, այժմ համարեա թէ չկան հանրամատչելի ձեւով հրատարակուող ոչ պարբերականներ, ոչ էլ առանձին գրքեր նուիրուած յիշեալ հարցերին, Ուսանողական Միութիւնը իր պարտքը պիտի համարէ լրացնել այդ պակասը, հրատարակելով զուտ թէորիտիկ[107] հարցերի լուսաբանման նուիրուած մի հանդէս, որտեղ պիտի պարզուին յիշուած հարցերը, որոնք միանգամայն անհրաժեշտ են գիտակից դաշնակցական դառնալու, մեր ծրագիրը ըմբռնելու համար։ Որ 24 երեսնոց օրգանը, որտեղ տեղի են ունենալու նաեւ հայ ընթացիկ կեանք ու քաղաքական որոշ մոմենտների գնահատումը, անկարող է զետեղել մեր աշխարհահայեացքի չուրջը մանրամասն պարզաբանուած յօդուածներ, եւ գտնելով, որ այդ տեսակի պարբերականը հայկական կեանքից չի կարող ճշգրիտ գնահատումներ ունենալ, առաջարկում է — «Ուսանող»ը հրատարակել նոյն ուղղութեամբ, արտաքին եւ ներքին նոյն կազմով, հանրամատչելի իւր ընթերցողներին, 4-600 էջով. ցանկալի է տարուայ ընթացքում ունենալ չորս համար, անկարելի դէպքում առնուազն երկու։

Երկու բանաձեւերն էլ քուէարկուեցան։

I ստացաւ թեր 8, դէմ 5։

II ստացաւ թեր 5 դէմ 8։

Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 7-ին, յաջորդ նիստը նշանակուեցաւ նոյն օրը, երեկոյեան 8½ին։

Նախագահ՝ Բ. ՇԱՀՊԱԶ
Քարտուղար՝ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

27 դեկ. 13, Պարիզ

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

27 դեկտ. 13, ժ. 8¾-12

Հ.Յ.Դ. Եւր. Ուս. Միութեան V համագումարի 4-րդ նիստը տեղի ունեցաւ ընկ. Արարատեանի նախագահութեամբ եւ Սամուէլեանի քարտուղարութեամբ։ Ներկայ էին բոլոր պատգամաւորները եւ 20 դաշն. ընկերներ։

Նիստի օրակարգն՝ համագումարի օրակարգի 10-րդ կէտ՝ մեր յարաբերութիւնները Եւր. զանազան շրջաններում գտնուող ոչ ուսանող դաշնակ. ընկեր եւ կազմակերպութիւնների հետ։ Այս հարցի շուրջը բաւական վիճաբանութիւններ տեղի ունեցան, որով խօսող ընկերները պարզաբանելով զանազան վայրերում ոչ ուսանող դաշնակց. եւ ուսան. դաշ. փոխյարաբերութիւնները, ցանկանում էին որոշ եզրակացութեան գալ այդ հարցի առթիւ։

Առաջարկուեցաւ հետեւեալ բանաձեւը որը եւ միաձայն ընդունուեց ժողովի կողմից։

Համագումարի 4-րդ նիստը պիտի զբաղուի N° 10 հարցով, խօսելով նրա մասին սկզբունքի տեսակէտով, չքննադատելով միութեան եւ ոչ ուսանող դաշնակցականների միջեւ առաջացած անշտման պատճառները։

Ընկերների վիճաբանութիւններից պարզուեցան հետեւեալ տեսակէտները՝

1) Ուսանող եւ ոչ-ուսանող բանուորական խմբերը կազմակերպուեն առանձին. ուսան. խմբերին պարտադրել դասախօսել ոչ-ուս. խմբերի համար։ Ոչ-ուսան. խմբերը առաջնորդուին ուսան. խմբ[երի] դիրեկտիւներով։ Կարճ՝ լինի համագործակցութիւն, բայց իրանց ներքին գործերում լինին անջատ։ Երկու տեսակի խմբերն էլ ունենան մի վարչութիւն ընտրուած երկու խմբերից էլ։ Ոչ-ուսան. խմբ. իրանց եկամտի մի մասը տեղակ. ծախքերին յատկացնելուց յետոյ, միւսը Գործ. Մարմնին (միջնորդի դեր) միջոցով ուղարկեն Բիւրոյին։

Ուսանող խմբերը վարուին ըստ կանոնադրութեան (Միութեան)։

2) Լինի Եւրոպայում գտնուող դաշնակցականների Միութիւն, ուսանողական անունը չլինի եւ մասնակցեն ուսան. եւ ոչ-ուսան. համահաւասար իրաւունքով։

3) Երկու մարմինները կազմակերպուին զատ-զատ. լինի Ուսան. Միութիւն եւ բանուոր. խմբեր, որոնք զատ կանոնագրով (Հ.Յ.Դ.) կապուին պատշաճաւոր մարմնի հետ։

Ժամը 12-ին ժողովը փակուեց, թողնելով յաջորդ նիստին այս հարցի պարզաբանումը, բանաձեւելն ու քննարկութիւնը։

Նախագահ՝ Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

27-XII-13, Պարիզ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

28 Դեկ. 13, ժ. 1½

Հ.Յ.Դ. Եւր. Ուս. Միութեան V համագումարի 5-րդ նիստը տեղի ունեցաւ նախագահութեամբ Ա. Յովհ., քարտ. Քրմոյեան։ Ներկայ էին բոլոր պատգ. ընկ. եւ 19 դաշ. ընկերներ։ Օրակարգն էր՝ Համագումարի օրակարգի 10 հարցը։

Այդ հարցի շուրջը եղած վիճաբանութիւններից եւ մտքերի բախումից յետոյ հետեւեալ երեք հոսանքներն էր նկատուում՝

1) Կազմակերպել Եւր. գտնուող բոլոր դաշնակցականների միութիւն, որին անդամակցին նաեւ ուսանողները։ Ուսանողները ունին դրանից զատ Եւ. Ուս. Միութիւն, զուտ ուսանողական հարցերով ու պարտականութիւններով (Ուսան. հրատ., պրոպակ., եւայլն) զբաղուելու համար, ի նկատի ունենալով որ այդ բաժանումը եւ Միութիւնը անում է աշխատանքի դիւրացման տեսակէտից։

2) Կազմակերպել դաշն. Միութիւն, վերացնելով ուսանող անունը, ի նկատի ունենալով որ ուսանող եւ բանուորակ. կազմակերպութիւնների մէջ զանազանութիւն չկայ եւ որ ոչ-ուսանողները մեծամասնութիւն են կազմում։

3) Կազմակերպել Ուսանող. Միութիւն առանձին եւ ոչ-ուսանող. առանձին, ի նկատի ունենալով, որ կազմակերպութիւնն ունի ուրոյն պարտականութիւն դրած ուսանող[ների] վրայ, ուսանող[ութիւնն] ունի որոշ privilège[147], միացնելով այդ երկուսը, ուսան[ողների] պարտակ[անութիւնները] կը դրուի[ն] նաեւ ոչ-ուսանող[ների] վրայ։

Ապա նախագահը առաջարկում ու քուէարկւում է հետեւեալ երեք բանաձեւը։

1) Ի նկատի ունենալով, որ Եւրոպայում թէ այլուր Դաշ[նակցութեան] դրօշին պատկանող բոլոր անհատները առանց զբաղմունքների տարբերութեան անհրաժեշտաբար պիտի կապուին իրարու, շաղուին կուսակցական աշխարհահայեացքի, ու նրա ընկերական ոգու մէջ, անհրաժեշտ է բացարձակապէս զգուշանալ այնպիսի կազմակերպական սիստեմէ, որը կարող է կանխապատրաստել որեւէ անտագոնիզմ[148] տարբեր հասարակական կատեգորիայի[149] պատկանող տարրերի մէջ։ Այդ տեսակէտով մի տնտեսական հասարակական motive-ներով[150] բաժան կազմակերպուած դաշնակցական քաղաքական խմբերը պէտք է միանան մի միակ դաշնակց. Միութեան մէջ, որի խմբերը պիտի լինին բացարձակապէս խառն. իսկ Եւր. Միութեան կողքին Ուսան. Միութիւնը կը շարունակէ իւր ուրոյն գոյութիւնը զուտ այն նպատակներով, որոնցով նա հիմնադրուել է, իսկ ընդհանուր կուսակցական աշխատանքը ուսան. միութեան անդամներ կը կատարեն Եւր. ընդ. Դաշնակց. Միութեան մէջ։ Իսկ Դաշ. Ուս. Միութեան կատարելիք պարտականութիւնների իրագործման համար Եւր. դաշնակ. ընդ. Միութիւնը կը բերէ իր բարոյակ. եւ նիւթական աջակցութիւնը (թեր 2 եւ դէմ 11)։

2) Կազմակերպել Դաշնակ. Միութիւն ի նկատի ունենալով N 1 բանաձեւի պատճառները եւ ոչ ուսան[ողների] թուական առաւելութիւնը (թեր 1, դէմ 8, ձեռն[պահ] 3)։

3) Նկատելով, որ դաշնակցական ուսանողական միութեան եւ դաշնակցակ. քաղաքական կամ այլ խմբերի գոյութիւնը ոչնչով չի վնասեր կուսակց. աշխատանքներու նպատակայարմար եղանակով առաջացման. Որ մեր կազմակերպութեան ծոցին մէջ ուսան. միութիւնները, մասնաւորապէս Եւր. դաշ. ուսան. կը ներկայացնեն ուրոյն կազմեր, յատուկ իրաւասութիւններով եւ առաջադրութիւններով եւ չեն մտներ կուսակց. կանոնագրով ընդ. տրամադրութիւններու տակ եւ միայն այդ ապրելով եւ զարգանալով կրնան ծառայել իրանց նպատակին, որ 25 տարուայ գործունէութեան փաստ է,— եթէ կազմակերպական խմբակցութեան ուրոյն խմբակցութիւններու դիրքերը իրաւական եւ փոխյարաբերական տեսակէտէ որքան պարզ, յստակ, աներկդիմի ըլլան, այնքան քիչ կ'ըլլան թիւրիմացութիւններ եւ ընդհարումներ եւ հետեւաբար այնքան աւելի խոր կ'ըլլան փոխադարձ ընկերական կապերը։

V համագումարը կ'որոշէ՝ որ Հ.Յ.Դ. Եւր. Ուս. Միութիւնը, առանձին կազմակերպուելով Եւրոպ[այի] ոչ ուսան. դաշն. ուրոյն քաղաքական կամ բանուորա-

147.- Ֆրանսերէն՝ առանձնաշնորհում։
148.- Հակամարտութիւն, ներհակութիւն։
149.- Տարբեր ընկերային խաւի, հասկացողութեան։
150.- Ֆրանսերէն՝ շարժառիթներով, պատճառներով։

կան կազմակերպութիւններուն հետ, կը պահէ սերտ ընկերական-կազմակերպչական յարաբերութիւն եւ ընդ. կուսակցական բնոյթ ունեցող հարցերի մէջ կը գործեն միասնաբար, բայց կազմակերպական exarchie-*ի*[151] *տեսակէտով կապուած ըլլալով ընդ. կազմ. ընդ. կանոնագրին (թեր 8, դէմ 1, ձեռն. 1)։*

Ապա ընկ. նախագահը կարդաց Լայպցիգի պատգամաւոր ընկ. Շաւարշեանի նամակը, որով յայտնի. մաղթելով համագումարին, կը ցաւէր, որ չի կարող ներկայ լինել V համագումարին։

Ապա ժողովն անցաւ օրակարգի N° 9 հարցին։

Այդ հարցի մասին զեկուցանում է Գործ. Մարմնի ներկայացուցիչ ընկ. Մ. Ղազար[եան], բացատրում է, որ դաշ. ուսան. Միութ[իւններ] կան Ամերիկա, կ. Պ[ոլիս] եւ Պետերբուրգ եւ որ իրարու հետ յարաբերութիւնների կարիքը, ներկայ քաղաքական պայմաններում, աւելի է զգացւում։ Գ. Մ. անհրաժեշտ է համարում այդ կազմակերպութ[իւնների] հետ լինել մշտական յարաբերութեան մէջ եւ առաջարկում է մի բիւրօ (տեղեկատու), որը այդ երեք հատուածների հետ յարաբերութեան մէջ լինելով համագործակցութեան եւ գործունէութեան տեղեկութիւններ կը մշակէ։

Այդ հարցի մասին ընկ. նախագահը առաջարկում է արտայայտել խմբերի կարծիքը։

Եւ պարզւում է որ բոլոր խմբերը անհրաժեշտ են համարում համագործակցութեան եւ յարաբերութեան համար մի Բիւրոյի գաղափարը, սակայն տեխնիկական անյարմարութիւններու պատճառով առանձին տեղ[ական] բիւրոյի կազմակերպումը գտնում է անհնարին։ Բանաձեւում եւ առաջարկւում է հետեւեալը։

Գործ. Մարմնի վրայ թողնել այդ երեք հատուածների հետ մտնել յարաբերութեան մէջ եւ կապ պահպանել։ Այդ գործը յանձնել Գ. Մ. անդամներից միայն մէկին, դարձնելով այդ նորա միակ պարտականութիւնը (միաձայն)։

Ապա ժողովն անցնում է համագումարի օրակարգի N 13 կէտի քննութեան։ Այդ հարցի շուրջը վիճաբանութիւն տեղի չի լինում, այլ կանոնագրի որոշ յօդ. պարզաբանութեան համար ընդունւում են որոշ ծանօթ[ութիւններ].

Յօդ. 5 ծանօթ III— խմբի մէջ նոր անդամներ ընդունւում են ձայների պարզ մեծամասնութեամբ։

Երես 4, յօդ. 5րդ ծանօթ II — Եւրոպա գտնուող ոչ ուսանող դաշնակց. կարող են խմբին անդամակցել վրճռական ձայնի իրաւունքով (միաձայն)։

Նոր — նոր ընդունուող ընկերները պիտի ներկայացւեն երկու ընկերների կողմից։

Յօդ. 4, ծանօթ 2 — երեք ամիս շարունակ անդամավճար չտուողը չնկատուի դադարուած անդամակցելու իրաւունքից։ Եթէ անկէ յետոյ դարձեալ 3 ամիս, հակառակ եղած ազդերին, նոյն ընթացքը շարունակէ [նկատուի դադարուած] (միաձայն)։

Յօդ. 5 — 11 — չենթարկուող խումբը կը համարուի լուծուած, եթէ դարձեալ ազդարարութեամբ 3 ամիս անցնելուց յետոյ — այն դրութիւնը շարունակուի։

Ժողովը փակուեց ժամը 7-ին։ Յաջորդ նիստը նշանակուեց նոյն օրը երեկ. 8½-ին դռնփակ։

Նախագահ՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Քարտուղար՝ Ս. ՔՐՄՈՅԵԱՆ

28-XII-13, *Պարիզ*

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ
28-XII- 13, *ժ.* 8½—12

Հ.Յ.Դ. Եւր. Ուսան. Միութեան V համագումարի 6րդ նիստը տեղի ունեցաւ նախ.՝ ընկ. Շահբազի, քարտ.՝ Մնացականեանի, դռնփակ, ներկայ էին 13 պատգամաւորները։

Ժողովը զբաղուեց խմբերի քայքայման ու վերակազմման խնդրով (համագ. օրակարգի N° 8)։

Քննիչ յանձնախմբի անդամների (3 հոգի) զեկուցումից պարզուեց հետեւեալը՝ խմբերը քայքայուել են եւ այդ դրութեան մէջ մնացել են շնորհիւ պրոպականդիստ չլինելուն եւ իրական գործունէութեան պակասութեան։

Մեր կազմակ. բարձր մարմինները անտեղեակ են պահել ուսան. Միութեան կուսակցական ընդ. կեանքից, որի շնորհիւ ուսանողութիւնը չի զարգացել կուսակցականապէս։ Այս բոլորի վերացման համար առաջարկւում է

1) Շրջիկ պրոպականդիստներ ուղարկել։

2) Ամիսը մի անգամ շրջաբերականների միջոցով իմացնել Միութեան խմբերին կուսակց. կեանքում կատարուած կարեւոր ակտերը։

Միանգամայն համաձայն լինելով եւ ընդունելով Գ. Մ. տուած պատճառաբանութիւնները խմբերի քայքայման մասին, աւելացւում է եւ այն, որ մեր բարձր մարմինները պիտի այնքան տեղեակ պահէին ուսանողութեան կուսակ. կեանքին, որ վերջինս լաւատեղեակ երկրում կատարուող անցքերին, կարող լինէր բարոյական կոնտրոլի դեր խաղալ կազմակերպութեան մէջ։ Արտայայտուեցին եւ այն ուղղութեամբ, թէ բարձրագոյն մարմինները կանոնաւոր նամակցութիւն անգամ չեն պահպանել Միութեան հետ։ Գ. Մ. ներկայացուցիչը մի անգամ եւս յիշեց խմբերի քայքայման պատճառներն իւր զեկուցման մէջ մատնանշած։ Ժողովը այդ հարցի

151.- Ֆրանսերէն՝ գործածուած է կառավարման, ղեկավարումի իմաստով։

չուրջն եկաւ հետեւեալ եզրակացութիւնների։

1) Որ քայքայման պատճառներից մէկն է նաեւ ներկայ ուսանողութիւնը, որի մեծ մասը 8. Պ.[?] եկած ու յեղափ. կեանքին անծանօթ անձինք են կազմում, համիտեան ճնշումներին տակ մեծացած անհատներ. պակասում է նախկին ուսանողութեան իտէալականութիւնը, ու պաշտպանում են այն տեսակէտը, թէ ուսան[ողութիւնը] անպայման կը գրաւի կազմակ. բարձր մարմինների իրաւունքը, եթէ վերջինս իրագործէ իւր վրայ դրուած յոյսերը եւ պարտականութիւնները, ուսան[ողութիւնը] կը դառնայ մի կարեւոր ոյժ, որին չուզէ ուզէ պիտի [հաշուի առնէ]կուսակցութիւնը։

Ներկայ համագումարի որոշած ձեւով հրատարակուող «Ուսանող»ի էջերում կարող են տեղ գրաւել կուսակ. կոնտրոլի նկատմամբ քննադատութիւններ։

Առաջարկւում է այն հարցերը, որոնց կարելի չէ հրապարակով քննադատել եւ պարզել շրջաբերականներով՝ պարզաբանուած ուղարկել բոլոր խմբերին։

Ժողովը վերջ ի վերջոյ միաձայն յանգաւ հետեւեալ եզրակացութեան.

— Ծանօթանալով բոլոր զեկուցումների ու ընկերների անհատական տեղեկութիւնների հետ, մեր խմբերի քայքայման պատճառների եւ վերակազմման վերաբերմամբ, համագումարը նկատում է՝ որ թուլութեան եւ քայքայման պատճառներն են

1) Ուսանող ընկերների յարատեւ փոփոխութիւնը։

2) Իսկական գործունէութեան համար տուեալների պակասը։

3) Մասամբ ուսանող ընկ[երների] անտարբեր[ութիւնը]։

4) Դաշնակ. բարձր մարմինների ոչ բաւարար ուշադրութիւնը Ուս. Միութեան։

5) Պրոպագանդի եւ յատկապէս շրջիկ ընկերի պակասը։

Այդ բոլորը ի նկատի ունենալով V համագումարը առաջարկում է.

1) Ունենալ շրջ.-պրոպ[ագանդիստ]։

2) Կազմ. տեղեկութիւն խնդրել ընդհ. գործունէութեան մասին ու շրջաբերականով յայտնել մեր խմբերին ու ընկերներին։

3) Բոլոր էական հարցերում արտայայտել մեր տեսակէտը՝ շրջաբերականներով, յատկապէս «Ուսանող»ի էջերում եւ այդպիսով լսելի դարձնել ուսան[ողութեան]ձայնը, կարծիքը։

Ժողովը փակուեց գիշ. ժամը 12-ին, յաջորդ ժողովը նշանակելով 7-րդ նիստը 29/XII, ցերեկը ժամը 2-ին։

Նախագահ՝ ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ
Քարտուղար՝ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

28-XII-13, *Պարիզ*

ԵՕԹԵՐՈՐԴ ՆԻՍՏ
29-XII-13, *ժ.* 2 — 7

Հ.Յ.Դ. Եւր. Հ. Ուս. Մ. նիստը բացուեց երեկ. նախագահութեամբ՝ ընկ. Արարատեանի եւ քարտ.՝ Սամուէլեանի, դռնփակ, ներկայութեամբ բոլոր պատգ. ընկերների։

Օրակարգն էր համագում. [օրակարգի] N 11 — Մեր վերաբերմունքը դէպի հայկական բարենորոգումները։

Ժողովն զբաղւում է Հ.Յ.Դ. VII համագումարի որոշումի ընթերցան[ութեամբ] 1913 N 9-10 «Դրօշակ»ից։

Մի շարք ընկերներ ցանկութիւն են յայտնում, որ ձեռնհաս ընկերները պարզեն «Դրօշ[ակ»ին] մէջ այդքան համառօտակի յայտնուած որոշումները։

Եւ արդեօք բացի «Դրօշակ»ում յիշուածներից կան ուրիշ որոշումներ եւս։ Առարկում են, որ հաւանականօրէն կան կուսակց. որոշումները, բայց դրանք գաղտնապահական տեսակէտից չեն տպուած եւ որ հիմնուած «Դրօշակ»ի մէջ տպագրուած որոշումների վրայ՝ անկարելի է խօսել այդ հարցերի մասին կուսակցական տեսակէտէն։

Մի քանի ընկերներ չեշտում են, որ անհրաժեշտ չէ իմանալ թէ ի՞նչ որոշումներ է կայացրել Ընդ. Ժողովը, այլ եղել են թէ ոչ այդ հարցի շուրջը աւելի մանրամասն որոշումներ։

Այդ առթիւ երկար խօսակցութիւններից եւ մի շարք պարզաբանութիւններից յետոյ երեւաց, որ Միութեանս Գործ. Մարմնին եւ համագումարին ներկայ եղողներին, «Դրօշակ»ի մէջ տպուած որոշումներից զատ ոչինչ յայտնի չէ, եւ որոշւում է արձանագրել, որ Ուսան. Միութ. Հ.Յ.Դ. VII համ. որոշումներից շատերի մասին ունեցած թերատ տեղեկութիւն ունենալու բուն պատճառներն են.

1) Միութեան պատգ[ամաւորը], որ մինչեւ օրս իւր զեկուցումը չի ներկայացրել Միութեանս Գործ. Մ[արմնին], եւ

2) Բիւրոն, որ հարկաւոր չի համարել մեզ եւս իւր որոշումների մասին մանրամասն յայտնել։

Վիճաբանւում է թէ արդեօք կուսակ. նախատեսած ծրագիրը Հայաստանի բարենորոգումների համար համապատասխանում է մեր կուսակցական հիմնական ծրագրին։

Եզրակացւում է՝ որ վերանորոգումների ծրագիրը բխում է Դաշ. հիմնական սկզբունքներից։

Ապա սկսւում է պարզաբանութիւն,— արդեօք ծրագրի իրականացման միջոցները համապատասխանում են դաշն. տակտիկային։

Պարզւում է նոյնպէս, որ Հ.Յ.Դ. դիւանագիտական ձեռնարկներին աւելի մեծ նշանակութիւն է տուել։ Բանաձեւում եւ քուէարկւում է հետեւեալ բանաձեւը՝ որն անցնում է միաձայն։

Հ.Յ.Դ. Եւր. Ուսան. Միութեան V համագումարը

մանրամասն ծանօթանալով հայկական բարենորոգումների առթիւ կատարուած ձեռնարկների հետ, ընդունում է, որ

1) Հասունացած եւ անյետաձգելի պահանջ է առաջադրուած բարենորոգումների ներմուծումը հայկական նահանգներում

2) Որ սակայն այդ բարենորոգումների նպատակին հասնելու համար Հ.Յ.Դ. չատ է տարուել Եւր. դիւանագիտական ձեռնարկներով, որից տուժել է իրական, դրական յեղ. գործը։

3) Որ այդ մտայնութիւնը միանգամայն մթագնում է մեր ժողովրդի եւ հ[այ] յեղ[ափոխականի] ինքնագիտակցութիւնը։

4) Որ բարենորոգումները իրականանալու դէպքում իսկ ժամանակաւորապէս հայ ժողովրդի գլուխը չպիտի դադարէ ենթակայ լինելուց այն վտանգներից, որոնց այժմ ենթակայ է։

Որոշում է.

Կանխելու համար հայ ժողովրդի գլխին կախուած կոտորածի ամենահաւանական անակնկալները, յարատեւելու [համար] նրա ֆիզիկական գոյութիւնը, միեւնոյն ժամանակ պատկառանք ներշնչելու թէ տաճիկ կառավարութեան թէ Եւրոպակ. դիպլոմատիային, որոշում է, որ Հ.Յ.Դ. իւր բոլոր ոյժերը պէտք է կենտրոնացնէ ժողովրդի զինման եւ զուտ յեղափ. գործունէութեան վրայ, դիպլոմատ. աշխատանքը թողնելով ոչ յեղափ. տարրերին, այդ խնդրում մնալով զուտ խորհրդատուի դերում։

Բերլինի պատգ. ընկերը յայտարարում է, որ Բերլ. ուսան. խումբը իրան պարտադրել է դիմել համագումարին ցանկութիւն յայտնելով, որ նա պարտադրի Գ[ործադիր] Մ[արմնին] շրջաբերականով դիմել ուսան. խմբերին հրաւիրելով նրանց պատրաստ լինել հարկ[աւոր] դէպքում իրանց տրամադրելու կուսակ. գործունէութեան այն վայրերում, ուր այդպիսիների կարիքը կը զգացուի։

Մի շարք կարծիքների փոխանակութիւնից յետոյ հետեւեալ տեսակէտներն առաջադրուեցան,

1) Գ. Մ. ցանկ կազմի բոլոր մանրամ[ասնութիւններով] այդպիսի անձանց անուններից եւ Բիւրոյին յայտնի

2) Առաջարկել այնպիսի ընկերներ, որոնք որոշ պատրաստակամութիւն ունին

3) Արտայայտել որ հ[այ] ուսան. շրջանում պակասում է անձնազոհութեան գաղափարը

4) Որ տրամադիր ընկերները իրանք յայտնեն Գործ[ադրին] իրանց ցանկութիւնը եւ դելեգէ[152] ընկ[երները] աշխատին իրանց շրջաններում տրամադրութիւն ստեղծելու։

Առաջարկուեցաւ հետեւեալ բանաձեւը, որն եւ միաձայն ընդունուեց։

— Ի նկատի ունենալով այն բացառիկ պայմանները (ինքնապաշտ. եւ բարենորոգումներ), որոնք պահանջում են մեծ թուով գիտակից կուսակց. ընկերներ, որ մինչեւ այսօր դժբախտաբար ուսանողութիւնը այդպիսի ընկերները շատ քիչ է տուել, ժողովը որոշում է, որ Գ. Մ. մանրամասն ազդ ու շրջաբերականներով դիմէ Եւ. Հ. Ուս. խմբերին, պարզաբանելով ներկայ դրութիւնը եւ ուսանողութեան անձնազոհութեան անհրաժեշտութիւնը, աւելացնելով, որ այն ընկերները, որոնք ցանկանում են իրանց տրամադրել կուսակցակ. ընդ. գործի համար, շտապեն յայտնել Գործ. Մարմնին իրանց անունները, քանի որ այդ ուղղութեամբ աշխատանք եւ առաջարկներ եղել են արդէն։

Ժողովն անցնում է օրակ. N 7 հարցին, բայց նրանց քննելուց առաջ բարւոք է համարում կարդալ «Դր[օշակ»ի N°] 9-10, նշանակել քննութեան առնելիք անհրաժեշտ հարցերը եւ ապա քննութեան անցնել։ Ժողովը փակուեց 7 ժ.։ Յաջորդ նիստը նշանակուեց նոյն օրը երեկ. 8 ժամին։

Նախագահ՝ Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Քարտուղար՝ Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

29-XII-13, Պարիզ

ՈՒԹԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ
29/XII, ժ. 8½

Նախագահութեամբ՝ Յով[աննիսեան], Քարտ.՝ Քրմոյեան։ Ներկայ 12 պատգ., նիստը դռնփակ։ Կը վաւերացուի անցեալ նիստերու արձան[ագրութիւնները]։ Օրակարգն էր՝ Հ.Յ.Դ. այլեւայլ հատուածների փոխյարաբերութիւնները։

Յայտնւում են հետեւեալ կարծիքները.—

N 9-10, երես 146-ի մասին[153], այդ հարցի շուրջը։ Ոմանք պնդում են, որ այդ հատուածում Հ.Յ.Դ. VII համագումարի անկեղծ արտայայտութիւնն է, միւսները՝ որ այդպէս արտայայտուած է որոշ դիւանագիտական եւ քաղաքագիտական տեսակէտով։

Նոքա, որոնք պնդում էին այն տեսակէտի վրայ, որ VII ընդ. ժողովի անկեղծ արտայայտութիւնն է վերոյիշեալ հատուածը, եզրակացնում էին, որ հայ զինուորը այդ դէպքում չպիտի կատարէ իրա քաղաքացիական պարտականութիւն (դասալիք-դիզերտէօր)։

Այս հարցի շուրջը բաւական երկար վիճաբան. ու պարզաբանութիւնից յետոյ ժողովն յանգաւ հետեւեալ եզրակացութեան միաձայն.

Որ VII Ընդ. ժողովն իւր որոշումները տալիս՝

152.- Պատգամատոր։

153.- Նկատի ունի «Դրօշակ»ի 1913 թուականի այն համարներն ու էջերը, ուր տպուած են Հ.Յ.Դ. Եօթներորդ Ընդհ. Ժողովի որոշումները։

առաջնորդուել է որոշ տուեալներով եւ ուրեմն այդ հատուածը VII Ընդ. ժողովի համար ունի նշանակութիւն եւ պարզ է։

Ապա անցնում է Կ. Պ[ոլսոյ] «Ազատամարտ» թերթի բռնած դիրքի քննադատութեան եւ ցանկութիւն է արտայայտւում, որ նա լինի իսկական յեղափոխական թերթ, չլոյէ ռուս քաղաքականութիւնը։

Համագումարը, նկատելով, որ VII Ընդ. ժող. որոշումները պարտադիր է բոլոր հատուածների համար, չի ուզում քննութեան ենթարկել նրանց, միայն հարկաւոր է համարում կուսակ. յաջորդ ընդ. ժողովի ուսան. պատգամաւորին տալ որոշ դիրեկտիւ[154] այդ մասին արտայայտուելու։

Ժողովն անցնում է «ինքնապաշտպ.» հարցին։ Դրա անհրաժեշտութեանը ժողովն միաձայնութեամբ քննարկում ու ընդունում է միաձայնութեամբ հետեւեալ առաջարկը այդ խնդրի շուրջը (Շահպազի)։

Նկատի ունենալով ինքնապաշտպանութեան կարիքները հետզհետէ աւելի մեծացող համեմատութիւնը, նկատելով, որ Եւրոպ. հայ գաղութներուն մէջ երկար ժամանակէ ի վեր չէ ձեռնարկուեր այդ նպատակով հանգանակութեան, նկատելով միւս կողմէ, որ վերջին տարուայ ընթացքին Հ.Յ.Դ. Ուս. Միութեան նախաձեռնութեամբ կատարուած համեստ փորձերը ցոյց են տուեր, որ կարելի է այս տեսակէտով որոշ արդիւնքներ ձեռք բերել, համագումարը կ'որոշէ.— Առաջարկել Արեւմ. Բիւրոյին արտօնել Ուս. Միութեան կազմակերպել Եւր. հայ գաղութներուն մէջ ինքնապ[աշտպանութեան] գործի համար լայն հանգանակ[ութիւն]եւ այդ նպատակով նշանակել յատուկ հեղինակաւոր ընկեր մը, որուն հետ Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. Միութիւնը ի կատարածէ այդ աշխատանքը։

Ինքնապաշտպանութեան հարցի շուրջը խօսելիս նկատի է առնւում նիւթականի անհրաժեշտութիւնը, որի հայթայթելու համար ժողովն քննում է «Փոթորիկ»ի վերականգնման հարցը[155], որի անհրաժեշտութիւնը բոլորն ընդունում են։ Այդ հարցի մասին առաջարկըւում, քուէարկուում եւ ընդունւում է հետեւեալ բանաձեւը.—

Ներկայ կացութեան մէջ, մեր ժողովրդի փրկութեան միակ միջոցը գտնելով ինքնապաշտպանութեան մէջ, ու նկատելով, որ հանգանակ. համար սպառած բոլոր ջանքերը անցել են գրեթէ ապարդիւն, առաջարկում ենք վերակազմել նախկին «Փոթորիկ»ը եւ այդ առթիւ առաջարկում ենք Գործ. Մարմնին մեր այս ցանկութիւնը յայտնէ անմիջապէս Արեւմ. Բիւրոյին, տրամադրելով նաեւ Ուսանող ընկերներ, այդ գործին օժանդակելու համար։

Ապա դռնփակ ժողովի արձանագրութեան մասին հետեւեալ բանաձեւն է ընդունւում միաձայնութեամբ — Համ. որոշում է, որ ընդունուած բոլոր բանաձեւերը Գործ. Խմբագրական Մարմինը վերամշակեն ու հրատարակեն «Ուսանող»ում, թողնելով մարմիններին ընտրելու այն բանաձեւը, որոնք չպիտի հրատարակուին թերթում եւ չպիտի յայտնուին խմբերին։ Ցանկանում ենք, որ «Ուսանող»ի N° 8 հրատարակուի մինչեւ փետր. 15-ը։

Ժողովն անցնում է Գործ. Մարմնի ու Խմբ[ագրական մարմինների] ընտրութեան հարցին, որի շուրջը եղած վիճաբ[անութիւնից] պարզւում է, որ անհնար է բաժանել այդ երկու մարմինն իրարից եւ զանազան տեղեր ընտրել։ Առաջարկւում է ընտրութեան ժամանակ առաջնորդուել վերոյիշեալով եւ ընտրել Ժընեւի ու Լօզանի ուսանողներից։ Առաջարկւում է կանդիդատներ.— Սամուէլեան, Մնացականեան, Գրիգորեան, Ղազարեան, Յովհաննէսեան, Քրմոյեան, Իւզբաշեան, Բայբիչեան, եւ ընդունել գործակից անդամ՝ Կ. Պոլսից վերադառնալիս՝ ընկ. Տ. Խաչիկեանին։

Ժողովը փակուեց գիշ. 12½ ժ.։

Յաջորդ նիստը նշանակուեց 30/XII 1 ժամ ցորեկը։

Նախագահ՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Քարտուղար՝ Ս. ՔՐՄՈՅԵԱՆ

29/XII-13, Պարիզ

ԻՆՆԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ
30 XII ժ. 1 — 7

Նախագ.՝ ընկ. Շահպազի, քարտ.՝ Մնացականեանի, ներկայ 12 պատգ., դռնփակ։ Կարդացուեց V ժ. արձանագր. եւ նկատուեց որ արձանագ. կազմուած է չտապ եւ անխնամ։

Առաջարկւում է վերամշակել եւ աւելի պատշաճ ներկայացնել ժողովի պատկերը։ Կարդացուեց նաեւ որ Կ. Պոլսի Հ.Յ.Դ. Ուս. միութեան՝ Համագումարին ուղղած նամակն ու օրակարգի առթիւ իրանց բանաձ[եւած] կարծիքները մեծ մասամբ համաձայն [են] մեր տրուած որոշումներին, որը ապացուցեց թէ՝ մեր եւ թէ նրանց կողմից երեւոյթների ու խնդիրների ճիշտ ընդունումն ու գնահատումը. այս իրողութիւնը խնդակցութիւն առաջացրեց համագումարի մէջ։

Ժողովն անցաւ Գործ. Խմբ. Մարմնի ընտրութեան. առաջարկուած թեկնածուներից ընտրուեցին բաց եւ միաձայն քուէարկութեամբ Սամուէլեան, Մնացականեան, Ղազարեան, Ն. Գրիգորեան Ժընեւից եւ Ա. Յովհաննէսեան Լօզանից. կանդիդատներ[136] Հ. Տ. Օհանեան (Բերլին), Ռուբէն Իւզբաշեան (Ցիւրիխ), Բայբիչեան (Ժընեւ), Քրմոյեան (Լօզան)։

Ժողովը ինքը կատարեց նաեւ աշխատանքի բաժա-

154.- Ցուցմունք, ուղղութիւն։

155.- Բռնի հանգանակութեան միջոց։

նում Գ. Մ. անդամների միջեւ. Ա. Ցովհ. խմբագիր «Ուսանողի», Սամուէլեան՝ ղեկավար թերթի տեխնիկական մասի եւ գանձապահ, Մնացականեան՝ ղեկավար Գործ. Մարմնի, Ղազարեան՝ արտաքին յարաբ[երութիւն] պահպանող (Հ.Ց.Դ. միւս ուսան. միութեան), Հ. Գրիգորեան՝ քարտուղար։ Գործ. Խմբ. Մարմնի անդամներից հրաժարուածների եւ կամ Եւրոպայից հեռացածների փոխարէն Գ. Մ. կը հրաւիրէ կանդիդատներից նոր անդամներ եւ կը կատարէ աշխատանքների նոր բաժանում։

Գործ. Մարմնին իրաւունք է տալիս դրսից հրաւիրել յարմար դատուած ընկերներ հրաժարուած խմբագրի, քարտուղարի եւ միւս անդամների փոխարէն։

Ժողովը անցաւ հայասէրներին ուղղուելիք նամակների խնդրին։ Այս առթիւ արտայայտուեցին կարծիքներ երկու ուղղութեամբ։

Մի քանիսը պնդում էին՝ այդ դիմումը հակասկզբունքային եւ դէմ նոյն իսկ մեր այս համագումարի այն որոշման, որով քննադատում ենք Եւր. դիպլ. դիմումներ անելու քաղաքականութիւնը, իսկ այդ դիմումը արդէն կը գայ ոգեւորելու այդ ձեւի աշխատանքները։ Ուրիշները նկատելով հայասէրներին ոչ դիպլոմատ այլ զուտ հայասէրներ, որոնք հայկական արդար դատ են պաշտպանում, ինչպէս եւ մենք, նրանց ուղղած մեր գրութեամբ, նրանց գործունէութիւնը ոգեւորած կը լինինք։

Որոշւում է դիմել

Հայասէր սոց. Պրեսանսէ[ին] (թեր 10, դէմ 2)

Հայասէր ոչ սոց. Բեռարին (թեր 9, դէմ 3)։

Համագումարի որոշումներից նրանք, որոնք պիտի հրատարակուին «Ուսանող»ի մէջ եւ յատկապէս այն մասը, որոնք վերաբերում են հայկական բարենորոգումների խնդրին, հրատարակել Ֆրանսերէն թերթերում. անցաւ միաձայն։

Աշխատել հնարաւորութեան սահմաններում գումարել տարին մի քանի անգամ մօտ գտնուած քաղաքների ընկերների ընդհանուր ժողով, խորհրդակցական իրաւունքով միայն համարուելով, այդ մի ուժեղ եւ կենդանի կապ կը լինի զանազան քաղաքներում գտնուող խմբերի եւ անհատ ընկերների միջեւ։

Ժողովը անցաւ օտար ուսանողութեան հետ մեր յարաբերութիւններին։

Այն միտքն էր պաշտպանւում թէ անհրաժեշտ է կապ պահպանել օտար ընկերվար կուսակց. եւ մասնաւորապէս ռուս, թուրք եւ պարսիկ ուսանողութեան հետ, աշխատելով վարակել նրանց ընկերվարական, յեղափոխական մեր տեսակէտներով։ Ժողովը նկատելով, որ այդ հարցի մասին III համագումարը պարզաբանուած որոշումներ ունի արդէն, որի վրայ աւելացնելու ոչինչ չունինք, որոշւում է այդ առթիւ եղած որոշումները յանձնել Գործադիր Մարմնի նկատառութեան։ Ջնայելով որ մի քանի քաղաքների պատգամաւորները համարում են շատ դժուար՝ գործ ունենալ մանաւանդ տաճիկ ուսանողութեան հետ։ Իրագործման միջոցները թողնել Գ. Մարմնին, նախօրօք ի նկատի ունենալով գործնական առաջարկները։

Առաջարկուեցան՝

1) Ուղարկուած պրոպականդիստներին հարկադրել նաեւ խօսել օտար ուսանողների համար։

2) Կազմակերպել ընդհանուր հրապարակային ժողովներ, դասախօս. նիւթ ունենալով տաճկական իրականութեան մէջ յառաջացած հոսանքները եւ հրաւիրել տաճիկ ուսանողութեան։

Քննիչ յանձ[նաժողովը] մանրամասնօրէն քննութեան առնելով Գ. Մ. հաշիւները, նկատեց, որ նրանք համապատասխանում են հաշուետետրում գրուածին։ Հաստատուեց նոյնպէս 1912 թ. բիւդճէն.

ՄՈՒՏՔ

Ժընեւ	300
Բերլին	200
Լայպցիգ	25
Ցիւրիխ	100
Լօզան	150
Վիեննա	50
Փարիզ	100
Նանսի	50
Թուլուզ	50
Լիէժ	75
Ամերիկայից ստանալիք	100
Երկրից («Ուսանող» բաժանորդ)	100
Բալկան	50
Պարսկաստան	35
Տառերից	150
օր. Ցակոբ[ջանեան]	75
օր. Սամուէլեանից նուէր	100
ընկ. Շահպազ	50
	2860

ԵԼՔ

«Ուսանող»ի հրատարակ.	600
փոխադրութիւն	200
դիւան. ծախք	150
պրոպականդա	600
տառերի համար	500
Դաշնակցութեան տուրք	100
VI Համ. պարտք	150
	2300

Ժողովը մասնաւորապէս ծանրացաւ «Ուսանող»ի վրայ արուելիք ծախսերի եւ մուտքի վրայ եւ ի նկատի ունենալով տաճկահայ ընթերցողի տնտեսական նեղ վի-

ճակը, առաջարկում են բարձրացրել «Ուսանող»ի բաժանորդագինը Ամերիկայի եւ զանազան երկրների համար, իջեցնելով Տաճկ. համար։

Առաջարկուեցան հետեւեալ բանաձեւերը՝

— Մեր նախահաշուով «Ուսանող»ը պիտի արժենայ 800 ֆր. եւ պիտի ստանայ 1100 ֆրանք. արդիւնքը պիտի տայ 300 ֆր.։ Գործ[ադիր] Մարմինը չպիտի «Ուսանող»ի հրատարակութեան գործում ունենայ աւելի բաց քան այդ 300 ֆր.ը։ Թերթի եկամուտը պիտի ծածկէ նրա ելքը ամէն պարագայի մէջ։ 13 թեր։

— Եթէ «Ուսանող»ը բաց ունենայ, չծածկել բիւդճէի միւս նպատակների համար նշանակուած գումարներից։ Թոյլ տալ Գործադիր Մարմնին «Ուսանող»ի բացը ծածկելու համար դիմել արտակարգ միջոցների մինչեւ 150 ֆր. լրացնելու համար այդ բացը։

10 ձայն, 1 դէմ։

Երեք տարի շարունակ Միութիւնը չի տուել Դաշն. հասանելիք տուրքը, որոշում է որ սրանից յետոյ ամէն տարի պարբերաբար վճարել, սկսելով այս տարուանից։

Ապա ժողովն անցնում է ոչ դաշն. ուսան. միութիւնների մէջ մեր բռնելիք դիրքի մասին։ Ժողովը յանգաւ հետեւեալ եզրակացութեան, որ դաշ. ուս. խմբերի անդամները պիտի աշխատեն ըստ կարելոյն իրանց ազդեցութեան տակ առնելու յիշուած միութիւնները եւ իրանց տեսակէտները այնտեղ անցնել։

Ժողովը անցաւ ընկ. Զաւարեանի յիշատակը յարգելուն։ Լօզանի խումբը առաջարկում էր ընկերոջ յիշատակին նուիրուած ժողովածու հրատարակել, միւսները բաւականանալ Զաւարեանի անունով հիմնուելիք գիւղատնտեսական դպրոցներին նպաստելով։ Ժողովը քուէարկեց հետեւեալ բանաձեւը, որն եւ միաձայն ընդունուեց

— Շարունակել հանգանակութիւնը յանուն Զաւ[արեանի] յիշատ[ակին] բացուելիք գիւղատնտեսական դպրոցների. նրա որդու կրթութիւնը ապահովելու համար հանգանակած գումարն էլ յատկացնելով, ըստ Զաւարեանի մօտ ցանկութեան, նոյն նպատակի, եւ ամբողջ հանգանակած գումարը բաժանել երկու մասի, մէկը Տաճկ[ահայաստանում] բացուելիք, միւսը ընկերոջ ծննդավայրում [բացուելիք] գիւղատնտ. դպրոցներին։

Ժողովը ցանկալի է համարում, որ Բերլինի խմբի գրաւոր կարծիքը օրակարգի հարցերի մասին ստացուի գոնէ պատգամ. ընկերոջ վերադառնալուց յետոյ։

Ժողովն կարեւոր է գտնում երկրի ուսումնասիրութիւնը ունենալ գաւառ գաւառ, ուղարկելով յատուկ ընկերներ այդ գործով։ Աշխատանքի արդիւնքը տպագրել Եւրոպայում, «Ուսանող»ի մէջ կամ այլ միջոցներով, իսկ գործնականը թող լինի երկրի տնտեսական վի-



ճակի ուսումնասիրութիւնը։ Առաջարկւում է կազմակերպել մի ընկերութիւն, որին անպայման պիտի մասնակցեն մեր ընկերները (կուլտուրական), որի նպատակը լինի երկրի ուսումնասիրութիւնը ամենալայն իմաստով։ Առաջարկւում է այդ գաղափարը արծարծել մամուլի էջերում, ամէնից առաջ հէնց «Ուսանող»ի. առաջարկւում է կազմել մի մասնախ[ումբ], որի գործը լինի աշխատել իրագործել յիշուած ընկ[երութեան] հիմնումը։

Այդ առթիւ հետեւեալ բանաձեւն է քուէարկւում եւ միաձայն ընդունւում, բայց ի նկատի ունենալով կոմմիսիա կազմելու անհնարաւորութիւնը, այդ գործը յանձնւում է Պարիզ բնակուող ընկ. Շահբազին, որ նա բանակցելով հայ գրող ոյժերի հետ ձեռնարկէ այդ կազմակերպելուն։ Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 8-ին։

Նախագահ՝ ՇԱՀՊԱԶ
Քարտուղար՝ [ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ]

30-XII, Պարիզ

Փաստ. 1474-11

Է 20.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊ. ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԵԱՆ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(Դեկտեմբեր 25-30 1913 թ. Պարիզում)

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

IV *համագումարի որոշման համաձայն,* V *համագումարը տեղի ունեցաւ Փարիզում* 1913 *թ. Դեկտ.* 25-30-*ը։ Մասնակցում էին պատգամաւորներ Ժընեւից* 4, *Լօզանից* 2, *Ցիւրիխից* 1, *Բերլինից* 1, *Լիէժից* 1, *Փարիզից* 3 *(ինքնայրացման իրաւունքով հրաւիրուած)։*

*Նախկին Գործադիր-խմբագրական մարմինը նախօրօք խմբերին էր ուղարկել համագումարի օրակարգը, որպէսզի իւրաքանչիւր խումբ հնարաւորութիւն ունենայ իր բանաձեւած կարծիքները պատգամաւորի հետ միասին հասցնել ժողովին. մի նախապատրաստական ժողովում որոշուեց՝ ունենալ օրը երկու նիստ**՝ *երեկ. ժամը* 2-7 *եւ* 8½-12 *գիշերուայ։ Որոշման համաձայն ժողովը օրակարգի քննութեան նուիրեց օրը երկու, ընդամէնը* 10 *նիստ**։

Տեղեկագրի ընթերցումից եւ ընկեր պատգամաւորների զեկուցումներից յետոյ ժողովն անցաւ օրակարգի խնդիրներին ու տուեց որոշումներ, որոնցից քաղում ենք կարեւորագոյնները։

Ա. ԳՐԱՒՈՐ ԵՒ ԲԱՆԱՒՈՐ ՊՐՈՊԱԳԱՆԴ

Համագումարը նկատելով, որ Ուսանողական միութեան բարոյական եւ նիւթական միջոցները չեն բաւում գիտական մէկ կամ մի քանի ժողովածու հրատարակել, որ տպագրական վայրը հեռու լինելով մեր հսկողութիւնից մինչեւ այժմ միշտ տեղի է տուել բազմաթիւ անյարմարութիւնների, որ հանդէսը չի կարող շփում ու հետաքրքրութիւն առաջացնել ուսանողութեան մէջ.

Որոշում է

I- *Հրատարակել «Դրօշակ»ի ծաւալով,* 24 *էջերից բաղկացած մի երկամսեայ պարբերական, խնամուած ու ժողովրդականացրած ոճով։*

II- *Չհրատարակել չարունակելի յօդուածներ։*

III- *Տեղ տալ եւրոպ. ուսանողական կեանքին վերաբերող երեւոյթներին։*

IV- *Անպայման ունենալ որոշ բիւդջէ ու չչեղուել այդ առթիւ համագումարի տուած որոշումներից.*

V- *Հրատարակել Եւրոպայում*

VI- *Եթէ բարոյական եւ նիւթական տեսակէտից որոշ յարմարութիւններ առաջանան, խմբագրական մարմինը իրաւասու է թերթի էջերի թիւը բարձրացնել* 32-*ի։*

VII- *Իւրաքանչիւր համարից քանի օրինակ հրատարակելու խնդիրը թողնել Գործադիր-խմբագրական մարմնին։*

Շրջաբերականներ

Համագումարը ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընդհանրապէս հայկական եւ մասնաւորապէս մեր կուսակցական կեանքում առաջացած որոշ խնդիրներ, որոնց մասին նախ քան ներքին, կազմակերպական աշխարհում որոշ եզրակացութեան գալը դժուար է Ուսանող-ի կամ մեր թերթերից որեւէ մէկի մէջ հրապարակով արտայայտուելը, մինչեւ այդ խնդիրը քննութեան եւ զբաղումի նիւթ դարձնելը շատ անգամ մեծ նշանակութիւն կարող է ունենալ ամէն տեսակէտից,

Որոշեց.

Հրատարակել շրջաբերականներ, որոնց նպատակը պիտի լինի՝ քննադատել ու լուսաբանել թէ՛ մեր կուսակցութեան եւ թէ հայ կեանքում առաջացած կարեւոր խնդիրները։ Այդ շրջաբերականները կ'ուղարկուին Դաշն. Ուսանողական միութիւններու խմբերին, ինչպէս նաեւ Եւրոպայից դուրս գտնուող կ. Կոմիտէներին, վերջիններին թողնելով արտատպելու եւ իրենց շրջանի խմբերին տարածելու պարտականութիւնը։

Շրջիկ պրոպագանդիստներ

Համագումարը նկատելով, որ անցեալ տարիներում, չնորհիւ շրջիկ պրոպագանդիստների չգոյութեան որոշ քաղաքներում մինչեւ անգամ մեր ունեցած խմբերից մի քանիսը քայքայուել են, որ՝ չնայելով մի քանի եւրոպական քաղաքներում մեծ թուով հայ ուսանողութիւն կայ (հաւանականօրէն եւ անհատ դաշնակցականներ), բայց դեռ չունինք այդ քաղաքներում կազմուած դաշն. ուսանողական խմբեր, որ՝ Երկիր անցնելու եւ ժողովրդի մէջ որոշ գաղափարներ աւելի խոր ամրացնելու համար պրոպանգանդիստների մեծ կարիք ունենք, որոշեց.

I- *Ունենալ յատուկ բիւդջէ Եւրոպայի զանազան քաղաքները շրջիկ պրոպագանդիստներ ուղարկելու համար։*

II- *Յայտարարել բոլոր ուսանող ընկերներին, որ կազմակերպական գործով Երկիր անցնելու ցանկութիւն ունեցողները վաղօրօք իրենց գրաւոր կարծիքը պէտք է յայտնեն Գործադիր մարմնին։*

Միջքաղաքային ընդհանուր ժողովներ

Ցնայելով, որ «Ուսանող»ը Եւրոպայի զանազան քաղաքներում ցրուած դաշնակցական ընկերների միջեւ մի ուժեղ կապ պիտի լինի, չնայելով որ շրջիկ պրոպագանդիստները շրջանից շրջան անցնելով մեծ ոգեւորութիւն կարող են առաջացնել ուսանողութեան մէջ, բայց եւ այնպէս այդ կապը աւելի ուժեղացնելու համար՝ համագումարը ցանկալի համարեց, որ մօտիկ քաղաքների դաշնակցական ու ուսանողական խմբերը, տարեկան մի քանի անգամ իրենց յարմար որեւէ քաղաքում, ընդհանուր ժողով ունենան, որտեղ կարող են զբաղուել կուսակցական կեանքում առաջացած կարեւոր խնդիրներով։ Ժողովը անշուշտ ունենալու է խորհրդակցական բնաւորութիւն։

Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Քաղաքական խմբեր Եւրոպայում

Համագումարը ի նկատելով, որ Դաշնակց. Ուսան. միութեան եւ դաշնակցական քաղաքական կամ այլ խմբերի գոյութիւնը ոչնչով չի վնասում կուսակցական աշխատանքների նպատակայարմար եղանակով յառաջ տարուելուն, որ՝ մեր կազմակերպութեան ծոցին մէջ ուսանողական միութիւնները եւ մասնաւորապէս Եւրոպայի դաշնակցական ուսանողութիւնը, ներկայացնում են ուրոյն կազմեր, յատուկ իրաւասութիւններով ու յառաջադրութիւններով՝ չմտնելով կուսակցական կանոնագրով ընդհանուր տրամադրութիւնների տակ եւ միայն այդպիսով կարող են զարգանալ եւ ծառայել իրենց նպատակին, որ՝ 25 տարուայ գործունէութեան փաստ է, թէ կազմակերպութեան մէջ ուրոյն խմբակցութիւնների դիրքն ու իրաւական փոխյարաբերութիւնները որքան պարզ, յստակ եւ աներկդիմի լինին, այնքան քիչ կը լինին թիւրիմացութիւններն ու ընդհարումները, եւ հետեւապէս այնքան խոր կը լինին փոխադարձ ընկերական կապերը, որ՝ ոչ ուսանող դաշնակցականների մեծ մասը գործաւոր ընկերներ լինելով անկարող պիտի լինեն ընդունել եւ իւրացնել այն թէորիական հարցերն ու տեսական-փիլիսոփայական խնդիրները, որոնցմով զբաղուելու են ուսանողական խմբերը եւ այդպիսով՝ դժուարութիւն յառաջացնելու պրոպագանդային գործում.

Որոշեց.

Եւրոպայի Դաշն. Ուսան. միութիւնը առանձին կազմակերպելով, Եւրոպայի ոչ ուսանող դաշնակցական ուրոյն քաղաքական կամ բանուորական կազմակերպութիւնների հետ կը պահի սերտ ընկերական կազմակերպական յարաբերութիւն, ընդհանուր կուսակցական բնոյթ ունեցող հարցերի մէջ կը գործեն միասնական։ Նաեւ, կազմակերպական հիերարխիայի տեսակէտից կապուելով համապատասխան բարձր մարմինների հետ։

Գ. ԵՒՐՈՊԱՑԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԱՄԵՐԻԿԱՑԻ ԵՒ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԴԱՇՆ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈԽՑԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԿԱՆՈՆԱՒՈՐՈՒՄԸ

Համագումարը նկատելով, որ Ամերիկայի, Ռուսաստանի, Տաճկաստանի եւ մեր ուսանողական միութիւնները մեծ մասամբ ունենալով նոյն նպատակները, կարիք ունին փոխադարձ օգնութեան ու հաւաքական աջակցութեան, որ՝ մի վայրի միութեան գործունէութիւնը մեծ ոգեւորութիւն կարող է առաջացնել միւս վայրերում, որ՝ վերջապէս, միութիւններից որեւէ մէկի կիրարկած միջոցները ծանօթ դէպքում կարող են նոյնքան օգտակար լինել միւս վայրերի համար.

Որոշեց.

Թողնել Գործադիր մարմնին այդ երեք հատուածների հետ կանոնաւոր յարաբերութիւն եւ կապ հաստատելու մանրամասն միջոցների մասին մտածելը, նախատեսելով, որ իւրաքանչիւր միութեան գործադիր մարմինը պիտի ունենայ իր յատուկ անդամը, որի պարտականութիւնը պիտի լինի ամենասերտ յարաբերութիւն պահպանել եղած միութիւնների հետ։

Դ. ՀԱՅԿԱԿ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Համագումարը մանրամասնօրէն ծանօթանալով հայկական բարենորոգումների ծրագրին եւ այդ առթիւ կատարուած ձեռնարկներին, գտնում է, որ հասուն եւ անյետաձգելի պահանջ է առաջադրուած բարենորոգումների կիրարկումը հայկական նահանգներում,

*) *Ծանօթ.- Ժողովները գիշերը գումարելով հնարաւորութիւն է տրուել Փարիզի գործաւոր ընկերներին խորհրդակցական ձայնով մասնակցելու։*

Որ.....[156]

Որ.....[156]

Որ բարենորոգումները իրականանալու դէպքում իսկ ժամանակաւորապէս հայ ժողովրդի գոյութիւնը չպիտի դադարէ գոյութիւն ունեցող վտանգներին ենթակայ լինելուց, եւ վերջապէս կանխելու համար հայ ժողովրդի գլխին կախուած կոտորածի ամենահաւանական անակնկալները, յարատեւելու նրա ֆիզիքական գոյութիւնը եւ միեւնոյն ժամանակ պատկառանք ներշնչելու թէ՛ տաճիկ եւ թէ եւրոպական դիպլոմատիային

Որոշեց.

.....

.....

.....[156]

Ե. ԴԷՊԻ ԵՐԿՐԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ (ԹՈՒՐՔ, ՊԱՐՍԻԿ ԵՒ ՌՈՒՍ) ՈՒՆԵՆԱԼԻՔ ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Համագումարը նկատելով, որ թուրք, պարսիկ եւ ռուս ուսանողութիւնը Եւրոպայում բաւական մեծ թիւ է կազմում, որ՝ այստեղ նրանց հետ մեր գործակցութիւնը ցանկալի կապ կ'առաջացնէ երկրակից ուսանողութեան մէջ, որը նախադուռը պիտի համարել ազգային ցանկալի համերաշխութեան, որ՝ «վաղը» այդ ուսանողութեան հետ է, որ գործ պիտի ունենանք Երկրում, որ՝ վերջապէս, իւրաքանչիւր ազգութեան մէջ ուսանողութիւնն է հանդիսանում այն տարրը, որը ընդունակ է եւ պէտք է լինի, երկրի մէջ ստեղծուող գաղափարական հոսանքների ղեկավարը, ու չնայելով, որ յիշեալ ազգութիւնների ուսանողներին մօտենալու բազմաթիւ փորձերը ի դերեւ են անցել, յամենայն դէպս համագումարը պարտադիր է համարում IV համագումարի այդ առթիւ տուած որոշումները, աւելացնելով, որ հնարաւորութեան սահմաններում տակտով մօտեցուի, մանաւանդ թուրք ուսանողութեան։

Զ. VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Եւր. Հ.Յ.Դ. Ուսանողական միութեան VI համագումարը պիտի գումարուի յառաջիկայ տարին (1914) Դեկտեմբեր ամսին. ժողովի ուր լինելը կ'որոշէ Գործադիր մարմինը[157]։

ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂ[ԱԿԱՆ] ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

24-ին Յունուարի 1914
Ժընեւ

156.- Կիսաւարտ. ներկայ շրջաբերականին մէջ բաց ձգուած տեղերը կը վերաբերին ինքնապաշտպանութեան եւ բարենորոգումներու հարցերուն: Տես նախորդ՝ թիւ 1473-116 փաստաթուղթը, հինգերորդ նիստ, էջ 515-516:

157.- Հ.Յ.Դ. Եւրոպայի Ռուս. միութեան յաջորդ՝ վեցերորդ համագումարը, նախատեսուած 1914 թուականին, կարելի պիտի չըլլար կայացնել համաշխարհային Ա. պատերազմի պատճառաւ:

Փաստ. 1474-32

Է 21.– ԵՐԱԺԻՇՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Հետաքրքրական դրուագ մը երաժիշտ Նիկողայոս Տիգրանեանի մասին: Նամակագիրը՝ Վիեննայի մէջ դաշնակցական ուսանող, ապա արուեստաբան Լեւոն Լիսիցեանն է (1892-1921), որ Ուս. Միութեան Գործադիր մարմնին կը տեղեկացնէ հայ ծանօթ երաժիշտ, 9 տարեկանին տեսողութիւնը լրիւ կորսնցուցած Նիկողայոս Տիգրանեանի (1856-1951) Եւրոպայի մէջ ունեցած երաժշտական գործունէութեան մասին, խորհուրդ տալով Ժընեւի կամ Լօզանի մէջ եւս ձեռնարկ մը կազմակերպել:

Վիեննա, Մարտ 5, 1914 թ.

Յարգելի ընկեր!

Մարմինդ անշուշտ ստացած պիտի լինի իմ նամակս, որ ես գրել էի ի պատասխան համագումարին մասնակցելու հրաւիրող շրջաբերականի Դեկտեմբեր ամսին՝ ընկեր Դերոյեանի, Գիւլբենկեանի եւ իմ կողմից։ Այդտեղ ես գրում էի, որ Վիեննա՝ այս տարի գոնէ՝ խումբ գոյութիւն չունի այն պատճառով որ չկան հայ դաշնակցական ուսանողներ բաւականաչափ թուով։ Ընկեր Գիւլբենկեանը մի քանի ամիս է արդէն՝ ինչ որ ծանր հիւանդ է (ծնկան ոսկորի tuberculos. *իրանից ի հարկէ գաղտնի են պահում)։ այժմ գտնւում է Վիեննայից մի քանի ժամ հեռու* Grimmenstein *սանատորիայում։ Դրութիւնը ծանր է, թէեւ ի հարկէ կարող է առողջանալ եթէ լաւ խնամք տարուի։ Դերոյեանը, գուցէ նոյն իսկ այս ամիս, հեռանայ այստեղից։ Մնում եմ ես։*

Ուրեմն՝ Վիեննա խումբ չկայ եւ այդպիսով վերանում են խմբի կատարուելիք պարտականութիւններն։—

Այժմ գամ մէկ այլ բանին։ Վիեննա է գտնւում այժմ մեր կոյր երաժիշտ (դաշնամուրահար ու կոմպոնիստ) Նիկողայոս Տիգրանեանը։ Այստեղ նա երաժշտական մի երեկոյթ տուեց սրանից մօտ տաս օր առաջ՝ կոյրերի կայսերական ինստիտուտում, որին ներկայ էին մօտ 300 հոգի (հրաւէրով)։ բաւականին յաջող անցաւ։ Նուագուեցին բացառապէս իր բաները։ Պէտք է ասել որ նա վերցնում է հայկական, վրա[ցա]կան, քրդական եւ պարսկական ժողովրդական երաժշտական կտորներ եւ մշակում է դրանք դաշնամուրի, ջութակի կամ երգի համար։ Բացի դրան, նուագահանդէսին երգուեցին մի քանի երգեր եւ նուագուեցին ջութակի կտորներ։ Այս շաբաթ պ. Տիգրանեանը նուագելու է այստեղի համալսարանում եւ զեկուցանելու է արեւելեան (գլխաւորաբար պարսկական եւ մեր) երաժշտութեան մասին միջազգային երաժշտագիտական ընկերութեան Վիեննայի մասնախմբի հրաւէրով։ Մօտ տասը օրից յետոյ նա գնալու է Բերլին, իսկ այնտեղից երեւի Փարիզ։

Ես յայտնում եմ Ձեզ այդ ամէնը, որովհետեւ կարծում եմ, որ լաւ կը լինի եթէ դուք կազմակերպէք Ժընեւ կամ Լօզան մի նուագահանդէս, օգտուելով պ. Տիգրանեանի Եւրոպա լինելուց։ Թէեւ նա ինձ այդ մասին դեռ ոչինչ չի ասել, բայց ես կարծում եմ որ նա դէմ չի լինի այդ բանին։ Խորհուրդ արէք չուտով այդ մասին եւ եթէ վճռէք այդպիսի մի հանդէս կազմակերպել այդտեղ, դիմեցէք չուտով իրան. կարող էք անել այդ իմ միջոցով (որ աւելի լաւ է, որովհետեւ նա կարող է գնալ այստեղից մինչեւ Ձեր հրաւէրի գալը). ես ուրախութեամբ կը միջնորդեմ այդ բանի համար. կամ դիմէք անմիջապէս նրան.

Իր հասցէն. Wien III Land str. Haupt str.,
Hotel – Roter Hahn Nikolaus von Tigranoff

Ուղարկում եմ նաեւ նրա նուագահանդէսի մի հատ պրոգրամ։

Ընդունեցէք իմ ընկերական ողջոյններս
ԼԵՒՈՆ ԼԻՍԻՑԵԱՆ

Փաստ. 1474-47

Է 22.– Հ.Յ.Դ. ԵՒՐՈՊԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ընկերներ!

Սիրով ստացանք Ձեր ուղարկած գրութիւնները։ Ապահովագրած դէպքում չէինք կարողացել ստանալ, որովհետեւ Մանգաս ընկերը, ինչպէս ցոյց է տալիս բառի կազմութիւնը, այստեղ չէր...

Գալով մեր համագումարին, ցաւօք սրտի, պէտք է յայտնենք, որ մի շարք հանգամանքների պատճառով այս տարի եւս չկարողացանք գումարել։ Արգելքի ամենագլխաւոր պատճառներից են՝ ա) համագումարի «հոտը» առնուած էր եւ հետեւապէս անհնարին իրականացնել, եւ երկրորդ, մի շարք համալսարանական քաղաքների մեր ուսանող ընկերները ցանկալի եռանդ ցոյց չտալով, ժամանկին չէին կազմակերպուել, հետեւապէս չէին կարող համագումարին մասնակցել իրենց ներկայացուցիչով։

Այս տարուայ անյաջողութիւնը, համագումարի չգումարման առթիւ, մեզ չի հիասթափեցնում եւ ոչ էլ Ձեզ պէտք է հիասթափեցնի։ Ընկերներ, Ձեզ յայտնի է, թէ ինչպիսի քաղաքական մթնոլորտում ենք ապրում. Ձեզ ոչ պակաս, քան մեզ, յայտնի պէտք է լինի նաեւ վերջին երկու տարիների մայրաքաղաքիս բանուորական շարժման աճումը, որը իւր հերթին հարկադրում է մեր թեւատարած ռէակցիային՝ լարել վերջին ոյժերը եւ ուշի ուշով հետեւել ու հետապնդել ամենափոքր համախմբումներին ու հաւաքոյթներին։ Բայց չնայած այս բոլորին, մեզ յաջողուեց այս ուսման տարում, կազմակերպուել մի շարք քաղաքներում եւ այդպիսով հող պատրաստել եկող տարուայ համագումարի համար։

Շնորհիւ այդ նախապատրաստական աշխատանքների, մենք ունենք կազմակերպուած ընկերներ այստեղ, Մոսկուայում, Կիեւում, յոյս ունենք կազմակերպել նաեւ Դորպատում, Օդեսայում եւ Խարկովում։

Որովհետեւ ամառս ցրւում ենք, ուստի մինչեւ Օգոստոս գրութիւնները կարող էք ուղղել այս հասցէով՝ Նիկոլաեւսկ կալուածքի Սերեբրեանկօ կայարան (Բ. երկաթուղիներ), ուսանող Մանգաս Մարկոսեանին[157ա]. *իսկ Սեպտեմբերից՝ կը լինի նախկին հասցէն։*

Ընկերական բարեւներով
ՍՏԵՓԱՆ

Պետերբուրգ 7/IV 1914 թ.

157ա.- Բնագրին մէջ՝ ռուսատառ։

փաստ. 1257-14

Է 23.– ԶԵԿՈՒՅՈՒՄ «ԶԱՆՔ» ԽՈՒՄԲԻ (1914-15) ՁՄԵՌՆԱՅԻՆ ՍԵՄԵՍԹՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Զանք»ը իր խմբական գործունէութեան վերսկսած է 1914 նոյ. 12-ին եւ շարունակած է մինչեւ 1915-ի Մարտ 25-ը։ Մօտաւորապէս 5 ամսուայ այդ շրջանին մէջ ունեցած է ընդամէնը 17 խմբական ժողովներ, որոնց օրակարգի նիւթերը կազմած են գլխաւորաբար դասախօսութիւններ եւ «Զանք»ի հետ սերտ յարաբերութիւն ներկայացնող զանազան հարցեր, որոնք իրենց զուտ խմբական եւ հասարակական բնաւորութեան շնորհիւ ժողովին զբաղման նիւթ դարձած են։

«Զանք»ը այդ շրջանին մէջ ունեցած է 12 դասախօսութիւններ, որոնցմէ մէկը մասնաւորաբար տրուած է ընկ. Ռոստոմի կողմէ, Դաշնակցութեան վերջին VIII Ընդհ. ժողովի որոշումներու մասին։ Իսկ մնացածներն են հետեւեալները.

1. Ընտրական սիստեմներ — ընկ. Հ. Նալպանտեան
2. Ներկայ պատերազմը եւ անոր պատճառները — ընկ. Մ. Ղազարեան
3. Կովկասահայ եւ պարսկահայ կրթական գործը — Ընկ. Տ. Մնացականեան
4. Տաճկահայոց դպրոցները եւ Դաշնակցութեան կուլտուրական գործունէութիւնը — ընկ. Մ. Օզանեան
5. Ռուս կառավարութեան դիրքը հանդէպ հայերու — ընկ. Մ. Սամուէլեան
6. Տաճկահայ Ազգ. Սահմանադրութիւնը եւ անոր թերութիւնները — ընկ. Մ. Ցարութիւնեան
7. Ֆեմինիզմ — ընկ. Ց. Գալփաքեան
8. Տաճկահ[այ] ազգ. սահմանադրութիւնը եւ անոր թերութիւնները (կրկնում) — ընկ. Մ. Օզանեան
9. Հայերու գաղթականութիւնը եւ անոր հետեւանքները — ընկ. Լ. Բայբիչեան
10. Պատմական մոնիզմ — ընկ. Ց. Մնացականեան
11. Դանիէլ Վարուժանի գործերը — ընկ. Ե. Պոյաճեան

Գրեթէ ամբողջութիւնով՝ բոլոր դասախօսութիւնները պատրաստուած են մասնաւոր ուշադրութիւնով եւ խնամքով, եւ ժողովին մէջ յառաջ բերած են մեծ հետաքրքրութիւն. իւրաքանչիւր դասախօսութենէ վերջ միշտ տեղի ունեցած է կարծիքներու փոխանակութիւն, վիճաբանութիւն, որը աւելի նպաստած է գաղափարներու պարզաբանումին եւ աւելի մատչելի դառնալուն։

«Զանք»ը ընկ. Դումանի մահուան առթիւով կազմակերպած է սգահանդէս մը — Hôtel de l'Ours-ի մէջ, նուիրուած ընկերոջ յիշատակին։

«Զանք»ի initiative-*ով*[144] *տեղւոյս ակադեմիկ Ուս. Միութեան ժողովին մէջ դրուած է կովկաս երթալ ցանկացող կամաւորներու եւ հանգանակութեան հարցը. ուղարկուած են 3 բժիշկ ընկերներ։*

«Զանք»ը նկատի առնելով խմբագրատան արդի պայմանները, եւ խումբի պարտականութիւնը, որոշած է ամսականներէն ամէն ամիս յատկացնել 25 ֆրանք խմբագրատան։ Գրաշարի բացակայութեան պատճառով կարիքը զգացուելով՝ «Զանք»ը անդրադարձած է այդ կէտին վրայ եւ ընկերներէն ոմանք ստանձնած են գրաշարութիւն սովորել. նոյնպէս ուրիշ ընկերներ ալ յանձն առած են խմբագրատան գրադարանի ու գիրքերու դասաւորման գործը։

Ինչպէս նախորդ շրջաններու մէջ, նոյնպէս այդ շրջանին մէջ ալ՝ կարգ մը ընկերներու թղթախաղով պարապելու երեւոյթը աւելի սուր բնոյթ ստացած ըլլալով «Զանք»ը ուշադրութիւն դարձուցած է այդ կէտին վրայ եւ այս անգամ աւելի վճռական քայլով մը՝ որոշած է զրկել «Զանք»ի անդամակցութենէ այն ամէն ընկերները, որոնք professional *կերպով կը խաղան, եւ քննադատել անոնք, որ հաճոյք կ'առնեն այդպիսի բացասական խաղի մը մէջ։*

«Զանք»ը այս շրջանին մէջ ունեցած է 21 անդամներ, որոնցմէ 16-ը անցած տարուան մասնակցող ընկերներն են եղած. 3 դաշնակցական ընկերներ հոս փոխադրուած ըլլալով՝ մասնակցած են հոս, եւ 2 հատ ալ նոր ընկերներ ցանկանալով մասնակցել ընդունուած են։

Իսկ գալով պակսած անդամներու, երկու ընկերներ աւարտելով մեկնած են։

Կոմիտէի կողմէ քարտուղար՝
Ց. ԳԱԼՓԱՔԵԱՆ

15 Ապրիլ 915
Ժընեւ

Փաստ. 1444-3

Ը.– ՅԱՒԵԼՈՒԱԾ – ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ [1899 թ. Յունուար]

Իբրեւ յաւելուած Եւրոպայի հայ ուս. միութիւններուն յատկացուած նախորդող գլուխներուն, կը ներկայացնենք թիւ 1444-3 փաստաթուղթը, որ արձանագրութիւնն է 1899 թ. Յունուար 9-ին սկսած եւ 12 նիստերով աւարտած Ռուսիոյ «Դաշնակցական ուսանողութեան առաջին համաժողովի», գումարուած Պետերբուրգ:

Փաստաթուղթը խմորատիպ է (17 էջ), հաւանաբար ատենին շրջաբերականի ձեւով ցրուած ուսանողական խումբերու մէջ. կու տայ հետաքրքրական ծանօթութիւններ, Դաշնակցութեան հիմնադրութեան առաջին տասնամեակին, երիտասարդութիւնը յուզող ազգային եւ ընկերային խնդիրներու, ինչպէս նաեւ գլխաւորաբար ուսանողութեան միջոցով Ռուսիոյ տարածքին ստեղծուած կազմակերպական առաջին ցանցերու մասին:

Ուսանողական համաժողովն ունեցաւ ընդամէնը 12 նիստ: Մասնակցում էին այդ նիստերին Հիւսիսակերտի[158] ամբողջ կոմիտէն, Եկեղեցու[159] եւ Խարթուփի[160] ներկայացուցիչները (3 հոգի): Երբեմն-երբեմն ներկայ էին լինում նիստերին եւ Հիւսիսակերտի խմբական ներկայացուցիչները: Թէպէտեւ ներկայացուցիչներից մի քանիսը իրենց կոմիտէներից լիազօրութիւն ստացած չէին այն բոլոր հարցերում, որոնք պէտք է քննուէին համաժողովում, բայց եւ այնպէս համաժողովը, ի նկատի առնելով այն բոլոր անյարմարութիւնները գործնական տեսակէտից, որոնք առաջ կը գային, եթէ վճռական որոշումներ չանէին, վերցրեց իւր պատասխանատուութեան վրայ յայտնել այդ ուսանողական համաժողովը լիազօրների ժողով:

I. *Ամսոյս 9-ին կայացած լիազօրների առաջին նիստում, որ բաղկացած էր 5 հոգուց, կարդացուեց մի կարճառօտ, բայց ամփոփ զեկուցում, որտեղ արծարծուել էր գլխաւորապէս այն միտքը, թէ մեր դաշնակցականներիս գործունէութեան հիմք պէտք է ընդունել երկրի բազմակողմանի հետազօտութիւնը, որ մեր առաջին քայլերը հէնց պէտք է սկսուեն իրականութեան ուսումնասիրութիւնից: Դեռ շատ խոշոր հասարակական երեւոյթների պատճառները քննուած չեն, չունենք մի որոշ գիտնական հիմունքների վրայ հաստատուած տեղեկութիւններ, որոնց դէմ անկարելի լինէր վիճելը, չունենք տեղեկագրական թուեր, որոնց դէմ խօսելն անհնարին է, այլ որոնց վրայ հիմնուելով միմիայն եզրակացութիւններ պէտք է անէինք: Կան հատուկտոր եզակի փաստեր, որոնք բերանէ ի բերան պտտում են, ոչ թէ լուսաբանելու հասարակութեան աչքում մի որոշ եղելութիւն եւ մի որոշ քայլ զանազան ընկերութիւնների կողմից սկսուած այլ, ընդհակառակը, կարծես ծաղրի համար աւելի եւս պղտորում եւ չփոթում են զարգացած մարդու միտքը: Իւր բնաբանն աւելի պարզ կացուցանելու համար զեկուցագրողը կազմել էր մի շարք հարցերի ցուցակ, որոնց բաւարարութիւն տալը այսպէս թէ այնպէս կարող էր մեզ պատկերացնել Տաճկահայաստանի մտաւոր, բարոյական եւ տնտեսական կեանքը, նրա կենսունակութիւնը, յեղափոխական գործի ծագումը, տարածուիլը եւ այլն եւայլն: Ցանկալի էր իմանալ, թէ որքան է իւրաքանչիւր գաւառում հայոց, թիւրքաց եւ այլ ազգութիւնների քանակը, ինչպէս են նոցա իրար մէջ ունեցած յարաբերութիւնները թէ կրօնական, թէ քաղաքացիական եւ տնային եւ թէ առեւտրական. ո՞ւմ է պատկանում հողը, երկրի արդիւնաբերութիւնը, ի՞նչ հողային պայմաններ կան, ժողովրդի տնտեսական դրութիւնը, նրա գրականութիւնը, գրագէտ լինելը, թէ ինչ դասակարգեր կան, ինչ յարաբերութիւնների մէջ են գտնուում, ինչպէս են վերաբերւում յեղափոխ. գործին, ո՞ր դասակարգն է համակրում եւ ինչո՞ւ է համակրում եւ այսպիսի անթիւ ու անհամար հարցեր, որոնք մեզ համար դեռ կնճռոտ են եւ անվերլուծելի: Վերջացնելով զեկուցումը, պ. հեղինակը ամփոփեց իւր միտքը այսպէս՝ ուսումնասիրել երկիրը եւ նորա բնակիչների կեանքը իրական փաստերի վրայ հիմնուած, բոլոր ճիգը թափել այդ գործի վրայ, որպէսզի այդ սուրբ գործը ժամանակաւոր չլինի մեր մէջ, այլ մեզ համար էլ կեանքի այնպիսի հիմ դառնայ, ինչպիսին ցանկալի է: Բեֆերատը[8] կարդացուելուց յետոյ հարց ծագեց, թէ Դաշնակցութիւնը այդ ուղղութեամբ մինչեւ այժմս ինչ է արել. երկար վիճաբանութիւններից յետոյ մասնաժողովը եկաւ այն եզրակացութեան, որ մենք Դաշնակցութեան գործունէութեան[էութեան] վերաբերեալ տեղեկութիւններ չունենք, բայց գիտենք որ իրականութեան ուսումնասիրելը նորա հիմնաքարերից մէկն է: Հետեւապէս, թէպէտեւ անցեալի քննելը մեզ համար դաս է, բայց մենք անկարող ենք այդ ի կատարածել, ուստի քննւում է այժմս այն հարցը՝ թէ ինչ կարելի է անել, ինչպէս պէտք է ընթանալ այժմուայ պայմաններում, որ ապագայում չտուժենք. պարզ ասած ինչ ուղղութեամբ կը ցանկանայինք մենք այժմ գործել: Որոշուեց որ այդ հարցի վերաբերմամբ ուսանողական համաժողովը իրա նպատակն է դնում՝ նախ երկրի գիտնական եւ բազմակողմանի ուսումնասիրութիւնը եւ ապա աշխատել, որ երկրի վերաբերեալ եղած տեղեկութիւնները կրթուած հասարակութեան սեփականութիւն դառնան: Ուրիշ խօսքով պէտք է հասարակութեան տալ մի շարք գրուածքներ, տեղեկութիւններ, որոնք յեղափոխական գործը ամէն մի հայի համար խորին համոզմունք դարձնեն: Այժմս ամբողջ հասարակութիւնը, նոյնիսկ գործիչներից շատերը մի տեսակ անորոշ դրութեան մէջ են գտնուում, վարանում են, կարծես բոլորի միտքը թմրած է. այդ անել դրութիւնից ազատողը միմիայն իրականութեան իսկական պատկերտուողը կը լինի, որը հայերի միտքը կ՚ուղղի էլի մի ճանապարհի վրայ: Երբ ներկայացուցիչների տրամադրութիւնը հակւում էր դէպի իրականութեան հետ մօտից ծանօթանալու կողմը, բնականապէս եւ պէտք է ծագէր այսպիսի մի հարց,— կա՞յ արդեօք հնարաւորութիւն Տաճկահայաստանն ուսումնասիրել այնպէս, ինչպէս առաջարկւում է: Ի հարկէ հէնց սկզբից չարուեցաւ մի կարգ խոչընդոտներ, որոնք թոյլ չեն տուել եւ թոյլ չեն տալիս երկիրն այդպէս քննելու. դա համարւում է անհնարին մի բան: Խօսք չկայ, որ Տաճկաստանի ուսումնասիրելը անհամեմատ դժուար է եւ զոհեր է պահանջում, քան ուրիշ երկրների. բայց մենք բուն յեղափոխական գործի համար երբեք դժուարութիւնների, ծախսի, զոհերի առաջ կանգ չենք առել, ուրեմն այս դէպքում եւս չպէտք է վախենանք: Թէ յիրաւի այդ ուղղութեամբ գործելը անհրաժեշտ է, երեւում է նաեւ Ընդհանուր ժողովի[161] տրամադրութիւնից, որ վճռել է տեղեկագրեր հրատարակել, ժողովածուներ կազմել եւ այլն:

158.- Հիւսիսակերտ՝ կուս. ծածկանուն Պետերբուրգ քաղաքի:
159.- Եկեղեցի՝ կուս. ծածկանուն Մոսկուա քաղաքի:
160.- Խարթուփ՝ կուս. ծածկանուն Խարկով քաղաքի:

161.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովի մասին, գումարուած Թիֆլիս 1898 թ.ին:
162.- Ռուսերէն՝ «Հայերու կացութիւնը Թուրքիոյ մէջ»:
163.- «Աւետիս ման գալ» – ընդհանրապէս Ս. Ծննդեան տօնին, երիտասարդները տուները շրջելով աւետիս կու տային, այդ առիթով նաեւ դրամ հաւաքելով բարենպատակ գործի մը համար:

II.

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցու ժողովը: *Այս տարի Եկեղեցու ժողովը բաղկացած էր մօտաւորապէս 130 անդամներից, որոնց թըւում բացի լոկ ուսանողներից, մտնում էին նաեւ ոչ ուսանողներ մի որոշ ուսումնական ցենզով: Բացի ուսանողներից միւս բոլոր անդամները ընտրւում են քուէարկութեամբ եւ միեւնոյն ժամանակ պահանջւում է կրթական մի որոշ ցենզ, հակառակ դէպքում անդամ ընտրուիլը շատ դժուարանում է: Այդ ժողովը գործերը վարելու համար տարուայ սկիզբին՝ սեպտեմբեր ամսին ընտրում է մի կոմիտէ 5 հոգուց բաղկացած մի տարի ժամանակով, որը ի յիշատակ Սասունի կոտորածներին կոչւում է* Սասունեան *կոմիտէ: Կոմիտէի անդամ լինելու համար պէտք է ստանալ ձայների 2/3-ը: Կոմիտէն իւր գործունէութեան համար մի որոշ կանոնադրութիւն չունի, այլ ղեկավարւում է իւր աւանդներով, որոնք խիստ կերպով պահպանում է կոմիտէն: Վերջինիս գործունէութիւնը մինչեւ այժմ կայացել է նրանում, որ նախ եւ առաջ պարբերաբար փող է ժողովելիս եղել, ուղարկել է հարկաւոր եղած տեղերը Բիւրոյի միջոցով զէնք եւ այլն, եւ որոշ չափով աշխատել է առաջ տանել պրոպագանդայի գործը տեղական վաճառականական դասակարգի մէջ: Բացի վերոյիշեալից կոմիտէն գործել է եւ ուսանողական շրջանում, թէեւ սահմանափակ կերպով: Նա տարածել է յեղափոխական գործին վերաբերեալ լրագրներ, բրոշիւրներ, արձանագրութիւններ: Այդ նպատակով նաեւ Վարդանանց տօնին առաւօտեանը կազմում է գրականական երեկոյթ, որին լինում է եւ տեղական հասարակութիւնը: Գրակ[ան] երեկոյթի նիւթերը գլխաւորապէս վերաբերւում են Տաճկահայաստ[անի] կեանքին:*

Ծանօթացրել է մասամբ եւ օտար հասարակութիւնը Տաճկահայաստանի կեանքի հետ: Առաջին անգամ նոքա են տալել իրենց հաշուով: «Պոլոժենիէ արմեան վը Տուրցիի»[162] գիրք, իսկ երկրորդ անգամ արդէն X-ը: Նիւթականը ձեռք բերելու համար կոմիտէն ունի հետեւեալ աղբիւրները. ամէն տարի Վարդանանց տօնին նա տալիս է երեկոյթ, Սասունեան անունով, որից մասնաւորապէս արդիւնք մնում է 1200 ռուբլի. բացի դրանից՝ ընկերութեան օգտին ման են գալիս «Աւետիս»[163]: Երկրորդական աղբիւրներն են նախ՝ անդամակցական վճարները (որը կամաւոր է) եւ նուիրատուութիւններ հին անդամներից: Միջին թուով ամբողջ տարուայ մուտքը կարելի է հասցնել 2000-3000 ռ[ուբլի]:

Որովհետեւ կոմիտէն ընտրում է ուսանողական ընդհանուր ժողովը, պարզ է, որ նոցա մէջ պէտք է լինեն մի որոշ յարաբերութիւններ: Կոմիտէի պարտաւորութիւնն է միմիայն իւրաքանչիւր տարուայ վերջին

հաշիւ ներկայացնել ընդհանուր ուսանողական ժողովին, այն էլ կարող է ոչ մանրամասն, եթէ գտնում է, որ մի որոշ հարցեր պէտք է գաղտնապահութեան տակ մնան։ Իսկ առհասարակ իւր բոլոր գործերը վարում է բոլորովին ինքնուրոյն։ Կոմիտէի անդամները որովհետեւ ընտրւում են ժողովում, ուստի եւ նոքա ենթարկըւում են ժողովի դատին, եթէ նոցա կասկածում են զեղծումների մէջ։ Կոմիտէն ազատ իրաւունք ունի մտցնել ժողովի զբաղման հարցերի մէջ այն, ինչ որ իւր տեսակէտից անհրաժեշտ է։ Կոմիտէն ունի եւ անցեալ։ Նա հիմնուել է 1894 թ. աշնանը, իսկ մինչեւ այդ ժամանակը եղել է անհատական գործունէութիւն ուսանողների մէջ տեղ[ական] հասարակութեան հետ ի միասին։ Երկու տարի շատ մեծ եռանդով գործել է. բայց յետոյ կոմիտէի կեանքում ներքին խառնաշփոթութիւններ են ծագել, որոնք նրա գործունէութիւնը դադարեցրել են համարեա թէ մի տարուց աւելի ժամանակով։ Այդ խառնաշփոթութիւններն առաջացել են նրանից, որ կասկած են յարուցել կոմիտէի անդամների ազնիւ գործունէութեան դէմ։ Կազմուել է դատ այդ գործը քննելու համար, որը տեւել է մի տարի եւ վերականգնել է կոմիտէի անդամների անարատ վարկը եւ անունը։ Զբաղուած լինելով այդ հարցով, կոմիտէն այդ տարին տուել է միայն մի երեկոյթ, որից զուտ արդիւնք ստացել է 400 ր.։

Բացի այդ կոմիտէից, որ ուսանողական է համարւում, կայ եւ մի ուրիշ շրջան նոյն նպատակով, վաճառականներից կազմուած։ Այդ շրջանի գործունէութիւնն առ այժմս շատ սահմանափակ է. միայն փող է հաւաքում։ Ուսանող. կոմիտէն արդէն քայլեր է արել այդ շրջանի հետ հաստատ կապեր կապելու, չխանգարելով ամենուին նրա գոյութիւնը։

Խարթուփի ժողովը։ Խարթուփի ժողովը բուն ուսանողական է, բացի ուսանողներից առ այժմս ոչ ոք չի մասնակցում. անդամների թիւը հասնում է 14, որոնք կազմում են ընդհանուր ժողով։ Բոլոր հարցերը քննըւում են ընդհան. ժողովում եւ վճիռ կայացւում։ Ժողովը գումարւում է ըստ պահանջման։ Բացի ընդ. ժողովից կայ եւ վարչութիւն, որը բաղկացած է 5 հոգուց մի տարի ժամանակով։ Վարչութիւնը վարում է բոլոր գըրաւոր գործերը ուրիշ ընկերութիւնների հետ, ի կատար ածում ընդ. ժողովի իւր վրայ դրուած յանձնարարութիւններն եւ անսպասելի դէպքերում նոյնիսկ կարող է վճռել որոշ հարցեր, եթէ ընդհանուր ժողովը չուտ չի գումարւում։ Նա հիմնուել է 1897 թուի վերջերին բոլորովին անկախ ուսանողական ընդհ. ժողովից։ Մի տարուայ ընթացքում ժողովի գործունէութիւնը կայացել է նրանում, որ փող է հաւաքել, միանուագ ժողովարարութիւն[164] բաց անելով հասարակութեան մէջ, 400 ր. քանակութեամբ, նոյն նպատակով «խորհուրդ մեծ» է ման եկել Մնդեան օրը, կազմել է իրա համար մի որոշ կանոնադրութիւն եւ ծրագիր։ Բացի այդ վարչական գործօններից կայ եւ նախապատրաստական ժողովներ, որտեղ նախ եւ առաջ մտնում են նորեկ անդամները, գործին հետ մօտկից ծանօթանալու համար, ուսումնասիրելով տաճկահ[այերի] եւ կովկասեան հայերի կեանքը, եւ ապա համարւում են ընդհանուր ժողովի իսկական անդամ, ենթարկուելով քուէարկութեան։ Խարթուփի ժողովի նիւթական աղբիւրներն են նախ անդամների ամսական վճարները (որը պարտաւորեցուցիչ է իւրաքանչիւր անդամի համար, իսկ քանակը կամաւոր), երկրորդ՝ ուսանող. ընդհ. ժողովի անդամների ամսական վճարները (որը կամաւոր է), երրորդ՝ միանուագ ժողովարարութիւններ, որ տարին առնուազն մի անգամ անում են ուսանողները մեծ տօներին, տեղական հասարակութեան ամսական վճարները, որը նոյնպէս կամաւոր է, եւ վերջապէս ուսան. ընդհ. ընկերութեան դրամագլխից ստացած շահը ամբողջապէս։ Բացի սրանցից ընկերութիւնը ստանում է եւ մի համեստ գումար այն գանձանակներից, որոնք գտնւում են մի քանի ուսանողների մօտ։ Այդ գանձանակների մէջ փող են գցում նոքա, որոնք հիւր են գալիս եւ կամ գործով այն ուսանողի մօտ, որտեղ գտնւում է գանձանակ։ Այդ տեսակ գանձանակներից անցեալ տարուայ ընթացքում երկու ամսուայ մէջ հաւաքուեց 15 ր.։ Յեղափ. կոմիտէն սերտ կապերով կապուած է տեղական հայ ժողովրդի բոլոր խաւերի հետ։ Մինչեւ կոմիտէի հիմնուելը ամբողջ ուսանողութիւնը մասնակցելիս է եղել Դաշնակց. գործում, հաշիւներ է ստացել, զանազան տեղեկութիւններ գործին վերաբերեալ, ուղարկել է մի քանի անգամ խոշոր գումարներ եւ այլն, եւայլն։

Հիւսիսակերտի ժողովը։— Մինչեւ 1896 թ. յեղափ. գործը եղել է այստեղ անհատների ձեռքին, երբ գործով հետաքրքրուողները հաւաքուել են ի միասին եւ կազմել մի կոմիտէ 6 հոգուց բաղկացած, որոնցից 4-ը ուսանողներից պէտք է լինէին, իսկ 2-ը տեղական հասարակութիւնից, բայց իրօք տեղացի, որոնցից մինը եղել է մի ներկայացուցիչ։ Այդպէս շարունակուել է մի տարի, իսկ 97/98-ից սկսած յեղափոխ. գործը եղել է միմիայն ուսանողների ձեռքին, թէեւ անդամ կարող են լինել եւ ոչ ուսանողներ։ 1898 թ. կազմուել է կանոնադրութիւն ընկերութեան համար, որի հիմնաքարն է՝ գործել բոլորովին բաժան ուսանողական ժողովից, բաժանուելով խմբակների։ Այժմ հաշւում է 7 խմբակ, որոնք ընտրում են մի կոմիտէ 5 հոգուց բաղկացած, 2 անձնափոխանորդներով եւ մի տարի ժամանակով. պէտք է նկատել, որ մի տարի անցնելուց յետոյ ընտրողական քուէարկութեան ենթարկւում է կոմիտէի մի մասը, երկուսը մնում են, իսկ 3-ը դուրս գալիս, ունենալով հանդերձ

164.- Հանգանակութիւն, նուիրահաւաք։

վերընտրուելու իրաւունքը։ Կոմիտէն գործում է խմբակներից բոլորովին անկախ, կարեւոր հարցերում միայն դիմում է խմբակների խորհրդին (հարցի կարեւորութիւնը վճռում է նոյնպէս կոմիտէն)։ Խմբակների ու կոմիտէի միջի յարաբերութիւնները (հաշուետուութիւն, զեկուցումներ, առաջարկութիւններ) պահպանում են խմբական ներկայացուցիչների միջոցով։ Միայն ընդհանուր ներկայացուցիչ ընտրելու հարցում դեր են խաղում ու ձայն ունեն խմբակների ներկայացուցիչները կոմիտէի հետ ի միասին։ Կոմիտէի գործունէութիւնը եղել է — ներկայացումներ տալ, ժողովարարութիւն անել «Աւետիս» ման գալով, մթերքներ ուղարկել, պրոպագանդա տեղական հասարակութեան մէջ եւ տպագրել յօգուտ ընկերութեան թէ տենդենցիոզ[165] եւ թէ ուրիշ բովանդակութեամբ։ Անցեալ տարի տպել են «Խ. Ա.», «Զ.» եւ «Ա. Խ.» (հեղինակի հաշուով)։ Ժողովի մուտքն է միջին թուով 1000 ր., անցեալ տարի ունեցել են մուտք 1500 ր.։ Աղբիւրներն են՝ ժողովարարութիւն «Աւետիս» գնալով, ներկայացում հայոց լեզուով, ամսական անդամակցական վճարներ եւ գրքերի հրատարակութիւն յօգուտ ընկերութեան։ Ամսական վճարն է առնուազն 25 կ[ոպէկ]։ Անդամների թիւը մօտ 50 հոգի է։

III
ՀԱՑ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեր հայկական կեանքում զարգացած դասակարգի միջակը եւ նորա գլխաւոր տարրը, որ ղեկավարում է հասկացող դասակարգին զանազան հասարակական հարցերում, կազմում են մեծ մասամբ համալսարանականները։ Նոքա հասարակական գործին զարկ են տալիս ոչ միայն իրենց լոկ աշխարհահայեցողութեամբ, այլ եւ նրանով, որ նոքա ժողովրդի զանազան խաւերի առաջ մեծ համակրանք ունեն, հանդիսանում են կապող օղակներ եւ այդ զանազան շերտերում։ Շփւում են նոքա նաեւ օտար հասարակութեան հետ, որի աչքում եւս վարկ ունեն եւ կարող են պաշտպանել մեր կեանքի շահերը։ Այդպիսի մի մեծ դեր, որ կարող է խաղալ համալսարանականը, չի կարող անուշադիր մնալ յեղափոխական գործին նախանձախնդիր ատեաններից։ Չէ՞ որ համալսարանականի կեանքում բռնած դիրքը կախումն ունի նրանից, թէ նա ուսանող ժամանակը ի՞նչ հոգով է պատրաստուել կեանքը մտնելու։ Ուրեմն հէնց առաջին քայլից ուսանողութեան առաջ դրւում է մի խոշոր հարց. ծանօթանալ մօտից յեղափոխական գործին հետ, ըմբռնել նրա նշանակութիւնն եւ քարոզել ուսանող. շրջաններում յարելու այդ գործին։ Կարճ ասած, ուսանողութիւնը Դաշնակցութեան գործունէութեանը մեծ զարկ տուած կը լինի, եթէ աշխատի պատրաստել ապագայի համար իւր շրջանի հասուն գործիչներ։ Այդ նպատակին հասնելու համար ուսանող. իւր խնդիրներից ամենագլխաւորն է համարում, որ ամէն մի անհատ իւր համար կազմի մի ընդհանուր աշխարհայեցողութիւն հանրամարդկային հասարակական ու քաղաքական հարցերի վերաբերմամբ. առանց այդ հարցերի հասկացողութեան զուր է դիմել ազգային գործերին եւ աշխատել ներգործական դեր խաղալու։ Ուսանողական համագումարը մեր գործի յաջողութեան ամենակարեւոր պայմաններից համարում է այն կէտը, որ յեղափոխական գործի գլուխ անցած մարդիկ պէտք է ունենան այդ աշխարհայեցողութիւնը եւ դա ընդունում է conditio sine qua non[166]։ *Այդ գործը ուսանող[ական] կոմիտէները թողնում են անհատականների հայեցողութեանը, իրա վրայ չի վերցնում, իբրեւ իւր հիմնական խնդիրներից մէկը, բայց անուղղակի կերպով պարտք է համարում նպաստելու այդ գաղափարի իրագործմանը։ Բայց մեր գլխաւոր ցաւը դրանում չէ, որ ուսանող. ծանօթ չէ հանրամարդկային, հասարակական կեանքի հետ, այլ նրանում, որ նա ծանօթ չէ մեր ազգային հասարակական ու քաղաքական կեանքի հետ (ի հարկէ գլխաւորապէս Տաճկահայաստանի)։ Այստեղ ծագում է երկու հարց.*

1) Ի՞նչ միջոցներով, ի՞նչ աղբիւրների հիման վրայ ծանօթանալ Տաճկահայաստանի հասարակական ու քաղաքական կեանքի հետ,

2) Եթէ միջոցներն իմանում ենք, ինչպէս անենք, որ ուսանողութիւնը անտարբեր չմնայ իւր ազգայնական հարցերին, որ բոլոր եղածը դարձնենք ուսանողութեան սեփականութիւն։ Ինչ վերաբերում է Կովկասի հայերի կեանքին, դրա հետ ծանօթանալու միջոցներ, իմանում ենք եւ մասամբ էլ արդէն ծանօթ ենք այդ կեանքի հետ։ Երբ հարցը գալիս է Տաճկահայաստանի կեանքին, այստեղ մենք կաչկանդուած ենք եւ անձնատուր լինում ոչ թէ նրա համար, որ մենք չգիտենք, այլ որովհետեւ չկան միջոցներ, երկիրը մթութեան մէջ է մնացած, բազմակողմանի ուսումնասիրուած չէ, որի մասին արդէն խօսուած է, երբ ցանկութիւն էինք յայտնում, որ իրականութեան ուսումնասիրութիւնը Դաշնակցութեան գլխաւոր խնդիրներից մէկը լինի։ Գոնեա, մասամբ հասնելու համար այդ նպատակին առ այժմ դիմում ենք հետեւեալ միջոցներին.

1) Պարտաւորեցնել կոմիտէներին, որ Տաճկահայաստանի իրականութեան վերաբերեալ գրականութեան մէջ գտնուած նիւթերը կարգի բերուի, մի որոշ սիստեմի տակ դնեն, գրքերի ցուցակներ կազմել, հում նիւթ մշակել։

165.- Դիտումնաւոր, գաղափարական որոշ ուղղուածութեամբ։
166.- Լատիներէն՝ պայման, առանց որուն կարելի չէ համաձայնութեան գոյացնել։

2) Պէտք է կազմել բլանկներ[167] որոշ հարցերով, որոնց բաւարարութիւն տալը կը նպաստէ գրականութեանը ուսումնասիրութեանը. այդ բլանկները պէտք է ներկայացնել Դաշնակցութեանը։

3) Ցանկալի էր ունենալ կ. Պոլսի պատրիարքարանի, Վենետկի, Ժընեւի դիւանատների ուսումնասիրութիւնը մեր գործին՝ երկրին եւ յեղափոխական գործին նոր ծանօթանալու համար։

4) Պատրաստականութիւն ունեցող անձնաւորութիւններին տալ միջոց գնալու երկիրը ուսումնասիրել անձամբ։ Եթէ այդպիսիներ իրանք չյայտնեն յօժարութիւն, աշխատել գտնել այդպիսի մարդ մեր շրջանից եւ պարտաւորեցնել, եթէ հնարաւոր է։ Հարկ չկայ ասելու, որ այդ գործին աջակցում է արդէն Դաշնակցութեան կազմակերպութիւնը, ուղարկելով կոմիտէներին տեղեկութիւններ, որոնք ինքը ստանում է, թէպէտ եւ շատ սակաւ։

Վերեւ յիշուած միջոցները վերաբերւում են երկրի ուսումնասիրութեան գործին։ Ուսանողական կոմիտէների բեղմնաւոր շրջանը այդ հարցում չէ. նոքա պէտք է աշխատեն մի որոշ սերունդ պատրաստելու, որը խմորուած լինի յեղափոխական ոգով։ Այդ նպատակին հասած կը լինենք, եթէ աշխատենք իրականութեան վերաբերեալ նիւթերը սեփականացնել, մարսել։ Այս գործում ուսանող. համաժողովը ընդհանուր միջոցներից համարում է,— համերաշխ ու միացած գործունէութիւն մրցման եւ կոնտրոլի սկզբունքների վրայ հիմնուած։ Նա ընդունում է, որ գործը առաջ կը գնայ այն ժամանակ, երբ մեր մէջ փոխադարձ չփումն լինի, երբ մենք մանրամասն հաշիւ կը տանք միմեանց մեր գործունէութեան մասին։ Ուստի որոշուեց — տալ մանրամասն հաշիւ տեղական գործունէութեան, կազմել պարբերական համագումարներ, բաց թողնել թռուցիկ թերթեր, բեֆերատներ գրել ու կարդալ զանազան ինքնակրթական շրջաններում, հիմնել այդպիսի շրջաններ, մի խօսքով գործել գրչով։ Այս բոլոր միջոցները վերաբերում են հասուն եւ պատրաստի գործիչներ դաստիարակելուն։ Ուսանողական կոմիտէները, այդպէս գործելով, կողմնակի կերպով են նպաստում յեղափոխական գործին։ Դրանով միայն չի սահմանափակւում նոցա գործունէութիւնը, կարող են եւ աւելի ներգործական դեր խաղալ Դաշնակցութեան գործում։ Որտեղ մենք ենք ապրում, այնտեղ կայ հայկական հասարակութիւն, որը պատրաստի հող է ներկայացնում պրոպագանդա անելու թէ խօսքով եւ թէ գրչով։ Իւրաքանչիւր տեղական կոմիտէ միջոցներ է ձեռնարկում իրեն շրջապատող պայմանների համաձայն. մէկը գրական երեկոյթներ է տալիս, նիւթ վերցնելով Տաճկահայաստանի կեանքից, միւսը ներկայացումներ հայերէն լեզուով եւ նոյն հոգով, ուրիշները գործը առաջ են տանում, կենդանի խօսակցութիւն ունենալով տեղական հայերի ներկայացուցիչ, աչքի ընկնող անձնաւորութիւնների հետ եւ այլն։ Մանրամասն խօսել միջոցների մասին զուրկ է հետաքրքրութիւնից եւ գործնական նշանակութիւնից. այստեղ աւելի կարեւոր է ընդհանուր գաղափարը. ամէն մի կոմիտէի առանձին ուշադրութիւնն է հրաւիրւում չփուել տեղական հասարակութեան զանազան խաւերի հետ եւ աշխատել գրաւել նոցա ուշքն ու միտքը այդ գործին։ Բացի մեզ շրջապատող հայ հասարակութիւնից, մենք մի որոշ դեր կարող ենք խաղալ եւ միւս հայերի մէջ. այն է տպագրել բրոշիւրներ զանազան բովանդակութեամբ ու տարածել հայերի մէջ, ինչպէս մինչեւ այժմ անելիս ենք եղել։ Նիւթեր պէտք է պատրաստի վերցնել օտար գրականութիւնից ու թարգմանել, նաեւ ինքնուրոյն գրուածքներ հրատարակել։ Դրա համար իւրաքանչիւր կոմիտէ պարտաւոր է տարին առնուազն մի բրոշիւր տպել։ Եթէ ուսանողութիւնը իրա մէջ ոյժ չի զգում եւ կամ այնպիսի պարագաների մէջ է գտնւում, որ այդ պարտականութիւնը չի կարող իրագործել, նա պէտք է դիմի ուրիշի օգնութեան բրոշիւր ձեռք բերելու համար եւ պէտք է փող տայ տպելու եւ տարածի ժողովրդի մէջ։ Այն դէպքում, երբ կոմիտէն բրոշիւրի մի որեւէ աշխատանք ձեռք բերելու համար դիմում է ուրիշին եւ ոչ իրա անդամներին, նա պէտք է ներկայացնի «Կեդրոնական Կոմիտէին» այն յարգելի պատճառները, որոնք ստիպեցին ուրիշին դիմել։ Եղաւ առաջարկութիւն որ ամէն մի մասնաժողով իւր վրայ առնի մի որեւէ ճիւղ, որ մէկը պատմական գրուածքներ տայ, միւսը գիտական եւ այլն։ Համաժողովը այդ առաջարկն չընդունեց, քանի որ զանազան կոմիտէներում զանազան ոյժեր եւ ընդունակութիւններ կարող են լինել, զանազան քաղաքներում այլեւայլ տեսակ գրքեր, որը կարող է եւ պատահական լինել. այսինքն չի կարելի որոշել թէ պատմական ամենալաւ աղբիւրներն մեր քաղաքումն են գտնւում եւ ոչ այն։ Հարց բարձրացաւ նաեւ համաուսանողական ժողովածուի մասին. այդ գլուխ բերելու համար մեծ ոյժ պէտք է, նամանաւանդ որ Ժընեւում «խմբագրութիւնը» ձեռնարկել է ժողովածուի հրատարակութեանը եւ մեզ խնդրում է մասնակցելու. հետեւապէս եթէ ոյժեր կան ժողովածուի համար, թող նոքա աշխատեն Ժընեւի համար առ այժմ, ոյժերը չվատելու համար, իսկ համաուսանող. ժողովածուի հարցը թողնել ապագային։ Հայ ուսանողութեան դրութիւնը ստեղծում է նոյնպէս մի ուրիշ նպաստաւոր պայման. գտնուելով օտար հասարակութեան մէջ, մասնաւորապէս ռուսաց, նա կարող է հայկական հարցը արծարծել եւ նոցա մէջ, ցանկալի լուսաբանութիւն տալով։ Առաջարկւում է ուսանողներին մասնակցել մամուլում գլխաւորապէս թարգմանելով հայոց լրագրներից զանազան յօդուածներ ու տեղեկութիւններ։ Ցանկալի է նոյնպէս երեկոյթներ կազմել օտար ու-

167.- Հարցաթերթիկներ։

սանողների եւ ոչ ուսանողների համար հայկական կեանքի հետ ծանօթացնելու համար. հրատարակել գրքեր ռուսաց լեզուով, որպիսին տպագրել են «Պոլոժենիէ արմեան վը Տուրցիի»[162] եւ այլն։ Աւելորդ չէ յիշել եւ այն դերի մասին, որ հայ ուսանողութիւնը կարող է խաղալ կովկասում նոյն գործի համար. գործելու եղանակը այն է, ինչ որ վերեւում արդէն ծրագրուած է բայց խօսել դրա մասին մեր շրջանակներից դուրս է. թողնւում է ուսանողներին ամառը հաւաքուել ի միասին ու մտածել միջոցների մասին։ Ամենազգալի ու գործնական օգուտը, որ բերում է ուսանողութիւնն յեղափոխական գործին, դա փող հաւաքելն է։ Այդ բանում ուսանող[ութիւնը] միշտ արթուն է եղել եւ նա ձեռնարկել է զանազան միջոցների — արել է ժողովարարութիւն[164], տուել է զանազան տեղերում երեկոյթներ, նշանակել է որոշ անդամավճարներ, դիմել է վիճակախաղի ու գանձանակի եւ այլն։ Աւելի ցանկալի է, որ ուշք դարձուի գրքեր հրատարակելու վրայ յօգուտ յեղափոխական գործի։ Վերջինս աւելի հեշտ իրագործելու համար պէտք է ուշք դարձնել եւ ագենտուրներ[168] ունենալ զանազան քաղաքներում։

Որովհետեւ մեր շօշափած հարցերը հետաքրքրում են եւ արտասահմանի ուսանողներին, որոնք եւս ձայն են բարձրացրել ընդհանուր դաշնակցական ժողովի մի քանի հարցերի մասին եւ ուզում են գործել այդ ասպարէզում՝ ուստի նոցա հետ միանալու համար յեղափոխ. գործունէութեան մէջ մենք որոշեցինք ուղարկել նոցա մեր համաժողովի արձանագրութիւնն եւ իմանալ նոցա կարծիքը չօշափած հարցերի մասին։

IV
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ, ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առ հասարակ որոշուած է որ մեր կազմակերպական յարաբերութիւնները չպէտք է հակասեն Դաշնակցութեան սկզբունքներին. դրանով չի բացաւում, որ տեղական պայմանները պէտք է արհամարհել։ Դաշնակցութեան ծրագրում գծած կէտերից III-րդը ուսանողական համագումարը հարկ համարեց աւելի պարզաբանել, թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար։ Իւրաքանչիւր կոմիտէ իւր փողը պահում է իրա գանձարանում, ամսէ ամիս հաշիւ ուղարկելով կեդրոնական կոմիտէին իւր ելեւմուտքի մասին. որովհետեւ ուսանողական գանձարանը փող մտնում է որոշ ժամանակներում, կարելի է իմաց տալ Կեդր. Կոմ.ին այն ժամանակ միայն, երբ մեծ գումար է մտնում եւ կամ ծախսուած։ Այս անհրաժեշտ է անել, որպէսզի Կեդր. Կոմ. ամէն րոպէ իմանայ, թէ իւր շրջանի կոմիտէներում որքան դրամ կայ։ Բացի այդ, Կեդր. Կոմ. իրաւունք ունի պահանջել, իւր շրջանի կոմիտէներից մնացած փողը ուղարկել ամէն անգամ, երբ այդ պահանջը լինում է Բիւրոյի կողմից։ Այդ բոլոր ֆունկցիաներին, որոնք նախագծուած են Դաշնակցութեան ծրագրում, ուսանողական համաժողովը աւելացրեց հետեւեալ կէտերը.

1) Կեդրոնական Կոմիտէն է նշանակում համաժողովը։ Պէտք է նկատել, որ համաժողով գումարելու հարցը վերջնականապէս կախուած է Կեդր. Կոմ.ից, բայց նա նախապէս խորհուրդ է հարցնում միւս կոմիտէներին թէ որտե՞ղ նշանակել եւ ե՞րբ։ Նախ քան ժողով նշանակելը Կեդր. Կոմիտէն կազմում է քննուելիք հարցերի ցուցակը, որը յայտնում է տեղական մասնաժողովներին ոչ ուշ քան մի ամիս մինչեւ համաժողովի օրը։ Հարցերը համաժողովի համար առաջարկում են եւ տեղական կոմիտէները։

2) Ստանում է իւր կոմիտէներից մանրամասն հաշուետուութիւն երեք ամիսը մի անգամ ամբողջ գործ[ունէութեան] վերաբերեալ եւ ապա ուղարկում միւսներին.

3) Պարտաւոր է գործին վերաբերեալ ստացած բոլոր տեղեկութիւնները անյապաղ յայտնել տեղական կոմիտէներին։

4) Պահում է իւր մօտ դիւանի վերաբերեալ դոկումենտները — դիւանատուն.

5) Այն դէպքում երբ Բիւրոն մի որեւէ կարեւոր հարցի համար դիմում է Կեդր. Կոմիտէին, վերջինս պարտաւոր է հարցնել տեղական կոմիտէների կարծիքը այդ հարցի վերաբերմամբ. ինչ կը պատկանի Կեդրոնական Կոմ. կազմակերպութեանը, վճռուեց այդ մասին խօսել միւս համագումարին՝ Կեդրոնական կոմիտէ ընտրելիս, իսկ այժմ մի տարուայ ժամանակով Կեդր. Կոմ. համարել մի տեղական կոմիտէ։ Գալով Կեդր. Կոմ. ընտրութեան, համաժողովը միաձայն կանգնեց Եկեղեցու[159] յաւակնութեան վրայ։ Հակառակ դէպքում, եթէ Եկեղեցին զանազան պատճառներով չկարողանայ իւր վրայ վերցնել այդ պարտականութիւնը, Կեդր. Կոմիտէ հաշուում է Հիւսիսակերտը[158]։ Թէ ինչո՞ւ գերադասութիւն տրուեցաւ Եկեղեցուն, դա հասկանալի կը լինի, եթէ ասենք որ Եկեղեցին աշխարհագրական տեսակէտից աւելի նպաստաւոր դիրք ունի. գտնւում է Հիւսիսակերտի ու Խարբուփի[160] մէջտեղը, աւելի հաղորդակցութիւն ունի Բիւրոյի հետ, որովհետեւ միշտ գնում, գալիս են Եկեղեցի Կովկասից, այնպէս որ Եկեղեցին շատ հեշտութեամբ կարող է տեղեկութիւններ ստանալ եւ հաղորդել միւսներին։ Նրա տեղական պայմանները աւելի ձեռնտու են, ունի մեծ գաղութ, մեծ ասպարէզ գործունէութեան համար, աւելի ամուր հիմք կայ գործը շարունակելու համար։ Նրա անցեալը եւս մի գրաւական է, որ գործը աւելի մշտնջենաւոր կը լինի եւ նա դիւրու-

168.- Գործակալներ։

թեամբ առաջ կը տանի այդ գործը։ Այդ վճիռն եւս առաւել ոյժ կը ստանայ, եթէ աչքի առաջ ունենանք, որ ընդհանուր Դաշնակցական ժողովն էլ այդպէս է վճռել։ Ինչ վերաբերում է Եկեղեցուն, իբրեւ մտաւոր կեդրոնի, որը կողմնակի կերպով նշանակութիւն ունի գործի համար, այդ հարցում եւս դժուար թէ նա յետ [է] մի ուրիշ քաղաքից։

V
ԴԵՐԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Վերեւ ասածներից դուրս է գալիս, որ ուսանողական համաժողովը ուզում է գլուխ բերել նախ՝ բլանկների կազմելը, 2) ընդհանուր գրականութեան մէջ գտնուած նիւթերը հաւաքել ու կարգի դնել, 3) ուսումնասիրել Կ. Պոլսի, Ժընեւի դիւանատները եւ 4) հետազօտել երկիրը (Տաճկ[ահայաստան])։ Առաջին գործը, այսինքն՝ բլանկներ կազմելը մանրամասն հարցերով Տաճկահայաստանի իրականութեան հետ մօտկից ծանօթանալու համար, յանձնուեց Հիւսիսակերտի կոմիտէին. նա նախօրօք պէտք է կազմի բլանկներ եւ ուղարկի միւս մասնաժողովներին, որոնք կարող են լրացնել եւ նոյնիսկ կրճատել եղած հարցերը եւ իւր ամփոփ կարծիքը յայտնել Կեդրոնական Կոմիտէին, որը եւ վերջնականապէս կազմում է բլանկները։ Ցանկալի է, որ Հիւսիսակերտը իւր բլանկները ցրէ մի յառաջաբանով հանդերձ։ Երկրորդ պարտականութիւնը վերցրեց իւր վրայ Խարթուփի կոմիտէն եւ այդ հարցը մշակւում է նոյն կերպ, ինչպէս եւ բլանկներ։ Կ. Պոլսի ու Ժընեւի դիւանների ուսումնասիրելը՝ նիւթեր հաւաքելը յանձնուեց Կեդր. Կոմիտէին, որ նա մինչեւ ամառը աշխատի ի կատար ածել այդ, մարդիկ գտնել եւ ուղարկել։ Նոյնպէս Կեդր. Կոմիտէն պէտք է մտածի եւ Տաճկահայաստանը ուսումնասիրելու մասին, գտնի մարդիկ եւ ուղարկի Երկիր Դաշն[ակցութեան] օգնութեամբ։ Վերջին երկու հարցերը տաք վիճաբանութիւնների տեղիք տուեց։ Ցայտնուեց այն կարծիքը, որ այդ դերը մենք ուսանողներս մեզ վրայ պէտք է վերցնենք եւ ոչ թէ ուրիշներին որոնել։ Համաժողովը աչքի առաջ ունենալով այդ առաջարկութիւնը, ուզեցաւ աւելի պարզաբանել այդ կէտը։ Ընդունուեցաւ, որ մենք իրականութեան ուսումնասիրութեան բացակայութիւնը համարում ենք պատճառ այն անորոշ դրութեան, որի մէջ գտնւում է այժմ հասարակութեան լաւ մասը. եթէ մենք գտնուէինք այն տնտեսական պայմաններում, որոնց մէջ գտնւում են տաճկահայերը, կարիք չկար նոյնիսկ երկրի ուսումնասիրութեան դիմել, որովհետեւ մենք մեր թիկունքի վրայ կը զգայինք այդ տնտեսական անտանելի դրութիւնը եւ կը ձգտէինք բնականաբար ազատուելու այդ թից։ Բայց մենք տնտեսապէս համեմատաբար լաւ պայմաններում գտնուելով կարող ենք գործել յօգուտ յեղափոխութեան միայն այն ժամանակ, երբ ունենք հաստատուն եւ խոր համոզմունքներ գործին վերաբերեալ։ Առանց երկրի ուսումնասիրութեան համոզմունք կազմելը անհնարին բան է. ուստի եւ մենք ուզում ենք այդ հարցը ընդհանուրի աչքի առաջ դնել եւ չբաւականանալ միայն դրանով, այլ եւ ձեռնարկել այդ նպատակին հասնելու համար միջոցներ, մեզ վրայ չվերցնելով ամբողջ գործի ծանրութիւնը, որովհետեւ անկարող ենք։ Երբ հարցը այդպիսի ուղղութիւն ստացաւ, առաջարկութիւն եղաւ կազմել էկսպեդիցիաներ[169] բանիմաց եւ փորձուած մարդիկներից, որոնց թւում եւ լինեն ուսանողներ իբրեւ օժանդակիչ ոյժ, որպէսզի ուրիշները չկարծեն թէ մենք միայն խօսքով գործողներ ենք, այլ ցանկանում ենք եւ գործով ցոյց տալ, որ մեզ համար այդ ձեռնարկութիւնը շատ թանգ է։ Որովհետեւ այդ գործը յանձնուած է Կեդր. Կոմիտէին, դրա համար էլ թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար որոշեց իւր վճիռը ձեւակերպել աւելի պարզօրէն. գտնել բանիմաց մարդիկ եւ ուղարկել նոցա Տաճկ[ահայաստան] Դաշնակցութեան օգնութեամբ երկիրը ուսումնասիրելու համար, լինեն դոքա ուսանող թէ ոչ ուսանող. միայն թէ ընդունակ լինեն այդ դերը կատարելու. ցանկալի է, որ մենք ուսանողներս էլ անմիջական մասնակցութիւն ունենանք նիւթեր հաւաքելու գործում, եթէ այդպիսի գործ ձեռնարկած կը լինի, լինի դա նոցա հետ ի միասին թէ առանձնապէս. վերջինը կախուած է հանգամանքներից։ Թողնելով վերոյիշեալ 2 հարցերը Կեդր. Կոմ.ի հայեցողութեանը, նրա ուշադրութիւնը դարձրւում է նախ աշխատել իրագործելու երկրի ուսումնասիրութիւնն, ապա Կ. Պոլսի եւ Ժընեւի քննութիւնը։

VI
ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՏՈՒԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՁԱՅՆԻ ՄԱՍԻՆ

Թէ ինչո՞ւ Ընդհանուր ժողովը (դաշնակց.) ուսանողութեան տուել է մի խորհրդակցական ձայն եւ ոչ վճռական, եւ կամ ինչու մի ձայն, այլ ոչ մի քանի, նա այդ հարցում զեկավարուել է հետեւեալ դիտումներով։ Միւս դաշնակցական Ընդհանուր ժողովը մտադրութիւն կայ կայացնել ոչ Սարուստանում[170], որով վերջինիս մասնակցելը դժուարանում [է]։ Բացի այդ Ընդհանուր ժողովը ընդունում է, որ ձայների մեծամասնութիւնը պէտք է լինի տաճկաստանցիներից — ակտիւ գործողները, երկրի հետ լաւ ծանօթ անձնաւորութիւնները նոքա են. ուստի եւ Սարուստանի ձայները պէտք է

169.- Արշաւախումբեր (ուսումնասիրութեան նպատակով)։
170.- Կուս. ծածկանուն տրուած ընդհանրապէս Ռուսիոյ եւ մասնաւորապէս Կովկասի համար։

ինքնըստինքեան քչանան եւ հասնին մօտաւորապէս 5-6 ձայնի։ Տալով ուսանողութեանը մի ձայն, նամանաւանդ մի քանի ձայն, Ընդհանուր Ժողովը չեղուում է բոլորովին վերոյիշեալ ճանապարհից եւ չատացնում է ձայների թիւը։ Բայց որովհետեւ թէ արտասահմանի եւ թէ Սարուստանի ուսանողութիւնը կազմում է մի մտաւոր ոյժ, որից օգտուել ամենայն պատրաստականութեամբ կը ցանկանար ընդհանուր ժողովը, եւս առաւել այն հարցերում, որոնք վերացական բնաւորութիւն ունեն, նա վճռեց Սարուստանի ուսանողութեանը տալ մի խորհրդակցական ձայն։ Ընդհանուր ժողովը ցանկացել էր աւելի եւս տալ ուսանողութեան, որ նա ունենայ վճռական ձայն վերացական հարցերում, եթէ միայն այդ գործնական տեսակէտից անյարմարութիւններ չներկայացնէր. իւրաքանչիւր անգամ այն ժամանակ նախքան հարցը լուծելը պէտք էր առաջուց վճռել, թէ որ հարցն է վերացական եւ որը գործնական։ Այդ տեսակ գործունէութիւնը լոկ միայն կ'երկարացնէր հարցերի վճռելը եւ խոչընդոտ կը դառնար նոցա չուտափոյթ լուծման։ Ուստի եւ դաշնակցական ընդհ. ժողովը կանգնել է մի խորհրդակցական ձայն տալու վրայ։ Ի՞նչ տեսակէտից որ նայելու լինենք այդ հարցին, վերջի վերջոյ կը գանք այն եզրակացութեան, որ ուսանողութիւնը ընդհանուր ժողովում հանդիսանում է ոչ իբրեւ մի գործող շրջան, այլ իբրեւ խորհրդակցական միաւոր. այդ քայլը այսպէս թէ այնպէս կարող է մատնել ուսանողութիւնը մեռելութեան, որը երբեք ցանկալի չէ։ Թէեւ ոչ բոլորովին, բայց մասամբ այդ անյարմարութիւնը վերացւում [է] նրանով, որ ռայոնական ժողովներին ուսանողութեան տրուած է մի վճռական ձայն։ Ուսանողական համաժողովը, ի նկատի ունենալով վերոյիշեալ փաստարկութիւնները, եկաւ այն եզրակացութեան, որ թէպէտեւ ընդհանուր ժողովի ոչ բոլոր փաստերն են համոզեցուցիչ*), այնուամենայնիւ չարժի պարապել այդ հարցով եւ արգումենտներ[171] բերել հակառակ կարծիքը ապացուցանելու համար, այլ որոշեց բաւականանալ խորհրդակցական ձայնով, նախ՝ որ միւս ընդհանուր ժողովի համար դրուած է միմիայն խորհրդակցական ձայն, ուրեմն այդ վճիռը քանդել անհնար է մինչեւ միւս ընդհանուր ժողովի կայանալը, երկրորդ՝ որ այդ հարցով պարապելը այնքան նշանակութիւն չունի, որ մենք ջանք գործ դնենք միւս ընդհանուր ժողովում այդ նպատակին հասնելու։ Վճռուեց որ որեւիցէ իրաւունք պահանջելու համար պէտք է ունենալ եւ նրա համաձայն ծառայութիւններ, որոնք ստիպէին ընդհանուր ժողովին առանց այլեւայլութեան այդ իրաւունքը տալ, բայց այդպիսի անցեալ համարեա թէ չունենք։ Մենք այն տեսակէտն ենք պաշտպանում, որ մենք կը գործենք մեզ չնորհած շրջանակների գծում, կ'աշխատենք ապացուցել մեր գործունէութեամբ, որ մենք արժանի ենք այդ ձայնին, այն ժամանակ ընդհանուր ժողովն առանց մեր խնդրանքին էլ այդ ձայնը ինքը մեզ կը չնորհի։ Այդպէս ենք նայում հարցին, քանի որ մեր ամենագլխաւոր նպատակին հասնում ենք. մենք մեր հայեացքները միշտ կարող ենք ընդ. ժողովին արտայայտել, հաղորդել մի որոշ տեղեկութիւններ, որ մենք ենք ձեռք բերել եւ որ գլխաւորն է մօտկից ծանօթանալ կենդանի մարդկանց միջոցով յեղափոխական գործի հետ։ Վճռական ձայն չունենալը մեզ չպէտք է վրդովէ, երբ աչքի առաջ կ'ունենանք, որ Վրէժստանի[172] պէս տեղն անգամ միայն մի ձայն ունի։ Այդ խօսակցութիւնների ժամանակ առարկութիւն եղաւ, որ եթէ ընդունելու լինենք մի խորհրդակցական ձայն ամբողջ ուսանողութեան կողմից, այն ժամանակ մէկը չի կարող արտայայտել ամբողջ ուսանողութեան տրամադրութիւնը։ Այդ հանգոյցն եւս քանդուեց, երբ առաջարկեցին, որ իւրաքանչիւր մասնաժողով ընդհանուր ուսանողութեան ներկայացուցչին իրաւունք ունի զինելու իւր կազմած ծրագրով այն հարցերի վերաբերմամբ, որոնք նախօրօք յայտնի են, թէպէտեւ այդ առաջարկը լիովին չի վերացնում մէջ բերած անյարմարութիւնները։

Ցունուար 1899 թ., Հիւսիսակերտ

Վերջ

Վրիպակ.— «Կեդրոն. Կոմիտէ եւ նորա պարտակ.» (12րդ երես) խորագրով գլխի մէջ դուրս են սպրդել ստորեւ դրուած հետեւեալ 2 կէտերը, որոնց անհրաժեշտ է միացնել Կեդրոն Կոմիտէի պարտականութիւններին.

1. Կեդրոն. Կոմ. պէտք է հսկի, որ միւս մասնաժողովների վրայ դրուած պարտականութիւնները իւր ժամանակին իրագործուին։

2. Դաշնակցութեան ընդհանուր ժողովներին մեր կողմից ներկայացուցիչ կարող է լինել միայն նա, որը ընտրուած կը լինի ուսանողական համաժողովում։ Այդ ընտրութիւնը լինում է Կեդրոն. Կոմիտէի ընտրութեան հետ ի միասին միաժամանակ։

*) Ծանօթ.- Այդ լոկ միայն խօսքեր չկարծելու համար, մենք կը բերէինք հետեւեալ արգումենտը մեր տեսակէտը ապացուցանելու համար. ընդհանուր ժողովը կազմուած է բացի ինտելիգենտներից նաեւ այնպիսի անձնաւորութիւններից, որոնք վերացական հարցերում նոյնքան կարող են հեղինակաւոր լինել, որքան եւ ուսանողները գործնական հարցերում. ուրեմն պէտք էր այդ պարոնոներին զրկել ձայնից վերացական հարցերում. այդպիսի բան մենք չենք տեսել ընդհանուր ժողովի կեանքում։ Նոյնիսկ այդ անկարելի է, ամենայն մի հասարակական ժողով ունի այդ երկու տարրը եւ նոցա իրար հետ ունեցած ընդհարումից է, որ պարզաբանում է հարցը։

171.- Փաստարկութիւններ։
172.- Կուս. ծածկանունը Հ.Յ.Դ. Պարսկաստանի կազմակերպութեան։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս խան — 47:
Աբեղեան Արտաշէս — 8:
Աբեղեան Մանուկ — 7, 264, 267, 268, 285:
Աբովեան Աղեքսանդր — 286, 344:
Աբովեան Խաչատուր — 315, 358:
Աբովեան Կոստանդին — 284:
Աբրօ Ի. — 429-431:
Ագուլեան — 425:
Ադամեան Ն. — 344, 367:
Ադամեան Սուրէն — 268, 283:
Ազատեան Հայկ— 350:
Ազեւ — 418:
Ազիզ փաշա — 307:
Աթաբէգեան Լեւոն — 268, 286, 292-294, 309:
Աթաբէգեան Վարդ. — 287:
Ալեքսան խան (Ջալալեան) — 52, 67, 153, 165, 169:
Ալեքսէյեւցեւ — 244:
Ալէք — 103:
Ալէք (իգտիրցի) — 194:
Ալիշան հ. Ղեւոնդ — 312, 315:
Ալթունեան Գէորգ — 382, 384, 385, 387-389, 392, 393, 395, 396, 398, 399, 432:
Ալիբէգեան (տիկին) — 401:
Ալոյեան Գալուստ (Թորոս) — 152:
Ակնունի Է. (Մալումեան Խաչատուր) — 7, 8, 132, 135, 140, 178, 184, 206, 209, 212, 224, 225, 246, 248, 252, 257-260, 264, 309, 314-316, 319, 321, 322, 325, 327, 334, 338, 342, 344, 349, 350-352, 354-360, 366, 370, 376, 399, 430, 431:
Ահարոնեան Աւետիս (Ղարիբ) — 5-8, 101, 135, 178, 188, 204, 205, 208, 211, 216, 217,221, 225, 226, 228, 229,231-242, 249, 264, 286, 330, 342, 357, 358, 370, 432, 463, 465:
Ահարոնեան Վարդգէս — 211, 212:
Ահմէդ-Մուքարրամ Լարիզանցի — 89:
Աղա Դաւութ — 48:
Աղամալեան Տիգրան — 464:
Աղայեան — 389, 392, 461:
Աղայեան Մ. — 285:
Աղայեանց Մովսէս — 268:
Աղայեւ — 55, 57, 72-74:
Աղապալեան Սիմոն — 286, 290:
Աղաջանեան Գրիգոր (Մաշտոցեան) — 186, 206:
Աղասէր Ց. (Գրիգորեան Յակոբ) — 309, 328, 344:
Աղասի — 38:
Աղբալեան Նիկոլ (Հանգոյց) — 62, 67, 82, 100, 101, 138, 139-141, 153-160, 165, 170, 432:
Ամէմեան Ղեւոնդ — 448, 461, 474, 475, 486:
Ամանուլլահ Միրզա — 105:
Ամատունի — 82:
Ամբրումեան Մարիամ — 287:
Ամիրաջիբի — 103:
Ամիր Աֆխում — 47:
Այվազեան Մինաս — 426, 461:
Այվազեան Վ. — 433:
Այվատեան Արք. Սահակ — 35, 36, 98:
Անահիտ (Դաւթեան) — 50, 52:
Անատոլ Ֆրանս — 7, 231, 234-236, 238, 239, 241, 242, 251:
Անդրէասեան Արմենակ — 268, 286:
Անոփեան Գ. — 309, 344:
Անոփեան Ռ. — 432:
Անուշաւան — 170:
Անտոն Գոչ (Պոյաճեան) — 399, 445, 486:
Աչոտ (Նոր Ջուղա) — 38:
Աչոտ — Տես Դաշնակցական Խեչօ:
Ապաճեան Աղեքսանդր — 350:
Ապտիւլ Համիտ Բ. — 207, 250, 305, 315, 390, 442:
Առաքելեան — 193:
Առաքելեան Ե. — 485:
Ասաղ (Սարդար) — 89:
Ասոյեան Գրիգոր — 337:
Ասոյեան Սառա — 337:
Աստղիկ (Դաւթեան) — 50, 52:
Ատուրեան — 249:
Արամայիս — 432:
Արամ Աչոտ — Տես Մինասեան Սարգիս:
Արամեանց — 186, 187:
Արապեան Ց. — 266:
Արարատեան Սարգիս — 385, 392, 396, 461, 475, 510, 512, 514, 515, 517, 518:
Արարատսկի — Տես Արարատեան Սարգիս:
Արբակ Ռշտունի — Տես Միրզայեան Յովսէփ:
Արեան Կարապետ (Զոհ) — 122:
Արզումանեան Վարդան (Միչա) — 384, 396, 433:
Արէշեան Ռուբինա — 207, 208, 223:
Արթինեան — 285:
Արծրունի Գրիգոր — 315, 349:
Արղութեան Իշխան Յովսէփ — 5, 6, 207, 217, 249:
Արմենակ — Տես Ստեփանեան Յարութիւն:
Արմէն — 34:
Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին) — 8, 132, 183, 207, 249, 260, 262, 263, 287, 429, 431, 445:
Արմէն Շ. — 201, 203:

Արշակ — 32, 51, 153, 160, 162, 165, 168-170:
Արշակ (Դոնչօ) — 138, 139, 170:
Արշակ Ց. — 429-431:
Արշակունի — Տես Տէրտէրեան Արսէն:
Արշարունի Եդուարդ — 286:
Արսէն — Տես Միքայէլեան Արսէն:
Արսէն — 47:
Արտաշ Ա. — 429:
Արտաշ Մ. — 429, 431:
Արտեմ — 132:
Աւագեան Վ. — 283:
Աւագեան (օրիորդ) — 337, 354:
Աւարեանց Հմայեակ — 350:
Աւետեան Ա. — 283, 290, 292-294:
Աւետիսեան Արամ — 350, 352, 387, 388:
Աքունեան Յովնան — 286:

Բաբալեան Արտաշէս — 93, 101, 227, 386, 419, 431, 461, 474, 486, 487, 500:
Բաբայով — 113:
Բաբկէն Սիւնի — 315:
Բազէ — 20:
Բազիլ դոկտ. — 62:
Բազուկեան — 38, 158, 159, 164:
Բալաքեան — 362:
Բախչօ — 80
Բակունին Միխայիլ — 413:
Բահաթրեան Գաբրիէլ — 266:
Բահատուր խան — 4, 26, 47, 60, 76, 89, 95:
Բաղդադեան — 352, 354, 356:
Բաղդասարեան Մ. — 350, 351, 425, 426:
Բաղր խան — 60:
Բայբիչեան Լուս. — 461, 475, 486, 519, 527:
Բայեր — 311:
Բայրըն Հարոլդ — 358:
Բասմաճեան Կարապետ — 463, 482:
Բարանովսկի — 224:
Բարսեղեան Արմենակ — 380, 382, 385, 386, 390, 393, 398, 419, 428:
Բարսեղեան Լ. — 481, 482, 484:
Բարսեղ Շահպազ — 485, 498, 499, 510, 511, 513, 514, 516, 517, 519-521:
Բեբէլ Աւգուստ — 310, 311, 328, 431:
Բերար Վիկտոր — 7, 135, 211, 225, 231-234, 236, 238, 241, 251, 347, 490, 520:
Բերնշտայն Եդուարդ — 305, 310, 316, 321, 323-326, 333, 335, 344, 346, 347, 353, 366:
Բերունի, Բերեան — Տես Յակոբեան Սիմոն:
Բէգ-Գիլեանց Գ. — 350:
Բէգլար բէգ — 48:
Բիզմարկ — 323:
Բիտ — 347:
Բոգուսլաւսկի — 191:
Բոցարիս Մարկ — 335, 345:
Բուդաղեան Աննա — 350:
Բուդաղեան Տ. — 344:
Բուլգարացի Սարգիս — 135:
Բունիաթեանց Մենտոր — 268, 288, 290-292,294-296:
Բուրգացկի — 193, 211:
Բրանդէս Գէորգ — Տես Պրանտէս Ժորժ:

Գագիկ — Տես Տէր Մկրտչեան Ստեփան:
Գազանճեան Տրդատ — 461, 475, 481, 486:
Գազանճեան Վ. — 253-255:
Գալփաքեան Ց. — 527:
Գալֆայեան Յարութիւն — 132, 206, 385:
Գանձակեցի Նիկոլ — 132:
Գանձեցեան Արտաշէս — 266, 432:
Գապանճեան — 486:
Գառնիկ — 210, 211:
Գարագաշեան Երուանդ — 286:
Գարագաշեան (Հրայր-Ռշտունի) — 46:
Գարամեան — 422:
Գարանֆիլեան Միհրան — 286:
Գարեգին — Տես Սամսոն խան:
Գարեգին Խաժակ (Զագալեան, Բաբա) — 5, 188, 211, 221, 509:
Գարեգին Նժդեհ (Տէր Յարութիւնեան Գ.) — 5, 6:
Գաւաֆեան Արշակ — Տես Քեռի:
Գեանջեցեան Եղնիկ վրդ. — 284:
Գեղամ — 25:
Գեղամեանց Կատրամիդէ — 350:
Գերասիմեան Արմենակ — 35:
Գերշունի Գրիգորիյ — 380, 385:
Գէորգ Ե. (Ամենայն հայոց կաթ.) — 6, 230:
Գիւլխանդանեան Աբրահամ — 5, 6, 141, 199, 205:
Գիւլպէնկեան — Տես Կիւլպէնկեան Բարսեղ:
Գոգալեան Սոֆիա — 350:
Գոլիցին — 173, 235, 245:
Գոհէն — 346:
Գոհիէ — 347:
Գոչէն Տընիզ — 333, 335:
Գուլումճեան Վահան — 286, 309, 328:
Գուրգէն — 33, 82:
Գրադնաուէր — 311, 347:
Գրիգորեան Ն. — 519, 520:
Գրիգոր Զօհրապ — 260-262, 508:

Գրիչ — Տես Տէր Դանիէլեան Գրիչ։
Գրաէլեան Գէորգ — 350։
Գրուզենբերգ — 5։
Գօլիս Ժորժ — 241։

Դանիէլ Վարուժան — 373, 527։
Դաշնակցական Խեչօ (Ամիրեան Խաչատուր) — 4, 5, 49-51, 53, 70, 130-133, 139, 153, 155, 169, 170։
Դատաչ — 46։
Դարբինեան Ռուբէն — Տես Զիլինկիրեան Արտաշէս։
Դաւթեան Ցոնան — 76, 79, 93, 101, 136, 184, 233, 385, 432, 433, 445։
Դաւիթխանեան Դ. Խ. — 448, 474, 475, 478-482, 499, 512։
Դեր. Գ. — 429, 431։
Դերձակեան Ռուբէն (Փայլակ) — 152։
Դեմիրճեան Դերենիկ — 372, 373։
Դերոյեան — 525։
Դէմիրեան Մ. — 448, 461, 474, 486։
Դիլէնեան Գ. — 448, 465, 474, 475, 478։
Դիվան բէգ — 48։
Դիւրգերեան Գարեգին — 400, 419։
Դուչայեան Նունուֆար — 350։
Դրամբեան — 210։
Դրօ (Կանայեան Դրաստամատ) — 5, 195, 210, 211։

Եազըճեան Մ. — 350։
Եապոն (Պարոնեան Ցովհ.) — 211։
Եարճանեան Ատոմ — Տես Սիմանթօ։
Եդիգարեան Ա. — 283։
Եդուարդ Տ. Ս. — 429։
Եզնիկ վրդ. Երկարակեցեան — 36։
Եղիազարեան — 181։
Եղիազարեան Ղազար — 268, 285։
Եղիազարեան (օրիորդ) — 362։
Եղիայեան — 283։
Եուսուփեան — 285։
Եուսուֆեան Ցովհաննէս — 473, 477։
Եսայեան Տ. — 291, 292, 294-296, 463, 481, 485։
Երամեան Գ. — 499։
Երզնկեան Արամայիս — 350, 352, 353, 355։
Երկանեան (օրիորդ) — 461, 474, 475, 486։
Երջանիկեան — 230։
Եփրեմ (Դաւթեան) — 3, 15, 26, 31, 41, 47-53, 55-57, 59-61, 63, 67-70, 72, 74-78, 80, 88-91, 94, 95, 99, 100, 102, 103, 107, 109-111, 118-121, 126, 128-140, 142-148, 150-153, 155, 160-163, 165-171, 181, 218, 250, 482։

Զառաֆեան — 382, 384-388, 391-395, 398, 399։
Զառաֆեան Սիմէոն — 268, 285։
Զարբաբեան Կիրակոս — 500։
Զարդարեան Ռուբէն — 432։
Զարդարեան Տիգրան — 286։
Զարեհ — 151, 164։
Զարղամ — 50, 53։
Զարուդին — 5։
Զաւարեան Սիմոն — 5, 62, 135, 204, 217, 221, 222, 225-231, 498, 509-511, 521։
Զաւէն Սիրան — 350։
Զէյթունեան — 389, 390։
Զիադովլէ — 97։
Զիրաք — 46։
Զոհրաբ խան — 160, 168, 171։
Զոհրաբեան Հեղինէ — 287, 309, 313, 344, 351։
Զոհրաբեան Ցուսիկ վրդ. — 284։
Զուդերման — 311։

Էդիլեան Գուրգէն — 362։
Էզոպ — 42։
Էթմէքճեան Սուրէն — 348։
Էլարմ — 34, 37, 40։
Էլմար — Տես Ցովհաննիսեան Ցովսէփ։
Էհթղամ դովլէ — 47։
Էմիրճեան — 510
Էյնի դովլէ — 75։
Էնգէլս Ֆրիդրիխ — 353, 356, 413։
Էրբարա Լ. — 311, 347։
Էրբարա Պ. — 347։
Էքս-Շահ — Տես Մեհմէդ Ալի Շահ։

Թադէոսեան Լեւոն (Պապաշա) — 6, 141, 205։
Թադէոսեան Ցովսէփ — 325-328։
Թաթուլ Հ. — 429։
Թախթաճեան Լեւոն — 362։
Թաղի Զադէ — 61, 63-65, 67-70, 72, 73, 89, 90, 94, 98, 211։
Թամամշեան — 362։
Թայիրեան — 228։
Թապաքեան Կարապետ — 286։
Թառայեանց Անդրէաս — 268, 284։
Թափառական — Տես Եփրեմ։
Թերզիբաշեան Մարտիրոս — 210։
Թերլեմեզեան Միհրան — 474, 479, 481, 482, 491։
Թէլճեան Գէորգ — 350։
Թիրեաքեան Հայկ (Հրաչ) — 132, 263։

Թիւլեան Պ. — 285, 295, 296, 311։
Թոյլընպի Առնոլտ — 257։
Թովմա-Աղայեան Ն. (վարդապետ) — 337, 339, 367։
Թովմասեան — 285։
Թորոյեան Հայկ — 433։
Թորոսեան Գ. — 350։
Թորոսեան Հայկ — 362։
Թումայեան — 283։
Թումանեան Ցովհաննէս — 5, 6, 178, 358, 432։
Թունեան Ալեքսան — 62։
Թոփչեան Եղիշէ — 205, 320-322, 344, 402, 432, 434։
Թոփչեան Ցակոբ — 284։
Թոքաթլեան Գ. — 272, 283, 291, 294, 296։
Թրօկլէն Պ. — 470։

Ժամկոչեանց Թ. — 350։
Ժամհարեան Նուարդ — 350։
Ժանսոն — 310։
Ժենիա (Քրիստափորի կինը) — 330, 331։
Ժէորժէթ Ց. — 429, 431։
Ժորժ Տ. Ա. — 429։
Ժօրէս Ժան — 211, 235, 242, 333, 335, 345-347։

Իգտալը Սուլթանէ — 59։
Իզմիրլեան Մատթէոս Բ. կաթ. — 250։
Իզվոլսկի — 213, 241։
Իշխանեան Բախշի — 8, 328, 334, 337-339, 342, 350-358։
Իսախանեան — 283, 292, 294, 295։
Իսահակեան (Ջամալեան) Արշակ — 372, 375, 376, 379, 382-388, 391-395, 398, 399, 409, 425, 426, 432։
Իսահակեան Աւետիք (Աւօ, Հայ գուսան) — 5, 6, 188, 212, 221, 358, 374, 432։
Իւզբաշեան Ցարութիւն — 284, 309, 464, 474։
Իւզբաշեան (տիկին) — 464։
Իւզբաշեան Ռ. — 512, 514, 519։
Իւթիւճեան Գէորգ եպս. — 231։
Իւթիւճեան Կարապետ եպս. — 178։
Իփէկեան Գասպար — 432, 463։

Լամպրեխտ — 311, 347։
Լաչընալ Ադրիան — 344։
Լարդի — 344։
Լաւիս Էռնեստ — 241, 251։
Լաֆարժ — 463։
Լեհման — 321։
Լեպսիուս Եոհան— 320, 321, 324, 347։
Լեռնեան — Տես Նազարեանց Լիպարիտ։
Լեւոն Ժաք — Տես Նեւրուզ Օննիկ։
Լեւոն Շանթ (Սեղբոսեան) — 8, 264, 285, 291-293, 295, 297։
Լըժին — 4-6, 204, 207, 213, 231, 234, 237, 243, 244, 248,։
Լըրոլ Փօլ — 333, 335, 346։
Լըրուա-Բօլիօ — 333, 335, 346, 347։
Լիսիցեան Լեւոն — 525։
Լոբանով Ռոստովսկի — 222։
Լոմբերոզօ — 311, 316, 347։
Լոնգէ Ժան — 490։
Լորան — 310։
Լորիա — 311, 316, 347։
Լորիս-Մելիքեան Ցովհ. — 231,330, 331։
Լուսեղէն Բ. — 429, 430։
Լուսինեան Հր. — 400, 465, 468, 475։
Լուսինեան Ն. — 422։
Լօհէնկրէն — 303։

Խազանչեան Տ. — 422։
Խաժակ — Տես Գարեգին Խաժակ։
Խալիդ բէգ — 103։
Խանասորի Վարդան (Մեհրաբեան Սարգիս) — 93, 132, 135, 140, 385։
Խանդամիրեան Սարգիս — 268։
Խաչատրեան Ալեքսան — 153-155, 161, 162, 166-170։
Խաչատրեան Անդրէաս — 284։
Խաչատրեան Կ. — 465։
Խաչմանեան Ց. — 469։
Խաչատրեան Վ. — 350։
Խատիսեան (բժիշկ) — 283։
Խաչիկեան-Մեժլումեան Ցով. — 285։
Խաչիկեան Տիգրան — 425, 429, 431, 461, 475, 486, 487, 512, 519։
Խարիսխ — 34։
Խեչօ — Տես Դաշնակցական Խեչօ։
Խերեան Մ. — 313։
Խզմլեան (Տիգրանեան) Թադէոս — 334, 351, 353, 355-357, 360։
Խշտոյեան Ենովք — 210։
Խոսրովեան Խոսրով — 283։
Խորասանեան (օրիորդ) — 362։
Խորէն — 158, 159, 164։
Խրիմեան Մկրտիչ կաթողիկոս — 231։

Ծատուրեան Շ. — 285։

Կազի Ֆաթթուհ — 88, 94։
Կաճկաճեան Վառվառէ — 350։

Կայալեան Նունէ — 350:
Կանայեան Հայրապետ — 210:
Կաուցկի — 311, 347:
Կարաբէկով — 55, 57, 59, 72-74, 136:
Կարագէոզեան — 294:
Կարակաշեան Յովհաննէս — 285:
Կարակոզեան Գասպար — 337:
Կարա-Մուրզա Պետրոս — 283:
Կարա-Մուրզա Պօղոս — 284
Կարապետեան Ա. — 350, 351, 357:
Կարդաշովա Ա. — 350:
Կարճիկեան Խաչատուր (Վազրիկ) — 5, 204, 214, 433:
Կարօ — 80:
Կարօ Մ. — 429, 430:
Կերենսկի Ա. — 5:
Կիւլպէնկեան Բարսեղ — 419, 448, 463, 474, 475, 477, 478, 525:
Կիւլպէնկեան Գառնիկ — 286:
Կլեմանսօ — Տես *Քլեմանսօ Ժորժ*:
Կոկոկցով — 245:
Կոմիտաս վարդապետ — 8, 264, 283:
Կոմս — Տես *Փափազեան Վահան*:
Կոնտանսոն Լուդվիկ — 316, 335, 347:
Կորկոտեան Ջաւէն — 435:
Կուկունեան Ս. — 44, 238, 355, 356:
Կովալովսկի — 311, 347:
Կրասիլնիկեան Եփրոսինէ — 287, 291:
Կրիվցով — 224, 245:

Հազարապետեան Արդուարդ — 350, 352, 360, 386:
Հազարապետեան Լեւոն —401:
Հալաճեան — 285:
Հալիր — 324:
Հախումեան Քրիստափոր — 268, 283:
Համազասպ (Սրուանձտեանց) — 5,6:
Համբարեան Արտեմ — 337:
Համբարձում — Տես *Մելիք-Սարգսեան Համբարձում*:
Համբարձումեան Լեւոն — 285:
Հայզէ — 311, 347:
Հայ-Մուսա — Տես *Մուսայէլեան Հայրապետ*:
Հայկ — 52:
Հայր-Աբրահամ (Սահակեան Աւետիք) — 5:
Հայրանեան Արշակ — 461, 486, 487:
Հայրանեան Թաթուլ — 429, 461, 462, 486:
Հայրիկ — Տես *Պանիրեան Հայրապետ*:
Հանգոյց — Տես *Աղբալեան Նիկոլ*:
Հապէչեան — 463:
Հաջի-օղլու — 73:
Հասան — *Ջալալեան Ներսէս* — 362:
Հարբաբչեան Յ. — 350:
Հարնակ — 324, 344:
Հաքիմ-ուլ Մուլք — 164:
Հաֆէզ — 62:
Հեկինգ — 320:
Հեկկէլ — 311:
Հիւլէ — 27, 82:
Հոգիջանեան — 389, 390:
Հովեան Միքայէլ — 284:
Հովէնտեան Հեթում — 286:
Հուիսիմէ — 52:
Հրաչ — 53:
Հրաչեայ Մարալ — 233:
Հերոլդ Ա. Ֆ. — 241:

Ղողակ — 176:

Ղազարեան Արշակ — 384, 388, 400, 425, 475:
Ղազարեան Թադէոս — 362:
Ղազարեան Կարապետ — 207:
Ղազարեան Կորիւն — 211:
Ղազարեան Միսաք — 448, 461, 474, 475, 477-482, 484, 486, 510, 512, 516, 519, 520, 527:
Ղազարեանց Յովհաննէս — 6:
Ղազարոսեան Թ. — 470, 471, 513:
Ղահրաման խան — 80:
Ղամբարեանց Ստեփան — 284, 350, 356:
Ղարաբաբա — Տես *Նիկոլ Դուման*:
Ղարաբէկով — Տես *Կարաբէկով*:
Ղարամելիք — 95-97:
Ղարիբ — Տես *Ահարոնեան Աւետիս*:
Ղաւամը Սալթանէ — 157, 164:
Ղեւոնդ Ա. — 429,431:
Ղզմալեան — Տես *Խզմալեան Թադէոս*:
Ղորասանեան Մ. — 360:
Ղորղանեան Անտոն — 401:
Ղուկասեան Յակոբ — 268:
Ղուկասեան Վարդուհի — 287:
Ղուկասեանց Աբրահամ — 268:

Ճելալեան Թովմաս — 252:
Ճեպճեան Ա. Յ. — 350:

Մալեմեզեան Գ. — 470:
Մալխասեան — 285:

Մալխասեան Ստեփան — 178, 249:
Մալխասեան (օրիորդ) — 362:
Մալումեան Խաչատուր — Տես *Ակնունի Է.*
Մակարեան Մինաս — 211:
Մաղազաճեան Յարութիւն — 461, 480, 486:
Մամիկոնեան Անտիկ — 350:
Մամիկոնեան Արա — 410, 419, 430:
Մանանդեան Յակոբ — 8, 264, 268:
Մանասեան Սարգիս — 5, 6, 181, 228:
Մանդելշտայմ — 5:
Մանդինեան Միքայէլ — 350, 353, 355, 356, 359, 360:
Մանթաշեան Ալեքսանդր — 329:
Մանուկեան Արամ — 446, 461, 475, 479:
Մանուկեան Հմայեակ — 445:
Մանուչարեան Միքայէլ — 337:
Մաշուրեան — 385, 387, 390:
Մաշտոցեան — Տես *Աղաջանեան Գրիգոր*:
Մասեհեան Յովհաննէս խան — 55:
Մատթէոս խան — 67:
Մատինեան Նիկոլ (Վահան) — 54, 57:
Մատինեան Սաթենիկ — 217:
Մար (Տէր Մարտիրոսեան Միքայէլ) — 56, 132:
Մարգարեան Վարդան — 337:
Մարզպետ, Մարզպետունի (Ղազարոսեան Ղազարոս) — 132, 307, 308, 391, 393:
Մարկոսեան Մանգաս — 500, 503, 526:
Մարքս Կարլ — 273, 291, 353, 356, 359, 360:
Մեժլումեան Ղեւոնդ — 283:
Մելիք-Ազարեան Ա. — 178, 233, 249:
Մելիք-Անդրէասեան Պետրոս — 111, 112:
Մելիքեան Թովմաս — 265, 266, 268:
Մելիքեան Լեւոն — 285, 401:
Մելիքեան Յարութ — 286:
Մելիքեան Ստեփան սարկաւագ — 337:
Մելիքեան Վաչագան (Վահան) — 194:
Մելիք-Կարագոզեան Գէորգ — 283:
Մելիք-Ղարագէօզեան Գասպար — 268, 283:
Մելիք-Սարգսեան Համբարձում — 75, 153, 154:
Մելիք-Ստեփանեան Ս. — 285:
Մելքոնեան Հայկ — 337, 395, 419:
Մելքումեան Համբարձում — 464:
Մեհմէդ Ալի Շահ — 4, 13, 26, 27, 31, 44, 49, 55, 56, 67, 75, 76, 78-81, 88, 89, 92-95, 99, 101-103, 107, 109, 113, 114, 119, 120, 155, 157:
Մեհրաբեան Գէորգ — 350, 360:
Մեղրեանց Ա. — 350:
Մեսրովբեան — 67:
Մէօթէմէտեան Գ. — 465:
Միխայէլովսկի — 311, 413:
Միհրան (Քէչիչեան) — 5, 205, 208, 209, 231, 432:
Մինասեան Արտաշէս — 284:
Մինասեան Սարգիս — 267, 270, 287, 309, 344:
Մինասեանց Արտաշէս — 268:
Մինասեանց Երուանդ — 268:
Մինօ Ա. — 429, 431:
Միչէլ Դ. — 429, 431, 462, 474, 477, 478, 482, 500:
Միսաքեան Հրանտ — 286:
Միրապօ — 27:
Միրզայեան Յովսէփ — 9, 29, 31, 47, 49, 55, 59, 61-63, 67-70, 72, 73, 75, 76, 100, 121, 126, 130-133, 137-141, 153-163, 165-171:
Միրզոյեան Յովսէփ — 362:
Միրիմանեան (տիկին) — 401:
Միւնիր պէյ — 317, 343:
Միքայէլեան Արսէն — 25, 27, 29, 82:
Միքայէլեան Քրիստափոր — 50, 141, 231, 330, 331, 351, 354:
Մհեր — Տես *Օհանջանեան Համօ*:
Մնացականեան Տիգրան — 117, 153, 154, 156, 159, 160-163, 165, 166, 168, 171, 510, 513, 514, 517, 519-521, 527:
Մշակ — 34:
Մոհթալեմ (Սալթանէ) — 47, 164:
Մոմջեան Ռուբէն — 461:
Մոնետա — 348:
Մուխպիր — 52:
Մուշեղ — 44:
Մուշեղ Բագրատունի — 192:
Մուշեղեան Լեւոն — 211:
Մուջալլայ — 89:
Մուսայէլեան Հայրապետ — 362, 385, 389, 392-394, 396, 401, 432:
Մուրադ Սուլթան — 111:
Մուրատեանց (բժիշկ) — 177:
Մուրատով Արշակ — 6:
Մուքարրամը Սուլթանէ — 74:
Մօրնար — 170:

Յաբէթ (խմբ. Միհրանի եղբայրը) — 205, 432:
Յաբէթ (Նոր Ջուղա) — 35:
Յակոբեան Սիմոն — 342, 350, 353, 356, 358, 375, 422, 425, 426, 464, 486:
Յակոբեան Ն. — 309:
Յակոբջանեան Ազ. (օրիորդ) — 429, 431, 464, 474, 475, 520:
Յակովբջանեան Դաւիթ — 284:
Յարութիւնեան Աւագ, Ա. — 5:
Յարութիւնեան Մարտիրոս — 188, 316, 339, 383-386, 395, 399, 410, 419, 432, 527:
Յարութիւնեան Յովսէփ — 285:
Յարութիւնեան Տիգրան — 286:

Յովհաննիսեան Ա. — 510-513, 515, 516, 518, 519:
Յովհաննիսեան Հայկ — 362, 385, 387, 512:
Յովհաննիսեան Մարիամ — 350:
Յովհաննիսեան Միք. — Տես Վարանդեան Միքայէլ:
Յովհաննիսեան Յակոբ — 283, 288, 290, 337:
Յովհաննիսեան Յովսէփ (Ֆարրօ, Յ. Էլմար) — 27, 31, 50, 52, 53, 122, 143, 148, 153-157, 159-163, 165, 166:
Յովհաննիսեան Նուարդ — 287:
Յովնանեան Սահակ (Աչուղ) — 189:
Յովնանեան Սուրէն — 362:
Յովուեան Սիմէոն — 284:
Յովսէփեան Մ. (օրիորդ) — 461, 486:
Յովսէփեան Յովհաննէս — 284:
Յովսէփ Տ. — 429, 431:
Յորդանոս (Դաւթեան) — 79, 445:

Նաբաթեան Շուշանիկ — 350:
Նազարեանց Լիպարիտ — 211, 212, 334, 337-341, 367:
Նալբանդեան Վահան — 267, 268, 270, 272, 284, 291, 293-295:
Նալբանդեանց Միքայէլ — 323, 358, 413:
Նալպանտեան Հ. — 527:
Նայիբ Սալթանէ — 46, 158, 169-171:
Նասրուլլա — 51:
Նասր-ուլ Մոլք — 11, 26, 31:
Նավիլլ Էռնեստ — 311, 316, 347:
Նարինեան Սիմոն — 385, 387, 392, 419, 432:
Նափոլիոն Պոնափարթ — 307:
Նելիտով — 232, 233, 236, 237, 240, 249:
Նեմօ — 59:
Ներսէսեան Մենտոր — 283:
Ներսէսեան Ներսէս — 153, 154, 156, 161, 166-169:
Նեւրուզ Օննիկ (Ժաք-Լեւոն) — 263, 287, 344:
Նիկոլա Բ. — 240:
Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան Ն.) — 5, 76, 78, 79, 88, 91, 93-97, 99, 101, 111, 129, 132, 137, 140, 145, 148, 151, 184, 228, 238, 356, 527:
Նիտըմ Ճ. Կ. — 259:
Նիցչէ — 273:

Շալլէյ Ֆելիսիէն — 241:
Շախումեանց Կատարինէ — 350:
Շահազիզ Երուանդ — 322:
Շահազիզ Սմբատ — 358:
Շահբազեան Արտաշէս — 337:
Շահէն Ատոմ — 284:
Շահխաթունեան Ա. — 432:
Շահմալեան — 385:
Շահնազարեան Ս. — 486, 487:
Շահնազարեան Վառ. — 287:
Շահնազար Յովհաննէս — 178, 231:
Շահումեան Ստեփան — 8, 264, 300, 334, 337, 339:
Շահրիկեան Յարութիւն — 5, 62, 181, 463:
Շանթ (Նոր Ջուղա) — 38:
Շապանիքեան — 283:
Շարաբանդեան Մկրտիչ — 268, 284:
Շաւարշեան Ա. — 481, 491, 516:
Շեգլովիտոֆ — 245:
Շէյխ Սալիմ — 105, 106, 108:
Շէյքսպիր — 55:
Շէրէֆիտտին — 61:
Շիշմանեան Ռուբէն — 485, 498:
Շիրակունի Ա. — Տես Յարութիւնեան Մարտիրոս:
Շիրինեան Արշակ — 362:
Շխեան — 285:
Շխիեանց — 283:
Շմիտ — 320:
Շուստեր Մորկան — 98, 100, 154, 155, 170:
Շօա-օս-Սալթանէ — 120:

Ոսկանեան — 185, 216:
Ոսկանեան Ռուբէն — 461:
Ունանեան Տիգրան — 285, 401, 408, 419:

Չաբարեան — 283:
Չարըգչեան Արամ — 268, 284:
Չարիկով — 213, 214, 225, 229:
Չարուխճեան Մարտիրոս — 132:
Չիլինգարեան — 267:
Չիլինգիրեան Արտաշէս (Դարբինեան Ռուբէն) — 422, 425, 426, 465, 466, 491:
Չիլինգարեան Յակոբ (Աչոտ Հայկունի) — 176:
Չիպրիանի — 307, 347:

Պալեան Երուանդ — 265-268, 270, 287, 291:
Պալիոզեան — 347:
Պահատուր խան — Տես Բահատուր խան:
Պաղտասարեան — 289:
Պաղտասարեան — Տես Բաղդասարեան Մ.:
Պայէր — 316, 347:
Պանդուխտ — 25, 33, 82:

Պանիրեան Հայրապետ (Հայրիկ) — 56, 89, 115:
Պապաչա — Տես Թադէոսեան Լեւոն:
Պապովեան Մ. — 350:
Պապովեան Նատալիա — 350:
Պասսի Ֆրետերիկ — 311, 316, 347:
Պատկանեան Քերովբէ (Գամառ-Քաթիպա) — 315, 358:
Պատկանեան (օրիորդ) — 337:
Պարոնեանց Վարսենիկ — 350:
Պետրոս — Տես Տէր Յովհաննիսեան Բագրատ:
Պետրոսեան Մ. — 435:
Պետրոսեան, տոքթ. — 24:
Պետրոսեան (օրիորդ) — 337:
Պերար Վիկտոր — Տես Բերար Վիկտոր:
Պերճ — 26:
Պզտիկեան Զաքար — 287:
Պէշիկթաշլեան Մկրտիչ — 269:
Պիկար — 311, 347:
Պիոնեան Կարապետ — 52, 57, 78, 89, 137:
Պլեւէ — 173, 240,245, 250:
Պղատոն — 393:
Պրայս Ճէյմս — 257:
Պրանտէս Ժորժ — 333, 335, 344, 346:
Պրեսանսէ Ֆրանսիս — 7, 211, 231, 241, 242, 251, 302-304, 310, 311, 316, 333, 335, 344, 346, 347, 490, 520:
Պօղոսեան Խաչիկ — 286:
Պօղոսեան Յովսէփ — 34:
Պօյաճեան Ե. — 527:

Ջալալեան Տիգրան — 189:
Ջաղէթեան Սաթենիկ — 350:
Ջամալեան Արշակ — Տես Իսահակեան Արշակ:
Ջանգիւլեան — 297:
Ջաֆար Սարդար — 47:
Ջիգէրեան Գ. — 286, 290:
Ջումշիդեան — 39:

Ռահիմ խան — 50, 53, 54, 92:
Ռեշիտզատէ — 27, 31:
Ռոստոմ (Զօրեան Ստեփան) — 9, 17, 49, 57, 58, 61, 63, 64, 67, 69, 70, 72, 74, 76, 131, 135, 136, 140, 144, 148, 181, 184, 204-206, 209, 210, 218, 527:
Ռորբախ — 311, 320, 321, 324, 347:
Ռուբէն (Քրիստափորի որդին) — 330, 331:
Ռուբինա — Տես Արէշեան Ռուբինա:
Ռուզվելթ Թէոտոր — 371:
Ռուսօ Ժան-Ժակ — 438, 449, 486:

Սագինեան Զօրա — 153-155, 157, 159, 160, 166, 171, 425, 426, 429, 431:
Սազեան (Գրիգոր) — 339, 341:
Սազեան (տիկին) — 339:
Սաթթար խան — 51, 60:
Սաթուր խան — 105:
Սալար դովլէ — 4, 76, 78, 88, 89, 94, 95, 99, 109, 110, 120, 121, 127, 128,131, 132, 134-138, 141, 143, 145-147, 150, 151, 156-159, 166,:
Սահակեան Արշալոյս — 117:
Սահակեան Մկրտիչ — 98:
Սաղեան Գրիգոր — 283, 311:
Սամադ խան — 76, 88, 89, 92, 94, 95, 99, 105, 106, 108, 113, 122, 145:
Սամուէլեան Աննա — 350:
Սամուէլեան Մ. — 510, 512, 514, 515, 517-519, 527:
Սամսամ-Սալթանէ — 48, 80, 157:
Սամսոն խան (Թադէոսեան Ստեփան) — 50-52, 91, 152:
Սանդանսկի — 479:
Սանտալ — 444:
Սապահէտտին — 389:
Սարաֆով Բորիս — 316, 318, 343, 358:
Սարգսեան Լեւոն — 192:
Սարգիսեան Դանիէլ — 286, 289, 290, 292:
Սարգիս Զերազ — 287:
Սարգիս Սրենց (Գլըճեան) — 263:
Սարգսեան Ա. — 337, 350, 466:
Սարգսեան Խաչատուր — 268, 289:
Սարգսեան Նիկողոս — 352, 354, 358, 360:
Սարդար Աշճայ — 169:
Սարդար Ասադ — 59, 117, 157:
Սարդար Մուհօ — 75, 99:
Սարդար Մօհթալամ — 164:
Սարիբէկ — 475, 512:
Սարուխանեան Ստեփան — 284:
Սեղբոսեան Ա. — 469:
Սեղբոսեան Լեւոն — Տես Լեւոն Շանթ:
Սերեմճեան Պետրոս — 304, 315:
Սերենկիւլեան Հայկ — 469, 470, 474, 475, 478, 482:
Սերենկիւլեան Յովհ. (Վարդգէս) — 61, 260:
Սերոբ Աղբիւր — 315, 353:
Սերովբեան Նազարէթ — 401:
Սերջոյեան Սարգիս — 286:
Սեւիկեան Արշակ — 70:
Սէյեադ — 38:
Սէիդ Աբդուլլահ — 68:
Սէիդ Քեազմ Եազդի — 157:
Սըգոթուլ իսլամ — 105, 106, 113:

Սիամանթօ — 264, 330, 331, 370, 371, 432:
Սիմէոնեան Վրթանէս — 350:
Սիմէոն խմբապետ — 47:
Սիմոն — 160, 165, 168:
Սիրիբրակեան Ժունէ — 350:
Սմբատ Օհանեան — *Տես Զաւարեան Սիմոն*:
Սմկօ — 59:
Սողոմոնեան Ա. (*օրիորդ*) — 461, 486:
Սողոմոնեան Սոկրատէս — 337, 339:
Սորոկին — 191, 193:
Սուջայեան — 350, 354:
Սուջա-էդ-դովլէ — *Տես Սամադ խան*:
Սուրէն էֆէնտի — *Տես Դրօ*:
Սուփահտար — 67, 78, 80, 157:
Սպանդարեան Սպանդար — 187:
Սպարթալի — 260:
Ստենլէյն — 241:
Ստեվանսոն — 347:
Ստեփան (*Թադէոսեան*) — *Տես Սամսոն խան*:
Ստեփանեան — 285:
Ստեփանեան Յարութիւն (*Բժիշկ, Արմենակ*) — 25-27, 31, 32, 34, 39, 49, 67, 70, 71, 75, 76, 82, 98, 127, 130, 131, 139, 141, 142, 144, 147, 152-155, 157-163, 165-169:
Ստոլիարով — 189:
Ստոլոպին — 237, 239, 250:
Սրապեան Ս. — 385, 388, 393, 426:

Վազգէն — 20:
Վազրիկ — 20:
Վալադեան Վալադ — 410, 419, 432:
Վահաբ — *Տես Վռամեան Արշակ*:
Վահագն — 38:
Վահան — 194, 195:
Վահան — *Տես Մատինեան Նիկոլ*:
Վահանեան Վռամ — 5, 207:
Վահէ — 25, 34, 36, 37, 40, 43, 44, 139:
Վանայ Իշխան (*Պողոսեան-Միքայէլեան Նիկոլ*) — 5, 207, 249:
Վանտալ Ա. — 333, 346:
Վանտերվելտ — 310, 347:
Վանցեան Գրիգոր — 267, 268, 270, 287, 376:
Վաչէ — 25:
Վարանդեան Միքայէլ — 5, 7, 8, 101, 112, 127, 129, 135, 136, 178, 184, 191, 204, 210-213, 216, 217, 221, 222, 226-228, 231, 232, 237, 264, 272, 287, 291-294, 296, 297, 309, 315, 334, 341, 344, 448, 455, 461, 474, 482, 485, 486, 498, 500, 512:
Վարդազարեան Բագրատ վրդ. — 34, 35, 62:
Վարդանեան Գ. — 309:
Վարդանեան Ե. — 486:
Վարդանեան Յով. — 461:
Վարդանեան Յովսէփ Բատալ — 32:
Վարդանեան Ն. (*տիկին*) — 339:
Վարդան քահանայ — 45, 46:
Վարդգէս — *Տես Սերենկիւլեան Յովհաննէս*:
Վեբեր — 347:
Վուարէն Լուի — 316, 343:
Վուսուղը դովլէ — 157, 159, 164:
Վռամեան Արշակ (*Դերձակեան Օննիկ*) — 49, 72, 73, 76, 181, 184, 207, 211:
Վրացեան Սիմոն — 189, 193, 402, 432-434, 463:

Տելքասկ Թէոֆիլ — 303, 305, 345:
Տ. Եղիս Ն. — 429:
Տ'Էթուռնէլ Կ. — 212, 238, 333, 346:
Տէր Աբրահամեան Գէորգ — 284:
Տէր-Գասպարեան Ա. — 283:
Տէր Դանիէլեան Գրիշ — 50, 148, 170:
Տէր Դաւթեան Յովսէփ — 211:
Տէր Թովմասեան — 88:
Տէր Խաչատուրեան — 285:
Տէր Ղազարեան Ղազար — 287:
Տէր Ղազարեան Շ. — 309:
Տէր Ղեւոնդեան Ռ. — 350, 373:
Տէր Մանուէլեան Լեւոն — 362:
Տէր-Մարկոսեան Ա. — 283:
Տէր Մարտիրոսեան Ստեփան — 471:
Տէր Մինասեան Ռուբէն — 445, 446, 461, 474, 482, 486, 512:
Տէր Միքայէլեան Գ. — 485:
Տէր Մկրտչեան Ստեփան (*Գագիկ*) — 181, 213, 337:
Տէր Յակոբեան Ս. — 433:
Տէր Յարութիւնեան Յովհաննէս — 284:
Տէր Յովհաննիսեան Ալբերտ — 62:
Տէր Յովհաննիսեան Բագրատ (*Պետրոս*) — 74, 98, 137, 204-206, 209, 214, 217, 218, 222, 224:
Տէր Յովհաննիսեան Ներսէս — 362:
Տէր Յովհաննիսեան Սմբատ — 284:
Տէր Յովհաննիսեան (*տիկին*) — 295:
Տէր Նրանեան (*օրիորդ*) — 429:
Տէր Պետրոսեան Յով. — 80:
Տէր Պետրոսեան Պետրոս — 401:
Տէր Պողոսեան Աշոտ — 268, 283, 291-296, 350, 353:
Տէր Պողոսեան Աւետիք — 350, 356, 358, 360, 362:
Տէր Սահակեան — 389:
Տէր Սարգսեան Լեւոն — 286:
Տէր Ստեփանեան Եդուարդ — 461, 474, 479, 481, 482, 484, 486:
Տէր Ստեփանեան Տ. Ս. — 448:
Տէր Վարդանեան Արսէն վրդ. — 48:

Տէր Վարդանեան Սուրէն — 362:
Տէրտէրեան Արսէն (*Արշակունի*) — 27, 33, 82:
Տէրտէրեան Հ. — 433:
Տէրտէրեան Մ. — 283:
Տէր Օհանեան Աննա — 350:
Տէր Օհանեան Հ. — 148, 512, 519:
Տէր Օհանեան Յովհաննէս — 350, 355:
Տիգրանեան — *Տես Խզմալեան Թադէոս*:
Տիգրանեան Նիկողայոս — 525:
Տիլէնեան Գ. — *Տես Դիլանեան Գ.*:
Տիւկոմոն — 354:
Տոլստոյ Ալեքսէյ — 249, 251:
Տոկթորեան Միհրան — 350:
Տորիչէլլի Է. — 213:
Տուրփայեան Մ. — 350, 352:
Տրէյֆիւս Ալֆրէտ — 302:

Բատեւ — 316, 343:
Բաֆֆի (*Մելիք-Յակոբեան Յակոբ*) — 315, 358:
Բեկլիւ Էլիզէ — 311, 316, 347:
Բօշտակ — 20:
Բօսկ. Ա. — 181:

Փանոսեան Խոսրով — 465:
Փաստրմաճեան Գարեգին — *Տես Արմէն Գարօ*:
Փափազեան Վահան (*Կոմս*) — 5, 207, 260, 433:
Փոլատեան — 486:
Փորթուգալեան Մկրտիչ — 319, 454:

Քալանթար Անուշաւան — 283:
Քալաշնունի Յովհաննէս — 5, 6:
Քասափեան — 285:
Քարնաք — 320, 321:
Քաւոր — 100, 101:
Քեալաչեան Գ. — 432:
Քենտերեան Յակոբ — 421:
Քեռի (*Գաւաֆեան Արշակ*) — 4, 32, 49, 50, 53, 60, 67, 69, 70, 74, 88, 118, 127, 129-133, 136-139, 148, 151-153, 155, 159-163, 165, 168-171:
Քէչէքեան Կատար. — 287:
Քէօռ Հիւսէյին — 59:
Քիյառ Պիէռ — 7, 211, 227, 231-233, 241, 242, 251, 311, 316, 344, 347, 351, 352, 463, 507:
Քիւյումչեան — *Տես Գուլումճեան Վ.*:
Քլեմանսօ Ժորժ — 7, 178, 347, 429:
Քոլիր — 320:
Քոչարեան Սաղաթէլ — 284:
Քունք — 320:
Քոքեարը դովլէ — 48:
Քրիչչեան Մ. — 384-386, 390, 401, 408, 410, 419:
Քրմոյեան Ս. — 465, 512, 513, 515, 516, 518, 519:
Քրմոյեան Վ. — 384-386, 388, 392, 393, 395, 399, 418, 425, 428, 474, 508, 510:

Օզանեան Մերուժան — 527:
Օթարեանց Սարգիս — 350:
Օխիկեան Արմենակ (*Սլաք*) — 195:
Օհանեան Սմբատ — *Տես Զաւարեան Սիմոն*:
Օհանջանեան Համօ (*Մհեր*) — 5, 6, 8, 181, 205, 207, 210, 223, 228, 249, 309, 311:
Օհանջանեան Սաթենիկ — 210:
Օհանջանեան Սարգիս (*Ֆարհատ*) — 60, 79:

Ֆավոն Ժորժ — 302, 304, 305, 310, 316, 343, 349:
Ֆարրօ — *Տէր Յովհաննիսեան Յովսէփ*:
Ֆելիքս — 406:
Ֆերրի — 347:
Ֆէթվաճեան Արամ — 287:
Ֆինլանտը Նաքս — 253:
Ֆնտքլեան Պողոս —286:
Ֆրանգեան Երուանդ — 385, 388-392, 395, 433:
Ֆրապան Իլզէ — 315, 333, 335, 343, 344, 346:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ*

Ագուլիս — 191, 275, 283, 337, 362։
Ագրամ (Զաղրէպ) — 241։
Ալափարս — 190։
Ալեքսանդրապոլ (Գիւմրի) — 191, 192, 195-197, 199, 202, 339, 374։
Ալի Ղամար — 191։
Ախալցխա — 268, 276, 284։
Ախալքալաք — 268, 279, 287, 337։
Ախէն — 268։
Ախմէթա — Տես *Համատան*։
Ախտա (Հրազդան) — 190։
Ակն — 276, 279, 284, 287։
Ահար — 50, 53։
Ահվազ — 170։
Ամերիկա (Մ. Նահանգներ) — 7, 137, 185, 216, 246-248, 251-254, 257-260, 262, 313, 332, 347, 444, 446, 451, 452, 457-459, 467, 473, 477, 481, 488, 502, 505, 516, 520, 523։
Ամիրապատ — 45, 46։
Այգեստան — Տես *Գանձակ*։
Այնթապ — 284։
Անգլիա — 7, 76, 257, 291, 303, 312, 316, 348, 364, 405, 468։
Անի — 308։
Անվերս — 378, 380, 412։
Աչտարակ — 190, 193, 194։
Ապառաժ — Տես *Ղարաբաղ*։
Ապարան — 194, 195։
Աստապատ — 268։
Աստրաբադ — 92, 99։
Աստրախան — 275, 277, 283, 286, 337։
Ատաբազար — 278, 285։
Ատանա — 141, 279, 287։
Ատրպատական — Տես *Թաւրիզ*։
Արաբկիր — 279, 286։
Արաղ — 43, 160։
Արխանկելսկ — 173։
Արճաքան — 190։
Արմտան — 268։
Արտաբիլ — 49, 50-52, 54, 56, 59, 61, 88, 89, 92։
Աւստրիա — 312, 345, 348, 359, 360, 364։

Բաբերդ — 432։
Բագու — Տես *Պաքու*։
Բազէլ — 317, 380, 387, 401, 412, 414, 424։
Բայազիտ — 191, 195, 211։
Բենդեր Բուշիր — 77։
Բենդերկէզ — 78։
Բերլին — Տես *Պերլին*։
Բերն — Տես *Պերն*։
Բջնի — 190։
Բրենտֆորտ — 259։
Բրեսլաւ — 276, 284, 312, 348։
Բրիտանիա — Տես *Անգլիա*։
Բրիւսէլ — Տես *Պրիւքսէլ*։

Գալիցիա — 290, 308։
Գաղազան (Ղազուին) — 16, 25, 31, 32, 41, 42, 44։
Գանձակ (Այգեստան) — 176, 192, 196, 197, 199, 202, 249, 337։
Գեառգեառ (Լոռի) — 362։
Գետափ — Տես *Նոր Ջուղա*։
Գերմանիա — 7, 65, 263, 274, 280, 291, 303, 307, 310, 313, 316, 317, 320, 323, 324, 326,335, 344, 348, 354, 360, 364, 365, 367, 372, 402, 408, 412, 413, 419, 446, 508։
Գեօթինկէն — 312, 315, 348, 367։
Գէօկչայ — 275, 276, 283, 284։
Գիլան (Ռաշտ, Էնզելի, Ղազուին) — 9, 14, 16, 25, 29, 31, 41, 43, 45, 122, 138, 149, 153, 154, 167, 169։
Գիրկ (գիւղ Գէօկչայ գաւառ) — 283։
Գորի — 276, 284։
Գովգեան — 89։

Դամասկոս — 421, 488։
Դաշքուռուն — 191։
Դարալագեազ (Վայոց ձոր) — 190։
Դարմշտատ — 276, 284, 312, 315, 344, 348, 363, 367, 368, 375, 378, 380։
Դաւալլու (Արարատ) — 190։
Դովլաթաբադ — 36։
Դորպատ — 526։
Դուրան-Բարձրաւանդակ — Տես *Տարօն եւ Սասուն*։
Դռնավարզ (Շուշի) — 362։
Դրեզդէն — 268, 374, 276, 284, 312, 348։

Եգիպտոս — 184, 347, 446, 452, 458, 505։
Եկեղեցի — Տես *Մոսկուա*։
Եղափլու (Մեղրուտ) — 192։
Ենա — 267, 268, 277, 285, 312, 348, 362, 367, 375, 376, 378, 380, 386, 412-414, 424, 438, 449։
Ենի-խալէ — 45, 46։
Երեւան — 5, 172, 189, 191-194, 199, 201, 210, 211, 222, 239, 337, 362։
Երզնկա — 268, 278, 286։
Երուսաղէմ — 303։

Զամբար — 45, 46։
Զանգեզուր — 192, 277, 285։
Զանջան — 50, 56։
Զէյթուն — 307, 312, 450, 463։
Զմիւռնիա — Տես *Իզմիր*։
Զուիցերիա — 7, 8, 50, 186, 263, 264, 266, 278, 280, 286, 302, 312, 315-317, 334, 343, 344, 348, 350, 364, 365, 371, 372, 419, 446, 473-475, 511։

Էնզելի (Պորտ Արտիւր) — 9, 14, 16, 33, 41, 74, 103, 107, 119։
Էջմիածին — 35, 190, 191։
Էտիրնէ — 315։
Էրզրում — Տես *Կարին*։

Թալաս — 277, 286։
Թալէ — 367։
Թաւրիզ (նաեւ Ատրպատական) — 4, 9, 10, 14, 16, 17, 20, 21, 25, 29, 36, 50, 52-65, 67, 68, 72-74, 76-80, 83, 88-98, 101-105, 107, 109-111, 113-115, 122, 126, 128, 129, 135, 136, 138, 139, 141, 143, 145-147, 149, 151, 152, 159, 184, 205, 211, 217, 222, 228, 250, 337, 365, 415, 445, 535։
Թեհրան — 3, 4, 9-11, 14-16, 24-27, 29-32, 39, 41-44, 46, 47, 49, 50, 52, 53, 55, 59, 60, 64, 67, 68, 73, 74, 76-80, 83-85, 88-92, 95, 98-102, 104, 109-111, 115-125, 127-132, 134-147, 149, 150, 152-155, 160, 161, 164, 165, 168, 169, 181, 228, 415, 508։
Թէոդոսիա — 268, 379, 287։
Թիֆլիս — 62, 64, 78, 90, 173, 178, 188, 191, 192, 197-199, 202, 204, 207, 208, 211, 213, 216, 232, 234, 236, 237, 249, 268, 275-277, 283-285, 329, 337, 339, 346, 362, 399, 429, 432, 529։
Թորինօ — 374, 439։
Թուլուզ — 520։
Թոքատ — 277, 286։
Թրանսվալ — 302, 307։
Թրոյ — 259, 261։

Ժամբլու — 312, 348, 438, 448, 453, 474, 476, 481, 494։
Ժընեւ — 7, 8, 77, 101, 112, 115, 127-129, 134-138, 144, 177, 178, 184, 186, 191, 221, 226, 232, 236, 237, 263, 265-268, 273, 279, 287, 290, 291, 297, 302, 304-307, 309, 310, 312, 313, 315, 316, 318, 319, 329, 330, 333, 335, 336, 342, 343, 345, 347-350, 357, 360, 365, 366, 368, 369, 371-376, 378, 380, 383- 384, 386, 387, 389, 397, 400-402, 405, 409, 410, 412-415, 417, 420, 424, 426, 429, 432, 435, 438, 439, 446-450, 453, 473-475, 481, 485-491, 493-495, 498-500, 502, 503, 508-513, 519-522, 524, 525, 527, 532, 534։

Իգտիր — 191, 194, 198, 210, 239, 278, 286, 362։
Իզմիտ — 278, 285։
Իզմիր-Զմիւռնիա — 277, 286, 415, 417։
Իսթ Սէնթ Լուիզ — 260։
Իտալիա — 7, 263, 279, 312, 316, 317, 348, 352, 359, 360, 364, 365, 374, 405, 438։

Լահէյ — 178, 208, 212, 232, 236, 240, 249, 318, 371, 391, 395։
Լայպցիգ — 267, 268, 270-274, 276, 284, 288, 289, 291-293, 297, 312, 313, 315, 328, 342, 344, 348, 350, 358, 360, 362, 366-368, 375-377, 380, 385, 387, 389, 402, 409, 412-414, 424, 426, 438, 446, 448-450, 453, 464, 474, 475, 481, 491, 494, 497, 508, 510, 512, 516, 520։
Լառ — 45, 46։
Լեհաստան — 173, 303, 308։
Լեմբերգ — 271, 272, 274, 290, 291, 312, 348։
Լիբանան — 325, 490, 507։
Լիէժ — 279, 310, 312, 315, 348, 412, 424, 438, 446, 448-450, 470, 471, 494, 510, 513, 520, 522։
Լին — 260։
Լիոն — 305, 310։
Լոնտոն — 289, 290, 312, 348, 371։
Լոռի — 276, 284, 340։
Լոս Անճելոս — 259։
Լորէնս — 260։
Լովէլ — 261։
Լուիզվիլ Քէն — 260։
Լօզան — 135, 263, 268, 271, 278, 286, 309, 312, 315, 316, 342, 348, 350, 371, 378, 380, 386, 387, 399, 400, 410, 411-415, 422, 423, 425, 426, 428, 438, 439, 448-450, 453, 465-468, 473-475, 477, 481, 488, 490, 494, 500, 508, 510, 511, 519-522, 525։

Խանքենդ (Շուշի) — 362։
Խարբերդ — Տես *Խարկով*։
Խարկով — 8, 263, 350, 500, 503, 526, 528, 529, 533։
Խոյ — 49, 59, 74, 88, 92, 94, 99։
Խոյգան — 35, 36։
Խորասան — 25, 149։
Խունկ — 36։
Խրիմ — Տես *Ղրիմ*։
Խրուաթիա — 241։

Ծաղկաձոր (Դարաչիչակ) — 190։

*) Ցանկէն դուրս կը մնան հատորին մէջ յաճախ գործածուած կարգ մը տեղանուններ, ինչպէս՝ Հայաստան, Տաճկաստան-Թուրքիա, Պարսկաստան, Կովկաս, Ռուսիա, Եւրոպա։

Կալտ — 260:
Կանտ — 374, 412:
Կարին — 77, 112, 115, 131, 136, 193, 199, 210, 214, 268, 276, 279, 284, 286, 287, 415, 432, 445:
Կարլսբադէն — 312, 348:
Կարս (Ջրաբերդ) — 176, 192, 197-199, 202, 222, 277, 286:
Կեսարիա — 277, 278, 285, 286:
Կէչերլու — 191:
Կիեւ — 503, 526:
Կիլիկիա — 276, 335, 346, 359, 365, 458, 488:
Կիրասոն — 89:
Կուտինա — 275, 283:
Կրանիթ Սիթի — 260:
Կրասով — 312, 348:

Հասագա — Տես Լահէյ:
Հադրութ — 275, 283:
Հալլէ — 276, 284, 312, 315, 344, 348, 367, 378, 380, 384, 386, 389, 412, 414, 424, 438:
Հանէրն — 141:
Համատան (Ախմէթա) — 16, 25, 47, 48, 88, 99, 120, 134, 139, 142, 151, 160, 168, 169:
Համիլթոն — 259, 260:
Համպուրկ — 344:
Հայդելբերգ — 7, 263, 265, 268-270, 272, 274, 280, 288, 289, 309, 312, 315, 343, 348, 350, 367, 378, 380, 412, 424, 438:
Հաննովըր — 367:
Հասան-Ղալէ — 211:
Հարտֆըրտ — 261:
Հելուան — 184:
Հիւսիսակերտ — Տես Պետերբուրգ:
Հնդկաստան — 32, 49, 74, 98, 139, 205, 222, 431:
Հոլանտա — 405:
Հոյեմհայմ — 312, 348:
Հունգարիա — 452, 458:
Հռոմ — 305, 310, 316, 431:

Ղազախ — 276:
Ղազուին — 9, 14, 16, 25, 41, 42, 46, 47, 91, 107:
Ղամարլու (Արտաշատ) — 190:
Ղարաբաղ (Ապառաժ) — 196, 197, 213, 287:
Ղարադաղ — 26, 50, 54, 75, 79-81, 83, 88, 89, 92, 102:
Ղարաղան — 16, 25, 41, 45, 46:
Ղարասուբազար — 279, 283, 284:
Ղարաքիլիսա (Վանաձոր) — 192, 207, 278, 286:
Ղարս — Տես Կարս:
Ղզլար — 279, 287, 363:
Ղըզըլ-Թամիր (Ոսկեվազ) — 190:
Ղուբա — 277, 285:
Ղում — 157, 159, 169:
Ղրիմ — 275, 276, 284, 363:

Ճալիաթ — 260:

Մազանդարան — 89, 95, 99:
Մակեդոնիա — 221, 222, 352, 358, 458:
Մակու — 57, 59, 79, 88, 92, 94:
Մամուքայ — 36:
Մանչուրիա — 240:
Մատրասա — 279, 286:
Մարաղա — 92:
Մարբուրգ — 312, 348, 367:
Մարսէյլ — 316, 319, 512:
Մեծ Սալա — 276, 284:
Մեծ քաղաք — Տես Թիֆլիս:
Մեղրի — 191, 275, 277, 283, 285:
Մեչէդիռադ — 88:
Միացեալ Նահանգներ — Տես Ամերիկա:
Միթվայթա — 312, 315, 344, 348, 367, 378, 380:
Միլակերտ — 36:
Միլանո — 345:
Միլֆըրտ — 261:
Միւնխէն — 264, 268, 274, 277, 285, 288, 289, 291, 309, 312, 313, 315, 327, 343, 344, 348-350, 367, 375, 376, 378, 380, 385-387, 389, 401, 407, 409, 410, 412-414, 424, 438, 448, 449, 453, 478, 481:
Միւրիշէն (Շուշի) — 283:
Մոզդոկ — 275, 283, 363:
Մոլլա-Բայազիտ (Բամբակաշատ) — 191:
Մոլտաւիա — 325:
Մոնաքօ — 311, 316, 317, 347:
Մոնպելիէ — 277, 286, 312, 315, 348, 350, 378, 380, 412, 423, 424, 426, 438:
Մոսկուա — 5, 8, 211, 249, 263, 279, 286, 340, 350, 432, 503, 526, 528, 529, 533, 534:
Մուղան — 50:
Մուշ — 335, 445:
Մրգաստան — Տես Երեւան:

Նախիջեւան — 80, 191, 193-195:
Նանսի — 8, 263, 267, 268, 278, 285, 312, 348, 424, 438, 446, 448, 450, 453, 469-471, 474, 475, 477, 481, 488, 490, 494, 520:
Նաջաֆ — 12, 60:
Նաւահանգիստ — Տես Պաթում:
Նիակարա Ֆոլս — 260:
Նեչուէ — 261:
Նէոշաթէլ — 350, 380, 387, 412, 424:
Նիկոմիդիա — Տես Իզմիր:
Նիւ-Եորք — 256, 259, 261:
Նիւ Հէյվըն — 259, 261:
Նիւշաբուր — 25, 30:
Նիւ Պրիթէյն — 261:

Նիւպրիփորթ — 260:
Նովոչերկասկ — 4, 5, 178, 182, 188, 204, 207, 211-213, 218, 222, 223, 231-233, 236, 237, 239, 244, 247, 249:
Նոր Բայազէտ (Գաւառ) — 190, 473:
Նոր Նախիջեւան — 275, 276, 279, 283, 284, 287, 323:
Նոր Ջուղա (Գետափ) — 16, 25, 30-32, 34, 35, 37-39, 62:
Նորք — 190:

Շահբուլաղ — 36:
Շահ, Շահստան — Տես Թեհրան:
Շամ — Տես Վան:
Շամախի — 276-278, 284, 285:
Շարլոթենբուրգ — Տես Պերլին:
Շարուր — 191, 195:
Շաւուրէն — 47:
Շինուհայր (Զանգեզուր) — 362:
Շիքակո — 259, 260:
Շուէյցարիա — Տես Զուիցերիա:
Շուէտ — 29:
Շուշի — 176, 192, 264, 268, 275-280, 283-287, 337, 339, 362:
Շտրասբուրգ — Տես Ստրազպուրկ:
Շրշկան — 36:

Ոսկանապատ — Տես Պաքու:
Ուայթնսվիլ — 261:
Ուաշինկթըն — 252-254, 256-259, 371:
Ուեսթ-Հոբոկըն — 259, 261:
Ուեստ Փուլմըն — 260:
Ուսթր — 259, 260:
Ուրմիա (Փարոս) — 49, 55, 59, 61, 74, 94-96, 98, 111, 145:
Ուօքէկըն — 260:

Ջանաղչի Ներքին — 45, 46:
Ջանաղչի վերին — 45, 46:
Ջարհատ — 45, 46:
Ջերնովից — 312, 348:
Ջէլսի — 260:
Ջէքիշլեար — 103:
Ջհարմահալ — 32:

Պադովա — 312, 348, 378, 380:
Պաթում — 172, 177, 192, 196-199, 202, 249, 362:
Պաղտատ — 303:
Պայազիտ — Տես Բայազիդ:
Պարիս, Բարիզ — Տես Փարիզ:
Պաւիա — 279:
Պաքու, Բագու — 31, 78, 98, 103, 115, 136, 141, 172, 176, 180, 181, 185-187, 189, 192, 199, 202, 204-206, 211, 213, 216, 218, 222, 234, 239, 268, 275-277, 279, 280, 283-286, 337, 345, 351, 356, 360:
Պելճիքա, Բելգիա — 7, 269, 279, 312, 348, 364, 374, 446:
Պեռն (Բերն) — 8, 311, 316, 334, 338, 343, 348, 350, 355, 359, 361, 364, 375-377, 380, 387, 399, 410, 412, 414, 415, 424, 438, 439, 448, 449, 453, 481, 494:
Պետերբուրգ (Փեթերսպուրկ) — 4, 5, 8, 196, 204, 209, 216, 217, 223, 224, 227-231, 237, 238, 243, 244, 248, 250, 251, 263, 432-434, 500, 503, 508, 509, 513, 516, 528, 529, 533-535:
Պերլին — 8, 210, 234, 263, 267, 268, 271-275, 283, 288, 289, 291, 297, 303, 310-312, 315, 316, 320, 322, 324-327, 334, 337, 339, 341, 342, 344, 348, 350, 351, 358, 366-368, 372, 375-379, 384, 385, 387, 399, 408, 412-415, 424, 432, 438, 439, 448, 449, 453, 474, 475, 481, 488, 491, 494, 497, 510-512, 519-522, 525:
Պէյրութ — 432, 488:
Պըզէօ — 312:
Պոլիս — 6, 54, 56-58, 61, 62, 68, 77, 89, 116, 129, 137, 138, 146, 152, 163, 183-186, 189, 191, 207, 210, 211, 213, 216, 217, 221, 225-227, 246, 250-252, 260-263, 277-280, 285-287, 294, 295, 303, 317, 325, 345, 364, 402, 415, 417, 432, 435, 445, 452, 456-460, 473, 476, 480, 488, 495, 496, 499, 501, 504, 505, 507, 509, 513, 516, 518, 519, 532, 534:
Պոստոն — 5, 247, 253, 254, 257, 259, 261, 262, 347, 360, 415, 444:
Պորտ Արտիւր — Տես Էնզելի:
Պուլկարիա — 316, 325, 415, 452, 457, 458:
Պրաքթըն — 260:
Պրէտֆըրտ — 260:
Պրիւքսէլ — 305, 310-312, 315-317, 343, 348, 378, 380, 412, 424, 438:
Պրուսա — 279, 287:

Ջուլֆա — 92:

Ռաշտ (նաեւ Գիլան) — 9, 14, 16, 25, 41, 46, 55, 68, 74, 77, 78, 80, 91, 103, 107, 119, 128, 250:
Ռոչեսթր — 260:
Ռոստով (Դոնի) — 5, 207, 239, 249, 258, 275, 278, 283:
Ռոտոսթօ — 286:
Ռումանիա — 452, 458:
Ռուտշահ — 25, 30:

Սալմաստ (Մինարէթ) — 49, 55, 59, 74, 78-80, 88, 91, 94-96, 98, 99, 145, 250, 415:
Սամսոն — 275, 283:
Սանգիբարան — 35:
Սան-Ֆրանսիսկօ — 259, 260:
Սասուն — 182, 335, 346, 349, 353, 365, 529:
Սավա — 95:
Սարաբ — 53, 92:
Սարայ — 88:
Սարդարապատ — 191:
Սեբաստիա — 141, 278, 285:

Սեմնան – 88։
Սերպիա – 325։
Սեւ Արիւն – 32, 41, 44։
Սէնթ Լուիզ – 260։
Սէնթ Կատարինէ – 260։
Սէնթ Փօլ – 260։
Սէլանիկ – 479։
Սիպերիա – 6, 173, 176, 207, 217, 232, 237, 238։
Սիսիան – 192։
Սիւնիք – 277, 285։
Սուլթանապատ – 25, 30, 48, 138-140, 159, 162, 168, 171։
Սոֆիա – 330, 348, 351, 358։
Սպահան – 25, 34, 55, 68, 80։
Սվարան – 36։
Ստաւրոպոլ – 218։
Ստրազպուրկ – 312, 348։
Սփինսըր Մէս – 260։
Սօուլ-Բուլաղ – 88, 94։

Վալախիա – 325։
Վաղարշապատ – 194, 276, 284, 337։
Վան – 74, 80, 94, 96, 98, 129, 135, 140, 141, 152, 228, 268, 275, 276, 283, 284, 337, 339, 353, 415։
Վանագ – 24։
Վանք գիւղ (Շուշի) – 362։
Վաշինկթըն – *Տես Ուաշինկթըն*։
Վառնա – 54, 206, 432։
Վասպուրական – 91, 115, 152, 315, 489։
Վարդաբլուր (Լոռի) – 362։
Վենետիկ – 312, 348, 532։
Վերի Քլտեր – 36։
Վիեննա – 78, 89, 251, 312, 348, 374, 432, 438, 494, 508, 520, 525։
Վինտենթուր – 312, 348։
Վիշապ – *Տես Պոլիս*։
Վիտցբուրգ – 312, 348, 350։
Վլադիկավկազ – 176։
Վրէժ, Վրէժստան – *Տես Թաւրիզ*։

Տարօն – 115, 152, 182, 426։
Տիֆրոյիթ – 260։
Տիւբինգէն – 312, 315, 348, 367։
Տրապիզոն – 60, 210, 268, 276, 279, 284, 287, 415։
Տփխիս – *Տես Թիֆլիս*։

Բէյսին – 260։
Բիգա – 276, 284, 300։
Բուան – 347։

Ցիւրիխ – 263, 268, 274, 286, 309, 312, 343, 348, 350, 351, 358, 360, 375, 378, 380, 386, 410, 412, 414, 415, 424, 438, 439, 446, 448, 449, 453, 464, 475, 477, 481, 494, 510, 512, 519, 520, 522։
Ցղնա – 268։
Ցվիկաու – 312, 348։

Փարաքար – 190։
Փարիզ – 8, 113, 135, 178, 212, 213, 217, 221, 225, 226, 229, 233, 237, 241, 242, 251, 263, 268, 271, 278, 280, 288-291, 297, 309, 311-313, 315, 317, 327, 330, 331, 343, 345, 348, 378, 380, 384-386, 389, 390, 393, 402, 403, 406, 410, 412-414, 417, 418, 424, 429, 438, 439, 446, 448, 450, 453, 456, 463, 469, 474, 475, 477, 481, 482, 485, 488, 490, 494, 497-500, 502, 508, 510-513, 518-522, 525։
Փարպի – 190։
Փեթէրսըն – 260։
Փերիա – 32։
Փիւնիկէ – 431։
Փորթլէնտ – 260։
Փրայբերգ – *Տես Ֆրայբերգ*։
Փրաւիտենս – 252-254, 259, 261։

Քաղաղ – 47։
Քանաքեռ (Երեւան) – 190, 362։
Քանատա – 246, 251, 257, 259։
Քար – *Տես Ալեքսանդրապոլ*։
Քարահունջ – 285։
Քարլսռուհ – 315։
Քարվանսարա (Գանձակ) – 362։
Քիրմանշահ – 47, 120, 146, 151։
Քլիվլէնտ – 260։
Քոպըրն Այտա – 260։
Քութայիս – 337։
Քոփենհակն – 66, 191։

Օդեսա – 78, 526։
Օշական – 190։

Ֆրանսա – 7, 220, 263, 264, 277, 280, 285, 291, 302, 303, 305, 311, 313, 343-345, 348, 364, 365, 446, 511։
Ֆիլատելֆիա – 259, 261։
Ֆիլիպէ – 277, 286։
Ֆինլանտա – 173, 211, 250, 302։
Ֆրայբերգ – 277, 285, 300, 312, 348, 367։
Ֆրայբուրգ – 312, 348։
Ֆրանքֆուրթ – 267։
Ֆրեզնօ – 259, 260։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ---------- 3

ԳԼՈՒԽ I

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ (1909-1912)

(էջ 9 – 171)

ԲԱԺԻՆ Ա.– 1909 – 1911 ---------- 9

Ա 1.– Հ.Յ.Դ. VI Ընդհանուր Ժողովին (Թեհրան, 14/27 Օգոստ. 1911) ---------- 9
Ա 2.– Հ.Յ.Դ. VI Ընդհանուր Ժողովին (Թեհրան, Օգոստ. 1911) ---------- 10
Ա 3.– Պարսկաստանի համար Պատասխանատու Մարմին ---------- 14

ԲԱԺԻՆ Բ. – ՏԵՂԵԿԱԳՐԵՐ ---------- 16

Բ 1.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Վրէժի [Թաւրիզ] Կոմիտէի (1909-1910) ---------- 16
Բ 2.– Տեղեկագիր 1910 թուի Հ.Յ.Դ. Վրէժի Կոմիտէի գործունէութեան ---------- 20
Բ 3.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. «Շահաքաղաքի» [Թեհրան] Կոմիտէի (11-9-1909 – 6-7-1911) ---------- 24
Բ 4.– Յաւելուած – Տեղեկագիր Հ.Յ.Դ. Շահ Կոմիտէի (7/20-1909 – 10/23-1911) ---------- 31
Բ 5.– Միամեայ տեղեկագիր Գետափի [Նոր Ջուղա] ենթակոմիտէի ---------- 34
Բ 6.– Գետափի խմբերի ընդհ. ժողով ---------- 38
Բ 7.– Շահի ընկերներին ---------- 39
Բ 8.– Քաղուածք Գիլանի III Շրջ. ժողովի արձանագրութիւնից (X, XI եւ XII նիստերից) ---------- 41
Բ 9.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. «Գաղազանի» [Ղազուին] ենթակոմիտէի (1911–1912) ---------- 43
Բ 10.– Տեղեկագիր Ղարաղանի ---------- 45
Բ 11.– Տեղեկագիր Համատանի ---------- 47
Բ 12.– Խորէն վրդ. Տէր Վարդանեանէն Եփրեմին (21-9-1911) ---------- 48

ԲԱԺԻՆ Գ. – 1910 թ. ---------- 49

Գ 1.– Եփրեմէն Ստեփանին [Սամսոն խան] (11-1-1910) ---------- 50
Գ 2.– Եփրեմէն Ստեփանին (12-1-1910) ---------- 51
Գ 3.– Եփրեմէն Ստեփանին ---------- 51
Գ 4.– Եփրեմէն Ստեփանին ---------- 52
Գ 5.– Եփրեմէն Անահիտին [Դաւթեան] (13-1-1910) ---------- 52
Գ 6.– Եփրեմէն Ատրպատականի Կ. Կոմիտէին (17-1-1910) ---------- 53
Գ 7.– Եփրեմէն Յովսէփին [Միրզայեան] (17-1-1910) ---------- 53
Գ 8.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտ. Բիւրոյին (12-11-1909) ---------- 54
Գ 9.– Արեւմտեան Բիւրոյէն Ատրպատականի Կ. Կոմիտէին (22-2-1910) ---------- 57
Գ 10.– Թեհրանի Կոմիտէին (10-3-1910) ---------- 58
Գ 11.– Արեւմտեան Բիւրոյին, Թուրքիոյ հատուածին (5-4-1910) ---------- 59
Գ 12.– Յովսէփ Միրզայեանէն Ռոստոմին (14/27-4-1910) ---------- 61
Գ 13.– Յովսէփ Միրզայեանէն Ռոստոմին (1/14-5-1910) ---------- 63

Գ 14.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Թեհրանի Շահ Կոմիտէին (13-5-1910) ---------- 64
Գ 15.– «Դրօշակ»ի դիմումը Ընկերվար Միջազգայնականին ---------- 66
Գ 16.– Յովսէփ Միրզայեանէն Ռոստոմին (12/25-7-1910) ---------- 67
Գ 17.– Եփրեմէն Ռոստոմին ---------- 69
Գ 18.– Յար. Ստեփանեանէն Ռոստոմին (4-8-1910) ---------- 70
Գ 19.– Եփրեմէն Վռամեանին (20-10-1910) ---------- 72
Գ 20.– Յ. Միրզայեանէն Վռամեանին (20-10-1910) ---------- 73
Գ 21.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտ. Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (18-11-1910) ---------- 73
Գ 22.– Եփրեմէն Համբարձումին (25-12-1910) ---------- 75

ԲԱԺԻՆ Դ. – 1911 թ. ---------- 76

Դ 1.– Արեւելեան Բիւրոյէն (Կարնոյ հատուած) Թեհրանի ընկերներին (29-5-1911) ---------- 77
Դ 2.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (7-7-1911) ---------- 78
Դ 3.– Նիկոլ Դումանէն Սարգիսին եւ Յոնանին (11-7-1911) ---------- 79
Դ 4.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (14-7-1911) ---------- 80
Դ 5.– Թեհրանի Կոմիտէին կոչը (26-7-1911) ---------- 83
Դ 6.– Դաշնակցական զինուորներին – Կոչ (Օգոստ.1911) ---------- 84
Դ 7.– Թեհրանի Կոմիտէին կոչը պարսիկ ժողովուրդին (հայերէն) (1911) ---------- 85
Դ 8.– Թեհրանի Կոմիտէին կոչը պարսիկ ժողովուրդին (պարսկերէն) (1911) ---------- 87
Դ 9.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (4-8-1911) ---------- 88
Դ 10.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (15-8-1911) ---------- 89
Դ 11.– Նիկոլ Դումանէն Եփրեմին (15/28-8-1911) ---------- 91
Դ 12.– Յոնան Դաւթեանէն Ա. Բաբալեանին (2-9-1911) ---------- 93
Դ 13.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (12-9-1911) ---------- 94
Դ 14.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (19-9-1911) ---------- 95
Դ 15.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (29-9-1911) ---------- 96
Դ 16.– Ղարաբաբային [Նիկոլ Դուման] ---------- 97
Դ 17.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (31-10-1911) ---------- 98
Դ 18.– Խորհրդակցական ժողով Թեհրանի մէջ (18-11-1911) ---------- 100
Դ 19.– Յոնան Դաւթեանէն Ա. Բաբալեանին (24-11-1911) ---------- 101
Դ 20.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (1-12-1911) ---------- 102
Դ 21.– Կարեւոր տեղեկութիւն (Բագուէն) (9-12-1911) ---------- 103
Դ 22.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Թեհրանի Շահ Կոմիտէին (17-12-1911) ---------- 104
Դ 23.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (Թուրքիոյ հատուած) (21-12-1911) ---------- 105
Դ 24.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն «Դրօշակ»ի խմբագրութեան (29-12-1911) ---------- 107

ԲԱԺԻՆ Ե. – 1912 թ. ---------- 109

Ե 1.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Թեհրանի Կոմիտէին (8-1-1912) ---------- 111
Ե 2.– Հեռագիր «Դրօշակ»ի խմբագրութեան, Ժընեւ (9/22-1-1912) ---------- 112
Ե 3.– Հաղորդագրութիւն եւրոպական մամուլին (28-1-1912) ---------- 114
Ե 4.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Վարանդեանին (27-2-1912) ---------- 115
Ե 5.– Շահստանի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին, Պոլիս (7/20-3-1912) ---------- 116
Ե 6.– Շահստանի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին, Պոլիս (14/27-3-1912) ---------- 118
Ե 7.– Եփրեմէն եւ Յ. Միրզայեանէն Արեւմտեան Բիւրոյին (21 Մարտ / 3 Ապրիլ1912) ---------- 120
Ե 8.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Շահի Կ. Կոմիտէին (29-3-1912) ---------- 122
Ե 9.– Թեհրանի Կ. Կոմիտէին կոչը հայ զինուորներին (22-3-1912) ---------- 123
Ե 10.– Շահստանի շրջանի ընկերներին – Շրջաբերական թիւ 1 (30-3-1912) ---------- 124

Ե 11.– Հայ զինուորներին – Շրջաբերական (Մարտ 1912) ---------- 125
Ե 12.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Շահի Կ. Կոմիտէին (9-4-1912) ---------- 126
Ե 13.– Քեռիի հեռագիրը Ժընեւ, Վարանդեանին (30-4-1912) ---------- 127
Ե 14.– Եփրեմի հեռագիրը Ժընեւ (2-5-1912) ---------- 128
Ե 15.– Վարանդեանէն Արեւմտեան Բիւրոյին (3-5-1912) ---------- 129
Ե 16.– Արեւմտեան Բիւրոյի հեռագիրը դոկտ. Ստեփանեանին եւ Եփրեմին (3-5-1912) ---------- 130
Ե 17.– «Դրօշակ»ի խմբագրութեան հեռագիրը Եփրեմին եւ Քեռիին (3-5-1912) ---------- 131
Ե 18.– Արեւմտեան Բիւրոյի հեռագիրը Ռոստոմին (21 Ապրիլ/ 4 Մայիս1912) ---------- 131
Ե 19.– Արեւմտեան Բիւրոյէն Շահի Կ. Կոմիտէին (21 Ապրիլ /4 Մայիս1912) ---------- 132
Ե 20.– Եփրեմի հեռագիրը Ժընեւ (22 Ապրիլ / 5 Մայիս1912) ---------- 134
Ե 21.– Եփրեմի երկրորդ հեռագիրը Ժընեւ (24 Ապրիլ / 7 Մայիս1912) ---------- 134
Ե 22.– Վարանդեանէն Արեւմտեան Բիւրոյին (9-5-1912) ---------- 135
Ե 23.– «Դրօշակ»ի խմբագրութենէն Ատրպատականի Կ. Կոմիտէին (9-5-1912) ---------- 136
Ե 24.– Ռոստոմէն Պարսկաստանի ընկերներուն (27-4-1912) ---------- 136
Ե 25.– Արեւմտեան Բիւրոյէն Ատրպատականի Կ. Կոմիտէին (28-4-1912) ---------- 137
Ե 26.– Ն. Աղբալեանէն (Հանգոյց) Արեւմտեան Բիւրոյին (28-4-1912) ---------- 138
Ե 27.– Արեւմտեան Բիւրոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (30 Ապրիլ / 13 Մայիս1912)) ---------- 140
Ե 28.– Արեւմտեան Բիւրոյէն Շահստանի Կ.Կ.ի ընկերներին (7/20-5-1912) ---------- 141
Ե 29.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Շահաստանի Կ. Կոմիտէին (10-5-1912) ---------- 143
Ե 30.– Ռոստոմէն Պարսկաստանի ընկերներուն (21-5-1912) ---------- 144
Ե 31.– Թեհրանի Կ. Կոմիտէի հեռագիրը «Դրօշակ»ին Եփրեմի մահուան մասին (25-5-1912) ---------- 144
Ե 32.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (24-5-1912) ---------- 145
Ե 33.– Ատրպատականի Կ. Կոմիտէէն «Դրօշակ»ի խմբագրութեան (24-5-1912) ---------- 146
Ե 34.– Արեւմտեան Բիւրոյէն Թեհրանի Կ. Կոմիտէին (24-5-1912) ---------- 147
Ե 35.– Շահստանի Կ. Կոմիտէէն Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին (27/10 Յունիս, 1 Յուլիս 1912) ---------- 149
Ե 36.– Արեւմտեան Բիւրոյի հեռագիրը Դր. Ստեփանեանին (28/10 Յունիս 1912) ---------- 152
Ե 37.– Արեւմտեան Բիւրոյէն Թեհրանի Կ. Կոմիտէին (29-5-1912) ---------- 152
Ե 38.– Արձանագրութիւններ խառն ժողովի (1912) ---------- 153

ԳԼՈՒԽ II

ԿՈՎԿԱՍ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ
(էջ 172 – 262)

ԲԱԺԻՆ Ա. ---------- 172

Ա 1.– Յայտարարութիւն Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոյի (1908) ---------- 173
Ա 2.– Օգնեցէք բանտարկեալներին [1908] ---------- 175
Ա 3.– Յակոբ Չիլինգարեանի ձերբակալութիւնը (29-7-[1908]) ---------- 176
Ա 4.– Պաքուի Կ.Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (1-5-1909) ---------- 177
Ա 5.– Առաջին ձերբակալութիւններու մասին (7-5-1909) ---------- 178
Ա 6.– Շրջաբերական-նամակ (Դաշնակցական պրոզեսսի մասին) (27-7-1909) ---------- 179
Ա 7.– Ռոստոմէն Արեւելեան Բիւրոյին (30-2-1910) ---------- 181
Ա 8.– Պաքուի Կ. Կոմիտէէն Եփրեմին (2-7-1910) ---------- 181
Ա 9.– Շրջաբերական-կոչ ի նպաստ ռուսաց բռնակալութեան զոհերու (Հոկտ.1910) ---------- 182
Ա 10.– Ստացագրի նմոյշ ---------- 183
Ա 11.– Նիկոլ Դումանէն Ռոստոմին (10/23 Նոյ. 1910) ---------- 184
Ա 12.– Պաքուի Կ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (22-11-1910) ---------- 185

Ա 13.– Պաքուի Կ. Կոմիտէէն «Դրօշակ»ի խմբագրութեան (8-1-1911) ---186
Ա 14.– Մ. Յարութիւնեանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (2-7-1911) ---188
Ա 15.– Համառօտ տեղեկագիր Հ.Յ.Դ. Մրգաստանի [Երեւան] եւ այլ շրջանների (10-8-1911) ---189
Ա 16.– Դրութիւնը Երեւանի նահանգում (26-8-1911) ---193
Ա 17.– «Դրօշակ»ի խմբագրութեան (30-8-1911) ---195
Ա 18.– Խորհրդածութիւններ Սարուստանի [Կովկաս] մարմիններու շուրջ (30-8-1911) ---196

ԲԱԺԻՆ Բ. --- 204

Բ 1.– Պետրոսէն [Բագրատ Տէր Յովհաննիսեան] Ռոստոմին (1-11-1909) --- 205
Բ 2.– Պետրոսէն Ռոստոմին (14-12-1909) --- 206
Բ 3.– Բագուի Կ. Կոմիտէի յանձնարարագիրը (20-12-1909) --- 206
Բ 4.– Ռուբինայէն [Արէշեան] Արեւմտեան Բիւրոյին [25-12-1909] --- 207
Բ 5.– Պետրոսէն Ռոստոմին (13-1-1910) --- 209
Բ 6.– Պետրոսէն Ռոստոմին (4-2-1910) --- 209
Բ 7.– «Դրօշակ»ի խմբագրութեան (22-9-1910) --- 210
Բ 8.– Գառնիկէն Ռոստոմին (29-12-1910) --- 210
Բ 9.– Ա. Վռամեանին եւ Լ. Նազարեանցին (29-12-1910) --- 211
Բ 10.– Միք. Վարանդեանին (19-6-1911) --- 213
Բ 11.– Խ. Կարճիկեանէն Արեւելեան Բիւրոյին [1911] --- 214
Բ 12.– Պաքուի Կ. Կոմիտէէն «Դրօշակ»ի խմբագրութեան (25-1-1911) --- 216
Բ 13.– Պետրոսէն Արեւմտեան Բիւրոյին (17-12-1911) --- 217
Բ 14.– Նամակ Պետրոսէն (19-12-1911) --- 218
Բ 15.– Ս. Զաւարեանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (27-12-1911) --- 221
Բ 16.– Պետրոսէն Միք. Վարանդեանին (28-12-1911) --- 222
Բ 17.– Համօ Օհանջանեանէն Ռուբինային --- 223
Բ 18.– Պետրոսէն Ակնունիին (7-1-1912) --- 224
Բ 19.– Ահարոնեանէն Զաւարեանին (23-1-1912) --- 225
Բ 20.– Ս. Զաւարեանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (6/19-2-1912) --- 227
Բ 21.– Ս. Զաւարեանէն Միք. Վարանդեանին (13/26-2-1912) --- 228
Բ 22.– Ս. Զաւարեանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (8/21-3-1912) --- 229
Բ 23.– Նամակ Պետերբուրգէն (20-6-1912) --- 230

ԲԱԺԻՆ Գ.– Քարոզչութիւն Եւրոպայի մէջ --- 231

Գ 1.– Վարանդեանէն Վիկտոր Պերարին (31-5-1909) --- 232
Գ 2.– Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին (22-6-1909) --- 233
Գ 3.– «Դրօշակ»ի խմբագրութեան հեռագիրները եւրոպական մամուլին (Օգոստ.1909) --- 234
Գ 4.– «Դրօշակ»ի խմբագրութենէն Ժան Ժորէսին (31-7-1909) --- 235
Գ 5.– Հ.Յ.Դ. Բիւրոյէն Journal de Genève-ի խմբագրութեան (31-7-1909) --- 236
Գ 6.– Վարանդեանի նամակը Նելիտովին (8-3-1910) --- 237
Գ 7.– «Դրօշակ»ի խմբագրութենէն եւրոպական մամուլին (20-12-1910) --- 238
Գ 8.– Pour Avetis Aharonian (Վասն Աւետիս Ահարոնեանի) (12-1-1911) --- 239
Գ 9.– Շնորհակալական հեռագիրներ եւ նամակներ (Փետր.1911) --- 242
Գ 10.– «Դրօշակ»ի յայտարարութիւնը Պետերբուրգի դատավ. ընթացքին մասին (Ապրի 1912) --- 243

ԲԱԺԻՆ Դ.– Քարոզչութիւն Ամերիկայի մէջ --- 246

Դ 1.– Արեւմտեան Բիւրոյէն Ամերիկայի Կ. Կոմիտէին (26-10-1910) --- 246

Դ 2.- Շրջաբերական Հ.Յ.Դ. Ամերիկայի կոմիտէներուն (20-11-1910) --- 247
Դ 3.- The Armenian prisoners in the Caucasus (Կովկասի հայ բանտարկեալները) --- 248
Դ 4.- Փրաւիտենս քաղաքի բողոքը --- 252
Դ 5.- Դիմում պետական քարտուղարին (12-1-1911) --- 253
Դ 6.- Դիմում Ռուսիոյ դեսպանին --- 254
Դ 7.- Ռուսական դեսպանատան մերժողական պատասխանը (16-1-1911) --- 255
Դ 8.- Նիւ-Եորքի միթինկի որոշումները --- 256
Դ 9.- Ակնունիի դիմումը Բրիտանիոյ դեսպան Ճէյմս Պրայսին (2-3-1911) --- 257
Դ 10.- Ի նպաստ ռուսահայ քաղ. բանտարկեալներուն՝ որոշում (7-4-1911) --- 258
Դ 11.- Քոնկրեսական Նիտրմէն Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէին (2-6-1911) --- 259
Դ 12.- Բողոքի որոշումներ --- 259
Դ 13.- Հանգանակութիւն յօգուտ կովկասահայ բանտարկեալներուն (Փետր. 1911) --- 260
Դ 14.- Պաշտօնական ստացագիր Կեղրոնական յանձնախումբէն --- 262

ԳԼՈՒԽ III

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(էջ 263 – 535)

ԲԱԺԻՆ Ա.– Եւրոպայի Հայ Ուսանողական միութիւն --- 263

Ա 1.- Հայ Անանուն ընկերութիւն փոխադարձ օգնութեան --- 265
Ա 2.- Ծրագիր Եւրոպայի Հայ ուսանողներու միութեան առաջին ընդհանուր ժողովի --- 267
Ա 3.- Եւրոպայի Հայ ուսանող. միութեան Ա. համագումարի մասնակիցներու անուանացանկ --- 268
Ա 4.- Տեղեկագիր Եւրոպայի Հայ ուսանող. միութեան (1897/98, 1898/99 թ.թ.) --- 269
Ա 5.- Վիճակագրական տեղեկութիւններ Եւրոպայի Հայ ուսանողներու մասին --- 283
Ա 6.- Նամակ Փարիզի հայ ուսանողութեան (5-6-1898) --- 288
Ա 7.- Համարատուութիւն Եւրոպայի հայ ուս. միութեան Բերլինի Կարգ. յանձնաժողովի --- 289
Ա 8.- Եւրոպական ընդհ. ուս. միութեան II Համագումարի արձանագրութիւնները --- 291
Ա 9.- Եւրոպայի հայ-ուսանողական միութեան կանոնադրութիւն --- 299
Ա 10.- Հ.Յ.Դ. 10ամեակին առթիւ Ստ. Շահումեանի շնորհաւորագրերը --- 300
Ա 11.- «Դրօշակ»ի մեծարգոյ խմբագրութեանը --- 301
Ա 12.- Ֆրանսիս Դը Պրեսանսէի բանախօսութիւնը Ժընեւ մէջ (Հայկական Հարցը) --- 302
Ա 13.- Եւրոպայի Հայ ուս. միութիւն. Շրջաբերական-նամակ (25-2-1902) --- 305
Ա 14.- Մարզպետունիէն Ուս. 5րդ Համագումարին (31-3-1902) --- 307
Ա 15.- Համարատուութիւն Ուս. 5րդ Համագումարին --- 309
Ա 16.- Եւրոպայի Հայ ուս. միութեան տարեկան համագումարը --- 315
Ա 17.- Մ. Փորթուգալեանէն Ակնունիին (12-5-1902) --- 319
Ա 18.- Երկու նամակ Եղիշէ Թոփչեանէն (23-5-1902) --- 320
Ա 19.- Եղիշէ Թոփչեանէն Ակնունիին (30-5-1902) --- 322
Ա 20.- Նամակ Երուանդ Շահազիզէն (17-5-1902) --- 323
Ա 21.- Հայասէր պրոպագանդը Գերմանիայում (նամակ Բերլինից) --- 323
Ա 22.- Երեք նամակ Թադէոսեան Յովսէփէն (12-11-1902) --- 325
Ա 23.- Եւրոպայի Հայ ուս. միութեան Կարգադիր յանձնաժողովին (1-12-1902) --- 326
Ա 24.- Յովսէփ Թադէոսեանէն Ակնունիին (16-12-1902) --- 327
Ա 25.- Բախշի Իշխանեանէն Եւրոպայի Հայ ուս. միութեան կոմիտէին (16-12-1902) --- 328

Ա 26.- Ալ. Մանթաշեանէն Եւրոպայի Հայ ուս. միութեան (17/30-1-1903) ---------- 329
Ա 27.- Սիամանթոյէն Սիմոն Զաւարեանին (27-7-1903) ---------- 330
Ա 28.- Քրիստափորէն եւ Սիամանթոյէն Սիմոն Զաւարեանին (21-12-1903) ---------- 331
Ա 29.- Եւրոպայի Հայ ուս. միութիւն. Շրջաբերական-նամակ (25-2-1904) ---------- 332

ԲԱԺԻՆ Բ.– Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողներու միութիւն ---------- 334

Բ 1.- Եւրոպայի Հայ ուս. միութիւն. Շրջաբերական-նամակ (10-1-1905) ---------- 335
Բ 2.- Եւրոպայի Հայ ուս. միութիւն. Շրջաբերական-նամակ (1-3-1905) ---------- 336
Բ 3.- Բախշի Իշխանեանէն չորս նամակներ Լիազօր կոմիտէին եւ Կարգ. յանձնաժողովին ---------- 337
Բ 4.- Ուսանողական միութեան Կարգադիր յանձնաժողովին (17-3-1905) ---------- 337
Բ 5.- Բախշի Իշխանեանէն Ուս. միութեան Կարգադիր յանձնաժողովին (23-3-1905) ---------- 338
Բ 6.- Բախշի Իշխանեանէն Ուս. միութեան (31-3-1905) ---------- 338
Բ 7.- Լիպարիտ Նազարեանցէն Է. Ակնունիին (18-3-1905) ---------- 339
Բ 8.- Պերլինի Ուսանողներէն Մ. Վարանդեանին (1-4-1905) ---------- 341
Բ 9.- Օրակարգ 1905 թիւ Համագումարի, Բերնում (30-3-1905) ---------- 342
Բ 10.- Համարատուութիւն Լիազօր կոմիտէի եւ Կարգ. յանձնաժողովի ---------- 343
Բ 11.- Հայ Ուս. միութեան Վեցերորդ համագումար (1905) ---------- 350
Բ 12.- Մանիֆեստ Հայ Ուս. միութեան Վեցերորդ կոնգրեսին (8-4-1905) ---------- 361
Բ 13.- Անուանացանկ Լայպցիգի հայ ուսանողներու ---------- 362
Բ 14.- Դարմշդադտի Հ.Յ.Դ. Կոմիտէէն Արեւմտեան Բիւրոյին (19-4-1905) ---------- 363
Բ 15.- Եւրոպայի Հայ ուս. միութիւն. Շրջաբերական-նամակ (Մայիս1905) ---------- 364
Բ 16.- Դիմում Պ. Եդուարդ Բերնշտայնին (17-7-1905) ---------- 367
Բ 17.- Բերլինի հայ ուսանողներու կոչը կովկասահայութեան օգնելու ---------- 367
Բ 18.- Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյէն Լայպցիգի հայ ուսանողութեան (4-1-[1906]) ---------- 368
Բ 19.- Դարմշտադի հայ ուսանողութեան (22-1-[1906]) ---------- 368
Բ 20.- Եւրոպայի Հայ ուս. միութիւն. Շրջաբերական-նամակ (1-2-1906) ---------- 369
Բ 21.- Սիամանթոյէն Է. Ակնունիին [Փետր. 1906] ---------- 370
Բ 22.- Սիամանթոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (26 Փետր. 1906) ---------- 371
Բ 23.- Սիամանթոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (28 Փետր. 1906) ---------- 371

ԲԱԺԻՆ Գ.– Եւրոպայի Հ.Յ.Դ. Հայ Ուս. միութեան ծնունդը եւ Ա. Համագումար ---------- 372

Գ 1.- Արեւմտեան Բիւրոյէն Ժընեւի դաշնակցական «Ջանք» խմբին [1906] ---------- 371
Գ 2.- Լիազօրագիր Արշակ Ջամալեանին (23-1-1907) ---------- 371
Գ 3.- Նշխար մը Աւետիք Իսահակեանէն (27-3-1907) ---------- 374
Գ 4.- Դանիէլ Վարուժանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (4-9-1907) ---------- 374
Գ 5.- Արշակ Իսահակեանի զեկուցագիրը Արեւմտեան Բիւրոյին (Օգոստ.1907) ---------- 375
Գ 6.- Շրջաբերական Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան (Օգոստ.1907) ---------- 377
Գ 7.- Շրջաբերական-հրաւէր Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան (22-2-1908) ---------- 378
Գ 8.- Կազմակերպիչ կոմիտէի զեկուցումը (15-4-1908) ---------- 380
Գ 9.- Մանդատների Վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը ---------- 381
Գ 10.- 1908 թ. Հ.Յ.Դ. Եւրոպայի ուսանողների Ա. համագումարի ներքին կանոնագրութիւն ---------- 381
Գ 11.- Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողների համագումարի ատենագրութիւնը ---------- 383
Գ 12.- Կանոնագիր Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողների միութեան ---------- 397
Գ 13.- Արշակ Իսահակեանէն Քրմոյեանին (4-6-1908) ---------- 399
Գ 14.- Շրջաբերական Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողների միութեան խմբերին (11-6-1908) ---------- 400
Գ 15.- Եւրոպայի Հ.Յ.Դ. ուս. գործադիր մարմնին ի տեղեկութիւն (3-7-1908) ---------- 400
Գ 16.- Տեղեկագիր Միւնխէնի դաշ. ուս. խմբակի (10-7-1908) ---------- 401

ԲԱԺԻՆ Դ.– Եւրոպայի Հ.Յ.Դ. Հայ Ուս. միութեան Բ. Համագումար ---------- 402

Դ 1.- «Ուսանող»ի առաջին խմբագրականը (1909, Փարիզ) ---------- 403
Դ 2.- Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Ա. համագումարից ---------- 405
Դ 3.- Միւնխէնի դաշ. ուս. խմբակի առաջարկը դաշնակցական ուս. ընկերներին ---------- 407
Դ 4.- Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին (17-3-1909) ---------- 408
Դ 5.- Եւրոպայի Հ.Յ.Դ. ուսանողների Բ. համագումարը (1909) ---------- 409
Դ 6.- Շրջաբերական-նամակ (13-11-1909) ---------- 420
Դ 7.- Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողական միութեան (25-12-1909) ---------- 421
Դ 8.- Նամակ Գործադիր մարմնին (28-12-1909) ---------- 422
Դ 9.- Մոնպելիէի Հայ ուսանողութենէն Լիազօր Կոմիտէին (25-12-1909) ---------- 423
Դ 10.- Տեղեկագիր Լօզանում կայացած Հայ ուս. միութեան VII Համագումարի (Յունւ.1909) ---------- 424
Դ 11.- Շրջաբերական-նամակ [1910] ---------- 427
Դ 12.- Շրջաբերական-նամակ (3-2-1910) ---------- 428
Դ 13.- Զեկուցում Հ.Յ.Դ. «Ջանք» խմբի (1909-1910) ---------- 429
Դ 14.- Երկու նամակ Պետերբուրգի ուսանողներէն ---------- 432
Դ 15.- Սիմոն Վրացեանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (13-2-1910) ---------- 434

ԲԱԺԻՆ Ե.– Եւրոպայի Հ.Յ.Դ. Հայ Ուս. միութեան Գ. Համագումար (1911) ---------- 435

Ե 1.- Գործադիր մարմին Եւրոպայի դաշնակցական ուս. միութեան (27-3-1911) ---------- 435
Ե 2.- Շրջաբերական Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան (15-4-1911) ---------- 436
Ե 3.- Կազմակերպական կեանք ---------- 437
Ե 4.- Կանոնագիր Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողների միութեան ---------- 440
Ե 5.- Տաճկաստանի եւ Պարսկաստանի հայրենակից ուսանողներին (1911) ---------- 442
Ե 6.- Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողական միութեան (12-7-1911) ---------- 444
Ե 7.- Կ. Պոլսոյ Ուս. միութենէն Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան վարչութեան ---------- 445
Ե 8.- Յոնան Դաւթեանէն Ռուբէն Տարօնացիին [Տէր Մինասեան] ---------- 445

ԲԱԺԻՆ Զ.– Եւրոպայի Հ.Յ.Դ. Հայ Ուս. միութեան Դ. Համագումար (1912) ---------- 446

Զ 1.- Տեղեկագիր Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողների միութեան ---------- 447
Զ 2.- Զեկուցագիր «Ուսանող»ի մասին ---------- 456
Զ 3.- Զեկուցում «Ջանք»խմբի ---------- 461
Զ 4.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Բարիզի Ուսանողական խմբի ---------- 463
Զ 5.- Լայպցիգ ---------- 464
Զ 6.- Ցիւրիխ ---------- 464
Զ 7.- Զեկուցում Լօզանի դաշնակցական խմբի (1911-1912 ձմեռնային սեմեստրի) ---------- 465
Զ 8.- Տեղեկագիր Նանսիի Հ.Յ.Դ. Ուսանողական «Երկիր» խմբի ---------- 469
Զ 9.- Լիէժի խումբէն Եւր. Հ.Յ.Դ. Ուս. միութեան Գործադիր մարմնին ---------- 470
Զ 10.- Չորրորդ համագումարի օրակարգը ---------- 472
Զ 11.- Եռուսֆեանի բացիկը Ուս. Չորրորդ համագումարին (10-4-1912) ---------- 473
Զ 12.- Ատենագրութիւն Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Չորրորդ համագումարին ---------- 474
Զ 13.- Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանողների խմբերին(1-5-1912) ---------- 483
Զ 14.- Հ.Յ.Դ. Ուս. միութեան Գործադիր մարմնին (26-11-1912) ---------- 485
Զ 15.- Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Գործադիր մարմնին (18-12-1912) ---------- 485
Զ 16.- Ժընեւի «Ջանք» խմբի 1912ի ամառնային գործունէութեան տեղեկագիրը ---------- 486

ԲԱԺԻՆ Է.– Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Ե. Համագումար (1913) ---------- 488

Է 1.- Շրջաբերական Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան խմբերին (9-1-1913) ---------- 489
Է 2.- Որոշումներ 1913ի հայ ուսանողութեան խորհրդակցական ժողովին ---------- 490
Է 3.- Հ.Յ.Դ. Ուս. միութեան Գործադիր մարմնին (9-3-1913) ---------- 491
Է 4.- Կոչ ուղղուած հայ ժողովուրդին (19-4-1913) ---------- 492
Է 5.- Շրջաբերական Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան խմբերին (16-5-1913) ---------- 494
Է 6.- Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուս. միութեան (1-11-1913) ---------- 496
Է 7.- Օրակարգ Կ.Պոլսոյ Հ.Յ.Դ. Ուս. համագումարի (1-11-1913) ---------- 496
Է 8.- Շրջաբերական-նամակ (թիւ 6) Հ.Յ.Դ. Եւրոպայի ուսանողական խմբերին (20-11-1913) ---------- 497
Է 9.- Փարիզի խումբէն Գործադիր մարմնին (25-11-1913) ---------- 498
Է 10.- Փարիզի խումբին տեսակէտը համագումարի կայացման մասին ---------- 499
Է 11.- Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան Գործադիր մարմնի Ժընեւի հատուածին [1913] ---------- 499
Է 12.- Նամակ Պետերբուրգէն (14-11-1913) ---------- 500
Է 13.- Ժընեւի «Ջանք» խումբէն Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Գործադիր մարմնին (4-12-1913) ---------- 500
Է 14.- Պոլսոյ Ուս. միութենէն Արեւմտեան Բիւրոյին (22-11-1913) ---------- 501
Է 15.- Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան V համագումարի արձանագրութիւն (Հրաւէր եւ Օրակարգ) ---------- 502
Է 16.- Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին (13-12-1913) ---------- 503
Է 17.- Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան Գործադիր-Խմբագրական մարմնին (9-12-1913) ---------- 503
Է 18.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան Գործադիր-Խմբ. մարմնի գործունէութեան ---------- 504
Է 19.- Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան V համագումարի արձանագրութիւն (25-30 Դեկտ. 1913) ---------- 510
Է 20.- Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան V համագումարի որոշումները ---------- 522
Է 21.- Երաժիշտ Նիկողայոս Տիգրանեանի մասին ---------- 525
Է 22.- Հ.Յ.Դ. Եւր. Ուս. միութեան (7-4-1914) ---------- 526
Է 23.- Զեկուցում «Ջանք» խումբի (1914-15) ձմեռնային սեմեսթրի գործունէութեան մասին ---------- 527

ԲԱԺԻՆ Ը.– Յաւելուած – Ռուսաստանի դաշնակցական ուսանողութեան
Ա. համաժողովի նիստերի արձանագրութիւնը (1899) ---------- 528

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ---------- 536

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ---------- 546

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – Թ. ՀԱՏՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ

TOME IX

ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY
OF
THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION – DASCHNAKZOUTIOUN

E-mail: ypamboukian@arfarchives.org

Համակարգչային շարուածք եւ էջադրում
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

ՑՐՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

HAMAZKAYIN LIBRARY
P.O.BOX 80–1096
BOURJ HAMMOUD – LEBANON
TEL.: 00961 - 1 - 241263/4
FAX: 00961 - 1 - 260329
E-MAIL: imphamaz@inco.com.lb
www.hamazkayin-bookstore.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ